ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԹՈՒԼԸ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ

ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ

ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 821.19-8
ԳՄԴ 84(5Հ)
Թ 154

ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դասակարգության ակումբ

Թ 154 Թաքուլը: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2015, 576 էջ + 8 էջ ներդիր:

Գիրքը ներկայացնում է Հայաստանի Ազգային հերոս Թաքուլ Կրպեյանի մասին Ռաֆայել Սահակյանի «Արծվապաշտ երկիր» վեպը, ինչպես նաև Թաքուլի մասին պատմող լուսանկարներ և առանձին հեղինակների հոդվածներ ու հուշեր:

ՀՏԴ 821.19-8
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-5-8084-1953-7

© ԵՊՀ հրատ., 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....7

ԲԱԺԻՆ I 9
Ռաֆայել Սահակյան
Արծվապաշտ երկիր

ԲԱԺԻՆ II.....563
Հավերժ կենդանի Թաթուլը

Հայաստանի Հանրապետության նախագահի ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Թ. Ժ. Կրպեյանին «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում շնորհելու մասին

Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործում մատուցած համազգային նշանակության բացառիկ ծառայությունների համար երկրապահ ջոկատի հրամանատար **Թաթուլ Ժորժիկի ԿՐՊԵՅԱՆԻՆ** հետմահու շնորհել «Հայաստանի ազգային հերոսի» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում՝ հանձնելով Հայրենիքի շքանշան:

Հայաստանի Հանրապետության նախագահ՝
Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևան
20 սեպտեմբերի 1996 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հերոսներն անմահ են, միշտ կենդանի՝ ապրողների հոգիներում: Անվախճան է նրանց գործը, անմար են նրանց անունն ու փառքը:

Այս տարի լրանում է Հայաստանի Ազգային հերոս, մեր ժողովրդի ազգային-ազատագրական նորօրյա պայքարի՝ Արցախյան ազատամարտի նահատակ, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի սան Թաթուլ Ժորժիկի Կրպեյանի ծննդյան 50-ամյակը: Գետաշենի արծիվը (ինչպես կոչում էր նրան ժողովուրդը) ապրեց ընդամենը 26 գարուն: Նրա երկրային կյանքը եղավ կարճ, սակայն բովանդակալից և իմաստալից փառապանծ գործով ու անուրանալի սխրանքով: Հավերժ է նրա երկնային ուղին, և այդ հավերժից նա մշտապես ներկաների կողքին է:

Այս գիրքը նվիրված է հերոս ազատամարտիկի սուրբ հիշատակին և ծննդյան օրվան:

Գիրքը բաղկացած է երկու բաժնից: Առաջին բաժնում Ռաֆայել Սահակյանի «Արծվապաշտ երկիր» ծավալուն վեպն է, որը «Լուսակն» հրատարակչությունը լույս է ընծայել 2004 թվականին: Հեղինակն այն ներկայացրել է որպես ձոն Թաթուլի ու նրա զինակիցների փառքին ու անմահությանը:

Գրքի երկրորդ բաժնում տեղ են գտել Թաթուլին նվիրված խոսքեր, նրա մասին ուսանողական ընկերների և զինակիցների հուշերից:

Ներկայացված են նաև Ազգային հերոսի կյանքի տարբեր շրջանների մասին պատմող լուսանկարներ:

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՁՎԱՊԱՇՏ ԵՐԿԻՐ

(փաստագեղարվեստական վեթ)

Թաթուլ ԿՐՊԵՅԱՆԻ հիշատակի անշեջ կրակը, նրա անունն ու ոգու փայլը ուղեկցեցին ինձ այն բարձունքը, որի կատարին հավերժական հույսի նրա ատարանքն է, նրա հմայքի, հերոսության, նրա պատենական կանչ-կարոտների մշտազնգուն այգադարձը:

Արտին լեռան խորհուրդը

Միշտ փայփայում էի այն պահը, երբ օրերից մի օր կբարձրանամ Արտին (Արտենի) սարը: Մանկության տարիների իմ ամենամոտիկ հսկան էր նա, ծննդավայրիս՝ Միջնաձորի դարավանդների մշտավկան՝ պարզորոշ գծագրվող, բազմաշերտ և գաղտնախորհուրդ խորշոմներով: Մանկական աչքերի հրճվանքով այնքան երկնասույզ էր նա՝ հմայիչ կապույտներով զարդարված և նույնքան կախարդիչ: Չթաքցնեմ բացառիկ այն միամտությունը, որի հոգեպատկերների վերձիգ տրամադրությամբ այդ բարձունքը ինձ և հասակակիցներիս համար մի քիչ Մասիս էր և նույնքան Արագած: Եվ դա նրանից, որ նա միշտ մեր ծննդավայր Միջնաձորի օրորոցի առջև էր, մարդիկ արևոտ և անձրևոտ օրը նրա ճակատի շող ու շուքից էին ջոկջոկում: Եվ, իսկապես, Արտին սարը բարձրատեսիլք վերևներում հաճախ արեգնավարս ցոլքերի այնպիսի զարդարանք էր հագնում, կարծես Մասիսն էր այգաբացին, և Արագածը՝ միջօրեից հետո:

Հին, ապրեցնող հուշերի և ինձ երկարորեն պաշարած խոհերի նրբին խանդաղատանքով՝ անցյալ տարվա մայիսի վերջերին երկրորդ անգամ բռնեցի այն կածանը, որը Թալին տանող մայրուղուց սկսվում, հասնում էր սարի գագաթը: Օրվա հրեղեն տենչերի կենսաղբյուրը միայն այդ գարնան ոսկեհուռ ձեռագիրը չէր: Հազարերանգ ծաղկանց և աչք շոյող կանաչի երփնագիրը ինձ ծանոթ էր վաղուց: Ձգողը մի ուրիշ հեքիաթ էր. հեռվից հեռու մտքերիս թևերով ես միշտ երկնամերձ այն ամպերի հետ էի, որոնք տարվա բոլոր օրերին բազմած էին ամենաբարձր քերծերին:

Եվ ահա՝ բնության հավաքական հույզերի պատառներն աչքերիս մեջ, ես հանգրվանել էի ժայռածոց կատարներին, որոնում էի Աստծո շշուկ-

ների կուսական համբույրը, շանթ ու բոցերի հետքեր էի փնտրում, նաև նրանց, ովքեր ինձանից շատ առաջ հազարավոր անգամ էին եղել այստեղ, վերևներից տիրաբար նայել, ծունկ էին իջել խաչքարի առջև: Ինձ այնպես էր թվում, որ այդ պահին մեկ-մեկ գալիս, հավաքվում էին նրանք՝ գտնելու իրենց կիսավառ մոմը, մեծ խարույկի ծոցերում թաղված անթեղ կրակը, Աստծո խորհուրդ-հրաշքն էին խրձում ժայռակողերից, մարմանդ ու մեղեդային հովերի հետ երկրպագում էին այստեղերով անցած բոլոր բարեպաշտներին, նաև՝ բանձրիկ ավազանների հուշ ու հավերժության հետ մկրտված արծիվ-այրերին, վառման խարույկների ասքապատում կողերի մեջ թրծված և կամքով կարծրացած բոլոր ճամփորդներին:

Ներքևում՝ բազմաշերտ ու գետնատարած գյուղեր էին, կանաչի մեջ պարուրված դաշտ ու գոգահովիտ, հետո՝ բլրակների երկարավուն քարավաններ՝ ձգված Արագածից Անի, Ախուրյանից Արաքս: Իսկ ամենամոտիկը Արեգ գյուղն էր՝ խաղաղ, խորանաշուք ցոլանքներով, ուսերին՝ կեսօրվա բարակ թրթիռներ: Ես հասկացա, որ միայն այս բարձունքից պիտի զգալ և ըմբոշխնել Արեգ գյուղի հմայքը, ընկալել նրա հին ու նոր պատմության կանչ-կարոտներով անցած այն մեծամեծերի ակնթարթ դարը, վիրավոր ու թաքուն երազանքները, որոնք Նախիջևան-Ծպնիից նրանք հասցրել էին այս լեռնածոցը, արմատ ու ավիշ գցել, ապրել վերածաղկումի ու վերադարձի հույսով և օրերից մի օր գնացել՝ թողնելով ամենահմաստուն խորհուրդն ապրելու...

Ես եկել էի երկրպագելու հենց նրանց, ովքեր իրենց տաք շնչով, երազանքների իրենց խաս ծոցն էին թողել այստեղ, նաև՝ իշխանական մի վսեմություն, որն այցի է գալիս միայն գագաթներին՝ դեպի անհունները միտված անդուլ ծնծղաների արեգյան վկայությամբ:

Ես եկել էի աստղամերձ այս կատարներին գտնելու Թաթուլի ոտնահետքերը, նրա հուրյան աչքերի տարածուն փայլը, նրա երգերի տիրախոս թարգմանությունը, այստեղ՝ բարձունքներում գրված բանաստեղծության տողը, տվայտանքի միջօրեն, տրտմախոս իրիկունը, սիրո սահմանումը անսահմանության եզերքներում, զգալու նրա գերազնիվ կախարդանքը, ափսոսանքի նրա չափ ու կշիռը, նվիրվելու թաթուլական տեսակը: Շուրջը՝ քար ու քերծերից, ժայռ ու կրակարանների ոգեխաս կտավների նրբին հյուսվածքներով, լեռան ասքախորան ընդերքից, միշտ, տարին բոլոր՝ թեկուզ ամպ ու զամպ օրերին, գարուն, թե՝ ամառ, աշուն, թե՝ ձմեռ, թվում է՝ ճերմակ նժույգի թամբին նստած, գալիս է նա՝ ծիածանավոր Թաթուլը, թիկունքում քսանվեց գարունների ոսկեշղթա ցոլքեր, ազատաբաղձ կանչ ու երգեր, պատգամ և պատմություն: Այստեղ՝ բարձրադուռ կարոտներին, նրա ոգին է, Գետաշենով թրծված նրա կենաց փայլը, ոտքերի տակ մահվան տեսիլքն է, ճակատն ի վեր՝ անմահության աստղածվար:

Ես եկել էի սրբազան ուխտի, տաճարը Արտին սարն էր: Իմ լուռ աղոթքներով ուզում էի գտնել բոլոր նրանց, ովքեր ինձ հետ մի օր ճամփա ելան՝ հյուսելու Թաթուլի քսանվեց գարունների ոսկե շղթան: Ես բարձրացել էի վերին լանջերին, որ ամենայն ճշգրտությամբ այստեղից ճանաչեի փառավորման ակունքը, գյուղ ու քաղաք, նաև մարդկանց՝ Արեգից Գետաշեն, Էրգրից մինչև Թալին ու Արեգ: Անդադրում ծնծղաների խորքերից գալիս էին իմ տեսած ու չտեսած, ճանաչած ու չճանաչած այրերը՝ կռված ու հաղթած, արծվացած ու նահատակ-քաջազուն տղերքը: Ես լսում էի ոգեշանթ աղաղակներ, տեսնում էի բոցեբազուկ հսկաների, հրավառ հորիզոնները սանձողներին, ովքեր մերձենում էին հազարաշունչ, բազմապատիկ բերկրանքով: Սա մի ուրիշ աշխարհ էր՝ տիեզերքից այստեղ իջած խնկաբույրով: Եվ այդ ամենի գերագույն կանչը Թաթուլն էր, գարունված օրն ու ժամը: Բարձունքների փառքերը հուշում էին, որ նա ինձնից առաջ էր հասել սարագլուխ, ինձնից հետո էլ՝ նա պիտի մնար այնտեղ, դեռ ասելիք ուներ աստղերին, պարտք ուներ իր Արեգին ու Գետաշենին: Նրա փնտրածը էն տղերքն էին, որ իրենց բաժին կյանքը բոժոժեցին մեկ ակնթարթի մեջ ու անցան: Նա այդ ակնթարթի անսահման քարտեզն էր բացել և ուզում էր Արտին սարը վերից վար զարդարել նրանց աչք ու ժպիտով, սեր ու հավատով, նրանց ահեղ թռիչքի շանթաբուռ զարկերով: Թաթուլի աներևույթ հայտնությունը, կարծես, պարուրել էր հովտաշուշանների լանջը, հոգին խաղաղ խռովքների օվկիանոներից թիավարում էր ալեծուփ հեռուն, ուր իր ճակատագրի ամրոցն էր՝ ուսը՝ Արագած սարին, սիրտը՝ ծիածանված Արեգ-Գետաշեն ղոնձալի առավոտներին:

Եվ դա զարնանաբույր մի կեսօրի՝ գագաթներին խաչված ամպ ու զովի և սրնգաձայն աղոթքներով պարուրված:

Արտին սարին ոգետուրքն էր այս ամենի, մշտահավաք շողերգ այգամերան, որոնց հարադիր փայլն ու փառքը հրեղեն ծամերով փառավորում էին գյուղ իջնող ոլորանները: Բարձրում՝ հանդարտահոս հմայքը սեղմել էր ինձ իր կրծքին, բարուրել հուշերգակ մատյաններով, պարուրել ճերմակ ամպերի հարագուշակ անհուններում, սակայն ցածից ձգող անշրջելի մի ուժ՝ հրամայում էր իջնել: Ականջներիս մեջ մեկը ճչում էր, որ լեռան հավերժությունը սկսվում է այնտեղ, ուր ծփում է ցորենհացի բույրը, ուր երգը հողեղեն կտավին դառնում է եռաձայն, և լեռան մեծ պատարագն այնտեղ է դաշնում իր հայտնության հորովելը:

Ինձ տանում էր լեռան ու շենի միջև փողփողացող հևքը: Արեգը ներքևներում էր, կանաչ արտերից այն կողմ՝ տաք հույսերի թափանցիկ պատկերների մեջ: Գյուղը, ինչպես արևոտ մեղեդիների օրորուն բուրվառ, ծաղկամշուշ էր բացել: Սարատափի դիմաց հին ու նոր շիրմատունն էր, մամռոտած, ողորկ ու կայծակնահար տապաններին փշրված տառերով

անուններ էին, այնուհետև կանգուն մահարձաններ, խաչքարեր: Կողք կողքի հանգչում էին գյուղի մեծերը, քարերին նշագրած թվերը հուշում էին, որ նրանք Էրգրի թախիծներով հուշ դարձած գաղթականներն էին: Մարկոսի, Գուլոյի, Տեպան պապի, Սմբատի գերեզմանաքարերից մի քիչ հեռու՝ Ժորայի մահարձանն էր. 2000-ին կնքեց իր մահկանացուն, հայրը չդիմացավ Թաթուլի կորստյան ցավին: Նրա լուռ հայացքի առջև, կողք կողքի, գյուղի երեք զոհվածներն էին՝ Թաթուլը, Սամվելը, Արթուրը:

Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի պատվին կանգնեցված հուշակոթողն այսօր ավելի բոցկլտուն էր, սևից կարմրաթույրին ձգվող քարաղրոշմը մարմնավորում էր վշտից բալասան քամող վարքը, ապա ձուլվում վերևներում՝ հորիզոնի տարբեր կողմերին նայող Առյուծի, Ցուլի և Խոյի խորհրդանշող գլուխներին, որոնցից բարձր՝ հուշասյան կատարին, մեծ փառքի թագն էր, հերոսականության, անկախության և լինելիության մշտափայլ խորհուրդը: Իսկ Թաթուլի խաչբարուր շիրմաքարի առջև թարմ ծաղիկներ էին՝ մոտիկ լանջերից բերված շուշան, հիրիկ և մանուշակ: Ասացին՝ Հերոսի դստեր՝ Ասպրամիկի ձեռքով փնջած ծաղիկներն էին դրանք, Ասպրամիկի անբառ կարոտների քնքշանքը հոր վիրավոր սրտին, նրա անսահման հպարտության դրոշմը, որը նա գտել ու այլևս չէր կորցնելու, ինչպես Արտին սարի խորհուրդը՝ բացվող լուսաբացներին:

Իսկ երբ տան դռների առջև հանդիպեցի որդեկորույս Սեդա մայրիկին, նա թախիծների խորքերից փորձեց ժպտալ, կրծքին սեղմեց 10-11 տարեկան քնքուշ աղջնակին և անսահման գորովանքով շշնջաց.

- Թաթուլիս Ասպրամիկն է...

Թոռնուհու դեմքին անբացատրելի տխրություն կար, սակայն նա ակնթարթորեն լուսավորվեց և ծանոթ երանգներով անուշաբույր ժպտաց: Նրա վճիտ աչքերում խենթորեն ծփաց Թաթուլ-հայրիկի մանկության օրորը, իսկ հայացքը չէր իջնում լուսավոր բարձունքներից: Սեդա տատը՝ այնքան փխրուն ու կարոտաբաղձ, գրկել էր նրան և խանդաղատանքի իր խորաններից բաց չէր թողնում: Երկուսն էլ, փայփայելով հրաշքներից բոժոժված միամիտ հույսը, նույն գերագույն պաշտամունքով Թաթուլին էին փնտրում. աղջիկը՝ գագաթների հայրենականչ ասքերին հավերժ պսակված հորը, Սեդա մայրիկը՝ Ասպրամիկի աչքերից ժպտացող իր ուխտահավատ որդուն:

Սա է իմաստը մեծ կյանքի, որի անդուլ աստիճաններով օր օրի վերադառնում է Թաթուլը:

Ուշադիր ակա՛նջ արեք. Արտին լեռան հանապազօրյա հևքի մեջ լսվում են նրա ոտնաձայները:

Թաթուլի մեծ դարձի ճամփան այնտեղ է՝ դարերի հպարտ ուսերին...

ՀԵՌԱՑՈՂ ԹԱԽԻԾ

Մասն առաջին

ժամանակի հիշողությունն անկարելի է խոշտանգել. արյունը պահում է գարթոնքի բիբլիական ծեսը, բավական են մի պտղունց խաղաղ շող, հորովելի զրնգուն կանչ, «Հայր մեր» ու «Եղիցի լույսի» դարձող ծվեն, որ բռնության ու ավերի դիմաց վերջապես բացվեն հույսի աչքերը, հաղորդության հրաշքը բարբառի իր հայկազուն բախտի օրորն արեգական՝ «Քելե՛ լաո, քելե՛ էրթանք մըր Էրգիր»:

Գաղթականը չի չափազանցնում իր վիշտը, ավելորդ չի հեկեկում, նա իր հորենական սրբության աղոթքն է մատուցում, որ վերևում Աստված տեսնի, ներքևում՝ մարդիկ...

ՀԵՌՎԻՑ Արտին լեռը անրջային է ու կապույտ՝ նման երազներում հանդիպած ջլապինդ նահապետի: Այդ երևակայական պատկեր-տեսիլքների պռնկին Արեգ գյուղն է, որի մարդիկ լեռան խորհուրդը պատկերացրել են իրենց ապրած օրերի վկայությամբ և նրա շուրջը հավաքված՝ հայր-պապերի անմեղ ու միամիտ զրույցները մտապահել են իրենց անհանգիստ սրտերում:

Այստեղ՝ սարն ի վեր դարս-դարս քարափների մեջ, արծիվների կապույտ բներ կան, նաև՝ բոլորակ ու կոպիտ ժայռեր: Հատկապես ամռանը շիկացած արահետները կախվում են խոշոր քարաբեկորների պարանոցներից, ձգվում ցորենի դեղնավուն դաշտերը, ձուլվում հասկ ու առուների մեղմ զրույցին:

Ամեն լուսաբացի, երբ շողարձակ արևն իր սահքի մեջ բարուրում է այդ բարձունքը, սարը ժպտում է երազներում հանդիպած նահապետի նման և իր վեհությամբ ակնթարթ-հույսի խրծեր շարում շենի ոլոր-մոլոր փողոցներում: Ոչ ոք չի զարմանում, որ միջօրեից հետո լեռը, կարծես, հեռանում է մայրամուտ՝ լուռ մատյանի պես իր հին գաղտնիքներով գոցվում առեղծվածային կապույտի ծոցում: Գյուղի մարդիկ գիտեն այդ բարձունքների բնույթը, նույնիսկ խավարի թանձրության մեջ զգում են նրա շնչառությունն ու խռովքը: Արեգցիներին թվում է՝ կապույտով շղարշված սար ու թումբը հեռանալով են մոտենում իրենց, որին նրանք կամ երազներում են հանդիպել, կամ այդ թվացյալ հեքիաթը պահպանել են իրենց հայր-պապերի անմեղ ու միամիտ զրույցներում:

Արտին լեռան և գյուղի առասպել-հեքիաթը մեղմ ու մաքուր պատառիկներով է ամբողջացել, եկել է հեռվից, ձգվել հիշողության, հույսերի և հավատամքի միջով, թրծվել, զարկվել ու նորից կարծրացել օրերի պաղ դիմագծերով: Ո՞վ կարող է այս փոփոխական բնույթի պատճառները վերծանել, կորցրածը հետ բերել, արդարության

մերկ առագաստով մտնել բաց ծով: Այս հարցերի օրորոցն իրենց ուսերին՝ անցյալ դարասկզբի թոհուբոհի պատկեր-տառապանքով ճակատագրին կառչած մի խումբ՝ Ղարսի, Կաղզվանի գավառի Նախիջևան, Ծպնի և մյուս գյուղերից բռնի տեղահանվել ու եկել էին՝ աչքը Մասիսներին, հայացքը՝ դեպի Արագած սարը:

...Բռնագաղթ էր, ավեր, արյուն: Քարավաններն անցնում էին Արաքսը, Ախուրյանը ու բեկված ճակատագրով հանգրվան և խաղաղ երկինք էին փնտրում: Վիրավորանքը ինքնայրումի բոց էր նրանց աչքերում, նաև՝ գրոհի ելած կրակ էր, պահանջ ու պատգամ էր: Թողել ու գալիս էին, լքել ու հեռանում էին, բայց իրենց պաշտամունքն ու հավատը չէին կորցրել, դրա իրավունքը չունեին:

Բռնագաղթ էր... Մորմոքի մռայլ պատկերը շղթայել էր բոլորին. մեծ ու փոքր, հիվանդ ու ծեր, իրար գրկած, գալիս էին: Հավաք արցունքը գետ էր դարձել, բայց չէին լքում իրար, արցունքի ծովում խեղդվելու իրավունք չունեին: Հեկեկանքը ցավ էր հնձում, և հույսի հասկերը փշրվում էին ծննդավայրից բռնի հեռացած մարդկանց հոգիներում: Սակայն «օրերի երաշտը», բռնությունն ու մղձավանջային մրուրը չէին կարողացել սպանել ապրելու շողը:

Իր վտիտ ծոցում հույսի ծիլեր թաքցրած գաղթականը քանի՞ դուռ զարկեց, քանի՜-քանի ճամփա անցավ, գնաց հեռացավ իր Ղարսից, իր Մուշ ու Սասունից, իր Վան ու Ալաշկերտից... Աշխարհի տանիքի տակ, ուր խաղաղ արև կար, այդ ճամփան բռնեց ու գնաց. սրտի կեսը սև էր, ինքը՝ զարկված ու բզկտված, թողել էր իր էրգիրը, հոր ու պապի հիշողությունը, վանք ու բերդերի, հավք ու գետերի այբուբենն ու հիմնը. թողել էր խաչքարերի, մասունք-հովիտների հոգեհմա շուքը և խոշտանգված տեսիլքներով նոր աստղերի տակ իր մոմն էր վառում: Ավերակ էին դարձել հայրենի բույնը, հիշատակների երթը, հոգիների հավատադարձը... Բռնագաղթ էր, անօրենը թալանելով իր «բերքն» էր հավաքում, ուրիշի տունն ու եկեղեցին էր ջնջում, գերեզմանաքար ու մատյան էր ոչնչացնում: Նա չգիտեր, որ ժամանակի հիշողությունն անկարելի է խոշտանգել, որ արյունը պահում է զարթոնքի բիբլիական ծեսը, բավական են մի պտղունց խաղաղ շող, հորովելի զրնգուն կանչ, «Հայր մեր» ու «Եղիցի լույսի» դարձող ծվեն, որ բռնության ու ավերի դիմաց վերջապես բացվեն հույսի աչքերը, հաղորդության հրաշքը բարբառի իր հայկազուն բախտի օրորն արեգական՝ «էրթամ, ննջիմ զիմ Կիլիկիա...»:

...Հարության այս օրենքը մի օր արմատ գցեց Արտին լեռան ժայռոտ փեշերին: Այնուամենայնիվ մեկ անգամ՝ 1920-ի գարնանը,

հետ են գնացել, հույսը խաբուսիկ էր, բայց հավատը կար: Հայրենի եզերքի կանչը տարել էր նրանց, պապենական տունը չէին մոռացել: Գաղթականի բախտ էր, նա դարձյալ գնաց ու հայտնվեց պատմության խուռն ալիքների վրա, իր բնօրրանում սև հողմերի դիմաց մնաց մենակ և վրեժի վառման բոցով հարկադրաբար հեռացավ:

Այս դաժան պատմությունը գաղթականների սրտից ո՞վ կարող է պոկել, օտարել: Հնարավո՞ր է մոռանալ մանկության դաշտը, սարի ծաղկած կածանն ու աղբյուրը, մայրական մրմունջ-աղոթքը, հոր գերեզմանը, վանքի առավոտը, ազգային երգը՝ հայդուկի հրավառ շուրթերին: Ո՞վ կարող է մոռացնել տալ հորովելի մորթված կեսօրը, յաթաղանի անզուսպ խրախճանքը, անթաղ հարազատները գաղթի ճամփին, մանուկների ճիչը, սովը, սահմռկեցուցիչ այն տեսարանները, որոնք ծնունդ էին աշխարհում չկրկնված վայրագ մոլուցքի: Մի՛ մեղադրեք գաղթականին, նրա զավակներին, նրանց զավակների զավակներին, որ տարվա բոլոր օրերին արթուն հիշողություն ունեն, հոգու անտես շերտերում ցավ ունեն պահած, արյան հազար շրջապտույտի ճանապարհին՝ սրտում վշտի կայան ունեն, իրենց որոնող աչքերում՝ կարոտի կրակ, ցասման բոց ու ծխի ամպեր կան, որոնցից միայն կարկուտ է իջնում, պատմության խղճին զարկող, չներող ու չանհետացող կարկուտ: Մի՛ մեղադրեք գաղթականին, տուն ու հարազատ, ծննդավայր և հոգու պատկեր կորցրած մարդիկ կհասկանան նրան: Հեշտությամբ մի՛ փակեք նրանց հաշիվը, նրանց ախ ու վախից, տրտունջ-տագնապից մի՛ հոգնեք: Մի՛ զարմացեք, որ գաղթականը զարմանալի պարտքով, ներքին անբացատրելի ինքնայրումով չի ուզում կորցնել իր պապենական բույնն ու հասցեն: Նա դրա մեջ է տեսնում կամոք Աստծո ծնվելու իր իմաստը, անկորնչելի հավատն ու հարգանքը իրեն կյանք տված մարդկանց, ովքեր իրենց տենչանքներով հառնում են անգամ գերեզմանից, ձայն են տալիս հանդից ու առվից, Արաքսի այս ու այն կողմից, երկրից ու երկնքից, խոսում են ուղիղ, շիտակ: Գաղթականը չի չափազանցնում իր վիշտը, ավելորդ չի հեկեկում, նա իր հորենական սրբության աղոթքն է մատուցում, որ վերևում Աստված տեսնի, ներքևում՝ մարդիկ:

* * *

Անձրևից հետո Արտին լեռը փայլում էր կապույտ շղարշների մեջ: Թեև անցել էր միջօրեն, և արևը լողացող ամպերի տակից ծիկրակում էր մեղավոր ու թույլ, սակայն լեռան կուրծքը, կարծես,

մագնիսի պես իր գիրկն էր հավաքել գոգահովտում շաղված երկնային ցոլքերը: Դաշտը խոնավ էր, հերկած հողը շնչում էր տեսանելի, գոլորշին բարձրանում էր մեղմ ու թափանցիկ օղակներով, հեռանում, կորչում վտարանդի ամպերի զմրուխտ փեշերի տակ:

Արտեզրին՝ խոշոր քարերի վրա, հեռուներից եկած արծիվների նման նստած էին Ժորան ու Սերգոն: Հայր և որդի: Հոր դեմքին ամպի մշուշ կար, անցյալի անթաքույց մռայլ-մորմոք, որ նկատելի էր պատերազմի տարիներին իրենց մանկությունն ու պատանեկությունն անցկացրած հասակակից տղաների մոտ: Նրանք տաս-տասներկու տարեկան էին, երբ կռվի ուրվականը հասավ Արեգ: Գնում էին գյուղի հասուն տղամարդիկ՝ սերմնացաններն ու հնձվորները: Նրանց հետ պակասում էին գյուղի ուժը, ամուր ձեռքը, հաց ու հույս ստեղծող սերունդը: Պատերազմի վերջում գալիս էին մեկ-մեկ, նաև վիրավոր ու մռայլ, ու եթե չէին գալիս, «սև թուղթն» էր հասնում գյուղ:

Հիմա՝ գարնան այս առավոտ, Ժորան, արտեզրի քարին նստած, մտքերով հասել էր այն տարիները, երբ գյուղի մարդկանց հետ ոտքով գալիս, հասնում էին զառիթափին, որտեղից քարոտ միակ ճանապարհը ձգվում էր շրջկենտրոն, ապա գլխիկոր վերադառնում՝ գյուղի մայրերի հետ լուռ արտասվելով: Սերգոն հասկանում էր նրան, գիտեր, որ այդ անսովոր ամպը հոր դեմքին իջել է դեռ պատերազմի տարիներին:

Ժորան վերջապես կտրվեց մտքերից, հայացքը դարձի մեղմիկ շուքով փնջվեց ու եկավ: Իր դիմաց ավագ որդին էր՝ Սերգոն, շոյեց նրա գլուխը: Ինչ-որ կարևոր մի բանի մասին ցանկացավ երկա՜ր-երկար խոսել, բայց խաղաղ լռեց: Ներսում ցավ կար, հիշողության ալեկոծ բուք: Ժորան միշտ զգում էր այդ մորմոքի ներկայությունը, որ ամեն գարնան նոր արմատ էր գցում, նոր շիվ տալիս ու շարունակում ցավագին շոյել: Հիմա էլի գարուն էր Արտին լեռան փեշերին՝ ապրիլ ամիսը: Դեռ երեկ Ժորան որոշեց, որ հաջորդ լուսաբացին պիտի բարձրանա սարալանջ: Ձյունը մի քանի օր առաջ էր հալվել, քարերի արանքներով ոլորվող կածանները թաց էին, հերկերը սև կարկատանների պես կիսաթեք գոգահովտից ուս ուսի իջել էին ցած, գոլ հաշտությամբ պառկել գյուղի հարևանությամբ: Այն խոշոր քարերը, որոնց վրա նստած էին հայր ու որդի, գարնան ծովում հույսի առագաստներ թվացին Ժորային: Իսկ շուրջը կամաց-կամաց ավելանում, թարմ օդի հետ զգացնել էր տալիս լուսաբացի երանությունը: Արևը կախ էր ընկել Արտին սարի ուսից, ինչպես շողշողացող պարգև՝ հաղթանակով տուն վերադարձած

զինվորի լանջին: Տաք տրոփյունը վրնջաց Ժորայի երակներում, ակնթարթորեն իջավ քարից, որդուն ցած բերեց, ժպտաց երկար ու անհասկանալի: Սերգոն նայեց հորը, նայեց լուսաբացի ցնորքի մեջ ցցված լեռան խորհրդավորությանը, և ինքն էլ անհասկանալի ժպտաց: Հայրը որդուն սեղմեց կրծքին, աչքը դիպավ քարաբարձունքի կատարին, թվաց՝ վերին գագաթներն էին իր գրկում: Աչքերում կարոտի հոսքը թրթռաց ու տեղն ու տեղը մարեց: Ժորան չէր մոռացել, որ Մարկոս հայրը ամեն գարնան, երբ ձյունը հալչում, դառնում էր խոտ ու ծաղիկ, իր ձեռքից բռնած, տանում էր դեպի վերին ժայռերը: Բայց այն մեկ օրը հիշում էր միշտ: Աշխարհում պատերազմ էր, ու ինքը՝ տասներկու տարեկան: Սարի կատարին ոչխարի փոքրիկ հոտն էր, երևի միակ լռությունը՝ աշխարհի ցավերից մի քիչ հեռացած: Իրիկնապահին, երբ արդեն ցած էին իջնում, հայրը չոր ճյուղերով, աթարի մնացորդներով մի փոքրիկ խարույկ վառեց ժայռերի վրա, գոհունակ նայեց էրգրի կողմը, ապա իջան գյուղի ճամփով: Ժորան՝ տասներկու տարեկան, ի՞նչ իմանար, որ հայրը ապրիլյան հիշողության կրակն էր վառել, որպեսզի լույսի շողքը ծվատեր խավարի կուրծքը: Հիմա-հիմա հիշեց իր միամիտ հարցը և հոր պատասխանը. «Հայրի՛կ, էդ կրակն ինչի՞ համար էր, որ անտեր թողեցինք, իջանք...»: «Էդ կրակ պատարագի լույս էր, Աստծո աչքի առաջ թող բոցե ուր սիրտ ու փոխանցե ուր ցավի ու պահանջի լեզուն...»: Հաջորդ օրը, երբ գրասենյակ կանչեցին հայրիկին, և հատուկ աշխատակիցը երկար քննեց նրա «անթույլատրելի» արարքը, Ժորան ամբողջ գյուղի հետ զարմացավ, որ լեռան կատարի մի բուռ խարույկը քաղաքական բոց էր արձակել:

- Ելնե՛նք, Սերգո՛, քելե քու հոր ճամփով, տղա՜,- տաք հորդորով ասաց հայրը և գնաց առջևից:

Առավոտ էր, շող ու շաղը պսպղում էին նոր ծիլ տված խոտերին, կպել էին քարերին, լցվել տամուկ խոռոչները, զուլալ սելավի պես գրկել էին հանդիպակաց հող ու խութ, հերվանից մնացած ու փտած խոտի խրձեր, կիսավառ ծղոտ, ցեխի մեջ դաջված ոտնահետքեր... Ձմռան փխրուն հեքիաթը ջնջել էր անցյալ աշնան չոր ուրվագիծը: Իսկ գարունն արդեն բացահայտել էր երեկվա բքաբեր քամու և ձյան հետքերը՝ ամեն ինչ ծածկելով կանաչ գույնով: Դրանք իրար կողքի, իրարից տարբեր ու անկախ՝ ցփնված էին բարձունքների ճամփին: Ժորան նկատում ու չէր խոսում, ինքնիրեն մտմտում ու մռայլվում էր. «Ի՞նչ ասեր որդուն, Սերգոն կհասկանա՞ր իր վրդովմունքը, որ բնությունը վիրավոր է, վերք ունի, ու մենք չենք տես-

նում, ցավ ունի, ու մենք դարման չունենք... Սերգոն կհասկանա՞, կընդունի՞ իր բողոքը...»: Սերգոն երկու-երեք քայլ հեռու էր նրանից, չէր շտապում, ուզում էր հոր ոտնահետքերով գնալ: Նրան հաճելի էին խոնավ հողաթմբերին նկարվող հոր հսկա ոտնատեղերը, և ինքը փորձում էր նույն տեղում հասցնել իր քայլը, չշեղվել ոչ մի սանտիմետր: «Թող իմանա, որ իրենից չեմ շեղվում, որ կրկնում եմ իր ոտնաձայնը, չեմ կորցնում իր ոտնաչափը...»:

- Տե՛ս, չհոգնիս, մի՛ տանջե մարմինդ, հանգի՛ստ դիր ոտքերդ,- մի պահ նա կանգնեց, շուռ եկավ ու նայեց որդուն:

Նկատեց, որ Սերգոն քայլում է իր անցած տեղով՝ անշեղ ու անսխալ: Նստեց քարին, մեղմ ու լսելի ծիծաղեց, որից հրճվանքի բույրով լցվեց հոգին:

- Սերգո՛, բալա՛,- ասելու շատ բան ուներ, բայց լռեց: «Թող իր ճամփան ինքը որոշի, ինքը ճանաչի, թե որտեղի՞ց, ո՞ւր է գնում, ո՞րն է ճիշտը, որը՝ սխալ, ախր շատ խրատ տալն էլ օգուտ չունի, եթե սիրտ ու հոգի չկա ուր մեջ...»:

- Չեմ հոգնում, հայրի՛կ, ուզում եմ մեծավարի քայլել, դու գնա՛, ես կգամ քո հետևից,- հայտնություն արածի հրճվանքով ժպտաց որդին:

- Հա՛, բալա՛, էս խոժոռասար էսօր ես ու դու պըտի գրավինք, համաձա՞յն ես:

- Դու հրամանատարն ես, ես՝ քո զինվորը, գնա՛,- հնչեց Սերգոյի ձայնը:

Հայրը կտրուկ կանգնեց և արագ-արագ գնաց: Ձառիթափից իջնող քարաշարքը շրջանցելիս Սերգոն թիկունքից երեխաների ձայներ լսեց: Կանգնեց: Ներքևից արագ վազելով՝ գալիս էին մի քանիսը: Սկզբում չճանաչեց, մեծ էր հեռավորությունը, հետո միանգամից ճչաց.

- Հայրի՛կ, մեր տան հերոսներն են գալիս:

- Ովքե՞ր,- հարցական շուռ եկավ Ժորան, աչքերը կկոցելով՝ նայեց ներքև: Այլևս պատասխանի կարիք չկար, ճանաչեց: Իր զավակներն էին՝ Մինասը, Գրիգորը, Մանվելը: Միտքը պայծառացավ, ուզեց այնպես հազարաձայն ճչալ, որ գարնան օրորոցը արևով լցվեր, մի քանի քայլ իջավ ցած, վտանգավոր քարափներ էին ներքևում: Սերգոն կանխեց, ինքը վազելով ցած գնաց և քիչ անց չորս եղբայրներով բոլորել էին հորը:

- Արծիվնե՛ր, ինչպե՞ս իմացաք, որ սարի լանջին ենք, Ռուզանին էլ շալակած բերեիք:

- Մայրիկն ասաց, որ սար եք բարձրացել, մենք էլ գաղտնի ծլկեցինք,- ուրախ-ուրախ ասաց Մինասը, իսկ Գրիգորն ու Մանվելը հաստատեցին:

- Հայրի՛կ, զորքդ շատացավ,- ծիծաղեց Սերգոն,- նվաճենք էս սարը:

- Էս արծիվների հետ հարկ է, որ մեր կարոտի սարերն էլ տուն բերենք, գնանք,- երեխաներով շղթայված հայրը շարունակեց վերելքը:

Միջօրեից հետո նրանք լեռան կատարին էին: Այնտեղից երեխաներն իրենց զարմացած աչքերով, կարծես, տեսնում էին ողջ աշխարհը: Ապրիլյան օրը զնգում էր մաքրության ճիչերով: Երկինքը ծուլվել էր անսահման կապույտին, տեղ-տեղ թևարձակ ճերմակ ամպերը նման էին ճախրող արծիվների: Երեխաները վազելով այնպես էին թռչկոտում, ասես ուզում էին այդ արծիվ-ամպերից փետուրներ ցած բերել: Հայրը, թիկնած ժայռին, հոգու մետաքսե ծածկոցի տակ թաքցնում էր հրճվանքի ճողփյունը, վախենում էր, որ երկիր ու երկինք, քարափ ու քամի հանկարծ աչքով չտան, որ իր հոր՝ Մարկոսի տոհմաճյուղերը խոր արմատներ են գցում: Հիշեց, թե հայրը ապրիլ ամսին որտեղ էր վառում փոքրիկ խարույկը: Անցավ ամենավերին ժայռադռնով, բարձրացավ լեռան «կտուրը» և տափարակ, ափսեանման հարթակի վրա տեսավ խարույկի հետքեր՝ մրի և մամուռի դաջվածք: Երեխաները հավաքեցին փայտի հին մնացորդներ, աշնանից մնացած եղինջի, չորացած մասրենիների ճյուղեր, գզգզված, ցամաք սինձ ու քամիներից քշված արմտիք:

- Վառե՛նք, հայրի՛կ, թող սարը տաքանա, - ասաց Սերգոն:

- Սարի սիրտը տաք է, բալա՛, թող մի քիչ մութն ընկնի, կվառենք, որ մարդկանց սիրտը չմրսի,- թախիծով պատասխանեց հայրը: Հետո քիչ լռեց, ապա շարունակեց խոսքը, երբ արդեն երեխաների շրջանի մեջ էր:

- Ձեր պապի օջախն այստեղ է ծխացել, առաջին կրակը էրգրի իր ընկերների հետ նա է վառել, որ էն երևացող սարերին նստած անօրենը հասկանա՝ գաղթականի սրտի կրակ անավարտ է,- Ժորան ձեռքը երկար մեկնած դեպի Հայկական լեռնապարը, այնպես տաք ու կրակոտ էր խոսում, ասես իր կողքին ոչ թե ութ, տասը, տասներկու տարեկան երեխաներ էին, այլ վերջին գրոհի գնացող հայդուկներ: Մի պահ ինքն էլ սթափվեց, նայեց շուրջը, հեռուն, խոր հառաչեց: «Էրնեկ զինավառ գնդեր լինեին, դուք էլ նրանց հետ, ես էլ ձեր կողքին... Լիներ գարուն, ապրիլ, էդ ամսվա 24-ի պատաս-

խանը տայինք, կամքով ու կանչով ետ դառնայինք մեր հիշողության դաշտով, հորս կամոք հասնեինք Ղարս, իր ծննդավայր Նախիջևան, հետո Անիով ձգվեինք Ալաշկերտ, Վան, Մուշ ու Սասուն: Լիներ փորձության անհերքելի դաշտ, որ մեր պատասխանից ապրիլյան զոհերի հոգին լուսավորվեր...»: Մանվելը լուցկու մի տուփ գտավ քարափի տակից, հետո մի երկտող: Ժորան անշտապ բաց արեց, աչքերը վազեցին տողերի վրայով և գերադասեց բարձրաձայն կարդալ: «Բարձունքի կրակը միշտ պահեք, այստեղից է սկսվում մեր ճամփան...»:

- Ո՞վ է գրել, հայրի՛կ,- գրեթե միաբերան հարցրեցին երեխաները: Նա անմիջապես չպատասխանեց, ուշադիր զննեց ձեռագիրը, անձրև տեսած և խունացած թուղթը, հատ-հատ ու ընթեռնելի գրված բառերը և հաստատապես ասաց.

- Ձեր պապն է գրել, հիմա, որ վերադառնանք տուն, հարցրեք իրեն: Կամ էլ ձեր պապի ընկերներն են գրել, տեսեք՝ ա՜յ էն գյուղի մարդիկ են գրել,- մի տեսակ ընդգծված հպարտությամբ պատասխանեց հայրը և ձեռքով ցույց տվեց ներքևում՝ գոգահովտի մեջ երևացող Արեգ գյուղը:

Ժորան, որ հազար անգամ էր եղել այստեղ, իրեն բռնեց արթնացող հայտնության մեջ. ապրիլը զարմանալի օր էր իրեն մատուցում: Կանխորոշված չէր, որ բարձրանան սարի կատարը, ո՞վ կսպասեր երեխաների այստեսակ այցը, հնից պահված երկտողի «լույս աշխարհ» գալը, արևոտ լուսաբացն ու խաղաղ երեկոն: Զարմանալին նաև այն էր, որ ո՛չ ինքը, ո՛չ էլ երեխաները չէին ուզում ցած իջնել: Լեռան գագաթը հարազատի պես բռնել էր նրանց ու չէր թողնում: Արևը փախել, հեռացել էր, ստվերները ժայռերի տակ երկարուկ պառկած՝ քարափների տնազն էին անում: Ամպերից իջնող աննշան քամին հին օրորների ճոթը քանդել, բարակ ճոճվածքով սիգում էր բարձրաբերձ ժայռերին: Ժորան գիտեր, որ վայրէջքը մեկ ժամից պակաս ժամանակ էր պահանջելու, դրա համար չէր շտապեցնում, սպասում էր մինչև արևը կանհետանար սարերի հետևում, որ խարույկի ծուխն ու բոցը երևան հեռու-հեռվում: Գիտեր, որ առաջինը գյուղում կնկատեն, հայրը կտեսներ, երևի սրտում նախկին հրճվանքը կվերագտներ, որ իր խարույկի անթեղ կրակը պահող կա, որ Արտին սարի կարոտի շողքը չի մարել: Այդ կրակը մեկ-մեկ վառել էին ապրիլի 24-ին՝ որպես հիշողության բորբոքուն ասք, որպես լուսե գրություն անհանգիստ սրտերի: Բայց այդ օրը ապրիլի 20-ն էր: Ժորան ցանկանում էր, որ չորս օր շարունակ վառ

մնար այդ խարույկը, չորս օր բոցը բորբոքվեր: Այսօր իր հերթն էր, ինքն էր այն սահմանել, վաղը ուրիշները կգան: Նա գիտեր՝ ում էր ասելու, և ով պիտի կարոտի խրձերով ելներ այս կրակատունը: Երեխաները մոտեցան՝ ձեռքերում խոտի մնացորդներ, և առաջարկեցին վառել: Հայրը գրպանից հանեց լուցկին, աննշան բոցը տաքացավ նրա խոշոր մատների մեջ ու խոյացավ հավաքած չոր խրձերի տակ: Կրակի փոքրիկ լեզուն միանգամից բարձրացավ, հետո միամիտ նահանջեց աշնանից մնացած աթարների տակ: Աստիճանաբար խարույկը բոցկլտաց բոլոր կողմերից: Երեխաները մի քանի մետր հեռացան: Ժորան կանչեց նրանց, շոյեց գլուխները և բարձրաձայն ասաց.

- Էս կրակ միշտ վա՛ռ պահեք, հետո կգա ժամանակը, կհասկանաք, հիմա ուշ է արդեն, իջնենք:

* * *

Մարկոս պապը անհանգիստ նայում էր սարի ճամփին: Ձեռնափայտը ծանրացել, ինքը գլխահակ նստած էր սանդի քարին: Նա մեկ աջ էր նայում, մեկ՝ ձախ, ուզում էր անցնող-դարձողին հարցնել՝ Ժորային տեսա՞ք, երեխաներն իր հե՞տ են: Բայց չէր հարցնում, ոչ մեկի առջև չէր ուզում բացել իր տագնապը: «Լույս չբացված՝ գնացին ու չկան, գոնե իրար գտա՞ն...»: Ինքն իր հետ էր, մրմնջում ու մորմոքում էր: Հարսը՝ Սեդան, նույնպես մի քանի անգամ դուրս ու ներս արեց, բարձրացավ քարե աստիճանին, նայեց հանդերի ուղղությամբ, հայացքով որոնեց ու նորից դանդաղաքայլ տուն գնաց: Նա չկարողացավ երկար ոտքի վրա մնալ, իր հաշվարկով մեկ-երկու օրից վեցերորդ զավակը պիտի պարգևեր Ժորային: Սկեսրայրը աննկատ հետևեց նրա շարժումներին: Ծերունին տագնապեց, զգաց, որ հարսը դժվարությամբ է քայլում: Ժամերով մնում էր տանը, զրուցում երեքամյա դստեր՝ Ռուզաննայի հետ: Կնոջ՝ Գուլոյի ներկայությունը սրտապնդում էր նրան, անհույս ու տագնապալի պահերին նա միշտ աջակցել է իրեն: Այս պահին էլ նրա հանդեպ լցվեց շնորհակալ զգացումներով, որ հարսի կողքին է, մոր նման հարազատ է նրան:

Գաղթական Մարկոսի սիրտը չէր դիմանում, ամեն անգամ, երբ իր օջախը երեխայի էր սպասում, նրա միտքը Աստծո հետ էր, աղոթքի այնքան մրմունջներ էր շաղ տալիս, բայց այդ ամենն անում էր ծիսական ու թաքուն: «Էլ ի՞նչ աղոթք, որ իրենից ու Աստծուց բացի՝ մեկ ուրիշն էլ պիտի լսի...»: Այսպես էր նա, ճակատագրից վախեցած

էր, էրգրի ճանապարհին կորցրել ու չէր գտել. օրոցք ու օրոր էին խլել, սեր ու երազ էին փշրել: Ու չգիտեր՝ երբ էր, երդվեց՝ թե մի օր փրկության ափ հասնի, մեկ կորած օրոցքի տեղ տասը պիտի օրորի, պիտի ղարսեցի իր պապերի կարոտների ծառը արմատ գցի, շիվ տա, պիտի պտղաբերի իր հույսի այգին: Իսկապես չգիտեր, չէր հիշում, թե ե՞րբ էր երդվել, բայց գիտեր, որ երազը երկունք էր դարձել, հույսը պտղավոր հավատով իջել էր Արտին սարից: Եվ հիմա շրջապատին իշխող այդ սարը թաքնվում էր գարնան ու ապրիլի իրիկնային մշուշի մեջ, իսկ ինքը լարված հայացքը բաշխել էր շեն մտնող փոշոտ ճամփաներին, սպասում էր: Իրիկնացող գյուղում հաճելի բազմաձայնություն էր, երեխաների կանչ, պահմտոցի խաղացողների ճիչ, հանդից վերադարձող նորածին գառների մայուն, գոմերի ճամփան որոնող կովերի ու արջառների բառաչ:

Մարկոս պապը չէր հանգստանում, ձեռնափայտին ուժ տալով՝ բարձրացավ սանդաքարից, ելավ փողոց: Երեխաները ճիչ-ուրախությամբ ցույց էին տալիս Արտին սարի գագաթին ցոլցլացող կրակը, որն ընդգծված ծփում էր բարակ ամպադեզերի տակ: Ծերունին նույնպես նկատեց, կանգ առավ և ակամայից թիկն տվեց փողոցը երիզող քարե շարուկին: «Ժորայի ձեռքի գործն է, էն է, իմ սրտի կրակն է փոխանցում իմ թոռներին...»: Մտքերը գլորվեցին ու կանգ առան: Ակնթարթ սլացքով ներսում խմբաձայն իջան ու խառնվեցին անցած տարիների պատկերները, բայց դրանցից մեկը համառորեն մնաց, կառչեց ծերունու մտարշավ նժույգին և պղտորեց առանց այն էլ բորբոքված հոգին: Մոռանալու բան չէր, այսօրվա պես հիշեց իր խարույկի կրակը սարի կատարին, հիշեց պատերազմի երկրորդ տարին, ապրիլի 24-ը, իր միամիտ արարքը և իր «արարքի» նախադատն ու քննությունը գյուղխորհրդի անսվաղ ու գաղջ սենյակում: Կայծակի ցոլցլուն շեղբը դարձյալ զարկեց ու անցավ: Տարիների հեռվից այրող սպին թարմ ցավի շերտերով մղկտաց նրա հին ու անքուն վիրավորանքին: Մարկոս պապն այնքան խորն ու խռիվ հառաչեց, ձեռնափայտն ակամայից վեր տարավ և ակնթարթորեն զարկեց քարե շարուկին: Մեջը վրեժի մաղձ կար, վերքի կսկծուն շանթեր, որոնք ուզեց բաժին հանել քարին ու պատի լռությանը: Հետո իր կատարածից մեկեն սթափվեց. «Մեկնումեկը հանկարծ չտեսնի՞, թե գաղթական Մարկոսը ձեռքի փայտով քար էր ծեծում... Գյուղ է, ո՞ւմ հասկացնես, որ իմ հերսոտությունը բացգլուխ էն քննիչի նկատմամբ է, որ քսաներեք տարի առաջ սարի գլխին վառած օջախի համար տասը օր տարավ ու բերեց...»: Ինքն իրե-

նից խրտնած՝ պոկվեց քարե շարուկից, քայլեց գյուղամեջ, սակայն հին մտքերը թարմացել, ճշգրտված մանրամասներով վերադարձել ու թունավորում էին ծերունուն: Թեև սրա-նրա հետ կարճ խոսք էր փոխանակում, բարևում էր, կանգնում, բայց չէր ազատվում 1942-ի հետապնդումից: Եվ դարձյա՛լ հիշեց քննիչ Սանդոյանի դեմքը, շրջկենտրոնի հատուկ ծառայության շենքի նկուղային հարկը: Ծանր հևոցը բարձրացավ, կանգնեց կոկորդին: Ինչպես հիմա, մտաբերեց դառը քրթմնջոցն ու բիրտ հարցերը, իր ճիգ ու ջանքը, երբ փորձում էր համոզել, որ սարի կատարին ցուրտ էր, կրակ վառեցի, տաքացա, մինչև որ ոչխարի փոքրիկ հոտը իրար գլխի եկավ, ու ցած իջա: Բայց Սանդոյանը չէր հեռանում իր համար շատ կարևոր մի հայտնությունից և հարցնում էր. «Կրակն ինչո՞ւ վառեցիր հենց ապրիլի 24-ին»: «Ընկե՛ր Սանդոյան, էդ ի՞նչ օրենքով է որոշված, որ սարի գլխին ապրիլի 24-ին անկարելի է կրակ վառել, էդ ո՞ր օրենքն է, որ կարող է փակել կարկուտի ու անձրևի ճամփան, ես ի՞նչ մեղք ունեմ, որ հենց էդ արևպադոցին սարի գլխուն կարկուտ զարկեց, մրսեի՞, սառեի՞, Աստծու հերսոտություն էր, ընձի էլ կրակ էր պետք...»:

Մարկոսի խոհերը հիմա դարձյալ առապարից դուրս էին սայթաքել. մանավանդ, որ նրան փողոցում խանգարող, լսող ու հարցնող չկար, դարձյալ վերադառնում, վերաքննում ու չէր հանգստանում: Հայացքը՝ բռնկուն ու սլացիկ, կրկին ձգվեց ու հասավ մութի վարագույրների վրա սարագլխի վետվետացող բոցերին: «Ապրի՛ք, զորանա՛ք, էդ կրակ վառ ու վառ պահեք...»: Մտքերի վտառը դեռ չէր հեռացել իրենից, երբ թոռները ուղիղ դուրս եկան դեմ ու դիմաց:

- Պա՜պ, պա՜պ, նայի՛, քո հին օջախի կրակն ենք վառել,- այս ու այն կողմից լսվեցին փոքրիկների զրնգուն ձայները: Մոտեցավ նաև որդին՝ Ժորան:

- Հայրի՛կ,- նա բռնեց հոր ձեռքը և անխոս նայեց լեռան ուղղությամբ:

- Պարզ է, շատ սրտամոտ ու պարզ է,- աչքերը ճպճպացնելով՝ ասաց հայրը,- բայց էսօր ամսի քանի՞սն է:

Ժորան հասկացավ հոր ակնարկը:

- Ապրիլի 20-ը:

- Բայց չէ՞ որ...- միամիտ ու կերկերուն հնչեց ծերունու ձայնը:

- Չորս օր շարունակ վառ կպահենք էդ կրակը, հայրի՛կ...

- Հա՜, պարզ է, ապրիք,- ժպիտը ողողեց գաղթական Մարկոսի դեմքը: Նա շուռ եկավ, որ գուրգուրի թոռներին, բայց նրանք արդեն տուն էին վազել:

- Ժորա՛, ախր շատ ուշացաք, էն հարսն էլ անդադրում էր, հանգիստ չունեցավ առավոտից մինչև հիմա,- նրանց մոտենալով՝ անուշ ու հանգստացնող շշուկով խոսեց մայրը՝ Գուլոն:

- Դա էլ է պարզ,- ասաց Ժորան և դարձյալ մատնացույց արեց գագաթի կրակը:

- Տե՛ս, որ էդ կրակ էլի քննության առիթ չդառնա, կասկածանքի բոցի մեջ չառնի քեզ, տղա՛, աշխարհք դեռ ծուռ է, շիտակություն չի հասկցվի,- տագնապը նկատելի էր ծերունու դողդոջուն ձայնի մեջ,- էդ կրակ առաջին անգամ ես ու դու վառեցինք, կհիշի՞ս:

- Այն տարին ու օրը չեմ մոռացել, հայրիկ, հիմա էլ նշանավոր է՝ լրանում է 1915-ի կոտորածի հիսուն տարին, աշխարհում ինչքան հայ կա, միացել ու պահանջում են, որ պետությունը վերհիշի այդ օրը, որ աշխարհը չմոռանա միլիոնավոր անմեղ զոհերին,- կարծես օրվա իր տևական բացակայությունն էր արդարացնում որդին:

- Անմեղ արյուն անհնար է մոռացության տալ, հազար տարի էլ անցնի, քնից ու քարկապանից կզարթնի, իր անուն ու հասցեն կբաշխե աշխարհին,- որդու խոսքերից ոգևորվեց ծերունին՝ մոռանալով այն սպասումն ու տագնապը, որ առավոտից իրիկուն նրան ժամապահի պես պահել էր դրսում:

Երբ բակ մտան, հայրը որդուն առաջարկեց օգնել իրեն, որ քարե աստիճաններով բարձրանա թոնրատան հարթ տանիքը:

- Կուզեմ մոտիկից առնեմ էդ կրակի տեսարանը:

Ժորան անկարող էր մերժել, գիտեր, որ այդ կրակը սովորական ծուխ ու բոց չէր, դրա իմաստն ուրիշ կերպ էին հասկանում իր հայրը, գյուղում ապրող նրա համերկրացիները: Կտուրին Մարկոսը նստեց ծալապատիկ և շարունակեց ակնապիշ նայել Արտին լեռան խորհրդին: Նրան թվաց՝ իր դիմաց խոյացած լեռը խավարին ձուլված մի վիթխարի մարդ է, գուցե թե Հայկ նահապետը, որը շուրթերից զայրույթի ծուխ է արձակում, մռնչում է ամպ ու կայծակի հետ, ձեռքը՝ աստղերին, հոգին՝ կանաչ արտերի սոսափների մեջ: Ծերունու սիրտը ձայնածոր ծփաց, տեղից այնպես ելավ, կարծես վանդակած արծիվ էր, ձգտում էր ազատության: Մարկոսն աչքերը բաց ու խուփ արեց, տեսիլք չէր, Արտին սարն էր՝ կրակե թագը գլխին, ստվերները փախչում էին, պարզվում էր երկինքը, վերևում շատանում էր աստղացոլանքը: Մրմունջ-մղկտուքը հրմշտեց գաղթական Մարկոսի շուրթերը, ռունգերում ծխաց կարոտի շոգե շռինդը: «Էղներ էնպես, որ էս հեքիաթը շալակած՝ հասնեի Ղարս, էս կրակի անուշ թևքից մի ծվեն շաղեի իմ հոր ու մոր գերեզմանին, մի

պտղունց էլ տայի մոլոր ճամփեքին, քար ու անձավներին, ձոր ու աղբյուրներին, որ անշիրիմ մեռելները խաղաղվեին, ու լույս իջներ նրանց հոգիներին...»:

* * *

Գիշերը կիսվել ու իր խաղաղ կառքին նստած՝ խորանում էր խավարի հեռուն: Մարկոսն ուշ իջավ կտուրից, ուզում էր այնտեղ մնալ՝ գլուխը բարձին դրած, սակայն որդին առարկեց: Հիմա նա հանգիստ ննջում էր, գուցե երազաթև արծիվը նրան հասցրել էր Ղարս ու Նախիջևան: Նրա կողքին Գուլոն էր՝ օջախի մեծ մայրը, թոռները՝ Սերգոն, Մինասը, Գրիգորն ու Մանվելը: Մյուս սենյակում Ժորան ու Սեդան էին, նաև երեքամյա դուստրը՝ Ռուզաննան: Քնած չէր միայն մեկը՝ Սեդան: Որքան էլ նվում էր մարմինը, և աչքերն ակամայից փակվում էին, սակայն ամոքիչ հույսն ու բարության տագնապները ծեծում էին կողերը: Առայժմ նա չէր ուզում ոչ մեկի անհանգստացնել, մանավանդ քնից հանել՝ գիտենալով, որ բոլորն էլ հոգնած են. Արտին լեռ բարձրանալն ու իջնելը սովորական արշավներից չէին: Սեդան մտքում մեկ-մեկ մտաբերեց հինգ զավակներին. փակ կոպերի տակ հատ-հատ ժպտաց ամեն մեկին, ինքն իրենով հետ դարձավ ու ճամփորդեց տարվա այն օրերով, որոնց մեջ բարուրել էր նրանց, համբուրել ու պարգև-գանձի պես դրել սկեսրայրի գիրկը: Աշխարհ-աշխարհով անցնի, Սեդան չի մոռանա այն վայրկյանների պայծառակերպությունը, որով գաղթական Մարկոսը, թոռան բարուրին ձուլված, հասնում էր տիեզերք, ապա ծունկ իջնում օրորոցի առջև, խուփ աչքերով օրհնություն խնդրում Աստծուց: Սեդան հիմա դարձյալ այդ ոգեսփյուռ խանդաղատանքի նախաշեմին էր, գիտեր, որ վեցերորդ անգամ է ականատես լինելու գաղթական ծերունու վերակերպությանը, նրա թրթռացող թալիսմանների մեղմանուշ զնգոցներին, որ արյան կանչերի անտես զարդ-շղթաներով բոժոժելու է օրորոցի փայտե քիվը, շամանդաղից զարթնած նրա շունչը: Բռնկված մտքերի ոսկե պարտեզում գարնանային գիշերը մեղեդային սրսփուկ էր բերել: Անծանոթ հաղորդության փայլը պատուհանից ներս էր խուժել, փարվել մահճակալին, և փափուկ փոթորիկը կարծես օրորում էր նրան: Սեդան հասկանում էր այդ հարագնա փոթորկի սկիզբը, որ որպե առ որպե ուժգնանում, ոտից գլուխ նրան ծածկում էր լույսի ծաղկավոր զգեստներով: Ճակատին պսպղացող քրտինքը, հույսի վրնջացող թրթիռները տագնապի տուրքով իջան, և սենյակը մրմնջաց ավետիս-աղոթքով:

- Ժորա՜, արթնացի՜ր...,- Սեդայի բարձր ձայնը նրբահյուս աղերս-կանչերի հորդորով արթնացրեց պատերի քնած խաղաղությունը: Ամուսինը ակնթարթորեն վեր թռավ, վառեց սենյակի լույսը: Նրա աչքերի առջև շառագունել էր Սեդան, քրտինքը ծորում էր տաք երանությամբ:

- Շտապի՛ր, Արաքսուն բե՛ր...

Այս նախադասությունն Աստծո շուրթերի հաստատ վկայությամբ Ժորան լսում էր վեցերորդ անգամ: Խենթության հրայրքը էլեկտրական ցնցումով դղրդաց նրա ներսում, մի երկու վայրկյանում հագնվեց, արթնացրեց մորը և դուրս թռավ:

Արեգ գյուղը քնած էր, տեղ-տեղ լույսեր էին վառվում փողոցներում: Գիշերով արձակված շները, հրմշտելով իրար, հաչում ու խումբ-խումբ սլանում էին այս ու այն կողմ: Ժորան չգիտեր՝ վազում է, թե թռչում: Հեռու չէր մանկաբարձուհի Արաքսյայի տունը, բայց թվաց՝ աշխարհի ծայրին է: Հանկարծ նրա աչքը դիպավ խավարի մեջ երևացող կրակին: «Լեռան սրտի կրակը դեռ ծխում է, աթարի դեզն է, չի հանգել...»: Ակամայից կանգնեց, հայացքը չէր կտրում սարից, նաև ուզում էր շունչ առնել: «Ի՜նչ զուգադիպություն է, իմ վառած կրակն ու իմ երեխայի ծնունդն էս գիշեր եկան ու հանդիպան իրար: Հիմա գյուղը քնած է, էս բարության վկաները ես ու էդ կրակն ենք, Աստվածն ու Սեդան...»: Կանչող, անդիմադրելի երանությունը ողողեց հոգին, սթափվեց և ավելի արագ սուրաց խավարի միջով: Քիչ անց այնպիսի աղմուկով ծեծեց մանկաբարձուհու դուռը, որ կողքի տներում արթնացան հարևանները:

- Ես գիտեի,- ասաց Արաքսյան,- ես սպասում էի:

Ժորան չէր խոսում, նրա ձեռքից բռնած՝ վազեցնում, թռցնում էր:

- Հանգի՛ստ, քեզ մի՛ սպանի,- հազիվ ասաց բուժքույրը,- այնպես ես տագնապում, կարծես առաջին անգամ ես հայր դառնում:

- Առաջին ու վերջին չկա, Արաքսյա՛, Սեդան քո արյունակիցն է, հասի՛ր օգնության, մայր է, չէ՞, վեցերորդ անգամ Աստծուց պարգև է բերում:

Բակում, ձեռնափայտը կտկտացնելով քարե սալահատակին, Մարկոսը գնում-գալիս էր, ոտնաձայներ լսեց, չհամբերեց և գրեթե գոռաց.

- Ժորա՜, ի՞նչ եղավ քըզի, տղա՛, Ղարսն ավելի մոտ էր:

- Հայրի՛կ, Ղարս չհասա, բայց ղարսեցու թոռնուհուն բերեցի, ահա՛,- շունչը տեղը բերելով՝ ասաց որդին և դռները բացելով գրեթե ներս հրեց բուժքրոջը:

- Աշխարհ փոխվավ ու զարգացավ, բայց Արեգ գյուղը տեղից չշարժվեց,- անհանգստացավ մայրը՝ Գուլոն,- շրջկենտրոն ու քաղաք կա, ծննդատուն ու բժիշկներ կան:

- Մայրի՛կ, Արաքսյան բժշկուհի է ու փորձված, մի՛ կասկածի, կլսի, կվիրավորվի:

- Իր մասին մենք էլ լավ կարծիք ունինք, մեր վախը բարության փրկելն է, ամեն ինչի պըտի պատրաստ էղնիս,- անհանգստացավ հայրը:

- Նստի՛ր, հայրի՛կ,- առաջարկեց որդին, և ինքն էլ փուլ եկավ նրա կողքին՝ սանդի քարի դիմաց:

...Արաքսյան այլ պարագաների կարիք չունեցավ, Սեդան վաղօրոք ամեն ինչ նախապատրաստել էր: Փորձված բուժքրոջ ներկայությունից նա սրտապնդվեց, խնդրեց սկեսրոջը, որ Ռուզանին տանի եղբայրների սենյակը, և լուռ աղոթեց:

Դրսում ընդամենը մի պահ խտացավ մութը, ապա դանդաղ կորցրեց իր թանձրույթը: Հայր ու որդի, թիկն տված խոշոր քարերով շարված տան պատին, ճամփու էին դնում հեռացող գիշերը: Նրանց աչքերի առջև գնալով քչանում էր լեռնագագաթի կրակը, դարձի անտեսանելի շողերով լուսաբացը սկսում էր շոյել Արտին լեռան լանջերը: Տեսանելի ու տաք գարունն արթնանում էր քնից:

- Լուսաբացը մոտենում է, հայրի՛կ:

- Բարով տուն գա,- տեղում անհանգիստ շարժում արեց ծերունին և դարձավ որդուն,- էսօր ամսի քանի՞սն է:

Ժորան գիտեր, որ հայրը ոչ միայն ամիսը, այլև տարին ու օրն էլ չէր մոռացել, բայց միշտ նրա հարցերը ենթատեքստ ունեին:

- Այսօր, հայրի՛կ, 1965 թվականի ապրիլի 21-ն է...

- Հիշեցի, այ, է՞ն կրակից հիշեցի, որ չորս օր իրար հետևից պըտի վառվի ու բոց տա,- Մարկոսը ձգվեց վեր ու մշուշոտ հայացքի մեջ գուրգուրեց երևացող կրակի վերջին ծվենները:

Դուռը աղմուկով բացվեց: Արաքսյան լույս ու մթան մեջ նման էր երկնքից իջած հրեշտակի:

- Աչքներդ լույս, տղա ունեցաք...

Ժորան վեր թռավ ու վազեց բուժքրոջ մոտ: Մարկոս հայրը դանդաղ ծունկ իջավ սանդի քարի կողքին, ձեռնափայտը գցեց մի կողմ, գլուխը վեր բարձրացրեց և հոգեբուխ շշնջաց.

- Փառքդ շատ, Աստվա՛ծ, որ էլի փառավորեցիր գաղթականի իմ հոգին,- ուզեցավ շարունակել, խոսել, ճչալ, բայց լեզուն կարծես լալկվեց: Նա գլուխն իջեցրեց քարին, և ցնցվեցին նրա չորացած ուսերը:

Մարկոս պապը հեկեկում էր: Նրա ներսում ցավի խտացված վերջին բերդերն էին քանդվում. ավելանում էր թոռների շարքը, հիշողության երամի արծիվներն էին գալիս, իր հոր ու պապի կանչերի որոտից ծնվում էին ծիածանի նոր գույներ:

- Հայրի՛կ...

Ծերունին գլուխը դանդաղ բարձրացրեց, շտկվեց տեղում, բայց մնաց ծունկի իջած: Իր դիմաց որդին էր, նրա գրկում սպիտակ սավանի մեջ նորածինը՝ խոշոր ու կայտառ, աչքերը հրածին: Պապը ձեռքերը պարզեց, գրկեց մանկանը, մոտեցրեց: Լույսի լրաբերը Արտին սարից սահել, մտել էր գյուղը, լցվել դուռ ու երդիկ: Շողքի մի բարակ թրթիռ զնգաց նորածնի դեմքին. պապը թեթև սեղմեց նրան իր կրծքին և այնքան մոտիկից զգաց իր հոր ու պապի տոհմական ծանոթ բույրը:

...Եվ մինչև բերանացի լրաբերը մանկան ծննդյան ավետիսն էր հասցնում գյուղի հեռավոր տները, Մարկոսի դռան առջև՝ բակում, սանդի քարի վրա օղիով լեցուն բաժակներ էին ավելանում: Շուրջը տասնյակ մարդիկ էին, կենաց խոսքը բարության ճոճքով կախվել էր տան նախշազարդ վերին քիվերից: Մարկոսն զգում էր, որ զարդարուն խնկաբույրով է ծորում երջանկության օրորը, որին ինքը դարձյալ մի ուրիշ խորհրդով էր սպասել: Չէր ուզում բարձրաձայն ասել այդ մասին, իրեն չէին հասկանա, չէ՞ որ մինչև այս նորածինը թոռների սքանչելի շարք էր Աստված պարգևել իրեն: Այնուամենայնիվ, մի տեսակ ներքին բավականություն էր շղթայել նրան, և ինքը հոժարակամ ուզում էր դառնալ նրա գերին:

Կեսօրվա մոտ ամբողջ գյուղն էր հավաքվել գաղթական Մարկոսի բակում: Սովորույթ էր, ծնվող արու զավակի առիթով հավաքվում էին էրգիր ու ծննդավայր կորցրածները: Երեխայի ծնունդով նրանք մեծ դարձի տոնն էին անում, շնորհավորում միմյանց, շենանում ոտքի վրա, շքավոր ուխտի տեսիլքներ շաղ տալիս աշխարհ եկած մանկան օրոցքի չորս բոլոր: Այդպես էր նաև գարնան այդ առավոտ՝ ապրիլի 21-ին: Արեգ գյուղն էր հավաքվել. արեգակունք թալիսմանների դաշտից ամեն մեկն իր սրտի հևքից մի-մի պատառ շշուկ, իր հոգու աղոթքից կուց-կուց մասունք էր բերել: Ինչ-որ ասում էին, ավարտում խոսքն ու օրհնանքը, անմիջապես հայացքները ճախրում էին լեռան թամբին, անցնում-գնում երկնքի հեռավոր դռները՝ հավաստելով, որ Աստծո կամոք էին ուրախանում, ամենակարողի վկայությամբ անկեղծ էին, սիրառատ: Խնդության ոգեբարուր ծեսն այնպես շռայլ էր, կարծես չէր ավարտվելու: Պատահում էր, որ մեկն ու մեկը հա-

մարձակվում էր մանկանը անուն տալ՝ անկախ այն բանից, որ կարող էր մերձավորների սրտով չլինել: Ժորան չէր էլ հասցրել, մտքովն էլ չէր անցել ինչ անուն տալ մանկիկին, սակայն հավաքվածներից մեկը, օղու գավաթը գլխից վեր պարզած, բացականչեց.

- Վերջապես եկավ պապի անունը կրող թոռը:

- Մարկո՜ս, Մարկո՜ս,- այս ու այն կողմից միացան մի քանիսը, բաժակները շրխկացին: Ժորան նայեց հորը, գիտեր նրա կտրուկ բնավորությունը, որոշակի կարծիքը:

- Սպասե՛ք, առաջ անցե՛ք մի,- ձեռնափայտին հենվելով՝ ոտքի կանգնեց ծերունին,- կհարգիմ բոլորիդ կարծիքը, բայց իմ անվան տերն առայժմ ես եմ... Գաղթականին ուժ տվողը ոչ թե անունն է, այլ արյունը: Էս գարնան ու ապրիլին թև առած արծիվը Թաթուլի պես թող քաջ էղնի...

Բոլորը ոտքի կանգնեցին, ծերունին դողդոջ շուրթերով մի փոքրիկ հատված արտասանեց Թմկա բերդի պատմությանը նվիրված պոեմից և առաջարկեց խմել քաջության, գործի անմահության, ազնվության և նվիրումի համար:

Ժորան հասկացավ, որ հարցը փակված է, Արեգը իր նորածին զավակին բաշխեց Թաթուլ անունը:

1965 թվականի ապրիլի 21-ի լուսաբացն էր:

* * *

Արեգ գյուղը սար ու ձորերի ուսին էր, պահունի զրույցներով ամուր նստած գոգահովտի թամբին: Գյուղի տեղն ու դիրքը, իրոք, թամբի էր նման, իսկ թվացյալ նժույգի սմբակները կարծես ճեղքել էին սևահողը, նրա թռիչքադաշտը վեհաձիգ հառնել էր Զարինջայից մինչև Թալին, ոսկեբաշ գլուխը Արտին լեռան շուքերին էր: Այստեղ իրենց պատմությանը նայում էին այնպես, ինչպես լուսաբացն էր իր պատումը հանձնում արտերին: Հնի ու նորի և բարու հուսընծա պատկեր կար այստեղ, բառ ու բանի արձակ մտերմություն, որ անուշ ու մեղեդային բարբառի շողերգով անցնում էր բերնեբերան: Անքուն էր գյուղի հավաքական միտքը, ոգին ազատ էր ինչպես արծիվ, որպես անմատչելի ճախրանքներից իջած ոսկեշաղ անձրևի սոնետ: Զգալ էր պետք գյուղի մեծ սրտի տրոփյունը, այն էլ մոտիկից, իմացյալ լրիվությամբ, որը, օրվա իր բաժինը ճյուղավորելով անցյալի ու ներկայի միջև, անտես զարկերակներով խարսխվել էր վեհության օրենքներին: Դրանց վկաները եկել էին հեռվից, կորցրել ու գտել էին, հորովելի հետ հառնել էին և պսակվել հույսին:

Դրանց վկաները սիրել էին, սերել, հարսանիք ու հավատամք էին լցրել գյուղի երդիկների տակ, շիկնել էին, շոյել, հասկածեծ կամ էին քշել, աղոթքի դուռ գտել Արտին լեռան բարձունքներին:

Ինքնաճանաչման այս անձնագիրը վերաբնակները ծոցերով, իրենց սրտին մոտիկ, իրենց աչքերի խորունկ խորաններով բերել ու բաշխել էին գյուղի արտերին, խառնել հացի հետ, գերբնական թալիսմաններ հյուսել տան գերանների տակ: Ամեն նորածին նախ սուզվում էր բարության այս բարուրի անեզր աշխարհը, ապա փնտրելով լույսի անբառ բժժանքը՝ ձգտում էր հասկանալ իր թարգմանությունը մայրալեզու: Այդպես էր նաև Թաթուլի դարձը պապ Մարկոսի համար: Նա մտքում հաշվում ու գումարում էր: Դա, կարծես, պարտադիր գործողություն էր, որի ընթացքում թոռների շարքը հոգու իր ճանապարհը բռնած այնքան էր մոտենում իրեն, որ ինքը գերագույն ուժերի լարումով զսպում էր ծանոթ երանության գոլ շունչը: Նրա համար այդ պահը ծիսական և անթարգմանելի հոգու արար էր, երբ սրտի վախվորած տեսիլքների մեջ գտնում էր էրգրի ճամփեքին թողած հարազատներին ու նրանց լռության դիմաց մտքում շարք կանգնեցնելով նրանց՝ մեկ-մեկ շշնջում էր.

- Սերգո՛, Մինա՛ս, Գրիգո՛ր, Մանվե՛լ, Ռուզաննա՛, Թաթո՛ւլ... Անունների այս արտասանությունը աղոթաբարբառ տուրք էր նրանց, որոնց հետ Մարկոսն այնտեղ՝ էրգրում, կրել էր տոհմական առավոտի իր բաժինը, սակայն մոլորյալ ճակատագիրը փակել էր նրանց դարձի լույսը: Մարկոսի մեծ ու ընդգրկուն հանգստությունը հիմա թոռներն էին: Մինչև երկինք շնորհակալ էր նա Սեդա հարսից, որն իր օջախը շենացրեց, կտուրի տակ շատացրեց էպոսական զրնգուն միտքն ու բարբառը, ավետիս-կանչերով թարմացրեց օրորոցի շունչը... Որտեղից որտեղ նա վերհիշեց Ժորայի և Սեդայի հարսանիքը, գյուղի ոգեվառ ծփանքը: Այդ տարի հացառատ էին Արեգի դաշտերը. փառքը հորդում էր գյուղի փողոցներով, փառավորության պարգևը երկնքի ու երկրի պտղաբերող շռինդն էր, երջանկությունը՝ բնության անկորնչելի բնույթը: Վերհուշի թերթիկները հիմա նա մեկ-մեկ գտնում, օրվա պատկերներով հանձնում էր հոգու տարեգրքին, ուզում էր ամբողջացնել իր ճանապարհի ճիչն ու բարձրյալի խորհուրդը: Դանդաղ ու զգույշ բարձրացավ թոնրատան հարթ կտուրը, շունչը տեղը բերեց, նստեց, լուռ փակեց աչքերը, հիշեց Նախիջևանն ու Ծփնին, մտքով գտավ հայրական օջախը, կողքին մյուսները՝ տասնյակ ու հարյուր: Կտուրին ծիլ տված խոտ ու ծաղիկներ էին: Նա, մեղմ հառաչելով, ձեռքը

երկարեց փունջ-փունջ ցփնված երեքնուկներին, պոկեց նորաբաց կակաչը: Օրն ու տարին գարնանը այսպես էին ծաղկում էրգրի հին տան երդիկին: «Հերի՛ք է Մարկո՛ս, իրար խառնիս հին ու նոր ցավ, ինչ-որ անցնելու էր՝ անցավ-գնաց: Ապավինի՛ր քո զավակներուն ու թոռներուն, աշխարհն ուր մռութ ծռեց ու անցավ... Օղորմի քու հոր, Սեդա՛,- մտքերի շարուկին վերստին հարսին հիշեց,- օղորմի ու հազար օղորմի քու Սմբատ հոր, որ քու նման աղջիկ պարգևեց, ու իմ տոհմ ծաղկավ...»:

Հայացքը սահեց գյուղի փողոցներով, գնաց հասավ իր խնամի Սմբատի տուն: Մեղմ հառաչեց, երիցուկի փունջը կամացուկ ձգեց, արմատահան դուրս եկան ծաղիկները: «Աստծուն հավատա, չէի ուզենա արմատից պոկեի, Սմբա՛տ: Մտքիս մեջ դու էիր, տղա՛, քու ղարիբ ճամփան էր ու հիշողության էն հին կրակ, որ ես ու դու վառեցինք արծվաբնի տակ...»:

Տխրուն քամին վազեց ծերունու հոգու ճիչերով, հիշողության կծիկը պոկվեց ու գնաց: Մտքում մեկ-մեկ գտավ ու իր հարցը տվեց 1941-ի պատերազմից չվերադարձած համագյուղացի քաջերին: Աչքերում թրթռաց թաց ամպը, հայացքի հեռապսակը մթնեց, հետ եկավ ու սսկվեց ծերունու չորացած կրծքի տակ:

«Արեգ գյուղից 58 մարդ մնաց պատերազմի բոցերի մեջ: 58 մարդ դատարկ թողեց տուն ու երդիկ, հանդի ճամփա ու ընտանիք... Սմբա՛տ, քու հալալ կաթնակեր աղջիկ Սեդան դարձավ իմ հարսը, քու արյան զրինգ շողքից դու բաժին հանեցիր իմ թոռներուն, շնորհակալ եմ քե՛զ, իմ կորա՛ծ ախպեր...»: Տանիքի հարթության վրա մայրամուտից առաջ ոսկի գույներ էին հավաքվել: Մարկոսին թվաց, որ հեռանալուց առաջ արևը իրեն շողքի բաժին էր տալիս, որ մինչև հաջորդ լուսաբաց նորից սաղմոսով գար, որ ինքը չկորցներ զրույցի արևային թելը: Հանկարծ զարմանալի հետաքրքրությամբ սկսեց մեկ-մեկ հաշվել գյուղի տները, նրանց շրջապատող ուռիներն ու բարդիները, Աշնակից բերած ծիրանենիները: Գյուղում, երբ երեխա էր ծնվում, հավաքվում էին բոլորը, այդպես էլ ծառ տնկելիս պետք է իմանային: Մարկոսը, վիզը ձգած, հաշվում էր, հրճվում, բայց հետո զգաց, որ նստած տեղից պատկերները ամբողջական չէին: Ցանրությամբ ոտքի կանգնեց, հենվեց ձեռնափայտին և աչքը դիպավ դպրոցի շենքին: Բակն ամայի էր. նախ իրիկնամուտ էր, և հետո՝ ամառային արձակուրդներ էին սկսվել, երեխաները թռել էին վանդակից փախած թռչունների նման: «Արեգի դպրոցը քեզնով է լավ, ընկե՛ր Վարոսյան, քու սրտի մեջ ուրիշ կրակ ու

հույս կա»: Հիշեց՝ անցյալ նոյեմբերին դպրոցի ղեկավարության հրավերով ինքն էր գնացել մասնակցելու ծնողական ժողովին: Իր թոռների համար գովքի ու շնորհակալական խոսքեր ասացին, ինքն էլ խոսեց: Հիմա իր տան կտուրից նա մտքով հասել էր մեկ տարի առաջ գումարված այդ ժողովին, ուր իր ասելիքը լսեցին և իրեն՝ կիսագրագետ գաղթականին, ասացին՝ կլինես ծնողական կոմիտեի կազմում: Կոմիտե բառի համար միանգամից ուրախացել էր, որովհետև դեռ էրգրուց գաղափար ուներ հեղափոխական կոմիտեների մասին, գիտեր դրանց գործունեությունը, հանուն արդարի նրանց պայքարի մանրամասները: Ու երբ պարզաբանեցին, որ դա ընդամենը գյուղական դպրոցին մոտ կանգնած մի խումբ է լինելու, այս կամ այն հարցով պիտի աջակցի ուսուցչին, Մարկոսը դարձյալ չխրտնեց, իրեն համոզեց, որ իր իմացած կոմիտեի անդամն է ու մի բանով պետք կգա:

Ծերունին իր տան տանիքին սովորության համաձայն փորձեց օրերի մեջ մսխել իրեն, բարակ շղարշի պես խառնվել գյուղի անքուն «փեթակին»: Իսկ ներքևում՝ նրա աչքերի առջև կենսաձայն շուք էր՝ իրարով նժարված, միասին ու մեկ հարևաններով, անցնող-դարձողներով, հարց ու փորձ անող կանանցով, որոնք փողոցը երիզող պատերին ձուլված՝ քչփչում, քրթմնջում էին, կծու բառերը պահում գլխաշորի տակ: Ծերունին սթափվեց. տան բակից ինչ-որ մեկը որդուն՝ Ժորային էր հարցնում: Գուլոն տանն էր, հարսն ու թոռները՝ նույնպես, բայց գերադասեց ինքը պատասխանել: Քարե աստիճաններով դանդաղ իջավ: Կոմբայնավար Անդրանիկն էր՝ ձեռքերի մեջ լուսամուտի ջարդված շրջանակը:

- Քեռի՛ Մարկոս, վարպետ Ժորայի կարիքն եմ զգում, տե՛ս,- իրարահան շրջանակը ցույց տալով՝ ասաց Անդրանիկը:

- Բարության պահանջ ունի՛ս, հասկացա, բայց Ժորաս էսօր շրջկենտրոն գնաց՝ իր նոր ծնված զավակի ծննդականը բերելու,- ժպտաց Մարկոսը և առաջարկեց նրան ներս մտնել:

- Շնորհակալ եմ, աչքներդ լույս լինի,- շրջանակը մի կողմ դրեց Անդրանիկը և երկու ձեռքով ամուր սեղմեց ծերունու կոշտացած ափը,- անունն ի՞նչ եք բաշխել...

Մարկոսը բազմանշանակ ժպտաց և այնքան խանդաղատանքով բացականչեց.

- Մեր տղու անուն Թաքուլ դրեցինք, Անդո՛, իմ մեջ էդ անուն պատեպատ կզարկվեր, որ լույս աշխարհ գար, աշխարհից ու Աստծուց թաքուն մրմնջացել եմ էդ խորոտիկ բառ, շնորհակալ եմ, վերջ ու

վերջ իմ մուրազ կատարվավ, տղեն եկավ հասավ ընձի:

Անդրանիկը գրկեց ծերունուն, նրա ուրախության շուքի տակ հասկացավ, որ գաղթականի սրտի խոսքը կարոտի թրծվածք էր և ուխտի կատարում: Մի պահ նա շփոթվեց, կարծես, մոռացավ, թե ինչի համար էր եկել: Մարկոսի երջանկացած աչքերը կախարդել էին իրեն, ու ինքը խեթ նայեց ոտքերի տակ ընկած շրջանակին:

- Թող մնա էդ փեղկ, Ժորան կգա, կսարքի,- ասաց Մարկոսը՝ զգալով, որ Անդրանիկը ինչ-որ փակուղու մեջ է:

- Հոգս մի՛ դարձրու, քեռի՛ Մարկոս, ձմեռն անցել է, շտապելու բան չունեմ:

- Էդպես մի՛ ասա, ձմեռ թե գարուն, տան դուռն ու լուսամուտ պետք է փակ ունենան, պապենական խոսք է՝ դուռդ փակ պահե, որ ուրիշին չասես՝ գող է:

Անդրանիկը գոհունակ ժպտաց և մանրաքայլ հեռացավ:

Մարկոսը երկար մնաց կանգնած: «Մարդուն ինչքան քիչ բան է պետք, որ էնի հասկնա իր ապրելու արժեք... Հա՛, հա՛, Մարկո՛ս, դու էլ հասկցար, որ գաղթականի քու դժբախտ կյանքին քառասուն տարի հետո միայն արևը գոլ շունչ բերեց»: Ինքն իրեն զրույցի մեջ բռնեց ծերունին ու գորովալից նայեց իր տան բաց դռներին, ներս ու դուրս վազող թոռներին, հայացքով վեր սլացավ, հոգնած աչքերի տիրույթում վառվեցին ամպադեզերը՝ կապույտ ու սլացիկ: Արևի օրորուն շուքը վաղուց հեռացել էր Արտին սարից, օրը կիսվել ու զրնգուն փեթակի պես բոժոժել էր գյուղի պատկեր-պսակը: Մարկոսը մտքերի հետ էր և չնկատեց թիկունքից մոտեցող հարևանին: Արշակն էր: Այնպես ուրախ գտան իրար, հոգու խորքից բարևեցին, կարծես վաղուց չէին հանդիպել: Մարկոսը ներս հրավիրեց նրան: Հարսը՝ համեստության ու պատկառանքի շուքը պահպանող Սեդան, գլխով բարևեց, թեթև ժպտաց:

- Աստված ուր հոր՝ Սմբատի ղարիբ ճամփեն կանաչ պահե, թող գա հասնի ուր գերդաստանին,- ասաց տանտերը, երբ հարսը մտել էր մյուս սենյակը,- իմ Ժորան ու Սեդան գաղթական իմ հոր պարտքեր փակեցին:

- Սմբատն ուրիշ հոգի ուներ, Մարկո՛ս:

- Նրա աղջիկ նմանապես, Սեդան իմ տան շենացնող պատն է, խելացի է, դժվարությունները տանող, վեց օրոցք է օրորել իմ հարկի տակ: Թող թուրքը քոռնա, թող Աստված վերևից տեսնի ու շատ չհամարի ոչ միայն իմ ու քու, այլև մեր դուռ ու դրկիցների, էդ սարերի փեշերին վիրավոր արծվի պես իջած սասունցիների,

մշեցիների, ալաշկերտցիների, վանեցիների գտած տուն ու տեղ, թող հազարապատիկ ծաղկեն նրանց օջախները, կանաչ արտերն ու հացի ամբարները:

Արշակը զարմացած նայում էր հարևանին, կարծես առաջին անգամ էր լսում նրան: Ձայնը, խոսքի հնչեղությունը ուրիշ երանգով էին թրթռում, դեմքն արևոտ էր, կարծես անհետացել էին ճակատն ակոսած խորշոմների անկառավարելի դողդողոցները: Ինչ-որ նա ասում էր, ջանում էր սրտից մի փերթ թողնել վրան, հոգու հառաչանքներն այնպես զտել, որ ասված բառը ապաքինված լիներ իր հին ու անմոռաց ցավից:

- Մարկո՛ս, իմ աչքին շատ ես փոխվել, տղա՛:

- Ե՞ս,- աչքերը կկոցեց ծերունին՝ դեմքին շաղելով ջերմացնող պտղունցներ,- չեմ փոխվել, Արշա՛կ, իմ սրտի արտին հիմա վեց առվով ջուր կհասնի, վեց երակ տաք կպահին իմ հոր երազի կրակ... Ուշադիր լսե՛ ընձի: Իմ Վաղարշակն ու Յուղաբերը նույնպես էդ անուշ օրոցքներից իրենց բաժինն են տվել մեր տոհմին: Ես էսօր ուրախ եմ, որ փախեփախից հազիվ ազատված մեր պապու տուն նրանց շնորհիվ ճյուղեր ունի:

Մարկոսը լցվել էր վերադարձի կանչերով, անզուսպ էր, հրճվանքի իր փոթորիկն անկարող էր սանձել, խոսում էր երդվյալի լրջությամբ, և այդ երդումն ուզում էր կիսել բոլորի հետ: Նրա ասելիքը մեկ նման էր անբեկանելի պահանջի, ու ինքը դառնում էր անհանգիստ, խրոխտ ու սևեռուն, մեկ խաղաղվում էր՝ մեղմ մրմունջներով մատները բռունցքից ազատելով, շփում էր քրտնած ճակատը, իսկ հոգու խորքերում զգում հորովելի անաղարտ շունչը Արտին սարի լանջին:

* * *

Այդ օրը Արտին սարի գագաթն էին բարձրանում Արեգ գյուղի մեծերը (երիտասարդները, ով ինչպես կարող էր, հասել էին Երևան: Հայաստանի բոլոր շեներում մարդկանց շուրթերի առաջին շշուկը Մեծ եղեռնի հիսուներորդ տարելիցի մասին էր): Լռության սառույցը ճաք էր տվել, տեղահան էին եղել հոգու պատնեշները: Լեռան ճամփին նրանք էին, ովքեր հիսուն տարի շարունակ զսպված ցավով, սպանիչ երկյուղով պահ էին տվել հիշողության ամենաբարդ ցնցումները՝ դղիրդ ու շաչյուն, մորմոք ու հեկեկանք, կորուստների, հեռացումների, բաժանումների սգերգ, փախուստ, կտտանք ու հալածանք: Իսկ այդ պահին մայրաքաղաքի մեծ հրապարակ էին շտապում նրանց զավակները: Քանդած, բզկտված հոգիների վի-

ռակապերը հորդորանք չէին լսում, քարոզչությունն ու պետության կողմից զսպվող ձեռնարկումները դրել էին ոտքերի տակ: Այդ հրապարակում առանց հրամանի հավաքվել էին երկրի տարբեր կողմերից, շտապել էին մայրուղիներով, փոշոտ ճամփաներով, եզերքներից իջնող արահետներով: Նրանք միաձայն ու միակամ միացել էին, առանց կոչի ձուլվել քաղաքի հավաքական հորձանքին: Զսպանակող ո՛չ մի կանոն, հնարովի ո՛չ մի օրենք ի զորու չէին պատնեշելու անքուն ցավի աշխարհասփյուռ ճիչերը: Հավաստի էր դառնում, որ մարդկային մեծ հոսանքի ուժով արթնացած ոգին անհանդուրժող, երբեմն էլ միահեծան էր: Նրա առջև ի՞նչը կարող էր դիմանալ: Միշտ էլ հիշողության և հարգանքի պահանջը ուղիղ հասցե ունի: Իսկ զարմանալի տուրքով շղթայվածների, հնաբույր կանչերի վերերկրային պատարագը միշտ էլ դարձի ճանապարհ ունի և մշտաղողանջ ներկայություն՝ մարդկային մտքի խորքերում:

... Արտին լեռան գագաթ տանող զառիվեր ճամփաներին գյուղի մեծերը այս զգացումն էին քննում: Օրվա խորհուրդը հատուկ կազմակերպչի կարիք չուներ: Երեք օր շարունակ գագաթի խարույկը վառ ու վառ էր: Կրակի ընդգրկված տեսիլքն արդեն երրորդ գիշեր լուսե ողկույզներով ծվատում էր գարնանային գիշերը: Իսկ ապրիլի 24-ի օրը այդ բարձրահմա խարույկը բոցե շղթաներով զարդարելու գործը ստանձնեցին Արեգի մեծերը:

Կեսօրից առաջ մատաղացու գառներն իրենց առաջն արած՝ բարձրացան: Գնում էին դանդաղ՝ ուխտի գնացող քարավանի պես հանդիսավոր ձգված: Հույսի մեղմահոս բերկրանքը շողշողում էր ամեն մեկի ներսում: Այսպես վաղուց լուսավորված չէին եղել, երանության ծվեններ տակ ծածկել էին թախիծները: Շատ չէին խոսում, նրանց ներքին ձայները զբաղված էին հեռավոր, անցած դառնությունները նորից քննելու, անցյալի կանչը, կարոտը ի մի բերելու, զոհվածների բոցեբաշ վրեժն ու անեծքները, նրանց հոգու մռնչյունները նորից ու նոր թարգմանելու մտորումներով: Նրանք բարձունք էին գնում մի այնպիսի հաստատ երդումով, կարծես ուզում էին վերջնականապես մաքուր ու մաքրված տեսնել աշխարհի խիղճը, ուզում էին գագաթի սրբազան կրակը երկար ծխար ու չցնդեր, որ ամեն մեկի սրտից վրեժի բոցը հասներ առ Աստված: Բողոքի բորբոք հորձանքը հանգիստ ու դադար չուներ, պաշարել էր Կաղզվանի գավառը, Նախիջևան, Ծփնի, Բվիկ, Զրջի, Ագարակ գյուղերից գաղթած և Արտին սարի լանջերին հասած համերկրացիներին: Սարն ի վեր այս ճամփան նոր աշխարհամասի հայտ-

նագործություն չէր, նրանք մեկ-մեկ, փոքր ու մեծ խմբերով միշտ բարձրացել էին այս քերծերը, սակայն այսօր ուրիշ բոց էր լցվել նրանց երակները: Առջևից Արամն ու Տեպոն էին, հետո Մարկոսն ու Մինասը, Շավարշը, Իրիցանց Սուրենը, Կրպեենց Գևորգը, Նահապետը, Մկրտիչը, Մնոն, Կարապետենց Անդրանիկն ու Բաքոն, Արամայիսն ու Ժորան, Վարդգեսն ու Սմբատը: Նրանց զուգահեռ կարճ արահետով գալիս էին Հրաչն ու Աշոտը, Աղասին ու Անդրանիկը: Մի ուրիշ խումբ՝ Թումոյենց Սմբատն ու Երվանդը, Համբարձում Մարկոսյանը, Համբարձումենց Վաղարշակը, Մելքոնենց Աշոտը, Փիլոյենց Անդրանիկն ու Հրաչը, Սվասոնց Հարութը, Շպոյենց Ռազմիկը, շրջանցել էր գոգահովտի ժայռադուռը և արդեն հասնում էր գագաթին: Օրը նման էր չվերջացող հրաշքի: Զարմանալի տուրքով էր երկնքի կապույտը վարսերն արձակել, զավակներին սպասող հոր նման լեռան վերին կատարը մեղմ ու մտերիմ իր գիրկն էր առնում նրանց: Ամենավերևում աջ ու ձախ նստեցին քարե «բազկաթոռներին»՝ թիկունքով Արագածին, հայացքը դեպի էրգիր: Ժամը իրենք էին որոշել, որովհետև արևն արդեն անցել էր Անիի ավերակները, գզգզված շողերով ցփնվել հորիզոնը ծրարող լեռնաշարին:

- Ձահելնե՛ր, էդ մոլոր սարերի հետևում Ղարսն է, մեր Նախիջևանն ու Օփնին,- հառաչանքը ծոր տալով ասաց Արամ Դարբինյանը: Ասաց ու կախ հայացքով նայեց աջ ու ձախ նստած տարեկից մարդկանց, գիտեր, որ նրանք սրտի մեջ են պահում այդ անունները, դրա համար փորձեց շրջանցել, անցնել հառաչանքի ակունքը, սակայն թախծի և արցունքների կծու համը տիրաբար մնաց: Նա գիտեր, որ այս բարձունքը միշտ էլ մտորումների առիթ է տալիս, գիտեր, որ հիմա իր վերհուշի կախարդական պատկերները նույնությամբ գերեվարել էին այս գաղթականներին: Նրանցից յուրաքանչյուրը հոգու անտես վկայությամբ իր ծնողներին, պապ ու տատերին էր հիշել, մանկության վիրավոր մակույկը էն զուլումի ու կոտորածի բզկտող մագիլների մեջ էր: Արամը հասկանում էր, որ ակամա լռությունը ոչ մեկի կողմից նախատեսված չէր հենց այս պահի համար, ոչ էլ ճանապարհը հաղթահարելու հոգնությունն էր նրանց շղթայել քարաբարձունքին: Ինքնայրումի ձաղկող մտրակն էր շաչում նրանց ներսում: Ներողամտության բերդերը վաղուց փուլ էին եկել գաղթականների հոգիներում, խիղճը ճոճվում էր տարիների կարուսելի վրա, և նրանք՝ այն պնդելու հարաբերական կետ էին փնտրում: Եվ այդ հավերժական ակնթարթն այսօր Արտին լեռան գագաթին էր: Այս երկնաքեր ժայռավեմի տերերը հնօրյա բեռներ

ուսած էին հասել այստեղ: Ո՞վ գիտի, այլ ժամանակներում քանի՜ անգամ էին անցել գագաթի ճամփան, բայց այսօր ուրիշ փոթորիկ էր, ուրիշ, աներևակայելի պատարագ էր բացել իրիկնային մշուշը: Նախորդ օրն այնքան համբերատար ու ծրագրված էին խոսում, բայց հիմա հայացքներով հեռացել, սուզվել էին արևպադոցի մղկտուկ հեքիաթի խորքերը: Լռության վիպասքը կապերը քանդած՝ ազատ-արձակ տանում էր նրանց: Ուխտի եկածները վանք ու արդարություն էին փնտրում աստղերից այն կողմ, զարմանում էին, թե երբ ազգածրար սուգը սև ու սպիտակ թելերով բոլորեց իր կես դարը: Վշտի վտիտ ուսերին այդ ե՞րբ խարսխվեց հիշողության հողմածեծ նավը, եկավ հեռուներից և մնաց: Այդ նավի բնակիչներն այսօր Արեգից եկած այրերն էին: Իսկ Արտին բարձունքն այսօր նրանց առջև ուրիշ կրակ էր բացել. իջվարող լանջերը նրանց ոտքերի տակ նման էին լողացող նավերի, որոնք մայրամուտի հանգչող բազուկների մեջ ափ էին ձգտում:

- Հիշողության օր է, մեր պարտքն է բոլորին հիշել, բայց էստեղ չենք եկել, որ լուռ նստենք, մեր սրտի սուգն ու շիվանը բորբոքենք և մոռանանք, որ մենք կանք,- Արամ Դարբինյանի զգաստացնող խոսքը սթափեցրեց բոլորին: Դիմացի ժայռաթմբի առջև, ուր մարած ու անցած մոմերի հետքեր էին, Մարկոսը մոտեցրեց մատաղի բերված յոթ գառ և աղոթաբառ ասաց.

- Կարգ է, որ ամեն բան տեղը տեղին կատարվի:

Նահապետը կողք կողքի դարսված տոպրակներից մեկի միջից դուրս բերեց խնամքով ծալված փաթեթը և կոշտ մատներով բացեց:

- Էս էլ օրհնված աղը: Էջմիածնեցի Տեր-Սիմոնին խնդրեցի, մարդը ավետարանը բացեց և կատարեց ուր գործ:

Ներկաներն աշխուժացան, աջ ու ձախ գործնական ոտքի կանգնեցին: Նրանց պատրաստակամությունը, ծեսը պապենական էին՝ Կաղզվանից բերած, և բոլորն անկեղծ էին, իրենց տանջված հոգիների ու աշխարհի միջև ոչ մի պատնեշ չէին ուզում տեսնել: Այստեղ՝ սարի վերին կատարին, փլվել էր կաշկանդվածության տեսիլքը, աներևույթ հեռուներից նրանց գլխին իջնում էր մի բարի հանդարտություն: Երեք օր շարունակ վառվող խարույկը թեթև ծխում էր: Մկոն մի քանի աթար ավելացրեց, գրպանից հանեց օրեր առաջ Թալինի «երկաթեղենի» խանութից գնած դանակը:

- Գոնե սրե՞լ ես,- հարցրեց Անդրանիկը:

- Ափսոս, որ գառների համար եմ սրել, թե չէ էս դանակ ապրիլի 24-ի զուլում սարքողին պատասխան տալու սուր մռութ ունի,-

մռնչաց Մկոն և մեղավոր հայացքով մոտեցավ ժայռի թիկունքում մակաղած գառնուկներին: Բարձրադիր, քարե երկար սեղաններին տներից բերած տարագույն սփռոցներ բացեցին, հետո ավելացան բաժակները, օղու շշերը, հացն ու աղը, պանիրն ու մածունը: Մեծ խարույկից հեռու մի նոր կրակարան հիմնեցին, չուզեցին եռացող կաթսաները մոտ լինեն սրբացած կրակներին: Ներքևում խտացել էր մութը: Արեգ գյուղի փոքրիկ ու մեծ քարտեզը նշմարվում էր տարբեր տեղերից ծիկրակող լույսերով: Բարձունքին նստածները հերքելով խավարը, ստույգ գտնում էին իրենց օջախները, դպրոցը, կոլտնտեսության գրասենյակը, կալի ու գերեզմանոցի ճամփան: Բարձունք նվաճողները մտովի իրենց տների գերանների տակ էին, թոնիրների կողքին, զավակների ու թոռների հետ: Թե ինչ էր կատարվում այդ պահին լեռան գագաթին, միայն բարձունք նվաճողներին էր հայտնի: Արեգի կտուրների տակ թել-թել գումարած ամենաթանկ հույսի սլացքն էին նրանք պարգև բերել, երազ ու երգ էին բերել այստեղ: Նրանք իրենց վշտերի ամպերն էին թաքցրել մորմոքող սրտերի մի անկյունում, որ այն թանկ ու թեթև մնար, ինչպես հիշատակների անթառամ փունջը: Բոլորին կախարդել էր ցոլցլուն մշուշ-մերանով դաջված լեռան աստղամոտ օրորոցը, ուր գաղթականներն իրենց սրտերում փայփայած անթառամ փնջերն էին հյուսում: Սրտերում զսպված, տարիներով արգելված ու շատ-շատերի համար անբացատրելի կարոտը երդումի խանդավառությամբ ահագնացել, շողշողում էր թեժ կրակի պես: Ամեն ոք այդ կարոտին պարտք ուներ, ինչպես իր տոհմականչին, եկել էր ուխտի հրամանով, հնազանդ էր, հոգեխռիվ, հավատավոր: Ամեն մեկն այդ կրակ-հիշողությանն իր սրտի երդումն էր տալիս, հյուսում հարազատ ու մտերիմ մարդկանց կարոտի, զայրույթի, վրեժի ահեղականչը: Եվ այդ վայրկյաններին թվում էր՝ այրող բոցերից փյունիկ թռչունի պես հառնում են նրանք... չծնված գնացածները, Ղարսի պատերի տակ, սեփական արյան մեջ խեղդված մնացածները, մութի մեջ ճրագ փնտրող՝ խավարով հեռացածները...

Լեռան գագաթին՝ գիշեր, գիշերվա ուսերին՝ աստղեր՝ մոտ ու պայծառ, դարձի շեփոր խփող, հույսի մեջ հոնգուր-հոնգուր լացող ասուպներ: Փոթորկին տնազ անող միամիտ քամի, Ղարսի կողմից ճիչ ու կանչ բերող, շանթ ու զնգոց դաշնող իրիկուն: Ներքևում՝ գոգահովտի տափարակներին, անգամ հասուն ամռանը կորնգանի ու ծաղկած արտերի միջնակների մեղմահոս գոգերում չկա, չես կարող գտնել ոգի արթնացնող այս խորհուրդը: Խորհրդանիշերը

միշտ այսպես փախել են բարձունքներ, արծիվների պես ծվարել ամենավերին քերծերում, անձավների արևկող խոռոչներում: Այսպես է նաև գաղթականի վերքի մրմուռը, տիրոջը հայտնի մղկտուկի պանդուխտ տեսակը: Դրանք ոչ միայն ճիչ ու ճամփա են ունեցել, նաև վտարանդի ասք և չեն կորչել ժամանակների ժահրոտ ակոսներում:

Այս ամենը՝ որպես իրիկնահացի թափանցիկ կարգ ու օրենք՝ փռված էր քարե սեղանների շուրջը: Կրակի երթը ծվատում էր գարնանագոլ երկինքը, արևապադոցի հևքը մարել էր քամու թրթիռներին: Ապրիլյան գիշերը քարափների դիմադիր ճակատին խոստանում էր տամուկ շղարշների խոնարհում, ցրտի ծափահարվող կորուստ: Գաղթ, փախուստ ու հալածանք տեսած այս մարդկանց չէին սարսափեցնում բարձունքների փոփոխական քամիները, Արտին լեռան կնճիռների գվվոցը, որոնց ճերմակ սրսփուկները ավերում էին վերջին ձյան գրեթե աննշմարելի մնացորդները:

Ժորան, քարափին թիկնած, երգեց: Բարձր, բորբոքուն հնչյունները քամու հարընթաց ծրարներով տարածվեցին չորս կողմ: Նրան միացան Արամայիսն ու Վաղոն, թվաց՝ բոլորակ ժայռերի մեջ գագաթների հարսանիքն է: Աշխուժացան, վերստին լցվեցին օղու բաժակները: Արամը, Տեպո պապը, Նահապետը, Սմբատը ազդեցիկ խոսք ասացին: Հիշեցին, հուզվեցին, քարե աթոռները խեղճացան, քարափները կարծես հետ-հետ գնացին, երկնքի աստղերը ծվար-ծվար եկան ու թառեցին վերին ծերպերին: Խավարի ծոցում լույս էր: Անհերքելի և հանդուգն ոգևորությունը մտերիմ ու մեղմ հասակ էր առնում, պրկվում ջութակի լարի պես: Եվ ամեն անկյունից ծաղկում էր շքեղ բարբառը: Հուշերի հրաշքը այդ բարբառի երակն էր սնուցում, ինչպես տաք արյունը: Խոսք ասողին լսում էին, հիշում նրա տոհմն ու մեծ պապին, նաև 1918-ը, 1920-ը, կրկնագաղթը, կարոտով ու հավատով Ղարս վերադառնալը, կրակով ու կորուստներով դարձյալ բռնագաղթը: Եվ դրանից էր, կարծես, որ Արտին լեռը ջոջանց տան նահապետի նման գրանցում էր ալեկոծ տեսած մարդկանց անդադրում ասքը: Եվ դրանից էր, որ այդ գիշեր լեռան գագաթին մահ էր ու ծնունդ, հառնումի փոթորիկ էր, կարոտի ցնծություն: Հիշվող ու հեռացած, հարազատ ու հարամնա անունները գալիս, փորագրվում էին քարափների կարծր մատյաններին: Ինքնայրումի պատարագ էր, վշտի աննինջ կոհակներով պարուրված տաճարատուրք, որոնց աներևույթ խորք ու հեռվին, կարծես, հրեշտակներ էին իջել: Աստղերից, ամպ ու լուսնից իջած կենսապարգև հրեշտակներ, որոնք Արեգից վեր Արտին լեռան հրա-

մանով այդ գիշեր պիտի լույսով ողողեին հոգիները նրանց, ովքեր Աստծո կամոք աշխարհ եկան, բայց վայրենու մոլուցքներով մորթվեցին կյանքի արշալույսին: Յոթ գառների անմեղության ելևէջները մատաղի մրմունջ զոհաբերությամբ նստած էին քարե բազմածալ ու խրոխտ սեղաններին: Հրաշքների չհավատացող գաղթականները հանձնվել էին լեռան վեհությանը, հանձնվել էին գիշերականչ հողմերին, և ամեն մեկը թաքուն երկյուղածությամբ իր իմացած զոհերի ցուցակն էր հրապարակում: Նրանք այնպես էին պատկերացնում, որ այս գիշերաղոթք-պատարագը եզակի պարգև է Աստծո կողմից, որ գերագույն մեղք է և անսահման կորուստ, եթե իրենք չխառնվեն նրա աստղամերան նշխարներին, չմյուռոնվեն Արտին լեռան բարեընծյալ ավազանում:

Իսկ գիշերը կիսվել, իջնում էր լեռան լանջերով: Մեծ կրակարանը թեժացած բոցերի խրձերով շարունակում էր անվերջանալի թվացող շքահանդեսը: Բարձունքից երևում էին Արարատյան դաշտի գյուղերի բոցկլտուն շարքերը, Արագածի փեշերին վեհորեն նստած շեները, ավելի հեռու հորիզոնին ձուլված էր լուսագիսակ Երևանը:

Լեռան տերերը հավատացած էին, որ իրենց կանչը քամու պաղ թևերով բացում է աշխարհի փակ դռները, գիտեին, որ հազար անգամ իրենց դյուրահավատության դիմաց կյանքով էին վճարել, և հիմա մեկը մյուսից թաքուն ձաղկում էր իր հոգու մելամաղձոտ պատառը, մեկը մյուսից աննկատ՝ հետ էր դարձել, իջել լեռան լերկ ճամփա-ակոսներով, հասել Նախիջևան ու Ծփնի, քնից հանել պապ ու տատերին, իշխան-ավագներին, ռանչպար մաճկալներին, հրացանավոր հայդուկներին:

«Զարթնե՛ք ու եկե՛ք, մենք արթուն ու զգաստ ենք, այստեղ ենք՝ Արտին լեռան ուսին, երկնքի դռանն ենք հասել, որ տեսնենք ձեր անուշ դեմք ու հայացք, ձեր խռով աչքեր, վեր ու վերև ենք բարձրացել, որ մեզնից ու աշխարհից հեռացող ձեր ճիչը առնենք մեր ունկերի մեջ, ձեր արցունքներով լացենք, ձեր երազներով արտ ու արև հյուսենք, հազար ու մեկ օրոցք օրորենք, որ ձեր արյան հյուլեն իր երազից մոլորյալ, չխրտնի և հուսախաբ չզարկի ծնկներին...»:

Մարկոսի երգն արդեն թախծոտ չէր, պարեղանակ էր, քամու թևերին ծանր նստած՝ փոթորկին դաս տվող աստղաբերան հիմն էր: Պարում էին, ոտքերի մեջ ցավ կար, հոգիներում վերք, բայց պարելով ծածկում էին հնից եկող մի խեղճություն, որի անունը չգիտեին կամ չէին ուզում հիշել: Խարույկը նրանց մեծ շրջանի մեջ էր: Բոցերը նկարում էին նրանց աժդահա ստվերները, տարուբե-

րում ժայռերի կրակեն էկրաններին, թռցնում ժայռերից այն կողմ, ուրվագծում շարժումների գիշերաձոն շքերթը: Նրանք գիտեին, որ գաղթականի մեծ ցավի համահավաք այս ձոնը ո՛չ ձև էր, ո՛չ էլ ցուցադրում: Գիտեին, որ Արտին լեռան երկնամոտ բոցը տեսնում են բոլորը Արեգում ու Ցամաքասարում, Թալինում, Կաթնաղբյուրում, Բազմաբերդում, Ոսկեթասում, Շղարշիկում, Ահագչիում, Աշնակում ու Սասնաշենում: Համոզված էին, որ այս «կրակե հայհոյանքը» բարոյականության և մեծ լռության հիսուն տարվա ապխտած մռութը ջարդել, Արտին սարից ներխուժել, անցել է պետական սահմանը, ոտնատակ է արել փշալարերը Անիի ձորից այս կողմ, ցոլցլացել Սուրմալու գավառի, Սարիղամիշի ու Կաղզվանի մատույցներում: Գիտեին ամեն ինչ, գիտեին իրենց անամոք վերքի, կորցրածի ու կորուստների, վշտամայր գետ ու աղբյուրների, փշրված խաչքարերի, փլված վանք ու կամարների մի ամբողջ աշխարհագրություն գիտեին. հոգու պատկերներին հարազատ գույներով նկարում էին մի անուշ ու անկորնչելի էրգիր, որի հնավանդ գրկում՝ սրբացած պատմություն, մատյանն ու տարեգրությունն էին խոշտանգվել: Գիտեին, և դա էր պատճառը, որ հոգեհորձանք աղմուկներից երգ էր ծորում, թախծոտ շշուկներից՝ ըմբոստ գոչյուններ: Դա էր պատճառը, որ կրակի օղակը ընդերքից հառնող լավայի նման չէր հանդարտվում, բոցի սաղավարտը նստել էր գագաթին, խավարի մեջ խելահեղ պտույտներ էր տալիս, մագնիսի պես ձգում, քամում էր լեռան մամռոտ երակներում զմռսված զայրույթը: Արեգ գյուղից օր կեսօրին այստեղ հասած այրերն իրար այնպես էին հասկանում, արցունքների միջից գրկախառնվում, միամիտ ժպիտներից ամաչում, քարից քար էին թռչում, ճչում էին և մի այնպիսի ուժով էին կանչում, կարծես ներկա-բացակա էին անում ծանոթ ու լուսապսակ անուններ, հավատում էին, որ նրանց հոգիներով ցողված արձագանքը մկրտվում էր քարաժայռերին, նրանց շունչը կենսաբաղձ ու հաստատուն իջնում էր քար ու թփերին, գնալու, բարձրանալու ճամփա էր պահանջում: Իրենք այդ արձագանքի մեջ ստվեր-արձաններ էին, սահող նավակներ, նրանց շնչի հետ պարող առյուծներ, հառնում էին ամպերի ծոցերով, ձգվում Տեկորի հովիտ, Անի ու Արփաչայ: Արտին լեռը խեղճացել, կծկվել էր նրանց հավաքական հուշ-զգացումի բեռան տակ: Արտին լեռը՝ բարձր, ձիգ, ուզում էր գլուխն ազատել այս մարդկանց «կեծակե» բառ ու երգից, պոռթկուն սրտերի աստղաբաղձ ու աներևույթ պսակաթերթերից: Մարկոսը, որ այս լեռան լանջ ու զառիթափերի վրա էր իր

գարունը, ամառն ու աշունը անցկացրել, այսպիսի գիշերային հրաշք, այսքան հոգու դղիրդ չէր տեսել ու զգացել: Նա չէր ընկալել կարոտի, վրեժի այսպիսի հեղեղ, որ իջնում էր հիշողության բանտված բերդերից: Այսպես նա չէր ճանաչել Դարբինենց Արամին, Տեպանին, Նահապետին, Սմբատին, Աղասուն, իր Ժորային, Շավարշին ու Անդրանիկին: Մարկոսը թիկունքը տվել էր ժայռին և ակնապիշ դիտում էր այս զարմանալի տեսարանը, աչքերը չէր թարթում, որ չկորցներ այս տեսակ պարի բնույթը, լարել էր լսողությունը, ձայնագրում էր Նախիջևանի, Օպնիի մեղեդիների պարսը: Նրա կրծքի տակ միամիտ վրնջյունով եկավ ու փայլատակեց խանդաղատանքի ծիածանը, գույների պարզ ու միամիտ գործվածքի մեջ բռնեց իրեն: Պահը բերնեբերան խիղճ էր, աչքերի դեմ խաս ճյուղեր էին, իր սրտից էին, ամուր ու արմատաձայն: Այդ ի՜նչ փայլ էր, կրակի գույն ուներ, գալիս էր անհարցմունք, տաքացնում էր, խշշալով ներսից բարձրանում, այրում դեմքն ու ճակատը՝ թողնելով ծանոթ ու հարազատ դրոշմ... Այդ ի՜նչ հաճելի հուզմունք էր ու ցոլքերի նկարեն հաղորդություն, որ հսկա ժայռերից ծլլալով իջել, Մարկոսի սրտում էջ ու պատմություն էին փնտրում: Այդ ի՜նչ կախարդանքի հնագույն սաղմոս էր խուտուտ անում, գալիս պատարագների փնջով և Մարկոսի մոմի պես վառվող սրտում իր դարձող, դղրդացող ասքն էր փնտրում: Մարկոսն անդիմադիր մնաց, մի պտղունց մասունք դարձավ այդ մեծ զգայապաշարին, շուրթն անբացատրելի դողաց և բառը, որ ո՞վ գիտի երբվանից էր ճամփա ելել, եկավ ու բռնեց նրան, եկավ ու փաթաթվեց նրա ցամաքած կրծքին, շոյեց, շուլալվեց արյան հողմերին, որ ծերունին չմրսեր, խառնվեր Արտին լեռան գիշերային երթին: Եվ նա սրտաբարբառ հիշեց օրորոցում երեք օրական թոռանը՝ Թաթուլին: Այդ անունը հաստատող բառն էր, որի ուսերին նրա հայացքն ու միտքը բարձունքից ակամա սահեցին, իջան գյուղի հեզ ու ոլոր ճամփաներով: Հոգու բորբոք ժապավենին պապը նկարեց թոռան կայծկլտուն աչքերը. «Էղներ էնպես, որ նա, էս քարին հիմա նստած, տեսներ ղարսեցի ծռերի սրտերու սելավ, իր պապերու բերած արծիվներին ճանչնար, հասկնար նրանց երգն ու ցավ... Էղներ...»: Մարկոսի ձայնը, հոգու ժանգը քերելով, դուրս եկավ: Նա ժայռից պոկվեց, ելավ քարագլխին, որդուն՝ Ժորային, նշան արեց, որ բարձրանա: Շավարշը աթարի մի քանի կտոր ավելացրեց, երկաթյա ձողով շուռ ու մուռ տվեց կիսավառ փայտերը: Շրջապատը լցվեց թրթռուն շողերով, երկարուկ ստվերները զարմանալի ձգվեցին, դիպան մացառուտներին: Մարկոսը սկսեց.

«Մեր կարոտով ծաղկած էրգիր, Նախիջևան,
Մոտ ու հեռու, ոանդուխտ դարձած,
Մեր աղոթքի ավետարան, Նախիջևան»:

Ժորան միացավ հորը: Ժայռագլխից հնչող զուգերգը ցաված սիրտ ու հառնող հոգի էր փնտրում: Ներքևում ձայնակցեցին բոլորը, ասես աստղերից իջած երգչախումբ էր սարի գագաթին:

Զրջի գյուղի 1920-ի գարնան կոտորածի վրեժի բոցն էր նրանց երգ-ցասումը:

«Արտին լեռան զանգ էր նրանց երգը...
Երգը թալիսման էր օրոցքների»:

Այդ երգը պահանջի դեսպան էր... Վրեժի վառման ցավ էր նրանց երգը: Երգը հիշողության ծվար էր: Աղոթքի հավատավոր ուխտ էր նրանց երգը: Ծպնիի ծիածանի ծոց էր նրանց երգը: Երգը տուրք էր Նախիջևանի կարոտի:

Հայր ու որդի ժայռից իջան: Ներքևում կենաց խոսքը շարունակվեց: Սակայն Մարկոսը խնդրեց, որ բոլորը լսեն իրեն: Զգաստացան ներկաները: Մարկոսը միշտ էլ քչախոս էր: Դա լիներ տարբեր հավաքատեղիներում, թե հարսանիքներում: Սակայն այս պահին մի ուրիշ պահանջով հնչեց նրա խնդրանքը: Նա առաջին անգամ էր հայտնվում այսպիսի վիճակում, բոլորը լարված և ուշադիր իրեն էին նայում:

- Իմ հարազա՛տ էրգրացիներ, թող մեր սրտի օջախը միշտ վառ մնա,- ձայնը դողում էր, սակայն առկա էր շեշտվածությունը,- էս շլշլան կրակը իմ Ժորան թոռներիս հետ վառեցին երեք օր առաջ՝ ապրիլի 21-ին: Էդ նույն օր Աստծու կամքով Տեկորի ձորի Կծկոնք վանքերի լուսո պատարագով աշխարհ եկավ իմ Թաթուլ թոռը: Հիմա գյուղի փեղե օրորոցում, իր մոր՝ Սեդայի շնչի տակ կզորանա էդ անմեղ մանուկ, կխնդրիմ՝ էս սուրբ հիշողության օրվա հետ զուգադիպած ծնունդի համար օրհնանքի ձեր խոսքն ըսեք...

Մարկոսի Թաթուլ թոռան, Ժորայի հինգերորդ արու զավակի ծնվելու մասին գիտեին բոլորը, բայց ոգեղեն պահը, այս լեռան գագաթին հարմար, հայտնագործեց նրա պապը: Ցնծության բարակ ալիքը դանդաղ ընդգծվեց, և բերկրանքը գարնան առաջին անձրևի պես իջավ հիշողության փխրուն խոստովանանքներին: Կարապետենց Տեփանը վիթխարի հասակով ոտքի կանգնեց, գինու գավաթը վեր պարզեց, և կրակե բառերը տաքացրին լեռնավրա օջախը, քարափն ու բարձունքը: Աղասին, որ հոր պայծառ պատճենն էր, նույն բարձրահասակ, հաղթանդամ ու համակրելի տղամարդը, մոտիկից

գրկեց նրան, որովհետև նա վտանգավոր տեղում էր կանգնած: Հայրը գորովանքով ժպտաց որդուն և դարձավ Մարկոսին ու Ժորային:

- Նախախնամության մատը խառն է էդ էրեխու աշխարհ գալու համար, մենք տաք օրոցքներով պիտի կրնանք հաղթել թշնամուն, ամեն մանկան դարձ մեկ սրտի չափով մեզ կմոտեցնե էրգրին... Աչքներս լույս էղնի, պապով, հորով, մորով, մեր սուրբ էրգրու կարոտով թող զորանա Թաթուլը... Խմենք մեր գյուղի էսօրվա ամենափոքրի կենացը, հավատանք, որ մեր էս անքուն գիշերվա սերն ու կարոտը, Աստծու օրհնությամբ, արևով կլուսանան մեր էրեխեքու օրոցքներին, ու նրանք էս լեռան կրակը մեր սրտի հիշողությամբ վառ կպահին:

Ամեն կողմից բարձրացան, եկան ու խառնվեցին իրար, ասես գիշերվա հետ հաշիվներ ունեցող արծիվներ էին, որոնք լուսաբացի «կռվից» առաջ իրենց ուժն ու կամքն էին փորձում: Գինու գավաթները շրխկացին, բռունցքված բազուկները վեր բարձրացան: Ձայրույթի ու չմոռացվող տաք հիշողության «խմորն էր» հունցվում կրակարանի աստղուն տնազի առջև: Նրանց պրկված նյարդերի, էլեկտրականացած աչքերի շոշափելի շղթաները զնգզնգում էին ներսից ու դրսից: Այդ մղկտուկ-զարթոնքի, ափերը խոշտանգող մագիլների կռնչյունից նրանց կրծքի տակ խելագար հևք էր բարձրանում: Այդ ինքնապատում ոգեպարսը ելնում էր, եռում լուսնի պչրոտ կիսաշրջանին հպվելիս, երերում, ապա զարկվում Արտին լեռան մերկ մարմնին: Չէին հանգստանում, պատնեշներ քանդած հույզերով էին լեցուն, անհնազանդ էին, անենթակա ու ազատ: Փշրված սարսափնեռի վերջին դառնությունն էին շուռ տալիս գահավեժ ժայռաթմբերին: Այդ պահին ո՞վ էր հասու Ղարս աշխարհը հարկադրաբար թողած և բռնությամբ հեռացած այս մարդկանց տուր ու տապին, ո՞վ էր չափելու, կշռելու նրանց էպոսական ձիրքն ու ձայնը, ինքնազարկ մեղադրանքի շանթարկու ցավը, որ նրանք հիմա ինչո՞ւ Յաղլոջա և Ալաջա լեռների ուսերին չէին, այնտեղ՝ պապենական աշխարհի աստղամոտ երկնքի տակ: Ինքնաձաղկումի գիշերային վառքի ծոցերով հազար անգամ հասնում էին Անիի մայր տաճարը, իջնում Մրենի վանքի ձորակով, մտնում Բագրավան, համբուրում Գևորգ Իշխանի գերեզմանը, հետո հասնում Տեկորի հովիտը, Աղբրքար ու Թոփալու աղբյուրները: Այսպես՝ ծռված ու ծուռ, աշխարհից կտրվել, գիշերով բարձրացել էին Արտին լեռան գագաթը, այստեղ՝ մերձավորի, օտարի, ուզող-չուզողի աչքից հեռու, խփվում էին քարեքար, իրար սիրտ ու հոգի ակոսում, նայում ներքև, ուր քնած էին Արեգը, Թալինը, Աշնակն ու Արարատյան աշխարհը: Իրենք ու իրենք

էին՝ իրենց անցած հաշիվների մեջ շիտակ ու ճիշտ, իրենց ներկա հաշվարկներով քննող, վերհիշող արդարն ու մեղավորը, Աստծու գործերը ծանր ու թեթև անող, նաև ակամա այրվող, ինքնաժխտումից չխորշող և ինքնաարդարացումը չներող: Գիտեին նաև, թե ում չէին ներում, ում էին անվրեպ հայհոյում, և դրանից մաս էին հանում նաև իրենց, բայց այն թաքցնում էին, խեղդում կոկորդներում:

Դարբինենց Արամն ու Կարապետենց Տեփանը իրենց տեղը չէին գտնում: Նրանց աչքերի առջև կերպարանափոխվել էին բոլորը՝ մեծ ու փոքր, Կաղզվանի Նախիջևանում, Ծպնիում ծնվածները, Արեգի որդիները, երիտասարդ տղաները, որոնք կախարդված էին իրենց պապ ու մեծերի այս տեսակ հիշողության, վերք ու վիրավորանք զսպող գաղթականների պարազարմանքով: Չկար մեկը, որի խոսքը կիսատ ու կարկամ լիներ: Անգրագետն ու կրթվածը, պապն ու թոռը հավասար դիրքի էին այդ պահին, պոկվել էին չերևացող շղթաներից, ոտնատակ էին տվել անդունդ ու օրենք, մաքրվել օրվա անմեղության լույսով, յոթ գառների մատաղատենչ ցոլանքների ոսկե հատիկներն էին փնտրում լեռան փեշերին իջած աստղերի ծովում: Փույթ չէր, որ այստեղ ցուրտ էր ու տաք, վնգում էր Արագածից փախած քամու սուլոցը, ոսկեդեղին պուտերով սերակալվում էին շամանդաղի շեկ ծոցերից փլված ամպերը: Այստեղ լեռան սիրտն էր հևում և իր գարնանալույս զարկերակով գաղթականների աչք ու հոգուց փլված հրեղեն գետի լույսն էր խմում: Իսկ այդ լույսը անհատնում էր, գիշերվա պես դանդաղ ընթացող նրա հատակում փոթորիկ ու փառք էր, հեռացող ճակատագրերի փլվածք, ապրիլյան օրվա ուժ ու կարողությունից դուրս, նրա խեղճացած ու մեղկ կողերի մեջ սեղմված եղերերգ էր, կորուսյալ կարոտների կրակե կարկուտ:

Արեգցի մեծերը, նրանց զավակները վեր ու վեր էին սլացել, կարծես ուրիշ մոլորակներից էին լսում իրենց հորովել-աղոթքների սաղմոսահամ հիմնը:

Արամը հոգնած էր, թե՞ քունն էր պաշարել, զգաց, որ աչքերը փակվում են: Խուփ աչքերի տակ նա փորձում էր դրախտային հովտի տեսիլքները վերագտնել, թեև իր կողքին վերքը չմոռացածների պարի շռինդն էր, ոտնաձայների խուլ թնդյունները, ականջներում՝ Մարկոսի, Ժորայի և Արամայիսի՝ թախիծով ու թնդյունով փոխանցվող պարեղանակները: Նա կարծես կտրվեց, հեռացավ իրականությունից, Արտին սարից: Անարգել լողում էր դեպի անսահմանությունն ու անորոշը, բայց ներսից լսում էր իր

ձայնը, որն անցնում էր պարողների տաք շնչերի միջով, ջերմանում էրգրի երգերի անթեղ կրակներով: Նա հասկանում էր, որ ապրիլի 24-ը վերևներից իջել, կոտրել էր իր հոգու դարպասը, հրամայում էր, հեկեկում, հորձանք-հորձանք հառնում էր, տանում իրեն: «Ի՛մ ծնողք, մանկության օրոցք-առունե՛ր, Խեչե ձորի՛ արահետներ, Ղոթուռ լեռա՛ն արծիվներ, ներողամիտ եղե՛ք, որ փակ աչոք եմ հասել ձեր լուսե առավոտներին. Յաղլոջա սարի դրա՛խտ ծաղիկներ, պսակ-պսա՛կ աղբյուրներ, իմ աչքի առաջ եք, մոր պատկեր եք ու հոր օրհնանք: Տեկորի ձորի Կծկո՛նք վանքեր, հերանց Մանո՛ւկ և Վարդիթե՛ր սրբատեղիներ, ձեզ աղոթելով ենք բարձրացել Արտին սար, ձեր շուքի մեկ շյուղն ենք և ձեր կարոտի երդվյալը...»: Արամն զգաց, որ հեղձուկ սելավ է բարձրանում ներսից, անհանգիստ բարձրացավ քարից, վայրկյանների իր ճամփորդությունը բռնեց պարողների՝ Համբարձումի, Հրաչի, Աշոտի, Գևորգի, Հարութի, Բաքոյի, Մկոյի... կիպ-կպած բազուկների, համաչափ շարժումներով և պարաշղթան տանող Կրպեենց Ժորայի վառվռուն աչքերում:

Ու դարձյալ նրա մտքի թելը թրթռաց: Կարծես մեկը հեռվից կանչեց, հետո այլ ձայներ եկան, միատենչ գրկեցին նրան, օրորեցին հզոր թևերի վրա, ձգեցին ու տարան: Արամը գլուխն առավ ափերի մեջ, բարակ քամին շվում էր ականջի տակ, բարակ թախիծ էր մանում կրակի փխրուն փոթորիկը: Նա չհամբերեց, կտրուկ գնաց դեպի պարողները, ինքն իրենից խրտնեց, իր մեջ հազար անգամ կրկնված ցավերի, իր տեսած խոշտանգումների խշրտոցից փորձեց դուրս պրծնել:

- Հարազատնե՛րս, լսե՛ք ինձ,- քարաուսին թեքված՝ գրեթե գոռաց նա և փայփայված համարձակությամբ մոտեցավ խմբվածներին,- եկեք օրվա տարածն ու բերածը հասկանանք, ի մի բերենք, գումարենք, գումարվենք մեր միտք ու դարձով: Իմ ու ձեր պապերի անունից խորին հարգանք բոլորիդ... Սրբազան հիշատակ նրանց, ովքեր վերջնականապես այնտեղ մնացին, հուշ դարձան հայրենի անդաստաններում: Հարգանք նրանց, ովքեր մեր վերջին գաղթին գարնան վարարած գետի վրա փայտալաստեր հյուսեցին և տնավեր բեկորներին հասցրին այս ափը: Այս պահը, այս գիշերը Արտին լեռան վկայությամբ, ձեր զարմանալի երգն ու պարը հենց այսօրվա պատվին, ձեր սուգն ու մորմոքը, պապերի շղթա-շոյանքներով ծածկած, հավատում եք, որ արթուն են նրանց հոգիները, որ դուք նրանց հիշատակի օրը տարաք աստղերին մոտիկ, նրանց անհող շիրիմները հիշելիս չխեղճացաք, ձեր արցունքի մեջ խինդ դրեցիք,

ձեր կարոտի դիմաց տուն կառուցեցիք, օրոցք ու երդիկ ունեցաք...

Մի պահ նա ընդհատեց խոսքը ու դարձավ Տեփանին՝ շարունակի՛ր, ես առաջ ընկա:

Վաղարշակը փայտի կտորներ բերեց, Ժորան դրանք ավելացրեց կրակին: Հավաքվեցին, իջան վերևներից, ու մեծ շրջանը դարձյալ ոլորվեց կրակարանի շուրջը:

- Շարունակեմ, Արա՛մ, բայց ինչ էլ ասեմ, նախ սկիզբն եմ հիշելու, մեր բարի, ռանչպար ծնողներին, մեր վախեցած մանկության տեսիլքներն եմ հիշելու, նաև մեր երեխայական խաղերը՝ հոլն ու պիպալը, պահմտոցին, աթուրման, հետո՝ մեր տագնապները, փախեփախը, մեր կորուստները, մեր մեծ մայրերի աղոթքն ու արցունքը ու նրանց զարմանալի անեծքները ուղիղ հասցեներով: Հիշողության բեռան տակ, տղե՛րք, մի՛ հոգնեք, հատկապես դու՛ք, երիտասա՛րդ արեգցիներ, մի՛ խրտնեք ձեր կենսագրությունից, մի՛ նեղսրտեք ձեր անցյալներից, որ մինչև վերջ չկրցանք կանգնել արնախում խուժանի դեմ: Աշխարհը շուռ էր եկել, տեր ու օրենք հարցնող չկար, ուժեղը ոտնատակ էր տալիս: Էս գիշեր մենք միասին ու միասին ենք, ո՞վ էր մեզ ստիպել էսքան ծռել, գալ ու մնալ էս լեռան աղոթքի մեջ, տնից կտրվել ու բարձրանալ... Միայն մեր կարոտը, որ արժան է լեռան ու բարձունքին, միայն մեր պապենական սերը: Ախր անհնար է մեր կուտակ-կուտակ վշտի թևերը բացել էդ տափարակ, հարթ ու կծղած հողի վրա... Հազար ճամփա տեսած գաղթականների ոտքերի տակ էդ հող չի դիմանա... Էս սարի ճակատ ամուր է, հազար բուք ու բորան է տեսել ու կանգուն է, մեր խոստովանանքի տունն էստեղ է, մեր աղոթարան էս քար ու քռի վրա է... Հիշելով հիշե՛նք, բայց արցունքով չանցնինք մեր ճամփեն... Աշխարհ գիտի, որ անօրեն թուրքի պղծված ոտքերն անցան մեր սրբությունների վրայով, մենք տեսանք էն զուլումը, որ ուրիշ ազգեր հազար տարին մեկ կտեսնեն կամ չեն տեսնի: Էդպես եղավ մեր ճակատագիր, տղե՛րք, բայց թե ապրեցի՛նք, մեր տոհմերի անուններ բերեցինք, մեր արյուն ինչքան էլ թափեցինք, էլի զորացա՛նք...

Տեփանը խոսքի թելը պահեց մտքում, մի քանի մետր քայլեց լանջն ի վեր և կանգնեց այնպես, որ բոլորի տեսադաշտում լիներ: Արևելքում ամպերը շիկնել, հուշում էին լուսաբացի դարձը: Առանց խարույկ-օջախի բոցերի շրջապատում արդեն ամեն ինչ տեսանելի էր: Տեփանն ուզում էր ապրիլ 24-ի գիշերը բարձունք կանչել բոլորին, որ այստեղ ծնվածները կրկին ճանաչեին իրենց: Նա ուսուցչի

նման կանգնել էր վերևում, ուզում էր շունչը տեղը բերել, ասելիք ուներ: Երբ տեսավ, որ բոլորը հավաքվեցին, նկատելի ժպտաց, հայացքով կարդաց. ով ում տղան է, ում թոռն է, որ տոհմից են, Նախիջևան գյուղից են, Ծփնիից, զրջեցի են, թե բագարանցի: Հոգու քարտեզը քննեց, դարձյալ ժպտաց, քննախույզ նայեց Մարկոսին ու Ժորային, ձեռքով նշան արեց, որ բարձրանան իր մոտ: Հիշեց, որ էրգրից բերած հին, փայտե օրոցքում գյուղի ամենափոքրն է՝ ծծկեր, աշխարհի չար ու խերից անմասն Թաթուլը, որ չգիտի՝ գաղթն ինչ է, կոտորած, ուրիշի սրբություններ պղծելն ինչ է... Հիշեց ու ցանկացավ այդ մանչուկի արյան վկաների՝ Մարկոսի ու Ժորայի աչքերի ծրարներով բացել օրվա, այս գիշերվա, Արեգ գյուղի տոհմաշարքը: Թաթուլը հուսադարձ շող էր այդ պահին, գաղթականի սրտով այս լեռան ավետիս-բանալին էր, որ այդքան կարևորեց Տեփանը: Նա ցանկացավ գյուղում ամենավերջում ծնված մանկան մաքրությամբ օծել հիշողության վերջին դասը: Մի քայլ առաջ եկավ, վիթխարի հասակով փառահեղորեն կանգնեց սեղանի պես քառակուսի ժայռին, ձեռքը վեր պարզեց՝ ընդգծելով պահի խորհրդավորությունը:

- Իջնելուց առաջ հարկ է մեր բոլորի տոհմանունները ներկա-բացակա անենք: Թող մյուսները ներեն, նախիջևանցիները մեր գյուղի հիմնական կորիզն են, սկսենք նրանցից: Փիլոյաննե՞ր,- բարձր ձայնով ասաց Տեփանը և սպասեց պատասխանի: Հավաքվածները միաբերան պատասխանեցին՝ ներկա՞: Տեփանի հոգին փառավոր թրթռաց, ասես ճակատամարտից առաջ հաշվում էր զինյալ մահապարտներին:

- Կարապետյաննե՞ր,- լսվեց նույն պատասխանը և շարունակեց թվարկումը՞, Փիլոյենք... Մելքոնենք... Հարոյենք, Նալբանդենք, Ծառուկյաններ, Տեր-Սահակենք... Բաղդասարյաններ... Թումոյաններ... Սվազյաններ... Մարկոսյաններ... Միրաքյաններ... Խաչատրյաններ... Սուքոյաններ... Անտոնյաններ... Սարգսյաններ... Արթենյաններ... Հագոյաններ... Գաբրիելյաններ... Սվոյաններ, Ենգոյաններ...

Հետո հերթը հասավ ծփնեցիներին.

- Դարբինյաննե՞ր,- հորձանք տալով՝ արձագանքները սահեցին, անցան քարափների միջով,- Սարգսյաններ... Սրկոյաններ... Հաջոյաններ... Մաթևոսյաններ, Նիկոյաններ, Մանասյաններ... Վարոսյաններ... բագարանցի Դանիելյաններ, Միտոյաններ... զռչեցի Գալստյաններ... ագարակցի Բարսեղյաններ... մշեցիներ՝ Հագո, Խաչո, Բենո, Մանուկ...

Արտին լեռան ուսերին ամենաթանկ զարդարանքի պես իջան

այդ անունները: Ցայգաճրագները մոտիկ թրթռացին, տաքացան, լուսումութի սահմաններում թնդաց քարե բարձունքը: Տոհմականչերի շողուն երակները ներկաների բոցոտ աչքերով շուլալվեցին լեռան կողերին, զարթնեց ու դարձյալ ուժգնացավ ցնծության այն կրակը, որը երբևէ քնած չի եղել, զգաստ ու ցուցանելի միշտ ապրել է այս մարդկանց անկեղծ հոգիներում, եղել է նրանց բնազդների ուղեկիցը, բանական կապը, կարոտի աղբյուրը, արևդարձը... Տեփանն ու Արամը ամուր գրկախառնվեցին: Կարոտի, պարտքի բարձրահմա տոն էր նրանց հոգիներում: Նրանց օրինակին հետևեցին մյուսները: Տոհմակոչը հասել էր նրանց հոգու վերին շերտերը: Լռությամբ, ձեռքերի պինդ սեղմումով, հայացքների կայծկեն սլացքով նրանք փոխանցվում էին, վերադառնում հիշողության տարածքներում սպասող իրենց պապերին, կարծես նրանց շալակած՝ գալիս էին, ելնում ծանր-ծանր, գնում էին նպատակի կոչով, ուզում էին, որ նրանք՝ իրենց զարկված ու զրկված պապերը, տեսնեին լեռան գագաթ տանող ճանապարհը, վառված կրակարանը, իրենց բոցը տեսնեին աստղաերամ պահող հարազատ սրտերում, հավատային այս գիշերվա սրբազան ծեսին, իրենց երդում-հիշողությանը, իրենց երգին, վրեժին, ցասմանը: Թվում էր՝ արեգցիները ինչ ունեին-չունեին, հասցրել էին բարձունք, բերել էին այս մեկ կտավգույնի համար, որ շամանդաղի ծոցով նրա վրա գրեին հարազատ անունների շարքը, գագաթից կանչեին, սիրտ ու հոգի պատռեին, որ այդ սրտապատառ ձայնը տարիներ անց Արտին սարից գնար, հասներ իրենց պապերին, որոնք ընկել էին Մրենի վանքի շեմին, Արփաչայի վարարուն ջրերին բաժին դարձել, սեփական դռան առջև զարկվել, հասներ ծփնեցի Ղազարին, որ վերջին գաղթին ջոկվեց հարազատներից, զավակներից, ասաց՝ գնացե՛ք, ես կմնամ Անիի ավերակների մեջ, էստեղ դեռ Աստված ու մասունք կան... Մնաց, խառնվեց Անիի փշրանք-փերթերին... Նա էլ վերադարձավ այսօր, արեգցիների կանչով եկավ՝ գոգի մեջ Անիի Մայր տաճարից բերած մի փունջ աղոթք:

Ցնցող, անկշռելի վայրկյանները վազում էին արևելք, ուր դեղին շուշանների վերադարձի տոն էր, տաղ էր վաղորդյան մաքրաձույլ մեղեդիների: Արտին լեռը կապույտ օվկիանների հանդերձքով դիմավորեց ամպածրար բոսորագույնը, փորձեց գիշերվա թախիծները գուրգուրանքով պահել ժայռերի խոռոչներում, ինչպես կակաչներն են իրենց սևը թաքցնում ալ թերթիկների տակ: Իսկ առավոտի նժույգը վրնջում էր լանջն ի վար: Նրան հասու չէր այստեղ գիշերած

մարդկանց հոգու փոթորիկը, որը հիմա էլ ծոր էր տալիս, զնգզնգում նրանց կրծքերի տակ: Արեգցիներին թվում էր՝ հեռու, անանուն մոլորակներից էին իջել լեռան գագաթին: Գիշերը երազ էր ու երազ չէր, բայց տեսիլք-տվայտանքների գրոհը տակավին մնացել էր, չէր հեռանում: Շավարշը պարկի միջից հանեց դպրոցական խունացած պայուսակը, խնամքով բացեց և աջ ու ձախ նայելով՝ դուրս բերեց ահագին մեծության հեռադիտակը: Ներկաներն աշխուժացան և ակամայից նայեցին Ցամաքասարի կողմը, որի բլրալանջերից այն կողմ՝ հեռվում, հորիզոնի տակ խաժ գույների մեջ ցոլցլում էր գաղթականների կարոտի աշխարհը՝ Կաղզվանի գավառը:

- Հեռադիտակը հանձնում եմ Արամին ու Տեփան պապին,- ասաց Շավարշը,- ամբողջ գիշեր նրանք առջևից գնացին, ու մենք նրանց հետևից վազեցինք, ամենից առաջ թող նրանց աչքը դիպնի մեր կորած կարոտներին:

Հետաքրքրության և հույզերի մի այլ սպասում խլրտաց: Արամն արագ վերցրեց հեռադիտակը: Նրա ձեռքերը նկատելի դողում էին, մոտեցրեց աչքերին, ապա դանդաղ շարժեց տարածքը համաչափող պտուտակը: Աչքերի առջև՝ հրաշք ապակիների վրա, երևացին Յաղլուջա սարի գագաթը, ապա Ղոթուռը, ներքևում հարթավայրն էր, կանաչ գույներն առանձնանում էին, տներ էին երևում, սակայն մշուշը չէր թողնում՝ ավելի հստակ երևային պատկերները:

- Տեսա՜, մոտիկից տեսա մեր էրգրու սար ու ձոր, նայե՛ք,- բացականչեց Արամը և հեռադիտակը տվեց Տեփանին: Նա նստեց քարին, արմունկները հենեց ծնկներին, որ պատկերները հաստատուն երևային: Տեփանը, Բագարանի կողմից նայելով, ձգվում էր դեպի Անի: Միանգամից քարացան ձեռքերը, չուզեց շարունակել ընթացքը: Նրա սևեռուն հայացքը մոտեցնող խոշորացույցերի վրա ինչ-որ հարազատ բան էր գրանցել:

- Մրենին՝ մեն-մենակ, ձորի էն կողմ կանգուն է, ուր զորության մեռնիմ:

Բոլորը եկել, երեք կողմից շրջապատել էին Արամին ու Տեփան պապին: Թեև հեռադիտակը նրանց ձեռքում չէր, բայց Տեփանի ճակատի խորշոմների թրթռոցից, դեմքի ու շուրթերի թախծալի խաղից կռահում էին հեռուներից Արտին սար հասած հարազատ պատկերների կարոտը: Հետո բոլորը փոխնիփոխ նստեցին դիտաքարին, նայեցին, գտան, հուզվեցին, տեսան գիշերվա խավարում հիշողությամբ նկարած կարոտների աշխարհը, լեռներն ու ձորակները, Արփաչայի լայնահուն կիրճը, Անին, կորուսյալ էրգրի հանդ

ու դաշտ... Տեսան, վերագտածի անդարձ ու դաժան թախծությամբ նստեցին կողք կողքի, լուռ, բայց անսահման մտերմությամբ հասկացան, թե հիմա ինչո՞ւ են այս լեռան կատարին, միլիոներորդ անգամ հասկացան, թե ի՞նչ են կորցրել: Եղավ այնպես, որ ոչ ոք չէր համարձակվում խոսքով առաջ ընկնել, կարծես ամենաթանկ մերձավորին հենց նոր էին հողին հանձնել և հիմա լուռ կսկծում էին կորցրածի վիշտը:

- Շավա՛րշ, քու հեռադիտակ դի՛ր պայուսակիդ մեջ, քեզնից աշխարհի չափ շնորհակալ ենք: Թեև սրանով երրորդ անգամ գաղթեցինք, հասանք մեր պապու տուն, բայց էս անգամ անկորուստ վերադարձանք:

- Քեռի Արա՛մ, քու խոսք ճիշտ ու ճիշտ է,- ոտքի կանգնեց Աղասին,- Շավարշի հեռադիտակով ինչ որ տեսանք, մեր ցավ նորից տեղահան արեց, նորոգեց մեր ծխացող կարոտը, բայց նայեք մեր չորս կողմ. առանց դիտակի երևում է մեր գյուղը՝ Արեգը, մեր ժողովրդի ծիլն էստեղ արմատ գցեց, զորացավ, ես գիտեմ, որ մեր մի աչք արցունքի մեջ է, մյուսը՝ ժպիտի, արեք մեր ցավն ու հիշողություն քամենք, պահենք մեր սրտերի մեջ, մեր էրեխեքին խնդության բաժին տանք:

Տեպանի որդու՝ Աղասու խոսքը զգաստության կոչի էր նման, օրվա և ապրելու հավասարակշիռ ասելիք էր, բայց հայրն ընդհատեց նրան:

- Մեր հուշերի մատյան, տղա՛, ոչ ոք չի կրնա մեր ձեռքից խլի, էդ մատյանի ամեն էջ արյունով է գրված,- Տեփանը խոժոռված էր,- մեզ ինչ-որ փոխանցվել է, բառերով չէ միայն, արյուն մեր սրտի միջով կանցնի ու կերթա, ինքն իր լեզուն գիտե, իր վերքն ու վարքն ունի... էսօր մենք էդ արյան հրամանով ենք էստեղ, թե չէ էս մատաղ գյուղում էլ կանեինք, ապրիլի 24-ն էլ կվերհիշեինք մեր օդաներում...

Ժորա Դարբինյանն ուշադիր զննում էր հորը՝ Արամին, նրա արձագանքը կարևորում էր, հաստատապես գիտեր, որ նա էլ այդ կարծիքն ունի: Իսկ այդ արձագանքը չուշացավ: Արամը նախ եկավ ավելի մոտիկ, մի ձեռքով գրկեց Տեփանին, մյուսով՝ Աղասուն, և լիացած ժպիտը հոսեց ճակատից ցած: Որդին կռահեց, որ հայրը հիացական շողք էր քաղել ներսից և այդ փունջն էր մատուցելու իր հայրենակիցներին:

- Բոլորդ էլ ճիշտ եք, աշխարհն ինչքան էլ փոխվի, մեր զավակներն ու թոռները էս պատմություն անտեր չեն թողնի: Մեր հոգու կրակն էլ Արտին լեռան գագաթին պըտի վառ մնա...

Ավագների խոսքը հնչեց այնպես, որ առարկելն անիմաստ էր: Արամայիսն ու Հրաչը սկսեցին կարգավորել գիշերվա խայտաբղետ սեղանը: Աշոտը նոր կապոցներ էր բացում: Օջախն ինքն իրենով խաղաղվել էր, ու բարկ ծուխ էր բարձրանում՝ հավաստելով, որ խորքերում անթեղ կրակ կա...

* * *

Միջօրեից հետո, երբ արևը թեքվել գնում էր դեպի Անի, Նախիջևանի ու Ծփնիի զավակներն իջան լանջերն ի վար: Մի տեսակ թեթևացած ու պարտք կատարած՝ վերադառնում էին վաղուց փայփայված ուխտից: Նրանց սրտերում նոր ակոս էր բացվել, այնպես որ կարոտի կապանքներից չէին ազատվել: Թեկուզ աշխարհի բոլոր լեռնագագաթներին ի լուր ամենքի բոցեբաշ կրակ վառեին, միևնույնն է, նրանց հոգիները մաշող մորմոքը ծխալու էր, իր տեղն ու հասցեն մատնացույց էր անելու: Այդ էր գաղթականի բաժինը, որ անմոռուկի նման շաղ էր եկել Արտին սարի չորս կողմ, փռվել Արագածի փեշերին, Թալինով անցել դեպի մանուշակի ձորը, որի ափին, դարձյալ գաղթականների գզգզված կարոտից շվարած, անմարդաբնակ գյուղատեղ էր՝ Միջնաձորը, ապա կանգուն Ոսկեթասն ու Ահագչին, աջ կողմից՝ Կաթնաղբյուրից մինչ Ուջան ու Արուջ, այդ ճանապարհին, էրգրի ոգեբարուր հյուսքն ու էպոսը հյուսած Սասունի ու Տարոնի ծաղկուն ճյուղերը:

Դարբինենց Արամը մտքով այդ քարտեզի հետ էր, գիտեր ամեն մի շենի ծննդյան տարին, աշխատել էր Թալինի գործկոմի ֆինբաժնում, իսկ կրթությունը ստացել էր Կաղզվանի գիմնազիայում: Հիմա սարից իջնող նեղ կածանների ոլորաններում նա մի փոքր հեռացել էր գաղթի ու կոտորածի վշտացյալ օրերից, աչքերի առջև բացվում էին այն ժամանակները, երբ մշտական բնակության համար գյուղատեղ էին որոնում: Գաղթից հետո ցաք ու ցրիվ հասել էին Աշտարակ, Ուջան, իջել Սարդարապատի դաշտ: Անջատ-անջատ բեկորները մի օր որոշեցին հավաքվել, գտնել իրենց բույնը և ապրել միատեղ: Հիշողության կծիկը քանդվեց, Արամը բռնեց նրա թելը, սակայն ցանկացավ բարձրաձայն խոսել, պատմել, թող երիտասարդները իմանան, չկորցնեն այն, ինչին իրենք ականատես եղան, մանավանդ, որ այդ օրերի վկաները հիմա իր կողքին էին ու միասին ցած էին գլորվում դեպի Արեգ: Երբ նա առաջարկեց դանդաղ իջնել, ուրեմն ինքը ասելիք ուներ, շարքերը համաչափ դարձան, միավորվեցին, կենտրոնում Արամն էր, Տեփանը, Մարկոսն ու Սմբատը:

- Մեր դառը կենսագրության առաջին էջը ի պահ տվինք Արտին լեռան գագաթին, որ մոռացության չտրվի, ուխտ ու պայման կնքեցինք, որ մեզնից հետո եկող սերունդ մտահան չանի իր անցյալների պատմություն՝ լավ, թե վատ: Հիմա, երբ գյուղ ենք իջնում ու դեռ բավական ճամփա պիտի անցնենք, եկեք վերհիշենք, թե էս Արեգ գյուղ ինչպես ծնվավ: Ու թե ես որևէ տեղ հանկարծ կսխալվիմ, իմ տարեկիցներ թող ճշտեն, անցել է 40-45 տարի: 1922-ի ձմռան վերջին օրերին՝ փետրվարի 27-ին, Թալինում հավաքվեցին գյուղի մեծերը, խորհրդակցեցին և եկան մի եզրակացության՝ Արեգում (նախկին Փիրմալաք) տուն ու տեղ ստեղծել, դառնալ հողատեր: Այդպես չէ՞, Տեփան,- Արամը նայեց քրոջ ամուսնուն:

- Տարին էլ է ճիշտ, օրն ու ժամն էլ,- ժպտաց Տեփան պապը,- եթե մի տեղ շեղում տաս, ես կմիջամտեմ:

- Մարկո՛ս, դու ասա՝ շեղում է, որ էդ գիշեր, որոշումից հետո մի քանի ճարպիկներ շուտ հասան գյուղատեղ, հին ավերակների մեջ իրենցը ընտրեցին, լավ հողերի տիրացան:

- Սխալ չես, Արամ, էսօրվա պես կհիշիմ, բայց անուններ չեմ ուզի հիշել:

- Լավ էլ կանես, որ չհիշեցնես, բայց բոլորիս էլ տնատեղ հասավ, հողատարածքներ ունեցանք, ամենակարևորը՝ գյուղի տեղը ընտրել էին էնպես, որ Անին, Ղարսն ու Կաղզվանը իրենց աչքի առաջ լինին, թե չէ Ուջանը վա՞տ տեղ էր: Մի կերպ տնավորվանք, տարբեր գյուղերից էինք, բայց ապրում էինք հաշտ ու խաղաղ: Հող ու ջրի, ապրուստի հարց կար, բայց զիջող էինք, մեկի ցավը մյուսինն էր, մեկի ուրախությունը՝ բոլորինը: Գաղթվել, հոգով փլվել էինք, բայց ապրելու հրաման կար մեր մեջ: Մի քանի տարի անցավ, պապենական հողագործի սերը շենացրեց գյուղը, հարստացան մարդիկ, դեմքներին ժպիտ եկավ, սրտերում հիշողության ցավը բույն դրեց: Գյուղում առաջավոր դեր ունեին Եփրեմը, Գաբրիելենց Համբոն, Կարապետենց Գևորը, Տեփանը, Տեր Սահակենց Մկոն, Տերտերի Լևոնը, Ռուբենը, Հմայակ Սարգսյանը, խելոք Հովակը, Մելքոնենց Ազոն, Պապիկի Վաղոն, մշեցի Կարապետը, մավրակցի Սեթոն, Սվանոնց Խաչոն... էլ թվե՞մ...

- Դարբինենց Արամը, քեզ մի՛ մոռացիր,- շեշտեց Մարկոսը:

- Թող այդպես լինի, հնարավոր չէ մեկ-մեկ հիշել բոլորին, արժանի մարդիկ են, ճակատագրին հակառակ նրանք պայման դրեցին՝ ապրելով վրեժ լուծել, այս քարաստանը պահել սիրով և, եթե հարկ լինի, այսպես՝ դաշտերի միջով, երկու ժամում հասնել Նախիջևան ու Օպնի:

- Մեր գյուղ իրարանցում ընկավ կոլեկտիվացման ժամանակ,- խոսքը շարունակեց Տեփանը և նստեց ճամփեզրի քարին: Մյուսները նույնպես աջ ու ձախ նստոտեցին, գյուղը հեռու չէր, իրենք արդեն ստորին փեշերին էին, որտեղից սկսվում էին տեղ-տեղ կանաչած ցորենի արտերը:

- Կոլեկտիվացումը չգիտեմ՝ ում գաղափարն էր, բայց օգուտ չբերեց ո՛չ գյուղին, ո՛չ էլ գյուղացուն,- խոսքի մեջ մտավ Սմբատը:

- Ժամանակներն էդպես էին,- ասաց Արամը,- հերիք չէր, որ մեր մշակած, քարից ու մոլախոտից մաքրած հողերը մեր ձեռքից վերցրին, շատերին էլ կպցրին «ուռճացած» անունը:

- Տղա՛, էսօրվա պես կհիշիս էդ մանրամասները,- գորովանքով ասաց Կարապետենց Տեփանը:

- Էն, ինչ-որ տեսել եմ, ու կատարվել է, ես ո՞նց մոռանամ,- նստած տեղում անհանգիստ շարժում արեց Արամը, նայեց կողքի նստածներին, երևի բան ուներ ասելու, բայց չէր ուզում նեղացնել ոչ մեկի: Մի պահ լռեց, ապա շարունակեց խոսքը:- Դառը տարիներ էին, բայց կամքով ուժեղները կայուն մնացին: Մեր գյուղում դավաճաններ չեղան, բայց իրար նախանձողներ կային: Թե մի ժամանակ էլ շրջանից ու ստուգող վերադասից եկան ու գնացին, դա էլ Լևոն անունով երկու մարդ խառնեցին ու հրահրեցին, սրանք էլ մեր գյուղացի չէին:

- Ճիշտ է,- Արամի ասածը հաստատեցին Ստեփանը, Մարկոսը, Հրաչը,- դրսից էին մեր չուզողները:

Կոլեկտիվացման գաղափարը սկզբից էլ չէր ընդունում Անդրանիկ Կարապետյանը: Այդ օրերին նրա հումորը դարձյալ տաք էր, իմաստուն, պարզապես նա վախ չուներ: Այսօր էլ խոնարհ լսում էր տարեցներին, բայց մեջը ինչ-որ բան եռաց, երբ կոլեկտիվացման բռնի օրերի պատկերները վերհիշեցին: Անդրանիկը գնաց, կանգնեց Իծու քարափի կողքին և կտրուկ նայեց համերկրացիներին.

- Ես կտեսնիմ՝ ուրիշ ճար չկա, բերե՛ք ինձ ամուր կապեք քարափին ու բա՛ց թողեք գլոր-գլոր իջնիմ, զարկվիմ էդ կոլխոզին, երկուսս էլ մեր գլուխ առնինք հեռանանք, գոնե դուք ազատվիք դրա գլխացավից:

Ցիծաղը պայթեց, ասես լեռը ցնցվեց ներկաների աշխույժ իրարանցումից: Արամն Անդրանիկի զայրույթը արդարացնելու նպատակով ասաց.

- Էսօրվա պես կհիշիմ կոլեկտիվացման օրերին մեր գյուղի ժողովներից մեկը, երևի շատ կարևորը, որին մասնակցում էր շրջանի

վերադասից գործուղված աշնակցի Գևորգ Մանուկյանը: Հարցը գյուղի կոլեկտիվացումը խոչընդոտողների և «ուռճացածների» մասին էր: Մանուկյանը ընթերցեց վերադասին հասցեագրված այն բողոքը, որով մեղադրվում էին մի քանիսը «ուռճացածության» մեջ, իսկ դրա հաստատումից հետո սպառնում էր աքսորը,- Արամը մի պահ դադար տվեց, խորը շունչ քաշեց, սրբեց ճակատի քրտինքը և շարունակեց,- երկար քննարկումներից հետո «ուռճացածների» ցուցակում մնացին երկուսը՝ Կարապետենք և բագարանցի Ակոլը: Հիշում եմ՝ մթնոլորտը լարված էր, մարդիկ վախից սսկվել էին երկարավուն, անթիկնակ աթոռակներին, չէին համարձակվում որևէ բան ասել, որովհետև ակտիվ խոսելն ու հարևանին պաշտպանելն էլ դառնալու էին մատի փաթաթան: Լռությունը հանկարծ ընդհատեց ծպնեցի Ավետիսի որդին՝ բոլորիդ շատ ծանոթ ու հայտնի Հմայակ Սարգսյանը, որը գյուղի գրագետներից էր, մեր դպրոցի վարիչն էր 1929-39 թվականներին: Իհարկե, մեծ համարձակություն էր հակառակը պնդել, բայց ճշմարտությունը հրաշալի ներկայացրեց Հմայակը, նա ասաց մոտավորապես հետևյալը. «Ընկե՛ր Մանուկյան, թե ով է այդ բանսարկության հեղինակը, լավ գիտենք, բայց որ Կարապետենք և բագարանցի Ակոլը «ուռճացած» են, դա զարմանալի նորություն է մեզ՝ համագյուղացիներիս համար: Նրանց հետ անձամբ աշխատել եմ Սարդարապատի դաշտի գյուղերում, ուրիշների հողն ու այգին ենք մշակել, վաստակել ենք ազնիվ քրտինքով, դառնությամբ ենք մի կտոր հացի տեր դարձել, հիմա այս քարաստանում հազիվ ուզում ենք հեռանալ աղքատության ու սովի մագիլներից, հանկարծ «ուռճացածի» անուն են ստանում ազնիվ ու նվիրված գյուղացիները: Կարապետենք մեծ տոհմ են, հավաքվել են իրար գլխի մի տան մեջ, մի տեղ են հաց ուտում, կով կթում, ոչխար պահում, հիմա բերեք բաժան-բաժան անենք նրանց տղաներին իրենց եղած-չեղած մուլքով, տեսեք տակը ի՞նչ կմնա: Նույնը խեղճ ու կրակ Ակոլի մասին. մի քանի ոչխար ավել ունի, քան մյուսները, նրա ոչխարները, չիմանալով, որ իրենց տիրոջը կարող են պատիժ դառնալ, բոլորը ծնել են զույգ, այս ձմռանը ավելացել, տասը դարձել է երեսուն... Սա՞ է «ուռճացածությունը»»: Երբ իր տաքացած խոսքն ավարտեց Հմայակը, իջավ ծանր, շատ ծանր լռություն: Պատվական մարդ էր աշնակցի Գևորգ Մանուկյանը, նա խորաթափանց նայեց ներկաներին, կարծես կարդաց բոլորի հայացքները և ասաց. «Հմայակ Սարգսյանի ասելիքը մեկ մարդու կարծիք է, այն ճիշտ է, թե՝ սխալ, դուք պետք է որոշեք: Բոլորիդ եմ հարցնում՝ վերջին ելույթի մեջ արծարծված փաստերի հետ համաձա՞յն եք»:

Լռությունն ավելի ծանրացավ, սենյակում կարծես շնչելու օդ չկար: Հավանաբար Մանուկյանը կռահեց պահի լրջությունն ու պատասխանատվությունը, և ինքն առաջ ընկավ. «Եթե միաձայն լռում եք, ուրեմն համաձայն եք Հմայակի կարծիքի հետ...»: Ներկաները քիչ աշխուժացան, շարժվեցին իրենց աթոռակներին: Գևորգ Մանուկյանը ժպտաց և ասաց վերջին խոսքը. «Գաղթական մարդը ախր ե՞րբ հասցրեց դառնալ «ուռճացած», պետք չէ չեղածը ուռճացնել...»: Հիմա-հիմա էդ անուշ մարդու պատկեր իմ աչքի առջև է: Ժողովից հետո որոշ մարդիկ ցանկացան հյուրասիրել նրան, հրաժարվեց՝ ասելով՝ չարակամներին խոսելու առիթ մի տվեք:

Արամը խոսքն ավարտեց, ելավ ոտքի ու քայլեց: Աջ ու ձախ հարցեր տվեցին Սվասոնց Հարութը, Շպոյենց Ռազմիկը, Նիկոլենց Աշոտը: Բոլորին կարճ պատասխանեց: Երբ անցնում էին «Բուդլու» բարձրադիր հանդամասով, կանգ առան:

- «Վանոյի կաբինետում» մարդ չկա՞,- ծիծաղեց իրիցանց Սուրենը՝ նայելով վերևի քարաթմբին: Այստեղ Վանոն ու մի քանի հոգի հավաքվում, զրուցում ու խորհրդակցում էին՝ Աստված գիտի ինչի մասին:

- Արա՛մ, երևի մոռացար,- ասաց Տեփանը,- մինչև կոլեկտիվացումը կհիշի՞ս ռադիո բերեցին մեր գյուղ:

- Ոնց կարող եմ մոռանալ: Ռադիոն խոսում էր, ոչ մեկ չէր հավատում, որ դա իրական է, մինչև որ Երևանի ռադիոտնից կազմակերպեցին մեր հարևան գյուղացի գյոզլեցի ծուռվիզ Շավարշի խոսքը: Նա այդպես էլ գոռում էր ռադիոյով՝ հավատացե՛ք, որ ռադիոն ճիշտ է, ես էլ գյոզլեցի ծուռվիզ Շավարշն եմ:

- Հա՛, հա՛,- աջ ու ձախից հաստատեցին այդ ժամանակների վկաները:

- 1924-ին գյուղում լիկկայան բացվեց,- հիշեց Արամը:

- Ղազար աղայի օդայում,- վրա բերեց Մարկոսը:

- Ճիշտ է,- ասաց Տեփանը:

- Մինչև պատերազմ մի կարևոր իրադարձություն էլ տեղի ունեցավ, կարո՞ղ եք հիշել՝ ո՞րն էր,- հարցական նայեց Սմբատը:

Տղաները փորձեցին մի քանի բան հիշել, բայց Արամը բացասական շարժում էր գլուխը և վերջապես չհամբերեց.

- Աղասի Խանջյանի՝ մեր գյուղ գալը, Սմբա՛տ:

- Ո՞նց էինք մոռացել,- աջ ու ձախից միաբերան ասացին մի քանիսը:

- 1936 թվականին, երբ Խանջյանը եկավ մեր գյուղ,- ասաց

Արամը,- հիշում եմ՝ լավ ընդունեցին, բայց մարդիկ, հատկապես կանայք, բողոքեցին, որ խմելու ջուր չունենք, եղածն էլ բաց առվով է գալիս, կեղտոտ է և խմելու պիտանի չէ: Խանջյանը, Աստված ուր անմեղ հոգին լուսավորե, եկավ, ծանոթացավ, լսեց գաղթականների պահանջը և խոստացավ երեք ամսում խողովակներով ջուրը հասցնել գյուղ: Ա՜յ ղեկավար էր, իր խոսքի տեր մարդ: Իր ասած ժամկետում փակ ցանցով խմելու սառնորակ ջուրը բերվեց գյուղ: Աղասի Խանջյանը եկավ բացմանը, ջրի ծորակը ինքը բացեց և առաջինը մեկ բաժակ ջուրն ինքը խմեց: Տեսնել էր պետք, թե ինչ ցնծություն, պար ու խնդում էր: Վերջում ոտքով քայլեց, իսկ գյուղը՝ մեծից փոքր, նրան ուղեկցեց մինչև Թալինի սահմանները, որտեղ նա նստեց իր մեքենան ու գնաց: Հետո, երբ նրա սպանության լուրը հասավ մեզ, մենք ամբողջ գյուղով սգացինք, կորցրել էինք մեծ, շա՜տ մեծ մարդ:

- Արա՛մ, մի բան էլ կա, որ պատերազմից առաջ էր,- ասաց Աղասին,- մեր գյուղացի Հմայակ Սարգսյանին 1939 թվականին կանչեցին Մոսկվա, Կրեմլում անձամբ Կալինինը նրան մեդալ հանձնեց:

- Ճիշտ է, ավելացնեմ, որ Հմայակ Սարգսյանը մեր շրջանում առաջինն էր, որ 1940 թվականին արժանացավ վաստակավոր ուսուցչի կոչման:

- Դա էլ ասեք, մեդալը ստացավ, երբ մեր գյուղի դպրոցի տնօրենն էր, բայց երբ վաստակավորի կոչում տվեցին, մեզնից պոկեցին տարան Թալին,- ասաց Կրպեենց Գևորգը:

- Վա՞տ արին,- պատասխանեց Սմբատը,- գնաց էդ դպրոց շենացրեց: Թալինի չորս բոլոր ինչքան գյուղ կար, ութերորդ դասարանից հետո աշակերտները գալիս էին Սարգսյանի մոտ:

- էդ դպրոց համբավ ուներ, լավ ուսուցիչներից կհիշիմ Ալեքսան Եգանյանին, անուն հանած մաթեմատիկոս էր: Ախր ըսկի մոռանալու չէ լուսբաժնի տեսուչ, էդ դպրոցի ուսուցիչ Հայկուշ Բոզոյանը. ձիով հասնում էր լեռնային բոլոր գյուղերը, պատվով կին էր, Աղավնի Մալխասյանը, Մեսրոպ Միքայելյանը, Վահան Հարությունյանը,- ասաց Համբարձումը:

- Մի անգամ, երբ մեր գյուղ եկան կուսշրջկոմի քարտուղար Լյուդվիգ Մխիթարյանն ու լուսբաժնի վարիչ Երվանդ Մանուկյանը, հարցրինք Հմայակի մասին, շատ հպարտությամբ խոսեցին՝ լավ կազմակերպիչ է, ուսուցիչ, պատմաբան և էլի ուրիշ լավ բաներ ասացին,- հիշեցրեց Նահապետը:

- Այդպես էլ կար, տղե՛րք,- ասաց Արամը,- մեր գյուղն ուսման

հանդեպ ծարավ է ունեցել սկսած էրգրուց... Հիշե՛ք Իսրայել վարժապետին. Առաքելոց վանքով անցած, աշխարհ տեսած մարդ էր, հռետոր էր, բանահավաք, էդպես էլ ուր տղաներ են՝ Գևորգը, Շմավոնը, Արշակը: Մեկը մյուսից ծանրակշիռ, գրագետ՝ Իսրայելի ծառ ու ճյուղով ծաղկած ու պիտանացի:

- Պտուղը ծառից հեռու չի ընկնում,- ասաց Սմբատը,- հիմա էլ մեր շրջապատում գրագետներով առաջինն ենք:

- Գաղթականը միշտ երեք բանի հանդեպ շատ ձգտում ունի,- ժպտաց Տեպո պապը,- մեկը իր կորցրած հողի կարոտն է, վկա էս վերքոտ ու ցավոտ ապրիլյան օր, մյուսը ուզում է շատ զավակներ ու թոռներ ունենալ, շատանալ, ավելանալ, որ իրեն հասկացողների թիվը շատ ու շատ էղնի, երրորդն էլ ուսման հանդեպ ձգտումն է, որ իր զավակները պետքական մարդ դառնան:

Կեսօրը իջել, շալակին արեգակը, գնում էր դանդաղ՝ ամպերին թողնելով լուսավոր կարկատաններ: Բարձունքի գիշերային տերերը իջնում էին անբռնազբոս, հավատքի մի անբացատրելի շող էր նրանց կրծքների տակ: Դեռ այդքան պատում, պատմություն միասին չէին կիսել, վերհիշել, վերագնահատել, տխրել ու ուրախացել: Դեռ երբեք այսքան խորունկ չէին իջել իրենց հոգիների հատակը, քրքրել ցավի պատճառը, մեղմել, մեղադրել, հայհոյել, հետո՝ ինքնախույզ քննել իրողությունների արդար և ստվերոտ կողմերը: Դեռ այսքան չէին լացել ու ծիծաղել...

Հիմա քայլում էին ազատ, հոգնություն չկար նրանց ծնկներում, գնում էին արտերի սինոռներով: Արտին սարը մնացել էր հետևում, բայց դեռ ճանապարհ ունեին գյուղ հասնելու: Մի գիշեր, ընդամենը մի քանի ժամ էին բացակայել գյուղից, բայց դարձի կարոտը, անանուն ձգտումը նրանց ձգում էին դեպի գյուղ:

Զարմանալի մի հաշվետվություն հնից հավաքվել, սեղմվել էր նրանց պոռթկուն երակներում, հեռուներից դարձող պանդուխտների պես փութաջան իջնում էին նրանք, ցավ ու հուշերից հնձած հրճվանքի զգայուն ալիքն այնպես էին թաքցրել, որ աչքերում զսպված արցունքները գլորվեին սրտի ճամփով, ուր օրվա տվայտանքների հանդիսավոր տուրք էր, իրենց հասկանալի ձայների և իրենց տեսանելի պատկերների բացահայտում: Սինոռներին կանաչ թրթիռներ էին, երեքնուկի, հալիվորուկի և փետրախոտերի բարակ, խշխշուն թախիծների հավաք: Նրանց թվում էր՝ զարթոնքի այդ գիշեր ամեն ինչ, նաև հույսի բարունակ ծիլերը, գլուխները հողից հանել, կորած ու հին երազների ճրագներ վառած՝ դիմավորում էին

իրենց: Որքան մոտենում էին գյուղին, ուխտագնացների շարքերը միավորվում, գալիս ծուլվում էին իրար: Ուզում էին միասին, մեկ ճամփով գյուղ մտնել: Նրանք գիտեին, որ ամբողջ գիշեր գյուղի հայացքը հառվել էր Արտին լեռան գագաթին: Ամեն տուն իր պատվիրակն ուներ, գագաթի իր բանբերը. ամեն տուն սպասում էր իր գլխավորին, զավակին, իր փայփայած երազանքների ուխտավորին:

Արամն ու Տեպո պապը գնում էին առջևից, քայլում էին առաջնորդի նման՝ վստահ, հաստատուն, բայց չէին խոսում: Արեգ գյուղի պատմությունը և նրա մարդկանց գիշերը մինչև լույս բաղձանքի նավերով տարել-հասցրել էին էրգիր, մտել էին Կծկոնքի վանքերը, հասել Աղբրքար, անուշ-անուշ աղոթք ու պատարագ էին արել: Արտին լեռան գագաթին՝ Աստծո առջև իրենց վիրավոր հոգու անթառամ մատյանից հայտնի ու իրական էջերն էին խառնել աստվածաշնչյան խորհրդին, ավանդական ծեսով ուխտյալի երդում տվել ու հիմա վերադառնում էին իրենց բույնը: Արդեն չէին շտապում, խոնջանքը վրնջյունով խտտում էր նրանց հոգնաբեկ մարմինը, հանգիստ, հանդարտ նրանք շոշափում էին պարտքի չերևացող նժարները, որոնք մերձավորների բացակա կանչերով վերընձյուղել էին իրենց տաք ծոցերում, որպեսզի սրտերում բացվող առավոտները չկորցնեին արևի ճամփան, իսկ արևը սրտերում տաք պահեր ժամանակի հետ հարկադրաբար սառչող գերազնիվ հուշը:

Գյուղի առաջին տների մոտ, որտեղից սկսվում էր Արտին լեռան ճամփան, հավաքվել էին մեծ ու փոքր: Ուխտավորները մի պահ հանկարծակիի եկած կանգնեցին: Զարմանքն աստիճանաբար զարդարվեց իրական գույներով: Պարզվեց, որ նրանք ողջ գիշեր դրսում էին եղել, գյուղով հավաքվել այստեղ, վերջին տների հարևանությամբ սեղաններ էին բացել, Թալինից քահանա հրավիրել, օրհնել մատաղի գառները և Եղեռնի զոհերի հոգու անմահության համար տուրքով և ուխտով էին մնացել մինչև առավոտ:

Եվ հիմա նրանք դարձյալ այստեղ էին, սպասում էին լեռան գագաթից կարոտի կրակ բերող իրենց մեծերին:

Աննկարագրելի էր երկու խմբերի հանդիպումը: Այդպես հնում դիմավորում էին պատերազմից հաղթանակով վերադարձածներին՝ աղ ու հացով, ցնծությամբ, փոքր ու մեծով: Այսօր գրեթե այդպես էր, միայն ցնծության աղաղակն էր լուռ, օրվա հրամայականը սրբազան հուշն էր, հարգանքը զոհերի պատվին: Այսպիսի տեսարան Արեգը չէր տեսել: Ամեն մեկի սիրտը դարձել էր բռունցք՝ հատակում հաղորդության բողբոջներ, վիշտը պատմելու իրավունք, հորն ու պապին

հիշելու պատեհություն: Տասնամյակների մշուշը, որ գաղջ նստել էր գյուղի մեծերի սրտին, շերտ-շերտ հեռացել, մաքրվել էր: Այդ պահին նրանց հենց այդպես էր թվում, չէին ուզում խաբված լինել, խոսել վարագուրված: Երևանից վերադարձել էին երիտասարդները: Նրանց դեմքերին փողփողում էր մի ուրիշ ալիք, լիքն էին, լեցուն, աջ ու ձախ շրջապատված՝ նրանք պատմում էին Մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ քաղաքամայրի դեպքերը: Զարմանքով էին խոսում, հավատ էին բերել և հիացած էին իրենց գյուղի մարդկանցով, հատկապես այն մեծ խմբի, որ գիշերը լեռան գագաթին էր մնացել՝ հույսի և հարության մշտաբոց կրակի շուրջը:

- Արեգցինե՞ր,- բարձր ասաց Դարբինենց Արամը,- մեր մեծ կորուստների կես դարը լրացավ այսօր,- նա ներքուստ հուզվեց, երբ տեսավ, որ ամբողջ գյուղը մոտեցավ, շրջապատեց իրենց խմբին,- ինչքան արցունք թափեցինք, ողբացինք, բավարար է, մեր հիշողությունն օծենք չմոռացվող հավատով, մեր կարոտի անուշ մխանքը փոխանցենք երիտասարդներին, որ հավերժական մեր աշխարհը՝ մեր էրգիրը, կրակի պես վառ մնա նրանց սրտում: Արեգ գյուղի ներկա բնակիչները հարյուրավոր կորուստ տվեցին էս դժնդակ դարում: Մեր անկեղծ հավատի պատճառով երկու անգամ գաղթեցինք, գնացինք ու հետ եկանք, հարյուր կորցրինք, բայց մեր ծառը չչորացավ, վկա էս ժողովուրդ,- նա երկու ձեռքերը վեր պարզեց, կարծես ուզում էր բոլորին գրկել, հուզմունքը բանական հուն էր մտել, դարձյալ շարունակեց խոսքը, իսկ ամբոխը քարացած լսում էր նրան:- Արտին լեռան վերևի քարափին նստած՝ մենք ամբողջ գիշեր մեր անցվորների, անմեղ զոհերի հետ էինք: Ամբողջ գիշեր սրտերով ողբացինք, բայց մեր արցունք իրար ցույց չտվինք, նրանց երգը երգեցինք, նրանց աչքերով աշխարհի խիղճը կշռեցինք: Դարձի ճանապարհին էլի տասն անգամ թերթեցինք մեր գյուղի պատմությունը, որը տխուր, թե ուրախ, լավ, թե՝ վատ, մեր բոլորի կենսագրությունն է: Հավատացե՛ք, թե մեր Արտին սարը իր տեղից կըրցավ հեռանալ, էդ կենսագրությունն էլ մեզնից կհեռանա: Ախր միայն գաղթի ցավը չէ, մինչև պատերազմը չարի ձեռքով 1923 թվականին սպանվեցին մեր գյուղի շատ գրագետ ու պատվական երկու մարդ՝ Եփրեմն ու Մկոն, նրանց հետ էլի մի քանիսը: 1937-ին, Աստված էդ տարիները ետ չբերի, անմեղ տեղ աքսորվեցին Հովակ Ավոյանը, Դավիթ Փիլոյանը, Թադևոս Վարդանյանը, Մադո Մխիթարյանը, Առաքել Դանիելյանը և այլևս չվերադարձան: Ներկա երիտասարդությունը պիտի լավ ճանաչի նաև նրանց, ովքեր պատերազմի առաջին տար-

վա՝ 1941-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին քաղաքական հողի վրա մեղադրվեցին, 10 տարով Սիբիր աքսորվեցին այն բանի համար, թե իբր իրենց պապերի էրգիրը չեն մոռացել և Արտին սարից ծրագրային կարոտով նայել են Անիի ուղղությամբ: Ես հարկ կհամարեմ ասել նրանց անունները,- հավաքվածների ալիքն ավելի սեղմվեց, երիտասարդները գրկեցին Արամ Դարբինյանին և կանգնեցրին մի դատարկ սեղանի, որ նրան բոլորը տեսնեին և ասելիքը հասներ ամենքին,- առաջին անունը, հպարտությամբ պիտի ասեմ, մեր շատ նշանավոր վարժապետ Իսրայելի որդին է՝ Գևորգ Միրաքյանը, այն ժամանակվա մեղադրանքով՝ նա էր կազմակերպիչը, ապա Աղասի Գաբրիելյանը, Վաչիկ Սարգսյանը, Մամիկոն Մելքոնյանը, Հերբերտ Դարբինյանը, Աղասի Դարբինյանը, Լիպարիտ Սվազյանը, Հրանտ Հագոյանը, Մնացական Հարոյանը, Լևոն Թումոյանը, Վազգեն Սարգսյանը, հայր և որդի Լևոն և Խորեն Սարգսյանները, Անդրանիկ Եղոյանը, Սարգիս Գալստյանը, Բագրատ Հարոյանը: Լսվա՞ծ բան էր, մի գյուղից, սխալ ու անխիղճ որոշմամբ, Սիբիր աքսորվեն 16 տղամարդ: Փառք Աստծո, բռնակալի մահից հետո արդարացվեցին և տուն վերադարձան: Այդ նույն ժամանակ վերադարձի բախտին արժանացան 1949-ին ընտանիքներով աքսորվածները՝ Խաչիկ, Շավարշ և Բաբկեն Սվազյանները, Ռուբեն Սարգսյանը և Հրաչ Կարապետյանը:

Արամից հետո էլի խոսողներ եղան, հավաքը վերածվեց միտինգի: Իսկ երբ իջավ մութը, տներում վառվեցին լույսերը, հավաքվածները օրվա տպավորությամբ հեռացան, բաժանվեցին: Գյուղի կենտրոնում դպրոցականները շարունակում էին հուշ-երեկոն: Նրանք երգում էին հայրենասիրական երգեր, կարդում բանաստեղծություններ՝ նվիրված հայրենիքին, Մասիսին, կորուսյալ էրգրին: Դպրոցի տնօրեն Անդրանիկ Վարոսյանը միասնության, անցյալը չմոռանալու, հայրենի հողը, ծննդավայրը շենացնելու հայրենասիրական խոսք ասաց:

Միայն ուշ գիշերին, հոգնած, բայց մեծ վաստակով խաղաղվեց Արեգ գյուղը՝ թիկն տված Արտին լեռան գարնանադարձ փեշերին: Օրվա բռնկուն զրույցները, կրակոտ խոսքերը, հուշերի հազարերամ պարսը արծիվների պես ծվարեցին բոլոր հարկերի տակ:

Արեգի կապույտ երազը ձգվում էր դեպի Հարդագողի ճամփան:

* * *

Մարկոսն ու Ժորան տուն էին գնում քիչ ավելի խաղաղ, օրվա տպավորություններն ասես առևանգել էին նրանց անհանգստությունն ու ցասումը: Նրանց սովորական պատկերացումները նոր

գույն ու երանգ էին ստացել: Մարկոսը՝ բնության, հանդ ու դաշտերի սովոր այս մարդը, որն արդեն մտել էր իր կյանքի աշունը, առաջվա նման մի տեսակ թեթևացած էր քայլում: Ժորան նկատում էր, որ հայրը շտապում է տուն. «Հոգնե՞լ է, թե՞ ինչ-որ բան ծգում է նրան: Մի ամբողջ գիշեր չքնեց, խոսեց, պատմեց, երգեց, նույնիսկ խառնվեց կորած Նախիջևանի կրակոտ պարերին...»: Մարկոսը, իհարկե, չէր կռահում, թե որդին ինքն իր հետ ինչ հարց ու պատասխանի մեջ է, գնում էր արագ-արագ, մանրիկ քայլվածքով: Երեխաները դեռ արթուն էին: «Մեր էրգրու պահմտոցին է, ապրիք, թող էսօր խաղ էլ էղնի, հերիք է, շատ տխրեցինք, նահատակներին միայն լաց ու կոծով չեն հիշի, նրանք մեզ կստիպեն, որ իրենց դեմքն ու դիրքը, իրենց կամքն ու կռիվը ճիշտ ու ճիշտ փոխանցենք»... Սերգոն վազեց պապին ընդառաջ, Մինասը, Գրիգորն ու Մանվելը հոր գիրկն ընկան, իսկ փոքրիկ Ռուզանը, Գուլո տատի փեշերից կպած միամիտ ժպտում էր՝ տեսնելով, թե պապիկն ու հայրիկը որքան ջերմ էին համբուրում իր եղբայրներին:

- Իմ Թաթուլն ո՞ւր է, ինչո՞ւ վազելով չեկավ,- պապը շատ լրջորեն հարցրեց Սերգոյին:

- Պա՜պ,- միամիտ կարկամեց Սերգոն:

- Հո չե՞ս գժվել, հա՛յ,- ծիծաղեց Գուլոն: Նա գիտեր, որ տարիքն առած ամուսինը գժվում է թոռների համար: Հինգին էլ պաշտում է, բայց հիմա անսովոր մի կարոտով կապվել էր 4-5 օրական թոռնիկին, և երբ հարսը կերակրում, վերջացնում էր, ինքը անաղմուկ մոտենում էր, քթի տակ օրորոցային, հայրենասիրական երգեր էր մրմնջում, մինչև թոռը ննջում էր փոքրիկ բարձին: Դրանից հետո էլ երկար նստում էր անուշ երազներով ծաղկած փայտե օրորոցի կողքին, գլուխը դնում կամարաձև հենակին և ակնապիշ ու լուռ կկոցում էր աչքերը: Տնեցիները չէին խանգարում նրան, հասկանում էին տոհմի նահապետի ծիսական դարձը, նրա հեռականչ որոնումները, կորուստներից վերագտած սրբազան խորհուրդը: Մարկոսը հասկանում էր կապվածության անսովոր այս տեսակը ու չէր ուզում բառերով բացատրել: Ինչ էլ ասեր, կիսատ կմնար բացատրությունը, չէր կարողանա վրձնել գույներն ու պատկերները: Այդ բոլորը նա սեղմել էր կարոտի մի բուռ ներշնչանքի մեջ և իր գոլ շնչով տաքացնում էր օրոցքի ու իր մանկան աստվածությունը: Գյուղական նրա տանը՝ բանձրիկ օճորքի տակ, նա միշտ հորդորում էր, որ Գուլոն էրգրի երգեր ասեր, որ տան անկյունները, հացաբույր թոնիրը, էրգրից բերած փայտե միակ սունդուկը, ցորենի ամբարը,

երդիկին կպած ծիծառների բույնը երգով լցվեին: «Երգն առաջին դասն է, տառ ու այբուբեն չէ, որ դժվարանաս սովորել, երգն իր ճամփան ունի, բաց թողեք էնքան էրթա, մինչև սիրտն ու հոգին իրար ճանչնան...»: Մարկոսի այս հավաստումը երգի հանդեպ վարակել էր բոլորին. երգում էին իր եղբայրը՝ Մինասը, զավակները՝ Ժորան, Վաղարշակը, Յուղոն, հիմա էլ՝ թոռները:

* * *

Հաջորդ օրը առավոտյան Մարկոսը չշտապեց հանդ: Ոտնամանները հանեց, թողեց դռան հետևում, բաճկոնը տվեց կնոջը՝ Գուլոյին, և մտավ այն ննջասենյակը, ուր քնած էր նորածին Թաթուլը: Կախարդվածի պես կանգնեց, օրոցքը շրջանաձև վարագուրող ճերմակ ծածկոցը տարավ մի կողմ, խոնարհվեց այնքան, մինչև մանկան խաս բուրմունքը դիպավ շրթունքներին: «Աստծո պարգևն է իմ Թաթուլ, լուս է, կանչ է ու կրակ... Հեյրան, իմ ծարավ սրտի աղբյուր...»: Ներքին ձայնը պահում էր խորքերում, թանկ, անուշ զգացումները բաց էր թողնում միայն սրտի ճանապարհներին, որ հետո սկսեր որոնել նրանց, գտներ ու երջանկանար իր հայտնությամբ: Հիշում էր՝ այսպես նա ծփաց, հասավ կարոտի իր դաշտը, երբ Ժորան ու Սեդան առաջին բարուրը հանձնեցին իրեն: Այսպես նա գուրգուրեց որդու առաջնեկին՝ Սերգոյին, հուզմունքից հեկեկաց, չդիմացավ, գնաց հանդի միջով, գառները թողեց քերծերի վրա ու բարձրացավ այնքան, մինչև աչքերի ծոցում գրանցեց Արփաչայի ձորապատկերը: Գիտեր, որ այն կողմում Տիկորի հովիտն է, ծնողների գերեզմանը և լռության խոշտանգված լեզուն: Գիտեր, դրա համար ծունկի իջավ սարի լանջին և մեն-մենակ գոռաց. «Ձեր անուշ ծոռն աշխարհ եկավ, ձեր արյուն ծաղիկ տվեց, լուսո բաժին էղնիք, Մարկոսին տված ձեր կամուրջ չքանդվեց, դիմացավ, Կրպեների օջախի կրակ մեկով էլ շարունակեց Աստված»:

Այսպես նա, ծանոթ ու ընկեր դառած այդ քերծերին, էլի չորս անգամ իր աղոթքի բաժինն առավ երկնքից, խնկարկեց Արեգի ծով համբերության ավազանում և հասավ Կաղզվանի դաշտ, հաղորդվեց Խաչ և Նորամանուկ մատուռներին և մնաց այնտեղ: Գրեթե երկու տարին մեկ՝ Սերգոյից հետո, նա շշնջում էր թոռների անունները՝ Մինաս, Գրիգոր, Մանվել, Ռուզան: Ծերունին չէր մոռացել այդ օրերը, հիմա այստեղ՝ խաղաղ ննջարանում, իր բռնկուն ճիչն ու ուրախությունն էր հիշում: Նա հաճելիորեն զգում էր, որ խոստովանանքի խաժ գույները շաղախվել էին հոգնած աչքերում, բայց

հայացքը լեցուն էր մի անբացատրելի փայլով: Թոռանը՝ Թաթուլին, պարտք չէր մնացել. մի ամբողջ գիշեր իր դիտակետ քերծերից շատ ավելի վերև, կրակապատում օջախի ցոլընծա շիկնանքներով, իր բաղձանքների թևերով մանուկ Թաթուլի ծննդյան ծիածանը հասցրել էր պապենական աշխարհ: Գյուղի մեծամեծերը Արտին սարի գագաթին դարձան նրա կնքահայրը: Եվ հիմա Մարկոսն այնքան ծիսական էր գրկել օրոցքը, կարծես խշխշուն գիշերվա վերասլաց մկրտության և գյուղի օրհնանքի մյուռոնով էր օծում թոռանը: Նա չնկատեց, որ ներս մտավ որդին: Ժորան լցվեց անզարմանք վեհությամբ, երբ տեսավ, զգաց և կարդաց հոր խանդաղատանքը: Նրա լուռ վերապրումները՝ մարդկայինի շքեղ արարում էին, ընտրյալ զգացումների հավաք, որ նա այսքան տարի չէր տեսել: «Չէ՞, սա տարիքի ու ծերության մեղքը չէ, ոչ էլ հարազատ զգացումները չկառավարելու թուլություն»,- մտածեց Ժորան, բայց ճանաչելով ռանչպար հորը՝ գիտեր, թե նրա հոգու կրակից ինչ ծուխ է բարձրանում, և ուր է սավառնում նրա մտքերի արծիվը: Ծնվող ամեն թոռնիկի հետ ավելանում էր նրա թռիչքի դաշտը: Եվ դա վաղուց էր գրանցել որդին և դրա համար էլ հիմա տերն էր յուրատեսակ այս հիացումի, նվիրումի անթաքույց երամներին, որ հայրը Կրպեյան տոհմի անդադրում կանչերով դարձյալ վերադառնում էր հեռվից, գալիս ու նորանում էր իր հացեկաց ներկայությամբ, գալիս ու հաստատվում էր իր ծխոտ երդիկի տակ: Ժորան այդպես էր կռահում և դրա համար անաղմուկ ներս էր մտել, կանգնել հոր կողքին: Մի պահ նայեցին իրար, Ժորան լայն ու նվիրական շողերով ժպտաց: Հայրը լուռ էր, բայց նրա աչքերն այդ ինչպե՞ս էին խոսում.

- Ժորա՛,- ասաց ու աչքերը լցվեցին արցունքներով:

- Հայրի՛կ, դու փոխանակ ուրախանաս...

- Իմ ուրախությունն լավ ճանչցի, տղա՞, էդ արտասուքին մի՛ նայե, էն շատ հեռվից ընկել էր ճամփա, վերջապես եկավ հասավ ընձի,- մեղմաձայն ասաց ծերունին ու վերնաշապկի թևքով սրբեց արցունքները:

- Քեզ ինչ-որ բա՞ն է տանջում:

- Չէ՛, բալա՛, իմ տանջանք մնաց սարերուց էն կողմ, հիմա ուրիշ ծուխ է՝ կելնի իմ սրտից,- զգաստացավ հայրը,- երբ որ պապ դառնաս, ընձի սրտով կհասկանաս...

Ներս մտավ Գուլոն հարսի՝ Սեդայի հետ և խեթ հայացքով նայեց տան տղամարդկանց:

- Մարկո՞ս, էլի՞ քու սիրտ թռել է էրգիր:

- Գուլո՛, էդ սիրտ էնտեղից ե՞րբ է էկել, քու բերան խփո՛ւ,- մեղմ կշտամբեց ամուսինը:

Սեդան օրորոցի ծածկոցը ետ տարավ: Բոլորին տեսանելի ժպտում էր իրենց անուշիկ մանկիկը: Ժորան ներքին թրթռոցների մեջ այնքան ջերմորեն բարուրեց նրա զգայալույս խաղաղությունը, գրկեց մորը՝ Գյուլիզարին, ուզեց վերագտնել մի ուրիշ թեմա, փոխել հոր տրամադրությունը:

- Էս երեխան ո՞ւմ նման է, մարե՛:

- Կրպեների պնչից թռած է, բայց ճակտի վրա Սեդայի հոր՝ Սմբատի պատկերից էլ կա:

Սեդան՝ օջախի նվիրյալ ու բարի հարսը, շնորհակալ նայեց սկեսուրին, որ պատերազմից չվերադարձած իր հորը հիշեց, նրա պանդուխտ ճամփաներից հիշատակի մի զրնգուն թել գտավ ու զարդարեց նորածին որդու օրորոցը:

- Հոգի ունեմ տալու, ասեմ, որ իմ խնամի Սմբատ շատ կարգին մարդ էր, մեջը կրակ կար, ծնողասեր էր, օղորմի իր հոգուն, հարս,- Մարկոսը ձգվեց, համբուրեց հարսի ճակատը,- էս օրորոց Կրպեների բախտի բաց դուռն է, հիմա ես մեռնեմ էլ, ցավ չէ:

- Էրեխու օրոցքի մոտ մեռնելու մասին մի՛ խոսա, հիմա էլ դու խփու քու բերան,- բռնկվեց Գուլո տատը:

- Ե՞ս,- մռնչաց Մարկոսը, բայց ժպտալով նայեց Ժորային ու Սեդային:

- Հա՛, հա՛, դո՛ւ, երբ որ ժամանակն եկավ, քըզի չհարցու, կվերցու ու կտանե, առաջ մի՛ ընկի,- եզրափակեց Գուլոն և նշան արեց, որ բոլորը դուրս գան ննջասենյակից: Սեդան մնաց օրորոցի կողքին նստած: Ռուզանը ներս մտավ, փաթաթվեց մոր պարանոցով և նստեց նրա գիրկը: «Հինգ ախպոր քույրիկ ես, Ռուզա՛ն, միայն հեքիաթներում է այսպես լինում...»: Մայրական կանչը զուլալ վրնջյունով բաբախեց նրա սրտում: Սեդան դստերն ամուր սեղմեց կրծքին, երջանիկ շղարշներից ազատվելով՝ համբուրեց նրան, շոյեց խարտյաշ խոպոպները և երկար նայեց աղջկա միամիտ ու բոցկլտուն աչքերի խորքը:

- Մա՜,- սթափեցնող ու հարազատ ղողանջով ասաց Ռուզանը: Ընդամենը մեկ բառ, և Սեդան բարեձայն հույզերի հրայրքը պահեց հոգու մի անկյունում և դարձավ դեպի աղջիկը.

- Ռուզա՛ն, դու երջանիկ քույրիկ ես, հինգ ախպերների կողքին պիտի մեծանաս, Աստված էդպես կամեցավ,- ասաց ու կռթնեց օրորոցին,- սա քո Թաթուլիկն է, մեր տան ամենափոքրը:

- Թող շուտ մեծանա, մա, ես նրան շատ եմ սիրում:

- Մյուս ախպերներին չե՞ս սիրում:

- Ի՜, ո՞նց չեմ սիրում, բայց նրանք ինձնից մեծ են, ուժեղ են,- անմեղ հայացքով Ռուզանը նայեց մորը և ուզեց գրկել օրորոցում աչքերը բաց արած մանկանը:

- Քեզ չի կարելի, կգցես:

- Չէ՛, չէ՛, թող մի անգամ գրկեմ:

- Աղջի՛, քու ուժից վեր բաներից հեռու մնա՛,- դռների մեջ երևաց Գուլո տատը,- քու պապ տեսնի, կսպանե բոլորիս:

- Ես...- կմկմաց փոքրիկ Ռուզանը և նայեց մորը:

- Տատը ճիշտ է ասում, աղջի՛կս,- հանգիստ տոնով և համոզելով ասաց մայրը,- մի քիչ թող մեծանա, մեկ է, դու ես նրան պահողը, համբերի:

- Քանի՞ օրից կմեծանա,- նորից իրենը պնդեց Ռուզանը: Տատը չդիմացավ նրա միամիտ հարցասիրությանը, թեև, եթե հնար լիներ, ինքն էլ կուզեր, որ Թաթուլին վաղը տեսներ ձիու թամբին նստած:

- Մի օր առավոտ քնից կզարթնես, կտեսնես, որ էս մի մատ էրեխեն արդեն քու մազեր ցած կբերե քու գլխից, հասկացա՞ր, դե հիմա գնա ախպերներիդ մոտ,- անուշ բարբառով ասաց Գուլո տատը, ապա գրկեց մանկանը ու դարձավ հարսին.

- Սեդա, բարուր քանդե, արտի սինոռից սրսուռ հող եմ բերե, տաքացրու, նստելատեղ ու ոտքեր դիր էդ հողի մեջ, թող քրտինք չխաշե իրեն,- մեղմ ասաց տատը և ավելացրեց,- էդ մաղված հող դեղ է, դու ընձնե արդեն լավ կհասկնաս, հինգ էրեխա ես մեծացրե:

Ռուզանը վազեց դուրս: Նախասենյակում պապի ու հայրիկի համար սեղան էր բացված, ուրիշ մարդ էլ կար, ինքը դուրս փախավ:

Սերգոն ջրով լի սափորը դրեց սեղանին:

- Աղբյուրից բերեցի, պա՛պ:

- Մեր գյուղի ջուրն ուրիշ է, վաղուց չես խմել,- ասաց Մարկոսը, հետո չմոռացավ հիշեցնել, որ լուսահոգի Խանջյանի բարությամբ խմելու ջուրը երեսուն տարի առաջ է գյուղ հասցվել:

- Գիտեմ, - ասաց Կարապետենց Աղասու տղան՝ Թաթուլը,- ես աշխատանքի բերումով նշանակում ստացա, արդեն տասնհինգ տարի Հոկտեմբերյան քաղաքում եմ, բայց իմ ծննդավայրն ամեն օր աչքիս առջև է:

- Քու հոր վիճակ իմա՞լ է, էլի քարհանքերո՞ւմ է Աղասին... Լավ հունարով մարդ է, ուր հոր՝ Տեպոյի պատկերն է, դեռ ինքն էլ՝ կարդացվոր է ու գրագետ:

- Դժվար գործի է նվիրվել հայրիկը, բայց հասցնում է:

- Նախիջևանցու տղա է, պարտավոր է ուժեղ մնալ, ընձի հայտնի է, որ տուն կառուցողներին քար չի խնայե, շենության կողմնակից է Աղասին,- օղու գավաթը վերցնելով՝ իր խոսքը շարունակեց Մարկոսը,- դու և իմ Ժորան համարյա տարեկից եք, քեզնից մեկ-երկու տարի է ինքը մեծ: Էսօրվա պես կհիշեմ քու ծնվելու օր, 1933-ի օգոստոսի չորսն էր՝ ամռան օր, էլի գյուղով էկանք, հավաքվեցինք ձըր մեծ օջախի դիմաց, իրար աչքալուսանք տվինք և քու անուն կնքեց քու պապը՝ Տեպոն: Թաթուլ անունն առաջինն էր: Ես էդ թանկ անուն բաշխեցի իմ թոռանը, Ժորայիս ձգուկին, հիմա օրորոցի մեջն է:

- Աստված պապով, հորով, մորով մեծացնի,- ծերունու հորդորներին միացավ Թաթուլ Կարապետյանը,- հենց գյուղ մտա, իմացա, որ Կրպեենց տոհմի նորածին ժառանգին Թաթուլ անունով եք կոչել, եկա շնորհավորելու, իմ անվանակիցն է:

- Շնորհակալ եմ, Թաթո՛ւլ,- գոհունակությամբ պատասխանեց Ժորան, գավաթները շրխկացին:

Պապը թոռներին դրսից ներս բերեց, շարեց իր կողքին, հիացած ու հպարտ ասաց.

- Կրպեների ջոկա՛տ, երգե՛, թող ձեր ձայն էրգի՛ր հասնի:

Թաթուլը շտկվեց աթոռին: Կողք կողքի, ըստ հասակի՝ ձիգ կանգնել էին Ժորայի զավակները: Նա գիտեր, որ Կրպեները երգող են, բայց չգիտեր, որ նրանց երեխաները հասցրել էին այսքան շուտ ընդօրինակել, սովորել: Եվ շատ զարմացավ, երբ Մարկոս պապի խումբը դանդաղ շշնջաց «Ադանայի ողբը», ապա մանկական ձայները, հյուսվելով իրար, մեղեդային թախծություն շաղեցին չորս բոլոր: Մարկոսն ու Ժորան թաքցրած հիացումով էին նայում փոքրիկ երգիչներին, որոնք իրենց տուն այցելած հյուրի ներկայությամբ այսօր ավելի հնչեղ ձայն ունեին: Երբ երգն ավարտվեց, Թաթուլը տեղից վեր թռավ, մոտեցավ և ջերմորեն համբուրեց Ժորայի զավակներին: Հետո նրանք էլի երգեցին, Մարկոսը նկատելի հուզվեց: Էրգրի կանչը տնից փողոց էր ելել: Իսկ երբ երգը Կրպեենց օջախից տարածվում էր դուրս, առանց հրավերի գալիս էին դրկից ու հարազատ: Այսօր էլ նրանց այցը չուշացավ: Առաջինը եկան Մարկոսի զավակները՝ Վաղարշակն ու Յուղոն, հետո՝ Ժորայի մանկության ընկերները՝ Համբարձումն ու Փայլակը: Նրանք բոլորեցին սեղանի շուրջը, բարևեցին Թաթուլին, կարճ հարց ու փորձ արին, հիշեցին դպրոցական տարիները, շրջկենտրոնի Մաքսիմ Գորկու անվան դպրոցը, ուսուցիչներին, հպարտացան իրենց համառությամբ, որ տարիներ շարունակ ոտքով էին հասնում Թալին:

Անցած տխուր և առկայծուն այն դեպքերը հիշեցին, որոնք մնացել էին իրենց հոգու երկնքում: Պատմում էր Ժորան, Փայլակն ու Համբարձումը լրացնում էին: Թաթուլը նրանցից երկու-երեք տարով փոքր էր, բայց նրանց պատմած իրողությունների ականատեսն ու վկան էր: Մարկոսը կողքից լսում էր որդու ընկերներին, և հավատը հույսի երամներ էր բերում:

- Իմացա՛, որ ապրիլի 24-ի գիշերը Արտին լեռան գագաթին եք անցկացրել,- հիացմունքով ասաց Թաթուլը և ափսոսանք հայտնեց, որ ինքը այնտեղ չի եղել:

- Դու էնտեղ չէիր, բայց քու մեծերն էնտեղ էին, տղա՛: Տեպանն ու Աղասին քեզ կպատմեն,- առաջ ընկավ Մարկոսը,- էսքան տարիք եմ անցկացրել, բայց էդպիսի օր, էդպիսի ուխտի գիշեր իմ գլխով չէր անցել:

- Այդ ավանդույթը անպայման պիտի շարունակվի,- ասաց Թաթուլը և գինու գավաթը բարձր պահած՝ ոտքի կանգնեց: Մի քանի խոսք ասացին նաև մյուսները, խմեցին: Երեխաները չէին հեռացել, կանգնած հրամանի էին սպասում: Մարկոսը ոտքի կանգնեց.

- Էրեխե՛ք, Անդրանիկի երգն ո՞ւր է. «Քո անունը պիտի հիշվի դարեդար...»: Սերգոն պապի ակնարկը հասկացավ, նայեց եղբայրներին, Ռուզանին քաջալերեց, և միանգամից ծորաց երգը:

Ներկաներին զարմացրել էին այս փոքրիկ հայրենասերները, որոնք իրենց երգերով մեկ հասնում էին էրգիր, մեկ ֆիդայիների գովքն էին անում, իրենք էլ սպասում էին գովեստի և քաջալերման: Նրանց ձայնակցում էր հայրը՝ Ժորան, չէր թողնում, որ երեխաները խեղճանան: Գուլո տատը ննջասենյակում Թաթուլին էր բարուրում, բայց իր ու հարսի ուշադրությունը դրսի ձայների հետ էր:

- Հեր ու տղա էլի քեֆները լավացրել, երգացնում են էրեխեքուն,- քրթմնջաց սկեսուրը,- քնցրու իմ բալին, դու էլ դուրս արի:

- Գուլո մա՜մ,- ուրախ բացականչեցին Ժորայի ընկերները, երբ նրան տեսան դռան շեմին կանգնած:

- Ձեր պապու երամին մեռնիմ, որ գտել եք իրար,- ձեռքերը վեր պարզած՝ Գուլո տատը իջավ քարե ցածրիկ աստիճանից, մոտեցավ, համբուրեց Թաթուլին ու Փայլակին, ժպիտով բարևեց Համբարձումին և իր զավակներին:

Աշխույժ ու կատակասեր Գուլոն գյուղի այն կանանցից էր, ում խոսքը հեղինակություն ուներ, ինքը ժպտերես էր, պատմող, երգող: Գիտեր էրգրի պատմությունը, հիշողությունը տեղն էր, իսկ աշխատասիրությունը՝ զարմացնող:

- Ուր էլ գնա՛ք, ծննդավայրն անուշ է, չէ՞,- խոսքին ծոր տալով՝ ասաց տատը՝ նայելով Փայլակին ու Թաթուլին: Երկուսին էլ սիրում և ընդունում էր, Սմբատի և Աղասու որդիներն էին: Իսկ Գուլո տատը մեկին գնահատելիս միշտ աչքի առաջ տեսնում էր նրանց ծնողներին:

- Ծննդավայրը, մարե, իրոք շատ անուշ է,- պատասխանեց Փայլակը:

- Ճիշտն ասա՛, Փայլա՛կ, Հրազդանի ծառ ու անտառն են խորոտի՞կ, թե՞ մեր Արտին սարի քար ու քռեն, մեր հացի շնկշնկան արտեր,- դարձյալ իրենը պնդեց Գուլոն:

- Երկուսն էլ քո անուշ բառով ասած՝ խորոտիկ են, բայց իմ մանկության ու հիշողության բերդն Արեգն է, մամ,- պատասխանեց Փայլակը,- կարոտի կրակը միշտ տաք է պահում մեր սրտերը:

- Ճիշտ ես, բա մենք ի՞նչ սև կապինք մեր սրտին, որ տարին բոլոր կնայինք էդ անտեր-անիրական էրգրին՝ մեր Նախիջևանին, ո՛չ ճամփա ունինք երթալու, ո՛չ ճար ունինք մոռնալու,- մրմնջաց Գուլոն:

Ջուխտ գութան դաշտում կբանին,
Ընձի մեր էրգիր կտանին,
Սիրած յարս ո՞ւր է, ո՞ւր-
Դարդս ամոթեր կմանին...

Գուլո տատն այնքան սրտանց երգեց, ձայնի բռնկուն ծոցերը լեցուն էին ապրեցնող հույզերով, տարիքը ոչ մի պտղունց չէր քաղել նրա մեղեդային մորմոքներից:

- Մա՛րե, քո հրաշք ձայնը նույնն է մնացել, ինչ որ լսել եմ քսան տարի առաջ՝ 1945-ի մայիսին,- հրճվանքով ասաց Թաթուլը:

- Տղա՜, էդ օր կհիշի՞ս,- գլուխը բարձրացրեց Մարկոսը:

- Հիտլերի գլուխ հորիմ, էդ օր ո՞վ չհիշե,- հռնդաց Գուլոն,- մըր գյուղից քանի ջահել-ջիվան մնացին կրակի մեջ, չեկան:

Սեդան, որ քիչ առաջ դուրս էր եկել ննջասենյակից, լուռ բարևել ու նստել էր թախտի մի անկյունում, գլուխը կախեց: Սկեսրոջ աչքից չվրիպեց, հասկացավ, որ իր խոսքից էր տխրել: Իսկ Սեդան մտքով ետ սլացավ: Տասնմեկ տարեկան էր, երբ հայրը գնաց, և նրա փոխարեն «սև թուղթը» եկավ:

- Հարս, մի՛ տխրե, աշխարհով անցավ էդ զուլում ցավ,- տնքաց Մարկոսը և հայրաբար ժպտաց:

- Քեռի Մարկոս, ո՞վ է նորածնի քավորը, կնքելու ե՞ք փոքրիկին,- խոսքի ուղղությունը մտածված փոխեց Փայլակը:

- Մեր պապենական քավորները Դարբինենք են, բայց թե ե՞րբ կկատարվի կնունք, թող ուր հերն ըսե,- ասաց Մարկոսը և նայեց որդուն:

- Ամեն բան լավ է էս գյուղում, բայց որ եկեղեցի չունենք, պակասություն է,- ասաց Ժորան:

- էս կողքի գյուղերում կա, բայց դարձրել են ցորնի ու գարու պահեստ, էդպես ժա՞մ կպահին,- դեմքը խաչակնքեց Գուլո տատը:

- Երեկ, մյուս օր ժամ ու պատարագ ընդունելի չէին, հիմա նորնոր են խելքի էկե, որ աղոթքի տուն չեն պղծի, մարդ պըտի մի բանի հանդեպ պաշտամունք ունենա, էդպես չէ՞, Թաթո՛ւլ, թե՞ դու էլ պաշտոնավոր ես ու իմ հետ համաձայն չես...

- Քեռի՛ Մարկոս, դու գիտես, որ իմ պապ Ստեփանը խաչքարի, վանքերի հանդեպ հատուկ մոտեցում ունի,- ասաց Թաթուլը,- ես այդ հավատքի մաքրությունը տեսել եմ մեր օջախում, ինչպե՞ս կարող եմ ծրագրված անհավատ դառնալ, երբ որ հայի կենսագրության շատ փառավոր էջեր հարատևել են մեր վանքերի ու եկեղեցիների միջոցով:

- Ապրիս, էդ գիծ մենք ժառանգել ենք, պըտի տանք մեր թոռներուն, էդպես է բնության կամք,- եզրափակեց Մարկոսը,- մըր էրգրում էլ, էստեղ էլ հանդ ու սար չկան, որ իմ ոտք դիպած չլինի, ուր նայել եմ, ջարդված խաչքար եմ տեսել ու ավերակ վանք, քանի՜-քանի անձավներ եմ մտել, տեսել եմ մարած մոմեր, քարերի վրա խզմզված խաչեր, սրբերի պատկերներ... էդ բոլոր պատմություն է, չէ՞...

Թաթուլն ու Փայլակը նայեցին իրար, Համբարձումը գոհունակ ժպտաց, նրանք նոր բաներ էին հայտնաբերում աշխարհ տեսած այս ծերունու մոտ: Ժորան նույնպես անսովոր հայացքով էր քննում հորը:

Եվ երբ իր ընկերները հրաժեշտ տալով գնացին, Ժորան ցանկացավ արհեստանոց գնալ, կիսատ գործեր ուներ: Բայց նրա հետաքրքրության սահմանները ծավալվում, հեռանում էին իրենից: Աչքերի առջև հոր ծայրաստիճան և ընդգծվող փոփոխությունն էր, նրա հրճվանքի ոգեկանչ պատճառները: Արտին սարի գիշերային ուխտից հետո հայրը փոխվել, մի ուրիշ մարդ էր դարձել: Նախկին քչախոս, ինքն իր մեջ պատսպարված գաղթականը կարծես արձակել էր հոգու կոճակները, կտրել իրեն կաշկանդող բոլոր գամերը, դարձել էր զգայուն, քննող և այդ ամենը ներկայացնում էր բարձրաձայն: Ժորան նրա տաք, անթաքույց զգացումների վերադարձը նկատել էր նորածին որդու աշխարհ գալուց հետո և ուզում էր բացահայտել այդ առեղծվածը: Բայց ինչպե՞ս: Հայրը

զարմացնում էր, նրա արարքներն ավելի հավասարակշռված էին, իսկ հստակ դատողությունները, ասես, վաղուց ամբարել և հիմա մեկ-մեկ, թեև ժլատորեն, բայց այնքան խորքով բաշխում էր մեծ ու փոքրին: Գուցե ութսունին մոտեցող տարիքն է պատճառը, ասում են մեծերը, հիշեցնում են իրենց մանկության տարիքը, դառնում են ավելի պարզ ու մատչելի... Թաքուլի ծնունդը ի՞նչ առեղծված լցրեց նրա էությունը: Բոլոր թոռներին հավասարապես պաշտող մարդու թաքուն ու միամիտ հոգին այդ ի՞նչ կանչերով արթնացրեց դեռևս օրոցքի բաժին այս երեխան... Բնության, մարդու և արյան ի՞նչ տեսիլքներ կան, որոնք օրերից մի օր ցույց են տալու իրենց նշանը... Ահա Մարկոսը՝ միշտ պարզ ու հասարակ մարդը, սարերի ու հանդերի միամիտ ճամփորդը, տարիներով՝ անձրևի, կարկուտի ու ձյան տակ թրծվելով, օրն ու ժամը լուռ քննելով, մեն-մենակ քերծերի մեջ գոռալով, ճչալով ու իր պապերի երգերն ասելով, քրքրվել, պատռվել է հոգու ցանցկեն ցավերի մեջ և հիմա իր տաք գոգի բարության ավազանում լույսի անհայտ ծվեններ ունի, որ շռայլորեն շաղում է իր շուրջը...

Ժորան մտքերի այս բաբախուն շուքի տակ, ուրագը ձեռքին, գնում էր արհեստանոց: Գյուղի օրը տաք էր, վերջանում էր մայիս ամիսը՝ բացելով կանաչ գույների համատարած շքերթը: Դաշտում էին հանդվորները, կանայք ու աղջիկները: Սիբեխի ու սնձի արձակ շարքերը սարից իջել, հասել էին գյուղ: Արտերի կանաչ մարգերում, ծաղկած սինոռներին, մերձակա լանջերին նախշուն գույներով աղջիկներ էին, գոգնոցներում՝ հանդի բանջար, ուրց ու եղինջ: Ժորան կարոտի վերամբարձ թրթիռներով մագլցող հայացքը ոտ-ոտ հասցրեց Արտին սարի գագաթը, մի պահ անթարթ նայեց, հավատաց, որ գրանցվեց այնտեղ: Դարբնոցը փակ էր, Սմբատը դեռ չէր եկել, կտուրից ծուխ չէր բարձրանում: Մտքում բարեբանելով երկաթագործ ընկերոջը՝ մտավ արհեստանոց: Բաց լուսամուտի ճաղերից արևը իջել էր հատակի փայտալյուրին: Հարթակին ամրացված էլեկտրական փոքրիկ սղոցի չորս բոլորը կտրտված տախտակներ էին, լուսամուտի շրջանակներ, բազրիքների ձևավոր սյուներ: Ժորան, նայելով աջ ու ձախ շարված կիսատ մնացած գործերին, մտքով տեսավ նրանց, ովքեր այդ պատվեր-խնդրանքների տերերն էին: Ժորայի՝ որպես հյուսն-վարպետի անունը Արեգով չէր ավարտվում: Նրան դիմում էին Թալինի ու շրջակա գյուղերի՝ Ցամաքասարի, Զարինջայի, Սաբոնչիի շատ բնակիչներ: Ինքը մերժել չգիտեր, կարիքավորին հասնում էր, նեղյալին ձեռք էր մեկնում:

Մեկ-մեկ, երբ ուզում էր հանգստանալ, նստում էր արհեստանոցի դռանը, նայում գյուղի տներին, մտքով հաշվում էր, թե քանի բնակարաններում վերնածածկի փայտի գործ է արել, քանի դուռ ու լուսամուտ է պատրաստել, քանի փայտե օրոցք է տվել գյուղի մամերին: Մտքում թե հաշիվը կորցնում էր, բարության անհաշվարկ շողով տաքանում էր հոգին, գիտեր, որ ինքը տուն կառուցողի կողքին է եղել: Այդ մտքից այնքան էր թեթևանում, նաև հպարտանում, որ օգնել է քարը քարին դնող համերկրացիներին, գաղթականների օճորքը դարձրել է կանգուն, մասնակից է եղել բազում ընտանիքների բնակարանամուտին:

Այսօր էլ նա չմարող շիտակությամբ նայեց փոշու ճերմակ ամպիկներին, որոնք արհեստանոցի առաստաղի տակ գզգզված կախվել էին գերաններից, անսվաղ պատերին նկարել բազմապատկերներ: Երբ միացնում էր սղոցը պտտեցնող շարժիչը, այդ մշուշ-պատկերներն օրորվում, հրաժեշտի սպիտակ թաշկինակների նման փողփոողում էին տարբեր անկյուններից: Ժորան, իհարկե, կարող էր դրանք վերացնել, ջնջել իրարահյուսք «ուղիների, խզվածքների և ձյան» երևակայական պատկերները, որոնք իր արհեստանոցի ազատ տիրույթում առաջացել էին փայտի առատ փոշու թերմացքից, բայց չէր ուզում կորցնել հարազատացած այդ «աշխարհագրությունը»: Դրանց «զրույցը» միայն ինքն էր հասկանում, աշխատանքի պահին մեկ-մեկ նայում, ժպտում էր, ապա այդ սպիտակ առագաստներով ճամփորդում էր իր հայտնագործած աշխարհամասը:

Արհեստանոցի բաց դռնից ներս մտավ Օառուկենց Սաթոն՝ ձեռքին քառակուսի մի փայտ:

- Ժորա՛, Աստծու բարին քըզի, քու աչքն էլ լուս էղնի, քանի օր է, կուզիմ գամ Գուլոյին ու Սեդային տեսնիմ, չհարմարվի:

- Շնորհակալ եմ, Սաթո մա՛մ, էդ ի՞նչ փայտ ես բերել, իմ արհեստանոց դրանից էնքա՜ն կա,- ծիծաղեց Ժորան:

- Քու նոր ծնված բալին թե կսիրես, էս փետ սարքե ընձի գրտնակ, իմ թոռներ ջարդեցին, շիվարել եմ,- աղաչեց Սաթոն:

- Քու բերած փայտից գրտնակ դուրս չի գա:

- Իմա՞լ,- հարցական ժպտաց տատը:

- Համբերե, քեզի դատարկ հետ չեմ ուղարկի,- ասաց Ժորան, լուսամուտի դիմաց շարված կարճ փայտերից ջոկեց մեկը, միացրեց էլեկտրական կոճակը, կտրեց համապատասխան չափի, պտտվող հաստոցի վրա կլորացրեց, ծայրերը բարակացրեց, և մի քանի րոպեից գրտնակը պատրաստ էր:

- Սաթո մա՛մ, կհավնի՞ս,- Ժորան գոհունակությամբ նրան մեկնեց պատրաստի գրտնակը:

- Քո էրած գործ չհավնող դեռ չի ծնվե, Ժորա՛,- ուրախ-ուրախ պատասխանեց տատը,- ինչքան էլ հարմար է ձեռքերուս մեջ, շնորհակալ եմ, օր էղնի քու պզտկի հետ գաս, ու ես էս գրտնակի տակից ելած հացով ձըզի պատիվ տամ:

Դուրս գալուց առաջ Սաթոն դռների մեջ շուռ եկավ, իր բերած փայտի կտորը դրեց շեմին ու մեղավոր հայացքով նայեց Ժորային.

- Էս փետի կտոր թող մնա՛, արհեստանոց է, պետք կգա:

Ժորան գունատվեց, ներքուստ բարկացավ Սաթոյի միամիտ առևտրի համար, բայց միաժամանակ հպարտության, ազնվության նրա տեսակը գնահատեց:

- Սաթո մա՛մ, փայտը տար, թե չէ գրտնակը հետ կվերցնեմ,- Ժորան մի քիչ բարձրացրեց ձայնը և մոտեցավ:

- Չէ՛, չէ, բալա՛, կտանեմ, մեր սեղանի մի ոտն եմ բերե, ամչցա քըզի ըսեի...

- Դե տա՛ր, որ սեղանը չորսոտանի լինի, մի օր կգամ էդ էլ կամրացնեմ:

- Մարկոսն ու Գուլոն թող քո նման հազար ծնեին,- Սաթոն գլուխկախ ասաց այդ խոսքերը, երևի ամաչեց իր արարքից, գրտնակն ու սեղանի ոտքը թևի տակ դրած՝ գոհ-գոհ գնաց ոլոր-մոլոր փողոցով:

Ժորան գորովանքով նայեց պատվարժան մեծ մայրիկի թիկունքից, վառեց ծխախոտը և նստեց իր պատրաստած եռոտանուն: Սաթո տատի միամիտ վարքը, պարզ, գեղջկական ազնվությունը ցոլցլում էին նրա աչքերի առջև: «Մեր գյուղ քանի՜ էդպիսի պատվարժան մայրեր կան, որ տեսան անհիրավ դժվարությունները, սով ու պակասություն, բայց մեծացրին իրենց զավակներին ու թոռներին... էդ ո՞վ է ասել, որ կանայք թույլ էակ են... Չէ՜, հայ կանայք շատ են ուժեղ: Տղամարդի՛կ, ձեր շուրջ լա՛վ նայեք, մեր հպարտության հիմքն ու հավատը, մեր շարունակություն շենացնողն են կանայք...»: Ժորան համոզված էր շշնջում այս խոսքերը, բայց դրանք շուրթերին չէին հասնում: Առաջին անգամ էր այսպես ամբողջական ձևակերպում կանանց մասին իր միտքը, գոհ էր իր խոստովանանքից և դրանով ավելի շատ հակված էր գյուղի մեծ մայրերի հանդեպ: Ժորան ինքնաբավ ժպտաց, ծխախոտի ծուխը ոլորուն շաղվեց աչքերում: Սաթո տատի բարի խոսքերը հունից հանել էին նրան: Այդպես է, բարի մարդիկ ամենաչնչին գովեստից ալեկոծվում են, ծածկվում աներևույթ փաղաքշանքով, որի հաճելի երանության տակ տասն

անգամ հիշում են իրենց ականջներում զնգացող բառերի խրախույսը: Ժորան իրեն բռնել էր ինքնադարձի այդ խաչմերուկում և չէր ուզում բաժանվել: Սաթո տատը նրան հարկադրեց հիշել գյուղի մեծամեծ տիկնանց, որոնք կարծես եկան կանգնեցին իր չարքաշ արհեստանոցի դիմաց: Հիշեց, նրանց հոգնած ու հպարտ պատկերները մոտ բերեց իր սրտին, ժպտաց, ապա որդիաբար մեկ-մեկ շշնջաց նրանց անունները. «Առաջինը դո՛ւ, Ծառուկե՛նց Սաթո, որ եկար քո սեղանի ոտով, գրտնակի պակաս ունեիր, իմ մերը՝ Կարապետենց ազգից Կրպեյանների տուն հարս գնացած Գուլոն-Գյուլիզարը, Մախմուր տատը, Սվասոնց Մարիամը, Մելքոնենց Հայկոն, Սարգսենց Նոյեմզարը, Հուսեփենց Նանան, Ծառուկենց Շուշանը, Ալեքսանի Հայկոն, Հարոյենց Արեգը, Մարկոսենց Հայկոն, Եփոյենց Հուլոն, Հագոյենց Նունիկը, Դարբինենց Զուլոն ու Հրանուշը, Գաբրիելենց Սաթոն, Կարապետենց Սաթոն, Սվասոնց Զարոն ու Նխշունը, Սարգիսենց Բերսաբը, Թումոյենց Հայկանուշը, Կրպեենց Եսթերը, Հարոյան Փեփրոն, Ամրոյան Օսկոն, Բաղդասարյան Գրունը, Հարոյան Շուշոն...»: Ժորան զգաց, որ շունչը կտրվում է, մտածեց՝ կարո՞ղ է մեկին մոռացա: «Չէ՛, չեմ մոռացել, որ իմ մտքից դուրս չմնաց լիկկայանում տառ ու բառ սովորեցնող Դարբինենց Հրանուշը, ուրեմն մարդ բաց չեմ թողել...»: Անբացատրելի մի անուշ դող անցավ մարմնով: Ժորային թվաց՝ սուրբ մատուռ է մտել կամ Արտին սարի գագաթին է: Նա իրեն այնպես էր համոզում, որ մեծ մայրերի սրբազան անուններն արժանի են հնչեցնելու միայն այդ բարձունքներից: Հիմա մեն-մենակ արհեստանոցի արևկող պատի տակ Ժորան մտքով հավաքել էր այդ մեծ մայր-տատերի հրաշալի փաղանգը և մտքով հաշվում էր, թե ամեն մեկը քանի զավակ է պարգևել գյուղի տոհմերին: Որտեղից որտեղ Ժորայի աչքերի առջև մշուշոտ նկարվեց պատերազմի ծանր մռութը: Տասնմեկ տարեկան էր, հիշում էր գնացողներին, գյուղի լացը, կանանց անթարգմանելի ողբը: Աչքերի առջևով անցան փոշոտ ու խեղճ ճամփաները, կորացած, ծերացած մարդիկ, հնձվոր կանայք, անջուր դեմի արտերը, Արտին լեռան ուսերին չոր ու ցամաք ամառը: Պատերազմի առաջին ամառ, արև ու լաց, սև ու ստվեր, որբ ու անհայր երեխաներ: Ժորան նստած տեղը օրորվեց ու ձուլվեց պատին: Մտքի հեռացած թելերը մաս-մաս գալիս կպնում էին իրար, հուշերի կարկատանները հրմշտելով գործվում, մղվում էին մի ուրիշ հարթության վրա, ուր դարձյալ հին, բայց երբեք չկորսվող պատկերներ էին... Գյուղի ճամփին՝ այնտեղ, ուր ոլորանը իջնում էր Թալինի ուղղությամբ,

վաղ գարնանը զառիթափին նստում էին կանայք, երեխաները և սպասում իրենց պանդուխտներին: Խառն էին արցունքն ու սպասումը, կարոտն ու երգը: Գյուղը փլված փեթակի էր նման, քնած էր ու արթուն, լուռ էր, բայց զմռսված զայրույթի լեցուն ամպերով, պատրաստ գահավիժելու, որոտաձայն զարկելու իր հայտնի ու անհայտ թշնամուն: Որբության անթաքույց գույները շրջափակել էին Արեգը, ողբաձայն տները հայտնի էին, բացակաները՝ ծանոթ, որբերը մատնացույց անելու կարիք չունեին: Ժորան այս համատարած ցավի դիմաց տեսավ գյուղի մայրերին՝ ուժեղ, անպարտ, սեփական վշտերի մեջ խեղդված, բայց իրենց փխրուն երազներն անթեղ կրակի պես պահպանած: Եվ այս ինքնախոստովանանք-հաշվարկի պատճառը Սաթո տատն էր, որ գրտնակի համար էր եկել, ձեռքին՝ սեղանի ոտերից մեկը: Ժորան տակավին լսում էր այդ միամիտ, հրեշտակի պես արդար կնոջ աղոթաձայն բարբառը և նրա կողքին՝ մտքի իր զարդարուն հրապարակում շարք էր կանգնեցրել բոլորին: Ու երբ վերադառնում էր տուն, զգում էր, որ բառերը բարության ծոր էին տալիս, ու ինքը տեսնում էր հոգու ծիածանի ամենաքնքուշ գույները: Ժորան հասկանում էր, որ ինքն ամենօրյա նույն հյուսնն էր, ճանապարհն էլ նույնն էր մինչև տուն հասնելը, մարդիկ նույնպես չէին փոխվել: Սակայն այսօր Ժորան շատ էր ուշադիր. Սաթո տատի մեղկ ու մնացյալ բարությունը, նրա թևատակին՝ օջախի միակ սեղանը լքած հենակներից մեկը, հույզերի արցունքոտ շղարշ էր կապել իր շուրջը: Եվ, հավանաբար, դա էր պատճառը, որ դռների առջև՝ քարե ցածրիկ շարուկներին կամ փոքրիկ տնամերձերում՝ կարտոֆիլի կանաչ թփերի մեջ, իրենց տների դիմաց գործ անող կանանց նա այնքան ջերմորեն ու սրտանց էր բարևում: Քիչ առաջվա իր խոստովանանք-աղոթքից բաժին էր բերել ամեն մեկին: Ներսում կուտակվածը դաշնել էր սրտի բաբախներին, միայն ժպտում էր ու բարևի հետ խոնարհ հարգանքի իր խորհուրդն էր տալիս: Սաթո տատն իր միամիտ ու պարզ արարքով, խոսքի մեղեդային մաքրությամբ խառնել էր Ժորայի ներաշխարհը: Դեռ այսքան կոնկրետ նա չէր խարսխվել իր հոգեզանգ ձայներին: Աշխատող ու բարի գյուղական հյուսնը ուրիշ ժամանակ այսքան նրբանկատ չէր եղել, այսպես մոտիկից չէր ճանաչել մեծ մայրերի բարեշունչ աշխարհը: Իսկ այդ սրբազանությունը նրանք տարիներով թաքուն թալիսմանել էին իրենց շուրջը, անշշուկ փոխանցել տոհմական զրույցն ու ավանդապատումը: Եվ եթե երբևէ լացել ու դիմացել են, դա էլ ուրիշի ճակատագրի ճամփան հարթելու առաքելություն

է եղել: Արհեստանոցից հայրական տուն ձգվող ճամփաբաժանում Ժորան, հանձին մեծ մայր-տատերի, հայտնագործեց իր հեքիաթի հերոսներին: Նրանց ձեռքը բռնած՝ մտովի անցավ Ախուրյանը: Նրանց արցունքի մեջ ծիծաղի թելեր գտավ, ծիծաղի ափունքներում՝ վշտի ամպեր: Տեսավ նրանց հուսադարձի օրորներով, երդիկների տակ՝ թոնիրների շրթին կպած, տեսավ երգ ու տաղով, օրոցքներով, հացով, հույսով, հարսանիքով տեսավ: Իր ամառօրվա հեքիաթից թևեր առավ Ժորան, փոխվեց, վերափոխվեց, գնաց արագ-արագ, գնաց շիտակ ու շեն մի ցանկությամբ և տան դռան դիմաց ուղիղ նստեց Գյուլիզար մոր առջև:

- Ժորա՛,- գորովանքով նայեց մայրը:

Որդին չխոսեց, լուռ էր, հրճվանքի ծաղկումով նայում էր մորը. պատկառազդու էր նա, ճերմակ վարսերը ցած էին իջել, ծածկել ճակատի և դեմքի մի մասը: Ժորան ե՞րբ էր այսքան յուրահատուկ ու հիացական նայել մորը, չէր հիշում: Հիշողության լուռ դարպասներն ավերած՝ նա զարմանալի ցոլանք էր խրձում իր տեսիլք-պատկերների ամառային տաք օրվա գրկում:

- Ցա՞վ ունես, տղա՛,- հարցական ասաց մայրը:

- Չէ՛, մարե՛, ցավ չէ, հպարտություն է լցվել իմ հոգին, ու էդ ծանրության տակ չեմ դիմանա...

- Դու էլ քու հոր նման ես, Թաթուլի ծնվելուց հետո երկուսդ էլ գժվել եք:

- Թաթուլն իր տեղն ունի, մարե՛,- մոր ձեռքը բռնեց Ժորան և նստեց նրա կողքին,- ախր թաթուլներ աշխարհի բերողները դուք եք եղել ...էսօր Սաթո տատն էկավ արհեստանոց, ընձի դաս տվեց ու գնաց:

- Ծառուկենց Սաթո՞ն... Քու խաթրին կպե՞լ է,- անհանգստացավ մայրը:

- Չէ՛, չէ՛, հակառակը, իմ աչքերն ավելի բացեց, նրա ազնիվ ձայնը բարի շողք էր, ճղփաց իմ մեջ ու էդ պահից իմ հոգին դուրս եկավ ուրտեղից, հիմա ճամփա է ընկել ու կերթա:

- Մեղա՜ Աստծո, ո՞ւր է կերթա, տղա՛,- նվաղեց Գուլոն:

- Ուրիշ տեղ չէ, մարե՛, քու մոտ, մեր գյուղի մեծ մայրերի ու տատերի մոտ, հիմա էս պահին ես ուրիշ տեղ չունիմ գնալու,- հանգստացրեց Ժորան:

- Ժորա՛, մինչև տղամարդը հասկնա, թե կինը ինչ բարիք է տոհմին, կյանքն ուր ձեռից արդեն գնացած է,- լրջացավ մայրը, գոգնոցն արձակեց և շարունակեց,- հիմա դու կհասկնա՞ս, թե որբ մեծացած

Սմբատի աղջիկ Սեդան՝ իմ, հարս, ինչ պարգև է տվե քու տոհմին ու քըզի. չորս տղա ու մի լույս աղջիկ կայի՞ն, Թաթուլն էլ ծնվեց:

Ժորան, որպես հավանության նշան, համբուրեց մոր այտերը, ձեռքերը:

- Արեգում, մա, էսօր հաշվել եմ, էնքան շատ են քո տարիքի մայրերը ու Սեդայի պես բազմազավակ հարսները,- ուրախացած ասաց Ժորան,- հաշվել ու հրճվել եմ, հիշել եմ, ախր, ինչե՞ր եմ հիշել:

- Աստված քու մարդահաշիվ թող միշտ ավելցու,- դողաց Գուլոյի ձայնը,- ինչքան կորցուցինք, հերիք է, հիմա թաթուլներ պիտի ավելնան:

Ժորան հուզվել էր, սիրտը ելման կարոտի մեջ էր: Նա ներս գնաց, համբուրեց աջ ու ձախից իր վզովն ընկած զավակներին: Ննջասենյակից լսվում էր մանկան լացի ձայնը: Ժորան այնքան անսովոր ու լայն ժպտաց կնոջը, անուշ ու թրթռուն սիրով զննեց օրոցքում թռվռացող Թաթուլին: Փոքրիկը սսկվեց, անորոշ նայեց, անիմանալի փնտրտուք կար աչքերում, հետո ծիծաղի բարակ ելևէջներ ծաղկեցին շուրթերին, և այլևս չլացեց:

- Ճանաչեց քեզ, Ժորա՛,- մտերմաբար շշնջաց Սեդան:

- Արյան կանչն է, մեր մայրերը շալակած բերել, բաշխել են մեզ, Աստված շատ չհամարի,- Ժորան խոնարհվեց, համբուրեց մանկան տաք թաթիկները:

* * *

Արեգում Աստծո ամեն լուսաբաց սկսվում էր դպրոցի զանգով: Նույնիսկ կիրակի օրերին այդ զանգը հնչեցնում էին, քանի որ գյուղում եկեղեցի չկար: Իրենց «էրգրում» Ստեփանոս Նախավկա գմբեթավոր եկեղեցի, Խաչ և Նորամանուկ մատուռներ, Բագարանի Սուրբ Գևորգ և Կծկոնքի վանքեր տեսած ու պաշտած գաղթականներն Արեգում ուխտատեղի չունեին: Նրանց կարոտի ու խոստովանանքի սրբաքարը Արտին լեռան գագաթն էր կամ Թալինի Սուրբ Աստվածածին եկեղեցին, ուր նրանք այցելում էին եկեղեցական բոլոր տոներին: Հատկապես մեծ մայրերը մի հատուկ սիրով ու երկյուղածությամբ էին նախապատրաստվում: Գյուղական օջախներում աշխուժանում էր կրկնակի սպասումը, երեխաները դառնում էին անհամբեր, հարցեր էին տալիս, չէին հեռանում իրենց տատերի ու մայրերի կողքից: Այդ սերը գյուղի համբերության և հույսի հացն էր՝ շաղախված գաղթականների միամիտ ու մաքուր բարբառով, զրույցներով ու հիշողությամբ: Արեգը՝ լեցուն Կաղզվանի գավառի

մի քանի գյուղերի պահունի սովորություններով, պահպանում էր տարբեր շեների շշուկն ու բառաշերտերը, բայց մարդկանց հոգու ծուլվածքը նույնն էր, ցավի ու հիշողության պատմությունը՝ միախառն ու մեկ, ակոսում էր նրանց հոգիները: Տարիների հետ հավատամքը մաղել էր կասկածանքը, թույլն ու չնչինը տվել էր քամուն, իսկ բարին ու բարությունը, հինն ու նորը խրծել էր խոտ ու ծաղկի հետ, ամառվա շնչի մեջ պահել ցորենհասկի թագադրումը և բուրմունքը կտավատի:

Այսպես տաք ու տիրաբար ամռան օր էր Արեգում: Դպրոցի տնօրեն Անդրանիկ Վարոսյանն այդ արևի զուլալությամբ հիշողության չմեռնող փառքերի ներկա-բացակա էր անում, քայլում էր անշտապ, նորից լցվում դպրության հին ղողանջներով:

Դպրոցի լայն սրահները նորոգված, սպիտակեցված էին: Կրաքարի լուծույթի թարմ բույրը զգացնել էր տալիս բոլոր անկյուններից: Անդրանիկը մտքում հաշվեց՝ տասնհինգ օր էր մնում մինչև սեպտեմբերի մեկը: Շատ չէր, բայց դեռ գործեր կային: Թիկունքում նա ոտնաձայներ լսեց, ետ նայեց, ու հայացքը պայծառացավ: Կոլտնտեսության նախագահ Պարույր Բաղդասարյանն էր: Բարևելուց հետո ասաց, որ եկել է ստուգելու շինարարության բրիգադավար Արսեն Մկրտչյանի զեկույցի իսկությունը: Բրիգադը տասներկու օրում հասցրել էր ավարտել դպրոցի շենքի ներքին հարդարման աշխատանքները: Անդրանիկ Վարոսյանն ուղեկցեց համայնքի ղեկավարին, մտան մի քանի դասարան: Նախագահը բծախնդրությամբ էր նայում պատերին, առաստաղին, պատուհանների շրջանակներին, տեղ-տեղ կարկատած ապակիներին:

- Վատ չէ, բայց գիտեմ՝ էլի, պահանջներ ես ունենալու, Վարոսյա՛ն,- գործնական տոնով առաջ ընկավ նախագահը:

- Քանի մարդ արարածն ապրում է, նորի պահանջը պետք է լինի,- ծիծաղեց տնօրենը և գրկեց ընկերոջը,- մեր պայմաններում գյուղի տղաների ջանքերով այսքանի իրականացումը ինձ գոհացնում է:

- Լավ է, որ դու մտնում ես մեր դրության մեջ, Անդրանի՛կ,- դիմեց նախագահը բարեկամաբար,- գիտես, հեշտությամբ չեմ ճարել ցեմենտը, կիրը, տախտակը, ապակին: Մեքենայական պարկում շատ գործեր կան, մի քանի կամուրջ դեռ պիտի լրիվ վերակառուցենք, բայց քանի որ նոր ուստարին դուռը թակում է, ու քեզնից էլ ազատում չկա, Արսենին առաջարկեցի բրիգադը մտցնել դպրոց, թող մյուսները սպասեն:

- Պարո՛ւյր, սիրելի՛ս, իմացիր՝ գյուղը քո սիրուն աչքերի համար

չէ, որ քեզ պաշտում է, մարդկանց աչքից լավ գործը չի վրիպում,- հոգեթով ծիծաղեց Անդրանիկը:

- Է՜, բարեկամս, Արեգ գյուղը բոլորին էլ տեսնում է, ամեն մեկն էլ հնից մինչև հիմա ստացել է իր գնահատականը: Ինձնից ու քեզնից առաջ նույնպես լավ նախագահներ ու տնօրեններ են աշխատել, կառուցել են, կրթել, նրանցով է Արեգը բացել իր ճանապարհը, համաձա՞յն ես,- «Պատմություն» առարկայի առանձնացված դասարանից ներս մտնելով ասաց նախագահը:

- Ընդունում եմ:

- Բայց կհիշե՞ն գյուղի կառուցողներին, ովքեր գալիս են հնից, ձայն են տալիս, կանչում են ու... գնում:

- Այո՛, այո, եթե լռենք էլ, միևնույն է, նրանք մոտենալու են, եթե մոռանանք, մերձենալու են,- ավելացրեց Անդրանիկը:

- Լավ ասացիր, եղբա՛յր,- պայծառացավ Պարույրը,- հիմա ինձ թվում է քո խոսքից հետո մեր թիկունքից նայում են գյուղի հարգված նախագահներ Արտուշ Սիմոնյանը, Անդրանիկ Դարբինյանը, Արամ Սվազյանը, Աղասի Համբարձումյանը:

- Դպրոցի տնօրեններին ինչո՞ւ մոռացար,- ժպտաց Անդրանիկ Վարոսյանը:

- Ով մոռանա ջուխտ աչքով թող քոռանա,- ծիծաղելով ակնթարթորեն պատասխանեց նախագահ Պարույրը և շարունակեց,- հնարավո՞ր է Արեգ գյուղի պատմությունը, կրթվածությունը ներկայացնել և առաջիններից մեկը չհիշել մեր ուսուցիչ նահապետներին՝ Իսրայելին ու Լևոնին, դպրոցի նախկին տնօրեն Հմայակ Սարգսյանին՝ գիտակ անձ, իմաստուն ու լավ կազմակերպիչ, Թալինը ներկայացնող բարձր մտավորական. ապա հիշի՛ր Պիոս Խաչատրյանին, Հայկազ Ավոյանին, մեկը մյուսից բծախնդիր, կատարյալ մարդ-մանկավարժ և դպրոցական գործի կազմակերպիչ:

- Ես ու դու էլ նրանց շարունակողներն ենք, ուրեմն ապագայում մեզ էլ հիշողներ կլինեն,- ծիծաղեց Անդրանիկ Վարոսյանը:

- Քեզ հատկապե՛ս,- շեշտված ասաց Պարույրը,- մատաղ սերնդի հետ գործ ունես, եղբա՛յր, ապագայի խոսքը նրանցն է:

- Իսկապես, Արեգ գյուղը իրավունք ունի հպարտանալու,- լրջացավ Անդրանիկը,- մեր հիշողություններն ընդամենը իրական փաստերի վավերացում են և հեռու են սնապարծությունից:

- Խոսքը նաև գյուղի հավաքական պատմության մասին է,- պատից կախված քարտեզը ձգեց նախագահին:

Նա հանդարտ մոտեցավ, ուշադիր զննեց, ապա դարձավ Անդրանիկին.

- Էրգիրդ աչքիդ առաջ ես պահում,- սիրալիր ասաց նա,- երկուերեք տասնամյակ առաջ այս համարձակությունը աքսոր կարժենար:

- Բավական է ինչքան աքսորվածներ ունեցանք, Պարույր,- ձեռքը Սիբիրի երկրամասին դնելով՝ ասաց դպրոցի տնօրենը,- մեր փայփայած կարոտի աքսորն էլ մի օր պիտի այստեղ վերջանա,- Անդրանիկը ցուցամատը քնքշությամբ դրեց Ղարսի վրա, ապա իջավ Տիկորի հովիտը և կանգ առավ Նախիջևան և Օպնի գյուղերի մոտ:

- Սիրտդ հովացա՞վ,- հոգու խորքերից ժպտաց Պարույրը՝ տեսնելով, որ Անդրանիկի մեկնված ձեռքը քարացել էր քարտեզին:

- Օանոթ է, ամեն օր այդ ճանապարհով գնում ու գալիս եմ:

- Դպրոցի լավն էլ դա է, որ դասարանից դասարան անցնող սերնդի հետ ուսուցիչներով նորոգում եք այդ կարոտն ու հուշը, և ոչ մի բան չի կորչում:

- Ուրեմն մի՛ ափսոսա, որ շինանյութ ու աշխատանք ես ծախսել, բրիգադ ու մասնագետ ես ուղարկել դպրոց,- բարձր ծիծաղեց Անդրանիկ Վարոսյանը, թեև գիտեր Պարույր Բաղդասարյանի ջերմ վերաբերմունքը դեպի դպրոցն ու ուսուցիչը:

- Եթե մի բան կա, որ չեմ ափսոսում, դպրոցին ու աշակերտությանը պետք գալն է, դու լավ գիտես և չար կատակ մի՛ արա,- ընկերոջ աջը սեղմեց Պարույրը և գոհունակ քայլեց ելքի ուղղությամբ,- սեպտեմբերի 1-ին ինձ չմոռանաս:

* * *

Լուսադեմին Սեդան երազից վեր թռավ և անմիջապես ձեռքը մեկնեց օրորոցին: Թաթուլը քնած էր: Պատին ամրացված աշտանակի մոմը վառեց, մտածված չցանկացավ սեղմել էլեկտրական լույսի կոճակը, կարթնացներ երեխաներին, ամուսնուն: Մոմի թրթռուն թևերի տակ ավելի առկայծուն դարձավ նրա մտքերը պաշարած երազը: Զգաց, որ ներսում փլվում էր կարծրացած կարոտը, հոր պատկերը դարձյալ հաղորդվում էր իրեն, ու ինքն անկարող էր հեռանալ երազային այդ թանձր գույներից: Առաջին անգամ չէր, որ Սեդան եթերային սիգանքով վազում էր հոր հետևից, կանչում էր, ճչում, իսկ նա հեռանում էր, ճախրում դեպի վառվող մշուշները: Սեդան նրան միշտ հիշում էր անբաժան ափսոսանքով, մտերիմ ու անձնական ցավով: Պատերազմի շրջանում, տակավին 11-12 տարեկան աղջնակ, նա կարողացել էր իր այրվող ունկերի ծոցում պահպանել այն տխուր ոռպեների ահեղ ցնցումները, որոնք այսօր էլ տնքացող վերքի մորմոքներով խառնել էին նրա երազները: Ու հիմա նա ինքն

իր մեջ տարրալուծում էր այցի եկած երազի մանրամասները: Գյուղի եզրին՝ այնտեղ, ուր վերջանում էին ցորենի արտերը, որտեղից վերջին հրաժեշտն էին տալիս պատերազմ գնացողները, կանգնած էր հայրը, կանչում էր խռովածի նման, պանդխտացած, աղերսում էր, որ մեկը իր հետ գա, ինքը մեն-մենակ է... Եվ երբ ոչ ոք նրան չարձագանքեց, նա Սեդային խնդրեց, որ նորածին Թաթուլին նվեր տա իրեն, Անդրանիկ փաշան զինվորի պակաս ունի...: Երազային այդ վայրկյանին Սեդան դուրս թռավ անկողնուց, գրկեց օրորոցը: Թաթուլը անուշ քուն էր մտել, լողում էր մանկական երազների ծովում: Սեդան փորձում էր կենտրոնանալ, մոռանալ մղձավանջը, ժխտել երազն ու նրա մանրամասները, սակայն այս անգամ համառ էր հոր նայվածքը, խոսքը խրոխտ էր ու բարձրից: Պատերազմից չվերադարձած հոր դեմքն ու աչքերը բարի էին: Սեդան այդպես էր մտապահել նրան կռիվ գնալու օրը: Հիշում էր. նախ համբուրեց իրեն, ապա երկու քույրերին, իսկ վերջում ամուր գրկեց որդուն՝ Կառլենին, և նրա ականջին լսելի ասաց՝ հայրական օջախին պահապա՛ն եղիր, մնա միշտ տղամարդ: Այդ բառերը տարիների միջով շուրթեշուրթ անցան, սրտերում բնավորվեցին, թևավոր հնչեցին Սմբատի լուռ ճամփաներին և առայսօր մնացել են նրա շեն հարկի տակ: Եվ ամեն անգամ, երբ երեխաների երազները սկսվում էին բացակա հայրիկով, հարազատներին թվում էր, որ տան ու տնեցիների հաջողությունները չէին ուշանա: «Երազով ձեր հայրիկի երևալը բարի է, ուժ է բերում իր զավակներին»,- ասում էր Հռիփսիկ մայրիկը:

Սեդան այդ հիշողությունների կողքին չէր ուզում այսօրվա իր երազը վերապատմել, բայց «Անդրանիկ փաշան զինվորի պակաս ունի» հայրական կանչը ծակում էր ականջները, անսովոր դղիրդով զարկվում թպփրտացող սրտին: Նա զգուշությամբ օրորոցից դուրս բերեց մանկանը: Թաթուլն արթնացավ, աչքերը բացեց և անսովոր աշխուժությամբ ձգվեց դեպի վառվող մոմը: Հետո, երբ օրորոցում էր, այլևս չքնեց: Սեդան արձակեց խանձարուրը, թույլ տվեց, որ մանկիկն ազատվի կապանքներից: Մոր ու մանկան խոսք ու ճիչերից արթնացավ Ժորան, նստեց ծալապատիկ:

- Ժամը քանի՞սն է, էսքան շո՞ւտ եք զարթնել:
- Երազից զարթնեցի,- արդարացավ Սեդան:
- Էլի խա՞ռն էր քու երազը:
- Խառն էր ու շատ խառը:
- Ուղարկի քու հոր տուն,- ծիծաղեց Ժորան:
- Իմ հորն եմ տեսել...

- Բարին թող կատարվի, ասում են՝ իմ աներ լավ մարդ էր:

- Երկուսս էլ նույն տարիքի ենք, ինչքան որ ես եմ հիշում նրան, էդքան էլ՝ դու:

- Հա՛, բայց երազով նա իր աղջկան է տեսության եկել:

- Մի բան ասեմ, չգոռաս,- միամիտ ասաց կինը:

- Ի՞նչ,- նկատելի ձգվեց Ժորան:

- Երազիս մեջ ինձ ասաց Թաթուլին տուր տանեմ, Անդրանիկ փաշան զինվորի պակաս ունի:

- Կտրե՛ քու ձեն, կնի՛կ,- նեղսրտեց Ժորան,- էկել էր, թող ընձի տաներ, էս թլոր էրեխեն մինչև զինվոր դառնա, մինչև...

- Քուն ու դադար չունե՞ք,- ներս մտավ Գուլոն,- էրեխեն հիվա՞նդ է:

- Չէ՛, մարե՛, ոչ մեկն էլ հիվանդ չէ,- ժպտաց Ժորան և մորը նստեցրեց իր կողքին,- ֆիդայիները քու թոռ Թաթուլին են կանչե, թե Անդրանիկ փաշան զինվորի պակաս ունի:

- Ո՞ռե՞ր եք, տղա՛...

- Էրազն է ծուռ, մարե՛, քու խնամի Սմբատ էդպես է ցանկացել, հարցրու քու հարսին...

- Էդման սո՜ւտ,- ծղրտած տատը ու խեթ նայեց հարսին:

- Մարե՛, կիրակմուտի երազ սուտ է, բա ի՞նչ է,- որդին գրկեց մորը,- մի՛ դողա, Անդրանիկ փաշեն ո՜ւր, Թաթուլ թոռդ ո՜ւր:

Գուլոն հեռու էր նախապաշարմունքից, բայց թաքուն մի ստվեր շոշափեց հոգնած աչքերում: Չհամբերեց, մոտեցավ օրորոցին, բռնեց մանկան թաթիկները, ժպտաց, լիացավ. զմայլանքի ճոթը աներևույթ քանդվեց մի տեղից, ու տատի շուրթերը դողացին.

- Աստծու պատկերն ես, բալե՜ս...

- Մարե՛, էդքան որ սրբացնում ես, դրա համար էլ ուզում են դարձնել Անդրանիկ փաշի զինվոր,- ծիծաղեց Ժորան:

- Էրեխու աստղ պըտի օրորոցի միջից երևա, ո՛չ ես, ո՛չ էլ դու էդ ճամփեն չենք կրնա փակե,- իմաստունի պես պատասխանեց մայրը:

- Դե լա՜վ, երազ էր, անցավ, իզուր էլ պատմեցի,- միջամտեց Սեդան և սեղմեց էլեկտրական հոսանքի միացման կոճակը:

Տունը միանգամից լուսավորվեց: Երեխան ձգվեց վեր: Ժորան գրկեց նրան, շոյեց գլուխը:

- Իմ բարի երազն ու իմ բարություն Թաթուլն է, չէ՞,- երգեցիկ ձայնով ասաց հայրը,- եկար ու իմ հինգը դարձրիր զույգ, Անդրանիկ փաշի՛ զինվոր:

Սեդան գլուխը կախեց, Գուլո տատը ծունկ իջավ, ձեռքերը վեր պարզած սկսեց անուշ երգել: Փոքրիկն ակնապիշ նայում էր, գլուխն

աջ ու ձախ էր թեքում, փորձում էր հոր գրկից թռչել: Արթնացել էին երեխաները, մյուս սենյակից եկել էր նաև Մարկոս պապը: Օջախի առավոտը լցվել էր զնգուն ծիծաղով ու երգով:

- Քու երազն էր լավ, թե էս խառնաժողով,- Ժորան թեքվեց դեպի Սեդան, հայացքը՝ թռչկոտող երեխաներին, որոնք տակն ու վրա էին անում անկողինները:

- Իմ երազն ի՞նչ մեղք ունի, ամեն օր էլ էս չէ՞ մեր տուն,- Սեդան նազանքով ժպտաց Ժորային և միաժամանակ փորձեց սաստել երեխաներին:

- Ազատ թող իրանց, հա՛րս,- մեղմ կշտամբանքով միջամտեց Մարկոսը,- իմ երազած օջախ էս իրարանցումին էր կարոտ, թող ծփան...

* * *

Թալինից Արեգ գնացող մեքենաների վարորդները կամա, թե ակամա կանգնում էին՝ ճանաչելով Արամ Դարբինյանին, հարգանքով իրենց ծառայությունն էին հայտնում: Իսկ նա շնորհակալությամբ մերժում էր, որոշել էր այսօր ոտքով գյուղ հասնել: Անցյալից հիշվող բազմաթիվ առիթներ ու դեպքեր խորհրդածելու պատճառ էին դարձել, և ինքն ուզում էր բնության մեջ մենակ լինել, մտորելու այնքան բան էր կուտակվել ներսում, ցանկանում էր այս ծանոթ ճամփաբաժանում, շրջակա քար ու թփի, ցածրիկ սարահարթերի ներկայությամբ հասկանալ վերադարձող վկայությունների իսկությունը: Լուսավոր շատ մարդիկ, որոնց հետ շփվել էր ինքը, վերջին մի քանի շաբաթներին հանգիստ չէին տալիս: Նրանցից ամեն մեկը հիշողության մեծ դաշտ էր մտնում իր ձայնով, բարբառային իր խոսվածքով: Արամը, ինչպես այն ժամանակ, հիմա էլ կարծես միացրել էր իր հոգու ձայնագրիչը, բավական էր մեկ-երկու բառ մտաբերել նրանցից, և իր առջև կանգնում էին այդ բարբառի տերն ու պապենական վկան: Բառաշնչով Արամը տարբերակում էր այդ մարդկանց՝ սասունցի՞ են, տարոնցի՞, Ալաշկերտի՞ց են, Վանի՞ց, թե՞՝ ղարսեցի են: Բառերը բացահայտում էին նրանց բնիկ ծննդավայրի գույնն ու համը, իմաստնությունն ու հումորը: Արամը նրանց հետ, նրանց ձայներով գնում էր Արեգի ուղղությամբ: Նա մտածված շեղվել էր կենտրոնական ճանապարհից, ընտրել էր այն կարճ ուղին, որ կտրում էր շրջկենտրոնից գյուղ ընկած քարահովիտը: Այստեղ Արամը հույս ուներ, որ այլևս չի հանդիպի սիրալիր վարորդների, ծանոթ-անծանոթի և գնում էր տիրոջ իրավունքով,

անդաստանի պահապանի բծախնդրությամբ մեկ-մեկ կանգնում, ժպտում էր աշնան չորությանը դիմացած խոտ ու ուրցին, անձրևից հետո քարափոսերին գոյացած բուռ-բուռ լճակներին, որոնք այնքան նման էին ծանր բեռան տակ կքված եզների լայն ու չռված աչքերի: Կանգնեց, բլրալանջը հաղթահարելիս՝ հոգնել էր: Հայացքը սևեռուն քսվեց մեծ ջրափոսին, որն ավանդական գռան տպավորություն էր թողնում: Ջրի հայելու մեջ տեսավ իրեն, իր դեմքը: Սպիտակ մազերը փողփողացին բանտված ալյակներին, նա, կարծես, առաջին անգամ էր այսքան բնական տեսնում իր ներկայությունը, հետևում թողած իր կորած, հեռացած ջահելությունը, ուր հիմա լռություն է, որտեղից միայն լսվում է հուշերի աղաչանոք ձայնը: Արամը գլուխն արագ թեքեց, ուզեց իջնել աներևույթ, վերծիգ այն աստիճանից, որը նրան այսքան մոտեցրել էր ութսուն գարունների սահմանագծին: Սակայն նույն վայրկյանին էլ հասկացավ, որ ինչ եղել է ու կա, դա է իրականը: «Ո՞ւր փախչել քեզնից, որին բռնել ու շղթայել ես քո մեջ. նրան զարդարել ես զարմանքով ու հիացումով, նրան ձաղկել ես, սիրել ու ատել, նրան զրկել ես բազում բարիքներից, որ նախընտրած բարձունքդ չփլուզվի ուրիշների ոտքերի տակ...»: Արամը մտքերի խուռն ոլորանում դարձադարձի խշրտոց լսեց, քարափոսի լճակում ձեռքերը թրջեց, ապա զովացրեց ճակատը, դեմքը և շարունակեց քայլել: Գյուղը շատ հեռու չէր, բայց այն ճանապարհը, որն այսօր ինքն էր նախընտրել, ուզում էր լինի անծայր, չվերջացող ու հաշտ: Իր բնավորությանը ծանոթ լինելով՝ նա չէր զարմանում, որ օրվա պատառիկ ընթացքի մեջ որոնելու է իր տեսակի ցավը, դրանից հառնող կրակի կերպը: Ներսում աշնան մեղմ գույների արձագանքն էր, դրանից վեր ու վեր տեսնում էր Դարբինենց տոհմից ժառանգած բարության հունդերը: Զարմանալի բծախնդրությամբ նա ուզում էր եղածի հին ու նոր ծաղկումով վերակերտել իր արածը, իր թողածը ընկալել ժամանակի մեջ և հասկանալ այն անհնարինը, որի հանդեպ պարտքը չէր ավարտել, և համոզված էր, որ այն թողնելու է ժառանգներին: Արեգ գյուղի ու շրջկենտրոն Թալինի միջև ճանապարհն արդեն կիսել ու գնում էր: Մենակության զգացումը մոլորվել էր վերադարձող պատկերների սրահում, և նա անսխալական բնազդով խոսում էր մեկի, երկուսի, տասնյակի հետ: Ովքե՞ր էին նրանք, ո՞ր կողմից էին գալիս, ինքը միայն գիտեր, շփվել ու ճանաչել էր նրանց, երբ շրջանային ֆինբաժնում, որպես մասնագետ ֆինանսիստ, ընդունել ու պատասխանել էր: Քանի՜-քանի գյուղերի հաշվապահական հաշվեկշիռն էր

«խելքի բերել», անքուն գիշերներ անցկացրել: Հիշողության պարսը հոգու ամպերից պոկվեց ու գնաց: Ակամայից հետ նայեց, հենվեց քարին, որ հասակով մեկ կանգնած՝ ուղիղ դիտարկի շրջկենտրոնի չորս բոլոր փռված գյուղերի պատկերները: Հայացքը կանգ առավ Աշնակի վրա, մտքերի խոյընթաց արծիվը իջավ մերձ ու մոտիկ, Աշնակի կոլտնտեսության հաշվապահ Արամ Հակոբյանն եկավ, կանգնեց իր դիմաց: Նրա քաղցրաբերան բարբառը հատընտիր ու զուլալ զրնգաց ջուրակի մեղրածոր գայթակղությամբ:

Արամի հայացքը գնաց, իջվարեց Կաթնաղբյուրի վրա, ձգվեց Դավթաշեն, Սասնաշեն, Բազմաբերդ ու Շղարշիկ: Մեկ-մեկ գտավ ծանոթ ու անծանոթի, իր բարձունքից հասավ այդ շեները, նրա շողոտ երգն ու զրույցը զգաց ու լսեց, ետ դարձավ դեպի Միջնաձոր: Հոգու խորքում ճմլված ճոճքը խուռներամ դողաց: Ձորերի միջև դարավանդի շուքը մարել էր, գյուղը չկար, մարդկանց վերաբնակեցրել, տարել էին: Դարասկզբի գաղթականներին գաղթի նոր ծրագիր էին տվել՝ լքել, հեռանալ, բախտ որոնել Արարատյան դաշտում: Արամը հեռվից հեռու տեսավ աշնանացած, ցամաք ու անծիր հանդերը, իր ընկերոջը՝ Մուշեղ Սահակյանին, տեսավ, խռոված հեռանում էր Միջնաձորից՝ թևի տակ այդ գյուղի վիրավոր մատյանը: Ընկերոջ համար տխրեց, մտքում մնաս բարով ասաց ու ձգվեց Ակունք: Գյուղի հաշվապահի՝ Արտավազդ Դավթյանի ժպիտը դեմքին էր, գյուղը տեղում էր, նրա հույսը որոնումի ճամփա էր գտել: Արամն այսպես իր դիտակետից ներկա-բացակա էր անում ընկերներին, խորանում աշխարհի փոփոխված բնույթի խորքերը, մարդու և ժամանակի խորհուրդն էր քննում: Հուշահավաք մտքով վերադարձավ Թալին՝ իր աշխատանքային օրրանը: Իսկ աշնան օրը այնքան վճիտ էր: Սպիտակ ամպերի երամակը կողքի բլրաշարքերին նստել, չէր ուզում հեռանալ: Արամին թվաց՝ տարիների անբեկ հեծվորն է նրա թամբին, ինքն է՝ կանգնած անցյալի ու այս պահի միջև՝ Թալինից-Արեգ ձգված բլրաշարքերի վրա: Ծանոթ-անծանոթին ջոկջոկելու խնդիր չէր տեսնում, իր տարիքի առջև իմաստուն խաղ էր բացել և չէր ուզում տանուլ տալ: Այդ բարձունքից ջանում էր որևէ մեկի չմոռանալ, թող գան հասնեն իրեն, մնան իր հյուսած պատմության շերտերում, խառնվեն այս քարաբարձունքներին, ղողանջ-թրթռոց ունենան, հիշվեն այն տենչանք-խարույկներով, որ մի օր՝ շամանդաղից, առաջ նախորդներն էին տվել ու անցել: Այդ նախորդներին ճանաչում էր Արամ Դարբինյանը և այսօր իրեն իրավունք էր վերապահել նրանց և այս ներկաներին մի վերջին

պատմություն անել, նրանց ընդհանրությունների գաղտնիքը բացել, անգոց հոգով բանահյուսել Թալին աշխարհի էրգիր-ասքը, որ ուղիղ պատկերով եկել էր Սասունից ու Տարոնից, Ալաշկերտից, Ղարսից ու Վասպուրականից: Այդ էրգրի պատկերների առջև՝ Թալին-Արեգ հանդամիջյան բարձունքներին, ծունկ իջել, այստեղ բերած-հասցրած իր լեգենդի լռությունն էր բացահայտում Արամը:

«Այս քարաստանը, նրա ծոցում ծվարած մենավոր Թալինը, Արագածից իջնող չոր ու ցամաք ձորերը, կծղած ու կոշտացած արտերը, այս պաղ երկինքը, իջնող աշնան անամոք դատարկությունը, Աստվա՜ծ իմ, ի՞նչ գաղտնիքներով են գործված մեկ-մեկու...»,- խոհերի այս խաչմերուկում Արամը, թվաց, ճախրուն արծիվ տեսավ, քայլեց նրա հետևից, ապա ետ նայեց, նորից գնաց, և դարձյալ մտքի լեզուն հայտնության մի նոր ելևէջով քառատրոփ անցավ առաջ: Ամենուր լերկ բլուրներ էին, որոնք երեկ գարնան ու ամռան մեջ հարսնացած ու ծաղկուն զառիթափեր էին, հիմա աշնանացել, թափանցիկ մերկությամբ քաշվել էին իրենց ներսը, լուռ ու անտարբեր սսկվել: Շուրջը խեղճ ու թշվառական արձագանք էր, քարերի, ձոր ու ձորակների խունացած ցնցոտիներ: Քարերի հովտում միայն ոչխարների հոտն էր ելևէջում, և ինչ-որ մեկը, բլրի ճակատին բազմած, իր նման երևի նա էլ այս անցավոր աշխարհի խորհուրդն էր քննում: Արամի հայացքը, ծվատելով մշուշ ու ամպ, ձգվեց դեպի այդ մեկը, որ հեռվից էր՝ ամպերի տակ, բլրի ճակատին: «Այս քարաստանի գաղտնիքը մարդկանց աչքերում է, քարի քնարածայն քողով իրենց օրն ու դարը գահավորած, եկած ու ապրած, անցած ու հեռացած մարդկանց է պատկանում այս ամենը, ինչ-որ կա ու երևում է...»: Արամը թեքվեց ու գնաց դեպի Արեգ, բայց թվում էր՝ նույն տեղում է՝ ցից քարին հենված, նրա ծանրությամբ արմատացած է հողին, լանջն ի վեր սիրտը բաց արած հողին, ու թեև ինքը գնում է, բայց չի գնում, այստեղ է՝ աշնանաթագ այս բլրալանջին, որտեղից երևում են իր անցած ճանապարհը, ոտնահետքեր պահած և չարչրկված իր քարտեզը, ձայնածափերի արթուն խրախույսը, հետո՝ մարդիկ, ջահերով ու ջահակիր մարդիկ, զինվորացած ու պահապան այրեր, մամեր, մայրեր, գրկանոցներ, ծաղկի ծփյուն, ծիրանավոր կեսօր, խաչեր խորանշխար, վարդապատկերներ, հյուսկեն աղոթաշարք և սաղմոսներ սիրահոժար: Եվ հետո մեկը՝ այսօրվա հայտնության արձագանքով այնտեղ՝ բլրի ճակատին նստած: Այսպես ե՞րբ էր Արամը քննել իրեն, իր շուրջը, զարմանք-զրույցներին հրաժեշտ տվող իր վերջացող աշխարհը: Իմաստավոր էր նա, և

բնազդը նրա ականջին հիմա ապարդյուն զանգեր էր հնչեցնում, երբ հոգու բանական վճիռը տարիների շարունկն էր շխրտացնում, լցվում ավարտումի ցնորքով, հեռանում հանդարտ, կամաց-կամաց, կուց-կուց արցունքի պես, մարմրող կանթեղի նման: Նա հասկանում էր, որ աշխարհի ավարտուն օրենքը մի օր պիտի շեղվեր կյանքի թվացյալ հավերժությունից, պիտի գար խռովածի նման, լուռ պիտի բարևեր և ստվերի սահքով այլևս չհեռանար:

Արամ Դարբինյանն այդ զգացումների, հոգեխարշ ու բռնկուն հաղորդության ավազանում էր, աշնանաշուք թախիծների քարաբաղնիսում: Տաք քրտինքը ծլլալով իջնում էր մինչև ազդրերը, խառնվում անձրևակարոտ հողին: Ինքը հոգեպարույր զգաստ էր, մտախռիվ կարկուտը չէր կարողացել նրան հունից հանել. նա ուժեղ անհատ էր, միշտ կարողացել էր ապաքինել անպատեհ առիթը, վերագտնել կարևորվող հիմքը, հասկանալ պատճառը, չխուսափել դառը ճշմարտությունից: Արամը հրաշալի գիտեր, որ տարիքի բարձունքին հասած աստիճանները փխրուն են՝ սեղմված փոթորիկ-փառքերով, որոնք միշտ պատրաստ են փլվելու: Եվ նա մտքում վերհիշեց տարեկից ընկերներին Արեգում, Թալինում, Սասնաշենում ու Ցամաքասարում, իր առջև, իր կողքին տեսավ նաև երկրագնդի բոլոր անկյուններում ապրող իր հասակակիցներին, որոնք հիմա իր նման մտել են հոգու խռովքի ծովը, թիավարում են դեպի ափ, որն արդեն մշուշոտ է ու միգամած: Արամը հետնահայաց շփվել, իջել էր անդնդախոր հեռուն, մտածում էր բոլոր նրանց անունից, ովքեր իր նման ինքնամոռաց քայլել են այս արևի տակ, ամբարվել են հազար ու մի ցավի և ուրախության ցնցումներով, կորուստների համար սգացել, վերածնված-եկածներին գուրգուրել, նրանց ոտքի տակ հողն են պնդացրել, խաչքարի առջև սովորեցրել են աղոթք և ապա, իրենց վարը վարած, իրենց աշունները քամած, գնացել: Բայց Արամը գյուղ էր գնում: Գյուղը Արեգն էր, այդ աշնանաբույր ճանապարհին նա չէր շտապում, չէր ուզում մտքերի գերին դառնալ, պարտադրված պայմաններն օտար էին: Ինքնախույզ փոթորիկների այս պահին նա լսում էր սրտում զուգահեռ զարկող ու իրեն երբևէ չլքած հույսի ճիչը: Ներսում հաստատուն հանգրվան որոնող նավագնացը իր դիտակը աստիճանաբար հետ էր բերում հեռահմա հորիզոններից: Արամն այդ հրամանի տակ էր, իր անցած ճանապարհից վերադառնում էր հանդարտ, հաղթողի պես: Գիտեր, որ կյանքի ընթացքը իր և ամեն մեկի ոտքերի տակ ծաղկուն ուղեգորգ չի եղել: Այն ելևէջ ու խոչուխութ է ունեցել, ինչպես հանդա-

միջյան այս տարածքները Թալին-Արեգ հատվածում: Նա ամենևին չէր զարմանում, որ հենց այստեղ փայփայած երկյուղածությամբ բաց արեց վերագտած իր քարտեզը: Իր իմացած երկրագնդի վրա հեքիաթային աշխարհներ որոնեց, տեսավ, հիացավ, հոր ու պապի աչքերով նկատեց լուսնթագ եզերքների ոսկեբարձ հավերժությունը, բայց իր հոգու մայրաքաղաքը վերջնականապես հիմնավորեց այստեղ՝ Ղարսից-Թալին ձգվող քարանվագ ռեքվիեմի ծոցում: Չէ՞ որ այստեղից էր նա հիմա տեսնում արևածոց գավաթը ծննդավայր Ծպնիի ուսերին, նաև Արեգի մեծ դարձի միջօրեն իր զավակների ու թոռների ծփացող օրոցքներում: Արամն արդեն բոլորովին չէր շտապում, հմայքի հորդոր կար ներսում: Նա հայացքը բոլոր կողմերից հավաքել, ետ էր բերել և իր հոգու պարզ գույների ծիածանը Արեգ գյուղը խորհրդանշող Արտին սարից հասցրել էր Արփաչայից այն կողմ՝ Տիկորի հովիտը: Իրականության և տեսիլք-գույների բաբախների մեջ Արամը ցանկալի հույսով ուզեց մեկին գտնել, խոսել նրա հետ, խորհել, հեռանալ մտորումների պահոցներից: Եվ նա այդ մեկին նշմարել էր այնտեղ՝ ամպերին քսվող բլրի ճակատին նստած: Եվ արդեն արագ-արագ գնաց, հետևում Թալինն էր ու Աշնակը, Իրինդն էր ու նրա բարձունքի բարևը Արտին սարին: Արամն ամեն ինչի մեջ իմաստ էր փնտրում, իրեն համոզում էր, որ քարն ու սարը նույնպես լեզու ունեն, իրենց հասկանալի լեզուն, բայց նրանց խորքերում ամբարած ցավն ու ճիչը ուզում էր թարգմանել այն մեկի միջոցով, որ առավոտից իրիկուն այնտեղ է՝ հորիզոնի տաքն ու պաղը եղանակող բլրի ճակատին նստած:

- Է՜, է՜, է՜, հե՜յ...- բլրաբերդից լսվեց այդ մեկի ձայնը, որը ձանձրացնող համառությամբ արդեն քանի ժամ ձուլվել ժայռին, հետևում էր այս մեկի շարժումներին ու նրա անսովոր բնույթին: Նա գիտեր, որ այս տարածքներում, մանավանդ աշնան մոլոր կածաններում ոչ ոք հենց այնպես բախտ չի փնտրում: «Կարո՞ղ է թաքցրած բաներ ունի՝ ոսկի կամ հրացան... Խեղճը ման է գալիս ու չի գտնում: Ո՞վ է...»: Տարածությունն ահագին էր, և մարդը չէր ճանաչում եկվորին, բայց անսովոր տագնապ զգաց, երբ անծանոթը փութալով դեպի իր կողմն էր գալիս: «Ո՞վ է, իր ուզածն ինչ է...»: Եվ երբ հարյուր-երկու հարյուր ոտնաչափ էր նրանց բաժանող տարածքը, բլրի ճակատին նստած մարդը պոկվեց տեղից, ոչխարի հոտը շրջանցելով՝ արագ ցած իջավ:

- Արա՜մ, էդ դո՞ւ ես, տղա՛, ի՞նչ ես կորցրել էս հանդերում,- ձեռքերը լայն բաց արած՝ մոտեցավ Կրպեենց Մարկոսը:

- Գյուղ եմ գնում, ճամփաս կորցրի,- միամիտ արդարացավ Արամը և այնպես գրկեց նրան, կարծես տասը տարի չէին հանդիպել:

- Դու ճամփա կորցնող չես, Արա՛մ,- ծիծաղեց Մարկոսը,- երևի բան-ման ես պահել էս քար ու քռի մեջ:

- Բան-մանը քիչ է, Մարկոս,- լրջացավ Արամը,- ես ինձ եմ պահ տվել այս քարաշխարհի լռության մեջ, եկել եմ մի քանի բան ասեմ նրա ականջին ու գնամ:

- Իմա՞լ,- Մարկոսն ավելի լրջացավ,- կեցի՛, տղա՛, կերևա էլի քու Օպնիին էս կարոտցե, թե՞...

- Երանի քեզ, Մարկո՛ս, որ ամեն օր քո ձայնը թողնում ես էս քար ու բլուրներին, միտքդ ու հոգիդ էլ ազատ են, ուզենան, Մասիսին կհասնեն, ուզենան, կիջնեն Ղարսի հանդ ու դաշտերին:

- Իմ միտք, Արա՛մ, հիմա էս գյուղի հետ է,- Մարկոսը դեմքով շուռ եկավ դեպի Արեգ,- դու էլ իմ կարծիքին ես, քու ութը զավակներն ու թոռները էդ գյուղի ծնունդ են, չէ՞...

- Ի՞նչ է, էրգիրդ մոռացա՞ր,- թեք նայեց Արամը:

- Իմ էրգիր իմ միջից հանող դեռ չի ծնվե, տղա՜,- մեղմ մռնչած Մարկոսը,- կուզես հավատա, կուզես՝ չէ, էդ էրգրի կարոտն է մըր կյանք կերկարացու, երբ էդ կրակ սկսեց թուլանալ, մըր ապրելն ավելորդ է, էն ժամանակ հարկավոր է մեր տեսածն ու չտեսածը տանք էրեխեքուն, որ չկորի, ու պատվով հեռանանք:

- Մարկո՛ս, էդ կրակը, ուզենք, թե չուզենք, մեզնից անկախ սերնդեսերունդ կգա ու կերթա,- ասաց Արամը և բռնեց Մարկոսի արևահարված ձեռքը,- քո վերջին թոռը՝ մի քանի ամսական Թաթուլը, ի՞նչ գիտես, քո, Ժորայի, Սեդայի, էլ չեմ ասում Գուլոյի երգերից իր բաժինը չի՞ վերցնում:

- Բոցի կտոր է ու շատ թռվռան, կծգվի ընծի, երբ կկռանամ ուր օրոցքին:

- Տեսնո՞ւմ ես, բնության գաղտնիք է, արյան չերևացող խոսք ու զրույցը ո՞վ կարող է հասկանալ:

- Էդի որ ճիշտ է ու ճիշտ,- անուշ ժպտաց Մարկոսը,- իմ թոռներ՝ սկսած Սերգոյից, բոլորն էլ էդպես էին, բայց էս տղեն, հավատա, Արա՛մ, առյուծի ձագ է, կսիրես ու չես կրնա հեռանա: Հետո, չգիտեմ, իմ աչքին կերևա՞, թե ծերացել եմ, էդ տղեն օր օրի կմեծանա,- խոսքը չավարտած՝ Մարկոսը շտապեց հեռացող հոտի ճանապարհը փակելու:

- Ամենափոքրը միշտ էլ այդպես է, ձգում է պապին,- նրա հետևից գոռաց Արամը և մտքով ինքն էլ տուն հասավ, ուզեց գտնել իր մեծ

ու փոքրին, գոհունակ ժպտալ իր ութ երեխաների մորը՝ Հրանուշին: Ուզեց իր անցած ճանապարհի գումարն այստեղ բերել, այս բլուր-բարձունքների առջև, որ թեև մերկ են, գորշ ու ցամաք, բայց մշտականգուն են, հենց այստեղ բացել իր տագնապներին կերակուր տվող մղձավանջների տեսիլքը, զարկել տարիքի տարտամ ընդվզումին կամ զարկվել ֆիդայու նման՝ Թալին-Արեգ հանդամասի բլուր-բարձունքներին: Մարկոսը դեռ հեռվում էր՝ ձորակի պռնկին, չէր հասցրել վերադառնալ, բայց նա հեռու էր, թե մոտիկ, Արամը նրան հայտնագործեց՝ որպես այսօրվա իր միակ վկան: «Տարիքը նրան էլ է կտրել, տարել մի անորոշ աշխարհ, բայց նա չի ընդունում, ամուր է այս ժայռերի պես: Այս տարիքում սիրահարված է թոռանը՝ Թաթուլին... Եվ նա է ապրելու տուրք ու վեհություն բերել ծերունուն»: Արամն ինքնազրույցի մեղմ ցոլանքը շաղեց իր ու Մարկոսի միջև: Իր բառերը վազեցին դեպի Մարկոսը, ուզեց այդ մասին բարձր-բարձր գոռալ, իր ու նրա միջև ձգված պատառոտուն աշնանատարածքը լցնել երեխաների ու թոռների սիրով: Իր ու նրա անունից խարիսխներ գցել քարաստանի այս օվկիանում, որ տարիներ անց այս ափերում իրենց ժառանգները հողմածեծ ժայռերի խորքերից դուրս բերեն իրենց հոգու փերթերով հյուսած նավերը՝ զարդարված պապենական դրոշի փայլով, խաս ու խոյընթաց խորհուրդներով: «Սա ես եմ ու իմ պատգամը, սա նաև Մարկոսն է, Ստեփանը, Սմբատն ու մյուս տղաները...»: Անունների չվերջացող շարքը վազեց Արամի հոգու կտավին: Բոլորին տեսավ մեկ-մեկ, բոլորի երեխաներին անուն առ անուն հիշեց, սրտի սրսփուկից նրանց համար տաք թրթիռներ ջոկեց ու մտքերի այսօրվա հրայրքով բացեց իր տան դուռը. ժպտաց որդիներին՝ Հերբերտին, Հենրիկին, Ժորային, Լյովային, Ռոբերտին ու Ալբիկին, քնքուշ բառեր ասաց դուստրերին՝ Քնարիկին ու Գոհարիկին: Հոգու շարուկին փխրուն տեղեր գտավ, խորքից տխրեց: Աչքերի առջև եկավ կանգնեց իր վաղամեռիկ հարսը՝ Աստղիկը: Տեսավ Ժորայի թախիծը, ամպի հյուսկեն թելեր թոռան՝ Արտավազդի շողարձակ դեմքին, նրա քույրերի՝ Լուիզայի, Սոնայի, Նելիի հեծկլտուն մորմոքները: Մայր կորցրած թոռների երամը նա դարձյալ գուրգուրեց, ցանկացավ սրտի շողը տալ նրանց աչքերին, իր մեծ ափսոսանքի հառաչքներով ինքնայրումի խարույկ դառնալ, որ նրանք չմրսեն, չթոշնեն: «Է՜, Ժորա՛, Ժորա՛, դաժան եղավ քո ճակատագիրը, վառվեց պտղաբեր ծառդ, դու շատ մաքառեցիր բախտի բեկված ճամփաներին, հառնեցիր բնությանը ներդաշնակ, անսպասելի կայծակ տեսար տանիքիդ

վրա, և ինքդ այլևս մենակ մնացիր զավակներիդ ճակատագրի հետ...»: Արամը խուլ փղձկաց, ինքնահոժար նստեց պատահած քարին, գլուխն առավ ափերի մեջ: Նա իր վիշտը սովոր չէր բացել ուրիշի առջև, ամեն ինչ պահում էր ներսում, ցավը տակնուվրա էր անում, եռում հազարաձայն, բայց նա անհաղորդ էր, ինքնամփոփ: Հիմա էլ օրվա ու տարիների բարձունքին ինքն իրեն երկփեղկելու, իրենից ու աշխարհից հարցնելու հազար ու մի բան ուներ: Եվ դրա համար էլ նա այստեղ էր: Արամն իրեն համարում էր պատասխանատվությունից ու պատասխաններից չխուսափող մարդ, չէր ուզում որևէ մեկը, նույնիսկ այստեղ հայտնված մաքուր ու անապական հոգի ունեցող Մարկոսը իր սրտի շավիղից սայթաքած հին ու նոր բաների մասին հարցնի: Մարկոսի ոտնաձայներից զգաստացավ: Տենդը աշնան իջվարող օրվա հյուսքեր էր կապել գլխավերևում: Նայեց, աչքածրար զմռսվեց իր հայտնության օրորուն պատկերներին և փորձեց ժպտալ Մարկոսին: Նա այնքան փութալով էր գալիս, կարծես շտապում էր մի կարևոր բան ասել, քանի դեռ չէր մոռացել:

- Մտքերով էդ ո՞ւր էս հասել,- մտերմաբար հարցրեց Մարկոսն ու նստեց նրա կողքին:

- Ուրիշ տեղ չէ, տուն հասա, տեսա բոլորին, խոսեցի, ու իմ սրտից էսօրվա քարն ընկավ,- խորը շունչ քաշելով ասաց Արամը:

- Քեզի սկի տխուր չեմ տեսե, կարո՞ղ է բան կա, ու ես չգիտեմ,- մտերմաբար խոսեց Մարկոսը ու քայլեց: Արամը նույնպես գնաց նրա հետևից: Խնդրեց, որ կանգնի: Մարկոսը մեղավոր ու մարմանդ ժպտաց, փորձեց հասկանալ՝ ի՞նչ է կատարվում այս պատվարժան մարդու հետ: Արամը հասկացավ նրան և կանխորոշեց իր ասելիքը, այլապես նա սխալ հետևություններով երեկոյան կվերադառնար գյուղ:

- Ինչ որ խառը բաներ մի՛ մտածիր, Մարկո՛ս,- համոզիչ հնչեց Արամի ձայնը,- Թալինից ցանկացա ոտքով գյուղ հասնել, հիշել իմ անցածը, ընկերներիս, այս փուչ աշխարհի անուղղելի օրենքները:

- էդ ճամփեն շատ կարճ չէ՞ Արամ Դարբինյանի տեսած ու անցած պատմության համար,- խելացի ու խոհուն հայացքով Մարկոսը նայեց համերկրացուն: Նա հենց այնպես չասաց այդ շոյիչ բառերը, գիտեր, որ այդպես կմտածեին բոլոր արեգցիները, շրջանում նրան ճանաչող բոլոր մարդիկ: Այս բարի մարդու հանդեպ հարգանքը հենց նոր չձևավորվեց: Արամը նույնպես գիտեր, որ Կրպեների Մարկոսը թեև գրագիտություն չունի, բայց անաչառ է իր սեփական կարծիքի ու իր խոսքի նկատմամբ: Չտեսած, չիմացած բանի մասին նա կլռի,

երբեք առաջ չի ընկնի, իսկ եթե հարկ լինի, դառը բաները առանց քաշվելու կասի դեմ դիմաց:

- Ճանապարհն իրոք կարճ էր, չհասցրի մանկությունից գալ,- ուշացումով պատասխանեց Արամը,- ծերության և ինչ-որ թանկ հուշերի տխուր զանգերն այսօր հնչեցին իմ ականջին, մի տեսակ իրիկնային, ավարտուն քամին էր սուլում էս բլուրներին, ու էդ պահին նշմարեցի քեզ՝ այնտեղ՝ բլրի ճակատին, մեն-մենակ նստած:

- Նկատեցիր ու էկա՛ր, բարով էկա՛ր,- Մարկոսը կարծես, հենց այդ պահին, խորությամբ հասկացավ իր տարեկից ընկերոջը և չուզեց այլևս նրանից բաժանվել:

Իրիկնապահին Մաստարայի կողմի բարձունքներից նրանք դանդաղ իջնում էին սարահարթ, որտեղ Արեգ գյուղն էր՝ իր տափակ տանիքներին պաղ աշնան մերկ ցնորքը: Իսկ հանդամիջյան ճանապարհի զնգուն խճաքարերին Արամ Դարբինյանի հյուսած տարեվկա հեքիաթն էր:

* * *

Գյուղի գրեթե կենտրոնում ընդգծված էր քարաշատ բլուրը՝ գլուխը բարձր, ուսերը կախ ընկած: Ձմռանը ձյան հաստ շերտ էր նստում այդ լայն ու կլորավուն թմբին, դառնում երեխաների սահադաշտ, իսկ գարնանը ծաղկում, լցվում էր կակաչների ու հիրիկների բույր ու հանդեսով: Ձմռանը աստղերից իջած գյուղի Ձմեռ պապն էր՝ բազկատարած ու հզոր, գարնանը՝ բազմերանգ ծաղիկների ամենաճոխ զամբյուղը՝ բոլոր տներում պահված կարոտների շողն ու շաղը վրան: Հարազատ, փխրուն ու կախարդական թելերով էր այն գործված գյուղի կենսագրությանը: Ճերմակով զարդարուն պապերն այստեղով անցնելիս նայում էին խոշոր քարերին, լուռ ու խորհրդավոր ժպտում, իսկ մեծ մայրերը հոգիներում պահված աղոթքներից բաժին էին հանում՝ մտքներում նկարելով էրգրի բարձունքներին տեսած ու կորցրած վանքի ճամփա, կամարադուռ ու գավիթ:

1941-ի աշխարհավեր պատերազմի ավարտից քսանվեց տարի անց այդ բլրակին շինարարներ երևացին: Նրանց կողքին նախագահ Պարույր Բաղդասարյանն էր, նաև մի երկու անծանոթ, որոնք ավելի ակտիվ էին խոսում՝ ցույց տալով քարին փռված գծագրի մանրամասները: Նրանց գործողությունները հավաքված մարդկանց աչքի առաջ էին, գյուղն ինչ-որ բան էր իմացել, և այստեղ եկածների հետաքրքրությունը սովորականներից չէր: Իսկ այս բլրաթմբին ո՞վ չէր եղել: Մեծից փոքր գիտեին, թե որտեղ, ինչ քարի տակ էին առաջինը

բացվում վաղ գարնան ձնծաղիկը, ապա հիրիկն ու շուշանը: Իսկ մայրամուտից հետո ովքե՞ր էին այն տղաները, որոնք նստոտում էին բարձր քարերին և գյուղի տարբեր կողմերում փնտրում իրենց լույս բերող պատուհանը, սիրո, հույզերի ու բորբոքուն կարոտների ամենաթանկ պատուհանը: Այս մասին գիտեին բոլորը, և դրանք ասքեր չէին, այլ իսկություն, գյուղի մեծ տարեմատյանի մտերմիկ էջեր: Ո՞վ չգիտեր, որ բարության շունչն էր միշտ թևածում այստեղ, այն էլ՝ բոլոր տների շշուկների շաղախով. նաև՝ իմացյալ մի քնքշություն, որն աղջիկների բարեզվարթ մեղմությամբ բացում էր տղաների սիրապատում հեքիաթների գիրքը: Ահա թե ինչու այս բարձունք-բարուրի տագնապով և այս բլուր-բարևի շուրջը եկել, օղակել էին մեծ ու փոքր: Նրանց աչքերում հարցումի փխրուն երանգ կար, նաև շուրթեր շարժող բամբասանքի փլվածք: Եկել ու կանգնել էին մոտ ու հեռու: Նախագահն աչքի պոչով արդեն հասցրել էր զննել նրանցից յուրաքանչյուրին, քթի տակ շատ սովորական ժպտում էր, որ քաղաքից իր խնդրանքով ժամանած և այժմ նախագիծը ներկայացնող պատկառելի այս մարդու մտքով չանցներ, որ հավաքվածները բլրակ-բարձունքի տերերն են և հարմար առիթի են սպասում, որ իրենցը ասեն: Պարույրը հաստատ համոզված էր, որ նրանք մտածում են, թե տեսնես նախագահը այս բարձրաթմբին տուն կառուցելու խոստումն ո՞ւմ է տվել: Նրա կասկածը զուր չէր: Շարքերից մեկը անջատվեց ու դանդաղ մոտեցավ: Նահապետ Համբարձումյանն էր: Նախ ձգտեց ծածկել դեմքի խստությունը, որովհետև ինքը կատակասեր, ասող-խոսող մարդ էր, բայց այս անգամ որքան էլ իրեն ստիպեց, անգամ ձևացրեց, բայց չեղավ, չստացվեց: Պարույր Բաղդասարյանը կողքանց, հենց այնպես նայեց Նահապետին, կարծես թե չէր տեսել:

- Ես եմ, Նահապետը, ընկե՛ր Բաղդասարյան, դու արդեն ընձի չես ճանչընա՞...

- Նահապետին ո՞նց չեմ ճանաչում,- հանգիստ ասաց նախագահը,- բարևելը մոռացե՞լ ես:

- Բարև, հազար բարի բոլորիդ,- Նահապետն իր նման ժպտաց և իր նման տվեց հարցը,- Աստված խերն անի, էս բլրի բախտին ի՞նչ քար եք գցում:

- Ընդհակառակը, ուզում ենք այս չեչաքարերը հավաքել, կարգի բերել այստեղ,- գծագրերից կտրվեց անծանոթը և այնքան մտերմիկ ժպտաց Նահապետին:

Պարույրը չուզեց միջամտել, իր համար հետաքրքիր էր այս

հարց ու պատասխանը, մանավանդ, որ ներքևում հավաքվածներն ուշադիր լսում էին:

- Բնությունը կարգ ու սարքով կատարել է ուր գործ, էստեղ Աստծու միջամտությունն էլ չի անցնի,- լրջացավ Նահապետը,- է՜, հա՜, դուք չգիտեք, բայց հո նախագահը գիտի, որ դպրոցի կողքին էս քարե թումբ մեր գյուղի սրբությունն է, մեր վանքն է, մեր ուխտատեղին...

- Նահապե՛տ...

- Նախագա՛հ ջան, մենակ ես չեմ, տե՞ս, քու ղեկավարած ամբողջ գյուղն է էստեղ,- նկատելի հեգնանքով ասաց Նահապետը և հայացքն ուղղեց տարբեր կողմերում կանգնած համագյուղացիներին:

- Բոլորդ մոտ եկե՛ք,- բարձրաձայն ասաց նախագահը և զգաց, որ առաջին անգամ ձայնն այսքան բարձրացրեց: Գյուղը գիտեր, որ նա հրամայել, կարգադրել չէր սիրում, ամեն բան ասում, հասկացնում էր հավասարակշիռ խոսքով՝ առանց ձայնի տոնը բարձրացնելու: Այս անգամ էլ նա մնաց նույնը: Եվ երբ բոլորը իր կողքին էին, նա խնդրեց, որ համբերությամբ լսեն:

- Այս բլրակը, գիտեմ, առանց բացառության հարազատ է բոլորիս, մեր մանկության հեքիաթը ջնջելու իրավունքը ոչ մեկի չի տրված,- հուզվեց նախագահը,- բայց աշխարհում ամեն թանկ բան ժամանակի ընթացքում էլ ավելի պիտի արժևորվի:

Նրա խոսքի լուսավոր երանգը, կարծես, տակնուվրա արեց Նահապետի հոգին: «Ուրեմն մենք սխալվել ենք, երևի այս մարդը լավ բան է մտածել...»: Նահապետը մեղավոր հայացքով նայեց ներքևում հավաքվածներին և տակավին չպարզած նախագահի միտքը՝ ներողամիտ ժպտաց ու մի քայլ առաջ եկավ:

- Սպասի՛ր, Նահապե՛տ, դու էլ ես ճիշտ, հավաքվածները՝ նույնպես,- առաջ ընկավ նախագահը,- գիտեմ, որ այս տեղի հետ ամեն մեկը մի հուշ ունի պահած, հին ու գեղեցիկ պահեր, գարնան ու ձմռան պատկերներ, պարզապես այն հարազատ է բոլորիս:- Պարույրն ավելի մոտեցավ խմբվածներին, նայեց նրանց հարազատ ու հոգնած աչքերին ու բռնեց Կոստանի ձեռքը.

- Դու պատերազմից վիրավոր վերադարձար, քեզ նման շատերը արյուն թափեցին, կռվեցին, հիմա, փառք Աստծո, իրենց երեխաների կողքին են,- Պարույրը գլուխը բարձրացրեց, հայացքը հասավ Արտին սարին,- իսկ հիսունութը մնացին յոթ սարերի հետևում, նրանց մի մասի «սև թուղթը» եկավ, մյուսների մասին տեղեկությունները լռում են: Անցել է 26 տարի, և մենք իրավունք չունենք կորցնել

նրանց հիշատակը: Մեր գյուղը հին ու նոր նահատակներ ունի, մեր գյուղը նաև հավաքական հիշողություն, սեր ու հարգանք ունի չվերադարձած, անհետ կորած իր զավակների նկատմամբ,- նա մի պահ դադար տվեց, կարծես, կարդաց ներկաների սպասողական հայացքները և նույն հուզականությամբ շարունակեց,- այստեղ՝ այս բլրակին, մեր բոլորի մաքրված զգացումներն են, տարվա ամիսներից փախցրած ամենասիրուն օրերը: Եվ ահա թե ինչու նախատեսում ենք ո՛չ թե գերեզմանոցին կից, այլև այս օրհնված ու նվիրական բարձունքին՝ գյուղի կենտրոնում, դպրոցի հարևանությամբ կերտել զոհվածների փառքի հուշարձանը: Դրանով մենք մեր անձնական երազանքների լուռ ու հայտնի փայփայանքներին կգումարենք մեր երախտագիտությունը բոլոր նրանց նկատմամբ, ովքեր մեկընդմիշտ մնացին հայրենի եզերքներից հեռու... Նրանց փառքը մենք պիտի հավերժացնենք այստեղ՝ այս բարձունքին:

Երբ Պարույր Բաղդասարյանն ավարտեց խոսքը, առաջինը Նահապետը մոտեցավ, մեկնեց իր աջը և ներողամիտ ասաց.

- Բարով քու մուրազ կատարվի, մենք բոլորս էլ քու կողքին ենք, ներո՛ղ եղիր, նախագա՛հ:

Հավաքվածները մոտեցան, շրջան կազմեցին, միանգամից, կարծես, դարձան ներողամիտ ու հաշտ: Նախագահը գոհունակ ժպտում էր, որ փոխվեց հավաքվածների տրամադրությունը, ոգևորվեցին նրանք և տեղն ու տեղը իրենց պատրաստակամությունը հայտնեցին՝ մասնակցելու այդ կառույցի շինարարությանը:

- Սա սուրբ գործ է,- ասաց անծանոթը,- բոլորիդ աջակցությունն ու օգնությունն եմ խնդրում:

- Օրն ու ժամն ասեք, մեր գյուղը մեկ մարդու պես պատրաստ է,- համարյա միաբերան պատասխանեցին բոլորը:

- Հրաշալի է, հասկանում եմ, որ հիշատակ և անուն հարգող եք,- ասաց անծանոթը և դարձավ դեպի նախագահը,- Պարո՛ւյր, կարելի է կարճ ժամանակամիջոցում այս մարդկանց ուժերով գլուխ բերել նախագիծը: Ժողովրդի այսպիսի ակտիվ մասնակցությամբ տասնհինգ ամիս առաջ ծնվեցին Սարդարապատի ճակատամարտի հերոսների հուշարձանախումբը և զբոսայգին:

- Ընկեր Իսրայելյա՛ն, այդ նույն հավատով էլ համախմբված կլինեն արեգցիները:

- Հայ մարդուն չեմ կասկածում, հատկապես գաղթականներին, որոնց համար միշտ էլ կարևոր մի բան պակաս է՝ էրգիրը,- բլրից ցած իջնելով՝ ասաց հյուրը,- և այդ պակասը նրանք լրացնում են

ծննդավայրի հանդեպ ունեցած իրենց մշտաբորբոք կարոտով: Իսկ կարոտի և կորցրածի միջև, որպես խորհրդանիշ, ամենուրեք բարձրանում են հուշարձանները:

Նախագահը նկատեց, որ ճարտարապետն իր խոսքով շղթայեց հավաքվածներին: Հետաքրքրասիրության և ինչ-որ բան իմանալու նրանց ցանկությունը Պարույրին հարկադրեց հաճելի մանրամասներով ընդմիջել:

- Մեր գյուղում կառուցվելիք հուշարձանի նախագծի հեղինակը փառաբանված ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն է, ահա նա՝ տասնյակ հուշակոթողների հեղինակը:

Պարույրը դեռ խոսքը չէր ավարտել, երբ աջ ու ձախ խմբվածները բուռն ծափահարեցին, եկան օղակեցին և բարի ժպիտներով շրջապատեցին մեծ ճարտարապետին:

Գյուղում անմիջապես փոխվեց տրամադրվածությունը, հիացումի նոր ալիք տարածվեց: Հպարտության տուրքը զոհվածների պատվին հուշարձան կառուցելու առիթն էր, և նաև այն, որ կոթողը հառնելու էր մեծահռչակ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով:

* * *

Հաջորդ օրը կոլտնտեսության գրասենյակը լեփ-լեցուն էր մարդկանցով: Նախագահ Պարույր Բաղդասարյանը մանրամասնորեն ներկայացրեց հուշարձանի չափերի, ընդգրկումների, վերծիգ սյան բարձրության, հիմնական քանդակների և շրջակա բարեկարգման մասին: Լարված ուշադրությամբ նրանք լսում էին, հարցեր չէին տալիս, քանի որ նախագահը գրեթե ոչ մի բան բաց չէր թողնում: Այնքանով, որ մտահղացումն առնչվում էր զոհվածներին, բոլորի աչքերում հավանության լույս կար, համամիտ էին և պատրաստ: Պարույր Բաղդասարյանը դեռ չէր հասցրել ասել ամենակարևորը, բայց համոզված էր, որ արեգցիները անակնկալի չէին բերի իրեն: Եվ ընդարձակ պարզաբանումներից հետո նա խնդրեց, որ ուշադիր լինեն մի հարցում:

- Այսպիսի հուշարձանները ամենուրեք կառուցվել են համայնքների սեփական ուժերով, իրենց՝ գյուղացիների անձնական գումարների հաշվին,- նա հայացքով ստուգեց իր խոսքի արձագանքը, գոհ մնաց և ապա շարունակեց,- մեր բոլորի ֆինանսական միջոցներով և այլ հանգանակություններով, հատկապես մեր ֆիզիկական աշխատանքով և այդ գործում առանց բացառության բոլորի մասնակցությամբ պիտի բարձրանա հուշարձանը:

Պատասխանը չուշացավ, տասնյակ ձայներ լսվեցին.

- Համաձայն ենք...

Գուրգեն Ծառուկյանը հուզմունքը չկարողացավ զսպել, ծափ տվեց և կանգնեց ոտքի, մյուսները միացան նրան, և գրասենյակի առաստաղի տակ ոգևորությամբ ազդարարվեց մեծ գործի սկիզբը:

- Ընկե՛ր Բաղդասարյան,- առաջ եկավ աշխատանքի հերոս Աշոտ Նիկոյանը,- ամեն ձեռնարկ իր ղեկավարը պիտի ունենա, էս սուրբ գործին նմանապես տեր ու տիրական նշանակեք, հանձնաժողով ունեցեք, որ պատասխան տվող էղնի, դուք էլ գոհ մնաք, ժողովուրդն էլ:

- Ճիշտ է,- ասաց Սմբատը:

- Այո, իսկապես, ճիշտ է,- հաստատեց նախագահը,- սրանից էլ հարմար առիթ չկա, ընտրենք հանձնաժողով:

Տեղն ու տեղը յոթ հոգուց հանձնաժողով ընտրվեց՝ գյուղխորհրդի նախագահ Արշալույս Մելքոնյանի գլխավորությամբ: Ժողովականները հարմար գտան հանձնաժողովի հաշվապահական գործը վստահել Վաղարշակ Համբարձումյանին, իսկ հավաքված գումարը պահել դրամարկղում՝ միմիայն Համբարձում Մարկոսյանի անունով: Համբարձումը գյուղխորհրդի քարտուղարն էր, բոլորի հետ բազմաթիվ հարցերով առնչված, նրանցից յուրաքանչյուրի հոգսն ու ցավը իմացող բարեկիրթ մարդ: Այդպիսի բնավորություն ուներ նաև Վաղարշակ Համբարձումյանը, համբերատար էր, հետևողական: Հանձնաժողովի մնացյալ անդամները, այդ թվում՝ դպրոցի տնօրեն Անդրանիկ Վարոսյանը, անշուշտ, շատ բանով նպաստելու էին այս խմբի գործունեությանը:

* * *

...Արեգում սպասվող ջերմությամբ բաբախեց հուշադարձով լեցուն ոգևորության զարկերակը: Բուլդոզերն առաջին անգամ դպրոցի կողմից խոյացավ բլրաթմբի քարքարուտը՝ թրթուրների տակ տրորելով կարճ, բայց ոլորընթաց արահետներ, ծաղկած ու ծանոթ քարեր: Բլրալանջերի անձեռակերտ «մատյանը զոհվում էր» հանուն մի հիշողության, որի բազմապատումը արդեն քանի տարի գյուղի կտուրների տակ էր, բանուկ ու բզկտված ճամփաներին, մեծերի ու երիտասարդների սրտերում՝ սպասումի անվհատ ռեքվիեմի վկայությամբ: Աննինջ հավատամքի պատկերն ու կանչը չփոփոխված ընձյուղներով ծաղկեց այդ առավոտ: Գյուղում բոլորը իմացան, որ իրենց հիշողության մեծ ալիքը աշխարհի ճամփաներից հասել է

Արեգ: Արամայիս Սարգսյանի բուլդոզերը ծանր հևոցով հարթում էր բլրի խորշոմները, վերևից տեղահանված քարերը դժկամությամբ ցած էին իջնում: Թվում էր՝ հին դամբարանադաշտ էր պեղվում, որովհետև դղրդացող մեքենայի հետևից գնացողների առաջին խումբը հենց այդպես՝ հնէաբաններին հատուկ բծախնդրությամբ էր հետևում, կարծես ինչ-որ թանկ բան էին որոնում: Հետաքրքրությունը վաղ լուսաբացից այստեղ էր բերել շատերի, հատկապես նրանց, ովքեր անցել էին այդ պատերազմով, վերադարձել՝ հոգով ու մարմնով վիրավոր: Թեև շատ բաղձալի հաղթական մայիսից անցել էր քսանվեց տարի, բայց այսօր նրանք շտապել էին այստեղ՝ իրենց խռովքի ծոցերում հին տնքոցներ պահած, եկել էին նաև մի անխառն հպարտությամբ, որպիսին զավակն է միայն տածում ծնողի հանդեպ: Հսկա մեքենան խառնում էր բլրի հին ու նոր հաշիվները, գումարում խայտաբղետ ժամանակներ տեսած նրա հիացքն ու ամպոտ օրը, նրա գլխով անցած ձմեռն ու ամառն էր հունցում այստեղ սիրո և հավատարմության երդում տված հին ջահելների խոստումներին: Եվ նրանք, ովքեր հսկա մեքենայի թիկունքում էին և ինչ-որ բանով ուզում էին օգտակար լինել, առաջին հերթին, կարծես, ավանդաբար հիշվող, մնացյալ ու կանչող մասունքներ էին հավաքում: Ձարթնել էր քնած ու գաղտնապահ բլուրը, նրա բացվող, լայնատարած ուսերը նահանջում էին, ընդարձակվում էր վերնալանջը: Բլուրը կորած պանդուխտի էր նման, որին կյանք ու հոգի տված մարդիկ հիմա այն կենդանացնում, կերպավորում էին:

Հավատամքի փայփայված շունչը գալիս էր շենի շոյանքներից, բլրափեշին նստած դպրոցից, մարդկանց աչքերից ու հոգիներից, խղճի խորաններից:

Գյուղը մեծ հիշողության ասքն էր գրում. ամեն մեկի շալակին տարիների տուրքն էր. եկել էին տարագիր տատրակների նման, հոգիներում՝ թաքուն կարոտների ինքնաբոժոժը, սրտերում՝ ինքնայրումի հազարածայն սափորներ, որոնց հատակում իրենց տեսածի, սպասումի և զարկող կարոտի տեսիլքներն էին, իրապատում, օրհնված հեքիաթները: Ոչ մեկի պետք չէր հարցեր տալ, քննել նրանց վարմունքը, վազքը: Խանդավառության և թախիծներով միագումար նրանց հոգու թնդյուններն անկարելի էր թաքցնել այս բլրին, ուր դեռևս մեկ-երկու օր առաջ վաստակած լռությունը խոնջանքի և խաս հիշողության խանձարուրն էր գոտկապում: Հիմա տեղահան էր արվում լռության արմատը: Ձանձրացած, միակերպ ստվերները հոժար պառկում էին զնգզնգացող թրթուրների տակ,

ձիգ քարերը գնում էին հավերժական հանգստի՝ տեղը զիջելով մի ուրիշ բարության, մի ուրիշ հավերժության: Այդ մնայունն ու հավիտենականը գալիս էին հաստատվելու իրենց անունով. տոհմածառի վիրավոր ծփանքներին էին արմատներով ուզում կառչել, հառնել մի այլ ծաղկումով, որի պտուղներից արցունքի փոխարեն հպարտություն պիտի իջներ: Այդ արցունքի տերերը Արեգում էին, այդ հպարտության վկաները՝ նույնպես: Վշտամայրերը՝ արեգցի հարսներն ու կանայք, քսանվեց տարի փակ էին պահել արցունքի վտակները, խեղդել հեկեկանքի գահավեժ սելավը, իրենց զավակներից թաքուն գուրգուրել անձնական ողբը: Աշխարհը հաղթել էր չարին, վիշապը չկար, սակայն որդիներին և ամուսիններին սպասողները պատերազմի մեջ էին: Հատկապես կանայք: Նրանց անձնական ու անանձնական կռիվը չէր ավարտվել. նրանց սպասումի պատկերները պիտի գային, թեկուզ լուռ, բայց թանկ ներկայությամբ կանգնեին գյուղի կենտրոնում՝ բլրի վրա...

Արամայիսի բուլդոզերը այդ սրբության ճամփան էր բացում: Պահված ու փայփայված հուշերի երամը պիտի բարձրանար այստեղ: Դա գյուղի ցանկությունն էր, նրա պաշտամունք-պատմության վավերացումը: Ու թեև հազիվ էին ուրվագծվել ապագա հուշարձանի խոր հիմքերը, նոր-նոր մաքրվել էր տարածքը, հարթեցվել բլրագագաթը, սակայն անչափելի էր գյուղի հետաքրքրությունը: Առաջին հերթին նրանց, ովքեր անիծյալ պատերազմում թանկ կորուստներ ունեին, ովքեր վիրավոր ու վառված էին վերադարձել: Լարված էին գյուղի միտքն ու հոգին: Անտես խորհրդանիշները, լռությունից ջոկված, գալիս էին, դրանք հասցե, բույն ու արմատականչ էին փնտրում: Գյուղի վիշտն էր արթնացել. վերքն էր կսկծում, գյուղի վարքն էր նժարվում, գյուղի աչքն էր թացվել: Ձայնարկու շշուկները բլրից իջվարում էին՝ մղկտացող սիրտ և դիմակայող հոգիներ փնտրելու, գնում էին գյուղի փողոցներով, անտես հուլունքներով զարդարում պահված եռանկյունի նամակները, նամակների հարամնա շունչը, տողից ելևէջող ցավի խշրտոցը, բառերից բուրող բարուրված բոցը: Բլրին, ասես, խռնվել էր արծիվների երամը, որը ծվատում էր տարիների մեջ խաչած իր հևքը, խաչվածների ծննդյան և մահվան օրերն էր ջոկջոկում, մարտիրոսացածների շիրիմներն էր որոնում: Գյուղի հայացքը, միտքը, պատարագը ե՞րբ էին այսքան հյուսվել օրվա պատկերին, ցնցվել խորքերից, տեր կանգնել իրենց լռությանը, հեռուներից վերադարձող հույսի կանչերին:

Իրենց զավակներին սպասող հայրերը վաղ առավոտից եկել,

կանգնել էին դպրոցի պատի տակ, լուռ էին: Հետո մեկ-մեկ վերև բարձրացան, հուզված էին, շնորհակալ, որ Արեգում նույնպես զոհ-վածների պատվին հուշաքարեր են դրվելու, որ իրենց որդիները չեն մոռացվել:

Հայրական խորունկ հոգու անբացատրելի մորմոքը ճամփա էր գտնում ժայթքելու, անհնազանդ էր նրա կրակե եռքը: Որդի կորցրած հայրերի սրսփուկը նվվում էր ողնաշարից, բուք տեսած թեթև ձյան նման սփռվելով՝ իջնում էր մինչև խղճի խեղճությունը, զրնգում անտերունչ զանգի իրիկնալացով: Հայրական վշտի օվ-կիանի փոթորիկը փլվում էր Արեգի խտացված խորանների առջև, ելնում էր կամաց-կամաց, գնում էր հուշիկ-հուշիկ, որ չցավեցներ հիշատակի արծվաբույն դարձող բլրի ցածրիկ գագաթն ու լան-ջերը: Սրբազանության կապույտ թրթռոցով, նրանք՝ զոհվածների հայրերը, դողդոջուն ափերով հետ էին տանում հողը, հեռաց-նում այն քարն ու խիճը, որին չէր հասնում մեքենայի պողպատե թրթուրը: Խոնարհ մի խենթություն ծվատում էր նրանց կարոտն ու սպասումը, արդեն ճաք էր տվել Աստծո հետ նրանց պայմանը, որ պիտի գային իրենց պանդուխտները՝ Նախիջևանի ու Ծպնիի շա-ռավիղներն ու թոռները, մարտիկ-նահատակները: Քսանվեց տարի այդ ուխտ ու պայմանը աշխարհի հին ու անտեր անապատներից հավաքում ու բերում էր նրանց զավակներին: Հայրերին թվում էր՝ նրանք ոտքով են գալիս, հանդ ու չոլերով են գալիս, դրա համար ուշանում են: Այդ հորինվածքով էլ նրանք հավատում էին, որ մի օր Թալին ձգվող ծուռվիզ ճամփի ոլորանում, որտեղից սկսվեց արեգցի քաջերի պատերազմը և տարավ նրանց, հրաշքով նորից կհանդիպեն իրար... Միամիտ պատումներով համոզում էին իրենց, որ ուր որ է, կգան նրանք, և օրը կփոխի իր գույնը, տարվա պատ-կերը թևարձակ կծփա, և հույսը դարձյալ կծաղկի հոգու դեղձան բոժոժների մեջ: Արեգի որդեկորույս հայրերն այսօր հասկացան, որ տանկի մռութով այս բուլդոզերը ոտնատակ էր տալիս հանդ ու չոլերով գյուղ հասնող հույսի բոլոր ճամփաները: Թրթուրների տակ խորտակվում էին սպասման բերդերը, նաև դարձի ճամփան, աղոթքի լեզուն, մատաղի հրաշքը, գրբացների գարու հատիկների սարքովի թարգմանությունը: Քսանվեց տարվա խաբուսիկ խոստո-վանանքը բացահայտում էր լռության անհերքելի սուտը, և կռվի ուրվականը վերջին համազարկն էր տալիս հայրերի սրտերում և քար ու խիճ հարթող նրանց արյունածոր մատներից քամում էր եղերաձայն մեղեդիներ:

Զոհվածների մայրերը նստել էին կենտրոնական ճանապարհի եզրաքարերին: Այնքան արցունք թափած և արդեն սմքած ու ցամաք նրանց աչքերը մշուշոտ շղարշներով էին ջոկջոկում ամեն ինչ: Թախիծների թաքուն թրթիռներով խաչված նրանց ճակատներին ամպ էր իջել, շուրթերին իրենց թանկ կորուստների անուններն էին, չորացած կրծքերի տակ՝ մայրական վերջին հառաչանքների պարսը՝ հեռացող, անուժ ու զսպված: Բլրի վրա աջ ու ձախ գնացող մեքենայի հռնդյունը աղմուկով խոշտանգում էր նրանց չավարտվող հեքիաթը, որտեղ մայրաշշուկ գույներով պահ էին տրված իրենց զավակների շուքի առավոտը, այնքան փայփայված հավատամքի եռախորան աստվածությունը: Ոչ ոք չէր համարձակվում նրանց մոտենալ: Ո՞վ կարող էր մորը բացատրել, որ քո զավակն այլևս չկա, որ հուշարձանը թեև կերտելու է նրա հուշը, միաժամանակ լինելու է սպասումների վերջին վերջակետը: Մայրերը հասկանում էին, որ այդ վճիռն էր հիմա իրականացնում ուժեղ, կոպիտ, անհասկացող այս մեքենան՝ ընդամենը տեղ բացելով իրենց զավակների բացակա լռությանը, հայրենի տուն երազած նրանց անպսակ գարուններին:

Գյուղի տարբեր կողմերից, հին ու հարամնա ցավի, հեծկլտանքի ու ինքնայրումի ծրարներով դարսեդարս եկել էին այրիները: Զոհվածների կանայք, կռվի զոհասեղանին հոգով ու երազներով հազա՜ր անգամ խոցված կանայք: Զավակների ծոցերում՝ նրանց հայրերի հույսի կաղնիները զորացրած, տարիների հողմերից օրոցքները փրկած՝ փյունիկյան հառնումի հրեղե՜ն կանայք: Ամուսին-զինվորների սիրո բերկրանքը իրենց սրտերի գահերին ընդմիշտ արքայացրա՜ծ կանայք: Եկել ու կանգնել էին՝ գլուխ-գլխի, աչքերի մեջ իրենց կորած արքաներն էին, հեռվից կանչող, իրենց զավակներին կարոտ մնացած զինվոր-հայրերը: Այրիները թվացյալ հպարտ էին, բայց խորքերով ծանր խոցված, վիրավոր ու վշտահար էին: Փեթակի պես փակ էին այրիները՝ կենաց բույրը խորքերում պահած: Պարտված ու հաղթող էին նրանք, անհավատ ու հավատացյալ, խամրած ու խաղաղ էին: Նրանց կանացի, մեղմ ու հասկանալի փոթորիկը չերևացող ներսում էր, ամուսինների հեռացած, բայց մշտահաղորդ շողքի նեկտարահամով, որն իրենց հոգու մեղրամոմերին սերակալել, մնացել էր բռնկումների վաղեմության դրոշմներով: Եվ այդպես էլ նրանք անբեկ, մեկ ու հաստատ մնացին իրենց ամուսինների շնչով զարթնած օրոցքների կողքին: Երեխաների գալիք արժանապատվության հրամանով նրանք շարունակվեցին նույն երդիկի տակ: Պատերազմից առաջ օրհնված նրանց ամուսնական առագաստները բախվեցին

վառոդահամ խրամատների, զարկվեցին բյուր ու բազում հոգս ու պակասությունների, բայց չզոհվեց ընտանեկան երդումը: Արեգում հիսունութ այրիներ՝ ջահել ու վսեմափայլ, տեր կանգնեցին իրենք իրենց, տուն չվերադարձած իրենց զինվոր-գլխավորների սնարների առջև երդվեցին: Նրանց անուն-պատկերով անքուն լռության թելը չկտրեցին: Եվ այդ տիրական լռությունը հառնում էր նրանց թանկ անուններից, նրանց փոխարեն, գալիս ու շշուկ էր մանում սպասող կանանց ականջներում, շոյում կանացի փխրուն հոգին, փորփրում սիրո սերակալած մեղրահացը, թափանցում տաք կենսավիշով ծաղկած ողնաշարը: Այդ անքուն բաղձանքի բոցեբաշ փոթորիկը մարում էր նրանց ծնկներից ցած, մորմոքի ու լռության պատերազմը նրանք բարեպաշտորեն թաքցնում էին կանացի երազուն սրտերի, ցանկալի ցնծության և ցմահ հավատամքի անավարտ ճակատամարտերում: Գյուղն է վկայում, որ պատվի այս ճակատամարտում արեգցի ոչ մի այրի «չզոհվեց», անգամ Ազգանուշը, դատարկ օրոցքին ապավինած, սպասեց իր ենոքին, դարձավ հավատամքի արձան՝ այդպես էլ աչքը ամուսնու ճանապարհին:

* * *

... Ժամանակը սահում էր դանդաղ, բայց գործնական էին մարդիկ: Ճարտարապետի մտապատկերները օր օրի հառնում էին բարձունքին: Հուշապատի քարը Անի-պեմզայի հայտնի բաց վարդագույնն էր, դրանով էլ բարձրանում էր հուշասյունը: Արթիկից եկած պատշարներ Սերյոժան, Մամիկոնն ու Ասատուրը ամեն օր մի քանի քար էին տեղադրում: Վաստակաշատ վարպետներ էին, բայց մեծ պատասխանատվությունը նրանց հրամայում էր երկյուղածությամբ ընտրել անկյունաքարերը, դիմահայաց սյունը այնպես սրբատաշել, որ թվա՝ մեկ քարից է: Ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի գծագրերը ամեն օր նայում էին, հաշվարկում, խելքխելքի տալիս: Սովորական պատ չէր, հուշարձան էր՝ վսեմ, փառքի խորհրդով: Վարպետների օրվա գործը կոլտնտեսության նախագահ Պարույր Բաղդասարյանի ուշադրության կենտրոնում էր: Կեսօրից հետո այստեղից չէր հեռանում գյուղխորհրդի նախագահ Արշալույս Մելքոնյանը: Օրվա առաջին կեսին նա արդեն քանիերորդ անգամ ոտնատակ էր տալիս գյուղը, մտնում այն բնակարանները, որոնց տերերը չէին հասցրել հանգանակության իրենց գումարը հանձնել: Արշալույսը գիտեր՝ ինչ էր անում և ինչպես էր կազմակերպում միջոցների հայթայթումը:

Հուշարձանի մեծ կառույցը պահանջում էր նաև ֆիզիկական լարված աշխատանք, որին սահմանված աշխատակարգով մասնակցում էին բոլորը: Չկար մի մարդ, որն իր քրտինքը թափած չլիներ այստեղ, հատկապես երիտասարդները: Որքան բարձրանում էին պատերը, նույնքան ծանրանում էր բանվորական աշխատանքը: Քարը, շաղախը, երկաթբետոնյա ամրանները պետք է ժամանակին հասցվեին, լինեին իրենց տեղում: Այդ պահերին «գրոհի» էին ելնում Արարատը, Երջանիկը, Սերյոժան, Վոլոդյան, Արտաշը, Սարգիսը, Սերգոն... Հետո մյուս հերթափոխը: Արեգի ֆուտբոլի թիմի տղաները, ինչպես հաղթում էին շրջանային առաջնությունում, այդպես էլ իրենց ջանքն ու եռանդն էին բերում այս բարձունք: Հուշարձանի կառուցման օրերին տասնյակ բնավորություններ բացահայտվեցին: Եվ տարեցներն ու միջին սերնդի տղամարդիկ, երիտասարդները, արեգցի ուսանողներն ու աշակերտները անտրտունջ էին կատարում իրենց պարտքը: Ամեն ինչ սրտանց էր արվում, հավասար ուշադրություն էր պետք փոքր ու մեծ գործերին, այստեղ մանրուք չկար: Հրաման ու հորդոր պետք չէին, ոչ էլ խնդրանք, քանի որ պարտքի անվերապահ սիրով էին գալիս նրանք. գյուղում ամենափառավոր կառույցն էր ծնվելու, հպարտության, ինքնաճանաչման տաճարն էր իր դուռը բացելու: Այս զգացումը Արեգի ընդգծվող հատկանիշներից էր՝ բացահայտ ու նվիրական: Նրանց միասնական ուժը, բարությունը, նպատակին հասնելու լրջությունը զարմացրել էին արթիկցի քարագործներին: Վարպետները չէին հասցնում սրբատաշ քարերը չափ ու ձևի բերել, հերթական շարքի ցեմենտի շաղախը լցվում էր կես ժամում: Շինարարական անհրաժեշտ նյութերի պակաս չէր զգացվում: Համագյուղացիների նախաձեռնության առջևից էին գնում տարբեր շինվարչությունների պետեր Դերենիկ Գաբրիելյանն ու Գառնիկ Մարկոսյանը: Մեկ տարի առաջ այս բլրի հարևանությամբ և Գառնիկի ղեկավարած հիմնարկի շինարարների ուժերով հառնել էր միջնակարգ դպրոցի տիպային շենքը: Հիմա այդ նույն դպրոցի քարագործները՝ Արթիկ քաղաքի ավանդական պատշարները, հուշարձան-կոթողի հաղթապսակ պատն ու սյունաշարն էին բարձրացնում: Արեգի գլխավոր եռուզեռը՝ բուռն աշխատանքի, վերհուշի և հպարտության բորբոքուն ու բաց հրապարակն այս բլրին էր: Գյուղը կարծես չէր քնում, հուշապատից բացի բարձունքի հարթեցված տեղամասերում միաժամանակ բետոնե ուղիներ էին դրվում, բարձրանում էին ճանապարհից վեր ձգվող քարակոփ աստիճանները: Հաջորդ գարնանը, երբ քարային աշխատանքները մոտենում

էին ավարտին, այստեղ բերվեցին սառնաղբյուրցի քանդակագործ, երևանաբնակ Սահակ Սահակյանի քանդակած զինվորի և նրա կողքին՝ գալիքի շողերով վսեմացած գեղաչվի աղջնակի արձանները: Ճերմակ սավանով ծածկեցին արձանախումբը: Ներքին արթիկցի Ալբերտ Հայրապետյանը նախշազարդեց քարաշարքերը, իսկ դիմապատին՝ վարդագույն ցոլքերի մեջ, մանրաքանդակեց սգացող մոր խորապատկերը: 1971 թվականի ապրիլի կեսերին «Աղանիկի կոնդ» կոչվածը սուզվեց հուշերի ծովը: Չորս բոլոր ծառ ու թուփ տնկվեցին, ծաղկասերմեր դրվեցին կուրծքը բաց արած բլրի սևահողում: Գյուղի տարբեր կողմերից արդեն երևում էին բարձր հուշասյունը, օր օրի կանաչի մեջ կերպավորվող բլրալանջերը: Աշակերտությունը ստանձնել էր հուշարձանի շրջապատի խնամքը, ծաղիկների ու ծառերի ջրման աշխատանքները: Դպրոցի տնօրեն Անդրանիկ Վարոսյանը ուսուցիչների և աշակերտների հետ դասերից հետո այստեղ էր: Հուշարձանը դպրոցի աչքի առաջ բարձրացել էր հարազատի պես, թվում էր՝ վաղուց էր ճանապարհ ընկել և ահա եկել, հասել էր իր վերջին հանգրվանին: Խորհրդավոր սյունը հավաքական հոգիների վեհության թռիչքն էր տանում երկինք: Իսրայելյանական մտքի սլացքը հաստատ ընդելուզված էր արմատականչի ոգելիր հրաշքից: Նրանցից աջ ու ձախ որքան բարձրանում, նույնքան շքավոր էր դառնում հաղթանակի լայնալանջ պատը: Քարագործ վարպետներն աննշան չափով անգամ չէին շեղվել նախագծից, ամեն ինչ ճարտարապետի սրտով էր: Մայիսի առաջին օրերին նա եկավ, վերջնականապես կատարեց իր դիտարկումները, հրապարակի ձևավորման վերաբերյալ ընդամենը մի քանի դիտողություններ արեց: Պատի կենտրոնական մասում՝ հուշասյան վրա զոհվածների անուններն էին փորագրվում: Պարույրն ու Արշալույսը Ռաֆայել Իսրայելյանի համաձայնությամբ հուշարձանի բացման օրը խնդրեցին ամսի 9-ից փոխադրել մայիսի 15-ը:

- Իհարկե, նպատակահարմար էր հուշարձանը բացել Հաղթանակի օրը,- ասաց ճարտարապետը,- բայց տեսնում եմ՝ բարեկարգման որոշակի աշխատանքներ կան... Թող ամեն ինչ պատշաճ լինի և իր ժամանակին:

- Կհասցնենք մայիսի 15-ին՝ շաբաթ օրը,- վստահ ասաց կոլտնտեսության նախագահ Պարույր Բաղդասարյանը,- խնդրում ենք Ձեր ներկայությունը:

- Հարմար օր է, միաժամանակ կայցելեմ Սարդարապատի հուշահամալիրի թանգարանի շինարարներին և կբարձրանամ Արեգ,-

հավանություն տվեց Ռաֆայել Իսրայելյանը և մոտեցավ անունները փորագրող վարպետներին,- հրաշալի տառատեսակ է, բայց մի քիչ շա՛տ քրտնեք, թող փորագիրը խորք ունենա, իմացե՛ք, որ այն դարերով պիտի դիմանա ձեր ցուրտ սարերի հողմերին:

Այնուհետև նա մի քանի կարևոր բաներ հուշեց գյուղի ղեկավարությանը, շինարարներին և որոշված օրվա պայմանավորվածությամբ հրաժեշտ տվեց արեգցիներին:

* * *

Մարկոսը չէր թաքցնում իր տագնապը. թոռանը՝ Սերգոյին, բանակ ծառայելու կանչ էին տվել: Եվ օրը նշանակված էր 1971 թվականի մայիսի 15-ին: Այդ օրը գյուղում հուշարձանի բացումն էր լինելու: Ծերունին գիտեր, որ այդ ամենին մնացել էր ընդամենը մեկ շաբաթ: Հանդից վերադառնում էր մռայլ, չխոսկան էր դարձել: Որդիները՝ Ժորան ու Վաղարշակը, նկատել էին հոր անթաքույց տխրությունը, սկզբում հարմար չհամարեցին քչփորել նրա անհանգիստ հոգին, բայց երբ օրերի մեջ նա չփոխվեց, մթնեց ու ամպով ծածկեց հայացքը, Ժորան այլևս չհամբերեց.

- Հայրի՛կ, ի՞նչ է եղել,- հարցրեց ու ակնապիշ հետևեց նրա դեմքի արտահայտությանը:

- Ոչ մի վատ բան էլ չի եղել,- անսպասելի հարցից հանկարծակիի եկավ հայրը:

- Տխուր ես, այ՛ հեր,- խոսեց մյուս որդին՝ Վաղարշակը,- չլինի՞ Սերգոյին բանակ տանելու համար է:

- Էդի քի՞չ բան է, տղա՛,- զգաստացավ Մարկոս հայրը:

- Բանակ է, թող բարով գնա՛, բարով էլ գա,- հոր ձեռքը բռնեց Վաղարշակը:

- Իմ միտքն էլ էդ է, տղա՜, բայց իմ հոգին կմղկտա,- ցածր ձայնով ասաց հայրը,- գոնե գյուղի էդ օրվա մեծ գործին մասնակցեր, հետո գնար:

- Զինկոմին կխնդրենք, օրը կփոխի, հայրի՛կ,- ասաց Ժորան,- մեկ օր ուշ, մեկ օր շուտ, բանակ գնալը չի խանգարի:

- Տղեն թող մասնակցի էդ հուշարձանի բացմանը, ինքն էլ ուր ընկերների հետ քրտինք է թափել,- Մարկոսը խոսքը դեռ չէր ավարտել, երբ ներս մտավ Սերգոն,- իմ զինվոր բալեն եկավ,- պապը ժպտաց, հուզվեց, աչքերը լցվեցին:

- Պա՜պ,- Սերգոն խոնարհ իջավ ու գրկեց նրա ծնկները:

- Տղա՛, ախր էդ ե՞րբ դարձար զինվոր,- ժպտաց պապը,- աշխարհն

ինչքան շուտ փոխվավ, կնայիմ ու իմ աչքերուն չեմ հավատա,- ամուր գրկեց Սերգոյին ու այդպես սեղմած պահեց չորացած կրծքին:

- Հայրի՛կ, Թաթուլն է արդեն յոթ տարեկան, բա Սերգոն բանակ չգնա՞,- ասաց Ժորան:

- Ա՜խ, իմ կրա՛կ Թաթուլ... տղա՛, կանչե թող իգա,- ձգվեց Մարկոսը և զարմացավ, որ մոռացել էր նրան:

Սերգոն դուրս եկավ բակ, եղբայրները վազում էին գնդակի հետևից, ձեռքով նշան արեց, որ տուն գան: Քիչ անց հևալով ներս վազեցին չորս եղբայրները:

- Պա՛պ, դո՞ւ ես կանչել,- նստելով նրա կողքին՝ հարցական նայեց Թաթուլը:

- Էսօր ես ու դու չենք երգե, տղա՛, մեր դաս կիսատ է մնացե, չէ՞:

- Գուլո տատի հետ եմ երգել,- կտրուկ պատասխանեց Թաթուլը:

- Թաթու՛լ, ում հետ էլ երգես, քու պապու երգ մտահան չանես, էնտեղից եմ բերե,- ոգևորված ասաց Մարկոսը և ձեռքով ցույց տվեց էրգրի կողմը:

- Հա՛, պա՛պ,- ուրախացավ Թաթուլը:

- Ժորա՛, Սերգոյի գործ էնպես դասավորե, որ ուր սիրտ կախ չերթա, թող մեկ օր էլ ուշ հասնի,- մեղմ ասաց պապը, անշտապ, ծանր քայլերով դուրս եկավ ու մտավ կարտոֆիլի բանջարանոցը: Սրտում մոլորված ձայներ ուներ: Իննսուն տարիների մեջ տակավին զգաստ էր, ճշգրտված էր խոսում, միտքը պայծառ էր, հետաքրքրությունների սահմանը՝ չափավոր: Օրվա իր խոսքն ու զրույցը ուր էլ ձգվերին, ինքը Թաթուլի հետ էր: Հոգով թեթև էր այն պահերին, երբ թոռան ձեռքը բռնած անցնում էր գյուղամիջով, հետո գնում սարալանջից իջնող արտերի միջնակներով: Փառավորվում էր, ժպտում, երբ յոթ տարեկան Թաթուլը հարցեր էր տալիս, մեծերի ախ ու վախն էր քննում, նրանց պապերից հարցնում: Մարկոսը բոլորովին չէր մոռացել այն օրը, երբ արտերից հեռացել, անցել էին Տեփո պապի ձորը, նստել էին քիթը վեր ցցած ժայռին: Մարկոսը դարձյալ մտաբերեց այդ անուշ պահը, երբ Թաթուլին գիրկն առավ, նայեց Անիի ուղղությամբ և ցածրաձայն երգեց. «Ա՜խ, Անի՜, Անի՜, քանդողի տունը քանդվի»: Երգեց ու չկարողացավ զսպել արցունքները: Չուզեց, որ թոռը տեսներ իր թուլությունը, արագ սրբեց աչքերը, բայց Թաթուլը նկատել էր, ցնցված էր՝ ակնապիշ ու տխուր: «Պա՛պ, տե՞ղ է ցավում»:

«Իմ ցավ խորն է, բալե՛ս,- փորձեց ժպտալ պապը,- կմեծանաս, հետո կհասկանաս»:

«Հիմա եմ ուզում հասկանալ, ասա՛...»:

«Էդ ասելու բան չէ, տղա՛, պըտի հասկանաս...»:

Թաթուլը չխոսեց այլևս, լռեց, բայց զարմացած հայացքը չէր կտրում պապից: «Տեսնես ի՞նչ է պահում ինձնից, ո՞վ չի թողնում, որ իր ցավի մասին պատմի ինձ...»:

Հիմա կարտոֆիլի մարգերով քայլելիս վերհուշի տխրուն կայծերով հանգստանում էր Մարկոս պապը: Նրա զրույցը կանաչ թփերի, ցանկապատից ընկած քարի, անձրևախաբ ամպերի հետ էր: Սովոր էր մենակ լինել բնության ձայների հետ, քննել իրեն, իր բերածն ու թողածը:

Այսօր էլ հոգին ալեկոծ էր, ելման էր սիրտը: Իննսուն տարվա շուքն էր ճակատին, ապա կայծակի, կրակի ու կարոտի ակոսները: Հազար ճամփա ուներ պահած, ու դրանցից մեկն էր մնացել, ուր հիմա ոտքը հաստատ չէր դնում. դողում էին նաև բարակած դաստակները, իսկ աշխույժ աչքերը, որ արծվի ճախրանք էին Արտին սարի լանջերին, հիմա ավարտուն աղբյուրի պես քաշվել էին խորքերը, նինջ էին փնտրում: Սակայն հոգին ալեկոծ էր, կարծես մի քանի օր արտաքսվել, բացակայել էր իրենից ու բորբոքված հետ էր եկել: Այդ փոթորկուն ու ծանոթ ծփանքներն օտար չէին Մարկոսին: «Սերգոն կգնա, ու ես էլ չեմ դիմանա...»: Այսօր այդ տագնապով էր ներծծված ծերունին, ինքն իրենից դուրս էր եկել. հեռանում ու մոտենում էր, մտքում հարցեր էր տալիս ու իրեն լսելի ձայնով պատասխանում: Նա միշտ պատկերացնում էր, որ իր ներսում երկու մարդ կա: Նրանք կռվում ու հաշտվում էին, մեկը հանդ էր գնում, մյուսը տանն էր՝ Գուլոյի ու զավակների հետ: «Ամբողջ իմ կյանքն էդպես անցավ, ես ու էդ մարդ ինչքա՞ն կռիվ տվեցինք ու վերջում էսպես խաղաղվանք...»:

- Մարկո՛ս,- ծերունին հետ նայեց, Գուլոն էր, կողքին՝ Թաթուլը: Տեսավ նրանց, սթափվեց մտքերի կապանքներից, անուշ-անուշ ժպտաց. իր այս թոռան բաժին ուրախությունը նա ոչ մեկի չէր տալիս:

- Թաթու՜լ...,- ասաց ու ձեռքերը պարզեց:

Թոռնիկն ակնթարթորեն հայտնվեց նրա գրկում: Մարկոսը կծկվեց նրա մանկական տաք բազուկների մեջ, ձուլվեց այնպես, կարծես ուզում էր իր ներսում բնակված մարդուն հեռացնել և նրա փոխարեն հաստատ տեղ բացել Թաթուլին: Անմիջապես ցանկացավ ինչ-որ բան բացատրել, բայց թոռը նրան ընդհատեց.

- Պա՛պ, հուշարձան էի գնացել, էնքան մարդ էին հավաքվել, աշխատում էին, ծաղիկներ էին ցանում, աշակերտները դպրոցի բակում երգում էին:

Մարկոսը լռությամբ համբուրեց նրա տաք այտերը և դարձավ Գուլոյին:

- Տղեն մենա՞կ էր գնացել:

- Ուր հոր ու ախպերների հետ, փառք Աստծու,- քաջալերող ձայնով ասաց Գուլոն,- էդ դու ինչի՞ ես մենակ, ումի՞ց ես խռովե...

- Աստված խռովք չտա, բարի խոսք ըսա, Գուլո՛...

- Բարին էն է, որ ուրխնաս քու զավակներով ու թոռներով,- սրտապնդիչ ձայնով ասաց Գուլոն,- կյանք է, ծերություն էլ կա, թոռ բանակ ուղարկել էլ կա: Աշխարհի օրենք դու կրնա՞ս շուռ տաս:

- Չէ, հիմա կհասկնամ, որ իմ ուժ չի պատե,- պատասխանեց ծերունին և Թաթուլի ուղեկցությամբ քայլեց: Այլևս ոչ ոքի և ոչինչ չէր ուզում լսել: Քիչ առաջվա ալեկոծ խոհերը զսպել, պահել էր ներսում: Խորը ընկած աչքերում նշմարվող լույսը նա բարակ ժպիտով շաղել էր դեմքին, որ թոռը նայի իրեն և տաք հարցեր տա:

- Գնա՛նք հուշարձան, պա՛պ:

- Էսօր չէ, վաղը կգնանք, մայիսի 15-ին է բացման օրը,- եզրափակեց պապը:

* * *

Մայիսյան առավոտը կապույտներից կախվել, վարգում էր Արտին լեռան ուսերին: Արևոտ, շողշողուն օրվա երկարուն ձեռքերը խոնարհ խաղաղությամբ հասել էին Արեգ: Սակայն օրվա լույսը լարված էր, թախծոտ, իսկ բանտված տխրությունը քանդել էր բազմաձայն խոհերի ամբարտակը, սելավի նման անցնում էր վիրավոր սրտերի միջով: Գյուղն իր հավաքական ցավի տաճարն էր ավարտել, իր լռության և սպասումի շիրմաքարն էր դրել բլրաբարձունքին: Պանթեո՞ն էր, շիրմատո՞ւն, թե՞ կարոտաբաղձ հոգիների նշխար-հյուսքերով վսեմացած ուխտատուն: Հարցեր չէին տալիս, որովհետև զգում էին օրվա բերածը, խոսում էին շշուկով, հասկանալի էր առավոտի ասքը, քայլում էին զուսպ՝ հողը պարտք էր ոտնաձայների: Գարնան լուսաբացի ծոցում ծանր ծնծղաներ էին ճողփում, զրնգում էին զանգեր, հոգեհանգստի, ոգեգալստյան, ոգեկոչման ղողանջներ էին փողփողում: Օրվա խտացված շունչը շուռ էր տալիս հոգնած կարոտների ցելերը. ժամանակների համրացած հերկերն էր ցաքում, որոնց մարող զնգոցների մեջ Արեգը հիսունութ բացակա ուներ: Նրանց վերադարձի հեքիաթը հեռվում մնաց, այնտեղ, ուր բախտը բոց էր հանգցնում, հավատը հուշում էր՝ նահատակին մահ չկա: Իսկ նպատակը ծնվում էր սեփական ցավից, և տղաներն ընկնում

էին իրենց պապենական տան փրկության տնքոցով: Այդպես էլ նրանք գրում էին ռազմաճակատից. «Դեպի Բեռլին ենք գնում, որ դարավոր մեր թշնամին չհամարձակվի Արաքս-Ախուրյանից այս կողմ անցնել, որ չկրկնվեն 1918-20 թվականների կրկնագաղթն ու կոտորածը: Մենք Կուրսկում ենք, բայց մեր աչքերի առջև Ղարսն է, Կաղզվանը, Նախիջևանն ու Օպնին, մեր կորած էրգիրը: Թե մարտերում հանկարծ ընկնենք ու չվերադառնանք, դուք մի՛ մոռացեք մեր նպատակի քարտեզը, այն ձեր կողքին է, ձեր աչքերի առջև: Թեև մայրամուտներին կարոտի այդ քարտեզը միշտ թախիծով է փակվում, բայց արևի հետ նորից գալիս է, որ հիշողությունը դարձյալ նորոգվի, և չկտրվի պատմության շղթան...»: Այսպիսի խոհեր էին բերում գյուղ հասնող եռանկյունի նամակները, իրենց ծալծլուն շերտերի մեջ նաև շիկացած կարոտ, հարազատներին հասկանալի՝ համբույր-հառաչանքների սրսփուկ-սխրանք: Օ՜, այդ նամակները՝ հատընտիր բառերի մեղրածոր կարկաչ՝ խորքերում տնքացող վերքեր, տեսանելի կրակ-կայծակ, զարկված լռություն և հրաժեշտի իրիկնային գույներ:

Նամակները նրանց սրտերի աղավնիներն էին, որոնք, վառոդից հրկիզված բեռներով անցնում էին տափաստաններ, կտրում լեռնաշղթաներ և հասնում Արեգ: Նամակները հույսի բողբոջներ էին գյուղի կտուրների տակ: Ծերացած հայրերը դրանք պահում էին իրենց ծոցերում, որ հանդի ճանապարհին, չհնձած արտերի առջև մեն-մենակ բացեին, Արտին լեռան դիմաց ծունկ իջած՝ համբուրեին իրենց զավակների սրտի բաբախը, լսեին սարն ի վեր մնացած նրանց ծանոթ ոտնաձայները:

Նամակները մայրերի ու կանանց թալիսմաններն էին, և ո՞վ գիտե, թե դրանք քանի անգամ էին վանք ու եկեղեցի տարվել, ծածկվել «Աստվածաշնչի» օրհնյալ էջերում, դրվել յոթնամոմերի վառվող սնարի առջև, պահվել անհայր մեծացող զավակների պաղ օրոցքներում... Այդ նամակները գյուղի 1941-45 թվականների էպոսական էջերն էին: Դրանցից ավելի խոսուն մասունք չունեին այն ընտանիքները, որոնք տարիներ շարունակ՝ օր ու գիշեր, սպասում էին իրենց հարազատներին: Սրբությամբ պահված նամակները թանկ ձեռքերով գրված և սրտով վավերացված վկայություններ էին, մեծ լռություններից քամված ոսկեբերան խորհուրդ, չդադարող խաբրիկ և խորհրդավոր խարիսխ էին նամակները:

Արեգը ծանոթ էր շենի անթաքույց այդ տնքոցին: Գյուղը ոչ ոքի չէր կարող մոռանալ, նաև իրավունք չուներ հեռանալու ինքն

իրենից: Դրա վկայությունը մայիսյան այդ առավոտի փայփայված վերադարձն էր: Նշանակված ժամից դեռ շատ առաջ հավաքվել էին մեծ ու փոքրով, շրջապատել բարձունքը, սպասում էին: Եկել էին հարևան գյուղերից, շրջկենտրոնից: Նաև նրանք էին այստեղ, ովքեր տարբեր առիթներով թողել էին գյուղը, կամա թե ակամա փոխել էին իրենց բնակության վայրը: Առավոտի գրկում բարձունքը նման էր շենշող այգապսակի, փայփլում էին հուշարձանի բաց վարդագույն քարերը, երկնասույզ աշտարակը հառնող սրի նման մխրճվել էր կապույտի մեջ, ծիրանի ցոլքերը արծվաթև իջել էին մեծադիր քարերին: Հաղորդության բովանդակ շուքը լեփ-լեցուն ծփացել էր նկատելի բոլոր անկյունները, զուգել քար ու թուփ, կախվել դպրոցի բարձր պատերից, մանրաքանդակներով ծվարել մարդկանց աչքերում: Բարձունքին փոխվել էր ամեն ինչ, ձգված էին քարը, պատը, հողակուտակ ցածրիկ լանջերը մաքրվել, աչք շոյող էին: Ամեն ինչ այստեղ նոր կյանք էր առել, փոխվել էին շրջապատի գույնը, տեսքը, պատմությունը: Գյուղի համահավաք փորձությամբ ներդրվել էին ուժ, միջոցներ ու կազմակերպվածություն: Արեգցին այդ ամենը ուներ, չտրտնջաց, մաքառեց ու բարձրացավ: Ինչ էլ չուներ, մտահղացավ, վերակերտեց, ինքն իրենից հառնեց ու զորացավ: Այդ էին ասում բլրի բարձունքին իջած հուշարձանի քարակոփ լանջերը, վեր մագլցող աստիճանները, համաչափ ձգվող ծաղկի ու կանաչ թփերի մարգուղիները, սալահատակ հրապարակը: Իսկ համագյուղացի Հայկազ Սարգսյանի կողմից բերված երկաթյա շղթաները, ձգված հաստաբուն ու կարճ սյուների միջև, ազդեցիկ էին՝ ընդգծելով հուշարձանատարածքի ընդգրկուն ներկայությունը և այդ պարագծի մեջ հիսունութի միասնական լռությունը: Խմբվածներն այդ շղթաներից դուրս էին՝ դեմքով դեպի հուշարձանապատը: Որոշված ժամին աստիճաններով առաջինը բարձրացավ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը: Եվ որքան էլ տխրությունը իշխող էր շրջապատում, լսվեցին իրար հաջորդող անդադրում ծափեր: Ճարտարապետի թիկունքից գնում էին շրջկենտրոնից եկած պաշտոնատար անձինք, համագյուղացիներ Սմբատ Մելքոնյանը, Հմայակ Սարգսյանը, այնուհետև կոլտնտեսության նախագահ Պարույր Բաղդասարյանը, գյուղխորհրդի նախագահ Արշալույս Մելքոնյանը, դպրոցի տնօրեն Անդրանիկ Վարոսյանը, աշխատանքի հերոսներ և շքանշանակիրներ Աշոտ Նիկոյանը, Անդրանիկ Սվազյանը, Աղասի, Հրաչ և Թաթուլ Կարապետյանները, զոհվածների հայրեր, մայրեր, կանայք: Նրանք լուռ ու բարձրահայաց կանգնեցին սպիտակ սա-

վանով ծածկված զինվորի հուշարձանի առջև: Հնչեց պետական օրհներգը: Ներկաների ամենախոր հուզմունքի և նրանց ալեկոծ տխրության անմոռաց պահն էր: Զոհվածների զավակներն իջեցրին սավանը: Արեգական շռայլ ցոլքերի մեջ փայլատակեց զինվորի դեմքը: Խոնարհ էր, բայց հպարտ ու առնական, ձեռքը հաղթանակած սրի կոթունին՝ կանգնած էր իր գյուղի, իր ծնողների, հարազատների ու զավակների առջև: Նա կարծես հասկանում էր, որ շատ ուշացած է եկել՝ ալեկոծելով խտացված ու հին վերքերը: Այդպես էր: Բոլոր կողմերում հասկանալի ու ցավոտ լռությունը խաչվել էր մարդկանց դեմքերին: Գիտեին ինչ ասել, բայց չգիտեին ինչպես ասել: Լիքն էին խոհերով, հիշողությամբ, և դրանից էլ, կարծես, պրկվել էին ալեկոծ սրտերը: Իսկ շուրջը գարնան օր էր՝ մեղմ ու հարազատ գույների խշշոց: Երկնքից անբացատրելի սահք էր իջնում: Կապույտի խնկամատույցը ամպերի փափկությամբ քսվում էր արցունքներ զսպած խռովյալ մայրերի աչքերին: Ոչ ոք չէր ուզում ցույց տալ հեկեկանքի հեղեղը, որը տիրաբար տեղ էր բացել սրտի ծոցերում: Անդիմադրելի և անզուսպ ելևէջում էր այրիների հառաչանքը, սակայն հողեղեն, արթուն ու սթափեցնող զգաստությունն ուղղված էր պատի առջև կանգնածներին: Առաջին խոսքը ասաց նախագահը՝ Պարույր Բաղդասարյանը. հուզված էր, հոգու խորքերում ծրարված ձայնը դողդողում էր, բայց նա ամեն կերպ ջանում էր չխեղդվել հույզերի փոթորկում: Բարձրախոսից սփռվող նրա բառերը հատ-հատ ու հատընտիր ծաղկում էին բարձունքին, գտնում սրտի և հոգու ճամփա, գնում դեպի լեռնականչ հեռաստանը: Այդպես հավատամքի և սիրո նույն թրթիռներով հնչեցին Հմայակ Սարգսյանի, Ժորա Դարբինյանի, պատերազմից վերադարձած Գուրգեն Բարսեղյանի, Արամայիս Հարոյանի, Անդրանիկ Վարոսյանի, Թաթուլ Կարապետյանի խոսքերը: Արցունքով, լույսով ու կարոտով էր լեցուն զոհվածի այրի Զաբելի ելույթը: Ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն իրեն հատուկ ներշնչանքով բնութագրեց Արեգի մարդկանց, ամեն կերպ փորձեց մեղմել նրանց անդարմանելի ցավը: Առանձնապես հուզիչ էր, երբ ռազմի դաշտից վերադարձած, գյուղական դպրոցի ուսուցիչ Աշոտ Բաղդասարյանը մեկ առ մեկ հնչեցրեց արեգցի զոհվածների անունները: Տարածական լռությունը հեղվում էր հեռուներից վերադարձող արձագանքներով: Զոհվածի անունը զրնգում էր, թնդում՝ ճեղքելով գարնանաբույր օրվա պսակը, հառնում էր տարիների հորձանք-հրայրքից: Ամեն անուն իր գույնով էր ծաղկում, աստղուն տեսիլքներից իջնում, խառնվում էր

բազմահավաք մարդկանց շշուկ-շնչին: Ամեն անուն իր հնչյունների հաղորդությամբ էր ձուլվում վարդագույն քարերին, մկրտվում դարձի ավազանում՝ փշրելով գյուղի սուգի սափորը: Մի ափ կարոտ, մի գիրկ խենթություն, անհայտությունից բերած փունջ-փունջ շողիկ ու շուշան էին այդ անունների ծոցում: Նրանք կռունկների նման գալիս ու ծվարում էին իրենց հայրերի թևի տակ, իրենց մայրերի գրկում: Արծվի պես էին իջնում իրենց զավակների առջև, հույսի հրեղեն շուք էին շաղում, որ «ընդ եղեգան փող բոց ելաներ...»: Անունները, թրատելով լռության երկինքը, շարք-շարք գալիս, լրացնում էին գյուղի մայր մատյանը, ծանոթ դիմագծերով, հպարտ ու առնացի շարվում էին կողք կողքի: Նրանք երկրային, բայց շոշափելի ու թանկ, նաև մտերիմ ժպիտներով ու անհարցմունք խառնվում էին մեծ ու փոքրի երկնատուրք հավատին ու հավատամքին, փոքրերի հեքիաթների հերոսներին էին աշխարհ բերում, մեծերի ոգեբարձ հորձանքն էին բորբոքում: Անունները բոսոր գույների մեջ, վտակ-վտակ, քարի վրա ելևէջող հուսապատում, սրտերի զարկ, հավաքական տուրքով գալիս, լրացնում էին գյուղի ծխամատյանը: Գալիս էին... Նրանց առջև բաց էին սրտերը, կարոտը խեղճացել էր օրվա հուզմունքի ծոցում, ամենեցուն տրված տվայտանքի տոն էր, տատրակների դարձ էր Տիկորի հովիտներից, իսկ Արտին լեռը հոր նման մեկ-մեկ գրանցում էր իր զավակների սրբացած անունները.

Ասլանյան Կարապետ
Ասլանյան Խաչատուր
Ասլանյան Սարգիս
Ավոյան Վաչագան
Անտոնյան Վաղինակ
Ակուլյան Ավետիք
Ամրոյան Աշոտ
Բաղդասարյան Սմբատ
Բաղդասարյան Եղիշե
Բաղդասարյան Վարազդատ
Գրիգորյան Արամ
Գաբրիելյան Անդրանիկ
Դարբինյան Վարազդատ
Դարբինյան Անուշավան
Դարբինյան Սեդրակ
Դարբինյան Հայկազ
Դարբինյան Սերյոժա
Դարբինյան Վազգեն
Դարբինյան Արտավազդ
Դանիելյան Գևորգ
Դանիելյան Ենոք
Դանիելյան Զարզանդ
Ենգոյան Մանուկ
Ենգոյան Վաղարշակ
Եղոյան Մկրտիչ
Խաչատրյան Սուրեն
Խաչատրյան Աղասի
Կարապետյան Համբարձում
Հարությունյան Վանիկ
Հարոյան Էդվարդ
Հարոյան Սմբատ
Հակոբյան Արամ

Հակոբյան Սմբատ
Հակոբյան Գագիկ
Հովհաննիսյան Արամայիս
Միտոյան Հայկազ
Մկրտչյան Վաչագան
Մխիթարյան Սիրեկան
Մարկոսյան Սմբատ
Մանուկյան Արիստակես
Մելքոնյան Գուրգեն
Նիկոյան Հրայր
Պետրոսյան Սամսոն
Պետրոսյան Մանուկ
Սվազյան Եփրեմ
Սվազյան Արտավազդ
Սվազյան Միսակ
Սվազյան Աղասի
Սվազյան Անդրանիկ
Սվազյան Հրաչ
Սուքոյան Միսակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Ալեքսան
Վարդանյան Անդրանիկ
Վարդանյան Նապոլեոն
Քոչարյան Սեդրակ
Քոչարյան Երջանիկ
Քոչարյան Վաղինակ

Եվ երբ Աշոտ Բաղդասարյանը կարդաց վերջին անունը, փողային նվագախումբը հնչեցրեց մարտական քայլերգը, որոտացին հրացանային համազարկերը: Դպրոցի աշակերտներն իրենց տաք ծոցերից բաց թողեցին հիսունութ աղավնի: Ներկաներին թվաց զոհվածների հոգիներն են՝ ճերմակ, թրթռուն, որոնք մի քանի պտույտ արեցին՝ շոյելով հուշասյան բարձր քիվերը, սլացան դեպի ամպերը, ապա ոսկեթև շուքով շուլալվեցին մշուշներին և քարացան զրնգուն արևի փառահեղության ծոցում: Հուշարձանի առջև բոլոր կողմերից շարժվեց մարդկային ալիքը: Առաջինը զոհվածների հարազատներն էին: Ծաղկեպսակները երիզող ժապավեններին գյուղի նահատակների անուն-ազգանուններն էին: Մեծ մայրերի ու կանանց արցունք-հեծկլտանքը պահը նմանեցնում էր հուղարկավորության: Սակայն զոհվածների հայրերի ու նրանց զավակների աչքերում թախիծները ծածկված էին հպարտության շաղախով, պահը տուրք էր ըմբռնելի վեհության: Հոծ բազմությունը անցնում էր դանդաղ, գլխահակ զինվորը, կարծես, ուզում էր հեռուներից բերած իր «խոսքն ասել» նրանց, քանդել էր լռության կապերը, բայց համր լինելու դատապարտվածությունը գամել էր նրան, արձանացրել տարիների հողմաձայն կարոտը: Գտել էին իրար տեսնչացող մայրն ու որդին. այրիները հեկեկում էին լուռ ու զսպված, զավակները շվարած նայում էին իրենց տատ-պապերին, մտքով զրուցում վերադարձած զինվորի հետ, շոշափում նրա հոգեմերձ ներկայությունը, որը հառնում էր բարձունքից, ելնում հսկայի նման, ինչպես հեքիաթի հերոսը:

Գարնան օրվա մեջ՝ հաղթանակից քսանվեց տարի հետո, այստեղ՝ հուշարձանի մոտ, ավարտվում էր այս գյուղի երևացող ու չերևացող պատերազմը: Արեգը լռությամբ, հուզմունքով ու ցավով այսօր հասկացրեց, որ նրանք՝ զինվոր-այրերը, չկան այլևս, չեն գալու, ազդարարեց, որ մայրերը վերջնականապես կորցրեցին իրենց զավակներին, գյուղի հիսունութ հարսներ այրիացան, որբացան երեխաները, հայրերը խաչվեցին մեծ կորստի կսկիծներին, որոնք անվերադարձ խամրեցին գյուղամերձ քարափների ճիչերին: Հուշարձանին ձուլված մարդիկ ինչ էլ շշնջային, կորուստը մեկընդմիշտ հաստատող քարակոփ պատն էր կանգնած նրանց դիմաց: Խուռներամ խոհերը ծնկել էին կարկտածեծ արտի նման, հրաշք բերող արծիվները թռել էին իրենց բներից: Միայն աղավնիներն էին զոհվածների հոգու թելերով գործվել ամպ ու երկնքի սուգի սահմաններին, որ թախիծները մարեին վերևներում, և աստղերի հեկեկանքից շուշան-աղոթք իջներ բարձունք ելած զինվորի փառքի առջև: Եվ այս փխրուն հավատադարձը անբացատրելի սահում էր շարքերի միջով, հիշողության արցունքոտ շքերթը միահյուսել էր ծանոթ-անծանոթի, ցավի մխանքը դառնորեն ծխում էր, հուշերի ծովում դեռ ճամփա ուներ: Մեկը մյուսի հարցնում էին, ակամա ժպտում, օտարներին ծանոթացնում, ներկայացնում զոհվածների զավակներին, տեղ էին տալիս սև գլխաշորերով մայրերին, համբուրում նրանց աջը, քաջալերում: Հուշարձանի առջև պարզապես ծաղկել էր ամենակարող հույսը՝ ոտքը պնդած հողին, այն ճառագելով գալիս, սրբագրում, սրբագործում էր: Հույսի հարամնա լեզուն, սրտերի փակ դուռը բացող նրա բարբառը նշխարքի պես բաժանված էին այստեղ. դրանով էին սփոփում իրար, փոխանցում իրենց ամենաթանկ ցավը, ամենազոր ճիչը, նաև լռության տաճարներում պահված սրբազան հայրենները: Դրանցով էին ամոքվում, և հոգու հեռավոր անկյուններում կարոտը դառնում էր հուշարձանի քար, սրտերը ճոճվում էին, տեղահանվում, ժամանակի ժուժկալ կշեռքին ճշգրտվում էին տխուր օրվա չափն ու հույզը: Վշտի տեսանելի սահքը մայրերի սև գլխաշորերի կապուկից վտակվում էր ամբոխի մեջ, խայտում սևընծա: Այրիացած մայրերը թիկունքով ձուլվել էին հուշարձանի պատին, լցված էին տխուր հպարտությամբ, սակայն մաքուր հոգով, սլացիկ ցավի վիրավոր ցնծությամբ էին նայում ամբոխին, իրենց երդում-երկունքներով փրկած Արեգի օրոցքներին, նաև այն եզակի հավատարմությանը, որ պարգևեցին իրենց ամուսիններին, որպեսզի նրանք այս երկնքի տակ առիթ չունենային

հոգով պարտվելու: Այրիները հոգու ինքնայրումով, տասնամյակներ ոտքի վրա, հանդերի ճամփին, լեռնաժայռերին նստած՝ մոխրացան և իրենց ծոցերում թաղեցին տարվա եղանակների տաք մռնչյունն ու ողջակիզող մորմոքը, ատեցին տարեվկա գույների գայթակղությունը, դարձան հավատամքի քար, խաչ ու տոհմական ամենավերին օրենք... Արեգում հիսունութ կտուրի տակ այդպիսի հիսունութ օրենսգիրք հաստատվեց, անբեկանելի, անխոցելի նույնքան այրիներ իրենց մեկընդմիշտ «դատապարտեցին» ցմահ պահպանել նվիրումի կշեռքը, խղճի ոսկե նժարներով այս աշխարհին հանձնել իրենց ամուսինների պատվարժան անունները:

...Տեփո պապը որդու՝ Աղասու օգնությամբ հասել էր հուշասյան մոտ: Պիտի անպայման գար, չէր կարող բացակա լինել: Վիթխարի հասակը քիչ կորացած էր, բայց նա ձգտում էր ձեռնափայտին հենված մնալ և հետաքրքրությամբ զննել բոլորին: Օրվա ու տարվա բերածն ու տարածը իմացող մարդ էր, գիտեր ամենքի ցավն ու հոգսը, անտարբեր չէր, գյուղի պարտքն ու պահանջը տեսնում էր իր ութսունիննի բարձունքից: Հիմա էլ նայում էր ակնապիշ, միամիտ ժպտում, օրվա հետ թե մեկ ուրախանում էր, տասը՝ տխրում, այս հավաք մարդկանց շատ բան ուներ ասելու: Կանգնել ու երկմտում էր՝ ինչպե՞ս ասեր, ո՞ւմ ասեր: Նա հասկանում էր, որ գյուղ «վերադարձած» զինվորը մի կողմ էր տարել տարիների վարագույրը, եկել ու իր ներկայությամբ փոխել էր գյուղի տրամադրվածությունը, բարձր պատվանդանից վերջապես արձակել էր սրտեր մաշող կապերը: Օրվա չարչրկվող միակ զավակը հիշողությունն էր, որը կորած ու կորցրած իր հույսն էր փնտրում: Իսկ հույսը հալվում էր գարնան երակներում, ճյուղավորվում, գնում էր գյուղի կանաչ փողոցներով, մտերիմ սոսափ, կանչ ու կրակ էր փնտրում, որ տաք պահեր իր բաժին հիշողության գույնը:

Տեփո պապը, կարծես, այդ հիշողությունների բազմաձայն փեթակ էր, անցյալի մեջ սկսված մրրիկը ծփաց կրծքի տակ, ներսում դղրդացին պատերազմի տարիները, նրա թողած տխրությունը, տվայտանքը, պակասությունները: Ծերունին չէր կարողանում հեռանալ դրանցից, անուժ էր իր հոգնած երակներից օտարել այդ ծանր ժամանակների կերպն ու կերպարը: Ոտ-ոտ գնաց, կանգնեց զինվորի առաջ: Նա վերևից էր նայում, գլխահակ էր և իր հայացքով ընդգրկում էր բոլորին: Տեփո պապը գլուխը վեր բարձրացրեց, նրանց տաք ու պաղ հայացքները դիպան իրար: Պապին թվաց՝ օդում ծնծղաները բախվեցին, լույսը մի տեղից բեկվեց, աղմուկ-

զրույցները մեղմացան, և նա շատ մոտիկից տեսավ զինվորի աչքերը: «Տեր Աստվա՜ծ, էդ աչքեր ծանոթ ու հարազատ են ինձ... Կէղնի՞ Յամբարձումն է, Սմբա՞տը, Սիրեկա՞նը...»: Իրար հետևից անուններ թվարկեց պապը, և նրանց շարքն անցավ իր առջևով: Տեփո պապն ուզում էր ճանաչել, թե նա հիսունութից ո՞ւմ պատկերով է եկել-կանգնել բարձունքին: Մտածեց, մղկտաց, մռայլվեց, ապա ուղիղ ու շիտակ նայեց զինվորի աչքերին, կարդաց այդ աչքերի հարցմունքը և ուզեց պատասխան գտնել: Այնպես ցանկացավ, որ իր տեսածը տեսիլք չլիներ, ախր ինքը օր-ջոջության ասելիք ուներ, խղճի խաս օրոցքում տարիներով պատառ-պատառ հավաքած, վշտի և ուրախության ծածկոցի տակ գումար-գումար կսկիծ ուներ:

...Բարձրախոսից հնչեց դպրոցականների երդում-դասը, հավաքվածները զգաստացան: Բառերը բոցե ծափ ունեին, բարկ էին ցավի պարզված պտույտներին, զսպված հառաչանքների անզարդ թամբերին թիապարտ էին:

Բառերը պատանեկան շուրթերից իջնում էին երախտաբույր, օրվա ոգեծամ տարերքի մեջ քանդակվում, հառնում էին քառաձայն: Ներկա-բացակայի ակնթարթ էր, անդադրում պատարագի ազնվադարձ սլացք: Ներկաները բացել էին իրենց սիրտն ու հոգին՝ ընդունելու բացականերին, ընկալելու նրանց ստվերն ու փայլը:

...Տեփո պապը դրա կարիքը չուներ, որովհետև պատերազմի տարիներից էր նրանց պատսպարել իր հոգում: Հիմա ձեռքը դրել էր քարե քանդակներին, նայում էր պաղ աչքերով իրեն զննող զինվորին, ուզում էր հարցնել՝ տղա՛, էդ ընչի՞ ուշացաք: Ուզում էր, բայց վարանեց: Մարդիկ իրեն էին նայում, ու ինքն էլ գոհունակությամբ զննում էր դաշնադիր այրիներին, որոնք եկել, խմբվել էին զինվորի առջև և իրենց խոստումների թափանցիկ լույսով գուրգուրում էին զինվորի հայացքը: Տեփո պապը, թե ճար ունենար, կբարձրանար, կհասներ զինվորին, կխնդրեր, որ գլուխը կախ չպահեր, հպարտ նայեր իր գյուղին, ընտանեկան պատիվը պահած այս սիրառատ կանանց: Թե ճար ունենար, նրա ականջին կշշնջար, նրա սրտի բաբախներին իր կանչը կտար, կպատմեր, լաց կլիներ ու կխնդար, տարիների միջով կիջներ ու կգնար հանդերի ճամփով: Մի պահ աչքերը շաղվեցին, հիշեց ու դարձյալ վերհիշեց, հանդարտահոս իջավ, նստեց քարե բազրիքին, մտքով խրձեց զինվորի հայացքը, նրա հարցմունքը սեղմեց իր շուրթերին, գնաց... «Զինվոր բալա, իմ ախպեր, ի՛մ աչքի լույս, բարով ու բարով ես եկել, կարոտի կժով զով ես բերել էս գյուղին... Ես ու դու միշտ իրար հետ ենք էղել,

գտել ու կորցրել ենք, ձայն ենք տվել իրար: Բեզարած եմ էղել, տարիքը զարկել է ոտքերիս, բայց ես, իմ գործիքների բրեզենտե տոպրակը վզիցս կախ, հասել եմ գյուղի չորս բոլոր, գտել եմ հնձվոր կանանց, նրանց ձեռքի գործիքն եմ սրել, ջարդածն եմ սարքել, հոր նման հորդորել եմ, որ դիմանան... Իմ տունը Տեփոյի ձորակում էր, իմ բույնը՝ արտի սինոռներին. վազել եմ, նեղյալներին հասել, նաև տխրել եմ դաշտվորների հետ, երբ կռվի դաշտից նամակները քչանում էին, հետո՝ փոստատարը այլևս ոչինչ չէր բերում: Հիմա քեզ ի՞նչ ըսիմ, տուն եկած իմ զինվո՛ր բալա, ինչպե՞ս գտնիմ քո սրտի ճամփեն, որ դու մեկ-մեկ քննես ու հասկնաս, հատ-հատ, նորից ու հազար անգամ ճանչնաս քու գաղթական ծնողների անդարման ցավը, տուն պահող ու քու էրեխեքին մեծացնող պատվախնդիր հրեշտակ կանանց...»: Ներսում իրար զարկվող մտքերի երամը դարձյալ դղրդաց, շողքի բարակ շիկնանքը ցոլցլաց ծերունու աչքերում, և նա ամենամեծի իրավունքով դարձյալ նայեց իր գլխավերևում ժամապահի պես կանգնած զինվորին: «Իմ ձայնը կհասնի՞ քու սրտին, դու Տեփոյին կհասկնա՞ս...»: Պապը ոտքի ելավ, կարծես հենց նոր տեսավ այսքան բազմություն, այսքան խոսք ու զրույց: Իր գյուղի մարդիկ էին, նաև ծանոթ ու անծանոթ կանայք, հարս ու աղջիկներ, երեխաներ՝ շարք-շարք, երգեր՝ հառաչուն և հպարտ, հույսի գարնանաձայն թելեր՝ գույն-գույն, հարազատ ու մերձ: Տեփո պապը նորից հետ նայեց, զինվորի ոտքերը շոյեց, և իր հայացքը, պարտեզին ջուր տանող առվակի նման հոսելով, մեղմանուշ հասավ զինվորի աչքերին. «Տղա՛, ի՛նձ նայե, էս ամեն բան քու համար է, բայց մեր սրտի մեջ է, մեր ապրելու գինն է, մեր հիշելու վանքն է: Էս ամեն բանը, բալա՛, նմանապես մեր համար է, խղճի պարտք արևուց էլ թանկ է...»:

Աղասին կտրվեց այն խմբից, ուր նաև Ռաֆայել Իսրայելյանն էր, մոտեցավ հորը: Նա կարծես զգում էր հոր ապրումները, գիտեր, որ ինչքան էլ վիթխարի է, վերջերս շատ շուտ է հուզվում: Մոտեցավ, փաղաքուշ բռնեց ձեռքը.

- Հոգնեցի՞ր:

- Էսօրվա օր ի՞նչ հոգնություն,- աշխուժացավ հայրը,- ո՞ւր է նախագահը... Երկու բառ ըսիմ իրեն, սիրտս հովանա:

Որդին հասկացավ նրան: Քիչ հետո Տեփո պապին շրջապատել էին գյուղի մեծերը, պատերազմի վետերանները, նրանց կողքին՝ կռվի վերքերից խոցված կանայք: Տեփո պապը միանգամից արժանացավ բոլորի ուշադրությանը: Չէին թողնում խոսեր, հիշում, պատմում էին

նրա բարի գործերի մասին: Այն, ինչ քիչ առաջ պապը վերհիշում և ուզում էր, որ գյուղ «եկած զինվորն» իրեն լսի, հիմա գյուղի մարդիկ իրենք էին սիրով բացել այդ էջերը, խոսում էին Տեփոյի ձորից, հանդից, հնձից, սրաքարից ու դազգահից: Պապը թեև հաճելիորեն լսում էր, բայց այնպես էր կուչ եկել հսկա մարմնի մեջ, կարծես ուզում էր, որ այդ գովեստներն իր կողքով անցնեին, նաև բաժին դառնային ուրիշների:

- Մեռնեմ ձեր հիշողությանը,- մրմնջաց պապը,- ապրիք, որ մտհան չէք արել, բայց իմ տարիքին էլ ի՞նչ գովք: Իմ խոսք կուզեմ լսեն գյուղի երկու նախագահները, վարչության կազմը, մեր ջահել-ջիվան տղերք, գյուղից բացակայած, բայց Արեգի սուրբ հացն ու Արտին սարի ճամփեն չմոռացած մարդիկ,- պապը, ձեռնափայտին ուժ տալով, ձգվեց վեր, կանգնեց, բոլորակ ժպտաց:- Ընկե՛ր Բաղդասարյան, շնորհքով մնաս, թող բարին ծաղկի բոլորիդ նպատակներին: Էս քարե հուշ պետք ու պետք էր, թող էրեխեք ճանչնան գյուղի անմեղ զոհերին: Հիսունութ պարտք էսօր փակեցին արեգցիները, մեր նահատակներու հոգին արքայության բաժին դառավ, Աստված թող ձեր կամեցողություն կանաչ պահե, ապրիք, զորենաք:

Տեփո պապը հազիվ էր թաքցնում ելման հուզմունքը, որը գլգլում էր խորքերում, ճողփում դողդողացող շնչի մեջ, հառաչանքի ճոճքերով վկայում տիրոջ ցավը:

Միջօրեից հետո գնալով ավելի էր մեծանում մարդկանց հոսքը: Շրջկենտրոնից եկող և գյուղի միջով այլ բնակավայրեր գնացող ճանապարհին հարյուրավոր մեքենաներ էին կանգնել: Անցնող-դարձողները շրջապատել էին բարձունքը կամ էլ վերևում էին: Նրանք չէին կարող անտարբեր լինել, կանգնել էին ծաղկեպսակների առջև, կարդում էին զոհվածների անունները, նայում սգացող մոր քանդակեն պատկերին, հայրենի հողին ամուր կանգնած զինվորին և փառք էին շշնջում:

Արեգը խղճի իր պարտքն էր փակել, հավատի և սիրո իր սահմանումն էր տվել բարձունքի հուշաքանդակներին, սյունաբարձ պողպատակուռ շղթաներին: Գյուղը ծաղկավարս կանաչ գոտիներին բացել էր իր դասագիրքը: Մարդիկ հնից, կոտորումից, բռնագաղթից փրկած իրենց ոգու փերթերն էին այստեղ բերել, պատերազմում հաղթած զինվորի արյամբ էին օծվել բարձրավեմ սյունը, պատը, հիմնաքարը:

Արեգը աղոթքի իր Աստվածաշունչն էր բացել, հայրեն ու հեյրան էր շշնջում, նրա հավաքական տենչը փողփողում էր, ծառս էր լինում էպոսական:

Արեգի պատարագը երկնասույզ էր, գյուղը գոգահովտում՝ իբրև կենսածուխ կարկաչների բուրվառ, խղճի օրհնության հրայրքն էր ավետում, սաղմոսում էր լինելի ասքը, պոկվում էր լռության գամերից, մասունքների մյուռոնաբույր սերմեր էր շաղ տալիս իր իմացած աշխարհի յոթ կողմերում:

Արեգի բոլոր դռները բաց էին, օրհնված մատաղաքարերին գառներ էին զոհաբերվել, երկրի ու երկնքի միջև մայրերի մրմունջն էր, հայրերի կենաց խոսքը: Արեգի դպրոցի դահլիճում «վերադարձած զինվորի» փառքին հաց էր մատուցվում, խոհերի ծաղկած փնջերը գինու հետ հեղվում էին հրեղեն, բարձր օճորքի տակ շիկնել էր նահատակ զինվորների ոգու ծիածանը. փառահանդես էր, հոգեհանգիստ, հավատածես:

* * *

Մարկոսի հարկի տակ գրեթե նստելու տեղ չկար: Հավաքվել էին հարազատները, հարևանները: Գյուղի ամեն տնից մի մարդ այստեղ էր: Սովորույթ էր, թե պարտականություն, երբ Արեգը տղա էր բանակ ուղարկում, ուրախության սեղան պետք է բացվեր:

Սերգոն տասն օր առաջ ստացել էր ծանուցագիրը, հուշարձանի բացման օրը պիտի գնար, սակայն շրջանային զինկոմը մեկ օրով հետաձգել էր: Տան մեծ սրահում սեղաններ էին բացել: Մարկոս պապը նստած էր վերևում, Գուլոն աչքի տակով հետևում էր նրան, գիտեր, որ ալեկոծված է, «հանգիստ ու դադար չունի էս մարդ, տղա ունեցողը բանակի ճամփեն էլ պըտի սովորի...»: Հետո նա զավակներին՝ Ժորային, Վաղարշակին ու Յուղոյին, հասկացրեց, որ մոտենան իրենց հորը, խառը մտքերից ազատեն նրան: Մարկոսը, հավանաբար, կռահեց կնոջ նախաձեռնությունը, ինքը փորձեց ազատվել հետապնդող մտքերի շարանից, ծանր բարձրացավ, գինու բաժակը վեր պարզեց.

- Ժողովո՛ւրդ, բարի եք հավաքվել, հազար բարու մեջ թող ձեր օրն էղնի,- նայեց, գտավ Սերգոյին, որը շրջապատված էր ընկերներով,- իմ Սերգոն բանակ կերթա, թող բարով էրթա, բարով էլ գա: Էսօր նշանավոր օր էր մեր գյուղի համար, մեր կորած զինվորն էկավ, կանգնավ մեր աչքերու դեմ: Գյուղով, մեծ ու փոքրով նրան ընդունեցինք, վիրավոր էր, արնաքամ, քսանվեց տարի ոտքով ընկել էր ճամփա, էսօր եկավ, հասավ Արեգ գյուղին ու Արտին սարին: Իր ճակատագիրն էր էդպես, փառք իրեն,- բոլորը ոտքի կանգնեցին, պապը չկորցրեց խոսքի թելը,- վաղը էս գյուղից Սերգոն կերթա, իմ

թոռը զինվոր կդառնա, թող իր ճամփեն կանաչ էղնի, խաղաղություն էղնի աշխարհին: Սերգո՛, տղամարդու պես քու պարտք կատարես ու բարով գաս:

Այնուհետև սեղանապետը՝ քավոր Ավետիքը, բնութագրեց Արեգի երիտասարդներին՝ հնից մինչև այդ պահը, չմոռացավ պատերազմում կռված տղաներին, հետագա սերնդին՝ գյուղի կենսական ուժը կազմող մեխանիզատորներին, մարզիկներին, ուսանողությանը: Նրա խոսքը ազդեցիկ էր, բառերը հատ-հատ ընտրված, նա ոչ մեկի անունը չէր ուզում բաց թողնել, երբ խոսում էր հողը մշակող, իրենց գյուղը շեն պահող հզոր այրերի մասին: Ու երբ ոտքի կանգնեց ու հպարտ խոսք ասաց տանիրոջ որդու՝ տրակտորիստ Վաղարշակի, նրա հասակակից ընկերների ու կրտսեր տարիքի մասնագետների՝ Արամայիսի, Հաբեթի, Արմենակի, Կառլենի, Հողմիկ և Ռազմիկ Նիկոյանների հասցեին, ներկաները բուռն ծափահարեցին և նրանց պատվին ծոր տվեց «Վերվերին»: Արեգում և ընդհանրապես գաղթականների օջախներում ամեն ուրախությունն ուղեկցվում էր հետադարձ ակնարկով, ոչ ոքի չէին մոռանում, հիշողության, հույսի և ցնծության պահերին գումար-գումար բացում էին գյուղի պատմության թաքուն էջերը, հավուր պատշաճի խոսքեր էին հնչում:

Մարկոսի հարկի տակ այսօր դրա կրկնությունն էր, նոր ակոսով գնացող խնդության երեկո: Սեղանապետը, անշուշտ, առաջին խոսքն ու երախտագիտությունը հյուսեց օրվա մեծագույն խորհրդի՝ զոհվածների պատվին բացված հուշարձանի հետ, մեկ առ մեկ հիշեց նրանց, ինչպես նաև գյուղ վերադարձած զինվորներին:

Գավաթները շրխկացին, երաժշտությունը պոռթկաց, երիտասարդները որոտընդոստ մտան պարի հրապարակ: Ժորան հրճվում էր ու տխրում, մտահոգության բարակ թրթիռներ էին սողոսկել սիրտը: Եվ որպեսզի չմատներ իրեն, մտավ պարողների մեջ: Երիտասարդները շրջապատեցին նրան: Սերգոն, ուսերին բարձրացրած յոթ տարեկան եղբորը՝ Թաթուլին, պարում էր: Հետո նրան փոխնիփոխ տարան Սերգոյի ընկերները, վերջում Թաթուլը հայտնվեց հոր ուսերին:

- Օր էղնի, քեզ էլ զինվոր դարձնեմ, գնաս քու պապի էրգիրն առնելու,- բարձր ասաց հայրը:

- Ես կառնիմ իմ պապու էրգիր,- զվարթաձայն պատասխանեց Թաթուլը և ձեռքերը վեր պարզեց մինչև օճորքը:

Սեդան սկեսրոջից չէր հեռանում, տխուր էր, արցունքները հազիվ էր զսպում: Նայում էր իր հինգ տղաներին, հրճվում էր, բայց

Սերգոյի վաղվա բացակայությունը շամփրում էր իր սիրտը: Ռուզաննան նկատեց մոր հուզմունքը, մոտեցավ, գրկեց: Աղջկա ու մոր զրույցը կարճ տևեց: Սեդան զգաստացավ, համբուրեց դստերը, նրա ականջին ինչ-որ բան ասաց: Ժպիտով ողողվեց մոր դեմքը:

- Գնա՛, պարի՛ր, Ռուզան ջան,- հորդորեցին տատն ու մայրը:

Ռուզաննան արագ հայտնվեց եղբայրների պարաշղթայում, զուռնան էրգրի «Քոչարին» էր զարթնեցրել: Գաղթականի համար այդ պարը հավատամքի կրակոտ տուրք է, որ այդ պահին ծավալվել էր Մարկոսի հարկի տակ, միավորել բոլորին:

Ժորան ու Սեդան իրար նայեցին: Կինը գլուխը կախեց, արցունքի բարակ շողը ծածկեց նրա աչքերը, չդիմացավ, անմիջապես դուրս գնաց:

- Ժորա՛, Կրպեների տուն զինվորին արցունքով չի ճանապարհե,- Մարկոս պապը նկատել էր հարսի՝ Սեդայի հուզմունքը,- հե՛տ կանչե, թող գա:

Ռուզանը շտապեց մոր մոտ, վերադարձան միասին:

- Էդ զուռնի ձեն կտրե՛ք,- խրոխտ էր Մարկոս պապի ձայնը,- Կրպեների մեծ ու փոքր, հարս ու աղջիկներ նմանապես, շարվե՛ք իմ աջ ու ձախ:

Պապի հրաման էր, զավակները մոտեցան, լայն շրջան կազմեցին ճակատային սեղանի շուրջը:

- Ես ու Սեդան Կրպեների՞ց ենք, թե՞ օտար,- հեգնեց Գուլո տատը:

- Քու ձեն կտրե՛, արի կանգնի իմ կողք,- ծիծաղեց Մարկոսը:

Հավաքվածները թեքվել ու նայում էին, թե պապը այնուհետև ի՞նչ հրաման էր տալու:

- Թաթո՛ւլ, դու արի՛ իմ գիրկ, քու պապու մոտ,- գորովանքով ասաց Մարկոսը, ծնկներին նստեցրեց թոռանը և նայեց իր «զինվորներին»,- իմ թանկ երազն էս էր, իմ հոր կանչ ձեր շնչի մեջ է, հիմա էնպես երգեք, որ ձեր հոգին քնից զարթնի,- ասաց ու ինքը սկսեց.

«Կատույs իմ ձին հեծել եմ,
Արաfս գեsը անցել եմ,
Պատիս տան դուռն էրգրում
Երազիս մեջ բացել եմ...»:

Այնուհետև խումբը բարձր ձայնով կրկնում էր. «Պապիս տան դուռն էրգրում՝ երազիս մեջ բացել եմ...»: Երգը տաք տրոփյունով ճոճվում էր գերանների տակ, զրնգում զիլ, հոգեպարար, որին միացել էին բոլորը: Պապը ականջի տակ ջոկջոկում էր բարակ, անուշ մի ձայն, որ լսել էր էրգրում. իր հոր կանչն էր, վճիտ ու ոգեզանգ

թրթիռների փունջ էր: Մարկոսը հասկացել էր, որ դա Թաթուլի ձայնն էր, առանձնակի տաք ու անթաքույց քնքշություն էր ցոլում նրա թոթով շուրթերին ծաղկած հնչյուններից: Պապը ճիշտ ու ճիշտ էր ընկալել նրա բառերի կրակը, մատաղ շնչի մեջ ծիլ տված իր կարոտի տեսակը: Երբ երգն ավարտվեց, պապը ձեռքով նշան արեց, որ լռեն.

- Աստված կսիրեք, թողե՛ք, որ Թաթուլը մեն-մենակ երգի, տեսե՛ք, թե ինչ առյուծի ձագ է, կմռնչա:

Թաթուլի դեմքը կարմրատակեց, բոլորն իրեն էին նայում, ամաչեց, բայց գլուխը բարձր պահեց:

- Քու պապու խոսք գետին չքցիս, երգե՛,- աղաչեց Մարկոսը: Թաթուլը հայացքով ինչ-որ մեկին էր փնտրում: Սերգոն ժպտաց, քույրը՝ Ռուզաննան, աչքերի կրակով ուժ տվեց նրան, մայրը բռնեց նրա ձեռքը.

- Թաթո՛ւլ, պապիդ երգն ասա՛:

Այլևս վարանելու պատճառ չուներ, ելավ, կանգնեց աթոռին, գլուխն ավելի բարձրացրեց, հայացքը սահեց մտերիմ ժպիտների միջով, ու նրա շուրթերից գլգլացին պապի երգի տողերը.

«Հազար տարի էլ անցնի,
Կգամ գիրկդ, Ալաջա՛,
Տիկոր գեսը ես կանցնիմ,
Պատս ընձի կկանչա...
Հազար մուրազ ես ունիմ,
Անին ճամփիս է կանգնած,
Պատս էրգիր է կանչում,
Հույսի կրակն է հանգած:
Հազար տարի էլ անցնի
Ղարսի բերդը ես կառնեմ,
Նոդատակս թող բացվի,
Թեկուզ ճամփին ես մեռնեմ»:

- Ապրելով ու կռվելով պըտի առնի՛նք, տղա՛,- ծափահարողների միջից լսվեց Թաթուլի հոր՝ Ժորայի ձայնը: Մարկոս պապը հոգու խնդությանը չէր դիմանում, Թաթուլ թոռը իր էրգրի կարոտն էր բորբոքել, բացել ու մտել էր իր սրտի մեջ: Գուլո տատը գորովանքով գրկեց թոռանը, համբուրեց, աղոթքի բառեր ասաց, սիրեց տան պստիկին, որն արդեն յոթ տարի Կրպեների ուրախության նոր շունչն էր: Մարկոս պապը դեռ չէր հանդարտվել, թոռանը չէր թողնում, ամուր գրկել էր նրան: Թաթուլն ուզում էր պոկվել, միանալ

պարողներին, չէր ստացվում: Հայրը տեսավ պապ ու թոռան լուռ «կռիվը», մոտեցավ:

- Հայրի՛կ, փոխանակ Սերգոյին սիրես, խոսք ու խրատ տաս, վաղը բանակ է գնալու, Թաթուլին ես բանտարկել:

- Սիրտդ դողա՞ց, Ժորա՛,- քրթմնջաց հայրը,- ճիշտ է, քու տղեն է, իմ էլ թոռն է, թող բանտարկված մնա ուր պապու սրտի մեջ:

Ժորան չպատասխանեց, հայրը դիպուկ էր խփել: Սերգոն, Մինասը, Գրիգորն ու Մանվելը մոտեցան պապին:

- Շեն պահեք էս օջախ, էս ուրախություն էլ Աստված շատ չհամարե,- պապը խոսքն ուղղեց թոռներին, հետո անուշ մրմունջով բաց թողեց Թաթուլին: Հինգ եղբայրներով խառնվեցին պարողներին, որոնց շղթան մի երկար պտույտ էր արել մեծ սրահում:

Մարկոս պապը, թիկունքն արած պատին, ակնդետ հետևում էր տան աշխույժ անցուդարձին, բայց մի պահ զգաց, որ կամաց-կամաց հեռանում է պահի ցնծությունից, հասկացավ, որ ներսում տխուր ամպ կա: Պատճառ ուներ, թե չուներ, չքննեց, չուզեց քանդել թախիծների կծիկը: «Սերգո՛, Աստված քեզ օգնական,- ներսից լսեց իր ձայնը, իր իմացած Աստծու պատկերն առավ գոգի մեջ, սեղմեց չորացած կրծքին ու մտքով հասավ էրգրու Կծկոնք վանքեր,- իմ թոռան տեր ու պահապան էղնիս, ամենազոր Աստվա՛ծ, թող Սերգոս խաղաղ ծառայե, գա ու հասնե իր ծնողներին, իր ախպրտանց, ուր Ռուզան քրոջ թիկունք էղնի... Ես, հեչ, ես արդեն չկամ, իմ գնալու ժամն է: Սիրտս կվկայե, որ Սերգոյիս էլ չեմ տեսնի, գնացող եմ, ոտքերիս տակի հողն արդեն փափուկ է, կխրվիմ ուր մեջ, կերթամ...»: Ինքնազրույցով պապը հեռանում էր, կտրվում իրական աշխարհից: Ինչ-որ բան նրան ամուր սեղմած՝ տանում էր, բաժանում երգող-պարողներից, կտուրի տակ իրար զարկող ու հրմշտող խոսք ու զրույցից, աղմուկ-ծիծաղից, սեղանապետի կենաց խոսքից: Սակայն դա մի պահ էր, քամու պես անցավ, գնաց, ծերունին սթափվեց, ասես մղձավանջային երազից արթնացավ: Իր առջև կանգնած էր Թաթուլը: Նա անհասկանալի զարմանքով ուշադիր զննում էր պապին, միամիտ ժպտում, և հարցական ելևէջներ էին ընդգծվել աչքերում:

- Պա՛պ,- միամիտ ու հոգեձայն հնչեց նրա մեկ հատիկ բառը:

- Գառնո՞ւկ, արի իմ գիրկ,- անուշ հառաչանքով ասաց Մարկոսը:

Թաթուլը չպատասխանեց, անսովոր հայացքով նայեց պապի մշուշ-մշուշ աչքերին, այնքան խորքից ու մեծավարի խղճաց նրան և գլուխը խոնարհի իջեցրեց ծերունու ծնկներին:

* * *

Աշունը խամրած գույներով փախել էր սարերը, ներքևում Արեգն էր՝ խոհական ու խաղաղ: Գյուղի թափանցիկ գրկում հոժար ու մտերիմ դրկիցների հարց ու փորձն էր, աշնան և մոտեցող ձմռան լույսն ու ստվերը, իրենց առտնին հոգսերի մեջ ծանր ու թեթև անող մարդկանց հաշտ ու վիճելի օրը:

Դպրոցը պատրաստվում էր պայծառ հույզերի և նոր հանդիպման ջերմությամբ հնչեցնել սեպտեմբերի առաջին օրվա հոգեպարար զանգերը: Անդրանիկ Վարոսյանի հանձնարարությամբ ամեն օր հատուկ ժամ էր սահմանվել հուշարձանի խնամքի, ծառերի ու ծաղիկների ջրման, շրջապատը մաքուր պահելու նպատակով:

Ամեն օր հավատամքի առաջին դասը, առանց հատուկ խոսքի, սկսվում էր հուշարձանի վկայությամբ: Դպրոց մտնողը՝ ուսուցիչ, թե աշակերտ, մտովի բարևում, զրուցում էր «վերադարձած» զինվորի հետ, նրա վեհասլաց լռությանը խառնում իր տաք շունչը, ողջույնը, խոնարհ հարգանքը:

Սեպտեմբերի 1-ին Սեդա մայրիկը բարձր և միջին դասարաններում սովորող զավակների՝ Մինասի, Գրիգորի, Մանվելի, Ռուզաննայի ուղեկցությամբ, Թաթուլի ձեռքը բռնած, գնաց դպրոց: Հուշարձանի մոտ կանգնեցին: Սեդան չէր կարող անտարբեր անցնել: Զինվորի լռության ծոցում բաբախում էր նաև իր հոր՝ Սմբատի սիրտը: Երեխաները հասկացան մայրիկին, միայն Թաթուլը հարցական նայեց մոր անսովոր տխրությանը, որը միանգամից շաղվեց նրա աչքերում:

- Թաթո՛ւլ, բալես, իմ հայրը այս զինվորի հոգու մեջ է, մենք առանց նրա ապրեցինք, մեծացանք, բայց նա էլ չկարողացավ մեզնից հեռու լինել, եկավ, բարձրացավ էս բարձունքին, որ ամեն օր մեր աչքի առաջ լինի,- մեղմաձայն շարադրեց Սեդան:

- Սերգո ապարն էլ հիմա զինվոր է,- կարծես հայտնություն արեց Թաթուլը:

- Խաղաղության զինվոր է քո Սերգո ապարը, բայց իմ հայրը պատերազմի զինվոր էր,- փորձեց բացատրել մայրը:

- Խաղաղության զինվորը լավ է չէ՞, մա՛,- ասաց Թաթուլը և ավելացրեց,- ուզում եմ շուտ գա իմ ապարը:

- Կգա, շուտ կգա,- այս ու այն կողմից խոսքի մեջ մտան եղբայրները:

Մայրը ծաղկեփնջերից մեկը տվեց Թաթուլին և խնդրեց Ռուզանի հետ բարձրանան, ծաղիկները դնեն զինվորի ոտքերի առջև և շուտ ցած իջնեն: Այդպես էլ վարվեցին: Սեդայի ծանրացած սիրտը քիչ

թեթևացավ, քայլեց դպրոցի ուղղությամբ: Գնում էր, բայց փոթորկուն հոգին հոր հետ էր: Գրեթե չորս ամիս՝ հուշարձանի կառուցումից հետո, զգացումի նոր լույս էր նա հայտնաբերել: Սեդային պատկերանում էր անբացատրելի մի եղելություն, թե այս լուռ արձանը, բարձրահասակ ճակատային զինվորը գիտի, թե որտեղ է հայրը՝ Սմբատ Հարոյանը:

Ինքն իր համար այսպիսի քանի՜-քանի հեքիաթներ էր հորինել և միշտ ամենավերջում հորը անհայտությունից բերել, կանգնեցրել էր իրենց տան դիմաց, նրա աչքերով էր նայել ու ժպտացել, նրա սրտով էր պահել ցավը, նրա լռությամբ էր հասկացել ու ճանաչել հայրական կորուստը, որի հարազատ ու հեռացող կերպարը շարունակվում էր իր միամիտ, երբեմն լուռ ու անմարդաբնակ հեքիաթի խորքերում: Այնուամենայնիվ, Սեդային միշտ թվացել էր՝ թիկունքից կանչում է հայրը, տարիների ծանր ու թեթև ծոցերով հույս ու կարեկցանք է բերում, նաև՝ գուրգուրանքի չծաղկած փնջեր: Նրան պատկերանում էր թաքուն սպասումի և մեղկ թալիսմանների զնգոցը, որոնցով ինքը զգում էր կարոտների փխրուն տերևաթափը: Միամիտ մորմոքներից սթափված՝ այսօր էլ կտրուկ հետ նայեց. նույն արձանն էր՝ լուռ, խոնարհ, նույն փշրված հեքիաթներն էին նրա քարացած ոտքերին... Սեդան օրվա շողքից միանգամից զգաստացավ: Թաթուլը ամուր բռնել էր իր ձեռքը, աջ ու ձախ հպարտ քայլում էին մյուս զավակները: Մոր սիրտը վեհության տաճար հասավ, աղոթքի իր Ավետարանը հրեշտակաթև իջավ մտքի էջերին, Սերգոյի ժպտուն հայացքը վերագտավ, աշնան ամպերից ցած բերեց, հոգեվարս մայրաշոյանքներով հյուսեց զինվոր որդու դարձի ճամփան, որ Արեգից հեռու էր, արեգակի մեջ էր և տաք էր տվնջյան լուսերգով:

- Բարի՛ լույս, Սեդա՛,- Անդրանիկ Վարոսյանի հոգեթով բարևը անսպասելի էր: Սեդան բարևով պատասխանեց, ամաչկոտ ժպտաց և առաջ բերելով իր փոքրիկին՝ մայրական հպարտությամբ ասաց.

- Ահա մեր Թաթուլը, ընկե՛ր Վարոսյան:

- Ա՜, հրաշալի բալիկ է,- տնօրենը շոյեց տղայի խարտյաշ խոպոպները, որոնք համաչափ ալիքվում էին լայն ճակատից վեր և հարցրեց,- անունդ ի՞նչ է:

- Թաթո՛ւլ,- կտրուկ պատասխանեց փոքրիկը և բռնեց Ռուզանի ձեռքը:

- Եղբայրներդ, քույրիկդ լավ են սովորում, տեսնենք դու ինչքա՞ն կսիրես գիրքը, դպրոցը:

- Մեսրոպ Մաշտոցի չափ,- տնօրենի աչքերի մեջ ուղիղ նայելով՝ ասաց Թաթուլը և աչքի պոչով նայեց մորը:

- Իր պապն է սովորեցրել,- միջամտեց մայրը:

- Առաջին դասը լավ է սովորել,- ուրախացավ Վարոսյանը և Թաթուլի ձեռքից բռնած քայլեց նորաբաց դասարանի ուղղությամբ: Այստեղ հավաքված երեխաների կողքին կանգնած էին նաև ծնողները: Վարոսյանի մուտքը դասարան միանգամից խաղաղեցրեց բոլորին: Նրա խնդրանքով ծնողները մի կողմ կանգնեցին: Ուսուցիչներից Վոլոդյա Բարսեղյանը նստեցրեց աշակերտներին:

- Թաթուլին առաջին նստարանը վստահեք, որ Մաշտոցին մոտ լինի,- ժպտաց Վարոսյանը և ցույց տվեց թիկունքից նայող Մաշտոցի մեծադիր գեղանկարը:

Բարսեղյանն այդպես էլ արեց: Առաջին նստարանին կողք կողքի նստեցին Թաթուլն ու Արթուրը: Սեդան չէր թաքցնում ուրախությունը, հուզված էր և հպարտ: Նա չհամբերեց, մոտեցավ, գրկեց որդուն, համբուրեց մայրաբար և դուրս եկավ դասարանից:

Երբ տևական հնչեց առաջին զանգը, բոլորը ոտքի կանգնեցին: Զարմանալի մի բերկրանք այդ զանգի հնչյունների հետ պարուրեց ամբողջ դասասենյակը: Առաջին օրվա, առաջին պահի հուզական տարերքի մեջ երեխաների առջև բացվեց դպրոցական մեծ կյանքի վարագույրը: Թաթուլին միշտ ասել էին, որ առաջին դասարանում տառերը, թվերը սովորեցնելու է դպրոցի ուսուցչուհիներից որևէ մեկը, նույնիսկ ազգանունն էին ասել: Նրա առաջին զարմանքն այն էր, որ, երբ բոլոր մեծերը դուրս եկան, դասարանում մնաց բարձրահասակ մի տղամարդ: Նա զուսպ էր, բայց ժպտերես, դանդաղ անցավ երեք շարքերի միջով, մտերմաբար նայեց բոլորի աչքերի մեջ, մտքով փորձեց ճշգրտել՝ ով ում տոհմից է, ովքեր են ծնողները, ապա վերադարձավ և միանգամից նստեց ուսուցչական սեղանի առջև դրված կոշտ աթոռին:

- Երեխանե՛ր, ես ձեր առաջին ուսուցիչն եմ, իմ ազգանունը Բարսեղյան է,- նա հատ-հատ ասաց բառերը, հետո կտրվեց աթոռից:

Մեծ էր երեխաների հետաքրքրությունը: Նրանք միամիտ ու խեղճացած նայում էին իրենց ուսուցչին, աչքի պոչով զննում նրա շարժումները, բերանները բաց լսում էին, թե ի՞նչ էր ասում ընկեր Բարսեղյանը:

Թաթուլի հայացքը դիմացի պատին էր: Այստեղ փակցված մեծ-մեծ դիմանկարներից նա ճանաչում էր միայն մեկը: Այդ լայնաճակատ մարդու պայծառ դեմքն ու երկայն մորուքը տեսել էր իրենց տանը՝ եղբոր՝ Մանվելի գրքում: Իր պապն ու տատը այդ նկարի առջև բառեր էին մրմնջում և խաչակնքում իրենց դեմքը: Թաթուլը

տեղնուտեղը հիշեց այն օրը, երբ պապին հարցրեց՝ ով է այս հսկան, նա մեկ բառով պատասխանեց՝ սուրբ է: Հիմա այս դասարանում թե ի՞նչ էր ասում առաջին ուսուցիչը, լավ չէր լսում, նրա հայացքը չէր կտրվում Մաշտոցից: Այսքան մեծ նկար նա չէր տեսել երբեք. «Այ թե պապիկս տեսներ այս նկարը, ինչքան կուրախանար»,- մտածեց տղան և անհանգիստ շարժվեց նստարանին:

- Թաթո՛ւլ, ուշադի՛ր եղիր, այդ ո՞ւր ես նայում,- ուսուցիչը նկատեց, որ փոքրիկը մտքով ուրիշ տեղ է և իրեն չի լսում:

- Մաշտոցին,- չթաքցրեց նա և ձեռքով ցույց տվեց մեծ դիմանկարը:

- Մեսրոպ Մաշտոցը, երեխանե՛ր, ստեղծել է հայոց գրերը, որոնց օգնությամբ մենք գրում ենք և կարդում,- դասարանին դիմեց ուսուցիչը,- նա սիրում է նրանց, ովքեր ուշադիր են, շուտ են սովորում իր հնարած տառերը և երբ դրանցով սկսում են բառեր գրել, դառնում են նրա աշակերտները:

- Իսկ նա կգա՞ մեր դասարան,- այս ու այն կողմից ասացին մի քանիսը:

- Երբ իմանա, որ սովորել եք բոլոր տառերը և արդեն գրում եք իր անունը, անպայման կգա,- շատ լուրջ ասաց ընկեր Բարսեղյանը և մոտեցավ գրատախտակին:

Դասարանն արդեն նրա ոչ մի շարժում բաց չէր թողնում: Նա ինչ-որ գծեր էր գրում գրատախտակին, պարզ ու մատչելի բառերով դրանք բացատրում, ապա մեկ-մեկ խոսեցնում էր աշակերտներին:

- Շտապելու ոչինչ չունենք, երեխաներ, մենք դեռ շատ պիտի ծանոթանանք, հասկանանք մեր անելիքը, հետո միայն փորձենք մեկ-մեկ գրել և սովորել այբուբենի տառերը:

- Ես այդ տառերից կարող եմ գրել,- ոտքի կանգնեց Թաթուլը:

- Ե՞րբ ես հասցրել սովորել,- ուրախացավ ուսուցիչը:

- Ռուզան քույրիկս է սովորեցրել:

- Ապրես, որ գրել գիտես,- մոտեցավ ուսուցիչը,- բայց դա քիչ է, երեխաներ,- նա շրջվեց դեպի աշխուժացած դասարանը, որովհետև տարբեր նստարաններից հավաստում էին, որ իրենք նույնպես շատ տառեր ճանաչում են:

Ուսուցիչը հանգստացրեց աշխույժներին, խրախուսեց նրանց և չմոռացավ ասել, որ երկար օրեր կպահանջվեն դրա համար, ամեն բան իր ժամանակն ունի: Եվ երբ հնչեց դասամիջոցի առաջին զանգը, երեխաները բոլորվեցին Մեսրոպ Մաշտոցի պատկերի առջև: Ուսուցչի պարզ ու հասկանալի մտքերը պաշարել էին երեխաների

նուրբ հոգիները: Սկսվել էր կախարդական վայկյանների վերադարձը, որից այսօր իր բաժինն էր վերցնում Արեգի դպրոցի առաջին դասարան մտած քսանչորս աշակերտ:

* * *

Այս գոգահովտում ուս ուսի, աննկատ անցան տարիները: Ժամանակները սահեցին Արեգ գյուղի միջով, փոխվեց շատ բան: Միայն Արտին լեռը մնաց նույնը: Այն գարնանից հետո, երբ անհետ կորած զինվորը բարձրացավ գյուղամիջյան բլուրին, անցել էր տասը տարի, գյուղի կողքին՝ լեռան հայացքի տակ, ընդարձակվել էր գերեզմանատունը: Թարմ շիրմաթմբերին նոր քարեր էին դրվել՝ կարմիր ու վարդագույն, նաև գրանիտե հուշաքարեր: Արեգը մեկ-մեկ կորցրել էր նախիջևանցի ու ծփնեցի մեծերին: Գյուղի տներում հավաքական թախիծ կար: Արեգը կամաց-կամաց բաժանվում էր էրգրի երակից, գնում էին մեծ ցավի տերերը, կարոտի զարկերակը ո՞վ պետք է լցներ արյան նոր շռինդով: Սակայն գնացած մեծերը հասցրել էին թողնել իրենց դասը, իրենց հառաչանքի ըմբոստ տեսակը: Նրանք միշտ էլ հավատում էին, որ Արեգի օրոցքը չի կարող մոռանալ գաղթականի կարոտն ու արդար պահանջը: Չէ՞ որ նրանց պատգամ-ըղձանքների անթառամ փունջը ծնվող մանուկներից շատ առաջ է զորանում օրոցքների փափուկ պատերի մեջ: Ո՞վ չգիտի, որ աշխարհ եկած արեգցի զավակը իր բաժին օրոցքում Արտին լեռան շնչով է դառնում հողեղեն, ապա համրությունից ջոկջոկված՝ առնում է իր պապի ճիչը, պահում նրա աչքի բոցը, ճաք տված սրտի արյան գույնը, նրա արթուն բարբառը, բառի ծոցում արծիվների կանչը և բարձունքների խաչը Արտին սարի կատարին:

Տասը տարի առաջ և նույնքան ժամանակ անց՝ այսպես էր Արեգի վկայությունը, նրա վարքը միշտ էլ խղճի ալեկոծ լուսաբաց է եղել, ոգենորոգ ազատություն՝ ոսկեշղթա հիշատակներով և հիշողությամբ: Ո՞վ իրավունք ուներ մոռանալու նրանց, ովքեր արեգական էրգիրն այստեղ բերեցին: Թեկուզ բոկոտն, վտարանդի և անտուն էին նրանք, բայց թե հասցրեցին Փիրմալաքի մարող փշրանքների վրա Արեգ հյուսել, վերընձյուղվել նորոգ բաղձանքներով:

Այսպիսին էր Արեգը՝ իսկական պատկերով ու ընդգծված, սակայն պակասել էր գյուղի խիղճը, գնացել էին մեծերը՝ Տեփո պապը, Արամն ու Մարկոսը, Աշոտն ու Անդրանիկը, Հրաչն ու Սմբատը...

Նրանցից ամեն մեկի վերջին ճանապարհին մասնակից էր ամբողջ գյուղը: Գալիս էին նաև հարևան գյուղերից, շրջկենտրոնից, հա-

վաքվում էին համերկրացիները: Իսկ Թալինի լեռնահովտի բոլոր գյուղերում գաղթականի կորուստը խորը վիշտ էր պատճառում: Արեգը այդ ամենի վկան եղավ: Մարդիկ, տխրուն ու փշրված տրամադրությամբ, գալիս էին անբացակա մի երդումով, խոսում էին և այնպես ափսոսում, կարծես եկել էին ամբարելու հեռացողի հոգու կարոտը՝ գիտենալով, որ էրգիր տանող այրված սրտի մի կամուրջ էլ փլվեց: Էրգրի շուքով ու երազներով իրենց կյանքն ապրած ամեն մի գաղթականի հուղարկավորություն առիթ էր անծավալ հիշողության, որի բերած մարմանդ ու հոգեմաշ տխրությունը դառնում էր պատգամի դաս: Տիրանվեր խոսքեր էին հնչում, ազնիվ կանչերով հյուսում էին գնացողի անունը՝ չմոռանալով տոհմը, պապը, էրգրի ծննդավայր գյուղն ու քաղաքը, բռնագաղթը, վերածննդի ու փրկության շողն այստեղ՝ Թալինի փոքր ու մեծ բարձունքներին, Արագածից Արեգ ձգվող դարավանդների վրա:

Արեգը կորցրել էր նրանց, ովքեր դարասկզբին բախվել էին կորստաբեր սև հողմերի, հազարազարկ վերքերից ապաքինվել ու վերստին բարձրացել էին: Նրանք, իրենց բաժին պարտքը փակած, գոցում էին աչքերը: Միայն նրանք գիտեին, թե ի՞նչ էին տանում փակ կոպերի տակ. թրթռացող կարոտների ամենավերջին պատկերներ, անկատար երազների երանելի աստղացոլք, որով, ըստ նրանց, պետք է լուսավորվեր իրենց երկնային հոգին: Միայն նրանց էին հասու այն ավարտուն մեղեդին, հոգեդարձի և հեռացման պատարագը, որոնց դալուկ հնչյուններով անջատումի սգերգը օծում էր կարոտաբաղձների վերջին մորմոքները:

Գնում էին դարասկզբի գաղթականները: Կյանքը շարունակվում էր, ոգեղենի ցանքը ծիլեր էր տալիս: Փոխանցումների փառքերն աննկատ հյուսվել էին կյանքի անցուդարձին, խորհուրդ-կանչերը ձայնագրվել Արտին լեռան մշտահայաց պատկերներին, լանջ ու ձորակներին, գյուղ իջնող ճամփաներին, արտերին կանաչ, փողոցներին արթուն: Ամենուրեք անցյալի խճանկարից ծաղկած գույներ էին, զրույց-իմաստություններ, տների արևահայաց պատերին նորաքանդակ, նուրբ մատնահետքեր, մոռացված կալերի կողքով դեպի լերկ սարալանջը ձգված ոտնահետքեր:

Արեգը գյուղի հին սահմաններից դուրս էր եկել, թևարձակ փռվել բոլոր կողմերում: Նախկին թաղամասերը լայնահուն շրջան էին կազմել, շարք էին մտել նորակառույց տներ: Դպրոցն ու հուշարձանը գրեթե հայտնվել էին գյուղի կենտրոնում: Արեգի մեծ խորհուրդը, նրա արարման ձիրքը ծիածանի պես փռված էին շենի

չորս կողմերում: Երգը կար՝ համն էր պակասել, պարը թնդում էր՝ էրգրի շռինդը չկար, խոսքն ու զրույցը շարունակվում էին՝ բարբառի տեսակն էր խամրել: Այդ պակասությունը մի օր պետք է կռիվ տար իր թափուր տեղի համար: Ժամանակ էր պետք, որ ինքնայրումի ու ճանաչման ոգին վերաստեղծ փայլով հազարարմատ դառնար Արեգում: Այդ պակասությունը ցանովի ու հնձովի չէր, որ հետո կալսեին, ամբար-ամբար պահ տային: Այդ կենսաձայն ոգին գալիս էր գյուղի կողմնացույց ուղիներով, որը գաղթից հետո մեծերը շուրջ կես դար պահել, պահպանել էին Արտին լեռան համբերությամբ: Այդ ոգին վերադառնում էր նաև վերջին ճանապարհից, որով գաղթական այրերը մեկ-մեկ գնացին հավերժություն: Դարձի այդ աներևույթ օրենքը լուռ ըմբոշխումով բացում էր իր քարտեզը, ներքին հմայքով ցուցանում էր գյուղի տարածն ու բերածը, տարիների շանթը, տարագիր կարոտն ու բնավորված հիշողությունը՝ իր արծիվ-արծիվ կանչերով:

* * *

Արեգի դպրոցը հոկտեմբերի առաջին կիրակի օրը սպասում էր հյուրերի: Հուշարձանի բացման տասներորդ տարելիցի առիթով դպրոցի տնօրեն Անդրանիկ Վարոսյանը հայտարարեց այդ մասին, շրջանային թերթում գրվեց, նամակներով տեղեկացվեցին բոլոր նրանք, ովքեր, թեկուզ կարճ ժամանակով, անցել էին տեղի դպրոցով, սովորել էին այստեղ և հանգամանքների բերումով ավարտել էին այլ դպրոցներ, ովքեր աշխատել կամ ընդհանրապես առնչվել էին գյուղին, ներկայացնում էին այս կամ այն տոհմը և, իհարկե, նաև նրանք, ովքեր իրենց գործունեությամբ հայտնի մարդիկ էին:

Նշանակված ժամից առաջ մարդաշատ էր դպրոցի ճամփան: Գյուղի տարբեր կողմերից գալիս էին տեղաբնակ և դրսում ապրող շրջանավարտները՝ այս դպրոցի «զավակները»: Նրանք տարբեր տարիքի էին՝ տղամարդ և կին, գալիս էին շարք-շարք, զրուցում, կատակում էին, այս ու այն տան առջև կանգնում, ձեռքով ցույց տալիս դաշտի ու լեռան ճամփան: Տներից դուրս էին թափվել երեխաները, տարեցները գոհունակ ընդունում էին եկվորների բարևը, օրհնանքի խոսք ասում և հրճվանքով նայում նրանց թիկունքից:

Գյուղի դպրոցն անհուն սիրով արծվականչի շեփոր էր հնչեցրել: Դպրոցի կամարների տակ բովանդակ վսեմություն էր, երջանկության, հույզերի անբռնազբոս ծփանք: Հաղորդության պահ էր, մեկի ու բոլորի հաշվետվությունն այն կրթօջախին, որին պարտական էին իրենք:

Երախտագիտության լուսավոր գետը ափերից դուրս էր եկել, հորդում էր հոգիների զրույցը: Նախկին սաներն իրենց դասարաններն ու ծանոթ անկյուններն էին փնտրում, հիշում դեպքեր, մանրամասներ, փնտրում մտերիմ դեմքեր: Պատերի բովանդակ զարդարանքների մեջ առանձնանում էին լուսանկարների վահանակները, տեղեկություններ արեգցի նշանավորների և Արեգի դպրոցն ավարտած այն անհատների մասին, ովքեր առանձնանում էին իրենց ուրույն կենսագրությամբ, դարձել էին հանրաճանաչ մարդիկ:

Մեկ ժամվա ընթացքում այնքան բազմություն էր հավաքվել դպրոցում, որ ազատ շարժվելու հնար չկար: Բարձրախոսներից հնչող ազգային երաժշտությունը մեկ-մեկ ընդհատվում էր, այդ ընթացքում հաղորդավարը հակիրճ ներկայացնում էր դպրոցի պատմությունը, ջերմորեն խոսում առանձին անհատականությունների մասին, ապա երաժշտությունը դարձյալ ողողվում էր մեծ սրահներում, դասասենյակներում, հորդում բաց լուսամուտներից դուրս:

Տոն էր դպրոցում: Ազատ էին ամենքը, կարծես կարոտի անդուլ եզերքներից էին իջել բոլորը: Նրանց խոսքը հոգեբարբառ էր ու մեղեդային, հուշերի փակ դռները անդիմադրելի բացվել, տանում էին Արեգի զավակներին: Ու երբ հնչեց դպրոցի տնօրենի ձայնը, բարձրախոսները կլանեցին հավաքական զրույցը, աշխույժն ու ծիծաղը մարեցին դանդաղ, դպրոցի հարկի տակ ծաղկեց լռության ոսկեշերտ հարգանքը այն ուսուցիչների նկատմամբ, ովքեր ժամանակից շուտ հեռացել էին կյանքից: Ապա հրապարակվեցին անուններ, որոնք Արեգի հպարտության խորհրդանիշներն էին: Նրանք գիտության ու դպրության մարդիկ էին, նաև հասարակական գործիչներ, կյանքի տարբեր բնագավառների առաջամարտիկներ: Հպարտության այդ մեծ փաղանգից անունները բարձրախոսից իջնում էին ծափերի ուղեկցությամբ, անթաքույց մի հրճվանքով, որը հատուկ էր վաստակած ամեն կրթօջախի, որի մատուցած ծառայությունները զուր չէին կորչել: Արեգում փառաբանման տուրք էր և հիշողության դաս: Ոչ ոքի չէին մոռացել, բացականերն ու ներկաները անուն առ անուն գնահատվում էին՝ դասակարգվելով ըստ տարիքի ու տարիների: Նաև ըստ վաստակի: Թվում էր՝ դպրոցը նոր էջ էր բացել. բնութագրական տեղեկանքներից, թվերից ու փաստերից բուրում էր լուսավոր հպարտությամբ օծված անկեղծությունը: Դպրոցը արդար խոստովանանքի էր բերել Արեգի նոր պատմության վկաներին:

- Հայաստանի ազգային ակադեմիայի ակադեմիկոս Արշալույս Գաբրիելյան,- տնօրենը դեռ չէր ավարտել խոսքը, երբ թնդացին

ծափահարությունները: Նա այդ նույն ոգևորությամբ շարունակեց,- Հողմիկ Սարգսյան՝ գիտությունների դոկտոր, Ելենա Համբարձումյան՝ քիմիական գիտությունների դոկտոր, Հենրիկ Համբարձումյան՝ գիտությունների դոկտոր, Արշակ Միրաքյան՝ գիտությունների դոկտոր, Արտավազդ Դարբինյան՝ պատմական գիտությունների թեկնածու, Նորիկ Գալստյան, Աշոտ Քոչարյան, Ժորա Քոչարյան, Ռուբիկ Քոչարյան, Խաչիկ Մկրտչյան, Մկրտիչ Մկրտչյան, Ժորա Գրիգորյան, Վալտեր Գրիգորյան՝ գիտությունների թեկնածուներ, տարբեր բուհերի դասախոսներ:

Դարձյալ որոտացին ծափեր, հնչեց երաժշտությունը: Նա ձեռքը բարձրացրեց՝ հասկացնելով, որ շարունակում է խոսքը.

- Հիշենք մեր մեծ ուսուցչին՝ Իսրայել Միրաքյանին, նրա որդուն՝ բազմաչարչար ու բազմավաստակ Գևորգ Միրաքյանին, գնահատենք նաև հասարակական ու պետական աշխատանքի նշանավոր այլ այրերի՝ գեներալ-մայոր Հմայակ Հարոյանին, Բաբկեն Հարոյանին, Գառնիկ Հարոյանին, Սմբատ Մելքոնյանին, Աղասի Կարապետյանին, Թաթուլ Կարապետյանին, Հմայակ Սարգսյանին, Ալեքսան Կարապետյանին, մեր գյուղի շենացման ու դպրության գործին տարբեր ժամանակներում իրենց ներդրումը ունեցած կոլտնտեսության ղեկավարներ Աղասի Համբարձումյանին, Հրաչ Նիկոյանին, Անդրանիկ Սվազյանին, Թոռնիկ Հարոյանին, Պարույր Բաղդասարյանին և շատ-շատերի:

Այնուհետև խոսափողին մոտեցան տարբեր սերնդի ներկայացուցիչներ, որոնց խոսքից դահլիճը ողողվեց հուզմունքի և երախտագիտության ալիքով: Սրահներում հաճելի արձագանք էր՝ բռնկված այն մեծ սիրով, որն Արեգ գյուղինն էր, նրա անկորնչելի պատմության վկայականչը: Գյուղի մեծ ճանապարհը և նրա նշանավոր մարդկանց էջերը այնպիսի կատարելությամբ էր ներկայացնում դպրոցը, որ շատ անուններ, մանրամասներ ու փաստեր նոր երանգով էին ընդգծվում: Անծավալ խորհուրդը բերկրանքի և ինքնահաստատման յուրատեսակ ասպարեզ էր բացել, կարծես հուշում էր, թե ճանաչեք Արեգի զավակներին, նրանց թռիչքն ու փայլը, նրանց մեծ վաստակի մշտածաղկուն դաշտը: Իսկ հետո, երբ արդեն կողք-կողքի էին թվերի ու փաստերի համահավաք շարքերը, երբ տարեվկա մատյաններում գրանցվել էին Արեգի «դափնեկիր» մարդիկ, ասպարեզ մտան 9-10-րդ դասարանների աշակերտները: Նրանք հատուկ ելույթ էին նախապատրաստել «Արեգ գյուղը երեկ և այսօր» խորագրով: Ներկաների աչքի առջև գյուղի պատմությունն

էր, որն առնչվում էր ժամանակների կարևոր իրադարձություններին, մարդկանց և տարբեր սերունդների ճակատագրերին:

Այդ գիշեր դարձյալ քուն չեկավ Արեգի աչքին, բոլոր տներում վերադարձի ու վերհուշի գյուղական ասքն էր: Նոր սերունդը նախորդի ակունքներից չէր հեռացել, նախորդների հոգու անծավալ մատյանն էր թերթել, վերահաստատման կամքով այդ լուսավոր մատյանների երգն ու տաղն էր քամել, այդ ակունքների ցավն ու տենչանքն էր կրկին քննել: Նախնական ծրագրով կամ ճառերով ու նախագծերով չէին հյուսվել այդ հանդիպումը, վերհուշն ու պապենական վարքը: Պարզապես փոխանցումի «բաց խրախճանք էր», հույզի, կարոտի, ինքնաճանաչման ողջերթ և արյան դաշնության օրենք: Այսպիսին էր այդ օրը Արեգում, նորոգ ավետիսների ձայնարկու կրակները վառվում էին բոլոր սրտերում: Գյուղը իր հին ու նոր զավակներին տուն էր բերել, անցյալ ժամանակով նույնիսկ չէին խոսում կյանքից հեռացածների մասին, ներկայի ոսկեբերան թրթիռներով գաղթականների տոհմածառը շշուկ-շողերգ էր հագնում, և բոլորը՝ տոհմիկ մաճկալ ու հացվոր, երազուն պատանի ու գիտնական, բազմազավակ տատ ու մայրեր, մարտիկ ու մտավորական, լրացրել էին գյուղի լուսանցքները: Արեգը Արտին սարի նման լիքն էր ու մտախոհ, բարձր էր ու արևատենչ:

Այդ գիշեր երիտասարդների աչքերով գյուղը հենց այս խորհուրդն էր վավերացնում: Սերունդը փառաբանում էր նրանց, ովքեր չմոլորվեցին ալեկոծ աստղերի տակ, պապոնց արմատների խշշոցը պահեցին իրենց ունկերում, չհեռացան Արեգի ցավից, տեր դարձան նրա ցնծությանը:

Մեծերի իրիկնային կանչերով մայրամուտից հետո երդիկաբույր օջախներում հորդում էր ավանդապատումը, որն Արեգի հարընթաց հոգիների խոստովանանքն էր:

Գյուղը ներկա-բացակա էր անում, մեծարում էր ինքն իրեն, հպարտ էր և արժանապատիվ: Իսկ դպրոցը շարունակում էր թերթել գաղթականների զավակների «լինելիության մատյանը»:

* * *

Բակում՝ պատից դուրս մնացած և աթոռի նմանվող հարթ քարին, նստած էր Գուլո տատը: Այստեղ իր անցած կյանքի ծանր բեռով ընկղմվում էր ամուսինը՝ Մարկոսը, որը տասը տարի առաջ հեռացել էր կյանքից: Ուսերն ու թիկունքը ծածկող ծաղկավոր գլխաշորի տակից Գուլո տատը նայում էր փողոցի անցուդարձին, հայացքը

մշուշոտ էր, չկար նախկին աշխուժությունը, ամեն ինչ քննարկում էր մտքում, ինքն իրեն խոսում ու պատասխանում էր, նեղսրտում ու միամիտ ժպտում: Մարկոսի հեռացումը նրա սրտում թողել էր ցավի մի անսովոր բեկոր, որը տասը տարի շարունակ հողմահարվում, բայց չէր մաշվում: Ծեր կնոջ թել-թել դիզված զգայապաշարը չէր հեռանում հնօրյա հուշերից, ամուսնուց, համերկրացիներից: Հիշողությունը տեղն էր, միտքը՝ պայծառ, և դրանից օգտվում էր Թաթուլը: Տատն էլ ուզում էր ամեն լավ բան՝ երգ, առակ, ասացվածք, էրգրի պարեղանակներ, պարային շարժումներ, էրգրից բերած սար ու ձորի, աղբյուրների ու վանքերի համն ու հոտը, նաև կռվող ու ֆիդայի տղաների պատմությունը հաղորդել թոռանը: Տաք զրույցի առիթը Թաթուլն էր տալիս, օրվա բոլոր ժամերին աղաչում-պաղատում էր նրան, խոսակցությունն այնքան սրտամոտ էր տանում, որ Գուլո տատն իր խնդրանքը չմերժեր:

«Ըսեմ, ի՛մ ախպեր»,- սա էր տատի խոստովանանքի առաջին խոսքը. ասում էր մեկ-մեկ, ակամայից դառնում էր ավելի շարժուն, աչքերում պեծ-պեծին էր տալիս հին կրակը: Տեսնելով թոռան ուրախությունը՝ ուզում էր տեղից պոկվել, պարել նրա հետ, բայց ծանրացած էր մարմինը, ծնկներում ուժ չէր մնացել. «Չեմ կրնա, իմ ժամանակն էլ անցավ»,- ասում էր ու կախում գլուխը, չէր ուզում տխրեցնել իր շուրջը բոլորած թոռներին: Ու եթե Սերգոն, Մինասը, Մանվելը, Գրիգորը և տատիկին հատկապես գուրգուրանքով վերաբերվող Ռուզանը չէին ուզում վերհուշի դառնություններով չարչարել Գուլոյին, հակառակն էր պնդում Թաթուլը:

«Նրանք իրենց բաժինը վերցրել են, իմը դեռ չես փակել, տա՛տ»,- համառում էր Թաթուլը և հարկադրում նրան, որ երգը կրկնի, պարեղանակի բառերը հատ-հատ ասի, էրգրի մանրամասները չմոռանա, որ ինքը հասցնի գրի առնել: Թաթուլի բծախնդրությունը կոնկրետ պատճառ ուներ: Նա ընդգրկված էր դպրոցի և ակումբի երգի-պարի գեղարվեստական ինքնագործունեության խմբում: Գուլո տատից վերցրած ամեն մանրուք նա տեղափոխում էր այնտեղ, հուշում, հորդորում, թե ինչպես կարելի է սկսել երգը և ավարտել պարը:

* * *

Թաթուլը նրբանկատ էր, զգայուն, նրա աչքից չէին վրիպում ժողովրդական ինքնատիպ կատարումները, պարի դանդաղ, ապա փոթորկի վերածվող տեսարանները: Եվ այդ ամենը նա կրում էր որպես հավատամք: Երբ արդեն ավարտել էր դպրոցն ու գիտեր,

որ բանակ են զորակոչելու, երկու տարի պիտի հեռու լիներ, գյուղի մեծերի երգերը, կարոտի կանչերը, Կաղզվանի պարերի շարժուն գույները մի առանձին գորովանքով էր պահում-պահպանում: Ափսոսանքի մի թանկ իրողություն նրան մղում էր փրկելու գյուղի բանահյուսությունը, հեքիաթն ու առակը, երգն ու պարը: «Անդունդից դրանք պիտի հետ պահենք, փոխանցենք»: Այս կրակը նոր չէր տաքացնում նրա սիրտը, այն քաղել էր Մարկոս պապից, գյուղի մեծ հարսանիքներից, ուր նա թաքնվում էր մի անկյունում, ակնապիշ նայում էրգրի զավակների շարժումներին, սովորում պարեղանակը հյուսող և իրար պատասխանող նրանց երգեցիկ ու զվարթ խաղիկները: Զարմանալի մի հետաքրքրասիրություն, հայրենաձայն զգացումների բովանդակ մի հանդես էր բացվում Թաթուլի հոգում, երբ գյուղում հարսանիքներն ու խնջույքները պատռում էին լռության ծվարը, գտնում դարձի օրորը: Ինքը խառնվում էր դրանց, ձուլվում մեծերի շարքում, հայտնվում էր պարը տանող զուգերգի ծփանքների ծոցում, նաև երգում էր յուրահատուկ տենչանքով, բոցեբաշ, դառնում էր իր հայտնության բաղձանքը, լցվում հավատամքի խրախույսով:

Թաթուլն ուրախ էր, որ հավաքում էր ու չէր կորցնելու պապ Մարկոսի, նրա վաղամեռիկ հորեղբոր՝ Մինասի, իր ծնողների՝ Ժորայի և Սեդայի անուշիկ ու անթառամ երգերը: Բայց մեկը կար, որի իմացության, հարուստ ներաշխարհի առջև խոնարհվում էր՝ Գուլո տատն էր: Տարիների սրբազան սերուցք կար նրա սրտում, տաք, թրթռուն հույզերի մի անսպառ աշխարհ, որտեղ Թաթուլն իրեն զգում էր արևածագի առջև, լուսնթագ, սիրազեղ ու աստղածրար: Գուլոյի երգի հմայքը էրգրի հիշողության հանճարեղ խտացում էր, անվերջանալի մի լեգենդ, որին անաղմուկ ոտնաձայներով էր մոտենում Թաթուլը: Տաճար տանող ճանապարհ էր ասես, բույր էր՝ ճերմակ շուշանների դաշտում: Այնտեղ իր տատի անզուգական երգն ու հոգու եղանակն էր փնտրում Թաթուլը:

Իսկ տատն այսօր տխրամած էր, որոնող հայացքն ու հոգեձայն արձագանքները հեռուներից տուն էր բերել:

Բակում՝ քարե աթոռին նստած՝ Գուլոն մտքերի մոլոր եզերքներից դանդաղ վերադառնում էր՝ հուշերի զիգզագ ճանապարհին հանդիպելով բազում մարդկանց, հարազատների, համագյուղացիների, որոնք արդեն չկային, հեռացել էին վաղուց: Գուլոն իր պաղ գոգի մեջ այնպես էր խաչել ցամքած ձեռքերը, ասես, աշուղական իր քամանչան էր սեղմել կրծքին: Անծանոթին կթվար՝ ուր որ է կշարժվեն մատները, և մորմոք-մեղեդին փափուկ սահքով կիջնի

ծեր կնոջ ձյունափառ ճակատից: Անդարձորեն խիտ էին խաբրիկ բերող նրա հոգու կանչերը, լիքն էր սիրտը, շուրթը դողդոջ բառերի հուշաքար էր՝ խորքերում արձագանքների արևադարձ: Սակայն ներսում խաղա՜ղ-խաղա՜ղ էր, գիտեր, որ պարտք չունի, մաքուր էր իր տեսած ու ապրած աշխարհի հանդեպ, իր թողած հանդ ու արտի նման արգասավոր էր ու տաք, շողի պակաս չէր ունեցել, տաղերի մեջ տող ուներ, խաղերի մեջ՝ խաս օրոցքների շարք: Հիմա այդ շարքերի շուքն էր կախվել վերին կապույտից, ծնծղաձոր իջել, խաղում էր նրա ճերմակ խոպոպների հետ: Գուլոն նայում էր զարմացած և իր անկշտում հայացքով անկարող էր թաքցնել մաշված, բայց երանելի աղաչանքների պարսը: Նրա հարսը՝ Սեդան, գիտեր սկեսրոջ թուլությունները: Մարկոսի մահից հետո դրանք առավել նկատելի էին դարձել: Գուլոն առանձնանում էր, գլխաշորի տակ թաքուն արտասվում, վշտից ինքնամաքրվում, հետո կանչում էր թոռներին: Ու երբ հավաքվում էին բոլորը, արթնանում էր տունը: Տատը անցյալի քնքուշ հիշողություններ էր քամում նրանց պարերից ու պարեղանակներից: Նա վեհանում էր, որ պապենական երգ ու պարի տեսակը շարունակվում է: Իսկ դրանց իսկական գույնն ու համը, յուրատեսակ բույրը տատն ամենից շատ առնում էր Թաթուլի կատարումներից: «Ե՞րբ է հասցրել էդքան մոտենալ իր պապու երգին ու պարին, կըսիս Նախիջևանում է ծնվել, մեծացել է էրգրու մարդկանց հետ, էնտեղից է հավաքել իր բաժին երգն ու լույսը...»: Այս եզրահանգումը նա բաշխում էր Թաթուլին, նույնիսկ այն ժամանակ, երբ թոռը գիշերվա կեսին որևէ դեպք կամ էրգրի մարդկանցից լսած և ինչ-որ ժամանակ բերնեբերան անցած որևէ պատմություն էր ուզում պարզաբանել: Արթնացնում էր տատին, մի երկու քնքուշ բառ ասում, ապա ստուգում, համոզվում, գրի առնում և հետո միայն հանգիստ էր տալիս նրան:

Եվ այսօր էլ, թիկունքով հենված արևկող պատին, Գուլո տատը այդ մանրամասներն էր շարում մտքի թելերին, զրուցում դրանց հետ, մոտ ու հեռուներից մեկ-մեկ բերում ու ճամփու դնում: Պատահում էր, որ վերագտած ժպիտը հոգնած խաղերով թրթռում էր ճակատից ճյուղավոր իջնող խորշոմների խորքերը, հետո դրանք արագորեն անհետանում էին, ինչպես սարից խրտնած պաղ քամիներն աշնան ձորում: Այդ սառնությունը շոշափելի զգում էր Գուլոն, երբ սթափեցնող պաղ շունչը բացում էր նրա հոգու դռները: Առաջացած տարիքում անգամ նա տիրապետում էր շրջակա ձայներին, երկիր-երկնքի թալիսմաններն էր կարդում իր մեջ, իրենով

խաղաղեցնում էր մոտեցող տագնապը, այն անսովոր կանչը, որն օր օրի ուժգնանում էր, մոտենում, պաշարում էր անդիմադրելի: Գուլո տատը հասկանում էր դրա լեզուն. երկնքի բարբառն էր, կապույտ էր, անհասանելի ու բազմաձայն: Նա գյուղի գնացած-հեռացածնե-րի պատկերները մեկ-մեկ վերհիշում, մտքով հասնում էր նրանց տուն ու բակ, հոգու քարտեզի առաջ մշուշներից ջոկում, նկարում էր նրանց տխուր և ուրախ դեմքերը, կարեկցում վշտից ճաք տված որդեկորույս մայրերին, էրգրի կարոտից հրկիզված նախիջևանցի-ներին ու ծփնեցիներին: Ամեն օր նրանք ներկա էին՝ անբացակա, ճչացող ու կարեվեր:

Գուլոյին հանկարծ թվաց՝ դողդողում է քարե աթոռը, թեքվում աջ ու ձախ և նրա հետ՝ տան պատը: Խաչված ձեռքերը ինքնաբերաբար պոկեց իրարից, աջով կառչեց պատի ճեղքից, որ հանկարծ չգլորվի:

- Տա՛տ,- թոռան տաք ձայնը իջավ մինչև սրտի հատակը: Նա ծանրածոց բացեց աչքերը, խուլ տնքաց:

- Թաթո՜ւլ,- բառը տաք շրշյունով ճեղքեց ձայնալարերի ճոճքը, մեղրածոր թառեց ձիգ ձգված տագնապներին: Գուլոն ճպճպաց-րեց աչքերը, խորքերի մոլորյալ ժպիտը չափի բերեց ու դանդաղ մարեց թոռան գրկում: Թաթուլը նայեց նրան, սիրտը ճմլվեց ու ցավոտ ալիքվեց:

- Տա՜տ...

- Համբերե, կանցնի, արև զարկեց ու գնաց,- հանգստացրեց տատը:

Տնեցիները նրանց ձայնից դուրս եկան: Սեդան ծունկի իջավ, գորովանքով գրկեց Գուլոյի փառահեղ գլուխը, դրեց կրծքին և թախծալի ժպտաց:

- Արևը զարկեց,- արդարանում էր տատը՝ նայելով իր շուրջը հավաքված թոռներին:

Ժորային արհեստանոցից կանչեցին: Եկավ, նստեց մոր կողքին, ձեռքը բռնեց, սիրտը համաչափ զարկում էր:

Սերգոն, Մինասն ու Թաթուլը գրկեցին նրան, ներս տարան: Տատի սրտով չէր:

- Տղա՛, ես ոտքեր չունի՞մ,- առարկում էր նա. թեև զգում էր, որ ծնկները թուլացել էին, բայց չէր դժգոհում, չէր ուզում իր պատճա-ռով իրարանցում գցել տանը: Ժորան շտապեց բժիշկ բերել:

Իրիկնադեմին շրջկենտրոնից եկավ բժիշկը, նրա հետ Գուլոյի եղբոր տղաները՝ Ալեքսանը և Աղասին, որդու՝ Թաթուլի հետ: Տա-տը, նրանց տեսնելով, այնքան զգաստացավ, որ առանց բժշկի

խորհուրդները լսելու՝ անկողնուց կտրվեց, նստեց ու ձեռքերը լայն տարածելով՝ գրկեց նրանց:

- Տեփանիս բալեք, ձեր համ ու հոտին մեռնիմ,- ասաց ու աչքերը թրջվեցին,- Ժորա՛, ապրի՛ս, իմ հարազատներին շատ էի կարոտցել:

- Հորաքո՛ւյր, մի՛ հուզվիր,- նրան ամուր գրկեց Աղասին և խնդրելով պառկեցրեց:

- Այո՛, այո՛, հուզվելու կարիք չկա,- միջամտեց բժիշկը՝ բացելով բժշկական պայուսակը, այնտեղից դուրս բերեց գործիքը:

- Էդ սատանի սարք ինչի՞ համար է,- տատը չթաքցրեց իր հումորը:

- Մարդու համար է, հորաքո՛ւյր,- ծիծաղեց Թաթուլը՝ Աղասու որդին:

- Քեզի կհավատամ, ախպո՛ր տղա,- հանգիստ ասաց Գուլոն ու բժշկի առաջարկով ոսկրացած ձեռքերը պարզեց վերմակին:

Տան մեծ սենյակում գրեթե բոլոր հարազատներն էին: Գուլո տատի հանկարծակի թուլությունը տագնապի կոչով նրանց իրար գլխի էր հավաքել: Բժիշկը մեկ ժամից գնաց: Անհրաժեշտ ներարկումներից հետո Գուլոն «վերադարձել էր» նախկին աշխուժությանը: Նրան այցի էին եկել նաև իր տարեկից կանայք, հարևանները: Ժորան ու Սեդան մեծ սեղան էին բացել: Տագնապը անցել էր, և հիմա, ավանդական օջախի ուրախությունը կրկին նվաճել էր իր սահմանները:

Աղասին ու Թաթուլը՝ հայր ու որդի, չէին շտապում գնալ: Գուլո տատն այնքան ջերմ էր նրանց հետ, մոռացել էր ինքնամփոփ, լուռ ու ինքնատանջ մտքերը, հարցնում էր մյուսներից, խոսում հաստատ՝ ուրախություն պատճառելով շրջապատին:

- Մարե՛, բժի՞շկը քեզ օգնեց, թե՞ Տեփան քեռու զավակները,- կատակեց Ժորան:

- Ամեն բան ուր բժշկությունն ունի, տղա՛, մեկը մյուսի հետ մի՛ խառնե,- անառարկելի հնչեց մոր խոսքը:

Ժորան փորձում էր կենսական հուն վերադարձնել մորը, գիտեր, որ իր զավակներից ու թոռներից բացի, երբ խոսք էր գնում նրա հայրական տոհմի մասին, Գուլո մամը ասես երկինք էր ճախրում, մեկ Աստված, մեկ Կարապետենք՝ աղոթք էր շշնջում և դառնում էր մի ուրիշ ոգի: Հիմա էլ Ժորան դարձի բերեց նրան՝ շոշափելով մոր զգացումների և թանկ հիշողության դաշտը:

- Կնայիմ Աղասուն, Ալեքսանին, ու իմ աչքերու առաջ կկանգնի Տեպանը,- որդու խոսքը հաստատեց մայրը,- առյուծի ուժ ունին, աշխատող ու բարի են, ամեն մեկը մի չինարի ծառ... էդպես չէ՞,-

հարցումով նա ստուգեց բոլորի հայացքները:

- Էդպես է, մարե՛,- առաջ ընկավ Ժորան և գրկեց հաղթանդամ Աղասուն: Նրանց գավաթները շրխկացին, Գուլո մամի կենացն էին առաջարկել:

Երեկոն դանդաղ պարուրում էր Արեգ գյուղը:

* * *

Հուլիս ամսվա վերջին օրերին շոգը Արարատյան դաշտից տաք տուրքերով բարձրանում էր լեռները: Սարալանջերին փռված ցորենի ոսկուն արտերն այդ բարկ բոցերին էին սպասում, որպեսզի խորքերում եռացող շռինդը արեգական շոգով լցնեն և ապա հասուն լիությամբ բացեն իրենց դռները:

Այդ օրերին Արեգի պատվիրակները՝ տղամարդիկ, կանայք, շտապում էին գյուղամերձ արտերը: Դա սովորույթ էր, հնից փոխանցված սեր ու կարոտ հացի հանդեպ: Գալիս էին խումբ-խումբ, խնդուն զրույցներով, կանգնում արտերի եզրին, անափ լինելիությամբ լուռ ու բարձրաձայն խոսքեր շշնջում, կարծես մատուռ-եկեղեցի էին մտնում: Հրաշալի խոսքերի առաջին բաժինը Աստծո կամեցողությանն էր, ապա համագյուղացի մեխանիզատորներինը, ովքեր աշխատանքային հերոսներ Աշոտի ու Անդրանիկի օրինակն էին հիմքում դրել՝ շարունակելով Արեգի մասնագիտական դպրոցի փառքը: Իրենք էլ գիտեին, որ ավելորդ գովք չէին անում, որ այն Արեգի հանապազօրյա հացի մասին էր, նաև այն հզոր բազուկների, մարդկային կամքի ու մտքի, որոնց շնորհիվ հույսը ծաղկում էր հողից...

Այս ամառն էլ զնգուն ծոցերով էր պաշարել Արեգ գյուղը: Միաձույլ արտերում, մարդկանց աչքերի առջև հեքիաթային ցոլք էր, փոթորկի փափուկ ծփանք: Սարերից իջած հովերը, այնքան միամիտ ու չտես, դարձյալ մոլորվել էին հասկերի մեջ և բորբոքելով դեղին ալյակների համատարած շքերթը՝ ելևէջում էին ոսկեմշուշ հեռուն:

Այս հեքիաթը Ժորայի և Վաղարշակի աչքի առջև էր: Նրանք խմբերից անջատվել, բարձրանում էին սարն ի վեր՝ այնտեղ, ուր շիկնել էր ամենավերին արտը: Այս ճանապարհով ամեն օր Արտին լեռան լանջերն էր բարձրանում նրանց հայրը՝ Մարկոսը: Եղբայրները հացի և ամռան ցնծության ծոցերում նաև իրենց հոր բույրն էին փնտրում, մեկ-մեկ կանգնում հանդիպակաց քարափի առջև, ծանոթ շշուկ ու երգ որոնում: Հոր և գյուղի մեծերի պատկերները, հողեղեն ու տաք զրույցները, նրանց ընդգրկուն կարոտների երամները ասես իջնում էին լեռան լանջերից: Կյանքը փոխվել էր,

հեռացել էր մի ամբողջ սերունդ, որոնց քրքրված անձնագրերում ծննդյան թիվը նշված էր 19-րդ դարի վերջը կամ 20-րդ դարի սկիզբը: Ժորան ու Վաղարշակը տեսնում էին այդ ժամանակահատվածի հեռացածներին: Նրանց կյանքը հանգիստ ու բնական ճանապարհով չանցավ. ո՛չ կարգին մանկություն ու պատանեկություն ունեցան, ո՛չ էլ խաղաղ ապրեցին իրենց ճակատագրի 20-րդ դարը:

- Վաղարշա՛կ, կռահո՞ւմ ես, թե ցորենհասին ինչի համար է ամբողջ գյուղը ցվրվում հանդերում:

- Սովորություն է, գնում, կանգնում են բերքակալած արտերի եզրին, խաչակնքում են, աղոթում,- պատասխանեց Վաղարշակը,- մեր մեծերն ավելի հողեղեն ու տպավորիչ էին այդ պահերին:

- Համարյա ճիշտ ես բացատրում, բայց մի բան կա, որ մեր հայրը մի օր ինձ ասաց, Տեփո պապն էլ հաստատեց:

- Էրգրի կարոտի՞g,- չհամբերեց եղբայրը:

- Կարոտը ե՞րբ է անպակաս մնացել, էդ ցավը տարին բոլոր նրանց սրտի ու արյան մեջ էր,- Ժորան հոգու խորքից հառաչեց, իր կանգնած տեղից նայեց ներքևում փռված համատարած արտ ու դաշտին, աչքածրար գրանցեց մեծ ու փոքրին, որոնք իրարից հեռու, կարծես մեծ քարտեզի վրա գրանցված հույսի ամրոցներ լինեին:

- Ուրիշ ի՞նչ կար,- անհամբեր հարցրեց Վաղարշակը, և ինքն էլ անծանոթ հետաքրքրությամբ նայեց չորս կողմերում ցրված մարդկանց:

- Քո ասած կարոտն է, բայց իրենց սեփական հողատարածքների հանդեպ,- ժպտաց Ժորան,- մենատնտեսի հին կարոտը էդպես էլ չմարեց նրանց հոգում, էդ ցավը մնաց ու մխաց, կոլխոզ չէին սիրում, չէին ընդունում իրենցը ուրիշին տալ, հողն ու եզը հարազատ էին, իրենց արորի ու հորովելի տերն էին, էրգիր կորցրած մարդիկ հողատարածք ու կանաչ հանդամասեր ունեին, հա՛, հա՛, իրենց անուններով, Արտին սարի չորս բոլոր փռված... Սեփականությունն ուրիշ բան էր, Վաղո՛,- տաքացել էր Ժորան,- զուլումից հետո էս քար ու քռի մեջ գտնված հողը նրանց հույսն էր, բաժան-բաժան արին, քարերը հավաքեցին, հեռացրին, լեռնակողը հարթեցրին, քարն ու խիճը հող դարձրին, 25-30 թվականներին իրենց սեփական հողերից հաց քամեցին, հույս ու նպատակ քաղեցին, բույն դրեցին էս քարերի մեջ, ինչ է, թե էս սարից կերևային և իրենց աչքի առաջն էին Նախիջևանն ու Օփնին...

- Ճիշտ ես, Ժորա՛,- ոգևորվեց Վաղարշակը:

- Էդ ճիշտը երկար չտևեց, կոլխոզն էկավ, խառնեց մարդկանց

օրն ու տարին, խլեցին հողն էլ, եզներն էլ ու մնացած սեփականությունն էլ,- Ժորան տնքաց, վառեց ծխախոտը, դարձավ դեպի եղբայրը, էլի բան ուներ ասելու,- էս ինչ-որ քեզ ասեցի, էդ մարդիկ կողպեցին ուրանց հոգու մեջ, լուռ ու մունջ հաշտվեցին, ձայն չհանեցին, որ բաժին չլինեին Սիբիրին: Գիտե՞ս, մեր գյուղից քանիսը արժանացան էդ բախտին:

- Ուզում ես ասել, որ գյուղովի հիմա դաշտ են եկել, իրենց ծնողների սեփականության կարոտի՞ց է:

- Հա ու հա՛, Վաղո՛ ջան, մենք իրար արդեն հասկցանք,- գոհունակ նայեց Ժորան,- ես ու դու էլ առանց որոշումի հասել ենք մեր հոր՝ Մարկոսի սեփական հանդամասերին: Էդ կարոտից է գյուղը տներից փախչում, որ գա գտնի հորենական արտը, քարափն ու առուն, էդ կարոտ անդասագիրք է... Աշխարհ կլոր է, մի օր էլ տեսար՝ պապի սեփականությունը ոտնատակ կտա, կոլխոզի էս ցավ ու բաժին կդառնա նրա թոռներին,- Ժորայի աչքերում ամպը թրթռաց, հայացքը ծաղկակալեց շրջակա քարափներին:

Արտերի միջնակներում, հասկերի հասուն խշշոցների մեջ եղբայրները հիմա ավելի մոտ էին տեսնում թախիծների անքուն երամը: Նրանց աչքերի առջև հառնող անջնջելի հետքերը հեռածայն կարկաչների զուգերգ էին բերում: Ժորան լսում էր անցած օրերի տրոփյունը, զգում միջօրեի թևաբաց հևքը, Վաղարշակը, հայացքը թողած հեռվում, մտորում էր, կշռում եղբոր ասածները, քննում գյուղի հավաքական խորհուրդը: Նրա սիրտը լիքն էր, անբացատրելի հմայքը խճճված էր տխրության ձեռագրերում: «Մարդը չգիտի՝ պահի մեջ կորցնում է, թե գտնում, անտեղյակ է ճակատագրի վրիպակին և այն չի կարող սրբագրել»: Այսպես դեռ երբեք չէր զգացել բառաշարքերի դարձը: Կարոտի՞ց էր, ամռան տաք օրվա սիրո՞ւց, թե՞ լեռան ուսերին իջած ամպն էր իր հետ խոսում:

Երկուսով էին՝ երկու եղբայր, բայց մի ամբողջ գյուղի պատմություն էր ծփում նրանց աչքերի առջև:

- Ինձ թվում է՝ ճակատագիրը մեզ պահում է մեր մեծերի օղակի մեջ, նրանց շղթաներից ազատում չկա,- ասաց Ժորան և ինչ-որ բանից նեղսրտած՝ դարձյալ վառեց ծխախոտը:

- Էն գլխից էր էդպես, Ժորա՛, նրանք մեր մեջ շատ թանձր ճակատագրով նստեցին, եկան ու անցան, բայց ոչ մի վայրկյան բացակա չեն:

Վաղարշակի խոսքից Ժորան մի ուրիշ լույսով լցվեց, զգաստացավ, նայեց երկար և, կարծես, եղբոր աչքերի մեջ հայտնաբերեց

հոր բարությունը, գտավ մի նոր աշխարհ: Նա հասկացավ, որ Վաղարշակն իր ասածի տպավորության տակ էր, հող ու հանդի հետ էր, որոնք մի ժամանակ նաև Մարկոս հոր անունով էին:

- Կարոտը չի թողնում քնես, չէ՞:

- Դրա անունը չգիտեմ, բայց որ ամեն գիշեր իմ միտքն ու հոգին էդ անմեղ մեծերի հետ են, հավատա,- պատասխանեց Վաղարշակը և խորացավ հասուն արտի մեջ: Դեղին, ոսկեծփուն հասկերը, զարկվելով իրար, այնպես մեղմանուշ էին սուլում, թվում էր՝ արտի հազարաձայն տաղարանը ոտնաձայների էր սպասում:

- Մարդն էլ է էսպես, Վաղարշա՛կ,- փնջած հասկերին նայելով՝ ասաց Ժորան,- մեկ հատիկը ծաղկում է հողից, դառնում տասնյակ ու ավելի, ինքը մեռնում է հողի տակ, բայց ապրում են իր «զավակները»:

- Աստվածաշնչի վկայած իմաստություն է դա, Ժորա՛, սկիզբը վերջ չունի, Աստծո ողորմությամբ գալիս ու մնում է,- Վաղարշակը հիշեց հորը՝ Մարկոսին, Սմբատին, Խաչատուրին, Արամին ու Տեփո պապին: Նրանք այս միտքը հաճախ էին կրկնում, օրինակներ բերում, հուզվում ու հրճվում էին:

- Մենք էլ մեծացանք, Վաղարշա՛կ,- սինոռի քարին նստեց Ժորան,- նրանք գնացին, ու նույն օրը մենք մեծացանք:

Վաղարշակը չպատասխանեց, համաձայն էր, որովհետև իր աչքերի առաջ էր գյուղը փոխվել: Ծնողներ կորցրած զավակները լրջացել էին, անհոգս ժամանակները՝ ցնդել: Գյուղը նոր երակ էր գտել, այն արտաքուստ թեև նման էր նախորդներին, բայց նաև նման չէր. փոփոխված շունչ էր փռվել շենի բանուկ ոլորաններին, պակասել էր ծերունական պատկառանքը, դատարկ էին մեծ տան դռների առջևի քարե նստարանները:

- Մենք էլ մեծացանք, բայց նրանց նման մեծ չենք, նրանք մի ուրիշ զորություն ունեին, Ժորա՛:

- Ոնց որ նրանց դասագիրքը լավ ես սերտել, եղբա՛յր,- ժպտաց Ժորան և գրկեց Վաղարշակին,- բայց իմացի՛ր, նրանք էրգրից բերած լուսե բաժինքից մեզ թողեցին իրենց իմացածի ու զգացածի չնչին մասը, ինչքա՜ն թանկ բաներ տարան անվերադարձ:

- Իմ ափսոսանքն էլ հենց դրա համար է, չհասցրինք նրանց հոգու խորքերը բացել, բայց էսօր դու իմ առջև նրանց կարոտից հայտնաբերեցիր կարոտի ուրիշ շերտ:

- Իրենք չէին ուզում, որ մենք խորանայինք էդ անտակ ծովում,- Ժորայի հայացքը սլացավ Արտին լեռան գագաթը,- վախենում

էին, որ 37-ը հանկարծ կկրկնվի, չեկաներից ու մատնիչներից էին վախեցած, կար ժամանակ, որ նույնիսկ իրար չէին վստահում, իրենց դնում էին անգետի, չիմացողի, աշխարհից կտրված խեղճ գյուղացու տեղ, որպեսզի կասկածանքի և զրպարտանքի սելավը չվնասեր իրենց զավակներին: Չհակառակվեցին, երբ կոլեկտիվացումը գրոհեց, սրտի ցավով, բայց լուռ համաձայնեցին, ճար չկար:

- Հենց դրանով էլ էդ պետությունից նրանք իմաստուն էին ու բռնակալներից խելոք, հողի սերը մարդուց չպիտի կտրեին:

Ժորան հավանության նշան տվեց, գնաց արտեզրի բացատի ուղղությամբ և զգուշությամբ պոկեց առաջին ծաղիկը, երկրորդը... Քիչ հետո մի գիրկ ծաղիկ՝ արևագույն, կապույտ ու սպիտակաթերթ, Ժորան սեղմել էր կրծքին, նայում էր ներքև՝ գյուղի կողմը:

- Իջնե՛նք:

Վաղարշակը չպատասխանեց, լուռ քայլեց նրա հետևից: Աջ ու ձախ բեռնավորված արտեր էին՝ շնկշնկան ու լեցուն: Շրջապատում, մոտ ու հեռու խումբ-խումբ մարդիկ՝ կամուրջներ վերանորոգող բրիգադի տղաները, մեխանիզատորներ: Ավելի հեռվում կանայք էին, երեխաներ: Ամռան լույսի համատարած կաթոցը՝ բարկ ու բյուրեղ, բոլորի համար բաժին ուներ: Տարվա խոստովանանքը գյուղի ու լեռան միջև էր, հուլունքաշար օրերին՝ արև-անձրևի պատկերներով, հասկ ու հորովելի բույրով բոլորաձայն: Տարվա եղանակների հանրագումարը ամառն էր և այս տաք օրը՝ տիրաբար փռված Արեգի մեծ հիշողության ճանապարհին: Մարդիկ ցվրվել էին արտերի ծփուն ծոցերում: Նրանց աչքերի շոյանքը հացընծա անդաստանին էր. յուրաքանչյուրի հոգում բաց էր գյուղի անքուն ոսկեմատյանը, թանկ անուններ՝ թալիսմաններով բոժոժված, ձեռագիր պատումներ, ձայն մեծաց և մասունք-մկրտություն: Ամռան վերադարձի ստույգ պատկերը այսպես միշտ նորոգում էր գյուղի խորհուրդը, էջ-էջ բացում Արեգի մնացյալ մատյանը: Բարիքը լեռան ճանապարհով տուն էր գալիս, առջևում միշտ նրանք են եղել՝ իրենց բախտի բոցերում թրծված գաղթականները: Հիմա նրանք՝ էրգրում ծնվածները, թեև անցած-գնացած, բայց գոգահովտում հավերժացած սեր ու կարոտ ունեն, իրենց թողած խորհուրդներով մասնակից են այս ամռան ծեսին, թեև ֆիզիկապես հեռացել և արդեն հացարար չեն, բայց հավատի կանգուն սյուն են, հայրենականչ կարոտների բերդ: Արեգցիներին պետք չէ այս ամենի մասին բարձրաձայն ասել, վիրավորանք է՝ հուշել նրանց, թե այցելե՞լ եք պապոնց շիրիմներին, Արտին սարից նրանց մեծ կարոտի աչքերով

նայե՞լ եք Ղարսի հովիտներին, շրջե՞լ եք Անիի ավերակների մեջ... Արեգցիները կարոտի, սիրո և հայրենաբաղձության դասեր են տալիս Աստծո ամեն օր: Մեծ ու փոքր իրարածայն, իրապատում խոհերի շուքի տակ են՝ համատարած մի բերկրանքի առաջնորդությամբ: Օնված օրից ամեն մեկի օրոցքը լիքն է կորուսյալը հետ բերելու թախիծ ու երգով, անձեռագիր ու աներերույթ կտակներով, անանց կրակներով: Օրագրված ծես չի պահանջվել դրանց համար, ոչ էլ զարմացնող պատգամների պարտադիր պսակ: Զնգուն կարոտների շուքն է պարզապես կախվել երդիկներից, շշուկների շռինդն ու շոյանքների կախարդանքն են ծաղկել մեծ պապ-մայրերի ոգեբարբառ հառաչանքներից: Գյուղի մշտաներկա պատվավոր դասը այդ վիրավոր հառաչանքները չի շրջանցում, այդ պատկերներին տրված հարգանքից քամում է հավիտենական կանչը, որը չի կարող ընդհատվել վերուվարի հրամանով, չի կարող շեղվել նպատակից:

Եվ այսօր էլ այդ անկորնչելի կանչերին որպես տուրք՝ հավատադարձի մշտապահ ուխտով էին արեգցիները եկել հին ոտնահետքերով: Փնտրտուքի և ինքնախոստովանանքի զարմանալի փառաշուքը նրանք հավաքում էին մի հնաբույր դիցակարգով, կարծես նորից ծաղկել ու պտղակալել էր անցած-գնացածների վաստակը: Մնացածները՝ խորհուրդ-պատարագների ընծայասեր հետնորդները, հավատավոր աննահանջները սիրահարված էին իրենց պատկանելիք պատմությանը, որ տվեցին իրենց նախորդած Մեծերը: Թանկ կորուստների դիմաց կարծրացել էր վիշտը, տղամարդիկ չէին ուզում խեղճանալ:

- Վիշտը միշտ խեղճերին է ճզմում ու իր տաք անկյունը գտնում էդպիսիների հոգիներում, մի՛ խեղճացեք,- Տեփան պապը չկար, բայց նրա խոսքը մնացել էր:

Ժորան ու Վաղարշակը հիշեցին Տեփո պապին և ակամայից մտաբերեցին խոսքաշեն համագյուղացիներին: Նրանցից ամեն մեկը ինքնատիպ էր, տոհմական և իմաստուն:

- Մի բան, ախր, էնքան զարմանալի էր,- ասաց Ժորան,- համարյա կիսագրագետ մարդիկ էին, բայց ինչքան նուրբ խոսք ու հումոր ունեին: Էրգրից բերած նրանց հեքիաթները, առակները, կատակները, իրենց կյանքի փորձից հնարած խրատները մեր հարստությունն են:

- Ափսոս գրի չառան, մնաց բանավոր,- ասաց Վաղարշակը: Նրանք լուռ թեքվեցին գերեզմանոցի ճանապարհով:

- Չէ՛, Վաղո՛, գրի առնեն, թե չառնեն, մեկ է, մեր գյուղի մեծերի խոսքը հարսանիքների զարդն էր, կորուստների ժամանակ էլ՝ բուժիչ

բալասան: Ես ասեմ, դու լսի, տե՛ս, որ չեմ մոռացել: «Մեկ ուզող ունեք, հազար չուզող, ձեր գլուխ բա՛ծր պահեք», «Սևը ներսում ծածկեք, ծիծաղը՝ դրսում», «Աշխարհը կլոր է, ձմեռվանից հետո միշտ գարուն կգա», «Ով իր հոր խրատ գետնով տա, իր զավակ իրեն հողին կհավասարցու», «Մարդն էն է, որ մթան մեջ լույսի ճամփա կկգտնի, թե չէ արևու առաջ մոմի լույս վառելն ավելորդ է», «Հասկացե՛ք՝ մեր ուժ օրորոցի մեջ է, թշնամու սարսափն էլ էդ օրոցքն է», «Ով ուր պապու ցավ շուտ մոռցավ ու չփորձեց իր ուժի չափ պատասխան գտնել, ինքը նոր ցավերի մեջ կընկնի», «Թե մեռնել կա, թող սուրբ հողի համար էղնի...»:

Ժորան անվերջ ուզում էր ասել, բայց Վաղարշակը նրան ընդհատեց: Իրենց հոր՝ Մարկոսի շիրմաքարի մոտ հավաքվել էին նրա թոռները: Սեդան էլ այստեղ էր: Ժորան մեղմ ժպտաց նրանց, ծաղիկները տվեց դստերը՝ Ռուզանին, և պատվիրեց, որ դրանք մաս-մաս դնի բոլոր շիրմաքարերին:

- Լավ եք արել, Սեդա՛,- մեղմածայն ասաց Ժորան,- գերեզմանոցում ոտնաձայն միշտ պըտի լսվի, ննջեցյալները հոգու աչքերով են տեսնում:

- Գուլո տատի պահանջն էր, եկանք, որ խունկ ծխենք,- ասաց Սերգոն և կրակամանը դրեց շիրմաքարի կողքը:

- Իր անցյալներին հիմա շուտ-շուտ է հիշում մեր մամ Գուլոն,- տխուր ասաց Ժորան և դեղին խունկը շաղ տվեց շողուն կրակին: Հետո մյուսները մոտեցան, ապա անցան կողք-կողքի կանգնած մահարձանների մոտով, հիշեցին, տխուր ժպտացին, տխրեցին:

Հետմիջօրեին դաշտերի միջնակներով, լանջերով, արտերի սինոռներով վերադառնում էին առավոտյան գյուղից դուրս եկած մարդիկ: Նրանք գալիս էին նույն խմբերով, ուրախ, անթաքույց հպարտությամբ, որի դրդապատճառը, անշուշտ, հասուն, բերքառատ արտերն էին, իրենց մեծերի կանչն ու զրույցը, նրանց ոտնահետքերը լեռան ճանապարհին: Վերադարձի արահետներն անպայման անցնելու էին գերեզմանոցի մոտով: Հողի սիրառատ զրույցները հավաքած, արտի, հանդամասերի, քերծերի ու բարձրադիր լանջերի պատումը ձայնագրած՝ նրանք, կարծես, դրանք բերում էին հաղորդվելու ննջեցյալների հավիտենական ներկայությանը, ապա թեթևացած հոգով բռնում տան ճամփան:

Ավանդույթն այսօր էլ կրկնվեց, բորբոքվեց հիշողության կրակը, խնկահոտ ծուխը տարբեր կողմերից ձգվեց վեր, լուռ ու ձայնարկու խոսքը ճամփա ընկավ, ծաղկեց օրհնանքը, խոնարհ հարգանքը,

իբրև հավատամքի ձոն, աղավնաթև իջավ հին ու նոր շիրիմներին:

Ժորան նստել էր հոր շիրմաքարի մոտ, հայացքով ընդգրկել էր շրջապատը: Նրա աչքերի առջևով մեկ-մեկ անցնում էին նրանք, ովքեր Արեգի առաջին կենսագիրներն էին, տան պատերի առաջին հիմնաքարեր դնողները, գյուղի երեկվա ցավերի կրողները, գաղթված ու բռնադատված ճակատագրերով մարդիկ: Չկային նրանք: Ժորան նրանց լռությունն էր փորձում հերքել, կարծես լսում էր հոր՝ Մարկոսի բողոքը, որ էրգրում դեռ անտեր է Կրպեյանների տոհմատունը: Ժորան ոչ միայն իր հոր, այլև բոլոր գաղթականների հավաքական ճիչն էր այսպես լսում, բայց պատասխան չուներ: Այն պատասխանը, որի հունդերը նրանք շաղ տվեցին այս քարաստանում՝ համոզված, որ եթե նույնիսկ ծաղիկ ու ծիլ չարձակի հողը, նրանց կարոտի դաշտը ոսկեփառ ծոցերով կհառնի: Հեռացած ու հող դարձած արեգցի մեծերի կանչը Ժորան առավ շիրմաքարերի լուռ պսակներից, սիրտը ճմլվեց, բայց զգաստացավ՝ հարազատ քարերի առջև ծնկած տեսնելով հանդերից վերադարձած մեծ ու փոքրի: Հիշողության դաշտը ծաղկուն էր: Նրանց աչքերի ոգենկար ակունքներում կարդաց գնացած մեծերի անդրդվելի ուղերձը, որը քարաձայն լրումով տարածվել էր դեպի Արտին սարը, ապա հաղորդության թրթիռներով ընդառաջ էր գնում գյուղի ամառային զարթոնքին:

* * *

Բանակ մեկնելուց մեկ օր առաջ Թաթուլը միջօրեից հետո գնաց գերեզմանոց: Գրպանում թղթի մեջ փաթաթված խունկ էր, լուցկու մի տուփ, թևի տակ՝ Իսահակյանի հատընտիր ժողովածուն: Աշնան օրը կապույտ շղարշներով ծնծղաձափ էր տալիս, փարվում Արտին լեռան ժեռուտ գագաթին: Շուրջը տիրական լռություն էր՝ ննջեցյալների հավիտենական խաղաղությամբ: Նա երկյուղածորեն անցավ շիրմաքարերի միջով, նայեց աջ ու ձախ, հոգու անթարթ տեսիլքներով ողջունեց գրանիտե սյունաշարքերից նայող մեծերին, փորագիր նկարներին, վաղաժամ հեռացած գյուղի սրբություններին, որոնք մշտաներկա հանդարտությամբ, անթարթ աչոք նայում էին արևելք: Կանգնեց Մարկոս պապի շիրմաքարի առջև, լռության մեջ սաստեց կրծքի տակ ձգված հեղձուկը, ծունկ իջավ, համբուրեց տապանաքարը և խոնարհ նստեց հողին: Շրջապատում ոչ ոք չկար, ինքն էր մենակ և լռության շուքի տակ՝ սրբազան անուններ ու խղճի անկորնչելի վեհություններ պահած շիրմաքարերը: Թաթուլը հավա-

տամքի իր տուրքն էր բերել, եկել էր մենակ. ո՛չ եղբայրներին էր ասել, ո՛չ քրոջը և ո՛չ էլ ընկերներին: Մի քանի օր շարունակ մտմտում էր այս պահը, գերեզմանոցը, իր հանդիպումը լռության արքաներին, իր խոստովանանքը, խունկի ծեսը, խաչի աստվածակերպը, ինքն ու ինքը այս հեռացող աշխարհի փխրուն իմաստնության առջև: Նա դանդաղորեն գլուխը վեր բարձրացրեց, պապը խանդաղատանքի ցոլք էր զուգել քարապատկերին: Թաթուլն աներևակայելի խորքերից, կարծես, լսեց պապ Մարկոսի անբացատրելի կանչը, որով նա սրբացնում էր իրեն, իր մեջ էր տեսնում ապրելու իմաստը, ծնկում էր թոռան առաջ, պաշտամունքի խոսքեր ասում, մանկանում ու մտերմանում էր, հազար բառ էր ասում և ամեն ինչ իր անունով էր ավարտում՝ Թաթո՛ւլ, իմ Թաթո՛ւլ, իմ քա՛ջ, իմ հեյրա՛ն ու հո՛ւյս:

Շիրմաքարից ասես նույն ձայնը լսեց Թաթուլը, նույն երկրպագության տենչը՝ իր օրոցքին կռթնած պապի աչքերում: Թաթուլը չկարողացավ պահել արցունքները, ձեռքի լայն ափերով ծածկեց դեմքը, որ պապը չտեսներ իր արցունքը, ինքն այդպես էր նրան խոստացել: Ոտքի կանգնեց, մի քանի րոպեից վառեց կրակամանը, գրպանից հանեց խունկը և առաջին անգամ մեն-մենակ այցի գնաց իր պապոնց հոգուն: Սիրտը լիքն էր, հոգու նժույգները վարգում էին, դոփում, և հեռաձայն կանչերի մեջ նա ջոկջոկում էր իրենը, փորձում էր բարձրաձայն խոսել սրտի հետ, մեղմել արյան կրակի ծփանքը, որ վազում էր երակների միջով, տենչում զնգոցն իր հրեղեն: Նա քայլեց մի ընդոստ վեհությամբ, հայացքով ձուլեց երկինքն ու երկիրը, որ փառավորվեր ննջեցյալների հոգին: Գնաց դեպի բարձունք, աչքը դարձյալ շիրմատան մահարձաններին էր, ներքին ձայնով գտել էր նրանց, միավորել նրանց խաչված խիղճը, հյուսել բոլորի մասին իր ունեցած վիպասքը և լուռ հեռանում էր: Ճամփեզրի քարափը, թվաց, նույնպես շիրմաքար է, ո՞վ գիտի, տարեվկա ինչ տեսիլքներ ունի իր սրտում գրանցված: Մոտեցավ, նստեց: Գերեզմանոցն ու գյուղը մնացել էին հետևում: Թաթուլն այստեղից տարաբաժանեց մարդկանց ժամանակավոր և հավերժական կացարանները: Մեկ նայեց գյուղի կտուրներին, տուն-տան մտահայաց հարևանությանը, մեկ աչքն ընկավ շիրմաքարերին՝ իրարով մշտահայաց, անխոս ու մեղկ, մշտաբարբառ մի տերություն՝ անձայն, մշտախոս ու անլեզու: Հայացքը հետ բերեց, շղթայեց ճամփամերձ աշնան ծաղիկները, գրպանից հանեց թուղթն ու գրիչը և զուլալ տենչանքի ծոցերից փորձեց վերագտնել իրեն:

«Հե՜յ, քարե՛ր իմ Հայոց,
Ես ձեր գրկում ծնված,
Հե՜յ, հողմե՛ր Հայոց,
Ես ձեր շնչից ծնված:
Ա՜խ, դո՛ւք, քարե՛ր, քարե՛ր,
Միշտ շնչում եք ինձ հետ,
Դուք դարեր եք, դարեր,
Ինքնամոռաց քարեր...»:

Հետո երկար ու խորը լռեց, ինչպես այս քարափը, որի վրա նստած էր: «Տեսնես պապս քանի՞ անգամ է այս քարին հանգըստացել, այստեղից փնտրել իր հոր տան ճամփան, Մրենի վանքը... Տեսնես այս քարին լացե՞լ է կարոտից, ո՞ւմ է հիշել, ի՞նչ մղկտուկ է պաշարել նրան... Գնամ տուն պիտի հարցնեմ, տեսնես տատս խնջլոզ ու սիբեխ հավաքելուց թիկնե՞լ է այս քարին, ամեն սինձ քաղելիս ո՞ր թոռան համար է ուրախացել...»: Թաթուլը մտորումներից կտրվեց, հիշողության պատկեր-նկարագիրը սրբազան պսակ էր հյուսում այս մենավոր քարափին, շրջակա իրիկնացող լռությանը, երկարուն ստվերներին, որոնք հանգչող օրվա հեռացումն էին գրանցում լեռան ճակատին: Ուշ էր, ոտքի կանգնեց, մանրաքայլ իջավ:

Նա թեթևացած սրտով էր մոտենում գյուղին: Համոզված էր, որ աննշան բան էր արել, գուցեև չնչինություն մեծ հիշողության դաշտում, բայց ներքուստ հանգիստ էր: «Հեռացածներին չպետք է մոռանալ, նրանք այլևս կարիք չունեն ոչնչի՝ բացի ապրողների հիշողությունից: Հուշն ու հարգանքը ավելի շատ իրենց՝ ապրողներին են անհրաժեշտ... ննջեցյալները լռում են, նրանց լռությունը հասկանալու համար լսող ականջ է պետք և զգայուն սիրտ...»: Ինքն իր խոհերից գոհ մնաց, ճանապարհին հանդիպեց դասընկերներին՝ Արթուրին ու Տիգրանին, և գնացին իրենց տուն: Իմացավ, որ մեծ եղբայրը՝ Սերգոն, իրեն փնտրել է, մայրը անհանգստացել է: Դռների առջև հայրը ժպտալով մոտեցավ նրան:

- Էս սեղաններն ո՞ւմ համար եմ բացել, տղա՛...

- Առանց դրա էլ կարելի էր, հայրի՛կ,- անսովոր տրամադրությամբ պատասխանեց Թաթուլը,- գուցե առանց խնջույքի՞ գնամ բանակ:

- Թաթո՛ւլ, դա մեր գործն է,- միջամտեց ավագ եղբայրը: Սերգոյին դժվար էր առարկել, կամ էլ ի՞նչ կարող էր անել, երբ Կրպեներով մեծ սեղան էին բացել, հրավիրվածները ներկա էին, եկել էր գյուղի ողջ երիտասարդությունը: Թաթուլին մոտեցավ մայրը՝ Սեդան, գրկեց ու ամուր սեղմեց կրծքին.

- Ո՞ւր էիր, ա՛յ բալա...

- Հիշողության դաշտ էի գնացել, մայրի՛կ, հանդիպեցի, խոսեցի պապիս հետ, խունկ ծխեցի, քիչ ժամանակ չէ, երկու տարի պիտի բացակայեմ:

- Ապրե՛ս, տղա՛ս, պապը պաշտում էր քեզ,- անհուն սիրով ասաց մայրը,- քեզնից կարոտով գնաց, դու աշխարհի չափ թանկ էիր նրա համար:

- Գիտեմ, մայրի՛կ, վաղուց եմ զգացել, պապս՝ լեռների սովոր այդ մարդը, ի՞նչ խորք ուներ, ի՞նչ վեհություն, պիտի կարողանայիր հասկանալ,- հառաչեց Թաթուլը:

Եղբայրները ներս տարան նրան: Գյուղն այստեղ էր, սեղանների երկու կողմերում տեղեր էին զբաղեցրել տղամարդիկ, կանայք, հայրը նստել էր վերևի սեղանի դիմաց, աջ կողքին մայրն էր՝ Գուլոն, եղբայրը՝ Վաղարշակը, ձախում՝ հորեղբոր տղան՝ Վաղարշակ Համբարձումյանը:

... Մինչև լուսաբաց արթուն էր Կրպեների օջախը, արթուն էր ողջ Արեգը: Թաթուլին բանակ էին ճանապարհում: Որքան երգեր հնչեցին, ինչքան շռինդով թնդացին ազգային պարերը: Թաթուլը երգեց, պարեց, ասմունքեց, կարդաց իր բանաստեղծություններից: Հիացավ գյուղը, նոր շիվ էր հասունացել, հպարտ, հայրենասեր ու կորովի մի այր էր առանձնանում: Անսահման էր Ռուզանի խնդության լույսը, ցնցված էր եղբոր կրակոտ բնավորությամբ, նրա հայրենականչ բանաստեղծությունները հայտնություն էին քրոջ համար: Անմոռանալին հինգ եղբայրների և միակ քրոջ՝ Ռուզանի պարն էր. կախարդվել էին ներկաները: Ժորան ու Վաղարշակը չդիմացան, տեղից պարելով միացան նրանց, հետո եկան Սեդան ու Յուղոն, հորեղբոր տղաները...

Պարում էին Կրպեյան տոհմի զավակներն ու զարմիկները: Թաթուլը դեռ այսպես չէր ցոլացել, սլացիկ էր, ճախրուն ու անսանձ: Նա օրվա տպավորությամբ ինչ էլ անում էր, մտքով պապի հետ էր. հավատացնում էր իրեն, որ հետմիջօրեի բացառիկ գույները, հուզական ընծայաշարքը գերեզմանոցում, այն կողմում վեհաշուք քարափը, Արտին սարը գալիս ու միանում էին այս պարաշղթային, գալիս ու ձայն էին տալիս, ուժ ու հմայք ձոնում: Թաթուլին էր հայտնի ոգեկոչման այդ ծրարը, որի ծոցում ինքն էր, իր պապի անխառն ու ազնիվ թարգմանությունը: Ու երբ հոգնած պարը մարեց ոտքերի տակ, Թաթուլը երգեց: Խրոխտ, պապենական կանչ էր, իր պապի ու հոր ձայների գումարն էր, Արեգի հրավառ ոգեկոչումը.

«Ա՜խ, դու կուգաս, կռո՛ւնկ հայու,
Գարուն թևիդ տուն բերիր,
Սուրբ սարիցը դաղ ջուր առար,
Որ մորս տաս, սիրտն հովնա:
Կռո՛ւնկ, մորս չքնաղ Կարսին
Դու գուրգուրե, որ ադրի,
Մոտ է օրը Ազատության,
Հայ՛, հավերժի՛ր ու ադրի՛ր...
Դու էլ չի լաս, հայո՛ւ կռունկ,
Քո բալեթը զինվոր են,
Նրանք ելել, կռիվ կերթան,
Նրանց սիրտն է եռագույն»:

Արեգը զարմացած էր. այստեղ եկած բոլորը ոտքի կանգնեցին, թնդացին ծափերը, հիացմունքը շողընթաց ծաղկեց բոլորի սրտերում: Թաքուլը շիկնել էր, առաջին անգամ չէր երգում, բայց առաջին անգամ հասկացավ գյուղի աջակից ուժը, ոգևորիչ թափը, որն անկասելի հորդում էր իր աչքերի առջև, գրկել էր իրեն և տանում էր: Նա խորությամբ հասկացավ, որ այս գեղջուկ մարդկանց հոգում Աստված ի՜նչ ճաշակ ու երազանք է դրել, և ամեն բան ավելի թանկ ու արժվային է դառնում, երբ նրանց սրտի ճամփան գտնում ես հայրենաձայն գողտրիկ խոսքերով, հայրենահմա կանչերով: Թաքուլը գիտեր, որ Արեգը սեգ ծվար ունի իր ներսում, սուրբ անուններ՝ հեռվում, այնտեղ՝ Անիի շողշողուն զարմանքների մեջ, սակայն այսքան նուրբ ու զգայուն, այսքան տիրասեր, օրոցքներին կպած, աշխարհը սիրող, ուրիշի ցավը իրենց սրտերով նժարող, չէր իմացել: Տեղնուտեղը իրեն բռնեց արթնացող ու անբացատրելի մի երանության ծովում, շուրջը տարածական լույս էր, անհնազանդ, արեգական դարձ: Այդ գույների ընծյալ վարքի մեջ հոգու էջերը լցվեցին այս մարդկանց աչքերի կրակով: Նրանք եկել էին իր առիթով, պատճառ էին գտել ուրախանալու, Արտին լեռան լանջերին հազար անգամ փորձել, չափ ու ձևի մեջ էին դրել Կաղզվանի երգերը, որ հիմա անպարագիծ ու տարածական բացեին իրենց հոգին, հավաստեին երկրասեր լինելու իրենց անուղղելի պատկերը, անշրջելի կամքը, ժառանգած պատգամն ու խորհուրդը:

* * *

Մեքենայի խցիկից երևում էին աշնան պատկերները: Ամենուրեք մերկ լեռնալանջեր էին, իրենց բարությունն ու բարիքը տված հա-

ցահատիկի արտերը, որոնք համատարած մի դալկությամբ փռված էին աջ ու ձախ: Սակայն այս բնաշխարհի գարունն ու ամառը գեթ մեկ անգամ տեսած մարդը անկարող էր մտքի տեսիլքներով չվերադառնալ, կարոտանքով չընմբոշխնել դրախտային մայիս և հունիս ամիսների երփնագիրը, հոգու խորքերում չզգալ ծաղկունքի և կանաչ գույների ծփանքը, հողի շռայլ զարթոնքը՝ վաղորդյան լույսի լրաբեր շունչը: Հիմա տարվա ուրիշ պատկեր էր: Աշնանականչ անձրևի մորմոքն էր նրա ծոցում, մեղմ, մարմանդ մի թախիծ, որ մանում էր անձրևաձայն սյուքով, ինքն իրենով փառավորվում, տիրաբար իջնում էր սարերից, ամպերից, իրական ու երազային աշխարհներից:

Սլացող մեքենայից Թաթուլը հայացքով գրանցում էր այս ամենը: Նա ոչ մի մանրուք բաց չէր թողնում: Իր աշխարհն էր՝ խիստ ու հարազատ գույներով, իր տարիների բազմաշերտ շոյանքներն էին այս քար ու բարձունքներին, ձորակների հատակն իջնող ցամքած կածաններին: Նայում էր նա խորազնին, այսօր մի ուրիշ, նորընծա տեսիլք էր տեղ ու հասցե գտնում իր մեջ, տաք գոլորշի էր թանձրանում ներսում, փռվում փափուկ մի հայտնությամբ: Արտին լեռը մնացել էր թիկունքում, մեքենան անցել էր շրջկենտրոնը, սուրում էր Գյումրի-Երևան մայրուղով: Թաթուլը հետ նայեց, իր կարոտի բարձունքը, կապույտ թիկնոցների մեջ, ձիգ ու վսեմափայլ ճանապարհում էր իրեն: Նրա լանջերին ամուր արմատ գցած իրենց գյուղն էր, որ այսօր լուսաբացի խաղաղությամբ ուղեկցեց իրեն, օրհնեց ու բարին կամեցավ: Ընդհանրապես վերջին օրերը, հատկապես բանակ մեկնելու իրադարձություններն այնքան բուռն ու արագ անցան, որ ինքը չհասցրեց այցելել բոլոր-բոլորին: Եվ հիմա այդ բոլոր-բոլորի անունից Արտին լեռը իր խոհերով կպել էր նրա հոգուն, և Թաթուլը թիկունքից զգում էր նրա տաք ու զորավոր ներկայությունը: Մեքենան որքան էլ արագ էր հեռանում, իր հեքիաթների բարձունքն աչքերի առաջ էր, մշուշ-շանթերի խորքերից հարազատի ողջերթ էր մաղթում: Թաթուլին թվաց՝ ամբողջ գյուղն էր այնտեղ՝ լեռան լանջին: Արեգը գիտի իր զավակներին ճամփու դնել, հետո ընդունել ու Ղարսի պարերով թնդացնել նրանց վերադարձը: Բայց նա նոր-նոր էր բաժանվում մանկության եզերքներից և առաջին անգամ էր երկարատև բացակայելու: Ներսից հանդարտ մի խորհուրդ մեղմացնում էր բաժանության ալեկոծը: Հոր՝ Ժորայի վերջին խոսքը, հոգու փոթորիկներից ջոկջոկվելով, ուժգին բարձրանում և ծիածան էր կապում կրծքի տակ: «Բանակը քննություն

է, բալա՛, մեր տոհմի անուն գետնով չտաս...»: Այս խոսքերի շողուն կրկնակը դարձյալ ակոսեց հոգու ծովը, և մնաց հոր ձայնը: Գուլո տատի, Սեդա մայրիկի և քրոջ՝ Ռուզանի արցունքած աչքերը վերհիշեց, ինքն իր ներսում գտավ հույսի արձակ նժույգը, թռավ թամբին, դարձավ ու ետ նայեց, խոսեց չորս եղբայրների հետ, հպարտացավ, որ իրենց տանը այդքան ուժեղ տղամարդիկ կան: Օրհնանքի բարակ թելեր ծաղկեցին նրա սրտի հատակում, գնաց, ինքն իրենից հեռացավ և անմնացորդ խառնվեց հարազատների հոգու շենությանը: Ավելի ուշ, երբ հանդարտ ու ինքնամփոփ սթափվեց, Արտին լեռը գրեթե չէր երևում, ծածկվել էր իրիկնացող մշուշների շուքի տակ:

...Մեկ օր հետո նա ականատես էր ճերմակ ամպերի համատարած օվկիանի, երբ ինքնաթիռը նրան տանում էր հյուսիս: Երկնքի ու երկրի սահմանը երկար ժամանակ չէր երևում, թվում էր՝ թռչող մեքենան մի ուրիշ երկնածիրում էր: Հարթ, հոլանի սպիտակը պարուրել էր Թաթուլին: Պատուհանին կպած՝ նա ակնապիշ կլանում էր պատկերների միապաղաղ սահքը, ոչ մի ծանոթ բան չէր տեսնում: «Ո՞ւր էին լեռների շղթաները, գետերն ու գոգահովիտները, էլբրուսն անցա՞նք...»: Նա հազար անգամ էր լսել, թե ի՜նչ հիացումով էին խոսում Մոսկվա գնացող ու վերադարձողները, թե ինչպիսի հեքիաթային տեսարանների են հանդիպում, հատկապես Կովկասն անցնելիս: Թաթուլը չէր կտրվում դրսի աշխարհից, սակայն փառապսակ ամպերից բացի ոչինչ չէր երևում, միայն ինքնաթիռի շարժիչների միալար գվվոցն էր հուշում, որ վերևներում են՝ անհաս ու հեռացող: Նա մեղմորեն փակեց աչքերը, որ կենտրոնանա, ինքն իրեն համոզի, որ շատ բարձրում է՝ նույնիսկ իր մանկության հրաշք Արտին սարից շատ ավելի վերևներում: «Երևի ձմռան քողն է աստղերից սահել, ծածկել երկրի աշունը, ամեն ինչ փակել է փրփրուն քուլաներով, որ աշխարհն ավելի մաքրատոք լինի, բյուրեղանա մարդկանց հոգին, սերը չկորցնի իր ճամփան, կարոտը անտուն ու անտեր չլինի...»: Կարոտի մասին այս տեսակ զրույցը Գուլո տատն էր անում, ինչ-որ պատմում, ավարտում էր, վերջում պիտի անպայման հիշեցներ՝ կարոտը հոգի ունի, անտուն ու անտեր չթողիք: Թաթուլը վերագտավ այդ կարոտը, որ հիմա ինքնաթիռում էր, իր հոգում, իր մեջ: Հասկացավ, որ այն ավելի բորբոքուն էր ու բարկ, այրելով էր գալիս, ավելի արագ էր թռչում, քան այս օդանավն ու այս ճերմակ-ճերմակ ամպադեզերը: Անրջային, մեղմ ու մղկտացող շողիկ իջավ հոգու կտավներին: Աչքերը չբացեց, որ չկորցներ փառապսակ խոհերի հրեղեն ճերմակ ձին: Իսկ այն վար-

գելով հիմա տուն էր ճախրում և հակառակ այս թռչող պողպատե արծվի՝ խոհազարդ էր, խելոք ու բաղձալի: Թաթուլը գիտեր, որ հոգու թևերով տուն վերադարձող իր ճախրուն ձին Արտին լեռան գոգին ծոց ու ծափ էր հիշել: Համոզված էր, որ իր հոգու առաջին ու վերջին հևքն էր այնտեղ, նաև իր սրտի կեսը: Կարոտի նժույգը աներևույթ, բայց շոշափելի խանդաղատանքով դրանք շալակել ու բերում էր: Ո՛չ երկիրը, ո՛չ երկինքը անկարող էին զսպել նրան. ոսկեբաշ նժույգի պարանոցին թալիսման-թիկնոց էր, աչքերում սեր ու արցունք, վտարանդի, փրփրուն մի գետ, որի խորքի ու հատակի հորձանքը Թաթուլի շնչից էր: Նա չէր բացում աչքերը, հոգնել էր անխնա ճերմակից, ամպերից անտարբեր՝ ուզում էր ներսի կտավները չկորցնել: Այդ մեղմականչ քարտեզին նա պահպանել էր գյուղի բազմածվարը, ծիլը, նրա վաստակած աշունը, խրոխտ մարդկանց, որոնք բազմախումբ եկան ու ավանդական օրհնանքով զուգեցին հրաժեշտի պահը: Մտքերի մարմանդ մշուշներին, ինքնաթիռում «բանտարկված» Թաթուլը մեկ-երկու օր առաջ իր հետ առնչվող անցուդարձն էր նաև քննում: Եվ որքան օդային հսկան նրան հեռացնում էր ծննդավայրից, նույնքան զորեղանում էր հայրենասիրությունը կանչը: Փոքր ու մեծ թրթիռները ափ էին փնտրում երիտասարդի սրտում, գալիս էին անհարցմունք, անքուն ցավի պես հրամայում մնալ իրենց տիրույթում: Թաթուլն իրավիճակի գերին չէր, բայց զգայուն հոգին խշշում էր ելման գետի պես: Ներսից ծանոթ ու անծանոթ ձայներ էր լսում, անհայտ ու հայտնի կանչերի բոլորակ-բողբոջներին նեկտարում էր անուններ, աչքեր, դեմքեր, մերձավորի շշուկներ, մաղթանքների ծաղկուն-օրոցքներ: Այդ ամենն իր մեջ, իր հետ էին, հեռաձայն, խորապատկեր ու մերձահմա: Եվ դրանց մեղմահոս դրվագների շարքում մի կաթիլ արև, հոգեշող մի պտղունց պատկեր ջոկվել էին գյուղի կենտրոնում հավաքված մարդկանց բազմածվարից ու գալիս էին անպատնեշ: Թաթուլն անծանոթ թրթիռներով վերագտել այդ պահը և զգում էր, որ հիմա նա իր համար էր զարդարել այս պաղ երկինքը, օդը, օդանավը, միախորան խցիկն ու պատուհանը: Ընդամենը թախծաբույր աչքեր, գյուղի բազմածվարից ջոկված մեկ հատիկ ժպիտ՝ խնկարկուն ու խաս ավետիս:

Թաթուլն այդ աչքերն ու հայացքը այդպես չէր ընկալել այնտեղ՝ Արեգի երկնքի տակ: Գյուղի մշտաբարձ ցոլքերի մեջ այդ կրակը նոր-նոր էր ջերմանում, հասակը նազանքի ծոցերում էր բոժոժված, փթթուն բերկրանք էր, հայացքն այնքան բարկ, որ սիրտ էր հունից

հանում, տանում իր լուսեղեն տաճարը: Եվ այս ամենի վկան էր եղել Թաթուլը դպրոցի ճանապարհին, տասներորդցիների խմբի մեջ: Օդանավի խուլ հեկեկանքներից այսպես հեռացել էր Թաթուլը, և անմեկնելի մխանքը մեղմադարձ բորբոքում էր նրա սիրտը: Նա ձգտում էր բոլոր մանրամասները վերաքանդակել՝ բացահայտելու իր զգացումների խուռներամ վերադարձը, և նրանցում մեկը, որ հիմա այդ երամի առաջնորդ էր դարձել, հանգիստ ու դադար չէր տալիս, տանում էր, տագնապում, փախցրել էր աչքերի քունը: Թաթուլը նկատելի երկյուղածությամբ գրպանից հանեց ծոցատետրը, դեռ դպրոցական տարիներից գրած բանաստեղծությունները աչքի անցկացրեց և կանգ առավ այն էջին, որին ընդամենը երկու տող էր գրված, մնացածը բաց էր: Նա զգաց, որ ներսում փառավորվում է եկվոր ալիքը, ուզում է դուրս գալ, ժայթքել: Հեռուներում պահված զգացումը խենթացնող խաբրիկ դառավ, զարթնեց այն շողի նման, որ այգերգի ծոցն է բացում սարահովտի շուրթերին կամ ձնծաղկի անդրանիկ հյուսքը ձյան սրսփուկի մեջ: Թաթուլն զգաց, որ սիրտն ափունք-ափունք հաղորդություն է, հրեղեն կանչերի պարսը բույն է փնտրում, գույների պատառիկ մերկությունն իր իմացած տարածքը լցնում է սիրով, պաշարել է, պրկվել, տարածության մեջ ելք է աղերսում: Նա տխրության ու հիացումի շոգին այլևս չդիմացավ, մոտիկից լսում էր սրտի ձայնը, խոնարհվեց փոքրիկ սեղանիկին, և գրիչը գնաց հոգու վայելքները վերծանելու:

Իմ սիրտը՝ մենակ, իմ հոգին՝ տխուր,
Իմ ցերեկները՝ մութ ու խռովկան,
Իմ աչիկները՝ սև ու մենավոր,
Իմ սիրտը փուխր, առանց սիրեկան:

Իմ սիրտը կրակ, սևաչյա աղջիկ,
Իմ գարունները ծաղկեցնող էակ,
Իմ երազների գարուն դու միակ,
Իմ կրկնություն, պատանեկություն:

Իմ նոր բողբոջող կյանքի նշենի,
Իմ ճնարական անուշիկ երազ,
Իմ տասնյոթ գարնան առաջին ծիծաղ,
Իմ իմաստո՛ւն, իմ կաթնաճերմակ:

Ավարտեց, գոհունակ ժպտաց, ապա աչքերը սառեցին պատուհանից փախչող կաթնաճերմակին: Սիրտը ուրիշ գրանցում ուներ,

խնդուն խասը պատառոտում էր նրա փակ դուռը: Թվում էր՝ մեկը ծեծում է հենց այդ դուռը, ծանոթ ձայն է, հաճելի խնդիրք ունի: Թաթուլը զգում էր նրա մոտեցող շոշափը, ուզում էր ձեռքը մեկնել, հարցնել, հասկանալ: Այդ տագնապը ծերունական աղոթքի պես վեր ու վեր էր գնում, ինքը նրա բառ-նշխարքների հետ էր, այստեղ՝ ինքնաթիռի պողպատե պատերի մեջ: Բայց այդ ի՜նչ ոգու լույս էր, հրա՜շք, որ հավատամքի ծրարներով վազում էր ինքնաթիռին զուգահեռ, քսվում այն պատուհանին, որից ճառագել էր Թաթուլի հայացքը:

* * *

Մերձմոսկովյան զինվորական գունդը տեղավորված էր անտառափեշին: Այստեղ ձյունն արդեն իջել, տիրաբար ծածկել էր ամեն ինչ: Բոլոր կողմերում խիտ ու բարձր ծառերը ոտքից գլուխ ճերմակի մեջ էին: Շուրջը՝ մինչև հեռաստանի անծայր խորքերը, նույնպես ճերմակով պատած հեքիաթ էր: Ձյունը ծանր էր նստել, թեթև քամին զնգում էր զորանոցների պատերի տակ, սակայն ուղիղ ձգված փողոցներում չէր դադարում աշխուժությունը: Աջ ու ձախ զինվորական շարքեր էին անցնում, նաև դանդաղընթաց ծանրաքարշ մեքենաներ: Օդը դեռ վաղ առավոտից լցված էր գործնական աղմուկով և հուշում էր, որ այստեղ անցնող գիշերվան հաջորդել էր մի անպարփակ պատասխանատվություն: Համենայնդեպս, Թաթուլն այդպես էր ընկալում վերադարձած յուրաքանչյուր լուսաբաց, երբ ժամը 6-ին հնչում էր զարթոնքի երաժշտական կանչը, ապա զորանոցի բարձր կամարների տակ լսվում էր վաշտի հրամանատարի ծղրտացող ձայնը.

- Պադյո՜մ...

Կարճ ժամանակում Թաթուլը հարմարվեց այս խստապահանջությանը, բոլորից արագ էր հագնվում, շտապում մարզահրապարակ, ուր առավոտյան լիցքային վարժությունների էին վազում զորանոցի բոլոր կողմերից: Վաշտերի միջև մրցակցություն կար մարզահրապարակում արագ շարք կանգնելու և ժամանակին սկսելու վարժանքը մարզական առանձին գործիքների վրա: Թալինի պրոֆտեխնիկական ուսումնարանը, ուր Թաթուլը սովորել էր գյուղի միջնակարգն ավարտելուց հետո, փորձառության որոշակի բան էր տվել իրեն: Նա չէր դժվարանում պտտածողի վրա, ծանրոցներ բարձրացնելիս, կարճ վազքատարածքներում: Երկար ժամանակ չպահանջվեց, որ ինքը առանձնանար շատերից նաև

հրաձգության պարապմունքների ժամանակ: Նա ամենից շատ սիրեց ինքնաձիգից կրակելը: Այդ պահերին հիշում էր ընկերներին, երբ միասին գնում էին որսորդության, բարձրանում Արտին լեռան նախալանջերը: Այնտեղ էլ դիպուկ կրակոցներ էին անհրաժեշտ, և իր երկփողանին միշտ էլ անվրեպ էր. գյուղ էին վերադառնում իրենց չարչարանքի և ճամփորդության դիմաց վարձատրված: Թաթուլն այդ պահերը չէր մոռանում, հատկապես Տեփան պապի որդուն՝ Աղասի Կարապետյանին, որ Արեգում որսորդության հիմքերն ամրապնդող առաջիններից էր: Հայրը՝ Ժորան, բացատրում էր, որ Աղասին միայն որսի համար չէր շահագրգռված, նա ուզում էր, որ երիտասարդները կապվեն հրազենի հետ, կարողանան դիպուկ կրակել: «Էլ ի՞նչ տղամարդ, որ չկարողանա նշան ի ճակատ խփել...»,- այսպես էր հայրը ավարտում իր խոսքը:

Թաթուլը հին ու նոր մանրամասները բծախնդրորեն ի մի բերող երիտասարդ էր: Այստեղ էլ, ինքնաձիգը կրծքին սեղմած, բաց հրաձգարանում ձյան վրա պառկած, ուղիղ նայում էր սևով շրջանակված թիրախին, բայց աչքերի առջև Արտին լեռան քերծն էր, փախչող նապաստակը, ընկերոջ՝ Տիգրանի նկատելի տագնապը, թե՝ խփի՛ր, մի՛ ուշացրու, կփախչի: Սակայն այս թիրախը փախչող չէր, մեխված էր հարթակին, հեռու էր, քրթմնջացող, նման էր Տեփանի ձորակում ձմռանը հանդիպած մենավոր գայլին, որն ընկավ երկփողանի հրացանի կրկնակ կրակոցից:

Աչքերի առջև շաղվեց թիրախը, դարձավ երկու, երեք: Թաթուլը կտրեց հուշերի թելը, թիկունքում վաշտի հրամանատարն էր, զինվորական ընկերները: Զգաստությունը վերագտած լույսով ողողեց նրա ողջ էությունը, ավտոմատի սառը իրանը հուշեց, որ մատի տակ ձգան է, նայեց հանգիստ, կենտրոնացավ, թիրախն այնքան նկատելի ոլորվեց շրջապտույտների մեջ, հստակ պատկերվեցին հեռավորությունը, նշանակետը, իր անելիքը, և չուշացավ ցուցամատի սահքը:

Նշանատախտակը թեթև ցնցվեց, խոցված էր կենտրոնից: Կապիտան Օգարյովը հեռադիտակից կտրվեց, լայն ժպտաց: Թաթուլը ճիշտ թվանշանին էր խփել: Անտառափեշի հրաձգարանից վերադառնալիս վաշտը երգում էր: Թաթուլը հասցրել էր այդ երգերը յուրացնել, դաշնվել խմբի հետ, բայց առանձնապես ճիգ ու ջանք չէր թափում իր տեղը ցույց տալու:

Առաջին նամակը նա ստացել էր ծառայության երրորդ ամիսը լրանալուց հետո: Այս մեկը նույնպես թրթռուն տագնապ էր և կա-

րոտի կանչ, որ Թաթուլը արագ ծաղկաքաղ արեց: Քրոջ՝ Ռուզանի նամակն էր: Հույզերի այդքան ջերմություն, անտեսանելի ու մաքրամաքուր կրակ Թաթուլը վերջին ժամանակներում չէր զգացել: Ռուզանի մանրաքանդակները բացառություն չունեին, նա գրել էր ամեն ինչի մասին, շարադրել էր համբերատար՝ կարևորելով այն ամենը, որ կատարվել էր գյուղում: Հատկապես առկա էին իրենց տան տրամադրությունները, ծնողների, եղբայրների անհանգստությունն ու կարոտը: Թաթուլը մի քանի անգամ ընթերցեց քրոջ նամակը, որ այնքա՜ն, այնքա՜ն թանկ էր ու սիրելի: Նրա սրտում արթնացած ապրումները չորս ամիս անց մտովի վերադարձել էին մի հարազատ ափ, ուր ամեն ինչ իր համար երանելի էր, հեռաձայն ու քաղցր: Ճաշից հետո՝ դադարի ժամին, չկարողացավ քնել, ջոկատի հրամանատարից թույլտվություն խնդրեց և դուրս եկավ զորանոցից: Հեռու գնալու ո՛չ հնար կար, ո՛չ մտադրություն, պարզապես ուզում էր հոգում կուտակվածը բացահայտել, մի քիչ բարձրաձայն խոսել, երգել Գուլո տատի և հոր երգերը, առանձնանալ ձյան ու ձմռան արքայության հետ, ծառերի ճերմակ ճոճքերով մտովի թռչել, վեհանալ, հանդարտվել: Շրջապատում, իսկապես, ուրիշ կախարդանք էր, ասես տիեզերքից լքվել ու ցած էր սահել ճերմակ ծովերի անվերջանալի տեսիլքը: Սպիտակ շողքից նրա աչքերը կամաց-կամաց շաղվեցին: Թաթուլը կտրվեց շլացնող կապանքներից, հայացքը նրան տարավ երկնածով մշուշը, ուր ամպացելերի հեռագնա քարավաններ էին: Կանգնեց, խոր հոգոցով պաղ օդը շուլալվեց նրա կրծքի տակ, ուր փոթորիկ էր բարձրանում: Հարազատ եզերքների հողեղեն հմայքն էր Թաթուլը փնտրում, սակայն սպիտակից բացի՝ այլ նմանություն չկար: Իր Արտին սարի բարձր լանջերը, ձյունով ծմակված ձորերն ու ժայռերը, գյուղի ձմռան առավոտը, երդիկներից ու ծխնելույզներից միագումար ելնող և հեռուներ ճամփորդող ծուխն այստեղ չկային: Ընդամենը՝ ծառեր, անտառների թաքուն խորհուրդ և հաստատապես նստած ձյուն: Թաթուլը դրանց միջոցով ուրիշ կախարդանք էր հյուսում, մի ուրիշ պատում կերտում իր համար, որ հասկանալին ու հավանականը իրարից չխրտնեին: Այսպես մեկ ժամից ավելի դաշնելով խուռներամ խոհերը՝ նա, մնաց ճամփամերձ անտառափեշի ծառերի հետ: Նա հեռացել էր արձանացած կեչիներից, որոնց ներկայությունը ընդամենը մեղմ սփոփանք էր, իսկ իրեն պարուրած ալեկոծը գնալով զորանում էր: Թաթուլն զգում էր, որ թանկ հուշերի շեփորն է աղմկում ներսում, որից ծավալվող ջերմությունը փառահեղորեն ընդգծում էր հեռուներում թողած

պատկերը, պատում, հայացք և հորդորների բազմաձայն երամ: Այսպես նա գուցե երկար մնար, ազատվեր մխացող կարոտների վերջին ցոլքերից, եթե ետմիջօրեի սառը քամին չխառներ ձյան վերջին բարակ շերտը և գվվալով չգար անտառի խորքերից: Թաթուլն անշտապ քայլեց դարձի ճանապարհով: Զորանոցները հեռու չէին: Ձյունը քամու շալակը ելած, վազում էր առջևից, թավալվում նրա ոտքերի տակ: Թաթուլի շուրթերին տաք շունչը ուզում էր բառ դառնալ, երանելի երգ, որի սկիզբը հեռվում էր՝ մեղմածոր, ըղձալի ելևէջներով պահված:

«Էլի գարուն կգա, կբացվի վարդը...»: Շուրթերը զնգացին, թրթռոցի թանձր կտավը ապրված շողերով լցվեց, զարմանալի թնջուկը, որ այդքան ճերմակ ու տիրաբար բազմել էր հոգու գահերին, փլվեց՝ փութալով իջավ: Մնացին ինքն ու իր երգի տողը, որի միամիտ ստեղներին ձյան հավերժության ձոնն էր՝ տիեզերածոց, արձակ: Այդ ըմբռնելի տիրույթում Թաթուլը փորձում էր պահել իր մակույկը, ճերմակ ճիչերի մեջ չկորցնել իր ճամփան՝ հավատալով այն փիլիսոփայությանը, որ «օրերը ծուխ կըլին, տարին կմնա...»:

Երբ արդեն մոտ էր զորանոցին, երգը շուրթերից փախցրեց, պահ տվեց հոգում: Սակայն մեղեդայնության անդիմադրելի մորմոքը ափը շուռ տված գետի նման հորդում էր կրծքի տակ: Թաթուլը գոհ էր հետճաշյա իր մենությունից, անտառից, այս ցուրտ երկրամասի պաղ լիությունից: Նա, արդեն որերորդ անգամ, գրպանից դուրս բերեց քրոջ նամակը, ծրարից հարազատ ձայն լսեց, տաք օրհնանքների բարակ լույսը խնկանուշ հեռվից եկավ, սերակալեց սրտի սահմաններում և մնաց: Թաթուլն այլևս չկամեցավ տուրք տալ հեռաձայն կանչերին, զինվորի նման ձգվեց իր մեջ, խոհերի պարսը հավաքած՝ փորձեց կտրվել հոգեբարձ սահմաններից, ուր բարության ու բերկրանքի տուրք էր: Աստիճաններով բարձրանալիս ձախ կրծքախորշում սուր ծակոց զգաց: Բարեբախտաբար այն մի ակնթարթ տևեց, անցավ: Թաթուլն ուշադրություն չդարձրեց, վերջին ամիսներին առաջին անգամ չէր, որ նա սրտի շրջանում անսովոր տագնապ էր զգում. «Երևի ցրտից էր, մրսեցի...»: Այսպես նա ախտորոշեց իր վիճակը, փակվեց իր մեջ, որ անջրպետվի հոգու խուլ մորմոքներից: Ոչ մեկի հետ չկիսվեց, առանձնացավ, պառկեց իր մահճակալին: Սա իր բնավորությանը հարիր չէր, բայց հասկացավ, որ սիրտն անսովոր բան է հուշում: Նրան մոտեցան ջոկատի տղաները, բոլորին ժպտաց, կատակեց մի քանի բառով, բայց ներքին ծակոցների մասին ոչինչ չասաց: Եվ երբ ընթրիքի ժամին

մնաց պառկած, ջոկատի հրամանատարը զինվորական բժշկի հետ այցելեցին Թաթուլին: Կարճ զրույց տեղի ունեցավ. ընդամենը մի քանի հարցեր տվեց, չափեց արյան ճնշումը, ջերմաստիճանը, հետաքրքրվեց տրամադրության անկման պատճառներով:

- Երբևէ գանգատվե՞լ եք սրտի աշխատանքից,- հարցրեց բժիշկը՝ պայուսակի մեջ տեղավորելով տոնոմետրը:

- Այդպիսի բան չեմ զգացել,- հանգիստ պատասխանեց Թաթուլը:

- Կարծում եմ՝ չի խանգարի, որ գաք ստուգման:

- Ես ինձ հիմա լավ եմ զգում, մի՞թե այդքան լուրջ է,- կատակի տվեց Թաթուլը և բարձրացավ պառկած տեղից:

- Այնուամենայնիվ, անհետևանք չպետք է թողնել, սրտի հետ կատակ չեն անում,- ասաց բժիշկը և դառնալով ջոկատի հրամանատարին՝ ավելացրեց,- վաղը նրան կգործուղեք կենտրոն:

Երբ նրանք գնացին, Թաթուլը մտավ մեծ սրահ, քայլեց աջ ու ձախ, կրծքի տակ ծակոցներ գրեթե չկային: Նա մի տեսակ զարմացած էր բժշկի կտրուկ առաջարկի համար: Շուտով հավաքվեցին ընկերները, իմացան, քաջալերեցին՝ ամեն ինչ վերագրելով եղանակների կտրուկ փոփոխությանը:

Ընթրիքից հետո Թաթուլը դուրս չեկավ զինվորական հաշվարկի, բաց թողեց նաև ուշ երեկոյի ավանդական զբոսանքը: Պարզապես ընկերները խորհուրդ չտվեցին, իսկ ջոկատի հրամանատարն էլ բարեկամաբար խնդրեց, որ պառկի:

Հաջորդ օրը սանմասի բուժակի ուղեկցությամբ Թաթուլը մեկնեց քաղաքային զինվորական հիվանդանոց: Այստեղ մանրամասն հետազոտեցին և եկան այն եզրակացության, որ նա պետք է առժամանակ մնա հիվանդանոցում, լինի բժիշկների հսկողության տակ: Սկզբում Թաթուլն առարկեց՝ կրկնելով, որ առանձնապես տագնապալի ցավեր, անհանգստացնող ծակոցներ չի զգում: Գլխավոր բժիշկն անդրդվելի էր: Նրան ուղեկցեցին հիվանդասենյակ, զգեստափոխեցին և անմիջապես դիմեցին կազդուրիչ դեղամիջոցների: «Սա ի՞նչ անակնկալ էր, ո՞վ կսպասեր, որ սիրտս հենց այնպես տեղահան կլինի ու կխռովի ինձնից, չի դիմանա կարոտին, չի հաշտվի այս համատարած ձմռան հետ: Հետո՞, անպայման ափեափ պիտի խենթանա, որ հասկանա՞մ իրեն...»: Որքան որ պինդ տղամարդ էր Թաթուլը, նույնքան հուզական ու խորն էր: Նա իր մեջ՝ ներսում քննում էր ամեն ինչ, մտնում հոգու և անանձնական ցավերի աշխարհը, ուր առաջին զրուցակիցն ու պատասխանողն իր սիրտն էր: Նրա հետ ու նրա միջոցով էին ձգված իր խորհրդավոր գույները, իր

տաք, տիրական բառերը: Հիմա այդ բաբախուն սիրտը հայտնվել էր ինչ-որ շղթաների մեջ: Այդ բանը կողքից նկատեցին, գրանցեցին սպիտակ ժապավենին և ասացին՝ մնա:

Մի քանի օր անց Թաթուլը վերջնականապես համոզվեց, որ սրտի շրջանում անսովոր ակտիվություն կա, իսկ բութ ցավերը գնալով ուժգնանում էին: Բժիշկների ամեն այցի ժամանակ արդեն խոսք էր գնում վիրահատության մասին: Նրանք մանրամասնորեն և համոզիչ էին բացատրում, թեև ոչինչ չէին բարդացնում, բայց իրավիճակից դուրս գալու միակ ելքը համարում էին անհապաղ վիրահատությունը:

- Թերապևտիկ բուժումը չի՞ օգնի,- վերջին հանդիպման ժամանակ հարցրեց Թաթուլը:

- Դրանք ընդամենը ժամանակավոր մեղմացումներ կլինեն,- եղավ գլխավոր բժշկի պատասխանը:

- Իսկ արդյունքում դուք համոզվա՞ծ եք, որ ամեն ինչ բարեհաջող կվերջանա,- ոչ խիստ, բայց նկատելի կասկածանքով ասաց Թաթուլը: Պատասխանը անմիջապես չհնչեց: Բժիշկներն արագ փոխանակեցին հայացքները, և նրանցից ավագը՝ գնդապետ Աբուզակևիչը, խորաթափանց նայեց, ժպտաց և ձեռքը դրեց Թաթուլի ուսին.

- Հարգելի՛ս, բժշկության մեջ ամեն ինչ բացարձակ չէ, բայց կարևոր է ստույգ փորձը, որի միջոցով ամեն մի բժիշկ մեծ հավատով է դիմում համարձակության:

- Իսկ սիրտը կարելի՞ է մեկ-երկու ծակոցի համար տանել այդ համարձակության դաշտը,- պատասխանեց Թաթուլը: Բժիշկը զգաց, որ գործ ունի կյանքը և իրավիճակը կոնկրետության մեջ գնահատող անհատի հետ, այս անգամ մի քիչ ավելի մեղմացավ:

- Բոլոր ստուգումները, որդի՛ս, մեզ հուշում են այդ քայլը: Հավատա, որ ոչ լուրջ վիրաբույժը նշտարը գործի չի դնի, եթե դեռևս սպառված չեն բուժման մյուս եղանակները:

- Այս դեպքում մնում է համաձայնվել և վե՞րջ,- անհանգստացած ասաց Թաթուլը և նայեց լուսամուտից դուրս:

- Հուզվելու կարիք չկա, կհեռագրենք, թող քո հարազատներից ներկա լինեն, դա քեզ կօգնի,- հորդորեց գնդապետ Աբուզակևիչը:

- Իսկ եթե ինձ թույլ տաք, ես գնա՞մ. Հայաստանում սրտաբանության ինստիտուտ կա, իմ հարազատներին պետք չի լինի անհանգստացնել:

- Ոչ ոք չի կասկածում, որ Երևանում կան փորձված պրոֆեսորներ, սակայն իրավիճակից ելնելով՝ քեզ չի կարելի այդքան ճանապարհ անցնել:

Թաթուլն այլևս չխոսեց: Աբուզակևիչը համոզիչ էր բոլոր հարցերում: «Ուրեմն անխուսափելի է վիրահատությունը, գուցե շատ ավելի լուրջ բան կա. սրանք ինձ քիչ բան են ասում և ուզում են, որ իմ հարազատներից այստեղ ներկա լինեն...»:

- Մենք կհեռագրենք ծնողներիդ, կաշխատենք հեռախոսով զրուցել նրանց հետ, հանգիստ կպարզաբանենք, որ ծանր ապրումների տեղիք չտանք,- մեղմաձայն շարունակեց գլխավոր վիրաբույժը:

Թաթուլն այլևս չխոսեց, թեև մի քանի բան ուներ նրանց ասելու: Բժիշկները գնացին: Հիվանդասենյակում ուրիշ ոչ ոք չկար, դա նաև իր սրտով էր, չէր ուզում հարցեր լսել, պարզապես դրանց պատասխանելու ցանկություն չուներ: Եվ երբ բուժքույր Նաստյան ներս մտավ՝ սպիտակ, քնքուշ մատների մեջ բռնած ներարկիչը, Թաթուլն ակամայից ժպտաց, և նրա մեղմանուշ բարևին պատասխանեց նույն ձևով ու հարցրեց.

- Նաստյա՛, այս բժիշկները ճի՞շտ են ասում, այդքան բա՞րդ է իմ վիճակը, վիրահատելն անխուսափելի է:

- Նրանց պիտի հավատաս և վստահես,- ավելի պայծառացավ բուժքույրը,- Աբուզակևիչը հայտնի անուն է ամբողջ երկրամասում, նրան հրավիրում են Մոսկվայի առաջատար ինստիտուտները:

- Ուզում ես ասել՝ իմ բախտը բերե՞լ է,- թեթև ծիծաղեց Թաթուլը:

- Իհարկե, դա այդպես է, այս դեպքում քո բախտը բերել է, բայց լավ կլինի, որ հիվանդությունը բախտ չորոներ քո սրտի սահմաններում:

- Հրաշալի է, պատկերավոր եք խոսում, Նաստյա,- ասաց Թաթուլը,- ես աստիճանաբար հավատում եմ բոլորիդ՝ գլխավոր բժշկից մինչև բուժքույրը:

Նաստյան թեթևակի շիկնեց, ավելի լայն ժպտաց՝ հոգու հմայքները շաղ տալով դեմքին և ավարտեց ներարկումը: Քիչ հետո նա վերմակի տակից դուրս բերեց Թաթուլի ձեռքը և շոշափեց զարկերակը: Թաթուլը մոռացավ ասեղի ծակոցը և ակնապիշ հետևեց Նաստյայի շարժումներին: Այսպես վաքսուն վայրկյան նա անթարթ աչքերով ինչ-որ բան էր որոնում բուժքրոջ աչքերի մեջ, խարտյաշ խոպոպներին, ճակատից ցած վարգող ժպիտների խաղերին: Եվ երբ Նաստյան դուրս եկավ հիվանդասենյակից, Թաթուլն աչքերը փակեց, վերագտած տեսիլքներով ճախրեց հայրենի գյուղ: Արեգի դպրոցի ճանապարհին նա կարծես գտավ աղջիկների խումբը, նրանց մեջ մեկին, որ Նաստյայի ժպիտն ուներ, բայց ավելի նազանքով էր, աջ ու ձախ չէր նայում, հպարտ էր, սլացիկ, նվաճող: Թաթուլը չէր

ուզում բացել աչքերը, որ չցնդեին հրեղեն այգը, ամռան միջօրեն, գյուղի տապը, զրնգուն ծիծաղի կարկաչները: Դրանց մեջ այն մեկի սլացքն էր, անբռնազբոս սիգանքը, որ հիմա հազարավոր կիլոմետր հեռվից հույսի արահետ բացել ու գալիս էր: Թաթուլն անուշ մխանք առավ հոգուց, մեկտեղեց սրտի ու հոգու ցավը, շուռ եկավ անկողնում, ցիրուցան մտքերը ժողովեց, բերեց և ի պահ հանձնեց իրեն: Ուրիշ էլ ո՞ւմ, բացի իրենից, որ հիմա այստեղ՝ ցուրտ հյուսիսում, տաք թրթիռ էր փնտրում հիվանդ սրտի համար, որ իր բերդի սյունը ճաք չտար, որ Արտին լեռան կարոտով իր դարձի ոտնահետքերը մի օր գագաթ գնային: Սենյակն աստիճանաբար խաղաղվեց, մնաց մտքերի փոթորիկը, որի առաջնորդը սրտի խուռներամ զարկերն էին, որոնց նկատմամբ երբևէ այսքան ուշադիր չէր եղել Թաթուլը: Մի տեսակ թանկ հնչողությամբ էր ամեն ինչ «զորակոչվել» իր մեջ: Անցյալն ու ներկան այնպես էր հյուսում բարության կտավներին, որ իր փոխարեն սիրտն ուրախանար: Մինչև վիրահատության նշտարը կմոտենար իրեն, նա ձգտում էր սիրտը զորացնել հարազատների պատկերներով. լուսավորում էր սրտածվար սրահները, ուր ծնողների՝ Ժորայի և Սեդայի մեղմանուշ ժպիտն ու խոսքն էին, Գուլո տատի չմոռացվող օրհնանքը, եղբայրների ոգեղեն ուժը, քրոջ՝ Ռուզաննայի նամակների նեկտարահյուսքը, որի մեջ շողերի ընծյալ առավոտ էր, ցմահ ցնծության անկորնչելի խորհուրդ: Թաթուլն այս ամենը հոգու աղոթքներով բերում, մյուռոնում էր սրտի պատերին, որ ամրության տոհմաձայները հնաբույր ու նշխարահամ սիրով դարձի օրոր բերեին, քանզի միտքն ու հոգին սրտի անբեկ նժույգով դեռ ճամփա ունեին անցնելու:

* * *

Հեռագիրը տագնապալուր էր: Սերգոն շրջկենտրոնի կապի հանգույցից վերցրեց այն, կարդաց և աչքերին չհավատաց: «Ձեր որդուն՝ Թաթուլին, սպասվում է բարդ վիրահատություն, առաջիկա տասնօրյակում ցանկալի է ձեր ներկայությունը»: Հեռագիրը ստորագրել էր գլխավոր բժիշկ, գնդապետ Աբուզակևիչը: Սերգոն մի քանի անգամ կարդաց՝ կարծելով՝ թյուրիմացություն է, և անմիջապես որոշեց զանգահարել եղբորը: Բարեբախտաբար հեռագրում նշված էին հիվանդանոցի հասցեն և երկու հեռախոսահամար: Քառորդ ժամից հիվանդանոցի հերթապահ բժիշկը հաստատեց հեռագրի իսկությունը և բաժանարարից միացրեց Թաթուլի հիվանդասենյակի հեռախոսը:

- Թաքո՛ւլ,- հնչեց Սերգոյի տագնապած ձայնը:

- Սերգո՛, որտեղի՞ց ես խոսում,- միանգամից ջերմացավ Թաքուլը:

- Թալինի կապի հանգույցից, ի՞նչ է պատահել, հեռագիրը հենց նոր եմ ստացել:

- Առանձնապես լուրջ բան չկա, բայց բժիշկները մտահոգություն են արտահայտում՝ կապված սրտիս հետ:

- Էդ ի՞նչ եղավ քեզ, ընդամենը չորս ամիս ես բացակայել, դու սրտից երբևէ գանգատվե՞լ ես:

- Եղբա՛յր, դու ինձնից ավելի լավ գիտես, բայց երևի ինչ-որ բան կա, սրտիս կողմերում ցավերը չեն հանգստանում:

- Լա՛վ, սպասի՛ր, կգամ,- վճռական ասաց Սերգոն:

- Հայրիկին, մայրիկին չասես, գիտես իրենց,- առաջ ընկավ Թաքուլը:

- Դու քո մասին մտածի՛ր, հանգիստ պառկի՛ր, մնացածը մեր գործն է:

- Էլ չասեմ, տագնապի փող չհնչեցնես,- Թաքուլն աշխատեց ծիծաղել, որ ցրի եղբոր տրամադրությունը:

- Տագնապ չկա, լուրջ բաներին պետք է լրջությամբ վերաբերվել,- եզրափակեց Սերգոն,- համբերի՛ր, շատ շուտով կհանդիպենք:

Սերգոն կապի հանգույցից դուրս եկավ նկատելի ճնշված և անտրամադիր: Շրջապատում կարծես ամեն ինչ փոխվեց իր աչքի առաջ: Ցանոթ անցորդներին հենց այնպես էր բարևում, գնում էր գլխահակ, արագ-արագ: Ավտոբուսի չսպասեց, գյուղ գնացող բեռնատարի խցիկում վարորդից բացի մեկը կար, ինքն էլ տեղավորվեց: Ընդամենը մի քանի բառ խոսեցին, ու ինքը լռեց: Ցոցագրպանում հեռագիրը ծանրացել էր սրտին, հեռավոր մի երկյուղ ոտքի ելել ու գալիս էր: Սերգոն փորձեց կենտրոնանալ, մինչև տուն հասնելը որոշել իր անելիքը: Դրսում ձմռան կեսօր էր, տեսադաշտերում գրեթե սև կետ չկար, ձյուն էր, ձնաբուք, միայն տրորված ճանապարհն էր հեծկլտում մեքենայի անիվների տակ: Սերգոն այս պատկերներից ավելի ընկճվեց: Սառը օդը տիրաբար նստել էր չտաքացվող խցիկում, սթափեցնող էր, ծայրաստիճան ներգործուն ու ներկա: «Ի՞նչ ասեմ մերոնց, հեռագիրը շարադրված է շատ կտրուկ, տողատակերում տագնապ կա, պարտադիր կանչ... Թաքուլը, հավանաբար, շրջանցեց իրական վիճակը, չուզեց ժամանակից շուտ խոր հուզմունքի առիթ տալ... Ի՞նչ պատահեց էդ առյուծ տղամարդուն, ֆիզիկապես ուժեղ էր, գանգատ չի ունեցել, հոգով էլ ուժեղ ու ուժեղ էր... Թաքցրեց երևի, իր գաղտնապահությունը թույլ չտվեց ամեն

ինչ ասել...»: Մտքերի այս անորոշ զուգահեռներում մոլորվել էր Սերգոն, բայց չէր կորցրել ընդառաջ եկող լույսը: Գյուղի կենտրոնում նա ակնթարթորեն իջավ մեքենայից և շտապեց տուն: Որոշված էր, որ հայրը պիտի իմանա: Տուն չհասած՝ եղբայրները ընդառաջ եկան: Նրանք գիտեին, որ շրջկենտրոնում իրենց հայրիկի անունով հեռագիր է ստացվել:

- Ի՞նչ հեռագիր է,- գրեթե միաբերան հարցրեցին եղբայրները:

- Թաքուլը հիվանդանոցում է, գլխավոր բժիշկը հեռագրել է, որ մի քանի օրից լինենք այնտեղ, վիրահատություն է սպասվում:

- Ի՞նչ վիրահատություն,- չհամբերեց Մինասը:

- Խոսեցի Թաքուլի հետ, ասաց՝ սրտից է գանգատվում:

- Ի՞նչ,- զարմացավ Մանվելը:

- Չգիտեմ, գնա՛նք, հայրիկին կասենք, մայրիկն ու Ռուզանը, նույնիսկ Գուլո տատը թող չիմանան,- ասաց և առաջ անցավ Սերգոն:

Ժորան, դռան առջև կանգնած, ծխում էր: Նկատվում էր, որ նյարդայնացած է, նա գիտեր հեռագրի մասին, բայց ի՞նչ էր այն բերել և ումի՞ց էր, չգիտեր: Տղաներին հեռվից տեսավ և արագ դուրս եկավ փողոց:

- Սերգո՛, ի՞նչ լուր ես բերել, տղա՛,- նրանց տակավին չհասած՝ գրեթե բղավեց հայրը:

- Հայրի՛կ, մի՛ անհանգստացի, առայժմ լուրջ բան չկա,- պատասխանեց Սերգոն:

- Ի՞նչ է նշանակում առայժմ,- նվաղեց Ժորայի ձայնը, և նա հենվեց քարե շարուկին:

- Հայրի՛կ, ահա՛ հեռագիրը:

- Կարդա՛:

- Ռուսերեն է...

- Ուզում է ֆրանսերեն լինի, կարդա՛,- չհամբերեց Ժորան:

Սերգոն կարդաց: Եղբայրներով բոլորեցին հորը: Ժորան հուզված էր, չէր կենտրոնանում: Սերգոն կարողացավ համոզել, որ խոսել է Թաքուլի հետ, իհարկե թաքցրեց, որ վիրահատությունը կապված է եղբոր սրտի հետ: Սեդային, Ռուզանին, մյուս հարազատներին նույն ձևով ձևակերպեցին կանչը, մանավանդ հեռագիրը վկայում էր վիրահատության փաստը, բայց ոչ կոնկրետ տեսակը:

Երկու օրից Ժորան և Սերգոն ինքնաթիռով հասան Մոսկվա, ապա մեկնեցին Կալուգայի երկրամասի Օդենցովո քաղաքը: Օրն իրիկնանում էր, երբ նրանք ճիշտ հասցեով կանգնեցին քաղաքային զինվորական հիվանդանոցի կենտրոնական մուտքի առջև: Հերթա-

պահը մի քանի ստուգիչ հարցեր տվեց, ներքին հեռախոսակապով տեղյակ պահեց գլխավոր բժշկին: Գնդապետ Աբուզակևիչը անմիջապես թույլտվություն տվեց: Հայր ու որդի ներս մտան, հիվանդասենյակի դռների մոտ գլխավոր բժիշկը սպասում էր: Բարևեցին, մի քանի մտքեր փոխանակեցին, վերջում մինչև Թաթուլին հանդիպելը, գնդապետը զգուշացրեց.

- Ավելորդ հուզմունքի առիթ չտաք, Թաթուլին հանգիստ է պետք, անսպասելի հարցեր պետք չեն, աշխատեք պատշաճ ու զուսպ լինել:

- Սերգո՛, էս մարդու կարծիք զարկվեց իմ սրտին, ի՞նչ կա, տղա՛,- զգաստացավ Ժորան:

Բժիշկը, իհարկե, չհասկացավ, թե հայր ու որդի հայերենով ինչ խոսեցին:

- Ես առաջինը կմտնեմ, հետո ձեզ կհրավիրեմ,- ասաց Աբուզակևիչը և անհետացավ դռների հետևում:

- Թաթու՛լ, ուրախ լուր ունես,- գնդապետը նստեց մահճակալի մոտ դրված աթոռին:

- Վիրահատություն չի՞ լինելու,- զգաստացավ Թաթուլը:

- Վիրահատությունը սովորական ընթացքով կկատարվի, բոլոր անալիզները գերազանց են,- ուրախացած վրա բերեց բժիշկը և աչքերը կկոցած ժպիտով նայեց իր հիվանդին:

- Ինչ-որ նոր բան կա՞, շատ արտասովոր եք նայում ինձ:

- Քեզ հանգիստ ու համբերատար դրսևորիր, արդեն հասկացել եմ, որ շատ ուժեղ տղամարդ ես:

- Ճիշտ այդպես, ընկե՛ր գնդապետ,- ծիծաղեց Թաթուլը:

Աբուզակևիչը հոգեբանորեն հենց այս պահն էր նախապատրաստում, անմիջապես դուռը բաց արեց և սիրալիր ասաց.

- Խնդրեմ, հարազատնե՛ր, Թաթուլը ձեզ է սպասում:

Նախ Ժորան ներս գնաց, ապա Սերգոն:

- Հայրի՛կ, Սերգո՛,- Թաթուլն ակնթարթորեն իջավ մահճակալից, փաթաթվեց հորն ու եղբորը,- այս ե՞րբ հասցրեցիք գալ:

- Դու պառկի՛ր,- միջամտեց բժիշկը: Աբուզակևիչը չէր սպասում, որ Թաթուլն այդպես կտրուկ կբարձրանա անկողնուց, դա չէր նախատեսել:

- Կպառկեմ, ընկե՛ր գնդապետ, մի՛ անհանգստացեք, ամեն ինչ լավ կլինի:

- Հարազատներիդ թողնում եմ մենակ, աշխատեք իմ ժամանակավոր հիվանդին շատ չհոգնեցնել,- գնդապետը շրջվեց հյուրերի կողմը:

- Ամեն ինչ լավ կլինի, բժի՛շկ,- այս անգամ պատասխանեց Ժորան:

Հոր խնդրանքով Թաթուլը պառկեց: Մահճակալի մի կողմում հայրն էր, մյուսում՝ Սերգոն: Երկար խոսեցին: Թաթուլն իր կտրուկ հարցերով ոչ մի բան և ոչ մեկի բաց չէր թողնում: Նույն մանրամասներով նա պատասխաններ էր ստանում, չէր թաքցնում, որ աշխարհի չափ ուրախացել է՝ իրենց տեսնելով: Հատկապես շատ էր ուզում պատմեին տատի, Սեդա մայրիկի, Ռուզանի, եղբայրների, մյուս հարազատների, իր ընկերների մասին: Հայրը զգում էր, որ Թաթուլը կարոտի հիվանդ է, սիրտը լիքն է ծննդավայրի մասունքներով: Սերգոն ավելի քաջատեղյակ էր իրադրությանը, բայց հարմար առիթ չէր գտնում կոնկրետ մի բան իմանալու: Այնուամենայնիվ, նա եղբորը ինչ-որ կերպ հասկացրել էր, որ հայրը չգիտի սրտի վիրահատության մասին:

Մեկ ժամից վերադարձավ գնդապետ Աբուզակևիչը:

- Բավարար զրուցեցիք, գո՞հ եք,- հարցրեց:

- Շատ գոհ ենք, ընկե՛ր գնդապետ,- պատասխանեց Սերգոն,- Թաթուլը հիմա լավ է զգում իրեն:

- Ինձ թվում է՝ նա կարոտի հիվանդ է,- խոսքը շարունակեց Ժորան,- մեր ներկայությամբ կբուժենք:

- Երանի թե ամեն ինչ այդպես լիներ,- ժպտաց գնդապետը,- սակայն մի փոքր միջամտություն է պետք Թաթուլին:

Սերգոն մի տեսակ գունատվեց, քանի որ բժիշկը կարող էր ամեն ինչ բաց ասել՝ չիմանալով, որ հայրը չգիտի որդու հիվանդ սրտի մասին:

- Թաթուլը գիտի, հարազատները նույնպես պետք է իմանան,- առաջ անցավ զինվորական բժիշկը,- չէ՞ որ դրա համար ենք ձեզ հրավիրել:

- Էս ի՞նչ է ասում, Թաթո՛ւլ,- գրեթե նվաղեց հոր ձայնը: Մայրենիով հնչած Ժորայի զարմանքը պարզ էր միայն որդիներին: Գնդապետը խուզարկու հայացքով նայեց Թաթուլին՝ ակնկալելով պատասխան:

- Հայրի՛կ, ինչ էլ լսես, հանգիստ ընդունիր, թող այս օտարականը չկռահի մեր թուլությունը,- ասաց Թաթուլը և դարձավ դեպի զինվորականը,- շարունակեք ձեր խոսքը:

- Ձեր և մեր Թաթուլը պետք է ենթարկվի սրտի վիրահատության:

Ժորան գունատվեց, լուռ փլվեց աթոռին, բառ չէր գտնում, մտքերը սառել էին: Նա խեթ նայեց գնդապետի ուսադիրներով բարձրահասակ ռուս մարդուն և հայացքն անմիջապես փախցրեց:

- Հայրի՛կ, սրտի հետ է կապված, բայց ոչ այն բարդություններով,

որ հաճախ լսում ենք,- Թաքուլն աշխատեց հանգստացնել հորը: Բայց Ժորան իրեն չէր գտնում, այս անգամ ավելի ծանր հայացքով նայեց Սերգոյին:

- Դու գիտեիր ու ինձ չասացի՞ր, ես Թաքուլի հայրն եմ, բալա՛:

Գնդապետը, թեև հայերեն չէր հասկանում, բայց հրաշալի պատկերացում ուներ, թե ինչ զրույց է տեղի ունենում այս երեքի միջև:

- Եկեք հասկանանք իրար,- միջամտեց բժիշկը,- դուք հայրն եք, դուք էլ մեծ եղբայրը, զինվորական բժշկական խորհուրդը ձեզանից ոչինչ չունի թաքցնելու:

- Այսինքն ի՞նչ,- աթոռին անհանգիստ շարժվեց Ժորան և ուղիղ նայեց բժշկի խաղացկուն աչքերի մեջ:

- Այն, որ Թաքուլի մոտ սրտի անբավարար աշխատանքը կապված է որոշակի շեղումների հետ,- բացատրեց գնդապետը,- իսկ դրա կարգավորման միակ ելքը վիրահատությունն է:

- Իսկ երաշխիքը, բժի՛շկ,- հոգու փոթորկից իջավ Ժորան և կարեկցանքով նայեց Թաքուլին:

- Դրական հավանականությամբ, մենք ունենք ժամանակակից սարքավորումներ և լուրջ բժշկական անձնակազմ:

- Վիրահատությունը վերջնակա՞ն է և անխուսափելի՞,- խոսակցությունն ընդհատեց Սերգոն: Ժորան նույնը պետք է հարցներ, լռեց:

- Ամեն ինչ ստուգված է, հենց այնպես սրտի վիրահատություն չեն անում:

- Իսկ դա ե՞րբ է նախատեսվում,- իր հարցով մյուսներին կանխեց Թաքուլը,- պետք չէ երկար խոսել, քննարկել, երբ ամեն ինչ վճռված է:

- Հավանաբար երկու օրից,- ասաց գնդապետը,- առայժմ միասին եղեք, զրուցելու էլի բան կունենաք:

- Իսկ նրանց կարելի՞ է, որ ինձ հետ մնան,- խնդրեց Թաքուլը:

- Ոչ թե կարելի է, այլ արդեն մտածված է այդ մասին: Նրանք կզբաղեցնեն այս երկու մահճակալները, այստեղ ձեզ ոչ ոք չի անհանգստացնի:

- Շնորհակալություն,- ասաց Սերգոն և սեղանին դրեց կոնյակ, ապխտած միս, չորացրած մրգեր, Արեգի պանիր, թոնրի լավաշ և գաթա:

- Հյուրասիրվեք, ընկե՛ր գնդապետ,- Թաքուլը իջավ անկողնուց:

- Տղա՛, դու պառկի՛, էս մարդու սատանայական «դիագնոզ» իմ սրտին դուր չեկավ,- ասաց Ժորան, մոտեցավ, հայրաբար գրկեց որդուն:

- Հայրի՛կ, մի՛ մտածիր, ամեն ինչ լավ կլինի, բժշկական փորձված մասնագետների խումբ է այստեղ աշխատում,- Թաթուլը հանգըստացրեց հորը և խնդրեց մոտենալ սեղանին:

Սերգոն լցրել էր կոնյակի գավաթները: Գնդապետը ջերմ խոսք ասաց, հուսադրեց բոլորին և մեկ հպումով խմեց:

- Պարզապես հրաշալի է հայկական կոնյակը,- ասաց նա, գավաթը դրեց սեղանին, մի կտոր լավաշ և ապխտած միս վերցրեց:

- Թաթուլիս առողջացրեք և ձեր բժշկական անձնակազմով հյուր եկեք Հայաստան,- ասաց Ժորան,- շնորհակալ եմ ընկեր գնդապետ, որ իմ որդու և ձեր զինվորի հանդեպ այդքան հոգատար եք:

- Դա մեր պարտքն է, իսկ Թաթուլն ուժեղ է, ջլապինդ, պարզապես քաջ է,- ոգևորված պատասխանեց գլխավոր բժիշկը,- առաջին դեպքը չէ, շատերին ենք առողջություն պարգևել:

Ճրույցը գրեթե մեկ ժամ տևեց: Այդ ընթացքում Թաթուլը պառկած էր, սեղանի ուտելիքներից քիչ օգտվեց, արդեն մի քանի օր բժշկի խորհրդով իրեն չէր ծանրաբեռնում:

Գնդապետը բարի գիշեր ասաց, գնաց: Մնացին հայրն ու որդիները: Թաթուլը դարձյալ հանգիստ չէր տալիս իր հարցերով, նրա հետաքրքրությունը սահման չուներ, ուզում էր նույն բանը մի քանի անգամ լսել:

- Գյուղն էլ, Հայաստանն էլ իրենց տեղում են, բալա՛,- նեղսրտեց հայրը,- ամեն բանի համար քու սիրտ կրակ մի՛ լցրու, Աստված գիտի, թե էս չորս-հինգ ամիս ո՞նց ես դիմացել:

- Մենք որ գալիս էինք, էլի հավաքվեցին, եկան,- հոր խոսքը շարունակեց Սերգոն,- հեռագիրը, ինքնաթիռի տոմսերը, մեր տան տրամադրությունը ումի՞ց թաքցնեինք:

- Բայց ինչո՞ւ էիք թաքցնում, հո ես հանցանք չէի՞ կատարել, ձեզ դատարա՞ն էին հրավիրում:

- Դու ճիշտ ես, Թաթո՛ւլ, բայց դե էդպես ստացվեց,- ասաց հայրը,- ես էլ մի կարգին չիմացա, էստեղ քո բժիշկը բացատրեց:

- Հիմա հեռագրեք գոնե, որ տեղ եք հասել, և ամեն ինչ կարգին է,- առաջարկեց Թաթուլը:

- Այդ մասին կմտածեմ, դու անհոգ եղիր,- ասաց Սերգոն,- հայրի՛կ, իսկ դու պառկիր այս մահճակալին, հոգնած ես երևի:

- Ո՞վ կսպասեր, որ պիտի հասնեինք էս ցուրտ աշխարհն ու հիվանդանոցում գտնեինք Թաթուլին,- նկատելի ցավով հնչեցին Ժորայի բառերը: Նա չպառկեց, գնաց, նստեց Թաթուլի մահճակալի եզրին:

- Հայրի՛կ...

- Իմ վիճակը քոնից լավ է, տղա՛,- մրմնջաց հայրը,- Աստված քեզ օգնական:

- Եկել եք, որ ինձ տխրեցնե՞ք,- Թաթուլը բռնեց հոր ձեռքը,- պատմե՛ք, ո՞նց են գյուղի մեծն ու փոքրը, ովքեր են ամուսնացել, քանի հարս եք գյուղ բերել, քանիսն են հարս գնացել, քանի օրորոց է ավելացել, թե չէ եկել ու Աստված եք կանչում:

- Մեր ձեռք ուրիշ էլ ի՞նչ կա տղա, մեկ դու, մեկ քու Աստված,- արդարացավ հայրը:

- Իմ Աստվածը դուք եք, հետո այս բժիշկներն են, որոնք, հույս ունեմ, ոչ մեկին իմ պատճառով չեն տխրեցնի:

- Այդպես էլ կլինի,- ժպտաց Սերգոն,- դուք խոսեք, ես մտնեմ հեռագրատուն, հիմա գիտեք մերոնց վիճակը:

- Գնա, բալա՛,- ասաց Ժորան և սկսեց մեկ-մեկ պատմել, թե վերջին չորս-հինգ ամիսներին ինչ է կատարվել Արեգում:

Թաթուլին բոլոր մանրուքները հետաքրքրում էին, բայց շատ էր ուզում իմանալ այն մեկի մասին, որն աղջիկների խմբից առանձնանում էր, նազանքով էր, աջ ու ձախ չէր նայում, հպարտ էր, սլացիկ ու նվաճող:

Հոր պատմությունների մեջ նրա կերպարը բացակայում էր: Ախր ինքը նրա անունն էլ մի կարգին չգիտեր, տեսել էր հեռվից, և այդ տեսիլք-խայտանքը պահ էր տվել իր հոգուն, տեսել էր մոտիկից, նրա աչքերի բոցով բռնկվել էր ու մտքում բարակ շշուկով շշնջացել՝ Շուշա՜ն: Հիմա հայրիկից ինչպե՞ս իմանար այդ Շուշանի մասին, որ քաղաքից եկած հովեկների հետ Արտին սարն էր բարձրանում, կեսօր էր, շուրջը զմրուխտ էր, զմայլանք, ու ինքը ընկեր-տղաների հետ քարափների ծոցից հսկում էր նրանց վերելքը: «Տիգրանն ասաց, որ մեր գյուղացի է, վեցերորդ դասարանից մեկնել է Երևան...»: Թաթուլը հիշեց, որ ոչ ոք նրա անունը չիմացավ, բայց գյուղի տասներորդցիները գիտեին, առաջին անգամ Թաթուլը նրանց շարքերում տեսավ այդ ոսկեգիսակ տիրուհուն՝ սլացիկ ու նվաճող: Հիմա հայրիկի պատմությունը թեև հաճելիորեն երկարում էր, դառնում մերձ ու մանրամասն, բայց Թաթուլը չէր գտնում Արեգի միջօրեն զարդարող այն աղջկան:

- Հայրի՛կ:

- Ասա, բալա՛:

Թաթուլը վճռական ձգվեց տեղից, աչքերն անսովոր կրակով լի էին, սրտում այնքան տաք ճռվողեց քնից արթնացած թռչունը:

- Ի՞նչ եղավ,- անհանգստացավ հայրը:

- Ոչինչ, կարևոր բան հիշեցի,- դրությունից փորձեց դուրս գալ, բայց կյանք տեսած Ժորա հայրիկին չէր կարող ապակողմնորոշել:

- Ուրիշ ի՞նչ է քեզ անհանգստացնում,- հայրը ժպտալով նայեց Թաթուլին, որի աչքերում անթաքույց բռնկված էր արևոտ կենսացոլքը,- նոր բաներ չունե՞ս գրած,- որդու սիրտը բացելու միակ միջոցը գտավ Ժորան և գորովանքով համբուրեց նրա ճակատը:

- Իհարկե ունեմ,- Թաթուլը հասկացավ, որ նա կռահել է իր տագնապների պատճառը և այնքան շնորհակալ նայեց իր իմաստուն հայրիկին:

- Ահա՛,- նա շտապ բաց արեց տետրը և հուզառատ ձայնով կարդաց.

«Երբ որ գիշերն է իջնում,
Ճմռան քամին շնչշնչում,
Ա՜յ դու աղջիկ սևաչյա,
Քո սիրուն ես սպասում...
Կանաչ գարնան հովի հետ
Սերդ քեզ մոտ է գալիս,
Քնքուշ հույսեր ներշնչում
Սիրո խոստումներ տալիս...
Սպասում ես դու նրան՝
Քամու թևերին նստած,
Ճմռան շնչից սվսվում,
Սպասում ես դու նրան...»:

Թաթուլը գոհունակությամբ ավարտեց՝ հայացքը դեպի հայրը:

- Ո՞վ է...

Թաթուլը ակնապիշ նայեց հորը և նկատելի շիկնեց:

- Բանաստեղծություն է, ուղիղ հասցե չունի:

- Բանաստեղծությունը ոչ թե հասցե, տուն էլ ունի, տղա՛,- պատասխանեց Ժորան,- գրողը իր թաքուն գաղտնիքն ունի:

- Հայրի՛կ, երբվանի՞ց ես սկսել բանաստեղծների հոգին թարգմանել,- ծիծաղեց Թաթուլը:

Ժորան դրա պատասխանն էլ ուներ, սակայն չհասցրեց մեկնաբանել: Դուռը բացվեց, ներս մտան հերթապահ բժիշկը, բուժքույրը, քիչ անց եկավ նաև Սերգոն:

Տոնոմետրի գրանցումներից բժիշկը գոհ էր: Նա մի քանի հերթապահ մտքեր արտահայտեց և բուժքրոջ հետ գնաց:

- Հեռագրեցի,- ասաց Սերգոն:

- Լավ արեցիր, Թաթուլն էլ իր սրտի հեռագիրը կարդաց:

Սերգոն զարմացած նայեց եղբորը՝ հոր ակնարկը միանգամից չհասկացավ.

- Մի՛ զարմացիր,- ասաց հայրը,- իր սիրտն էդ կրակի մեջն է:

- Հայրի՛կ, մի՛ չափազանցրու,- քաշվելով ասաց Թաթուլը:

- Ճիշտ բաներից չեն ամչնա, բայց չգտա, թե ո՞վ է:

Սերգոն բարձրաձայն ծիծաղեց, մոտեցավ եղբորը:

- Ահա թե սիրտդ ինչու է ափերից ելել:

- Հիմա էլ դու անցար գուշակության,- Թաթուլը թեքվեց բարձին՝ հայացքը փախցնելով նրանցից:

- Լավ, հայրի՛կ,- ասաց Սերգոն,- թույլ տուր մենք հետո կպարզենք:

- Սիրելն ամոթ չէ, Սերգո՛, բայց չիմանա՞նք, թե էս առյուծն ինչ նապաստակի է սիրահարված:

Հոր խոսքերից բռնկվեց բարձր քրքիջը: Երեքն էլ այդ պահին անզուսպ հրճվանքի մեջ էին: Ժորան իր արարքից գոհ մնաց, քանի որ Թաթուլն անկեղծ ու սրտանց էր ծիծաղում: Նա մտածված տոն էր տալիս, որ որդու սրտով լիներ ամեն ինչ, որ նա վերագտներ իր աշխուժությունը, հավատար, որ իր սիրտը դիմացկուն է, ուժեղ, որ հանուն մեծ կյանքի կարելի է հաղթահարել ամեն մի դժվարություն:

Ուշ երեկոյան՝ քնելուց առաջ, Թաթուլը սովորականից առույգ էր: Հայրն ու եղբայրը նրա առջև բացել էին վերջին ամիսների բոլոր վարագույրները, որոնց հետևում գրեթե անհայտ ոչինչ չէր մնացել:

- Չէի ուզում, որ ձմռան օրով այսքան չարչարվեիք, Արեգից հասնեիք այս ցուրտ երկրամասը, բայց չթաքցնեմ, եկաք, ու ես համարյա գտա ինձ,- անկեղծ խոստովանեց Թաթուլը:

- Էլ ո՞ր օրվա համար ենք, տղա, որ էսօր քո կողքին չլինենք,- զրույցը եզրափակեց հայրը: Սերգոն ավելացնելու բան չուներ, հոր խոսքը ամբողջական ու ճիշտ էր: Նա հիվանդասենյակի լույսը հանգցրեց: Պառկեցին:

Թեև կեսգիշերը վաղուց անցել էր, բայց ոչ մեկի քունը չէր տանում: Փոխադարձ հարցերը դարձյալ շարունակվեցին, մթության մեջ ձայներն ավելի էին մաքրվել, մտքերը հստակ էին, անկաշկանդ: Հետո մեկ-մեկ լռեցին և չիմացան, թե իրենցից ով ավելի շուտ փակեց աչքերը:

* * *

Վիրահատության օրը նշանակված էր երեքշաբթի: Ժորան ժամը վեցին արդեն ոտքի վրա էր: Հիվանդասենյակի լույսը չվառեց: Դրա

կարիքը չկար, պատուհաններից ներս էր խուժել ծմեռային գիշերվա շողքը: Դրսում պարզ երևում էր ամեն ինչ, իսկ փայլուն մշուշը նստել էր անտառի փեշին: Ժորան այդ տեսարաններով հիանալու ժամանակ չուներ, դրա համար չէր հասել այստեղ: Այսօր երեքշաբթի էր, Թաթուլին ծանր փորձություն էր սպասում: Որդիները խորը քնած էին, երբ ինքը անաղմուկ հագնվեց, սառը ջրով լվացվեց, եկավ ու զգուշությամբ տեղավորվեց բազկաթոռին: Նա այնքան խորությամբ էր հանձնվել ներսի փոթորիկներին, կարծես չէր զգում իր ներկայությունը, հեռացել էր, բարձրացել մի ուրիշ, անծանոթ աշխարհ: Նրա միտքն ու մռայլությունը աղաչանքների ճերմակ նժույգով սավառնել էին անհասանելի սահմաններով, ուր նա որոնում էր Աստծո պատկերը: Սենյակի անսովոր լռությունը կեղեքում էր նրա սիրտը, բզկտում հոգնած մարմինը, որը հիմա քարացել էր կիսամութի մեջ: Ժորան մեծ լարվածությանը հնազանդ, խորը շնչում էր, այնպես էր ուզում սրտին իջած ժայռը մի կողմ գնար, ու ինքը գտներ բարեգութ լուսաբացի դարձը: Այդ մշուշոտ, փոթորկուն ու անծանոթ այգը այսօր դանդաղ էր մերձենում: Գլուխ գլխի ու դեզ-դեզ ամպերի մեջ նա փորձում էր բարու նախանշաններ գտնել, կետ-գծեր էր նկարում պատուհանից այն կողմ, մտքում հաշվում, համեմատում էր դրանց գույնն ու շարժը, այդ թալիսմաններով որոշում օրվա բարության տեսակը: Ժորան հոգու անեզր անկյուններում արևոտ ճամփա, տուն ու հարազատների էր փնտրում, ծնողների օրհնանքի կարոտը դեռ այսքան չէր զգացել: Մարկոս հոր և Գուլո մայրիկի թանկ ու թևավոր աղոթքները փակ աչքերով հիշեց: Դա մի ուրիշ ծես էր: Նրանք Թաթուլին տանում, բարձրացնում էին երկինք, խնդրում ամենակարող ուժերին, որ իրենց թոռը հզոր ու պաշտպանված լինի: «Գնաց հայրը ու իր հետ տարավ տոհմականչ աղոթքի լույսը...»: Հետո մտքերի մռայլության խուլ ծածկոցի տակ նա իր սիրտը պահ տվեց, մեղադրեց իրեն՝ իր արարմունքը, իր կասկածանքը, իր անբովանդակ եզրահանգումները: Աթոռից կտրվեց, մոտեցավ ու դեմքը հպեց պատուհանի սառը ապակուն: «Էս հյուսիսում ձյուն է ու ձյուն, իմ սրտի պես է, բուք ու բորանի մեջ կորած իմ հոգու նման է, երկիրն ու երկինքը փաթաթվել են ճերմակ քաթանով, ո՛չ ցավ ունեն, ո՛չ հիվանդ զավակ, ո՛չ էլ տուն ու հիշողություն...»: Ժորայի սիրտը մեկեն փափկեց, աչքերի պաղ ծոցերում տաքացան արցունքները: Չխանգարեց: «Թող գան, եթե բարի են, իմ սրտի այրող մխանքով թող գան, որ այս ցուրտ աշխարհը մի քիչ տաքանա, իմ հավատն առ Աստված չմոլորվի, ու ես իմ Թաթուլին փրկեմ, դուրս բերեմ էս

զուլում ձմռվանից...»: Ապա նա գրպանից հանեց թաշկինակը և թաքուն տարավ աչքերին:

- Հայրի՞կ,- Սերգոն էր:

- Ի՞նչ է, բալա՛, կամաց խոսե, տղեն չզարթնի:

- էդ տղեն վաղուց զարթուն է, հայրի՛կ,- նրանց միացավ Թաթուլը:

Ժորան աշխատեց չմատնել իրեն, պատուհանից կտրվեց, եկավ նստեց մահճակալին:

- Քու հոգին խաղաղեցրու, բալա՛, քեզ մի՛ տանջե, Աստված ողորմած է,- հորդորեց հայրը:

- Մեր երեքից ամենախաղաղը ես եմ, հայրի՛կ,- ասաց Թաթուլը,- արդեն որոշված է, հաշտվել եմ վիրահատվելու մտքի հետ, էլ նահանջ չկա:

- Բժիշկը մեծ երաշխիք տվեց,- եղբոր խոսքն ընդհատեց Սերգոն,- երեկոյան, երբ նրան ճանապարհում էի, ասաց, որ դրսից ևս մի վիրաբույժ-պրոֆեսոր են հրավիրել, ամեն ինչ լավ կլինի: Հետո ավելացրեց, որ Թաթուլի նախավիրահատության ստուգումները գերազանց են:

- Եթե էդքան գերազանց են, ինչո՞ւ են վիրահատում,- հարցական նայեց հայրը:

- Զրույցի թեման փոխենք,- կանխեց Թաթուլը և սկսեց հագնվել:

- Այսքան շո՞ւտ,- հակառակվեց Սերգոն:

- Շուտ չէ, պիտի սափրվեմ, մի կարգին լոգանք ընդունեմ, գուցե երկար մնամ պառկած,- ասաց ու դուրս եկավ հիվանդասենյակից:

- Հայրի՛կ, Թաթուլն իսկապես ուժեղ է, բայց շատ էլ զգայուն է,- ասաց Սերգոն, երբ եղբայրն արդեն լոգարանում էր,- պետք չէ, այնքան տխուր ես, անհանգիստ, նա այդ բոլորը տեսնում է:

Ժորան նկատելի մռայլվեց, վրդովմունքի ալիքը ներսից ու դրսից պարուրեց նրան:

- Սերգո՛, հանաք բան չէ սրտի վիրահատությունը, հազար ու մի բան ինձ կտանջե, հասկացի՛ր իմ ցավ:

Սերգոն չպատասխանեց, հոր ակնարկից հետո երկար ժամանակ լուռ էր: Նա շատ լավ հասկանում էր իրավիճակի բարդությունը, հոր տագնապները, բայց, կարծես այլ բան չուներ, պիտի մի կերպ մեղմեր հորը: Ոչ մի պրոֆեսորի մասին նախորդ երեկոյան Աբուզակևիչը չէր ակնարկել, այդ փաստը նա հնարեց, որ Թաթուլն ավելի սրտապնդվեր, հայրը հավատար իր Աստծուն: Սերգոն, սակայն, հասցրել էր ստուգել շրջապատի կարծիքը, բոլորն էլ վկայել էին, որ բժշկական հանձնախումբը լավագույններից է և փորձված:

Նա միաժամանակ ինքնավստահ էր, որովհետև տասնյակ մարդկանց էր հանդիպել, հարցրել էր նաև վիրահատված հիվանդներից:

- Հայրի՛կ,- մտքերից վերադարձավ Սերգոն,- արի Թաթուլին չտխրեցնենք:

- Իմ բախտ բերել է, որ էդ տղեն ո՛չ վախ ունի, ո՛չ էլ կասկածանք,- թեթև ժպիտ երևաց հոր դեմքին:

- Ա՛յ, էդպես, մի քիչ ուրախ եղիր և շատ մի՛ կասկածիր:

- Ես դերասա՞ն եմ, ինչ կա, էդ եմ, չեմ կրնա իմ սրտին խաբե,- ափերից դուրս եկավ Ժորան...

- Դու կմնաս հիվանդասենյակում, ես կգնամ Թաթուլի հետ:

- Իմ տեղակ որոշում մի՛ ընդունե, տղա՛:

- Հարմար չէ՛, հայրի՛կ, հեռու չենք, ընդամենը երրորդ հարկում է վիրահատարանը,- Սերգոն շարունակում էր համոզել հորը:

- Լա՛վ, լա՛վ, թող էդ ժամը Աստծու կամքով գա, իմ էնտեղ լինելն ու չլինելը կարևոր չեն:

Թաթուլը ներս եկավ թարմացած, առույգ տեսքով, ջերմությամբ գրկեց հորը: Աչքերում պայծառություն կար, բազուկներն ամուր էին, հայացքը թափանցիկ էր ու ենթարկող:

- Օրհասական ոչինչ չկա, հայրի՛կ, ես վախեցողներից չեմ:

- Գիտեմ:

- Դե որ գիտես, իմացի՛ր, որ հազար անգամ միասին Արտին լեռն ենք բարձրանալու ու իմ պապ Մարկոսի դասերը՝ Տիկորի հովտի դասագրքերից, դու ես շարունակելու:

- Էս գիշեր երազով էդ սարի լանջին էի, իմ հորն ու մորն եմ տեսել, մեր գյուղ, մեր աշխարհ,- անբացատրելի կարոտով ու ջերմությամբ ասաց Ժորան և ավելացրեց,- բարի էր իմ երազ, թող էդ բարություն իջնի էսօրվա վրա, իմ մամ Գուլոն քու բարի լուրին կսպասե:

Դուռը թեթև թակեցին: Հարկաբաժնի հերթապահ բժիշկն էր, ներս մտավ, բարևեց, մի քանի խոսք փոխանակեցին: Նա կարծես եկել էր շոշափելու ներկաների տրամադրությունը և գնալուց առաջ զգուշացրեց.

- Կամք և համառություն, ամեն ինչ լավ կլինի:

- Սրանց սովորությունն է, հայրի՛կ,- ասաց Թաթուլը,- նույն բանը քսան անգամ են ասում՝ համարելով նախաբուժիչ դեղամիջոց:

- Թող քսան հազար անգամ ասեն, մի՛ ձանձրացի, բալա՛, երևի մի բան գիտեն:

- Կրպեենց Ժորան ու էդքան շուտ հավատացո՞ղ,- ծիծաղեց Սերգոն:

- Գործի բնույթն է էդպես, պըտի մեկ-մեկ էլ հարմարվենք ու հավատանք:

Թաթուլն ու Սերգոն ծիծաղեցին: Ժորան պինդ գրկեց զավակներին և երկար ժամանակ չէր ուզում բաց թողնել:

...Ժամը 11-ին սկսվել էր վիրահատությունը: Ժորան ու Սերգոն նախասրահում էին: Որդին աչքը չէր հեռացնում հորից, գիտեր, որ այս վիթխարահասակ լեռնեցի մարդը փխրուն սիրտ ունի, հուզվող է, զգացմունքային: Սակայն Սերգոյին զարմացնում էր նրա արտասովոր կայունությունը: Նա չէր խոսում, ախ ու վախ, հառաչանք ու հեյ վախ չէր ասում: Լուռ էր, ինքն իր մեջ իրենով շղթայված, սակայն նման էր այն առյուծին, որը միմիայն իր աննկատ մռնչյունով էր կարողանում ցրել իր կորյունին մոտեցող վտանգը: Ժորան անխոս տնքում էր, կարծես վիրահատության սեղանին ինքն էր, իր կուրծքն էին երկփեղկել, իր սիրտն էին առել իրենց ափերի մեջ, սեղմում էին, տանում, հեռացնում: Սերգոն մեկ անգամ փորձեց խոսել նրա հետ, չստացվեց, բառերը մերկ էին, հասկացավ, որ ինքն ավելի կարիք ուներ կարեկցանքի: Լռեց՝ աչքը վիրահատարանի մեծ դռներին, հայացքը՝ շեմից վեր վառվող կարմիր լամպերին, որոնք հուշում էին՝ վիրահատությունը շարունակվում է: Անցել էր մեկ ժամ, բայց մեկ դարի բեռ էր իջել Ժորայի սրտին: Սերգոն անճարությունից նվում էր, իր աչքերի առջև նվաղում էր հայրը, դռների հետևում մահվան դեմ կռիվ էր տալիս Թաթուլը: Նա ամեն կերպ ձգտում էր հավասարակշիռ պահել իրեն, որովհետև հոր հայացքը իր վրա էր, իրենից էր նա քաղում վիրահատության բարեհաջող իր հունձքը: Սերգոն ատամները սեղմել էր այնպես, որ ոչ մի ավելորդ հնչյուն այդ պահին չսպրդեր շուրթերից, չխորտակեր հոր հույսի առագաստը:

Դռների մեջ անսպասելի երևաց բուժքույրը: Հայր ու որդի տեղից վեր թռան: Ոտքից գլուխ սպիտակ հագած շիկահեր աղջիկը ժպտալով մոտեցավ:

- Թաթուլի գործերը հաջող են գնում, ուժեղ է, պայքարող զինվորի պես դիմանում է, համբերե՛ք,- ասաց ու անմիջապես ներս գնաց: Փակ դռների հետևում շարունակում էր թրթռալ կարմիր լույսը:

- Չսպասեց, մի բան էլ մենք հարցնինք,- ասաց Ժորան և զգաց, որ ոտքերի վրա դժվարանում է կանգնել: Նստեց: Բուժքրոջ խոսքերը՝ «պայքարող զինվորի պես դիմանում է», շուլալվել ներսում, մեծ ուժ էին տալիս, ապա բզկտում, որովհետև Ժորան լավ էր հասկանում, որ դժվարին վիճակներում է երևում պայքարի զինվորը: «Ուրեմն, Թաթուլը կյանքի համար կռիվ է տալիս... Ա՜խ: Բալա՛, Աստված քեզ

օգնական, հենց հասել եմ գյուղ, երեք մատաղ կանեմ, երեք վանք կերթանք քու մոր՝ Սեդայի, քու ախպրտանց ու քու մինուճար քրոջ՝ Ռուզանի հետ...»: Հոր սիրտը ափերից ելել, երկնքի ճանապարհին էր. աղաչանք-աղոթքների ի՜նչ թրթիռներ էին ծփում նրա ալեկոծ հոգում, սակայն նա երդվել էր ցույց չտալ իր թուլությունը: Եվ դրանից էր, որ սեղմվել էր իր կողերի մեջ, թաքցնում էր խղճի անհնազանդ բոցը, որը, այրելով մորմոք ու մխանք, ողնաշարը քերելով գալիս էր բարակ տնքոցներով և խոնարհվում ծարավ շուրթերին՝ որպես վիրավոր դրոշի վերջին պատառիկ:

- Ամեն ինչ լավ է, հայրի՛կ, բուժքրոջը, անկասկած, բժիշկն էր պատվիրել դուրս գալ և մեզ հաղորդել վիրահատության բարեհաջող ընթացքի մասին,- Սերգոն աշխատեց հուսադրող խոսքեր գտնել, նստեց հոր կողքին:

- Տղա՛ ջան, մի՛ նեղվի, հոր սիրտ է, չի դիմանում,- ցածրաձայն, ասես, ինքն իր հետ խոսեց Ժորան, ապա գրպանից հանեց ծխախոտատուփը, գլանակն առավ մատների մեջ, բայց չվառեց: Նա գիտեր, որ այստեղ ծխել չի կարելի, բայց ներսից բարձրացող գոլորշին ծխի ծածկույթ էր ուզում: Մռնչալով տեղից վեր ելավ, դուրս եկավ նախասրահ, անդիմադիր հենվեց պատին և դողդողացող մատների մեջ ճայթեց լուցկու հատիկը: Դեռ այսքան հաճելիորեն չէր զգացել գլանակի փափկահյուսք ծխաբույրը, որն անարգել խառնվեց պաղ շնչին, իջավ խորքերը: Ժորան զգաց, որ աչքերի առջև գույները մի պահ սևացան, բայց ինքը զգաստ էր՝ հենված պատին: Այդ ամենը տևեց մի ակնթարթ: Նա աստիճանաբար կենտրոնացավ, շարունակեց ագահությամբ ծխել, գլանակի վերջին մնացորդը նետեց աղբարկղ և վերադարձավ վիրահատարանի նախասրահը:

- Ի՞նչ լուր կա, Սերգո՛,- գրեթե ներս չմտած՝ նա հարցն ուղղեց որդուն:

- Առայժմ ամեն ինչ կարգին է, հայրի՛կ, բժիշկներից մեկը դուրս եկավ, ասաց, որ շուտով կավարտեն, ամեն ինչ լավ է:

- Աստված քու ձեն լսե, բալա՛,- անուշ մրմնջաց հայրը, մոտեցավ լուսամուտին, թիկունքով կանգնեց, որ Սերգոն չնկատեր իր հուզմունքը: Նա զսպում էր, ծածկում մարդկային իր թուլությունները, որ նախ իր աչքից չընկներ և հետո չկոտրեր Սերգոյի սիրտը: Հավատամքի և հույսի աստվածներին նա մոտեցրել և անսխալական բնազդով պահել էր գոգում: Համոզում էր իրեն, որ նրանց հետ էր բացել այս առավոտը և ակամայից շշնջում, հիշում էր Գուլո մոր աղոթքները: Ժորան հայրական խորհրդով ճամփա էր գտնում իր մեջ,

որոնում արևոտ, ծաղկուն մի երկիր, ուր նրա իմացած փրկության վանքերն էին, իր պապենական տունն ու արտը, սարն ու աղբյուրը: Այդ նշաններով նա դարձի էր բերում վերջին համբերությունը, հանգստացնում իրեն, պահպանում այն թելը, որի միջոցով ուզում էր այս ցուրտ աշխարհում մի բանով մեղմեր իրեն, գտներ ցանկալի եզերք, վերակերտեր հարազատ շշուկներ: Մանավանդ հիմա, երբ իր զավակին փրկության ձեռք էին մեկնել այս անծանոթ մարդիկ, Ժորան հոգեկան արշավանքների ճանապարհին էր, մտովի առաջապահ էր, հաղթողի աղաղակներով պաշարված, բայց ձայն չէր հանում, սսկված էր՝ ականջը փակ դռների հետևում չլսվող ձայներին:

Վերջապես դռան վերևում մարեց կարմիր լույսը, որն արդեն չորս ժամ կեղեքում էր հայր ու որդուն:

- Հայրի՛կ,- ուրախացավ Սերգոն:

- Տեսա, աչքս էդ կարմրից ե՞րբ եմ թարթել, տղա՛,- մռնչաց Ժորան:

Դռները լայնորեն բացվեցին: Առաջինը երևաց Աբուզակևիչը, նրա հետ՝ երկու ուրիշ բժիշկ: Ժորան նկատեց վիրաբույժի ժպիտը, տրամադրող բարակ ցոլքը, որ ճակատից էր իջել:

- Ինչպես որ սպասում էինք, այդպես էլ եղավ,- ասաց Աբուզակևիչը և ամուր գրկեց Ժորային:

- Շնորհակալ եմ,- դողաց Ժորայի ձայնը: Նա բժշկին երկար պահեց իր հզոր բազուկների մեջ, չգիտեր ինչպես արտահայտեր իր երախտագիտությունը:

- Հանգստացեք,- միջամտեցին մյուս բժիշկները:

Սերգոն անսահման երջանկությունից չգիտեր ո՞ր կողմը գնար, վազեր ներս՝ վիրահատարան, թե՞ հայրիկին ընկերակցեր, միանար նրա ջերմ խոսքերին: Վիրահատարանի խորքի դռները փակ էին, օգնականները նախապատրաստում էին Թաքուլին վերակենդանացման բաժանմունք տանել:

- Բժի՛շկ ջան, մեկ Աստված, մեկ դու, չգիտեմ ինչ ասեմ,- վերագտած ներշնչանքին չէր դիմանում Ժորան, ուզում էր ընտրյալ բառեր գտնել, բայց իր իմացած ռուսերենը չէր բավարարում:

Աբուզակևիչը հասկանում էր, թե ինչ ցնցումներ է ապրել հայրական սիրտը, գիտեր նաև այս պահի ապրումների, երջանիկ խոհերի վերադարձի արժեքը և բաց չէր թողնում Ժորայի ձեռքը:

- Գնացեք հիվանդասենյակ, մեկ-երկու օր Թաքուլը կլինի վերակենդանացման բաժնում՝ բժիշկների հսկողության տակ, հետո դարձյալ միասին կլինեք,- գնալուց առաջ ասաց Աբուզակևիչը:

Ժորան ու Սերգոն ուզում էին էլի բան հարցնել, խոսեցնել, սակայն

բժիշկներն այսօր կտրուկ էին: Հայր ու որդի մինչև երկինք շնորհակալ էին, այդ զինվորական խստությունն այնքան հարազատ էր: Նրանք նախասրահում սպասեցին, մինչև Թաթուլին դուրս բերեցին անվավոր պատգարակով: Աչքերը փակ էին, նա խորը, համաչափ շնչում էր, ճակատը գունատ էր: Ժորան խորքերում մղկտաց, բայց Սերգոյի ամուր ձեռքը զգաստացրեց նրան:

- Հիմա քնած է, չորս-հինգ ժամից կարող եք մի քանի րոպեով այցի գալ,- ասաց ուղեկցող բժշիկը և մյուս օգնականների և բուժքույրերի հետ միասին պատգարակով հայտնվեցին վեցերորդ հարկ բարձրացող վերելակի խցիկում:

Ժորան ուրախ էր և տխուր, սրտից ընկել էր գիշերվա ծանր քարը: Սակայն փախչող վերելակի փակ լռությունից ազդվել էր: «Ո՞ւր տարան տղին, չթողեցին մի կարգին տեսնեինք»:

- Հայրի՛կ, իջնենք հիվանդասենյակ,- հոր մտքերը հասկանալով՝ ընդհատեց Սերգոն և քայլեց առջևից: Ժորան հետևեց նրան, բայց սիրտը կախ էր ընկել, ոտքերը, ասես, քարշ էին գալիս: Հոգնել էր Ժորան, սակայն գոլ արևի շողք էր զգում, հոգին գնալով տաքանում էր, նոսրանում էին տագնապները: Օրվա իրադարձությունների կծիկը արագընթաց քանդվում էր նրանց ոտքերի տակ: Հիվանդանոցը, շրջապատը, նույնիսկ անծանոթ մարդիկ այնքան մերձ ու մտերիմ էին դարձել, որ հայր ու որդի ուզում էին մեկ-մեկ կանգնեցնել նրանց, ասել, որ Թաթուլի կյանքը փրկեցին հրաշալի բժիշկները, դո՛ւք, ամեն մեկդ այդ մեծ փրկությանը ձեր սրտից մի-մի ջահ տվեցիք, ապավինեցիք աներևակայելի բարությանը:

Հիվանդասենյակն արդեն ճնշող չէր, նույնիսկ Թաթուլի դատարկ մահճակալին Ժորան նայեց բարի ու ներող աչքերով: Սերգոն առաջարկեց մի գավաթ կոնյակ, հայրը չհրաժարվեց:

- Հիմա կարելի է, պետք է, որ ես իմ Աստծուն ասեմ՝ շնորհակալ եմ, երկնայի՛ն Տեր, դու հասար նեղյալին, իմ ջահել-ջիվան Թաթուլը քու ողորմածությամբ փրկվեց:

- Բժիշկները հե՞չ,- ծիծաղեց Սերգոն:

- Մի՛ վռազի, տղա՛, հերթը նրանց էլ կհասնի,- վերջին շաբաթում առաջին անգամ ծիծաղեց նաև ինքը:

- Հատկապես Աբուզակևիչը:

- Նրան էլ, իր ընկեր-բժիշկներին էլ, էն վազվզող քույրերին, բոլոր-բոլորին թող իմ հոգու օրհնությունն էղնի,- արագ-արագ ասաց Ժորան և ավելացրեց,- չմոռանամ առաջին հերթին իմ Թաթուլին, որ ամոթով չարեց ո՛չ նրանց, ո՛չ էլ մեզի... Իմ արծիվ-բալի կենաց, իմ վիրավոր առյուծի կենաց:

Խմեց, աչքերը պայծառացան, վիթխարի մարմինը մի վայրկյանում, կարծես, էլեկտրականացավ:

- Սերգո՛, ինչ լավ է, որ դու իմ կողքին ես, ես չէի դիմանա, մենակ մարդ ո՞ւմն է պետք,- ասաց ու գրկեց որդուն:

- Հայրի՛կ,- Սերգոն գերադասեց չխոսել, զգում էր, որ հայրը չի դիմանում վերադարձող ուրախությանը, իր ամեն բառ կարող էր ավելի զգայուն դարձնել նրան:

- Ներող կեղնիս, բալա, մեկ-մեկ իմ սիրտ ուր բանտից կազատվի, կելնի, ու ես էլ չեմ կրնա զսպե նրան:

Սերգոն հասկանում էր հոր կտրուկ փոփոխությունները, նրա զսպված զայրույթն ու միամիտ հրճվանքը, մանավանդ տագնապների պահին վշտացյալ տվայտանքները: Հասկանում էր, զգում, բայց չէր համարձակվում միջամտել: Իր դիմաց կրտսեր եղբայրները չէին. ո՛չ Մինասը, Գիրգորը, Մանվելը, ո՛չ էլ տան պաշտելի միակ քույրիկը՝ Ռուզաննան: Հոր հանդեպ ունեցած վիթխարի ակնածանքը թույլ չէր տալիս մեծավարի խոսել նրա հետ, էլ ուր մնաց լինել խորհրդատուի դերում: Ժորան նույնպես հոգու թելերով էր ճանաչում իր առաջնեկին, գիտեր նրա վճռականությունը, նվիրումը և հավատացած էր, որ նա հարկադրված է լռում, որդիաբար տուրք է տալիս, շալակած տանում է ափերից ելած ու ձմռան փոթորիկ դարձած իր բնավորությունը:

- Սերգո՛, ինձ տար էդ վեցերորդ հարկ, Թաթուլին պըտի տեսնիմ:

- Հայրի՛կ, դեռ շուտ է, համբերենք, երկու ժամը դեռ չի անցել:

- Ինչքան համբերեմ, տղա՛,- նեղսրտեց հայրը և երկրորդ բաժակը դատարկեց,- տղեն գուցե մեր կարիքն ունի, ու մենք խաբար չենք:

- Հայրի՛կ, դու քո աչքով տեսար, թե քանի հոգով էին նրան ուղեկցում, հիմա դեռ քնած կլինի:

- Կուզեմ իմ տղին ես քնից հանեմ:

Սերգոն չէր կարող հակառակվել, ենթարկվեց հորը՝ գիտենալով, որ ներս չեն թողնի:

- Պիտի սպասեք,- վեցերորդ հարկաբաժնի մուտքի մոտ նրանց առջև կանգնեց Նաստյան,- չի կարելի:

- Ասում էի, չէ՞, հայրի՛կ:

- Էս «կյաժ» աղջիկ իմ ճամփեն չի կրնա փակե,- ասաց և աժդահա մարմնով հրեց դուռը:

- Հայրի՛կ, ի՞նչ ես անում,- Սերգոն փորձեց սաստել նրան:

- Կերթամ իմ Թաթուլի մոտ, հո պետական սահման չեմ խախտում, տղա՛,- ասաց ու անհայտացավ դռների հետևում:

Նաստյան ճար չուներ, արագ քայլերով հասավ նրան և ճարահատյալ խնդրեց, որ միանգամից չմտնի հիվանդասենյակ:

- Հա, աղջի՛կս, դու որոշե, թե երբ ներս գամ,- արդեն խաղաղորեն համաձայնեց Ժորան և արձանացավ դռների առջև: Նա գիտեր, որ կարգ էր խանգարում, դրա համար էլ մտքով հասել էր գլխավոր բժշկին. «Աբուզակևի՛չ ջան, ներե ինձ, ես կարգ ու կանոն խախտող չեմ, բայց իմ սիրտ չդիմացավ, իմ Թաթուլ կկանչեր ուր հոր, ես իր հրաման կատարեցի... Բանակում էդպես է, չէ՞, զինվոր կրնա՞ հրաման չկատարե, չի՛ կրնա: Թաթուլն էսօր իմ հրամանատարն է, ես էլ իր զինվորն եմ, նրա հրամանով եմ ներկայացե: Թե Աստված կսիրեք, դռներ բացեք...»:

Նաստյան հերթապահ բժշկի հետ դուրս եկավ: Ժորան նկատեց, որ այդ հերթապահը խոժոռված է, ինքը փորձեց ժպտալ, մեղմացնել իրավիճակը, իրեն պահել խելոք զինվորիկի պես, բայց չստացվեց: Հերթապահը ծղրտաց.

- Ինչո՞ւ եք խախտում հիվանդանոցի կարգ ու կանոնը:

Ժորան ոչ միայն հանկարծակիի եկավ, այլև խորությամբ վիրավորվեց: Զգաց, որ արդեն ուշ է իր արարմունքից հետ կանգնել, շարունակեց իր ճնշումը՝ հայրական իրավունքից թելադրված.

- Տղայիս եմ ուզում տեսնել, հասկացե՛ք,- նրա ձայնը հնչեց ամբողջ միջանցքով մեկ: Հերթապահ բժիշկը փորձում էր դիմադրել, բայց դրան հակազդելու միջոց չուներ: Ժորան կանգնած էր անհողդողդ: Բնականից նա բարձրահասակ էր, ջլապինդ, դրան գումարել էր ազդեցիկ հայացքը և զննող աչքերով սպանում էր բժշկին:

- Լա՛վ, լա՛վ, սպասե՛ք մի րոպե, կորոշենք,- տեղի տվեց բժիշկը և մտավ հիվանդասենյակ: Նաստյան շարունակում էր բարոյական զրույցը, Ժորան նրան բոլորովին չէր լսում, իր որոշումից հետ կանգնողը չէր:

Թաթուլը գրեթե արթնացել էր, կիսախուփ աչքերով նայում էր աջ ու ձախ, հավանաբար վերհիշում էր օրվա սկիզբը, հիվանդասենյակում հորն ու եղբորը, նրանց հետ իր հրաժեշտի պահը, վիրահատարանի պաղ սեղանը, գլխավերևում օրորվող լույսերը, սարքեր, սպիտակ հագած մարդիկ, ցածրաձայն զրույց, խորհրդավոր մի աշխարհ:

Հիմա նրան թվում էր՝ վերադարձել է այդ օտար աշխարհից: Մտքերի խշրտացող պարսը հանդարտ քանդվում էր ինչ-որ ծալքերում, և տաք տրոփյունը հասկացնում էր, որ սիրտը ցնծության մեջ է:

- Ուզո՞ւմ ես հայրիկիդ տեսնել,- մեղմ հարցրեց բժիշկը:

Թաթուլը, իհարկե, ուզում էր, բայց ցանկությունը բառ չդարձավ,

ձայնը մնաց հեռվում, միայն աչքերը նկատելի պայծառացան և ժպիտը թալիսմանի նման ծաղկեց շուրթերին:

- Նա այստեղ է՝ դռների հետևում,- շարունակեց բժիշկը:

Թաթուլը գլխով հավանության նշան տվեց և ծանրորեն փակեց աչքերը: Բժիշկը չշտապեց Ժորային ներս բերել, վախեցավ. «Այդ աժդահա մարդուց ամեն ինչ սպասելի է...»: Թաթուլը դանդաղորեն բացեց աչքերը և փնտրող հայացքով նայեց դռան կողմը: Բժշիկն այլևս անկարող էր ձգձգել, կարգապահություն խաղալ, դուռը կտրուկ բացեց և հրավիրեց հիվանդի հորը: Սերգոն նույնպես այստեղ էր, հայտնվել էր նրա կողքին, միասին մտան հիվանդասենյակ: Թաթուլն աչքերը դարձյալ փակել էր, տնքում էր աննշան: Ժորայի հայացքն անմիջապես գրավեցին բազմաթիվ բարակ խողովակներն ու հոսանքալարերը, որոնք տարբեր տեղերից գրանցված էին Թաթուլի մարմնին: Կուրծքը ամբողջապես փաթաթված էր ճերմակով, գլուխը երկբարձերին էր, դեմքը շառագունել, քրտնքից շողշողում էր:

- Թաթո՛ւլ, բալա՛...

Թաթուլը կամացուկ բացեց աչքերը: Կենսական ցոլքերը խայտանքի բարակ շուքով ճրագվեցին, նա աշխատեց բզկտված ափերից ժպիտի գեթ մի ալյակ դարձի բերել, որ հայրն ու եղբայրը չտխրեն, հասկանան, որ սիրտը ուժեղ է, անդավաճան, Կրպեյան տոհմի կարկաչ կա այնտեղ:

- Հայրի՛կ, ամեն ինչ լավ է,- այսքանը կարողացավ ասել, բայց զգաց, որ լարվեցին ձայնալարերը, բառերի հյուսքերը խանձված տերևների նման ցամաքեցին կոկորդում:

- Քեզ մի՛ տանջե, բալա՛, Աստված քու պաշտպանն էր, խաղաղվի՛, քնի՞...

- Սերգո՛, ախպե՞ր...- Թաթուլն ուզում էր էլի բան ասել, չստացվեց:

Բժիշկը խնդրեց դուրս գալ: Ժորան նայեց Թաթուլին: Որդին աչքերով հասկացրեց, որ համաձայնեն: «Ես քու զինվորն եմ, բալա՛, հրամանքդ...»: Հրճվանքի տիտղոս ունեին այս բառերը, որոնք Ժորան պահեց ներսում, անուշ ժպտաց և անաղմուկ դուրս եկան:

- Հանգստացա՞ր, հայրի՛կ,- թեթև շունչ քաշելով ասաց հերթապահ բժիշկը:

- Հիմա ինչ հրամայես կկատարեմ, բժի՛շկ, էսքան ինձ բավարար էր,- Ժորան սեղմեց հերթապահի ձեռքը, ներողամիտ ժպտաց Նաստյային և Սերգոյի հետ վերադարձավ հիվանդասենյակ:

...Թաթուլն արագ էր կազդուրվում, բոլոր տեսակի վտանգները մնացել էին հետևում: Նախկին հիվանդասենյակում նա մտքում

արդեն տասներորդ օրն էր հաշվում, որ ինքը, հայրը և եղբայրը վիրահատությունից հետո միասին էին: Այս բացառությունները գլխավոր բժիշկը թույլ էր տալիս միայն այն պարագաներում, երբ վիրահատությունը կապված էր սրտի կամ երիկամի հետ: Նա գտնում էր, որ հետվիրահատական ընթացքն ավելի արդյունավետ է լինում, երբ հիվանդը զգում է հարազատների ներկայությունը, հոգեպես չի ճնշվում, ներսում հուզմունքի կուտակումներ չեն լինում: Զինվորական բժիշկն այս դեպքում էլ չէր սխալվել, հասել էր իր նպատակին, և հիմա եկել էր պահը՝ հրաժեշտ տալու հարազատներին: Նրանց զրույցը կարճ տևեց, իրար հասկացան:

- Ժամանակն է, որ դուք վերադառնաք Հայաստան, Թաթուլն արդարացրեց իրեն,- ասաց բժիշկը,- կարծում եմ՝ նրա հետ կապված ուրիշ խնդիրներ կառաջանան, բայց այդ մասին՝ հետո:

- Ի՞նչ խնդիրներ, բժի՛շկ,- անհանգստացավ Ժորան:

- Դա կապ չունի կոնկրետ վիրահատության հետ,- բժիշկն շտապեց պարզել իր ասածը,- սովորաբար այսպիսի ծանր հիվանդություններից հետո հիվանդի վերաբերյալ բոլոր նյութերն ուղարկում ենք զինվորական մարզային հանձնաժողովին՝ որոշելու զինվորի ծառայության հետագա նպատակահարմարությունը:

- Զորացրման մասի՞ն է խոսքը,- հարցրեց Սերգոն:

- Այո կամ ոչ՝ կորոշի հատուկ հանձնաժողովը, երբ հիվանդության պատմությունը մեր եզրակացության հետ կդրվի նրա սեղանին:

- Դա լինելո՞ւ բան է,- պայծառացավ Ժորան:

- Հայրի՛կ, կծառայենք, կգանք, ի՞նչ ես խեղճացել,- միջամտեց Թաթուլը:

- Դեմ չեմ ծառայությանը, բայց մենք պետք է կատարենք մեր պաշտոնական պարտականությունը,- ընդհանուր զրույցը եզրափակեց Աբուզակևիչը,- դա ամիսների հարց է, դուք վերադարձեք հայրենիք, այլևս կարիք չկա մնալու:

Քիչ անց բժիշկը գնաց, բայց նրա խոսքերի ազդեցությունն առկա էր: Այս հեռավոր ափերում նրանք սովորել էին միասին լինել, հարազատ ու մերձ դարձնել օրվա բոլոր ժամերը, սակայն մի պահ լռեցին, կարծես ներքին ձայներով տուն վերադառնալու հարցն էին վճռում: Թաթուլն զգաց, որ այս առումով շատ կարևոր է իր կարծիքը, թեև գիտեր՝ ինչ պիտի ասեր, բայց սովորել էր նրանց ներկայությանը, հեշտ չէր ծանր վիրահատությունից հետո զրկվել հոր ու եղբոր գուրգուրանքից, նրանց լուսավոր ջերմությունից: Նրանք այնքան տաք էին դարձնում իր օրը, իր մենությունը, մեղմացնում

այս ձյունառատ երկրամասի օտարության շունչը:

- Հայրի՛կ, մեկ ամիսն արդեն լրանում է, հո չե՞ք եկել ինձ հետ հավասար ծառայելու,- ասաց Թաթուլը և ձգտեց ավելի առույգ երևալ հոր աչքում, բարձրացավ մահճակալից և դանդաղ քայլեց սենյակի երկայնքով:

- Նախ դու արի, պառկի, հետո հրամայե,- ոտքի կանգնեց հայրը, բռնեց նրա ձեռքից և մոտեցրեց մահճակալին:

- Հայրի՛կ, թող քայլի, դա էլ է մտնում հետբուժումների ցանկում:

- Իմ Սերգոն արդեն բժիշկ է,- ծիծաղեց Ժորան և ավելացրեց,- ես հակառակվելու ոչինչ չունիմ, հիմա կրնամ հավատով էրթամ:

- Դա արդեն ուրիշ բան, գնացեք, հասեք տուն, թե չէ գյուղում ո՞վ գիտի՝ ինչ լուրեր են պտտվում,- առաջարկեց Թաթուլը:

- Երկու հեռագիր եմ ուղարկել, գյուղում լուրերը պարզ են,- շեշտված ասաց Սերգոն,- մի՛ անհանգստացիր:

- Լա՛վ, տղա ջան, վաղը կամ մյուս օրը կգնանք, բայց դու ականջի հետև չգցես էդ Աբուզակևիչի վերջին ասածը:

- Ես մոռանամ, թե հիշեմ, դա կարևոր չէ, հայրիկ,- հորդորեց Թաթուլը,- զինվորական հիվանդանոցն ունի իր կարգը:

Ժորան այլևս չշարունակեց այդ թեման և դարձավ դեպի ավագ որդին.

- Սերգո՛, մտածե մեր գնալու մասին, հերիք բեռ դառնանք էս հիվանդանոցին:

Թաթուլը սրտանց ծիծաղեց: Վերջին օրերին նա այսպես կենսուրախ և այսքան ափեափ չէր վերադարձել իր աշխարհը: Հայրը խանդաղատանքով նայեց նրան, բայց ոչինչ չասաց: Վերագտած խաղաղությունն անթաքույց խտացել էր հարազատ դարձած հիվանդասենյակի պատերի մեջ: Իսկ դրսում անտառն օրորող քամու ճերմակ ստեղներին հյուսվում էր հեռավոր հյուսիսի կախարդական հեքիաթը:

* * *

Թաթուլը վերադարձել էր զորանոց, սակայն զինվորական որևէ գործի, ուսումնական պարապմունքների չէր մասնակցում, նույնիսկ ամենաչնչին հանձնարարություն չէր ստանում: Գլխավոր բժշկի՝ գնդապետ Աբուզակևիչի միջնորդությամբ էր այդ ամենը, թեև Թաթուլն իրեն արդեն լավ էր զգում, նկատելիորեն ապաքինվել էր: Նրա համար անսպասելի էին վերջին երկու ամիսների իրադարձությունները, որոնց հետ և՛ հաշտ էր, և՛ խռով: Նա փորձում էր ինչ-որ բա-

ներ պարզել՝ կապված սրտի հետ, սակայն շոշափելի պատճառներ չէր գտնում: Մեկ մեղադրում էր իրեն, իր հոգու լարվածությանը, մտքերի խառնաշփոթ գրոհին, որոնցով նա հաճախ ճշգրտում էր իր տեղը, բացահայտում իր պատկերացումները աշխարհի հակասական օրենքների, պարտադրված անարդարությունների, կորուսյալ էրգրում ծնվածների անփարատելի ցավի, նրանց ճչացող կանչերի նկատմամբ, մեկ իր ներսում նժարում էր անհանգիստ հոգու տենչանք-տառապանքները: Իսկ դրանք թեև երազային էին և հեռու, բայց բորբոքում էին արյան կանչով փոխանցված և կեղեքող իր այն կարոտը, որին պողպատե սիրտն անգամ չէր դիմանա: Թաքուլը կենսաբանական այլ պաճառների չէր հավատում: Պատահել էր այնպես, որ օրը երկու անգամ էր ինքը բարձրացել Արտին լեռը, տարիներ շարունակ ձոր ու քար էր անցել, վազել բարձրադիր լանջերով, հետո մեկ շնչով հասել տուն: Հիմա վերհիշում էր այդ պահերը, պատանեկան ճախրուն տարիները, ուրախ ու տխուր օրերը և չէր մտաբերում մի պահ, որ իր սիրտը սահմաններից դուրս գար, ձգտեր ակամա հանդարտության և հանգստի:

Մտքերի ու սեփական քննարկումների այս հորձանուտում Թաքուլը վերադառնում էր խոհերի իր ազատաբաղձ ափը: Հավատացնում էր իրեն, որ ներսում լեռնացած կարոտների քարափից ընդամենը մի փոքրիկ քերծ էր տեղաշարժվել, և շնորհակալ էր բժիշկներին, որ այդ «դասալիք քարը» հեռացրին սրտի ճանապարհից: Շնորհակալ էր հորն ու ավագ եղբորը, որ «ինքնամաքրման» այդ հոգեժամին իր կողքին էին, իր սրտի և հոգու արքաներն էին, իր աչքերի շողընծա լույսն ու հավատամքը: Անցել էր մեկ ամիս, ինչ նրանք գնացել էին, բայց այդ ընթացքում մի քանի նամակ էր ստացել, հեռախոսով կապվել էին եղբայրները, հայրը, սակայն կարոտի մշուշը հանդգնում էր տիրական մնալ:

Վիրահատությունից քառասունհինգ օր անց գումարտակի հրամանատարն իր մոտ հրավիրեց Թաքուլին: Նա, ինչպես պատշաճ է զինվորականին, բարձրաստիճան սպաներին պատվի առավ և զգաստ կանգնեց: Կահավորված ու աչք շոյող աշխատասենյակում ներկա էին նաև գնդապետ Աբուզակևիչը, բուժող բժիշկը և թիկունքի ծառայության պետը: Թաքուլը ներկաներին ճանաչում էր. մեղմ հայացքով նայեց բոլորին, վերջում հայացքը կանգ առավ Աբուզակևիչի վրա: Նա մեղմ ժպտում էր, լուսավոր աչքերում հետաքրքիր, բայց թաքուն երջանկություն կար: «Ինչի՞ համար են կանչել, հավաքվել իրար գլխի...»: Թաքուլի երկմտանքը երկար չտևեց: Գումարտակի

հրամանատարը բաց արեց կապույտ թղթապանակը, առանձնացրեց մեքենագրված ընդարձակ գրությունը և մեկնեց գլխավոր բժիշկին:

- Ալեքսե՛յ Անդրեևիչ, հրապարակե՛ք երկրամասային զինվորական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը:

- Հաճույքով,- ավելի լայն ժպտաց նա:

Թաթուլն զգաց, որ սիրտն անսովոր կանչերի մեջ է, մտքով անմիջապես անցավ, որ վիրաբույժը, հավանաբար, կատարել է իր խոստումը, շունչը պահած սպասեց, թե ինչ կա այդ եզրակացություն կոչվածի պարունակության մեջ:

Նախ կարճ ներկայացված էին հիվանդության պատմությունը, հավանական պատճառները, վիրահատության անհրաժեշտությունը, հիվանդի ներկա վիճակը և վերջում եզրակացությունը:

- Հաշվի առնելով, որ կատարվել է ծանր վիրահատություն, և որպեսզի հիվանդի մոտ հետագա բարդությունները բացառվեն, միջնորդում ենք շարքային Թաթուլ Ժորայի Կրպեյանին վաղաժամկետ ազատել իսկական ծառայությունից և զորացրել որպես պահեստային:

Երբ Աբուզակևիչն ավարտեց ընթերցումը, բոլորը նայեցին Թաթուլին: Հակառակ իրենց սպասածի՝ Թաթուլը չշտապեց շնորհակալություն հայտնել, նույնիսկ նկատելիորեն մռայլվեց:

- Ես արդեն պիտանի չե՞մ,- նրա խոսքը զնգաց սենյակի լռության մեջ:

- Ո՜չ, ի՜նչ ես ասում, թանկագի՛նս,- առաջ անցավ բժիշկը,- սա բժշկական այն եզրակացությունն է, որով հնարավոր է քեզ զորացրել, իհարկե, առաջիկա մեկ-երկու տարում պետք չէ ֆիզիկական ծանր աշխատանքներ կատարել:

- Իսկ դուք տեսնում եք, չէ՞, ձեր ընկերների ամենօրյա լարվածությունը, վազքը, մարզումները,- գլխավոր բժշկի խոսքին միացավ գումարտակի հրամանատարը,- գնացե՛ք Հայաստան և քաղաքացիական ձեր կյանքում շատ մի՛ ծանրաբեռնվեք:

- Դրանք ժամանակավոր, բայց պարտադիր պայմաններ են, պաշտպանե՛ք ձեզ, ամեն ինչ ժամանակի հետ կկարգավորվի,- ասաց Աբուզակևիչը և ոտքի կանգնեց,- կբարևեք ձեր հրաշալի հայրիկին:

Թաթուլը հասկացավ, որ այդքանից հետո ձևական կհնչեր իր խոսքը, նույնիսկ ավելորդ էին այլ հարցերը իր առողջության իսկական վիճակի մասին, ուստի լուռ համաձայնության նշան տվեց:

- Պատրաստվե՛ք, մեկ-երկու օրից ձեր փաստաթղթերը, ինքնաթիռի տոմսը կհանձնեն ձեզ,- եզրափակեց հրամանատարը:

Թաթուլը դարձյալ պատվի առավ, շուռ եկավ և շատ սառնասիրտ հեռացավ:

... Զինվորական գումարտակին, մարտական ընկերներին հրաժեշտ տալու պահը շատ չձգձգվեց: Անհրաժեշտ բոլոր ձևակերպումների համար պահանջվեց մեկ շաբաթ: Վերադառնալու օրը, թռիչքի ժամը հայտնի էին:

Թաթուլը մեկ օր առաջ որոշեց քայլել անտառամերձ բացատներով, ուր ձյան առատությունը դեռ պահպանվում էր, բայց զգացվում էր գարնան շունչը, մարտ ամսվա տարաշերտ եղանակները պարուրել էին մերկ ծառերը: Խոնավ ու խիտ մացառուտները լուռ ու խաղաղ էին, որոնց կենդանացող կողերի մեջ խշրտացող ողնաշարի պես ձգվում էր սմքած ծառուղին: Թաթուլը մի քանի քայլ գնում, ապա ինքնաբերաբար կանգնում էր՝ գլուխը բարձր, հայացքը մանրազնին, ներսում գոլացած շողաբույրը զարթնել, ըմբոշխնում էր զմայլանքի ծեսը: «Վաղը այս պատկերները մնալու են հեռվում, իմ աչքերը փնտրելու են փառավորի ուրիշ վկայություններ... Այստեղ ուրիշ ցող է, այնտեղ՝ հույսի ծաղիկ... Այստեղ գեղուղեշ են ծառերը՝ վեհասլաց, բարձր, այնտեղ երկինք միտված բարձունքներ են... Այնտեղ ես եմ, պապիս պատկերներն իմ մեջ, ժայռակողն եմ Արտին լեռան: Այնտեղ Գուլո տատիս օրհնանքով հյուսված, էրգրից բերված հին թալիսման եմ, թանկ եղելություն՝ ծնողներիս: Այնտեղ խոխոջում է ախպերներիս հոգու չորս աղբյուրը, Կրպեների տոհմը՝ հասարակ ու հայտնի, Ռուզան քույրիկիս՝ իմ կարոտի երգը՝ աչքերում կրակ, հեզիկ-նազիկ հանդերի ճամփա, այգատենչի լուսե շողիկ...»: Թաթուլին այնքան մերձ ու մտերիմ էին իր գտած և հոգու խորքերում շարք կանգնեցրած հարազատների ներկայությունը, նրանց հարեհաս շունչն ու կանչը: Շրջապատի անծայր անտառաշերտերը, ականջ-ականջի փսփսացող կեչիների բանակը այնքան հարազատ էին: Թաթուլը խղճահարությամբ նայեց աջ ու ձախ հեռագնա ծառաշարքերին՝ թիկունք թիկունքի, իրար գրկած, ճյուղատար, ձգված ու ճկուն՝ բանակ-բանակ: «Զորավար չունի այս բանակը, կարոտի դուռ ու բարձունք չունի, կարոտի առաջնորդ՝ Արտին սար չունի այս բոլորաձայն հեռաստանը...»: Ներսում բռնկված ասքերից մի ուրիշ երամ գտավ Թաթուլը, ականջը պահեց, որ լսելիքը լիանար, բայց իր ուզած մեղեդին չգտավ, ու ինքը լռվեց իր մեջ, ներքին ձայները դարձյալ շուլալվեցին ու քարացան. «Այս հյուսիսային աշխարհը խշշոց ունի, նաև թփուտների խաբրիկ, բայց քարափների ընծյալ երդումը չկա, որտե՞ղ գտնես բնական արձագանքների խոստում-

խայտանքները, ձորի պռնկից զրնգացող աղբյուրը, սարերի հևքն ու հիրիկների նազանքը անձրևից հետո...»: Ոտքի տակ աշնանից մնացած չոր ճյուղերն աղմկեցին, թաց հողը դանդաղ սահեց ներբանների տակ: Թաթուլը կանգ առավ, սթափվեց, այլևս չխորացավ անտառի հեռուն: Զգաց, որ պաշարված է մտքերի խառնաշփոթով, սակայն վերադարձի փողը հոգու ավետիսով ժամանակին հնչեց: Թաթուլը դարձի անանուն շուքով կանխեց ելևէջող փոթորկի սխրանքը, ինքնահոժար սահեց, իջավ ոգեմերձ բարձունքներից: Դեպի զորանոց ոլորվող ճամփաբաժնում հանգիստ տվեց իրեն, անջատվեց աշխարհի ձայներից, իր ներսում իրենից հեռացավ, ջանաց խոհերի ճերմակ պսակներին երես չտալ: Հիշեց, որ վերջին անգամ այս անտառափեշին չդիմացավ մորմոքուն սիրտը: Հիշեց, ամեն-ամեն բան նա վերհիշեց և չմոռացավ գրպանից հանել ինքնաթիռի տոմսը, մի անգամ ևս կարդաց օրն ու ժամը, մտքով հասավ հաջորդ լուսաբացի ակոսը, ապա՝ հետմիջօրեն, օդանավակայանը, երանելի թռիչքը՝ ճերմակ-ճերմակ ամպերը...

... Նրա աչքերը փակ էին, բայց ինքը քնած չէր: Ինքնաթիռի շարժիչների միալար գվվոցը նույն երգն ու ելևէջն էին հաղորդում, կարծես պատեֆոնի հնամաշ ասեղը լռվել էր նույն ձայնակոսում: Հաճելի ու թեթև զգացումների պարույրում խորթ չէր այդ ծանոթ աղմուկը: Թաթուլը մտովի պատկերացնում էր, որ ճեպընթաց ամպերի բախվելով՝ հեռանում, անէանում էր անորոշության գիրկը: Միակ հողեղեն թելը հույսն էր՝ հրավառ ու ձիգ, հոգու սահմանները չլքող աստվածության դեսպանը: Նա աչքերը բացեց. պաղ մշուշ էր դրսում, ամպաթիռ պատառները գզգզվում էին ինքնաթիռին մոտիկ, շոյում, շուլալվում նրա արծաթավուն թևերին: Թաթուլը կտրվեց դրսից, նայեց կողք կողքի, շարք-շարք նստած ուղևորներին: Լուռ էին բոլորը, նրանք էլ երևի իր նման մտքերի թելերով գործում էին հույսի իրենց կտավը՝ կենտրոնում արև, տաք կեսօր, վայրէջքի ամենաթանկ վերջաբան: Թաթուլը կարեկցանքով նայեց բոլորին, կարծես գտավ հույսերին խոնարհ նրանց հոգու ճրագները, ուզեց իր ելման զգացումների ծաղիկ-ծոցերով բոժոժել բոլորին, որ ինքնաթիռում ժպիտներ ավելանային: «Երանի կարողանայի դառնալ այս լուռ ու մտախոհ մարդկանց հույսերի հրաշք թամադան, ամեն մեկի հոգս ու ցավին մի ճար գտնեի, մոտիկից հասկանայի, թե ինչն է տանջում իրենց, ձեռք մեկնեի, սիրտ տայի, որ այս ինքնաթիռի «բանտախցիկում» ժպիտը շատ լիներ, աչքերը խոսեին... էրնեկ այդպես լիներ...»: Բայց իրականում այդպես չէր, բախտի քմահա-

ճույքի ձին թամբած՝ նրանք մխրճվում էին երկնամերձ դղյակների ծոցը: Թաթուլը նայեց ժամացույցին, դեռ յոթանասուն րոպե կար մինչև բաղձալի հանգրվանը, ուզեց թիկնակը հետ տանել, խորասուզվել իր հազարաձայն հոգու աշխարհը, բայց աչքերը շոյվեցին պարզ երևացող լեռնագագաթներից: «Ահա Կովկասն իմ ոտքի տակ, ես՝ մեն-մենակ վերևում...»: Չմոռացվող այս տողերը դարձան նրա տեսիլքների բնաբանը, կառչեց պատուհանի կլոր ապակուն և այլևս չվերադարձավ բարձունքներից: Վեց ամսից ավելի նա չէր տեսել ոչ մի բարձունք, բլուր ու ժայռ: Հոգնել էր համատարած տափարակներից, իրարով խճճված անտառներից, որտեղ մարդը, ըստ Թաթուլի, հեռանում է իր հոգու ճախրանքներից, իջնում դեպի անորոշն ու անհամեմատելին: «Վերջապես այս հեքիաթին ես էլ արժանացա...»: Նա ոչ մի մանրուք բաց չէր թողնում, բարձունքների հետ խորասուզված էր անհուններում: Կարոտի տարածքը դուրս էր եկել իր սահմաններից, և այս տեսիլք-պատկերները սքանչացրել, տանում էին նրան: Վերևներից աչք շոյող իրողությանը նա նայում էր տիրոջ իրավունքով, երկրային թանձր խոհերով ծածկում գունախաղերի արագընթաց երամը: Տեսադաշտում կորցնելով մեկին՝ մյուսն էր կանգնում նրա տեղը՝ բարձունքներ, սուր գագաթներ, թեք կտրվածքներով անդունդ-իջվածքներ: Վեհասլաց Կովկասյան լեռները աստիճանաբար մնում էին հետևում: Ինքնաթիռը աննշան վեր ու վայրէջքներով ճեղքում էր կապույտ երկնածովը՝ շրջանցելով ամպ ու արևմուտք:

Թաթուլը տուն էր վերադառնում:

Այս ճշմարտությունը թռչող ինքնաթիռից ավելի զորեղ թևեր էր պարգևել նրան, բայց նրա հոգում չհեռացող ամպ կար: Ընկճված էր, որ շուտ էր զորացրվել, հաճելի չէր շրջապատի աչքում կոտրել իր հպարտությունը: Գիտեր, որ գյուղի զրույցին մի թել էր ավելացնելու՝ Կրպեենց Թաթուլն ինչու լրիվ չծառայեց, հայրն ու եղբայրը գնացին, և մեկ-երկու ամսից Թաթուլն ազատվեց ու եկավ: Այս մտքերը ինքնաթիռից առաջ ընկել հասել էին Արեգ: «Ի՞նչ... բոլորի առջև կուրծքս չեմ բացելու, թե տեսեք՝ ինչ ծանր վիրահատություն եմ տարել, կարդացեք, թե ինչ է գրված զինվորական գրքույկում...»: Գուցե թե այդպես էլ չէր, Արեգի մարդիկ միշտ բարձր ու վսեմ էին և Թաթուլի հազարաձայն աշխարհն էր այնտեղ, բայց նա նաև ինքնադատ էր, ուրիշների աչքերով էր փորձում տեսնել ու գնահատել փաստը, ամեն ինչին նայում էր ուղիղ, շիտակ, խորազնին էր, հավասար ու ճիշտ գնահատող: Այս զգացումների առջև նա միշտ

հաշվետու էր, բայց այդ զգացումներն էլ իրավունք չունեին իրեն խաբել, շեղել իրականից, որովհետև նա իրեն միշտ համարում էր դառը ճշմարտության տերը և ոչ թե անորոշության պատսպարված վկան: Եվ հիմա այս հակասական, բայց հանդարտահոս մտքերով նա ճախրում էր տուն: Հայացքը դրսում էր, թռչող հսկան իջել էր վերին ամպերից: Հանկարծ նա թեթև ճիչ արձակեց. ինքնաթիռը լողում էր Արտին սարին շատ մոտիկ: Թաթուլի հայացքը նախ հասավ թեքությամբ երևացող Ախուրյանի ձորը, այն կողմ Մրենի վանքն էր, ավելի հեռվում լեռնալանջեր էին, կանաչ գունախաղերով հովիտ-դաշտավայրեր: «Պապոնց երկիրն է, Կաղզվանի դաշտը...: Պապ Մարկոսն Արտին սարի գագաթից ի՜նչ խանդավառությամբ էր ցույց տալիս, մեկ-մեկ պատմում ծննդավայրի սար ու ձորերի, աղբյուր-գետերի, շեն ու ավեր գյուղերի մասին...»: Կարոտի անբառ թրթիռներից խոնավացան Թաթուլի աչքերը: Պապին հիշեց, նաև գյուղի մեծերին, որոնք իրենց ճաքված սրտերով չդիմացան կարոտի անզուսպ փոթորկին, հազար անգամ բարձրացան ու իջան Արտին լեռը, անամպ օրերի գթությամբ՝ սեփական աչքերով խախտեցին սահմանը, իրենց սրտին հասկանալի մի պուտ կարոտի արցունք թափեցին այնտեղ, միայն այնտեղ՝ Արտին լեռան բարձունքների միամիտ քարափների մեջ, որ գաղթականների բնույթը քննող ու գրանցող հատուկ «մարմինները» գործ բացելու առիթ չունենային: Թաթուլը լուռ մղկտաց, հոգու պարույրները նոր կարկաչով արթնացան, երբ սարալանջից ներքև շեն ու շքավոր ուրվագծվեց Արեգ գյուղը: Նա պարզ տեսավ Թալինից ձգվող և գյուղի միջով անցնող մայրուղին, զոհվածների պատվին խոյացած հուշարձանի սյունն ու երկայն պատը, դպրոցի շենքը, հետո գյուղի տները՝ շարք-շարք, խուռն ու խաղաղ:

Նա գտավ նաև իրենց տունը, սիրտը թպրտաց, աչքերի ծոցում տեսավ տատ Գուլոյին, հորն ու մորը, քրոջ ժպտուն հայացքը, պատկերացրեց գրկախառն հանդիպումները եղբայրների, ընկերների հետ:

Թաթուլի վերադարձի մասին ոչ ոք չգիտեր, նա չէր հեռագրել, ուզում էր առանց նախականչերի տուն հասնել: Մեկուկես ժամ անց նա օդանավակայանից եկել, հասել էր շրջկենտրոն: Ներքին Արթիկ գնացող մի մեքենա կանգնեց. ուղևորներին Թաթուլը չճանաչեց:

- Դեպի ո՞ւր,- սիրալիր հարցրեց վարորդը:

- Արեգ,- ժպտաց Թաթուլը:

- Ուրիշ ճանապարհ չկա, նստի՛ր, ձեր գյուղով ենք անցնելու:

Թաքուլը շնորհակալությամբ տեղավորվեց վարորդի թիկունքում նստածների կողքին:

- Կարճատև արձակո՞ւրդ,- հարցրեց կողքի ուղևորը:

- Երկարատև,- ոչ հաճելի ձայնով պատասխանեց Թաքուլը: Բարեբախտաբար կողքի մարդիկ այդ թեմայով այլևս չխոսեցին, մինչև գյուղն ընկած հետագա զրույցը ռուսական ձմռան և ցրտի մասին էր, նաև այն երկրամասերի, ուր իրենք արդեն հասցրել էին ծառայել:

Թաքուլը աստիճանաբար նրանց ներկայության շրջագծից դուրս մնաց, ակամայից տարված էր գարնան գույներով. հեռվում ծանոթ գոգահովիտներն էին, ձախ կողմում՝ ճանապարհին զուգահեռ ծիլ տված արտերն ու թաց բացատները: Մեքենան որքան մոտենում էր Արեգին, նույնքան ուժգնանում էին տուն վերադարձող զինվորի սրտի զարկերը: Մի պահ Թաքուլը լրջացավ, փորձեց կենտրոնանալ հետագա անելիքների վրա:

Մեքենան սրընթաց անցավ գյուղի առաջին տները: Թաքուլին այնպես թվաց, որ ինքը շատ երկար ժամանակով էր բացակայել. ամեն ինչ ուրիշ գույն ու տեսքով էր ժպտում նրան: Հարազատ, անկորնչելի այս պատկերները ցուրտ հյուսիսում նա հազար անգամ մտովի էր նկարել, դրանցով հուզվել էր, երազել ու սիրել: Այդ ամենը հիմա դարձյալ իր կողքին էին, մեծ կարոտի տեսիլք-աղբյուրները բացել էին իրենց դարպասները, և Թաքուլը հազիվ դիմանում էր Արտին լեռան անփոփոխ բարությանը: Այսօր նա զուգվել էր աստվածային հերքով, շողշողում էր հրաշալի ու տաք:

Գյուղամիջյան ցայտաղբյուրի մոտ նա վարորդին խնդրեց, որ կանգնի, շնորհակալ եղավ, իջավ ավտոմեքենայից: Տան ճանապարհին մեկ-երկու տեղ նրան կանգնեցրին, նեղ փողոցի աջ ու ձախ կողմերից դուրս վազեցին երեխաները, ճանաչեցին զինվորին, բացականչեցին.

- Թաքուլն եկա՜վ, Թաքուլը...

Կանայք տներից դուրս եկան, մոտեցան, ջերմ համբուրեցին նրան, տղամարդիկ ողջագուրվեցին, ուրախացան:

Թաքուլն էր վերադարձել:

- Լա՞վ ես, լա՞վ, Աստված քու գործ հաջողե,- ամեն կողմից լսվող այս բառերից Թաքուլն ամրապնդվեց ու գնաց: Լուրն ավելի շուտ էր հասել տուն: Նա հեռվից նկատեց, որ իրենց տան բակն արդեն մարդաշատ էր: Բայց նա մի պահ նրանցից կտրվեց՝ տեսնելով Ռուզանին, որ վազում էր ընդառաջ, նրա թիկունքից եղբայրները՝

Սերգոն, Մինասը, Գրիգորն ու Մանվելը:

- Թաթո՜ւլ,- բացականչեց քույրը և ընկավ եղբոր գիրկը: Մոտեցան մյուս եղբայրները, գրկեցին Թաթուլին, ժպտացին, հուզվեցին: Փողոց դուրս եկած հարևանները շրջապատեցին նրանց և միասին մտան տան բակը: Սեդան արցունքները թաքցրեց, գրկեց որդուն, բայց չկարողացավ զսպել իրեն, գլուխը դրած որդու կրծքին՝ հեկեկաց:

- Մայրի՛կ,- հանգստացրեց Սերգոն,- ողջ ու առողջ եկել ու քո կողքին է Թաթուլը, լացը պետք է՞:

- Չէ՛, չէ՛, չդիմացա,- արցունքները սրբելով՝ արդարացավ մայրը:

- Սովորի դիմանա՜լ,- թիկունքից գոռաց Ժորան: Նա արհեստանոցից համարյա վազելով էր եկել...

- Թաթո՛ւլ, իմ բալա՛, շնորհակալ եմ Աստծուց:

- Հայրի՛կ,- բացականչեց Թաթուլը և փաթաթվեց հորը:

- Դու հազար բարով եկար,- հայրը գրկել, չէր թողնում որդուն, բայց հասցրեց նրա ականջին շշնջալ,- քանի՞ օրով...:

- Հայրի՛կ, լրիվ ու լրիվ ազատվեցի ու եկա:

- Ես քու հոգուն մեռնիմ, քու առողջություն տե՞ղն է, ազատվելը կարևոր չէ:

Թաթուլը մի պահ վարանեց, նայեց հավաքվածներին, գլխով հավանության նշան տվեց և ներս գնաց:

Հին թախտին նստած էր Գուլո տատը՝ հոգնած, ծեր ու լռակյաց: Թաթուլը մոտեցավ, ծունկ իջավ տատի առջև, միամիտ ու հոգեխաս ժպտաց: Նրան թվաց՝ իր բացակայության առաջին պահից մինչև այժմ տատն այսպես՝ թախտին նստած, հենված բարձերին, սպասում է իրեն:

- Տա՜տ,- ոգեկոչ ու կարոտատուրք հնչեց Թաթուլի ձայնը:

- Ա՜խ, բալա՛, էկա՞ր, գրկե ընձի,- Գուլոյի չորացած շուրթերից մրմունջով թնկթնկացին բառերը: Նա ցամաքած ձեռքերը դժվարությամբ բարձրացրեց և գիրկն առավ թոռանը:

- Թաթո՛ւլ, բարո՛վ էկար, քո ղարիբ ճամփեն չեղներ, տղա՛, ես չէի սպասի, հիմա թող Աստված ուր գործ կատարե:

Ժորան ներս մտավ, ուրախացած բռնեց մոր ձեռքը և ասաց՝ աչքդ լո՛ւս լինի, մարե՛, ու դարձավ Թաթուլին.

- Բարձր ձենով ըսա, բոլորն էլ լսեն, որ քո առյուծի սիրտը առողջ է, իմ ախպե՜ր,- երջանկությունից թնդաց Ժորան,- էս ամբողջ գյուղ քու հարազատներն են...

- Հայրի՛կ, ամեն ինչ կարգին է, ես էլ վերջնականապես եկել եմ,- ծիծաղեց Թաթուլը:

- Բարով, հազար բարի ես եկել,- տարբեր կողմերից ձայները թնդացին...

- Ժողովո՛ւրդ, ես էլ իմ խոսքի տերն եմ,- հզոր ձայնով բոլորին լռեցրեց Ժորան,- Աստծու առաջ խոստացել էի, որ իմ Թաթուլի գալուց մատաղ պիտի անեմ, էսօր էդ սուրբ մատաղի օրն է, բոլորդ իմ հյուրն եք...

ԱՅՐՎՈՂ ԾԻԱԾԱՆՆԵՐ

Մասն երկրորդ

Թաքուլը Գետաշեն տարավ Արեգ գյուղի մեծերի կարոտ-աղբյուրը, դրանով պիտի դիմանար, հյուսվեր գետաշենյան օրորոցին: Եվ այնտեղ գտավ եղեմական եզերքներ, բնության և հայ մարդու դարավոր դաշնություն, հնի հիշատակություններ, նորի պաշտպան-քաջեր: Այստեղ նա վերագտավ իր պապերի ոգին, նրանց տագնապ-ցավերի նույն տեսակը, իրենց հողն ու ծննդավայրը պաշտպանող, իրենց երեխաներին և պապենական սրբությունները փրկելու պատրաստ նույն մարդկանց:

ՀԱՐԱՉԱՏ շրջապատը, գյուղը, ընկերները մի քանի օր շարունակ Թաթուլին առավոտից իրիկուն պաշարել, հանգիստ չէին տալիս: Նա չէր թաքցնում վերագտած իր հիացմունքը, գոհունակության այսպիսի տաք պաշարներ ինքն իրենից այդքան շուտ չէր ակնկալում: Անցած ամիսների անսովոր լարվածությունը, անկանխատեսելի վիրահատությունը թեև մնացել էին հետևում, բայց նա հաճախ էր կայծակնորեն վերադառնում դրանց: Անկորնչելի մի մղձավանջ ինչ-որ անկյուններից փորձում էր բարձրանալ, մոտենալ ցավոտ հիշողությամբ, սակայն Թաթուլը հեշտությամբ շրջանցում էր այն: Նրա հոգում ուրիշ հետաքրքրությունների սահմաններ էին ընդգծվում: Անցնող ամեն օր փոփոխական շուքով էր ներկայանում, դառնում ծրագրի սկիզբ, որի շրջանակներում նա դարձել էր ավելի երազուն ու խոհական: Ծանոթները, մերձավորները վաղուց գիտեին, որ Թաթուլը դեռ դպրոցական նստարանից փայփայում էր պատմաբան դառնալու միտքը: Նրա խնդրանքով կարճ ժամանակում եղբայրները, թալինցի իր ընկերները պատմությանը վերաբերող այնքան գրքեր էին ձեռք բերել, որ տանը մի ամբողջ գրադարան էր ստեղծվել: Ազատ ժամերին, պայմանավորված տեղում նա երբեմն հանդիպում էր ընկերներին՝ Աղասուն, Արթուրին, Տիգրանին: Դա նշանակում էր, որ օրը դառնում էր լեցուն, քանի որ ընկերները նույնպես լայն մտահորիզոն ունեին, քննարկվող հարցերին մոտենում էին սեփական կարծիքներով, ճշմարիտ էին, գիտեին մեծ ու փոքր երևույթներին ինքնատիպ գնահատական տալ: Թաթուլը զգում էր, որ իր հասակակից սերունդը յուրահատուկ բնույթ էր դրսևորում, երբ հարցը ազգային շերտեր էր շոշափում: Դրանում նա չէր ժխտում էրգիր կորցրած մեծերի դերը: Կարոտին պատասխան գտնելու նրանց լուռ աղաղակները, նրանց հառաչանքն ու թաքուն հեկեկանքը, հայրենի ծննդավայրից վտարանդի ճակատագրի ճոճվածքի տակ ճզմված գաղթականնե-

րի պատում-պատմությունները, վիրավորանքից տնքացող նրանց մեծ ցավի անքուն հորդորները տարիների ծոցերով կուտակվել էին Արտին լեռան չորս բոլոր: Թաթուլն ու իր սերնդի տղաները արդեն կյանքին հրաժեշտ տվող պապ-տատերի ցավալի հեռացման և մեծ ափսոսանքի վկաներն էին: Իրենց թոռներին պաշտող, իրենց շունչը, ասքը, ավանդապատումները հոժարաձայն ու ճշմարիտ փոխանցող այդ մեծերի հեռանալով՝ պակասել էր գյուղի խղճի առավոտների փայլը, տան պատից մեծ քար էր ընկել, ճաք էր տվել բարությունը, հուշը մերկացել էր, հիշողության կրակը դարձել էր բորբոք, անկասելի... Սերնդափոխության այդ կամրջին էին Թաթուլն ու իր հասակակիցները: Էրգրից եկած տարագիրներին փոխարինում էին Թաթուլի ու իր սերնդակիցների ծնողները: Կտրվում էր Էրգրի գույն ու համը պահպանող ականատեսների կարոտի թելը, բայց հուսալիր վերադարձի անկասելի հորձանքն էր մնում այդ մեծ բացակաների փոխարեն: Նրանց խաս խորհուրդները, անձեռագիր հրամանները թալիսման-թելերով ամուր կպած էին օրոցքներին, հրաշք-հմայիլների կախարդանքը այն երգերն էին և օրորոցայինները, որոնք գաղթականների հոգու բարձունքներից չէին գաղթել, այն պարերը, որոնց շարժում-շռինդները մշտական հիշեցնում էին, որ եկել են Արաքսի այն կողմից, հեթանոս թրթիռներ ունեն իրենց արևոտ ուսերին, եկել են մասունքածոց խաչ-պատարագներով, ծով-հմայքների հարամնա սաղմոսներով:

Թաթուլն ու իր ընկերները այս ծով-հմայքների նավերին էին՝ ճամփորդողի վճռականությամբ, իմանալու, սովորելու, չկորցնելու անհատնում ծարավով:

Այսպես էր ձևավորվում սերունդը Թալինի բարձունքներին ծվարած բոլոր գյուղերում: Բարությանը, խղճի հավաքական մաքրությանը ձգտող հոգիների մեծագույն շքերթը Արևմտյան Հայաստանից այստեղ էր հասել տիեզերաձայն նրբին հյուսքերով, նաև անբացատրելի ցնծության այն կանչ ու տենչանքով, որի զորությունը Արագածի փեշերին իջած, բոցեղեն աչքերի կայծակնաձամ հաղորդությունն էր: Յոթանասուն տարի անզմռսելի հոգիների կեղևի տակ խլրտացել էր ոգեմրմունջ «Գորանին», դարձի շռինդով պահպանվել էր «Ծափ պարը»՝ դարերի հայկազուն ելևէջը: Թեև ճակատագիրը ճամփա էր կորցրել, սակայն ճշմարտաբան, վիրավոր ու վտարանդի մարդիկ եկել և լինելու ճոճք էին կապել Արագած-Մասիս ծիածանածոց մակույկներին:

Այդ հովանու տակ մտերիմ ու մանրաքանդակ մնացել էր Էրգ-

րի պատկեր-պատմությունը: Հուշերի երակները գարնան սելավի պես քանդվում ու գալիս էին Սասնաշեն, Բազմաբերդ, Կաքավաձոր, Իրինդ, Շղարշիկ, Դավթաշեն, Կաթնաղբյուր, Աշնակ, Ահագչի, Սուսեր, Ոսկեթաս, Մաստարա, Ակունք, Ցամաքասար գյուղերից, բարձրանում Արտին լեռան գագաթը, իջնում Արեգ, ապա ծրարվելով՝ գնում, անէանում էին Անիի փեշերի տակ:

Այդ գյուղերում անդադրում էին մարդիկ, նրանց անհանգիստ բնավորության ուղեկիցը փառավոր հուշերի պատկերներ էին, այրող, հառնող և անբեկանելի բարբառի համը, հազարաձայն երգերը: Թաթուլը հասցրել էր շրջել այդ շեներով, քաղել Սասնո երգերի պսակը, որոնց խնկաբույր ելևէջների ծոցում իր բույնը, տեղը, իր հասցեն էր որոնում: Երազած ապագա երգչախմբի համար նա ձայնագրել էր սասունցի մեծերին, էրգրում ծնված վերջին մոհիկաններին: Ինքն էր կատարում այդ երգերը, պարերը թնդացնում էր այնպես, որ ոչ մի կայծ չպակասեր Սասնո տան բարձրագահ խարույկներից:

...Արթուրի խնդրանքով Թաթուլը սկսեց Սերոբին նվիրված երգը, երբ արդեն բարձրացել էին գյուղի մոտակայքում գտնվող փոքրիկ բլուրը: Սերոբի մահվան և Սոսեի մեծ սուգի միջով էր անցնում Թաթուլի շունչը: Այդ պահերին նա կերպարանափոխվում, դառնում էր անզուսպ ֆիդայի, կարծես պատռում էր իր հոգին զսպող շղթաները, կռվում դավադիրների հետ: Նրա ձայնը մեկ ողբ էր, մեկ ցավի և վիրավորանքի անկասելի շանթ: Ակունքների, հեռացած մորմոքների թարգման էր դառնում Թաթուլը, երբ նրա շուրթերի բառերը հայրենյաց հիմն էին վիպում, ծոնում հանուն արդար նպատակի զոհված քաջորդիների փառքը: Եվ երբ հոգու հեռուներից բերում և հնչեցնում էր «Հազար ինը հարյուր յոթ թվականի՝ չքնաղ մայիսի քսան և յոթին...» երգատողը, սանձում էր ամենքին, հարկադրում լռել, խոկալ, մտովի հասնել Սուլուխ, տեսնել Գևորգ Չաուշին՝ կռված ու հաղթած, զարկված ու պատգամախոս, հեռացող ու հարամնա: Թաթուլն այնքա՜ն շոշափելի, մերձ ու մտերիմ էր պատմության անցքերին, խառնվում, ձուլվում էր շուրթեշուրթ անցած երգերի պատառներին, անէանում վեհության անանց ջրվեժների հետ, հեռանում էր անդարձ՝ դեպի աստղամշուշ հեռուն, ապա դարձի անուշ մխանքով վերադառնում, գալիս էր իրեն մեղադրող ահեղ կանչերով: Մեղադրում էր, որ այնտեղ չի եղել, չի կռվել Գևորգի խմբում, ձեռք չի մեկնել Գալեին, Միսակին, Սեյդո Պողոսին... Թաթուլի երգերը ինքնաճանաչման այրող ճոճքերին բոցեպսակ էին՝ հանդուգն ու հոգեցունց: Իր պապ ու տատի, ղարսեցի գաղթականների բանտարկ-

ված ճիչերն էր ի մի բերում, կորուսյալների մասունք-մրմունջները իր հոգու մագնիսով փնջում, փռում էր Արտին լեռան չորսբոլորը, որ բարձունքների տաք տիրույթներում չկորչեր Մեծ էրգրի խճանկարը:

Այդպես էր Թաթուլը դեռ այն ժամանակ, երբ ավարտում էր գյուղի միջնակարգը, երբ հայտնվեց խորհրդային բանակում, այդպես նա մնաց սրտի ծանր փորձության ժամին, այդպես էր և հիմա՝ գյուղի մերձակա բլուրին նստած՝ իր կողքին Սամվելն ու Տիգրանը, Արթուրն ու Աղասին:

- Շատ տխուր չե՞ն մեր երգերը,- միանգամից հարցրեց Տիգրանը, երբ Թաթուլը, թիկունքը տված ժայռին, ճակատի քրտինքն էր սրբում:

- Ընդամենը միամտություն է այդ կարծիքը,- ընկերոջը կշտամբալից նայեց Թաթուլը,- մեր բախտի բեկորներն են մեր երգերը, դրանք արտաքուստ են տխուր, մորմոքուն բառերի տակ միշտ զարթուն է ոգեկոչման զանգը, պետք է կարողանալ լսել, թե ի՞նչ հրաման են արձակում նրանք:

Տիգրանը զարմանքով նայեց Արթուրին, կարծես աջակցություն էր խնդրում:

- Ավելացնեմ,- դարձյալ ուշադրությունն իր վրա բևեռեց Թաթուլը,- ժողովուրդը քիչ է սխալվում կամ ամենևին չի սխալվում: Եթե նա ընդունում է որևէ բանաձև, ուրեմն նրան այդպես է թելադրել իր իմաստուն բնազդը: Իսկապես տխրուն են մեր երգերը, բայց դրանք մեծ ցավերի հոգեդարս քարտեզագրումն են, պատառիկ ճիչերի մշտահորդ, մշտաներկա գրանցում, որոնք հուշերգություն են, հավատամքի դաս, անվերջության, լինելիության անվերծանելի հաղորդություն: Այդ երգերի մեջ պետք է զանազանել, գտնել հայկազուն տեսակի անվերծանելի կանչը, ապրելու տենչը, օրորոցայինների հավիտենական պատգամները: Այդ թվացյալ տխուր երգերում է ապրում ժողովրդական տուրքի և հիշողության հավերժական քնարը:

Սամվելը հիացմունքով ժպտաց և դարձավ Տիգրանին.

- Հասկացա՞ր, եղբա՛յր...

- Ախր դրանք ինձ շատ են տխրեցնում,- Տիգրանը մոտեցավ, ձեռքը դրեց Թաթուլի ուսին,- բայց որ դու ես կատարում, բառերը, ասելիքը ուժ են առնում, ողբը պակասում է:

- Տիգրա՛ն, ճչան չեն մեր երգերը, դա բնավորության և խառնվածքի խնդիր է: Գոչգոչուն չեն նաև եկեղեցական պատարագները, սաղմոսները, Գողթան երգերը, դա հաղորդության ձև է, որ նվաճում է նպատակի բարձունքը:

Տիգրանն այլևս անկարող էր առարկել և ընկերոջ հանդեպ

հիացմունքը նրան մղեց ինքնախոստովանանքի.

- Թաթո՛ւլ, հավատա, չեմ շողոքորթում, այդ ե՞րբ հասցրիր այդքան խորությամբ թերթել հայոց պատմությունը, այդքան ներծծվել սեփական արմատների խորքը:

Արթուրը համաձայն էր Տիգրանի հետ: Նա նկատելի գորովանքով և խորազնին ժպտաց, որովհետև մինչև այս բլուր հասնելը Թաթուլը ներկայացրել էր հայոց պատմության կարևոր ժամանակները, կռվող ու շինարար արքաներին, ապա 1895-1920 թվականների իրադարձությունները, որոնց անմիջական մասնակից էին նաև Ղարսի նահանգից բռնագաղթված իրենց պապերը, Արեգ գյուղի երեկվա մեծերը:

- Պարզապես կարոտ, հիացում և ափսոսանք ունեմ մեր անցած պատմության նկատմամբ,- մեղմ ձայնով ասաց Թաթուլը,- մի տեսակ հրամայական պահանջ եմ զգում իջնել անցյալի քառուղիներով, ճանաչել, իմանալ և, միաժամանակ, սեփական կարծիք ունենալ պետականությունը երկար ժամանակով կորցնելու պատճառների մասին, բարձր գնահատել ֆիդայական շարժման առաջնորդներին, հայ դասական կուսակցությունների վերաբերյալ ազատ կամքով խոսելու իրավունք նվաճել: Երեկ իմ ձեռքն ընկան Ավետիս Ահարոնյանի ստեղծագործությունները, հիացա, հպարտացա նրա սքանչելի գործերով... Ուշադիր լսեք նաև Լևոն Շանթին, տեսեք, թե ինչ հազվագյուտ անցում-թրթիռներ են խտացված այս բանաստեղծության տողերում:

«Իջե՛ք, իջե՛ք, երազներ,
Իջեք, զգո՜ւյշ, երազներ.,
Շոյո՛ղ, անո՜ւշ երազներ,
Իջեք ինքո՜ւշ երազներ...»

Երբ Թաթուլն ավարտեց, ընկերները հիացմունքով փաթաթվեցին նրան.

- Սքանչելի է...

- Այդ սքանչանքը, իրոք, կախարդական կլիներ ձեզ համար, եթե այդ անմահական գործի կատարումը լսեիք Վահրամ Փափազյանի կատարմամբ,- միանգամից պայծառացան Թաթուլի աչքերը,- այդ մեծ արտիստին նվիրված ռադիոհաղորդումները սկսվում կամ ավարտվում են Շանթի այս գործով:

Տղաները, կարծես, ուրիշ աչքերով էին նայում իրենց ընկերոջը, զգում էին, որ նրա խոհերի անսովոր հաղորդությունը տիրաբար ջերմացնում էր իրենց ներաշխարհը: Նրանք հասկանում էին,

որ օր օրի է Թաթուլը բարձրանում՝ ընդգծելով իր իմացության աստիճանը, հաստատելով իր լինելու ձևն ու իմաստը: Բանակից վերադառնալուց հետո նա առավել էր լրջացել, կենտրոնացած էր միշտ, նախկինում էլ պատահական, թեթև զրույցների սիրահար չէր, բայց այսքան խտացված, ինքն իր հետ քննող, վերլուծող ու հավասարակշիռ չէր եղել: Նա կյանքին նայում էր բազմաշերտության խորքերից, փորձում էր թերթել նրա հավիտենության մատյանը, «իմանալ զբանս հանճարոյ»:

- Վերադառնանք,- այս մեկ բառն ասաց Թաթուլը, ապա դառնալով Արթուրին՝ միամիտ ու մանկական հայացքով ժպտաց,- գիտես, ինձ թվում է՝ ես միշտ կարևոր մի բանից միշտ ուշացած եմ, հիմա այստեղ՝ իմ մանկության օրոցք-բլուրներին, երկար ժամանակով հյուր գալու ժամանակ չունեմ:

- Առանց դրանց դու չես կարող ապրել,- հաստատապես ասաց Տիգրանը:

- Ճիշտ է, բայց դրանք հետո,- կարճ կապեց Թաթուլը և քայլեց առջևից,- ես լուրջ որոշում ունեմ, համալսարանի պատմության ֆակուլտետը ինձ է սպասում, ուզում եմ իմ աչքում բարձրանալ, հավատալ ինձ, ախր այնքա՜ն ծրագրեր ունեմ, ինձ թվում է՝ շատ եմ ուշացել:

- Աստված թող քեզ աջակից լինի, եղբա՛յր, քսան տարիդ դեռ չի բոլորել, էդ ինչի՞ց ես ուշանում:

- Կյանքի գնացքից, Տիգրա՛ն,- խորը հուզմունքից խզված ձայնով ասաց Թաթուլը,- ինձ թվում է՝ այդ ճեպընթացը շատ արագ է փախչում ինձնից, իսկ ես իրավունք չունեմ ինձ հատկացված տեղը թափուր թողնել...

- Իսկ մե՞նք,- ծիծաղեց Արթուրը:

- Դուք էլ ձեր գնացքին եք սպասում,- ժպտաց Թաթուլը,- մարդիկ միշտ կառամատույցում են, ամեն մեկը իր գնացքին է սպասում, բայց պետք է ժամանակին նստել, չկորցնել ճակատագրով սահմանված քո վայրկյանը:

- Իմաստուն խոսքեր են, Թաթո՛ւլ...

- Իմը չեն, փիլիսոփաների մտքերի քաղվածքն է:

- Հիմա այդ փիլիսոփաները մեր կողքին չեն, մենք քեզնից ենք իմանում,- իր գոհունակությունը հայտնեց Տիգրանը:

- Կյանքը փոխանցումների արվեստ է, բայց ինքդ որևէ արժեք պետք է ունենաս, որ կարողանաս այն փոխանցել,- իր խոսքն առաջ տարավ Թաթուլը,- վերջին ժամանակների իմ ապրումները,

ընդունելության քննություններին մասնակցելու իմ որոշումը ինձ ստիպեցին խորանալ հայ և ուրիշ ժողովուրդների պատմության խորքերը, ծանոթանալ նաև հելլենական մշակույթին, եվրոպական արվեստի առանձին ուղղություններին...

- Այդքանը ինչպե՞ս ես հասցնելու,- ընկերոջը մտահոգ նայեց Արթուրը:

- Դրա համար ինձ պետք է քիչ լինել մանկության ձորերում ու բարձունքներում, որ ես չուշանամ իմ գնացքից,- ծիծաղեց Թաթուլը:

- Քեզ նման ուղևորը կզարդարի կյանքի ցանկացած գնացք,- անկեղծացավ Արթուրը:

- Մեծ-մեծ բաներ ասելով՝ ինձ չեք զարդարի, հարազատ եղբայրներ, իմացեք, որ իմ առջև հիանալի օրինակ կա,- ասաց Թաթուլը,- ես վաղուց եմ հիացմունքով հետևում մեր համագյուղացի Արտավազդ Դարբինյանին, ճանաչո՞ւմ եք:

- Իհա՛րկե, Դարբինենց Ժորայի որդին, հիմա նրանք ապրում են Արտենի տնտեսությունում,- գրեթե միաբերան ասացին Արթուրն ու Տիգրանը:

- Կրթության ասպարեզում նրանք՝ Արտավազդ Դարբինյանը և Նորիկ Գալստյանն իմ կուռքերն են, տղանե՛ր,- կարծես ինչ-որ գաղտնիք էր բացահայտում Թաթուլը, որը միայն իրեն էր հայտնի,- նրանցից մեկը պատմական գիտությունների թեկնածու է, մյուսը՝ մաթեմատիկական գիտությունների, համալսարանի դասախոս, դոցենտներ են և հրաշալի անհատականություններ:

* * *

Գուլոն վերադարձած հիշողությամբ շարադրում էր այն ամենը, ինչը քաղել էր հնուց, միագումար բերել հասցրել էր հետնորդներին: Պատմում էր և անհագուրդ ծարավ էր զգում, երբ հոգու ծալքերում հանդիպում էր հին, անցած կանչերի: Վերջին ամիսներին դեռ այսպես չէր աշխուժացել, հիշում էր, հաղորդում, պատմում ու քթի տակ երգեր դնդնում: Նրա շուրջը միշտ մարդաշատ էր: Միայն տնեցիները չէին, այցի էին գալիս կանայք, որոնք թեև տարիքով իրենից փոքր էին, բայց միասին աշխատել էին դաշտերում, արտերից քար էին հավաքել, ցորենի խրձերի համար կանաչ հասկակապեր էին հյուսել, գիշերներ անցկացրել կալերում, միասին լացել ու ուրախացել էին, միասին զավակներ ու թոռներ մեծացրել:

Ժորան հասկանում էր նրա ստույգ հիշողության անսպասելի դարձի այդ տեսակը: Մայրը վերջին ճիգերով քամում էր իրեն, որ

բարության ծառը չթառամի, որ իրենից հետո մնան տոհմի ու գյուղի կենդանի նշխարները, զրույցն ու երգը: Նա որևէ մեկի պատկանելիքը մյուսին չէր բաշխում, հնից եկած մնացյալ մասունքները Գուլոն դասավորում էր ըստ հասցեի:

- Ապերախտություն կեղնի, որ Արամի խոսքը դնեմ Խաչատուրի անվան դիմաց, Տեփոյի կատակները վերագրեմ Մարկոսին, Ժորայիս ու Վաղարշակիս երգերը ուրիշի բերանով ասեմ,- բացատրում էր տատը, երբ հավաքվածները ավելորդ հարցեր էին տալիս: Նրանց մեջ միայն մեկը չէր խոսում, չէր ընդհատում, տատի ամեն խոսքը գրի էր առնում, մեկ-մեկ պարզաբանման համար հարցեր տալիս: Թաթուլն էր: Տատը ուրախությամբ պատմում էր նախիջևանցի երգողների մասին, չէր մոռանում եկեղեցական ծեսերը Կծկոնք վանքերում, մանրամասները ներկայացնում էր իր բարբառով, հյութեղ ու տեսանելի: Երբ մենակ էին լինում, Թաթուլը ոգևորությունը պահում էր ներսում, շոյում էր տատի ճերմակ մազերը, ոսկրացած ձեռքերը պահում իր տաք ափերի մեջ, հյուսվում ու հաղորդվում էր նրա ընդհատվող զրույցներին, հեռաձայն շնչին, մարող ժպիտների վերջին թրթիռներին: Երբ Թաթուլը նրա կողքին էր, ոչ ոք չէր ուզում խանգարել, մոտենալ, շեղել: Բոլորը հասկանում էին փոխանցման վայրկյանների կախարդանքը, եռաձայն շուք էր ծիածանում տատը, որ թոռը չկորցներ իր բերած թելը, իր տենչի կորուսյալ ելևէջը, հույզերի մեջ զգաստ մնացած պատկերները: Թաթուլը դեռ այսքան մոտիկից չէր բացել տատի «գանձառատ» հոգին: Այսպիսի խորությամբ նա չկարողացավ թափանցել Մարկոս պապի ներաշխարհը: Այն ժամանակ յոթ-ութ տարեկան էր: Հիմա քսանն էր բոլորում: Այս տարիքի իմացությամբ նա շալակել ու տանում էր տատին: Նրա հետ մի ամբողջ գյուղի, գավառի, մի ամբողջ Ղարսի պատմությունը, նաև կորուսյալ ժամանակների գույնն ու համը, վկայությունները, բարբառի բացառիկ բերկրանքը, հինն ու հավիտենականը, որոնք հրաշքի ցոլուն մեղեդայնությամբ իջնում էին տատի շուրթերից և ոսկեբերան շարուկ կապում օճորքի տակ: Զմայլանքի և ինքնաճանաչման այդ շքերթի մասնակիցն էր Թաթուլը, բայց ուզում էր անտեսանելի ու քնքուշ թևերով շարունակել, ճախրել օջախի մեծ տիկնոջ անբացատրելի աշխարհը: Նրան թվում էր՝ այնտեղ սպասում էին իրեն, հավատում էր ու ձգվում դեպի այդ հեքիաթի սարը, որը Գուլո տատը չորացած մատներով հյուսում էր իր աչքերի առջև:

- Տա՛տ, Տիկոր գետը հորդառա՞տ էր, Ալաջա սար բարձրացե՞լ ես, մեր մեծ պապի անունն ի՞նչ էր...

Գուլոն միայն ժպտում էր, աչքերը շաղվում էին վերջնակաթիլ վշտից, ձգվում էր վեր: Թաթուլն զգում էր, որ նա ուզում է բարձրանալ, նստել, կարոտի զանգն էր հնչեցնում, ցանկանում էր գրկել թոռանը: Նրա կրծքի տակ դղիրդ էր, հազարաձայն օրոր, հուշերգակ ջրվեժների պարունակ շառաչ: Գուլոն գիտեր, որ Թաթուլը հասկանում է իրեն, և դրա համար հոգով գրկել տանում էր նրան, բառերը հատ-հատ էր ասում, հայացքով պատմում էր, աչքերով երկրպագություն և օրհնանք էր շաղ տալիս նրա շուրջը: Փոքրիկ սեղանին գրառված թղթերն ավելանում էին, այդ սպիտակ շարքերի մեջ Գուլո տատը տեսնում էր իր զորավար Թաթուլին և ինչպիսի սիրով ու ջերմեռանդությամբ էր իր աղոթքի մրմունջները շոյիչ գրավչությամբ շաղում առաստաղի տակ: Այդ պահերին Թաթուլի պիրկ բազուկներով էր ճախրում, նրա ուսերին նստած՝ գնում էր էրգիր:

... Գուլո տատը գյուղի ամենատարեցն էր, գնացել ու գյուղի շիրմատունն էին զարդարել իր հասակակիցները: Նրանց մեկ-մեկ հիշում էր, շուրթերի բարության ծրարից աղոթքի բառեր էր առնում, հետո խաղաղվում, անդարձորեն նիրհում էր: Նա, կարծես, զգում էր որ եկել է նաև իր գնալու ժամանակը, չէր ափսոսում, որ հեռանալու է կյանքից: Թանկ ու հարազատ մարդկանց էր միայն ափսոսում, իր զավակներին ու թոռներին, որոնց այլևս չի տեսնելու: Կորստյան և հեռանալու ցավը նոր ակոս էր գծել նրա աչքերի մեջ, կտրուկ իջել հոգու անհատակ խորքերը: Այնտեղից Գուլո տատը հիմա ավելի շատ էր լսում տնքոցների ու հառաչանքների լուռ տագնապները. մարում էին իրիկնային ստվերները՝ ծածկելով տեսադաշտի շրջակա բնույթը, մարդկանց, առարկաները, երկնքի կապույտ հեքիաթը: Հեռանալուց առաջ նա ուզում էր փակել վերջին պարտքերը, իր ունեցած բարության օրոցքն էր օրորում, որ ոչ մի փշրանք չմնար իր գոգում: Ուզում էր, որ զավակները՝ Ժորան, Վաղարշակն ու Յուղոն, գլուխները բարձր քայլեն, գաղթական համագյուղացիներն իմանան, որ Գուլոն մինչև վերջին շունչը մնաց Սոսեի պես՝ հավատարիմ աղոթողը եղավ Ղարսին, Արտին սարին ու Արեգ գյուղին: Ուզում էր, որ թոռները իրենց թանկ երգերի մեջ պահեին իր թալիսմանը, որ Թաթուլը չկորցներ այն սպիտակ թղթերը, որոնց ծալքերում ինքն իր հոգու նկարագիրը թողեց: Եվ հիմա նա պառկած էր լուռ, ինքն իր մեջ սսկված, անորոշին միտված հայացքով նայում էր պատուհանից դուրս: Զգացողությունը, հիշողությունը, շրջապատին արձագանքելու նշանները արթուն էին, բայց խոսել չէր կարող: Աչքածրար հատակում, լույսի վերջին պահունի

թրթիռներին թաքուն դրվագում էր իրեն շրջապատած հարազատ դեմքերը, ուզում էր հավիտենական գոցվող հոգու սրահում պահել նրանց տեսակը, գույնը, դեմքը, շողքը, բառը: Իրեն մոտեցող անորոշ ու մութ ճամփին նրանցից լույս էր վերցնում, որ դանդաղ իջնող խավարի ծոցում չկորցներ իր ակնթարթ կյանքի կերոնը: Ոչ ոք չէր զգում Գուլոյի երկնային նախապատրաստությունը, նա ցույց չէր տալիս, չէր ուզում ցավ պատճառել: «Աշխարհի օրենքն է էսպես, եկա, տեսա, հիմա կերթամ... Ինչ-որ կրցա, էդ էր...»: Ժորան զգաց, որ մայրն ինչ-որ բան էր ուզում ասել, բայց նա այլևս խոսել չէր կարող և աչքերով էր ուզում փոխանցել: Թաթուլը կանգնած էր տատի գլխավերևում՝ ձեռքը նրա պաղ ճակատին: Հայրը նրան խնդրեց, որ դուրս գա, չհամաձայնվեց, արցունքի կաթիլները դանդաղ հոսում էին նրա աչքերից: Մոտեցան Սերգոն ու Մինասը: Թաթուլը շուռ եկավ, կռթնեց պատուհանի գոգին և խուլ հեկեկաց: Սեդան, Յուղոն և Ռուզանը բարձրաձայն արտասվում էին: Ժորան նրանց տարավ հարևան սենյակը, վերադարձավ ու կանգնեց մոր սնարի առջև:

Գուլոն ծանր էր շնչում, բարակ հևոց էր թրթռում նրա բաց շուրթերին: Ճերմակ վարսերը իջել, ծածկել էին փառահեղ ճակատն ու պարանոցը, գլուխը հետ էր ընկած, աչքերը փակ էին:

Մեծ մայրը գնալու ճանապարհին էր: Արեգ գյուղը կայծակնորեն իմացավ, եկան բոլոր կողմերից, պաշարեցին Կրպեյանների տունը: Մտնում ու դուրս էին գալիս, գիտեին, բայց ակամայից տարիք ու տարեթիվ էին հարցնում, հուսադրող, օրինաչափ խոսքեր էին ասում:

Գնաց Գուլո տատը...

Արցունք ու ափսոսանք հեղվեցին, էրգրից եկած մեծ տիկնոջ տեղը թափուր մնաց: Այդ դատարկությունը սրտի խորքերում զգաց Թաթուլը: Նա թաքուն տարավ իր ողբերգությունը, որի ալեկոծ տարածքներում շարունակ փնտրում էր տատի կերպարը, նրա օրինանքի տեսակը, խղճի անթաքույց շերտը: Նրանից գրառված սպիտակ թերթիկները դարձան մասունք, արնաձայն մտերիմի ոգեպաշտ արարչություն: Թաթուլը դրանք հյուսեց՝ գրելով իր նախախոսքը. «Գուլո տատս ինքնատիպ աշխարհ էր, իմաստուն էր ու անհիշաչար: Նրա հոգին մասունքահավաք դաշտ էր, վանք էր, վիրավոր խաչքար ու վտարանդի կարոտ: Ինչե՞ր տարավ իր հետ, որ չկարողացանք փրկել, իր էրգրի իրապատում ասքը, իր բնավորության վառվռուն լույսը տարավ, չհասցրինք դրանցով մկրտվել. իր զարմանահրաշ մտերմությունը, բարբառի հնչերանգը, խոսքի

խտացված խորհուրդը տարավ, չհասցրինք ամբողջական վերցնել, որ այդ տիրանվեր պատվաստը անմնացորդ հաղորդվեր պտղահաս բերող մեր արմատականչի շռինդներին: Մեծ կին էր, մեծ տատ, բայց ի՜նչ բեռներ ուներ իր շալակին, Ավետարանի ինչպիսի՜ լույս էր ճառագում նրա աչքերից, որ զուլալվում, զրնգում էր զանգահար մեր պապերի աստվածապաշտ այգապսակից...»:

* * *

Ամառը դարձյալ ոսկեշող գույներով թանձրացել, Արարատյան հովտից բարձրացել էր նախալեռնային դարավանդները: Հասուն ու պայծառատեսք էին արտերը, ծիրանի ցոլք էր ամպերի տակ, հեռվում բռնկվել էր անդաստանների հարամնա հույսը, որի անդադրում հեքիաթն էր այսօր վրձնում Արտին լեռը: Նա, ինչպես դարերի պատգամախոս, նախապապի տեսքով էր՝ երկինք միտված, շողերգակ ու մտերիմ: Այսպիսին էր Արեգ գյուղի խորհրդանիշը՝ մանկան նման պարզ, մեծի պես ավանդախորհուրդ, ընդգծվող և անվերծանելի:

Թաթուլի նրբին հայացքը անվերջության այս տաղարանն էր թերթում: Ամռան այս կեսօրին նա գյուղի կենտրոնում էր՝ սպասասրահի պատին հենված: Ձեռքի մեծ ճամպրուկը ծանրաբեռնված էր գրքերով, իր կողմից գրառված և մեկ տասնյակի հասնող ընդհանուր տետրերով, անձնական այլ իրերով: Շրջկենտրոն գնացող ավտոբուսին էր նա սպասում, կողքին ծնողներն էին՝ Ժորան ու Սեդան: Քիչ անց մոտեցան դասընկերներից մի երկուսը, ապա հորեղբայր Համբարձումը: Շուտով գյուղական անշուք կանգառը մարդաշատ դարձավ: Հին ու բարի ավանդույթը շարունակվում էր: Ընդունելության քննությունների առիթով Երևան մեկնողներին արեգցիները միշտ էլ շուքով էին ճանապարհում, բարի խոսքեր ասում: Խորհրդավոր ու խաղաղ այս դասը գյուղի կենտրոնում այսօր էլ ձգվեց այնքան ժամանակ, մինչև Ձիթհանքով գյուղից շրջկենտրոն վերադարձող ավտոբուսը հայտնվեց Արեգում: Թաթուլը բռնել էր մոր ձեռքերը, հոր հուսադրող և բարի հայացքը վաստակած՝ ջերմ խոսքեր էր ասում նրանց: Այդպես էին նաև մյուսները, մոտ ու հեռվում, ամեն տեղ խորհուրդ էր, քաջալերումի բառեր էին շշնջում: Արեգը իր զավակներին քննաշրջանի «ճակատամարտ» էր գործուղում:

Անհուն երազանքների այսպիսի բեռներով Թաթուլը հայտնվեց Երևանում: Չվերջացող ու շարունակելի ծրագրերի մի ամբողջություն էր պարուրել նրան: Հոգու հեռուներում փայփայում էր ուսանող դառնալու ամենաթանկ ու վճիտ թրթիռները: Այդ մեծ սպասումների

շողընծա հետաքրքրությամբ քրոջը այցելելուց հետո նա հայտնվեց համալսարանի շենքի առջև: Օրը կիրակի էր, բայց շենքի փակ դռների դիմաց տղաներ ու աղջիկներ էին խմբված: Մտածեց՝ երևի իր նման սրանք էլ չեն համբերել, կիրակի օրով տարբեր շրջաններից ու գյուղերից եկել ու ծանոթանում էին այս տաճարանման շենքի դրսի պատերին, մուտքի լայն դռներին, շրջապատի խորհրդավորությանը: Թաթուլն անզուսպ ցանկությամբ, հավատամքի անզարդ աչքերով մտովի պատկերացրեց, որ ներսում է՝ պատմության լսարանում, ուսանող է, իր առջև պատկառազդու դասախոսներ են, նրանց մեջ համագյուղացիներ Նորիկ Գալստյանը և Արտավազդ Դարբինյանը: Ներքին ձայների կարոտաբաղձ թելերն այնպես զրնգացին, կարծես այդ տաճարի ծիսական օրն էր կերպավորվում: Թաթուլն իրեն բռնեց հաճելի երանության ծոցերում: Սիրտը խինդախաղ թպրտաց: Ոգեվարս շռինդը բարակ հորձանքով լցվեց երակները, այնպես անուշ տաքացավ ու ծիլեր տվեց: Ձայնարկու սլացքը, հերքելով ներքին տվայտանքները, արթնացող նժույգների պես բոցեբաշ հետքեր թողեց, գնաց, բարձրացավ դեպի վեր, ուր իր բերդն էր, մոր աղոթքների բարության պսակը: Թաթուլն ինքնագոհ պատկերացրեց, որ փակ դռների հետևում է, այնտեղ՝ լսարանների խոհուն շարքերում: Հոգու հեռավոր բարձուքներին հին ու հեթանոս երգեր լսեց, իր համար, իրենով հայտնաբերեց հայոց արքաներին, զորավար-ռազմիկներին, բանագետ-իմաստուններին: Զգաց, որ զարմանալի զրույցների եռք էր ակոսվել ներսում, այդ ոգեդարսը ծանոթ էր իրեն, այդ ճամփորդության սկիզբը 7-8-րդ դասարաններից էր շողշողում, հետո այն դարձավ շղթա, արթնացավ կանչ ու շեփորով: Հիմա անհայտ ու հայտնի այդ զուլալ համանվագով նա եկել, կանգնել էր իր երազների, իր երանելի արքաների և իմաստասեր-բարձրյալների ոգին վեհացնող, նրանց անունն ու փառքը փայփայող այս ոգեմատյան համալսարանի շքամուտքի առջև: Կանգնել էր նա ու չէր ուզում հեռանալ, թեև Ռուզանին խոստացել էր, որ շուտ կվերադառնա: Քրոջ առջև միշտ էլ պատասխանատու էր, քայլելով իջավ Աբովյան փողոցով: Քաղաքային շուքը նվաճում էր նրա հայացքը, միտքը, հոգու խորքերում նա դրանց համար տարածք էր բացում: Հուլիսի շոգը նեղում էր, արձակեց վերնաշապիկի մեկ-երկու կոճակ, արևային ակնոցը դրեց աչքերին: Երևանյան գույները իրարադարս ժպտացին, բարձրահարկ շենքերը, վազող մեքենաները, ցայտաղբյուրները, անծանոթ ու շտապող մարդիկ ավելի մտերիմ դարձան: Թաթուլը հայտնաբերեց համընդհանուր

հևքի հրայրքը, որ արևից իջել, պատառ-պատառ էջադրվել էր ամեն տեղ: Թվում էր՝ տիրական ու տաք զգացումներ էին ուղեկցում բոլորին: Նա հասկացավ, որ այս մեծ քաղաքում օրը գրանցվում է արևի միջնորդությամբ, ստվերը արժեք ունի, ծառերը թանկ հովանի են, բայց շոգից խեղճացել, աներևույթ սպասումից դարձել են թախիծներին գերի: Թաթուլը մտքով գյուղ հասավ, գտավ հին թոնրատան պատի հովը, Գուլո տատի քարե աթոռը, Արագածից փչող քամին, հետո դարձյալ վերագտավ իրեն, փխրուն հայացքով համեմատեց, հասկացավ ու քննեց. «Քաղաքի օրենքներն ուրիշ են, այստեղ տարբեր են աշխարհի գույները, վառման հնոց է շուրջդ... Ինչքա՜ն գեղեցիկ բան կա, երևի այստեղ են հավաքել, որտեղ նայում ես ուժ է, հմայք, սիրտը թունդ հանող աղջիկներ, նազկտող ուռիներ, շեփորականչ շատրվաններ, մարդկանց ու մեքենաների անափ օվկիան...»: Թաթուլն ինքն իր հետ ի մի էր բերում շրջապատը, քաղաքային անհանգիստ շարժն ու շռինդը, ներքնահոս բառերով շարում էր իր տեսածը՝ հեռացնելով բազմաշնորհ այն տեսիլքը, որ Երևան քաղաք գնացող-վերադարձողների հետ իրենց գյուղն էր հասել: Այդ հեռակա հմայքը հիմա հևասպառ հեռանում էր իրենից, ցնդում էր չափազանցության ցնորքը: Ամռան շոգի մեջ օրը լիածոց էր, երկնատուրք արևը չէր ուզում առաջ գնալ: Թաթուլն իր գտած մատյանն էր բացել: Երևանի բազմապատումը պրկվել էր Աբովյան փողոցի աջ ու ձախ մայթերին: Հորդուն, կենսախինդ տրամադրությունը նստած էր ամուր. անծայր ու ձիգ աղմուկն իր հետևից տանում էր նկատելի շարժը՝ պոչը թողնելով խաչմերուկների խռիվ զիգզագներում: Թաթուլը շատ անգամ էր եղել այս պատկերների վկան, բայց այսօր իր տեսածի թամբին էր: Ներհայաց խոհերի իր ձին սլանում էր ծանոթ-անծանոթ նշաններով. անհերքելի լցվում և ամբողջական լիանում էր երիտասարդի նորընծա աշխարհը: Այսքան մտերիմ ու ցնծուն չէր ակնկալել իր հանդիպումը համալսարանի վեհասլաց, անխոս ու անթարգմանելի պատերի, այս զրնգուն փողոցի, հեռաձայն շշուկ-շարժումների, իրար շալակ ելած գույն-գույն մեքենաների, գույնզգույն ծաղիկների, զարդարուն ցուցասրահների, մեծադիր ազդագրերի, արձանների, ցուցափեղկերի, ծործորուն ծիծաղի, պատկառելի դեմքերի, բարկ ու բոցույն տղա-աղջիկների հետ... Թաթուլը չէր շտապում, քայլում էր դանդաղ, ինքնագոհ: Զգում էր, որ անսովոր ջերմությամբ ծափ էր տալիս սիրտը, իսկ հողեղեն սերը ճկվում էր, ջոկջոկվում բռնազբոս ճիչերից, ճամփա ընկել ու գալիս էր: «Ուրի՜շ կրակ կա այստեղ:

Գյուղից գնացող-եկողները այս կրակից քիչ բան են հասցրել Արեգ... Զարմանալի է, այդքան մոտ ու այսքան հեռու ենք եղել իրարից: Ուրի՜շ խորհուրդ է ծափահարում քաղաքը, այս շքեղության զմռսված շուքը ո՞նց հասցնեին գյուղ: Ուրի՜շ հորձանքի ալիք է փողահարում այս երգեհոնը, նրա հնչյուն-ծվենները էլ ո՞ւր կարող էին այսքան ներդաշնակ լինել: Աչք շոյող շքեղությունները հենց այս քաղաքի հմայքով են զգեստավորված, երկինք-երկրի տաղարանի մեջ են՝ վառման ու վարդագույն...»:

Թաթուլը խորությամբ էր ըմբռնում օրվա ընծայագիրը: Չէր զարմանում, որ տարածական գեղեցիկն անհերքելի արտորանքով գերեվարել էր իրեն, ու ինքը հոժարակամ սուզվում էր այդ ծաղկածոցիկ ջրվեժը:

Այսպես ինքնաբավ ու մտերմացնող խոհերով նա վերադարձավ քրոջ տուն:

- Ուշացա՛ր, ո՞ւր էիր,- անհանգստացած նրա ձեռքը բռնեց Ռուզանը:

- Երևանում էի,- կեսկատակ ասաց Թաթուլը,- հեշտ չէր փողոցից կտրվել ու գալ:

- Պատկերացնում եմ՝ Թաթուլ Կրպեյանն ամռան Երևանում, բանաստեղծական մտորումներով, ուսումնասիրողի հայացքով,- ուրախացավ քույրը:

- Ամեն տեղ շողք է ու շռինդ, զարմանք ու ալեկոծություն...

- Բանաստեղծությունն արդեն գրվեց,- ժպտաց Ռուզանը:

- Աստված գիտի, թե ի՞նչ գրվեց, ի՜նչ հեղվեց ու հեղեղվեց, քույրի՛կ:

- Համալսարանում եղա՞ր, հանձնաժողովն աշխատո՞ւմ էր:

- Ասացին՝ վաղը:

- Որոշեցի՞ր՝ ո՞ւր ես դիմելու:

- Միայն պատմության բաժինը, նոր չէ, որ որոշել եմ,- ասաց Թաթուլը և դուրս եկավ պատշգամբ:

Քիչ անց Ռուզանը, սկուտեղին երկու գավաթ սուրճ, նպարեղեն, ծիրանի հյութով լեցուն բաժակներ ձեռքին, մոտեցավ եղբորը:

- Ասում են՝ շոգին սուրճն օգտակար է:

- Երբ դու ես ասում, պիտի հավատալ,- ժպտաց Թաթուլը:

Նախասենյակում հեռախոսի զանգը սուր ծղրտաց: Ռուզանը շտապեց վերցնել: Ավագ եղբայրն էր՝ Սերգոն, Թալինից էր զանգահարել:

- Այստեղ է, հենց նոր եկավ քաղաքից:

- Գործերը հանձնել է՞,- ընկալուչի մեջ բարձր լսվում էր Սեր-

գոյի ձայնը:

- Վաղը:

Թաթուլը քրոջից վերցրեց հեռախոսափողը:

- Ընդամենը մի քանի ժամ կլինի, որ բաժանվեցինք, երևի հայրիկն է պարտադրել, որ զանգահարես:

- Ճիշտ էլ արել է, գիտես հե՞շտ է առանց տան փոքրի,- ծիծաղեց Սերգոն:

- Ասա իրենց, որ տան փոքրը այս հսկա քաղաքում արդեն մեծացել է, քույրս էլ իմ կողքին է, ես էլ պատրաստվում եմ գրոհել համալսարանը, բավարա՞ր է,- ջերմացավ Թաթուլը, ապա դարձավ կտրուկ,- Մանվելի միջոցով զինվորական բժշկական հանձնաժողովի փաստաթղթերը վաղը առավոտյան հասցրեք ինձ, բանակից շուտ զորացրվելս պետք է պատճառաբանվի:

- Դա ինչի՞ է պետք,- անհանգստացավ Սերգոն:

- Ընդունելության հանձնաժողովին պետք է, և հետո մրցույթում արտոնությունների խնդիր կա:

- Լա՛վ, համոզեցիր,- պատասխանեց Սերգոն,- քննություններիդ օրերը գաղտնի չպահես...

- Երբ վերջացնեմ, կիմանաք, չմոռանաս փաստաթղթերը,- մի վերջին անգամ շեշտեց Թաթուլը:

- Վերջը դու մնացիր դու,- Սերգոն ավարտեց խոսքը:

- Ես է դու եմ, ես չկամ,- ծիծաղեց Թաթուլը, ընկալուչը դրեց տեղը և անցավ պատշգամբ:

- Տերյանը մտքիցդ դուրս չի գալիս,- ասաց Ռուզանը,- զարմանում եմ, թե ինչո՞ւ բանասիրականը քեզ չի ձգում:

- Այն էլ ո՞նց է ձգում, բայց պատմության շղթաներից չկարողացա ազատվել,- ասաց Թաթուլը և մոտեցավ գրասեղանին, որի վրա տասնյակ գրքեր էին, հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակություններ, դարսեդարս քարտեզներ, մենագրություններ:

- Շոգ է, բայց ճանապարհ ունեմ անցնելու,- մտահոգ ասաց Թաթուլը և խնդրեց քրոջը՝ իրեն մենակ թողնի:

* * *

Ընդունելության քննություններն ավարտվել էին, սակայն արդյունքները դեռ չէին հասցրել հրապարակել: Համալսարանի շենքը պաշարել էին երիտասարդ աղջիկներ ու տղաներ, ծնողներ, հարազատներ: Հետաքրքրություններն այստեղ էին բերել նաև քննությունների հետ կապ չունեցող քաղաքացիների: Այնպես որ

համընդհանուր հնչեղությամբ պիտի հրապարկվեին ընդունվածների անուն-ազգանունները:

Թաթուլը հանգիստ էր, բայց փոքր-ինչ նեղվում էր, որ Կրպեյանների տոհմից քսանից ավելի մարդ էր հավաքվել իր շուրջը: Իրենց տանից միայն մայրն այստեղ չէր. եկել էին գյուղից, Երևանից, Թալինից ու Աշտարակից: Թաթուլի ստացած գնահատականները հարյուր անգամ հաշվել էին, գումարել, ժպտացել: Դրանով հանդերձ մի առավելություն էլ կար, Թաթուլը ծառայել էր բանակում, մրցույթում նա գերադասելի վիճակում էր:

- Հայրի՛կ, դու ինչո՞ւ եկար,- հոր կողմը թեքվեց Թաթուլը:

- Էսքան ժողովրդի մեջ քու աչքին ե՞ս էրևացի, տղա՛,- մի քիչ բարկացկոտ կատակեց հայրը:

Թաթուլը ծիծաղեց, Մանվելն ու Գրիգորը միացան նրան: Դրությունից դուրս գալու համար Ռուզանը, հայրիկի ձեռքը բռնած, մարդկանց հոծ խմբերի միջով առաջ անցավ, ընդհուպ մոտեցան շքամուտքին: Նրանք նոր էին հարմարվել դռան առջև, երբ բարձր աստիճաններին երևացին հանձնաժողովի մի քանի ներկայացուցիչ: Հավաքվածները աշխույժ ալիքվեցին, խմբերը խտացան, նկատելի լռեցին:

Բարձրախոսից լսվող ամեն անուն ուղեկցվում էր ծափերով, իսկ տարբեր անկյուններում խռնվում էր որևէ խումբ, լսվում էին բացականչություններ:

- Թաթուլ Կրպեյա՜ն:

Հրապարակի աջ եզրում հավաքվածները միանգամից ծփացին: Թաթուլի մերձավորներն էին, ձեռքերը վեր պարզած՝ մոտեցան:

Սերգոն ու Մինասը եղբորը բարձրացրին իրենց ուսերին: Ռուզանը շրջանցելով հոծ բազմությունը, հասավ եղբորը: Թաթուլը մի կերպ ցած թռավ հզոր եղբայրների ուսերից, ողջագուրվեցին քույր ու եղբայր: Ժորան անշտապ մոտեցավ, գրկեց Թաթուլին:

- Խոսքի տեր տղամարդ ես, դու հասար քու նպատակին:

...Ռուզանի տանը սեղան էր բացվել: Ամուսինը՝ Սամվելը, ջանացել էր ամեն ինչ անել, որ Թաթուլի համալսարան ընդունվելու առիթը և կնոջ հարազատների այսպիսի հավաքը անմոռաց լինեին: Ժորան, իր զավակները, գյուղից ու տարբեր տեղերից եկած հարազատներն այստեղ էին: Այստեղ էր նաև համագյուղացի Նորիկ Գալստյանը՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, համալսարանում շատ հարգված դասախոս և ճանաչված մասնագետ: Օրվա գովքը Թաթուլինն էր, համառությունը, կամքը, նպատակին հասնելու անբեկ հատկանիշների թվարկումը գրանց-

վում էր նրա անվան դիմաց: Ժորան չէր հիշում, թե վերջին անգամ ե՞րբ էր այսքան ուրախացել և ականատես եղել իր տոհմական հանրությանը: Այնուամենայնիվ մտքում հիշեց Թաթուլի՝ բանակից վերադառնալու օրը, բայց այն ժամանակ ներսում ցավ ուներ: Որդու ծանր վիրահատության հնարավոր հետևանքները տանջում էին, մղկտում էր ծնողի սիրտը: Հիմա դրանից անցել էր վեց ամիս: Թաթուլը ոչ միայն ապացուցեց, որ ուժեղ է, առողջ ու ջլապինդ, այլև կարողացավ գիշեր ու ցերեկ կարդալ, նախապատրաստվել, շփվել դասախոսների, պատմության գիտակ մասնագետների հետ և ահա արդյունքը. դարձավ պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանող:

* * *

Այդ սեպտեմբերի 1-ը Թաթուլի համար ամենանշանավորն էր: Առաջին անգամ նա ոտք դրեց համալսարանի շենքը: Հաճելի սարսուռն ու հպարտությունը կարծես ցած իջան հեռավոր լռությունից, հնազանդ ու մտերիմ օրորեցին, ապա նրան տարան երկրորդ հարկ ձգվող աստիճաններով: Թաթուլն ակնհայտ հպարտ էր, շնորհակալ իրենից, ճակատագրից, որ մեկ տարվա իրար հաջորդող փորձություններից հետո կարողացավ այսպիսի հանգրվանի հասնել: Նա քայլում էր թեթև, գլուխը բարձր, մարտում հաղթողի փայլ կար աչքերում: Եվ երբ նայեց շուրջը, այդ վեհությունը տեսավ նաև մյուսների աչքերում: Երիտասարդ, գեղեցկադեմ սերունդ էր բարձրանում աստիճաններով: Թաթուլին պատկերացավ կախարդական մի հայտնություն, որն այս բոլորին բերել-հավաքել էր Հայաստան երկրի գյուղական շեներից ու քաղաքներից: Եվ հիմա ճակատագրին ընդառաջ՝ նրանք բարձրանում էին. բառերը նրանց շուրթերին առայժմ միամիտ շշուկ էին, բայց սրտերն էին խոսում: Լուսավոր ու տարածական մի աշխարհ ընդունում էր նրանց ոտնաձայները, համաչափ զնգում էին արձագանքող պատերը, առաստաղը, ասես, ճոճվում էր ջահելության պայծառ հևքից: Լսարանը, ուր հայտնվել էր Թաթուլը, նման էր դահլիճի, լուսավոր էր, մեծ-մեծ պատուհաններով, ամեն ինչ աչք շոյող էր, նորոգ ու շքեղ: Առաջին օրերն անցան հետաքրքիր, կլանված էին բոլորը: Թաթուլի համար անծավալ հետաքրքրության մի նոր հորիզոն բացեց իր համագյուղացին՝ հայ ժողովրդի պատմության ճանաչված դասախոս Արտավազդ Դարբինյանը: Հմայիչ արտաքինով էր նա, կտրուկ ու համոզիչ խոսք ուներ, ներկայանում էր ընտիր հայերենով և այնքան դիպուկ էր համեմում

փաստերը, ժամանակաշրջանը, պատմական իրադարձությունները: Ընդհանրապես, այդպես էին նաև մյուս դասախոսները: Թաթուլին թվում էր՝ Հայաստանի ընտրյալ պատմաբաններն էին հավաքվել այստեղ: Նրանցից ամեն մեկն իր ընդգծված տեսակն էր բերում լսարան, պարտադրում ոգեղենի ջերմությունը, խորաթափանց գիտնական-տեսաբանի հմտությամբ ուսանողների առջև նորանոր էջեր բացում: Լսարանում արդեն ծաղկել էին պատմության հազարաձայն ոգին, հերոսականը, իսկ լռությունը բույն էր փնտրում՝ տեղը զիջելով անցյալից վերադարձող հեռապատում ասքերի:

Կուրսի տղաներն ու աղջիկները բացվող ամեն լուսաբաց նոր կարոտով էին գալիս հանդիպման: Նրանք բնավորության ծանոթ թելեր էին հայտնաբերել, փնտրում էին հարազատ, մաքրամաքուր երանգներ, հաղորդվում մեկմեկու, շտապում էին գտնել իրար: Լարված դասաժամերից հետո՝ կարճ ընդմիջումներին, արդեն երևում էին «դաշնակից» ուսանողները: Նրանք, կազմավորված փոքրիկ խմբերի, միասին էին մտնում ճաշարան, մյուս լսարաններում այցելում ծանոթների, հայտնվում գրադարանում, իսկ երբ հնչում էր վերջին զանգը, խմբով հասնում էին «Առագաստ» սրճարան: Օրը դրանով չէր ավարտվում: Սրճարանի դիմացի այգին ոչ միայն հանդիպման վայր էր, այլև դասապատրաստման և չավարտվող զրույցների:

Թաթուլն այդ բուռն օրերի զիգզագների մեջ էր, իսկ գլորվող ամիսները տանում էին կիսամյակի ավարտը: Հունվարյան վճռորոշ քննությունները մեծախորհուրդ երանգ էին բերել լսարան: Ամենօրյա խանդավառությունը հանդիսավորությունից փոխվել էր նկատելի պատասխանատվության, յուրաքանչյուրի աչքերում արթնացել էր պատկառանքի խարույկը. հարցեր էին փոխանակում, թերթում գրքեր, գրառված դասախոսությունների տետրերում պատասխաններ որոնում: Լսարանը վերածվել էր մեղվափեթակի, արդեն ջոկջոկվել էին կուրսի «իմաստունները», ովքեր միշտ պատասխանում էին դասախոսների հարցերին, հանդես գալիս սեմինարներին, գտել էին իրենց խոսքի տեսակը, ոճը: Այս նկատելիների մեջ առանձնանում էր Թաթուլը: Նա ձգտում էր բազմաշերտ և ստույգ իմացությանը: Իսկ դա պահանջում էր լարված աշխատանք, օժանդակ աղբյուրների ուսումնասիրում, անքուն գիշերներ... Թաթուլն այս ճանապարհն ընտրեց, պատասխանատու էր բոլոր հարցերում, օրվա ծրագիրը վաղվան չէր թողնում, ինքնամոռաց էր: Նա մեկ-երկու տարով ավագ էր համակուրսեցիներից. շատերը հենց նույն տարում էին դպրոցն ավարտել և ընդունվել: Տարիքի այս քիչ տարբերության

առջև անգամ հաշվետու էր Թաթուլը, հասկանում էր օրվա բերածն ու տարածը, ժամանակի հարցում մեծ ափսոսանք ուներ, զուր չէր վատնում, քաղաքային օրն ու զեղումները անկարող եղան նրան ներքաշել իրենց հորձանուտը: Թաթուլն աչքի առաջ կոնկրետ օրինակներ ուներ՝ արեգցի դասախոսներ Գալստյանն ու Դարբինյանը: Արտավազդ Դարբինյանի հանդեպ ունեցած հպարտությունը չէր ուզում ոչ մեկի հետ կիսել, հավատում էր նրա ամեն մի խոսքին, դասախոսությունները գրառում էր, իրեն հետաքրքրող բազմապիսի հարցերով դիմում, սակայն երբևէ չէր չարաշահում հայրենակից լինելու փաստը: Այս պայծառ զգացումի մասին գիտեր միայն Ռուզանը: Քրոջից գաղտնիք չուներ, համալսարանում տեղի ունեցածը, օրվա գույների մեջ թաթախված փոքր ու մեծ մանրամասները նա հանգամանորեն ներկայացնում էր քրոջը: Նախ Ռուզանի կարծիքն իր համար մեծ արժեք ուներ, և հետո այդ ընթացքում նրա աչքերով խուզարկում էր իր արարմունքը, չափ ու ձևի բերում հաջորդ օրվա ծրագիրը:

Հունվարյան քննություններից մեկ-երկու օր առաջ, երբ Թաթուլը, գրքերով ծանաբեռնված, տուն եկավ, սովորականից ավելի մտախոհ էր:

- Ի՞նչ է պատահել,- անհանգստացավ քույրը:

- Խոսքը Թաթուլի՞ մասին է,- ծիծաղեց եղբայրը:

- Այո՛, իմ իմացած Թաթուլի, որ նահանջ չունի, դժվարություն չի ճանաչում:

- Այդպես էլ կա, քույրի՛կ,- լրջացավ եղբայրը,- բեռ շատ եմ վերցնում, ժամանակս չի բավարարում: Այսօր 3-4 ժամ եղել եմ Ազգային գրադարանում, գիտե՞ս՝ ի՞նչ աղբյուրների եմ հանդիպել, ուզում եմ ուրախացնել դասախոսներիս:

Ռուզանը պահեց հիացումը, եղբոր հանդեպ հպարտությունն առաջին անգամ չէր, որ ալեկոծում է իր հոգին և հրամայում բարձրաձայն ասել այդ ամենի մասին:

- Պատվարժան ուսանող ես, Թաթո՛ւլ, ապրե՛ս,- Ռուզանն այնուամենայնիվ չկարողացավ զսպել իրեն:

- Հատկապես այն, որ Արտավազդ Դարբինյանի ուսանողն եմ,- հաստատեց Թաթուլը,- չգիտեմ՝ ի՞նչ անուն տամ այդ նվիրումին, բայց նա ինձ ստիպում է տարբերվել մյուսներից, խորանալ պատմության խորքերը, գիշեր ու ցերեկ հրամայում է մնալ մարտական շարքերում:

* * *

Ալեկոծվում էր Երևանը: Այսքան վիթխարի բազմություն, տիեզերականչ, անմեկնելի խորհուրդ, այսքան ընդգծված դեմքեր, հերոսական ոգեմատյանի խոստովանանքով և անզսպելի ինքներորդ ալիք ե՞րբ էր տեսել էրեբունի-Երևան պատմական ուղին: Մայր պողոտայով մարդկանց հեղեղ էր. բարձունքներ սաստող պատնեշները խորտակած՝ նրանք գալիս էին կողք կողքի, գումար-գումար: Այսքան տաք հույսեր ե՞րբ էին տեղահան եղել, խլրտացել վիրավոր հոգիներում, և որ այսպես անշրջելի կորոտա ազատության հազարատենչ զանգը, կզարթնեն գյուղ ու քաղաք, կգան հարավից ու հյուսիսից, արևմուտքից ու արևելքից և աչքերի բյուրաբարձունք կրակներով կխարույկվեն Մատենադարանի դիմաց: Գալիս էին ծանոթ ու անծանոթ, գյուղացի ու քաղաքացի, ռանչպար ու գիտնական, ուսուցիչ ու ակադեմիկոս, պատանի ու ծեր, աշակերտ և ուսանող, քույրեր, մայրեր՝ իրար ժպտացող հայացքներով, որպես մեկ ու միակ հավատ, հանապազօրյա բաղձանքներով՝ կարոտի արմատներին ծաղկած ու պտղավորված թանկ եղելություն... Գալիս էին անփարատելի հին ցավերով, անդարմանելի վշտերն ի ցույց աշխարհի՝ զնգում էր նրանց բողոքի ալիքը: Ոչ մի ուժ անկարող էր դիմադարձ կանգնել՝ ո՛չ պետական մեքենան, ո՛չ սադրանքը: Այդ ի՜նչ հաղորդություն էր փոխանցված մեկ-մեկու: Զարմանալի արև ու ջերմություն էին նրանք սփռել իրենց շուրջը, շվարած էր ձմեռը, փետրվարյան փխրուն օրերը օգոստոսյան շոգի շռայլությունն էին արարել: Օդում ոտնաձայների համաչափ սիմֆոնիան էր, ներքևում՝ շարքերի անթաքույց շռինդը, սրտերով հնից փոխանցված, չգիտես ինչու «մեղավոր» ճանաչված ու թաքուն պահված հայրենասիրական երգերը: Եվ այդ ամենը լույս ու ազատ տարածք երազող արծիվների երամների պես փողփողում էր «Միացում», «Ղարաբաղ-Հայաստան» պաստառներից վեր: Մայր պողոտան նման էր հեռագնա մի կամրջի, որ միացնում էր կարոտը հույսին, հավատքը՝ Աստծուն, ուժը՝ հաղթողներին: Աջ ու ձախ բնակելի ու պետական շենքերի պատուհանները ձմռան օրով բացել, մարդիկ ողջունում էին, միանում շող ու արև շալակած ցուցարարների հեքիաթային երթին:

Թաթուլն այդ երթի մեջ էր, ուսանողության շարքերի առջևում: Մեջքը շտկած համարձակության առաջին վկաներից մեկն էր նա, որովհետև կարմիր դրոշների սովոր այս պողոտան այսօր ուրիշ գույների գարուն էր տեսնում: Նույն մարդիկ էին, նույն հայերը, բայց մի ուրիշ Հայաստան էր նրանց ուսերին: Մարդկանց միաձայն պահանջ-

ներից սարսռում էին երկիրն ու երկինքը, ձմռան ծոցը ծվատվում էր աչքերի բոցե բերկրանքներից: Թաթուլի հայացքը իր նվիրական դրոշին էր, նրա դասական ցոլքերի մեջ հաղթանակի պսակ էր նա հյուսում: Նույն նպատակի, հայրենյաց սուրբ դրոշի ու հավատի աննկուն ընկերների հետ էր նա: Պատմությունը հոգեխռիվ դուրս էր եկել լսարաններից, ավերել էր ճշմարտությունները բանտած երկաթյա դռները: Հենց դրանց ներսում հանիրավի աքսորվածներն ազատության և նոր ճակատագրի հրովարտակն էին ստորագրում:

Այսպես եռում էին իրար հաջորդող երևանյան ձմռան օրերը: Խանդավառության պահունի երկունքը, օրհասական պահերին իրար զորավիգ հոգիների ամենադարձ շանթը, հավատամքին հասնելու աստղամերան իղձերի փաղանգը, հույսերի եռագույն շքերթը, նվիրումների օրորը, սխրանքների անհնարին փառքերն ի սեր հայրենյաց. այս ամենը, դար-դարերի կանչերը քանդելով, ճակատամարտերի ճոճքն օրորելով, երակ-երակ հառնել ու գալիս էր...

Քաղաքի մայր պողոտայում՝ դեպի Մատենադարան, նաև աջ ու ձախ մյուս փողոցներում և հրապարակներում հույսերի եռաձայն պատարագ էր: Սակայն աղոթքը հողեղեն ձայներին էր, կանչերին հայոց՝ փռված Մասիսների չորսբոլոր:

Հոծ պատկերների շարժուն ընթացքը, գույների համանվագ ելևէջներն ուրիշ, տարաշխարհիկ բռնկումների մեծադղորդ բազմաձայնությամբ էին հաստատվել: Դժվար էր տարորոշել, թե երբվանի՞ց էր ծիլ տվել երկնառաք հողմերի հողեղեն այս հրայրքը: Երևանյան համազգային տենչանքին և նրա ահեղ օվկիանին մաս դառած ամեն ոք իրեն հավատացնում էր, որ այս հրեղեն հորձանքին խառն են Տիգրան Մեծի մատը, պարսկական փղերի դեմ ելած Վարդանանց ուժը, Ավարայրի ահեղաշանթ ոգին, անձնուրաց ֆիդայիների՝ Արաբոյի, Սերոբի, Անդրանիկի, Գևորգ Չաուշի... և նրանց աննկուն սերնդի փառապսակ երդումը:

Թաթուլը զգում էր, տեսնում, որ մարդկանց հոգիներում տարիներով պահած ձայները արթնացել, դարձել էին բազմալար կարոտադարձ և հավատամքի խորհրդանիշ: Եվ այդ ձայները պատասխան են պահանջում: Թաթուլը հիացած նայում էր շուրջը, այդ պատասխանը ընդգծվել էր ամեն մեկի դեմքին: Նրանց ճիչ ու կանչերի, ցասում-բողոքների բռնկուն շերտերում 1915-ին էրգրից վիրավոր ու վտարանդի դարձած գաղթական իրենց ծնողների ու պապերի անբեկ սլացքը կար: Թաթուլն առաջին անգամ իրական ու

ճշմարիտ տարածքում իր պապ Մարկոսի, իր գյուղի անցած-գնացած մեծերի, Արեգի հին ու նոր պատերի մեջ գրանցված հառաչանքներին սպեղանի էր փնտրում: Ահեղ, մեծադղորդ բազմության հավաքական սիրուց նա ու իր սերունդը կերտում էին իրենց օրը, տարին ու դարը: Հեռածայնության անվերծանելի եզերքները պաշարել էին նրա էության վերջին բջիջները: Աստվածային, ձիգ ու ձգող հայացքներում Թաթուլը տեսնում էր ազատության անպատիճ թրթիռներ, որոնք գարնան անձրևի պես իջնում էին քաղաքի բարձր տանիքներին, ներծծվում հնազանդ դարձած վեհության դարսեդարս ծոցերը, բզկտում համբերության սառցակալած շերտերը, պսակազերծում գունաթափ օրենքների ձմեռային ծածկույթը: Բոլորի շուրթերին արցախյան օրորն էր, նրա ցավին հասնելու, նրա կանչերով ներկայանալու իրական հավատամքի այն տեսակը, որ այս պողոտան, այս շենքերն ու բազմաբազուկ քաղաքը երբևէ չէին տեսել: Միասնության, Արցախը բռնությունից հետ բերելու անբեկանելի կայծակ էր շողշողում բազմության աչքերում: Այդ անդիմադիր ուժը, միաձայն, աստեղադուռ կարոտը ժայթքել էին սրտերի խորաններից, փշրել սին փառաբանումների պալատները, գալիս էին անհատնում ու մերձ, զարկում կուրծք կրծքի, բազկատարած ծավալվում, վերնառաք բռունցքվում ու զարմանալի մի հաշտությամբ ծիածանվում հազարաձայն:

Թաթուլն այդ նավի թևերին էր, թռիչքի առաջին ճախրանքների մեջ: Նրա գլխավերևում ծափահարում էր ազգային մեծ հույսի դրոշը՝ արծվածափ ու վեհաթրթիռ, խորհրդանիշն իր սիրո և հավատի: Նրան թվում էր՝ իր կողքին էին այդ սրբազան դրոշի համար կյանք տված, կռված ու նահատակված ֆիդայիները՝ Սերոբի ու Անդրանիկի զավակները: «Այսպես ե՞րբ դարձան հզոր ու աժդահա, օրերի մեջ դարերով հառնեցին, ծաղկեցին իրենք իրենցից, հավաքվեցին, հոգեերդման եկան: Այս ի՞նչ գերագույն հրաշք է համազգային լույսը, նպատակից բարձրացող և նպատակին միտված լույսը: Փառավո՜ր մարդիկ՝ կարոտակեզ ու կրակված, սեփական հիշողության, խղճի ու արյան զորավիգ դարձա՜ծ մարդիկ, լուռ ու համր դարերին լեզու տված, խորտակված պատրանքներին երազ ու երգ, հևք ու հպարտություն բերող հայ ժողովուրդ...»: Մտքերի ազատ սավառնումից Թաթուլը տաք գույներով վերագտավ իր տեղը, ժամը, տեսավ իրեն այս մեծ օվկիանի գրկում, իր առագաստի ընթացքը կանխորոշեց, միացավ, միախառնվեց, գնաց:

Իսկ դրսում ձմեռ էր՝ 1988 թվականի փետրվարը:

Աշխարհի հեռուստաէկրաններին գրանցված էր երևանյան ալեկոծ հանրագումարի փետրվարյան խորհուրդը: Ապրելու, լինելու, արդարության ծռված ողնաշարը շտկելու հիմնն էր ազդարարում համազգային շեփորը: Այդ կանչն անդադրում զարկերակի խոյանքն էր հավաստում. ոչ ոք չէր հարցնում նրա տարիքն ու դարը, թե ո՞ր ասքերից էր ջոկջոկվում ու գալիս, ո՞ր արքայի, սպարապետի, ո՞ր հայդուկի արյան ու երդումի շուքով էր այն զարդարված: Փետրվարյան զարթոնքը բոլորեքյան փառքերի ընդվզում էր: Խորացված, անեզր սպասումները ցավից ու ցնցումներից ձերբազատված, նոր հուն էին գտել, պատշաճ պատասխանի հետևից էին գնում: Բանտված հույսերի դարձ էր Երևանում, այլ քաղաքներում ու գյուղերում: Մարդիկ պոկել էին հնի ու հնազանդության վարագույրը, լսում էին միմիայն իրենց խղճի ձայնը: Նրանք հաշտ էին սեփական սրտի, բնազդի ու բանականության հորդորներին: Այլևս շեղվել էին բոլոր նրանցից, ովքեր իրական հողմերի վրա մորթված գաղափարների տնակ էին կառուցել:

Զայրույթը կործանել էր գետնաքարշ հավատամքի պերճանքն ու պճնանքը, երբ «եղբայր» հորջորջված հարևանը հայերի նոր ջարդ էր կազմակերպել Սումգայիթում, հայաբնակ այլ վայրերում, երբ այդ նույն եղբայրության ստոր ու սուտ սահանքներում, աշխարհի աչքի առջև կեղեքվում էր Արցախը: Ավելորդ էին օտարների և աշխարհակալ այլ ուժերի միջնորդությունն ու սարքովի ժպիտը: 1921 թվականին Ացախն այլոց պղծված սայլին բռնակցելու, պատմության տխրահռչակ տերերի գործած մեղքերը սրբագրելու համար էպոսական հայտնի վերջին զարկով էր հայ ժողովուրդը ոտքի ելել՝ փշրելու արդեն քանի տարի Արցախի մտքին, բազկին և հայրենավանդ հողին պատուհասած կեղծիքը, ցավն ու վիրավորանքը:

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մարզխորհրդի նստաշրջանում որոշում էր ընդունվել դուրս գալ Ադրբեջանի կազմից և միանալ Հայաստանին: Հռչակվել էր տասնյակ տարիներով փայփայվածը, այն հայտարարվել էր առաջին անգամ, բարձրաձայն՝ ի լուր աշխարհի:

Փետրվարյան ցասումը Երևանում ժողովրդական զանգվածների աջակցությունն էր Արցախի բնակչության կողմնորոշմանը: Պահանջը արտահայտված էր նաև հազարավոր ցուցարարների գլխավերևում երևացող մեծադիր պաստառներին գրված մեկ բառով՝ «Միացում»: Դրանով իսկ հերքվում, անընդունելի և անարդար էր հայտարարվում պատմության այն դաժան էջը, որով բռնակալի

կամքով Արցախ-զավակը բաժանվել էր մայր Հայաստանից, նրա վանքերն ու եկեղեցիները, խաչքարերն ու ազգային մասունքները նետվել էին խուռներամ ցեղերի բորբոսնած ոտքերի տակ:

Եվ հիմա այլևս չէին հանդուրժում:

Եկել էր մի սերունդ, որ նպատակի առջև նահանջ չուներ:

Հայ քաջերն էին այստեղ՝ երիտասարդ, կորովի, աննահանջ, նաև այրեր փորձունյա:

Եկել էին փոքր երկրի հազար կողմերից, ձուլվել «Միացում» ավազանում: Նրանք ոտնատակ էին տվել պատնեշ ու կապանք, իրարով ուժեղ, իրար մեջ՝ հաղորդված հնաբույր պատգամ-կարոտների անքուն օրորոցայինով, այստեղ էին: Ոչ ոք ներկա-բացակայի ցուցակ չուներ, անհաշիվ էին նրանք, բայց հաշվարկով, սևեռուն ու սրընթաց: Նրանք խփում էին պետության կոշտացած կողերին, զարկում էին, որ իրենց իմացած Արդարը վերջնականապես բաց անի պատմության մորմոքուն մատյանը, որ ճշմարտության առջև մաքրվեն օտարաքեն ու ճպռոտ աչքերը՝ տեսնելու, թե այդ ո՞ր իրավունքով Հայոց պատմական Արցախը եղկելի եղբայրության քողի տակ, օրը ցերեկով, աշխարհի աչքի առջև նվիրվել է Ադրբեջանին... Այդ հարցը Ավարայրի շունչ ուներ իր շուրթերին, նույնիսկ դեռ Ավարայրից առաջ՝ օտարների կողմից պատուհասած ցավերին հնար գտնելու համաժողովրդական հորձանք էր, ոչ թե ճակատագրի ճոճքից պոկված ճիչ: Պահանջի իր տեսակը ժողովուրդն էր ընտրել, հրապարակներում միայն Երևանն ու երևանցիները չէին, եկել էին բոլոր կողմերից՝ գյուղերից ու քաղաքներից: Այդ շարքերն ավելանում էին, որից շնչահեղձ էր լինում վարչակարգը, որովհետև պատասխան չուներ, անցել էին քարոզի ժամանակները. քարացած գաղափարները սնանկ էին, փշրվում էր ճեղք ու ճաք տված կառավարման կաղապարը:

Ժողովուրդն ընտրել էր իր երազած տաճարի ճանապարհը, քարոզների էլ չէր հավատում: Աշխարհի աչքերի առջև հայերի անմեղ արյունը հեղվեց Սումգայիթում, իսկ «փրկիչներն» ընդամենը երկու-երեք օր «ուշացան»: Ժողովուրդն այլևս չէր հավատում և չէր ներում այդ սուտ ուշացողներին և փողոց էր դուրս եկել իր օրենքներով, իր բնազդի ճշմարիտ սահմանադրությամբ:

Այստեղ էր Թաթուլի սերունդը, նաև Արեգ գյուղի իր ընկերները՝ Սարգիսը, Սամվելը, Արթուրը, Տիգրանը, Աղասին... Նրանք հայտնվել էին գերմարդկային, անչափելի մի ուղեծրում, որն այս երկրի վրա չէին ակնկալել: Խոսում էին բարձրաձայն, ակամայից մղվում

առաջ, միանում հոսող բազմության վանկարկումներին, կամա-ակամա դառնում զանգվածների հրավառ հևքի մի կաթիլ հյուսակը:

- Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ, ես քո երգը վաղուց եմ լսել,- Թաթուլը հիշեց տերյանական տողերը, հետո ոգևորությամբ շարունակեց,- ինչո՞վ և ինչպե՞ս կարելի է չափել այս մարդկանց սերը, նվիրումը, զոհաբերության չափը, տեսեք՝ ի՞նչ խնդությամբ են գալիս, և որքան հուր կա նրանց աչքերում, ո՛չ վախ ունեն, ո՛չ էլ պատնեշ ու շղթա են ընդունում:

- Հզորության այս թափի դիմաց ոչ մի բան չի դիմանա,- Թաթուլին հավանություն տվեց Սարգիսը, ապա շուռ եկավ, հայացքով չափեց, հպարտացավ, և աչքերը լցվեցին:

- Հոգիների ծով է, տղե՛րք,- Սամվելն էր, ուրախությունից հուզվեց, աչքերում պահեց ցոլցլացող արցունքները և դարձավ Թաթուլին.

- Հիմա գիտեմ՝ ի՞նչ ապրումներ են քեզ օրորում, եղբայր, սիրտդ պահպանիր:

- Սրտի տեղը հիմա ո՞վ է հիշում, երբ Հայաստան երկրի սիրտն է հունից ելել,- ձեռքը վեր պարզեց Թաթուլը՝ բռունցքելով մատները,- պիտի միանանք, ուրիշ ճանապարհ չկա, առջևում խառն օրեր են լինելու:

Բարձրախոսներից հանգստության, մեկը մյուսին հանդուրժելու կոչ արվեց: Դրա կարիքը չկար, որովհետև ամեն տեղ համաձայնության ու հարգանքի պաթոսն էր իշխում:

Այնուամենայնիվ շարքերը դանդաղեցին, բոլոր կողմերից եկան, սեղմվեցին Օպերայի շենքից մինչև սարալանջ: Այդ օրերին հարազատ դարձած ազդականչը մեղմահոս հնչեց՝ թողնելով մորմոքի, զգաստության և հույսերը ոգեկոչելու ելևէջներ: Ապա ելույթները հաջորդեցին իրար: Հայաստան-Արցախ միանալու օրախնդիր շունչն էր բոլորաձայն մաղվում քաղաքամայրի վրա: Հոգիներում ծաղկել էին լռության քողի տակ հարկադիր պահված զորընդեղ հունդերը:

Խոսքի, բառի, երգի արձագանքների թևերին սավառնում էր քաղաքը, որի խորքերում ազատաբաղձ փոթորիկ էր: Սթափվել, իրար էին խառնվել տեղական և միութենական վերադաս կուսակցական ու պետական ատյանները: Պետական բարձրաստիճան չինովնիկներ էին եկել Մոսկվայից, գումարել արտահերթ պլենում: Խորհրդակցություններում գործողության մեջ էր դրվում եղբայրության խաղաքարտը Հայաստան-Արցախ-Ադրբեջան հարաբերության սահմաններում, սակայն ոչ մի բան չէր ստացվում: Անհնազանդ էր ժողովուրդը, նրա կամքը չէր կոտրվում, իսկ համընդհանուր միասնության կոչերի

և հնչող արդարացի պահանջների դիմաց պետական ընդդիմախոսները ոչ մի կռվան, էական ու համոզիչ փաստ չէին կարող առաջարկել: Ադրբեջանի տարածքում հայ բնակչության նկատմամբ բռնարարքները, Արցախի հարցում ստեղծված լարվածությունը փողոց էին դուրս բերել հարյուր-հազարավոր հայ բնակչությանը:

- Բնության մեջ թվում է՝ մի այլ ուժ չկա, որ կարողանա ժողովրդի կամքը ծռել,- հրճվանքով ասաց Թաթուլը: Նա այնքան ինքնավստահ էր՝ շրջապատված համագյուղացի ընկերներով: Աջ ու ձախ ժամապահի պես կանգնած էին կուրսի տղաները, իսկ առջևում դասախոսներն էին: Նրանց մեջ Թաթուլը տեսավ Նորիկ Գալստյանին, Արտավազդ Դարբինյանին և էլի ուրիշների: Անվանի դասախոսների ներկայությունն այստեղ այնքան սրտամոտ էր: Թաթուլը ճանաչում էր, գիտեր ֆակուլտետի պատմաբան-գիտնականների նախասիրությունը, երեք տարի զգացել էր նրանց նվիրումը, պատմությանը և պատմականին վերաբերվելու այն ինքնատիպ ջերմությունը, որով նրանք ուսանողությանն էին հաղորդում իրենց հոգիներում անթեղված հայրենասիրական կրակը:

- Ազգային ամենամեծ դասն այստեղ է, տղանե՛ր,- Դարբինյանն անթաքույց ուրախությամբ խոսքն ուղղեց իր կրտսեր բարեկամներին, որոնք եկան և շուրջպարի պես բոլորեցին իրենց:

- Իսկապես, այդպես է,- ընկերոջ միտքը շարունակեց Նորիկ Գալստյանը,- լսարանում ինչքան ջանք ու երևակայություն էին պետք աշխարհազորայինների այս հեղեղը ներկայացնելու համար:

Փոխադարձ այսպիսի ջերմություն էր շրջապատում, ամենուրեք խոսում, քննադատում, կարծիքներ էին կիսում: Ակնհայտ էր արժանապատվության դարձը, խոսքը ազատ էր, բառերը երկյուղի պատյան չունեին: Հավատամքի երթը ձուլել էր ներկաների հոգու և մտքի վերջին մասնիկը, չէիր գտնի անտարբեր որևէ մեկի, որ այստեղ վազեր «թամաշայի» համար: Աներևակայելի շուք էր, փետրվարյան ձմռան ծոցը հրդեհող հույսի աստղամերան խարույկ, որի ինքնայրումին՝ անցած բոլոր դարերում սրի քաշված լույսը կար, աղոթալուր խորաններում պահված սաղմոս, քնարների ուղիղ հաղորդություն: Ամեն մեկն այստեղ բանագետ էր, բանաստեղծ ու գործիչ, մտասևեռ հայ՝ արդարամիտ, պահանջատեր ու դիվանագետ: Այս հատկանիշները, պարզվում է, միշտ եղել են, գումարվել ու ծաղկել են ժողովրդի իմաստության շերտերում, պարզապես նրա բնազդը թույլ չի տվել անպատեհ առիթով դուրս գալ հրապարակ, ձեռնոց նետել պատմությանը:

- Ճակատագիրը հաճեց մեր առջև բացել ժողովրդի ոգու անթեղ կրակը,- հուզմունքով ասաց Դարբինյանը,- մի տեսեք՝ ի՜նչ աչքերով են նայում իրար, ինչպիսի՜ կրակ ու կարոտ են փոխանցում նրանց սրտերը: Սա միայն 88-ի երկունքը չէ, դրա արմատները գալիս են դարերի հեռվից: Ո՞վ գիտի՝ ինչ ճիչ ու կանչերի գումար կա այս դղրդացող տարուբերումի ծալքերում: Ի՞նչ իմանանք, մեզանից յուրաքանչյուրը մեր ո՞ր պապի բողոքն է հիմա այստեղ բերել, եկել է ցավ ու տրտմություն, պատգամ-պահանջներ փոխանցած նրա արյան հորդոր-հրամանից, եկել է այստեղ, որ տոհմականչը ներկա լինի:

Թաթուլը հիացած իր դասախոսով, իրեն թույլ տվեց ամուր գրկել նրան, ժպտալ անմեկնելի լիությամբ:

- Թաթու՛լ, երանի հիմա մեր կողքին լինեին ղարսեցի գաղթական մեր պապերը: Նրանք օրը հարյուր անգամ Արտին սարից նայում էին կորուսյալ ծննդավայրի դաշտ ու լեռներին: Պատկերացնո՞ւմ ես՝ ի՜նչ հիացք ու ճախրանք կապրեին,- նկատելի թախիծով ասաց Նորիկ Գալստյանը:

Թաթուլը լռության մեջ նկատեց Գալստյանի այդ սրբազան ըղձանքի ծանոթ շրջապտույտը, ակնթարթ-շողով հոգու դղյակները բացվեցին, և նա ընդառաջ գնաց լուսահոգի պապ Մարկոսին, իր աղոթք-երազանքներով ապրող Գուլո տատին: Երազ ու երգ, խաղ ու խնդում գտավ նրանց հիշողության ճամփին, պատկերացրեց, որ նրանք հիմա տեսնում են իրեն՝ հույսի և արյան իրենց տոհմական «դեսպանին», այստեղ՝ ժողովրդական զանգվածների հավաքական զորության մեջ: Եվ նա, դարձյալ վեհացած նրանցով, արմատականչով տեսավ իր ներկայությունն այստեղ, ուզեց կուրծքը պատռել, ճչալ, որ իր պապի սրտով ու հոգով պահանջ ունի, նախորդներին երդում տված իր հոր պարտքով է ինքը եկել, ամուր կանգնել է ընկեր-հարազատների կողքին, խառնվել է հուսաբարուր շարք ու խմբերին, մեծ ու փոքրին, ծիծաղ-մորմոքին, հուր ու հրեղեն այս խենթ փառքերին:

...1988-ի փետրվարի ձյուն-ձմեռը շիկացել էր հազարավոր աչքերի կրակներից: Աշխարհի առջև խոյացել էր փոքրաթիվ մի ժողովուրդ, որը վաղուց ինքնայրումով ծռվել էր համբերության լեռնածվար բեռից և Սասնա էպոսական ծռերի ընդվզումով հիմա եկել, կանգնել էր իր մտքի, հոգու, իր երազների մայրաքաղաքի կենտրոնում: Օրը, ժամը, վայրկյանը լեցուն էին նոր սպասում-անակնկալներով: Հայտնի ու անհայտ ճակատագրին ոչ ոք հլու և հնազանդ չէր: Ազգի բախտն այստեղ էր վճռվում: Եվ այդ հիմունքներով այնքան

տեսանելի էին եռացող քաղաքամայրը, երկիրն հայոց: Աշխարհի խուլ ականջներին զարկվող Սումգայիթի արյունոտ դեպքերի մանրամասներն այստեղ ցավի ճիչերով շուրթեշուրթ էին անցնում: Բաքվի բորբոսնած քթի տակ դրսևորվել էին մոլագար ու խենեշ ցեղերին հատուկ անմարդկային այնպիսի վայրագություններ, որոնք չէին տեղավորվում բանականության սահմաններում: Եվ դրան գումարվել էին անցյալից տնքացող ու չմոռացվող վերքերը, հայ ժողովրդի հանդեպ այլոց գործած բազում մեղքերը: Ազատության հրապարակում, հավերժահունչ ներշնչանքներ հուշող Մատենադարանի շենքի առջև նույն նպատակների նվիրյալների բանակը պատռել էր պատմության չապաքինված սպիները, որոնք երևանյան ամենակատարյալ ալեկոծության, մարդկանց անմեղմելի զայրույթի պատճառն էին: Այլևս անհնար էր լռել, համընդհանուր պահանջը բախվում էր Կենտրոնական կոմիտեի փակ դռներին, ձգվում Մոսկվա:

Հայաստան-Արցախ միանալու խնդիրը ժողովրդի համար այլընտրանք չուներ:

Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի արձանի թիկունքում՝ մինչև սարալանջի կիսակառույց աստիճանները, ասեղ գցելու տեղ չկար: Բարձրադիր խոսափողների առջև մեկը մյուսին էին հաջորդում հռետորները: Խոսափողին մոտեցավ Թաթուլ Կրպեյանը: Նա համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողների անունից հակիրճ խոսքով բնութագրեց պատմական պահը, անցյալի սխալները շտկելու ընձեռված բացառիկ հնարավորությունը և խոսքն ավարտեց այսպես. «Անցած սերունդները, հող և հայրենի եզերքներ կորցրած մեր պապերը կերազեին այսպիսի ժամանակներ, երբ պիտի կարողանային շուռ տալ համբերության բաժակը, ուղիղ ու շիտակ պահանջով դեմառդեմ կանգնել իրենց ճակատագրի առջև և ասել ճշմարտությունը: Հիմա դա մեզ է վիճակվել՝ նրանց զավակներին ու թոռներին: Լուսապսակ Արցախը Հայաստանի հարազատ զավակն է, նրա արյան և հառնումի ամենահին ղողանջներից մեկը, որը հանիրավի նվիրվել է օտարին... Պանդուխտները պետք է տուն վերադառնան, ժողովուրդը պարտավոր է հարթել, մաքառումով լուսավորել նրանց վերադարձի ճանապարհը... Միացո՜ւմ, միացո՜ւմ, միացո՜ւմ...»:

Թաթուլը խոսքն ավարտեց համընդհանուր ծափերի ուղեկցությամբ, բայց նա հարթակից ցած չիջավ: Միանգամից բարձրախոսները թնդացին նրա երգի ձայնից, ցուցարարները լռեցին, քարացան:

«Ինչպես արծիվ, սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք, գետին տենչավառ...»:

Երգի վերջին տողերը, հատկապես կրկներգը կատարում էին բոլորը: Հոգեբուխ, ներդաշնակ կանչերը զնգուն ճոճվում էին լայնատարած հրապարակով, բարձրադիր շենքերի միջով արձագանքվում քաղաքի մերձակա թաղամասերում:

* * *

Կեսգիշերն անցել էր, երբ Թաթուլը վերադառնում էր տուն: Օրվա տպավորությունները խառն էին, ծանր: Իրադարձությունների պոռթկուն կրակարանից նպատակին շողք հավաքած՝ նա գալիս էր վիրավոր ու վառման սրտի պես բաբախող Ազատության հրապարակից: Այնտեղի ձայներն իր մեջ էին, կանչերն ու կոչերը դեռ շարունակում էին տեղ որոնել իր ունկերում, հարազատանալ: Հպարտության ոգեհմա տուրքի առջև ինքնաերդումի բառերը բորբոք ու տաք հմայքով զարդարում էին տուն տանող ճանապարհը, հնչուն ու հրեղարս բառերը զինվորի պես կանգնել շարք-շարք, շեփորում էին հույսի և հաղորդության օրհներգը: Իսկ Թաթուլին տուն բերող տաքսին միջին արագությամբ էր կծկում Նորքի զանգվածի մայրուղին: Վարորդը բարեբախտաբար չխոսկան էր. Թաթուլի սրտով էր դա, չէր ուզում շարքային որևէ զրույցով փչացնել խոհերի զարդարուն պսակը, որը հայտնաբերել էր ծաղկած հույսերի հրապարակում, ընկերների հետ՝ հանրության մեծ հավատամքի մյուռոնով օծված: Հոգնած էր նա, նվում էր մարմինը, բայց դրան նայում էր անցողիկ հեգնանքով: Աստիճաններով բարձրանալիս զգաց, որ ոտքերը քարշ էին գալիս: Մի տեղ հենվեց բազրիքին, շունչը տեղը բերեց, ապա մղվեց առաջ: Աչքերի առջև քաղաքային օրվա ընծայագիրն էր, մարդի՞կ, մարդի՞կ, սպասող ու պահանջող հայացքներ, զայրույթ ու զարմանք: Դրանք մաս-մաս շարվել, քար-քար դրվել էին սրտի ամրոցում ու հիմա փողփողում էին, փառավորում, փլվում: Թաթուլն այդ իրողության միջնակներում իրեն տեր ու վկա էր համարում, մեղավորն ու արդարը զարկում էր իրար, որ գտներ իր պատկանելիք չափը, իր իմացության, իրազեկության ճշմարտացիությունը: Նա եկվոր ու զորընդեղ ուժի պատկերներն էր տեսնում, ցնորքների հունդերից ընձյուղված պտուղներ, որ հայ մարդիկ՝ մեկ-մեկ ու հազար, գիրկընդխառն ու խրոխտ, բերել էին ի ցույց, եկել էին պարտապանի ազնվությամբ՝ իրենց պապերի նժույգներին նստած, ամեն մեկի ձեռքին Թուր-Կեծակի, ամեն մեկի կանչ ու տենչին՝ Ձե-

նով Օհան, ամեն մեկի փակ սրտից ներս՝ Փոքր Միեր: Աստիճաններով բարձրանալիս Թաքուլն այս խռիվ ու խաս բեռներով էր, Հայ դատի պաշտպան ընկերների վառվող հայացքներով՝ հին, անբեկ ու ազատաբաղձ ճամփորդների մաղախն իր թիկունքին կապած: Ռուզանը դռների մեջ զարմացած նայեց եղբորը. նկատելի փլված էր, բայց աչքերը ճառագայթում էին, սեղմված ճիչ կար շուրթերին:

- Այսքան ուշանա՞լ կլինի, Թաքո՛ւլ:

Քրոջ մեղմանուշ ձայնից սթափվեց նա, իրեն հատուկ հանդարտությամբ ժպտաց, ներս մտավ ու գրեթե ընկավ բազմոցին:

- Այնտեղ ուրիշ կրակ է վառվում, Ռուզա՛ն,- հուզված ասաց Թաքուլը,- ես եկա, որ հինգ եղբայրների միակ քույրը տագնապ չունենա:

- Ի՞նչ է լինելու դրա վերջը:

- Դա մեծ սկիզբ է, քույրի՛կ, աննկարագրելի ժողովուրդ ենք,- միանգամից աշխուժացավ Թաքուլը, կարծես վաղ առավոտից մինչև ուշ գիշեր ոտքի վրա կանգնած չէր եղել հրապարակում:

- Ի՞նչը նկատի ունես, Թաքո՛ւլ,- եղբոր կողքին նստեց Ռուզանը և փաղաքուշ հայացքով նայեց նրան:

- Թվում է՝ հանգիստ ու անտարբեր ենք, մեկը մյուսի ցավին հասու չենք՝ սեփական մարմնի մեջ պատսպարված, կամ էլ խիստ անձնական հոգսերի տակ ենք միայն կքված,- ասաց Թաքուլը, աչքերը բոցկլտացին,- այդպես չէ, հրաշք ժողովուրդ ենք, Ռուզան. ի՜նչ զգացողություն, նրբանկատություն, հավաքական մեծ ուժ ունենք... Գիտե՞ս՝ քաղաքն արդեն տասը օր լեփ-լեցուն է մարդկային զանգվածներով: Մի տեսնես ինչպիսի՜ սեր ու նվիրում իրար հանդեպ: Նույն նպատակի են, համազոր ու հստակ, կարծես ծնված օրից ճանաչել են իրար, արյունակից են ու մերձավոր: Ռուզա՛ն, տեսնել է պետք, թե ինչպես են տրամադրված հրապարակներին կից խանութների ու փոքրիկ վաճառակետերի աշխատողները, հարակից շենքերի բնակիչները, իսկ պատկառելի կանայք ու դեռատի աղջիկները լեփ-լեցուն սկուտեղներով բերում են թարմ կարկանդակներ, նրբերշիկ, պանիր ու հաց, ջուր, ծխախոտ ու լուցկի... բերում են, ով ինչ կարող է, ուզում են մասնակից լինել, միանալ աշխարհազորայինների պես հավաքվածներին: Այսպիսի մտերմություն, հարազատության և խանդաղատանքի զգացում աշխարհում ուրիշ ոչ մի տեղ չես գտնի, չկա՛...

Ռուզանը հիացած նայում էր Թաքուլին, լռում էր, որ հանկարծ չխռովեր նրա վեհասլաց ոգին: Նա բռնել էր եղբոր աջը, կարծես ուզում էր նրա ցոլանքների զարկերը հաշվել, հասկանալ՝ ինչ

ակունքներից է գալիս Կրպեյանների այս զավակը, ուզում էր ընկալել, չափ ու ձևի բերել Թաքուլի տեսակը...

- Այդ ի՞նչ կրակ է վառում քեզ, Թաքո՛ւլ:

- Ի՞նձ... Մի սխալվի՛ր, քույրի՛կ, այդ կրակի շողքը բոլորիս մեջ կա, դա միասնական տարածք է, որտեղ սրտի մաս ունեն բոլորը, այդ թվում դու՝ հինգ եղբայրների միակ քույրը...

- Դու միշտ հիշեցնում ես իմ միակ լինելը,- ծիծաղեց Ռուզանը:

- Դա յուրահատուկ առանձնություն է, բացառիկ քնքշություն, որին արժանի ես դու: Իսկ քո նկատած կրակը իրոք կա, այդ հողեղեն հրայրքով են տաքանում բոլոր նրանք, ովքեր այս ձմռան օրերին ձգտում են սրբագրել իրենց ճակատագիրը, այնտեղից օտարել պարտադրված ստվերը:

Թաքուլը մոտեցավ պատուհանին, հետ տարավ վարագույրը, խավարի մռայլ թամբին երևում էին ծիկրակող լույսեր: Քաղաքը չէր քնել, նրա հոգնած ու չարչրկված նժույգը լողում էր դեպի Մասիս: Թաքուլն անթարթ աչոք մնաց որոշակի ու անորոշ այդ պատկերների հետ: Ռուզանը մոտեցավ, գրկեց եղբոր ուսը:

- Ի՞նչն է այդքան քեզ տանջում, հարազա՛տս:

Թաքուլը շուռ եկավ, շնորհակալ նայեց քրոջը և մարմանդ շշնջաց.

«...Ոչ nf ըսավ - Սա տըղին
Պատռե՛նf սիրտը տրմագին,
Նայինf ինչե՞r գրված կան,
Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան»:

- Որքան գիտեմ, դա Դուրյանի խիստ անձնական, նրա անհաս սիրո ցավի հուսահատ ճիչն է, ոչ թե...

- Սպասի՛ր, Ռուզա՛ն,- քրոջն ընդհատեց Թաքուլը,- մեծ սերը անձնականից է բարձրանում, աստղավորվում է տիեզերքում: Մի տես Չարենցն ինչ է ասում.

«...Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան
յարն եմ սիրում...»:

- Թաքո՛ւլ, դու պատմաբա՞ն ես, թե՞ հոգեբան-բանասեր,- անկեղծ փայլով պայծառացան Ռուզանի աչքերը:

- Ես ընդամենը այս երկրի զինվորն եմ, նրա ցավի շարքային ընկերը,- քրոջ ոգևորությունը մեղմացրեց Թաքուլը,- մի մարդ եմ այն ժողովրդի մեջ, որն արդեն հավերժականի իր տեսակն է հավաստում, արդար պահանջի իր սուրն է պատյանից հանել, հայ ոգու իր բիբլիական մատյանն է բացել աշխարհի առջև... Ռուզա՛ն,

ես այդ մատյանի հավատավոր ուխտավորն եմ, ուրիշ ոչինչ...

- Դրանից այն կողմ ուրիշ էլ ի՞նչ կա,- ժպտաց քույրը և բաց արեց ընթրիքի սեղանը:

- Դրանից այն կողմ լինել-չլինելու կռիվն է, պիտի պատրաստ լինենք:

Ռուզանը գերադասեց այլևս հարցեր չտալ, հասկացավ, որ եղբայրը ֆիզիկապես է տուն վերադարձել, հոգին այնտեղ է՝ ուշքն ու միտքը ցուցարարների բռունցքված շարքերում:

Թաթուլը նույնպես չուզեց խորանալ ալեկոծ իր ներաշխարհը, մի պահ հեռացավ իրենից, որ Ռուզանին չտխրեցնի, մոտեցավ սեղանին:

- Ռուզա՛ն, դու գիտե՞ս, որ Կրպեյանների իմ ամրոցն ես Երևանում, առանց քո ներկայության ես ինչպե՞ս պիտի շնչեի:

- Մի՛ կրկնիր ինձ, հիշո՞ւմ ես, այդ բանը ես եմ ասել քեզ, երբ ընդունվեցիր համալսարան,- ժպտաց Ռուզանը,- երրորդ տարին է՝ իմ կողքին ես, երեխաներս հպարտանում են քեզնով, այս շենքի բնակիչները, շրջապատը ուրիշ աչքերով են նայում քեզ:

- Ես դա չգիտեի,- ծիծաղեց Թաթուլը:

- Ուրեմն իմացիր ու ճանաչիր քեզ,- հպարտացավ քույրը:

- Ռուզա՛ն, աշխարհում ո՞ր քույրն է թաքցրել իր հիացումը եղբոր նկատմամբ, դու էլ բացառություն չես:

- Ճշմարտությունը հիացումից թանկ է, դու դա լավ գիտես, Թաթո՛ւլ:

- Չէ՜, քեզ հետ դժվար է բանավիճել, քույրիկ, դու պիտի գաս ու հրապարակում կանգնես իմ կողքին:

- Դա արդեն որոշված է, որտեղ եղբայրն է, այնտեղ էլ՝ քույրը:

- Իրո՞ք նման որոշում ես ընդունել:

- Մի՛ զարմացիր, վաղվանից այս շենքի կանայք միանալու են ձեզ:

- Հիանալի է, հրաշալի, Ռուզա՜ն, ինձ թվում է՝ ամեն օր հրապարակ ելած շարքերն ավելանալով թեկուզ մեկ մարդով՝ մի քայլ մոտենում են իրենց երանելի նպատակին,- նա, խոսքը չավարտած, մտավ ննջասենյակ:

Ռուզանը զսպեց թաքուն ցնծությունը, իր առջև վերածնվում էր մի ուրիշ Թաթուլ՝ գաղափարապես հզոր, հասուն և բնավորությամբ ուժեղ: Քույրը գիտեր, որ եղբայրը տարված է դարասկզբի հերոսական պայքարով, տուն է բերում «Դրոշակ» թերթի հին համարներից, ուսումնասիրում ֆիդայիների ազատագրական պայքարի պատմությունը, պաշտում է Նժդեհին:

Եղբոր մոտ նա հայտնաբերել էր ինքնայրումից բռնկված յուրատեսակ հատկանիշներ:

Ազգայինի մասին նրա խոհերը հավասարակշիռ էին, ասելիքը՝ չափ ու ձևված, բնույթը՝ մշտահաստատ: Ռուզանն անհանգստանում էր նրա առողջության համար: Սրտի վիրահատությունից թեև անցել էր երեք տարի, բայց ոչ մի բան երաշխավորված չէր: Եվ դրա համար քույրը որոշել էր վաղվանից դուրս գալ հրապարակ, կանգնել եղբոր կողքին, աջակից լինել, նաև հետևել նրա առողջությանն ու սննդին:

- Ես քնեցի, առավոտյան շուտ կարթնացնես,- ննջասենյակից լսվեց Թաթուլի ձայնը...

- Կարթնացնեմ, և միասին կգնանք:

- Որոշումը բեկման ենթակա չէ, հիմա այլ հարցեր էլ մի՛ տուր, երեխաներդ կարթնանան... Բարի գիշեր:

- Բարի գիշեր...

* * *

Պատմության լսարանում ցանկացած առարկայի դասավանդման թեման Արցախն էր: Դասախոսները փոխվում էին, բայց իրադարձությունների շրջանակը նույնն էր, ասելիքը տաք էր, բորբոքուն: Անցյալի կարևոր տարեթվերը, դար-դարերի իշխանական տների հիշողության, բազկատարած արքաների գերագույն ուժի, նրանց նվաճումների, կորուստների, կարևոր ու ճակատագրական դաշնությունների և պայմանագրերի պատմական աղբյուրների ուսումնասիրությունները մղվել էին երկրորդ պլան: Լսարաններում, բակերում ու հրապարակներում շարունակվում էր Արցախի տիեզերականչը, շեփորները շանթերից էին սնվել, զրնգում էր Հայաստան-Արցախը. այն դարձել էր Երկիր մոլորակի սիրտը, կանչող, կարևոր ու կարեվեր սիրտը: Ուսանողներից ակտիվիստ-հայրենասերները անդամագրվում էին հայրենասերների միության մեջ, ավելանում էին Հայ դատի պաշտպանները: Երևանում 1988-ի մարտ ամսին նախաձեռնող խմբի, հատկապես Իգոր Մուրադյանի ջանքերով ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտե: Նրա ծրագրային հիմունքներով խմբեր ու բջիջներ ստեղծվեցին հանրապետության գրեթե բոլոր բնակավայրերում: Մարտի 1-ին այդ օրինակով Արցախում սկիզբ դրվեց «Կռունկ» խորհրդին...

Այսպիսին էր ժամանակը՝ լարված, անկանխատեսելի:

...Թաթուլը համալսարանում էր, հրապարակներում: Նա տեսնում

էր օրերի մեջ հասունացող ուժանակը՝ հազարավոր մարդկանց սրտերի կայծերով խտացված, զսպված ու անզուսպ, համբերության ծովը ծվատած ամպրոպը: Այդ օրն էլ գարնանաբույր մայթերին վազող երեխաների ձեռքերում նա տեսավ ձնծաղիկների առաջին փնջերը: «Անցյալ տարի այս օրերին նրանք վաճառում էին, սակարկում, սարերից բերած ձնահոտ ծաղիկների համար ինչ-որ ակնկալիք ունեին: Հիմա՜, այ թե ինչ... Նրանք էլ փոխվեցին, նրանք էլ մի քանի օրվա ընթացքում տասը տարով մեծացան...»: Թաթուլը ընկերների հետ կանգնած հրճվում էր, չէր խոսում, որովհետև աչքերի առջև ուրիշ մատյան էր գրվում, բարձրյալ ու անմեկնելի եղելություն: Երեխաները ծաղիկները հատիկ-հատիկ բաժանում էին, երջանկաժպիտ մոտենում սրան-նրան, իրենց սրտի զարկն ու արթնացող շողքն էին տալիս: Փոքրիկ մի աղջնակ՝ ինը-տասը տարեկան, վազեց դեպի Թաթուլը՝ ձեռքին ձնծաղիկների փունջը...

- Սա քեզ, Աղավնաձորից եմ բերել, դու այնքան լավ երգեցիր:

Պայծառ-պայծառ բալիկ,
Հույսի հողոտ ճամփա,
Իմ օրերին ընծա-
Իմ այգալույս գալիք...

Տեղն ու տեղը Թաթուլը հանգավորեց խոսքը, համբուրեց աղջնակին և հարցրեց,- անունդ ի՞նչ է, բալի՛կ:

- Ասպրամ է իմ անունը, հոպա՜ր...

Թաթուլը գրկից բաց չթողեց նրան, գրպանում մի քանի կոնֆետ կար, քույրը՝ Ռուզանն առավոտյան ասաց՝ վերցրու, ծանր բեռ չէ:

- Սա քո բաժինն է, այն չնչին է քո պսակալույս ծաղիկների համեմատությամբ, վերցրու:

Աղջնակը հանկարծակիի եկավ, դեմքը կարմրեց, հրաժարվեց:

- Այս ծաղիկները չեն վաճառվում, հոպա՛ր, սա նվեր եմ բերել:

Այս անգամ Թաթուլը շառագունեց, բերկրանքից հոգին թնդաց, Ասպրամին բարձրացրեց, նստեցրեց իր ուսերին:

- Վերևից նայիր, թող բոլորը քեզ ու քո բերած բնական ծաղիկները տեսնեն, դա սարերից իջած քնքշություն է, քեզ նման շատ գեղեցիկ ու բարի:

Ընկերները մոտեցան, իջեցրին աղջկան, ջերմ խոսքեր ասացին: Ասպրամիկը կոնֆետները մի ակնթարթում գցեց Թաթուլի գրպանը, ամոթխած ժպտաց, աչքերը թացվեցին, կտրուկ շուռ եկավ, շրջանցելով մարդկանց՝ վազելով հասավ մայթերին հավաքված, ծաղկեփնջի նմանվող երեխաների խմբին:

Հաջորդ առավոտյան սարերից ձնծաղիկներ բերող երեխաներ չերևացին: Քաղաքի մուտքի մոտ նրանց ճանապարհը փակել էին «կարգ ու կանոնի» համար փողոց դուրս եկած խորհրդային բանակի հատուկ ծառայության մարտիկները: Պատնեշներ էին դրվել քաղաքի բոլոր մայրուղիներին, թույլ չէին տալիս տարբեր շրջանների բնակչության մուտքը քաղաքամայր:

Սակայն մարդկային զանգվածներն անդադրում էին Երևանի ներսում: Նրանք գալիս էին նոր ոգևորությամբ, վերջնական մի որոշումով՝ «Միացում»:

Թաթուլն աչքերին չէր հավատում. «Այս զինվորներն ու զենքերը ե՞րբ հասցրին բուսնել ամեն տեղ, ուժի ցուցամոլությամբ հռնդացնել զրահամեքենաները, հրասայլերը, հոխորտալ, հրմշտել, փակել մեծ ու փոքր ճամփանները, զարկել ժողովրդի սրտին և այդ ելման սրտում սպանել նրա անմեղ երազը, հույսերով ծաղկած նրա արդար պահանջը... Այս ի՞նչ է, պատմության անիվը նորի՞ց է ջարդվելու հայոց ճակատագրի ծանրությունից: Չե՞ք տեսնում, որ արցախյան ճակատագրով իր ոգու ուժը աշխարհին վերստին բացահայտող ժողովրդին անհասկանալի է այս զինվորիկների անպատեհ ներկայությունը քաղաքի ամենաբանուկ տեղամասերում: Հասկացե՛ք, ազատաբաղձ այս մարդիկ արհամարհանքով են նայում ձեր «զսպող» զենքերի ցուցադրությանը, զրահամեքենաներին, չե՞ք տեսնում, թե ինչ շիկացած շռինդով են քայլում նրանք՝ գլուխները բարձր, խռովքներից բեկված նրանց հայացքներն այնտեղ են՝ բիբլիական Մասիսին: Զինվո՛ր, գեներալ ու գլխավոր, մի՞թե չեք տեսնում, որ ժողովրդական այս մեծ Շարժումի դիմաց քաղաքի բոլոր կողմերում դիրքավորած ձեր զինատեսակները իրենց վառոդի պաշարներով չնչին են հրապարակ ելած երիտասարդների, կանանց և, ընդհանրապես, հայ մարդու հավաքական սիրո և կարոտի դիմաց: Եվ այդ անթեղ կրակը, անցնելով սրտե-սիրտ, 80-90-ականների պահանջատեր, մտածող ու կերտող սերնդին է հասցրել հայ մարդու հոգու արդարացի ջահը, խավարի ու բռնության փորձություններով անցած, խնկարկուն, «արևոտ ափ երազող հազարավոր սրտերի լուսեմատյան ջահը...»: Թաթուլը մտքերի հարվածներին չէր դիմանում, աղաղակ ու ճիչ էին կրծքի տակ, շնչում էր ծանր: Նա վիրավորանք էր տեսնում հազարավոր աչքերի մեջ, ինքնայրումից այլևս չէին դիմանում թիկունքում՝ աջ ու ձախ խմբված ու խռնված շարքերը: Հուսահատության չնչին կայծն անգամ նրանք զգացնել չէին տալիս, որ կողմը նայում էին,

ձիգ ու ձգված, առնացի ու վսեմ էին բոլորը: Զինվոր տղաները, թեև հրաման ստացած ու զինված, նույնպես կռահում էին, որ այս բովանդակ հանրությանը, միասնական ու մեծ զորությանը դժվար է սասանել: Նրանք գիտեին, որ իրենց ներկայությամբ ավելի էին բորբոքել փողոց դուրս եկած հարյուր-հազարավոր մարդկանց, բայց ուրիշ ելք չունեին, իրենք նույնպես սպասում էին վերևների լուրջ ու կշռադատված որոշումների:

Թաթուլը չարությամբ չէր նայում զինվորներին: «Ընդամենը հրաման կատարող են, ի՞նչ մեղք ունեն, որ քշել են այստեղ, պարտադրել...»: Ամենօրյա քաղաքային եռքը գնալով թեժանում էր: Ոչ ոք չէր նայում խաչմերուկները, հրապարակների կարևոր տեղամասերը, պետական նշանակության հիմնարկները հսկող զինյալներին: Մարդիկ քայում էին նույն ոգևորությամբ, հանապազօրյա կոչերով, Արցախը օտարից հետ բերելու իրավացի պահանջներով: Համալսարանականների անձնվեր շարքերում Թաթուլն առաջիններից էր: Նրան արդեն մոտիկից էին ճանաչում ուսանողությունը, երիտասարդության ստվար բանակը: Թաթուլը ցույցերի ժամանակ կրակոտ խոսքով, համալսարանում իր ստեղծած երգչախմբի բոցաշունչ, հայրենասիրական երգերով ամենուրեք փորձում էր տաք պահել հայրենյաց ոգին՝ հիշեցնելով Սերոբին, Անդրանիկին, Գևորգ Չաուշին նվիրված ժողովրդական մեծ զգացումի անթառամ ասքերը:

Ռուզանը եղբորից անբաժան էր, գյուղից եկել էին եղբայրներից երկուսը՝ Սերգոն ու Մանվելը: Այստեղ էին Թաթուլի դպրոցական ընկերները, նաև արեգցի Սարգիս Կարապետյանը՝ մի պատվարժան մտավորական, օրվա ու ժամանակի հոգսերի մեջ թաթախված հայրենասեր այր: Չորս տարի առաջ հաջողվել էր Մշո Առաքելոց վանքից հող բերել, էրգրից «գաղթած» Ավետարանի և այլ մասունքների հետ դարձնել երդման խորհրդանիշ, որոնք պահված էին Արեգում՝ Սարգսի հայրական տանը:

Թաթուլը մեծագույն հարգանքով նայեց Սարգսին, գիտեր, որ նա այս վերընձյուղված օրերի պատկերները վաղուց էր փայփայում:

- Այս հրեղեն օվկիանի կայծը մենք վառում էինք Արտին սարի լանջին,- հիացական ասաց Թաթուլը:

- Իրավացի ես: Անթեղ կրակ, երդում ու հավատ ունեինք, ուրիշ կարոտ էր փոխանցվել մեզ,- հպարտությամբ վերհիշեց Սարգիսը:

- Հիմա-հիմա հիշում եմ անցյալ տարվա մեր երդումը սարափեշին,- նվիրական տենչով շշնջաց Թաթուլը,- երդվում էինք բնության մեջ, բարձունքներին, որ լեռը գրանցեր մեր ձայնը, նաև մեր աչքե-

րի գույնն ու հոգու պատկերը: Մեր շրջապատում բազմություն չկար, մենք էինք՝ 10-15 տղա՝ մեր հայացքը դեպի էրգիր, Ղարս ու Կաղզվան, մեր կրծքի տակ՝ գաղթական մեր հայր-պապերի կարոտի աշխարհը:

- Հիշո՞ւմ ես երդման տեքստը,- պայծառ խորհրդով ջերմացան Սարգսի աչքերը:

- Քո տողերն էին, Սարգի՛ս, հայրենյաց բախտի բույր կար այնտեղ, զարմանալի հորդոր էր ու կանչ,- ներքին հույզերից ցնծաց Թաթուլը:

Սարգսի աչքերը բռնկվել էին զարմանքով, զգում էր, որ հիացումը դուրս ժայթքելու տեղ էր փնտրում: Նրա առջև մի նոր Թաթուլ էր՝ իր պայծառությունից ծաղկած, ամուր և ընդգծված անհատականություն: «Երեք տարին Երևանում նրա բնատուր հայրենասիրությանն այս ի՞նչ վեհություն է շնորհել: Այսքան երիտասարդ, բայց որքա՞ն շրջահայաց ու բանագետ, հայրենյաց ճակատագիրը օրվա անկանխատեսելի ցավերի մեջ չկորցնող, չմոլորվող արեգցի երիտասարդ: Ղարսեցի ռանչպար Մարկոսի թոռը հոգու այս ի՞նչ պաշարներով է լեցուն: Մարդկային այս հեղեղը գիտի՞, թե իր ալիքների վրա քանիսն են այսպիսիները՝ ինքնախարույկված, նպատակին ուղիղ գնացող...»:

- Թաթո՞ւլ,- անսովոր երանգով սթափվեց Սարգիսը:

Թաթուլը կտրուկ ետ նայեց, բայց չհասցրեց պատասխանել, քանի-որ հայտնվեց Սարգսի գրկում:

- Եղբա՜յր, դու Արաբոյի զավակն ես, Անդրանիկի զինվորը:

Սարգսի անսովոր արծագանքը անակնկալի բերեց Թաթուլին:

- Մի՛ չափազանցրու,- ազդվեց Թաթուլը:

- Քո մեջ այդ կրակն է, Թաթո՛ւլ,- Սարգիսը փորձեց իր խոսքն ամրապնդել,- այս ամենը գովելու կամ խրախուսելու համար չեմ ասում, վիթխարի բազմություն է հավաքվել, ամեն մեկն իր պարտքով է եկել այստեղ, բայց քո տագնապները, ցավերը, քո յուրատեսակ նվիրումը ինձ համար տարբերանիշ ունեն:

- Բոլորիս սրտերում էլ այդ հրդեհն է, Սարգի՛ս, պարզապես ես քո մտերիմն եմ, քո մանկությունից սկիզբ առած ճամփորդը, դրա համար ես դու ինձ գերագնահատում,- լայն ժպտաց Թաթուլը և ավելացրեց,- նայիր այն կողմ, տե՛ս՝ ի՞նչ կրակված ու կարոտյալ հոգիներ են՝ Զորի Բալայանը, Իգոր Մուրադյանը, Վարդան Բախշյանը, Վարդան Ստեփանյանը, Տիգրան Սարգսյանը, Նորայր Մարուքյանը, իմ կուրսեցիները, մեր դասախոսները:

- Բոլորին էլ տեսնում եմ, բայց դու իմ սրտի համար ուրիշ ես:

- «Միացումի» բոլոր տղերքն էլ ուրիշ են, Սարգի՛ս, նրանցով է սկսվել մեր ազգային զարթոնքի այսօրվա էջը:

Թաթուլի խոսքերից է՛լ ավելի հմայվեց Սարգիսը և իր մեջ նրա համար ցոլընծա կանչերի մի նոր տարածք բացեց: «Բոլորս էլ հայրենասեր ենք, նպատակն է մեզ այստեղ բերել, բայց հավատա, Թաթո՛ւլ, դու ուրիշ ես, թող այդ հավատամքը իմ մեջ պահպանվի այնպես, ինչպես քեզ ճանաչեցի այս գարնան օրերով, միացումի գաղափարին լծված, բռունցքներս բարձր, հայացքներս արևին...»:

Սարգիսն զգում էր, որ ինքնաբորբոք մտքերը Թաթուլին բնութագրող հյուսվածքներով ներծծվում էին հոգու խորքերը. զարմանալի մի կրակ նրբին հոլովույթով գալիս էր ու չէր ավարտվում: Չկանգնեց, գնաց նրա թիկունքից, ուզում էր շատ մոտ լինել նրան, չհեռանալ, չկորցնել: Իսկ Թաթուլը հայտնվում էր մեկ այս խմբի մեջ, մեկ հասնում առաջին շարքերը, ինչ-որ բան էր որոնում, հուզախռիվ էր ու անհանգիստ: Անզուսպ ու տաք խոսքերով նա համարձակ կիսվում էր ծանոթ-անծանոթի հետ, ժպտում, ոգևորում, ապա մղվում էր առաջ, թվում էր՝ ամեն տեղ իրեն էին սպասում:

Թաթուլի այս նոր տեսակը երևանյան գարնան ալեկոծի մեջ Սարգիսը հայտնաբերել ու չէր կտրվում նրանից: Նա հասկանում էր, որ ստեղծված այս լարվածությանը զուգահեռ Թաթուլը, նրա նմաններները, որ քիչ չէին այստեղ, մեղմում էին մարդկանց ջղագրգռությունը, իրենց խոսքով, երգով, աչքերի անթաքույց կրակով շարքերը տանում էին առաջ, ուր շառաչում էր ժողովրդի մեծ խղճի ջրվեժը, և «Միացումի» տաճարաձայն հայտնությունն ավետում էր հառնումը լույսի և արդարության:

...Այս մեծադղորդ ուժի ճնշման տակ՝ ամռանը՝ 1988-ի հունիսի 15-ին, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը վերջապես ԼՂԻՄ-ը Հայաստանի կազմի մեջ մտցնելու որոշումով դիմեց Մոսկվա՝ Միութենական Գերագույն ատյանին: Շուրջ մեկ ամիս անշեջ կաթսա էր դարձել Երևանը, ողջ երկիր Հայաստանը: Սպասումների, երազանքների և հուսադրության երեսունչորս օր շոգի ու շանթի շեփորներով արթուն մնաց ժողովուրդը, չքնեց արդարաբաղձ երիտասարդությունը, ճշմարտությանը դավանող ժամապահի պես կանգնեցին բոլորը՝ մեծ ու փոքր: Հավատի մի ուրիշ հրավառությամբ էր լուսավորվել ժողովրդի հոգին: Յոթանասուն տարվա վաղեմությամբ խճողված Արևելյան Հայաստանի քարտեզի վրա վերջապես պիտի ճշգրտվեր պատմության կողմից չներվող բազմաթիվ

սխալներից գոնե մեկը: Ստալինյան մտքի և մատի ցանկությամբ Ադրբեջանին նվեր դարձած Արցախը պիտի վերադառնար իր պապենական պատկանելությանը, միացվեր Հայաստանին:

Այս պահանջը հուսո ճրագ էր դարձել երկրի հեռավոր գյուղական խրճիթներում, բոլոր քաղաքներում, այս պահանջին զորընդեղ կամք ու սևեռուն նպատակի արեգակ էր դարձել Երևանը:

Եվ ի՞նչ, դարձյալ խոտորվելո՞ւ էր պատմության կշեռքը, վերևներում չէի՞ն լսելու հայ ազգի արդար պահանջը: Այս արդարամատույց հարցադրումներին պատասխան տալու օրը հուլիսի 18-ն էր՝ ամռան հրաշեկ մի օր, որ բացվեց կապույտ շղարշների ծոցից, ելավ Մասիսներից բարձր, եկավ խռիվ ու խաս թևերով, գրկեց քաղաքամայրը, շոյեց զսպանակված սպասումի ալիքը, որը դարձյալ փողոց ելած մարդկանց ուսերին էր, նրանց անպատնեշ երթի անգոցելի կրակարաններում:

Թաթուլը՝ այդ անհանգիստ ու անզուսպ երիտասարդը, Մատենադարանի հարթակ բարձրացող աստիճաններին էր: Այսօր չէր խոսում, լռակյաց էր, հայացքը՝ դիմացի ծառի բարձր ճյուղերին տեղադրված բարձրախոսին: Ազգային հոգեհմա երաժշտությունը ամռան փթթուն ծոցերով թրթռում էր ջինջ օրվա արևոտ ստեղներին: Շահմուրադյանի «Հայաստանը» վերնառաք կախարդանքով գերել էր նրան: Թաթուլն այդ հմայքի ծաղկումը կարդում էր բոլորի աչքերում: Հասկանում էր, որ այս բովանդակ տիրույթում ինչ-որ բան է կաշկանդում իրեն, կարծես շղթաներ էին դրել հոգու արծվաթռիչքին: Նա պարզապես անտարբեր լինել չէր կարող, ուզում էր երգել, միանալ աստվածահմա երգչին: Սակայն լեզուն փակ էր: Եթե երգում էր, ապա սրտի անփարատելի կոչերով, ու թե զարկվում էր, այն էլ միայն վիրավորանքից կոշտացած խոհերի հրացանով, սակայն պինդ էր, կանգուն ու միշտ ոտքի վրա: Նրա մեջ, սակայն, մի ուրիշ վայելք կար, փակ աչոք տեսնում էր մարդկային այս հեղեղը, որն առաջնորդում էր անբացատրելի իր աշխարհը, ուզում էր մոտիկից լսել ամեն մեկի հոգու հևքը, նրանց արծիվ-ծփանքը, ուզում էր նրանց այնքան ժամանակ պահել իր մեջ, մինչև բարձրախոսից լսվեր Մոսկվայի ձայնը, ճիչն արդարության, որին սպասում էին բոլորը՝ այս շոգ օրվա միջօրեին գամված մարդիկ, Հայաստանի մնացած շեներում աղոթող կարոտյալները... Եվ բարձրախոսը վերջապես պահեց երգի ղողանջը, ապա աղմկահույզ խուլ թպրտաց, թնկթնկաց հաղորդավարի ձայնը: Լռեցին բոլորը, Երևանը պապանձվեց՝ ձգվելով Մատենադարանից մինչև Մեղրի,

հյուսիսից հարավ, արևելքից արևմուտք:

Եվ ի՞նչ... ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը մերժել էր Հայաստանի օրենսդիր օրգանի որոշումը՝ Արցախը դարձյալ թողնելով Ադրբեջանի կազմում:

Բարձրախոսը լռեց: Նրա տարուբերվող կռնչյունները ագռավածայն բզկտեցին ներկաների շարքերը: Զարմանալի դաշնությամբ հազարավոր բռունցքներ օրորվեցին օդում, թվաց՝ սոսիների անտառն է աշխարհակործան փոթորկի դիմաց:

- Միացո՜ւմ, Ղարաբա՜ղ, միացո՜ւմ,- անդրդվելի էր ժողովուրդը՝ խիստ ու աննահանջ:

Երևանի միաբերան կանչը արդեն ուրիշ երանգ ստացավ: Հորդորի, հավատի նախկին ձայները միանգամից դիպան ոգու ուրիշ ստեղների: Երկիր-երկնքի սահմանները ծունկի իջան, կտրվեցին օրենքների հանդեպ հարգանքի վերջին թելերը: Չդիմացան մեկը, երկուսը, հազարը, հարյուր հազարը, մրմռացող վերքի ցավից մռնչացին մեկը, երկուսը, հազարը, հարյուր հազարը: Ժողովրդական շարժման կոմիտեի անդամները Մատենադարանի հարթակից մեկնաբանեցին, որ այդ որոշումը ընդամենը դավադրություն է, կապ չունի իրական ճշմարտության հետ: Պարզորոշ ու հայտնի էր, որ վերևներից «թոզ էին փչել»՝ սքողելու արդարությունը, փորձում էին խլացնելով պատմության գզրոցում դեռ թարմ պահպանված մեր ազգային վերքի անմեղսունակ ճիչը: Հռետորները խոսում էին փաստերով՝ նշելով ազգային այդ մեծ ցավի պատճառները, հիշատակելով Կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի անարդարացի որոշումը: Մեկ րոպե անց հնչեցին Շիրազի բանաստեղծությունները՝ նվիրված Արցախին: Շիկացավ առանց այն էլ բորբոքված զանգվածը, զսպանակի պես սեղմվեցին շարքերը՝ պատրաստ ցանկացած սխրանքի:

Բարձրախոսից լսվեց մեկի կրակոտ խոսքը, ապա նույնը երգի խրոխտ հնչյուններով.

«Հիմի՞ էլ լռենք, եղբայրք, հիմի՞ էլ,
Երբ մեր թշնամին իր սուրն է սրել...»:

- Ո՞վ է, ձայնը այնքան ծանոթ է ու հարազատ,- շշնջացին շարքերը, հայացքները դարձան սևեռուն: Բարձրադիր խոսափողի մոտ Թաթուլն էր, բռունցքով զարկեց կրծքին, աչքերից շանթեր թռան: Նա խոսքն ավարտեց երգի վերջին շնչով: Պահանջի ու հարցումի խառնարան էր հոգին, որտեղից ելնում էր հին օրերի երգը, որն այնքան համահունչ էր այսօրվան: Բազմությունը հառաչանքնե-

րից անջատվեց, շուրթերին պահեց «Հիմի՞ էլ լռենք, եղբայրք իմ հայեր» Թաթուլի ձայնածփանքը, որի արձագանքները փշրում էին բռնության կապանքները: Մարդիկ չէին ընդունում սուտ ու սնանկ որոշումը, պարզապես խաբվելու իրավունք չունեին:

Երբ Թաթուլը հեռացավ խոսափողից, երգի տաք շերտերին գումարվեցին հավաքվածների անբեկանելի թնդյունները, օդը լցվեց Մոսկվայից արձակված որոշումը վերանայելու կոչերով, պահանջում էին անհապաղ շտկել դարասկզբի քաղաքական սխալը: Համաժողովրդական մեծ շարժումը վերածվեց մայր ցամաքից պոկված հրեղեն հալոցքի: Պահանջը վերածվել էր զայրույթի և իրավացի անհնազանդության, մարդիկ այլևս չէին ընդունում միութենական և հանրապետական ղեկավարության «փափկացնող խորհուրդները», եղբայրության հնացած քարոզը կապ չուներ դեպքերի իրական ընթացքի հետ: Տարիների մեջ պահված կեղծիքն արևերս էր ելել հատկապես Արցախի խնդրի լուծման ճանապարհին: Աշխարհի աչքի առջև պսակազերծվում էր ճշմարտության անքողարկելի դեմքը:

- Միացո՜ւմ, միացում, Ղարաբա՜ղ-Հայաստա՜ն...

Անշուշտ, սա անհույս ճիչերի վերջին տուրք չէր, այլ մինչև վերջ գնալու աննահանջ կամքի դրսևորում, որն արդեն սասանում էր իշխանական բուրգերի հիմքերը: Վերևում ու ներքևում խուսանավելով՝ ժամանակ էին շահում, բայց իրադարձությունների էպիկենտրոնում պահանջատերը ժողովուրդն էր: Նրա բռունցքված ուժի ու բացառիկ ընդվզումի աննախադեպ տարերքի առջև աննկուն և անզիջում տերերը պատասխան էին փնտրում, իսկ այն ուշանում էր: Կայսրապետության բռնակցված քարտեզի կարկատանները չէին դիմանում, մաշված թելերով անկարելի էր պահպանել սարքովի կայունությունը, մեկի սրբությունը մյուսի ոտքերի տակ գցելու կեղծ «լավատեսության» վերջն էր եկել:

...«Ղարաբա՜ղ-Հայաստա՜ն, միացո՜ւմ...»: Այս գտնված, գերխնդիր կանչերի օրորը գրկել, տանում էր Թաթուլին: Կեսգիշերը վաղուց անցել էր, երբ նա տուն եկավ: Ռուզանն զգաց, որ անհնարին էր նրա հետ խոսել, ոչ մի հարց չտվեց, ծանոթ էր օրվա որոշմանը, որն ատոմային ռումբի պես պայթել էր քաղաքի կենտրոնում: Թաթուլն ինքը խոսելու առիթ չէր տալիս, մռայլ էր, հոգին տակնուվրա էր լինում, ժողովրդի ազնիվ զգացումներն արհամարհվել էին, կրկին ոտնահարվել էր հայ մարդու արժանապատվությունը:

Ննջասենյակի լույսը նա արագ հանգցրեց՝ քրոջը հավաստելով, որ ինքը քնած է, սակայն փլվեց բազկաթոռին, գլուխը՝ փա-

փուկ թիկնակին, հայացքը՝ առաստաղի մութ խորշոմներին: Եվ այդպես երկար լռեց: Խռովյալ խոհերը եկել, նրա հոգու դռների առջև պաշարել, կանգնել էին: Սրտում թույլ ծակոց զգաց, ուղղվեց բազկաթոռին, շոշափեց կուրծքը: Երևի արտասովոր ոչինչ չկար, բայց գերադասեց պառկել: «Ա՜յ սիրտ, հիմա քո մորմոքն էր միայն պակաս, դիմացիր, ուզենք-չուզենք պիտի դուրս գանք էս մղձավանջից, չդավաճանես, ես ու դու հազար մուրազ ունենք...»: Թաթուլը մտքերի հարընթաց շառաչի տակ երկար գալարվում էր անկողնում, իսկապես ուզում էր աչքերը փակվեին, ձգտում էր թեթև ընդարմության, մտացրիվ հանգստի, սակայն չէր ստացվում: Օրվա խոսքն ու պատկերը, բացականչող հոգիների ինքնայրումը, շեփորների մեղեդային պանդխտականչը շուլալվել էին սրտի ծոցերում: Եվ դրանցից հառնող ժողովրդական աստղերգությունը Թաթուլին հեռացնում էր հանգստից, քնից, խաղաղ անկողնուց: Նա ակամայից փակեց աչքերը, խավարում կրկնապատկվեց մութը, բայց հոգու աչքերով վերագրանցում էր անցնող շարասյուները, մարդկանց կայծակեն աչքերը, զգում շոգի մեջ շառաչող նրանց հավաքական շունչը: Սենյակի փակ պատերի ներսում՝ իր հետ գալիս ու անցնում էին նրանք: Նա այստեղ՝ ննջասենյակում, իր կողքին մոտիկից տեսնում էր անարդարության դեմ ծառս եղած և անդիմադրելի ցավից հառնողներին, որոնք իրավունքով հոխորտում էին, երեկոյան թերթերում արդեն տպագրված վերադասի որոշումը գցել էին ոտքերի տակ, տրորում էին անխնա, նաև հրմշտելով հեռացնում էին իրենց վիրավորանքը, մեկ-մեկ էլ անհասցե հայհոյում, բայց մտքով գիտեին, թե որն է նշանակետը: Թաթուլն այդ ամենի վկան էր եղել և հիմա՝ գիշերվա ժամը 3-ին, յոթերորդ հարկաբաժնի իր ննջասենյակում յոթնապատիկ կռիվ էր տալիս, քննում էր, կշռում իր իմացած ճշմարտությունը, Հայաստան երկրի շուրթերով ասված և ոչ հեռու պատմությանը հայտնի փաստերը: Թաթուլը խավար ննջասենյակում բացահայտում էր այդ պատմության դաժանությունը, վերաբացում դրա մանրամասները, այն ամենը, ինչը մեկ առ մեկ հնչեց քաղաքի հրապարակներում: Նրա սենյակի անքուն պատերի մեջ եկել, լցվել էին ցուցարարները, մտել ու չէին հեռանում... «Այս ի՞նչ ճակատագրի ժողովուրդ ենք, միշտ փութացել ենք չլուծված հարցերի հետևից, մեր դիմաց օտարների կնճռոտ հայացքն է եղել, մեր կողքին՝ մերձավորների անհեռատես պահվածքը... ուրիշները գողացել ու խլել են մեզանից, հետո մոգոնել, որ դրանք ո՛չ մերն են եղել, ո՛չ էլ այդ տեղերում հայ է ապրել: Ահա քսանմեկերորդ

դարավերջի դատողությունը մի ժողովրդի նկատմամբ, որը ծովից ծով Հայաստան է ունեցել: Մեր խելացի նախորդները, հավանաբար, միշտ զգացել են իրենց շրջապատող միջավայրի ախորժակն ու կեղծիքը և դրա համար, ուր որ ապրել են, թողել են գրավոր արձանագրություններ, դարերի հողմերին դիմակայող շինություններ, սեպագիր ու հայատառ վիմագրություններ, վանք ու եկեղեցի, բերդ ու խաչքար, կամուրջ ու ջրանցք... Այդ ամենի վրա կնիքված է հայ մարդու պատկեր-պատմությունը, որ չգողանան, չյուրացնեն, չտիրանան... Ախր Ղարաբաղի այսօրվա վեճը սարքովի է, ո՛չ հեթանոս ժամանակների փոշին է անվերադարձ մաղվել նրա վրա, ո՛չ անհետացել են քրիստոնյա Մեծ դարձի խորհուրդ-խորհրդանիշները, ո՛չ էլ իր պապենական աշխարհից հեռացել է դրա անաչառ վկան՝ իր հինավուրց հողի վրա ապրող ղարաբաղցին...:

Պարոնայք ընկերնե՛ր, բաց աչոք խոստովանեք, որ առաջնորդի մատի շարժումով Ղարաբաղը սկուտեղի վրա մատուցվեց Ադրբեջանին: Յոթանասուն տարի շարունակ Ղարաբաղում և Հայաստանում, նրա անձնվեր զավակները մարտնչեցին նույն երկրի բաժան մասերի բաղձալի միավորման համար: Այդ փաստը սովետական երկրի, նրա ստալինյան բռնապետության նախաշեմի առաջին ոճրագործությունն էր... Հիմա ժամն է եկել վերասրբագրելու բռնապետների կողմից թույլ տրված ճակատագրական սխալները...»: Թաքուլը բառ առ բառ փորձում էր վերհիշել գրող-հրապարակախոս Զորի Բալայանի ելույթի այս հատվածը: Նրա հրավառ դեմքը խավարի միջից ճառագեց ու եկավ: Թաքուլը բաղձալի պոռթկումով լցվեց և նույնքան երախտագիտությամբ հպարտացավ նրանով: Այդ նույն հուսավառ երանությամբ Թաքուլը գտավ նաև մյուսներին: Իր աչքերի առջև եկան, կանգնեցին վիթխարահասակ Իգոր Մուրադյանը, Հրանտն ու Վահանը, Վիտյան, Վարդանը, Սամվելը... Այս փոքրիկ ննջասենյակում, կարծես, օրվա իրադարձությունների հաշվետվությունն էր ամփոփում Թաքուլը: Նա հավատացած էր, որ հիմա իր նման արթուն են բոլոր ցուցարարները: Նրանք հույսեր են գումարում, իրարից ջոկջոկում են խավարն ու լույսը, որ վաղ առավոտից նոր լիցքերով ու թարմ ասելիքով մտնեն հրապարակ, ձգվեն դեպի Մատենադարան, որը քարե մատյաններից հառնող Աստվածաշնչի է նման, և, կարծես, այստեղից պիտի սահմանվի արդարության մշտարժեքը:

Մի պահ Թաքուլը հեռացավ անցնող օրվա բազմախորհուրդ խառնարանից, սսկվեց էլեկտրականացած մտքերի հարականչ հնոցում,

բծախնդրորեն ի մի բերեց ամեն-ամեն բան՝ նման այն զորավարին, որն արևածագին գնալու էր վերջին, վճռական ճակատամարտի: Համառորեն ինքն իրեն բռնեց պատասխանատվության այդ հարթակին, խաղաղվեց, հասկացավ, որ ինքն ընդամենը երիտասարդ մի զինվոր է, մեկ ձայն ու անբեկ պահանջ, մեկ խոսք ու երգ, գաղթական պապ-Մարկոսի միակ թոռը, որ առավոտից իրիկուն այնտեղ է՝ ազատատենչ գաղափարակիրների շարքերում: Եվ այստեղ՝ ննջարանի միամիտ տիրույթում, այլևս չուզեց լուսավոր մտքերը զարդարանք դարձնել խավարին: Վառեց լույսը, հագնվեց, մոտեցավ գրասեղանին, բացեց հուշատետրը, նախ կարդաց չորս տարի առաջ գրած անտիպ մի բանաստեղծություն, որն ինչքան էլ տխուր երանգ ուներ, բայց շատ էր սրտամոտ.

Չգիտեմ, արդյոք, ինչ եմ ես հիմա,
Արդյոք մոխրի մեջ անբեջ մի կրա՞կ,
Թե՞ կրակի մեջ հանգած մոխրակույտ:
Չգիտեմ, սիրտ ունարերգու՞ եմ,
Թե՞ վշտի երգիչ,
Կամ թե հոշոտված ուրտով մի մանուկ:
Գերեզմանին է մոտենում հոգիս,
Սիրտդ վշտիս հետ կռիվ է տալիս,
Ու նույնիսկ հիմա այն կյանքի ճամփին,
Չգիտեմ, հոգի՛ս, ի՞նչ եմ ես հիմա,
Արդյո՞ք մոխրի մեջ անբեջ մի մանուկ,
Թե՞ կրակի մեջ հանգած մոխրակույտ...

Գլուխն առավ ափերի մեջ, գրիչը վերցրեց, ուզեց ջնջել «գերեզմանին է մոտենում հոգիս» տողը, բայց արհամարհանքով նայեց բառերի շարքերին... «Մի՛ շտապիր վերջին հանգրվանին, Թաթու՛լ, դու դեռ նպատակ ունես, մի՛ շտապիր...»: Ներքին ձայներից խրտնեց Թաթուլը, ապա գրիչը սահեց. «Հող հայրենի, կորած ու բռնակցված հարազատ էրգիր, իմ պապերի Ղարս, իմ եղբայրների Արցախ, իմ հավատամքի Մուշ ու Սասուն, դեռ որքան ճամփա պիտի անցնենք, որ միասին վերադառնանք, ճյուղավորվենք Մասիսների հովանու տակ: Այժմ քո հերթն է, Արցախ աշխարհ, հիմա Թարթառի վիշտը պիտի կարողանանք մեղմել, տուն բերել Ղարաբաղի դրախտային դյութանքը՝ Շուշին ու Գանձասարը, Ամարասն ու Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին... «Սուրբ նշխար շան բերանում...»: Այսպես չի կարող լինել, սրբություններն անգին ու երկնատուրք են, դրանք դիվանագիտական նենգ դավերով չի կարելի դարանակալել, անջա-

տել, տանել: Խաչի ու խաչքարի սրբատեղերում ո՞վ է իրավունք տվել նամազի հունդեր ցանել, չէ՞ որ անիծված սերմերը ուրիշի հողում փուշ են արձակում: Արցախն իրավունք չունի փշածածկ լինել, նրա լեռներում ու հովիտներում հայկազուն բախտի փանդիռներ են հնչել. նախապապերի հայկյան բազկատարած ուժն է գոտևորվել այնտեղ, սխրանքների պատրաստ սերունդների երթն է ոսկեշղթա ձգվել, մինչդեռ մեր հարևանն անգամ նախափշրանք անուն չի ունեցել: Իսկ դու՛, վերի՛ն ատյան, Գերագույնի նախագահող խորհու՛րդ, կարդա՛ մատյանները հնոց և ճանաչի՛ր ժողովրդին մեծահամբավ, նրա հազարամյա ուղին մի՛ երկատիր, նրա տիեզերաց ճամփան և արքայական լեզուն «վայրի արջի ցեղերին դու մի խառնիր...»:

Հետո նա դանդաղ պոկվեց բազկաթոռից, վառեց գլանակը, մոտեցավ կիսաբաց պատուհանին: Քաղաքի լույսերը շատ չէին, բայց ձնծաղիկների պես ցանված էին անկանոն՝ մոտ ու հեռու, մեկ-մեկ ու փունջ-փունջ: Թաթուլը գիտեր, որ զայրույթն է ուժ տալիս չպառկելու, չքնելու. հոգնած էր, բայց այնքա՜ն-այնքա՜ն ուժ էր կուտակվել ներսում: Այդ դիմադրող ու դիմացկուն ակունքը նա շոշափում ու չէր գտնում, լռում էր, նրա բողոքի ձայնը չէր լսվում, կանչում էր, ոչ ոք չէր մոտենում: Բայց այդ ակունքը նստած էր իր մեջ, լուռ էր, բայց համր չէր, խոսում էր իր սրտի հետ, հոսում էր տաք արյան անմեկնելի քնարականությամբ... «Տեսնես իմ ո՞ր պապն է հիմա արթնացել, տոհմականչը նրանցից ո՞ւմ է նախապատվություն տվել այս ժամին ինձ հսկելու, որ չքնեմ, ինձ լսելու, որ ճշգրտված լինեմ, ինձ հուշելու, որ չմոռանամ ակունքների հիմնը...»: Նա հարազատ խոհերի հետ իջել էր լռության խորքերը, վերադարձի ճամփան չէր կորցրել, չէր մոլորվել հնօրյա լալկան լեգենդների զիգզագներում, կարողանում էր ակնթարթորեն ետ գալ, իրեն բռնել օրերի անդադրում շռինդի մեջ՝ Երևանում, արդարության շունչն ու ոգին, ճշմարտության մեռած մարմինը կենդանացնող մարդկանց կողքին, հրեշտակի նման իր պատկեր-պատմությունը փրկող հայկազուն սերնդի սլացքի մեջ:

Խաղաղ գիշերվա սյուքը պաղ թրթիռով սենյակ մտավ: Թաթուլը հաճելի շոյանք զգաց: Նա չէր զգացել, որ դռան բացվելուց հետո միջանցիկ քամին էր գրկել իր կիսաբաց կուրծքը:

- Թաթո՛ւլ...

- Դու դարձյալ չե՞ս քնել,- կտրուկ շուռ եկավ և փխրուն ժպտաց քրոջը:

- Դա ի՛մ հարցն է, ինչո՞ւ չես քնում, այդքան սպառվել կլինի՞,

վաղը ինչպե՞ս ես դիմանալու:

- Վաղն անցել է արդեն, քույրի՛կ, այսօրվա մասին խոսիր:

- Ես արդեն չգիտեմ, քեզ չեմ հասկանում, Թաթո՛ւլ, մի՞թե այսքան կարելի է ինքնամոռաց լինել:

- Սա դեռ սկիզբն է, Աստված գիտի, թե Մոսկվայի այդ որոշումը ինչ ճանապարհով կտանի այս ժողովրդին:

- Հետո՞...

- Հետո՞, դու չգիտես, որ ես այդ ժողովրդի մի մասնիկն եմ, և հիշիր նաև երդվյալը,- ժպտաց Թաթուլը, բռնեց քրոջ ձեռքը և խնդրեց, որ նա գնա:

- Իսկ դո՞ւ:

- Ես արդեն կքնեմ, փնտրում էի, թե ո՞ր պապս է այս գիշեր ինձ արթուն պահել, հիմա, երբ դու ներս մտար, հասկացա, որ իմ և քո Մարկոս պապն է ամբողջ գիշեր եղել իմ կողքին, տոհմականչը նրան է վստահել, դու գնա՛, հիմա արդեն կքնեմ:

- Հավատա՞մ,- գորովանքով պայծառացավ Ռուզանը:

- Իհարկե, պատճառ չունես կասկածելու:

- Բարի գիշեր:

- Բարի լույս, քույրի՛կ...

* * *

Անհանգիստ ու բախտորոշ տարվա տագնապներն արդեն շրջանցել էին աշունը: Փետրվարյան բուռն օրերից հետո անցել էր տասը ամիս, լարվածությունը թվացյալ մեղմվել էր, բայց ոգու վերընթացն ու պահանջի իսկությունը պահպանվել էին: Չկար մեկը, ում համար թանկ չլիներ ազգային խնդիրների իրականացումը: Երևանում գրեթե ոչ ոք տանը չէր. դրսում էին, փողոցներում ու հրապարակներում: Պարզ խնդիր ունեին բոլորը՝ տեր կանգնել ժողովրդական զանգվածների զարթոնքին, միանալ, միասնական լինել, հավաքական ուժով ներկայացնել համազգային ծրագիրը՝ թելադրված ճակատագրի աստեղային ժամի հրամանով: Փողոցում, տանը, աշխատավայրերում, լսարաններում ու դասարաններում փետրվարից դեկտեմբեր գլխավոր թեման Արցախի հարցն էր: Առանց հուշելու հետևողական էին դարձել բոլորը, առանց բացառության գիտեին երբ և որտեղ հավաքվել, տեղյակ էին փոքր ու մեծ որոշումներին: Առավել բծախնդիր էին դարձել երիտասարդները, արդեն անհնարին էր նրանց ապակողմնորոշելը:

1988-ի դեկտեմբերյան ցուրտն անգամ անկարող եղավ մթագ-

նել Շարժման տարեվկա պատկերը: Ձմռան այդ օրը Մայր բուհի պատմության լսարանը դարձյալ ակոսում էր գլխավոր թեման: Դասախոսները չէին խոսում ո՛չ վաղ անցյալից, ո՛չ էլ ուզում էին ապագայի մասին գուշակություններ անել: Կարևորն օրվա ձայնն էր, այդ ձայնի փոթորկուն սլացքների ուժը չկորցնելը, պահպանել մարդկային հոգիների ելման ալիքը, խտացնել շարքերը, սրտի շողերով փայփայել թունելից այն կողմ երևացող լույսը:

Իսկ դրսում մշուշ-առավոտը երկնքից առատ ձյուն էր բերում՝ անտեղյակ հող ու երկրի տնքոցներին: Այգը բացվել, ծվատում էր կորուսյալ ամպերի ճերմակ ցելերը, որոնց ցանցկեն հեռուներից իջնող փաթիլները պատկեր-պսակների թափանցիկ տեսիլքներով ծածկում էին աշխարհ կոչվածի մանրամասները: Թաթուլի հայացքը պատուհանից այն կողմ էր: Լսարանը լուռ էր, խոսում էր միայն մեկը՝ պատմության դասախոս Արտավազդ Դարբինյանը: Այսօր շատ ավելի էր հուզված նա. խոհերի ամփոփը Համազգային շարժման մեկ տարվա առանձին փուլերի վերլուծությունն էր, ինքնորոշվող Արցախի գերխնդիրը և այդ ճանապարհին արևերես ելած խոչընդոտները:

Թաթուլը հայացքը կտրեց ապակիներից այն կողմ իջվարող փաթիլներից, ակնապիշ ու ինքնամոռաց նայեց իր սիրելի դասախոսին: Այսօր նա շատ հուզախռիվ էր խոսում, որից լսարանն անսովոր ձգված էր: Բառերը կտրուկ էին, տաք, կարծես տիրական տարածք էր նա ցանկանում բացել, յուրովի մոտենալ յուրաքանչյուրին: Դարբինյանը միշտ էլ այդպես էր, ձգտում էր լսարանում արթնացնել ներգործության շերտը և գիտեր, որ այդ զգացողության առաջին արձագանքողը Թաթուլն է: Այսօր էլ երկրորդ՝ դասաժամը նույն ակոսով էր ընթանում: Եվ երբ դասամիջոցին հաշվված րոպեներ էին մնում, նկատելի ցնցվեցին լսարանում կողք կողքի դրված պահարանները, լուսամփոփը օրորվեց, ապակիները թեթև սուլոցից թմբկահարվեցին:

- Երկրաշարժ է,- հանգիստ ասաց Դարբինյանը,- չխառնվեք, խուճապի կարիք չկա, հանգիստ դուրս եկեք փողոց:

Որքան էլ հանգիստ ասվեց, բայց միջանցքներում միանգամից բարձրացավ ուսանողների աղմուկը, բոլորը վազելով դեպի ելքն էին գնում:

Համալսարանին հարող կենտրոնական և հարակից փողոցները մի քանի վայրկյանում դարձան մարդաշատ: Առանձնապես սարսափեցնող էր ժխորի վերածված ընդհանուր համապատկերը,

որովհետև տագնապը համառորեն չէր հեռանում:

Թաթուլն իջնում էր վերջին շարքերի հետ, զարմանալի հանգիստ էր, միջանցք էր բացում, որ վախից այլայլված աղջիկները որքան կարելի է առանց արգելքի հայտնվեին բակում: Նրան անհասկանալի և անծանոթ էր այն երկյուղը, որ նա տեսնում էր երիտասարդների աչքերում: Մի պահ միայն սթափվեց. «Ո՞ւր է Իրինան, բանասիրականում այսօր դաս կա՞ր, եկե՞լ էր նա, թե՞ դպրոցում գործնական դասերի էր գնացել...»: Խառը մտքերով նա հայտնվեց բակում: «Երկրաշարժը գյուղի վրայով էլ է անցել, տեսնես ի՞նչ կա Արեգում, պիտի զանգահարել Թալին...»: Որոշ ժամանակ անց դրսում խճճված մեքենաների խցիկներում ծղրտացող ռադիոընդունիչների միջոցով բակում խռնվածներն իմացան, որ մեծ ուժգնության երկրաշարժ է տեղի ունեցել:

Աննկարագրելի իրարանցում էր բակերում ու փողոցներում հավաքված մարդկանց շարքերում: Հեղեղի պես կարծես քանդվեց ամբարտակը, վազելով այս ու այն կողմ հայտնվեցին ելք փնտրող խմբերը՝ տղաներ, աղջիկներ, մեծահասակներ: Ամենուրեք ճամփա փախցնող ավտոմեքենաներ էին, խցկված և փակուղու հանդիպած ավտոբուսներ, տրամվայներ: Ռոպեների ընթացքում խախտվեց ամեն ինչ, հունից դուրս եկավ քաղաքային կյանքի կողմնորոշիչ զարկերակը, աղմուկն ու աղաղակը տիրաբար իջան, գերեվարեցին քաղաքը, մարդկանց, բանականության տարածքն ու հոգիների բարձունքը:

Ոչ ոք չգիտեր, միանգամից չէր կողմնորոշվում՝ ի՞նչ աներ, ո՞ւր գնար, ո՞ւմ օգներ:

Շիրակի դաշտի, երկրի հյուսիսի պատվիրակ-ուսանողները հայտնվել էին ծանր ու խղճալի վիճակում: Աստված գիտի, թե ինչ էր անցնում նրանց մտքով: Աղջիկները հեկեկում էին, խնդրում դասախոսներին, որ նրանք կտրուկ որևէ բան ձեռնարկեն՝ դուրս գալու ողբերգություն հուշող այս անորոշությունից: Սակայն անուժ էին բոլորը: Աննախադեպ այս հարվածից, որի հետևանքները դեռ անհայտ էին, ոչ ոք ուշքի չէր գալիս: Համենայնդեպս ճիչ-աղմուկներին, կանչ-օգնություններին ակտիվ արձագանքող չկար: Թվում էր՝ ամեն մեկը պետք է իր գլխի ճարը տեսներ:

Թաթուլը վազեց մերձակա կապի հանգույց: Ներսում ասեղ գցելու տեղ չկար: Տասի փոխարեն հարյուր և ավելի մարդիկ էին խցկվել այնտեղ: Կապավոր աղջիկը կորել էր քրտնքի մեջ, սրանրան էր պատասխանում, հանգստացնում մյուսներին, փորձում էր արագացնել կապը, սակայն չէր հասցնում: Թաթուլը նկատեց, որ

առջևում թալինցի Մակիչն է, հասկացրեց նրան, որ եթե կապ լինի, իմանա ընդհանուր վիճակի մասին:

- Հարգելինե՛րս, հինգ րոպեից՝ ուղիղ ժամը 12-ին, կլինի կառավարական հաղորդագրություն,- հետևի դռների մեջ հայտնվեց միջահասակ, գանգուր մազերով, լայն դեմքով մի տղամարդ: Նրա կարգադրությամբ բարձրախոսը դուրս բերվեց, և, իրոք, հայտարարված ժամին տեղեկացվեց երկրաշարժի աղետալի վնասների և դրա ընդգրկած գոտիների մասին: Հիմնականում ուժի մեջ մնացին նախկին հաղորդագրության փաստերը տուժած տեղավայրերի մասին՝ այս անգամ նշելով զոհերի մեծ թվաքանակի դառը ճշմարտությունը:

Թաթուլը Արմենի հետ առանձնացան, նրանց մոտեցան նաև Մակիչը, Տիգրանն ու Մանվելը: Բոլորի տրամադրությունները փշրված էին, այնպիսի վիճակ էր ստեղծվել, երբ ընդհանուր աղետի ծանր վարագույրի հետևում դեռևս չէր երևում կոնկրետը, ովքե՞ր, որքա՞ն, որտե՞ղ: Կորուստների մասին ցնցող լուրերը սահմռկեցուցիչ էին, բայց ժամանակ էր պահանջվում պարզելու եղածի ամբողջական պատկերը: Սարսափելին առաջին ժամերի անհերքելի և ծանր բեռն էր, հայրենի եզերքներից, ծննդավայրերից հեռու գտնվողների հոգեվիճակը: Ոչնչով հնարավոր չէր մեղմել նրանց: Փողոցում հայտնված բազմությունը արագ նոսրացավ, ամեն մեկը շտապում էր իր մորմոքի հետքերով:

Համալսարանի դահլիճում հավաքվեցին ուսանողներ ու դասախոսներ: Կարճ տևեց զրույցը: Պետք էր օգնել դժբախտության մեջ հայտնվածներին, նրանց հետ առնչվող ուսանող ընկերներին ու ընկերուհիներին ուղեկցել, օգնել, մնալ այնտեղ, ուր անհրաժեշտ էր իրենց ներկայությունը:

Այն խումբը, որի մեջ ընդգրկվեց Թաթուլը, պիտի մեկներ Լենինական: Թաթուլը շտապեց բանասիրական ֆակուլտետի բաժանմունք, այստեղ հանդիպեց Իրինային: Աղջիկը գունատ էր, աչքերում վախ կար, գրեթե դողում էր: Թաթուլը գրկեց նրան, հուսադրող խոսքեր ասաց:

- Այս ի՞նչ կատարվեց, Թաթո՛ւլ,- արցունքները սրբելով՝ ասաց աղջիկը:

- Հայի ճակատագիր է, մի քիչ, կարծես, ուժեղացանք, շտկեցինք մեջքներս, ազգովին ոտքի կանգնեցինք, որ պատմության դաժան սխալը ուղղենք, և ահա այս դժբախտությունը,- մռնչաց Թաթուլը:

- Հարվածը հո չի՞ հասել Թալին, Արեգ գյուղդ նույնպես բարձունքների վրա է:

- Ասում են՝ չի հասել, զանգահարել, իմացել ենք, դա սփոփիչ է, բայց ողբալին այն է, որ արդեն խոսում են հյուսիսային գոտում հազարավոր զոհվածների մասին:

Ապա անխոս դուրս եկան, անցան դիմացի զբոսայգին, ոչ ոք չկար այստեղ: Թաթուլը ձեռքով մաքրեց նստարանին իջած բարակ ձյունը, նստեցին:

- Մի քանի րոպե խաղաղվենք, հասկանանք տեղի ունեցածը, որոշենք մեր անելիքը,- մտախոհ ասաց Թաթուլը և ամուր սեղմեց աղջկա ձեռքը,- պիտի շտապել այնտեղ, ժամանակը քիչ է:

- Ո՞ւր պիտի գնաս,- դողաց Իրինայի ձայնը:

- Որոշված է՝ Լենինական և հարակից գյուղեր:

- Ե՞րբ...

- Վաղը առավոտյան մեր խմբին հատկացված ավտոբուսը մեկնելու է համալսարանի դռնից,- Թաթուլը նյարդայնացած վառեց գլանակը,- եթե կուզես իմանալ, ճիշտ կլիներ, որ այսօր մեկնեինք:

- Երկա՞ր պետք է մնաք այնտեղ,- Իրինան ոտքի կանգնեց:

- Իրադրությունը կթելադրի, առայժմ ոչինչ չեմ կարող ասել,- կտրուկ պատասխանեց նա և աղջկա ձեռքը բռնած՝ դանդաղ քայլեց,- Իրինա՛, «Ղարս» երգչախմբի անդամներին անպայման գտիր, հույս տուր իրենց, Զոյային՝ մեր խմբի մենակատարին, իր հարազատների միջոցով գյուղ ուղարկիր, դպրոցի իր դասերից չուշանա: Մի՛ վհատվեք, կգամ, կշարունակենք, ժողովրդական երգարվեստի փառատոնին երևի կմասնակցենք:

- Ժողովուրդն արդեն այդ տրամադրությունը չունի, Թաթո՛ւլ:

- Ժողովուրդը միշտ իր խորքերից Միերի պես հառնելու ուժ ունի, արի նրա գնահատականը ես ու դու չտանք,- աննշան ժպտաց Թաթուլը:

Իրինան, որ հոգու ամբողջ թելերով կապված էր սիրած տղայի հետ, մորմոքների թափանցիկ շերտերից փորձեց ձերբազատվել, չստացվեց, միայն տաք խանդաղատանքը ցոլաց աչքերում, և նա սիրառատ գրկեց Թաթուլի ուսը:

...Լենինական գնացող ավտոբուսը շրջապատել էին ուսանողներ, դասախոսներ: Փրկարար ջոկատին ճանապարհելու էին եկել նաև խմբի անդամների հարազատները: Թաթուլին հրաժեշտ տալու համար այստեղ էին քույրը՝ Ռուզաննան, և իր լուսավոր զգացումների վերջին ամիսների հայտնությունը՝ Իրինան: Ավտոբուսը երկար սպասեցնել չտվեց: Խմբի ղեկավարը նշան արեց շարժվելու: Թաթուլը ժպտաց Ռուզաննային և Իրինային, մի քանի սփոփիչ բառեր ասաց,

ապա արագ բարձրացավ և տեղավորվեց առաջին նստարանին՝ ընկերոջ՝ Արմենի կողքին: Քաղաքից դուրս՝ Աշտարակ ձգվող մայրուղու աջ ու ձախ կողմերում, թեթև նստել էր գիշերվա ձյունը: Այն ավելի առատ էր Թալին-Մարալիկ մատույցներում, դաշտ ու ձոր պատված էր ձյան հաստ շերտերով:

...Շիրակի սարահարթն այսքան դժգույն, այսպես մոխրացած ու անծուխ չէր եղել: Այս տարածքներում երկիրը ցնցվել էր խորքերից, հառնել ավերիչ ուժով՝ իր ճանապարհին գլխիվայր շուռ տալով ամեն ինչ: Տղաների առջև միանգամից սոսկալի տեսարաններով բացվեց Լենինական քաղաքը: Թաթուլը ահեղ զարմանքից գունատվեց, աչքերը լցվեցին արցունքով: Նա քարացավ՝ ճիչը կոկորդում, ձեռքերը կառչած մնացին ավտոբուսի ելքի դռանը: Թաթուլի հայացքը փլված էր, ինչպես փողոցների աջ ու ձախ տներն ու շինությունները: Ալեկոծվող իր ներսում նա խորությամբ գրանցեց իր երկրաշարժը, որի բեռան տակ դանդաղ փուլ եկավ, որոտաց վառման հնոցի պես և ժայթքեց ցավի խուլ մորմոքներից: Թաթուլը զգում էր, որ չի դիմանում, կծկվել էր հոգին, հեղձուկ էր բարձրանում սրտից: Ու երբ ավտոբուսն աննշան սահեց ու կանգ առավ փլված հինգ հարկանի բնակելի շենքի դիմաց, տղաներն ակնթարթորեն դուրս թռան: Նրանց դիմավորեցին մի քանի տղամարդ, որոնք երեկվանից ուշքի չէին գալիս: Մոտեցան նաև մի խումբ կանայք, որոնք, ձեռքերը թափահարելով կանչում էին աղիողորմ, օգնություն խնդրում: Այս շենքից հրաշքով փրկված բնակիչներն էին: Նրանցից հարազատներ կային փլատակների տակ: Հույսի վերջին ճիչով նրանք աղերսում էին: Ուսանողական խումբը միանգամից անցավ գործի: Փոքրիկ ամբարձիչը պողպատե շերեփով փորձում էր վեր բարձրացնել, շուռ տալ երկաթ-բետոնյա ծանր սալիկները, թվում էր՝ անմեղ նահատակների շիրմատան ծածկն էր մի կողմ տանում, որովհետև ամեն շարժումին ակնապիշ հետևում էին հարազատները, լարված սպասում, թե ո՞վ է երևալու, մեռա՞ծ է, թե՞ վիրավոր: Չէ՞ որ արդեն քսանչորս ժամ մահվան լռությանը ակամա զոհ դարձած տասնյակ մարդիկ փլատակների տակից կենդանության նշան ցույց չէին տալիս: Ո՛չ ձայն, ո՛չ շարժում, ամեն ինչ խորքերում էր, հսկա կույտերի տակ, անհայտ:

Թաթուլին և իր ընկերներին վիճակվեց զարմանալի արագ ու կտրուկ ներքաշվել աննախադեպ մի հորձանուտ, որտեղ, կարծես, նրանց այսպես էին սպասում: Քսան ուսանող՝ անփորձ, բայց անվհատ ու աներկյուղ երիտասարդ, ինքնակամ ստանձնեցին բնա-

կելի շենքի վթարային պատերի քարերը մի կողմ տանել, ամբարձիչի պողպատե ճոպանները ամրացնել հողաշերտերի տակ ծածկված բետոնե ամրակներին, սալերին, կտրել դրանք իրար կապող պողպատե հաստ ամրանները: Ամեն անգամ, երբ ամբարձիչը հեռացնում էր ծանր կառուցվածքները՝ ոտքերի տակ բացելով կասկածելի փոսորակներ, շունչները պահած՝ լռում էին բոլորը: Ապրող կանչ էին փնտրում կամ աղերսող օգնություն: Գրեթե մի ամբողջ գիշեր նրանք այսպես շարունակեցին փրկարար աշխատանքները: Երևանից եկած տղաներից չէին հեռանում կործանված շենքի այն բնակիչները, ովքեր դեկտեմբերի 7-ի վաղ առավոտյան էին տնից դուրս եկել: Նրանք փրկվել էին, սակայն ամենևին հաշտ չէին փրկության այդ գաղափարի հետ: Ողբում էին, միաժամանակ բարձրաձայն կանչում կորած, լուռ ու անհետացած հարազատներին, հետո մի պահ սկսվում՝ ձգված պահելով ներկաներին:

Թաթուլի քրտինքը ճակատից իջել, ողողում էր մարմինը, և դրա համար նա ոչ մի վայրկյան չէր կանգնում, որ չսառչի: Նրա աչքերի առջև մի ուրիշ, աննկարագրելի տեսարան էր, մղձավանջ: Իսկ Շիրակի սարահարթում դեկտեմբերյան գիշերվա ցուրտը դաժանորեն ուժգնանում էր: Թարմ իջած ձյունը, թեթև քամու բերանն ընկած, հողից կտրվում, խռովյալ ճախրում էր օդում, կարծես ուզում էր հեռանալ, կորչել այնտեղ, որտեղից խաղաղ ցած էր իջել: Հանկարծ կանանց ճիչը ծվատեց ցուրտն ու խավարը: Հերթական բետոնե իրանը հեռացնելիս խարույկի բոցկլտուն կրակների շողքի տակ նկատվեցին իրար խաչված անկենդան մարմիններ: Իսկ խմբի ղեկավարը կարծես ձայն էր լսել: Նա գրեթե ճչաց, որ լռեն շրջապատում, իսկ ամբարձիչի մեխանիկն անմիջապես հանգցրեց շարժիչը:

Եվ ո՞վ հրաշք, դիակների տակից լսվում էր նորածին երեխայի նվաղուն հեծկլտանքը: Մի կին, որ չոքել էր սալիկներին, այնպես հոգեխռիվ ճչաց, որ անհնարին էր անտարբեր մնալ, չփլվել ներսից... Տղաները մի քանի րոպեում հանեցին զոհվածներին, սակայն մանկան ձայնը ավելի խորքից էր լսվում: Թաթուլն առաջարկեց ձեռք չտալ կամրջակի պես ձգված բետոնե սյանը, կողքից զգուշությամբ մաքրել, հնարավորինս անվտանգ դարձնելու Աստծո կամքով ողջ մնացած երեխայի կյանքը: Պահանջվեց ոչ պակաս մեկ ժամ, մինչև ստեղծված դժոխքի դռները կարողացան բացել: Ուս ուսի կպած բետոնե հսկա իրանների տակ շուռ եկած օրորոցը ճզմել էր դեռատի մորը, որի ձեռքը մեկնված էր դեպի իր մանչուկը: Թաթուլը ցնցվեց, ողնաշարով սարսուռ անցավ, բայց սրտապնդված սողաց

առաջ: Կողքից տղաները բռնեցին նրա ոտքերը, որ Թաթուլը հավասարակշռությունը չկորցներ: Եվ երբ նա փոքրիկ լապտերը վառեց, պարզապես կայծակնահար եղավ, աչքերը մի պահ փակեց, բայց հասկացավ, որ իրողության դիմաց աչք փակելով՝ ոչինչ չես անի: Փշրված օրոցքի երկաթյա ճաղերի միջով անցած ու քարացած մոր ձեռքը փրկել էր մանկանը: Չորս-հինգ ամսական մանչուկը շուրթերը քսում էր մոր սառած մատներին, ասես կյանք ու լույս էր խնդրում նրանից:

Թաթուլը սրտի խորքերում ծանր տարավ այս սրտաճմլիկ տեսարանը, սակայն ակնթարթորեն սթափվեց, իր առջև կենդանի էակի աղերսանքն էր: Նա զգուշությամբ մանկանը փաթաթեց գզգզված վերմակի մեջ, շուռ եկավ, մի ձեռքով կառչեց առաստաղ թվացող սալիկից, մյուսով երեխային մեկնեց իր գլխավերևում ավելի մոտ կանգնած ընկերոջը՝ Արմենին:

Երեխան փրկված էր...

Կեսգիշերից հետո, երբ այստեղ իշխողը համատարած լռությունն էր, խմբի ղեկավարը երեքժամյա հանգիստ տվեց: Տղաները բարձրացան ավտոբուս, փլվեցին պաղ բազկաթոռներին՝ հոգնած էին, սառած ու սահմռկած: Թաթուլն ուզում էր որպե առաջ փակել աչքերը, որ հեռանար, անդարձ հիշողությամբ ծածկեր այն ցնցող տեսարանը, որի տխուր վկան եղավ ինքը: Ավտոբուսի մութ ծածկի տակ անծավալ ողբերգության անմոռաց մանրամասները կառչել էին նրա կոկորդից: Մանկան կապույտ աչքերը, մեռած մոր մատներից հույս քամող նրա անմեղ շրթունքների անանուն անեծքները, հարատանջ մորմոքների մղկտուկը կեղեքում էին Թաթուլի՝ առանց այն էլ փրփրադեզ, չարչրկվող և ահեղագոչ հոգին: Իսկ շուրջը անտարբեր գիշեր էր, մութ, դեկտեմբերյան ձմեռ, սարահարթերում գլխիվայր շուռ եկած շեներ, շենքեր: Այստեղ ամեն ինչ դարձել էր համատարած շիրմատուն, սեփական տները՝ գերեզմանոց: Երկնքի տակ փշրված էին արևոտ ու տաք բոլոր երազանքները, խոշտանգված էին օրն ու օրորը, շուրջը շվարած աղոթք էր, գերեվարված պատարագ ու Աստված: Թաթուլը բանտված էր ինքնախռիվ խոհերի, խզարված կանչ-հույսերի այս ծմակուտում: Լուռ էր, հեկեկացող ներսում նա լույս էր փնտրում, բայց վիշտը տիեզերամութ բեռ էր, բզկտող ու բարբարոս: Երկրաշարժերի մասին նա լսել էր Գուլո տատից, բայց այսպես մոտիկից և այսքան ավերիչ հետևանքներով չէր պատկերացրել: «Բնությունը ամենավճռական պահին խփեց դավադրաբար, թիկունքից, երբ ալեկոծ ու արթուն ժողովրդի համահավաք ոգին

սևեռված էր մեծ նպատակի: Ճակատագրի այսպիսի դաժան խաղ ո՞վ կսպասեր, ո՞վ կհավատար, որ հաշված վայրկյանների ընթացքում ահեղ ցնցումների պատճառով երկրի ծաղկուն ու հզոր եզերքները կարող էին վերածվել ավերակների: Ո՞վ կմտածեր, որ երկիրը շեն պահող հազարավոր մարդիկ՝ ծեր ու երիտասարդ, մայրեր ու մանուկներ, ակնթարթորեն կկորցնեին իրենց բաժին լույսը, նաև բյուր ու բազում ձիրքեր, կենսատու շշուկ-ձայներ, ընծյալ պատկերներ՝ հավատի, սիրո և հայտնության...»:

Թաթուլը խռովյալ հառաչեց, փորձեց ավելի հարմարվել սառչող աթոռին: Դրսում ճերմակ մշուշ էր, պաղ, անտարբեր սարալանջերին դարձյալ ձյուն էր մաղվում: Թաթուլին այնպես պատկերացավ՝ ընկերների հետ հայտնվել էր մի օդապարիկում, որը հեռանում էր մի երկրից, որի բորբոքված ընդերքը ազատության ելք էր փնտրում, իսկ նրա արդարատենչ զավակներն իրենց նախորդներին պարտադրված սխալն էին ուզում շտկել: «Վայրկյանների ընթացքում այս ի՞նչ կատարվեց, երազայինը հավքի պես թռա՞վ... Մի՞թե այդքան փլված ճակատագրով ապրած ժողովուրդը արժանի էր նաև այս տեսակ դաժան փորձության...»: Թաթուլն իրեն կեղեքում էր ներսից, նա հոգու խորքերում էր զգում, որ այս փոքր ու մեծ լեռնաշխարհը զարկվել էր նախախնամության անարդար կշեռքին: Պատմության քառուղիներում օտարները որքան որ ծռել ու խոտորել էին լինելիության նավը, այնուամենայնիվ ժողովուրդը պահել էր շտկվելու, ուղղվելու բնատուր տաղանդը: Սակայն դեկտեմբերյան աղետը հեղեղի նման ժայթքել ընդերքներից, խոշտանգելով պարուրել էր լեռները, ձորերն ու կիրճերը, երևացող ու արդեն չերևացող տները, խոշտանգված հողը, առուն, ճամփան, խոզան արտերը, նաև օգնության եկած այս ավտոբուսը՝ ներսում վիրավոր ու վշտացած երիտասարդներ, ճակատագրի մեղկ ճիչով այստեղ հասած ուսանող-փրկարարներ:

Իսկ գիշերվա ճերմակ գալարքը, քամու թևերին գժված, խուժում էր ձայնարկու: Թվում էր՝ էլի պակաս տեղ ունի, շարունակում էր մելամաղձոտ իր պտույտները՝ ոտքերի տակ տրորելով հանգիստն ու հնազանդը:

Թաթուլը գիտեր, որ ավտոբուսի ցածրիկ հարկի տակ իր նման անհանգիստ էին բոլորը: Գիտեր նաև, որ ոչ ոք քնած չէ, և հասկանում էր, թե ինչու չէին խոսում: Պարզապես չէին համարձակվում իրենց տեսածը վերծանել, բառերը ցամաքել էին, բարուրվել վշտի խանձարուրում, իսկ խաբուսիկ լռությունը, հողմաղացի պես օրոր-

վելով, համբերության կուրծքն էր հոշոտում:

...Աղետյալ բնակավայրերում լուսանում էր մեծ երկրաշարժին հաջորդած երրորդ առավոտը: Ուսանող-փրկարարների կամավոր ջոկատը դրանից հետո հասցրեց երկու օր աշխատել Նալբանդ գյուղում, ապա նորից վերադառնալ Լենինական: Կիսափլատակ շենքի ներքնահարկում, որը նախկինում քաղաքային առևտրական մի կազմակերպության էր պատկանում, հավաքել էին 5-10 տարեկան շուրջ ութսուն երեխա: Նրանք, ինչպես պարզվեց, փրկվել էին տարբեր պայմաններում՝ կորցնելով մայր կամ հայր: Ուսանողական խմբի ներկայությունից նրանք մի փոքր քաջալերվեցին, զգաստացան: Թաթուլը մի քանիսի հետ փորձեց խոսքեր փոխանակել, ուզում էր նրանց խառը մտքերը ցրել, հանգստացնել, ուժ տալ: Իսկապես երեխաների աչքերում բոցկլտացին հույսի շողեր, նրանք եկան, խառը շարքերով շրջապատեցին տղաներին: Զգացվում էր, որ երեխաներն ուզում էին հեռանալ այս «մահվան օղակից», վախեցած էին, խեղճ ու ցամաքած:

- Ուղարկենք երեխաներին Երևան,- առաջարկեց Թաթուլը,- թող կտրվեն այս մղձավանջից:

- Ինչպե՞ս, ո՞ւմ միջոցով,- փորձեց ճշգրտել Արմենը:

- Եվ հետո ո՞վ պետք է ընդունի նրանց,- ընկերոջ խոսքը շարունակեց Գագիկը:

Թաթուլը մեղմ ժպտաց և դարձավ դեպի ամբողջ խումբը:

- Մենք բոլորս էլ քաղաքում հարազատներ ունենք և ապրելու հնարավորություններ: Յուրաքանչյուրս չորս-հինգ երեխայի խնամքը կստանձնենք, և ըստ հասցեի՝ մեքենաները կտանեն նրանց: Երբ վերադառնանք, այն ժամանակ կորոշենք այս թշվառների հետագա ճակատագիրը:

Ոչ ոք հակառակը չպնդեց, համաձայնեցին, նախապատրաստած ցուցակների պատճենը տրվեց քաղաքային իշխանություններին:

Կեսգիշերն անց էր, ուսանող-փրկարարները խորը քնել էին: Նրանք օրվա մղձավանջի և հոգնության ծանր բեռան տակ էին: Թաթուլը զգուշությամբ դուրս եկավ մութ սենյակից: Քունը չէր տանում, դարձյալ խառը մտքերի խաչմերուկում էր՝ ինքնախույս ու անհաշտ: Իսկ գիշերն աստղազարդ էր, պաղ, անեզրական: Ձյան ու լուսնի շողքը ծուլվել էր իրար, այնպես համատարած մերկությամբ տարածվել, կարծես, ճերմակից բացի՝ այլ գույն չկար ու չէր եղել այս հողագնդին: Անանուն, մեծ ու անչափելի մերկությունը սողոսկեց Թաթուլի սիրտը, ճմլեց նրա անքուն խոհերի խաբրի-

կը: Աչքերն արցունքով լցվեցին, չէ՞, ցրտից չէր, ձայնակունքների փշրված ստեղների հառաչանքն էր ելք փնտրում: Վտարանդի ճիչը սրտի պատուհանն էր փշրում, և Թաթուլը ուզում էր նրան մի բան հարցնել: Բայց հարցնելու ի՞նչ ուներ, երբ որ չորս կողմն անհերքելի պատասխան էր, լեզու առած հին, անդարմանելի ցավերի բնորդներ, մերկ ու միագույն, խոցված, խեղված ու խնկակարոտ փառահեղություն: Թաթուլը հեռու չգնաց, թիկունքը հենած դողդողացող պատին՝ կանգնեց: Ո՞վ գիտի՝ որերորդ անգամ նա այս ըմբռնելի իրողության մերկացած սուրը մխրճեց երկրածին ցավի խորքը, խառնեց, բզկտեց նաև աշխարհի ցավը՝ գիտենալով, որ ոչինչ չի փոխվի: Այսքան մոտիկից բոցկլտուն աստղերի տակ ինքը չէր տեսել սարահարթերի որբությունը, այս իմաստուն ու անհայտ աշխարհի խեղճությունը: Թիկունքում փլված ու խոշտանգված Լենինականն էր՝ հին Գյումրին: Փրկարար ջոկատները, որ եկել էին ծանոթ ու անծանոթ աշխարհներից այս ուշ ժամին, դեռ դադար չէին տվել, լսվում էին մարդկանց, հռնդացող մեքենաների ձայները: «Որոնողները քնած չեն, իսկ քանի՞սը հավերժական քնով են հեռացել, փլված պատերի տակ որքան մասունք ու մտերմություն, զգայապաշտ ջերմության գերագույն աղոթքներ են քարացել: Ո՞վ կարող է հաշվել, թե ի՞նչ հոգեդարձով գնացին նրանք՝ ծնված ու չծնված մանուկները, մեծ ու փոքր: Նրանց հետ՝ երկիր ու երկինք, բերնեբերան բարիք ու տենչ... Չէ՛, ո՛չ ոք, նույնիսկ Աստված չի կարող հաշվել իր տարածը...»: Թաթուլն ակամայից նայեց երկնի հեռուն: Անսահմանության ծոցերում ճերմակ հրդեհ էր, հեռահմա փոթորիկ: Լուսինը գլխատված կախվել էր ամպի փեշերից: Թաթուլը փակեց աչքերը, որ չտեսնի նրա շպարված դեմքը: Տղաներից մեկը դուրս եկավ:

- Թաթո՛ւլ, չմրսեցի՞ր, կես ժամ է՝ դրսում ես,- սուրենավանցի Արմենն էր:

- Քայլում էի, ցուրտ չէ,- նրա ձայնը խզված էր, դեմքը՝ մռայլ: Ընկերոջ աչքից չվրիպեց, որ Թաթուլը շարժվում էր ծանր, օրորվելով, ուսերին կարծես հսկայական բեռ էին դրել:

- Հիվա՞նդ ես...

- Աշխարհն է հիվանդ,- հեգնանքի շաղախ կար Թաթուլի շնչի մեջ: Արմենը չուզեց փորփրել, խորանալ: Առանց այն էլ անցնող օրվա տասը ժամը այս վիճակում էին եղել ուսանող տղաները: Նա զարմանքի պայծառ տուրքով նայեց ընկերոջը, նույն տարիքի էին իրենք, բայց ուրիշ խառնվածքի և համարձակության յուրատե-

սակ շող կար Թաքուլի աչքերում: Նրա վճռականությունը դարձյալ ընդգծվեց այստեղ, ուր նրա կռիվը ծանրածանր կործանված փլատակների հետ էր՝ հանուն նրանց, ովքեր չէին կորցրել կյանքի հույսը: Արմենը մի պահ կարծես հաշիվ տվեց իրեն. եթե ջահել, անփորձ այս տղաների խմբում չլիներ Թաքուլը, ի՞նչ պիտի ձեռնարկեին, ո՞վ պետք է նախաձեռներ, ձգվեր անհուսալի ու շատ վտանգավոր դարձած, նույնիսկ գլխիվայր շուռ եկած այս շինությունների մահասարսուռ ծածկոցի տակ.

- Թաքո՛ւլ,- հոգու խորքերից ծփաց Արմենը, ուզում էր ինչ-որ բան ասել:

- Անաղմուկ ներս մտնենք, տղաները չարթնանան, մեղք են, շատ տանջվեցին այսօր,- կարծես կռահելով ընկերոջը՝ Թաքուլն առաջինը ներս գնաց: Ալյումինե ափսեի մեջ մորմոքում էր կերոնը: Նրա վերջնաշողին Թաքուլը նայեց խղճահարությամբ և անաղմուկ պառկեց: Արմենը հետևեց նրա օրինակին: Չէին խոսում և չքնեցին այնքան ժամանակ, մինչև ափսեի մեջ ավարտվեց մոմախեժի ճերմակ արցունքալացը: Իսկ հետո թափանցիկ մութ էր, մռայլ պատկերների խուռներամ շարք: Ներսում ու դրսում գրեթե նույն ջերմությունն էր, նույն ցավը: Թաքուլը խորը հառաչեց, մտահոգության բազմալար շերտերը դարձյալ բախվեցին իրար: Նրան այնպես թվաց, որ ամեն բանի, նաև սեփական անձի, կարևոր ու բացառիկ երևույթների հանդեպ ափսոսանքը հունից դուրս էր եկել՝ կորցնելով իր տեսակն ու բնույթը: Աղետի գոտում վիրավոր հոգիները փրկելու, կարծես, այլ հնարք չկար. աներևույթ աստվածությունը փլվել էր ամեն մեկի ներսում՝ աղոթք-անեծքների երամը պատսպարելով բզկտված մարմինների թափանցիկ խորքերում: Այս դժոխային տեսիլքներից, աննախադեպ ու սահմռկեցուցիչ տեսարաններից ցնցված՝ տղաները սսկվել, կողպվել էին, սուզվել երևակայական մի ուրիշ աշխարհ: Թաքուլը մթության շերտերը շուռ տվեց, մտաբերեց ընկերների խամրած դեմքերը, հուսո ծվեններ ու անտերունչ շողեր որոնող նրանց աչքերը, այս օրերին տեսած-ապրածի ահեղ ցնցումները, մարած-մեռածի սառցապատ սքեմը: Այս ամենով հիմա նրանք շղթայված էին չոր թախտերին, քարանձավ թվացող մութ պատերի ներսում լուռ ու ճչացող ցավեր էին բերել-կիտել և անգոց աչքերով, իրարից թաքուն մորմոք էին մանում, մատյանում օրորուն սգերգ:

Սա էր օրվա, գիշեր-ցերեկվա բանաձևը, որից դուրս այլ հաշվարկ ու թվաբանություն չկային: Այս խելահեղ գիշերից հետո՝ առավոտյան, նրանց փոխարինելու պիտի գային: Տղաները պիտի

ազատվեին մեկ շաբաթ տևած ահեղ մղձավանջից: Իրենց տեսած-զգացածի գեհենական թուրմը բավարար էր մի քանի տարվա տագնապ-տառապանքներ հետապնդող ուրվականներին: Այդ օրերի արյունահողմն ու տիեզերական տրտունջը ներծծվել էին տղաների հոգու խորքերը, նրանց համար, կարծես, անդորրության այլ սահման ու տարածք չէին մնացել:

...Վաղ առավոտյան ուսանողներին հատկացված ավտոբուսը Շիրակի սարահարթերից իջավ պարտվածի դառնությամբ: Ամենուրեք, ասես, խոնարհ դրոշներ էին, սևահեղձ էր համատարած ճերմակը, իսկ նոր ժամանած երկնահամ ձյունը նրանց աչքերի դեմ մոխրագույն էր հագել: Մահասարսուռ սուգը ալեվետում էր ցայգերի փխրուն տաղը: Լուսաբացը ծվատում էր իր հերքը, արյան ծամերը գզգզվում էին ոտքերի տակ, փաթաթվում հեռացող անիվներին՝ ավետելով մեծ երկրաշարժի ողբացյալ ութերորդ օրը: Տարտամ գույները փախչում, անէանում էին թիկունքում, ուր այս տղաները թողել էին իրենց ամենադաժան շաբաթը: Նրանց խոսքը, ասելիքը, պատկեր-հիշողությունները խճճված էին այդ նույն շաբաթվա ցանկում: Ամեն մեկն իր երկրաշարժն էր տանում և իր տեսածի ամենաթանձր թախծությունը: Տխուր էին ու զարկված, բորբոքված էին նրանց սիրանվեր սրտերը, սակայն պետք էր վերագտնել հույսի այգը, չհեռանալ կյանքից, ճակատագրից, փորձել ամենադժվարին պայմանից դուրս գալ, ինչ-որ կարևոր բան փրկել: Թաթուլն այսպես էր բերում իր բաժին ցավը, ցավի հատակում մորմոքի այն տեսակը, որի շերտերը շղթայված էին դեկտեմբերյան օրերին, այնտեղ՝ Շիրակի ճերմակ ծոցերում դարանակալ հողմապտույտներին: Նա ուզում էր տուն հասնել այս ապրումներից մի քիչ թեթևացած, գիտեր Ռուզանի հոգեվիճակը, պիտի այնքան հարցներ, մինչև հավասարվեր իրեն: Թաթուլը հասկանում էր քրոջը, նա ընդգծված հարցասեր չէր, պարզապես Ռուզանը ձգտում էր եղբոր հոգու բեռը թեթևացնել, նրան դուրս բերել ներքին կեղեքումներից: Այդպես էր Շարժման առաջին օրերից, տան ու դրսի հակասական կնճիռները հարթելիս: Թաթուլը մտքով տուն հասավ, թվաց՝ Ռուզանը կարեկցող հայացքով նայեց իրեն, զգաստացավ: Հետո գտավ Իրինայի հայացքը, ժպիտը, միամիտ շողը աչքերի մեջ: Ավտոբուսը թնկթնկալով հեռանում էր Աշտարակից, ոլորաններում ձյան շերտը նստած էր ամուր: Հանդիպակաց մեքենաները բեռնված էին, նրանց կրնկակոխ հետևում էին ծանր ամբարձիչները: Հասկանալի էր, թե ուր էին շտապում:

- Միշտ էլ ուշանում ենք, իսկ ճակատագրական հարվածը խփում

է թույլ տեղերին, ուր անփույթ ենք եղել:

- Ի՞նչը նկատի ունես, Արմեն,- Թաթուլը կտրուկ նայեց ընկերոջը:

- Մեկնաբանեմ խիստ խոսքերիս իմաստը, Թաթո՛ւլ,- գործնական պատասխանեց Արմենը,- գոնե մեր աչքերով տեսանք, այն շենքերը, որոնք կառուցվել էին խղճով, մարդիկ չէին զլացել ցեմենտը և երկաթյա ամրանները լիարժեք օգտագործել, քիչ թե շատ դիմացել էին կամ ողբերգական հետևանքներ գոնե չէին ունեցել, իսկ մնացա՞ծը...

Թաթուլը միանգամից չպատասխանեց, որովհետև ընկերը, իրոք, խփել էր ճիշտ տեղին:

- Նկատի ունեցիր, որ տասը բալանոց երկրաշարժին դժվար է դիմակայել, բայց որ այսօրվա զոհերի մեծ թվաքանակի մեջ նրանց անպատասխանատվությունը խառն է, երկու կարծիք լինել չի կարող:

- Հիմա էլ խուճապի մատնված՝ բոլորս վազում ենք, դրսից են գալիս, ներսից են օգնում, բայց ճակատագրական հարվածը արել է իրենը,- շարունակեց Արմենը:

- Ճակատագրերը մարդկանց ձեռքերում են, պիտի դուրս գալ այս մղձավանջից և պահպանել ազատաբաղձության ոգին, որը հեշտությամբ կարող է խռովել, մարել, հեռանալ, եթե տեր չկանգնենք պատմության մեծ դարձին,- մռնչաց Թաթուլը:

- Նկատի ունես Շարժո՞ւմը...

- Մե՛ծ շարժումը, Արմե՛ն,- փայլատակեցին Թաթուլի աչքերը,- դրանում են ամփոփված մեր ճակատագրի բոլոր պատասխանները, ընդհուպ այս ավերիչ երկրաշարժի պատասխանը:

Ավտոբուսում այլևս չխոսեցին, Թաթուլը, կարծես, եզրափակեց բոլորի մտքերը: Տղաները նույն գաղափարի էին, համազգային ցավը նույն խորությամբ էին կրում, հավատավոր էին, համերաշխ, հրաշալի:

Երբ ավտոբուսից իջել, կանգնել էին օպերայի շենքի դիմաց, Թաթուլն այնքան մտերիմ հայացքով նայեց ընկերներին: Խմբի ղեկավարը շնորհակալություն հայտնեց, սեղմեց բոլորի ձեռքերը, գրկեց Թաթուլին և նրա ականջին ասաց.

- Պահպանի՛ր քեզ, քո տեսակը քիչ կա մեր շրջապատում:

- Իմ ընկերները բոլորն էլ նույն նպատակի են, ընկե՛ր Մոկացյան,- շառագունեց Թաթուլը,- նրանց մեջ ու նրանցով եմ ես ուժեղ:

- Հենց քո այդ գնահատումով էլ դու հաստատում ես քո տեսակը, եղբա՜յր,- ժպտաց Մոկացյանը, և բաժանվեցին:

* * *

Ռուզանը բացառիկ ուրախություն ապրեց, երբ դռների մեջ տեսավ եղբորը: Թաթուլը շտապեց ինչ-որ բան հարցնել, բայց լռեց: Հյուրասենյակից իրար հետևից դուրս եկան և նրա դիմաց շարքով կանգնեցին աղետի գոտուց այստեղ բերված երեխաները: Նրանք չորսն էին՝ մեկ տղա և երեք աղջիկ: Թաթուլն այնքան բարությամբ մոտեցավ նրանց, փաղաքշեց, գրկեց և ջերմ խոսքեր ասաց: Նրանցից մեկը՝ ծնողներից որբացած Սարգիսը, երկու բառ ասաց.

- Մերոնց չգտա՞ք...

Թաթուլը պատասխան չուներ. լռեց: Երեխաները գրեթե միասին ընկան նրա գիրկը և լսելի հեկեկացին: Թաթուլը ցնցվեց, հուսադրող բառեր ասաց, բայց ցավի ալիքը որբուկների արցունքներով կրկին խոշտանգեցին նրան: Երեխաները դողում էին, նրանց աչքերում վախի անթաքույց շղարշն էր, իսկ աղերսագին հայացքները թարգմանելու կարիք չունեին:

- Ռուզա՞ն,- նա հարցական նայեց քրոջը և անցավ պատշգամբ: Քույրը հասկացավ, որ Թաթուլը պարզաբանելու խնդիր ունի, թիկունքից ծածկեց պատշգամբ տանող դուռը:

- Ինչ-որ բա՞ն է պատահել:

- Ռուզա՛ն, մի՞թե դժվար էր հասկանալ, որ այս կայծակնահար երեխաներին չէր կարելի բարձրացնել յոթերորդ հարկ, նրանք քնած, թե արթուն մտածում են ծանր երկրաշարժի, բարձրահարկ շենքերը փլվելու և մահվան մասին:

- Չէինք մտածել, Թաթո՛ւլ,- անկեղծորեն արդարացավ Ռուզանը:

- Հիմա պետք է մտածել, առաջին հարկում քո վստահելի ծանոթներին խնդրիր նաև իմ անունից, որ մի երկու օր պատսպարեն, մինչև կորոշվի նրանց ճակատագիրը:

- Այդ մասին անհապաղ կմտածեմ, դու պատմիր այնտեղից, քեզանից...

- Ռուզա՛ն, դժվար բան ես հարցնում,- Թաթուլի շուրթերը դողացին, նա արագ վառեց գլանակը, կանոնավորեց ներքին ձայնը և դարձավ քրոջը,- կործանվեց հյուսիսի մեր լեռնաշխարհը, ի՜նչ սերունդ անդարձ գնաց, իմ տեսածը պատմելու բան չէ, արցունք է, արյուն, հարազատի ու մերձավորի կորուստ, որբացյալներ, ավերակ տուն ու շեն, գյուղ ու քաղաք...

Ռուզանը զղջաց իր հարցի համար, բռնեց եղբոր ձեռքը: Նրա աջը նկատելի ցնցվում էր, աչքերը խոնավ էին, արցունքի մի կաթիլ սառել, ցած չէր իջնում: Ռուզանը չդիմացավ, հոգին փոթորկվեց:

- Թաթո՛ւլ, այդ ի՞նչ գեհեն ես տեսել, դողում են ձեռքերդ, ի՞նչ է, արդեն ծխո՞ւմ ես:

Քրոջ տագնապից Թաթուլը զգաստացավ, աշխատեց հեռանալ բարձրացող փոթորկից, բայց չներեց իրեն՝ տեսնելով հեկեկացող Ռուզանին:

- Վե՛րջ, գոտեպնդվե՛նք,- ձայնի տոնը փոխելով՝ գրեթե բացականչեց Թաթուլը, գլանակը հանգցրեց, տուփը հանձնեց քրոջը և դրությունը փրկելու համար ավելացրեց,- դու խոստացար իջնել առաջին հարկ, մեղք են այս թշվառները: Իսկ ես չեմ ծխում, Արմենի համար էի վերցրել, մնաց ինձ մոտ, սա հենց այնպես...

Ռուզանն անխոս դուրս եկավ պատշգամբից: Միջանցքում սեղմեց վերելակի կոճակը, հոսանք չկար: Արագ-արագ ցած իջավ: Հյուրասենյակում Թաթուլին դարձյալ շրջապատեցին փրկված երեխաները: Քրոջ աղջիկը՝ հնգամյա Մարինեն, վազեց, փաթաթվեց քեռու պարանոցով, փոքրիկ ու տաք շուրթերով համբուրեց նրա չսափրված դեմքը: Թաթուլը ժպտաց, բայց անմիջապես այն թաքցրեց, որպեսզի չվշտացներ գուրգուրանքի կարոտ այս զգայուն երեխաներին: Հետո նա նրբանկատ զրույցով նրանց ներքաշեց աշխույժ խոսքի մեջ, կարծես իրեն հաջողվեց ցրել մանկանց հոգիներին նստած ամպը:

Ռուզանը շուտով վերադարձավ, բերել էր առաջին հարկում ապրող ամուսինների համաձայնությունը: Երեխաները սկզբում չհամաձայնեցին, ասացին, որ արդեն հարմարվել են: Ավելի ճիշտ Թաթուլի վերադարձը կամրջեց նրանց, հայրենի եզերքների ու կորած հարազատների մասին ցանկալի լուր էին նրանք փափագում:

- Այստեղ կմնանք, մորաքույր Ռուզանի ու Մարինեի հետ:

- Իսկ որ բարձր հարկերում եք, չե՞ք վախենում,- առաջին անգամ ստուգեց Ռուզանը:

- Վախենում էինք, բայց...

- Չէի՞ք համարձակվում Ռուզան մորաքրոջը ասել,- մտերմիկ ասաց Թաթուլը:

- Ամաչում էինք, բայց արդեն սովորել ենք, քեռի՛ Թաթուլ,- չորսի անունից պատասխանեց Սարգիսը,- էլ ո՞ւր գնանք:

- Լա՛վ, մնացեք,- համաձայնեց Թաթուլը,- շուտով ձեր համար լավ կլինի, համբերեք, դիմացեք:

Փոքրիկները պատասխանի փոխարեն առաջին անգամ լայն ժպտացին, նստեցին իրենց համար նախապատրաստած սեղանի շուրջը, որտեղ հինգերորդ աթոռը Մարինեինն էր:

Թաթուլը առանձնացավ, որբուկներին նայելիս չէր դիմանում:

«Պիտի մտածել այս երեխաների ապահովության մասին, այսպես թողնել չի կարելի: Պիտի հավաքել բոլորին մի տեղ, պետական հոգածությամբ տեր կանգնել նրանց վիրավոր մանկությանը, թե չէ Ռուզանը և նրա նման շատերը, անկասկած, բարի են, հոգատար, բայց այդպե՞ս են վերաբերվում բոլոր տներում, ուր ճակատագրի կամոք հայտնվել են նրանք...»:

* * *

Համալսարանում բարձր գնահատեցին ուսանողական ջոկատի գործունեությունը Շիրակի գոտում երկրաշարժից տուժածներին օգնելու ժամանակամիջոցում: Գնահատությունը միշտ էլ հաճելի է, բայց այս դեպքում տղաները ուրիշ աչքերով էին նայում դրան: Ցավի այն ալիքը, որ նրանք էին գրանցել, սարսափեցնող այն տեսարանները, ինչ-որ տեսել էին, ոչնչով հնարավոր չէր ծածկել, մոռանալ, ապաքինվել:

Թաքուլն այդ թռուցիկ ժողովից հետո բաց թողեց հերթական դասաժամը: Իրինայի հետ պայմանավորվել էին հանդիպել բանասիրականի մասնաշենքի աստիճանների մոտ: Նկատելի ճնշված էր, հոգնած, այն էլ վաղ առավոտից: Ամբողջ գիշեր գրեթե աչք չփակեց, դա էր պատճառը, որ հիմա մտացրիվ էր, զգում էր տագնապների ակոսը, որ անցել էր սրտի միջով: Պարզապես Թաքուլը չէր կարողանում մոռանալ վերջին դաժան շաբաթը: Համատարած կանչ-օգնությունների հոգեդարձը մխրճվել էր հիշողության բոլոր տարածքները, որտեղից լսում էր աղիողորմ ճիչեր, ձայներ, մարող ու մեռած աչքերի հեռացող աղոթքներ: Հիմա կանգնել էր աստիճանավանդակին, հայացքը՝ մուտքի դռներին, բայց, կարծես, այդտեղ չէր ինքը, բացակա մի գոյ իր փոխարեն մեխվել ու իրեն մեղադրում էր, որ այդքան դաժան տեսիլքներից հետո ինքը սիրո ժամադրության էր եկել: Հանկարծ ոտքից գլուխ չափեց իրեն, այնպես քննեց, ինչպես քննիչը հանցագործին: «Բայց չէ, ի՞նչ ժամադրություն, ի՞նչ սեր, պարզապես պիտի հանդիպենք, պայմանավորվելու հարցեր կան, երգչախումբը չպետք է կորցնենք, պիտի պահպանենք հայրենասիրական ոգին, այս օրերին արթնացնենք ազգային երգը, հետո շատ պետք կգա»: Ներքին ձայնը չէր լքում իրեն, իր փոխարեն այդ աներևույթ քննիչին բացատրություն էր տալիս, պարզաբանում իր արարմունքը: Թաքուլը վաղուց գիտեր իր տեսակը, սխալի դեպքում ինքն իր հետ հաշվեհարդար կտեսներ, չէր սպասի, դեռ ավելին՝ թույլ չէր տա, որ ուրիշը նախահարձակ լիներ: Բարեբախտաբար մուտ-

քի դռների մեջ երևաց Իրինան: Տեսնելով Թաքուլին՝ նա վազելով իջավ աստիճանները և մեկ ակնթարթում հայտնվեց նրա կողքին:

- Թաքո՜ւլ, երկա՞ր ես սպասել,- բացականչեց նա ու գրկեց սիրած տղային, քայլեցին:

- Ճիշտ ժամանակին հայտնվեցիր,- մեղմ ժպտաց Թաքուլը,- երևում է, որ լեռնուհի ես, աստիճանների վրայով գրեթե թռար:

- Կարոտել էի քեզ,- երջանկացավ Իրինան,- շուտով միասին կգնանք Վայոց Ձոր, ա՜յ, այնտեղ կտեսնես, թե ոնց եմ մագլցում քերծերը:

- Վայրի այծի նման,- վերջապես ծիծաղեց Թաքուլը:

- Մի պայմանով, եթե վայրի առյուծը հետապնդի նրան,- հեգնանքով պատասխանեց աղջիկը:

- Բանասիրականի ուժն երևում է:

- Դու դասի չե՞ս հիմա:

- Ձդիմացա, ուզեցի մի քանի ժամ ազատ լինել,- ասաց Թաքուլը,- մեկ շաբաթվա ընթացքում մեկ դարի ցավ կուտակեցի:

- Իսկապես դաժան բաներ են պատմում, չլսված դժբախտություն էր այս ձմռան շեմին:

- Պատմելը ի՞նչ, մի անգամ տեսնել է պետք, Իրինա՛, մոտիկից այդ դաժան կրակով այրվել է պետք՝ հասկանալու, թե Աստծո երկնքի տակ դժբախտության ուրիշ տեսակը կա՞...

- Այդ ինչքա՜ն խորն ես տարել, Թաքո՛ւլ,- կարեկցանքով ասաց Իրինան:

- Բնությունը դավաճանեց, թշնամին ուրախացավ, մեր բռնած գործն էլ մի քիչ հետ ընկավ, ահա այսօրվա պատկերը:

- Այսպես չի մնա, Թաքո՛ւլ:

- Ինձ ուրախացնում է քո լավատեսությունը, դա էլ թող օրվա իմ հայտնությունը լինի:

Սրճարանում, հավանաբար, դասերից փախած երկու զույգ էին: Նրանք տեղավորվել էին տարբեր անկյուններում, որ իրար չխանգարեն: Թաքուլը գերադասեց այդ ներդաշնակությունը չխախտել, Իրինայի հետ առանձնացան, նստեցին երկու հոգու համար նախատեսված սեղանի շուրջը: Քիչ անց սուրճ, կարկանդակ և ծիրանի հյութ մատուցեցին: Սրահում խոսում էին այնքան բարձրաձայն, կարծես իրենց հիացումի ծննդյան օրն էր, իսկ անծանոթ զույգերը մեկ գավաթ սուրճի շուրջ խրախճանք էին սարքել:

Թաքուլը խեթ նայեց այդ սկսնակ-սիրահարներին, նկատելի լրջացավ ու խոժոռվեց:

- Ուշադրություն մի՛ դարձրու,- մեղմ կշտամբեց Իրինան,- իրոք դասերից են փախել, և սրճարանում նրանց համար սիրո դասաժամ է:

- Մենք այդ դասաժամն անցել և առանց սարքովի աղմուկի ստուգարքն էլ հանձնել ենք, չէ՞,- խոսքի տոնը չփոխեց Թաթուլը, մի կում սուրճ խմեց,- իզուր մտանք այստեղ, երևի չդիմանամ:

- Իհարկե՛, մեր սերը երբեք սրճարանային չի եղել,- պայծառացան աղջկա աչքերը,- դիմացիր, ամեն մարդ իր խելքով է հարսանքավոր:

- Սրճարաններում միշտ էլ սիրո սկիզբ ու նաև ավարտ են եղել, հազար ու մի այլ դեպքեր, զրույց-վեճեր,- ավելի մռայլվեց Թաթուլը,- պարզապես այս օրերին սրճարանային այսպիսի գայթակղությունները պետք է մի քիչ չափի մեջ լինեն:

- Նկատի ունես ընդհանուր վիճակը:

- Ընդհանուր վիճակ չկա, Իրինա՛, կա կոնկրետ իրավիճակ, որում հայտնվել ենք բոլորս՝ մեծ ու փոքրով,- Թաթուլը մտածված բարձրացրեց ձայնը, որ սաստեր կողքի սեղանիկներին ղունղունացողներին: Իսկապես նրանք միանգամից լռեցին, հավանաբար հասկացան, որ այս երկուսը ցավից էին խոսում, սրանց համար սուրճն ու սրճարանը տագնապի թելադրանքի մեջ էին, ոչ թե ավելորդ ցնծության: Վճարեցին և անմիջապես հեռացան:

- Երևի չդիմացան քո հայացքին,- նրանց հետևից նայեց Իրինան և ավելացրեց,- սիրո երկու բույն քանդեցիր:

- Քանդվող բույնը փոթորկի չի սպասում, ուրեմն լավ հիմքեր չունի:

- Թեման փոխենք, Թաթո՛ւլ,- Իրինան աշխատեց հանգստացնել նրան:

- Թող ներեն նրանք, դու էլ, Իրինա՛,- կարծես մի քիչ փոխվեց Թաթուլը, հանգստացավ,- այն, ինչի միջով ես անցա վերջին շաբաթվա ընթացքում, փոփոխեց իմ վերաբերմունքն ամեն բանի նկատմամբ... Ախր բան չէր մնացել, որ տեղահան եղած չլիներ: Հրաշքով փրկվածների մեջ չէիր գտնի մեկն ու մեկի, որ ողբալով չսգար ծնողների, եղբոր ու քրոջ կամ երեխաների կորուստը: Աշխարհն այնտեղ շուռ էր եկել, Իրինա՛, այդքան ցավ, անդարմանելի սրտեր, կորուստներ, մահ, կյանքի հունձք... Եվ դրա համար հիմա՝ գոնե այս օրերին, չեմ կարող հասկանալ նրանց, ովքեր այս զույգերի պես անտարբեր են, սեփական տնամերձի չվտանգված պաշարներով են գնահատում աշխարհի կայծակնահար բնույթը...

Իրինան ակնապիշ նայում էր Թաթուլին, կլանված լսում էր նրա ոգեցունց մորմոքը, ինքնայրումից մոխրացած ու կրակեն բառերը,

ուզում էր այնքան մոտիկից ու ջերմորեն գրկել սիրած տղային, նրան պաշարած բոլոր ցավ ու հոգսերի դիմաց բալասան գտնել, դառնալ մի ուրիշ, վերերկրային մտերմություն: Ուզում էր, բայց չէր կարողանում: Օր օրի անհասանելի էր դառնում Թաթուլը, նրա ներկայությունն ու ասելիքը մի այլ ուղեծրի տեսակ էին հուշում: Այդպես նա դարձավ Մեծ շարժման մարտնչող զինվորը, այդպես է հիմա՝ Մեծ երկրաշարժի հուսացրիվ զարկերից հոգով ու էությամբ վիրավոր ու խոցված:

- Թաթո՛ւլ,- այնքան աղերսանք կար նրա մեղմանուշ կանչի մեջ: Թաթուլը մի պահ կենտրոնացավ, երևի զգաց, որ այսքան դառնություն իրավունք չունի պատճառելու այս քնքուշ էակին, որի համար նույնպես ծանր են օրն ու ժամանակը, անմեղ կորուստները...

- Գնա՛նք,- նա հարմար համարեց դուրս գալ սրճարանից, մանավանդ դեռ շատ մոտիկից տեսնում էր հեռացած զույգերի կշտամբալից հայացքները, լսում նրանց ծիծաղն ու ճտքավոր բառերը:

Դրսում չէր դադարել ձյունը, գալիս էր ճերմակ գանգուրներով, իջնում հուշամփոփ ու երազային: Նրանք քայլում էին կողք կողքի: Իրինան չէր համարձակվում բռնել նրա ձեռքը, գիտեր, որ Թաթուլի սրտով չէր, իրավիճակին համազոր այնպիսի բառեր կասեր, որ երկար ժամանակ չէր մոռանա:

- Տխուր ես, Իրինա՛,- Թաթուլը փորձ արեց փափկանալ՝ մտածելով, որ այս փխրուն սիրտ ունեցող բանասեր աղջիկը ի՞նչ մեղք ունի, որ իր զայրույթն ու խռովքները միշտ նրան են բաժին դառնում:

- Տխուր եմ, որովհետև դու շատ ես տխուր,- դողաց Իրինայի ձայնը,- բոլո՞րն են քեզ նման ինքնամոռաց:

- Շատ-շատերը, գոնե իմ ճանաչած տղաները, հայրենյաց բախտի համար բոլոր երդվյալներն ինձնից բարձր են, ուժեղ, անսասան կամքով,- բառերի խորքերում կրակ կար, ասես իր տված երդումն էր վերհիշում:

Իրինան չցանկացավ խորանալ նրա հուզմունքի ծովը, գիտեր, որ այնտեղ բռնկուն փոթորիկ է, ու ինքն այդ տարերքին չի դիմանա:

- Քո բացակայության օրերին տուն գնացի,- խոսքն այլ ուղղությամբ տարավ աղջիկը,- Եղեգնաձորում ձմեռը շուտ է նստում, մտածեցի՝ հետո չեմ կարողանա գնալ:

- Տա Աստված ամեն բան ճիշտ հունով գնա, մի օր մերոնց հավաքած կգամ, առանց մեծադողորդ խրախճանքների կմիանանք,- ասաց Թաթուլը, կռացավ, խոշոր մատների մեջ ձնեկուտակը սեղմած՝ կանգնեց աղջկա դիմաց:

- Մանկությունդ ես վերհիշում Արեգի լեռնալանջին:

- Մի՞թե մոռացել եմ, որ ջանք թափեմ վերհիշելու,- թախիծով ասաց նա և թարմ ձյունը շաղեց պարանոցին, վերնաշապիկի տակ, թաց մատներով շոյեց ճակատը, մազոտ դեմքը: Իրինան ուզեց հետ չմնալ նրանից, կատարեց նույնը, և թեթև սրսփաց մարմինը:

- Մի՛ կրկնիր ինձ, պարտադիր չէ ընդօրինակումը:

Հետո քայլելով հասան Սայաթ-Նովա փողոցը, թեքվեցին դեպի օպերայի շենքի հրապարակ: Այստեղ, ինչպես միշտ, մարդաշատ էր: Թաթուլը ծանոթների հանդիպեց: Նրանք այսօր էին վերադարձել Սպիտակից, պատմում էին, որ այդ քաղաքից նույնպես ոչինչ չէր մնացել:

Թաթուլը գիտեր, որ այդպես է: Լենինականում հանդիպել էր ուսանողական ջոկատից ֆիզմաթի տղաներին, որոնք այնտեղ երկու օր էին մնացել: Հիմա այստեղ տխուր իրադարձությունների կիզակետից հեռու ինչպիսի մանրամասներով էլ ներկայացնեին, Թաթուլը չէր զարմանա, իր աչքերի առաջ էին ողբացյալ պատկերները: Նրան թվում էր՝ այլևս ուր էլ փախչի, Շիրակի վիրավոր սարսուռները կպել են իր ողնաշարին, սրտին, անդարձորեն ներփակել են իրեն այդ անսովոր ու մեծ ցավի ամենազոր տիրույթում: Ինքը չէր ուզում ոչ մեկին պատմել, հաղորդել իր տառապանքի բեկորները, որոնք դարսեդարս շարվել էին սրտի մատույցներում, հասկանում էր, որ անցնող օրերի մեջ այդ վշտացյալ շարուկից ազատում չուներ: Իջնող մանրիկ ձյունը, դաշնադիր ու դալուկ, փորձում էր փաղաքշել նրա զգայարանները, սակայն անավարտ էր այն խռովքը, որ շղթայվել ու չէր գնում: Այսպես զարկված նա չէր տեսել հրապարակների շռինդը, որն օրեր առաջ ուրիշ հորձանքի առաջնորդ էր: Երկրաշարժը խփել էր թիկունքից, դավադիր ու մթին մռայլությամբ իջել էր ձմեռնածոց սարերից, իր պաղ ձեռքերի մեջ պարուրել քաղաքային օրը: Թաթուլն այդ օրվա մեջ էր, նրա միամիտ ու մեղեդային մասնիկը: Շատ մեծ, անանուն փառավորության պակաս էր զգում, որն իր հետ մի օր ճամփա էր ելել ու տեղ չէր հասնում: Նա այդ ճանապարհը տեսնում էր հոգու աչքերով, չէր ուզում այնտեղ մոլորվել, մոռացվել: Կանգ առավ Թումանյանի կիսանդրու առջև, տեսավ նրա ժպիտը, ինքն էլ ժպտաց, զգաց, որ նա տանում է իրեն, հեռացնում այս ձնածոցիկ պահից, այս հրապարակից ու աշխարհից: Հենց այս պահին Թաթուլը որոշեց տուն գնալ: Անթաքույց կարոտը ծփաց կրծքի տակ, աչքերում թրթռացող տաք գոլորշին միանգամից սառեց՝ խառնվելով իջնող փաթիլներին:

- Այսօր, ինչ էլ լինի, պիտի հասնեմ գյուղ:

- Այդ մասին չէիր ասել,- զարմացավ Իրինան:

- Մոռացել էի, որ վաղը շաբաթ է, կարոտել եմ մերոնց:

Իրինան այլևս հարցեր չտվեց, կարծես հենց նոր հիշեց, որ Թաթուլը ծանր շաբաթ էր անցկացրել, ճիշտ կլիներ, որ տուն գնար, հանդիպեր ծնողներին, եղբայրներին, կխաղաղվեր հոգով:

- Ճիշտ ես մտածել, Թաթո՛ւլ, հարազատ եզերքներից կվերադառնաս նոր ուժով:

- Իհարկե, սխալ չէր լինի, որ միասին գնայինք,- առաջ ընկավ Թաթուլը,- բայց այս տրամադրությամբ, երբ երկնքի ու երկրի միջև շատացել են արցունքն ու ողբը, ճիշտ չենք հասկացվի:

- Շտապելու ի՞նչ ունենք,- անկեղծացավ Իրինան,- կգա նաև մեր ժամանակը:

- Գնահատելի է, երբ խճճված օրերի իրադրության մեջ հանգամանքներին տուրք չի տրվում,- Թաթուլը խուզարկու նայեց սիրած աղջկան,- և դու շատ խելացի ես, շնորհակալ եմ:

- Առավել գնահատելի է, երբ քեզ նման երիտասարդն է դա խոստովանում,- Իրինան ամուր բռնեց նրա ձեռքը: Թաթուլն զգաց, որ հաճելի մի ջերմություն շողաց սրտում, կրակե թրթիռները անարգել շուլալվեցին ու եկան: Բայց նա միանգամից ծածկեց այն, փակվեց իր ներսում:

- Սայթաքո՞ւմ ես,- բազմանշանակ ասաց Թաթուլը:

- Անհնարին է, երբ դու իմ կողքին ես,- ակնածանքով նկատեց Իրինան:

Թաթուլը լռեց, այդպիսի պատասխանի արժանի էր ինքը, բայց զգայական խարույկը չթեժացրեց: Նա հասկացավ, որ այդ բոցե կրակարանին առայժմ ձյուն էր մաղվում, սերակալում լուռ աստղափաթիլներով:

Բաժանվելուց առաջ նա սեղմեց աղջկա ձեռքը և ուղիղ նայեց նրա աչքերի մեջ: Այնուհետև մանրաքայլ գնաց, ապա կանգնեց, շուռ եկավ և իր նման ժպտաց Իրինային.

- Մի քիչ համբերենք, ես նշմարում եմ մեր աստեղային ժամը:

Իրինան չպատասխանեց, նա հասկանում էր Թաթուլին, նրա ապրումներին ծանոթ էր և այդպես կանգնած մնաց, մինչև նա բարձրացավ ավտոբուս:

* * *

Արեգում ձյունն իջել էր տիրաբար: Համատարած սպիտակը շրջակա սարալանջերից արշավել էր գյուղ մտնող ճամփաներով: Դաշտամիջյան քարոտ ուղիները չէին երևում, ձորակները լիքն էին ճերմակ մշուշով: Այդ հերարձակ մշուշ-երամները գյուղի տանիքներից վեր խառնվել էին թոնիրների հացեհամ ծխին, հեռանում էին, ինչպես ձմռան ցրտից խռովված սպիտակ աղավնիներ:

Թաթուլը Արեգում մի ուրիշ տխրությամբ ընկալեց այս տարվա ձմեռը: Մոտեցող նոր տարվա շունչը մարդիկ, կարծես, չէին զգում: Երկրաշարժը տեղահան էր արել նրանց, կտրել առտնին գործերից, փշրել հոգիների խաղաղությունը: Աղետի ենթարկված վայրերից գյուղը ընդունել էր երեխաների և կանանց: Արեգցիները նրանց փշրված տրամադրությամբ էին հասկանում ողբերգության չափը, դարձել էին ավելի նրբամիտ ու կարեկցող: Թաթուլն օրվա ընթացքում մեկ-մեկ հանդիպեց նրանց, այցելեց այն օջախները, ուր ժամանակավորապես պատսպարել էին դժբախտներին: Իրիկնապահին իր շրջայցից գոհ վերադարձավ տուն: Ճաշի սեղանի շուրջը հավաքվել էին բոլորը, նաև այն հինգը, որ գյումրեցիներ էին՝ երեք երեխա և երկու կին: Թաթուլն ընդգծված ու ջերմ բարևեց, նստեց նրանց կողքին, մեղմ ժպտաց և գորովանքով նայեց մորը՝ Սեդային:

- Մայրի՛կ, իմ սիրած կաթի սերը չկա՞...

- Դա մեզ առանձին է մատուցվել,- Սեդայի փոխարեն պատասխանեց կանանցից մեկը՝ հասկանալով, որ Թաթուլն իրենց համար է մտահոգված:

- Քո բաժինը միշտ կա,- Սեդան երանությամբ նայեց որդուն, ապա բացեց սառնարանը և սեղանին դրեց որդու ուզածը:

- Տեսնում եք, չէ՛, նույնիսկ տանը չեմ լինում, բայց իմ բաժինը միշտ կա,- ծիծաղեց Թաթուլը:

- Քո ծննդյան օրից քու պապ Մարկոսն ու տատ Գուլոն էդ բաժին առանձնացրին, ու մինչև հիմա էդ սովորություն կա էս տան մեջ,- Թաթուլին շատ սիրալիր դիմեց Ժորա հայրը,- տե՛ս, քեզնից առաջ հինգը կային,- նա ձեռքով ցույց տվեց սեղանի շուրջը նստած զավակներին,- նրանք էլ էդ սովորություն անգիր գիտեն, քու բաժին ուտելիքը, միրգը, քեզ համար գնված գրիչն ու գիրքը, կոշիկն ու շորերը պահում էին, որ երբ գայիր, քո առջև բացեին, քեզ հետ ուրախանային:

- Հայրի՛կ, ինչո՞ւ եք ինձ էդպես առանձնացրել,- խորամանկեց Թաթուլը:

- Աստված առանձնություն չտա՛, բայց դու միշտ դրսում ես եղել, նախկինում առավոտից իրիկուն Արտին սարի վրա էիր, հետո բանակում, հիմա էլ՝ Երևանում, քու բաժին չպահեի՞նք, տղա՛,- Ժորայի ձայնը հնչեց հայրական գորովանքով: Եղբայրները Թաթուլին շրջապատեցին, հյուրասիրում էին: Թաթուլը կաթի սերը հավասար կիսում էր սեղանի շուրջ նստածներին և հիշեցնում, որ իր ասածն ընդամենը առիթ էր՝ հնից եկած սովորությունը ստուգելու:

Թաթուլը նրբանկատ էր, ամենափոքր հնարքն օգտագործում էր, որ շրջապատի տրամադրությունը բարձրացնի, պետք գա ինչ-որ բանով: Նա ակամայից շոյեց իր դիմաց նստած փոքրիկ տղայի մազերը, թաքուն հառաչեց: Տղայի ծնողները զոհվել էին, բայց նա չգիտեր: Թաթուլը չդիմացավ, ոտքի կանգնեց և աննկատ դուրս գնաց: Դիմացի քարքարոտ սարը նման էր ճերմակի մեջ թաղված ծերունու: Ներքին կրակն ու կարոտը խառնվեցին, սիրտը ծփաց: Թաթուլը տան քարե պարիսպն անցավ, մի պահ կանգնեց: Կարծես առաջին անգամ էր տեսնում, որ սարի փեշը սկսվում է իրենց թոնրատան կտուրից: Մի քանի րոպեում հասավ բարձունք, մինչև ծնկները ձյան մեջ նա նայում էր գյուղի՝ ուս ուսի կպած տներին, զգում նրանց ներսի շունչը, որոնում անուններ մեծ ու փոքրի: Այսպես վարվում էր պապ Մարկոսը: Նա նույնպես սիրում էր ձմռանը ցից քարերի միջով բարձրանալ մերձակա այս բարձունքը և այնտեղից քննել համատարած ճերմակը: Թաթուլն այդ մանրամասները հիշում էր, և, կարծես, հենց նոր հասկացավ, թե ի՞նչ հետաքրքրություն էր նրան ձգում: «Պապը, հավանաբար, իր տանը կպած սարն էր ելնում՝ վերևից զգալու գյուղի խաղաղությունը, հաշվում էր թոնիրներից ելնող ծխասյուները, իր սրտից ինչ-որ բան էր ճամփու դնում երկինք: Ձյան հետ հաշտ էր, բայց ձմռան կայսրության հանդեպ թաքուն խռովք ուներ... Փակվում էին իր հանդ ու դաշտի կածանները, և դրանից նեղվում էր պապը, խեղճանում...»: Թաթուլը պապի այդ տեսակը հիմա հայտնաբերեց իր աչքերում, կարոտի կապուկը քանդեց, մռնչաց ու հայացքը մարմանդ սահեց, հեռացավ իրենից: Նա գիտեր, որ պապը կորցրած եզերքների համար անբուժելի վերք ուներ: Այդպես էին արեգցի բոլոր մեծերը: Նրանց բաժին պատռված հողն անգամ չկարողացավ ծածկել կորուսյալ ծննդավայրի ցավը: Գյուղի պարզ շարադրության մեջ մնաց նրանց չապաքինված վերքը: Հիշողության վիրավորանքն ամեն ապրիլին բացվում էր կակաչի պես՝ սևը խորքերում, իսկ անթաքույց կարմիրը արյան գույներով արտասվում էր թերթ-թերթ ու դառնում խաբուսիկ թալիսման...

Թաթուլը գիտեր, որ այդ հարագնա ծովի միջով ինքն էլ է անցել, լսել, բայց չի կորացել պապերի հառաչանքների անծավալ բեռից:

Եվ հիմա սարալանջին իջած ձյան ճերմակ երամների մեջ նա իր պապի ճախրուն հոգու աղավնիներն էր փնտրում: Սիրտը քիչ առաջ գյուղական օջախներից հնձած մրմունջների հետ էր, ձայնի մեջ կանչ կար, բայց գիտեր, որ այն երգ չէր դառնալու: Երկրաշարժը ճաք էր բացել հոգու ակոսներում, այնտեղ հնաբույր տաղերը նոր թախիծ էին մանում, ծանոթ հանգ ու պատկերից հունցող տողերը խռովել էին: Սեդան կանգնել էր քարե աստիճանների դիմաց, փխրուն հայացքով պարուրել Թաթուլին, լուռ հետևում էր նրա շարժումներին: «Ի՞նչ է տանջում քեզ, Թաթո՛ւլ, դու ինչո՞ւ նման չես քո հասակակից տղաներին, էստեղ հանգիստ չունես, քաղաքում՝ քուն ու դադար... Ռուզանն ասում էր՝ չէինք հավատում: Տե՛ր Աստված, դու պահապան լինես Թաթուլիս, իր մուրազ թող կիսատ չմնա...»: Սեդա մայրիկը չուզեց քննել ներքին հարցականների կծիկը, մոր սիրտը տակնուվրա էր լինում, կարծես արձանացել էր թոնրատան պատի ստվերում և լուռ աղոթում էր: Թաթուլը նրան չէր տեսել, քայլում ու ետ էր դառնում, հետո ուշադիր նայում ոտնահետքերին, ժպտում միամիտ, մեն-մենակ, Աստված գիտի, թե ումն էր հիշում:

- Թաթո՛ւլ,- ներքևում չհամբերեց մայրը:

Թաթուլը կտրուկ ետ նայեց, ապա արագ-արագ իջավ՝ քարից քար թռչկոտելով: Հանկարծ կտրուկ կանգնեց և հրճվանքով նայեց մորը: Իջնող թեթև ձյան շղարշի տակ մայրը նրան պատկերացավ երկնքից իջած հրեշտակ. հևասպառ մոտեցավ, ամուր գրկեց:

- Կմրսե՛ս, ներս գնա՛նք...

- Իսկ դո՞ւ,- դողաց մոր ձայնը:

Թաթուլը չպատասխանեց, հասկացավ նրա տագնապը, որն աստղերից իջնող ձյան պես ազնիվ էր: Մուտքի դռանը չհասած՝ բակ մտան Սարգիսը, Սամվելը, Տիգրանն ու Արթուրը:

- Վերջապես եկա՞ք, մեր սարի գլխից նայում էի ձեր ճանապարհին,- ասաց Թաթուլը,- երբ որոշվում է հանդիպման ժամը, պետք է պարտաճանաչ լինել,- անմիջապես ժպտաց մտերմիկ և ներս հրավիրեց ընկերներին:

- Մենք քեզ տեսել էինք սարափեշին,- նրան առաջինը պատասխանեց Սարգիսը,- պարզապես այնքան կլանված էիր ձյունապատ լանջերով, չուզեցինք կարոտիդ դաշտը կողոպտել:

- Ճշմարիտ ես, այդպիսի կարոտ կար՝ ցավի հետ միախառն ու ազատ,- պատասխանեց Թաթուլը,- այդ կարոտի լեզուն ես էլ չեմ

հասկանում, որ գերեվարեց, էլ պրծում չկա:

Տղաներին ջերմորեն ընդունեց տան մեծը՝ Ժորան: Ընդամենը մի քանի հերթապահ հարցեր տվեց, ապա բաճկոնը գցեց ուսերին ու դուրս եկավ ընկերներին գտնելու հույսով:

Թաքուլի առանձնասենյակում մայրը մրգեր դրեց սեղանին, մեծ հարսը՝ Անահիտը, տաք-տաք կարկանդակներ և սուրճ բերեց:

- Բոլորին բաժին հասա՞վ,- Թաքուլի ակնարկը գյումրեցիներին էր վերաբերում:

- Առաջին տաք գաթան նրանց եմ հրամցնում,- արդարացավ հարսը:

- Իսկ նրանք առաջին ցավի մեջ են, այդպես էլ պիտի լինի,- եզրափակեց Թաքուլը:

Հետո, երբ մնացին համախոհներով, Սարգիսը հետաքրքրվեց Շարժման մանրամասներով: Նա կարդաց մի քանի գրառումներ, որոնք նախապես մտածված առաջարկություններ էին: Թաքուլը ներքուստ ուրախացավ, որ երկրաշարժից հետո հուսահատության հետագիծը գյուղ չէր հասել: Ազատաբաղձ տղաները պատրաստ էին հայտնվելու Մեծ շարժման խմբերում:

Սարգիսը երկու տասնյակ անուններ հրապարակեց, որոնց մեջ նաև շրջկենտրոնից և հարևան գյուղերից կային: Թաքուլը նրանց ճանաչեց:

- Նպատակի տղերք են, ի՞նչ էլ բծախնդիր ընտրություն եք կատարել,- հավանություն տվեց Թաքուլը:

- Նվիրյալների ժամը նոր է գալու, թող պատրաստ լինեն,- պայծառացան Սարգսի աչքերը:

- Ազգովի պիտի պատրաստ լինենք, տղե՛րք,- Թաքուլը նկատելի մտահոգ էր,- դուք էլ եք զգում, որ մոտենում է մեծ բախումը: Թուրքերը Արցախում հանգիստ չեն մնում, հայերի վիճակն անտանելի է Բաքվում, Սումգայիթում և Ադրբեջանի հայաբնակ վայրերում:

- Սրա վերջը կռիվ է, հողի ու արյան կռիվ,- մռնչաց Սարգիսը:

- Մենք այս բախտորոշ ժամանակներից մեկուսանալու իրավունքը չունենք,- հաստատուն ու համոզիչ հնչեց Թաքուլի խոսքը,- խմբվենք, կողք կողքի լինենք, իսկ հարկ եղած դեպքում մեզ զորակոչի հորդոր պետք չէ, մենք պիտի տարբերենք այսօրը երեկվանից, որ իմանանք, թե վաղն ի՞նչ ենք անելու: Հիշենք մեր պապերի հառաչանքը և թույլ չտանք, որ մեր սերունդը այն կրկնի. կորուսյալի դիմաց վերագտնել է պետք, հառաչանքի դիմաց՝ հրազենի որոտ:

Սարգիսը հոգեհարազատ ժպտաց, բռնեց Թաքուլի ձեռքը,

հպարտությունը խոստովանանքի եզր էր փնտրում, բայց այդ ալիքը պահեց ներսում, խոսեց իր սրտի հետ ու սրտում վերակերտեց Թաքուլի այս տեսակը:

- Այդպես չէ՞, Սարգի՛ս,- Թաքուլը ուզեց սթափեցնել նրան, գիտեր, որ նա հայրենասիրության ամբողջական շաղախ է:

- Իհարկե այդպես է, Թաքո՛ւլ. դու մեր գյուղից դեպի մեծ աշխարհ ձգված զարկերակն ես, երբ որ տուն ես գալիս, մեզ համար բացվում են կյանքը, իրականությունն ու ժամանակը ճշգրտորեն բաղդատելու խորհիմաստ պահերը:

- Չափազանցնել պետք չէ,- համեստորեն ասաց Թաքուլը,- ես ձեզանից մեկն եմ, թեև այսօր գյուղից մի քիչ հեռացած, բայց ձեզ հետ եմ, իմ միտքը, ոգին, նպատակը, իմ հուշն ու կարոտը ձեր շուքին են շղթայված:

Թաքուլն այնքան անկեղծ խոսեց, նրա անթաքույց հուզմունքից ներկաները հասկացան, թե ինչ մորմոք կար երիտասարդ ընկերոջ հոգում: Իսկ զրույցը երկար ձգվեց, խոսում էին ամեն ինչի մասին՝ սկսած գյուղի անցած-գնացած հուշերից մինչև ավերիչ երկրաշարժի հետևանքները: Ուշադրության կենտրոնում Թաքուլն էր: Նա վաղուց գյուղ չէր եկել, իսկ դրան հաջորդել էին երկրաշարժը, ծանր, մղձավանջային այդ օրերի արյունոտ պատկերը: Թաքուլն իր աչքերով տեսած, անմիջական ու հավաստի եղելությունից քիչ բան պատմեց: Նա չէր ուզում նորից թարմացնել իր մեջ նստած վերքը: Առանց այն էլ ոչ մի բան մտքից չէր գնում, ներսից ճչում էին նրանք՝ վիրավոր ու զոհված, փոքր ու մեծ: Թաքուլն աշխատում էր նրանց թշվառ ու անօգնական վիճակը շրջանցել, շուռումուռ չտալ սրտում գրանցված հառաչանքի ժայռը: «Ճշտի պատկերին չեք դիմանա, տղե՛րք, ձեզ ի՞նչ ասեմ: Ավելի լավ է այդքանը պատկերացրեք, որքան հաղորդում են, գրում... Իմ տեսածի բեռը ես պիտի տանեմ...»: Թաքուլը տևական լռեց, նրան հասկանում էին եղբայրները, ընկերները: Եվ դրա համար երկրաշարժի թեման չխորացրին, մանավանդ, մի պատ այն կողմ իրենց ցավերով սսկված տուժածներ կային, կլսեին, նորից կողբային իրենց բախտը: Թաքուլը մտածված բաց արեց ճամփորդական պայուսակը, գրառումների տետրը հանեց:

- Նոր բա՞ն պիտի կարդաս,- առաջ անցավ Սարգիսը:

- Նոր բաները հետո,- մռայլ էր Թաքուլը,- բերեք տղաների ցուցակը ճշգրտենք, գոնե նրանց կարճ բնութագիրն ունենանք, նվիրյալների մեր ընկերության քարտեզը պիտի պարզ լինի բոլորիս:

Մեկ առ մեկ գրի առան, քիչ էին ճանաչում, թե շատ, ոչ մեկի

բացառություն չարին:

- Վաղը, մյուս օրը մենք կփնտրենք նրանց,- ասաց Թաթուլը,- նախ մերոնց պիտի մոտիկից զգանք, հետո փոխանցվենք մեկ-մեկու և ուժեղանանք հավատով:

Ներկաները նույն ակտիվությամբ վերհիշում էին, լրացնում, բնութագրում: Ինչ-որ նախաձեռնության ալիք տանում էր նրանց, և մի թանկ եղելություն էր ծնվում գյուղական տան նվիրական պատերի մեջ:

Երբ արդեն հոգնել էին, Թաթուլը հարազատ նրբերանգով ժպտաց եղբայրներին: Սերգոն հասկացավ նրան և բարձրաձայն ասաց.

- Հասնե՞նք էրգիր...

Անմիջապես աշխուժացան բոլորը: Առաջինը Մանվելը երգեց, Գրիգորը միացավ նրան: Թաթուլն ակնածանքով նայեց եղբայրներին, որոնք հայրենյաց երգով մկրտեցին պահը: Մյուս սենյակից եկան տնեցիները, երկրաշարժի ողբը տեսած երեխաները: Տղաների քիչ առաջվա խոսակցությունը իրենց պատրաստակամության, խմբեր կազմելու և արժանավորներին դրանցում ընդգրկելու մասին, խառնվեց ոգեցունց երգերին: Եղբայրներն իրար հերթ չէին տալիս: Թաթուլը միացավ նրանց, հետո՝ մյուս տղաները: Երգն այդ պահերի կատարյալ պահակազորն էր, հսկում էր բոլոր կողմերից, պատսպարում նրանց նույն ամպերի տակ, ջերմացնում նույն կայծակի բոցերով: Երգում ու ավելի խորքերով էին հասկանում, թե ինչի՞ համար էին հավաքվել, ինչի՞ մասին խոսեցին ամբողջ երեկոյի ընթացքում, ի՞նչ որոշեցին: Նրանց երգը երդումի օրհներգ էր, երկչոտությունն ու երկվությունը փշրելու նշանառու զենք:

Ժորան դուռը բացեց, բայց ներս չմտավ: Վերից վար սպիտակ էր: Թարմ ձյան փաթիլների մեջ նրա բարձր հասակը կաղնու էր նման:

- Ձեր հոգուն մատա՛ղ,- այսքանը ասաց ու մնաց կանգնած:

Երջանկության արծիվը խլրտաց ներսի անձուկ տարածքներում: Գիտեր, որ Թաթուլը սրտի միջով է տանում ամեն բան, ուրիշի ցավին անտարբեր չէ, անհանգիստ է, ինքնազոհողության պատրաստ, ընկերասեր է, հողապաշտ:

- Հայրի՛կ, ներս արի,- Թաթուլն էր, աչքերում հրդեհ կար:

- Իմ վրայի ձյուն թափ տամ, գամ ու միանամ իմ ջահել-ջիվաններին,- ասաց նա ու վերադարձավ նախասրահ:

Այս օջախի սովորույթն այսօր էլ տեղի չտվեց տխրության ու թախծի: Գյումրեցի երեխաները ակնապիշ նայում էին նրանց, զարմացած էին, որ Արտին սարին կպած այս լեռնահոտ գյուղում

ի՞նչ մարդիկ կան:

- Էլի մի ցավ զարկել է ձեր սրտին,- Ժորան խորազնին նայեց նստածներին, տեղավորվեց ազատ աթոռին և բռունցքով զարկեց սեղանին: Զգաստության թմբուկ էր նրա միջամտությունը, մեկ-մեկ զննեց, հասկացավ ու ինքն իրեն համոզեց, որ սրանք են իր սպասած արծիվները, իր հույսի սյուները: Հասկացավ, բայց լռեց, դարձավ ու մոտիկից նայեց իր օջախի հույսին ապավինած գյումրեցի մանչուկներին, սրտում զմռսված զանգը հևաց ու լռեց: Օանր բռունցքը սեղանից հետ տարավ, դրեց թաց ծնկներին և խափանեց սեղմված լռությունը: Սերգոն զգաց, որ հայրը ալեկոծված է, նրա փխրուն հոգում ձմեռվա խաղաղությունը խաբուսիկ է: Ժորան չէր էլ կարող թաքցնել, անմիջական էր, պարզ ու հասարակ: Նրա հույզն ու զայրույթը վարագույր չունեին, բացահայտ էր, թափանցիկ: Ահա թե ինչու նրա ներկայությունը բոլորին դարձրեց ավելի զգաստ: Ժորան հասկացավ, որ դրսից թեև ձմռան շունչն էր բերել, բայց տաք ու ճախրուն այս տղաները մտքով ուր որ հասել էին, վերադարձան:

- Օջախին էսպիսի տաք շունչ է պետք, տղե՛րք,- խոսեց Ժորան,- բառերը ձիգ էին, բայց հառաչանքի ցող կար վրան,- ձեր սերն ու կամքը միասին պահեք, ապրիք, որ ձեր ապրած օրը կեսօրից հետո անտեր չեք թողնում, էն էլ մարդու պես է, ուր պահանջն ունի, էն էլ ցավ ունի, իր ճամփի համար դեղ ու դարման կուզե...

Տան մեծի խոսքը այնքան մեծավարի հնչեց՝ հասկացնելով, որ այս պահն էլ իր պատմությունն ունի, պիտի շարունակել, չհուսահատվել:

- Հիմա դրսում ձմեռ է, հո հավիտենական չէ, կանցնի՛,- Ժորան շարունակեց խոսքը, գորովանքով նայեց որբ երեխաներին,- երկրաշարժն էլ ուր վատությունն արեց ու անցավ, պըտի դիմանալ, մեկը մյուսով պըտի հույսը հետ բերել, ապրել է պետք...

Թաթուլն այնքան գոհունակ նայեց հորը. նա մի քանի բառով և շատ ավելի դիպուկ ամփոփեց ողջ երեկոյի իրենց զրույցը: Նույն զգացողությունն ունեցան մյուսները: Ժորան վերցրեց օղու գավաթը, իր բաժին ցավը պահ տվեց ներսում, նստած խոսեց: Այս անգամ ուրիշ հորդոր էր, դարձի մեծակտավ տարածք, որին մասնակցեցին բոլորը: Սարգիսը Կրպեների մասին շատ էր լսել հորից ու պապից, բայց իր առջև օր օրի բացահայտվում էին նրանք: «Ռանչպար ու հողեղեն են, հնից, անցյալից չեն հեռանում, նորն էլ չեն կորցնում, գումարում են, զորանում, ուրիշի ցավին ընկեր են...»: Ու ինքը շուքով խոսեց, հավատավոր մի խորհուրդ էր վառվել մեջը, այդ

հրդեհից ուզում էր ջահեր վառել: Թաթուլը Սարգսի, Տիգրանի, Արթուրի նվիրումի այդ ջահերը տեսնում էր, նրանց հետ էր միշտ գյուղում ու քաղաքում: Այսօր հաղորդվելու նրանց մաքրամաքուր ու ազնիվ կեցվածքը նա ընկալում էր իր եղբայրների վկայությամբ, հայրական տանը:

- Հայրի՛կ, քիչ առաջ մենք ուրիշ էինք՝ սավառնող, երազող, մի տեսակ ռոմանտիկ,- բարձր ասաց Թաթուլը,- դու ներս մտար, ու մենք իջանք հողին, պնդացանք երկրային օրենքով:

- Ինչքան էլ արծվանաք, ոտքի տակ հող պըտի էղնի, տղա՛,- ժպտաց Ժորան,- արծիվը, որ աստղերուն էլ հասնի, իր աչքը հող ու սարին է, պըտի վերջիվերջո գա, իջնի իր բնին, իր ձագերու մոտ:

Թաթուլը մեղմ շշնջաց «Արծվի երգը», սենյակն օրորվեց ափ որոնող նավի նման: Նրա ձայնը կարոտի էր, կատարյալ, վաղուց խտացված ցավերի անհերքելի կանչ: Նա, կարծես, չէր երգում, այլ պատմում էր, ձուլվում տան պատերին՝ ամուր բռնած իրենով այնքան հմայված մոր ձեռքը:

Ժորայի հարկի տակ ձմռան գիշերը հեռանում էր խռովքներից:

* * *

Երկրաշարժի ողբերգական օրը որքան մնում էր ժամանակի բեռան տակ, նույնքան լսելի էին դառնում նրա ցավն ու մորմոքը: Դա ավելի էր զգացվում, երբ աշխարհի բոլոր կողմերից էին գալիս, աջակցում էին, կարեկցում: Հայոց լեռնաշխարհի ընդերքի տնքոցը դեպի արևն էր ձգվել՝ այդ ճանապարհին տակնուվրա անելով բացառապես ամեն ինչ: Ճեղքվել էր երկրի կեղևը, հայոց սրտի պես երկփեղկվել և այլևս չէր գտնում ամոքվելու ճար: Գալիս էին դրսից՝ բեռներով, լիքը-լիքը, բայց ճզմված, հուղարկավորի հանգանակությամբ: Վիրավորված էր հայը, մայր հողի վրա հեքիաթայինն արարած մարդը կայծակին խփված իր ճրագն էր փնտրում, կորցրած օրորոցի տեղում փլատակներին խաչապատկերներ էր կախել, ծունկ իջել՝ հայացքը նորից երկնավորին, հավատը՝ դարձյալ Աստծուն:

Հայաստան երկիրը ճակատագրի այս տեսակն էր շոշափում 1989-ի սկզբներին, երբ օր օրի ծանրանում էր դրությունն Արցախում, հազարավոր փախստականներ էին հավաքվել Ստեփանակերտում, լարվածությունը մեծացել էր պայթելու աստիճան: Փետրվարի վերջերին նշվեց սումգայիթյան ողբերգության մեկ տարին: Արցախը դարձյալ պահանջում էր դուրս գալ Ադրբեջանի կազմից, միանալ Հայաստանին: Ծանրանում էր հյուսիսային Արցախի վիճակը: Թեև

Շահումյանի շրջանային խորհուրդը որոշում ընդունեց շրջանը միավորել Արցախի ինքնավար մարզի մեջ՝ կանխազգալով տեղահանման և բնակչության ոչնչացման սպառնալիքը, սակայն այդ ցանկությունը անպատասխան մնաց և չունեցավ իր տրամաբանական ավարտը: Վտանգի տակ էր Գետաշեն, Ազատ, Մարտունաշեն, Կամո և մնացած գյուղերի ճակատագիրը:

Հայաստան-Արցախ ուղիղ գծի վրա պրկված էին ցավն ու մորմոքը, հույսն ու հավատը: Մեծ շարժումը, երկրաշարժի աննախադեպ ավերածությունը, Արցախում հայ ժողովրդի վիճակը դարձյալ մղում էին հային իր մեծագույն իմաստությանն ու բնազդին վստահել սեփական ուժերին, ամուր կանգնել մայր հողին: Այս հարցում մեծ էր Հայաստանի դերը, Երևանը դարձել էր ազատաբաղձ ուժերի համահավաք ճամբար: Ամենուրեք՝ տանն ու դրսում, փողոցներում և հրապարակներում, ուսումնական հաստատություններում, եռում էր արցախյան հարցը: Պահանջը մեկն էր՝ Արցախի միացումը Հայաստանին, իսկ վերևների պատասխանն էր՝ ոչ: Եվ այդ անհեռատես «ոչը» ճոճվում էր դամոկլյան սրի նման, հարկադրում ճշգրտել պատմության սխալը, ստիպում հային, որ այն սրբագրի իր ոգու և արյան հրամանով:

Այն, ինչ արդար էր և հավասարակշռված, պետությունը չէր ուզում իրականացնել, հարկադրաբար դրա լուծման ուղիներն էին որոնում ժողովրդական զանգվածները, հեղինակավոր անհատականություններն ու ազգային սրբազան նպատակներ երազող նոր սերունդը: Մայրաքաղաքում, նրա սահմաններից դուրս՝ բոլոր շրջաններում, փոքր ու մեծ քաղաքներում ու բնակավայրերում կանխազգալով վտանգավոր դեպքերի զարգացումը՝ հասարակական-քաղաքական ակտիվիստները, խորհրդային բանակով անցած, Աֆղանստանում կռված աննկուն ռազմիկները, ինժեներն ու մանկավարժը, ճարտարապետն ու բանվորը, հողի մշակն ու ուսանողը, գիտության ոլորտներում նոր ուղի հարթած միջին ու ավագ սերնդի մարդիկ ոգեկոչման դաշտում միավորվում էին, որ այլևս չկորցնեն լինելիության անկասելի թափը:

Երերում էին խորհրդային պետության հիմքերը, ջրի երես էին ելնում քաղաքական այն կարկատանները, որ կարել-կպցրել էին, հրամանագրերով սոսնձել: Դրանք նոր ժամանակների ճակատագրական շրջապտույտներում այլևս չէին դիմանում: Այդ փտած կարկատաններից էր Արցախը ուրիշին նվիրելու որոշումը, որը ցցվել էր պատմության ծածուկ գզրոցներից, իրենով բացահայ-

տում էր ստալինյան մշուշոտ ժամանակների դիմապատկերը: Եվ ահա եկել էր պահը աշխարհին ներկայացնելու ճշմարտությունը, մեծ շարժումի անկասելի թափով միանալու երկրագնդի վերադարձող խղճին... Ո՛չ վերևների քաղաքական համրությունը, ո՛չ էլ լեռնաշխարհի ընդերքի երկրաշարժային հորձանքը չկարողացան մեղմել ժողովրդական զայրույթը:

... Թաթուլը համալսարանից դուրս եկավ այլայլված, խտացված խռովքը, որ վերջին օրերին ուղեկցում էր նրան, այդ պահին վերածվել էր տագնապի: Հենց լսարանում նրան լուր բերեցին, որ Մանվել եղբայրը և նրա ընկեր Աղասին Լենինականում զենք հայթայթելու ժամանակ ստացել էին մարմնական ծանր վնասվածքներ: Նա հովազի նման հևալով, քայլում էր, որ վայրկյան առաջ հասներ կապի հանգույց: Քառորդ ժամից նա արդեն տեղյակ էր, որ Լենինականում տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումներից զենք վերցնելու պահին նույն «վաճառողները» հասցրել էին թիկունքից կրակել: Թաթուլը գերադասեց Ռուզանին ոչինչ չասել, խնդրեց ընկերներից մեկին երեկոյան քրոջը տեղեկացնել, որ ինքը գործով գնացել է գյուղ:

Ավտոկայանում նա ոչ թե Թալին, այլ ճեպընթացով մեկնեց Լենինական: Մտքում նաև իրեն էր մեղադրում, որովհետև տվել էր իր համաձայնությունը զենք ձեռք բերելու համար: Թալինում, հատկապես Արեգում ստեղծված հայրենասեր տղաների խմբի մասին նա մանրամասնորեն գիտեր, նրա անդամները բացառիկ նվիրյալներ էին: Թաթուլը մտքում խոսում էր նրանց հետ, բայց աչքերի առջև Մանվելն ու Աղասին էին: «Ի՞նչ սխալ էին թույլ տվել, որ հայտնվել էին ծուղակի մեջ, գոնե ծանր հետևանքներ չլինեն, երկուսն էլ փորձված և հասուն մարդիկ են...»: Թաթուլն զգում էր, որ իր մտքերը ճեպընթացից շատ առաջ անցել սուրում էին Շիրակի դաշտ: Ճանապարհին հոգնության բեռը ծանրացավ, գլուխը ետ տարավ դեպի թիկնակը: Շուրջը 1989 թվականի մայիսն էր՝ փարթամ, արևոտ: Մայրուղուց աջ ու ձախ կանաչ բացատներ էին, ծաղիկներ ու ծաղկաշուրթ քարեր: Բլրակների լանջերին գառների հետևից վազվզում էին մի քանի պատանի՝ անհոգ, գարնանաձայն: Թաթուլը երանելի մի թովչություն բռնեց ներսում, աչքերում ցոլցլաց հիշողության անհերքելի շուքը: Այսպիսի տեսարանների մեջ էր անցել իր մանկությունը: Զարմանքներով լեցուն այդ պահերը չմոխրացող թրթիռներով արթնացան, եկան, և ոլորվող ճամփան հնազանդվեց բերկրանքների պաշարումին: Թաթուլը փակեց աչքերը, հաղորդության բնապաշտ

լույսը բեկբեկվեց հոգու ամպերին նստած խռովքին, ակնթարթորեն հեռացավ իր վերագտած հեքիաթից, մտքով տրորեց գարնանագոլ գույները, սլացավ դեպի եղբայրը: Ոչ ոքի չմեղադրեց, չխեղճացավ կատարվածի համար, բայց չէր հանգստանում, հատկապես գյուղից ստացած տագնապների, գյուղական հոգեբանության մեջ առաջացած տարակարծության համար: Ոչ մեկի նա չէր մեղադրում և գտնում էր, որ ուրիշ ոչ ոք իրավունք չունի մեղադրելու այդ համարձակ տղաներին: Չէ՞ որ նրանք, վտանգելով իրենց կյանքը, զենք էին ճարում, որպեսզի ուժեղանար նպատակի զինվորը:

... Լենինականում Թաթուլը գտավ վիրավոր եղբորն ու նրա ընկերոջը: Այստեղ էին համագյուղացի Սարգիսը, Սամվելը, Տիգրանը, Գոռը, Շահենը, որոնք աննկատ հետևում էին դեպքերի ընթացքին:

- Տղաները մեղք չունեն, Թաթո՛ւլ,- վիրակապը ձգելով՝ ասաց Մանվելը,- պարզապես մենք անհաշվենկատ գտնվեցինք:

- Լավ է, որ գոնե այսպես վերջացավ,- եղբորը հանգստացրեց Թաթուլը և մոտեցավ Աղասուն,- առաջին ճակատամարտը լավ տվեցիք, սա էլ է օրինաչափ:

- Գյուղում մեծ աղմուկ է, ծանր լուրեր են պտտվում այնտեղ,- մտահոգ ասաց Սարգիսը,- երևի հարկ կա շուտ հասնել, պարզաբանել:

- Կարևորը մեր երկու վիրավորների վիճակն է,- հանգստացրեց Թաթուլը,- այս բարեբախտությունից հետո Արեգում բոլորն էլ ճիշտ կհասկանան:

Մանվելն ու Աղասին մեկ-մեկ ներկայացրին բոլոր մանրամասները, խոստովանեցին, որ այս վիճակը դյուրահավատության արդյունք էր, բայց ուրախ էին, որ կատարել էին հանձնարարությունը:

Տղաները վիրավորներին տեղավորեցին ծանոթների բնակարանում, մասնակի զրույց ունեցան բուժող բժշկի հետ և շտապեցին Արեգ: Միայն Թաթուլի ներկայությունը, նրա խոսքը մեղմացրին գյուղում առաջացած զայրույթն ու դժգոհությունը: Թաթուլի հայրն ու եղբայրները, Աղասու հարազատները փոխվեցին միանգամից: Ժամանակի թելադրանքը, պահի լարվածությունը, ընդհանուր վիճակի մասին Թաթուլի բացատրությունները հասկանալի արձագանքների արժանացան: Ակտիվիստ-տղաների խումբը շրջանցեց, դուրս եկավ անախորժ իրավիճակից: Երդվյալները գիտեին, թե ինչ էր սպասվում առաջիկայում, անգամ հաշվարկում էին որսորդական հրացանները, խոսում դրանց տերերի հետ, նույնը կատարում էին շրջկենտրոնում, տարբեր գյուղերում, որտեղ նույնպես սկզբնավոր-

վել էին գործուն խմբեր:

Թաթուլը՝ որպես համալսարանական, շատ ավելի մոտ էր կանգնած իրադարձություններին, շփվում էր մեծ Շարժման ազատամարտիկների հետ, մոտիկից զգում «Ղարաբաղ» կոմիտեի ազատաբաղձ շունչը: Եվ ամեն անգամ գյուղ գալիս, նա գրեթե ժամանակ չէր ունենում մի կարգին զրուցել ծնողների ու եղբայրների հետ: Գալիս էր լուռ, ինքնամփոփ, շատ հարցերի պատասխան ուներ, բայց գերադասում էր քիչ խոսել: Նա չէր հանդուրժում նրանց, ովքեր, իրադարձություններին բոլորովին անտեղյակ, փորձում էին ճառախոսել, ճշմարտության պատկերը խճողել: Այդ պահերին Թաթուլը ափերից դուրս էր գալիս, բայց չէր վիրավորում, ձայնը բարձրացնում էր, սակայն ասելիքի իր համոզիչ ձևն ուներ, որով ցրիվ էր տալիս կարծիքների անհրապույր տարաձայնությունը:

Այդ օրն էլ նրա համար շարքայիններից չէր: Վաղ առավոտից տագնապի ստվերը նրան հետևում էր, հանգիստ չէր տալիս: Միայն ինքն էր նժարում սրտին զարկող մղձավանջային հարվածները, որոնց բեղուն զնգզնգոցը Երևանից հասցրեց Լենինական, վիրավոր տղաների ոգու փայլը զորացրեց, գյուղ գնաց սուրհանդակի նման, ապա վաստակած հնձվորի պես տուն եկավ կեսգիշերին, գլուխը դրեց Սեդա մոր ծնկներին և հանգիստ քնեց:

Ժորա հայրը հաջորդ երեկո լուրջ խոսակցություն ունեցավ Թաթուլի հետ: Իսկ նա իրիկնապահին հանդիպել էր շրջկենտրոնի ընկերների հետ, սովորականից ավելի լրջացած՝ առանձնացել էր իր սենյակում: Հայրը դուռը կտրուկ բաց արեց և գործնական ներս մտավ: Թաթուլը հապճեպությամբ ծածկեց ճամփորդական պայուսակը: Հայրը նկատելու չտվեց նրա անսովոր զգուշավորությունը, նստեց գահավորակին և անխոս նայեց որդուն:

- Հայրի՛կ,- ժպտաց Թաթուլը, կարծես կանխորոշեց անակնկալ զրույցը:

- Հա՛, բալա՛, ես եմ, խոսելիք կա:

- Ինչի՞ մասին,- լրջացավ որդին:

- Քո ամուսնության մասին, տղա՛,- ձայնը քիչ բարձրացրեց,- էլ դես ու դեն մի՛ գցի:

- Էսօր, վաղը կլինի, շտապելու ի՞նչ կա:

- էն աղջիկ քու մտքի մեջ է, չէ՞,- հարցրեց հայրը և սևեռեց խուզարկու հայացքը:

- Իրինա՞ն...

Հայրը պատասխանի փոխարեն լայնաժպիտ նայեց ու քթի տակ

խնդմնդաց:

- Ես էլ եմ մտածել այդ մասին, հայրի՛կ, հենց վաղը հասնեմ քաղաք, կորոշենք ինչ անել, տեղյակ կպահեմ:

- Իմացե՛ք, ժողովրդի փորձված խոսք է՝ ամուսնությունը չպըտի ուշանա, էդ ճակատագիրը պըտի շուտ բար տա, օջախին հարսնիք էլ է պետք:

- Էս օրերին դժվար է մտածել հարսանիքի մասին, հայրի՛կ, տեսնում ես՝ ինչ է կատարվում շրջապատում:

- Էդպես է, գիտեմ, բայց ապրելով ու նոր օջախ ստեղծելով՝ պըտի կրնանք մեր ոտք առաջ գցել,- հորդորեց հայրը,- վշտին ընկեր դարձար, նոր վշտով կզուգավորվի, դրա դեմը պետք է փակել միայն ուրախությամբ ու բարի գործերով:

- Լավ բան ասացիր, հայրի՛կ,- Թաթուլը չկարողացավ թաքցնել հոր հանդեպ խանդաղատանքը:

- Էդպես է, բալա՛, մի՛ ուշացրու, իմ ասելիքն էս էր,- ասաց Ժորան և գոհունակ դուրս եկավ որդու ննջասենյակից:

Թաթուլն այլևս չկարողացավ այլ բանի վրա կենտրոնանալ, հոր խոսքերը շարունակում էին ճամփորդել նրա հոգում: Ինքնազրույցը ձգվեց դեպի ծնողները, ներքուստ հպարտացավ, կարծես, առաջին անգամ այնքան ուշադիր նայեց պատից կախված իրենց մեծ գերդաստանը ներկայացնող լուսանկարին: Պապ ու տատը կենտրոնում էին, կողքին՝ հորեղբայրն ու հորաքույրը, հետո իր ծնողներն էին՝ շրջապատված վեց երեխաներով: «Մեծ գերդաստանն ուրիշ է, հազար չար ու փորձանք կա, դրա համար էլ գաղթականները մեկ ու երկուսով չեն բավարարվում՝ վեց ու յոթ, ինը-տասը, նույնիսկ ավելին... Ճակատագրով զարկվածների երդումն է դա, մեկ նահատակի դիմաց երկու-երեք օրոցք օրորել, չթողնել, որ արմատն ու արյան կանչը խռովեն...»: Թաթուլի հայացքը չէր կտրվում լուսանկարից, զարմանալի տուրքով էր հայրը փոթորկել նրան, զգում էր ներքին կրակների ներկայությունը, առանց այն էլ կրծքի տակ բորբոքուն խառնարանը զարթնել ու գալիս էր զուլալ շողքերով: Թաթուլը հենց այստեղ իր որոշումն ընդունեց, սիրած աղջկա և իր ընտանեկան միասնության վճիռն էր այն:

Զղջաց, որ հորը կոնկրետ ու լուրջ պատասխան չտվեց, բայց ներքուստ հաշտվեց իր հետ, փշրեց բոլոր պատճառների պատնեշը: Նա անձնական խոհերով դեռ այսքան չէր լցվել, մոլորվել զգայականի և իրականի սահմանագծում: «Պատկերացնում եմ, թե այս կտրուկ առաջարկությունն ի՞նչ ցնծությամբ կընդունի Իրինան:

Թե ես երկար սպասեցնել տվեցի, ինքն էլ լեռնցու վեհությամբ մնաց անառիկ, չիջավ իր բարձունքից, հավատաց, վստահեց... Չէ՜, Իրինա՛, մեր սիրո հեռակայումը ավարտեց իր քննաշրջանը, պիտի միանանք...Հայրս այդպես հասկացրեց, փիլիսոփայեց ամուսնության շուրջը, կայծը տվեց, որ ես բռնկվեմ: Մի՞թե մենք այդ կրակների փորձությամբ չենք անցել, կռվել ու հաշտվել ենք, վշտացել ու մեղմացել ենք: Հայրս շատ է ուզում լինել քո եղեգնաձորում, պատմել եմ, սիրել է, սպասում է այն օրվան, երբ խնամախոսության իր պատվիրակությունը գլխավորած՝ կգա նվաճելու քո աշխարհը...»: Թաթուլը մի պահ խորը շնչեց, ծանր ոտքի կանգնեց, կտրվեց հուզական երանգներից, բայց զգաց, որ իր մտքերը ծիծառների պես դուռ ու լուսամուտներից ներս էին խուժել: Եվ ուրախ էր նա և անասելի տխուր: Իրեն չէր մեղադրում, որ ծանրաբեռնված էր բոլոր կողմերից. չէր էլ զարմանում, որ իր տարիքի երիտասարդը՝ համալսարանի երրորդ կուրսի ուսանողը, այսքան հասցրել է ձուլվել ինքնամոռացությանը, սրտով մերձենալ Հայ դատի արդար կանչին, լինել հանուն ազատ Հայաստանի, հանուն ազգային սրբազան գաղափարների նվիրյալների շարքերում:

Սա ճակատագրի տեսակ էր, որ իրենն էր, վերուստ տրված իր հողն ու երկինքը, իր ճամփորդելու մոլորակները: Թաթուլն այդ ճակատագրի տերն էր ու վկան: Իրինան այսպես էլ ճանաչում էր նրան, եկել ու համալսարանում միացել էր նրա «Ղարս» ինքնագործ խմբին, ընդունել էր այդ խմբի երգն ու տաղը, ոգեկոչումն ու ինքնայրումը: Եկել ու գտել էր իր ասպետին՝ անձ՝ անզուգական, հայրենյաց երգն ու բանը իմացող, սրբազան նպատակն ու սեփական կյանքը համազոր շղթաներով պսակած արեգցի արեգնատենչ երիտասարդին:

* * *

Երկրաշարժից անցել էր վեց-յոթ ամիս, սակայն դրա ծանր հետևանքները չէին ջնջվում: Թաթուլը 1989-ի գարնանամուտին որոշեց մեկնել Սպիտակ: Չգնալ չէր կարող, գնաց ու դաժանորեն փոշմանեց: Այն, ինչ նա տեսավ այստեղ, որքան էլ լսած լիներ ուրիշներից, չէր կարող ամբողջական պատկերացում տալ... Կրծքի տակ այրող կրակներ ուներ, պարտքի անլռելի ահազանգ, որն արդեն մի քանի ամիս հետապնդում էր իրեն, հրամայում գնալ: Գիտեր, որ մեծ ցավ էր ապրելու. չկար իր տեսած Սպիտակը, չկար սպիտակցի ընկերը, որի անմոռաց շուքը արդեն գիշեր ու ցերեկ տխրությամբ շոյում էր

նրա լսելիքը, անբացակա կանչ էր դարձել, չփակվող վերքի կսկիծ:

Չյունը վաղուց քաշվել էր գագաթները, նոսրացել էր լանջերին, սևահող արտերում առաջին ծիլերն էին, ամենուրեք տաք գոլորշու խուտուտ էր: Թաթուլը, Սպիտակ չհասած, թեքվեց ձախ, բարձունքների վրա շիրմատունն էր՝ շարք-շարք հողաթմբեր, բարուրված լռություն, հեռացող, մոլոր ոտնահետքեր: Նա հենվեց ճամփեզրի ժայռին, մեղավոր ու մարած նայեց պաղ հորիզոնին, կապույտին, անվարժ թուխսի պես տաքացնող վաղ գարնան արևին, բառեր գտավ սրտի ծոցերում, ներսում հեղձուկ էր, հուզմունքի անդարմանելի սահք: Օրը շաբաթ էր, միջօրե, ննջեցյալներին այցի էին գալիս, խումբ-խումբ ու խմբված չէին, քիչ-քիչ էին գալիս: Նրանց ցավը միատեղ էր, ուխտը՝ վիրավորված, տաճարատունը՝ անպատարագ: Թաթուլն իր փոխարեն էր եկել այստեղ, իր հավաքական վշտի հետ էր, որի խորքերում տնքում էր Գարիկի լռությունը: Իր երկու տարվա ընկերն էր՝ հարևան բուհում սովորող տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող: Թաթուլը զննող հայացքով քննում էր մոտ ու հեռուն, կարծես, ուզում էր մերձենալ այս բարձունքների լռությանը, վերագտնել երկրաշարժին զոհ դարձած հմայիչ երիտասարդի լուսավոր ժպիտը: Շիրմատանը դեռ ոչ ոք չկար, երբ Երևանից Վանաձոր մեկնող ավտոբուսը նրան հասցրեց Սպիտակ: Հիմա դեռ շիրմաքար չունեցող ընկերոջ հողաթմբին կռթնած, նա խոնարհվել էր ամենաթանկ խորհրդով, մտքում զրուցում էր Գարիկի հետ, վերհիշում նրա այնքա՜ն-այնքան կենսառատ խոհերը, ծրագրերը, սիրո անսահման լույսը՝ շաղախված Լիլիթի բաբախուն երգերին: «Դաժան է կյանքը, եղբա՛յրս, շատ է անհասկանալի ու դաժան: Իսկ քեզ համար՝ անսպասելի մի շրջապտույտ, երբ քո մեղրաշուրթ արեգակը ձմռան լուսաբացին քեզ տարավ երկինք, անդարձություն... Ուզում եմ ճչալ քո անավարտ երազանքների կանչերով, ետ բերել քո և Լիլիթի սիրո հրաշագեղ սոսափը, հաղորդվել անտեսանելի մի հրաշքի, բայց գիտեմ, եղբա՛յրս, որ այդպիսին չկա, հեքիաթը հեքիաթ է մնում, կորուստը՝ կորուստ, մարած սիրտը՝ լռություն: Ես եկա, որ քեզ տանեմ ինձ հետ, այս լռությունը պակասեցնեմ քեզնից, այս լեռնաշխարհի վեհության աչքերում տեսնեմ իմ խոստովանանքի արցունքները, հեռանամ այնպես, որ դու իմ ոտնաձայները լսես, որ իմ աղոթքներով հողը հանդարտիկ ծաղկի քո բարուր-բարձունքներին... Ես եկա, որ պարտք չմնամ ինձ, որ ժամանակներ անց՝ աներևույթ հրաշքներով իրար ձգվող մեր հոգիների հանդիպմանը, դու ինձ չնախատես...»: Թաթուլը

ծանրորեն բարձրացրեց գլուխը, դեռատի երկու աղջիկ կանգնած էին նրա թիկունքում՝ ձեռքներին սպիտակ մեխակներ:

- Գարիկի հարազատների՞ց եք,- մտքերից սթափվեց Թաթուլը և անուշ ժպտաց նրանց:

- Մեր քեռին է,- տխրաձայն պատասխանեցին նրանք:

Թաթուլը, նկատելով նրանց արցունքները, այլևս ոչինչ չհարցրեց:

- Ապրեք, որ չեք մոռանում, ձեր քեռին իմ մտերիմ ընկերն է, այսօր նրա ծննդյան օրն է, եկա շնորհավորելու,- անթաքույց երախտիքով ասաց նա:

Տասներեք-տասնչորս տարեկան աղջիկները շող գտան արցունքների մեջ, մոտեցան, հարազատի պես գրկեցին Թաթուլին և խուլ հեկեկացին:

Շիրմատան բոլոր կողմերից լսելի էին հառաչ, մորմոքուն ձայներ, լաց ու կոծ, անեծքի անփարատելի խոսքեր: Թաթուլը զգաց, որ չի դիմանում այս ողոքագին իրողությանը, հրաժեշտ տվեց աղջիկներին, կռացավ, համբուրեց ընկերոջ հողաթումբը և գլխիկոր իջավ:

Ներքևում քաղաք տանող մայրուղին էր:

* * *

...Եղեգնաձորում՝ հուսաձոն լեռների գարնանագոլ ավազանում, Ժորան ծափահարեց Թաթուլի և Իրինայի նշանահանդեսը: Ամառ, հուլիսյան լույս առավոտ էր, շուրջը շամանդաղի գրկում ժայռապար էր, ղարսեցիների երգը վտակ-վտակ հասել էր այստեղ, առու-աղբյուր, ծաղկունք ու ծառ խանդաղատանքի մատյաններ էին թերթում, խնկաբույր շշուկները աղջիկների շուրթերից սոսափում էին բարության դարձը: Երկինքը կապույտներից տիրանվեր օրհնանք էր շաղել քարաբարձերին, քարաշամբերին, քարաթումբերին... Տոն էր երկու սրտի, բաբախուն ու տաք, բացառիկ մաքուր, մտերիմ ու բարկ սրտերի: Թաթուլը նայում էր լիաժպիտ, առջևից պարը տանում էր հայրը, աջ ու ձախ՝ զավակները: Սերգոն, Մինասը, Գրիգորը, Մանվելը, Ռուզանը, ապա հորեղբայրն ու հորաքույրը՝ Վաղարշակն ու Յուղոն... Թաթուլը հոգով այդ պարի մեջ էր, գաղթականի մռնչացող պարի, հոր ու պապի, Կաղզվան-Նախիջևանի պատկեր-պատմությունը հիշեցնող հրավառ «Քոչարու» ցոլքերի մեջ: Չդիմացավ, սեղմեց Իրինայի ձեռքը, ապա ծփաց արծվի պես, միացավ պարախորհրդին, շռինդով հորդեց, ինչպես Արաքսի գարնան հեղեղը Սևաբերդի կողերին բախվելիս: Նշանահանդեսի մասնակիցները այսպիսի փոթորկուն պարերի չէին հանդիպել, այս-

պիսի նորափեսայի, որն արդեն գերել էր իր հայրենաշուրթ երգ ու խոսքով, հիմա էլ անկասելի ու աննման էր պարի մեջ: Նրա կտրուկ շարժումները, ուսերի բեկբեկուն ցնցումները, ոտքերի արագընթաց վեր ու վայրէջքը հրամայում էին կախարդվել, զմայլվել, հիանալ:

Սա էր Թաթուլը... Ամեն տեղ ինքնատիպ, անկրկնելի, միայն իր նման, լեցուն ներշնչանքով, պարին տալիս էր իր շուքը՝ անպարտելի ոգին, երգերում խտացնում հուշապատում, պատմություն ու փառք: Որտեղի՞ց էր նա վերցրել այսքա՛ն կորով, ծաղկել իր ներսում, ծածկել իր ճանապարհին հանդիպած չնչինն ու սովորականը, ամբարել հույզերի ներդաշնակ շերտերը, հույսերի շշուկահամ դարձի օրորներով ոսկեզօծել անտերունչ տարիների ճաքերը:

Այսպես նրան ճանաչեցին նաև Եղեգնաձորում: Իսկ նշանադրությունից հետո Արեգ վերադարձող Կրպեյանների պատվիրակությանը ավելացել էր մեկը՝ Իրինան: Նա մոմի պես ձուլվել էր Թաթուլի հոգու հրդեհին, գիտեր, որ այնտեղ են իր բախտի ճոճքը, սիրո մշտահեղ գույների իր առաջին հեքիաթը:

Արեգում Սեդան հաց ու նշխարով ընդունեց օջախ մտնող հարսին: Երգ ու օրոր, հուշ ու հավատամք ծվարեցին բլրաշուրթին կպած Կրպեյանների տոհմիկ օջախում: Գյուղը թնդաց Թաթուլի սիրո պսակի առջև, երջանկության ավազանում բարության մկրտություն էր: Առաջին վկաներն Արեգն ու Արտին սարն էին, Ժորան ու Սեդան:

* * *

Արցախում չդադարող հանրահավաքները, լարվածությունը ծանրաբեռնել էին օրվա միակ թեման՝ անկախության ձեռքբերման թեման: Թաթուլը Երևանում էր, հայրենի գյուղում, Սյունիքում, ամեն տեղ նկատելի էր իրադարձությունների վերընթաց ալիքը: Ամռան կեսերին Կրկժանի հայերի համբերության բաժակը լցվեց, տեղի ունեցավ առաջին բախումը ադրբեջանցիների հետ: «Միացում» արցախյան ժողովրդական շարժումը զարթոնքի կոչով կրկին անգամ հիշեցրեց Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշման դավաճանական բնույթն ու հետևանքները, անհերքելի փաստերով մատնանշեց 1921 թվականի մարտի 16-ի մոսկովյան պայմանագրի սնանկությունը, որով Թուրքիայի և Ռուսաստանի համաձայնությամբ Նախիջևանը տրվեց Ադրբեջանին:

Արցախ-Հայաստան ցամաքն ու օդը, երկինքը, մարդկային սրտերի հաղորդությունը միավորել էին տարիների խորքերից եկող զայրույթն ու հիասթափությունը, նվիրումն ու համակրանքը, սերն ու

արդարությունը: Ժամանակի շունչը բեռնված էր, բորբոքուն կրակը սրտից սիրտ էր անցնում: Երևանը լսում էր Արցախ-հրաշամանուկի սրտի տրոփյունը: Հայրենյաց հին ու նոր բախտին ընծյալ անհատները, լույսի հավատամքով ապագայի անխորտակ ամրոցը տեսնող սերունդը քուն ու դադար չուներ: Հիասթափությունն ու զայրույթը բերնեբերան հեղեղի պես հորդեցին, երբ Շուշիում մոլագար ամբոխը ավերեց սովետական երկրի համար իր կյանքը տված կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի և մեծագույն գիտնական Իվան Թևոսյանի կիսանդրիները: Նույն ճակատագրին էին արժանացել մարշալ Հովհաննես Բաղրամյանի և Ստեփան Շահումյանի հուշարձանները Կիրովաբադում և Բաքվում:

Այդ օրերին դարձյալ հզոր ու անհանգիստ էր երևանյան ոգու «մեղվափեթակը», հատկապես ուսումնական հաստատությունները: Երիտասարդությունը, ուսանողությունն առաջինը կոչ արեցին՝ Արցախի, նրա ազգային մշակույթի, ժողովրդի դարավոր արժեքների պահպանության համար չխնայել ոչ մի բան, բարբարոսների դիմաց դուրս գալ պայքարի: Իրադարձությունների բուռն ընթացքը դարձյալ բախվում էր վերևների կռապաշտությանը, արցախահայության արդար ձայնը, նրա պահանջը շրջանցում էին Միության մեծերը: 1989-ի հոկտեմբերին զինյալ ավտոշարասյունը անցնելով Ստեփանակերտով, հրազեններից կրակեց փողոց դուրս եկած խաղաղ բնակիչների վրա: Սակայն դրանով էլ չկարողացան ընկճել ազատաբաղձ մարդկանց. ամենուրեք սասանվում էին չարության հիմքերը, փտած ու բորբոսնած քաղաքականությունից թափվում էր ժանգը: Այդ օրերին ժողովուրդը իրավունքով բաց արեց Գանձասարի և Ամարասի վանքերի փակ դռները, հնչեցին հուսո և հավատի զանգերը:

1989-ի ձմռան առաջին օրը աննախադեպ ցնծություն էր բերել, Հայաստան-Արցախի միավորման որոշումն էր ընդունել ՀԽՍՀ ԳԽ արտահերթ նստաշրջանը: Քառասուն օր ծովածավալ մնաց հազարավոր մարդկանց սրտերի բաղձանքը, քառասուն օր հավատով սպասեց ժողովուրդը, սակայն 1990 թվականի հունվարի 10-ին Գորբաչովի ստորագրությամբ այն մերժվեց: Ցավն ու հիասթափությունը, հուսախաբությունն ու զայրույթը ստիպեցին հույսը դնել սեփական ուժերի վրա, սատար կանգնել ընդունած որոշմանը:

Հունվարի երկրորդ տասնօրյակում, օգտվելով վերին վարչակարգի թողտվությունից, Բաքվի հայերի նկատմամբ կիրառվեցին բռնարարքներ, զոհվեցին երեխաներ, կանայք, տղամարդիկ, ծերեր:

Ցեղասպանության ուրվականն էր շրջում Բաքվում, ով կարողանում էր, փախչում, հեռանում էր, մնացողները զոհ էին դառնում խուժանին:

...Այս լուրերից մինչև հոգու խորքը դառնացած էր Թաքուլը: Թեև ձյուն-ձմեռ էր, ցուրտ, որոշեց գնալ ուսանողական հանրակացարան: Ճանապարհին հանդիպեց Վարդան Բախշյանին. երկու բորբոք սիրտ, ափերից դուրս եկած երկու առյուծ քայլում էին արագ-արագ, խոսում բարձր, իրար չէին զարմացնում, բայց զարմանալի մի լրիվությամբ բացել էին իրենց հոգիները, պատրաստ էին ամեն ինչի: Հանրակացարանում բարձրացան Թաքուլի սենյակը: Նա թեև քրոջ տանն էր մնում, բայց այստեղ իր մահճակալն ուներ: Թաքուլն իր տեղը զիջել էր թալինցի ընկերոջը, քանի որ նա ապաստան չուներ: Այդ պահին, բարեբախտաբար, սենյակում ոչ-ոք չկար, երկուսն էլ տաքացած էին, անկանխատեսելի լարված: Նրանք գիտեին, որ այս վիճակում էին բոլորը հայոց երկնքի տակ: Թաքուլը սուրճ պատրաստեց, սուրենավանցի Արմենի բերած օղին բաց արեց, երկուսով նայեցին իրար, բաժակները զայրույթով զարկեցին, բայց գրեթե չխմեցին: Ձմռան թախծոտ օրը եկել, խառնվել էր նրանց բեկված տրամադրությանը, հուսահատ չէին, բայց Մոսկվայի որոշումը ալիքվում էր նրանց ներսում: Դարձյալ խլացվել էր արդարության ձայնը, փշրվել ժողովրդի մաքրամաքուր հավատը: Տղաները խաչված հարցերի զիգզագներում փորձում էին պահպանել իրենց կարծիքը, հետո դեմ էին առնում մի հանգուցակետի, որից այն կողմ վետվետացող հույսը հառնում էր ինքնայրումի սեփական կրակից:

- «Պայքար, պայքար մինչև վերջ» կարգախոսը պետք է բառահույզերից ձերբազատվի, հարթակներից իջնի հողին, Վարդա՛ն,- մռնչաց Թաքուլը,- զենքով միայն կնվաճվի ազատությունը:

- Բոլոր լուծումները տանում են դրան, բայց համընդհանուր կազմակերպվածություն, միասնություն և կամք են պետք, ուժ ու զենք են պետք:

- Կարծում եմ՝ իրադարձությունները կկանխորոշեն դրանց ոչ միայն կարևորությունը, այլև կենսական անհրաժեշտությունը,- ասաց Թաքուլը,- մեր ժողովուրդը դժվարին պահերին է միշտ դրսևորել քո մատնանշած միասնությունն ու կամքը, միայն կողքից չխանգարեն:

- Դու ճիշտ ես, Թաքո՛ւլ,- տեղում անհանգիստ շարժվեց Վարդանը,- մի՛ մոռացիր, որ մեր պատմության բոլոր ժամանակների կշեռքին սա ամենածանրն ու պատասխանատուն է: Նայիր, թե մեր դեմ ովքեր են կանգնած, մեծ տերություններ կան, որոնք շա-

հագրգռված չեն Հայաստանի ճակատագրով:

- Միշտ էլ դա անպակաս է եղել, Վարդա՛ն, հիմա գուցե ավելի շատ, բայց Մեծ շարժումը հավաստեց, որ վիթխարի ուժ ունենք:

Սենյակի դռները լայն բացվեցին, ընդհատվեց նրանց զրույցը, գրեթե ներս խուժեցին ուսանող տղաները: Մրսած էին, մոտեցան, ջերմ բարևեցին, Արմենը կտրուկ նայեց նրանց:

- Մտազբաղ եք երկուսդ էլ, հավանաբար կարևոր հարցի մասին էիք զրուցում:

- Այսօր ուրիշ այլ թեմա չկա, Արմե՛ն ,- լուրջ ասաց Թաթուլը,- որտեղ ուզում ես, գնա, հենց երկու մարդու հանդիպեցիր, նրանցից անպայման կլսես Արցախի հարցի վերաբերյալ եզրակացություններ, ճիշտ ու սխալ կարծիք, իսկ ամենավերջում՝ զարմանք, որ Մոսկվան չի ուզում դարասկզբին թույլ տված իր սխալը շտկել:

Այնուհետև օրվա հիմնական զրույցը ընդարձակվեց, այս անգամ խոսում էին մյուս տղաները: Նրանց բարձրագոչ քննարկումները լսելով՝ հարևան սենյակներից այստեղ հավաքվեցին շուրջ 15-20 երիտասարդ: Համալսարանականները կոնկրետ էին, զննող, պատրաստ էին մասնակցելու ցանկացած իրադրության: Արցախյան խնդրում կարգավորման ինչ-որ մաս նրանք կապում էին իրենց նախաձեռնության հետ՝ համոզված, որ այսպես են մտածում բոլոր երիտասարդները, ուսանողները, հասարակայնության գերակշիռ շերտը: Մինչև ուշ գիշեր նրանք չէին բաժանվում: Հատկապես ծանր տպավորության տակ նվաղեցին, երբ հեռուստաէկրանին երևացին Բաքվում կատարված զազրելի դեպքերի մանրամասները:

- Ուրիշ ելք չկա՛, պատասխան տալու ժամը մոտենում է,- հազիվ իրեն զսպեց Թաթուլը,- այս անասնական խրախճանքը նրանք շարունակելու են Արցախում, եթե հակահարվածի պատրաստ չլինենք:

Ոչ ոք չխոսեց, լռությունը նրանց ներսում պապանձվել, զարկվում էր պատեպատ: Սահմռկեցուցիչ պատկերների հերթաշարը մնացել էր ստվերի պես: Տղաներն ակնապիշ նայում էին էկրանին, բայց սատանայականը, հետքեր թողած, չքվել էր:

- Օրն առավոտից է հայտնի,- ոտքի կանգնեց Վարդանը,- իրոք պիտի պատրաստ լինենք, Թաթուլը, ճշմարիտ է:

- Վաղվա հանրահավաքին պիտի մասնակցենք բոլորս,- անառարկելի տոնով ասաց Թաթուլը և Վարդանի հետ դուրս եկան՝ հրաժեշտ տալով ընկերներին:

- Վաղը քննությունը շուտ կհանձնենք և կգանք,- գրեթե միաբերան արձագանքեցին ներկաները:

- Գլխավոր քննությունն ուրիշ հարթության վրա է, թող համալսարանը մեզ ների,- միջանցքում լսվեց Թաթուլի ձայնը:

Վարդանն ու Թաթուլը մինչև ավտոբուսի կանգառ ոտքով քայլեցին, չէին շտապում՝ գիշերն առջևում էր:

- Կոմիտեում նույնպես լուրջ ծրագրերով են պատրաստվում, ամեն ինչ ակնհայտ է,- ցածրաձայն ասաց Թաթուլը:

- Ճակատագրականը տեսանելի է, ժողովուրդն այս անգամ իր բախտը չի թողնելու ուրիշի հույսին:

- Եկել է Չարենցի մարգարեական խոսքերով առաջնորդվելու ժամանակը:

- Եկել է, որ այլևս չգնա...,- եզրափակեց Վարդանը:

Թաթուլն ակնածանքով նայեց, ապա գրկեց ընկերոջը և բարձրացավ ավտոբուս: Վարդանը կանգնած մնաց:

Թարմ ձյուն էր գալիս:

Երկնքում ճերմակ մշուշ էր:

* * *

Վերջին ամիսների անգույն սահքը Թաթուլն առել էր իր ուսերին, աշունն ու ձմեռը խառնել իրար, խռիվ, անգոց աղմուկների մեջ ուղղորդող ձայն էր փնտրում: Երկրով մեկ, բոլոր տների երդիկներին նա, կարծես, տեսնում էր անպատեհ իջած ամպը, որը, շողքը ներսում պահած, աստղ ու արևից վիրավոր իջել և կարկուտ էր առաջարկում: Խփված կասկածից կոկորդն էր քերում երկրի ընդերքը, իսկ վախեցած ձմեռը խեղդել էր իր հազը, որ երերուն հիմքերը դիմանան, որ սահմռկած սրտերը դարձի գան և փառահեղության փլուզման երկրորդ տարին իր ցավի գամերով ամրացնի քարացած ճիչը:

Թաթուլն այդ ճիչը որքան էլ արտաքսում էր իրենից, մտածված տանում, խառնում էր երևանյան երթերին, դարձյալ մնում էր փերթ-փերթ ցավը, իսկ ահավոր երկրաշարժի պատկերներն անողոք արշավում էին: Եվ դարձյալ 1990-ի առաջին օրվա Ամանորի թեման, շունչը, հուշն ու մեղեդին սկսվեցին Շիրակի դաշտից, իջան Սպիտակի դարավանդներից՝ մոտեցնելով մորմոք ու մեղք, հեռացնելով թախիծ ու սեր: Թաթուլը նրանցից չէր, ովքեր ցավի կողքն են կանգնում այն ժամանակ, երբ դա ուղիղ խոցում է սեփական մարմինը: Նա ընդհանուր զարկերակի մի մասնիկն էր, հանգիստ ու դադար չուներ. իր գաղափարների ձեռքը կրակ չէր ընկել, ընդհակառակը՝ տաքանում, ջերմանում էր հոգին, երբ զգում էր տեսիլքներից կյանք

մտնող այդ մեծ հույզերի հեղեղը: Այդ հեղեղից բաժին էր հանում ուրիշների, որ մաքրվեին հոգիները, տեսներ, որ մարդիկ ձգտում են տուն բերել երեկվա մոլոր ճամփան, երեկվա կորցրածի համար իրենց ափսոսանքը դարձնեն կամուրջ, երեկվա նահատակների երազի ծիլը չթողնեն անջուր անապատում: Թաթուլը կյանքի զիգզագներում տեսնում էր իր ձին՝ անթամբ, մերկ ու մրրկուն, ճախրանքի բնազդը ռունգերում բնավորած իր ձին, որի մերկ ուսերին իր տարեգումար փունջն էր՝ թել-թել, գույն-գույն, արբշիռ ու մետաքս առավոտների ոսկեբերան հոսքը: Այդ գումարելիների բանաձևը իր քսանհինգ գարունների հավասարման արժեքն էր, ավետիսների համազոր բերկրանք, որի մեջ մարդկային ցավը նրա մարտնչող շարքային զինվորն էր, հանդիպակաց իրողությունների շղթան՝ իր պարանոցին կախաղան հանած խաչի անվերծանելի տուրքը:

Այսպես էր նա 1990-ը բացում, իր ակոսն էր դնում բաց վերքերի կողքին, իր երդումն էր նորոգում հավատամքի անզարդ կարկաչներով, դրանցով խորանում վշտացյալների ծովը, ուր փոթորիկ էր տիվ ու գիշեր: Այլաշունչ էին ժամանակները, տեղական ու տանջող տագնապների թվում արցախյան խնդիրը ուրիշ եզրեր էր շոշափում: Թաթուլն ազգային նպատակների հետամուտ ընկերների հետ էր, ամբողջական կարողություններով ներծծված ընտիր համալսարանական, օրվա հարկադիր սևի մեջ իր եռագույնը որոնող, իր ձայնը արմատներից բերող պապենական կանչ:

Թաթուլն իր ընկերների հետ Ամանորից հետո ջերմացնող լույս էր ուզում գտնել: Բայց 1989-ի դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ ԳԽ և ԼՂՄ-ի Ազգային խորհրդի Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի վերամիավորման մասին որոշումը դիպել էր պատմության սառցաբեկորին. այդ օրը մեռած խիղճը իր տապանում շուռ էր եկել, հանգած մոխիրը տրվել էր քամուն, որ հայրենաբաղձ սրտերն իրար չգտնեին, պատմության ողնաշարը այդպես էլ ծուռ էր մնացել:

Տարեմուտը հավատի հունձք էր անում, սակայն մոլորակով մեկ ադրբեջանական վայնասունը փորձում էր խլացնել ճշմարտության ձայնը: Երկրաշարժի զոհերի հիշատակման օրը, տխրության ու թախիծների ծանր շրջադարձի անմոռաց պահերին մարդիկ միավորման որոշումի երանելի փաստն էին արձանագրում, հոգով արձագանքում՝ զսպելով գրեթե մեկ տարի առաջ պատուհասած անագորույն վիշտը: Հայրենիքի ճակատագիրը առաջնային էր, լույս երազողներն ուզում էին թոթափել բռնության խավարը:

...Այդ գիշեր Նոր տարվա զարմանալի առեղծվածը սկսվեց Ժորայի

բարի մաղթանքներով: Նրա բառերը հողաբույր ու հայրաձայն էին, իմաստուն երանգները պեծ-պեծին էին տալիս ընտանեկան հազվագյուտ ջերմությամբ, վաստակած հպարտությունը տան զարդն էր, հին ու հնավանդ երգերը կտուրի տակ հորովել ու հայրեն էին բերել՝ բաժանելով սեր, հույս ու հավատ:

Օջախաբույր այդ մասունքներով հավաքվել էր Կրպեների գերդաստանը: Ժորան ու Սեդան անսահման հաճելիությամբ ըմբոշխնում էին Ամանորի բերկրանքը՝ հատկապես նրա համար, որ ոչ ոք բացակա չէր զավակներից. բացակա չէին տրամադրվածությունը, հուշը, այս օջախով անցած-գնացածները, Արեգ գյուղի վկայությունը, կողքի տունը, հարևանը, հարսնապսակ վայելած ջահելները, ձմեռոտած սարը, տնից տուն շնորհավորանք տանող-բերող ճամփան, ձնակոսը, մանկան սպասող գյուղի հարսները:

Ժորայի հարկի տակ հացաբույր էր, սեղանը ճոխ, տանտերը տան վերևում բազմած, իսկ ամոթխած, բարի սրբություն տանտիրուհին՝ Սեդան, աչքի պոչով զննում էր բոլորին, մեկ-մեկ հիշում զավակների ծննդյան օրերը, ամիսն ու տարին, այտերը դողդողում էին, աչքերում՝ աստվածաբույր բարիք, հույսի անավարտություն:

Ժորան, թիկն տված պատին, Մարկոս հոր նման հրճվանքը պահել էր հոգու բարձունքներին, որից ներքև, կարծես, բացել էր ճերմակ հիշողության շուշանադաշտը, լողում էր այնտեղ, սավառնում մի անուշ վայրէջքով, ինչպես ծիածանի գոտին է իջնում անտառափեշի ոսկուն ուսերին:

Մեղեդի, պար՝ դրանց մեջ զավակներ, թոռներ, խնդություն, օրոր՝ դրանց ծոցերում օջախի հարսներ՝ Անահիտ, Մարիամ, Մարգարիտ, Կարինե, Իրինա: Ամանորյա ծփուն վեհություն, դրա շուքի տակ Սեդան, որ դարձյալ աչքի պոչով հետևում է տան փոքր հարսին՝ Իրինային, նայում է մայրաբար, անհանգիստ ու տաք աչքերով: «Աստված հասնի քեզ, հա՛րս, թող քու մանկիկն էլ աշխարհ գա, խառնվի էս օջախի սիրուն...»: Իրինան նկատեց սկեսրոջ զննող հայացքը, ժպտաց, գլուխը կախեց, մտքում դարձյալ հաշիվ ու հաշվարկ կատարեց, մի ամիս ու մի քիչ պակասեց այդ սրտամոտ թվաբանությունից, որ Թաթուլի ու իր համար պիտի նոր մոլորակի հայտնություն լիներ: Մտքերի այդ կենսաբույրից տաքացավ դեմքը, ամոթխածության ցոլքը դանդաղ շղարշվեց նրա աչքերում, և Իրինան մեծախորհուրդ ակնածանքով նայեց շուրջը նստածներին՝ մեծ ու փոքրերին, ինքնագոհ լռեց:

Թաթուլն ինքնամոռաց կատակում էր եղբայրների հետ, փոքրի

իրավունքով լցնում նրանց գավաթները, խնդրում հորը, որ կենաց խոսք ասի: Ներս մտավ Վաղարշակը, աչքերը պայծառացան՝ տեսնելով եղբոր ողջ գերդաստանը լրիվ հավաքված:

- Հայրի՛կ, կենացը հասունանում է,- առաջարկեց Թաթուլը:

- Դե ասա՛, թող ավելի հասուն դառնա,- ուրախացավ Ժորան:

- Եղբայրության կենացը,- ցնծաց Թաթուլը և ոտքի կանգնեց: Նրան միացան չորս եղբայրները՝ Սերգոն, Մինասը, Գրիգորը, Մանվելը: Մոտեցան Ժորային ու Վաղարշակին:

- Նախևառաջ ձեր կենացը, եղբայրության ձեր օրինակը, անսահման հարազատությունը, մեծ և փոքրի կրպեյանական իմաստը ուրիշ դաս էեն,- հորն ու հորեղբորը դիմեց Թաթուլը: Սերգոն վիթխարի բազուկների մեջ առավ նրանց, որդիաբար համբուրեց, մոտեցան մյուս եղբայրները:

- Ա՛յ, սա արդեն Նոր տարվան շնորհք բերեց,- ծիծաղեց Ժորան, թոռները սկսեցին պարել, հետո հարսները միացան իրենց զավակներին:

Իրինան հանգիստ նստած էր, դրա իրավունքն ուներ, թեև պարելու ցանկությունը զարկում էր ծնկներին, ոտքի հանում: Թաթուլը մոտեցավ նրան, ձեռքի գավաթով խփեց նրա լիքը գավաթին, շուռ եկավ նստածներին:

- Իրինայի փոխարեն ես եռապար կտամ, եռաձայն կթնդամ:

- Քու եռագույնի սերն էլ թող Աստված պահի,- ավելացրեց հայրը:

Թաթուլը հայտնվեց պարող երեխաների շուրջկալի մեջ, ճախրում էր, արծվի պես սլանում ընդարձակ դահլիճում. պարի մեջ ներքաշեց մյուս եղբայրներին, նույնիսկ Իրինան մի կարճ փորձ արեց չկտրվել այդ երամից:

...Գյուղական տուն Արեգում: Սովորական Նոր տարի, այսպես՝ իրար գլխի հավաքված, իրարու կարոտ, իրարահույս: Այսպես էր նաև Արեգի մյուս տներում, ամեն տեղ՝ կարոտի բացված էջ, սիրո եղելություն, հանդարտահոս ժամանակի նոր մատյանաթերթ:

Իսկապես սովորական ցնծություն էր, ընդամենը տարին էր փոխվել, վերջին երկու թվերի թափուր աթոռներին նոր նիշեր էին բազմել, բայց աշխարհի բոլոր աթոռատերերը նույնն էին մնացել, ձմռան գույներն էլի սպիտակ էին, և ճերմակ գիշերաթաթախը տրորելով՝ մարդիկ իրար էին այցելում՝ ասելու երեք բառ.

- Շնորհավո՛ր Նոր տարի:

Արեգում այդ սովորույթը նորություն չէր, գաղթականների բարձրյալ տուրքն էր ավանդականին, որի հանդեպ ջերմությունն

այսպես մշտական էր նաև հարևան բոլոր գյուղերում՝ Ուջանից մինչև Զովասար:

Արեգն ուներ հարգանքի անփոփոխ հմայք, որը Ամանորից Ամանոր տարածական հույսով դառնում էր օրվա ձայն ու խիղճ: Արեգն այդ խղճի խորանում բացահայտվում, հետո իր փայփայած հույս-մասունքի պես բաժան-բաժան տալիս էր բոլոր-բոլորին՝ Արտին սարից մինչև Մաստարայի քռեն, Զարինջայից Թալին: Այս քարտեզը Արեգի մտապատկերների գույներով էր ծածկված, որտեղ երևում էրին գյուղական ուսուցիչը, պաշտոնյան, սերմնացանն ու հնձվորը... Հիմա նոր տարվա սեղանների շուրջ բոլորը իրար «ջան ու հեյրան» էին ասում, իսկ երդիկներից այն կողմ այդ քնքշությունը երկար պիտի փնտրեր խաղաղ վայրէջքի իր հաստատուն տեղը:

Այսպես՝ քայլ առ քայլ, երբ հունվարը ճանապարհ էր անցնում, Բաքվում սկսվեցին հայերի կոտորածն ու տեղահանումը, Հայաստանի սահմանների վրա զինված հարձակումները հաջորդեցին մեկը մյուսին, Հայաստանն ու Արցախը հայտնվեցին շրջափակման մեջ:

Իրավիճակի այդ լարվածությունն արդեն հասկանալի էր, պատմության տխուր շրջադարձը, կարծես, կրկնվում էր, բայց ժամանակներն էլ ուրիշ էին, չպետք է թույլ տրվեր այն, որին ծանոթ էր հայ ժողովուրդը, անցյալի դառը հիշողությունը հրամայում էր պատրաստ լինել ճակատագրական քննությանը, միավորել ուժն ու ոգին:

...Թաթուլը շուրջ տասն օր մնացել էր գյուղում, առջևում հունվարյան քննություններն էին: Սակայն Երևանից կուսակցական ընկերները զանգահարեցին, օր առաջ գնաց: Ամենուրեք՝ հասարակական վայրերում, ուսումնական հաստատություններում, մեկ հարց էր քննվում՝ հայերի վիճակը Ադրբեջանում, թույլ չտալ, որ կրկնվի դարասկզբի նախճիրը: Արագընթաց հանգամանքները տանում էին կոնկրետ առճակատման: Խորհրդային երկիրն անկարող էր դարձել լուծելու ազգամիջյան վեճերը, կուրորեն կառչած էր անցյալում թույլ տրված ճակատագրական սխալներին, բացակայում էր պատմական արդարամտությունը, բթացած էր պետական մարմնի համարձակությունը: Այս պարագաներում ժողովուրդը պետք է կանգներ իր ճակատագրի կողքին՝ հաղթահարելով ոչ միայն վարչահրամայական բռունցքն ու մամլիչ մեքենան, այլև մեծ երկրաշարժից ստացած ծանր հարվածը և կարողանար Ադրբեջանից բռնագաղթածներին ապաստան և ապրելու միջոց տրամադրել:

Մտավորական Երևանը, հայրենյաց բախտով շահագրգռված հազարավոր կամավորներ, առանձին ջոկատներ ու միավորումներ,

ով ինչով կարող էր, ոտքի էին ելել հանուն գաղափարի, հանուն հայի ճակատագրի և միացյալ Հայաստանի:

Թաթուլը նրանց մեջ էր...

* * *

Փետրվարյան այդ ցուրտ օրը, երբ Երևանում շատացել էին «կարգ ու կանոն» հաստատող զինվորները, խաչմերուկներում զրահամեքենաներ էին, վերահսկող այլ ուժերը ցույց էին տալիս իրենց տեղը, Թաթուլը շտապում էր ծննդատուն:

Զարմանալի թեթևություն էր սողոսկել ներսը: Նա չէր ուզում տեսնել, թե ինչ է կատարվում շուրջը, նույնիսկ չէր էլ նայում երևացող տեղերում ամուր խարիսխներ գցած զրահամեքենաներին, որոնց վրա թառել էին զինվորներ՝ ուսնկախ ավտոմատներով: Թաթուլը մտածված չէր նայում նրանց, սրտում ճնշվող ցավը մոլորվածի պես լույս էր որոնում: Ամենքին հայտնի այս բարի ու անչար զինվորները մի գիշերվա մեջ փոխել էին իրենց դեմքն ու հայացքը, կարծես ինչ-որ մեկը պռճկել էր նրանց բարությունը, մնացել էր միայն դիմակը: Թաթուլին այդպես էր թվում, որովհետև նա դիմակավորներին, անգամ զվարճալի երեկոների անմեղ դերակատարներին տանել չէր կարող, էլ ո՞ւր մնաց սրանց, որ եկել ու իրենց հաշվարկներով ամուր խցանել էին մարդաշատ փողոցների ելումուտը, իրենց ներկայությամբ բացակա դարձրել քաղաքի ներքին խաղաղությունը: Թաթուլը ամենևին ցույց չէր տալիս, որ խիղճը, իրենից լքված, ասպաստան էր փնտրում. ինքը չէր հաշտվում այն բանի հետ, որ իր քաղաքում մարդը չի կարող ազատ լինել իր ուզած տեղում՝ հրապարակում, զբոսայգում, քանդակեն պատերին մի քիչ ավելի երկար նայելիս: Կզգուշացնեին, կկշտամբեին, հրամայաբար կասեին՝ օրենք է և վերջ, չկանգնել, չհավաքվել: Վախենում էին, ինչի՞ց էին վախենում, օրենքից էին խոսում, ամենաօրինականն իրենք էին... Շիկացած էր ամեն բան, ծմեռ էր ու շոգ...

Թաթուլն այսօր այդ օրենքներից դուրս էր համարում իրեն: Նա չէր կամենում ոչ ոքի լսել, ուզում էր գոռալ, բարձրաձայն ասել. «Բոլորդ՝ անմեղ-մեղավորներդ, պահակազոր-պահապաններդ, ճշմարիտ-անճարներդ, զինավառ-զենք չունեցողներդ, լսե՛ք, ի՛նձ լսեք, մի կո՛ղմ քաշվեք բոլորդ, մի՛ փակեք ծննդատան ճանապարհը, Իրինան այնտեղ է, այս երկրում մի նոր մարդ է ավելանալու, մանկան հրեշտակե սիրտ է բաբախելու, ձմռան օրը տաքանալու է, ջերմացե՛ք մի քիչ, մարդի՛կ, մոռացե՛ք զենք ու պահակազոր, չե՞ք

տեսնում կասկածանքի խարույկը, որից մրսում է այս քաղաքը, բավական է սարքովի հրճվանքը, սթափվե՛ք, ծափի փնտրտուքը ականջի ճանապարհին ողբի տարատեսակ է, մի՛ թևավորեք ճահճի համերգը, երկնքից մանկան ճիչ է իջնելու, ծննդատան ճանապարհը մի՛ փակեք...»:

...Ծննդատան պատերի տակ մենակ չէր ինքը, շատերն էին այստեղ, իրենից առաջ էին եկել՝ շրջանցելով ստուգող-հրամայողներին, կտրելով անցակետերի խստապահանջությունը: Նրանք հիմա «խրամատավորվել էին» ծննդատան մուտքի մոտ, ընդարձակ բակում, հայացքները զենիթային հրանոթների փողերի նման ուղղված էին վերին հարկերի պատուհաններին: Նրանց նշանակետը փակ պատուհաններն էին, յուրաքանչյուրը գիտեր իր սպասումի հասցեն, իր խորան լուսոն, որտեղից մեկը քնքշաձայն պիտի ղողանջեր ներսում գտնվող մոր անունը և սպասող հայրիկին և հարազատներին աչքալուսանք տար՝ տղա կամ աղջիկ:

Թաթուլն իրեն բռնել էր չթարգմանվող, անանուն թուլության ոսկեզնգուն թրթիռներին, ակնապիշ նայում էր այն պատուհանին, որտեղից Իրինան բարևում էր, ինչ-որ բաներ ասում, ժպտում: Մեկ ժամ առաջ էին ասել՝ կարող ես գալ, Իրինան պատրաստվում է «թռիչքի»: Թաթուլը հասկացել էր այդ կանչ-թռիչքը և անցակետերը ոտքի տակ տալով՝ եկել կանգնել էր իր ծանոթ պատուհանի դիմաց: Քրոջը՝ Ռուզանին, հեռախոսով տեղյակ պահեց. ասաց, որ ինքը մենակ կլինի այնտեղ, հարկ եղած դեպքում կտեղեկացնի ամեն ինչի մասին: Բայց քույրը չէր կարող նրան մենակ թողնել, դժվարությամբ, բայց հասել էր հիվանդանոց: Այն պահին, երբ Թաթուլը պատուհանի հետևում նկատեց սպիտակազգեստ բուժքրոջը՝ նորածնի բարուրը ձեռքին, Ռուզանը բռնեց Թաթուլի ձեռքը:

- Ռուզա՜ն, ինչ լավ արիր, եկար,- ուրախացավ Թաթուլը:

- Այս պահի հրճվանքը միայն քոնը չէ, եղբա՜յր,- հարազատի ընդգծված ձայնով ասաց Ռուզանը:

Վերևից՝ երրորդ հարկաբաժնից, հասկացրին որ Թաթուլը հայր է դարձել, նորածինը աղջիկ է, աչքերդ լույս լինի:

- Դու տղայի՞ էիր սպասում, չէ՜,- նույն ջերմությամբ շարունակեց քույրը և շնորհավորեց:

- Սպասում ես նրան, ով իրավունքով գալիս է քո տոհմից, Աստծո կամքը անբեկանելի է, ծնվեց իմ խղճի խասը, թող զորանա այս արևի տակ:

Ռուզանը ամուր գրկեց եղբորը, գիտեր, որ գաղթականի տոհմը

միշտ էլ արու զավակին է մեծ տեղ տալիս, բայց այնքան զգացվեց, երբ Թաթուլն աննկատ շրջանցեց այդ ավանդույթը, հոգու խորքերից ժպտաց Ռուզանին և չթաքցրեց իր հուզմունքը.

- Կարևորը Իրինայի և մեր դստեր առողջությունն է, դեռ աշխարհ կգան Կրպեների տղաները:

...Ուշ ժամին, երբ եղբայր ու քույր տուն էին վերադառնում, բոլոր հարազատներն արդեն տեղյակ էին աշխարհ եկած մանկան մասին:

- Անունը որոշե՞լ ես,- հարցրեց Ռուզանը:

- Դեռ չէ, բայց այդ անվան կանչն իմ մեջ է:

- Ծանո՞թ անուն է:

- Հիշում եմ՝ երկու տարի առաջ՝ վաղ գարնանը, երբ Մեծ շարժման երթեր էին Մատենադարանի դիմաց, 10-12 տարեկան մի աղջնակ մոտեցավ ինձ և ասաց՝ քեռի՛, այս ձնծաղիկները սարից բերել եմ քեզ համար:

- Ինչպե՞ս չես մոռացել,- ավելի հետաքրքվեց քույրը:

- Դա մոռանալու, առավելևս չհիշելու էջ չէր: Նա այնպես հարազատ, հրացոլք աչքերով էր նայում ինձ, որ ես կախարդվեցի՝ հարցնելով՝ անունդ ի՞նչ է: Նա միանգամից չպատասխանեց, թեթև ժպտաց, մի քանի քայլ հեռացավ, ապա հուզախառն ասաց՝ Ասպրամ է իմ անունը:

- Աստվա՜ծ իմ,- բացականչեց Ռուզանը:

- Այո՛, այո՛, տեղին է Աստծուն հիշելը,- մտերմիկ ասաց Թաթուլը,- այդ օրվանից Ասպրամ անունով այդ աղջնակը հետապնդում է ինձ: Ես հիմա տեսնում եմ նրան՝ ժպտացող ու կենսախինդ՝ արևագույն ձեռքերի մեջ ձնծաղիկների փունջը:

Ռուզանը լայնաժպիտ նայեց եղբոր աչքերին, այնտեղ տաք մշուշ էր, ալեկոծ լռությունը խանդաղատանքի խոստովանանք էր բերել:

- Կռահում ես, Ռուզա՛ն, վերադարձել է իմ Ասպրամ անունով աղջնակը, որին ես կորցրել էի մի փխրուն գարնան դեղձան ծամերի մեջ, եկել է Իրինայի աչքերով ժպտացող, իմ ու քո և մեր բոլորի քույրիկը:

1990 թվականի փետրվարի 20-ն էր:

* * *

Վարդան Բախշյանի քարտեզների հավաքածուից Թաթուլը տուն էր բերել Արցախի հավաքական լիարժեք մի քարտեզ, որում պարզորոշ երևում էին նաև հարակից տարածաշրջանները: Թաթուլն այն ամրացրել էր իր ննջասենյակում՝ դիմացի ազատ պատին:

Բազկաթոռը մոտեցրել էր այնպես, որ նստած տեղից կարողանար զննել սահմանների ամբողջությունը, շրջաններն ու քաղաքները, գետերն ու ջրամբարները, հատուկ նշված գործող և չգործող վանքերի ու եկեղեցիների տեղանքը: Թաթուլը լուռ էր, հայացքը սառել էր Գանձասար բառի վրա, շնչում էր ծանր, կարծես կածաններով մագլցում էր վանքի բարձունքը: Սեղանին դրված լուսամփոփը վառեց, որ ավելի հստակ տեսներ պայմանական նշանները: Աչքը ընկավ մասշտաբին, քանոնով չափեց, մտքում բազմապատկումներ արեց, ապա քանոնը ձգեց դեպի Շահումյան: «Այսքան մոտ և այսքան հեռու, Շահումյանը Արցախին կպած, Արցախն էլ՝ Հայաստանին...»: Հատկապես ուշադիր ու երկար նայեց, ապա բարձրաձայն կարդաց Ադրբեջանի Խանլարի շրջանին բռնակցված Գետաշեն, Մարտունաշեն, Կամո, Ազատ և շրջակա մյուս գյուղերի անունները, ձեռքերը խաչեց կրծքին և անբացատրելի ու խորին ափսոսանքով հառաչեց: Առաջին անգամ չէր, որ նա «դեգերում» էր Արցախի հին ու նոր ճամփաներով, գնում, հասնում էր «դրախտի ծայրը»: Նա այդպես էլ կոչում էր՝ դրախտ, իր աչքերով էր տեսել Գանձասարը, շրջակա բնաշխարհի բացառիկ գեղեցկությունը, զգացել նրա բույրը, պահել բերկրանքների այն հեղեղը, որ հորդեց 1987-ի գարնանը: Հիմա էլ յոթերորդ հարկի իր ննջասենյակում, կռթնած Արցախի քարտեզի առջև, դարձյալ վերհիշում էր այն երանելի շաբաթը: Այնտեղ էր գնացել բանակում իր հետ մի քանի ամիս ծառայած ստեփանակերտցի էդմոնդի հրավերով: Այդ օրերից արդեն անցել էր երկու տարի, սակայն չէին խունացել բնապատկերները, սարափեշերից իջնող խիտ անտառները իր հիշողության մեջ մնացել էին ծաղկած, և հիմա նա նորից վերապրում էր գունեղ մանրամասներ, կիրճ ու դարավանդ, վերևներում՝ սարերի վրա սրբատեղիներ, հին խաչքարեր, մամռոտ ու մեղկ մահարձաններ, ներքևում՝ Խաչենագետը: Թաթուլը չէր մոռացել այդ ամենը ներկայացնող հպարտ ու հիացմունքի արժանի մարդկանց: Եվ հիմա, երբ ակնապիշ նայում էր գրեթե ամեն ինչի մասին պատմող այս քարտեզին, շատ ափսոսանքների թվում հատկապես չէր մոռանում մեկը. էդմոնդի հետ որոշել էին հաջորդ տարի այցելել Արցախի հյուսիս՝ Շահումյան, ապա անցնել Գետաշեն: «Եթե դառնալու ես պատմաբան, դու իրավունք չունես չտեսնելու Գյուլիստանը, Շահումյանն ու Գետաշենը, այնտեղ էլ մի ուրիշ իրական հեքիաթ է...»: Իր ականջներում այնքան մոտիկից զրնգաց էդմոնդի ձայնը: էդմոնդի ու իր որոշումը չիրականացավ: Հայտնի իրադարձությունները 88-ի փետրվարից հետո, Սումգայիթի

գեհենը գրեթե անհնարին դարձրին հենց այնպես ելնել ու գնալ Արցախ: Իսկ Շահումյան հասնելու ծրագիրը մնաց որպես անհասանելի երազանք: Թաթուլն անսովոր ալարկոտությամբ կտրվեց բազկաթոռից, մոտեցավ պատուհանին: Դրսում ամռան գիշեր էր, տոթ, մեքենաների անցուդարձը չէր դադարել: Աղջիկ-տղաների մի խումբ, թեթև աղմկելով, տաք-տաք զրուցում էր, բայց թե ինչի մասին, յոթերորդ հարկաբաժնին հասանելի չէր: Թաթուլը դժկամությամբ թողեց դրսի աշխարհը, մոտեցավ գրասեղանին: Հոգու հեռավոր խորքերում նա իրար բախվող խոհերի հալոցք էր զգում: Գրելու ցանկությունը դարձի անուշ մխանքով բացում էր նրա ցավը: Հեռաձայների պարսը, պատեպատ խփվելով, վարգում, վետվետում էր հազարերանգ արձագանքներից, ալիքվող տագնապների ծեսերով սերակալում Թաթուլի ներքնատես աշխարհը: Իր տեսակի կանչն էր նա առնում ննջասենյակի պատերի մեջ, ճիչ ու հորդորի մաղձոտ ծվարը մարտնչում էր, որ իր բույնը չտար ոչ ոքի: Պահի պատառիկները գերի չէին անուրջներին, երազատենչը մորմոքների հղացմամբ ծիկրակում էր աջ ու ձախից, վեր ու վարից: Թաթուլը դրանց անտերունչ երամակի տերը չէր, բայց իր ձին վարգում էր նրանց հետ, սանձակոտոր գնում անսահմանելի սահքերի միջով, դուռ ու երդիկ էր փնտրում: Մի պահ նա զգաց, որ ինչ-որ բեռան տակ է, ու չի դիմանում, հավաքեց Վարդանի հեռախոսահամարը: Ընկալուչի անտես շերտերին ծղրտաց զանգածափը, մի պահ ընդմիջելով՝ նորից ձգվեց կապի թելերով, կիսեց քաղաքի ամբողջական թանձրույթը:

- Այո՛, լսում եմ,- Վարդանի ձայնն էր:

- Գիտեի, որ քնած չես լինի,- ներողամիտ ասաց Թաթուլը:

- Եղբա՛յր, ի՞նչ քուն, հունական աղբյուրներից կազմված քարտեզների հավաքածու է ձեռքս ընկել, հետաքրքիր աշխարհ է, Հայաստանն էլ է ներկայացված, համբերատար քրքրում եմ,- Վարդանի բառերի մեջ խանդավառության համ և ինչ-որ բան վերծանելու հուր կային,- տեսնում եմ՝ դու էլ քնած չես:

- Եղբա՛յր, ի՞նչ քուն,- ընկերոջ պատասխան խոսքով սկսեց Թաթուլը,- քեզնից վերցրած քարտեզը պատից ինձ է նայում, ձգել ու տանում է իր ելևէջներով, կանչում, ստիպում, ահազանգում է, որ իր հետքերով գնամ:

- Ինչ լավ է, որ քարտեզ-կախարդանքը գերել է քեզ, կարդում ես ու չես հագենում, գնում ես իրականի ու երևակայականի զիգզագներով, բայց քո որոնածի վերջը չի երևում:

- Ճախրում ես, ճչում, հասնում ես, Վարդա՛ն, թվում է՝ պատմիչների, բանագետների, բանաստեղծների հետ ես խոսում,- ոգևորվեց Թաթուլը և փորձեց ընկերոջ տենչավառ ավազանում մնալ,- կարծես աչքերիդ առջև ընդամենը գույներ են, գծեր, անուններ, անվանումներ, սակայն անվերծանելի հարահոս է, երկրագնդից քո վերցրած մասն է, քո հույզն ու հոգու կապը այդ գտնված աշխարհի երկրամասի յուրատեսակ կերպի, ձևի ու բովանդակության, նրա և քո միջև բաբախող բանականության տեսանելի և անհայտ շղթաներն են:

- Վայ, Թաթո՜ւլ, Թաթո՜ւլ, Թաթո՜ւլ,- բացականչեց Վարդանը,- այդ ի՜նչ ձևակերպումներ տվեցիր, գուցե ինձ հետ կապ չունեն, բայց ուղղակի հրաշալի մեկնություն էր՝ կենդանի, ճշգրիտ ու շոշափելի:

- Դե գիտես, Վարդանի ընկերն եմ, չէ՞,- թեթև ծիծաղեց Թաթուլը:

- Վարդանը, իսկապես, քո լավ ընկերն է և՛ ցավի, և՛ երջանիկ օրերին, այդպես չէ՞:

- Խոստովանվում եմ երդումով՝ նաև իմ անունից:

- Վերջերս շատ ենք երդվում, Թաթո՛ւլ,- նկատեց Վարդանը,- ինձ հետ կհամաձայնես, որ իրադարձությունների հևքը անկեղծ երդման դաշտ է բացում այն ժամանակ, երբ կարևոր բաների են սպասում երկիրը, հողը, ազգը:

- Բնազդի այդ բույրը ես էլ եմ առնում, Վարդա՛ն,- դարասկզբի հայդուկային շարժումը, ֆիդայիների աստղահավաքը հենց մշուշոտ ժամանակների պատասխան էին, փրկության ելքի անխուսափելի ճիչ:

Ռուզանը կանգնեց կիսաբաց դռների մեջ, ներս չմտավ, որ Թաթուլը չընդհատեր հեռախոսային խոսակցությունը: Նրան զարմացրեցին պատից կախված Արցախի լայնամասշտաբ քարտեզը, սեղանին դարսված հին պատմիչների գրքերը, տարբեր չափսերի քանոններ, ամրակների և առանձին մանրուքների տուփեր: Թաթուլը, բազկաթոռի մեջ ընկղմված, թիկունքով էր դեպի քույրը, չէր էլ սպասում, որ այս կեսգիշերին նա կհայտնվեր իր սենյակում:

- Այնպես որ երդվյալները պիտի միշտ պատրաստ լինեն,- եզրափակեց Վարդանը:

- Հայրենյաց բախտին պիտի բարուրվենք, որ մանկան ճիչով Մասիսին փարվենք,- իր խոսքը պատկերավոր հնչեցրեց Թաթուլը և ընկերոջը մաղթեց բարի գիշեր:

- Բարի գիշեր, հրաշք եղբա՛յր,- Վարդանն այնքան բարձր ասաց, որ նույնիսկ Ռուզանը լսեց:

- Իսկ իմ հրաշք եղբայրը դարձյալ չի քնում,- բարեգութ ու սի-

ռառատ խոսեց Ռուզանը: Թաթուլը կտրուկ շուռ եկավ, կիսաբաց դռների մեջ Ռուզանն էր, կողքին ամուսինը՝ Սամվելը:

- Խանգարում եմ ձեր անդորրը,- այնքան հարազատ ու մեղավոր ժպտաց Թաթուլը:

- Քո ասածին ինքդ էլ չես հավատում,- Ռուզանը մոտեցավ, նստեց եղբոր կողքին: Սամվելն արդեն քարտեզի առջև էր:

- Էս ի՞նչ ծրագիր եք մշակում, ինչ էլ մանրամասն քարտեզ է,- հետաքրքրվեց Սամվելը:

- Արցախի լուրջ քարտեզներից է, Վարդանից մեկ-երկու օրով վերցրեցի, մի քանի խնդիր ունեմ պարզելու՝ կուրսային աշխատանք եմ գրելու,- տեղն ու տեղը հնարեց Թաթուլը՝ փակելով այդ ուղղությամբ սկսվող հետաքրքրասիրությունը,- այնպես որ անցեք քնելու:

- Համոզում ես, էլի,- ծիծաղեց Ռուզանը:

- Ես չէ, գիշերն է համոզում, քույրի՛կ:

- Իսկ եղբորս համար գուցե կեսո՞ր է,- մեղմ հեգնեց քույրը:

- Գիշերը միայն քնելու համար չէ, հարազա՛տս:

- Դու այդպես էլ անուղղելի մնացիր, Թաթո՛ւլ,- շարունակեց Ռուզանը,- Իրինան գյուղից զանգահարեց, աղջիկը կարոտում է քեզ, իսկ դու...

- Ես էլ, ըստ քեզ, քարտեզի առաջ նստած՝ մտքով մի լանջից մյուս սարն եմ թռչում,- լրջացավ եղբայրը,- վաղը գյուղ կգնամ:

- Խառը բանե՞ր են սպասվում,- իր կոնկրետ հարցը տվեց Սամվելը:

- Այո՛, սա ուրիշ հարց է, թե չէ ինչո՞ւ չես քնում, զանգահարել են, կարոտել են,- բառերը երկարացնելով՝ ասաց Թաթուլը:- Իսկ ինչ վերաբերում է խառը բաներին, Սամվե՛լ, ասեմ, որ երևի շատ բաներ պիտի խառնվեն, որ եղածը զուլալվի, մեր ցավի վրայից քաշվի ու հեռանա այս գաղջ մշուշը:

- Մի քիչ քեզ խնայիր,- Ռուզանը դարձյալ իրենը պնդեց,- ամբողջ օրը կտրվել ես հաց ու ջրից, հիմա էլ քնից, մոռացել ես գյուղը, ջահել տիկնոջդ, չորս ամսական Ասպրամիդ...

- Ես ու դու երբեք չենք վիճել, հակառակվել,- Թաթուլը բարձրացավ բազկաթոռից,- դա նշանակում է, որ դու իմ խելոք քույրիկն ես, ամենաշատը դու ես հասկանում, թե ես ո՞ւր եմ, ո՞ւմ հետ, ովքե՞ր են իմ ընկերները,- նա մի պահ լռեց, շունչը տեղը բերեց և շարունակեց խոսքը,- հիմա երկուսով եք այստեղ, ու ես ձեզնից չեմ թաքցնում, շուտով Արցախ եմ գնալու:

- Իսկ համալսարանը, դասերդ ո՞ւմ ես թողնելու,- զարմացավ քույրը:

- Առայժմ կարճ ժամանակով եմ գնալու, հետո կտեսնենք:

- Սեփական նախաձեռնությա՞մբ, թե՞ հանձնարարականով,- ստուգիչ հարցը տվեց Սամվելը:

- Իմ ցանկությունն ու հանձնարարականը գումարվել են իրար, բայց այս մասին միայն դուք գիտեք, չեմ ուզում այս լուրը գյուղ հասնի:

- Եթե գաղտնի ես պահում, ուրեմն լուրջ բան կա,- զգաստացավ քույրը:

- Շատ ես բարդացնում, Ռուզա՛ն, պարզապես պիտի գնալ, մոտիկից տեսնել իրավիճակը, այստեղ մեր ընկերներին անհրաժեշտ է կոնկրետ ու ճիշտ տեղեկատվություն,- հանգիստ պատասխանեց Թաթուլը և անմիջապես ավելացրեց,- այնտեղ կհանդիպեմ մեր գյուղի տղաներին, Սարգիսն իր խմբով հիմա Գյուլիստանում է:

- Արդեն լուրջ բան ես ակնարկում, Թաթո՛ւլ,- անհանգստացավ Ռուզանը:

- Անլուրջ լինելու ժամանակներն անցել են, պարտադրված քաղաքական խաղեր կան, որոնց պատասխան գտնելու համար պիտի պատրաստ լինել,- Թաթուլն զգաց, որ քրոջը ծանր վիճակի մեջ դրեց, հավանաբար պետք չէր այսքան անկեղծանալ,- ավելի լավ է հիմա քնեք, վաղը կխոսենք այդ մասին:

Ռուզանը անսովոր երկյուղածությամբ նայում էր եղբորը, անթարթ աչքերով, մեղմալուսյ հայացքով ուզում էր ինչ-որ բան կարդալ, բայց ապարդյուն: Թաթուլի չսափրված դեմքը ծածկել էր ամեն ինչ՝ և՛ զայրույթ, և՛ տագնապ, և՛ ժպիտ: Քույրը տխուր անցավ իր ննջասենյակը: Սամվելը սպասեց, ուզում էր մի երկու բան պարզել, սակայն գերադասեց չխորացնել այս թեման՝ զգալով, որ Թաթուլը նույնպես չի ուզում բացել փակագծերը:

- Գնա՛, քնի՛ր, Սամվե՛լ, ես դեռ անելիք ունեմ,- եղբայրաբար ասաց Թաթուլը,- այսպիսի իրավիճակները շատ հարմար են ուսանողական հանրակացարաններում, ո՛չ գթառատ քույրդ է կողքիդ, ո՛չ եղբայրահամ փեսադ,- ցածրաձայն ծիծաղեց Թաթուլը՝ փորձելով մեղմել պահի լրջությունը:

- Դու առանց մեզ չես կարող մնալ, մենք էլ՝ առանց քեզ,- պատասխանեց Սամվելը,- հենց ուշանում ես, երեխաներն են տագնապում, հարցնում, հետաքրքրվում:

- Ես նրանց ցավը տանեմ, իմ հրաշքներն են,- խանդավառվեց

Թաթուլը և քեռու սիրառատությամբ սկսեց խոսել քրոջ զավակների մասին, բնութագրեց նախ Մարինեին, ապա Կարինեին ու Հովիկին: Սամվելն իր դեմ կանգնած, թիկունքով Արցախի քարտեզին հենված այս հարազատ երիտասարդին դարձյալ նայեց պաշտամունքի շողքերով, մոտեցավ, ամուր գրկեց նրան և չթաքցրեց իր զգացումը:

- Թաթո՛ւլ, թե ինչքան ես դու հարազատ այս ընտանիքին, կարծում եմ՝ պատմաբան-բանաստեղծի համար դժվար չէ կռահել,- շշնջալով ասաց Սամվելը, որ մյուս սենյակներում չարթնացներ որևէ մեկի,- քրոջդ տագնապը, անհանգստությունը կիսում ենք բոլորս:

- Ես դա հասկանում եմ, բայց տագնապը հատուկ չէ մեզ:

- Դա քո ուժի բնույթն է, Թաթո՛ւլ, չթաքցնեմ՝ նաև յուրահատուկ խառնվածքը, որը շատ-շատերի համար անսովոր է:

- Պետք չէ այդքան գերագնահատելը,- Թաթուլը, Սամվելի ձեռքը բռնած, դուրս եկավ պատշգամբ,- հանգամանքները ստիպում են, որ ամեն մարդ վերադառնա իր կոչմանը, մեկին սա է տրված, մյուսին՝ գուցե ավելի կատարյալը:

Սամվելը միշտ էլ զգացել էր Թաթուլի կուռ տրամաբանությունը, նրա բնավորության շատ գծեր ճանաչել էր շատ վաղուց, երբ նա տակավին ուսանող չէր: Հիմա օր օրի իրեն զարմացնում էր աներորդու ինքնատիպությունը քաղաքական խնդիրները գնահատելիս, նրա անբեկանելի հավատը Հայ դատի, Արցախի և ազգային այլ հարցեր քննելիս:

- Շատ ես փոխվել, Թաթո՛ւլ, ինձ, քրոջդ, բոլորիս զարմացնում է քո այսքան ինքնամոռացությունը,- խոսքը շարունակեց Սամվելը,- չգիտենք՝ ո՞ր նժարով փորձենք կշռել:

Թաթուլը կտրուկ շրջվեց դեպի քրոջ ամուսինը և, կարծես, առաջին անգամ էր նրա շուրթերից լսում այսքան ջերմ ու տաք խոսքեր: Սակայն տեղն ու տեղը հիշեց, որ նա այսպիսին էր նաև իր սրտի վիրահատության օրը, երբ Ռուսաստան էր եկել, իրեն պահում էր վստահ, մեկնաբանում էր վիրաբույժ Աբուզակևիչի կարծիքն ու խորհուրդը:

- Միշտ էլ պատասխանատու պահերին դու«զորակոչում» ես մտքերիդ «մատյան գունդը»,- խանդաղատանքով ասաց Թաթուլը,- ես քեզանից շնորհակալ եմ, եղբա՛յր, նրբանկատ ես, մարդասեր, նաև հոգեբան:

- Հիմա էլ ես ասեմ՝ պետք չէ այդքան գերագնահատել ինձ, ես ընդամենը արձագանքում եմ իմ ճանաչողությանը, այն ամենին, ինչը հավասար պայմաններում առանձնանում է ուրիշներից:

Թաթուլն այլևս առաջ չանցավ. Սամվելի անթաքույց բնազդը, անկեղծ խոսքը, բառերի մտերմիկ առոգանությունը օղակվեցին իր շուրջը: Հավատամքի արթուն արծիվը ներսից ծփաց, տաք, նվիրական շոյանքն անցավ աչքերով, նա անանց ժպտաց, բայց չխոսեց: Այնքան թանկ համարեց այս բովանդակ լռությունը, որի ծոցերում խլրտում էին իրեն հայտնի շանթերը:

Թաթուլին հաջողվեց համոզել Սամվելին. նա բարի գիշեր ասաց և նկատելի մտահոգությամբ գնաց քնելու: Ինքը դարձյալ մռայլվեց մենակության ճանկերի մեջ, զննող հայացքը քարտեզն ի վեր պահեց, Գյուլիստանից անցավ Շահումյանի շրջանը և իջվարեց Գետաշենի ենթաշրջանի գյուղերի վրա:

Թաթուլին թվաց՝ ոգեձայներ առավ այդ տարածքներից, ողնաշարում զնգաց սրսփուկի մի տեսակ, որ նրան միշտ այցի էր գալիս իրականի և անհավանականի բախումներից, նաև այն պահերին, երբ իր նպատակի ձին պոռթկում էր արյան ու սրտի տիրույթներից, գնում էր, որ օր առաջ պատասխան բերեր իր տիրոջը: Թաթուլն իր ննջասենյակում բարեպատեհ այս պատկերների շարքն էր լուսավորում, տարուբերում էր ճակատագրի ճոճքը, ինքն իրենով հյուսում էր հույսի այն ճանապարհը, որը, ամռան գիշերը ճեղքելով անցել էր Մռավի լեռնաշղթան, հասել Ինջա գետավտակի ափին ծաղկած Գյուլիստան գյուղը:

* * *

Ճեպընթացը սլանում էր Թալին: Թաթուլը դարձյալ անիվների վրա էր: Այս ճանապարհը նրա օրորոցն էր, միամիտ ու մեկ, մարմանդ ու մեղվաբույր: Ձոր ու լանջ, կիրճեր, ժայռեր, առուններ, անձայն ամառնամուտի խանձված գույներ... Այս ամենն այդ ճանապարհ-օրոցքի քիվերը զարդարող հուլունք-հմայիլներ էին, ղողանջների մի ամբողջական հարմոնիա, որից այն կողմ երկինքն էր, հորիզոնը, Արտին սարը՝ հեռամպած աղջամուղջի մեջ: Ավտոբուսում՝ Թաթուլի կողքին, նաև այն կողմ՝ նստարաններին, միջօրեի շոգից թորշոմած՝ քնել էին ուղևորներից շատերը: Նա, մենակությունից դրդված, քաշվեց իր մեջ՝ մռնչալով սուզվեց իր հատակը: «Երանի սրանց, որ պահը բաց չեն թողնում՝ փակելու աչքը: Գուցե քնած էլ չեն, բայց իրենք իրենցով խաբված՝ խաղաղ են, դեմքերին հասցեներ գտած ժպիտ. լուռ ու ժուժկալ են խոսքի մեջ, իսկ ինքնամփոփ երազները, Աստված գիտի, թե նրանց ո՞ւր է հասցրել: Իրենք իրենց հաշվարկներով գուցե ճիշտ ու ճիշտ են, մտել են սեփական

պարկուճի մեջ, որ մոտ ու հեռվի ձայները չլսեն, աղմուկի առջև քար են դնում, որ իրենց հոգիների անձավներում ամռան ակոսը հունից դուրս չգա, օրվա տարաբնույթ տագնապների հեղասփյուռը պատսպարում են անգիտության խորշերում, բայց միևնույնն է, նրանք անպայման փակ աչքով տեսնում են. նաև գիտեն, որ հիմա իրենց բեռը այս ճեպընթացի ուսերին է, ճեպընթացի մեջ խաչված այն որպեներին, որոնք կտրվել, հեռացրել են նրանց հողից, հանդից, թիկունքում գիլ-գլոր թավալվող կածան-առուներից, այս պարզ ու անքննելի աշխարհից...»: Թիկունքից երեխայի լացի ձայն լսվեց: Ավտոբուսում միանգամից ցոլաց աշխուժության շերտը: Թաթուլի ականջին հասավ իր Ասպրամիկի կանչը, որն անծայր, անեզերք խոխոջյունով բռնկվեց ներսում և ծավալվեց արևլույսով: Կարոտի աղավնին նրան թռցրեց գյուղ. հայրական օճորքի տակ տաք օրոցքն էր, Իրինան, մայրը, սարալանջից փախած անուշ իրիկնահովը:

Թիկունքից երեխան նորից թնկթնկաց, երևի շոգից էր, որ փոքրիկը չէր հնազանդվում դեռատի մորը: Քնածներն ու աչքը փակ ուղևորները սթափվեցին, տոթը կարծես տեղի տվեց, դեմքերը փայլ ու ժպիտ որոնեցին: Թաթուլը տաք հայացքով նայեց թնկթնկացող մանկանը, որ թևաբաց ծգվում էր: Նայեց ու վեհացավ և անզարմանք քննեց բոլորին: Երեխայի կանչը շուռ էր տվել ուղևորների ալարկոտությունը, բոլորին կարծես գամել էր մի կետում, ճչում էր նրանց վրա, որ աչքերը բացեն, նայեն շուրջն ու հեռուն: Մանկիկը ընդամենը մի պահ զգաստության անձրև շաղեց, որովհետև նրա «կոչը» երկար չտևեց, իսկ ծուլացած աչքերը նորից փակվեցին, հոգնած գլուխները փլվեցին թիկնակներին: Սակայն փոքրիկի ճիչն իր գործն արդեն արել էր. շատերը, նստարաններից ծգված, նայում էին միջօրեից հետո շիկնած գոգահովիտներին, երևի իրենց խառնիխուռն մտքերի ծիծառներն էին բաց թողում, վերադառնում էին այն խոսք ու զրույցին, որի սկիզբը դրել էին Երևան քաղաքում: «Որքան քիչ, բայց անաղարտ բան է պետք, որ մարդիկ սթափվեն,- Թաթուլը մոտիկից լսեց ներքին ձայնը,- այսպես է ամեն ինչում, տարբերակողը, առանձնացողը չի կարող փշրանք դառնալ համընդհանուր գորշությանը, պիտի զարթուն ու զարմացած լինի, հասու դառնա օրվա գլխավորին, իրադարձությանը... Ամեն տեղ կանչ է պետք, մանկի՛կ, ճչա՛, որ քեզ էլ լսեն, բայց լաց չլինես, արցունքների բյուրեղ-ցոլքերի մեջ խեղճություն կա... Եվ դո՛ւք, մարդի՛կ, ձեր թշվառ վիճակը մի՛ տվեք փակ աչքերի խաբված երազներին, վերադարձեք ավելցուկ քնից, ավելցուկ բախտ չունեցող այս քար ու քռից մի՛

խրտնեք, նայեք այս խոզաններին, անջուր ձորակներին, բարեպաշ-տեք Արագածի քառախորան աղոթքը... Մեր ունեցածի փրկված դեմքն է սա, որ տաք ու պաղ օրերին միշտ անդիմակ է, խիստ է ու խրոխտ, խումար ու խաս է, ձեռքերը պարզած պահեք, որ զգաք նրա չոր փափկությունն ու մերձաբույր կոշտությունը: Մենք՝ դու, ես, բոլորը, այս բանաձևերի ծոցն ենք առել մեր պապերից, այս բնույթի բերքով սերմ ենք պահել, որ քարը մեզ տարբերի քարանձավից, որ հուզնկախ լալկան երգերի արցունքները մեր սրտերում քա-մած՝ շվարձակ շռինդով պսակվենք ցավին, ցնծության ավիշներում որոնենք մեր տատ-մամերի մասունքաբույր շշուկ-շարականները, որոնցով նրանք խոստովանանքի են գնացել, մեր պորտալարերը դարձրած սրինգ՝ սուլել են հիմնը արյան, հողի և ազատության...»:

Թաքուլը միամիտ ու մտացրիվ նայեց շուրջը, թվաց՝ ինքն ավտո-բուսում չէ: Ճախրուն ձայների պսակը զարդարել նրան, տանում էր: Այսօր, կարծես, բոլորովին այլ շղթաների մեջ էր, ծանոթ էր բնաշխարհի տվայտանքը, նույն ծարավ արտ ու բլրակներն էին, Թալինի ուշ ամռան չոր քարազրույցը, սակայն Թաքուլը տարիներ-ի խորքերից խմբերգեր էր լսում: Հետո, երբ աչքի տակով նայեց ուղևորներին, ժպիտը ցոլցլաց քթի տակ, աչքերում ծաղկեց ամռան օրը: Նրանք խոսում էին ցածրաձայն, դարձ էին եկել, պատուհան-ներից իջել ու գնում էին: Թաքուլն իրեն այդպես հավաստիացրեց, որովհետև ինքն էլ էր ուզում իջնել, գնալ: Քիչ հետո հասնելու էր Կաթնաղբյուր՝ Մուշեղ Գալշոյանի գյուղը: Մի քանի օր շարունակ նրա շիրմին այցելելու միտքը հանգիստ չէր տալիս: Իրեն միշտ թվացել էր, որ Մուշեղի գրական հերոսներին տեսել էր այս սարա-լանջերի գյուղերում, մոտիկից ճանաչել, զգացել էր սասունահոտ այդ այրերի բռնկուն ու բոցոտ աչքերի կրակը, նրանց պարզ ու անմիջական վարքը, անապակ սերն առ երգիր: Ուսանողական իր գիրք-տետրերի մեջ նա փայփայանքով էր պահում «Ձորի Միրոն» վիպակը: Հաճախ էր բացում, կարդում, հաղորդվում էր մի անուշ ու հարազատ աշխարհի, որի խորքերում հայտնաբերում էր նաև իր գյուղի մեծերին, էրգրից բռնի հեռացված վիրավոր մի սերնդի, որի մշուշ-մղկտուկի կողքին միշտ հրեղեն հորդոր էր ծաղկում, թա-խիծների մեջ՝ երգ, արցունքների ծոցում՝ մեծ դարձի առագաստներ: Թաքուլը Մուշեղին իր տաղանդով ստեղծած կարոտի գրականության Մուշեղ Սպարապետն էր համարում: Ու երբ մեկ-մեկ վերադառնում էր Թալին, կուսակից ընկերները անպայման հիշեցնում էին.

- Սպարապետին բարև կտանես:

...Ավտոբուսը տրորված հանգերգով մղվեց առաջ: Թաթուլն անցավ կենտրոնական մայրուղին, շրջանցեց կողք կողքի բարձրացող քարե շարուկները, գնաց ոլոր ճամփով, որը գյուղի ցածից ձգվում, անցնում էր գերեզմանոցի կողքով: Դեռ հեռվից երևացին հերարձակ ուռիները, նրանց շվաքում Մուշեղի հուշը պահող քարե կոթողն էր, նախասալերին ծաղիկներ էին: Հանգած խնկամանը ծածկված էր խնամքով, մեջը խունկ կար, մոմեր, լուցկի, մանրիկ, չոր փայտեր: Թաթուլը ծունկի իջավ, համբուրեց հուշաքարը, ապա փոքրիկ փայտիկները շարեց խնկամանում, լուցկին վառեց: Ծուխն ու ծխահամ բոցը թրթռացին: Թաթուլը անմեկնելի ու հաշտ թիկնեց ուռենուն, հայացքը հառել էր «Մուշեղ» բառին: Նա փորձում էր այդ բառի անթառամ պսակի տակ վերագտնել մեծ սրտի տրոփյունները, զրուցել գրողի անքննելի աշխարհն իրենց իմաստությունների մեջ խտացրած սասունցի հողապաշտ մարդկանց հետ, նրանցից հարցնել Մուշեղի մասին, քննել նրա ապրող լեգենդը: Քիչ հեռվում՝ լանջերին, բազմած էր Կաթնաղբյուրը, որի հայրենապաշտ սերուցքում Մուշեղի կանչի ակունքն էր, մեղրաբույր բարբառն ու Սասնո տան ոգեբարուր հունձքը: Թաթուլը խնկամանը տեղափոխեց տապանաքարի դիմաց, չոքեց՝ հայացքը կոթողն ի վեր, դեպի կապույտ երկինքը, դեպի Աստված... «Սասնո բառ ու բանով հյուսած քո ազնիվ գրի ու գրականության առջևից գնացող Սպարապե՛տ, իմ մշտանո՞ւշ Մուշեղ...»: Ապա հայացքը սահեց ցած, մատների պրկված շողերից խունկը ծփաց մարմանդ, ծուխը խնկամանում մի պահ պապանձվեց, հետո գնաց դանդաղ, ցնդեց ուռիների կանաչ թախիծներին: Թաթուլը ետ-ետ քայլեց, անթարթ նայեց խնկախորհուրդ խաղին և աչքը խնկաձոնին ծրարած՝ պահեց օրվա գույնը: Նա հասկացավ, որ այստեղ լռությունը ուրիշ քամուկ ունի, ձիգ է, թրթռուն, ինչպես ջուրակի լարը. ուռիները, քանդակեն գրանիտը, երկինքը, օդը, դիմացի շոգեշանթ սարալանջերը շշուկի շարական ունեին, Կաթնաղբյուրի տների շարքերը ուս ուսի գալիս էին ընդառաջ, օրն ու ժամը ամփոփ հավատարմությամբ շուրջը լցրել էին մուշեղական ասք: Մուշեղը Թաթուլի տարեկիցը չէր, Թաթուլը Մուշեղին չէր տեսել, նրա հայրենյաց շողքերի սանն էր, նրա Մամբրե արքայի աշակերտը: Իրեն հայտնի ոգեկոչման պահերին զենքերին պսակված Մուշեղի հերոսները, ռանչպար հայդուկները հայտնվում էին իր կողքին, ինքը նրանց հետ էր, ովքեր իրենց «սրտում չաթալ ոսկոր և չորս պլոճիկ ունեին»: Հիմա նա այստեղ էր, որ դարձյալ լցվեր մուշեղական տենչով, նրանից առներ իր տեսակի օրհնանքը:

Ահա թե ինչու Արեգ չհասած՝ նա իջավ ավտոբուսից, որ հետո մենակ քայլեր, գնար հանդ ու չոլերով, ուր Մուշեղի վիրավոր կանչն էր, Ծովասարից Կաթնաղբյուր հասած ահեղ ճշմարտության կայծակ-կուտակը, որ եկել, զմռսվել էր այս գրանիտե տապանի տակ:

Թաթուլը խռովյալ հոգով հրաժեշտ տվեց իր պաշտելի գրողին, գլխիկոր գնաց, ապա ինքնաբերաբար կանգնեց, հետ նայեց, սրտում ցավի բեկորը տեղահան էր, մտքերի բորբ թելերին Մուշեղի պատկերն էր, ներսում տաք ու տիրաբար ակոսվում էին նրա խոհերը, նրա սասնաբոց ձայնը: Այդ ձայնը նա լսել էր բազմաբերդցի հայտնի բանաստեղծ Վաչագանի տանը՝ էջմիածնում: Մուշեղի խրոխտ ձայնը հիմա-հիմա բաբախեց ու եկավ՝ «Առաքել-Մուշեղ սարերից իջան...»: Ֆիդայականչ էր այդ երգը, ներքին հավաքականությամբ միաձույլ: Թաթուլը նույնպես այդ երգը ուներ իր ղեկավարած «Ղարս» խմբի երգացանկում, բայց Մուշեղի ձայնագրված կատարումը լսելուց հետո այն նորովի մեկնաբանվեց, խոհերին, թախիծներին և քնարականությանը գումարվեց հավատամքի ուժը, որն ուղեկցվում էր Մուշեղի տրամադրության կտրուկ ու զորընդեղ շեշտերով: Համալսարանում, բաց հրապարակներում Հայ դատի հետ առնչվող մեծ ու փոքր ասուլիսներում Թաթուլը զգում էր Մուշեղի շունչը: Նրա լուսե ժառանգության մասին ջերմորեն էին խոսում բոլոր սերնդի մարդիկ: Հողի, հայրենիքի, ծննդավայրի հանդեպ տածած բուռն կարոտը, ժողովրդի հոգու շերտերից գրական երևույթ-հերոսների խորհրդանիշը հաղթաշունչ հնչեց Մեծ շարժման տարեգրության մեջ: Թաթուլն իր Թալին աշխարհի հպարտության առաջին գնդերում տեսնում էր Մուշեղին, նրա զինավառ ոգին, գաղափարը, կորուսյալ երկրի հանդեպ նրա «անլռելի զանգակատան» տենչն ու կանչը: Այդ հպարտության շողքն ու լուսե պսակը Թաթուլի վերջին ամիսների ոգեբարձ այբուբենն էին, մենազրույցի եկած իր պապը, գաղթական դարձած սասունցին ու մշեցին, վանեցին ու ալաշկերտցին, զեյթունցին ու ղարսեցին... Նա հոգու անմռունչ ակոսներ էր գտնում՝ մոտենալու նրանց, գիտեր, որ իր պորտալարը այնտեղ է՝ Արաքսից այն կողմ, այն ձիգ ու ձգված է, կտրված չէ, կորած չէ: Այդ կապն ու հույսը ցնծության միագումար ավիշների մեջ են, որ հիմա ձգվել ընդ արեգակ, չեն ուզում կորցնել արմատ, անուն, հասցե: «Սա Մուշեղի հայտնի, երևացող և ներքնահոս պատգամների փողերգն է, որ իր բացակայությամբ անգամ ճեղքում է կապանք ու շղթա, խառնվում օրվա բոցեբաշ հիմներին...»: Թաթուլը զգաց, որ թեև քայլերը տանում են իրեն, բայց միտքն ու հոգու մռայլությունը շիր-

մատնից չեն հեռանում: Սիրտն այնտեղ է՝ տապանաքարին իջած միջօրեի շողերի մեջ, ուր Մուշեղի և իր զրույցը չի ավարտվել: Եվ երբ անցավ Միջնաձորի լռությունից դեպի Աշնակի դաշտ ձգվող փոքրիկ ձորակները, դիմացն արդեն Թալինն էր, այն կողմ՝ Արեգն ու Արտին սարը: Իր գյուղի պապերի սովորությամբ գերադասեց մեն ու մենակ քայլել, կարոտել էր հանդիպակաց քար ու քռին, բլուրիջվածքներին: Գնում էր բարձրահայաց, բայց տխուր, կանգնում, մեկ-մեկ նստում էր փիղ, արծիվ ու այլ կերպարանքներ հիշեցնող ժայռածերպերին, հետո իջնում ձորակ, այն հույսով, որ այնտեղ կգտնի Արագածի լանջերից փախած գետակը: Սակայն ոչ մի տեղ իր փնտրածը չկար, պտղունց ու պաղ ջրերը իրենց քարախռիվ բամբասանքով խեղդվում էին մեծ քարափների ծանր շուքի տակ: Այստեղ էլ նա նստեց, հոգնած չէր, բացեց ճամփորդական պայուսակը, ձեռքն առավ Մուշեղի գիրքը, կարդաց նրա հրաշալի խոսքը՝ նվիրված Խաչիկ Դաշտենցին: Ավարտեց ու թիկունքով ձուլվեց քարափին: Անուշ խաբկանք կար իր ներսում, թվաց՝ այս ժայռերն ու մեծամռունչ քարերը ֆիդայաձայն եկան ու կանգնեցին իր չորս բոլոր: Նրանց շարքերում նա ջոկջոկեց ու գտավ իր զինյալ հայդուկին, ձեռքն առավ օրեր առաջ լույս տեսած արմավիրյան շրջանային թերթի հերթական համարը և բարձրաձայն կարդաց տարիներ առաջ Մուշեղի հետ այդ թերթի խմբագրությունում աշխատած Ռ. Մուշեղյանի հոգու խոստովանանքը, որ կարծես իր սրտից էր հորդում, իր արյան կանչի շեփորն էր, նաև իր երդումը...

«Մուշե՛ղ, այսօր ես քո զինվորը դարձա, դու քո հրացանը ինձ տվեցիր: Աստծո կամոք ես մկրտվեցի քո լուռ ձայների ավազանում և գնացի այն ճանապարհով, որը քո մանկության օրոցքի զարդն էր պահել, ուր դեռ արձագանքում էր հրացանազարկ արծիվներիդ բույնը: Այս վայրկյանի իմ աղոթքի վկան ես եմ, իմ ապաշխարանքի պաշտամունքը՝ դու, ուրեմն լսիր և հավատա, որ քո ճակատագրի ֆիդայափայլը այսուհետ կրելու եմ արյան կանչով՝ որպես տիրանվեր տուրք:

...Հրաշալի՛ իմ բարեկամ, այս ինչպե՞ս են փոխվել ժամանակները, միջոցը մարել է իր մեծ տարածքի առջև, և ես քեզ հանդիպելու կարոտով իջա Կաթնաղբյուր... Այցի եկա քեզ, քո մեծ լռությանը, քո ծանրախոհ գյուղին, քո տիեզերաբեռ կարոտին, ցավին, ցասմանը, բողոքին ու բարությանը: Այդ ամենը տեսա ձգված ու պիրկ, շրջող լեգենդի պես, որ կապում է իրար լեռ ու արտ, ձոր ու ճամփա... Այդ ամենը հիմա ձգվում է դեպի քեզ, ավելի ճիշտ դու ես ձգում

նրանց, դարձյալ հավաքում մի ողջ աշխարհ՝ Կաթնաղբյուրից մինչև Մարաթուկ, Գևորգ Չաուշից մինչև Ձորի Միրո:

Իմ այցը ցավի ծրար ունի և կորստի անփարատելի քարտեզ, որը դու ես նվիրել: Այդ ծրարում ամբողջացած են քո հրկեզ հոգու տագնապները, փակ դռների առջև բարձրացող սրտիդ խարույկը, որով աշխարհին ներկայացրիր հայդուկների անօրինակ սլացքը, ցանկացար, որ նրանց մեծ հիշատակը անծաղիկ չմնար: Դու քո արյան պատվաստից կերպավորեցիր Բրաբիոն այդ ծաղիկը, կերպարանք ու շունչ տվեցիր նրան, բաշխեցիր քո հոգու կորովը, որ խոշտանգված լռության ծալքերից երևար հիշողության գարունը: Ժամանակներն ուրիշ էին, քո պայծառատեսության պատկեր-բառերի դիմաց երկաթյա դարպասներ էին դրված, փակված էին մտքի ճախրանքները, մեռցնում էին էրգրի կարոտյալների վերջին բարբառը, որպեսզի ազատաբաղձ երազանքների ֆիդայական լուսեղ ամբողջությունը մնա պատմության անթափանցելի մահուդի տակ... Ցավի այդ ծրարը ես վերադարձնում եմ քեզ, բաց, առանց երկընտրանքի, որովհետև մեծ նպատակների պայքարի բոցերից այրվել են ժամանակի պատնեշները, քո տողատակերի վառոդային լիցքերն այրում են կոշտություն ու կապանք, պատռում ժամանակի մթամած քողը: Կարծես մոտենում է քո նախընտրած օրը, քո նախասիրած երգը, որոնցով պիտի բուժվեն քո մորմոքն ու վերքը: Ես այդ ծրարը այսօր բացեցի քո շիրմաքարի առջև, խոնարհվեցի խորին, քո խոսքերը շշնջացի քեզ՝ դեռ կգան ժամանակներ, երբ մենք հպարտորեն պիտի համբուրենք ֆիդայիների լուսեղ ճակատը:

Այդ ժամանակների դարձը հիմա տեսնում եմ քո մեծ լռության շուրջը, տեսնում Կաթնաղբյուր եկած քո զինվորներին. նրանց, ովքեր Սասուն աշխարհից մի օր ճամվա էին ելել, գալիս էին քո կանչով ու տեղ չէին հասնում: Դու գտար նրանց ճանապարհի Բրաբիոն ծաղիկը, մեկ-մեկ տուն կանչեցիր, մեկ-մեկ քանդակեցիր նրանց շունչն ու պատկերը, խոսքն ու բարբառը, ցավն ու կարոտը, նրանց մեջ տեսար հայրենահույս հպարտությունը, արդարացի պահանջը, ֆիդայական երդումը, հոլովեցիր՝ «քելե լաո, քելե երթանք մըր էրգիր»: Դա սովորական խոսք չէր, ոչ էլ հեկեկացող բառերի շարք, այն կորցնողին սիրտ, արյուն, ավյուն տալու մղում էր, երգ՝ թախծի շաղախ, երգ՝ լույսի լրում, երգ՝ հաղորդ հույսի...Եվ այդ ամենը քո շուրթերին, Մուշե՛ղ, քո ողջակեզ սրտից, քո տղամարդու բռունցքից, քո ցասկոտ հայացքից, կարոտներից, կրակներից, էրգրից մրմուռ բերած ծերունիների ախ ու վախից: Այդ ամենի դիմաց կանգնած

էիր Դո՛ւ, հիմա և գալիքում էլ կմնաս այդպես կանգնած:

Քեզնով նաև փրկվեց էրգրի պատմության լուսեբարուր շուքը, որ դանդաղ մարում էր տարիների մեգ-մշուշի մեջ, մոռացության դավադիր մացառուտը ծածկում էր ամեն ինչը և ամենքին: Դու հեռացող, անդարձություն գնացող այդ նավից փրկեցիր տարիների հեռվում ծաղկած քո աշխարհի հերոսական ոգին, կողք կողքի կանգնեցրիր շինականին, ֆիդայուն, իր պատվի համար մարտի ելած հայկազուն դուստրերին, զինավառ պատանիներին... Փրկեցիր Սասնո տան անուշ բարբառը, այրերի իմաստուն զրույցը, ֆիդայական փառքի արծիվներին, որոնք մշտամնա գրանցվեցին լեռներում, դարձան վսեմ մարտիրոսներ՝ գնդակին արժանանալու ֆիդայական անուրաց պարտքով...

Իսկ քո պարտքի քարտեզը անսահմանորեն ձգվեց սրտիդ միջով՝ նախևառաջ գրանցելով Սասնո տան շշուկն ու երգը, ցավի մեջ որոնելով ապրելու ոգին, հոգիներում՝ անկորնչելի կորովը, գույների մեջ՝ կարմիրը, կապույտն ու նարնջագույնը, կանչերի մեջ՝ Ձենով Օհանինը, զենքերի մեջ՝ Դավթի Թուր կեծակին, արքաների շարքում՝ քո թագադիր Մամբրե արքան, որ հայոց զինանշան-զինվոր տառերով ելավ կռվի և հաղթեց... Քո մեծ ու փոքր հերոսները հրաշալի են և հայ, հողեղեն են և ամուր, նրանց հատուկ են անմեղությունը, շիտակությունը, բարությունը և դրանցից ծնված գաղթականի հավատը, հույսը, նվիրյալի ոգին, սխրանքը, մահվան աչքերի մեջ նայելու կամքը... Հավաք մրմունջների և հզոր տագնապների երգեհոն են քո պատումները, որոնց հնչյունապատկերը խիտ է, համը՝ մանանայի, խասը՝ խորոտիկ լանջի առավոտ: Հիմա այդ բոլորը քո ներշնչանքի լուսե ավազանից ավելի են մոտենում արևին, քանզի օր օրի քո երազած դրոշն ավելի է փողփողում Հայոց բարձունքներին: Հին այգում քո տնկած ծառերն այս տարվա ամռան կեսօրից հետո օգոստոսյան արևով կզորանան, կպտղակալեն: Պիտի հավատաս, որ Ձորի Միրոյի տնկած խնձորենիները, Մուշե՛ղ, շուտով առաջին բերքը կտան: Առաջին տաք անձրևն է տեղում դաշտերի ու լեռների, գյուղերի ու քաղաքների վրա: Լաջվարդ երկինքը կշողշողա քո Կաթնաղբյուրի զուլալությամբ և քո քանդակ-քանդակ, բյուրեղ ու բոց պատկերները հին հեթանոս առաքելությամբ կհավաքվեն, կգան: Խաչի ու խաչվառների, հուշի և Աստծո հանդիպում կլինի: Սերոբի, Անդրանիկի ու Գևորգ Չաուշի խրոխտ հայացքների, սրբազան հողի և հավերժության անպարունակ պողոտայում կորցրած ու գտնված իրավունքի տոն կլինի: Իսրոյի, Ախոյի ու Մանուկի ներկայությունը

վերջապես կպաշտեն: Առաքելոց վանքի պաշարման գիշերներին հաջորդած Մշո դաշտի լուսաբացը քո երկնագույն, վճիտ աչքերի փայլով գումար-գումար կզորանա, կդառնա մատյան հաղորդության և հավերժի... Քո կանչերի կանչի միջով կփողփողա Ալեի հովվերգական կանչը, կարոտի բեռները ամպի թևերով վեր կճախրեն՝ բացելու հին արծիվների ճանապարհը... Դու նրանցով քո մշտարթուն օրն ու ժամն ես գրանցել Կաթնաղբյուրի բարձունքին: Ու եթե գյուղն է քնում, դու արթուն ես նրա լուռ եզերքին: Հավիտենական խշշոց է բարձրանում թիկունքում ծաղկած ուռենիների պաղ գգվանքից: Նրանց արծաթահունչ բաբախների մեջ աստեղահուշ մի կարոտ կա, որը հառնում է քո շիրմաքարից...

Եվ այսօր այստեղ՝ քո ծննդավայր Կաթնաղբյուրի շուրջբոլոր ձգված բլրալանջերին, ես դարձա քո զինվորը: Այնտեղ ծանոթ պատկեր կա ու ծանր վիշտ: Երբևէ դու շատ ես նայել դրանց, և ամեն սարալանջ մի ֆիդայու կերպարով է ներկայացել քեզ: Քո հմայքը պահպանող լանջ ու բարձունքները հիմա էլ արթուն պահապանի պես հսկում են քո սրբազան անդորրը և շշնջում քեզ՝ զարթնի՛ր, լաո՛, մըռնիմ քըզի... Եվ աղոթքի պես զարթուն է Կաթնաղբյուրը, քո վիրավոր ու թախծոտ օրերի, քո երջանիկ ու ճախրող պահերի օրորոցը: Հանդ ու առու, մրմունջ ու կանչ պահած, քեզ են հիշում, ժայռ ու արահետ իրարու մեջ, իրարաձայն դեռ պահում են հրազենիդ վերջին զարկը, չէ՞ որ դու ընկար ֆիդայու նման, վերջին մի գնդակով, և ցարդ մղկտում է օջախներից ելնող ծուխը: Ցխի մեջ կաթնաղբյուրցի մեծ ու փոքրի հիշողության ծալքն է, հպարտության ծափը, հզորության ասքը... Դու նայում ես այդ էպոսին, այդ զարթոնքին մշտահմա, լռության կծիկը քանդվում է, քանդվում են կապանքներ, գամեր, ծանրաքարեր, հորձանք ու հայտնություն է երկնում քո անհանգիստ սիրտը, և դու առաջինը դիմում ես որդուդ.

- Տավրո՛ս, տղա ՝ս, քո անուն մտհան չենիս, մըր կորած էրգրու պանդուխտն է, իմ պաշտամունքը, Տավրո՛ս, մտհան չենիս...

...Մուշե՛ղ, հրաշալի, մնայուն ու մեծ, հզոր ֆիդայականչ... Այսօր՝ Միջնաձոր գնալիս, մտհան չարի, այցի եկա քեզ, հին կարոտով չոքեցի քո շիրմաքարի առջև, և դու դարձյալ թույլ չտվեցիր, որ արցունք երևա իմ աչքերում... Դժվար է թարգմանել քո լուռ էջերը, որոնք Տավրոսի աչքերի շողով, իբրև կենդանի լեգենդ, շրջում են Հայոց երկնակամարի տակ: Դու դարձյալ մոտեցնում ես Եփրատն ու Արածանին, գալիս ես անհուն հեռուներից, որպես ծաղկող գրիչ, սուրբ մագաղաթի վկայություն, որպես օրհնանք ու խաչ... Հիմա էլ

գնում ես «Կածանի ճամփորդների» հետ, որոնում Բրաբիոն ծաղիկը, որը քո անմար կանթեղով վառ կմնա օրերի հեռվում...»:

Վերջակետից հետո Թաթուլն ակնածանքով մի կողմ դրեց տպագիր թերթը, գլուխը հպարտորեն բարձրացրեց, ապա պարտքը կատարած զինվորի բծախնդրությամբ ոտքի կանգնեց: Շրջապատող քար ու թուփը, հանդ ու առուները ուրիշ հայացքով էին իրեն նայում: Թաթուլը կարդացածի երևակայականից արդեն իջել, սահում էր իրական տեսիլքների թևերին: Մուշեղի կերպարով նա փորձարկում էր իրեն, նրա հայդուկ-հերոսների ավետիսն էր շոշափում, բնույթի ինչ-որ տեսակ ճանաչողական շռինդով անձրևում էր, և Թաթուլը վեհանում էր հանդաբարձունք ավազաններում: Հետո կամաց-կամաց նա իրեն գտավ, ճամպրուկը ձեռքն առավ, գնաց ձորափով: Անծավալ բազմախորհուրդը, որ հանկարծահաս պիտի գար ու պաշարեր իրեն, չէր սպասում: Շնորհակալ նայեց լանջերին թիկնած Կաթնաղբյուրի կողմը, փորձեց գտնել օրորուն ուռիների շարքը, որ «պահակազորի» պես կանգնած էր գյուղի եզրին, հոգեթանկ շոյանքներ պահեց աչքերի մեջ և գնաց:

* * *

Իրինայի հետ զրույցը բավականաչափ խաղաղ ավարտ ունեցավ: Թաթուլը նրան կարողացավ համոզել, որ նա առայժմ աշխատանքը պիտի շարունակի Արեգի դպրոցում, իսկ ինքը կարճ ժամանակով մեկնելու է Արցախ, ավելի ստույգ՝ Գյուլիստան: Գետաշենի մասին ոչինչ չասաց, որովհետև համալսարանի ղեկավարության համաձայնությունը չկար: Թաթուլը հարմար պահ էր փնտրում ծնողների հետ խոսելու առաջիկա իր ծրագրերի մասին: Նա համոզված էր, որ հայրը իրեն կհասկանար, խորհրդի կարգով գուցե մի քանի բան ասեր, բայց վերջիվերջո իր որոշմանը դեմ չէր գնա: Նրա համար անկանխատեսելին մոր՝ Սեդայի պարագայում էր, և նա խնդրեց տանեցիներին իր մեկնելու մասին նրան ոչինչ չասեն: Այդպես էլ վարվեցին, և տան ներքին խաղաղությունը ոչնչով չսասանվեց: Այնուամենայնիվ, Սերգոն՝ մեծ եղբայրը, չդիմացավ Թաթուլի գաղտնապահության ծանրությանը, առաջարկեց մի քանի րոպեով առանձնանալ: Դուրս եկան, անցան տան ու տնամերձի սահմանը երիզող ցանկապատի դռնակը, ապա մի քանի քայլ արեցին և մանկության քարաբլուրը նրանց տարավ բարձունք: Երկաթյա սեղանստարանը բլրի վերնալանջին նախկին ամրությամբ կանգուն էր:

- Դատարկ շշերը քեֆ անողների հետքերը պահպանել են,- ծիծաղեց Թաթուլը:

- Քեֆ չէր, ախպե՛րս,- քիչ մտահոգված ասաց Սերգոն,- Սարգիսն իր խմբի հետ էր, Գյուլիստան գնալուց առաջ որոշեցին այս սեղանի շուրջը հավաքվել, նստեցինք, երկար զրուցեցինք:

- Լավ եք մտածել, մեր բարձունքին տրված երդումը մոտ է ամեն մեկի սրտին,- հավանության նշան տվեց Թաթուլը,- այստեղից գյուղի ուժը հավաքում ես մեջդ, էլ չեմ ասում Արտին սարի օրհնանքը:

Թաթուլի հայացքը պոկվեց, գնաց, տեսադաշտում ծանոթ ու հարազատ բնաշխարհն էր: Սերգոն նկատեց, որ եղբոր աչքերում կարոտի թելեր էին թրթռում, Թաթուլը, այնքան նկատելի, գոհանում էր հետմիջօրեի լույսից, հեռվում կապույտով լցված Ախուրյան-Անիի տեսիլքներն էր փնտրում:

- Էնպես կլանվեցիր, ոնց որ առաջին անգամ ես հայտնվել էս քարաբլրին,- միջամտեց Սերգոն:

- Ինչքան հայտնվում եմ մեր բարձունքի քարերի մեջ, թվում է մի նոր գաղտնիքի դուռ է բացվում,- մեղմ հառաչեց Թաթուլը:

- Գաղտնիքը մանկությունց է գալիս, ինչ-որ էն ժամանակ սովորական էր, հիմա արդեն կախարդիչ է:

- Պայծառ բան ասացիր, Սերգո՛,- ժպտաց Թաթուլը,- դրա համար էլ Սարգիսն ու մյուս տղերքը պատասխանատու հանձնարարությունից առաջ բարձրացել են այստեղ:

- Բարձրանալը սովորական չէր, ձեռքը դրած Ավետարանին՝ երդվեցին, հուզվեցին, երգեցին...

- Ամբողջ երկրով ենք դարձել վերագտած մեր հավատամքի տերը, այլ ճանապարհ չկա՛:

- Թաթո՛ւլ, Գյուլիստան գնալու քո որոշումը համալսարանի դասերին չե՞ն խանգարի,- Սերգոն զգաց, որ եղբայրը ներքուստ բորբոքված է, կամեցավ զրույցը փոխադրել մի ուրիշ տարածք, խոսել չորրորդ կուրս հասած ուսանողի կարգավիճակից:

- Հիմա բացակայությունս չի խանգարի, մեկնում եմ կարևոր մի խմբի հետ,- հանգիստ պատասխանեց Թաթուլը,- չգնալ չեմ կարող, և իրավունք չունեմ հակառակը մտածելու:

- Երդվե՞լ ես:

- Երդումը բարձր երևույթ է, եթե այն տրվում է մեծ նպատակի համար:

Սերգոն շատ լավ էր ճանաչում եղբորը, արդեն գիտեր, որ նա ոչնչից չի նահանջի, իր խոստման տերն է: Իսկ Թաթուլը իրականում չէր ուզում այս թեման շոշափվեր, հասկանում էր դրա լրջությունը և հարազատների մտահոգության պատճառները:

- Մեր գյուղի տղաներն այնտեղ են, անպայման նրանց հանդիպիր,- Սերգոն ուզում էր, որ յուրայիններով կողք կողքի լինեն, արդեն չէր թաքցնում իր տագնապը:

- Դու գիտես, որ ես «Միացում» կազմակերպության անդամ եմ, մենակ չեմ այնտեղ,- հանգիստ ասաց Թաթուլը,- իսկ թե դա ինչ է նշանակում ինձ համար, երևի դժվարանամ հիմա ներկայացնել:

- Գիտեմ, հասկանում եմ, Թաթո՛ւլ, բայց այսպես արագ մեկնելը կապվա՞ծ է ինչ-որ անհետաձգելի բաների հետ,- նկատելիորեն անհանգստացավ Սերգոն:

- Արդեն երկու տարի երևում է, թե այս ճանապարհը ուր է տանում,- Թաթուլն աշխատեց շատ չծավալվել,- կարճ ասեմ. թուրքն ուզում է կուլ տալ Ղարաբաղը, Շահումյանի շրջանը, հայաթափել Գետաշենի տարածքի հայկական գյուղերը: Դրա դեմն առնելու միակ պայմանը ուժն է, միասնությունը, թշնամու աչքը վախեցնելու մեր վճռականությունը:

- Այդ տրամադրվածությամբ գնացին Սարգիսն ու մյուս տղաները, հիմա էլ դո՞ւ:

- Այդ տրամադրվածությունը ո՛չ մի օր և ո՛չ մի տեղ չպետք է պակասի, եղբա՛յր,- Թաթուլը ոտքի կանգնեց,- ա՛յ, էն սարերի հետևում մեր պապի տունն է՝ էրգիրը, դրա փրկության հույսը այսօր դրվում է Արցախում, մեր ճակատագրի կռիվն այնտեղ է:

Սերգոն գերադասեց մեղմել զրույցի սահմանները, մանավանդ, վերջնականապես հասկացավ, որ Թաթուլն անուղղելի նվիրյալ է իր գաղափարներին, պարզապես սրբապղծություն է հակառակ բան ասելը:

- Ավագ եղբոր քո իրավունքն ու պարտականությունն են, որ ինձ քննես, հարց ու փորձ անես, իմանաս իմ մտածմունքն ու անելիքը, բայց Արցախի ճանապարհից ինձ դարձի բերելու պայմանները սպառված են,- մեղմ ձայնով, բայց վճռական ասաց Թաթուլը, մոտեցավ, գրկեց եղբորը և ուղիղ նայեց նրա աչքերի մեջ,- ինձ հասկացիր, դա իմ կյանքի գործն է:

Սերգոն այնքան խորը հուզվեց, թեև ժայռի պես ամուր էր, բայց զգաց, որ հոգում ալիքվեց տխրության ամպը: Հետո եղբորից հայացքը փախցնելով՝ թեքվեց դեպի հայրական օջախը:

- Իջնե՛նք, մեր մտածված բացակայությունը մայրիկի աչքից չվրիպեց,- ասաց Սերգոն և մանրաքայլ իջավ ծանոթ կածանով: Նրա թիկունքից գնում էր Թաթուլը, կարծես առաջին անգամ էր այսքան մոտիկից ուսումնասիրում եղբորը: Տան առաջնեկի, ավա-

գի հզորություն կար նրա վիթխարի հասակի մեջ, ամրակազմ էր, ուժեղ բազուկներով, արծվահայաց, որին ամեն մարդ չէր դիմանա: Ակամայից Թաթուլը իջվարող կածանի ծանոթ քարերի վրա մտքով կանգնեցրեց մյուս եղբայրներին՝ Մինասին, Գրիգորին, Մանվելին, այնուհետև քրոջը՝ Ռուզանին: Հարազատ պատկերներով ինքնահոժար հրճվանքի լուսընթագը տարածվեց նրա աչքերում, կարծես խաղաղվեց ներս ու դրսից, թվաց՝ բլրալանջը ծաղկեց նրանցով, լիալիր շողով լցվեցին օրը, իրիկնաժամը, և ինքը գտավ տիրանվեր այն շարքը, որ Աստծո դռնից շարքով իջնում էր պապենական տուն, և որ իր բացակայությամբ այդ շարքի ոգին երբեք ճաք չի տա:

* * *

Թաթուլը Գյուլիստան էր գնում: Այդ մասին գյուղում բոլորը գիտեին՝ բացի Սեդա մայրիկից: Օգոստոսյան այդ առավոտ ամպերն անսովոր պար էին բռնել Արտին սարի շուրջը, հետո մի տեղից փեշը քանդած՝ իջել էին մինչև հնձած ցորենի արտերը: Տան բարձրադիր բակից Թաթուլը նայում էր այդ պատկերներին, խաղաղորեն ըմբոշխնում անձրև խոստացող երկնքի խոնավ շշուկները: Այդ պահերին նա իրեն բռնեց կարոտի անմռունչ բազուկների մեջ, ճախրեց ամպերն ի վեր, ուր կայծակը ելք փնտրելու փանջարեն էր շեղբում:

- Բարի լո՜ւյս,- Իրինան էր:

- Բարի լո՜ւյս, թանկագինս,- մեղմանուշ սահեց Թաթուլի փաղաքուշ ձայնը:

Իրինան այնքան տիրաբար ժպտաց, ապա դեմքի ցոլանքը մեղմացավ աչքերում: Իր բարևին այսպիսի փափկահյուսք պատասխան նա չէր լսել Թաթուլից, կամ հազվադեպ էին այսպիսի պահերը: Նա գիտեր, որ երբ Թաթուլը սովորականից ավելի սիրալիր էր դառնում, ուրեմն մի կարևոր բան էր լինելու նրա կյանքում: Նա տեղն ու տեղը հիշեց այն պահը, երբ երկու տարի առաջ մեկնում էր երկրաշարժի գոտի:

- Ինչո՞ւ լռեցիր, սա քեզանից չէր,- Թաթուլի աչքերում շողշողաց նվաճող ժպիտը, մոտեցավ, բռնեց կնոջ ձեռքը:

- Քո ազդեցության ոլորտում կամ պիտի գլուխը կորցնել կամ էլ լռել:

- Քեզանից բացի՝ ուրիշ ոչ մի կին այդպիսի խոստովանություն չի արել,- ծիծաղեց Թաթուլը:

- Վիճելի բան ես ասում, բայց ես գերադասում եմ լռել,- ասաց Իրինան,- այսօր գնում ես, իսկ ե՞րբ ես վերադառնալու:

- Հարցդ շատ կոնկրետ է, բայց պատասխանը ինձնից չի կախված:

- Գնալդ անբեկանելի ու պարտադի՞ր է,- նկատելի հուզվեց կինը:

- Այո՛, այդպես է, սիրելի՛ս,- Թաթուլն ավելի մեղմացավ, բայց տուրք չտվեց ուրիշ այլ կարծիքի:

- Ուրեմն քեզ ոչինչ չի՞ կարող հետ պահել: Չէ՞ որ կրթությունդ կիսատ ես թողնելու, էլ չեմ ասում հարազատներդ՝ ծնող, եղբայր, բոլորս տագնապելու ենք...

- Իրինա՛, մի՛ թվարկիր այդ նվիրական ու թանկ անունները,- Թաթուլը ստիպված սաստեց կնոջը,- քո այս վարմունքով ալեկոծում ես բոլորին: Որոշված է, ես այսօր մեկնելու եմ:

- Իսկ մտածո՞ւմ ես Ասպրամիդ մասին,- արցունքների միջից կարծես նրան հաղորդվեց Իրինան և գլուխն ակամայից հենեց ամուսնու կրծքին, գիտեր, որ իր դստրիկի համար գժվում է Թաթուլը:

Թաթուլն զգաց, որ ականջալուր կանչը սլացքով իջավ հոգու ձորերը, արձագանքի խենթացնող խայտանքը շորոր փռեց հայրական տան ծաղկուն քարերին...

- Ասպրամիկը քսան եղբայր ունի, Իրինա՛,- սրտածվար թրթռաց նրա ձայնը:

- Գիտեմ, դա այդպես է, բայց նա կարոտում է քեզ:

- Դա Աստծո պարգևն է, իմ բաժին կյանքի խորհուրդը,- Թաթուլն այնքան անուշ ու մտերիմ նայեց Իրինայի զարմանալի գեղեցիկ, բայց վախվորած աչքերին, նրա ձեռքը բռնած՝ քայլեց լանջը երիզող ցանկապատին զուգահեռ:

- Մայրիկիս չտխրեցնես:

- Քո բացակայությունը զգում են բոլորը, Թաթո՛ւլ, ես էլի դիմանում եմ, դասերիս հետ եմ, մայրիկի գուրգուրանքով է մեծանում դուստրդ,- գորովանքով ասաց Իրինան:

- Այս հանդիպմանը մայրս ուրիշ հայացքով էր քննում ինձ, գլուխկախ ժպտում էր, հետո ծածկում էր դեմքը, երևի մայրախորան իր տաճարում իրեն հայտնի սրբությունը զորացնելիս իմ օրորոցն էր հիշում:

- Ճիշտ ես, Թաթո՛ւլ,- Իրինան ուղիղ նայեց ամուսնու աչքերի մեջ,- այդ Աստծո պարգև օրոցքի անունից, որ ծաղկում է քո հայրական տանը, խնդրում եմ, մի՛ գնա:

- Իրինա՛, հենց այդ Աստծո պարգևն է հրամայում գնալ,- միանգամից փոխվեց ու փափկացավ Թաթուլը, մեղավոր ժպտաց, բայց սիրալիր հայացքով շղարշեց կնոջ տեսադաշտը,- ծնվածների և հատկապես չծնվածների ճակատագիրը պետք է ճիշտ նժարել իրո-

ղությունների դաժան կշեռքին, ես այլընտրանք չունեմ:

Իրինան լռեց՝ հասկանալով, որ անհնարին է Թաքուլին հետ պահել: Արցախն ու Գյուլիստանը, հետագա ծրագրերը շոշափելով՝ նա այնպիսի համոզմունք արթնացրեց երիտասարդ կնոջ մոտ, որ Իրինան տեղի տվեց՝ համաձայնելով, որ կշարունակի աշխատել Արեգի գյուղական դպրոցում, կապրի ամուսնու ծնողների մոտ...

... Երբ մեքենան նրան հեռացնում էր Արտին սարից, ծննդավայրից, ճանապարհի ոլորաններում Թաքուլը նախկին սովորությամբ մեկ-մեկ հետ էր նայում, փորձում էր հայացքի և իր էության ամփոփը թողնել այնտեղ, ուր իր գյուղի հարազատ պատկերներն էին, հայրը, հոր ընկերները, մայրը, մյուս տանտիկին մայրերը, իր զավակին զորացնող Իրինան, եղբայրները՝ արեգցի իրենց ընկերներով, լանջ ու բարձունք, հուշ ու հավիտենություն: Թաքուլի սրտում այս անգամ մի ուրիշ թրթիռ էր ավելացել: Նա մտահան չէր անում Իրինայի խոսքերը, որոնք նման էին հիացումի ընծայած բարուրի՝ խայտանքներով ու տաք. «Գիտե՞ս, Թաքու՛լ, Ասպրամիկդ կարոտում է քեզ...»: Տաք խլրտոցով, ինչպես ամռան ոսկեծամ քամի, այդ բառերը լիքը, բերնեբերան հույս ու շողով դարձյալ ծաղկեցին նրա ներքին բռնկումներին, հետո զարմանալի հանդարտությամբ ծվարեցին՝ նման ծիածանի միամտությանը, որ անձրև-փոթորկից հետո ցնորքների տենչանք է շաղում... Այսպիսի մակույկ էր թվում Գազ-24 մեքենան, որ տանում էր նրան: Տխրուն խաղերի ծալքը բարակ հովի պես մտել էր նրա սիրտը, բայց հոգին անդրդվելի էր: Անբասիր վեհությունը նրան կամրջել էր հեռու՝ այնտեղ, ուր երկինքն ու երկիրը նրա պատկերացմամբ մերձենում են սիրո տուրքով և հեռանում ցավի ճիչերով: Թաքուլն այդ ճիչերի թիկնոցի տակ էր, այդ կանչերի մարմանդ մորմոքներին չդիմանալով էր գնում: Նա իր համար շատ կարևոր մի բան էր պարզել՝ անկարող էր չեզոք լինել, կողքից նայել իրադարձություններին: Նա լավ էր հասկանում, որ մի բան է Մեծ շարժման ժամանակ խցկվել ցուցարարների շարքերը, բռունցքն օդում տարուբերել, մի ուրիշ բան է անդամագրվել այդ գաղափարի իրականացման կոնկրետ գործին, գնալ այնտեղ, ուր քո դիմաց թշնամին է: Այս վճռականությունը Թաքուլը հաճախ էր շոշափում իր երակներում, հոգին թինդ էր առնում, և նա չէր էլ ուզում քննել, թե դա որտեղի՞ց էր գալիս. արյան կա՞նչ է, ոգեղենի ինքնայրումի շե՞րտ, համալսարանական բուռն օրերի հոգևոր հո՞ւնձք, ժամանակի ազատաբաղձ շնչի հավատադա՞րձ, թե՞...

Հավանաբար բոլորը միասին ու միատեղ, այլապես Թաքուլի

ոգու պայմանները պակասավոր կլինեին, ինքն իրենից կտարբերվեր, կխռովեր, կհեռանար դեպի անգիտություն... Այս տրամադրությամբ նա հայտնվեց Արուճ գյուղում: Իր մտերիմ բարեկամի՝ Միհրանի հրավերքով էր, նրա հետ մասնակցել էր գյուղական հին եկեղեցու վերանորոգման աշխատանքներին: Օրը կիրակի էր, արուճցիները, շրջակա գյուղի մարդիկ եկեղեցու բակում էին: Եկեղեցու վերաբացման առիթը Արուճին պարգևել էր մեծ մատաղի օր: Զոհաբերություններ էին արել բոլոր տներում, իսկ եկեղեցու բակը վերածվել էր ուխտագնացների, աստվածապաշտների, հայրենասեր մարդկանց հավաքատեղիի: Հարատենչ ու միացնող էր զուռնան, ծիրանի փողի հնչյունապսակը ոգեթնդյուն շողեր էր սփռել: Պարում էին, շարքերի առջևում ինքն էր՝ Թաթուլը, պարում էր մենակ՝ իբրև առաջնորդ, ներքին ալեկոծը ժայթքում էր ողնաշարից, ցնցվում էին ուսերը, իրանը, ոտքերը կտրվում էին հողից, ապա զարկվում ահեղ, ինքնաճանաչ: Նայում էր Արուճը, ծափահարում նրա արծվաճախրը, վերագտնում նախնյաց ոգեպատկեր ինքնայրումը, անզսպելի թռիչքն ու անխոցելի թափը: Այսպես էր Թաթուլը մխրճվում լուսաբացի շողի մեջ, թանձրացնում աչքերի հրայրքը, ժպիտների միահուր շանթով ծածկում չսափրված դեմքը: Հավատամքի հույս ու ծեսից շվարած էր գյուղը: Թաթուլի խենթությունը, անբռնազբոս շարժումները, գաղթականների երազուն տեսիլքները վանքի գավիթում զարթնեցնող նրա կանչը, եռացող, անպատնեշ հևքը պարուրել էին բոլորին: Եվ ամեն կողմից շշուկները բառ էին դառնում.

- Թաթո՜ւլն է՞, Թաթո՜ւլը...

Այս անունը Միհրանի, այս գյուղի պատվարժան զավակի շուրթերով հազար անգամ էր հոլովվել Արուճում: Եվ ահա բարեպատեհ ժամը՝ Թաթուլի նվիրական ներկայության հրճվանքն էին այստեղ վայելում. ակնթարթը ժխտում էր կցկտուր բոլոր պայմանները, իմացության ամենամերձ խորհուրդը օրվա կատարյալ մարդուն, առաջնորդին, նույնությունների շարքում իր տարբերանիշը հաստատող անհատին անձնագիր էր տալիս:

Զարմանալի ոչինչ չկար, ստույգ էր ամեն ինչ, և Արուճն իր ոգեշունչ բնօրրանում սիրով մկրտում էր Թաթուլին: Իսկ նա պարահողմերից հետո արձակեց պարանոցը սեղմող բլուզի կոճակները և վստահ մոտեցավ բարձրախոսին, ինչպես արծիվն է հզորանում ժայռածերպին:

- Արո՜ւճ, հարազատ անուն, արուճցինե՜ր, փա՜ռք ձեզ և Միհրանին, որի կամրջով ես միացա ձեզ, զգացի շունչը հնաբույր այս

եկեղեցու, որի զանգի ղողանջները պատգամում են սերնդեսերունդ հիշել, վերապրել, վերածնվել այս հպարտ Մասիսների հայացքի տակ, շշնջալ ուղիղ աղոթք, հիշել մեր արծիվ պապերին, նրանց երգը, նրանց անուրանալի հավատը առ Հայք, Հայաստան աշխարհ:

Շրջակայքում գրեթե լուռ էին բոլորը՝ ունկնդիր Թաթուլին, որը նման էր հրածին ժայռի՝ խրոխտ, վսեմ, աշխարհի հետ անհաշտ, պահանջատեր ու հսկա: Եվ հանկարծ նայեց բարձր՝ եկեղեցու խաչին, ու խոսքը չավարտած՝ երգեց: Նրա ձայնը ազատ, թևաբաց, սանձակոտոր նժույգի պես սլացավ երկինքն ի վեր: Հիացմունքի ջերմացնող շղարշը ծածանվեց բազմության գլխավերևում: Փոքր ու մեծ, ծաղկանախշ շորեր հագած կանայք ու աղջիկներ զարմանքի թրթիռներով ծարեցին Թաթուլին: Նրանց սրտերում ծոր տվեց երախտագիտության փաղաքուշ խոստովանանքը, այնքան խորն ու անուշ սիրեցին Թաթուլին, նրա ներկայությունն ու ձայնը: Արուճի անպարունակ հրճվանքին Թաթուլը կարծես միացել էր հոգու վերջին հաշվետվությամբ, որդիական սիրո կատարյալ մղումով: Ինքն իրեն էր քննում, իջել էր էության խորքերը, բացահայտում էր ժողովրդական սիրո խորհուրդն ու կատարյալին ձգտող նրա տիրանվեր բույրը: Թաթուլի երգաշարը խառնվել էր հոգևոր, ծիսական մեղեդիներին, որոնք հավատի հանգերգով գնում-հեռանում էին, հառնում-համբառնում էին եկեղեցու գմբեթներից վեր՝ դեպ կապույտը, դեպի տիրատուր անհունը:

Եվ այսպես քանի ժամ...

Հետո, երբ մատաղի օրը հավաքեց ծիրանավոր իր փեշերը, Թաթուլը եկեղեցու գավիթում վառեց իր մոմերը, նայեց Մայր աստվածուհուն, հրաչյա մանկանը, խաչակնքեց, ապա խոնարհ հայացքը ծրարվեց սրբազան պատերի մեջ:

* * *

... Քաղաքը ծածկված էր մթով, երբ Թաթուլը տուն հասավ: Ռուզանի հետ կիսվելու հազար միտք ուներ: Երկու օրվա ընթացքում այնքան թանկ հույզեր էին խտացել ներսում, հորդացող խոհերի գետերից նորընծա բույրերի շառաչ էր լսում: Դրանցից առաջինը Իրինայի միամիտ ու մտածված բառաշարքն էր. «Գիտե՞ս, Թաթո՛ւլ, Ասպրամիկդ կարոտում է քեզ...»: Հենց Ռուզանը ներս մտավ ու փորձեց քրոջ կշտամբալից հայացքով քննել նրան, անմիջապես հնչեց Թաթուլի անսովոր ձայնը.

- Գիտե՞ս, Ասպրամիկս արդեն կարոտում է ինձ:

Ռուզանը ինքնաբերաբար գրկեց եղբորը:

Թաթուլը կարճ ներկայացրեց մանրամասներ գյուղից, խոսեց Արուճի եկեղեցու բացման առիթով տեղի ունեցած մեծ մատաղի մասին, ապա խնդրեց, որ քույրն ու փեսան նստեն իր կողքին: Ռուզանը տարօրինակ բան զգաց, կռահեց, որ եղբայրն ուրիշ գաղտնիք էլ ունի:

- Առավոտյան գնալու եմ Արցախ, Գյուլիստան...

- Ե՞րբ,- նվաղեց Ռուզանի ձայնը:

- Վաղը, Ռուզա՛ն ջան, ընդամենը այս գիշերից հետո մեր խումբն առավոտյան մեկնելու է,- շատ հանգիստ ասաց Թաթուլը,- խնդրում եմ ճամպրուկս կարգի բերես:

Ռուզանը փլվեց բազկաթոռին, մեկ նայում էր Թաթուլին, մեկ՝ Սամվելին, ուզում էր պարզել, իմանալ այդ հանկարծակի որոշման պատճառները:

- Տագնապելու ի՞նչ կա, քույրի՛կ,- առաջ անցավ Թաթուլը,- տանը բոլորը գիտեն՝ բացի մայրիկից, Իրինան մի քիչ տխրեց, նույնիսկ երեխայի անունից խնդրեց, բայց հասկացավ, որ ես ճանապարհից չեմ կարող շեղվել:

- Ուսանողական խո՞ւմբ է,- հարցրեց Սամվելը:

- Խմբում ուսանողներ էլ կան, ես էլ նրանց ավագն եմ,- Թաթուլը ոտքի կանգնեց,- առաջին անհրաժեշտության իրերս չմոռանաս, Ռուզա՛ն, նաև տետրերս, մի քանի գրիչ, էլ ուրիշ բաներով չծանրաբեռնես:

- Նայած թե քանի օրով ես գնում,- ստուգիչ հարցրեց քույրը:

- Ամեն ինչ կախված է իրադրությունից, ես դա չեմ կարող ասել:

- Թաթո՛ւլ, ճիշտն ասա, այնտեղ կռի՞վ է,- տխրաձայն հարցրեց Ռուզանը:

- Խառն է, ոչինչ չեմ կարող ասել, մեր գյուղի տղաներն էլ արդեն Գյուլիստանում են, լուրերը նախնական են, լարված իրավիճակ է, պիտի սեփական աչքերով տեսնել,- Արեգի տղաներին հիշելով՝ նա փորձեց փարատել Ռուզանի տագնապը:

- Քո կյանքն այս ինչպե՞ս դասավորվեց, Թաթու՛լ,- մոր ձայնով շշնջաց քույրը,- սրտի վիրահատություն, երկրաշարժի առաջին օրերի լարվածություն, հետո դարձար շարժման ակտիվ մասնակից, հիմա էլ գնում ես Գյուլիստան:

Ռուզանն այլևս չդիմացավ, որպեսզի եղբորը չտխրեցներ, լացը մի կերպ զսպեց, դուրս եկավ նրա ննջասենյակից:

- Սամվե՛լ, հասկանում եմ իրավիճակի լրջությունը,- երբ մնացել

էին երկուսով, Թաթուլը դիմեց փեսային,- եթե այսօր մոտ չկանգնենք մեր ցավին, եղած հին վերքերը ավելի կխորանան, դարձյալ կկորցնենք շատ թանկ բաներ, հետո կնստենք ու կարոտացավով կհիշենք, ինչպես հիմա գաղթականի զավակները, թոռներն ու ծոռները երազում են Սասուն ու Մուշ, Վասպուրական ու Ղարս... Պատմությունից ստացած մեր դառը դասերը չպիտի կրկնվեն, սա է այսօրվա սերնդի և ընդհանրապես ապրողներիս դասը,- Թաթուլը մի պահ ընդմիջեց, ապա նույն ազնիվ պարտադրանքով շարունակեց,- դե հիմա ինձ ասա, Սամվե՛լ, ես՝ որպես համալսարանի 4-րդ կուրսի ուսանող, հայոց երկրի պատմաբան, վտարանդի ճակատագիր ունեցած ղարսեցու թոռ, 88-ի շարժման տաք քուրայում թրծված երիտասարդս, կարո՞ղ եմ մորթապաշտ լինել, թաքնվել մոր փեշի տակ... Չէ՛, եղբա՛յր, չեմ կարող, ճակատագի՞ր է, թե՞ ժամանակի անհրաժեշտ պայման, ես այդ հորձանքի մեջ եմ, թող ինձ ներեն հարազատներս, նաև այն մանկիկը, որին ապագայում ասելու այնպիսի բան պիտի ունենամ, որ նա ինձ հավատա: Իմ պապ Մարկոսը իր կորցրած երկրի մասին շատ էր պատմում, բայց կարոտի «հեյ վա՜խ»-ից բացի՝ ուրիշ բան չտվեց ինձ... թող ներեն ինձ պապս և գաղթական մյուս պապերը, մենք ասելիք պիտի ունենանք երկրորդ հազարամյակին, նաև նրանց, ովքեր նոր-նոր են աշխարհ գալու:

Սամվելը բառեր չգտավ, որոնցով առաջնորդված՝ կարողանար խառնվել Թաթուլի այնքան բաց, այնքան ստույգ ու ճշմարիտ եզրահանգումներին:

- Համոզեցիր, ասելիք ու փաստ չկա քեզ առարկելու, թող Աստված լինի զորավիգ, Թաթո՛ւլ,- ցածրաձայն ասաց Սամվելը,- հասկացիր նաև հարազատներիդ, առջևում ոնց որ փոթորիկ է:

- Փոթորիկն ու փառքը հողեղեն չեն, դրանց միջև է աշխարհի կռիվը,- ժպտաց Թաթուլը,- մեր պարտքն է զսպել փոթորիկը և երկնքից ցած բերել ու տուն տանել մեզնից երես թեքած փառքը՝ պահպանելով հողը, հորովելը, հնձվորի պապենական արտը:

«Այս ինչքա՞ն ես փոխվել, Թաթո՛ւլ, երեկվանդ այսօրվա մեջ չի երևում: Տեր Աստվա՛ծ, այս ի՞նչ առյուծ է մտել այս երիտասարդի սիրտը...»: Սամվելը լռության ծոցում բռնեց զարմանքի իր ճիչը, սեղմեց այն ատամների տակ՝ ցույց չտալով ո՛չ իր հիացումի ազնիվ հոսքը, ո՛չ էլ զարմանքի ու տխրության արթնացող բնազդը...

Առավոտյան շատ վաղ արթնացավ Թաթուլը, կարող էր իջնել, գիտեր, որ ներքևում սպասում են տղաները, բայց գոնե երկու բառ պիտի փոխանակեր քրոջ հետ: Ննջասենյակից նա դուրս եկավ

ճամպրուկը ձեռքին և, ի զարմանս իրեն, քույրը կանգնած էր պատուհանի մոտ ու տխրամած նայում էր բացվող արևածագին:

- Ռուզա՛ն, կարծում էի քնած կլինես,- մեղավոր տոնով ասաց Թաթուլը:

- Ժամը 6-ից ոտքի վրա եմ, մտա ննջասենյակդ, քնած էիր, վախեցա արթնացնեմ, եկա, ամփոփվեցի իմ մեջ:

Քրոջ խոսքերից Թաթուլը մետաքսի փափկություն զգաց. հարազատ, անվերծանելի աղոթքի էր նման նրա միամիտ խոստովանանքը: Նա ճամպրուկը ցած դրեց, մոտեցավ Ռուզանին, նայեց նրա արցունքած աչքերին և լռեց:

- Ուր էլ լինես, պահպանի՛ր քեզ, ափսոս ես, իմացի՛ր, որ սպասողներիդ թվում է նաև թոթովախոս Ասպրամիկդ:

Թաթուլը թեթևակի ժպտաց, ամուր բռնեց քրոջ ձեռքը և հենվեց պատուհանի գոգին:

- Այս պահին ինձ սպասողները դրսում են, այ, էն մեքենայի մոտ հավաքված,- լրջացավ Թաթուլը և ցանկացավ, որ քույրն էլ սթափվեր,- այդ տղաներից մի քանիսը դեռ չեն հասցրել ամուսնանալ, շատերը մեծացել են անհայր, ունեցել են որբության թշվառ տարիներ, նրանց էլ սպասողներ կան:

Այս անգամ էլ Ռուզանը հասկացավ եղբոր ակնարկը և չուզեց անպատասխան թողնել:

- Թաթու՛լ, սա ճակատագիր է, Աստված ում ինչքան կամեցել է, դա է: Այնուամենայնիվ ուշադիր եղի՛ր, հաճախ մարդու ճակատագիրը հենց իր ձեռքերում է:

Ռուզանի ընդհանրացումը Թաթուլի սրտով էր, գրկեց քրոջը, համբուրեց նրա ճակատը և եղբայրաբար ասաց.

- Տանը բորբոքված հույզեր կլինեն, շուտ-շուտ գնա գյուղ, մայրիկին, Իրինային հանգստացրու, մերոնց հետ զրուցիր քո ձևով, չէ՞ որ դու իմ մարտական ընկերն ես, Ասպրամիկին համբուրի՞ր,- ասաց ու ճամպրուկը վերցրած՝ մտավ վերելակ, դռները փակվեցին, բայց Թաթուլը լսեց քրոջ ձայնը.

- Աստված քեզ հետ, բարով շուտ գաս, Թաթո՜ւլ...

* * *

Նույն օրը՝ իրիկնամուտին, Թաթուլի խումբը Գյուլիստանում էր: Հայաստանի տարբեր կողմերից այստեղ էին հավաքվել հարյուրավոր տղաներ: Անտառամերձ բացատում մարդաշատ ճամբար էր, եկվորները դիրքավորվել էին այնպես, որ շրջապատում ու-

շադրություն չգրավեին: Նրանցից հեռու էին սովետական բանակի զորախմբերը: Դրանք տեղավորված էին Շահումյանում: Շուրջը լարվածություն էր, սպասվելիք կռիվը կասկածանք չէր հարուցում: Արցախյան զարթոնքից ահաբեկված՝ ադրբեջանական գյուղերի կողմից լսվում էին աննպատակ կրակոցներ, աղմուկ-աղաղակ: Հակահայկական համատարած քաղաքականությունը մոլեռանդորեն բորբոքում էին ադրբեջանական լրատվության միջոցները: Արցախ-Ադրբեջան լայն գծի վրա սովետական զորամիավորումները գուցե թե հրահանգ ունեին տարածաշրջանում պահպանելու անդորրը, սակայն անհասկանալի կեցվածք էին դրսևորում: Դա թելադրված էր՝ սաստելու Արցախ-Հայաստան մեծ շարժման վերընթաց ուժը, մի բան, որ արդեն սասանել էր հզոր պետության հիմքերը: Երկուստեք հայ-ադրբեջանական կողմերը կանխազգում էին մոտալուտ բախումը, և յուրաքանչյուրն իր ձևով ու հնարավորությամբ էր նախապատրաստվում դրան: Ազգային ոգեկոչման փայփայված խորհուրդը Գյուլիստան էր բերել բազմաթիվ հայ կամավորների: Դյուցազուն տղաները նույն դրոշի ու գաղափարի կամքով այստեղ էին եկել՝ թույլ չտալու, որ թուրքերը նորից նենգ ու խորամանկ դավեր հյուսեն, եկել էին միանալու Արցախի ժողովրդի ազատաբաղձ զարթոնքին:

... Թաթուլը Սարգսին նկատեց զառիթափին կանգնած: Տիգրանը, Ռուբիկը, մյուս տղաները ներքևում սպասեցին, ինքը արագ խոյացավ վերև: Սարգիսը նկատել էր գյուղի տղաներին և բարձունքից ձեռքով ողջունում էր նրանց: Քիչ անց նա կտրուկ թեքվեց դեպի մասրենիներով երիզվող արահետը, բայց չհասցրեց հասնել բացատ, որովհետև Թաթուլն արդեն հայտնվել էր նրա դեմդիմաց:

- Սարգի՜ս:

- Թաթո՜ւլ, այդ ե՞րբ հասցրիր գալ,- խանդավառվեց Սարգիսը և ամուր գրկեց նրան:

- Եկա ու մենակ չեմ,- շունչը տեղը բերեց Թաթուլը,- խիզախների ջոկատ է ներքևում, նրանց մեջ նաև Կարապետյան Ռուբիկն ու Քոչարյան Տիգրանը:

- Մեր գյուղի տղանե՞րը:

- Արեգցի արծիվները,- ավելացրեց Թաթուլը,- նաև նույն զորության այլ տղաներ՝ տարբեր տեղերից, պարզապես նվիրյալներ:

- Չգիտեմ՝ ովքե՞ր են, որտեղացի՞, բայց որ դու ես այստեղ, Թաթո՛ւլ, նշանակում է՝ մեր Արեգի ոգին է այստեղ,- անկեղծացավ Սարգիսը,- կարոտել էի մեր գյուղի շունչ ու ձայնին, Արտին սարի

լրաբերին: Բարով եք եկել, Աստված մեր նպատակ կատարի:

Սարգսի հանդեպ յուրահատուկ հարգանք ուներ Թաթուլը, ընդունում էր նրան որպես գաղափարի մարդ, անխոնջ, շիտակ, իր խոսքի տեր: Ընդհանրապես տատ Գուլոյի կերպարով էր նա ընդունում, արժևորում Կարապետենց ազգը, նրանց մեծ ու փոքրին մոտիկից էր ճանաչում: Եվ հիմա այստեղ՝ Գյուլիստանի բարձունքներում, Սարգսի աչքերի մեջ նայելով՝ Թաթուլը զգաց նրա տոհմիկ հպարտությունը: Չէ՞ որ ազգանվեր սիրով էր նա այստեղ հասել, հավատարիմ այս տղաների հետ եկել էր առանց հրամանի՝ գնահատելով արցախյան եզերքների մարտական օրերի ներկա լարված բնույթը:

Ահա թե ինչու գորովանքի լույսը շողշողաց Թաթուլի աչքերում. Սարգսին թևանցուկ՝ երկուսով իջան զառիթափից: Ճամբարը բազմամարդ էր, կազմվում և ճշգրտված հաշվարկի էին բերվում պաշտպանական ջոկատները: Նրանք հիմնականում զինված էին որսորդական հրացաններով, սակայն տեղի ընկերները խոստացել էին, որ մի քանի օրում Գյուլիստան ժամանած խմբերը զինամթերք կստանան:

Սարգիսը մի քանի կոնկրետ հարցերով Թաթուլից տեղեկացավ գյուղի, իր հարազատների մասին և անմիջապես անդրադարձավ սպասվող իրավիճակին, որը, ըստ նրա, տանում է անխուսափելի բախման:

- Ինչպիսի՞ կապեր կան տեղական իշխանությունների հետ...

- Բավականաչափ լավ, հատկապես Շահումյանի շրջանի:

- Դա Շահեն Մեղրյանի գործոնն է,- հաստատապես ասաց Թաթուլը,- նրա իսկ ներկայությունն այս եզերքներում ծանր է նստում ադրբեջանցիների վրա:

- Թաթու՛լ, արդեն հասցրել ես ճանաչե՞լ այս շրջանների նշանավոր մարդկանց,- ուրախացավ Սարգիսը,- իսկապես հպարտություն է, որ այս հողը մեծ կամքի անհատականություններ է ծնել՝ և՛ առաջնորդ, և՛ կազմակերպիչ:

- Մեր կարծիքները միատեղվում են, Սարգի՛ս,- ասաց Թաթուլը,- հենց այն, որ այսօր համառորեն դիմադրում է Շահումյանի շրջանը, գյուղերում ձգտում կա չլքելու բնօրրանը, արդյունք է բնակիչների մարտական ոգու և Շահենի ինքնամոռաց խիզախության:

- Մենք էլ եկել ենք, որ Գյուլիստանի այս բարձունքներից օգնենք նրանց,- համաձայնեց Սարգիսը,- ամբողջ Արցախը նման է զսպանակի, ուր որ է պայթելու է ժողովրդի համբերությունը:

- Ամեն ինչին պետք է պատրաստ լինենք,- խոժոռվեց Թաթուլը,-

սա մեր ճակատագրի կռիվն է, համբերությունն էլ սահման ունի:

Նրանք այսպես, տաք-տաք խոսելով, մոտեցան ճամբար-հավաքակայանին: Դեռ հեռվից Սարգիսը տեսել էր Տիգրանին ու Ռուբիկին, մոտենալով գրկեց նրանց, մտերմիկ մի քանի բառ ասաց, ապա նույն ջերմությամբ դիմավորեց Թաթուլի խմբի մյուս տղաներին:

Երեկոյան Ստեփանակերտից պետք է գար մի բեռնատար, որին անհամբեր սպասում էին ճամբարականները: Տղաները իրար ականջի շշնջում էին, որ զենք են բերելու: Իսկ սպասվածը տեղ հասավ միայն գիշերվա կեսին, որովհետև Գյուլիստան տանող ճանապարհին հայտնվել էին ստուգող կետեր: Մեքենան ուղեկցող խումբը ստիպված շրջանցել էր կենտրոնական մայրուղին, անտառամիջյան կիսաբանուկ ճանապարհներով, Մատաղիս չհասած, շրջանցելով Տոնաշեն գյուղը, թեքվել էր ձախ՝ մերձենալով Ինգա գետին՝ աչքի առաջ ունենալով Մռավ լեռը: Ճամբարում աշխուժությունն ավելի նկատելի դարձավ, հոգով անպարտելի տղաները ընկերներից զենք ստացան: Անթաքույց իրողություն էր դառնում ժամ առ ժամ զորացող առճակատումը: Ազերիները օր օրի ավելի սանձարձակ էին դարձել: Նրանց կողմից կտրուկ ու վերջնական էր դրվում հարցը Շահումյանում և Գետաշենում, պահանջում էին հեռանալ: Այդ ամբարտավանության դիմաց ոչ միայն ուժ էր պետք, այլև միավորված ու հստակ կազմակերպվածություն, նաև յուրատեսակ վճռականություն, այլապես խուժանի խառնաշփոթը կարող էր ոտնատակ տալ ամեն ինչ: Հայրենիքի փրկության գործում եզակի այս պատեհությունը սիրտը պատռած պղնձակոփ զանգի նման կանչել էր հարյուրավոր քաջորդիների, որոնց համար մահվան գաղափարը չնչինություն էր: Նրանք գիտեին, որ այստեղ ոչ մի բան մանանայի պես չի թափվի երկնքից, պետք էր ձգտել հավասարակշռության, ինչպես զենք ունենալու, այնպես էլ դիրքեր ու ամրություններ կառուցելու առումով: Գյուլիստան էին եկել հենց այդպիսիները, ովքեր մահապարտի խիզախ հատկանիշներ ունեին, գիտեին ակնթարթում կողմնորոշվել, գիտակցաբար էին վերաբերում այն ամենին, ինչը առնչվելու էր բարդ ու բազմաբնույթ անակնկալների հետ: Նրանք համոզված էին, որ իրենց կամքի դիմաց կխոնարհվի չարությունը, միայն թե տղաները զենք ունենային: Եվ այս տեսանկյունից փոքրիկ ձեռքբերումն անգամ գոտևորում և նոր լիցք էր հաղորդում նրանց: Ահա թե ինչու այդ գիշեր լուռ ցնծության մեջ էին տղաները, սակայն խմբերի ղեկավարները մտահոգ էին, ինքնապաշտպանական ծրագրերի լայնածավալությունը նրանց հարկադրել էր ամեն

ինչ նորովի կազմել՝ հաշվի առնելով տեղանքը, դիրքը, մարդկային հնարավորությունները: Նրանց հայտնի էր, որ ադրբեջանցիները առավել զինված էին, որովհետև խորհրդային զորամիավորումներից անարգել կողոպտում էին զենք ու զինամթերք, բեռնատար գնացքները ենթարկվում էին նրանց կամքին, ամեն տեղ կարևոր օղակներում ադրբեջանցիներ էին:

... Ամռան վերջին օրերն էին (1990 թ.), օգոստոսյան տապը կլանում էր ամեն ինչ, չոր եղանակը, անձրևի պակասը զգացնել էին տալիս, թերևս տարվա այս ժամանակներում Գյուլիստանում միշտ խոնավ ու անձրևոտ էր լինում:

Օգոստոսյան այդ առավոտ Թաթուլը սովորականից ավելի վաղ արթնացավ: Գիշերը ռադիոյով լսել էր, որ Ադրբեջանի ՆԳ նախարարի տեղակալ Մամեդովը, գլխավորելով ավազակային խումբը, այդ թվում՝ միլիցիոներների, հայտնվել էին Գետաշեն գյուղում, դիմել բռնի արարքների, սպառնացել բնակիչներին, որ իրենց մտքից հանեն Շահումյանի շրջանի կազմում հայտնվելու գաղափարը և հնազանդորեն ենթարկվեն Խանլարի գործադիր կառույցներին: Մեկ օր հետո լուրերն ավելի մանրամասն ու իրական պատկերով հայտնի դարձան, որն ավելի սրացրեց իրավիճակը:

Գետաշենի արդար զայրույթն ու բողոքը, բնակչության անհնազանդությունը չարժանացան կենտրոնական իշխանությունների ուշադրությանը, դեռ ավելին՝ օմոնականները սկսել էին ապօրինի խուզարկությունները, կողոպուտը, ամեն կերպ ստիպում էին գետաշենցիներին գաղթել, հեռանալ:

Որքան էլ ամուր ու հզոր էր Գետաշենը, այնուամենայնիվ, գործնական օգնություն ու աջակցություն էին անհրաժեշտ: Գյուլիստանի ճամբարում այս տագնապը խորը ցնցում առաջացրեց: Ինքնապաշտպանության հարցերով զբաղվող կենտրոնը որոշում պետք է ընդուներ ճամբարում գտնվող ընկերներից գործուղել Գետաշեն՝ միավորելու տեղի ուժերը, ամրապնդելու նրանց ոգին: Թե ո՞վ պիտի գնար Գետաշեն, ուր ամեն ինչ փաստորեն օմոնականների ձեռքի տակ էր, պիտի որոշվեր վաղը: Խմբերի ղեկավարները բոլորն էլ կայուն կամքի անհատներ էին, խորահայաց, պատասխանատու, հասկանում էին, թե ինչ է նշանակում այս օրերին գնալ Գետաշեն: Ամենօրյա տեղեկատվությունը բորբոքել էր Արցախի, այդ թվում՝ Շահումյանի բնակչությանը: Այս տեղամաս ժամանած տղաները նույնպես հանգիստ ու դադար չունեին: Նրանք այստեղ էին հայտնվել լուրջ ու գործնական տրամադրվածությամբ, պատրաստ

էին ցանկացած հանձնարարության:

Այդ օրը Թաթուլը երկար զրույց ունեցավ խմբի տղաների հետ: Ներքնատես ու թափանցիկ հայացքով նա քաղում էր նրանց կարծիքները, նրբին հարցերով ստուգում, թե ով ինչի է պատրաստ: Այդ փոխադարձությունը, մտախռիվ ամպերը ցրելու թաթուլական ոճն էլ ավելի էին մերձեցնում մեկը մյուսին: Տղաները, ովքեր զենքեր էին ստացել, մի տեսակ փոխվել, ավելի հասուն ու հպարտ էին դարձել: Նրանց ոգու վերադարձող շռինդին միացել էր թշնամուն սաստելու տեխնիկան: Ինքնաձիգերը, իհարկե, տանկ ու հրթիռ չէին, բայց հայ տղաների ձեռքում դառնում էին «սուր ու վահան»: Թաթուլը զգում էր, որ ընկերների ուղարկած զինամթերքը մեծացրել էր Գյուլիստան եկած կամավորների մարտունակությունը, բոլորի կամքը ձուլված էր նույն նպատակին՝ պահպանել հայկական գյուղերն իրենց բնօրրանում, կանխել ազերիների բարբարոսությունը խաղաղ բնակչության նկատմամբ:

... Կեսգիշերից հետո, երբ խաղաղվել էր ճամբարը, Թաթուլը վերադարձավ իր կացարանը: Անեզրական մութը խառնել էր երկիր-երկինք, անթափանց մշուշի պես քողարկել գետ ու անտառ: Օրվա ձայները նոր-նոր վերադառնում, փութաջան գրոհում էին նրա վրա: Թաթուլն այստեղ էլ չկարողացավ փոխվել, ինչ որ լսել ու զգացել էր, պիտի ծանր ու թեթև աներ, ջոկեր կարևորն ու գլխավորը, իր հաշվարկով մաղեր ավելորդը՝ գտնելու իրադրությունն ու իրականը հարաբերող չափուկշիռը: Արդեն գիտեր, որ չէր քնելու, իր ստացած զենքին ձեռքը դրած՝ ճամփա ու կիրճ էր անցնելու, մտքով կրակելու էր իր իմացած թշնամու վրա: Դեռ կռվի դաշտ չհասած՝ մարտակոչ էր հնչեցրել, ուրեմն տեսնում էր իր թշնամուն, ճանաչում էր նրան: Պապ Մարկոսից լսած և նրա տխուր ողբից երևացող տիրակալ-հետնորդներն էին սրանք, որ շուրջ մեկ դար հետո նորից սև պուտերով փշաբույլք էին տվել: Նրանք չէին հանդուրժում խաչապաշտի ներկայությունը: Բարության ծաղկումը չէին հանդուրժում, խորշում էին տիեզերածալ խաս գույներից, որոնք հայի ձեռքով սյուն ու քանդակ, բերդ ու գմբեթ, գիր ու հայրեն էին դարձել: Թաթուլը ճանաչում էր նրանց ու չէր ուզում հերքել գիշերվա ծանր կամքը, որն իր տեսքով կարծես նրանց տեսակից էր՝ մութ, խավարագործ և ամբարտավան: Նստել ու չէր ուզում քնել. Գետաշենի կանչը պատռում էր աշխարհի անտարբերության խիղճը, բզկտում էր իր շուրջը դիզվող դավադրությունը, գալիս էր ցուցանելու իր ցավը: Այդ մորմոքող ցավը էլեկտրական լիցքերով մտրակում էր նրան,

օրորվում Ինգա գետի մեղմաձայն ու անտարբեր կարկաչներով: Թաթուլը շատ անգամ էր այսպես անհանգիստ եղել, չէր հաշտվել իր ու աշխարհի հետ: Բայց այսօր հավելյալ մի բան անխուսափելի ու կատարյալ մղումով հոսել էր Գյուլիստանի բարձունքներից, հայտնվել վերջին օրերի ծամածռված վարքով, երբ հայ մարդու ճիչը լսող չկար Արցախ աշխարհում, երբ աշխարհի մեծամեծերը իրենց աչքերն են գոցել՝ չտեսնելու հարևանի վայրագությունը, այն սարքովի հարևանի, որը հիմա խորհրդային եղբայրության խորհրդով ուզում է տիրանալ ուրիշի ազնիվ հացին, հացտուր արտին, տանը... Թաթուլն այս հոգեխռիվ մռնչյուններից չէր կարող ազատագրվել, մանավանդ Գետաշենի տագնապից հետո սրտում նոր ակոս էր բացվել: Այրող, պատասխանի սպասող լռությունը նրա ներսում քնած չէր, ինչպես ինքը՝ ամբողջական լարված և անզիջում: «Եվ եթե եկել, հասել ենք Գետաշենի քթի տակ և գիտենք, որ այնտեղ իր կամքն է պարտադրում ազերին, էլ ինչի՞ ենք սպասում: Տագնապ ու օգնության կանչը հենց այնպես չեն եթերաձայնել գետաշենցիք, տեսնես ի՞նչ է կատարվում այնտեղ...»: Թաթուլն անպատասխան ամփոփվեց իր մեջ, բայց Գետաշենում լինելու ցանկությունն արծվային շուքով շուլալվեց ներսում, մնաց: «Ինչ-որ մեկը պիտի գնա՛ այնտեղ... ինչ-որ մեկը՝ միջնո՞րդ, դեսպա՞ն, թե՞ հրացանավոր: Ինչ-որ մեկը ի՞նչ պիտի անի ավելի լավ, քան գետաշենցի մեկը, երկուսը, հարյուրը...»: Թաթուլն այդ ինչ-որ Մեկի կերպարն էր փնտրում, նրա հետ ուզում էր զրույցի բռնվել, մոտենալ, խոսել, նաև հասկանալ, թե ինչպե՞ս պետք է դրսևորի իրեն, ո՞րն է լինելու սկիզբը: Թաթուլը դժկամությամբ պառկեց, մութ սենյակում մեն-մենակ էր, շուրջը՝ աշխարհում, խաբուսիկ անդորր էր, գույները հալվել էին խավարի մեղուշ ծալքերում: Ինքը՝ շողի ասպետ, հոգին՝ բանաստեղծական բարձրյալ շքերթի մեջ, լիալիր ու հանդուգն խոհերով, բայց հիմա շալակն առած Գյուլիստանի գիշերվա տոթը՝ իրեն տանում էր անհայտ մի ուղղությամբ, ուր իր բնազդով պետք է երևար լույսի շողը: Այդ վերջին ու միակ շողը նա տեսնում էր Գետաշենի ճանապարհին: Երբ աչքերը փակեց և փորձեց մտովի հեռանալ տեսիլքներից, հոգու խորքերում վերակերտեց կապույտ մի աշխարհ՝ Գետաշենը: Հայտնության ողորկ շուքը ցնցեց՝ տեղի տալով Գարդմանա հնավանդ սրբությունների դարձին: Պատմաբանի ոգեպատառներով նա մինչև լուսաբաց կառուցեց իր նոր բերդը, գետաշենյան հեքիաթը այնքան մոտեցրեց իրեն, որ ցավի ու կարոտի շաղախից բացառիկ բերկրանքով տաքացավ սիրտը:

Նա ընդունեց այդ անսովոր ահազանգի ձոներգը, որ եկել էր իրեն տանելու այնտեղ, ուր ինքը պետք էր, եկել էր իրեն հեռացնելու ճամբարական համբերությունից, տրորելու սպասումի ամենամեղկ պատկերը: Թաքուլը հանկարծակի իրեն բռնեց այն մեկի մեջ, որ պիտի գնար Գետաշեն: Այդ գաղափարը տևական անձնավորեց, մոտեցրեց իր հոգուն, մերկացրեց խավարը, հույսով կանչեց և իրեն բզկտող շիտակությամբ զարմանալի տուրքով լռեց:

Լուսաբացին, երբ բացեց աչքերը, ուշ գիշերվա խորհրդավոր հանդիպումն իր նպատակի զինվորի հետ համարում էր կայացած: Գերադասեց այդ մասին ոչ մեկի չասել, գուցե որոշումը կենտրոնից հենց այդպես էլ լինելու էր:

* * *

Առավոտյան Կենտրոնից լուր ստացվեց, որ ճամբարում խմբերի ղեկավարները իրենց մեջ պիտի որոշեն այն մեկին, որը կամավոր իր վրա կվերցնի Գետաշեն գյուղի ընդհանուր պաշտպանության ղեկավարումը: Թաքուլը անմիջապես կապվեց կուսակցական կենտրոնի և համալսարանի պատմության ֆակուլտետի ղեկավարության հետ՝ խնդրելով, որ հաստատեն իր տարեկետումը և իր թեկնածությունը՝ մեկնելու Գետաշեն՝ որպես ուսուցիչ: Ինչպես հետո էր պարզվել, եղել էին ուսանող երիտասարդներ, որոնք չէին ցանկացել թողնել ուսումը, համալսարանը, Երևանը: Թաքուլի պահանջը զարմանք չառաջացրեց, որովհետև նախապես այդպիսի նախազգույց տեղի էր ունեցել, ուստի չուշացավ այդ ձևակերպումը: Թաքուլն արդեն իմացել էր, որ ՀՅԴ բյուրոն սեպտեմբերի 2-ին որոշում էր ընդունել սատար կանգնել Շահումյանին ու Գետաշենին: Դա ոչ թե հորդոր էր, այլ հոգու հրաման իրեն և Գետաշեն մեկնող նվիրյալ ընկերներին:

Քանի որ կենտրոնն արդեն առաջարկել էր կամավորության սկզբունքներով որոշել այն խիզախին, որը պիտի անցներ Շահումյանը և հասներ Գետաշեն, սպասում էր պատասխանի: Այդ նպատակով ողջ ճամբարը շտապ հավաքվեց հրապարակում, շարքերը կողք կողքի էին, հպարտ, հուզված և սպասողական: Սա նույնպես փորձության ահեղ ժամ էր, որովհետև հավաքվածները գիտեին, թե ինչ իրադրություն էր Գետաշենում, գյուղը գրեթե պաշարման մեջ էր, ազերիների կողմից շարունակվում էին կամայական և քստմնելի գործողությունները: Հավաքվածները հասկանում էին ստանձնածի պատասխանատվությունը, և սա էր պատճառը, որ խմբերի ղեկավարները չէին շտապում: Այդ կարճ միջոցում պիտի վճռեին, հավատային, վստահեին: Թաքուլը վայրկյան առ վայրկյան սպասում էր՝

ուր որ է կգա հեռագիրը կամ հեռախոսագիրը: Նա չէր կասկածում ո՛չ համալսարանի ղեկավարությանը, ո՛չ էլ իր կուսակցական ընկերների որոշմանը, բայց այստեղ շարքերն արդեն շոշափում էին հոգիների հանդերձքը, ոգու բաց քննությունն էր, համարձակության կշիռն էր նժարվում: Եվ ահա առաջ անցավ մեկը՝ հաղթանդամ, կորովի և բարձրահասակ. Սարգիս Կարապետյանն էր:

- Ես պատրաստ եմ մեկնելու Գետաշեն, կարծում եմ՝ ձեզանից ոչ մեկը չի կասկածում ռազմավարական իմ իմացությանը, զենքի հետ վարժված լինելու հմտությանը, մարդկանց մեկ նպատակի միավորելու իմ անձնական հատկանիշներին,- նա մի պահ լռեց, շունչը տեղը բերեց և նույն տոնով շարունակեց,- ինչ-որ ներկայացրի, ընդամենը բնութագրող գծեր էին, այդ ամենը ինձ ստիպելով ասացի, որ դուք մի անգամ ևս հավատաք ինձ և իմ գործնականությանը:

Երբ Սարգիսն ավարտեց խոսքը, շարքերով անցավ հավանության շշուկը, ապա հորդացող ծափահարությունը տիրաբար արձագանքեց շրջապատում: Իսկ հետո կատարվեց անսպասելին: Հավաքվածները չհասցրին մեկ քայլ անել, երբ դիմացի կանաչ հողաթմբին հայտնվեց Թաթուլը: Բոլորը քարացան, սպասումը շղթայեց երիտասարդ հոգիներին: Սարգիսը զարմացական նայեց, սկզբից թվաց՝ համագյուղացի երիտասարդը, իրեն լավ ճանաչող կրտսեր ընկերը բնութագրական խոսքեր պիտի ասեր: Բայց դա ամենևին ուրիշ բան էր: Նա հատընտիր նայվածքով հմայիչ ժպիտը շաղախեց դեմքին, աչքերը հրեղեն ցոլացին, և աջը վեր պարզեց:

- Սեպտեմբերն իմ վճիռների ամիսն է, նրա ծոցում է իմ բախտի հասունացող սկիզբը: Եվ հիմա ինչ-որ պիտի ասեմ, այս պահի սահմաններում չի տեղավորվի: Դա վերաբերում է Սարգսի հավատամքի ծաղկումին, ճակատագրական վայրկյանին այս մեծ հայրենասերի բացառիկ նպատակների միավորմանը: Նա ասում է այն, ինչ-որ ճշմարտությունն է, ազնիվ է խոսքի, խոստումի և վճռելու նախապայմաններում, չի գերագնահատում իր դերը, տեսնում է այսօրվա պատկերը վաղվա մեջ: Նա իմ հայրենակիցն է, զրկված է ծնողներից, անչափահաս երեխաներ ունի և այսօր դժվարությունների մեջ հայտնված ընտանիք: Որքան էլ որ իրական են նրա տենչը, գետաշենյան տագնապներին մոտ կանգնելու նրա գերազնիվ նվիրումը, նույնքան օրինաչափ է նրա փոխարեն իմ ներկայությունն այնտեղ՝ նախ որպես ուսուցիչ, մի բան, որ նորեկի նկատմամբ օմոնականների կողմից կասկածանք չի հարուցի, և հետո ամենակարևորը՝ իմ ծնողները կան, չորս եղբայր,

քույր, Կրպեյանների մեծ գերդաստանն իմ թիկունքում է: Սարգի՛ս, սիրելի՛ս, համաձայնի՛ր, որ կրտսեր բարեկամդ այս անգամ ճիշտ է, Գետաշենի ճակատագրի փայլը՝ արևոտ, թե մռայլ, իմ բաժինն է, բաշխի՛ր ինձ:

Թաթուլն ավարտեց իր ասելիքը, բայց ցած չիջավ: Նրա խոսքի սահքը մնացել էր շարքերի մեջ, ձգված խորհուրդը պատռել էր անորոշության քողը, որից այն կողմ վերծանելի եզրահանգումն էր, նրա տիրույթում արեգցի երկուսը՝ անկասելի, սիրասուն ու մեծ: Շշուկը դարձյալ հոգիներից ծփաց, հավաստի ու խրոխտ փառավորվեց առավոտի մեջ: Սարգիսը զսպեց ձայնալարերի ցփանքը, սրտի արձակ խորաններում նշխարեց Թաթուլի ժպիտը և չդիմացավ: Աչքերում փափուկ փխրեց արցունքի շարը, չհամբերեց, պոկվեց տեղից, գնաց արագ-արագ. կանաչ թմբից Թաթուլն իջավ փութկոտ ու խենթ, արագ-արագ եկավ: Ի՞նչ թեթև էր ամպի շողը առավոտի ծիրում, թվաց՝ երկու ժայռ են՝ պոկվել լեռան ուսից, հանդգնում են իջնել հողին, դառնալ հզորության մերան:

Գրկվեցին նրանք՝ Թաթուլն ու Սարգիսը: Այս անգամ ուրիշ դղրդոցով օրորվեցին զինավառ շարքերը, ցնծությունը սրտերի մեջ երևակեց երանգների պսակ, և շուրթերը շեփորեցին.

- Թաթո՞ւլ, Թաթո՞ւլ...

Սարգիսը հասկացավ, տեղի տվեց, գիտեր, որ Թաթուլի որոշումն Աստվածն անգամ չէր կարող բեկանել: Սարգիսը հասկացավ, հազարերորդ անգամ ճանաչեց, հառնեց արյան շոշափելի ակունքներից և ուղիղ նայեց նրան: Թաթուլը խաղաղ ժպտաց, ձեռքը տարավ, սրբեց Սարգսի խոշոր արցունքները:

- Սրանք քո մեծ ազնվության տաք հյուլեներ են, Սարգի՛ս, քո արցունքները կոչ են, հրեղեն պատգամ, հաղորդություն և զենք են,- հուզվեց Թաթուլը,- ես այն երբեք չեմ մոռանա:

... Գյուլիստանը Թաթուլին ճանապարհեց Գետաշեն:

* * *

...Հաջորդ այգաբացին անտառների միջով մի ամբողջ գիշեր ճանապարհ անցած քառյակը մոտենում էր ձորապռնկին: Բարձունքներն այստեղ քարացած էին հավիտենական պարի խոյանքներով: Իսկ շուրջը՝ անորոշության ծոցերում անմեկնելի լռություն էր: Ուս ուսի պնդված լանջաբերդերը մանուշակե շղարշով սահմանագծված էին կապտամշուշ հորիզոնից: Այդ հարազատությունը թափանցիկ պատկերներով Թաթուլին ակնթարթորեն առավ իր գիրկը:

- Գետաշե՞ն,- նրա շուրթերից թռավ այս բառը, հետո այդ տաք թրթիռը հարազատ գույներով ծփաց ու ծաղկեց նրա սրտում: Այդ մեկ հատիկ բառը արձագանքներով իջավ ժայռերի միջով, անուշ հևոցով մարեց ներքևներում, ուր ավետիս-աղոթքների հարագնա տուրք էր: Թաթուլը միանգամից գերվեց այս բնաշխարհի աշնան բազմերանգությամբ, զգաց կրակե ցոլքերի յուրատեսակ խորհուրդը: Գյուղը ցածում էր՝ մշտահեղ դրախտային պատկերներով. այն տարածական փռված էր մեծ կիրճի խորքերում, ելևեջում էր գույնզգույն շերտերով՝ նման բարձունքների վեհությանը ձուլված խաչպատկերի: «Ուրեմն սա է այն դրախտային Գետաշենը, որ դարեր շարունակ օտարների աչքի փուշն է եղել...»: Թաթուլը տեղն ու տեղը պատմական այս տեղավայրի մասին իր իմացությունն ստուգեց, հասավ 1767 թվականը, երբ լուրջ ախորժակով այս երկրամասին ուզում էին տիրանալ Գանձակի Շահվերդի խանը և նրա որդին՝ Մահմեդ-Հասանը: Թաթուլը միանգամից մռայլվեց, բայց միտքը ձգվել էր հեռու, քրքրում էր պատմության խորքերը: Ընդամենը մեկ տարի առաջ նա ուսումնասիրել էր Լեոյի աշխատությունները և քննություն հանձնել: Հիմա այստեղ նա շնորհակալությամբ հիշեց համալսարանի հայոց պատմության ամբիոնի բոլոր դասախոսներին, նրանցով գնահատեց իր գիտելիքներն ու քաջատեղյակությունը և դարձյալ վերհիշեց մեծ պատմաբանի հիացմունքի խոսքերը, նրա կողմից ուսումնասիրված փաստերի ու հայտնի իրադարձությունների համապատկերը, հատկապես Գյուլիստանի հռչակված տիրոջ՝ Հովսեփ Մելիքի և նրա քաջ որդու՝ Բեգլարի մասին: Նրանք ընդամենը 40 զինվորով, ամրանալով անառիկ ժայռերի մեջ, կարողացել էին ետ մղել թշնամու 4500 հոգանոց զորքը:

Թաթուլը շուտ սթափվեց, պատմության խորքերն իջնելու ժամանակը չէր: Շրջապատում խորհրդային ներքին զորքերի դեսանտայիններն էին, նրանց կողքին բեռնատարներ, զրահամեքենաներ: Զգացվում էր, որ այստեղ անսովոր իրադրություն էր: Թաթուլն ընկերների հետ աննկատ իջավ զառիթափից, ժայռերի միջով խորացան դեպի գյուղ: Հարց ու փորձի կարիք չունեին, որովհետև նրանց հետ էր Թաթուլի կուսակից ընկերը՝ Հրայր Կարապետյանը՝ այս գյուղի թոռը: Նա տղաներին առաջնորդեց իր մորական պապի՝ Վաղարշակ Չիլինգարյանի բնակարանը: Տեղավորվեցին, հարմարվեցին՝ շնորհակալ մնալով այս լուսավոր տունն ու այգին ստեղծողներին:

Մեկ ժամ հանգստանալուց հետո իմացան, որ դպրոցում մի-

ջոցառում կա: Հրայրն ու Թաթուլը դուրս եկան: Փողոցի ծայրում նրանց միացան երկու ժրաջան պատանի և ուղեկցեցին դպրոց:

- Մեր դպրոցո՞ւմ եք աշխատելու,- հարցրեց տղաներից մեկը և շիկնեց իր հետաքրքրասիրության համար:

- Կտեսնենք,- բարեկամաբար պատասխանեց Թաթուլը:

- Ընկեր Ղազարյանը կասի:

- Մեր դպրոցի դիրեկտորն է,- պարզաբանեց մյուսը:

Թաթուլը շոյեց փոքրիկի գլուխը և իր նման ժպտաց: Տղան նույնպես: Թաթուլին թվաց՝ նրա աչքերի մեջ տեսավ իրեն, իր վաղուցվա ժպիտը, որ հիմա այցի չէր գալիս: Կամաց-կամաց վերագտավ իրեն, հրճվանքի ոգեբարձ շերտերը ընդգծվում էին բոլոր կողմերից: Այսպիսի գյուղ, բնակավայր էլ ո՞ւր էր տեսել: Մտքում համեմատեց, չգտավ մեկ ուրիշը, որ միանգամից այսպես կախարդեր, այսքան շուք ու շոյանքի մեջ պարուրեր, շշնջար հոր ու պապի թանձր խոսքերով, իր բարության բարձերը փռեր ոտքիդ տակ և մերձ ու մտերիմ հաղորդվեր: Էլ ո՞ւր էր տեսել շարք-շարք կանգնած, գլուխ-գլխի սիրազեղ այսքան բարդի, ժայռակախ պատշգամբների վեհասլաց խորհուրդ, անծանոթին մեղմ հորդորով բարևող մեծ ու փոքր: Թաթուլը զգաց, որ դպրոց ձգվող ճանապարհին, կարծես, չէր քայլում, թռչում էր երևացող ձորալանջերի կանչով, գնում էր աշնան ոսկի տեսիլքների հետևից, որոնք ուս ուսի նստած էին տների քիվ ու բազրիքներին և բնականից զարդարում էին իջնող ու մագլցող աստիճանները: Երևացող ամեն բան՝ փոքր ու տարածուն բանջարանոցներ, կիսաքանդ եկեղեցի, դարիվերից ուսնկախ ջրվեժ-առուները, հրեղեն հևքին տրված գետը, Թաթուլին առել պատկեր-շղթաների մեջ, տանում էին: Հրայրը և հատկապես ուղեկցող երեխաները շատ սովորական էին և անզարմանք. այս դրախտն իրենցն էր, ամենօրյա այս կատարյալ ծեսի վկաներն էին նրանք: Թաթուլն աչքի պոչով զննում էր, զգում, որ այս կայտառ երեխաների զարմանքն ինքն էր՝ թավ բեղ ու մորուքով մի արեգցի, որ համարձակվել էր գալ այս արև-դրախտը. կտրել էր անտառ, սար ու բարձունք, անցել էր սարքովի քանի՜ սահմանադուռ, մինչև իջել էր Գետաշեն, հասել այս այրվող երկրամասի հույսի ամրոցը: Գետաշենցի պատանիներն ի՞նչ իմանային, որ սա Թաթուլն էր, Կրպեյանների թալիսման ուներ ծոցում, աչքերից կրակն էր շողում, երակների մեջ այնպիսի բոց կար, որ այրում էր իրեն, մոխրացնում, ապա փյունիկ թռչունի պես հառնում, հեռանում էր, հայտնվում այնտեղ, ուր ինքը պետք էր:

- Ահա մեր դպրոցը,- ասացին նրանք,- մենք երկրորդ հերթով ենք գալու:

Թաթուլը ակամայից կանգնեց, ողջագուրվեց տղաների հետ և ծանոթության հորդորով ասաց.

- Ես Թաթուլն եմ, եկել եմ, որ մնամ, իմ ընկերն էլ Հրայրն է՝ այս գյուղի թոռը:

Տղաները գլուխները վեր բարձրացրին:

- Ես Հարությունն եմ:

- Ես էլ՝ Ռոմանը:

- Ծանոթացանք, երևի կհանդիպենք,- ասաց Թաթուլը, հրաժեշտ տվեց նրանց, և Հրայրի հետ դպրոցի շքամուտքից ներս մտան:

Ուսուցչանոցում մի պահ զգաստացան բոլորը, տնօրենը ընդհատեց մանկխորհուրդը, ընդառաջ գնաց, ջերմորեն բարևեց, հնչեցնելով իր անուն ազգանունը՝ Շմավոն Ղուլղազարյան:

- Թաթուլ Կրպեյան, պատմության ուսուցիչ,- լսվեց հատու պատասխանը,- գործուղված եմ աշխատելու այստեղ, եթե, իհարկե, որևէ մեկի դասաժամերի կրճատման հաշվին չլինի:

Թեև անհրաժեշտություն չկար, բայց ներկայացավ նաև Հրայրը:

- Վա՛հ, մեր գյուղի թոռն է,- բացականչեց տնօրենը և ամուր գրկեց նրան, ապա դառնալով Թաթուլին՝ ասաց.

- Պատմության քսան ժամ ազատ է և այն էլ բարձր դասարաններում: Նրան ձայնակցեցին նաև ուսուցիչները, որոնք միանգամից հմայվեցին այս պատկառազդու երիտասարդով, որի ժպիտն ու աչքերը խոսուն էին, ձգող ու հարազատ: Թաթուլն ու Հրայրը ուրիշ ելք չունեին, ակամայից դարձան մանկխորհրդի նիստի մասնակիցներ:

- Անհատական գրաֆիկի հիմունքներով եմ այստեղ,-ասաց Թաթուլը,- դպրոց եմ եկել պատմության ֆակուլտետի չորրորդ կուրսից: Ամենագլխավորն այն է, որ Գետաշենում եմ հայտնվել, այն էլ Հրայրի հետ:

- Հանուն մեզ թողել ես համալսարանի ամենապատասխանատու շրջանը, դա զոհաբերություն է,- անկեղծ հավանությամբ ասաց դպրոցի տնօրենը և խնդրեց սուրճ պատրաստել հյուրերի համար: Շնորհակալաբար ընդունեցին, որովհետև սուրճի շուրջ ծավալվող թեկուզ փոքրիկ զրույցով կփորձեին հետաքրքրող մի քանի բան իմանալ:

- Ինչպե՞ս եք դիմանում, խա՞ռն է մթնոլորտը,- հենց այնպես, հարևանցի հարցրեց Թաթուլը:

- Քիչ է ասել խառը, քաղաքական խառնաշփոթ է առաջացել մեր գյուղի շուրջը,- մտահոգ պատասխանեց տնօրենը,- մեր բոլոր

ջանքերը Խանլարի պատկանելությունից անցնելու Շահումյանի շրջանի հովանու տակ, ոչ մի արդյունք չեն տալիս, և դա չլինող երազանք է...

- Այստեղ գալուց առաջ ձեր գյուղին ծանոթ մարդիկ շատ բարձր գնահատեցին գետաշենցիների մարտունակությունը,- անկեղծացավ Թաթուլը,- ես, պարզապես տեղ չհասած, սիրահարվել էի Գետաշեն անվանը: Դեռ ավելին,- փայլեցին Թաթուլի աչքերը,- երբ կանգնած էի սարափեշին, ինձ թվաց՝ այս անծավալ կիրճում դրախտն է ամփոփվել: Ես հիմա-հիմա այդ պատկերների հետ եմ, դրանք տեղավորում եմ իմ մեջ ու չգիտեմ՝ որի՞ն նախապատվություն տամ:

- Հարգարժան Կրպեյա՛ն, Դուք բացառություն չեք,- նկատելի հպարտությամբ ասաց Ղուլղազարյանը,- ով եկել է այստեղ, արել է այդ խոստովանությունը, ինչ-որ հիմա ձեզանից լսեցի:

- Հիմա իմացա՞ր, թե ինչու թուրքերը ուզում են կուլ տալ այս պատառը,- մտահոգ ասաց Հրայրը և անմիջապես ավելացրեց,- բայց նրանց կհաջողվի՞:

- Չթաքցնեմ, հերոսաբար կանգնած է գյուղը, բոլորը՝ մեծ ու փոքր, կռվողներ են, հաստատակամ ու անզիջում այս մարդիկ կամովին ոչ մի բան չեն տա արնախում թշնամուն,- հավելեց տնօրենը:

- Պիտի պաշտպանվել, պահել այս դրախտը,- ոգևորվեց Թաթուլը:

- Ուժ է պետք, զենք, նաև հուսալի պաշտպանություն, որն այս պայմաններում չափազանց լուրջ գործ է,- թույլ հառաչեց Շմավոն Ղուլղազարյանը և խնդրեց նրանց մոտենալ սուրճի սեղանին, որին շատ մոտիկ նստած էր համակրելի մի տիկին:

- Մեր փորձված բանասերներից է՝ Ժաննան, ծանոթացե՛ք, խնդրեմ,- սիրալիր ասաց տնօրենը: Հրայրը նրան ճանաչում էր:

Թաթուլն առաջինը երկարեց իր աջը, ներկայացավ, նույնը կատարեց Ժաննան, անմիջապես հարցրեց.

- Համալսարա՞նն եք ավարտել:

- Դեռ չէ, մեկ տարի էլ ունեմ, բայց Գետաշենը ձգեց,- ասաց Թաթուլը:

Առաջին ծանոթությունից գոհ էր Թաթուլը, ափսոս, որ առավոտյան վերադառնալու էր Հրայրը:

...Մեկ օր անց՝ դպրոցական մեծ միջոցառման վերջնապահին, տնօրենը նրան ներկայացրեց մանկավարժական, աշակերտական կազմին և հրավիրված ծնողներին: Նրանց առջև հանդես եկավ Թաթուլը, խոսեց կրթական խնդիրներից, մի քանի հարցերի պատասխանեց, իսկ վերջում անդրադարձավ Գետաշենի շուրջ ստեղծված

իրավիճակին: Խոսեց զարմանալի կրքոտ, իրադրությանը քաջատեղյակ մարդու հաստատակամությամբ, գնահատեց Գետաշենի դերը տվյալ տարածքում, պատմական զուգահեռներ անցկացրեց, հիշեց Գարդմանա մելիքների քաջությունն ու անհնազանդությունը, հպարտացավ թշնամուն դասեր տալու նրանց խիզախությամբ: Միջնակարգ դպրոցի ընդարձակ սրահը վերջին ժամանակներում դեռ այդպիսի բուռն բերկրանք չէր ապրել: Թաթուլի անկեղծ խոսքը, մտքի անսպասելի թռիչքը, խոհական անցումները ապշեցրել էին ուսուցիչներին, իր վրա գամել աշակերտների վառվռուն հայացքները, արժանացել այստեղ եկած գյուղացիների ուշադրությանը: Գետաշենը՝ մտավորականության այս ոստանը, որ բազմաթիվ նշանավոր մարդիկ է տվել հայրենական գիտությանը, Գետաշենի դպրոցը՝ գիտելիքի և իմացության այս ամրոցը, որի տարեգրության մեջ հազարավոր շրջանավարտների անուններ կան գրանցված, մի առանձին սիրով ու ջերմությամբ ընդունեց քսանհինգ գարուն նոր բոլորած արեգցի երիտասարդին: Այդ սերը միանգամից ծաղկեց, Թաթուլն այնպես ընդունվեց կոլեկտիվում, կարծես նրանց նվիրյալ սանն էր վերադարձել: Իսկ երբ նա կարդաց հայրենասիրական իր բանաստեղծություններից, ապա կատարեց հայրենյաց ոգին արթուն պահող ֆիդայական երգեր, ներկաների ծափն ու ցնծությունն արդեն աննկարագրելի էին:

«Այս ժողովրդի հետ կարելի է մեռնելու էլ գնալ: Սա ուրիշ որակ է, ճակատագիրն աստեղային ժամի իմ չափուկշիռը այստեղ է բացահայտելու...»: Թաթուլի մտքի զուգահեռները ճախրեցին բարձրաբերձ, բայց նա համեստորեն վերադարձավ իր նոր ափը՝ Գետաշենի դպրոց, նայեց իր շուրջը, դպրոցի սրահում հարազատության ոսկերակ էր հորդում, ինչպիսի՜ ժպիտներ, լույսի ավետիս, ոգեդարձի խաղաղ ծփանք: Նրանց մեջ էր Թաթուլը, կարծես որոնում էր իրեն, այդպես էլ գտավ իր տեղը, շարքերի մեջտեղում թափուր մի աթոռ կար, բեմից փութկոտ իջավ, թեթև անցավ նստածների կողքով և հայտնվեց «իր աթոռին»:

Աշակերտներից մի քանիսը արտասանեցին, հուզված էին, Թաթուլի խրոխտ ձայնից հետո քաշվում էին: Ագապին ու Արթուրը երգեցին «Գլգլալեն ջուրն է իջնում Մշո-Մշո սարերեն...», երաժշտությունը հին ձայնագրություններից էր, խզված ու կոշտ, կարծես անվերջանալիորեն ուղեկցում էր երեխաներին: Երբ նրանք ավարտեցին, Թաթուլը նախ ափսոսանքով հառաչեց, ապա կանգնեց՝ առաջարկելով դահլիճին այդ երգը կատարել միասին: Ինքը սկսեց, նրան միացան

միջոցառմանը նախապատրաստված երեխաները, այնուհետև ողջ դահլիճը: Կամարների տակ առանձնանում էր Թաթուլի ձայնը, այն ձգվում էր ելևէջների նրբին ներդաշնակությամբ, բարձր, հոգելուր տվայտանքներով վերևներից ցած էր իջնում, դառնում ոգեղենի արևելյան երանգ՝ իր հետևից տանելով մեծ ու փոքրին:

...Հետո, երբ օրեր անցան, և սեպտեմբերը ուստարվա առաջին շաբաթների զանգերն էր հաշվում, Թաթուլն արդեն լրիվ գետաշենցի էր: Առաջին զանգին նվիրված դպրոցական միջոցառումից հետո նրան ճանաչում էր այս մեծ գյուղը, ութհարյուրի հասնող աշակերտները դպրոցից ու դասարանից տուն էին տանում նոր-նոր մանրամասներ ոչ միայն պատմության, այլև կրոնի, ռազմագիտության, հայ դասական երգի ոչ պաշտոնական առարկաների իրենց նոր ուսուցչի մասին: Թաթուլը պատմության դասաժամերին զուգահեռ փորձում էր ընդլայնել երեխաների լայն հետաքրքրությունների սահմանը: Դպրոցում, գյուղում, մարդկանց հավաքատեղիներում ամենուրեք այդ մասին էին խոսում:

Թաթուլն իր ակտիվությամբ, բնակիչների հետ շփվելու և զրուցելու յուրահատուկ մոտեցումներով օր օրի մտնում էր գյուղի «սիրտը», դպրոցական թեմաներից խորանում էր հասարակական-քաղաքական հոգս ու ցավերի ակունքը, քննարկում տվյալ ժամանակի փոփոխական պատկերները: Նա զգում էր, որ Գետաշենում շատ զգայուն էին դարձել մարդիկ, մեկ հավատում էին, տասը կասկածում, դժգոհում էին ազերիների անպատժելի արարքներից, այն պետությունից, որի մեջ ապրում էին իրենք: Գյուղի տաք զարկերակը առավոտից իրիկուն գրասենյակի արևկող պատի տակ բաբախում էր անկշռելի ինքնաձաղկումով, բողոքի ելած իրենց սրտերը մարդիկ փորձում էին խաղաղեցնել, սակայն դա կամ խաբուսիկ խաղ էր դառնում կամ ճշմարտության մտրակի շառաչ: Արդեն ամենքին հայտնի արհեստական ու սարքովի պայմաններին չէր հաշտվում Գետաշենը: Թաթուլն այս պատկերների թիկունքում դաժան ճակատագիր էր տեսնում և աստիճանաբար իջնում էր իր գտած բազմաբարդ փեթակի խորքերը, որտեղ հին գյուղի բույր ու համն էր, կիրճ ու ժայռերի նման կարծր ու փխրուն բնավորություններ, ինքնատիպ, իրենք իրենց նման, և դա մեծից-փոքր, դպրոցական աղջնակից մինչև ավանդապահ տատիկը, բոլորը միասին, բախտի նույն ավազանում՝ արևօրվա լույսից մինչև արևպադոց: Թաթուլն այս բռնկուն մարդկանց սրտերի ճանապարհին էր, ամուր հիմք ու հենք էր որոնում, որ այն դառնար հույսի աստիճան: Նա կամաց-

կամաց, բայց հիմնավոր դեռ ճանաչում էր, մտերմանում, ընկերանում ու զգուշանում, իսկ իր մեջ եռացող սերը սերակալում էր, որ դիմանալու մերան ունենար, չէր կորցնում խինդը, կենսախաղը պահպանում էր աչքերում, որ իր ժպիտը ժուժկալ չլիներ, արյան ու սրտի մատույցներում զարթնած երգերը փոխանցում էր իր ստեղծած դպրոցական երգչախմբին: Ու երբ նրանք իր բերած ազգային հագուստներով առաջին անգամ բեմ ելան և հայապաշտ սիրով զարթոնքի մի ուրիշ ծիածան կապեցին, գյուղի հոգին խլրտաց հայտնության ներշնչանքով: Գետաշենը, կարծես, վերագտավ իր հին օրորոցայինը, թնդաց խաբրիկ խրախույսով:

- Սովորական մարդ չէ այս ուսուցիչը, - Գետաշեն գյուղը միայն իր համար չէր շշնջում այս բառերը, բոլոր տներում Թաթուլի անունը դարձել էր սիրելի, ընդունվում են նրա կարծիքը, խոսքը, առաջարկությունը: Նրա ակտիվության շրջանակները դպրոցից դուրս էին եկել:

Սկզբում շատ քչերը գիտեին, որ Թաթուլը Գետաշեն էր եկել ոչ միայն ուսուցիչ աշխատելու, այլև դասական կուսակցության ներկայացուցիչն էր այստեղ: Ինքը չէր ուզում այդ մասին բարձրաձայն հայտարարություններ անել, ցուցադրաբար առանձնանալ, սակայն Գետաշենի ներքին մթնոլորտը հրամայում էր դառնալ «հրացանավոր ուսուցիչ»: Նա շարունակում էր ապրել հարգված և երևելի Վաղարշակ Չիլինգարյանի երկհարկանի բնակարանում: Հրայր Կարապետյանն իր ընկերոջը վստահեց ու գնաց: Թաթուլը ցավ էր ապրում, որ շքեղ այս առանձնատանը Չիլինգարյաններից ոչ ոք արդեն չէր ապրում: Հրայրի հանձնարարությամբ որսորդ Մերուժը (Մեժոն), որը միաժամանակ վարորդ էր, հանդիպեց Թաթուլին, առանձին հարցերում օգնեց, ծանոթացրեց ինքնապաշտպանական գյուղական ջոկատների ակտիվիստներին: Թաթուլը գոհ էր: Առանձնապես նա մեծագույն հարգանքով ծանոթացավ Գետաշեն-Էրեբունի օդանավակայան ռադիոկապը պահպանող Լենայի հետ: Նրա մասին Թաթուլը նախապես գիտեր, բայց որ նա այսքան մարտական էր, մարդամոտ, հարեհաս, չգիտեր: Պարզապես կրակ էր հորդում այս տիկնոջ աչքերից, դժվարություններից չվախեցող, անընկճելի կամք ուներ: Լենան ամուսնու՝ Հրանտի և երեխաների հետ ապրում էր անմիջապես Չիլինգարյանի առանձնատան դիմաց, մոտ էր նաև Մերուժի բնակարանը:

Առաջին շաբաթների ծանոթությունները հիմք հանդիսացան հավաք-հանդիպումների, որոնք անցկացվում էին ուշ ժամերին Թաթուլի

մոտ: Աստիճանաբար բոլորին պարզ էր դառնում, որ Թաթուլն այստեղ էր գործուղված՝ որպես ինքնապաշտպանության ղեկավար: Նա ուշադիր լսում էր բոլորին, գյուղի տեղանշված քարտեզին նայելով՝ համատեղ որոշում էին, թե որտեղ պետք է ամրակայվեն պաշտպանական խմբերը: Տեղացի տղաներից բացի՝ դրսից համալրվում էին նվիրյալների շարքերը:

Գետաշենը լարվածության մեջ էր: Կենցաղի տանը տեղակայված էր խորհրդային ներքին գործերի մի քանի ջոկատ զրահատեխնիկայով: Գյուղացիները նրանց ընդունում էին որպես իրենց պաշտպանների, քանի որ Խանլար շրջկենտրոնից պետական ու վարչական մարմինների ներկայացուցիչները հաճախ էին խուժում գյուղամեջ ստուգելու, կասկածելի առիթներ ստեղծում, բորբոքում առանց այն էլ տագնապների ստվերների տակ ծվարած մարդկանց: Խորհրդային ներքին զորքերի թեկուզ փոքր թվաքանակի ներկայությունը քիչ թե շատ զսպում էր ադրբեջանական կողմի անօրինականությունները: Հատկապես այդ վիճակը ուժգնացել էր այն ժամանակվանից, երբ Գետաշենն ու հարակից գյուղերը միահամուռ իրենց կամքն էին արտահայտել անցնելու Շահումյանի շրջանի կազմի մեջ: Գետաշենցիները չէին թաքցնում իրենց արգահատանքն ու հիասթափությունը Խանլարի ղեկավարության՝ շրջկոմի, գործկոմի, ՆԳ բաժնի, դատախազության աշխատողների կամայականությունների, օրինազանցությունների կապակցությամբ: Գյուղը սեղմված էր բոլոր կողմերից, փակ էին կենսական ճանապարհները, անցուդարձը կանգ էր առել: Հուսահատության լուռ ու բացահայտ ճիչերի, ներքին պոռթկումի այս միջոցին Թաթուլի ներկայությունը, նրա ջոկատի տղաների անթաքույց կամքը, «Ալաշկերտ» ջոկատի մարտունակ կեցվածքը՝ Զարզանդ Դանիելյանի գլխավորությամբ, «Մալաթիան»՝ Վահան Զատիկյանի առաջնորդությամբ, Գետաշենի տարբեր կողմերում ձգված էին պահում ոգու ամրությունը: Թշնամին ատամ էր կրճտացնում, բայց հավանաբար հասցրել էր իմանալ այս առյուծքաջերի մասին, գիտեր նաև Մարտունաշենի դիրքերը պահպանող Մանվել Եղիազարյանի քաջակորով երիտասարդներին, այդ թվում՝ լեյտենանտ Սիմոն Աչիքգոզյանին: Ազերին առաջին անգամ չէր, որ տեսել էր բուն Գետաշենի ուժը, սերնդից սերունդ փոխանցված այս բնաշխարհի մարդկանց անկոտրում կամքը: Գիտեր, ճանաչում էր և դրա համար հույսը դրել էր կողքի ուժերի վրա, փորձում էր խորհրդային ներքին գործերի ստորաբաժանումների համակրանքը շահել՝ օգտագործելով Պոլյանիչկոյի և Սաֆոնովի կանխամտած-

ված թողտվությունը:

Գետաշենն առանց գետաշենցիների. սա էր օմոնականների նպատակը:

Տարբեր ժամանակներում միշտ էլ վտանգ է կախվել գետաշենյան դրախտի վրա, սակայն այսպես օրհասական չի դրվել նրա լինել-չլինելու խնդիրը: Ահա թե ինչու 1990-ի աշնանը Գետաշենը գրեթե չէր քնում: Արթուն էր գյուղի բնազդը, ոգու կրակը ջերմացնող, հույսը պահող մարդիկ էին այստեղ: Նրանք ականատես էին, թե իրենց կողքին ինչպես ընկան Ազատը, Կամոն, հիմա էլ տեղահանության վտանգը սպառնում էր Գետաշենին ու Մարտունաշենին: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորները Արցախից և Հայաստանից իրենց ձայնն էին բարձրացնում, նրանց միացել էին շատ-շատերը, սակայն ոչ մի արձագանք: Դրանից թելադրված՝ ազերիները իրենց գործողությունների մեջ սանձարձակ էին, ամեն օր փորձում էին սադրանքների մեջ ներքաշել խաղաղ բնակչությանը, Գետաշենի ու Մարտունաշենի շուրջը ստեղծել պայթյունավտանգ իրադրություն, որից իրենք կարող էին օգտվել:

Իսկ Գետաշենն ու գետաշենցին և տարբեր տեղերից կամավոր եկած հայ քաջերը կանգնած էին աշխարհի աչքի առջև, որպեսզի արյան ու ավարի ծարավ անիծված հարևանը չփորձեր իր ձեռքերին ազատություն տալ: Նրանք գիտեին, որ թշնամին լավ է սպառազինված, նաև իր պետության կողմից հանձնարարություն ստացած՝ Գետաշենի ենթաշրջանից ամեն գնով հեռացնել հայերին:

* * *

Գետաշենի ճակատագիրը բաց երկնքի տակ երանելի պատառ էր դարձել օտարի ախորժակին, մերձավորին՝ մյուռոն ու խնկածաղիկ, որը բուսնել էր դարեր առաջ դեռ հեթանոս տուրքով, հետո մկրտվել հույսի ավազանում՝ խաչին ու Քրիստոսին հավատարիմ: Այդ հինն ու հնավանդը հիմա դարձյալ խնկածաղկահոտ էին, որի բույրից արբած՝ տեղաբնիկ հայկազուն այրերը կառչել էին մեծ կիրճի քարափներին, քարափներին թիկնած իրենց պապենական տներին: Ո՞ւր գնային, ո՞ւր թողնեին Գետաշենի ուխտն ու ուխտատեղին, հիշողության դաշտի անսքեմ լեգենդը, որոնք վանք ու եկեղեցիներից ձգվում էին մինչև շիրմատուն, «Սպիտակ ջրից» մինչև Քուրակ գետավտակը, դառնում հույսի ամփոփ, ցավի հավերժություն: Եվ հիմա ի՞նչ, փշրվե՞լ էր Աստծո կատարյալը. այս ի՞նչ սև ամպ և սրարշավ վայրագ ցեղ էին նայում պղտոր աչքերով, նա վաղուց էր

մտմտում ավար տանել, ավարառու տենչով իջնել «Դյուզի» կողմից, ոտնատակել գերեզմանոցի ճամփան, ծնկել, եթե հարկ կա, և ծեփոնվել օձաշապիկ, միայն թե իջնել դարավանդից: Հնաբոբիկ ավարառուն տասնամյակներ շարունակ ամեն հայի կտուրի տակ անտես, մեղսատրոփ աչքով ոսկի ու գանձ էր նշագրել, իրեն հավատացրել էր, որ այնտեղ է պահված գոհարաձիգ շղթան հայոց արքաների, որ անպարտ մելիքների ամրոցների ներսում, հնաբերդի խոյակների խորքում անգին քար ու զմրուխտների սնդուկներ են քնած: Հնաբորբոք, հիվանդագին այս կերպ ու կտրվածքով դարանել են նրանք, հաճախ դարանակալ խփել, սակայն երբեք չեն համարձակվել մտնել Գետաշեն: Չի բավարարել ավազակի համարձակությունը, հասկացել է, որ անպատիժ չի մնա, զգացել է հայ մարդու ուժը՝ հնից մինչև հիմա:

Թաթուլն էլ Թալինից եկել, կանգնել էր Գետաշենի այս փառահեղ պատմության կողքին, նրա նոր ժամանակի վկան էր, նրա համար կռվողն ու ուսուցիչը: Գյուղի մեծակտավ հոգու կապերի մի թելն էր ինքը, հավատի հրամանով երջանիկ էր, նաև երջանկացած մի տխրություն, այդ գումար-գումարի մեջ էր՝ հոգու իր անվերապահ շռայլությամբ: Նա իր ցանկությամբ էր այստեղ, իր որոշումին նվիրյալ, օդի, լույսի, իրավունքի պակասության համար չէր նեղվում, համոզված էր, որ ինքը պիտի այստեղ լիներ, երիտասարդի, հայի անաչառ բնույթն այստեղ պիտի ընձյուղվեր, իր արմատի արմատներին մոտենալու ավելի ստույգ տարածք, քան Գետաշենը, չէր պատկերացնում:

Գետաշենի ոսկեբարուրի մեջ քանի՜-քանի՜ ճախրուն տղերքի նա այստեղ ճանաչեց, իրենց հող ու հացին, հնից եկած նշխար-աղոթքներով մարդկանց հոգին գտավ, թվաց՝ եկել է իր պապի Ղարսն ու Կաղզվանը, եկել է պահպանելու նրանց կարոտների ամրոցը: Թաթուլի վառված հոգին Գետաշենի մենակության, նրա վիրավորանքի մոխրացող կրակների խառնարանում էր: Նրանից դուրս իրեն չէր պատկերացնում, յուրաքանչյուր գետաշենցու ժպիտի և արցունքի մեջ էր, նրա օրվա պակասի, տխրության էջն էր, հնավանդ խաչքար-մատյանին իր համբույրը դրոշմած ուխտավորը: Հրացանը ուսին՝ քսաներորդ դարի վերջին տասնամյակի ուսանող-ուխտավորներից մեկը, Գետաշենի դպրոց մտած հրացանակիր-պատմաբանը, վառոդաբույրով թրծված հրեղենի երգիչը: Եվ այդ ամենը իր աշակերտներին փոխանցող ընկերը, իր ընկեր-ուսուցչուհիների եղբայրը, նորապսակների քավորը, կռվող-պաշտպանների հայկա-

զուն խորհրդանիշը Գետաշենում:

Այսպես նա սովորեց Գետաշենում: Գյուղի դասը ձոր ու կիրճերի զարդարուն սիրավեպն էր, որի եզակի խորհուրդը խաչված էր բնիկների բարձրյալ միտք ու ճաշակին: Թաթուլն այս շենի շիկացած բնույթից, ասես, հնավանդ համալսարանի կանչ ու ավետիս էր լսում, նրա իրարահյուս փողոցներից, հարկ-հարկ, ճախրուն ու արևաբույր թաղամասերից հին ու համախումբ փառքերին պսակված ընտրյալների շունչն էր առնում:

Գետաշենը գրկել ու տանում էր նրան: Թաթուլը շուտ զգաց, որ հայտնվել է անսովոր մի աշխարհում, որտեղից բացվում էր սիրելու իր սահմանադուռը, այն կողմ էլի աշխարհներ կային, երկինք, հող ու երազանք, բայց բախտի քամուկը այստեղ էր խնկարկում ծնունդն իր ծաղկումի, այստեղ էր իր որոնածի սկիզբը, որի հաստատումով նաև փորձում էր մեղմել վիճելիի վարքը:

Թաթուլն ինքնահաստատումի այդ կշռի մեջ էր տեսնում բոլոր նրանց, ովքեր բեռ չէին, այլ բարություն, ովքեր ոչ միայն ընդունակ էին զենք կրելու, այլև բարության զավակներ էին, մեծ խղճին զորավիգ զինյալներ: Թաթուլը գիտեր, որ ինքն ազգային մեծ գաղափարի հրամանով էր այստեղ, եկել էր այն ուխտով, որի կրողներն էին նաև Արթուրը, Տիգրանը, Մուշեղը, «Ալաշկերտի» Հրաչը, Մխիթարը, Վարուժանը, Թաթուլը (Խաչատրյան), Վիտյան, «Արաբոյի» Մանվելն ու «Մալաթիայի» Վահանը, բոլոր տղերքը: Գիտեր, որ նրանք հույսի ջահեր են, ամենազոր են ու մեծ, որ կամքի հնազանդ տուրքով են մոտեցել Գետաշենի օրոցքին, թե ապրել է, միասին պետք է լինեին, թե մեռնել է, պատվով պիտի սրբագործեին իրենց անունը:

Թաթուլն ապրելու ճակատամարտն էր ընդունում, հույսը երբեք չկորցնողի հավատամքով էր ուզում կոփել օրվա համապատկերը: Մեծ ցավ էր ապրում, որ Գետաշենը դարձել էր կղզյակ, մենակ էր, ամեն օր ավելանում էր գյուղի հոգսը, աշխարհի հետ կապող թելերը հնձվում էին, ճամփաները վտանգ էին բերում, հանդերն ու այգիները հեռացել էին, Սպիտակ ջրից այն կողմ բարձունք-հեքիաթները օտարների ոտքերի տակ էին: Գետաշենի կապը Լենայի դողդոջ ու տաք ձեռքերի մեջ էր, նրա մայրաշշուկ ձայնի, աղերսող ելևէջի, որոնք ռադիոալիքով սուրում էին Հայաստան:

Իսկ երկինքը դեռ կապույտ էր այստեղ: Աշնանային Գետաշենի կիրճերից վեր այդ կապույտով մեկ-մեկ գալիս էին արծիվ ուղղաթիռները, որոնցով բաբախում էր Գետաշենի սիրտը: Հետզհետե պակասում էին դրանք. խորհրդային խորհուրդը փակում էր Գետաշենի

օդային երակը: Այնուամենայնիվ Մուշեղի ուղղաթիռը չէր կորցնում գալ-գնալու հաճախականությունը, օրվա ինչ-որ ժամի անսպասելի հայտնվում էր «Դյուզի» վրա: Գետաշենը զգում էր նրա շունչը, նաև ուժը մայր հողի: Գյուղն այդ պահերին թաքուն խաղաղությամբ գտնում էր իր թեքված կշեռքը, բեկված բարությունը, դառնում էր բանական ու ինքնամոռաց: Թաթուլի զինակիցները փութալով հասնում էին ուղղաթիռի մոտ՝ հուսալով, որ ընկերները կարևոր բաներ ուղարկած կլինեին: Իսկ այդ կարևորը զենքն էր, զինամթերքը, նամակ-հրահանգները, դրանց հետ՝ Հայաստանի կարոտը, հայրենյաց սիրո բույրը: Բայց թե շաբաթը մեկ-երկու անգամ չվերթի ելած ուղղաթիռները ինչքա՞ն զինամթերք պիտի հասցնեին, որ Գետաշենի պաշտպանների հզորությունը չպակասեր: Եվ վերջին հաշվով կկարողանայի՞ն զենք բերել, երբ ստուգվում էր ամեն ինչ: Դա արդեն համարձակության խնդիր էր, նաև կամեցողության: Գետաշենն իր ճակատագրով խառնել էր շատ-շատերի հաշիվները: Այս հրաշք գոգահովտին աչք դրած ազերիները բացահայտ զինված, չվախենալով օրենքից, չքաշվելով օրինականությունը պահպանող ռուս զինվորի ներկայությունից, սեղմում էին օղակը Գետաշենի շուրջը:

Անհավասարակշռության այս պայմաններում Գետաշենը չէր վիատվում: Այնուամենայնիվ Թաթուլը զգում էր, որ գյուղում արդեն ձևավորվել են տարբեր մտածելակերպի հասարակական շերտեր. հուսահատվածներ, չկողմնորոշվողներ և անմնացորդ նվիրյալներ: Թաթուլն իր առջև խնդիր էր դրել միավորել նրանց: Այդ գլխավոր խնդիրն ունեին նաև Գետաշենը հսկող մյուս ջոկատները: Միավորման գաղափարը իրական ուժ կարող էր դառնալ սեփական օրինակով. սա գիտակցում էր Թաթուլ Կրպեյանը, հասկանում էին Գետաշենը պահող բոլոր հայ զինյալները:

Գետաշենը Շահումյանի շրջկենտրոնի հետ չէր կորցնում կապը. այն ձգվում էր ձորափերով, թավուտների և անտառների միջով: Նախաձեռնողները տեղանքը հրաշալի իմացող գետաշենցի խիզախներն էին: Նրանք գյուղ էին բերում սննդամթերք, զենք, ուղեկցում համալրման նպատակով Գետաշեն շտապող ազատամարտիկների: Ամեն օրը լարվածության դիմագիծ ուներ, սակայն բնակավայրի աշխույժը չէր կորցնում ակտիվությունը: Գյուղամերձ դաշտերում ու այգիներում չէին դադարում աշխատանքները: Մարդիկ բահերի հետ դաշտ էին տանում նաև որսորդական հրացանները, իսկ գյուղում դիրքավորված ազատամարտիկները աննկատ հսկում էին բարձունք-բլուրները, վեր ու վար ձգված անտառափեշերը, գյուղի փոթորկուն սիրտը:

Թաթուլի աչքերի առջև այսպես՝ ցավ ու հոգսերի անհերքելի վարքով, ամբողջանում էր Գետաշենի տխուր ու ահեղ ասքը՝ շուլալված գյուղի խճանկարին. հայկական մի գյուղի, որ Գարդման աշխարհի իմացյալ երդումով այլևս չէր հանդուրժում Խանլարի «խանությունը», հայոց երկրին կարոտելու իր տենչանքը ուսն առած՝ իր ոգու բեռով այնքան էր ուզում պնդանալ պապենական հողին, որ Գետաշենը դասալիք չունենար:

* * *

Կեսգիշերը վաղուց անցել էր, երբ Թաթուլը տուն վերադարձավ: Տղաների հետ գնացել էին գերեզմանոց տանող ճանապարհահատվածը: Մռայլ էր: Երևանցի Արթուր Կարապետյանը և իր համագյուղացի Տիգրան Քոչարյանը մնացին նրա մոտ: Թաթուլը նրանց առաջարկեց, որ պառկեն, քանի որ ինքը դեռ գրառումներ պիտի անի. նախ ծանրաբեռնված օրը շատ բան էր հուշել, և հետո տասներորդցիներին խոստացել էր վաղը բաց դասին հանդես գալ «Պատմությունը և Գետաշենը» թեմայով զեկուցմամբ: Տղաները չառարկեցին, մանավանդ, որ քունը փախել էր: Գետաշենի մասին տպավորությունը լեցուն էր բնական գույների և աշնանային ոսկետեսիլ պատկերների մշտահոս մեղեդայնությամբ: Դաշնակ Դրոյին ձոնված երգը շուրթերի վրա էր, զարմանալի զգացողություն էր տարածվել շուրջը: Ունկերում զարկում էր ռիթմը, թվում էր՝ զորավարին տանող ձիու սմբակներն էին խփում. հեռուն ու մոտը, հարազատն ու մտերիմը միավորված մերվում էին ոգեղենի թարգմանությանը: Տան պատերը նկատելի ճնշող էին, իսկ բաց լուսամուտից ներհոսում էին գյուղական գիշերվա տխրուն ձայները, որոնք թափանցիկ ցավերի երամներով, կարծես, իջնում էին գոգահովտի լանջերից, խտացնում գլուխ գլխի հենված տների աշնանային մորմոքը:

Թաթուլը դուրս եկավ պատշգամբ՝ ըմբոշխնելու լռության թրթռուն հոսքը, սակայն ականատես եղավ մի ուրիշ կատարելության: Շրջակա խավարի ծոցում Գետաշենը նման էր հունական ամֆիթատրոնի: Լանջերն ի վար լայնահուն շրջանակով վառվում էին գյուղի լույսերը, թվում էր՝ այդ խորանագիրկ ավազանին երկնքից աստղեր էին իջել և ճանապարհ գնալուց առաջ ջուր էին խմում Քուրակի կոհակներից: «Ուրիշ էլ ո՞ւր կարող ես հանդիպել անձեռակերտ այս պատկերներին, շաղախուն ցոլքերի գիշերային հունձք է: Սա արդեն ուրիշ կալուկուտ է, հանգի մի այլ տեսակ, որ բանաստեղծն ու գեղանկարիչը տակավին չեն հասցրել բառ ու գույների վերածել և

դրանով խոստովանանքի գնալ բարձրյալին: Սրանք հոգու ճրագներ են, Գետաշենի բաբախուն սրտի անխոս ու լուսե նվագները, որոնց հնչյուններին պիտի տեր լինես, նախ խազագրես ցնծությունը, ապա ցավը, դրանք կարողանաս միավորել նույն ռեքվիեմի ծոցում, որ ո՛չ ողբ լինի, ո՛չ էլ խաբվածություն...»:

Թաթուլը զգում էր, որ իր զեղումները մտապատկերների հավաքական երթով Գետաշենի սահմաններից դուրս չէին գալիս: Իսկ այս գյուղում նա երկար էր շրջել, գնացել ավելի խորքերը, խոսել ձորափեշերի տների մեծ ու փոքրի հետ: Զրույցը սովորաբար սկսում էր ինքը՝ որպես դպրոցի ուսուցիչ, հետո ասելիքը լցվում էր ըմբոստության կրակով և տեղն ու տեղը բացահայտվում էր, դառնում հայդուկ, հրացայտ աչքերի շողով շղթայվում մարդկանց, սիրտ ու հոգի տալիս: Հիմա այդ բոլորը մեկ առ մեկ հիշեց, իր զրուցակիցների մտահոգ խոսքերը խավարից պոկվեցին, եկան, կարծես այդ ամենն իր շալակն առած՝ ներս գնաց: Ննջասենյակի պատին տանտերերի՝ Վաղարշակի և Զիրավարդի մեծադիր լուսանկարն էր: Նրանց բարի հայացքները քննեց, երկար նայեց, իր հաշվարկով նմանեցրեց հարազատ դեմքերի, փափկացավ: Հետո իրեն բռնեց այն փխրուն փաստի մեջ, որ ինքը մեծերի հանդեպ գութ և յուրահատուկ թուլություն ունի: Հարգանքի ու որդիական սիրո այդ հատկանիշները որտեղի՞ց էին այդպես առատորեն բաժին ընկել իրեն: Գիտեր, կոնկրետ ու հասցեով գիտեր, բայց չուզեց հմայքների հեռավոր տուրքով խառնել արյան հուշերգակ ասքը: «Հանգիստ ու խաղաղ մնացե՛ք, հեռահար ձեր շողքը թող բորբոք մնա, դեռ այնքա՜ն բարկ օրեր եմ այստեղ գտնելու, ինձ հետ իմ բաժին բերկրանքի խարույկը թեժ պահեք, որ դիմանամ փորձության այս ահեղ սիրուն...»:

Սեղանին թափված գրքերն ու քարտեզները մի կողմ դրեց, բաց արեց «Հայոց պատմության» հատորյակը, խոստացել էր վաղը իր աշակերտների առջև նոր էջեր բացել: Խորասուզվեց, գրի առավ, մեկ ժամից ավարտեց, թեև թարմ էր իր զգացողությունը, բայց պառկեց: Վաղվա հաշվարկներով լուրջ անելիքներ ուներ: Այնուամենայնիվ, նրան վիճակված չէր քնել: Ձիու քառատրոփը բավական հեռվից զգաստացրեց նրան: Թաթուլը արագ հայտնվեց պատշգամբում: Ներքևում ձին ու ձիավորը լողում էին լուսնի արձակած բոցերի մեջ: «Ո՞վ է այս ուշ ժամին, ո՞ւր է սլանում»:

- Մերո՜ւժ,- Թաթուլը ճանաչեց նրան,- ինչո՞ւ ես թողել դիտակետը:

- Խոսելու բան կա, Թաթո՛ւլ, ներքև իջի՛ր,- Մերուժի ձայնը տագ-

նապալից էր:

Թաքուլը տղաներին չարթնացրեց, թաքստոցից դուրս բերեց ինքնաձիգը, ցած իջավ:

- Ի՞նչ կա:

- Լուսադեմին մեր պոստի ուղղությամբ հարձակում ենք սպասում:

- Ինչպե՞ս իմացաք,- լրջացավ Թաքուլը:

- Մարտունաշենի տղաները լուր էին ուղարկել, նրանց չեմ կասկածում, որովհետև կռիվը ոնց որ այնտեղից է սկսվելու, լրաբերին պետք է հավատալ:

- Դե՞դն էր...

- Անձամբ ինքը չէ, բայց հաստատ է:

- Բարձրացի՛ր, տղաներին արթնացրո՛ւ, թող իրենց զենքերով ցած իջնեն:

Մինչև Մերուժը Արթուրի ու Տիգրանի հետ ցած կիջներ, Թաքուլը երկընտրանքի մեջ էր՝ ծառայողական «Վիլիսով» բարձրանա՞լ, թե՞ ոտքով գնալ:

Մերուժը նույնպես համաձայնեց ոտքով բարձրանալ, մեքենան ավելորդ կասկածանքի տեղիք կտար:

- Իհարկե ձիերով լավ կլիներ, բայց մեկ ձին հազիվ Մերուժին տանի,- կատակեց Թաքուլը:

- Այնուամենայնիվ, ձիեր պետք են, այսպիսի պահերին ձին լավագույն փոխադրամիջոցն է,- ասաց Արթուրը:

- Կունենանք,- պատասխանեց Թաքուլը և առաջ անցավ:

Մերուժը թամբից հրացանը ցած բերեց, ձին կապեց ընկուզենու մեկնված ճյուղից և փութալով հասավ ընկերներին: Երբ բարձունք հասան, մոտավորապես ժամը երկուսն էր: Այստեղ նրանց դիմավորեցին գյուղի մյուս նշանավոր որսորդները, որոնք դիրքավորված տեղերից իջան, բարևեցին Թաքուլին, մյուսներին: Պինդ ու ամուր տղաներ էին, Թաքուլը մեկ առ մեկ սեղմեց նրանց աջը և վերջում հարցրեց.

- Ո՞ւմ եք սպասում, ծանո՞թ ձեռագիր է:

- Այս վիճակը անծանոթ չէ,- ասաց Մայիս Սաֆարյանը,- հիմա շատ են ակտիվացել թուրքերը, նայում եմ՝ Մարտունաշենն անհանգիստ է:

- Մերուժը որոշեց քեզ տեղյակ պահել, Թաքո՛ւլ,- ընկերոջ խոսքը շարունակեց Մնացականյան Արմոն և ուսից իջեցրեց երկփողանին:

- Ճիշտ է արել, միասին պիտի գործենք, Մարտունաշենի կռիվը մերն է, այս կողմից էլ մենք պիտի խփենք,- հավանություն տվեց

Թաթուլը,- պետք է լայնացնեք պաշտպանական օղակը, զույգ-զույգ դիրքավորվեք՝ իրարից որոշակի հեռավորության վրա:

«Թաթուլը ճիշտ առաջարկ է անում, մտածված է»,- Մերուժն էր: Մթության մեջ չերևաց նրա դեմքը, բայց հանգիստ էր, քանի որ ինքնապաշտպանության ղեկավարն էր այստեղ: Նրա առաջարկությամբ դիպուկ կրակողներ Արթուրն ու Տիգրանը զբաղեցրին ճանապարհամերձ հատվածը, ինքը նրանցից քիչ հեռու էր, ապա դասավորվեցին գետաշենցի որսորդները: Աշնան գիշերվա թանձր խավարը պարուրել էր ամեն ինչ: Ոչ մի ձայն, միայն թույլ քամին էր քանդել սարի փեշը, լցվում էր ծմակուտը: Մոշի ու մացառուտների թիկունքում այգիների փոքրիկ բացատն էր, այն կողմ դարձյալ ծառեր, անտառ և ուսնկախ ժայռեր էին:

Այս կողմում տղաներն էին՝ սպասողական նստած թփերի հետևում: Թաթուլը ռադիոկապով իմաց տվեց նաև մյուս պաշտպանական կետերին: Մարտունաշենի կապը լռում էր: Լուսաբացից երկու ժամ առաջ, երբ մութն ավելի է խտանում, և գրեթե անկարելի է կողքիդ մարդուն նկատել, Մարտունաշենի կողմից կրակոցներ լսվեցին: Թաթուլը նախապես զգուշացրել էր հենց այնպես չկրակել, թող մոտենան, ամեն ինչ պիտի արվի իրադրությանը համապատասխան: Արթուրն առաջինը նկատեց, թշնամու հետախույզ օմոնականները համարյա սողալով առաջ էին մղվում: Տիգրանը հավաստեց, որ հինգ հոգի են: Հարևան դիտակետից լուսարձակներ բարձրացան օդ, խավարի պատռված ծոցում ազերի հետախույզները փորձեցին թաքնվել, սակայն հասկացան, որ բացահայտված են: Նրանցից մեկը վախից աննպատակ կրակեց, բայց գնդակը շվվալով անցավ որսորդ Արմոյի գլխավերևով: Սա չդիմացավ, նրա երկփողանին երկզարկ ճայթեց միաժամանակ: Թփուտների մեջ ճիչը փրթեց խավարի կուրծքը, ապա փոխադարձ դղրդացին ինքնաձիգները: Մի քանի րոպե անց, երբ դադար տվեցին, Թաթուլը նկատեց, որ ազերիները փախել էին: Սակայն, երբ մոտեցան, հինգից երկուսը մնացել էին: Նրանցից մեկը սպանված էր, գլխից էր վիրավորվել, բերանքսիվայր մեկնված էր աշնան խոտերին, մյուսը վիրավոր էր, աղաչում էր, որ իրեն չսպանեն, ինքը մեղք չունի, Մարտունաշենում հիմա ուժեղ կռիվ է, մտածեցին՝ Գետաշենում քնած են, մեզ ստիպեցին, որ գիշերով թափանցենք գյուղ:

- Ի՞նչ նպատակով,- տաքացավ Թաթուլը:

Ազերին լռեց, նայեց սպանված թուրքին և սկսեց հեկեկալ:

- Քո հարազա՞տն է,- մեղմացավ Թաթուլը:

- Մեծ եղբայրս է,- թնկթնկաց նա,- իմ անունը Իսմայիլ է, նրանը՝ Մեհտի:

- Հասցրե՛ք սրան հիվանդանոց,- հրամայաբար ասաց Թաթուլը,- լսել եմ՝ Գևորգ անունով մի վիրաբույժ է վերջերս ժամանել, ասում են՝ փորձված է, թող գլխավոր բժիշկ Սարգիս Հակոբջոխվյանի հետ մի բան ձեռնարկեն, սրանից կարելի է շատ բան իմանալ:

- Իսկ նրա եղբոր դիա՞կը,- հարցրեց Մերուժը:

- Հանձնեք ռուսական ներքին գործերի ծառայողներին, թող որոշեն՝ ինչ են անելու,- ասաց Թաթուլը և ավելացրեց,- աշխատեք ծուղակի մեջ չընկնել:

Իսմայիլը հասկացավ, թե ինչ կարգադրություն արեց Թաթուլը, կցկտուր ձայնով փորձեց միջամտել.

- Թող հանձնեն նրան ռուսներին, եթե պետք լինի, ես կասեմ, որ մեղավորը մենք էինք, միայն թե ինձ հետ դաժան մի՛ վարվեք,- Իսմայիլը արդեն պատրաստ էր եղբոր սպանվելու առիթով հազար ու մի բան հնարել...

Երբ վերադառնում էին, Թաթուլը դարձյալ կապվեց Գետաշենը հսկող տարբեր դիրքերի հետ, թռուցիկ, բայց իրենց հասկանալի լեզվով ներկայացրեց տեղի ունեցած միջադեպը, նաև գիշերային կռիվը Մարտունաշենում:

Ավարտվում էր Գետաշենի լարված գիշերներից մեկը. գյուղի անակնկալ լուսաբացը իջնում էր Մռավ սարից:

* * *

Թաթուլն ընդամենը մեկ ժամ կարողացավ քնել: Փողոցով անցնող դպրոցականների ձայնից միանգամից արթնացավ: Բաց պատուհաններից ներս էր լցվել երեխաների կենսաձայն աղմուկը, որից նա զգաստության և ոգեկոչումի խիստ առավ: Առավոտի այդ բարի հունձքը եկավ, ծածկեց գիշերվա լարվածությունը: Նա չէր ուզում որևէ դիպված, անախորժ ինչ-որ բան գյուղում տագնապի պատճառ դառնար:

Գետաշենցին չպետք է կասկածանքի առիթ ունենար, իսկ արտագաղթի ցեցն իրենց մեջ պահած որոշ մարդիկ այդպիսի դեպքերը կդարձնեին իրենց հեռացումն արդարացնելու նախապայման:

Թաթուլը հասցրեց սուրճ խմել, հավաքեց գրասեղանին թափթփված թղթերը և շտապեց դպրոց: Գնալուց առաջ, իհարկե, չմոռացավ երկտող թողնել տակավին քնած ընկերներին, որ նրանք լինեն հիվանդանոցում, հետևեն գերի ընկած թուրքի վիրահա-

տությանը: Դռների դիմաց կանգնած էր Լենան, նա արդեն գիտեր գիշերվա անցուդարձը, բայց Դեդից ստացված լուրն էր ուզում հաղորդել Թաքուլին:

- Նոր բա՞ն կա, որ ես չգիտեմ,- զարմացավ նա:

- Թաքո՛ւլ, նոր բանը օմոնականների պարտությունն է Մարտունաշենի մատույցներում, Դեդը դա էր ուզում ասել, բայց չգիտեր, որ դուք այս կողմից փակել էիք ճանապարհը և մեկ հոգի էլ գերի էիք բերել:

- Նա իմացա՞վ գոնե այդքանը:

- Ես ասացի, շատ ուրախացավ, որ նախապես իր ուղարկած լուրը տեղ էր հասել:

- Լա՛վ, ուշանում եմ դասից, նոր բան կունենաս հեռվից, տեղյակ պահիր, ես վազեցի,- ասաց ու անհետացավ փողոցի ոլորանում: Դրսում աշնանացող մաքրություն էր, գյուղը զարթնել, բայց հավաքական աշխույժը չկար: Բանուկ էր դպրոցի ճամփան, երեխաները գալիս էին խումբ-խումբ, զրույցի թեմա ունեին, հարցնում ու պատասխանում էին, ծիծաղում ու թռչկոտում: «Այս տարիքին շատ բնական ընթացք,- մտածեց Թաքուլը,- արծիվներ են, թև ու թռիչք ունեն, նաև ազատ ձգտում, ժամանակի ժուժկալ ներկայությունը, որքան էլ հզոր, բայց անկարող է սեղմել, փակել, մեկուսացնել դպրոցի ճամփան, նրա մեծագույն խորհուրդը...»:

Թաքուլն ամեն առավոտ այդ խորհրդի հրամանի մեջ էր, ուսուցիչ էր ու զինվոր, գիշերապահ էր Գետաշենի ասքի, իր դասարանի տերն էր, իր սաների սերն ու սուրհանդակը: Գետաշենի դպրատուն տանող ճանապարհը նրան միշտ թվում էր՝ տանում է արծվաբույն: Այդպես էր նաև այս առավոտյան: Ո՞ւմ ասեր, որ ամբողջ գիշեր չէր քնել, ընկերների հետ կանխել էր հարձակումը ավազակային մի ոհմակի, որ գյուղ էր մտնում առևանգելու, գողանալու, պայթեցնելու: Մի ակնթարթով վերապրեց անցած գիշերվա դեպքերի լարվածությունը, բայց միանգամից նահանջեց դրանցից. օրվա արևոտ տեսիլքը նրան իր գիրկն առավ, չուզեց հիշել խավարը, թուրքի մռութը, կաշին փրկելու նրա այլակերպությունից զզվեց: Աղբյուրի մոտ կանգնեց, ձեռքի թղթապանակը դրեց սրբատաշ բազրիքին, սառը ջրով մի անգամ էլ լվացվեց, ուզում էր մինչև դպրոց հասնելը մաքրվել մռայլ գույներից: Արագ-արագ գնաց, թեև առաջին զանգը պիտի հնչեր կես ժամից: Թաքուլի ամենօրյա ճանապարհն էր, բայց այսօր նա զարմանալի զգացումով կանգնեց Սուրբ Աստվածածին եկեղեցու դիմաց: Ներքին մի ձայն, որ ո՞վ գիտի՝ քանի օր առաջ էր ճամփա

ընկել, եկեղեցու լռությունից շեղվեց, եկավ շամանդաղի շուրթով, շտկվեց և անուշ ծփաց նրա սրտի մեջ: Թաթուլն ակամայից կանգ առավ, ապա դանդաղ մոտեցավ եկեղեցու արևելյան ճակատից ժպտացող խաչքարին, որն ամրացված էր պատի մեջ, արևհայաց էր, աջ կողքը՝ փշրված, ձախում՝ մեսրոպագրերով տարեթվեր, ապա ժանյակ-խազեր, ուս ուսի խոհուն ու խելացի քարեր, վերևում՝ քառակուսի միակ պատուհանը, որից արևի խուրձը հիմա իջվարել էր եկեղեցու հատակին: Թաթուլն այդ խրձի մեջ իր աչքերի շողքը տեսավ, բայց ներս գնալ չկարողացավ, դռան վրա մեծ կողպեք էր: «Եկեղեցու դուռն այս ժամին պիտի բաց լիներ, աղոթողը պիտի գար, մամիկները պիտի մոմերը վառած լինեին, խոստովանանքը երկինք գնար, և հավատի պատարագ հնչեր մայր հողի արարչությանը, օրհնանք այս հող ու երկրի արժանապատիվ տերերին...»: Թաթուլը պահեց ներքին ընթացքը, զգաց, որ խոհերի ջրվեժը գնալով ծածկում էր իրեն, քայլեց արագ-արագ, բայց աչքի տակով նայում եկեղեցու պատերին, բակի թափթփվածությանը, կարծես լսում էր ոտնահետքերի կարոտ ճանապարհի մորմոքը: «Ուրիշ էլ ե՞րբ, եթե ոչ հիմա... Այո՛, հիմա են պետք եկեղեցին, հավատը, ոգու վերադարձի կախարդանքը... Պիտի այդ կողպեքը կորցնել սրբանոցի դռներից, նրա հետ նաև գյուղական պահեստի գաղափարը: Խաչքարին պետք է մաքրամաքուր դարձ, խաչապաշտությանը՝ մշտավառ կանթեղ...»: Այս մտապատկերներով նա դպրոց մտավ, բարևեց ուսուցչանոցում, ժպտաց բոլորին, մատյանը վերցրեց և գնաց ամենաընդարձակ դասասենյակը: Այստեղ արդեն սպասում էին 9-10-րդ դասարանցիները: Մտածված էր նա այսօր միացրել բարձրդասարանցիներին, բաց դասի հայտարարությունը հուշում էր, որ Թաթուլն արտակարգ ինչ-որ ծրագրեր ուներ, նորույթ, ասելիքի ձև, թեմայի տարատեսակ ընդգրկվածություն: Այստեղ էին նաև պատմության և մայրենիի ուսուցիչները, դպրոցի տնօրենը: Առաջին որպես, լարվածության գերագույն կետը ընդլայնվում էին պատերի մեջ, սպասողական էին բոլորը: Թաթուլն անթաքույց հմայքով գնաց դեպի պատուհանը, արևի շողերն անբռնազբոս թափվել էին նրա ոտքերի տակ, սփռվել դասարանով մեկ: Նայեց դիմացի լանջերին, թիկունքով դեպի նստածները՝ կարդաց Չարենցից.

Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար՝
Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար,
Հին դարերից մինչև այս հանճարեղ ներկան,
Որ հուրհրատում է մեր դեմ գալիքնափայլ:

Այն անգո առավոտից, երբ լեգենդական
Իր խարույկն է վառել մեր անգո նախահայրը,
Այս Մասիսի հանդեղ, այս անիրական
Արարատյան դաշտում,- որպես զրույց անծայր մի
Տարածվել է ուղին մեր անպատմելի,
Անծայրածիր ձգվել դարերով ձիգ,
Եվ գնում է այսօր ու երկարում էլի
Դեռի ի՞նչ անհայտ ափեր ու գալիքներ անծիր...

Ապա արծվային տեսքով շուռ եկավ, հայացքը ծփաց, հառնեց ինքը, բարձրացավ, և բառերը՝ հոլանի ու տաք, հյուսվեցին: Նրա ձայնն էր ալեկոծ, շունչը՝ բուրվառների հառաչք: Մեկեն նա կատարյալին գնաց, բռնեց հաղորդության ասքի ճախրող թևը, իջավ իր դասարանը, նայեց հպարտ սաներին, նրանց աչքի ծովում իր հողմածեծ նավակը գտավ: Ուսուցիչները գամվել էին աթոռներին, նրանց թվում էր՝ տիեզերանավում էին, և այս երիտասարդը՝ Թաթուլը, աստղերից էր իջել, բայց ավելի ճիշտ՝ կախարդելով համոզում էր, որ իրենց երկինք տանի... Իսկ Թաթուլը իջել էր պատմության խորքերը, հերկում էր ոսկեհուռ իր դաշտը, հերքում էր օտարին, օտարամոլին: Արտասանում էր Խորենացուց, շողահյուսքերով կերտում Վահագնադարձը, մոտենում էր Հայաստանի հին քարտեզին, խաչակնքում, անմիջապես վասն հայրենյաց երգն էր ցոլում քաջ Վարդանին, հիշում Շնորհալուն, ապա գլգլալեն ծորում էր «Առավոտ լուսոն»... Դասարանում նստածներն ակամայից ցանկացան ծափահարել, Թաթուլն աչքերով սաստեց՝ հուշելով՝ սպասեք, դեռ «կռիվ ունեմ»: Պատմության կարևոր էջերն էր նա բացում, խոսում էր հատ-հատ, մեկ-մեկ փոխում էր ձայնի ուժգնությունը, դառնում մեղմ ու հասանելի, երբեմն սավառնում էր հզոր արքաների և մեծ զորավարների անցած հետքերով, դառնում փառաբանում էր նրանց, սիրառատ խոսքեր շշնջում հայոց մայրերին՝ հավաստելով, որ նրանք օրհասի պահին միշտ էլ անշրջելի խորհուրդ են եղել՝ որպես երկրի ամենախաս հյուսվածքի ակունքն ու ավիշը: Եվ մարմանդ ելևէջում էր մայրաձոն երգը՝ աստվածային բարության անձրև մաղելով շուրջը, այս դասասենյակին, պատից այն կողմ՝ դրսում խռնված աշակերտներին, պատուհանից այն կողմ՝ կիրճերի և լեռնամոտ արևի բազուկների մեջ հիվանդ սրտի պես տրոփող Գետաշենին:

Դասամիջոցի պահն եկավ, բայց զանգը չտվեցին: Տնօրենի աննկատ հանձնարարությունն էր և նաև այն, որ բոլոր ուսուցիչ-

ները առանց աղմուկի հավաքվեցին այստեղ:

Թաթուլն աչքի պոչով հետևել էր այս անցուդարձին և չէր ընդհատում: Այն, ինչ-որ ինքն էր ծրագրել, նախընտրած հունով էր գնում: Նա զգում էր, որ ներկաներին դեռ չէր հոգնեցրել, գոհ մնաց իրենից, որ այս պատմական էքսկուրս-բաց դասը դրել էր հենց առաջին ժամից, այլապես որքան էլ կարողանար միահյուսել ձևն ու բովանդակությունը, այնուամենայնիվ ծանծրույթը գրոհելու առիթ կունենար:

Եվ երբ խոսեց ֆիդայական շարժման մասին, անհատապես չմոռացավ 20-րդ դարասկզբի բոլոր նշանավորներին, իրենց երկրորդ կյանքը ապրող մեծ նահատակներին, ակնթարթորեն եռագույն դրոշը վեր պարզեց, հպարտությամբ հանձնեց տասներորդցի երկու տղաների, ծունկ իջավ, համբուրեց այն, ապա եռանդագին բարձրանալով՝ Ռուբենի խոսքերով բնութագրեց դաշնակցությանը, Նժդեհին հիշեց և ոգեսարսուռ երգեց: Հետո այդ երգը, կարծես, ավարտ չունեցավ, որովհետև նա վերադարձավ, իջավ դասարան, մեղավոր ու սևեռուն նայեց.

- Ես հնից եկա, եկա, որ ձեզ չկորցնեմ,- Թաթուլն ուղիղ նայեց բոլորին,- իմ ճանապարհը գալիս էր հեռվից, այնտեղ մենք բոլորս ենք, մեզնից առաջ եղել են նրանք՝ մեր պապերը, կռված, հաղթած, ընկած ու հառնած սերունդները: Ուր էլ գնանք, մեր սրտերում են նրանք, և այս իրադարձությունների շարքը, անքննելի պատմության վկայությունը վավերացրել են ապրելու մեր անձնագիրը: Մենք հիմա Գետաշենի անձնագիրն ենք, այն կտակել են կորովի նախնիք, պատգամել են դիմակայելու ժամանակի երաշտին, որը չուզող ու չկամեցող հարևանի մաղձոտ շունչն է: Պատմությունը կրկնվում է, ոխապտույտ ժամանակը կոխկրտում է մեր կապույտն ու կանաչը՝ փրկելու իր սևը, մենք այդ խևին խրատ տալու միջոց և ավելորդ զիջումը չունենք. նրա ցանցառ հոգու կարկատանները լրացնելու քանքարը չունենք: Հերիք, որքան կառուցեցինք ուրիշների համար, խլյակ-հոլիկների տեղում տուն ու տաճար կերտեցինք, անջուր հող ու հանդին ջրանցքի հունը ցույց տվինք, անգիր-անգետնեերին, անմիտ-անճարներին խազի խորհուրդ, քարի կամար, հացի խորհուրդ մենք տվեցինք: Հիմա էլ ի՞նչ, Դավթի վերջին զարկն է մնացել մեզ, էլ ո՞ւմ զիջենք կամ հավատա՞նք շողոքորթին: Պահը, պատմության աղն իր ուսերին, պատմության խակն իր բերանում, դաժանորեն դեպի մեզ է գալիս, և լավ գիտենք, թե օր առաջ մեր դեմ ի՞նչ իլիկ է մանում: Ուրիշ ճամփա չունենք, մեր ազգային

ամենասուրբ գանձի՝ հողի համար պիտի կանգնենք, բախտի մի թիզ ճամփա, հույսի մի ափ գարուն, վերապրելու արյուն-ավյուն հյուլե-հյուլե պիտի բացենք մեր ու աշխարհի առջև: Նաև Գետաշենով պիտի անձնավորենք դարավերջի շքերթը հայոց ոգու, որն ուրիշ տիեզերքներից աստղեր չի ուզում, ուրիշներին պատուհասած երկրաշարժերով չի ուրախանում: Իսկ մեր շուրջը դեռ կան ուրիշ, այլ տեսակի ոտնահետքեր, հոգու մամռոտ մեղքեր և սարքովի երգեր, կիսատ-պռատ ցեղեր, ահա նրանք՝ Աստծո կողմից երկրածին մեր բաժինը... Պիտի դիմանալով ելնենք, չուզող-չտեսներին պատասխանենք և Աստծուն դարձի բերենք:

Թաքուլը փոքրիկ դադար տվեց, վերադարձավ իր դասին ու դասարանը, իր բաց դասի ափը քանդած՝ այնպես խոհեմ ու խաս նայեց նստածներին, ասես ուրիշ մոլորակից իջավ: Տնօրենը ոտքի կանգնեց, նրան հետևեցին բոլորը, ծափը ծմլտկալով ծայր առավ, ապա դղրդաց դասարանը: Երբ ամեն ինչ խաղաղվեց, դպրոցի բակում հավաքվեց աշակերտությունը, Թաքուլը կանգնեց նրանց առջև, դեռ կիսատ գործ ուներ, ձեռքով չափ տվեց ու երգեց.

«Բարո՛վ եկար, սիրո՛ւն կռունկ
Ի՞նչ լուր բերիր հայրենիքեն...»

Երգեցին ամբողջ դպրոցը, Գետաշենը, արձագանքը առավոտի շուքով ծրարվեց մոտ ու հեռվում: Դպրոցի հերթական դասն էր, Թաքուլի ոգու հաշվետվությունը, Թաքուլի ոգեկոչը, նրա լուսեղեն պատվաստը մատաղ հոգիներին:

Ուսուցչանոցում այս դասամիջոցը երկար ձգվեց: Պարզապես փոխադարձ տաք խոսակցությունը գալիս էր ոգեղենի այն ակունքներից, որը նրանց առջև իր ինքնատիպությամբ բացել էր Թաքուլը: Մանկավարժների անկեղծ գնահատումը հանգստացնում, խաղաղեցնում էր Թաքուլի ելման սիրտը, գոհ էր, որ օրինաչափությունը հաղթել էր թվացյալ ցուցամոլությանը, խոսքի, պատումի, չափածո միջամտությունների, հայրենասիրական երգերի շարքը տպավորիչ հետք էր թողել: Թաքուլը հիշեց սեպտեմբերյան առաջին զանգի արարողության ժամանակ իր հանպատրաստի ելույթն այստեղ, բայց սա ուրիշ էր: Հենց դա էր շեշտում դպրոցի տնօրեն Ղուլղազարյանը:

- Հարգարժա՛ն Կրպեյան,- հուզված էր նա,- չգիտեմ՝ ինչ անուն տամ երկժամյա այս դասընթացին, որը հավաքական սիրո և նվիրումի ձոն էր մեր ժողովրդին և նրա շուրջը հյուսված մեծ տարեգրությանը: Եվ՛ պատմություն էր, և՛ աշխարհագրություն, և՛

մայրենի գրականության գոհարների թաթուլական մեկնություն էր, իհարկե, նաև այսօրվա կյանքն էր, Գետաշենը և նրա հետ առնչվող քաղաքական մթնոլորտը: Գետաշենցի աշակերտությունը քո «բաց դասը» գրանցեց իր սրտում, թե գգվանք ուներ իր ծննդավայրի հանդեպ, հիմա առավելապես սիրեց, զգաց, հասկացավ, միացավ քո փառավոր կոչ-երգերին, հորդոր-հրամաններին, դարձավ հրացանավոր մեր ուսուցչի հավատարիմ զինակիցը:

Թաթուլը խորապես զգացվեց, տաք քրտինքը ծլլալով իջնում էր պարանոցից, աչքերում անփարատելի թախիծը ծածկված էր սեփական հայտնության գերազնիվ շղարշով: Չէր դիմանում ուսուցիչ-ընկերների խանդաղատալից հայացքներին, նրանց անկեղծ խոսքին, որով արժևորվում էին գաղափարը, միտքը, հոգու հունդը, որ սփռվեցին ծանր օրերի բեռան տակ կքված Գետաշենի դպրոցում, աշակերտության նուրբ զգայարաններին, ճաշակին, դիրքորոշմանը, դարավերջի հարափոփոխ խղճին:

Թաթուլը չէր կարող երկար մնալ դպրության մեծ խորհրդին հարազատ այս ավազանում, որտեղ բառն ու հոգին նույն ձուլվածքից էին, ներշնչանքն ու եթերայինը հողեղեն մկրտությամբ ցուցանում են օրն ու ժամանակը, բացատրում, բացահայտում, թե որ կողմից է գալիս չարությունը: Թաթուլը պիտի գնար: Դպրոցը, ուսուցիչը, աշակերտը գիտեին, որ նա դասավարտից հետո պիտի գնար, նրան սպասում էին շտաբում, պետք է իմանար անցած գիշերվա ողջ իրավիճակը, մյուս ջոկատների ղեկավարների հետ քններ առաջիկա իրենց անելիքը: Բայց նա տնօրենին խնդրեց բարձրդասարանցիներից տասը տղաներ մեկ ժամով լինեն իր տրամադրության տակ:

- Ո՞ւր ես նրանց առաջնորդում,- նկատելի երկյուղով հարցրեց տնօրենը:

- Առայժմ ոչ զենքի,- ժպտաց Թաթուլը,- նրանք ինձ պետք է օգնեն, մտահղացում ունեմ՝ կապված Սուրբ Աստվածածին եկեղեցու հետ:

- Այդ պահեստում ի՞նչ է մնացել,- կողքից ասացին Ծովյան Սերգեյը և Մակիչ Լազգյանը:

- Մեզնից խռոված Աստծուն պիտի հետ բերենք: Եթե պետք է, թող գյուղխորհրդի շենքը դարձնեն կարտոֆիլի պահեստ,- քիչ դժգոհ պատասխանեց Թաթուլը և դուրս եկավ ուսուցչանոցից:

Կարճ ժամանակ անց Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ նրան վազելով հասան ոչ թե տասը տղա, այլ դրա կրկնապատիկը: Եկան, զինվորի պես կանգնեցին՝ պատրաստ ցանկացած հանձնարարության: Թաթուլը նրանց վառվռուն հայացքներում կարդաց իր

հանդեպ ծաղկած սերը: Եվ սխալված չէր. այս պատանիները քիչ առաջ ավարտված մեծ դասի ազդեցության տակ էին, ոգեղենի շեփորը տակավին հնչում էր նրանց սրտում:

- Դուռը պետք է բացվի՞,- այս ու այն կողմից ընդգծված ակտիվությամբ առաջարկեցին աշակերտները:

- Հիմա կգան, կբացեն, ես արդեն մտածել եմ,- Թաթուլը քաջալերող էլի բաներ ասաց, պարզապես երեխաների հանդեպ իր ջերմությունն անկարող էր թաքցնել,- այս եկեղեցին պետք է գործի, այն իր առաքելությունն ունի,- համոզիչ ձայնով շարունակեց նա,- եկեք միասին շրջենք:

Մինչև դուռը կբացեին, Թաթուլը հասցրեց մոտիկից զննել թափթփված շրջապատը, բակը, աշակերտներին բացատրեց, թե նրանք ինչ պիտի անեն, ուր պիտի տեղափոխեն տարիներով կուտակված աղբը, պատից ընկած քարերին ձեռք չտան, զգուշությամբ մաքրեն խաչքարերը:

- Հնության աղոթք ու կանչ կան այստեղ, պիտի պահպանել,- Թաթուլն այս բառերն ասաց եկեղեցու շեմին: Դուռն արդեն բացել էին, չէին կարող չբացել, Թաթուլն էր հանձնարարել: Գյուղի ինքնապաշտպանության ղեկավարին նախ չէին կարող մերժել և հետո բոլորն էլ գիտեին, որ նա հենց այնպես առաջ չի ընկնում: Ներս մտնելու պահին Թաթուլից չվրիպեց ծանր կողպեքը, այն աչք ծակող էր: Ներսից փչում էր խոնավության անդուրեկան հոտը, պատերին առաստաղից իջած անձևրաջրի հետքերն էին, խունացել էին փորագիր տառերը, գավիթում մութ էր, ոչինչ չկար, մույթերի հատակին պարկեր էին, դատարկ արկղեր՝ նրանց մեջ հնից մնացած կարտոֆիլի փտած մնացորդներ: Թաթուլի սիրտը ճմլվեց, նայեց պահեստապետին, բայց ի՞նչ ասեր նրան, մեղմացավ, բայց իր մեջ սոսկալի մի խեղճություն զգաց, մեղավոր ու անչար փշրվեց իր աչքերի առջև, ներողամիտ հայացքով գծագրեց առաստաղն ու պատերը, փոքրիկ պատուհաններից թեքությամբ ներս խուժած արևի ճառագայթներին ընդառաջ գնաց, գոնե գտավ հույսի մի շող, որ չէր լքել այս աղոթատունը:

- Եթե դռները «չզարդարես» այդ կողպեքով, ի՞նչ վնաս է կրելու հանրային տնտեսությունը,- հեգնեց Թաթուլը:

- Այսինքն դռները բոլորովին չփակե՞մ,- զարմացավ պահեստապետը:

- Գողանալու ի՞նչ կա այստեղ,- խոժոռվեց Թաթուլը,- այս ջարդուփշուր արկղե՞րը, փոշեթաթախ պարկե՞րը, թե՞ այլ ապրանքա-

տեսակ կա, որ թաքցրած է պատերի մեջ:

- Չէ՜, ի՞նչ եք ասում, պահելու բան չկա, բայց բերքը պահպանելու լավ շինություն է,- արդարացավ նա,- իսկ եթե ուզում եք օգտագործել, Հրանտին պիտի ասվի, ղեկավարությունը թող տեղյակ լինի:

- Արկղերդ ու պարկերդ հաշվի, որ չպակասեն, կողպեքը վերցրո՛ւ և գնա՛,- Թաքուլի ձայնը հրամայական էր,- այս դռներն այլևս չեն փակվելու:

Պահեստապետը սկզբում հանկարծակիի եկավ, բայց չդիմացավ Թաքուլի համառությանը, նրա ծակող հայացքին:

Դպրոցական տղաներին Թաքուլը երկու խմբի բաժանեց, և՛ ներսում, և՛ բակում սկսվեցին մաքրման աշխատանքները: Նա աշակերտներին խոստացավ, որ մեկ ժամից նրանց կմիանա ևս մի մեծ խումբ՝ պաշտպանական ջոկատներից, իսկ ինքը գնաց: Այստեղ էին շտապել ուսուցիչներ Արմեն Աթանյանը, Ալեքսան Բաղրամյանը և Սմբատ Զարգարյանը:

«Ալաշկերտի» տղաներին Թաքուլը հանդիպեց կենցաղի տան մոտ: Ջոկատի հրամանատար Հրաչն ասաց, որ ռուս երկու տղա դպրոց պիտի գային, քեզ էին հարցնում: Թաքուլը հանգիստ ընդունեց մարտական ընկերոջ լուրը և պատասխանեց, որ ոչ ոք դեռ իրեն չի մոտեցել:

- Երևի գիշերվա դեպքի հետ է կապված,- ակնարկեց Հրաչը,- վիրաբույժ Գևորգը փրկել է ադրբեջանցու կյանքը:

- Արթուրն ու Տիգրանը այնտեղ պիտի լինեին, ես այդ մասին դեռ լուր չեմ ստացել:

- Ահա նրանք,- ասաց «Ալաշկերտցի» Վարուժանը:

Իրոք, գետափով գալիս էին նրանք, ապա գետաշենցի Բորիկ Մնացականյանն ու Արշակ Սաֆարյանը: Թաքուլը, նրանց տեսնելով, մոտեցավ, բարևեց: Տղաները դեռ վաղ առավոտից, երբ կարդացել էին Թաքուլի հանձնարարական երկտողը, աննկատելի վերահսկել էին հիվանդանոցը: Մանրամասները ներկայացրին՝ հաղորդելով, որ վիրավոր թուրքի կյանքը փրկեց Գևորգը: Բորիկն ու Արշակը առանձնացան Թաքուլի հետ, նրանք դպրոցից էին գալիս:

- Ի՞նչ կա, անհանգիստ եք, տղե՛րք,- չհապաղեց Թաքուլը:

- Քեզնով հետաքրքրվում են երկու սպա, նրանք հիմա կմոտենան:

- Ռուսնե՞ր են,- մտածված ստուգեց Թաքուլը, քանի որ Հրաչն արդեն ասել էր:

- Ներքին ծառայության զորքերից են:

- Թող բարով գան, եթե իրենց միտքը ծուռ չէ,- իր խոսքի տոնը

Թաթուլն ամենևին չփոխեց և խորհուրդ տվեց զուր տեղը չտագնապել:

Իսկապես, մի քանի րոպեից կենցաղի տան կողմից քայլելով եկան երկուսը՝ մեկը ավագ լեյտենանտի, մյուսը՝ մայորի կոչումով: Երկուստեք ջերմորեն բարևեցին, նույնիսկ մայորը կատակեց:

- Ի՞նչ է, պատմության ուսուցիչը դասը շարունակում է գյուղի կենտրոնո՞ւմ:

Թաթուլը խայթոց զգաց նրա բառերից, բայց զսպեց իրեն:

- Ընկեր մայո՛ր, իսկական ուսուցչի դասը դպրոցով չի ավարտվում, 45 րոպեն շատ քիչ է քառասունհինգ հազար տարվա պատմության հերոսական էջերը թերթելու,- հստակ ռուսերենով պատասխանեց Թաթուլը:

- Մի քիչ քայլենք,- առաջ անցավ մյուս սպան:

- Քայլե՛նք,- կտրուկ ասաց Թաթուլը՝ չմոռանալով Արթուրին հանձնարարել, որ 10-15 հոգով հենց հիմա գնան եկեղեցի՝ աշակերտներին օգնելու, և այնտեղ որոշեն հետագա անելիքը:

Երբ ահագին հեռացել էին հավաքվածներից, մայորն արդեն փոխված ձայնով դիմեց Թաթուլին.

- Մենք տվյալներ ունենք, որ դուք ուսուցչի անվան տակ եք հայտնվել Գետաշենում, ձեր թիկունքում դաշնակցական կուսակցությունն է, այստեղ Թաթուլ Կրպեյանն ուրիշ ծրագրեր ունի:

- Ես այստեղ եմ եկել որպես ուսուցիչ՝ համալսարանի համաձայնությամբ և կրթության նախարարի հրամանագրով, կարող եք ստուգել:

- Դպրոցի տնօրենը մեզ արդեն ցույց է տվել, դա պարզ է:

- Իսկ այն, ինչ կապվում է դաշնակցության հետ, դա հոգու խնդիր է, այդ հարցում ո՛չ մի հրամանագիր չի կարող գործել, ընկեր մայո՛ր,- նեղսրտեց Թաթուլը, աչքերը նկատելի փայլեցին:

- Ի՞նչ է կատարվել անցած գիշեր գերեզմանոցի մատույցներում,- սպան փորձեց հունից հանել Թաթուլին:

- Երբ գայլերը հարձակվում են, պաշտպանվել է պետք, երբ զրահատեխնիկա ունեցող պաշտպանողները չեն ուզում տեսնել այդ ոհմակը, հարկադրաբար գալիս են ուրիշ պաշտպաններ, որպեսզի գայլերն իրենց երախին ազատություն չտան:

- Փոխաբերական եք խոսում, ուսուցի՛չ, գայլ ասելով՝ ո՞ւմ նկատի ունեք:

- Ռուս մարդիկ այդքան միամիտ չեն, որ իմ ակնարկը չհասկանան,- ծիծաղեց Թաթուլը,- եթե իսկապես արդար միջնորդի դեր եք

ստանձնել, նայեք ձեր շուրջը, տեսեք՝ ինչ է կատարվում: Գետաշենը լավ է հասկանում, որ դուք հրաման եք կատարում, գետաշենցին ռուս զինվորների հանդեպ չի կորցրել իր հավատը, բայց տեղի ունեցող դեպքերը, օմոնականների ակտիվությունը, նրանց անհագուրդ ախորժակը շատ բան են դնում կասկածի տակ:

- Դա մենք գիտենք և ամեն կերպ ձգտում ենք մեր ուժի չափով կարգավորել,- զրույցի մեջ մտավ ավագ լեյտենանտը,- սակայն անցանկալի մարդկանց ներկայությունը Գետաշենում ի՞նչ օգուտ է տալիս՝ բացի ավելորդ կասկածանքից:

- Հենց այն օգուտը, որ Գետաշենը պետք չէ շփոթել Ազատ, Կամո գյուղերի հետ կատարված տխուր փաստի հետ, որտեղ բացարձակ խաբեությամբ, ուժի զոռով և դաժանությամբ տեղահան արվեց բնակչությունը,- նկատելի բորբոքվեց Թաթուլը,- դժվարացել էին նրանց դիմադրությունն ու պաշտպանությունը, որովհետև ձուկը վերևներում էր հոտած:

Թաթուլը հրաշալի գիտեր, որ իրենց երկաթյա պաշտպանությունն անգամ չէր դիմանա ԽՍՀՄ ՆԳ ծառայությունների զինված ուժին, բայց ուզում էր այս երկու խելոքներին ասել, որ Գետաշենի ոգին կանգուն է, որ իրենք այդ ոգու ջահակիրներն են, թող այդ մասին բոլորն իմանան, հատկապես արյան ծարավ թուրքը, թալանի սպասող խուժանը:

- Ինչպե՞ս է այն գերու վիճակը, որ հիմա հիվանդանոցում է,- միանգամից ուրիշ խնդրի անցավ մայորը:

- Նրա մարմինը փրկված է, բայց հոգին՝ ոչ,- ասաց Թաթուլը,- թող կազդուրվի, լեզուն չեն կտրել, մի կարևոր բան կխոստովանի:

- Ի՞նչ եք կարծում, ձեր այս վերաբերմունքը շարքային ուսուցչի ակտիվությո՞ւն է: Ձեր խոսքը դուք կշռո՞ւմ եք,- սառնասրտորեն նետեց սպան:

- Մի՛ մոռացեք, ես գետաշենցի ուսուցիչ եմ, իմ ակտիվությունը այս գյուղի թելադրանքն է, ես չեմ կարող ուղիղ նայել իմ աշակերտների աչքերի մեջ, տեսնելով մի բան՝ պարտադրել մի այլ բան, որը կապ չունի իրականության հետ,- նույն սառնասրտությամբ պատասխանեց Թաթուլը,- և հետո, ընկե՛ր մայոր, դուք չե՞ք տեսնում, թե ինչ է կատարվում մեր շուրջը, այս հարևան կոչվածը, ատամները սրած թալանի է սպասում, գիշերով ավազակության են գալիս, իսկ ավազակներին ու թալանչիներին գետաշենցին երբեք չի ներելու, այդպես է եղել հնում, այդպես կլինի նաև այսօր:

Սպաները լռեցին, Թաթուլը ի սկզբանե գիտեր, որ իր ասածը

նրանց սրտով չէր, բայց ինքը գոհ էր իրենից:

- Ուսուցիչը պետք է իր գործով զբաղվի,- բազմանշանակ ասաց մայորը, և իր զինակցի հետ քայլեցին:

- Նույնը պիտի ասել նրանց, ովքեր իրենց առաքելությամբ պարտավոր են հավասարակշռություն պահպանել այստեղ,- պարտք չմնաց Թաթուլը՝ գիտենալով, որ այս զրույցը սրանով չի ավարտվելու:

Սպաների գնալուց հետո Թաթուլը մի քանի րոպե մենակ մնաց, հենվեց ծառին և մտասույզ վերհիշեց զինվորականների հարցադրումները, նրանց հետաքրքության սահմանը, ուր առաջինը չմոռացվեց Հայ դաշնակցության անունը: Թաթուլը շուտ վերագտավ իրեն, հանգիստ էր, խոսում էր ներքին ձայնով, զրուցում իր հետ, իր կուսակցության հորդորները հեռահար հոսքով զարթնել ու գալիս էին, հպարտության շղարշը թափանցիկ թրթռում էր, որից այս կողմ ելևէջում էր Գետաշենի բազմախորհուրդ միջօրեն:

* * *

Լենայի հետ ամեն զրույց Թաթուլը համարում էր ինքնախոսխոստովանանք Գետաշենի բոլոր մայրերին: Իսկ Լենան իր գործունեությամբ գյուղի մայրական մեծ խղճի մի մասնիկն էր, տաք, տիրական վեհությամբ՝ մայրախորհուրդ հյուլեներով սիրահարված իր ծննդավայրին, պատրաստ մարտնչելու, պայքարի դրոշակակիր դառնալու, գիտակցաբար զոհվելու հանուն Գետաշենի: Չորս երեխաների մայրը օր ու գիշեր նրանց հետ էր, ովքեր ճակատագրի ճանապարհին էին, ովքեր տագնապ-հույզերի փոթորկուն ալիքների մեջ դիմակայում էին: Լենան չէր կարող հաշտվել, հենց այնպես մարել-վերջանալ: Ինքն իրենից հառնելու հրեղեն շունչ ուներ, կենսական կրակների ներքին լիցքերով էր ուժեղ, որ նա մեկ տարի առաջ համաձայնեց դառնալ Գետաշեն-Հայաստան կապի անձնուրաց ծառայողը:

...Այսօր էլ՝ աշնան ցողաթաթախ մշուշից հետո, նա մոտեցավ իր բնակարանում տեղադրված ռադիոկայանին, ամեն անգամվա պես հոգու ծվարը թեժացավ, ձայնը խենթականչ փրփրեց ներսում և նրա շնչից ձայնատար սարքը բաբախեց սրտի նման:

- Ես «Կամա-2»-ն եմ, ե՞րբ ենք սպասում Մուշեղին, ես «Կամա-2»-ն եմ:

Նա գիտեր՝ ուր է հասնում իր ձայնը, ով էր Մուշեղը, մտքով ավելի առաջ էր անցնում, քան ռադիոալիքը: Այդ օրը Թաթուլն էր

նրան խնդրել, որ Մուշեղը՝ ուղղաթիռի օդաչուն, զանգահարեր իր տված հեռախոսահամարներով, Երևանից պարային զգեստներ, եկեղեցու գմբեթին ամրացվող մեծ խաչ, մոմակալներ, մկրտության խաչեր և այլ ծանրոցներ պիտի բերվեն: Լենան, ինչպես միշտ, ժամանակին կատարել էր իր պարտականությունը, տան թաքստոցում պահել ռադիոկայանը և դուրս եկել պատշգամբ: Դիմացի տանը ապրում էին նվիրյալները՝ Թաթուլը և իր ընկերները: Լենան հարազատի պես էր ընդունում նրանց, մի տեսակ հզոր ու անպարտ էր իրեն զգում, երբ նրանք Գետաշենում էին: Նա իրեն իրավունք էր տալիս մոր նման խանդաղատանքով հետևելու տղաներին, թե ուր են գնում, երբ են վերադառնում, ինչի պակաս ունեն: Ու թեև Թաթուլը թույլ չէր տալիս, բայց Լենան օրվա նրանց ուտելիքն էր պատրաստում, լվանում հագուստները, իր զավակների պես էր վերաբերվում: Այսօր նա չհասցրեց զրուցել Թաթուլի հետ, հերթական անհանգիստ գիշերից հետո նա դպրոց էր շտապել, իսկ տղաները նրա հանձնարարությամբ վերանորոգման աշխատանքներ էին շարունակելու եկեղեցում: Իր մեջ էլ կարոտի շող ճառագեց՝ եկեղեցու խորանում՝ մոմակալի առջև կանգնել, խորհուրդ անել Աստծո հետ, բարբառել հողեղենի մաքրամաքուր ձայնով, կիսել իր գյուղի մորմոքը, արդարության հույսով բարձրյալին երկրպագել: Լենան Թաթուլից, Հրաչից, Վահանից և Մանվելից հետո ամենից շուտ ինքն էր տեղյակ, թե ինչ է սպասվում Գետաշենին ու Մարտունաշենին: Նրա «Կամա-Կամա» կանչերը հաճախ արձագանք չէին գտնում, պատասխան չէին բերում: Նա հասկանում էր այն կողմից հնչող բոլոր տողատակերը օգնությունն ուշանալու, պատանդ դարձած Գետաշենին ու Մարտունաշենին կոնկրետ պատասխաններ չգտնելու վերաբերյալ: Այդ մասին գիտեր նաև Թաթուլը, և առաջինը նա էր իր վրա վերցնում սառը, երբեմն անհասկանալի այդ պատասխանների կցկտուր կայծակը: Թաթուլը ներսից էր այրվում՝ ճանաչելով Գետաշենի հնաբույր փառքը, գետաշենյան մարգարիտը, որ հիմա հարազատ լեռնաշխարհի դրախտային ծոցում հեծծում էր կրակների և անտարբերության սահմանագծում: Լենան այնքա՜ն-այնքա՜ն խորությամբ էր ճանաչել Թաթուլին, Հրաչին, Արթուրին, մյուս տղաներին, ովքեր գիշեր ու զօր իր գյուղի ճակատագրին կառչել, թույլ չէին տալիս, որ այն զարկվի թշնամական գնդակից:

... Լենային ձգում էր եկեղեցին, մանավանդ ուզում էր տեսնել, թե ինչ են ձեռնարկել այս անձնուրացները: Չդիմացավ, գնաց: Իր առջև՝ հենց բակում, կանգնեցին մի խումբ աշակերտներ:

- Ընկեր Կրպեյանը խնդրեց իմանալ՝ լուր չկա՞, ե՞րբ է գալու Մուշեղը:

- Գնա՛նք, ես նրան կպատասխանեմ,- ասաց Լենան և առաջ անցավ: Մեքենան փնչալով կանգնեց նրա կողքը: Հացի Պապոն էր, բարևեց, ասաց՝ նստի՛ր, տանեմ: Լենան ներողամիտ ժպտաց երեխաներին, որ ինքը պետք է գնար:

- Մենք վազելով կգանք, մորաքույր Լենա՛,- միաբերան գոռացին նրանք և ծտի թև առած՝ թռան:

- Գյուղի նոր արծիվներն են,- ուրախացավ Լենան և հայտնվեց խցիկում:

- Ափսոս, որ նրանց թռիչքը այս լեռնաշխարհում չի լինելու,- մռնչաց Պապոն:

- Չարագույժ բաներ մի՛ ասա,- նեղսրտեց Լենան,- քշի՛ր եկեղեցու ուղղությամբ:

Պապոն լռեց: Չխոսեց նաև Լենան: Գիտեր, որ այս համեստ գետաշենցին ճիշտ էր, գիտեր, որ այսպես է մտածում գյուղի մեծ մասը, բայց համանման կարծիքները տակնուվրա էին անում նրա հոգին, չէր ուզում անգամ լսել, որ Գետաշենը ընկնելու է:

- Նեղացա՞ր,- միամիտ ասաց Պապոն:

- Չեմ ուզում այդ մասին լսել, Պապո՛,- ձայնը բարձրացրեց Լենան,- Թաթուլի պես պիտի մտածենք բոլորս, նրանք, ովքեր երեկ, նախորդ ժամանակներում լքել են իրենց ծննդավայրը, պիտի հետ գան, ուս ուսի կանգնեն, բռունցք դառնան: Մաղձոտ բաներ մի՛ ասա, տե՛ս՝ Թաթուլն ու իր ընկերները գիշերը պոստերում են, ցերեկը օգնում են սրան-նրան, միավորում, հույս տալիս, հիմա էլ պահեստի վերածված եկեղեցին են աղոթքով լցնում:

Պապոն շշմած նայում էր Լենային, զարմացած էր նրա անկոտրում կամքի ու հավատի համար:

- Ե՛ս եմ, ե՛ս, Պապո՛, Լենան եմ, իմ ցավը քոնից, հարյուր քեզպեսներից շատ է, ես կապ ու կամուրջ ունեմ գնալու, հեռանալու, բայց ո՞ւր:

- Ապրել ու մեռնելու մեր հասցեն Գետաշենն է,- հաստատեց Պապոն:

- Դա հորդ, քո պապի, իմ պապի կտակն է, որը այստեղ եկած հայ դյուցազունները դարձրել են նաև իրենց նպատակի իմաստը:

- Բա մեր տղանե՞րը,- խեթ նայեց Պապոն,- նրանք միասին են, չէ՞:

- Մեր տղաները ուրիշ ի՞նչ պիտի անեին, տանտերերի մասին շատ բան պետք չէ ասել, դա նրանց պարտքն է, հնից փոխանց-

ված սերը, հավատամքը,- մեղմացավ Լենան,- մեր քաջերի հողն ու ջուրն է սա, մայրն ու հիշողությունը... Աշխարհը գիտի, որ նրանք Թաքուլի հետ են, «Ալաշկերտի», «Մալաթիայի», Մարտունաշենի պաշտպան «Արաբո» ջոկատների հետ: Մենք մեր տանը մենակ չենք, որովհետև նրանք այս ծանր պահին մեզ հետ են:

Պապոն լռեց, պարուրվեց թաքուն խանդաղատանքով և կարոտի բարակ մի թրթիռ նրա աչքերում դարձավ խոնավ ակոս:

- Ահա՛ եկեղեցին,- կարծես սթափվեց վարորդը,- տես ինչքա՞ն էլ մարդիկ են հավաքվել:

Լենան դեռ չէր իջել մեքենայի խցիկից, երբ նրան արագ-արագ մոտեցավ Թաքուլը:

- Ի՞նչ լուր կա:

- Առայժմ ոչ մի, հաջորդ կապը կլինի մեկ ժամից,- հանգիստ պատասխանեց Լենան:

- Մուշեղին փոխանցած կլինեն, չէ՞, իմ տված երևանյան հեռախոսահամարները:

- Անձամբ ես եմ ասել, Թաքու՛լ, դու արդեն ի՞նձ էլ չես հավատում:

- Ուրեմն ես իմ Սեդա մայրիկին էլ չեմ վստահում,- ծիծաղեց Թաքուլը և առաջարկեց մտնել եկեղեցի:

- Դրսից երևում է, որ պահեստի հետքերն անհետացած պիտի լինեն,- շոյիչ հայացքով շրջապատը զննեց Լենան և ոտք դրեց շեմից ներս: Նա մի պահ քարացավ, հայացքը վեր ու վար արեց, նայեց պատի քանդակեն խաչքարին, մաքուր ու լուսավոր գավիթին, ներքին կամարներին, ամենաբարձրում լույսի մեջ վետվետացող փոքրիկ պատուհանին, դողացող շուրթով մի քանի բառ շշնջաց և խաչակնքեց դեմքը:

- Թաքու՜լ...

- Մենք վերադարձրել ենք մեր մարդկային խիղճը, իսկ հավատի օրը, հավատամքի ծեսը դեռ պիտի գան ու բարուրեն աստվածային այս օրորոցը:

Լենան անսահման բարությամբ, անխառն մի զգացումով վերածաղկեց իր մեջ, մայրաբար համբուրեց Թաքուլին, Արթուրին, Մակիչին, Տիգրանին, այստեղ աշխատող դպրոցականներին, ապա գնաց, ծունկ իջավ դիմապատկեր խաչքարի առջև: Նա այլևս ո՛չ խոսք ուներ, ո՛չ երախտիքը զորակոչելու կարիք, ծուլվել էր հնաբույր քարաշուրթին, ականջը խաչքարի պաղ ժանյակներին՝ կարծես լսում էր հնօրյա ձայներ, պատարագ ու ձոն, Սուրբ Աստվածածնի հաղթակամարի տակ երբևէ հնչած և հույսի հաղորդություն դար-

ձած սաղմոս-հայրեններ:

Թաքուլին դուրս կանչեցին: Արքուրն աննկատ հետևեց նրան: Մերուժի ձայնի հատակում տագնապ կար, հավանաբար կարևոր բան պիտի ասեր:

- Թուրքը հիվանդանոցում չէ, տարել են:

- Ո՞վ,- գունատվեց Թաքուլը և միանգամից կասկածեց կարմիր բերետավորներին, նաև այն սպաներին, ովքեր իր հետ խուզարկու զրույց ունեցան:

- Ասում են՝ գյուղի ղեկավարությունը,- վրա բերեց Մերուժը:

- Չի կարող պատահել,- զայրացավ Թաքուլը և շտապեց հիվանդանոց: Արքուրն ու Տիգրանը հետևեցին նրան, եկեղեցում մնացին Արշոն, Հայկազը, Մակիչը:

Մինչև հիվանդանոց հասնելը Թաքուլի ներսում բախվեցին բազում կասկածանքներ, զարմացած էր, ափերից դուրս էր եկել:

- Արթո՛ւր, բժիշկներին չէի՞ք զգուշացրել իմ ասածը, որ նրան ոչ մեկի ձեռքը չտան:

- Ամեն ինչ ասված էր,- ասաց Արքուրը:

- Գլխավոր բժիշկ Սարգիսը և նոր ժամանած վիրաբույժ Գևորգը մեր կողմից զգուշացվել էին,- ընկերոջ խոսքը հաստատեց Տիգրանը:

- Անհասկանալի է,- Թաքուլը հավաստեց իր տարակուսանքը և ավելի արագացրեց քայլերը: Նա իր տեղը չէր գտնում, որովհետև ընկերներից գաղտնի եղել էր հիվանդանոցում և վիրաբույժ Գևորգին անգամ խնդրել, որ թուրքին փրկել է պետք, և ոչ մի շարժում հիվանդանոցից: Տղաներին ուղղված իր հարցերը, թե արդյո՞ք զգուշացրել եք բժիշկներին, ընդամենը ստուգիչ հարցեր էին: Եվ այդպես էլ հարմար չհամարեց խոստովանել՝ չուզենալով վիրավորել մարտական ընկերներին:

Երբ հիվանդանոցի դռները ճոճվելով բացվեցին, և փեղկերից մեկը աղմուկով խփվեց պատին, բուժքույրը վախեցած առաջ եկավ:

- Ո՞ւր է վիրաբույժը,- գոռաց Թաքուլը:

- Գլխավո՞րը,- խեղճացավ բուժքույրը:

- Գևորգը,- միջամտեց Արքուրը՝ փորձելով մեղմել Թաքուլի բարկությունը:

- Այստեղ եմ, տղանե՛ր, ի՞նչ կա,- ընդառաջ եկավ Գևորգը՝ համակրելի արտաքինով մի տղամարդ, բավականաչափ վստահ հայացքով և սպասողական նայեց Թաքուլին,- ի՞նչ կա:

- Հարցաքննությունը ես եմ անելու Գևո՛րգ, թե ի՞նչ կա ու չկա, հիմա դո՛ւ պիտի պատասխանես,- ասաց Թաքուլը և տղաների հետ

մտան նրա ծառայողական սենյակը:

- Հիշո՞ւմ ես մեր պայմանավորվածությունը, բժի՛շկ, ո՞ւր է թուրքը: Ես հատ-հատ հայերեն բառերով խնդրեցի, որ էդ ավազակը մեզ պետք է, ի՞նչ լավություն եք անում օմոնին:

- Քո համաձայնությամբ նրան տարան գյուղի ղեկավարները:

- Իմ համաձայնությա՞մբ,- գրեթե ճչաց Թաթուլը և ձեռքը զարկեց սեղանին:

- Այո՛, այո՛, ընկերները եկան, ես առարկեցի, որ Թաթուլին տեղյակ պետք է պահել, բայց նրանք համառորեն համոզեցին, որ դու գիտես այդ մասին,- անկեղծորեն ասաց վիրաբույժը: Թաթուլը նրան չհավատալու իրավունքը չուներ, բայց բժիշկը պայմանազանց էր:

- Եթե նրա հետքերը կորչեն, գնդակի բաժին եք դառնալու դու՛, գլխավո՛րդ և գյուղխորհրդի նախագա՛հը,- նրա աչքերում այսքան բոց ընկերներն անգամ չէին տեսել:

- Ես ասացի ճշմարտությունը, իսկ դու կարող ես վճիռդ հենց հիմա իրականացնել,- անդրդվելի էր նաև Գևորգը:

- Կգա դրա ժամանակը, ես գնացի՛,- ասաց և հեռացավ:

Հիվանդանոցում լարվածությունը շուտ չմարեց: Գլխավոր բժիշկ Սարգիս Հակոբջոխվյանը և վիրաբույժ Գևորգ Գրիգորյանն առանձնացան, վիրավորված էին: Սակայն նրանք վերջիվերջո եկան այն եզրակացության, որ Թաթուլն արդարացի էր: Նա կարող էր այդ նույն գիշերը վերջ տալ ավազակին, բայց գերադասեց փրկել նրա կյանքը, հարցեր ուներ տալու, պատանդ էր, ծայրագույն դեպքում կփոխանակեր Խանլարում գերի վերցված որևէ մի հայի հետ:

- Գյուղի ղեկավարներն այս ի՞նչ խաղ արեցին,- զայրացավ Գևորգը,- նրանց ինչի՞ն էր պետք այդ վիրավորը, ո՞ւմ էին խոստացել:

- Չշտապենք, կանխակալ կարծիքները վտանգավոր են,- միջամտեց գլխավոր բժիշկը:

Թաթուլը եկեղեցի չգնաց, տղաներին հանձնարարություններ տվեց և ինքը որոշեց հանդիպել գյուղխորհրդի նախագահին:

Հանդիպեցին սառը, Թաթուլը հարևանցի բարևեց, բայց անհամբերությունից պայթում էր սիրտը:

- Ո՞ւր է թուրքը,- մռնչաց նա,- գիշերով նրա գնդակների տակ գյուղխորհրդի նախագահը չէր, անօրենի ճանապարհը դեպի Գետաշեն փակում էին գետաշենցի շարքային տղաները և նրանք, ովքեր, իրենց տուն ու տեղը թողած, հեռվից եկել-հասել են այստեղ:

- Թուրքին վերադարձնելով, կարծում եմ, հարվածի տակ չի ընկնի մեր գյուղը, լարվածությունը չի մեծանա,- ասաց նախագահը:

- Գուցե ճիշտ ես, չեմ առարկում, բայց գոնե դո՛ւ, ընկեր նախագա՛հ, իրադրությունը գնահատել պիտի կարողանաս,- հանգիստ ասաց Թաթուլը,- նրանք դուռ ու երդիկից են մտնում, գիշերները հարձակվում են մեր պաշտպանական դիրքերի վրա, էլ չեմ ասում, որ կարմիր բերետավորների համար նույնպես արդեն կարևոր չէ այս գյուղի ճակատագիրը, իսկ դու «մի ծաղկով գարուն ես ուզում փրկել...»:

Նախագահը անմիջապես չպատասխանեց: Թաթուլի համառությունը, փաստերը, նրա վերլուծությունը բխում էին կոնկրետ իրադրությունից:

- Ի՞նչ կարող ենք անել,- դժվարությամբ ասաց նախագահը: Թաթուլը նաև նրա վիճակը հասկացավ, Գետաշենի ներկա պայմաններում, իսկապես, հեշտ չէր պահպանել բարոյական արժեքները, սակայն անդրդվելի էր նա:

- Ո՞ւր է թուրքը,- հնչեց Թաթուլի ձայնը, ասես մուրճով հարվածեցին պղնձակոփ զանգին:

- Թաքցրել ենք, գուցե պետք գա, կենդանի բացիկ է:

- Եթե հիվանդանոցում մնար այդ կենդանի բացիկը, բացիլ կդառնա՞ր, այնտեղ բժիշկներ կան, հարգված մարդիկ, որոնց քո պատճառով մահու չափ դաժան բաներ եմ ասել,- չէր մեղմանում Թաթուլը,- և գիտե՞ս ինչու, որովհետև ինձ չտեսած՝ իմ անունից հավատախոս ես դառնում, չի՛ կարելի:

Թաթուլը չուզեց երկար խոսել, միայն պահանջեց երեկոյան իրեն ցույց տան, թե որտե՞ղ է նա:

- Պետք չէ գնդակահարել, Թաթո՛ւլ, ճիշտ է, դու ես այս գոտու ինքնապաշտպանության պատասխանատուն, բայց մենք վարչականորեն դեռևս ենթարկվում ենք Խանլարի իշխանություններին,- նախագահը փորձում էր մեղմացնել:

- Նրա ճակատին գնդակը կարող էր հասնել այդ նույն գիշեր, բայց հետագա մեր գործողությունները նպատակ ունեին,- իր խոսքն ավելի համոզիչ ձևակերպեց Թաթուլը,- իսկ այն,՝ թե ով է Խանլարի վարչարարների ենթական, ինձ չի վերաբերում, ոչ էլ գետաշենցի և հայաստանցի իմ մարտական ընկերներին:

- Մենք երախտապարտ ենք այդ ուժերին,- անկեղծացավ նա:

- Ժամանակները վայրկյան առ վայրկյան են փոխվում, հարգելի՛ս,- մեղմացավ Թաթուլը,- լուսահոգի պապս նման պարագաներում ասում էր հայտնի մի խոսք. ջուրը ջրաղացն է տարել, դու չախչախն ես ման գալիս:

Հրաժեշտից առաջ Թաթուլը անհիշաչար ու բարի ժպտաց նախագահին, հիշեցրեց հանդիպման պայմանավորվածությունը, ձեռքը մեկնեց նրան և մտերմիկ ասաց.

- Ռազմական ժամանակներ են, պետք չէ հաշվարկների մեջ սխալվել, վստահել է պետք, միանալ, բռունցքվել, սրանցից է վախենում թուրքը, իսկ այդ հավաքականությունը ճաք չի հանդուրժում...

* * *

- Քեզ էի փնտրում,- դեռ հեռվից գոռաց Մերուժը,- «Վիլիսի» բենզինը վերջացել է, Սմբատը շվարած կանգնել էր հուշարձանի մոտ:

- Ռուսներից պիտի վերցնես, ծանոթ կա՞,- անհանգստացավ Թաթուլը:

- Ծանոթ կա, փող չկա՛:

- Կճարվի, երեկ եմ ստացել դպրոցից:

- Լավ է գոնե էդ դպրոցն էլ կա,- ուրախացավ Մերուժը:

- Մերո՛ւժ, ես էլ չլինեմ, դու էլ չլինես, էդ դպրոցը կլինի,- կտրուկ ասաց Թաթուլը և ստացած աշխատավարձի կեսը տվեց նրան:

- Բա որ ասում ենք ձիեր առնենք: Էսքան փողին մի քիչ էլ ավելացնենք, տասը ձի կառնենք, գիշերային պոստերը գնալու համար շատ հարմար է:

- Լուծի՛ր, քեզ երկու օր ժամանակ, ձիերն էլ կհանձնես Տերոնց տներում ապրող մեր տղերքին, գումարը ինձանից կստանաս:

- Լա՛վ:

Մերուժը արագ գնաց:

Թաթուլը իրեն չէր ներում, ծանր բան էր ասել վիրաբույժին, բուժաշխատողներին: Մտքում մեկ մեղադրում էր Հրանտին, բայց և անմիջապես մտնում նրա դրության մեջ, փորձում էր իրադրության լայն կշեռքին հասկանալ գյուղխորհրդի բռնած դիրքը, մեկ էլ կտրուկ հեռանում էր ավելորդ զիջումներից, հարմարվողականությունից: Այդ պահերին զարմանալի տենդ էր բարձրանում սրունքներից, խարույկի պես բոց ու բռնկուն հոսանք էր խլրտում ողնաշարում: Դա նշան էր, որ նա չէր ընդունում թուլությունը, կցկտուր կապանքների մեջ բույն դրած ժամանակավոր թմբիրը. դա նշան էր, որ ինքն իրենով ողջակիզվում էր, միայն թե այդ կրակից դիմացինը տաքացներ իր հոգին և չմոխրանար օտար ծխածածկույթի տակ: Ոչ մեկի նա իզուր վշտացնելու բնավորություն չուներ, ծայրահեղությունների պահին զուսպ էր, կայծակնորեն հաշվարկել գիտեր, աննախադեպ իրավիճակներում կողմնորոշվելու հավաքական բնազդը չէր կորցնում:

Այս ամենի իրարաձայն հաղորդն էր նրան տանջում, և նա շտապում էր հիվանդանոց: Գիտեր, որ ինքը մեղավոր չէր անցած միջադեպի համար, բայց որ վիրաբույժ Գևորգի դառնության բաժինը շատ էր, ներքուստ ընդունում էր: Մանավանդ չէր մոռացել Գևորգի աննահանջ ասպետությունը, երբ նա իր սպառնալիքին պատասխանեց հաննիբալյան հանդարտությամբ՝ չփոխելով անգամ դեմքի միմիկան:

Իր աշխատասենյակում մենակ էր Գևորգը: Բուժքույրը նրան հայտնեց, որ Թաքուլն է եկել:

- Խնդրե՛մ, թող ներս գա,- բարեկամաբար ասաց նա:

Թաքուլը բարեժպիտ, կարծես երեկվա միջադեպին անհաղորդ, ներս մտավ, բարևեց և նստեց բժշկի առաջարկած աթոռին:

- Շա՞տ եմ վիրավորել վիրաբույժին:

- Բավականաչա՛փ,- ժպտաց Գևորգը և անհանգիստ շարժվեց աթոռին:

- Հիմա հիշում եմ, որ զայրույթի պահին ավելորդ սպառնացել եմ, բայց ես մեղք չունեի, Գևո՛րգ:

- Ես բժշկի իմ պարտքը կատարել էի, մնացածը ուրիշին վստահելու վրիպում էր, դու էլ ես ճիշտ, մենք պայման ունեինք:

- Տեսնում եմ՝ քեզ հետ դժվար չէ կորստից վերադառնալը, շնորհակալ եմ, որ ինձ ճիշտ ես հասկացել:

- Ես նույնպես շնորհակալ եմ, որ գործ ունեմ մի մարդու հետ, ով անանձնական խնդիրներով է այստեղ, ինչպես ես:

- Գործուղվա՞ծ եք,- հարցրեց Թաքուլը

- Դա եղել է իմ նախաձեռնությամբ,- պարզապես հեռուստատեսությամբ լսեցի, որ Գետաշենը վիրաբույժի կարիք ունի, այլևս չհապաղեցի, թողեցի աշխատանքս, հրաժեշտ տվեցի կնոջս և անչափահաս հինգ երեխաներիս և մեծ դժվարությամբ հասա Գետաշեն:

Թաքուլը նստած տեղից բարձրացավ, շրջանցեց բժշկական փոքրիկ սեղանը, մոտեցավ Գևորգին, անմեղ ու մանկական քնքշանքով ժպտաց և թափանցող հայացքով խորասուզվեց նրա աչքերի հոգնատանջ ծովը:

- Եղբայրանա՛նք,- խանդաղատանքով ասաց Թաքուլը:

Գևորգը պատասխանի փոխարեն նստած տեղից բարձրացավ, ողջագուրվեց նրա հետ և երբ բաժանվում էին սիրալիր ասաց.

- Ինձ վստահի՛ր, ես նաև զենք կարող եմ վերցնել:

- Հինգ երեխաների հայրը պիտի մարտնչի տարվա բոլոր օրերին, ճակատագիր է,- նրա փոխարեն, կարծես, հպարտացավ Թաքուլը,

մտքի պրկված թելերին կախաղան հանեց զղջումի ողջ մնացորդը և այնքան բավարարված հեռացավ:

* * *

Լենան Թաթուլին հայտնեց, որ վաղն առավոտյան ուղղաթիռը գալու է, Մուշեղին հանձնել են ծանրոցները:

- Շնորհակալ եմ,- մտահոգ ասաց Թաթուլը: Նա մենակ չէր, Չիլինգարյանների թաղամաս էր եկել լրագրող Վարդանը: Թաթուլը նրան հանդիպելիս գիտեր, որ զրուցելու են ամեն ինչի մասին, հատկապես պատմությունից, գրականությունից, ժուռնալիստիկայից, պիտի կարդային, արտասանեին, հայրենասիրական երգեր հնչեցնեին: Այս անգամ էլ բացառություն չէր, բայց Թաթուլը երգելու տրամադրություն չուներ: Հենց նոր էր հանդիպել վիրավոր թուրքին: Նախագահը իր խոսքի տերն էր, բայց շտապում էր Խանլարի վերադասին հանձնել գերուն: «Սպասե՛ք հարմար առիթի, քննել եմ, ստահակի մեկն է, գուցե պետք կգա փոխանակման հարցում,- ասել էր Թաթուլը»:

- Ինձ էլ են թարս աչքով նայում կարմիր բերետավորները,- ասաց Վարդանը,- բայց հավատ եմ ներշնչել, որ իրենց մասին հակասական տեղեկատվությունների տեղիք չեմ տա:

- Կկարողանա՞ս,- ընկերոջը նայեց Թաթուլը:

- Ճշմարտությունից չեմ շեղվի, դու դա լավ գիտես:

Ճշմարտությունը միշտ էլ դառնահամ է նրանց համար, ովքեր մի բան են ասում, անում են դրա հակառակը, հաջողացնում են թաքնվել մի այլ վարագույրի հետևում,- նկատեց Թաթուլը:

- Բայց թե օրերից մի օր բացահայտվում են,- մեկնաբանեց Վարդանը:

- Քաղաքականության մեջ այդ խաղն ավելի մերկացած է երևում,- իր նախորդ միտքը պնդեց Թաթուլը,- օմոնականների համարձակությունը չէր բավարարի, որ նրանք տեղահանեին Ազատ, Կամո, Կուշչի-Արմավիր գյուղերի բնակչությանը, օրը ցերեկով թալանեին և այլն:

- Պարզից պարզ է...

- Այո՛, շատ պարզ է, որ հաշտարարության նպատակով այստեղ հայտնված խորհրդային զորամիավորումները ճակատագրական պահին արանքից դուրս են գալիս, և նրանց զենքերով սպառազինված օմոնականները խուժան ամբոխի հետ իրականացնում են իրենց վաղեմի ցանկությունը:

- Դա կրկնվելո՞ւ է Գետաշենում,- հարցի պատասխանը հստակ իմանալով՝ Վարդանն այնուամենայնիվ ցանկացավ իմանալ ինքնապաշտպանության ղեկավարի կարծիքը:

- Վարդա՛ն, դու գիտես, որ ես ուղիղ եմ և չեմ թաքցնում իմ նկատառումները,- մտահոգ էր Թաթուլը, բայց ներսում այրվող ասելիք կար,- երեկ ռուս սպաների հետ ունեցած զրույցը տանում էր հենց դրան. որքան էլ որ գետաշենցիք աղուհացով են ընդունել նրանց, ամրակայելու տեղ են տվել կենցաղի տանը, զինվորները օգտվում են հիվանդանոցից, ապրում են գետաշենյան առօրյայով, միևնույնն է, վճռական պահին այս ենթաշրջանում նրանք անցնելու են Ադրբեջանի կողմը:

- Դաժան բան ես մտածում, Թաթու՛լ,- Վարդանը փորձեց մեղմել նրան, բայց իր բազում հանդիպումներով, լրագրողի իր թափանցիկ հայացքով նա նույնպես հակված էր այդ կարծիքին:

- Հենց այդ դաժան ճշմարտության մասին էինք քիչ առաջ փիլիսոփայում, Վարդա՛ն, եթե Գետաշենի ճիչը չհասնի մերոնց, շարունակվելու է Կուշչի-Արմավիրի ճակատագիրը,- անհանգիստ քայլեց Թաթուլը,- ոգին կա, զենք չունենք, բնականից ուժեղ ենք, զինվածություն չունենք: Պիտի միշտ հիշել, որ գործ ունենք Գետաշենի հետ, սա միայն բնակավայր չէ քարտեզի վրա, այլ պատմական կենսագրություն, հավատի տաճար, հույսի դարպաս դեպի Շահումյան և Արցախ, հնարավո՞ր է այդ հավատամքից հետ կանգնել:

Վարդանն իր զարմանքը թաքցրեց ժպիտի տակ, որ իր հիացմունքը պաթետիկ չթվար: Թաթուլի ոգու բաց ծրարը այնքան զուլալ լրիվությամբ պարուրեց իրեն, մոտեցավ, սեղմեց նրա աջը.

- Իսկականից Թաթուլն ես,- ասաց ու իր խոնավ աչքերը պայծառացան.

- Վարդա՛ն, ես չեմ գերագնահատում ոչ մի բան, ոչ էլ փակ աչքերով եմ խոսում,- նախկին տոնով շարունակեց նա,- դու բազմիցս եղել ես երկուստեք հանդիպումների, ծանոթ ես վիճելի հարցերին, չե՞ս զգացել, որ ադրբեջանցիները հակված են ընդամենը մի բանի՝ հայե՛ր, հեռացե՛ք, այլապես կստիպենք հեռանալ: Իսկ այդ պահերին խորհրդայիններն էլ եթե բառ չեն ասում, ապա գլխով հաստատ խորհուրդ են տալիս:

Այս զրույցը գուցե շատ երկարեր, եթե Լենան ծանրաբեռնված ներս չմտներ:

- Ճաշի ժամն է, շաբաթ օրով գոնե քաղցած մի՛ մնացեք,- մի կերպ դռներից ներս խցկվելով՝ ասաց նա և մտավ ճաշասենյակ:

Քիչ հետո եկան Արթուրը, Արշոն, Սմբատը, Արմենը, Սմբոն, Մակիչը, Հայկազը, Լեռնիկը: Լենան Տիգրանին փնտրեց, ասացին՝ եկեղեցում է, աշակերտական խմբերի հետ:

- Իր բաժինը պահեք,- հայրաբար ասաց Թաթուլը:

- Լենա մայրի՛կ, քո պատրաստած ճաշերը շատ համով են,- չդիմացավ Արթուրը:

- Ես ձեր ընդհանուր մայրն եմ, Արթո՛ւր ջան,- զգացվեց Լենան,- հավատացե՛ք՝ մեր ամբողջ գյուղն է այդպես, նրանք գնահատել գիտեն: Ո՞վ չի տեսնում, որ ձեզ նման ջահել-ջիվան տղերքը, երևանները թողած, եկել, նստել են թուրքերի դեմդիմաց:

- Ահա ձեր գնահատականը, տղե՛րք,- միջամտեց Թաթուլը,- ուրեմն էլ հարցեր մի՛ տվեք, ճաշի ժամ է:

Միջօրեից հետո խմբով գնացին եկեղեցի: Մերուժը չմոռացավ Տիգրանի բաժին հացը: Ճանապարհին՝ կենցաղի տան մոտից, մի ռուս զինվորական հեռադիտակով նայում էր նրանց կողմը: Երբ մոտեցան, ջերմորեն բարևեցին, Թաթուլին արդեն ծանոթ մայորը մոտեցավ:

- Ի՞նչ եղավ ադրբեջանցի միլիցիոները,- հարցը մեղմ էր, շարքային շղարշով: Թաթուլը որևէ բան չկասկածեց:

- Փրկել են կյանքը, կհանձնենք իր տերերին:

- Դա լավ եք անում, պետք չէ թշնամանալ:

- Կարծում եք՝ չի՞ կրկնվելու նրանց ոտնձգությունը,- ասաց Թաթուլը:

- Մեր խնդիրն է թույլ չտալ:

- Տա Աստված, ընկե՛ր մայոր,- ժպտաց Թաթուլը,- գնում ենք նորոգելու յոթերորդ դարի եկեղեցին, ձեր զինվորների համար էլ բացում ենք Քրիստոսի տան դռները:

- Մոմե՞ր պիտի վառենք,- ուրախացավ մայորը:

- Աստծո ականջին բոլորս էլ բան ունենք ասելու,- եզրափակեց Թաթուլը և ընկերների հետ առաջ անցավ:

* * *

«Դյուզի» բարձունքին Թաթուլն ու Մուշեղը ամուր գրկախառնվեցին: Մուշեղը հենց նոր հայրենյաց կարոտի շունչն էր բերել իր ուղղաթիռով: Բարակ անձրևի հետ, թվում էր, հույսի գզգզված տեսիլք էր թափվում մեքենայի ողորկ ուսերից: Թաթուլն ու Մուշեղը առանձնացան: Երկուսն էլ հարց ու տագնապ ունեին, իսկ տղաները սկսեցին բեռնաթափել:

- Նոր բան կա՞,- կարևոր լուրերի սպասումով հարցրեց Թաթուլը:

- Քո ուզածը, թեև քիչ, բայց բերել եմ, աննկատ պիտի տանեք, փաթաթել եմ պարազգեստների մեջ:

- Տղաները կկարգավորեն,- համոզված էր Թաթուլը,- իսկ եկեղեցու միջոցով մի քանի բան էլ ես էի խնդրել:

- Մի ծանրոց կա, բայց չհասցրին բերել եկեղեցու մեծ խաչը և չլրացրին որոշ հագուստների պակասը:

- Զարմանալի է, ինձ խոստացել էին,- ասաց Թաթուլը,- բայց հիմա դա չի կարևորը, Մուշե՛ղ,- մտահոգված էր Թաթուլը,- տե՛ս, եկան, չեն վստահում,- նա ցույց տվեց մոտեցող երեք զինվորականներին:

- Այդքան խստացրե՞լ են:

- Ամեն բան այստեղ ուշադրության կենտրոնում է հիմա, ես զգում եմ, որ իմ և մեր տղաների յուրաքանչյուր քայլ հսկողության տակ է,- ցածրաձայն ասաց Թաթուլը,- ինչ-որ հատուկ հանձնարարություն են կատարում, մեր շուրջը, համոզված եմ, թակարդ է հյուսվում:

- Վերջն ի՞նչ է լինելու,- հառաչեց Մուշեղը,- գիտե՞ս՝ լինել-չլինելու համարձակություն է նաև ուղղաթիռով հիմա հասնել Գետաշեն ու Մարտունաշեն: Աննկատ կրակում են, ոտքերիս տակ միշտ զգում եմ նենգության օձապտույտը, կապույտն ու սևը իրար խառնած՝ գալիս եմ:

- Հարազա՜տս,- այնքան հուզիչ ու եղբայրաբար արձագանքեց Թաթուլը,- քո սխրանքն Աստծո թևերին է, թող ամենակարողը անխոցելի դարձնի քեզ: Դու և քո պողպատե արծիվը, քո մյուս օդաչու ընկերները այս երկու գյուղերին հայրենաբույրից չզրկող միակ բանբերն եք, նրանց հույսը, հավատի ծրարը:

Մուշեղը չպատասխանեց, համաձայն էր ընկերոջ հետ, ոչինչ չասաց, լռեց, որ նրա բառերի համն ու հոտը շարունակեին ճամփորդել իր մեջ: Զինվորականները ինչ-որ հարցեր էին տալիս Արթուրին, Տիգրանը փորձեց միջամտել, գետաշենցի Ալեքս Զարգարյանը տաքացավ, թե չեք ուզում Հայաստանից գոնե մի քիչ մթերք հասցնեն այստեղ, կուշտը ինչ գիտի, թե քաղցածը ինչ վիճակում է:

Թաթուլն ու Մուշեղը հասկացան, որ վիճաբանությունը լրջանում է, մոտեցան:

- Գյուղական ուսուցիչն արդեն ուղղաթիռներ է ընդունում ու ճանապարհում,- նկատելի հեգնեց քաջածանոթ սպան:

- Գյուղի պահապան սպան ի՞նչ է որոնում բրնձի պարկերի և դպրոցական երգչախմբի համար բերված պարազգեստների մեջ,- այրող էր նաև Թաթուլի պատասխանը,- գուցե ատոմային ռո՞ւմբ

կա այնտեղ, ընկեր մայո՛ր,- հեգնելով եզրափակեց նա:

- Օրենք է, կարգադրված է ստուգել,- սառնորեն նետեց սպան:

Թաքուլն աչքի պոչով նկատեց, որ պարազգեստների կասկածելի փաթեթն արդեն մեքենայի թափքում էր՝ պարկերի և մթերքների արկղերի տակ, ձայնն ավելի բարձրացրեց.

- Եթե մենք միասին ենք Գետաշենում, իրար պիտի վստահենք, միակողմանի չպետք է լինել, բնակիչներն ամեն ինչ տեսնում են:

- Մենք սխալ բա՞ն ենք թույլ տվել, օրենքից շեղվե՞լ ենք,- ծղրտաց սպան:

- Եթե այն բացառիկ ուշադրությամբ, որով դուք զննում եք բերված բեռնաիրերը, ինքնաստուգման ենթարկեք արդար վերահսկողի ձեր բնույթը, համոզված եմ՝ օրենքից շեղումների կհանդիպեք:

- Մեր զրույցը, ուսուցի՛չ, միշտ հակասական է ստացվում, դուք մեղադրում եք ռուս մարդուն, որ այստե՞ղ է հայտնվել:

- Ո՛չ, սխալվում եք, ընկե՛ր մայոր, մեղադրում եմ հրաման արձակող այն ղեկավարներին, որոնց ձեռքին ընդամենը խաղալիք են այս զինվորները,- ակնհայտ էր Թաքուլի ըմբոստացումը: Մուշեղը փորձեց խաղաղեցնել նրան, ինքը միջամտեց:

- Ընկե՛ր մայոր, իրադրությունը դուք լավ եք պատկերացնում, Թաքուլը ռուս մարդուն ինչպե՞ս կարող է մեղադրել, այդ հարցում իզուր խճճումներ մի՛ որոնեք, խոսքը այն ծառայությունների մասին է, ովքեր Գետաշենում են, այնտեղ՝ Մարտունաշենի կողքին և երբեմն չեն կարողանում վերահսկել, թույլ չտալ օմոնականներին այդքան սանձը կտրած լինել:

- Լա՛վ, վերջացնենք: Ընկեր մայո՛ր, հավատացե՛ք՝ մենք վիճելու, իրար մեղադրելու ավելորդ պատճառներ չունենք,- ասաց Թաքուլը և մոտեցավ բեռնատարի առջև հավաքված ընկերներին.

- Ամեն ինչ կարգի՞ն է:

- Իհարկե՛,- պատասխանեց գետաշենցի Քոլանյան Միշան,- մենք կարող ենք շարժվել:

- Սպասենք, թող զինվորը դուրս գա, մտել է ուղղաթիռի խցիկը, հետո կիջնենք,- կարգադրեց Թաքուլը և դարձյալ մոտեցավ մայորին:

- Մեզ վստահե՛ք, քրիստոնյա ուսուցիչը սպային չի խաբի, մեզնից ով ինչ էլ անի, Աստծո աչքերի առջև է, թող նա էլ դատի մեղավորին,- կեսկատակ ասաց Թաքուլը:

- Ուսուցիչը շատ չի՞ մերձեցել կրոնին,- մեխանիկորեն ժպտաց սպան,- մի օր եկեղեցի է վերակառուցում, առաջարկում է մեզ մոմեր վառել, հիմա էլ քրիստոնեական դասեր է տալիս, Հայաստանից խաչեր է բերում:

- Ուրա՞խ չեք, որ զենքերի փոխարեն խաչեր ենք բերում, բայց դրանց հասկացրեք,- Թաթուլը ձեռքով ցույց տվեց Խանլարի կողմը,- որ մեր խաչերը իրենց զենքերից ուժեղ են:

- Լավ չեք գնահատում իրադրությունը, քարտեզին նայել է պետք,- բազմանշանակ պատասխանեց մայորը, զինվորներին նշան արեց՝ հետևեն իրեն, ու ինքը գնաց առջևից: Մի քանի քայլ հետո նա կանգնեց և խոսքն ուղղեց թղթակից Վարդանին.

- Ամեն բանի մասին պետք չէ գրել, առավելապես նկարահանել:

- Պատմությունը կեղծել չի լինի, բայց այս սովորական դրվագը գալիք ուսումնասիրողին արժեքավոր բան չի տա, ընկեր մայո՛ր,- ծիծաղեց Վարդանը,- առանձնապես ամաչելու բան չի եղել:

- Ես էլ այդ կարծիքին եմ,- եզրափակեց սպան, և իր ենթակաների հետ արագ-արագ հեռացան:

Շտաբում ճամպրուկները բացելիս Թաթուլը հասկացավ, որ ինչին ինքը սպասում էր, չի ուղարկվել: Ընդամենը երեք ինքնաձիգ՝ առանց փամփուշտների, մեկ տասնյակի հասնող փոքրիկ խաչեր, պակաս-պռատ պարահագուստներ:

Թաթուլը հրավիրեց բոլոր տղաներին, խոժոռված էր, անհանգիստ: Ոչ այնքան սպայի զրույցն էր ազդել իր վրա, որքան այն, որ ուղղաթիռները գրեթե չէին բերում պաշտպանության համար ամենակարևորը: Թաթուլը կռահում էր, որ շուտով այս եզակի հնարավորությունն էլ չի լինի, թույլ չեն տա, որ Գետաշենի միակ երակը կապված մնա Հայաստանին և Արցախին:

- Տղանե՛ր, իմ խնդրածը չի գալիս, տեղ չի հասնում, չգիտեմ՝ ինչն է պատճառը,- խմբի առաջ նկատելի խռովքով նստած էր Թաթուլը: Ներկա էր «Ալաշկերտի» Հրաչը, նա նույնպես մտահոգ էր, հասկանում էր մարտական ընկերոջ տագնապը, որովհետև գյուղի ներքևի թաղամասում, որտեղ իրենք էին հսկում, ամբողջ գիշեր լարվածության մեջ են, զինամթերքը, ինչ-որ հայթայթել են, վճռական պահերին չնչին է:

- Մուշեղը մեկ ժամից վերադառնալու է, այսօր ուրբաթ է, շաբաթկիրակի օրերը առջևում են,- գործնական ասաց Թաթուլը,- քանի որ դպրոցին առնչվող խնդիրներ չունեմ, ես այսօր կթռչեմ, կվերադառնամ կիրակի օրը:

Խմբվածները զարմացական նայեցին իրար, բայց առաջինը Արթուրը հարցրեց.

- Միանգամից և այսպես կտրուկ որոշո՞ւմ, Մուշեղն ասաց՝ այսօրվա թռիչքը վտանգավոր է:

- Արթուր ջա՛ն, եթե Մուշեղի համար վտանգավոր է, ուրեմն ես նրա ընկերն եմ,- բարեկամաբար ասաց Թաթուլը,- ձեր բոլորի համար այստեղ վտանգավոր չէ՞: Ես պիտի գնամ, շատ կարևոր բաներ ունեմ բերելու, դուք ինձ հասկանում եք, երևում է՝ մինչև չգոռաս, ձայնի ուղղությամբ չեն նայի:

Թաթուլը դուրս եկավ, ասաց՝ Լենային պիտի հանդիպեմ, քիչ հետո կգամ: Մուշեղի հետ կապը անմիջապես ստացվեց, խոսեցին: Լենան զգում էր, որ Թաթուլը նյարդայնացած էր, համոզում էր Մուշեղին, նա էլ այն կողմից, հավանաբար, մերժում էր: Բայց Թաթուլի համառությունը հնարավո՞ր էր կոտրել: Համաձայնեցին:

- Լենա մայրի՛կ, ես գնացի, եթե կապի ընթացքում կարևոր հարցումներ կլինեն, պատասխանողներ շատ կան, կգտնես, կմիավորես, ասաց ու դուրս եկավ:

Տղաները շտաբից իջել էին բակ, որտեղ մի առանձին աշխուժություն էր: Մերուժը եկել էր տասը ձիերով՝ թամբերին գյուղի երիտասարդ հեծյալներ՝ 17-18 տարեկան տղաներ, փողոցի եզրին շարվել էին այնպես, ասես գրոհի հրամանի էին սպասում:

- Մերո՛ւժ, այրուձիդ պատրա՞ստ է,- բացականչեց Թաթուլը՝ տեղի տալով ճնշող մռայլությանը,- խոսքդ կատարեցիր, ձիերը Տերոնց տներում պահեք, ես արդեն խոսել եմ այնտեղ ապրող մեր տղաների հետ:

Նա, խոսքը չավարտած, մոտեցավ ջահել, կորովի հեծյալներին, նրանց ձեռքերը մեկ-մեկ սեղմեց, քաջալերող խոսքեր ասաց, հետո չդիմացավ.

- Պիտի կռիվ տանք, տղե՛րք, ապացուցենք, որ Գետաշենը նաև Ոգեշեն է, այս գյուղը թշնամուն միշտ դաս է տվել: Մենք էլ ապացուցելու բան պիտի ունենանք:

Այնքան ջերմացան ջահելների սրտերը, այդքան մոտիկից չէին լսել նրան: Թաթուլի խոսքերը հրդեհել էին նրանց վառվռուն աչքերը, պահը օծման ծեսի էր նման: Իսկ ձիերը անհանգիստ դոփում էին, տղաները ձգել էին սանձերը: Մերուժը աննկատ նշան արեց, ձիերը սանձակոտոր պոկվեցին, թվաց՝ Չիլինգարյանների թաղամասից մի ամբողջ երամակ է սլանում՝ սմբակների տակ տրորելով չարություն ու կասկածանք:

Թաթուլն ու Հրաչը կողք կողքի քայլեցին, թե ինչի՞ մասին էին զրուցում, ոչ ոք չիմացավ: Այդ ամենը տևեց հինգ-յոթ րոպե: Հետո նրանք գրկախառնվեցին: Մոտեցան Արթուրը, Տիգրանը, գետաշենցի որսորդները, Եղիշ դային, Մակիչը, Արշոն: Հավաքվեցին, լրջացան:

Թաթուլը երկու օրով թողնում էր Գետաշենը: Ճանապարհում էին, գիտեին, որ հեշտ չէ այդ թռիչքը, հասկանում էին նաև, որ Թաթուլի որոշումը անխուսափելի էր:

Վերջում, երբ Թաթուլը մոտեցավ «Վիլիսին», նրա դեմհանդիման դուրս եկան Լենան և դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի Ժաննան:

- Ժաննա՛, ինչ լավ է, որ դու էլ ես այստեղ,- սրտանց ուրախացավ Թաթուլը,- պարահագուստները, եկեղեցու համար բերված մյուս պարագաները խնդրում եմ տուն տանեք, Ղազարյանին հաղորդեք, որ իր պատմության ուսուցիչը երկուշաբթի օրը դասերից չի ուշանա:

- Թաթո՛ւլ, քեզ լավ պահիր,- գրեթե միաբերան ասացին Լենան ու Ժաննան,- Մուշեղը սպասում է,- ավելացրեց Լենան,- մեր բարևները տար Հայաստան, Ասպրամիկիդ իմ փոխարեն կհամբուրես:

- Շնորհակալ եմ,- ասաց Թաթուլը,- տղանե՜ր, մինչև կիրակի:

«Վիլիսը» սլացավ «Դյուզի» հարթակը:

* * *

Միջօրեից հետո արևը Մռավ սարից անցել ու գնում էր տիրաբար: Աշնան ավազանը վերից վար, կապույտ-դեղինի համադրություն էր: Ուղղաթիռի խցիկում հիվանդներ էին, հիմնականում կանայք, երկու տղամարդ էին ուղեկցում նրանց: Ընդհանրապես չգրված օրենք էր հաստատված Գետաշենում, գյուղից թույլ չէին տալիս տղամարդկանց բացակայել: Այսօրվա բացառությունը կապված էր լուրջ հիվանդների հետ, որոնց բուժումը հնարավոր չէր իրականացնել Գետաշենում:

Թաթուլը հիշեց Լենայի խոսքը՝ Ասպրամիկիդ իմ փոխարեն կհամբուրես: Այդ մտերիմ բառերը նորից վերակերտեց խուռն ու սլացիկ մտքերին, որոնք նրան հունից հանել, ուղղաթիռից ավելի արագ էին ճախրում: Կլոր լուսամուտին բավական մոտիկ երևում էին լեռնալանջերը, ձոր ու անտառ: Մուշեղը հաստատ գիտեր, որ աշնան այդ ոսկե գույների տակ նենգություն էր թաքնված: Պատահական մի ազերի կարող էր ինքնաձիգից կամ այլ հրազենից կրակել: Ժամանակներն էին այդպիսին, չէր գործում խորհրդային երբեմնի օրենքը, իրարահան էր եղել կապկպած վստահությունը, ով ինչպես կարող էր, տնօրինում է իր օրն ու անելիքը: Իսկ թռչող մեկ-երկու ուղղաթիռները գրեթե ծուղակի մեջ հայտնված Գետաշեն-Մարտունաշենի շրջանի միակ օդային կամուրջն էին հաստատում: Ներքևում հինավուրց ճամփա-արահետները դարձել էին վտանգավոր, ամեն ոլորանի վրա կարող էին հայտնվել զինված

ավազակներ, օմոնականներ, «օրենքից բխող» անցակետեր, որոնք վերահսկում էին խորհրդային զինվորները՝ կատարելով Սաֆրոնովի և Պոլյանիչկոյի ամենախիստ ցուցումները:

Այդ տխուր քարտեզի մանրամասները Թաքուլի աչքերի առջև էին: Նա հանգիստ նայում էր դեղին հրաշքին, որը մեծ օվկիանի ահեղ գունախաղով ալեկոծվում էր իր ոտքերի տակ: Թաքուլը հետևում էր նաև Մուշեղի շարժումներին, նրա դեմքի արտահայտությանը, դրանցով փորձում էր նժարել երերուն շրջապատի բնույթը, իր տարագույներին գերի դարձած հող ու երկնքի միամիտ ու անմեղ խորթությունը, նաև այնքան մոտիկից հասկանալ հույզի տարածական տագնապների և սպասումի անորոշ գայթակղության շոշափելի ներկայությունը:

Ցածրիկ լեռնաշղթաներից ներքև երևացին շենքեր, որոնք կարծես թաքնված էին թավուտ անտառների փոքրիկ բացատներում: Մուշեղը դեռ հեռվից մտածված շեղվեց դեպի ձախ՝ խուսափելով կասկածելի բնակավայրից: Այս տեղանքը նրա համար նորույթ չէր, նայեց Թաքուլին, ժպտաց: Դա նշան էր, որ ամեն ինչ կարգին է, բայց ինքը գիտեր, թե ինչ որջ է երևացող անտառափեշին: Ներքևից լսվեց խուլ կրակոց: Մուշեղը սպասում էր դրան, որովհետև նույնը կրկնվել էր այսօր Գետաշեն տանող օդային ճանապարհին: Իսկապես ուղղաթիռին շատ մոտիկ անցան գնդակներ, որոնց անդուրեկան շվվոցը լսվեց խցիկում: Կանանցից մեկը ուշագնաց եղավ, ուղեկցող տղամարդը երկնագույն սրվակից ինչ-որ հեղուկ մոտեցրեց շնչելու: Նա բավական ուշ ուշքի եկավ: Թաքուլն արդեն հիվանդների մոտ էր, քաջալերող բառեր ասաց, գովեց Մուշեղին, որ նա անխոցելի է, սրտապնդվեք, մի քանի րոպեից Երևանում կլինենք: Բայց թե վախը կանանց աչքերով սողոսկել էր ուղղաթիռի ներսը: Առանց այն էլ հիվանդները թույլ էին և այդ չարաբաստիկ կրակոցներից միանգամից վատացան: Խցիկում լսվեց Մուշեղի ձայնը: Նա օդաչուական խոսափողով հանգստացնում էր խուճապի մատնված կանանց և հորդորում դիմանալ ևս տասը րոպե, «էրեբունիում» արդեն սպասում են շտապ օգնության մեքենաները:

Թաքուլը վերևից նկատեց Սևանա լճի կապույտ հայելին, թերակղզու բարձունքի եկեղեցիները ընդգծված երևացին, ապա ծածկվեցին գունաթափ մշուշով: Ուղղաթիռը միալար հռնդյունով, ինչպես հսկա արծիվ, մղվում էր առաջ: Վերևից նկատելի էր, որ մեծ ու փոքր ճամփաները տարբեր կողմերից երակների պես ձգվում էին դեպի մայրաքաղաք: Մի պահ Սևանը Թաքուլին պատկերա-

ցավ որպես համաժողովրդական մեծ սիրտ, որին բոլոր կողմերից մոտենում էին հույսի, բարու երազային զարկերակները: Այն ուղղաթիռն էլ, որի մեջ նաև ինքն էր, օդային ամենաբարդ ուղին էր կծկում, մշուշոտ զարկերակներից մեկն էր, որ ժողովրդի ոգու հևքն ու դիմակայելու ավյուն-արյունն էր հասցնում Գետաշեն:

«Էրեբունիում», իրոք, կանգնած էին շտապ օգնության մեքենաները: Թաթուլն առաջինը իջավ, նախ շնորհակալություն հայտնեց Մուշեղին, ամուր գրկեց նրան և բաժանվելուց առաջ ասաց.

- Մինչև կիրակի, ինձ նկատի ունեցիր:

- Ես կլինեմ, թե մեկ ուրիշը, քո տեղը հիմնական է, եղբա՜յր,- գորովանքով ասաց Մուշեղը:

Նրանք բաժանվեցին՝ չիմանալով, որ ինքնաքննարկման խոստովանանքի առագաստին իրենք էին. Մուշեղը երկար ժամանակ Թաթուլի հետ էր, ամեն հանդիպումից հետո այս երիտասարդի մեջ դասական նոր գծեր էր հայտնաբերում, անձնուրացության այնպիսի հատկանիշներ, որոնցով պատմությունն ու ժողովուրդը սիրով զուգում են իրենց մեծ հերոսների վարքը կերտելիս:

Թաթուլն էլ այս ծանր թռիչքից հետո բազմապատկեց Մուշեղ-օդաչուի մասին իր փայփայած լեգենդը: Այս հաճելի գումարելիները ընկերոջ և հիանալի մարդու մասին դարձյալ ի մի բերեց այս անգամ շտապ օգնության մեքենայի մեջ: Իր գնահատումներում զգացմունքը չնչին էր, բանական խորքերով էր նա ամբողջացնում նրա պայծառ բնավորությունը, դիմագծերը, կախարդիչ ու զննող աչքերն ու հայացքը, նրա առյուծ սիրտը, թևավոր թալիսմաններով զարդարուն նրա հոգին: Շտապ օգնության մեքենայի աթոռակին նա այսպես խորացել էր ինքն իր մեջ, դուռ ու երդիկ էր բացում, առաջիկա կարճ ժամանակամիջոցի ծրագիրն էր մտմտում, գիտեր՝ ում պիտի հանդիպեր, իր դժգոհությունն ու պահանջն ուներ, իր ասելիքը չափ ու ձևի էր բերում, որ չվիրավորեր, շատ չմեղադրեր: Բայց առաջին հերթին Գետաշենից այստեղ հասած այս հիվանդներին պիտի տեղավորեր, հանրապետական հիվանդանոց պիտի գնար, հանդիպեր գլխավոր բժշկին: Դա առաջին գործն էր, այդպես էլ վարվեց:

Մեկ ժամից, երբ արդեն ազատ էր, դրսում ավտոմատ հեռախոսներ չգտավ, ուզում էր Ռուզանին զանգահարել: Սայաթ-Նովա-Աբովյան պողոտաների խաչմերուկում սրճարանը բաց էր, ներս գնաց, մի գավաթ սուրճ խնդրեց և հեռախոսից օգտվելու հնարավորություն: Մատուցողը հոգու խորքերով ժպտաց: Թաթուլի չսափրված դեմքը,

աչքերի փայլը լուսարձակեցին աղջկա հոգին, նրան թվաց՝ Աստծո կողմից է նա հայտնվել:

- Մինչև սուրճ կպատրաստվի, կարող եք օգտվել հեռախոսից,- ասաց նա և ընդարձակ սրահը շրջանցելով՝ Թաթուլին ուղեկցեց վարիչի առանձնասենյակ:

Սեղանին հակված պատկառելի դեմքով, սպիտակահեր տիկինը նույնպես սիրալիր ընդունեց Թաթուլին: «Այսքան խառը Երևանում նման ջերմություն»,- զարմացավ Թաթուլը: Լսափողը վերցրեց, արագ հավաքեց քրոջ հեռախոսահամարը:

- Ալո՛,- Ռուզանն էր:

- Ռուզա՜ն,- նկատելի քնքշությամբ ասաց Թաթուլը:

- Թաթո՜ւլ, որտե՞ղ ես,- այնպես ճչած քույրը, որ սենյակում պարզ լսվեց նրա ձայնը:

- Այստեղ եմ՝ Երևանում,- հանգիստ շարունակեց եղբայրը,- Գետաշենից մեկ ժամ առաջ ուղղաթիռով եմ եկել:

- Ե՞րբ ես տուն գալու:

- Հանդիպումներ ունեմ, կարևոր հարցեր կան, քիչ ավելի ուշ կգամ,- պատասխանեց Թաթուլը և կախեց լսափողը:

- Գետաշենի՞ց եք եկել,- հարցրեց վարիչը և մատուցողին առաջարկեց սուրճը հրամցնել իր առանձնասենյակում: Թաթուլը շնորհակալությամբ համաձայնեց՝ զգալով, որ տիկնոջ բարեսրտությունն անկեղծ էր:

- Գետաշենի ու Մարտունաշենի մասին շատ խառը զրույցներ են պտտվում,- տխուր հայացքը հառելով Թաթուլին՝ ասաց տիկինը:

- Ինչպիսի՞ խառը,- հարցին հարցով փակեց Թաթուլը:

- Ասում են՝ բոլորը հուսահատված են, փրկություն չկա, ամեն օր զոհեր կան:

- Տիկի՛ն, չվիրավորվե՛ք, ձեր այդ տեղեկատվությունը կեղծ է,- մռայլվեց Թաթուլը և սուրճի գավաթը հետ հրեց:

- Շահումյանից փախստականներ կան մեր թաղամասում, նրանք կապեր ունեն,- արդարացավ վարիչը,- ես ընդամենը նրանց խոսակցությունն եմ կրկնում, մի՛ վրդովվեք:

- Վատ կրկնություն է,- ոտքի կանգնեց Թաթուլը,- ես այնտեղից եմ գալիս, զոհերի մասին ավելորդ է խոսել, Գետաշենը կա, այդպես խոսելու փոխարեն պիտի ամրանային, աջակից լինեին իրար, ոչ թե Երևանում տաքուկ տեղ փնտրելուց հետո զբաղվեին սուտ լուրեր տարածելով,- եզրափակեց նա, շնորհակալություն հայտնեց հեռախոսակապից օգտվելու համար և նեղսրտած հեռացավ:

...Ուշ ժամին Ռուզանը դռների մեջ վերջապես տեսավ եղբորը և վզովն ընկած՝ լուռ հեկեկաց:

- Ռուզա՛ն,- Թաթուլը մտերմաբար սաստեց քրոջը,- փոխանակ ներս հրավիրես, թույլ տաս Սամվելին բարևեմ, զարմիկներիս կարոտն առնեմ, դու միամիտ լաց ես լինում:

Նրանց ձայնից մուտքի դռան կողմը վազեցին Մարինեն, Կարինեն, Հովհաննեսը:

- Քեռի՜,- ճչացին ու շուրջկալի մեջ վերցրին Թաթուլին:

Սամվելի հետ հանդիպումը պատշգամբում նույնպես սովորական չէր: Կարոտը ընդգծված էր, հանդիպումը՝ ջերմ: Հարևանները ներս եկան, նրանք նույնպես իրենց բաժինն ունեին Թաթուլից, որը չորս տարի տաք գույներով, երգ ու պարով էր հաղորդակցվել շենքի բնակիչներին: Հիմա, երբ նա եկել էր Գետաշենից, հետաքրքրության խտացված խորհուրդն առաջ էր ընկել, հարևանները, ծանոթները ուզում էին մոտիկից տեսնել, լսել նրան, ով առաջին գծից է վերադարձել, ում անվան հետ արդեն թևավոր զրույցներ էին տարածվել քաղաքում: Թաթուլն այդ թևավոր պատումները երկնքից ցած բերեց, խոսեց այնքան հողեղեն, հարազատ ու մտերմիկ՝ գնահատելով բոլոր նրանց, ովքեր բնավորված են Գետաշենում, ովքեր, զենքը ձեռքին, չեն լքում այդ դրախտավայրը:

...Գիշերը սահում էր դեպի լուսաբաց, բայց հին սովորությամբ քույր ու եղբայր քնած չէին: Ռուզանը համոզվեց, որ Թաթուլը մնացել էր նախկին ինքնամոռացը, դեռ ավելին՝ իր առջև կանգնած էր հանուն նպատակի այլևս ոչ մի խոչընդոտ չճանաչող հասուն տղամարդ: Ընդամենը երեք ամիս չէր տեսել նրան, բայց այնքան պինդ ու առնական էր դարձել: Հասկանում էր նաև, որ նա տանջող խնդիրներ ունի, ուզեց հարցնել, հետաքրքրվել, բայց Թաթուլը թեև նկատելի խուսափեց մանրամասն բացատրելուց, սակայն հանկարծ պոռթկաց, չհամբերեց.

- Ռուզա՛ն, շատ ես ուզում իմանալ, ասեմ կոնկրետ,- նրա աչքերում բոցկլտացին զայրույթի ջահերը,- զենք է պետք պաշտպանվողին, որ նա հարկ եղած դեպքում կռվող դառնա: Պաշտպանվողները, մեկ է, մի օր ներքաշվելու են կռվի մեջ:

- Չե՞ն տալիս, թե՞ չկա,- միամիտ հարցրեց Ռուզանը:

- Ուշ գալուս պատճառը դրա հետ էր կապված. հանդիպեցի համապատասխան ընկերների, պայմանավորվել ենք, պիտի ճարվի, տղաները սպասում են: Այստեղ էլ մեղք չունեն, ամեն տեղ լարվածություն է:

- Ո՞նց ես տանելու,- անհանգստացավ Ռուզանը:

- Սիրելի քույրիկիս այդպիսի հարցերում այլևս պատասխան չունեմ,- ժպտաց Թաքուլը,- խոսիր մերոնցից, ի՞նչ կա գյուղում, Իրինան դիմանո՞ւմ է, մեծացե՞լ է Ատամիկս...

- Մեկ շաբաթ առաջ եմ եկել, ամեն ինչ կարգին է, քո հրաշք Ատամիկ-Ասպրամիկը թմբլիկ աղջիկ է, ութ ամսական,- ուրախ-ուրախ ներկայացրեց Ռուզանը և ավելացրեց,- գյուղ չե՞ս ուզում գնալ:

- Մեկ օր ժամանակ ունեմ, բայց պիտի հասցնեմ, հիմա փակվում են աչքերս,- ներողություն խնդրեց, բարի գիշեր ասաց ու մտավ իր ննջասենյակը:

Վաղ առավոտյան նա արդեն ոտքի վրա էր: Ընկերոջը՝ սուրենավանցի Արմենին, տեղյակ էր պահել, որ շաբաթ օրը իր սեփական մեքենայով լինի Ս. Սարգիս եկեղեցու բակում էջմիածին և Արեգ գնալու համար: Նշանակված ժամին Թաքուլն ու Արմենը հանդիպեցին: Երեք-չորս ամիս իրար չէին տեսել, կարոտով ողջագուրվեցին, կարճ հարց ու փորձ արին և մեքենան սլացավ էջմիածին: Թաքուլն ամբողջ ճանապարհին չդադարեցրեց հարցերը, նրան հետաքրքրում էին համալսարանի իր ֆակուլտետը, չորրորդ կուրսեցիները, սիրելի դասախոսները, նա ուզում էր ամեն ինչ իմանալ մանրամասնորեն: Արմենը ինչ-որ գիտեր շարադրում էր հանգամանալից, որպեսզի կարողանար բավարարել ընկերոջ հետաքրքրասիրությունը:

Էջմիածնի մայր եկեղեցում երկար չմնացին, այստեղ Թաքուլին խոստացան Գետաշենի եկեղեցու գմբեթի համար մեծ խաչ և միջին ծավալի զանգ նվիրել: Պայմանավորվածությունը կիրակի ժամը 10-ի համար էր: Իսկ Թաքուլը գիտեր, որ ուղղաթիռը ժամը 12-ին էր մեկնելու Գետաշեն:

Արեգի ճանապարհը դեռ այսքան երկար չէր թվացել: Թաքուլը, սովորաբար, գյուղ էր գնում Աշտարակով: Այսօրվա ուղերթը Հոկտեմբերյան-Քարակերտ-Արտենի-Արեգ գծով էր: Արտենիով անցնելիս ուսանող ընկերները այնքան ջերմությամբ և ընդգծված հպարտությամբ խոսեցին հայ ժողովրդի պատմության իրենց հիանալի դասախոսի՝ Արտավազդ Դարբինյանի մասին: Արեգցի Ժորա Դարբինյանը վաղուց բնակվում էր այստեղ, բայց ինչպես ինքը, այնպես էլ նրա գիտնական որդին՝ Արտավազդը, հոգեկան պայծառ կտավներով ձուլված են Արեգի կենսագրությանը, Արտին սարի խորհրդի առջև իրենց մեծ տոհմի անունից խաչ ու երդում ունեն և հուսո ջահեր՝ լեռան գագաթին:

Այս խոստովանանքը Թաքուլի սրտից էր, նրա հպարտության

ծաղկումը, համոզված էր, որ չէր թառամելու երբեք:

- Արմե՛ն, այնտեղ էլ՝ Գետաշենում, մեր դասախոսների ոգեբույր ուժն ինձ հետ է,- ազնվորեն խոստովանեց Թաթուլը,- այնտեղ ես լիովին հասկացա, թե նրանք ի՞նչ հայրենասիրությամբ կարող են լիցքավորել մեզ, կախարդել: Ամեն քայլափոխի ես զգում եմ նրանց ներկայությունը, հեռվից հեռու ինձ խորհուրդ են տալիս, կողմնորոշում են, պատմության իմ դասերին նրանց շունչն իմ մեջ է: Հիշում եմ՝ ի՜նչ խանդավառությամբ էին խոսում հատկապես ազգային-ազատագրական պայքարին վերաբերող իրադարձությունների, պատմական անցքերի մասին կամ նշանավոր հերոսների կերպարները բնութագրելիս:

- Չեմ մոռացել, Թաթո՛ւլ,- ոգևորված էր նաև Արմենը,- մոռացե՞լ ես, որ ես դեռ սովորում եմ, մեր կուրսից միայն քեզ բաժին ընկավ այս դաժանությունը, հիմա ծայրահեղորեն ուրիշ կարգավիճակի մեջ ես:

- Ընկերոջս՝ Արմենին, այսինքն՝ քեզ, հավատա՛, չեմ ուզում կորցնել,- Թաթուլի ձայնի երանգը միանգամից փոխվեց,- դու իմ սրբազան սկզբունքներին հակառակ բան ես ասում:

- Թաթո՛ւլ, քեզ պաշտում եմ, մի՛ վիրավորվիր:

- Ուրեմն, նախ իմ նպատակը պաշտիր և հետո օրվա դասերից զատ՝ իմացիր՝ ինչ է կատարվում շուրջդ: Քո հիշեցրած այդ կարգավիճակով և իմ ցանկությամբ ես հիմա այնտեղ եմ, ուր դարերի պատմություն շալակած մի չքնաղ շեն կա, չորս հազար շունչ կառչել, չեն ուզում լքել պապենական օջախը, պապենական գերեզմանը, պապենական տաճարների աղոթքը: Այսօր ես նրանց հետ եմ, վաղը՝ նույնպես, գուցե հավերժ...,- մի քիչ լռեց, ապա մեղմաձայն շարունակեց,- Արմե՛ն, սա ուրիշ հեքիաթ է, նրա հերոսները այս պահին այնտեղ են, սա լուրջ տղամարդու գործ է, մի՛ վրդովվիր, բայց իմացիր, որ էդ քո ասած իմ բաժին դաժանությունը ես եմ ընտրել, ուզո՞ւմ ես երկուշաբթի օրը գնամ նստեմ դասի, «Սկվազնյակում» էլ կեսօրից հետո սուրճ ու գարեջուր խմեմ, ամեն օր ծնողներիս կողքին լինեմ, փառք Աստծո, չորս եղբայրներիս ու քրոջս աջակցությունը կզգամ, տիկնոջս և ութ ամսական դստրիկիս կպահեմ իմ հովանու տակ և հետո քթիս տակ ինքս ինձնից գոհ կերգեմ «թագավոր լինելուց լավ բա՞ն...»:

- Թաթո՛ւլ, սովորական խոսքս այսքան կրակի՞ արժանացավ:

- Վառման խարույկների մոտ պետք չէ կրակով զարմացնել, հրդեհը իր բոցից չի խրտնի, հասկացա՞ր, եղբա՜յր,- վերջին բառե-

ը Թաթուլը մտածված երկարացրեց, մտերմիկ ու խաղաղ ժպտաց՝ հասկացնելով՝ Արմե՛ն, քեզանից վրդովմունք չունեմ, քշիր:

Արեգում Թաթուլի վերադարձի ամեն մի օր միշտ էլ յուրատեսակ բնույթ էր ստանում: Ընդհանրապես, այս գյուղն իր մարտնչող զավակներին առանձնահատուկ էր վերաբերվում, մոտենում էին, հարցնում, քննում, ավելի շատ չիմացած բաներով հետաքրքրվում: Թաթուլը Գետաշենից էր եկել: Սա արդեն ուրիշ խոսակցություն էր, թեժ կետերի մասին տարաբնույթ տեղեկությունները սփռվել էին ամենուրեք, իսկ Թաթուլը հենց այդ այրվող հորիզոններից էր իջել:

Տանը ցնծության ալիքն այնպես ծփաց, որ գյուղի կեսն արդեն այստեղ էր: Այս անգամ փոխվել էին երանգները, երկյուղածության և ափսոսանքի շերտերը նստած էին հարազատների աչքերում, նրանք և՛ ուրախ էին և՛ տխուր:

Թաթուլը մեկ առ մեկ գրկեց, համբուրեց ծնողներին, եղբայրներին ու նրանց զավակներին, կարծես մի քանի տարի չէին տեսել իրար: Հետո դռների մեջ երևաց Իրինան՝ գրկում թռվռացող, ժպտուն Ասպրամիկը:

- Էս հրաշքներն ո՞ւմն են,- հրճվանքի խուրձը բառերի հետ ժայթքեց, նա արագ ընդառաջ գնաց, համբուրեց կնոջը, ապա նրա գրկից առավ Ասպրամիկին, սեղմեց կրծքին, անուշ-անուշ համբուրեց:

- Ատամի՜կս, Ասպրամի՜կս, մեծացել է առանց հայրիկի,- հոգում ծաղկեց շիկնանքի կեսօրը, այտերը կարմրեցին, նայեց հորը, ամաչեց, դարձավ դեպի Իրինան,- ինչպե՞ս է զգում իմ գյուղական ուսուցչուհին:

- Այդ ուսուցչուհին դեռ արձակուրդի մեջ է, երեխա է մեծացնում,- անթաքույց սիրով պատասխանեց Իրինան:

- Ա՜, ես մոռացել էի, խորհրդային օրենքը այդ հարցում դեռ գործում է,- ծիծաղեց Թաթուլը, երեխային գրկած՝ գնաց, նստեց Սեդա մայրիկի դեմդիմաց:

- Աչքերիդ մեջ հոգնություն կա,
Բարի ժամիս, մայրական սեր, ժամտա, մայրի՛կ,
Քո աչքերով այս աշխարհի խիղճը պիտի
Արդարության ձայնով խոսեր,
Մայրի՛կ, այսօր հույսով ժամտա՛...

Հանպատրաստի ձոնը Թաթուլը նվիրեց մորը, համբուրեց նրա ձեռքերը, հետո՝ Ասպրամիկի: Երեխան ձգվեց դեպի մայրը:

- Ես ու դու տխրությունը չէինք սիրում, Իրինա՛,- Թաթուլը վերագտավ իր տրամադրության խոյընթացը,- երևի մենակությունը

քեզ տխրության դասեր է տվել:

- Աստված տնից-տեղից հեռու տանի տխրությունը, տղա՛,- բամբ ձայնով միջամտեց հայրը՝ Ժորան,- ոչ մեկիս համար էլ հեշտ չէ, երբ դու տանը չես, առավելապես իմ հարսի:

Իրինան շոյվեց սկեսրայրի խոսքից, մեղմորեն պայծառացավ: Ընտանիքի հավաքական տրամադրությունը հրամայեց նրան շրջանցել անձնական մորմոքները: Թաթուլի անակնկալ վերադարձը մեծ ուրախություն էր արթնացրել նրա սրտում, սակայն տնեցիների ներկայությամբ իրեն պահում էր զսպված, նույնիսկ ժպտում էր, ծիծաղում, Ասպրամիկին էր խոսեցնում:

- Հայրիկն է եկել, Ասպրամի՜կ, քո հայրիկը:

Աղջնակը միայն գեղգեղում էր, մեկ-մեկ ծիծաղի ցոլք շաղում դեմքին՝ արժանանալով ներկաների բացականչությանն ու հիացումին:

Բակում հավաքվել էին Թաթուլի ընկերները, իրենից մեծերն ու փոքրերը: Նա եղբայրների հետ դուրս եկավ: Խոսակցության թեման Գետաշենի ենթաշրջանի իրադարձություններն էին: Թաթուլը չզարմացավ, որ շատ մանրամասներ այստեղ գիտեին, բայց իրենից ավելին էին ուզում իմանալ: Նստեցին բակը երիզող պատի շարուկին, Թաթուլը ներկայացրեց վիճակը: Բոլորը լռեցին, Սերգոն անհանգստացավ.

- Մեն-մենակ, մի գյուղով ինչպե՞ս եք դիմանալու:

- Կդիմանա՛նք, միայն թե դու, Մանվելը, մյուս տղաները, ում որ պատվիրել եմ, չմոռանաք իմ ասածը, Մուշեղին հանձնեք, կբերի, կհասցնի:

- Ո՛չ տանկ ունես, ո՛չ ԲՏՌ, դրանցով...- Սերգոն չշարունակեց:

- Ախր չգիտես, թե ի՜նչ ժողովուրդ է Գետաշենում, Սերգո՛, և ի՜նչ տղերք են առաջին դիրքերում, ոգի կա, ոգի՜...- բռնկվեց Թաթուլը:

Սերգոն առաջին անգամ նկատեց եղբոր կտրուկ շրջադարձը, ինքնամոռաց խոսակցությունը, մահվանից չսարսռող նրա աչքերի փայլը: Նա մեկ օրով էր գյուղ հասել, բայց սիրտը Գետաշենում էր՝ դիրքերից էր խոսում, դպրոցից, եկեղեցուց, զարմանքով ու հիացական ներկայացնում էր գետաշենցի որսորդ ընկերներին, ապա Եղիշ դայուն, Լենա մայրիկին, վիրաբույժ Գևորգին, ուսուցիչ ընկերներին, աշակերտ ընկերներին...

Սերգոն ուրախացավ ու տխրեց: Կրտսեր եղբայրը և իրենցն էր՝ Կրպեյանների շառավիղը, Ժորայի և Սեդայի որդին, Ասպրամիկի հայրը, և իրենցը չէր՝ Գետաշենի արծիվն էր, իր նոր երամի, նրանց

բախտի, հոգու վերքի, նրանց զարկող ձեռքի հետ էր: Եվ հիմա հայրական տան առջև՝ քարե աթոռակին, որին նստում էր Գուլո տատը, նա էր, իր անմռունչ տեսակը՝ ուժի, կռվի, երազանքի իր ծրագրերին հետամուտ: Արեգը Ժորայի բակի քարերի արձագանքից եկավ ու հավաքվեց: Թաթուլը չէր սպասում սիրո սահմանումի այսպիսի պոռթկում, եկել, հավաքվել էին: Նա խոսում, բայց զննում էր մտասևեռ հայացքներ, լսում հետաքրքիր հարցադրումներ, որոնց տողատակերում հետաքննություն էր, հեռագնա բնազդներ, երևակայության նոր պատվաստ: Պահը իրիկնային ծփանքն էր դարսեդարս դիզում, աշնան անփթիթ փառքերը տնամերձ բլուրից գլորվում էին ցած, հույսի վիրավոր ծվարներով տաք խոսք, ջերմություն և ջահ էին փնտրում: Թաթուլն այդ ամենի շողընթացն էր բացել, Գետաշենի զառ-վառ հեքիաթը, հանդն ու կիրճերը, գետն ու աղբյուրները բերել ու խառնել էր Արեգի չոր աշնան երակներին: Դպրոցական տարիքի տղաները շարվել էին պատի տակ, գույնզգույն բլուզներ էին նրանց հագին, գլուխները բաց, մի քանիսը սպորտային կոշիկներով էին, ֆուտբոլի դաշտից էին վազել այստեղ: Պատանիները շատ էին լսել Թաթուլի մասին, հիմա եկել, պատվի առած նրան՝ զգաստ կանգնել, չէին խոսում, զարմանալի պատկառանքով լցված՝ ոչնչով չէին արձագանքում: Քրտնքից կկոցված նրանց աչքերում պեծպեծին էր տալիս հիացումի ընթերցվող շողը, որը անբռնազբոս հմայքով նրանք բացել էին՝ իբրև իրենց հոգում փայփայված սիրո տուրք, և անխոս մատուցում էին: Թաթուլն այդ խոստովանանքի մաքուր ու անխառը տեսակը նշմարել էր, միաժամանակ գծագրել նրանց դիմագծերի փայլը և ինչի մասին էլ որ խոսում էր, հայացքը անբեկ որոնում-գրանցում էր այդ հրաշալի պատանիների միամիտ պատրաստակամությունը, նրանց սավառնելու սկիզբը:

Չկրկնվող հանդիպում էր սա: Թաթուլը համոզվում էր, որ ուրիշ այլ գաղտնիքներ ունի այս կյանքը, որովհետև ամեն անգամ գյուղ վերադառնալով՝ իր համար մի նոր բան էր բացահայտում: Հայտնի դեմքերի լույսն ու ստվերը այնքան կարևոր չէին իրեն, որքան հոգիների հարմոնիան, որը հասուն տարիների բերքն էր շուռ տալիս ոտքերի տակ, դրանց խորը և ճանաչելի շերտերում հայտնաբերում էր պապենական աղ ու հացով կշտացած նորածայն խորհուրդ, նաև խլացած կանչեր, որոնք ոսկու ներքնաշերտ լռությամբ տասնամյակներով ապրել էին գյուղի խրճիթ-կտուրների տակ կամ ներծծվել Արտին սարի ճամփին ծունկ իջած որձաքարի կանաչ մամուռներին:

Այսօր այլապատումը լուրջ նախահիմքեր ուներ: Թաթուլը մեկ

օրով էր եկել, առավոտյան պիտի գնար: Ձգված էին բոլորը գնալու հասցեն Գետաշենն էր՝ քարտեզի վրա հեռավոր մի անկյուն՝ անտառ ու կիրճերի մեջ, շրջապատված թշնամիներով, սակայն չմեռնող, չմարած ներշնչանքներով, որի ուրվագիծն էր բացահայտում Թաթուլը: Զրույց էր, չվերջացող իրապատումներ՝ ցավալի և ուրախ, տխուր ու ոգեշնչող գույն-հնչյունների, պատկեր-ելևէջների ոսկեմակույկ խլրտումներ, որոնք Թաթուլի բառաբոցերից իջնում էին մոմաթիռ ցոլքերով, բացվում ծանոթ ու սիրելի երազադաշտերում, որտեղով կարծես եկել ու անցել էին Ժորայի տան իրիկնային կանչերով վերապրող այս արեգցիները:

Արմեն ընկերը ո՞ւր էր տեսել այսպիսի Թաթուլ, Արեգ-աշխարհն էլ վաղուց չէր հանդիպել այսպիսի Թաթուլի: Եվ այդ ամենի երաշխավորը ինքն էր՝ Թաթուլը՝ շիտակ, շողոտ աչքերով, համառ, աննկուն կեցվածքով, իր ցավի գրոհը ներսում պատնեշող մի բերդ, իր սիրո և ինքնայրումի խարույկի շուրջը այսքան մտերիմների «զորակոչած» արեգցի երիտասարդը:

...Ուշ գիշերին եղբայրներով նստոտեցին բլրալանջի քարերին: Սերգոն բոլոր մանրամասները գիտեր, բայց չէր շտապում առաջ ընկնել: Մինասը, Գրիգորն ու Մանվելը առաջին անգամ փորձում էին լրիվ ու խորությամբ իմանալ եղբոր հետ առնչվող ամեն բան, դարձել էին շատ ստույգ, պատասխանի սպասող: Թաթուլը զգում էր, թե ինչպիսի ապրումների տեղիք էր տվել, որ եղբայրներն աննահանջ կեցվածք էին ընդունել, ուզում էին պարզել, իմանալ, նույնիսկ հետ պահել:

- Եթե չգնաս, պետությունը չգիտի՞, որ Գետաշենն ու Մարտունաշենը զենքի և փրկության կարիք ունեն,- ասաց Մինասը և նայեց ավագ եղբորը՝ Սերգոյին:

- Ինքը գիտի, Մինա՛ս,- կտրուկ պատասխանեց Սերգոն,- հիմա մեր նպատակը մեկն է՝ Թաթուլին վտանգից հեռու պահել:

- Ես բոլորովին չեմ զարմանում ձեր եղբայրական մեծագույն ափսոսանքի համար,- ընդհատեց Թաթուլը,- բայց եթե վտանգի մասին եք խոսում, պիտի իմանաք, որ դա միայն Գետաշենում չէ, երկիրն ամբողջապես թաթախված է մշուշոտ ծանծաղուտում, ես և իմ նման հազարները չեն կարող ձեռքերը ծալած նստել: Բազմիցս ասել եմ ձեզ, որ սա ձևի, ցուցամոլության, ազգային երևալու, դասական կուսակցությանը դուր գալու խնդիր չէ, դուք իմ հարազատ եղբայրներն եք, պիտի իմ անշրջելի նպատակը հասկանաք, ես այնտեղ՝ Գետաշենում եմ լինելու, ուր գրանցված եմ որպես

տեղի բնակիչ, նաև գործուղված ուսուցիչ և երդվյալ հայ: Դրանից այն կողմ չգիտեմ ի՞նչ է լինելու, բայց ես նաև ձեր փոխարեն եմ այնտեղ,- Թաքուլի աչքերը պայծառացան, եղբայրները լուռ էին:

- Իսկ հետո՞,- շատ տխուր ասաց Մանվելը:

- Դժվար բան ես հարցնում, եղբա՛յր,- ժպտաց Թաքուլը,- հիշեցի, շատ հետաքրքիր վերջաբան ունի Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացքը», հաճախ եմ դա մտաբերում, երբ իմ ակոսը շեղվում է սովորական առապարից, երբ ճակատագիրը ինձ տանում է հրամայաբար: Լսի՛ր, թե նա ինչ է ասում իր գրքում մեծ կյանքի խոչուխութերից հետո, և թող փոխաբերական իմաստով դա էլ լինի Մանվելի հարցի պատասխանը. «Մինչև այստեղ ես բերի քեզ, սիրելի ընթերցող, սրանից դենը նեղ մի արահետ բացվում է ճամփիս, ուր տեղ չի լինի երկուսի համար: Մնա՛ երջանիկ և զավակներիդ, որոնց օրհնեցի, երբեմն պատմիր, թե այսպիսի մի մարդ եղավ մեզանում... եկա՛վ ու անցա՞վ»:

Սերգոն մռնչաց, ոտքի կանգնեց, եղբայրները նույնպես.

- Դու գիտակցաբար պատա՞նդ ես դառնում,- չհամբերեց Գրիգորը:

- Մենք բոլորս էլ պատանդ ենք, Գետաշենը առավելապես, եթե ինձ սիրում եք, ուրեմն իմ պաշտամունքը հարգեք, եթե ինձ ուզում եք օգնել, զենք ճարեք, բայց ոչ միամիտ Մանվելի ու Աղասու նման, որ թակարդն ընկան,- ծիծաղեց Թաքուլը, որ եղբայրը չվիրավորվեր,- առայժմ ուղղաթիռները գալիս են, կապը մի՛ կտրեք Գետաշենի հետ:

Այլևս չխոսեցին, փոթորկված էին եղբայրները: Անկեղծ էին նրանց ապրումները, տագնապը, անհանգստությունը, ոչինչ վարագուրված չէր: Նրանք հասկանում էին Թաքուլի համարձակության գինը, բայց սսկված էին հոգեկան սելավի տակ, ցնցված էին, ցասկոտ ու անհասկանալի:

- Այս մասին տանը ո՛չ մի խոսք, եկեք տղամարդու պես լինենք,- խնդրեց Թաքուլը:

Այդպես էլ ամենասովորական զրույցով ներս մտան: Եղբայրները նույնպես մեծ հավատի նվիրյալներ էին, ներքուստ պաշտում էին Թաքուլի նպատակը, բայց մարդկայնորեն չէին կարող լռել:

- Տղա՛, էդ ի՞նչ ժողովի էիք նստել,- շեղ նայեց հայրը, որ սեղանի մոտ նստած՝ Արմենի հետ գինի էին խմում:

- Եղբայրական կոմիտեի նիստն էր, հայրի՛կ,- ծիծաղեց Թաքուլը,- ինձ լիազոր նշանակեցին Գետաշենում:

Իրինան հասկացավ, որ այդ խոսքը ուղիղ իրեն էր հասցեագրված, բայց ըստ կարգի՝ հայրը պատասխանեց.

- Ամբողջ գյուղի առջև բացեցիր Գետաշենի սուփրեն, բայց քու հոր համար ամեն ինչ գաղտնիք թողեցիր:

- Հայրի՛կ, գաղտնիք չկա,- նրա դեմդիմաց նստեց Թաթուլը և լցրեց գինու գավաթը,- Գետաշենից շատ բարևներ եմ բերել, հետո խնձորենիներ՝ քո նոր յուրացրած հողամասի համար:

Արմենը մոռացել էր, որ բեռնախցիկում մնացել էին թղթով փաթաթված տնկիները, արագ դուրս եկավ:

- Ի՞նչ տեսակի խնձորներ են,- հետաքրքրվեց Ժորան,- կերևա՝ էնտեղի բնություն լավ է:

- Հայրի՛կ, Գետաշենը մրգաստան է, հեքիաթների հովիտ, մտքովդ ինչ-որ անցնում է, այդ դրախտում կարող ես գտնել: Խնձորենիների այլ տեսակներ էլ կան, բայց առանձնահատուկ է գետաշենյանը,- մանրամասը ներկայացրեց Թաթուլը, նաև ուրախ էր, որ կարողացավ շեղել հոր ուշադրությունը, և վերցրեց գինու գավաթը: Եղբայրները նույնպես հետևեցին նրա օրինակին:

- Հա՛րս, դու ըսկի բան չունի՞ս ասելու Թաթուլին,- միջամտեց Սեդա մայրիկը:

Թաթուլը հասկացավ, որ մայրը գործողության մեջ դրեց իր «մատյան գունդը», որպեսզի ամեն գնով հետ պահի իրեն:

- Մայրի՛կ, ի՞նչ ասեմ, ինքը լավ պատկերացնում է բոլորիս ապրումները, իմ վիճակը, Ասպրամիկի անբառ պահանջները, ժամանակների խարդախ դիմագիծը, դարավոր թշնամու դավադրությունը, իր ջահել կյանքը, վիրահատված սիրտը, դիպլոմային աշխատանքը,- մի պահ լռեց Իրինան, ապա փոքրիկին գրկած՝ մոտեցավ Թաթուլին,- դու նրանցից չես, որ իմ ասածները չհասկանաս և չուզենաս հաշվի նստել այս գերդաստանի կարծիքի հետ:

Թաթուլը նախ նրա գրկից առավ դստերը, նայեց մանկան բոցկլտուն աչքերին, իր խայտանքը գտավ այնտեղ, շոյեց փոքրիկի թուխ մազերը և ուշադիր նայեց հորը:

Ժորան անբացատրելի հմայքով էր հետևում որդուն և թոռանը, ուզում էր ինչ-որ բան ասել բարձրաձայն, հրամայական ու նախախնդիր, բայց պահեց իր հորձանքը:

- Հարսը բան ասաց, պատասխան չկա՞,- դարձյալ Սեդա մայրիկն էր, ուզեց իր տագնապների պատասխանը գտնել, նայեց Թաթուլին, հույս ուներ, որ նա իր ծծկեր երեխային, Եղեգնաձորից Արեգ բերած ջահել կնոջը մենակ չի թողնի:

- Հարսը իմ պատասխանը լավ գիտի, մա՛,- մտածված ծոր տվեց Թաթուլը,- ես ոչ միայն ութ-ինը ամսական այս քնքուշ երեխայի

հայրն եմ, այլև գետաշենցի ութ-ինը հարյուր երեխաների ուսուցիչը, նույնքան մայրերի հոգու խաղաղությունը պաշտպանող զինվոր: Ես ու Իրինան նույն ուխտյալներն ենք՝ ինքը այս լեռներում է բանասեր-ուսուցիչ, ես էլ այն կիրճերում՝ հրացանավոր-ուսուցիչ:

- Դու ինձ հաստատ մեկ բան ասա,- խստացավ հայրը,- էսքան որ փսփսում եք, առանձին ժողով եք անում, չլինի՞ վատ են գործերը:

- Գործերը և՛ լավ են, և՛ վատ,- մշուշվեց Թաթուլը,- Գետաշենն ափսոս է, հայրի՛կ, մի օր քեզ կտանեմ այնտեղ, ինքդ կհամոզվես, որ արժե էդ պապենական հող ու ջրի համար կյանքով պայքարել:

- Պետությո՞ւն, զո՞րք, կանոնավոր ուժ չկա՞, որ էդ գործ ձեռնարկե,- իր հարցը պնդեց հայրը:

- Ամեն ինչ էլ կա, նաև հայրենասերների ջոկատներ, որ հիմա այնտեղ են, ես էլ նրանց հետ եմ:

Ներս մտավ Արմենը տնկիների փաթեթով:

- Ահա՛, հայրի՛կ, քո խնձորենիները՝ տասնհինգ հատ, դրանք հետո կհաստատեն իմ գովքը Գետաշենին, անմահական համ ունեն դրանց պտուղները:

- Հողը չի խաբի, ինչ-որ բերել ես, կծաղկի, կբաշխի իր բարիքը,- ասաց Ժորան և մեկ-մեկ զննեց կանաչ տնկիները:

...Առավոտյան տնեցիների հետ զրույցը երկար չտևեց, բայց Իրինայի տխրությունն անփարատելի էր:

- Ե՞րբ ես նորից գալու:

- Իրինա՛, հենց առիթը ներկայանա, կգամ, ամեն ինչ կախված է այսօրվա թռիչքից:

- Վտանգավո՞ր է,- կերկերաց կնոջ ձայնը:

- Խոսքն այդ մասին չէ,- կարճ կապեց Թաթուլը,- ինչ-որ բաներ պիտի տանեմ, դրանք կարևոր են: Շտապում եմ, տեսնեմ ընկերները հասցրել են օդանավակայան:

- Միշտ գործնական հարցերով ես ինձ հետ խոսում, շուրջդ, կարծես, ուրիշ կյանք չկա,- կշտամբալից նետեց Իրինան:

- Տուր, գրկեմ Ասպրամիկիս,- նա ձեռքերը պարզեց, աղջնակը հոժար մեկնեց իր նրբին թաթիկները և ձգվեց դեպի հայրը:- Արի՛, արի՛, պստի՛կս, մայրիկիդ ականջին միշտ ասա, որ ես իրեն սիրում եմ, քեզ պաշտում եմ, մի քիչ խաղաղվեք, դիմացեք, մինչև հայրիկը կգա:

Ասպրամիկը միայն ժպտում էր, թռվռում հոր գրկում: Իրինան աչքերն աննկատ սրբեց, որ Թաթուլի դիտողությանը չարժանանար:

Մայրը ներս մտավ ննջասենյակ և ուղիղ նայեց որդուն:

- Գնո՞ւմ ես, բալա՛, մի օր էլ կարգին չմնացիր,- հետո գլուխը կախեց, լուռ թնկթնկաց:

- Մայրի՛կ, չե՞մ ասել, որ իմ գնալու պահին լաց չլինեք,- մորը սաստեց Թաթուլը,- այս պատկերները ամբողջ ժամանակ տանջում են ինձ, նայի՛ր Ասպրամիկիս, տե՛ս՝ ինչպես է ծիծաղում, հոգով է ինձ ճանապարհում, համբուրում է ինձ,- նա կրծքին ամուր սեղմեց դստերը, որը հրճվանքից ճչաց և նայեց մորը:

Հետո սովորական բաժանվեցին: Թաթուլն ամենևին ցույց չտվեց, թե ի՜նչ դժվար եզերք է գնում, որ ճակատագրերն այնտեղ անակնկալ խաչուղիներում են, որ օր օրի փոխվում, փոփոխվում են իրական կյանքի անիրական գույները:

* * *

Թաթուլը դեռ այսքան լարված չէր եղել: Նա դրան անդրադարձավ այն ժամանակ, երբ Մուշեղի ուղղաթիռն արդեն օդում էր: Սևանը ձախ կողմից մնացել էր թիկունքում, աջում բարձունքներ ու գոգահովիտներ էին, առջևում հարցականներով ծանրաբեռն ամպեր և անհայտության ողորմելի ուրվագիծը՝ եղկելի լռությամբ: Նա այս անգամ չէր ուզում շոշափել դրսի կնճիռները, արհամարհական ու խեթ էր նայում վարագուրված պատուհանին: Ինքնաստուգիչ հայացքը նա նպատակամղված փնջել էր ներսում և փնտրտուքի փութկոտ եռանդով բացել հարազատ մի դաշտ, ուր վերջին մեկ ու կես օրվա իր անցուդարձն էր, իր «կռիվը» որոշ պատասխանատուների հետ, իր ճշմարիտ ու վերջնական արդարացումները հայրական տանը՝ հարազատների առջև, իր զսպված կարոտի աստղափունջը Ասպրամիկի աչքերում, Իրինայի խնդրանքը, Սեդա մայրիկի բնազդային, հոգեկեղեք աղաչանքները: Եվ այդ ամենը՝ իբրև օրվա երանության և տագնապների պսակ, նա հիմա աղմկոտ խցիկում բացել էր անտրտունջ հիշողության թափանցիկ ցոլքերով և դրանցով ներս ու դրսից զարդարում էր իրեն: Ինչ էլ կատարվեր դրսում, ով էլ փորձեր որոգայթներ սարքել ցածից, Թաթուլը հանգիստ էր, զարմանալի հավաք ու հանդարտ: Նա այս անգամ ոչինչ չէր հարցնում Մուշեղից, չէր նայում նրա աչքերի մեջ, ուր ամպ ու երկնքի բնույթն էր, Գետաշեն ձգվող ապրելու շողը:

Թաթուլը թեև առավոտյան տխուր էր իջել ծննդավայր Արեգ գյուղից, բայց այս պահին, երբ օդում էր, գոհ էր ընկերներից, օդանավակայանի աշխատողներից, Մուշեղից: Ուղղաթիռի բեռնախցիկում՝ մետաղյա մեծ խաչի, բուրվառի և այլ պարագաների համար

հատուկ պատրաստված արկղի ներքևի մասում, մի քանի ինքնաձիգ էր դրված՝ փաթաթված հագուստների, զարդարուն ու բարակ գորգերի, պարային խմբի համար լրացուցիչ արդուզարդերի մեջ: Թռիչքից առաջ բարեհաջող շրջանցեցին համապատասխան ստուգողներին, բայց նա համոզված էր, որ «Դյուզի» հարթակում դժվար կլինի: Մտքերի ներքին շղթան ակամայից ձգվում էր, հեռանում, ապա փոշմանած հետ գալիս՝ ցուցանելով իրեն, ծանրութեթև էր անում նրա համառության չափը: Ուղղաթիռում գյուղ վերադարձող գետաշենցիներ կային, այդ թվում՝ չորս-հինգ երիտասարդ: Թաթուլը նրանցից երկուսին էր ճանաչում, որոնց հենց սկզբում՝ ուղղաթիռ նստելիս էր բարևել, բայց անծանոթ տղաների մասին չէր հասցրել որևէ բան իմանալ: Ներքուստ ուրախ էր, որ Գետաշեն վերադարձողներ կան: Ամրակազմ, ջլապինդ տղաներ էին: Նրանց խոսակցության նյութը սովորելն էր, Գետաշենի ճակատագիրը, զարմանքը խորհրդային չգործող օրենքների հանդեպ: Ընդհանրապես, առողջ էին դատում, նկատելի էին ծննդավայրի նկատմամբ նրանց սերը, անկեղծ ափսոսանքը:

Թաթուլը հարևանցի, բայց մեծ հետաքրքրությամբ էր հետևում երիտասարդների զրույցին, կարծես նրանցով էր ուզում հասկանալ Գետաշենի առեղծվածը:

Ինքն իր հետ մնալու ցանկությունը, այնուամենայնիվ, նրան հետ տարավ: Թաթուլն աչքերը փակեց՝ ներքին լռության ցելերին շաղ տալով երևանյան զրույցները՝ համալսարանում, հատկապես շտաբում: Սկզբունքային խոսակցություն էր վարել, ներկայացրել էր Գետաշենի ենթաշրջանի իսկական իրավիճակը, պայմանները, պահանջները, արտաքին ճնշումները, շրջափակումը, առաջ էր քաշել օրախնդիր կենսական հարցեր՝ առաջին հերթին պաշտպանության ամրապնդման և գետաշենցիների կյանքի անվտանգության ապահովման վերաբերյալ: Եվ՛ գոհ էր, և՛ դժգոհ, հասկանում էր ձեռնարկած ամեն քայլի լրջությունն ու պատասխանատվությունը և դրա համար ուներ իր տեսակետը, որը կիսել էր համապատասխան օղակների ղեկավարների հետ: Հիմա ուղղաթիռի իր աթոռակին գամված՝ նա այդ հարց ու պատասխանների խորքային սղագրությունն էր վերաքննարկում, ինքը դարձյալ անողոք հարցեր էր տալիս ու պատասխաններից բավարարված չէր: Նա գիտեր ինչ է պակասում, որի պատճառով պաշտպանական դիրքերը կարող էին խոցելի լինել: Թաթուլն այդ պարզ բաները, իհարկե, հրաշալի էր պատկերացնում և դրա համար էլ կարճ ժամանակով լքեց

Գետաշենը, գնաց մի ուրիշ ճակատում մարտնչելու՝ հասկանալով, որ գլխավոր ճակատամարտն առջևում է: Հետո ինքն իր հետ փորձեց հաշտվել, կարծես համոզվում էր, որ բոլորն էլ ուզում են օգնել, հասկանում էր, որ պայմաններն էին փոխվել:

...Շուտով վերևից երևաց Գետաշեն գյուղի ոսկեհուռ գավաթը՝ ոսկուն գույներով, պտտվող կարուսելի պես, աշնան մեղմանուշ սանրվածքով, փարթամ ու փառահեղ: Թաթուլն առիթ ունեցել էր վերևից զգալու այս տեսարանների հմայքը, սակայն դրանք այսօր խորհրդավոր հեքիաթի դյութանքներով ծաղկել էին կիրճերի դեղնաշողերգ կողերին, նախշագորգերի պես կախվել ժայռ ու քերծերից: «Գետաշե՜ն, դրախտի անուշիկ փերթ»,- սրտի շշուկների խորքերում այս բառերը Թաթուլն այնքան մտերմիկ գոցեց՝ ցանկանալով, որ այդ անթեղ կրակի բույրը մնար այնտեղ: Աչքերում ի՜նչ լույս էր բռնկվել, անմեղ սիրահարություն չէր, հայրենականչին խոնարհվելու սերն էր նրան ձուլել այս հայաշուրթ որմերին: Այս պահին էլ իր ցնծությունն ու տագնապները ճակատագրի այս «զնդանում» պահելու հայդուկային երդումով էր նա գնում դեպի «Դյուզի» տափը:

Վայրէջքից հետո առաջինը մոտեցան ստուգող զինվորականները՝ վերահսկող սպայի գլխավորությամբ: Թաթուլը տեսավ նրանց, կանգնել էին ուղղաթիռին մոտիկ, խստահայաց էին: Քիչ հեռվում իր զինակիցներն էին, գետաշենցի տարեց մի քանիսը, հավանաբար, սպասում էին հարազատների վերադարձին: Մուշեղը, սովորության համաձայն ժպտալով, բաց արեց դուռը: Առաջինն իջան երիտասարդները, բայց նրանց առջև փակեցին խորհրդային բանակի ՆԳ հատուկ ծառայողները՝ պահանջելով անձնագրեր՝ գետաշենյան գրանցումով: Ամեն ինչ հարթ էր անցնում. փաստաթղթերը կարգին էին: Տղաները վազելով գրկախառնվեցին մերձավորներին: Թաթուլը ժպտալով իջավ, հեռվից բարևեց ընկերներին, այն է՝ ուզում էր առաջ անցնել, սպան կանխեց:

- Ձեր անձնագիրը, ուսուցի՛չ:

- Ինձ նո՞ր եք ճանաչում, ընկե՛ր մայոր:

- Վաղուց եմ ճանաչում, բայց ուզում եմ համոզվել՝ դու Գետաշեն գյուղում ապրելու համար հիմնական գրանցում ունե՞ս:

- Մի գիշերվա մեջ Գետաշենը ինձ դո՞ւրս գրեց,- այլայլվեց Թաթուլը, բայց միջադեպից խուսափելու համար, մանավանդ որ վտանգավոր բեռ ուներ խցիկում, առանց այլ առարկության մեկնեց անձնագիրը: Սպան մեկ րոպեից ավելի շուռ ու մուռ տվեց անձնագրի էջերը, ուշադիր կարդաց գրանցման ժամկետները, վերջում նայեց նկարին:

- Դուք և այս նկարը իրար չեք համընկնում:

Գրանցումը կար, նա ուրիշ, այլ պատճառ չուներ:

- Անձնագրի նկարս սափրված հիշողություն է,- հեգնեց Թաթուլը:

- Չսափրվելը, միրուք թողնելը խորհրդավորության նշա՞ն են:

- Ո՛չ, ընկե՛ր մայոր, իզուր եք դրանում կասկածելի խորհրդավորություն փնտրում, դա գոնե ինձ համար մոդա չէ, այն անբացատրելի խորհուրդ ունի, ա՛յ, եթե դուք այսօրվա իմ կարգավիճակում լինեիք, կհասկանայիք:

Սպան այդպես էլ չկռահեց Թաթուլի ակնարկը, տարակուսած հայացքն ուղղեց իր ենթականերին՝ նշան անելով, որ զննեն ուղղաթիռը:

Թաթուլն արագ մոտեցավ ընկերներին, ողջագուրվեցին, կարճ հարցեր տվեց, պատասխաններից դժգոհ չէր, միաժամանակ հասկացրեց, որ ուղղաթիռում արկղ կա, բավականաչափ լավ փաթեթավորված է, պիտի տեղավորեն «Վիլիսի» մեջ: Եվ որպեսզի գոնե սպայի ուշադրությունը կարողանա շեղել, Թաթուլը մոտեցավ նրան և խնդրեց առանձնանալ:

- Ի՞նչ կա,- սառնորեն ասաց մայորը:

- Առանձնապես ոչինչ,- Թաթուլը քայլեց մի կողմ, սպան հետևեց նրան,- որպես խորհրդային զորքերի ներկայացուցիչ՝ ձեզ ուզում եմ տեղյակ պահել, որ հենց օդ ենք բարձրանում, ներքևից՝ անհայտ թաքստոցներից, կրակում են: Պարզապես հրաշքով են այս մեկերկու ուղղաթիռները գնում-գալիս:

- Դա մենք գիտենք, փորձում ենք սաստել:

- Ընկե՛ր մայոր, ես ձեր հնարավորությունները գիտեմ, ծառայել եմ բանակում, հենց Ռուսաստանում,- խոսքը մտածված երկարացրեց Թաթուլը, մինչև տղաները կիջեցնեին պարագաները,- եթե ցանկություն լինի, ոչ մի սադրիչ չի կարողանա օրենքից դուրս բաներ անել:

- Բայց այդ նույն բանը ադրբեջանցիներն են ասում, դժգոհում են մեզանից, որ մենք քրիստոնյաների կողմն ենք:

- Դա այդպես պիտի լիներ, բայց Աստծո աչքի դեմ ուրիշ բան է կատարվում,- Թաթուլը խստացրեց խոսքը, որովհետև աչքի պոչով նկատել էր, որ տղաներն արկղն արդեն իջեցրել, տեղավորել էին մեքենայի մեջ և զբաղված էին մյուս ծանրոցներով:

- Ուզում եք ասել, որ կշեռքը լավ չենք պահում,- թեթև ծիծաղեց սպան:

- Կշեռքը վաղուց է խախտված, ընկե՛ր մայոր,- բարեկամաբար

շարունակեց Թաթուլը,- դուք լավ գիտեք, որ սա պատմական Հայաստան է, նույնիսկ ինչ-որ ժամանակ եղել է Ռուսաստանի ենթակայության տակ. Արցախը յոթանասուն տարի առաջ հենց այնպես նվիրվեց Ադրբեջանին, հիմա ազգովի հարց ենք տալիս՝ ինչո՞ւ...

Սպան լռկվեց, այդ ինչուն գնդակի պես խրվեց նրա սիրտը, որովհետև Թաթուլը ճիշտ էր, հայ ազգը, Գետաշենը, Շահումյանը, Արցախը ճիշտ էին: Զինվորները մոտեցան, մայորին զեկույց տվեցին, որ կասկածելի ոչինչ չեն հայտնաբերել:

- Ուսուցի՛չ, մի՛ վիրավորվեք, որ ձեր անձնագիրը նույնպես ստուգեցինք, ճանաչելն ուրիշ բան է, վստահելը՝ մեկ ուրիշ,- ասաց ու քայլեց դեպի զինվորական մեքենան: Սակայն Թաթուլի խոսքին, այնուամենայնիվ, պարտք էր մնացել, ձեռքով նշան արեց, մոտեցան:

- Դու ճիշտ ես, ուսուցի՛չ, բայց համոզված եմ, նաև լավ գիտես, որ սխալ, թե ճիշտ, մենք օրենքներով ենք առաջնորդվում: Ինչպես մենք, այնպես էլ դուք շարքային մահկանացուներ ենք:

- Շնորհակալություն անկեղծության համար, ընկեր մայոր, չեմ կարծում, որ ռուս հասարակ մարդը չկռահի, թե ի՞նչ է կատարվում այս եզերքներում, և որտե՞ղ է թաղված արդարությունը:

- Խոսքը մեր մեջ մնա,- ժպտաց սպան,- այդ արդարություն կոչվածը միշտ էլ թաղված է, իսկ մերպեսները շարքային հուղարկավորներ են:

Թաթուլը ցնցվեց ռուս մարդու այսքան անկեղծությունից: Միայն շատ վստահելի ծանոթի հետ կարելի էր կիսել այս մտքերը: Զինվորական մեքենան հեռանում էր, բայց Թաթուլը, նույն տեղում կանգնած, նժարում էր նրա խոսքերը, գիտեր, բայց նրա խոստովանությամբ մոտիկից և թարմ հնչեղությամբ էր ընկալել սպայի հոգու խորթությունն այս շրջափակման, իրենց անօգուտ, երբեմն անընդունելի ներկայության համար: Թաթուլը չէր ուզում ժխտել նրա հոգու անկեղծ պոռթկումը, բայց մի բանի հետ համաձայն չէր. ինքը, իր ընկերները, ազատաբաղձ հոգու խորքերից լույս ու սնունդ քաղած ազատամարտիկ-տղաները, դարերի անհունից իրենց ոգու մարգարտաշարը բերած գետաշենցիները երբեք շարքային հուղարկավոր լինել չէին կարող: Նրանք հանուն արդարության ապստամբներ էին, գաղափարի համար անզիջում էին, ճշմարտության սարքովի քողը պսակազերծող, իրենց կամքի և պապոնց ժառանգության վրա շղթաներ չընդունող սերունդ: «Չէ՜, ընկե՛ր սպա, մենք շարքային հուղարկավորներ չենք, անբարիշտ, ոխակալ թշնամուն զարկող ենք, մենք իրավունք չունենք ծռել այն, որ իրենք՝ մեր պապերն

են մեզ տվել, նրանց արյան եռքն ու բնույթը, նրանց ոգու աչքերի տեսակը մենք չենք կարող տեսիլքի վերածել...»:

- Թաթո՛ւլ, գնանք, մեքենան պատրաստ է,- Արթուրն էր, զգաց, որ մտքերի հրայրքը նրան մի ուրիշ աշխարհ էր հասցրել, ճանաչում էր Թաթուլի ներքին ընդհանրացումները, համոզված էր, որ հիմա նա, մեկի կամ հազարի դեմ կանգնած, կռիվ է տալիս, անպայման պատասխան ու ելք է փնտրում՝ չընդունելով պայման ու երկընտրանք:

Արթուրի հարազատ ձայնից Թաթուլը սթափվեց, սպայի հետ իր զրույցը պահեց ներսում, ոչինչ չասաց, քայլեցին: Արթուրը հասկացավ, որ ռուս զինյալներին ճանապարհ դնելուց հետո Թաթուլը չէր հանգստանում: Թեև նա շատ խոսել չէր սիրում, բայց այս պահին ավելի խտացրեց ներքին լռության քարափը, խարսխվեց իր մեջ և անխոս նստեց մեքենան:

Շտաբի դռան առջև հավաքվել էին տղաները, նրանց հետ դպրոցի տնօրեն Ղուլղազարյանը, մայրենիի ուսուցչուհի Ժաննան, Հայրումյան էդիկն ու Արշակը, բարձրդասարանցիներ, Չիլինգարյանների թաղամասից հարևանները և, իհարկե, Լենան: Առաջինը նա մոտեցավ «Վիլիսից» ցած իջնող Թաթուլին, մայրաբար համբուրեց, աչքերը թացացան: Հետո մոտեցան Ժաննան, դպրոցի տնօրենը, մյուս աշխատողները: Ջերմ հանդիպումից Թաթուլը հոգու խորքերով զգացվեց, ներսում կուտակված ամպերը ցրիվ եկան, ամեն ինչ բառախաղ համարեց և այդ թափանցիկ թեթևությամբ մտաբերեց ու մոռացավ ռուս սպային:

- Կարծես մեկ տարի ձեզանից բաժանված լինեմ, այսպես համախումբ հավաքվել եք,- վերջապես խոսեց Թաթուլը: Նա ընկերներից ներողություն խնդրեց և մոտեցավ փողոցի եզրին՝ մեծ ընկուզենու տակ կողք կողքի նստած գյուղի մի խումբ տարեց մարդկանց, որոնք հեռվից տեսել էին Թաթուլին, հետաքրքրությամբ նայում էին:

- Հայաստանից բարև եմ բերել, ուժ եմ բերել,- վերջին բառերը շեշտված ասաց նա և սիրալիր սեղմեց բոլորի ձեռքերը:

- Ի՞նչ կա-չկա աշխարհում,- հարցրեց տարեցներից մեկը:

- Հայաստա՞ն աշխարհում,- ճշգրտեց Թաթուլը:

- Բա ուրիշ հի՞նչ աշխարհք ունինք,- իր ասածից գոհ՝ ժպտաց ծերունին:

- Մեր այդ միակ աշխարհը դժվարությունների մեջ է, բայց հավատ ունի, որ ամեն ինչ լավ կլինի:

- Մեր մասին պա հինչ ին մտածո՞ւմ,- աջ ու ձախից խոսքի մեջ մտան մի քանիսը,- էս արնախումի դեմը առնի՞լ տին, ախր Խանլա-

որը մեզ ապագա չի, Շահումյանի շրջանի մեջ թե մտնինք, լավ կլի:

- Որոշումը կա գյուղական իշխանության կողմից, բայց թուրքը չի համաձայնվում, պիտի սպասենք,- Թաթուլը զրույցը մի քիչ ձգեց, ցանկացավ մնալ ծերունազարդ մարդկանց շրջապատում, նրանցից պապ Մարկոսի բույրն էր առնում, անկեղծ էին, հավատը չկորցրած, բայց հոգնել էին հատկապես վերջին մեկ տարվա քաղաքական խառնաշփոթից:

- Թաթո՛ւլ, դեմդիմաց գովելը լավ չի ընդունվում,- ասաց հավաքվածներից մեկը, որը գրագետ էր խոսում, ձգված էին բառերը, միտքը հստակ էր,- քո և ընկերներիդ՝ Գետաշենում հայտնվելը ապրելու, հանգիստ քնելու, հավատը չկորցնելու հնարավորություն է տվել, և եթե արտահայտեմ ողջ գյուղի կարծիքը, ուրեմն դա լինելու է ինչպես քրիստոնյայի խոստովանանքը սրբազան խաչի առջև: Գետաշենը լավ ու վատ օրեր է տեսել, պատմության դառն ու հիշատակելի էջեր կա նրա ուսերին, Գետաշենը անհատականություններ է ունեցել, և այսօր էլ նրանք կան: Նա հպարտանալու, իր անձնագիրը անվարան բաց անելու իրավունք և ասելիք ունի, բայց այդ ամենն այսօր պահելու, մեր հպարտ ապացույցներն արմատից չկտրելու ճակատագրական շողքը ձեր ձեռքերի մեջ է, Գետաշենի երիտասարդության և ձեր քաջակորով տղաների միասնության և ուժի մեջ:

Երբ նա ավարտեց, Ժաննան Թաթուլին կամացուկ հուշեց, որ նա Գետաշենի վետերաններից է, Հայրենական պատերազմով անցած, գյուղի ավագանու խղճի ձայնը, նրանց հավաքական մտքերի ազնիվ խոսնակը:

- Ժաննա՛, ես նրան ճանաչում եմ, գիտեմ նաև մյուսներին,- ասաց Թաթուլը և հպարտությամբ նայեց նրանց, հետո իր ընկերներին, պայծառացավ, ինքն իրենից վեր ձգվեց և ուղիղ ընդունեց, որ գյուղի ավագանու այս անկեղծ մտորումները ճշգրտված էին Գետաշենի խղճի խորանում, մասունքի պես ծաղկել էին նրանց աչքում, հայացքների մեջ ու խրոխտ կեցվածքներին: Գնահատության այն ազնիվ խոստովանանքը մտքի շեղում չէր, ոչ էլ լեզվի շռայլություն: Թաթուլը, կարծես, դեմառդեմ կարդաց մեծերի շուրթերով հնչող Գետաշենի ասքը, որը, անշուշտ, գրանցված պիտի լիներ շրջակա ժայռերի կայծակնածեծ կողերին: Նա ցանկացավ որդիաբար ծաղկել այս իմաստուն մարդկանց աչքերի առջև, գորովանքով ժպտաց ձեռնափայտերին կռացած, ուղիղ ու շիտակ կանգնած, առանց ճիգ ու ջանքի մտորող, մտածող մեծերին, հոգին նրանց թողած՝ բաժանվեց,

դանդաղաքայլ գնաց: Տղաները սպասում էին, բայց նա չէր կարող իր վրա հառած հայացքները շրջանցել, անցնել ու չտեսնելու տալ: Նա չէր կարող չմոտենալ գյուղի հավաքական խղճին, դարերի հողմերից զտված ու փոխանցված ոգեղենի կանչերին, որոնք գյուղի մեծերի բառ ու խոսքերի թամբերին էին, ճախրուն ձիերի աչքերով սլացող հնաբույր հեքիաթների մեջ:

Հենց առաջին օրվանից էր Թաթուլն զգացել գետաշենյան կախարդանքը, ոսկեծամ բնության և բնակչության նույնահուն կարկաչը, վեհասլաց գույն ու բույրերի, սեր ու հավատամքի շիկաշող հաղորդությունը: Եվ հանպատրաստի ամեն այսպիսի հանդիպում՝ նրան մոտեցնում էր իր մեջ դուռ ու երդիկ փնտրող Թաթուլին, իր դեմուդիմաց պահանջատեր կանգնած, հանուն նպատակի զրկանքների ու զոհողության պատրաստ Թաթուլին:

...Շտաբում հավաք ջերմությունը նկատելի հորձանք էր առել, տաք զրույցները, հարց ու պատասխաններն առնչվում էին Թաթուլի վերադարձի հետ:

- Կարճ ներկայացնեմ,- խոսեց Թաթուլը, մեծ սրահում լռեցին,- նախ ասեմ, որ Գետաշեն-Մարտունաշեն օդային կապը պահպանող ուղղաթիռներն անցնում են կասկածելի կրակոցների ուղեկցությամբ, պարզապես օդաչուների ամեն թռիչք, մանավանդ հիմա, սխրանք պիտի համարել,- նա մի քիչ դադար տվեց, ապա զգալով իրեն նայող տղաների բոցկլտուն աչքերը՝ շարունակեց,- Արթուրին ու Տիգրանին նամակ եմ բերել, մյուսներին չհասցրի, արկղում միայն խաչեր ու պարային զգեստներ չեն, ուժ եմ բերել, որքան դա հնարավոր էր, վիճել եմ առանձին օղակներում, մեր իրական վիճակը երևակայական տեղեկատվությունից զատել ու դրել եմ սեղաններին, ասեմ, որ այդ ճշմարտությունները լիարժեք են ներկայացրել Վահան Հովհաննիսյանը, Զորի Բալայանը, Իգոր Մուրադյանը, Հրայր Կարապետյանը, Բենիկ Սիսյանը և իր տիկինը՝ Գետաշենի հայրենակցական միության նախագահ Ռիտա Չիլինգարյանը, որն այս հին օջախի զարմուհիներից է: Իրադարձությունների պատկերը ամենաճշգրտված փաստերով է վավերացրել մեր մարտական ընկերը՝ լրագրող Վարդանը: Դատելով իմ հանդիպումներից՝ Գետաշենի ու Մարտունաշենի օրվա պատկերն ու ցավը հայտնի են այնտեղ, բայց եթե անսքող են դժվարությունները, իմ կարծիքով՝ առկա է դանդաղկոտությունը, բայց խոստովանվենք, որ մերոնք լուրջ խնդիրներ ունեն Միության անհնազանդ տերերի հետ, որից էլ ստացվում է, թե Գետաշենի մոտեցող վտանգի հանդեպ զարմանալի

հանգստություն կա: Այնպես որ՝ մենք շատ ավելի լուրջ խնդիրներ ունենք, քան օրվա մեր անցուդարձը, պիտի չկորցնենք գյուղի ոգին, դրանում է մեր նպատակին հասնելու զորությունը:

- Թե զենքի հարցը լուծվի, մենք հաց էլ չենք ուզի,- մռնչաց գետաշենցի Արսեն Անթանեսյանը:

- Կլուծենք, կունենանք, պիտի ճարենք,- ընդհանուրին հասկացրեց Թաթուլը,- ինչ-որ ներկայացրի, դա է ճշմարտությունը, բայց դա իրավունք չի տալիս թևաթափ լինելու:

- Այդպիսի խնդիր չի կարող լինել, հրամանատա՛ր,- Եղիշ դային էր, կողքին որդիներն էին՝ Ալեքսը, Չալոն և Վալեսը:

- Համոզված եմ, որ այսքան ընտիր ուժեր ունեցող Գետաշենը թշնամուն պիտի կարողանա դաս տալ,- եզրափակեց Թաթուլը:

Այնուհետև խոսեցին դիրքերի պաշտպանական հզորությունն ուժեղացնելու, գյուղից նոր մարդիկ ընդգրկելու, եկեղեցին առաջիկա օրերում բաց անելու, Արցախի թեմի առաջնորդ Պարգև Սրբազանին օծման արարողությանը հրավիրելու և այլ հարցերի մասին:

Տղաները չէին թաքցնում, որ Թաթուլի վերադարձով փոխվեց տրամադրությունը, վերակենդանացավ աշխուժությունը: Լենան նույնիսկ չթաքցրեց իր կարծիքը.

- Թաթո՛ւլ, վատ չընդունես իմ ասածը, դու գնացիր, ինձ թվաց՝ շատերս որբացանք, մենակության և խեղճության շղարշը իջավ իմ շրջապատում: Աստված գիտի, թե ինչ ուրախություն զգացի, երբ ռադիոկապը օդում Մուշեղի հետ ցնծություն բերեց, երբ նա էլ մի տեսակ արտակարգ ձայնով հնչեցրեց՝ գալիս ենք, Թաթուլն իմ կողքին է:

Լենայի անկեղծությանը չկասկածեց Թաթուլը, բայց ընկերների ներկայությամբ անհարմար վիճակի մեջ հայտնվեց: Երբեք չէր ընդունում, որ իրեն առանձնացնում էին, շեշտադրված բառերով գնահատում, այդպիսի գովքից ամաչում էր, ժպիտը թաքցնում դեմքը ծածկող մազումորուքի տակ:

- Լենա մայրիկը նոր է սովորել չափազանցության դասերը, կարծեմ քո «Կամա-2»-ը պահանջում է կարճ խոսք, լակոնիկ բառեր,- ստեղծված դրությունից փորձեց դուրս գալ Թաթուլը:

- Բայց մի՞թե ինձ հետ համակարծիք չեն տղաները, Գետաշենը, քո ուսուցիչ ընկերները, գյուղի աշակերտությունը,- արդարացավ Լենան:

Դա, կարծես, հարցադրում էր ներկաներին, և բոլորը ծափահարեցին և միաբերան գոռացին.

- Ճիշտ է Լենա մայրիկը:

Ժաննան մոտեցավ Թաթուլին, խնդրեց, որ երեկոյան դպրոց գա, երգի խումբը վերջին փորձն է անելու:

- Կգամ, լրացուցիչ հագուստներ եմ բերել, «Վիլիսով» հասցրեք դպրոց, այնտեղ նաև ուսումնական այլ պիտույքներ կան, քարտեզներ, գրքեր,- ապա դառնալով Մերուժին՝ ավելացրեց,- եկեղեցու համար բերված մեծ խաչը պիտի ամրացվի գմբեթին:

Երբ բոլորը ըստ հանձնարարությունների գնացին, Թաթուլը որոշեց հանդիպել մի քանի ընկերների, որոնց հետ կիսվելու, որոշելու և գործելու ծրագրերով էր վերադարձել: Հանդիպեցին դպրոցում: «Արաբոյի» ջոկատի հրամանատար Մանվելն էր ու Դեդը Մարտունաշենից, «Ալաշկերտի» Հրաչն էր, «Մալաթիայի» Վահանը, նաև Արթուր Կարապետյանը: Թաթուլի անհանգստությունը կիսում էին նաև նրանք, ովքեր հավասար պատասխանատվությամբ էին Գետաշենի ենթաշրջանում, հզոր անհատականություններ էին, փորձունյա, զենքի հետ վարվել գիտեին, ոչ միայն խիզախ էին, այլև հրաշալի ընկեր ու կազմակերպիչներ էին:

Նրանց զրույցը բավական երկար տևեց, փոխհամագործակցության նոր պլան կազմեցին, որոշեցին ջոկատների կոնկրետ անելիքը արտակարգ իրավիճակներում, հստակեցրին տեղական իշխանությունների, բնակչության, ինչպես նաև իրավիճակը վերահսկող, խորհրդային զինուժը ներկայացնող պահակազորի հետ հարաբերվելու առաջիկա ծրագրերը:

Թաթուլը ընկերներին ճանապարհեց, ինքը մնաց դպրոցում: Ընդարձակ դահլիճում հավաքված ինքնագործ խմբի անդամները սպասում էին իրեն: Երբ ներս մտավ, բոլորը ոտքի կանգնեցին և բուռն ծափահարեցին: Դպրոցականներն այնքան զգաստ էին, հյուրընկալ ու բարի, որ իրենցով մի ամբողջ Գետաշենի վարքն էին հաստատում:

Թաթուլի առաջարկով խմբի անդամները հագան ազգային տարազները, բարձրացան բեմ. ուսուցիչը մի քանի դիտողություններ արեց, ապա ըստ հասակի կանգնեցրեց աղջիկ-տղաներին ու ինքը իջավ բեմից: Թեև հոգնություն էր զգում ազդրերում, նվվում էին ոտնաթաթերը, բայց այս երեխաների ներկայությունը հրամայում էր առաջ գնալ: Տեղնուտեղը մի քանի ցուցումներ տվեց, ինքը երգեց առաջին քառատողը, ապա հիշեցրեց, որ կրկներգը բոլորը միասին պետք է կատարեն: Որպեսզի ամեն ինչ տեսանելի լիներ, իջավ բեմից, նստեց կենտրոնական շարքի աթոռներից մեկին: Մե-

նակատարը՝ Ռոմանը, մի քայլ առաջ եկավ, Թաթուլը նշան արեց, որ սկսի: Հնչեց տղայի զիլ ու կարկաչուն ձայնը: Թաթուլն այդ կատարմանը չէր սպասում, դպրոցականները նրան անակնկալի բերեցին, հնչող երգի խոսքն ու երաժշտությունը Թաթուլինն էին, որը նվիրված էր Գետաշենին և կատարվում էր առաջին անգամ: «Իմ բացակայությամբ հասցրել էին սովորել տեքստը, ուրեմն ժանանայի մատը սրանում խառն է, այլապես համառորեն այս փորձին չէր հրավիրի»: Մտածեց նա և դարձավ առաջին ունկնդիրը:

Մեր հարազաս ոսան, դարերի շուքն է ճամփիդ,
Արևի շողն է վկան քո անկկուն կամքի...
Գեսաշե՜ն, դու հույսի ամրոց,
Մեր կյանքի երազ-լուսաբաց,
(կրկներգ) ***Արև ես բաշխել քո որդոց,***
Եվ դարձել մեր բախտի հուսադարձ:

Դե վեր ելի՛ր դարձյալ, ծաղկի՛ր դու հաղթակա՜ն,
Պարզի՛ր քո դրոշը, սուրը քո մարտակա՜ն:
(կրկներգ)

Հաջողությամբ ավարտեցին: Թաթուլը, ուսմասվար Սվետլանան, կազմակերպիչ էդիկը, ուսուցչուհիներ Ժաննան, Սվետլանան, Լարիսան, Քնարիկ և Սիլվա քույրերը, նաև դահլիճ եկած և աթոռներին սսկված մի խումբ աշակերտներ ակամայից ծափահարեցին: Թաթուլը չհամբերեց, թռավ բեմահարթակ, Ռոմանին համբուրեց, քաջալերեց խմբի անդամներին, ասաց, որ միասին պիտի կատարեն: Ինքը սկսեց, Ռոմանը միացավ նրան, այս անգամ դահլիճը խրոխտ ձայներից դղրդաց, մանավանդ, երբ խումբը ձայնակցեց կրկներգով:

Ժաննայի աչքերը խնդությունից փայլում էին, նա, ներքին հուզմունքները զսպած, պահել էր արցունքները: Հետո, երբ Թաթուլը իջավ, նա չգիտեր ինչպես հայտներ իր գոհունակությունը: Խումբը շարունակեց Թաթուլի ծրագրով ընդգրկված երգերը. կատարումներից նա գոհ մնաց, նաև այն ներդաշնակությունից, որ հագուստների և հնչող երգերի ձուլվածքով դպրոցական դահլիճում խտանում էին ազգայինի տեսակը, գույնը, բույրը: Երբ ավարտեցին, Թաթուլը առաջարկեց հագուստները տուն տանել, լվանալ, կարգի բերել: Ժաննային խնդրեց ուշադրության կենտրոնում պահել հոգևոր երգերի տեքստերը, հագուստների պահպանությունը, նախապատ-

ռաստվել եկեղեցու բացմանը և Նոր տարվա ընդարձակ հանդեսին:

- Դեռ մեկ ու կես ամիս ժամանակ կա,- զարմացավ Ժաննան:

- Նույնիսկ մենք ուշացել ենք,- ժպտաց Թաթուլը,- միայն երգն ու ասմունքը երեխաների համար, նվերներ նախապատրաստելը, հյուրերին ընդունելն ու ճանապարհելը, գյուղի մեծերին հարգանք ու պատիվ մատուցելը, Գետաշենը մի հարկի տակ բերելը...

- Ամբողջ ծրագիրը հուշեցիր,- զարմացած ծիծաղեց ուսուցչուհին:

- Գրավոր ես կներկայացնեմ սցենարը,- ասաց Թաթուլը,- դա պիտի անկրկնելի Ամանոր լինի, հիշողության, հույսի, ապագայի և ծննդյան տոնի հանդեպ սեր ու հաշվետվություն, գյուղի տաք երակներում սերակալած սիրո և կարոտի բացահայտում:

- Արդեն պատկերացնում եմ, Թաթո՛ւլ,- հիացական ասաց Ժաննան:

- Կապրե՛նք, կտեսնե՛նք,- ասաց նա և, կարծես, ինքն իրեն և իր շուրջը հավաքվածներին հրամայեց,- դեպի ճշմարիտ գործ, առա՜ջ:

Դպրոցից դուրս եկավ մի տրամադրվածությամբ, որի խլրտացող հյուսքերի տակ մարմինը թեթևացած էր, ոտքերի ցավն անցել, հոգում թևածում էր երգը: Մի պահ, կարծես, հեռացել էր շրջապատում իրենց տեր կոչող ադրբեջանցիներից, վերահսկող վերակացուներից, աչքերի առջև, փայլփլուն շորերի մեջ իրենց անմեղ հոգիներով զարթնած երեխաներն էին, բույն որոնող նրանց երգերի շշուկ-կանչերը, դահլիճի կամարների տակ՝ շիկնած ու շորորուն արձագանքները:

Խոհերի տաք բուրվառը հոգեթանձր ծուխ էր արձակում. Թաթուլը զգում էր դրա մեղրամոմե բույրը, մեղեդային թաց թրթիռների ճողփյունը, որովհետև մտքերով արդեն հասել էր եկեղեցի, Մերուժի փոխարեն բարձրացել ու գմբեթի վրա տեղադրել խաչը: Ինքնաբերաբար մեղադրեց իրեն, որ այնտեղ չէ, հենց նոր հասկացավ, որ խաչի տեղադրումը հեշտ գործ չէր, պիտի բարձրանային, մագլցեին, համապատասխան տեղում շատ ամուր գամեին: Քայլերն ավելի արագացրեց: Իսկ երբ մոտենում էր եկեղեցուն, կտրուկ կանգնեց, աչքերը դիպան բարձր խաչին՝ մեկնված դեպի կապույտը: Բակում էին ընկերները, ներկայացրին, որ Մերուժը մեն-մենակ խաչը պարգևեց վերին գմբեթին: Թաթուլն ակնածանքով խոսեց, Մերուժին շնորհակալություն ասաց և ընկերների հետ շրջեց բակը, նայեց շջրապատը, մտավ եկեղեցու ներսը. տեսավ, որ իրենց տեղերում էին բերված բոլոր պարագաները, սրբապատկերները, Մարիամ Աստվածածինը՝ գրկած սուրբ մանկանը: Մոմավառի սեղանները

առաջարկեց տեղափոխել մույթերի նախամուտքերի կողքը, պատերին ամրացվող աշտանակները իր ձեռքով կախեց սյուների վրա, բարձր ասաց.

- Էլեկտրիկներին պիտի հասկացնել, որ սովորական լամպերը ցցուն չերևան, լուսավորությունը չպետք է ճնշի հոգեբույր անդորրությանը, բարությունը պիտի թրթռա, ոչ թե սկուտեղի վրա մատուցվի:

Եղիշ դային անզուսպ հրճվանքով ընկալեց Թաթուլի խոսքերը, ուզեց իր ուրախությունը փոխանցել գետաշենցի իր ընկերներին, ովքեր եկել էին տեսնելու, թե կարտոֆիլի պահեստը ինչպե՞ս է դարձել եկեղեցի:

- Կարծում եմ՝ եկեղեցու նախաբույր կենսագրությունը դժգոհ չէ մեզանից,- ինքնագոհ ասաց Թաթուլը,- հաջորդ կիրակի կարելի է բացումը անել, այսինքն՝ մոտ տասներկու օր ունենք, այդ մասին պետք է իմանան տեղական իշխանությունները, և ստույգ պայմանավորվածություն լինի Պարգև սրբազանի հետ:

Հսկայական գործ էր արվել, կամավորների հետ միասին աշխատել էին նաև գյուղի մի խումբ տղաներ և, իհարկե, դպրոցի բարձրդասարանցիները:

Թաթուլը զգում էր ներկա գտնվող համագյուղացիների տրամադրությունը: Նրանք թեև քիչ էին այստեղ, բայց սովորականից շեղվել, վերադառնում էին դեպի ծննդավայրը. հենց սրան էր հետամուտ Թաթուլը, ուզում էր գործող եկեղեցու զանգ ու խաչով տեղաբնակների որոշ շերտերի մոտ վերացնել պատմական բնակավայրից հեռանալու միտումը: Հավատի աստվածաշունչ հովանու տակ Թաթուլը հավատացած էր՝ մոլորյալներին հետ էր բերելու, խռովյալները հաշտվելու էին իրենք իրենցով, զուլալվելու էին օդը, երկինքը, Գետաշեն եկող ու գնացող ճամփաները:

* * *

Նույն օրը երեկոյան, երբ մութի քողը իջել էր գյուղը երիզող գոգահովիտներին, Թաթուլը վարորդ Արմենի և Մերուժի հետ իջավ Տերոնց թաղամաս: Արթուրն ու Մակիչը այնտեղ էին, նաև գյուղի որսորդ տղաներից մի քանիսը:

- Ձիերը դուրս բերեք, Մերո՛ւժ,- ասաց Թաթուլը:

- Պաշտպանական դիրքե՞րը պիտի գնանք,- առաջ անցավ Արթուրը:

- Կռահեցի՛ր, եղբա՛յր,- խորասույզ մտքերով ասաց Թաթուլը,- պի-

տի գնանք, հանդիպենք, տղաները նրբանկատ են, միշտ էլ պարտքը կատարողները մարդկային առումով իրենց հանդեպ ուզում են զգալ թեկուզ ամենասովորական վերաբերմունք:

- Հասկացա՛,- խորքերով բերկրացավ Արթուրը: Նա գիտեր, որ Թաթուլը հենց այնպես որևէ բան չի նախաձեռնի: Նրա մոտ պահն ու ընթացքը հաշվարկված են պայմանների մոտավոր նախադրյալներով: Հիմա էլ, երբ հոգնած վերադարձել էր Երևանից, կրել ուղղաթիռի «փխրուն ճակատագրի» կորագծերը, մասնակցել էր դպրոցականների ինքնագործ խմբի փորձերին, եղել էր եկեղեցում, հանդիպել գյուղի ավագանուն, կարծես ուժ չպետք է ունենար՝ այցելելու պաշտպանական գիշերային դիրքեր:

Սակայն առաջինն ինքը թռավ ձիու թամբին, հետո նաև վեց ձիավոր հետևեցին նրան:

...Ուշ ժամին, երբ գյուղը քնած էր, Թաթուլն ու իր զինակիցները, առանց արտակարգ միջադեպերի, վերադարձան Տերունց տները, ձիերը թողեցին և ոտքով գնացին Չիլինգարյանների թաղամաս: Լենան քնած չէր, ամուսնու հետ դրսում սպասում էին:

- Ի՞նչ կա,- շտապեց հարցնել Թաթուլը,- այս ժամին քնած չեք:

- Սպասում էինք, ահա եկաք և վերջ,- մայրաբար և սրտի խորքից ասաց Լենան և հետո ավելացրեց,- Շահեն Մեղրյանն էր խնդրել կապվել իր հետ, իսկ ամենազզվելին այն է, որ վաղը Խանլարի գործկոմից մարդիկ են գալու մեր գյուղի բնակչության դիմումի առիթով:

- Խանլարից հեռանալու և Շահումյանի կազմում ընդգրկվելու Գետաշենի դիմումը, ըստ հավաստի տվյալների, արդեն մերժվել է,- բացատրեց Թաթուլը,- պարզապես ամենքին հայտնի է այդ փաստը, ուրեմն առիթ են փնտրում ռուսների ուղեկցությամբ թափանցել այստեղ:

- Ռուսների՞,- զարմացավ Լենան:

- Այո՛, առանց նրանց աջակցության նույնիսկ պաշտոնավար թուրքերը չէին համարձակվի Գետաշեն գալ, վաղը կհամոզվես,- Թաթուլը բարի գիշեր ասաց ու քայլեց շտաբ-բնակարանի ուղղությամբ:

«Իզուր այս ժամին անհանգստացրի Թաթուլին, ամբողջ գիշեր կռիվ է տալու, այդ մասին կարելի էր խոսել վաղն առավոտյան»,- ներքին ձայնով ինքն իրեն կշտամբեց Լենան:

Եվ, իսկապես, Թաթուլը երկար ժամանակ քնել չէր կարող: Նա հստակ պատկերացնում էր, որ Խանլարից ժամանողներին դիմումբողոքի ճակատագիրը չէր հետաքրքրում, դա ընդամենը վարագույր

էր: Նա գիտեր, որ այդ պաշտոնատարները ձգտում էին իմանալ, թե քանի՞ նոր մարդ կա այստեղ, ովքեր են այդ ոչ գետաշենցիները, որոնք պատրաստ էին կռվի և առճակատման, եկել, միացել էին տեղացիներին:

Թաթուլը հենց այնպես, միայն կոշիկներն էր հանել, պառկել էր մահճակալին, իրեն պաշարած հարց ու պատասխանների թևի տակ հենակ էր դրել, քննում էր հնարավոր հետևանքների բնույթը, բոլոր տարբերակներով շահեկան ելք էր փնտրում: Նա գիտեր, որ գյուղական ուսուցչի իր գործելակերպն ու ակտիվությունը հայտնի էին նրանց: Հիշեց ռուս սպայի հետ խիստ յուրօրինակ զրույցը, նրա ակնարկները, որ քարտեզին լավ չեք նայում, իրատես չեք: Հիշեց, և զայրույթն ու հայհոյանքը, իրար հրմշտելով, ներսից բարձրացան, արագ վեր թռավ, մոտեցավ բաց պատուհանին, ցանկացավ այդ մաղձը գիշերվա բաժինը դարձնել: Այնուամենայնիվ, վաղվա հետ ծանր հանդիպում էր ակնկալում, քիչ հետո լույսը հանգցրեց, պառկեց: Փակ կոպերի տակ այլևս չցանկացավ վաղվա հարցադեմ օրը հիշել, հոգու ներքնատես ցոլքերին խավարի ծոցից ճառագեց Ասպրամիկի շողընծա հայացքը, աչքերի փայլը, դեպի իրեն ձգվող նրա թմբլիկ թաթիկները: Այս պահին այդ պատկերների ոգեկոչը շողասփյուռ ողողվեց նրա էության վիրավոր ու վառման հնոցում: Թաթուլն ակամայից կենտրոնացավ խավարի հանգչող տիրույթում, ասես շատ հեռվից լսեց սրտի զարկերը, կանչող կանչերը, դրանց հետ զրույցի բռնվեց, հետո բռնկվեց բոցե երազների ավազանում, հեռացավ իրենից, ջրվեժածոց շղարշներից բաժանվեց ու գնաց...

Վաղ առավոտյան Թաթուլն արդեն դպրոցում էր: Ուսուցչանոցում, ինչպես միշտ, մինչև առաջին զանգի հնչեցնելը աշխուժություն էր, խոսում էին, հարցնում, հետաքրքրվում, անհանգստանում: Այդ խաչաձև հարցերի քուրայում առաջիններից մեկը Թաթուլն էր, մանավանդ, բոլորը գիտեին, որ նա շաբաթ ու կիրակի օրերին եղել է Հայաստանում՝ Երևանում: Հասկանալի էին գետաշենցի մարդկանց, հատկապես ուսուցիչների անսովոր հարցերը իրենց գյուղի ու իրենց ճակատագրի մասին: Թաթուլն այնպես ջերմ ու համոզիչ էր պատմում, բառերի գունախաղ չէր բացել, ո՛չ էլ ուզում էր շրջանցել այն իրականը, որին ինքը ականատես էր եղել «Դյուզի» հարթակից մինչև «Էրեբունի» ու Արեգ: Նա նույնիսկ իր Ասպրամիկին չմոռացավ, ժպտաց անթաքույց սիրով, խոսեց իր սիրասուն բալիկի մասին, նկատելի հուզվեց ու սեղմեց զանգի կոճակը:

Ուսուցիչները չէին հասցրել վերցնել դասամատյանները, երբ

տնօրենը դուրս եկավ իր աշխատասենյակից ու հաղորդեց, որ հանձնաժողով է եկել Խանլարից՝ ռուսների ուղեկցությամբ, նրանք հիմա գրասենյակում են, ցանկացել են զրուցել նաև դպրոցի պատմության ուսուցիչ Թաթուլ Կրպեյանի հետ: Նա միաժամանակ ժողկրթության բաժնի երկու աշխատողների մատնանշեց, որոնք ժամանել էին այդ խմբի հետ:

- Իմ դասաժամերը տեղափոխեք մի քիչ ավելի ուշ, ես կհասցնեմ գալ,- կտրուկ ասաց Թաթուլը,- անցել են այդ ժամանակները, որ այդ տհասները փորձեն հայ ժողովրդի պատմության ուսուցչի հետ իրենց կանոնակարգով զրույց ունենալ:

Նա փոթորկված դուրս գնաց: Գրասենյակում, իրոք, մեծ խումբ էր հավաքված, ուսադիրներով միլիցիոներներ կային, նրանցից մեկը՝ փոխգնդապետի կոչումով, մի քանի ռուս սպա, այդ թվում՝ Թաթուլին քաջածանոթ մայորը: Գյուղխորհրդի աշխատողները ներկայացրին Թաթուլին, որ պատմության նոր ուսուցիչն է, մշտական բնակություն է հաստատել Գետաշենում և գրանցված է: Միլիցիայի փոխգնդապետը խոժոռված նստեց, խորհրդային բանակի սպան հաստատեց, որ այդպես է:

- Ես դասի եմ, ի՞նչ է ձեզ հետաքրքրում,- չհամբերեց Թաթուլը և աչքերով, կարծես, ճզմեց Խանլարի ՆԳ բաժնից եկած այս ադրբեջանցու խեթ հայացքը:

- Ասում են՝ էդ դասերի ժամանակ շատ եք ազգային հարցերի մասին խոսում,- առաջ անցավ խմբի ղեկավարը,- գյուղից բողոքնամակ ունենք, որով դժգոհում են ձեր գործունեությունից:

- Ո՞ւր է այդ դիմում-բողոքը,- ափերից դուրս եկավ Թաթուլը:

- Մեզ մոտ էր՝ Խանլարի ժողկրթբաժնում, պարզապես հարմար չգտանք բերել,- միջամտեցին երկու ուրիշ ադրբեջանցի՝ ներկայանալով որպես տեսուչներ:

- Հերթական սադրանք,- հանգիստ պատասխանեց Թաթուլը,- այս գյուղի մարդը իր ուսուցչին չի կարող բամբասել, առավել ևս ադրբեջանցիներին գրավոր բողոք ուղարկել, դա անկարելի է:

- Որտեղի՞ց եք այդպես լավ ճանաչում և մեզ էլ չեք հավատում,- ձայնը նկատելի բարձրացրեց փոխգնդապետը,- դու ընդամենը երկու-երեք ամիս է՝ հայտնվել ես այստեղ:

- Իմ և այս գյուղի ճանաչողությունը նույն ակունքներից է սերվում, աշխատեք կեղծ փաստերով ձեզ չվարկաբեկել, որովհետև հազար հատ նամակ էլ ինձ ցույց տաք, դա կապ չունի իսկական գետաշենցիների հետ, նրանց մեծ դասը դարերի ճակատին է գրված:

- Իսկ ձեր դա՞սը, ի՞նչ եք քարոզում պատմության ժամերին:

Հարց տվողներն այդ տեսուչ կոչվածներն էին, որոնցից տարեցը երկայնավիզ էր, գլխի հետնամասը՝ ցայտուն ցցված, աչքերը՝ դուրս պրծած՝ ասես թռիչքի պատրաստ բու:

- Սա ողորմելի տեսարան է, որով կարող եք միայն խեղճերին վախեցնել, ձեր տեսած ժամանակները մնացել են հետևում,- Թաթուլը աթոռից բարձրացավ, ներկա գտնվող գետաշենցիներին, որոնք այստեղ էին կանչվել տարբեր կասկածանքներով, խնդրեց, որ համբերությունից դուրս չգան, ու ինքը շարունակեց,- ափսոսում եմ, որ իմ կարծիքը պիտի արտահայտեմ մի խմբի մոտ, որն իր հարցադրումների սնանկությունը լավ է պատկերացնում: Նախ իմացեք, որ պատմության իմ ժամերը հայ ժողովրդի անցյալին են վերաբերում, նրա հերոսականությանը, նաև այն հայտնի իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել այս դարաշրջանի առաջին տասնամյակներում և այսօր:

- Դուք դպրոցական ծրագրով չե՞ք առաջնորդվում,- աչքերը պլշացրեց կրթության ոլորտը ներկայացնող խանլարցին:

- Ո՛չ,- Թաթուլն ասես սրով կտրեց նրա լեզուն,- ի՞նչ ծրագրից եք խոսում, երբ տարիներ շարունակ պարտադրվել է սերտել ուրիշների պատմության եղածն ու չեղածը: Հայ երեխան, այո՛, պիտի իմանա աշխարհի ժողովուրդների պատմությունը, բայց առաջին հերթին իրենը՝ հայկականը, այս հողի վրա իր դարավոր երթի ժամանակաշրջանները: Հայ դպրոցը Գետաշենում, Արցախում, Հայաստանում պիտի ճանաչի արդարն ու կեղծվածը:

- Ինչի՞ մասին է խոսքը,- միլիցիայի փոխգնդապետը օգտվեց խմբի ղեկավարի իրավունքից և կտրուկ նայեց իր առջև աներեր կանգնած երիտասարդին:

- Խոսքը նրա մասին է, թե ինչպես 1921 թվականին անարդար ու կեղծ որոշամբ թվարկածս տարածքները բռնակցվեցին Ադրբեջանին: Խոսքը նրա մասին է, որ այդ նվիրատվություն-գործարքի մեղքով արյուն է թափվելու, որովհետև հողը սրբություն է, հասցե ու տեր ունի, նրա ճակատագիրը բնիկ ժողովրդի անձնագիրն է և դարերի լեզուն, որ ջնջել չի լինի: Սա է այն ճշմարիտ ծրագիրը, որ իմ վարած դասաժամերին ես փոխանցում եմ աճող սերնդին:

Փոխգնդապետը խուզարկու նայեց ժողկրթության բաժնի աշխատողներին, կարծես ուզում էր ասել՝ թե կարող եք, պատասխանեք սրան: Սակայն նրանք լուռ էին: Թաթուլը փորձեց օգնել նրանց:

- Դուք ներքին գործերի ղեկավար աշխատող եք և գիտեք՝ ինչ

է կատարվում մեր շուրջը, աշխարհում ընդհանրապես: Մի՞թե այս տեսակ անհարկի այցերով, արդեն ուշացած, աննպատակ, այսպես խմբով, զինվորականների ուղեկցությամբ կարելի է Գետաշեն գալ, նախկին պահանջներով պատասխաններ որոնել, երբ անցյալի գնացքը այս եզերքներից անվերադարձ գնացել է: Վերջում ասեմ, որ այստեղ ես նոր մարդ եմ, ընդամենը գյուղական ուսուցիչ, բայց ամբողջականությամբ ճանաչել եմ Գետաշենն ու գետաշենցուն: Սա այն գյուղերի հետ չշփոթեք, որոնք պետության կողմից դավադրաբար ընկան, իսկ մարդիկ թքեցին ու հեռացան: Գետաշենի հետ պետք է հաշվի նստել, և եթե ցանկանում է միանալ Շահումյանին, ուրեմն դրա առիթներն ու կողմնորոշումն ունի:

- Շատ եք բարձրից խոսում, ընկե՛ր ուսուցիչ,- փոխգնդապետը փորձեց խիստ երևալ:

Բայց նրան գրեթե լռեցրին աջ ու ձախ կանգնած գետաշենցիները:

- Ճիշտ է ասում Թաթուլը, մեր պահանջն է միանալ Շահումյանին,- նրանց խոսքերից, ասելիքի ուժգնությունից երևում էր, որ սրանցից վաղուց էին վառված ու հիասթափված:

- Լսեք մարդկանց ձայնը, այն հնչել է դեռևս մեկ տարի առաջ՝ 1989 թվականի հուլիսի 26-ին Շահումյանի շրջխորհրդի նիստում, և դրանից հետո ենթաշրջանը հայտնվել է ծուղակի մեջ,- ասաց Թաթուլը,- փակվել են բոլոր ուղիները, կենսական ճանապարհները, բռնի պայմաններ են ստեղծվել, որ Գետաշենն ու Մարտունաշենը թողնեն, հեռանան:

- Ճիշտ է ասում Թաթուլը,- այս անգամ ավելի սպառնագին էր գետաշենցիների ձայնը,- վերջապես ի՞նչ եք ուզում:

- Գիտեք բոլորդ, թե ինչ ենք ուզում, պիտի ենթարկվեք ընդհանուր օրենքին, վարչական փոփոխությունը մերժված է,- մռայլվեց փոխգնդապետը,- այստեղ չպետք է ժամանեն կասկածելի մարդիկ, որոնք իբրև թե եկել են իրենց ազգակիցներին պաշտպանելու:

- Մի՞թե դա այդպես չէ,- դարձյալ Թաթուլն էր:

- Իսկ այս մարդիկ ինչո՞ւ են այստեղ, չէ՞ որ այդ պարտականությունները նրանց վրա են դրված,- ներքին գործերի բաժնի աշխատակիցը ձեռքով ցույց տվեց ռուս սպաներին՝ ցինիկ ժպիտով սիրաշահելով նրանց արժանապատվությունը:

- Մենք նրանցից դժգոհ չենք,- ասաց գետաշենցի Մելիք Լազգյանը,- բայց հակառակն է անում Խանլարի ղեկավարությունը, կտրել են բոլոր տեսակի օգնություններն ու գոյատևելու հնարավորությունները, ուրիշ խոսքով՝ հասկացնում են, թե գնացեք:

- Ո՞ւր գնանք,- նրա խոսքը սպառնագին կտրեց Արսեն Անթանեսյանը:

- Տեսնո՞ւմ եք, ընկե՛ր փոխգնդապետ, սրանք գյուղի ծայներն են, լսել է պետք նրանց, այսպիսի գրոհային ստուգայցերը բացարձակ ավելորդ են,- հանգիստ տոնով ասաց Թաթուլը,- իսկ ինչ վերաբերում է ինձ և իմ ընկերներին, սա մեր տունն է, ինչքան ուզենանք, այնքան էլ պիտի մնանք, հենց դա՛ է պատմության դասաժամերի իմ գլխավոր թեման:

- Հետո՞,- հարցական նայեց միլիցիայի աշխատակիցը:

- Հետո այն, որ ես ուշանում եմ դասից, պիտի գնամ,- կտրուկ նետեց Թաթուլը և դուրս եկավ գրասենյակից:

Դրսում խմբված գետաշենցիների շարքերում Թաթուլը նկատեց Արթուրին, Տիգրանին, Մակիչին, Մասիսին, Լեռնիկին: Նրանք հագուստների տակ թաքցրել էին զենքերը և որևէ անակնկալի դեպքում պատրաստ էին միջամտելու: Թաթուլին տեսնելով՝ տղաները առանձնացան, քայլեցին դպրոցի ուղղությամբ:

- Հերթական հոխորտանք էր, եկել են հիշեցնելու, թե մենք թուրք ենք, այսքանը,- հեգնախառը ժպտաց Թաթուլը,- դասերից հետո կհանդիպենք եկեղեցում:

* * *

Գետաշենում զարմացած էին, որ ադրբեջանցիները համարձակվել էին գյուղ գալ, որովհետև նրանց աչքը միշտ էլ վախեցած է եղել այս շենից: Պարզապես այս անգամ նրանք գրասենյակ էին հասել ռուս բանակայինների և սպաների ուղեկցությամբ: Եկել էին տեղաբնակների տրամադրություններն ստուգելու, որովհետև նրանց նպատակն էր Ազատ, Կամո գյուղերի հայտնի ճակատագիրը փոխադրել Գետաշեն: Օմոնականները հենց այսպես էլ վարվել էին այդ գյուղերում, նախնական սարսափ էին տարածել, քայքայիչ աշխատանքներով, ուժի զոռով և պետական անօրինականությամբ ստիպել էին, որ հայ բնակիչները թողնեին հայրենի եզերքները, այլապես զոհ կդառնային օմոնականներին և թալանի սպասող խուժանին: Գետաշենն ուրիշ ուժ էր: Վաղեմի հեղինակությունը մարտնչող սերունդների հերոսականության ծվարով էր նստած այս գյուղի տիրույթում, այնպես որ ամեն մի տագնապի կուլ գնացող չէին տեղաբնակ մարդիկ, արթուն էր ոգին, ձեռքն ու ձիրքը տարածության մեջ կերտել էին, շենացրել, հիմա իրավունք չունեին թողնելու սրբությունները: Գետաշենն ուժեղ էր նաև այստեղ եկած

երդվյալ տղաներով, Հայաստանի ներկայությունն ու կամքը իրենց հետ բերած կամավորներով: Գետաշենը նրանց աննկուն շարքերում ճանաչեց Թաթուլին, Արթուրին, մյուս տղաներին, ովքեր վճռական պահին չնահանջեցին թուրք պատվիրակներից: Թաթուլը նրանց հասկացրեց, որ ինքը սոսկ ուսուցիչ չէ, այլև ֆիդայական հին փաղանգից սերված ոգեկոչը քսաներորդ դարավերջին, այս պատմական գյուղի նոր պատմության հերոսներից մեկը:

Գետաշենը գիտեր արժեքավորել իր պաշտամունքները և ահա այդ դարավոր շողքերի մեջ, մոտիկից ու մտերիմ գուրգուրեց Թաթուլին, տեսավ նրան նաև բանախոսելիս, բացառիկ հեռատեսությամբ ճանաչեց իր քաջազուն զավակին:

...Թաթուլն այդ օրը դպրոցից դուրս եկավ մտազբաղ: Գրասենյակում իր հանդիպած մարդկանց կերպարանքները դեռ չէին ջնջվել: Նրանց ասելիքի հիմքում Թաթուլը տարբերակում էր սպասվելիք ինչ-որ դավադրություն, զազրելի մի բան: Համենայնդեպս, դատարկ ու վերամբարձ նրանց խոսքի ձևը իրավունքի, ուժի պատվանդանից էր հնչում, որը, կարծես, խորհրդային զինյալների սրտով էր: Հենց այս վերջին միտքն էր Թաթուլին անհանգստացնում, հարկադրում ավելի ստույգ իմանալ վտանգի կոնկրետ ուղղվածությունը, նույնիսկ օրն ու ժամը: Երեկ կապվել էր Շահեն Մեղրյանի հետ, իրադրության հանդեպ նույն տագնապները հասել էր նրանց: Ենթաշրջանի հայ բնակչության որոշ հատվածների կտրուկ դիմադրությունը պարզապես խառնել էր օմոնականների հաշվարկները: Դա առաջին հերթին ցուցաբերում էին Գետաշենն ու Մարտունաշենը, որոնք ոսկորի պես խրվել էին օմոնականների կոկորդը և այս տարածքների կայունության երկու շատ կարևոր սյուներն էին: «Սրանց ճանապարհը ամեն կերպ փակել է պետք, եթե այսօր հապաղեցինք, վաղը ուշ կլինի: Ո՞ւմ թողնենք գետաշենյան դարպասը, այս եզերքն ու եդեմը...»: Թաթուլը, մտքերի լույսով լցված, եկեղեցու ճանապարհին ակամայից նայեց իր շուրջբոլորը: Ամենուրեք աշնան հասունություն էր՝ տանձ ու խնձորի, խաղողի, նուռ ու սերկևիլի ծանրաբեռն այգիներ, մոշի անսպառ տարածքներ, երկնասույզ ընկուզենիների, կանաչի ու դեղինի ոսկեմակույկ շռինդ, ծիրանացոլք միջօրե: Ամենօրյա այս պատկերներին Թաթուլը բնության կատարյալ շռայլության բազմապատկումն էր տեսնում: Ցավում էր, որ մարդու արարիչ բազուկներով ստեղծված բերքն ու բարիքը Գետաշենի սահմաններից դուրս չէին գալիս: Փակ էին գյուղից դուրս եկող ուղիները, բնաշխարհի հասուն պտղահյուսքերը մառաններում էին ավարտվում, գյուղը

փեթակի պես փակված էր իր դառն ու անուշ հորձանքների ծոցում, իր քաղցրը չէր ուզում օտարին տալ, իր դառնությունը ծածկում էր գետաշենյան մեծ բարության աշնանագույներով:

...Եկեղեցու բակում անսովոր աշխուժություն էր: Գետաշենի բոլոր թաղամասերից մարդիկ էին հավաքվել: Թաթուլն այսօր այսպիսի մարդաշատություն չէր ակնկալում, բայց նրանք եկել էին ոչ միայն տեսնելու, թե ի՞նչ է արվել եկեղեցու բակում, ներսում, շրջապատում, այլև զրուցելու Թաթուլի հետ: Եվ, իսկապես, հենց առաջին բարևից հետո տարեցներից մեկը՝ ալեհեր, բարձրահասակ ու պատկառազդու տղամարդն ուղղակի կտրեց Թաթուլի ճանապարհը:

- Գիտեինք, որ դասերից հետո եկեղեցի պիտի գաս, սպասում էինք,- ծերունական հոգու խորքերից վերագտած ժպիտը պարգևելով Թաթուլին՝ նա խոսեց մեծի իրավունքով,- էսքան հավաքվել ենք, որ շատ մոտիկից զրուցենք քեզ հետ, ախր քո մեծ սրտի ու խիզախության մասին գյուղում շատ են պատմում, բայց մենք առիթ չենք ունեցել էսպես դեմդիմաց հանդիպելու:

- Հայրի՛կ, սովորական Թաթուլն եմ,- պատանեկան շողով շիկնեցին նրա այտերը,- խիզախ գետաշենցիների կողքին կանգնելով՝ ընդունում ենք նրանց ուժի ու հմայքի փայլը,- Թաթուլը հայացքով ցույց տվեց ընկերներին,- նրանցից յուրաքանչյուրն արժանի է այն խոսքերին, որ դուք վերագրեցիք ինձ, կռվող են, մարտունակ, օջախի զավակներ են, հայկական հողի համար պատրաստ են իրենց կյանքը տալու:

Ծերունազարդ մարդը չխոսեց այլևս, մոտեցավ, գրկեց Թաթուլին, դողդոջ շուրթերով համբուրեց նրա ճակատը, և ներքին տաք գորովանքից ընդամենը երկու բառ ծաղկեցին շուրթերին՝ մատաղդ նիմ: Այնուհետև Թաթուլն ու Արթուրը հայտնվեցին գյուղի բազում մարդկանց շրջապատում: Երկար խոսեցին, հիմնական հարցը գյուղի պաշտպանությունն էր, գյուղամերձ դիրքերի ուժեղացումը, ոգու կայունությունը:

- Գետաշենը մեր ազգային ոգու փորձությունն է,- հավաքվածներին դիմեց Թաթուլը,- զգում ե՞ք, որ օր օրի ավելանում է մեզանով հետաքրքրվողների թիվը, գալիս են դրսից, ավելի հեռվից, կեղծ ու սարքովի պատճառներով թափանցում են Մարտունաշեն ու Գետաշեն և իրենց հաշվարկներով ստուգում են, տեղեկանում: Այս ձևական խաղերը մեզ հայտնի են: Ու մենք հրաշալի գիտենք, որ մեր հաղթանակը մեր միասնության մեջ է, գյուղից չխռովելու, չհեռանալու և, ամենակարևորը, չհուսահատվելու և մեկ բռունցք

դառնալու մեջ: Խնդրում եմ բոլորիդ,- Թաքուլը դիմեց հավաքվածներին,- առաջիկա կիրակի օրը լինեք այստեղ, միասին պիտի բացենք այս հնավանդ եկեղեցու դռները:

Փոխհամաձայնության եկան, բաժանվեցին: Թաքուլը ընկերների հետ դեռ անավարտ գործեր ուներ: Քառորդ ժամից այստեղ եկան դպրոցի ուսուցիչներ էդիկը, էլմիրան, Շուշանիկն ու Գոհարը, մի խումբ աշակերտներ, այնուհետև Լենան ամուսնու՝ Հրանտի և որդու՝ Ալեքսի հետ, Եղիշ դային և իր տղաները: Թաքուլը մեկ առ մեկ նայում էր, մանրամասնորեն ստուգում, ինչ-որ բաներ նորից տեղափոխում էին, տեղադրում ըստ պատշաճի: Կարծես ոչ մի բան չէին մոռացել, եկեղեցական կարգով տեղադրված էին բոլոր պարագաները: Ճիշտ բարձրության վրա էին աշտանակները, գավիթը փայլում էր նոր գույների մեջ, տեղադրվել էին փոքր ծավալի, բայց հաճելի տեսք ունեցող ջահեր, կարգավորվել էին էլեկտրական հոսանքի սնուցման բոլոր ուղղությունները, մկրտության ավազանը փայլում էր հյուսիսային պատի մեջ, ճաշակով ներկված էին հարթակները, լուսամուտները, սրահի մի կողմում դրված էին նստարաններ, պատերին ավելացվել էին առաքյալների դիմանկարները, փորձարկվել էր պղնձակոփ զանգը: Մանրազնին ու նրբաճաշակ նորացվել էին եկեղեցու թռիչքակամարները, որոնք գտել էին սլացքի իրենց նախնական գույնն ու պատկերները: Թաքուլի ափսոսանքը հաղորդվել էր բոլորին, որովհետև առաջինը ինքը, հետո մյուս տղաները արել էին ամեն ինչ, որ աննշան չափով չվնասվեին պատերի մեջ տեղադրված խաչքարերը, ներքնադիր տապանները, վիմագիր արձանագրություններն ու հիշատակությունները: Այսպես նրանք աշխատել էին շուրջ մեկ ամիս ցերեկային ժամերին, ինչպես նաև գիշերային պահակակետերից վերադառնալուց հետո: Բակում կատարյալ մաքրություն էր, պնդվել էին աստիճանաքարերը, ծառերի հովանու տակ նստարաններ էին կողք կողքի, լուծվել էր խմելու ջրի հարցը, տեղադրվել մատաղի համար նախատեսված զոհասեղանը:

- Հիմա կարող եմ ասել, որ դարերի խորքից մեզ նայող եկեղեցին ամբողջական վերադարձել է և իրավունք է տալիս գյուղի հպարտությունն ու խիղճը այստեղ հրավիրել,- հիացած ասաց Թաքուլը,- բացման ծրագիրը պատրաստ է, պետք է այդ արարողությունը կատարել եկեղեցական մեծ տուրքին վայել:

* * *

Շաբաթ երեկոյան Թաթուլն իր ղեկավարած աշակերտական երգչախմբի հետ էր: Դպրոցի դահլիճում նրան օգնում էին մայրենիի ուսուցչուհի Ժաննան և կազմակերպիչը՝ էդիկը: Ներկա էր Արթուրը: Վերջին փորձերն էին: Քիչ ավելի ուշ նրանք հոգևոր և հայրենասիրական երգերը կատարեցին նաև եկեղեցում: Ուշ ժամ էր, բայց փակ դռների հետևում՝ նախագավթում, երեխաները սկզբում մեկ ցածրաձայն ու աղոթալուր, մեկ հայրենակոչ տրամադրությամբ եկեղեցու կամարների տակ արձակեցին իրենց հոգու կանչերը՝ օրորելով հոգեպարար ձայներգության զարթնող քնարաշարը: Թաթուլը փափկացել էր հոգով, հեռացել օրերի հարկադիր լարվածությունից, իր սաների առաջին ունկնդիրն էր, առաջին կանչերի մեջ գրանցված՝ մտքով բարձրանում էր դեպի վեհը՝ տիրաձայն բառահյուսքերից քաղելով երանության ղողանջներ:

- Ապրե՛ք, սոխակնե՛րս, հրաշալի է,- երգից հետո բարձրաձայն ասաց Թաթուլը,- վաղը քննություն ենք տալու Քրիստոսի առջև՝ գետաշենցիների համար, Աստված ձեզ օգնական:

Հետո խումբ-խումբ դուրս եկան, երեխաները տաք զրույցներով գնացին գյուղի տարբեր փողոցներով: Իսկ Թաթուլին սպասում էին հիվանդանոցում: Վիրաբույժ Գևորգը նրան դիմավորեց բակում, մոտեցավ նաև գլխավոր բժիշկ Սարգիս Հակոբքյոխվյանը: Ներս գնացին: Այստեղ էին «Ալաշկերտի» Հրաչը, Մարտունաշենի «Արաբոյի» Մանվելն ու Սիմոնը (Դեդը), «Մալաթիայի» Վահանը, Թաթուլին նվիրված քաջակորով զինակիցը՝ Արթուրը: Քիչ հետո ներս մտան գյուղխորհրդի նախագահը, Երևանից ժամանած Աշոտ Քալանթարյանն ու լրագրող Վարդան Հովհաննիսյանը: Հերթապահ քույրերը գլխավորի աշխատասենյակում սուրճ, թխվածք և Գետաշենի արևահամ մրգեր մատուցեցին: Նախ խոսք գնաց վաղվա արարողության մասին, գալու էր Արցախի թեմի առաջնորդ Պարգև սրբազանը, հյուրեր էին լինելու Շահումյանից, Մարտունաշենից: Հետո միանգամից փոխվեց թեման: Թաթուլը, կանխազգալով առաջիկա դեպքերը, կոնկրետ առաջարկություններով անդրադարձավ երկու գյուղերի պաշտպանական դիրքերը ամուր դարձնելու խնդիրներին: Հատկապես այս հարցում կարևոր համարվեց լսել Աշոտ Քալանթարյանին:

Երևանցի բազմափորձ ինժեները հայտնի մարդ էր: Նրա տեխնիկական հմտությունը կապված էր նաև ականների ստեղծման հետ:

- Եթե ոչ այսօր, ապա վաղը՝ մոտ ապագայում այդ սարքերն

անհրաժեշտ են,- ասաց Թաթուլը,- դրանք պետք է առայժմ պահպանվեն այնպիսի վիճակում, որ վնաս չպատճառեն գյուղի մարդկանց, երեխաներից հեռու լինեն:

- Կարծում եմ՝ ամեն ինչ կլինի այդպես,- կողքի փոքրիկ բժշկական սեղանին թափված գծագրերից կտրվեց Քալանթարյանը:

- Մարտունաշեն մտնող ճանապարհներին ու հանդամասերին մեծ ուժգնության սարքեր կմոգոնես,- ծիծաղեց Դեղը,- ես գիտեմ, թե որ հատվածում այդ սարքերը «բարի գիշեր» կասեն ավազակախմբերին:

- Տեսե՛ք՝ բերետավորները հոտը չառնեն, գլխացավանք կլինի,- միջամտեց Հրանտը:

- Գյուղխորհուրդը միշտ զգուշավոր է,- ժպտաց Թաթուլը և ավելացրեց,- շատ էլ տեղին է նրա անհանգստությունը, իմացե՛ք, որ նրանք հետաքրքրվում են ամեն ինչով:

- Բայց թե ինչ էլ լինի, այդ ուժի կուտակումը պետք է,- ասաց «Ալաշկերտի» Հրաչը,- մեր տեղամասում, ուր դիրքերն ավելի են ձգվում գյուղից դուրս, կանխազգում ենք վտանգը, տեղաշարժերը, այս վարագուրված լռության փոփոխական բնույթը:

Իրենց կարծիքներն ասացին Մանվելն ու Վահանը: Տղաները զուսպ էին, կտրուկ, նայում էին իրար, թաքուն մի հպարտությամբ փոխանցվում մեկմեկու, հուզմունքը արտաքսել էին սրտի հեռավոր անկյունները: Նրանք խոսում էին կշռադատված, ինչ-որ բաներում հակասությունը հարթել գիտեին, դարձել էին զարմանալի համբերատար, զիջող: Սակայն այդ ամենը թվացյալ էր, այստեղ՝ հիվանդանոցում, ուրիշ ի՞նչ պիտի անեին, ո՞ւմ պիտի զարմացնեին: Յուրաքանչյուրն իր սկզբունքի, իր պաշտպանական տեղամասի տերն էր, իրենց հետ կամովին միացած տղաների ճակատագրի տերը Գետաշենում ու Մարտունաշենում:

Տղաները, Թաթուլի առաջարկությամբ, թույլ տվեցին, որ Աշոտը ներկայանար իր ծրագրերով: Նրան արդեն լավ էին ճանաչում, անգամ ազերիները գիտեին Քալանթարյանի մասին, նրան փնտրում էին իբրև ծայրահեղ խռովարար: Երբ Աշոտը ամենածանր ու վտանգավոր պայմաններում զոդման աշխատանքներ կատարեց՝ վերականգնելով ազերիների կողմից պայթեցրած Մարտունաշենի ջրատարը, միանգամից հայտնի դարձավ այստեղ: Տղաները ոչ միայն հավատում էին նրա խոսքին և ընդունում նրա խելացի ծրագրերը, այլև նրա ներկայությամբ կրկնապատկված ուժ էին ստանում:

Այնուհետև Թաթուլը ներկայացրեց երևանյան իր հանդիպումները, կանխատեսվող հնարավոր զարգացումները: Խոսեց ոչ այնքան

երկար, այլ փաստերով, աշխատեց զգայական չլինել, հուզական մտորումների տեղիք չտալ:

Այնուամենայնիվ Թաթուլը մռայլ էր: Հրաչը փորձեց հարց ու փորձով իմանալ ընկերոջ անտրամադրության պատճառը, չստացվեց, կոնկրետ ոչ մի բան չվկայակոչեց նա:

- Երևի դստրիկին է կարոտել,- մտերմաբար ասաց վիրաբույժ Գևորգը:

- Գևո՛րգ ջան, դու քո հինգին ես կարոտել, ես էլ՝ իմ մեկին,- Թաթուլի աչքերը պայծառացան,- նրանք մեր ուրախությունն են, նեղ ընկած տեղը հրամայում են, մեր կողքին են, հուշում են, տրամադրում: Ինձ հիմա ուրիշ բան է հուզում, այլ մտորումների և անհանգստության տեղիք տալիս: Պատմությանը հայտնի են շատ դեպքեր, երբ Հայաստան երկրի ինչ-որ ծայրամասում տագնապ է հնչել, առաջինը կամովին ոտքի են ելել հայրենասիրական խմբերը, սակայն տիրող վերնախավը կամ սթափ չի եղել կամ շատ է ուշացել գործնական քայլեր անելիս:

- Կարծում ես՝ կարող են Գետաշենի հարցում ավելին անել, բայց հապաղո՞ւմ են,- ստուգիչ հարց տվեց գյուղխորհրդի նախագահը:

- Ես ոչ մի բան չեմ կարծում, զգում եմ, որ Գետաշենում ու Մարտունաշենում ինքնապաշտպանության համար պակասավոր շատ բաներ ունենք,- համբերության ափերից դուրս եկավ Թաթուլը,- ես եղա այնտեղ, ամեն օր այս մասին ասում ենք, ռադիոկապով հաղորդում, ներկայացնում մեր հաշվարկները, տարին շուտով վերջանալու է, սակայն ամբողջական խոստացածը չկա,- նա մի պահ ընդհատեց խոսքը,- գիտեմ, որ դժվար է նաև այնտեղ մերոնց համար, լայն ճակատով պաշտպանություն է պետք, բայց այս եզերքը, տղե՛րք, պիտի պահենք, մեր փառքի օրորոցն է սա... Շնորհակալ եմ Աշոտ Քալանթարյանին, նրա միտքը, արարիչ ձեռքը, նրա փորձն ու գիտելիքները մեզ հետ են: Մենք էլի կուժեղանանք, այս գյուղի կռվող տղերքի հետ դաս պիտի տանք, միայն թե ռուսը չմիջամտի, թուրքերը նրան խորամանկորեն չշահագրգռեն, չքաշեն իրենց կողմը:

- Թաթուլը ճիշտ է, տղե՛րք,- ասաց Հրաչը,- զենք է պետք, ինչքան ասես կռվողներ կան այս գյուղերում:

- Ես հիմա հասկացա, թե ինչու ես տխուր, եղբա՛յր,- թեթևակի ժպտաց վիրաբույժ Գևորգը՝ նայելով Թաթուլին,- այդ կռվող տղերքի ցուցակում բժիշկներիս չմոռանաս՝ նշան ի ճակատ խփողներ ենք:

Թաթուլը իրապես գիտեր, որ Գևորգը ճակատին խփող զինվոր էր, նրա համարձակությանը, վճռական և աներեր կամքին արդեն

ծանոթ էր: Եվ երբ ոտքի կանգնեց գնալու, առաջինը նրա ձեռքը սեղմեց: Վիրաբույժներ Գևորգն ու Սարգիսը իրենց հաստատուն համախոհներից էին: Նրանք դիրքեր չէին գնում, բայց բժշկական անձնակազմով այս երկու գյուղերի առողջապահության դիրքերում էին: Ընդհանրապես բարեհամբույր էր բժշկական անձնակազմը, բժիշկներն արձագանքող էին, ընկերական, իրենց մասնագիտության ասպարեզում հմտացած: Նրանց օգնությանն էին դիմում այս երկու գյուղերում տեղակայված խորհրդային բանակի զինվորներն ու սպաները և ստանում այն ամենը, ինչը գետաշենցին:

Եվ ամեն անգամ Սարգսին ու Գևորգին հանդիպելիս Թաթուլը եղբայրական անհուն զգացումով էր ակնածում, անսքող հիացումը չէր թաքցնում, նրանց բարեհամբույր ընդունելությունը, պատրաստակամությունը, պարզապես ամեն ինչից վեր էր դասում, գիտեր գլխավորի սերը ծննդավայրի նկատմամբ և վիրաբույժ Գևորգի ինքնամոռաց սխրանքը. կնոջն ու հինգ երեխաներին թողած՝ եկել է «կրակի բերան», գիտեր, որ կարող էր զոհվել: Թաթուլն այստեսակ մարդկանց էր սիրահարված, որովհետև ինքն էլ չէր կարող հարմարվող լինել, հարմարավետ տեղ որոնել, սեփական մարմինը ցրտից ու գնդակից հեռու պահել: Միայն երդումով չէին ծնվում վճռական ու անձնազոհ լինելու հատկանիշները: Դրանք գեներով ու արյունով են գալիս, ապուպապերի շնչով՝ շուլալված իր ճակատագրի արծվաթևերին:

...Հիվանդանոցի բակում դեռ կանգնած էին ջոկատների հրամանատարները: Այն, ինչի մասին քիչ առաջ խոսում էին կարծես, չէր բավարարել Թաթուլին, Հրաչին, Մանվելին: Ներկաների հանդեպ ոչ մի կասկած չունեին, բայց պետք էր առանձին հարցերի շուրջ դարձյալ վերլուծություններ և ճշգրտումներ անել: Զրույցն ավելի կոնկրետացավ, խոսքը դարձյալ ուղղված էր հատկապես զենքի հայթայթմանը, այն թեկուզ ինչ-որ կերպ խորհրդային զինյալներից գնելու հնարավորությանը: Մոտեցավ Աշոտը, նրա հետ նույնպես գործողությունների նոր պլան մշակեցին, մտահոգություն արտահայտեցին Աշոտ Քալանթարյանի անձի պահպանման, նրա հուսալի պատսպարվելու ուղղությամբ:

Գետաշեն ժամանած ջոկատները թվացյալ հանգիստ էին, ցերեկային ժամերին կասկածանքի տեղիք չէին տալիս, իրենց պահում էին շատ սովորական, սակայն ողջ գիշերը հետախուզում էին հակառակորդի տեղաշարժերը, նրանց ավազակային հարձակման ուղղությունները:

Փողոցում կանգնած էր Թաթուլի «Վիլիսը», քիչ այն կողմ, թամբած ձիերի սանձերը բռնած, սպասում էին գյուղի տղաները, նաև կամավորներ առանձին ջոկատներից: Գիշերային դիրքերում սպասողներ կային: Լենա մայրիկը որդու՝ Ալեքսի հետ պատրաստի ուտելիք, ճաշատեսակներ և թարմ հաց էր բերել: Բաժանեցին՝ ըստ կարգի, ապա յուրաքանչյուրը գնաց կոնկրետ հանձնարարությամբ:

...Թաթուլը գիշերվա ժամը 3-ին վերադարձավ: Տղաները դիրքերում էին: Ինչպես միշտ, քունը չէր գրոհում, նա մեկ հանգիստ էր, հազարապատիկ՝ խռովյալ: Անցած օրվա անցուդարձերը մտքերի պարսով գումարվել ու գալիս էին: Պատշգամբից իր առջև ընդգրկված էր գյուղի խիղճը, ալեկոծ Գետաշենի խիղճը: Բարձունքի թաղամասերի վերին տներից մեկում լույսը չէին հանգցրել: Թաթուլը ուշադիր նայեց, հայացքը սուրաց այնտեղ: «Երևի նորածինը չի քնում, մայրը հանգստացնում, կերակրում է նրան: Երևի...»: Թաթուլը գուշակումներից հեռացավ, աչքերը փակեց ու ներքին հայացքով հասավ Արեգ, օրորոցում գտավ իր Ասպրամիկին, նրա ժպտուն դեմքը, մանկանը գուրգուրող Իրինայի ձեռքերը: Այդպես երկար մնաց, ապա բացեց աչքերը՝ ներքևում Գետաշենն էր, բարձրատան լույսերը դեռ վառվում էին: Հետո թվաց դրանք գումարվեցին և շատացան: Թաթուլին խավարի ընդերքից ներկայացավ լուսաողող մի աշխարհ, ուր իր Ասպրամիկի նման գուրգուրանք պահանջող մանուկներ էին, կանչող երազանքներ, թրթռուն ծիծառների ծլվլոց: Թաթուլը, ասես, լսեց նրանց հավաքական ձայնը, հետո իր սաների իրիկնային երգերը եկեղեցու գավիթում, դեմքը քիչ-քիչ պայծառացավ, և վաղվա սպասելիք օրհնանքից մի պատառ աղոթք ծաղկեց նրա աչքերում:

* * *

Գետաշենում այդ առավոտ Աստծո կամոք լույս էր հեղվել: Արև էր, աշնան ոսկեփետուր շոյանք, բարձունք ու քերծ, անդունդ ու արահետ շիկնել էին եկեղեցու զանգածփանքներով: Այգածորից շիկացել էին տիրանվեր լուսասյուները, որոնք ճառագայթյալ պարուրել էին եկեղեցին, սփռվել դեպի սրբատեղի ձգվող մեծ ու փոքր ճամփաներին, հրավերքի աղոթալար հորդոր էին և բարության վերնառաք ընծա:

Իր դռներն էր բացել Սուրբ Աստվածածին եկեղեցին: Այսպես ե՞րբ էր իր աղոթք-պատարագին մերձեցել Գետաշենը: Մեծերը չէին հիշում, բայց Գետաշենի շուրջբոլոր փռված խաչքարերի դաշտը,

Եղնասար վանքը բարձունքներին, սուրբ Նշան եկեղեցին Ներքին թաղամասում հիշողության անկորնչելի մասունքներով վկայում էին հայոց մտքի ու բազկի արարչությունն այստեղ՝ պատմական Ուտիք աշխարհի Շակշեն կամ Գարդմանաձոր գավառի սքանչելի շենում՝ Գետաշենում:

Թաթուլը գիտեր, որ այս ամենի զարդը գյուղի հին թաղամասի ուղիղ կենտրոնում, դեպի հարավ նայող ձորալանջին բարձրացած Սուրբ Աստվածածին եկեղեցին էր, որի հանդեպ չդադարող պաշտամունքը շողշողում էր տեղաբնակների հոգիներում: Վիրավորական էր, որ տասնամյակներ շարունակ այն վերածվել էր պահեստ-մառանի, արտաքսվել էին շշուկն ու շարականը, սաղմոսն ու սրինգը: Թաթուլն ու իր ընկերները, գյուղի երիտասարդությունը, ուսուցիչներն ու դպրոցականները փլուզված հիշողություններից հետ բերեցին լույսի տաճարը, երկու ամիս շարունակ մաքրեցին, կերտեցին, վերանորոգեցին, վերազարդարեցին... Այդ ընթացքում, կարծես, հասկացան, որ շենքը թեև վիրավոր էր, բայց օրհնանքի տուրքը չէր խռովել, զգացին, որ ճաք տված պատերի մեջ, փորագիր խաչ ու բառերին ծվարած աղոթքը չէր ցամաքել, հույսը ձգվել էր դարերի միջով, եկել հասել էր ազատություն և հայրենիք պաշտող այս երիտասարդներին:

...Եվ երբ Պարգև սրբազանն իր բացառիկ օրհնանքի խոսքն ասաց, բակում երկփեղկվեց ամբոխը, բացված միջանցքով եկան ազգային տարազ հագած դպրոցականները, առջևից Թաթուլի դպրոցական երգչախումբն էր, ապա Գետաշենի ու Մարտունաշենի պաշտպանները, երիտասարդ աղջիկ-տղաներ: Հնչեցին եկեղեցու զանգերը, վերադարձի լուսապսակ հիշողությունը աղավնաթև օդ բարձրացավ, գնաց, տարածվեց գյուղի տանիքներին, հանդ ու կիրճերին: Եկեղեցու ներսում ճերմակ շուշանաշուք էր, աղջիկները՝ սպիտակ հագած, վառված մոմերը ձեռքներին, մայրերն իրենց գրկանոցներով, ծերունազարդ մեծերը՝ բազմած աթոռներին: Գավիթը լուսավոր էր, շողասփյուռ թրթիռները նկատելի ցոլցլում էին բարձր գմբեթների տակ: Զարդարուն կամարները նման էին դրախտից իջած Աստծո թևերի, որոնց ամենագթոտ գուրգուրանքի մեջ գետաշենցիներ էին, Մարտունաշենից եկած հավատացյալներ, հյուրեր Շահումյանից, Ստեփանակերտից, ազատարար ջոկատների մարտիկներ: Մարդկանց հոսքը գալիս էր, եկեղեցի ձգվող բոլոր ճամփաները սաղմոս-երգ էին բերում, չէին դադարում շարքերը, գալիս էին՝ մատաղացու գառներն իրենց առջևը գցած, ծաղիկներով,

մրգերի զամբյուղներով, իրենց տներում պահված հին սրբապատկերներով, ընտանիք-ընտանիք՝ տան մեծ ու փոքրով:

Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաբացմանը սպասում էին բոլորը: Կուտակված հին կարոտը տեղի տվել, փափկացել ու հորդում էր գյուղի բոլոր թաղերից: Օրեր շարունակ մտածում էին, թե ով ինչպես է ներկայանալու: Երեխաները միշտ խոսել էին դպրոցից, Թաթուլից, նրա երգչախմբից ներկայացրել բազմաթիվ պատումներ, երգեր: Եվ ահա հասել էր ուխտագնացության ժամը: Ամեն մեկն իր հոգում պահպանած խորհուրդ ուներ, զրույց մերձավորի, պանդուխտների, պատերազմից տուն չվերադարձած ութ հարյուր և ավելի գետաշենցիների, անժամանակ կյանքից հեռացածների, ծնողի ու զավակի, քրոջ ու որդու հետ: Հավաքական սիրով ուխտ էր այդ՝ բացված սեփական դռների առջև, Քուրակ գետափին, ամբողջական սեր էր առ Աստված: Զարմացած էին ռուս զինվորներն ու սպաները, որոնք կենցաղի տնից եկել, քիչ ավելի հեռու՝ բակում կանգնած, հետևում էին աստվածապաշտ գետաշենցիների անխառն հավատքի ծեսին:

Գավիթում՝ բարձր պատվանդանին կանգնած, օրհնանքի իր խոսքն ասաց Պարգև սրբազանը, օծեց վերաբացված եկեղեցին, մյուռոնաշողք ցողեց վեր ու վար: Բարձրախոսներից նրա օրհնաբանությունը տարածվեց ներսում, դրսում, կարծես ողջ Գետաշենը քրիստոնեական վեհաշուք տոնի արարողության մեջ էր: Բաղձալի կենսականչերը թելիկ-թելիկ ծորում էին շուրջբոլոր, անմեղ տենչերի ըմբռնելի հաղորդությունը գրավում էր սիրտ ու հոգի, աչք ու ականջ, ոչ ոք անտարբեր չէր, տեսնում էր իրեն Աստծո տան ճանապարհին, բացել էր իր խիղճը, հաշվետու էր իր ու երկնավորի առջև, հավատք ուներ հայրենի բնօրրանի, նրա արարիչ ձեռքերի և լուսահոգի պապերի առջև: Ոչ ոք չէր թաքցնում իր բախտի լուսե պատեհությունն այս աշնան օվկիանում՝ այստեղ՝ այս վիթխարի ներկայության մեջ տեսնելով իր ապրելու կարիքը, իր կամքի կատարելին: Սա էր հոգեբարուր զարթոնքի կրակը, որ սրտերի անքուն բուրվառներով տաք էր պահում եկեղեցու պայծառատեսիլքը:

Մկրտության ավազանի մոտ կանգնած էր Թաթուլը՝ մարտական ընկերների, իր զենքի ու մտքի համախոհներով շրջապատված: Նրանք Գետաշենի լուսե վկայությամբ Պարգև սրբազանի արարողակարգի խոսքից հետո մկրտվեցին: Ավազանի մյուռոնաջրով ցողվեցին նրանց վեհ ճակատները, լանջն ու բազուկները, լուսո մկրտության սրբազան թրթիռները ընծյալ տաղերով պարուրեցին

նրանց հոգիները: Երգեց երգչախումբը՝ ղողանջելով հոգևոր, աստվածապարգև շարականներ: Մկրտության խորհուրդը, հույզերի քնարական փունջը և վեհահաղորդ բառահյուսքերը մեղմանուշ բարձրացան գավիթն ի վեր, հետո կամարներին զարթնած աղոթաբույրը, ասես, իջավ երկնից, նուրբ ու մեղմանուշ հուսամերան ցողեր մաղեց, ծածանվեց մտերիմ մի հաշտությամբ, որ անհուն իմաստություններից էր քամվել, անուն ուներ, սեր ու սիրտ էր փնտրում և ուզում էր ամեն ինչ խաղաղորեն բաժանել մարդկանց:

Գետաշենը կնքահայրը եղավ իր սրբազան նպատակներին անդամագրված քաջերին: Մկրտություն էր ու երդում, խոստովանանք էր, կոչ, բոլորակ բարության երկունք էր, իսկ գույները բոսոր էին կամարների տակ: Այդ շողաբորբ սրահներում այնքա՜ն սպասում ու կարոտ էին պայթել իրենց բողբոջներից, այնքա՜ն կերոններ էին բոցկլտում սեփական ցավ ու աղոթքների արթուն դրոշներով: Խաչերի հանդարտահոս ընծայություն էր, ստանում էին մկրտվողները, գրկանոցները, թոթովախոս մանկտիք: Բուրվառներից խնկածաղկի զգլխիչ բուրմունքն էր ծորում, ծխալույս մշուշը Աստծո աչքերի արծաթ-եղյամով կաթնաշուք էր շաղել մույթերում, թափանցիկ վարագուրել եկեղեցու մանրաքանդակները, պատն ի վեր մեկնված խաչարձանը, ծվարել քարակոփ աղավնիների կիսախուփ աչքերում: Մարդիկ չէին խոսում, բայց իրարու հաղորդ էին, աչքերով էին փոխանցվում, հասանելի էր սրտերի լեզուն, իրենց հոգիներում շարունակվող վսեմության առջև խորան էին բացել և հիմա եկել, ծունկ էին իջել եկեղեցու բաց խորանի առջև: Պարտք ունեին հնի հանդեպ, Գետաշենում դեռ փակ մատուռների, ընկած խաչքարերի, ծաղկած հիշողությունների հանդեպ:

Թաթուլը, հենված պատին ի վեր խորադիր խաչքարին, ըմբոշխնում էր հիացքի այս աննախադեպ փոթորիկը, մեղմում հոգու հրդեհը, անծիր տարածքներ էր տեսնում, նաև հզորների, հին մելիքների միաբան կեցվածքը, որ պատմության պտույտները շուռ տված՝ եկել էին տեսնելու իրենց ծոռների էպոսական ծռությունը, որ նրանք գետաշենյան կիրճերին ապավինած՝ Սուրբ Աստվածածին եկեղեցու վերագտած հրաշքով դեմ էին կանգնել մի խուժանի, որն օր օրի գայլահաչ էր տալիս, մոտենում էր, մռմռում, մոլուցք ուներ ու մոլագար էր:

Թաթուլը զարմանալի տեսիլքով գերբնական ուժ էր գտել այստեղ՝ եկեղեցու պատերի մեջ, Գետաշենի զորության էջն էր, որ գյուղը պահել էր իր ասքերի համար: Օրն այս ոգու ասքապատում էր,

բարեընծյալ բնազդների ընտիր առաքելություն, որոնք ոսկեդրվագ զարդարում էին պաշտամունքի եկած մարդկանց: Պաշտողն ու պաշտամունքը իրար չէին կորցրել, բայց այսօր հանդիպել էին, ինչպես մայր ու մանուկ:

Բակում մեծ շրջան բացվեց, կենտրոնում դպրոցականների երգչախումբն էր: Թաթուլը մի պահ կանգնեց նրանց առջև, ինչպես հրամանատարն իր ջոկատի, ձեռքը վեր պարզեց, բոլորը միացան նրան, և եկեղեցու ողջ հրապարակը երկինք միտված ձեռքերի շարասյուն դարձավ: Բռունցքվեցին, հոգով բերկրացան: Թաթուլը իջեցրեց ձեռքը, ապա մյուսները, և միանգամից թնդաց երգչախումբը: Հայրենյաց խրոխտ երգերի շարքը միանգամից շղթայեց, տարավ մի ուրիշ աշխարհ՝ ծիսական օրվան հաղորդելով դղրդացող փառքերի բարեբանում: Արձագանքների կրկնակ կանչերը կախարդիչ պարույրներով նվաճում էին շրջապատը, հարատևող հույսերի և արժանապատվության փառահեղ մկրտության կոչում: Ժողովուրդը ծափահարեց, ցնծաց, պահանջեց Թաթուլին մոտենալ խոսափողին: Թաթուլը պատրաստ էր, գիտեր, որ դա լինելու էր: Մի պահ իր լայն ժպիտով նայեց հավաքվածներին, հայացքը սահեց եկեղեցու բարձրադիր խաչի մոտով, հասավ դիմացի սարերը: Լենան մոտեցավ, մայրաբար համբուրեց նրան, և միասին մոտեցան խոսափողին:

- Քեզ համար, Գետաշե՛ն, քիչ է այս ցնծությունը, քո ուսերին դարերի հպարտությունն է, քո հոգում՝ կրակը արժանահիշատակ պապերի: Սուրբ Աստվածածին եկեղեցին նորոգ հայտնությամբ հավաստում է գետաշենցիների մտքի և ոգու գերագույն վսեմությունը: Պատմության դժվարին ճանապարհներին այս հրաշք-հեքիաթային բնաշխարհում իրենց արյան կանչն ու հոգևոր արժեքները պահպանելով՝ բարդ ճակատագրի առջև մշտապես անխոցելի են եղել Գետաշենի հին ու նոր սերունդները:

Այսպես տասը րոպե Թաթուլը կախարդեց ներկաներին: Խոսում էր հատ-հատ, ընտրյալ բառերով, հնի ու նորի ցավն էր միավորում, հնի ու նորի հույսն էր մեկտեղում՝ չմոռանալով հավատն ու հայրենիքը, հողն ու հիշատակությունը, արյան կանչն ու արժանապատվությունը: Հետո իր գրած բանաստեղծություններից մեկը կարդաց, ապա գուսան Հայկազունու երգը զրնգաց ձայնասփյուռների մեծադղորդ տարողությամբ: Մի պահ ծափերը ուղեկցեցին, ապա նահանջեցին, մնաց ինքը մենակ իր երգի, իր կանչ ու կոչի, իր Գետաշեն սիրեցյալի հետ: Մրմունջները պատռել էին մորմոքների շապիկը,

մեղեդային ելևէջները խեղճացել էին ձայնածոցերում, բուրվառների ծուխը չկար, դրսում բոցե մկրտություն էր, կնքահայրը Թաթուլն էր:

«...Դեռ ճամփա ունենք, ոչիս հասնենք Սասուն,
Քաջերի հողը մեզ է սպասում...»:

Այս տողերը հույսի կրակեն ակոս էին բացել ներկաների սրտում, երգում էին կրկներգը Թաթուլի հետ, միացյալ էին, միասիրտ: Թաթուլը նրանց լուռ ճիչերի միջով ձգվում էր դեպի վեր, ուր գետաշենյան փառքերի օրորն էր: Խանդավառության և լուռ խաչակնքումի միջև երգը հուսամերան բացել էր իր հորդորների հմայքը, ձգում էր սիրերգի պես, տաք սաղմոսի նման հավաստում ապրելու գաղտնիքը:

Երգը ավարտվեց, բայց չավարտվեց ոգու ճախրը: Հնչեց զուռնան, Թաթուլը հարթակից ոստնեց ցած, միացան պարող տղերքը, գետաշենցիներն ու հյուրերը, դպրոցականներ, որոնց Թաթուլը նաև պարի դասեր էր տվել: Սեծ շրջանի կենտրոնում արծվային թռիչք էր ու թնդյուն, ուժեղների, կորովի այրերի ու թևաթռիչք աղջիկների միացյալ պար:

Պարաշղթայի կենտրոնում Թաթուլը մենակ էր՝ անկարելի թվացող շարժումներով, ռիթմի ու անցումների կայծակնային դղիրդ, աջ ու ձախ ոտքերի ճախրուն կորագծեր, ուսախաղերի ալիք, անսովոր ու անպատմելի մենապար, որ Գետաշենը երբեք չէր տեսել: Վաղուց այսպիսի թռիչքի չէր գնացել նաև Թաթուլը, կուտակվել էին դրական ու բացասական լիցքերի ալիքները, և հիմա դրանց փոթորիկն էր: Ոչ ոք չէր համարձակվում մոտենալ նրան, կենդանի տեսիլքը կկորցներ իր իմաստը: Բոլորի աչքերի առջև, կարծես, վաղնջական օրերում հիշվող հսկաներից մեկն էր վերադարձել, ուղիղ էր, շիտակ, իր խոսքի պես կրակոտ, իր պարի նման պոռթկուն, անսանձ ու չենթարկվող: Թաթուլը նույնիսկ այս կրակոտ պահերին չէր կորցնում չափի զգացումը, սլանում էր հավասարակշիռ, մի ուղեծրով, որտեղով իր պապերն էին անցել, արեգցի գաղթականների զավակները, իր պատանության ընկերները, որոնցից մեկը՝ Տիգրանը, միակ վկան էր Գետաշենում: Նա հմայված էր Թաթուլով, հոգին ծափահարում էր, սիրտը տեղից ելել, ճախրում էր դեպի Արեգ ու Արտին սար:

Երբ պարը ընդհատվեց, ժողովուրդը իններորդ ալիքի պես պոռթկաց, միացավ, միաձուլվեց: Թաթուլը սկզբում հայտնվեց երիտասարդների ուսերին, ապա գնաց, խառնվեց դպրոցի աշակերտությանը: Ծափերի և ցնծության այդ հորձանքը Գետաշենը միայն եկեղեցու վերադարձով չէր պայմանավորում: Ուրախությունը հավաք ուժերի միասնական ճակատի համար էր, նրանց, ովքեր

Գետաշենի պաշտպանական դիրքերում էին, ովքեր վախեցրել էին թշնամու աչքը, ովքեր տեր ու պաշտպան էին այս չքնաղ եզերքում:

Մատաղի արարողության ողջ ընթացքում չդադարեցին զուռնան, պարն ու երգը: Մատաղացու գառները զոհաբերվում էին Սուրբ Աստվածածին եկեղեցու նոր դարձի և թանկ այլ հիշատակների համար:

Հետո լայն սեղաններ բացվեցին, ճոխությունը՝ գետաշենյան միրգն ու աշնան բարիքները, գինին ու օղին, հորդեցին անսպառ: Երախտիքի և շնորհակալության բազում խոսքեր հնչեցին: Գետաշենյան փառքի ու նրա պատմական անցյալի մասին ընդարձակ ելույթներ ունեցան բանասիրական գիտությունների թեկնածու Բենիկ Սիսյանը, «Գետաշեն» հայրենասիրական միության նախագահ Ռիտա Չիլինգարյանը, գյուղխորհրդի նախագահ Հրանտ Գյուրջյանը, դպրոցի տնօրեն Շմավոն Ղուլղազարյանը:

Հայրենասիրական և ոգեղեն էր Պարգև սրբազանի ամփոփիչ խոսքը: Նա մեծագույն սիրով ու հարգանքով դիմեց գետաշենցիներին, նրանց ցանկացավ արիություն, կամք ու տոկունություն և տերունական աղոթքով եզրափակեց:

Մինչև ուշ երեկո եկեղեցու դռները բաց էին, լուսավոր էին ներսն ու դուրսը, այցելուների թիվը չէր պակասում, մոմեր էին վառում, վեհանում էին, իրար ականջի բարի խոսքեր շշնջում:

Բակում՝ սեղանների շուրջը, դարձյալ շատ-շատ էին: Նրանց խոսքն ու զրույցը հանգիստ էին, լուռ հասկանում էին իրար: Այդ օրը մկրտված տղաները հավաքվեցին մեծ սեղանի չորս բոլորը, շնորհավորանքի խոսքեր էր ասվում, բարեմաղթանքներ հնչում: Լենա մայրիկը ամենից շատ էր ուրախացած, մոտեցավ, բոլոր տղաներին համբուրեց և հուզմունքով ասաց.

- Դուք իմ զավակներն եք, ձեր ծնողներին այստեղ ես եմ փոխարինում, Աստված ձեզ օգնական:

- Թաքո՜ւլ, էդ ի՞նչ կրակ պար էր,- տեղից թնդաց վիրաբույժ Գևորգը,- երեկվա մռայլ ու մտածկոտ Թաքուլն այսօր կրակե մի ուրիշ շապիկ էր հագել, ա՜յ քեզ գաղթականի պար:

- Զարմանալի էր, հրաշալի՜,- ընկերոջը միացավ բժիշկ Սարգիսը:

- Դպրոցական երգչախումբը մեկ ամսում պրոֆեսիոնալ դարձավ,- նրանց միացավ դպրոցի տնօրեն Շմավոն Ղուլղազարյանը: Նա ոգևորված էր, գինով լի գավաթը վերցրեց, ոտքի կանգնեց,- սրտանց ուզում եմ երախտագիտության խոսքեր ասել այսօրվա աննախադեպ միջոցառման հեղինակներին, Գետաշենի բնակչությանը, նրա պաշտպաններին նոր ուժ և հավատ բերած այս

հրաշալի այրերին, նրանց թվում, իհարկե, իմ պայծառ բարեկամին՝ ուսուցիչ-պատմաբան, երգիչ-բանաստեղծ, հայրենասեր-հայդուկ Թաթուլ Կրպեյանին: Խոստովանվենք, որ այս ամենի ոգեշնչողն ու նախաձեռնողը նա է՝ հարգանքի արժանի, սիրո և մեծ նպատակների երիտասարդը, որին էլ ես բերում եմ մանկավարժական կոլեկտիվի, գյուղի ողջ մտավորականության, Գետաշենի մեծի և փոքրի սերն ու երախտագիտությունը:

Թաթուլը շիկնեց հոգու խորքերց, նա գովք չէր ընդունում, մանավանդ, երբ ընդհանուրի բաժնից իրեն շատ էին մասնահանում, առանձնացնում:

- Հարգում եմ իմ տնօրենին,- նրբանկատորեն նրան ընդհատեց Թաթուլը,- բայց պիտի հավելեմ, որ այս ամենի հեղինակը Գետաշենի ոգին է, նրա ինքնատիպ մարմնացումը և դրանց միացած բոլոր ջոկատների խիզախ տղաները, որոնք Գետաշենում և Մարտունաշենում հայտնվել են ինքնակամ, եկել մի վերջին ուխտի գիտակցությամբ, անմնացորդ նվիրումով: Ես նրանցից մեկն եմ՝ այդ փառապանծ սերնդի շարքը լրացնող արեգցի Թաթուլը: Ես այստեղ եմ մի հրամանով, որ ոչ մի պաշտոնական քաղվածքում չեք գտնի, սա Ախուրյանից այն կողմ՝ հայոց Անիի շուքի տակ, Ղարսում իր տունը կորցրած պապիս հրամանն է, մշտարթուն նպատակներին ծառայելու անխոտոր երդումը, որն իմ պաշտելի կուսակցության շողքն է, Նժդեհի, Անդրանիկի գաղափարներին, ազգային միասնության ծրագրերին օգուտ բերելու առաքելությունը: Մնացյալը մենք ենք, բոլորս միասին՝ ազատության հավիտենական ձգտումներին ծառայող հայ զինվորն ու ռանչպարը, հայությունն ընդհանրապես:

Գավաթները խփվեցին իրար, թնդաց ծափը, ուխտավոր գետաշենցիների հայացքի տակ աշնան գիշերը կայծկլտաց աստղերի բարությամբ:

Սուրբ Աստվածածին եկեղեցին խաչն ի վեր գմբեթով նման էր դարերի դժվարին քառուղիներից վերադարձած հարազատի: Նա, կարծես, նայում էր բաց աչոք՝ ըմբոշխնելու այն կորցրածը, որ թողել էր աստանդական հեռվում, տեսել էր ցավ ու հիացում, կռվողների ու հաղթողների և այդ ամենը չէր հասցրել մտապահել իր հոգնած ունկերում: Նա գիտեր, որ մոռացված չէր, բայց նույն տեղում դարձել էր պանդուխտ՝ իր ներսում ամփոփված ու հեգ: Եվ հիմա վերապրելու հուսո ընձյուղներով տարածել էր իր բազուկները և երկնքից Աստծո օրհնանքն առած իր շուրթերին՝ պատարագում էր Գետաշենի փխրուն ու փառավոր գիշերը:

* * *

Գետաշենն ու գետաշենցիներին Թաքուլը այնքա՜ն-այնքա՜ն մոտիկից զգաց ու ճանաչեց, որ մի առիթով Լենային խոստովանեց.

- Լենա մայրի՛կ, թե այս թոհուբոհը անցնի, ես, իմ ճակատագրից գոհ, կգամ այստեղ ապրելու:

- Թաքո՜ւլ, հարազատս, դու սիրեցիր Գետաշենը, նա էլ քեզ սիրահարվեց, կգաս, կապրես, քո Ասպրամիկն էլ կմիանա այստեղի թագուհիներին:

- Դու նաև բանաստեղծ ես, Լենա մայրիկ,- ծիծաղեց Թաքուլը:

- Այս բնությունը, այս տագնապն ու ափսոսանքը, այս սերն ու կարոտը հասանելի են բոլորին,- լրջացավ Լենան,- ես բանաստեղծ չեմ, բայց հոգիս գրատախտակ չէ, որ մի բան գրվի և հաջորդ պահին ջնջվի, համոզված եմ՝ այդպես են բոլոր գետաշենցիները: Երբ վերջին անգան Ջորի Բալայանը մեր գյուղ էր եկել, մեկ օր անց հիացմունքով ասաց՝ արժեքներ ստեղծողների գյուղ է, այստեղ միտքն ու հույզը թռիչքի մեջ են, մարդիկ հավատ ունեն իրենց երազանքները գտնելու, իր ամբողջությամբ հրաշք է Գետաշենը:

- Հանճարեղ է ասել,- բերկրանքով ասաց Թաքուլը և միանգամից մթնեց,- իսկ հիմա նա Մոսկվայում հացադուլ է հայտարարել, որին միացել են Վիկտոր Համբարձումյանը, միութենական պատգամավորներ Սոս Սարգսյանը, Վաչագան Գրիգորյանը, Արցախի մարզխորհրդի նախագահ Սեմյոն Բաբայանը և այլազգի այլ մտավորականներ, սակայն խորհրդային վարչակազմը չի լսում Արցախի ժողովրդի ձայնը, այդ լռությունը զարհուրելի է և անմարդկային:

Այնուհետև Թաքուլը ներողություն խնդրեց և մեկնվեց մահճակալին:

Լենան վախից գունատվեց, Թաքուլին այսպես ցնցված չէր տեսել: Նկատեց, որ իր աչքերի առջև միանգամից փոխվեց նա:

- Հոգնած ես, այս գիշեր շատ ուշ եկար դիրքերից, պառկի՛ր, հանգստանալ է պետք,- մոր քնքշանքով նրան հորդորեց Լենան,- քեզ շատ ես չարչարում, դադար չունես:

- Ոչի՛նչ, կանցնի,- ասաց Թաքուլը, բայց սուր ծակոց զգաց կրծքավանդակում:

- Բժիշկ կանչեմ, Արթուրը թող շտապ բերի Գևորգին:

- Դրա կարիքը չկա՛,- մեղմացավ Թաքուլը, բայց կռահելով, որ ջերմություն ունի, միամիտ հարցրեց,- ջերմաչափ ունե՞ք:

- Իհարկե՛, հիմա կբերեմ,- Լենան արագ տուն վազեց և այդ ընթացքում հասկացրեց Արթուրին ու Տիգրանին, որ վիրաբույժ

Գևորգին շտաբ կանչեն, Թաթուլը լավ չի զգում:

Ջերմաչափը թևի տակ դրած՝ Թաթուլն անվրդով փակեց աչքերը: Քունը չէր տանում, բայց մշուշոտ տենդը ոտքերից բարձրանում, ծավալվում էր ամբողջ մարմնով: Դողի պես թույլ ցնցումները նվաղեցին ազդրերում, հետո դրանք փոթորկից փախչող ալիքների պես մտան ողնաշարը, ողջ մարմինը թնկթնկաց, ասես ինչ-որ մեկը սկսեց նրան օրորել: Դա տևեց մի քանի րոպե: Երբ նա աչքերը բացեց, իր շուրջը հավաքված էին ընկերները, Լենան սառը թրջոց էր դրել ճակատին, իսկ վիրաբույժ Գևորգը նստած էր դեմդիմաց:

- Ե՞րբ հավաքվեցիք,- ասաց Թաթուլը,- Լենա մայրիկը զորակոչ է հայտարարել:

- Քո հիվանդության, քառասուն աստիճան նվաճած ջերմության, քեզ ափսոսալու կոչով ենք եկել, որ ասենք՝ պիտի հիվանդանոց տեղափոխենք, լուրջ թոքաբորբ ես տանում,- խիստ ամփոփեց Գևորգը:

- Երանի ամեն ինչ այդ ջերմության չափ հեշտությամբ նվաճեի,- խուլ հազաց Թաթուլը, բայց փորձեց իրեն պահել,- թոքաբորբը որտեղի՞ց հնարեցիք, ո՛չ ծխում եմ, ո՛չ էլ ձյան տակ եմ մնացել, վերջին երկու-երեք գիշեր մի քիչ ցուրտ էր դարավանդներում, երևի մրսել եմ:

- Բժշկագիտությամբ ախտորոշումը տվեցիր,- ծիծաղեց Գևորգը,- դրա համար հիվանդանոցային կարգացանկով լուրջ բուժում է պետք:

- Ուզում ես ասել՝ պիտի գամ քեզ մոտ, պառկեմ էն մահճակալին, որի վրա թուրքին վիրահատեցիր,- նկատելի հումորով ասաց Թաթուլը:

- Այդ մահճակալը քույրերը պահեստավորել են, որ եթե համանման դեպք կրկնվի, երևի պետք կգա:

- Չէ՜, եղբա՛յր, դու ոչ մի բան չես մոռանում, բայց ես հիվանդանոց չեմ գա, մի՛ ուրախացրու իմ թշնամիներին, իմ ընկերներին էլ մի տխրեցրու,- հաստատակամ ասաց Թաթուլը,- սա իմ հիվանդասենյակն է, ինչ-որ այնտեղ պիտի ձեռնարկես, իրագործիր այստեղ:

- Բայց քեզ խնամք է պետք,- առարկեց բժիշկը,- այնտեղ բուժքույրերը կվերահսկեն, ներարկումներ կանեն, թոքաբորբի հետ կատակներ չեն անում:

- Որպեսզի ավելի լուրջ լինենք և կատակ չանենք Թաթուլի առողջության հետ,- միջամտեց Լենան,- նրան կտեղափոխենք ընդամենը մի քանի քայլի վրա գտնվող մեր տունը, ես կստանձնեմ ոչ թե բուժքրոջ, այլ բուժող մոր պարտականությունները, եթե

գործնական հարցեր լինեն, շտաբը մեր կողքին է, Թաթուլն այդ պայմաններում իրեն ավելի լավ կզգա:

Գևորգը մի պահ զգաստացավ, բայց տեղի տվեց:

- Համոզեցիր, Լենա մայրի՛կ, իսկ Թաթուլը առարկություն ունի՞,- բժիշկն ուղիղ նայեց իր հիվանդին, հավաքեց ստուգիչ սարքերը, ներարկիչները, դրանք տեղավորեց ճամփորդական պայուսակի մեջ և ոտքի կանգնեց:

- Ախր ես ոչ մեկին չեմ ուզում բեռ դառնալ,- անկեղծ ասաց Թաթուլը,- տղաներն այստեղ են՝ ինձ մոտ, իսկ ես շուտ պետք է ոտքի կանգնեմ, բժի՛շկ, ինչքան պահունի ու թանկ դեղեր ունես, մի՛ խնայի,- ծիծաղեց նա:

- Դա կլինի, եթե համաձայնես անցնել Լենա մայրիկի իշխանության տակ, դա է միակ ելքը:

- Համաձայն եմ, բժի՛շկ, միայն թե շուտ կազդուրվեմ, դպրոցը սպասում է, ժամանակը ուրիշ արձագանքներ է բերում, ես հիվանդանալու ոչ միայն իրավունք, այլև դրա ժամանակը չունեմ:

Տղաները փորձեցին ձեռքերի վրա տանել նրան, Թաթուլը վիրավորվեց.

- Դեռ շուտ է բարձրանալ ձեր ձեռքերին, թողեք ես իմ ճամփան անցնեմ:

Թեթև, առանց որևէ մեկի օգնության նա իջավ մաճակալից: Արթուրը բռնեց ձեռքը, Թաթուլը չառարկեց, մինչև փողոց դուրս եկան:

- Ինձ թող, ես հանգիստ կքայլեմ, Արթո՛ւր,- ցածրաձայն ասաց Թաթուլը,- թող այս հավաքված մարդիկ չիմանան, որ հիվանդացել եմ, խմբով պետք չէ գնալ, թող բժիշկը մեզնից հետո բարձրանա:

Ամեն ինչ արվեց Թաթուլի սրտով, նրա ցանկությամբ: Մեկ ժամից նա Գևորգի նշանակումներով ստացել էր առաջին դեղահաբերն ու ներարկումները: Քույրերից մեկը գլխավոր բժշկի՝ Սարգսի համաձայնությամբ օրվա մեծ մասը լինելու էր այստեղ, հիվանդանոցի անձնակազմը պատասխանատվությամբ ստանձնել էր նրա բուժման գործը: Մասնագիտական օգնության իրագործողը, իհարկե, Գևորգ Գրիգորյանն էր, հայտնի վիրաբույժը մեծ փորձով ճանապարհ անցած անհատականություն էր, վստահություն, իմացության բարձր արժեքներ իր մեջ կուտակած մարդ-քաղաքացի, որին ամենախոր հարգանքով էր վերաբերվում Թաթուլը: Առաջին հանդիպման կրակոտ կեցվածքից Թաթուլն իր սրտի ամենաբուռն ճեպընթացների վրա էր պահել նրա տղամարդկային անբեկանելի շուքը, սկզբունքը

և այդ ամենը տանում էր իր հետ, ընդօրինակման ցոլքեր հայտնաբերում, որից տաքանում էր հոգին, իսկական մարդու հանդեպ բորբոք էր դառնում սերը:

Եվ հիմա Լենա մայրիկի բնակարանի լուսավոր ննջասենյակում նա ըմբոշխնում էր կյանքի և իրականության նժարից ընկած կշեռքի մորմոքները, բռնկվում ու զայրանում էր, ուզում էր վեր թռչել, գնալ, չէր հաշտվում: Այս պահերին նրա կողքին, ընկերներից բացի, Գևորգն էր, նրա ներկայությամբ հորդում էր հանդարտության խորհուրդը, Թաթուլի աչքերում բոցկլտուն շողը շամանդաղ էր փնտրում:

- Սիրելի իմ բժի՛շկ, այդ ինչի՞ց է, հենց գալիս ես, խաղաղվում են բոլորը, ես դառնում եմ քո ենթական, սսկվում եմ, ու թվում է՝ ցայգալույսի սրինգն եմ նվագում,- Թաթուլը միանգամից պատկերավոր դիմեց բժշկին, երբ նա հենց նոր էր ներս մտել:

Գևորգը ծիծաղեց, բռնեց Թաթուլի ձախ դաստակը և բժշկին հատուկ զննողությամբ նայեց հիվանդի աչքերի մեջ: Այնտեղ ուրիշ փայլ էր, «Տենդը շարունակվում է»- մտածեց նա և դարձավ Լենային.

- Չափե՛ք ջերմությունը:

- Դարձյալ Աֆրիկայում եմ,- ժպտաց Թաթուլը:

- Եթե ինձ չլսես, կմնաս այդ աշխարհամասում,- նույն հումորով պատասխանեց բժիշկը:

- Այդքան սովոր չեմ հրամանների, բայց քո բոլոր կարգադրությունները կատարել եմ, բժի՛շկ:

Պարզվեց, որ ջերմությունը նույն 37-ի վրա է, և արդեն երկրորդ օրն է՝ չի փոխվում:

- Գոնե 37-ը չկպներ ինձ, այդ թվից խուսափում եմ,- հառաչեց Թաթուլը, խորը հազաց, աչքերն արցունքակալվեցին:

- Ներարկիչը բերե՛ք,- կարգադրեց Գևորգը և պայուսակից հանեց դեղորայքի սրվակները:

Թաթուլն այլևս չխոսեց, ավելի շուտ չառարկեց, զգում էր, որ վիճակը բարելավման չի գնում: Գևորգը չգնաց այնքան ժամանակ, մինչև Թաթուլը քնեց: Անհանգիստ էր, օդը չէր բավարարում, հևում էր, ներքին հորձանքներից դեմքը կարմրատակել, քրտինքը ծորում էր պարանոցն ի վար:

Ուշ ժամին Գևորգը վերջին ցուցումները տվեց Լենա մայրիկին, խնդրեց Արթուրին ու Տիգրանին, որ անհրաժեշտության դեպքում իմաց տան իրեն:

...Առավոտյան, երբ Թաթուլն աչքերը բացեց, զգաց, որ ջերմությունը նահանջել է, մտածեց, որ «37-ը չքացել է, չկա»: Մինչև

Լենա մայրիկը կգար, ջերմաչափն արդեն ցրել էր նրա կասկածանքը: Անշտապ իջավ բակ, սովորականի նման մինչև գոտկատեղ սառը ջրով լվացվեց, հետո հագնվեց ու դուրս եկավ:

- Թաթո՛ւլ,- գրեթե ծղրտաց Լենան,- ո՞ւր, պատկերացնո՞ւմ ես, թե ինչքան անպատասխանատու ես քո հանդեպ:

- Պատասխանատու եմ իմ դասարանի և իմ դիրքերի առջև, լյավ կինի,- վերջին երկու բառերը գետաշենցու հարազատությամբ ասաց նա, ոտքի վրա մի բաժակ թեյ խմեց, ցուցադրաբար կուլ տվեց բժշկի կողմից նշանակված դեղահաբը և դուրս եկավ:

Լենան նրա հետևից գնաց մինչև բակ, շտաբում Արթուրին տեղյակ պահեց և վերադարձավ ռադիոհաղորդիչի մոտ:

Գետաշենը ուղղաթիռի էր սպասում:

* * *

Գևորգը երեկոյան շատ զարմացավ, երբ Լենան նրան պարզապես զեկուցեց, որ Թաթուլը չենթարկվեց իրեն, գնաց: Բժիշկը չգիտեր մեղադրե՞ր, թե՞ զայրանար, պարզապես փլվեց աթոռին, որովհետև հասկանում էր իրավիճակը:

- Գոնե ջերմությունը ստուգեցի՞ր:

- Ինքն էր նայել, ասաց, որ Աֆրիկայից հասել է Ղարս:

Գևորգը ծիծաղեց, ներքուստ սկսեց հանգստանալ, նույնիսկ հպարտացավ, որ իր կողքին այդպիսի առյուծ տղաներ կան, որոնք ոչ մի դժվարություն չեն ուզում ճանաչել:

Մութն ընկել էր, երբ Թաթուլը եկավ «Վիլիսով»: Արմենը նրան օգնեց բարձրանալ: Լենայի բնակարանի նախասրահում տեսնելով բժիշկ Գևորգին՝ Թաթուլը ներողամիտ ժպտաց:

- Փախստակա՛ն եղբայր, ո՞նց ես,- բժիշկը կատակի տվեց, որովհետև ըստ իր փորձառու աչքի՝ լավ չէր նրա վիճակը:

- Լյավ կինի,- ասաց, ու հազը բռնեց, չկարողացավ կանգնել, մի կերպ հասավ ննջասենյակ, պառկեց: Հևում էր խորքերից, աչքերը տենդագին փայլում էին՝ սևեռված Գևորգի վրա:

- Չեղա՛վ, Թաթո՛ւլ, եթե քո ենթական վճռական պահին քեզ չլսի, կգնդակահարես, ես դրանում համոզված եմ,- խաղաղ ձայնով ասաց բժիշկը,- հիմա ես քեզ հետ ինչպե՞ս վարվեմ:

Թաթուլը ժպտաց, գրպանից հանեց ատրճանակը և դրեց սեղանին:

- Սա միայն քեզ եմ վստահում, դու գիտես...

Գևորգին պահանջվեց շուրջ չորս ժամ, մինչև Թաթուլի ջեր-

մությունը որոշակի կարգավորվեց, հևոցը պակասեց, հազը փափկացավ: Նա այդպես էլ չհասցրեց շնորհակալություն ասել բժշկին, քնեց:

Լենան Արմենից իմացավ, որ Թաթուլը երկու ժամ դպրոցում է անցկացրել, հասել է Մարտունաշեն, վերադարձին եղել է պաշտպանության երեք դիրքերում և տուն գալուց առաջ դիմավորել է Մուշեղի ուղղաթիռը: Հետո Արմենը առանձնանալով բժշկի հետ, նրան տեղյակ պահեց, որ Մարտունաշենի ճանապարհին երկարատև հազից գրեթե ուշագնաց եղավ:

- Երբ զգաստացավ, հևոցից խոսել չէր կարող,- շարունակեց «Վիլիսի» վարորդը,- գրպանում երկու դեղահաբ գտավ, խմեց, երևի դուք էիք տվել, այսքանը: Հա՛, չմոռանամ ասել, դժգոհում էր իրենից, որ սովորության համաձայն՝ առավոտյան կիսամերկ լվացվել էր աղբյուրի ջրով:

- Պարզ է, չլսեց ինձ, արդեն երկկողմանի թոքաբորբ է տանում,- անհանգստացավ Գևորգը,- նրան պետք է փակի տակ պահել, շղթայել,- աննշան ժպտաց իր ասածի վրա և վերադարձավ ննջասենյակ: Թաթուլը խորը քնած էր, բայց դա խաբուսիկ էր, կարթնանար և դարձյալ կհայտնվեր ծայրահեղության սահմաններում: «Լենան ի՞նչ կարող է անել,- ինքն իրեն հարց տվեց բժիշկը,- սա արդեն հանձնարարությունների շրջանակից դուրս է...»:

- Լենա մայրի՛կ, հիվանդանոցի իմ ննջասենյակն այսօր լքում եմ, Թաթուլին այսպես թողնելը հանցագործություն է,- գործնական ասաց բժիշկը,- այս գիշեր ես կհերթապահեմ:

Լենան խանդաղատանքով ժպտաց, շնորհակալ նայեց բժշկին.

- Քեզ ամեն ինչ տեսանելի է, առջևում երկար գիշեր է, նա անպայման կարթնանա, երևի քո ներկայությունը շատ անհրաժեշտ կլինի:

Շտաբից եկան ընկերները, Հրաչն ու Վահանը նույնպես իմացել էին, դպրոցի տնօրեն Շմավոնն ու մայրենիի ուսուցչուհի Ժաննան մեղվափեթակի ամբողջական շրջանակ էին բերել, ասացին՝ մեղրը շատ կօգնի:

Բժիշկ Գևորգն աշխատեց բոլորին կարճ պատասխանել, զգացնել տվեց, որ հիվանդին պետք չէ այսքան պաշարել, առանց այդ էլ Թաթուլը զգայուն ու բծախնդիր է, կարթնանա ու կնեղվի, չի հաշտվի ոչ մի բանի հետ:

Եկող-գնացողները բժշկին հասկացան, այս անգամ ոչ մի բառ չփոխանակելով իրենց ընկերոջ հետ՝ ցածրաձայն բարի գիշեր ասացին և անաղմուկ հեռացան:

Կես գիշերին Թաթուլն արթնացավ: Գևորգը գիտեր, որ ջերմությունը բարձր է, անմիջապես ներարկում կատարեց, դեղահաբեր խմացրեց և ընդամենը մեկ հարց տվեց.

- Առավոտյան սա՞ռն էր աղբյուրի ջուրը:

Թաթուլը գլխի ընկավ, որ բժշկին արդեն հասցրել էին և փորձեց նույն ենթատեքստով պատասխանել.

- Գետաշենում օրվա բոլոր ժամերին էլ սառն է աղբյուրների ջուրը, առավոտվա ջուրը մի քիչ զիջում է:

- Լսի՛ր, դու հիվա՞նդ ես, թե՞ թևավոր խոսքեր ես հորինում:

- Հիվանդ եմ, Գևո՛րգ, թե կարող ես, ինձ դարձրու նախկին Թաթուլը,- անկեղծ խնդրեց նա,- այս վիճակից ամաչում եմ:

- Ուրեմն, եթե Գևորգ ընկերոջդ շրջանցում ես, դա քո գործն է, բայց բժշկի կարծիքը մի՛ արհամարհիր,- նեղսրտեց վիրաբույժը:

Թաթուլը գիտեր, որ արժանի է լուրջ կշտամբանքի, լռեց, թեթևակի շուռ եկավ աջ կողքի և իրեն ստիպելով՝ զսպեց խեղդող հազը: Լենան Գետաշենի ուրցով համեմված թեյ բերեց, սկուտեղի վրա՝ կարագ և մեղրամոմի կտրվածք, որից ծորում էր ոսկեգույն մեղրը:

- Մի բարձ էլ ավելացրու,- ասաց բժիշկը,- թող պառկած դիրքից շատ չբարձրանա, կարծես օդը սառն է:

- Հիմա վառարանը փայտ կլցնեմ,- անմիջապես արձագանքեց Լենան:

«Այս ի՞նչ հրաշք կին է, ամբողջական նվիրում է՝ հարեհաս, կարեկցող,- նայելով Լենային, նրա շարժումներին, անհանգստությանը՝ Գևորգը երախտագիտությամբ էր լցվում,- ախր բարձր գիտակցում ունեցող մարդուն, որը տնից-տեղից կտրված, եկել, հասել է Գետաշեն, կրում է այս գյուղի ճակատագիրը, տերն է նրա ցավին, հոգսին, պակասությանը, միայն այսպիսի մայրական ջերմություն և գնահատական է պետք...»:

- Ապրե՛ս, Լենա՛,- Գևորգը չդիմացավ լուռ մտորումներին, բարձրաձայնեց,- ամբողջ ընտանիքով օրինակելի եք, չգիտեմ՝ սա պարտքի զգացո՞ւմ է, թե՞ գեներով եկած հրաման:

Լենան ինքնագոհ ժպտաց, նայեց բժշկին, հետո Թաթուլին, նկատելի հուզվեց, բայց բժշկի խոսքը պատասխանի կարիք ուներ:

- Միայն կույրը կարող է չտեսնել, թե Թաթուլի պես ջահել-ջիվան ի՜նչ տղերք են եկել Գետաշեն, որոնք իրենց կյանքի համար ոչ մի ափսոսանք չունեն, այս իմ արածը այնքան չնչին է նրանց մայրերի սպասումի և լուռ աղոթքների հանդեպ, սա պարտք չէ, այլ ցանկացած հայ կնոջ սրբազան պարտականություն:

- Բժի՛շկ, մի՛ փորփրի Լենա մայրիկի սիրտը, այդպիսին քիչ կգտնես, որովհետև նա ամեն օր իր «Կամայով» մարտնչում է օդային ճակատամարտերում, հիմա էլ միացել է քեզ, կռվում է քո հայտնաբերած իմ թոքաբորբի դեմ:

- Էլի կատա՞կ ես անում:

- Չէ՛, բժի՛շկ, կատակի ժամն անցել է,- մտերմիկ ժպտաց Թաթուլը,- հիմա շատ լուրջ եմ ասում, եթե էս մեղրն ու կարագը հավասար չկիսենք, ես հացադուլ եմ հայտարարելու:

- Թեյը մոռացա՞ր կիսել,- ծիծաղեց Գևորգը:

Լենան վազեց խոհանոց:

* * *

Մեկ շաբաթից Թաթուլը գրեթե կազդուրվել էր, բայց այդ ընթացքում բժշկից գաղտնի դպրոց էր մտել, հանդիպել էր տղաներին, Աշոտի միջոցով ճշգրտել, թե անհրաժեշտության դեպքում ստույգ որտե՞ղ պիտի տեղադրվեն ականները: Գևորգը գիտեր Թաթուլի տեղաշարժերի մասին, բայց ոչինչ չէր ակնարկում, քանի որ գրեթե լրիվ պակասել էր հևոցը, աննշան հազում էր և առայժմ դեղորայքներից չէր հրաժարվում:

Լենա մայրիկի ընտանիքից շնորհակալ՝ նա արդեն տեղափոխվել էր իր շտաբը, սակայն ամեն օր Լենան հետևում է նրա սննդին՝ չմոռանալով նաև մյուս տղաներին:

Կեսօրից հետո շտաբ էր եկել «Արաբոյի» Մանվելը: Թաթուլը նրա մռայլությունից հասկացավ, որ գործերը խառն են: Ձերմ բարևեցին, և նա վայրկյան չկորցրեց:

- Տագնա՞պ կա:

- Մարտունաշենի շուրջը աքցանը սեղմվում է օմոնականներով,- հանգիստ խոսեց Մանվելը,- ոնց որ ռուսները չեն արգելում, չտեսնելու են տալիս:

- Մի՛ զարմացիր, Մանվե՛լ, դա ծանոթ սցենար է, այս տարածաշրջանում ուժեղանալու է հարկադրանքը:

- Բայց շատ ցայտուն է լարվածությունը, եթե մենք ծայրահեղ զսպվածություն չդրսևորենք, առճակատումը վայրկյանի խնդիր է:

- Դրանք այդպիսի առիթ են ման գալիս,- մռնչաց Թաթուլը՝ զսպելով հայհոյանքը,- առայժմ ամեն կերպ պիտի խուսափենք:

- Գալիս, մտածված քսվում են, փորձում են որևէ բանով մեզ հունից հանել:

Թաթուլն ընկալեց դրության լրջությունը՝ իմանալով, որ փորձված

Մանվելը չէր ուզում ներկայացնել բոլոր մանրամասները, որպեսզի ավելին չլինեին դրամատիկ գույները:

- Առայժմ Գետաշենի դիրքերում կայունություն է,- այդ մասին մտածված շեշտեց Թաթուլը,- հարկ եղած դեպքում այստեղի ուժերը կմիանան ձեզ:

- Տեսնենք՝ ինչպես կզարգանան հետագա իրադարձությունները,- ասաց Մանվելը,- պարզապես այս զրույցը պետք էր, մենք իրավունք չունենք ուշանալու:

- Այսօր ուղղաթիռի ենք սպասում, տեսնենք՝ ինչքանով կզորացնեն մեզ:

- Գոնե շատացնեն մթերքների քանակը, խոր աշուն է, բայց Մարտունաշենը կարիքների մեջ է:

- Ուրիշ ի՞նչ էիր սպասում, երբ մարդիկ չկարողացան իրենց հացն ամբարել, անօրենները վառեցին հասուն արտերը, անհայտ պարագաներում գողացան շատ-շատերի անասունները, անգամ ջրագիծը պայթեցրին... Սրանք ցեղ չէին, որ մեզ հարևան դարձան, էս հարցում բոլորովին բախտ չունեցանք: Գիտեինք, որ քարաստանում ենք ապրելու, գոնե կամեցող ու չնախանձող հարևան ունենայինք,- ձեռքը թափ տվեց Թաթուլը:

Մանվելը գնաց: Թաթուլը բանտարկյալի նման խփվեց պատեպատ. «Լա՜վ, բայց մերոնք այնտեղ ի՞նչ են մտածում, քարտեզ չե՞ն նայում, Լենա մայրիկի ճիչն ու կանչը չե՞ն լսում: Չէ՞ որ դա մեր պահանջի ռադիոգիրն է»:

Թաթուլը արագ գնաց Լենային գտնելու: Ռադիստուհին իր փակ սենյակում ռադիոգիր էր ստանում: Առանձնապես նոր բան չկար:

- Լենա մայրի՛կ, առավոտյան իմ տված տեքստը հասցեագրիր բոլոր օղակներին, թող ընդարձակվի մեր ասելիքը, թող մեծանա պատասխանատվությունը, Գետաշենն ու Մարտունաշենը աշխարհի առջև պիտի բացահայտեն խորհրդային դրվածքի սնանկությունն ու խայտառակ կեցվածքը:

Լենան նկատեց, որ Թաթուլը դարձյալ հևում էր՝ «զայրույթի՞ց է, թե՞ թոքաբորբը նորից զգացնել է տալիս...»:

- Թաթո՛ւլ, հանգստացի՛ր, կհաղորդեմ, ինչպես ուզում ես, ում ցանկանում ես,- մեղմ ասաց Լենան,- դու դեռ լրիվ չես ապաքինվել, ժամանակ գտի՛ր, անցի՛ր Գևորգի մոտ:

- Այդ հրաշք մարդուն այլևս չեմ անհանգստացնի, չգիտեմ՝ որն է նրա մոտ առաջնայինը՝ տաղանդավոր բժի՞շկը, թե՞ հանճարեղ մարդ-քաղաքացին:

- Երկուսը միասին, Թաքո՛ւլ:

- Քո գնահատության պատվաստն էլ հանճարեղ էր,- ժպտաց Թաքուլը,- ռադիոգիրս շտապ տեղ հասցրու,- ավելացրեց նա և արագ դուրս եկավ:

* * *

Մարտունաշենը դժվարին օրեր էր ապրում: «Արաբո» ջոկատի տղաները դեռ այսպես լարված չէին եղել, դիրքերից գրեթե տուն չէին վերադառնում: Օմոնականները վխտում էին Էրքեջի, Թոդանի կողմերում, խորհրդային բանակի ստորաբաժանումները նրանց համար խոչընդոտ չէին: Սպասվում էին անխուսափելի բախումներ: Մարտունաշենում ամրակայված դիրքերը տղաները գրեթե անխոցելի էին դարձրել, բայց գիտեին, որ իրենց դիմաց մեծաքանակ զինվորներ էին, օմոնն ու խուժանը:

Մանվելն ու Թաքուլը անընդհատ կապի մեջ էին, ավելացնում էին ուժերը, այստեղից-այնտեղից զենք ու փամփուշտ էին ճարում: Աշոտ Քալանթարյանն ուշադիր զննում էր տեղանքը, հնարավոր անցուղիները: Փաստորեն դեպի Գետաշեն տանող կարևոր ուղիներից մեկը Մարտունաշենի կողմից էր, որքան այն հուսալի պաշտպանված լիներ, այնքան Գետաշենի այդ թևը վտանգված չէր լինի: Իհարկե, այս ամենը հարաբերական էր, որովհետև ուրիշ այլ տարածքներ ու անցուղիներ կային, որոնց նկատմամբ նույնպես ուշադիր էին հրամանատարները:

...Թաքուլը դպրոցի բարձրդասարանցի տղաների հետ հրաձգության պարապմունքներ էր անցկացնում, երբ մոտերքում կանգնեց «Վիլիսը»: Ղեկին Մերուժն էր՝ նյարդայնացած, անհանգիստ: Թաքուլին տեսնելով՝ արագ մոտեցավ, բարևեց, աչքն ընկավ կրակող տղաներին, որոնք բարձր պատերի մեջ էին, այն նման էր հրաձգարանի:

- Արդեն վստահո՞ւմ ես դպրոցական տղաներին,- ուրախացավ Մերուժը:

- Դեռ սովորում են, կգա նաև վստահելու ժամը,- Թաքուլը կտրուկ փակեց նրա խոսքը և Մերուժին տարավ մի կողմ,- ի՞նչ կա:

- Մարտունաշենի մեր տղաներից երկուսին ռուս բերետավորները գերի են վերցրել, իբրև թե գրանցում չունեն, և լուր կա, որ նրանց հանձնելու են օմոնականներին:

- Հավաստի՞ են փաստերը, թե՞...

- Մարտունաշենից շտապ խնդրել են, որ քեզ տեղյակ պահեմ:

Թաթուլը ոչինչ չխոսեց, մոտեցավ, աշակերտներից վերցրեց զենքը, փամփուշտները, նստեց «Վիլիսի» առաջամասում:

- Արագ քշի՛ր Մարտունաշեն:

- Բայց...- կարկամեց Մերուժը:

- Բայց չկա, Մերո՛ւժ, կա հանո՛ւն, հասկացի՛ր,- բարկացած էր Թաթուլը:

Մերուժը սսկվեց, առարկելու ի՞նչ ուներ, եթե Թաթուլն էր ասում, ուրեմն ընդունելի էր որոշումը:

Մեքենան արագընթաց մղվում էր գյուղից դուրս: Թաթուլը մի անգամ ձեռքը տարավ վերնազգեստի տակ, շոշափեց նռնակ-«լիմոնչիկը», որն օրվա գրեթե բոլոր ժամերին իր մոտ էր, ատրճանակը ստուգելու փորձ չարեց, այն գոտկատեղում էր, մի քիչ խաղաղվեց, բայց շնչառությունը լրիվ չէր կարգավորվում:

- Ինքնաձիգը քե՞զ մոտ է,- գյուղի վերջին տների մոտ լռությունն ընդհատեց Թաթուլը:

- Իր տեղում է, լիցքավորված,- պատասխանեց Մերուժը և լրիվ հասկացավ պաշտպանության ընդհանուր ղեկավարի մտադրությունը:

- Վերջին դիրքերի մոտ կա՛նգ առ, Արթուրին կանչի՛ր:

- Շտաբի պետի՞ն:

- Այո՛, նրան:

Մերուժը մեքենայի ղեկը թեքեց, մտավ անտառափեշերով ոլոր-մոլոր գնացող և սիզախոտերի մեջ թաքնված ճանապարհը: Տղաները ճանաչեցին Թաթուլի «Վիլիսը», օրը ցերեկով անցաբառը հարցնելու կարիք չունեցան: Այստեղ գիտեին Մարտունաշենի միջադեպի մասին: Արթուրը մոտեցավ, նրանք առանձնացան: Քառորդ ժամից Թաթուլի մեքենան իջավ Մարտունաշենի ուղղությամբ: Նա ոչ ոքի չտարավ իր հետ, ինքն ու Մերուժն էին: Մարտունաշենի մատույցների դիրքերում կանգնեց, մանրամասն հարցրեց, տեղեկացավ, որ, իրոք, երկուսին տարել էին, ջոկատի տղաները հավաստեցին, բայց շատ էին տխուր, մռնչում էին զայրույթից, միաժամանակ անկարող էին մի քանի տասնյակով կռիվ տալ խորհրդային տանկերի ու ԲՏՌ-ների դեմ: Իսկ առևանգողները գյուղի կողքին էին՝ հենց անտառի բացատում:

- Չխառնվե՛ք, խուճապի չմատնե՛ք այդ դեսանտայիններին, բոլոր կողմերից պահե՛ք ձեր ուշադրության կենտրոնում, բայց ո՛չ մի կրակոց, դրանով ոչինչ չեք փրկի,- վերջին ցուցումները տվեց Թաթուլը, ապա դարձավ Մերուժին,- ինքնաձիգդ վերցրո՛ւ և հետևի՛ր ինձ:

Պահակակետի տղաները զարմացան, ուղղակի սահմռկեցին

Թաքուլն այս ի՞նչ համարձակության էր գնում: Սակայն ո՛չ ոք չէր կարող իրեն իրավունք տալ հետ պահելու նրան: Հասկանում էին, որ նա հասցրել էր հաշվարկել բոլոր տարբերակները, քննարկել հետևանքները, այլապես այսքան գործնական ու նպատակամետ չէր գնա դեպի վերահաս վտանգը:

Երբ բավականաչափ մոտեցել էին, և արդեն սկսվում էր բացատը, վերնաշապկի տակից նա դուրս բերեց՝ Արթուրից վերցրած սպիտակ դրոշի նմանվող սավանի կտորը, այն ձախ ձեռքով ծածանեց գլխից վերև և առաջ գնաց: Մի քանի քայլ անելուց հետո Թաքուլը կանգնեց, ետ նայեց ծառերի հետևում ինքնաձիգը կրծքին սեղմած Մերուժին.

- Իրավիճակին նայի՛ր, եթե կփորձեն ինձ գերեվարել, առաջինը ինձ, վրա դատարկիր ինքնաձիգը, տե՛ս, ձեռքդ չդողա՛, Մերո՛ւժ, հիշիր ֆիդայիների խոսքը՝ բարով գնդակին պսակվիմ,- ասաց ու խրոխտ գնաց:

Մերուժի ականջներում գույժի պես հնչում էին Թաքուլի բառերը: Մի պահ ուսերը ցնցվեցին, աչքերից հոսեցին արցունքները: Մեծագույն ափսոսանքի և հոգեկան խուլ տվայտանքների բաբախումից օդի պակաս զգաց, բայց ակնթարթորեն վերագտավ իրեն: Թաքուլը դեռ գնում էր, իրենից հեռու էր մոտավորապես 200-300 մետր: Տարածության վրա՝ օդում, պարզորոշ նկատվում էր սպիտակ սավանի կտորը: Հանկարծ աջից-ձախից վազեցին հրացանավորները, շրջան կազմեցին: Մերուժը վագրի նման ոստնեց տեղից: Նա չէր խփի, Թաքուլի հրամանը չէր կատարի, բայց կգնար, կվազեր, չէր թողնի մենակ: Սակայն, երբ նկատեց, որ կարմիր բերետավորները որոշակի տարածքի վրա կանգնեցին, ետ նահանջեց:

Թաքուլը կանգնած էր ռուս տղաների «շուրջպարի» մեջ, «ջահել տղաներ են, ո՞ւր են բերել սրանց», նայեց ուշադիր, բոլորը շարքայիններ էին:

- Ուզում եմ հրամանատարին հանդիպել, խաղաղ զրույց ունեմ և շատ կարևոր բան պիտի հաղորդեմ, տղե՛րք,- մեղմ ասաց Թաքուլը:

- Ես այստեղ եմ, ի՞նչ կա,- ասաց մայորի ուսադիրներով ցածրահասակ մեկը, որը պինդ կանգնած էր վրանի նախամուտքի փայտե հարթակին:

- Կարևոր ասելիք կա, ընկեր մայո՛ր,- անցողիկ ժպիտ շողաց Թաքուլի դեմքին:

- Մոտեցի՛ր,- հրամանի պես հնչեց նրա կոշտ ձայնը:

Թաքուլը հանգիստ ու անշփոթ քայլերով մոտեցավ, բարևեցին

ձեռքով: Մերուժը, այս պատկերները տեսնելով, ինքնաձիգը հետ տարավ, հենեց ծառին: Հույսի թրթիռ էր բարձրանում սրտի ճամփով: Թաթուլը ելքը կգտնի, կհասկանան իրար:

- Ընկեր մայո՛ր, երկու անմեղ տղաներ են բռնվել ձեր կողմից, ճանաչում եմ նրանց, վտանգավոր չեն, ձեր դեմ ոչինչ չունեն, խնդրում եմ բա՛ց թողեք,- Թաթուլը խոսելիս քայլելով արդեն շրջանցում էր վրանը, մայորը գնում էր նրան զուգահեռ: Դեսանտային շարքայինները, զգալով հրամանատարի և անծանոթի բարեկամական զրույցը, դուրս եկան հրապարակից:

- Նրանք անմեղ չեն, ընդհակառակը՝ վտանգավոր խռովարարներ են, և Ադրբեջանի կողմը պահանջել է հանձնել իրենց:

- Իսկ դո՞ւք,- մշուշվեցին Թաթուլի աչքերը,- պիտի գնա՞ք այդ քայլին:

- Հակառակը պնդելու իրավունքը չունեմ:

- Բայց գիտե՞ք, թե հայերի հանդեպ ինչ մոլուցքով են լցված օմոնականները, պարզապես կողջակիզեն անմեղ հայ տղաներին:

- Դա իրենց գործն է,- անտարբեր նետեց մայորը:

- Այդ դեպքում իմ գործն էլ սա՛ է,- մռնչաց Թաթուլը, վերնազգեստի տակից կայծակնորեն դուրս բերեց նռնակը, օղակը հանեց, ձախ ձեռքով մամլիչի պես սեղմեց նրա օձիքը և անզուսպ տենդով սպառնաց,- սա իմ հողն է, իմ պապենական տունը, նրանք՝ այն տղաները, իմ բախտի բեկորներն են, ես քեզ կպայթեցնեմ ինձ հետ միասին, իմ մահը նպատակ ունի, իսկ քո՞նը, մտածի՛ր:

- Պետք չէ, այդպիսի բան մի՛ արա, դու շրջապատված ես,- խուլ փնթփնթաց մայորը:

- Շրջապատումը ինձ համար զրո արժեք ունի, մենք միասին ենք պատառ-պատառ լինելու, իսկ այս հողին, մեկ է, ես ծաղիկ եմ դառնալու, դու՝ փուշ, մտածի՛ր, քեզ մեկ րոպե ժամանակ: Զարմանում եմ, ախր դու ի՞նչ ես կորցրել այս կողմերը, որ ուզում ես թուրքի համար մեռնել,- համառորեն ու սպառնագին համոզում էր Թաթուլը:

Կարմիր բերետավորները նկատեցին, զինավառ մոտեցան, խռնվեցին նրանց շուրջը, տեսարանը բոլոր կողմերից ծայրահեղ էր:

- Ասա՛ սրանց՝ այս կանաչ զինվորիկներին՝ հանգիստ մնան, մի անզգույշ շարժում՝ միասին օդ ենք բարձրանալու,- սառնասիրտ ասաց Թաթուլը:

- Թողնե՛լ, նահանջե՛լ,- նվաղած ձայնով հրամայեց մայորը,- հետո ի՞նչ է լինելու,- նա ծամածռված հայացքով նայեց Թաթուլին, կարծես ելք էր փնտրում:

Մայորի աչքերը վախից թռվռում էին ակնախոռոչներում, ճակատից հոսում էր քրտինքը, մարմինը նկատելի դողում էր:

- Չեմ կասկածում, այս նռնակի ուժգնությունը դու ինձնից լավ գիտե՛ս,- նրա ականջի մոտ շշնջաց Թաթուլը,- միակ ելքը մեր տղաներին ազատելն է, միասին, երկու ԲՏՌ, իրենց անձնակազմով կհասնենք Գետաշեն, հետո դուք անվնաս կվերադառնաք, երդվում եմ ուսուցչի ազնվությամբ:

Մայորը մի քանի վայրկյան մտածեց, զարմացած նայեց Թաթուլին, եթե սա ընդամենը ուսուցիչն է, ապա գրոհայիննե՞րն ինչպիսին են:

- Ժամանակ չունենք, մայո՛ր, արձակի՛ր հրամանդ,- վերջնականապես սպառնաց Թաթուլը՝ սեղմելով նրա պարանոցը:

- Լա՛վ,- վերջապես համաձայնեց մայորը, մոտ կանչեց սերժանտներից մեկին, վերջինս ստացավ հանձնարարությունը:

Ընդամենը հինգ րոպե հետո երկու ԲՏՌ դանդաղորեն թողեցին դեսանտայինների ճամբարը: Առաջին մեքենայի մեջ 14 պատանդներ էին, ռուս տղաներ՝ առանց զենքերի, երկրորդում մայորն էր, Թաթուլը նրա օձիքը բաց չէր թողել, բայց նռնակը ցած էր բերել, օղակել: Իր կողքին ազատված երկու հայ տղաներն էին՝ «վաստակած» ինքնաձիգներով: Թաթուլը նրանց հասկացրեց՝ Մերուժին իմաց տան, որ «Վիլիսով» առաջ անցնի, Մարտունաշենի և Գետաշենի պահակակետերում զգուշացնի տղաներին, որ հանգիստ դիմավորեն:

Այդպես էլ եղավ:

Մի քիչ խորացան դեպի գյուղի կենտրոն, կանգնեցին: Առաջին ԲՏՌ-ը այդպես էլ փակ մնաց: Անզեն էին բերետավորները, նախապես գնդացրի բոլոր փամփուշտները Թաթուլի կարգադրությամբ դատարկվել էին: Երկրորդ մեքենայից նախ իջան «գերեվարված» տղաները, մայորը և ապա Թաթուլը:

- Ես իմ խոսքի տերն եմ, ընկեր մայո՛ր, հայը ռուս մարդուն հավատում է, նրան հենց այնպես չի կարող վնասել, շնորհակալ եմ, որ դուք էլ այդպես վարվեցիք, մեծ դավաճանություն է, երբ հային փորձում են հանձնել թուրքի ձեռքը, դա ներելի չէ, հաջողություն ձեզ, այդպիսի բան կրկնել պետք չէ:

- Իսկ ինքնաձիգնե՞րը,- մայորը նայեց տղաների կրծքից կախված զենքերին:

- Հետո կվերադարձնենք, երբ մեզ պետք չեն լինի,- կտրուկ եզրափակեց Թաթուլը:

Մայորը հասկացավ, որ այդ կորուստը չարիքի փոքրագույնն է,

բարձրացավ մեքենան, գնաց առջևից, մյուս ԲՏՌ-ը հետևեց նրան:

Փրկված երկու տղաները փաթաթվեցին Թաթուլին: Պահը հուզիչ էր: Մերուժը «Վիլիսից» իջել, նայում էր նրանց, անկարող էր զսպել ահագնացող հուզմունքը, զարմացած էր և քանի որ միակ վկան էր, ուղղակի ցնցված էր Թաթուլի գործողություններից:

- Շտապե՛ք, այսպես չի կարելի պարապ ժամանակ սպանել,- Թաթուլը մոտեցավ մեքենային,- այս խմորը դեռ շատ ջուր կվերցնի, և հետո շնորհակալություն ասելու կարիքը չկա, մենք իրավունք չունենք այստեղ իզուր մարդ կորցնելու:

Շտաբում հավաքվել էին բոլոր ջոկատների հրամանատարները, գյուղի ակտիվիստները: Թաթուլը, որքան էլ փորձում էր վերջին իրադարձությունից հեռանալ, ներկաներն այսպես թե այնպես հիշեցնում էին, հպարտանում, զարմանքներով դրվատում պաշտպանության ընդհանուր հրամանատարի կատարած սխրանքը: Փաստորեն, նա կարող էր ինքնակամ գերի դառնալ կամ պատահական գնդակից զոհվել: Նրա կատարածը, պարզապես, անիրական լեգենդ էր թվում, աննախադեպ արարք, որ սթափ դատողությամբ հիմա դժվար էր ծանրութեթև անել:

- Եկեք եղածի մասնավոր դրվագներից անցնենք լուրջ գործի, այն, ինչ կատարվեց, Աստծո մատը խառն էր,- ոտքի կանգնեց Թաթուլը,- այս գործը, լավ գիտեք, անհետևանք չի մնա, խմբերով կգան, զինված կմտնեն գյուղ, կսանրեն, զենք կփնտրեն:

- Բացառված չէ, որ քեզ պիտի որոնեն,- միջամտեց շտաբի պետ Արթուր Կարապետյանը և առաջարկեց պահել զենքը, իսկ Թաթուլը թող որոշ ժամանակ դասի չգնա:

- Տնային կալանքի որոշո՞ւմ եք ընդունում,- ծիծաղեց Թաթուլը և խնդրեց ջոկատների հրամանատարներին այս գիշեր ավելի աչալուրջ լինել: Այդ իրիկնապահին «Դյուզի» թաղամասում մեծ թվով բազմություն էր հավաքվել, եկել էին նաև Մարտունաշենից: Թաթուլի սրընթաց գործողությունների լուրը կայծակնային արագությամբ էր հասել բոլորին: Լենան իր «Կամա-2»-ով այդ միջադեպի բարեհաջող ելքը նույնպես հաղորդել էր ընկերներին: Թաթուլը մի պահ լավ չընդունեց այսքան մարդկանց իրար գլխի հավաքվելը, բայց երբ մի քանիսը խոսեցին, հասկացավ, որ փրկված տղաներին հանդիպելու, միջադեպի պատճառները հասկանալու համար էին եկել: Բայց թե Թաթուլին ինչպե՞ս կարող էին շրջանցել: Այդպես էլ նա մնաց բազմության աքցանի մեջ, ներքուստ շնորհակալ էր, որ այսքան նրբամիտ են, գնահատել գիտեն: Երկար չէր ուզում այդ

մասին խոսել, գիտեր, որ այս տաք քուրան վաղը սառը ցնցուղի պես կընդունեն դեսանտայինները: Մի բանում համաձայն էր այս մարդկանց հետ, որ մի անգամ գոնե կտրուկ պետք է հասկացվեր «խաղաղություն հաստատող» բերետավորներին, որ չի կարելի թուրքերի անաղուն ջրաղացին ջուր լցնել:

* * *

Թաթուլն այդ գիշերը մնաց պաշտպանական կետերում: Լենան ընթրիքի ողջ պատրաստությունը տեղավորեց «Վիլիսի» մեջ և խնդրեց Արմենին, Մերուժին ու Սմբատին հասցնեն տղաներին: Չիլինգարյանների հնաբույր տան լույսերն այդ երեկո չվառվեցին: Թաղամասում իրիկնահացից հետո չլսվեցին տղաների հայրենասիրական երգերը: Բոլորը գյուղամերձ սահմաններում էին, բարձր դարավանդների վրա:

Թաթուլը Արթուրի, Տիգրանի և գետաշենցի Վալերի Նազարյանի հետ ձիերով անցել էին պաշտպանական մի քանի դիրքեր և արդեն վերադառնում էին: Գերեզմաններին հարող տեղամասում կանգնած էր «Վիլիսը»: Ծառերի տակ մեծ խումբ էր՝ իր մարտական ընկերները Արարատի շրջանի Նոր կյանք գյուղից, գետաշենցիներ թալալոնց Սեմիկը, փոշտի Արշոն, Ավանեսի Բորիկը, դարբին Ֆեդոսը...

- Բարի կեսգիշեր,- հզոր ձայնով ասաց Թաթուլը և ցած թռավ ձիուց,- մենք կռվում ենք, դուք պարապ նստել եք,- ծիծաղեց ու սեղմեց տղաների աջը:

Մերուժը մոտեցավ.

- Լենա մայրիկը հաց է ուղարկել:

- Լավ էլ արել է, էլ ո՞ւմ եք սպասում, վաղուց մարսած պիտի լինեինք,- ձեռքերը շփելով՝ Թաթուլը գնաց դեպի մեքենան: Տղաները նույնպես: Քաղցած էին բոլորը, նստեցին կողք կողքի: Շուտով աննկատ դուրս եկավ լուսինը, մարմանդ կաթնաշողը երկնի բուրվառից սահեց ցած: Երբ դաշտային ընթրիքն ավարտեցին, որոշեցին առաջին հերթապահներին, իսկ մնացած տղաները թիկնեցին ծառերին, փորձեցին հանգստանալ: Թաթուլը թիկունքին զգաց ծառի հզորությունը, նայեց վերև, ոսկեգույն սաղարթները մեղմասահք խշշում էին, աչքերը փակեց: Աշնան քամին փոթորկահույզ օրորում էր անտառը: Նա զգում էր դեղին տերևաթափը, լսում թավուտների ինքնազրույցը, անտառին, աշխարհին, Գետաշենին պատկանող ասքը: Խորունկ մի հանդարտությամբ մտքերի սահքը իր մեջ տեղ էր փնտրում, օրվա զարմանալի պատառները միահյուսում, ցրիվ

տալիս տագնապների բեռը, անմեղ ու մեղավոր էր ջոկջոկում, ուժե-ղին ու թույլին հեռացնում իրարից, ներսի ձայնածափերը զարկում իրար, կարծես աշխարհի բանաձևն էր հուշում թույլ ու խեղճերին, որ այդ փխրուն կարգավիճակը, խեղճ երևալու խորհուրդը խարան են սեփական ճակատին, որ թույլի ըղձական թովչանքով զոհվելու է հույսի ճանապարհը, խոշտանգվելու է ճակատագիրը: Թիկուն-քում ծառը թեթև օրորվում էր, բարձր էր, բազմաճյուղ: Թաթուլը մի ակնթարթ նայեց, լուսինը դեղնախարույկ էր վառել ծառերին: Սրտում թրթռաց բանաստեղծության տողը, ասես երկնաձայն աղավնիներ անցան՝ թևերին վտարանդի աղոթքներ: Չհիշեց, թե վերջին անգամ երբ էր գրիչը ճերմակի վրա հանգ ու պատկերներ փնտրել: Ընդգծված կարոտի շեղբը պատռեց կասկածոտ գիշերվա և իր միջև կախված վարագույրը, բայց խղճի մասունքներ հյուսելու տրամադրություն չուներ: Ու հիմա, երբ ինքը մենակ էր, այնքան մոտիկից էր զգում տագնապների մեջ տուն ու հանգիստ, ընտա-նիք ու ծնող թողած այս ընկերներին, վիրավոր ու վառման սիրտ ունեցող տեղացի տղերքին, հոգով զորակոչված և իրենց կյանքը նպատակին զոհաբերելու պատրաստ, Հայաստանից Գետաշեն եկած քաջերին: Թաթուլը խորահայաց զգացումով, կարծես, մեկ-մեկ խոսեց ընկերների հետ, պարզ ու բարի ցանկությամբ ուզեց ներողություն խնդրել նրանց սպասողներին, բացատրել, թե ինչու աշխարհը քնած է հիմա, իսկ նրանք, Գետաշենի գերեզմանների թիկունքում՝ անտառափեշին նստած, պահպանում են հայրենաշեն օրորոն օրոցքների: Եվ հենց այս րոպեներին, մթության մեջ, երբ ոչ ոք չէր տեսնում ու չէր լսում իրեն, նա մտովի սղագրեց անցած օրը, իր վարքի վտանգավորությունը, միջադեպի բոլոր մանրամասները, և կարծես նոր-նոր տեսավ, թե քանի անգամ էր մոտեցել ստույգ մահվան և հետ դարձել: Ամփոփ շռայլության մեջ ինքնամոռաց մղումների հարկադիր առագաստներին իրեն մեղադրելու հոդված չառաջադրեց, մթության ցանցկեն ծոցերում դարձյալ տեսավ երկու հայ երիտասարդների դեպի կյանք վերադարձող բռնկուն աչքերը, նրանց թիկունքում կարդաց սպասող մայրերի հոգելույս մատյանը, աստվածամերձ խորհուրդ ու թեթևություն սահեց իր հոգետուրք ճամփեքին, և հաշտ ու հոժար հաղորդությամբ նա ձուլվեց հոր նման իրեն թիկունք դարձած հաստատուն կաղնուն:

* * *

Թաքուլի աննախադեպ գործողությունը Մարտունաշենում աննկատ չմնաց: Գետաշենի շուրջը եռաց փոթորիկը: Խորհրդային զինյալները Թաքուլին խոստացել էին հակառակ ոչ մի բան չձեռնարկել: Տղաները ազատվել էին, զինվորականները վերադարձել էին իրենց ամրակետը, սակայն խոստումնազանց եկել ու կուտակվել էին գյուղի ծայրամասերում, նրանց հետ նաև օմոնականները:

Թաքուլին այդ լուրը դեռ չէր հասել, նա դպրոցում էր: Հայ ժողովրդի պատմության դասն էր: Նա խոսում էր տաքացած. աչքերը բարկ ու բոցկլտուն էին, առավոտի վսեմ ցոլանքը գույների զարմանալի խաղով սփռված էր վերից վար: Հայ ազատագրական պայքարի պատմության էջերն էր ներկայացնում Թաքուլը, ձախ ձեռքը՝ դրոշի ներքևի ծոփքերին, աջը՝ օդում պարզած: Նրա կանգնած դիրքը, սևեռուն հայացքը, ձայնը, ասելիքը կրակեն ձիրքերի շարուկ էին, հրավառության մարդկային մի տեսակ, որ լավայի պես ժայթքում էր դասարանում՝ 30-40 աշակերտի առջև: Ժաննան ներս մտավ կամացուկ, եկել էր, որ հաղորդեր գյուղամերձ ճամփաներին իջած անգղերի մասին, սակայն մի պահ տարվեց թաքուլական կախարդանքով, սուս նստեց վերջին նստարանին, նա չուզեց, չկամեցավ քանդել նրա ոգեշանթը, որ մի կողմ էր տարել պատմության տարագույն վարագույրը, խոսում էր պարզ, իր ձայնով, իր երդումի ու հավատամքի մատյանն էր բացել, պարզել էր այն սերնդի դրոշը, որի ազատաբաղձ ճախրանքների սոսափն էր լցվել դասարանի պրկված երակները: Նրա պատումը հասավ Սողոմոն Թեհլերյանին, վիպեց, վերացավ մի ուրիշ պարծանքով, հուզվեց, չդիմացավ պատմական հիշողությունների վեհասլաց հրճվանքին, աչքերը լցվեցին արցունքով, երգի տողը թռավ շուրթերից: Թեհլերյանի ասքն էր. անդիմադիր, աստղաերամ մի հորձանք շռնդաց դասարանում, նրան միացան քառասունը, քառաձայն պատարա՞գ էր, թե՞ հազարաձայն ձոներգ եռագույն դրոշին, հայդուկներին, Հայ դատի ամենազոր ժառանգներին:

Ժաննան արցունքները զսպել էր, բայց հեկեկանքը հորդում էր ներսում, փորձում էր այս դասին անուն գտնել, մանկավարժական մեթոդներն ու դաստիարակչական կենսաղբյուրները համադրել, բայց զգաց, որ դասարանում ոչ միայն պատմություն առարկայի ծրագրային խորհուրդն էր, այլև անցած սերունդների պատգամշքեղություն, իրենց կյանքը զենքին պսակած անհատների շունչն էր կենդանացած, որի ծիածանագույն բոսորի ուսերին էր բարձրացել

Թաթուլը և այնտեղից հնչեցնում էր ազատության, հույսի և հայրենյաց ոգու դասերը: Ժաննան գամված էր նստարանին, բայց զանգը հնչել էր, երեխաները հուզախռիվ հոգով դուրս էին եկել: Թաթուլը մոտեցավ, կանգնեց նրա դիմաց:

- Ափսոս զանգը շուտ տվեց,- շշնջաց Ժաննան:

- Ուրեմն կռվող հայդուկները այդպես էլ չհասցրի՞ն մտնել Գետաշեն,- ժպտաց Թաթուլը,- հաջորդ ժամին կգան, Ժաննա՛, նրանք ինձ հանգիստ չեն տա, մինչև նպատակին չհասնեն:

- Թաթո՜ւլ,- տխուր ափսոսանքով հառաչեց Ժաննան,- քեզ հաղորդելու բան ունեմ:

- Դեռ առավոտը նոր է բացվել, ի՞նչ կա,- անհամբերությունից խզվեց Թաթուլի ձայնը:

- Գյուղի բանուկ ճամփաներին նստել են խորհրդային զինվորներն ու օմոնականները, նրանք Մարտունաշենի միջադեպի առիթով լուրջ պահանջներով են եկել:

- Ո՞վ ասաց, ումի՞ց իմացար:

- Արթուրը քեզ է սպասում, պարզապես ինձ չէի ների, եթե ընդհատեի քո աստվածային դասը,- թացվեցին Ժաննայի աչքերը:

- Մի՛ հուզվիր, ես սպասում էի նրանց,- ասաց Թաթուլը և շտապ դուրս եկավ:

Դպրոցի բակում հանդիպեցին Թաթուլն ու Արթուրը, քիչ հեռու կանգնած էր Թաթուլի «Վիլիսը», կողքին Մերուժն էր, Սմբատը, Տիգրանն ու Մակիչը:

- Եկել են, արդեն առաջին պահանջը հասել է մեզ,- ասաց Արթուրը:

- Ի՞նչ են ուզում:

- Դե պարզ է, պահանջում են եղած զենքերը վերադարձնել, այսինքն զինաթափվել և ներկայացնել Կրպեյանին:

- Ոչինչ չեն տեսնի, դրանց մոտ թե խեղճացանք, ամեն ինչ կորած է:

- Բայց մի բան պիտի ձեռնարկենք, գյուղխորհրդի առջև արդեն դրել են այդ պահանջները,- ասաց Արթուրը և կտրուկ նայեց Թաթուլին,- որտեղ դո՛ւ, այնտեղ էլ ես:

- Գնա՛նք, եղբա՛յր, քանի դեռ միասին ենք, մեր կողքին հրաշալի տղաներ են ու մեր թիկունքում Գետաշենի զսպանակված ուժն է, նրանց պահանջները սարսափելի չեն:

Արթուրը օր օրի զարմացնող հատկանիշներ էր նկատում Թաթուլի մոտ: Լարված իրադրությանը միշտ հաջորդում էր նրա վճռակա-

նությունը, դառնում էր համարյա անսխալական ու հավասարակշիռ: Արթուրն ի՞նչ իմանար, որ հենց իր մասին շատ ավելի վաղ այդ նույն հիացումը Թաթուլը խոստովանել էր Լենա մայրիկին և վիրաբույժ Գևորգին: «Արթուրն իմ բազում ընկերների թվում առանձնահատուկ է, երկու տարի է ինձնից փոքր, բայց տարիքով չեմ կարող չափել նրա իմացությունը, խիզախությունը, նպատակին մղվելու եզակի հավատը: Տեսնես, թե ինչպիսի կարոտով է խոսում ծնողների՝ Միքայելի ու Ստելլայի մասին, խոնարհ հարգանքի ի՜նչ տուրք է տալիս նրանց, բայց հաղթահարելով անձնական կարոտի վիհերը՝ նվիրումով հասել է այս բարձունքները և նահանջ չունի...»: Արթուրն այս խոսքերը օրերից մի օր կլսեր Լենա մայրիկից կամ Գևորգից, բայց հիմա ուրիշ պատասխանատվություն էր պաշարել նրան: Նա լավ գիտեր, որ Թաթուլն անհանդուրժող է և այդ զայրույթով բռնկված՝ հիմա շտապում էր գյուղխորհուրդ: Իսկ այնտեղ մարդաշատ էր: Ջոկատների մեկ տասնյակի հասնող տղաներից բացի՝ հավաքվել էին գետաշենցիներ, մեջտեղում գյուղխորհրդի նախագահ Հրանտ Գյուրջյանն էր: Թաթուլը բարևեց նկատելով, որ նախագահը հուզված էր և չափից ավելի նյարդայնացած, հենց նրան դիմեց:

- Ի՞նչ են ուզում:

- Օմոնականները ի՞նչ պիտի ուզեն՝ զենք...

- Գետաշենի տնտեսության հացի պահեստներում զենք կա՞, տվեք,- անթաքույց էր Թաթուլի հեգնանքը:

Հրանտը հասկացավ նրա կշտամբանքը, բայց չվիրավորվեց, որովհետև այդպես էլ ինքն էր պատասխանել նրանց:

- Պահեստներում ցորեն էլ չկա, Թաթո՛ւլ, բայց դրանք հենց այնպես չեն հեռանա:

- Չգիտեմ ով ինչպես կհեռանա, բայց մենք զենք չունենք նվիրելու,- բարկացավ Թաթուլը,- հասկացե՛ք, մեր տղաների կյանքի գնով ինքնապաշտպանության համար զենք ենք հայթայթում, որ ամեն մի ստահակի պահանջով խոնարհաբար նվիրե՞նք, չի լինի...

Շիկացավ մթնոլորտը, բոլորը հասկացան, որ ընդհանուր լարվածությունը ավելի է թեժանալու, Թաթուլը կտրուկ էր:

- Բայց մի պատասխան պիտի տանք, եկել, նստել են գյուղի չորսբոլոր,- ասաց նախագահը:

- Հեքիաթի վիշապնե՞րն են, հա՞, մինչև թանկ բան չզոհաբերվի, չեն հեռանա՛,- դարձյալ մռնչաց Թաթուլը:

- Խորհրդային զորամիավորումներից են, նաև օմոնականներ, ի՞նչ պիտի անենք:

- Կկռվենք, մեր արժանապատվությունը հողին չենք հավասարեցնի,- պատասխանեց Թաթուլը,- հաստատ գիտեի, որ նրանց ճանկերից փրկված երկու հայ տղաների դիմաց նրանք ինձ են ուզելու, այդ դեպքում ինձ էլ հանձնեք:

Գյուղխորհրդի նախագահը նման շարունակության չէր սպասում, հանկարծակիի եկավ, գունատվեց, նայեց կանգնածներին.

- Դա արդեն չափազանց է, Թաթո՛ւլ, այդ ի՞նչ ես ասում:

Հավաքվածները միանգամից ալեկոծվեցին, խոսակցությունները թեժացան. ոչ մի զենք, սա էր հավաքվածների կարծիքը:

- Հրա՛նտ, քանի որ քեզ են դիմել, լուր ուղարկիր, որ վաղը կստանան պատասխանը, պետք է փնտրել այդ զենքերը,- առաջարկեց Թաթուլը,- միայն թե այսպես թող չհոխորտան և չսպառնան:

- Կփորձե՛մ, գուցե դա ճիշտ է,- համաձայնեց Գյուրջյանը:

Քիչ հետո գրասենյակի բակը դատարկվեց: Խառը մտորումներով բաժանվեցին բոլորը: Նրանց սրտով էր Թաթուլի կտրուկ պատասխանը:

Երեկոյան բոլոր ջոկատների հրամանատարները շտաբում էին, պիտի որոշեին վաղվա պատասխանը, քանի որ գյուղխորհրդի նախագահին հավատալով՝ խորհրդային բանակի զինյալները և օմոնականները հեռացել էին՝ ակնկալելով հաջորդ օրվա դրական պատասխանը:

- Ես նույն կարծիքի եմ՝ ոչինչ չտալ, սակայն նրանց այս տեսակ հետևողականությունը կապված է այն երկու ինքնաձիգների հետ,- ասաց Թաթուլը,- մենք պարզապես խլեցինք, դրանք հիմա Արթուրի մոտ են, իսկ ես նրանց խոստացա, որ հետ կուղարկենք:

- Շատ ափսո՞ս,- տխրեց Արթուրը, բայց առաջարկություն ուներ,- իմ ձեռքի տակ ոչ այնքան կարևոր, գրեթե չգործող մի քանի հրացան, նռնակներ, սառը զենքեր կան, դրանցից օժիտ կսարքեմ, թող բավարարվեն:

- Մի քանի բանից պիտի հրաժարվենք,- ասաց Աշոտ Քալանթարյանը,- դրա փոխարեն համապատասխան լրացում կունենանք:

Տղաները հասկացան նրա ակնարկը, հաջորդ օրը այդպես էլ վարվեցին, սակայն անհանգստացնողը Թաթուլի հարցն էր: Խորհրդային զինյալների արժանապատվությունը զարկված էր այն բանից, որ օրը ցերեկով նա զինաթափել էր ԲՏՌ-ի երկու հաշվարկ, բերել էր Գետաշեն, տղաներին ազատել և դեռ ավելին առգրավել էր երկու ինքնաձիգ: Վիրաբույժներ Սարգիսն ու Գևորգը առաջարկեցին զենքն ու զինամթերքը թաքցնել հիվանդանոցում: Համաձայնեցին:

Արթուրը խնդրեց Թաթուլին, որ նա որոշ ժամանակ առանձնանար հիվանդանոցում: Նա խեթ նայեց զինակցին, բայց փափկացավ՝ տեսնելով իրեն ուղղված բոլորի հայացքները: Համաձայնեց, բայց բառ չասաց, ինքնապատսպարումը վիրավորանք էր իր համար, բայց միաժամանակ հասկանում էր, որ իրավունք չունի վտանգելու ճակատագրեր, որոնք ուղիղ առնչվում էին իր հետ:

Այդ գիշեր Թաթուլը, Արթուրը, Սմբատը, Տիգրանն ու Մակիչը, նաև վիրաբույժ Գևորգը «զինապահեստից» մի քանի ուղերթ կատարեցին հիվանդանոց և հենց ընդունարանին կից սենյակում կողք կողքի շարեցին եղած զենքերը, փամփուշտների փոքրիկ պարկերը:

- Այսքան զենքին, իհարկե, լուրջ հսկող է պետք,- իրեն ստիպելով՝ ծիծաղեց Թաթուլը,- կարծում եմ՝ ինձ կվստահեք:

Տղաները նույնպես ծիծաղեցին, բայց շուտ լրջացան, հասկանում էին, որ այս տարբերակներով հեռու չէին գնա: Գետաշենն ու Մարտունաշենը օղակի մեջ առած՝ սեղմում էին մեծ պետության զինյալները՝ բացելով նաև օմոնականների ախորժակը:

- Պիտի դիմանալ, տղե՛րք,- բաժանվելուց առաջ ասաց Թաթուլը,- սա ազգային-ազատագրական պայքարին պսակվածների ճակատագիրն է, այն թվացյալ հնարավոր է խոշտանգել, բայց արմատախիլ անել բացառված է:

Թաթուլը որոշեց մնալ հիվանդանոցում՝ զենքերի կողքին: Նախ չուզեց տղաների առաջարկությունը մերժել և հետո իրենց ունեցած միակ հույսը ցանկացավ ինքը պահպանել: Քանի որ Գևորգն էլ էր ապրում հիվանդանոցում, գրեթե չքնեցին: Գետաշենի ուշ աշնան գիշերը տրամադրող էր, մեղմ քամին սուլում էր հովտաշուշանների երգը, պաղ, պեպենոտ գիշերվա դեմքը մարում էր դանդաղ: Նրանք երկուսով երկար մնացին դրսում, խոսքը ձգվել էր հեռվից, միտքը անհուններ հասել, ոչ մի բան բաց չէին թողնում: Բարեբախտաբար երկուսն էլ հիանալի պատմող էին, ասելիքը հորդում էր անձանձրույթ մի ակոսով, ուր գլխավոր թեման այս եզերքներին մոտեցող տագնապն էր, բնակիչների վիճակը, հուսահատության այն շղարշը, որ տեսնում էին գետաշենցիները:

- Գևո՛րգ, մեր ուժը այս գյուղի պապենական պարտքի մեջ է, նրանք անցողիկ հայացքով չեն նայում իրենց ծննդավայրին, հող ու քարին, գերեզմանին, հուշարձանին, ծնված մանկանը, նաև մեզ՝ սար ու ձորեր անցած-եկած, հույս ու հավատի բեռան տակ կքված մեր զարմանալի ընկերներին, ինձ ու քեզ, այս մեղսոտ խավարին լույսով կնիքված նվիրյալ-զարթուններին գյուղի բարձունքներին

պառկած տղերքին, Երևանը կամովին լքած վիրաբույժ Գևորգին, որը, իր անչափահաս հինգ զավակներին թողած, այստեղ է հիմա՝ իմ կողքին, որ այս զրույցը կայանար, որ ես իմ հավատը նրան վստահեի, իմ երդումը նրա աչքերում կարդայի... Օ՜հ, Գևո՛րգ, այս պահի մեջ իմ ու քո ներկայությամբ մկրտված գիշերվա ավազանում գիտեմ՝ ի՜նչ խորհուրդ կա, որը հետո ես ու դու չկորցնելու ցավով պիտի փնտրենք, քննենք ճիշտն ու արդարը, չամաչենք չարածի համար, ուղիղ և անթաքույց հայացքով նայենք այս գյուղի մարդկանց աչքերին:

Գևորգը այսպես ինքնադատ ու կտրուկ հաճախ էր տեսել Թաթուլին, բայց նրա ըմբոստ հոգու խորքերից այսօր ափսոսանքի կանչն էր շողշողում, ամեն բառի տակ բոցե պատրույգ կար, որի մյուս ծայրը սրտի մեջ էր: Բժշկի աչքից չէր վրիպում, որ հուզմունքի պահին հևում էր Թաթուլը, դա միայն հոգեբանական ներքին գրոհներից չէր, պարզապես նա չէր հասցրել լրիվ բուժվել: Գևորգը հարմար չհամարեց այդ մասին հիշատակել, համոզված էր, որ տեղացիների բարբառով կասեր՝ լյավ կինի և արհամարհանքով կնայեր սեփական առողջությանը:

- Գուցե հանգստանա՛ս, Թաթո՛ւլ, ուշ է,- մտերմաբար ասաց Գևորգը:

- Մեծ հանգստության ժամը առջևում է,- երկիմաստ ժպտաց Թաթուլը,- այսպիսի պահերը անկրկնելի են, սիրելի՛ իմ բժիշկ: Թեկուզ բարդ ու խրթին են մեր քննարկումները, բայց հիմա քեզ հետ ճամփորդում եմ բոլոր հորիզոններով, վերծանում եմ ժամանակի բուքը և չեմ կասկածում, որ ձյուն է գալու:

Գևորգը հասկացավ նրա ակնարկը, անհանգիստ նայեց Թաթուլի աչքերի մեջ, ուր փոթորիկ էր, անշղթա կրակների եռք: Բժիշկն իր համար հայտնաբերեց այդ ալեկոծումի պատճառը, որը պաշարել էր նաև իրեն: Բայց ի՞նչ պիտի հարցներ, երբ կռահում էր այս առյուծ երիտասարդի մտահոգության առիթները, ինքնահարցուկ մռայլվեց, հետո հանդարտահոս լռեց: Բուժքույրը ժամանակին սուրճ բերեց, կարծես մեկը պետք էր, որ ցրեր խոհերի այս տեսակ գրոհը:

- Աստղերի տակ հաճելի է սուրճ խմել,- աշխուժացավ Թաթուլը: Նա հենված էր ծառին, իսկ Գևորգը նստած էր չորացած կոճղին: Թաթուլը նույնպես նստեց. նրանց մեջտեղում, հողի մեջ ոտքերը թաղած, փոքրիկ սեղանիկն էր, վրան ջրով լի կավե փարչն էր և երեք գավաթ՝ նույն կավից պատրաստված: Թաթուլը միանգամից փոխվեց, քիչ առաջվա մտահոգ խոհերը ասես քամել էր աչքերից, հուզական շուքն իջել, ծվար էր փնտրում: Եվ մեղմաձայն շշնջաց.

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն,
Հաճիշով օծուն և բալասանով.
Լուսեղեն ճամփան ես կանցնիմ գինով՝
Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն...

- Մեծարենցի լույսով օծեցիր գետաշենյան գիշերը,- խանդավառվեց Գևորգը և նույն բանաստեղծության մյուս քառատողն էլ ինքն ասաց.

Համբույրներ կուգան հովեն ու ծովեն,
Համբույր՝ լույսեն, որ չորս դիս կծաղկի,
Այս գիշեր տոն է հոգվույս կիրակի՜,
Համբույներ կուգան հովեն ու ծովեն:

- Մեծ ենք, մեծ ժողովուրդ ենք, Գևո՛րգ,- ծիսական հնչերանգով բռնկվեց Թաթուլը,- աշխարհում էլի պոեզիա կա, արվեստի մեծեր՝ ինչքա՜ն ասես, բայց մեր սրինգն ու օրորը, հոգու կտավների նրբահյուսերը յուրատեսակ թալիսմաններ են ժանյակում, այդ խճանկարը մի ուրիշ, այլ տեղ չես գտնի:

Այսպես երկար ճամփորդեցին, գիշերը կիսվեց պատմաբանի ու բժշկի աչքերի առջև, հեռու-մոտիկ իրադարձություններ վերհիշեցին, «զորակոչեցին» հրաշալի խոհեր, սիրեցին աշնան աստղոտ երկնքի պատառը: Տնից, ընտանիքից հեռու՝ նրանք ինքնամոռաց օրորում էին աշխարհի մոլորյալ միտքը, նժարում, հիասթափվում, հետո ի մի բերում՝ հառնելով իրենց ցավ ու տենչից:

Քիչ հեռվում ոտնաձայներ լսեցին:

- Այս ուշ ժամին ո՞վ կլինի, գուցե բժշկի կարիք ունեն,- ասաց Գևորգը և ոտքի կանգնեց:

- Ոտնաձայնից ճանաչեցի, Արթուրն է,- աշխուժացավ Թաթուլը,- հիմա կհամոզվես:

Իսկապես, հիվանդանոցի նախամուտքի մոտ՝ էլեկտրական լույսի անդրադարձի մեջ հայտնվեց Արթուրը: Ուսնկախ զենքն այն տպավորությունն էր թողնում, որ նրա տերը պատրաստ է մարտի մեջ մտնելու:

- Արթո՜ւր, այս ժամին կարծեմ քնած պիտի լինեիր, որովհետև Սմբատն ու Տիգրանը դիրքերում են,- անհանգստացավ Թաթուլը:

- Քունս չտարավ, մտածեցի գամ հիվանդանոց, քեզ մենակ չթողնեմ,- արդարացավ Արթուրը:

- Չէ՜, եղբա՛յր, ձեզ իրարից բաժանելը մեղք է,- նրանցով երջանկացած՝ ասաց Գևորգը և ներս գնաց՝ իմանալով, որ լուրջ խոսակցություն կունենան:

Թաքուլն ու Արքուրը գրեթե չքնեցին, երկուսն էլ հասկանում էին օրերի միջով ձգվող իրավիճակը: Ամբողջ գիշեր քննարկեցին, վերջապես որոշվեց, որ Արքուրը ձիերով վաղը գիշերը ընկերների հետ պիտի հասնի Շահումյան: Թաքուլը Շահեն Մեղրյանի հետ պայմանավորվել էր զենքերի հարցում:

Ուժի դիմաց ուժ էր պետք:

* * *

Մարտունաշենում նոյեմբերի վերջին օրերին լարվածությունը արդեն սովորական չէր, օմոնականների հետ առճակատումն անխուսափելի դարձավ: Նրանք գրեթե բոլոր կողմերից շրջապատել էին գյուղը, նաև ամրացել էին Մարտունաշենում հայտնի «սպիտակ տանը»: Օմոնականների բոլոր հարձակումներն ապարդյուն էին:

Թաքուլը օժանդակ ուժեր գործուղեց Մարտունաշեն, բայց «Արաբո» ջոկատը պայծառանուն հրամանատար Մանվելի, առյուծ Սիմոն Աչիքգյոզյանի առաջնորդությամբ տվել էր օմոնի դասը: Այստեղ, Կամո և Ազատ գյուղերի անկումից հետո ազերի զինյալները առաջին անգամ հանդիպեցին անհավանական դիմադրության: Պարզապես կռիվ էր՝ Մարտունաշենի կռիվը: Տեղի մարտունակ ուժերին գլխավորած ջոկատի անձնուրացները ոչ մի վայրկյան բաց չթողեցին նախաձեռնությունը:

Թշնամին կորուստներ տվեց, ոչնչացվեց մեկ ԲՏՌ-ի անձնակազմը: Իսկ մեքենան Թաքուլի առաջարկությամբ տրակտորով քարշ տվեցին Գետաշեն: Ղեկին նստած էր քսանամյա Միքայել Ճաղարյանը: Մինչև խորհրդային զինյալները գյուղ կհասնեին ԲՏՌ-ը տանելու, Թաքուլի իմացությամբ գնդացիրը դուրս բերվեց և իբրև Գետաշենի պաշտպանների սեփականություն՝ մնաց «զինապահեստում»:

Այդ կռվում վիրավորվել էին հրամանատար Մանվելն ու Եղիշ Մարկոսյանը: Նրանց շտապ հասցրին Գետաշենի հիվանդանոց:

Վիրաբույժներ Սարգիսն ու Գևորգը ամեն ինչ արեցին, որ նրանց կյանքին վտանգ չսպառնար: Մանվելի կանչով հիվանդանոց եկավ Աշոտ Քալանթարյանը: Հանդիպումը ջերմ էր, Մանվելը փորձեց ժպտալ, Աշոտը հասկացավ, որ իր սարքերից գոհ է: Եղիշ դային նույնիսկ պարզեց ձեռքը, սեղմեց նրա աջը:

- Դու այնտեղ չէիր, Աշո՛տ քեռի, բայց մեզ հետ կռիվ տվեցիր և կատարեցիր քո պարտքը,- հևասպառ ասաց Մանվելը:

- Ուղղությունները ճի՞շտ էի որոշել,- հետաքրքրվեց Աշոտը:

- Համարյա անսխալ,- տնքալով ասաց Մանվելը,- բայց հիմա

ուրիշ բան եմ խնդրում, պիտի անհապաղ պայթեցվի «սպիտակ տունը», այդ բանը միայն դու կարող ես անել:

Աշոտը գլխով հավանության նշան տվեց ու գնաց: Հիվանդասենյակ մտան Թաթուլը, Հրաչը, Արթուրը, հետո եկան «Մալաթիայի» Վահանն ու լրագրող Վարդանը: Մանվելի համար ուրախ էին, որ վտանգն անցել է, մի քիչ կատակեցին, աննկատելի աշխուժացան, որ վիրավոր ընկերոջ տրամադրությունը բարձրանար:

- Շնորհակալ եմ,- շշնջաց Մանվելը,- նայե՛ք, էդ շները հանգիստ չեն մնալու:

- Դա հայտնի բան է, Մանվե՛լ, պիտի զորանանք, զենք է պետք,- ասաց Թաթուլը,- տեսա՞ր Աշոտ Քալանթարյանի միակ հնարամտությունը որքան սարսափեցրեց ազերիներին, պատկերացրե՛ք, եթե մեր ու նրանց հնարավորությունները հավասար լինեն, այս տեղամասերում շատ բան կփոխվի:

Վիրավոր ընկերոջը հրաժեշտ տվեցին:

Արթուրը, գետաշենցիներ Մելսիկը, Ալեքսանն ու Արմանը Թաթուլի հանձնարարությամբ զենք բերելու նպատակով այդ երեկո ճանապարհ ընկան դեպի Շահումյան:

Նրանք պիտի անցնեին Կուշչի-Արմավիր, Թոդան և Սարիստ գյուղերի միջով՝ շուրջ 60 կմ ճանապարհ: Արթուրն առաջին անգամ չէ, որ գնում էր այս երթուղով: Դժվարին խնդիր էր, շուրջը վխտում էին օմոնականները, խորհրդային զինյալների սրտով չէին այսպիսի տեղաշարժերը, երբ շրջանցվում էին անցակետերը: Արթուրը և գետաշենցի իր համարձակ ընկերները գիտեին ամեն ոլորանի, կիրճի և անտառային կածանների հուսալի տեղերը:

Թաթուլը, ինչպես միշտ, հանգիստ ու դադար չէր ունենա մինչև Արթուրի վերադարձը: Շատ էր սիրում երևանաբնակ, շենգավիթցի այս երիտասարդին, վստահում էր, ինչպես իրեն կվստահեր, նա էր իր փոխարինողը, զենքերի հայթայթման և պահպանման գծով տեղակալը: Եվ ամեն անգամ բարդ հանձնարարությունների ժամանակ միշտ ձգտում էր խնայել նրան, բայց Շահումյան-Գետաշեն գծի անցման հաջողությունը միայն կապում էր Արթուրի անձի և համարձակության հետ: Իսկ Գետաշենը զենքի և սննդամթերքի կարիքը միշտ էր զգում:

...Երեք օր Թաթուլը երեք դարի հաշվարկով դիմացավ, սպասեց տղաներին: Թեև խոստացել էր ընկերներին, հատկապես Արթուրին, որ հիվանդանոցից դուրս չի գա, սակայն վաղ առավոտյան, երբ դեռ մութ էր, նա հասնում էր դպրոց, որտեղ նրան դիմավորում էր

գիշերային պահակը: Նա չէր ուզում անակնկալի գալ, իր անձին որոշակի կարևորություն էր տալիս, հասկանում էր, որ պետք էր ընկերներին, Գետաշենին ու նրա դպրոցին: Այդ լուսաբացին էլ նա ուսուցչանոցում էր, երբ մեկ-մեկ գալիս էին ուսուցիչները, աշխույժով կենդանանում էին դասասենյակները, գետաշենյան կյանքը սկսվում էր հենց դպրոցից:

Թաթուլը չէր կարող այս ոգելույսից հեռու լինել կամ պարապ անցկացնել օրը, դեռ ավելին՝ պատսպարված մնալ հիվանդանոցում: Նա ատում էր մորթապաշտներին, դրա համար բարձր էր գնահատում նպատակային զոհողությունը: Հոգեմաշ այսպիսի ապրումներին տուրք տված՝ Թաթուլն այդ գիշեր սպասում էր Արթուրին, տղաներին: Լենան իմացել և հաղորդել էր Թաթուլին, որ ժամանակին ու բարեհաջող նրանք դուրս են եկել Շահումյանից:

- Ամենադաժանը սպասումն է,- Թաթուլը խոստովանեց Հրաչին և ավելացրեց,- մի գավաթ թթի օղի լիներ, խմեինք, էլ չեմ դիմանում:

Հիվանդանոցում էին, այս խոսակցությունը լսեց Գևորգը, ժպտաց և նայեց բուժքրոջը: Վերջինս հասկացավ վիրաբույժի ակնարկը, քիչ հետո մեկ շիշ օղի և գավաթներ բերվեցին Թաթուլի սենյակը:

- Այս ի՞նչ է,- զարմացավ Թաթուլը:

- Թթի օղի,- հանգիստ ասաց Գևորգը,- այստեղ դրա վարպետները շատ են, խնդրել ենք, բերել են, սպիրտի փոխարեն ենք օգտագործում:

- Երանի զենքի համար էլ տեղական այսպիսի հումք ունենայինք,- կատակեց Թաթուլը,- անհանգիստ եմ, մութն ընկավ, պիտի ընդառաջ գնանք տղաներին:

Թաթուլի խնդրանքով բերված օղին գրեթե չխմեցին, ընդամենը համտես արին՝ քիչ սթափվելու համար:

Դեկտեմբեր ամիսը զգացնել էր տալիս: Թեև այստեղ ձմեռները խստաշունչ չէին, բայց գետաշենցին նախապատրաստել էր վառելիքի պաշարը, քիչ ամբարել էր հացահատիկը, մառաններում պահածոյացած մթերքներ կային, նաև գինի, դոշաբ, տանձ ու խաղողի կախաններ:

- Գետաշենն իրեն կարող է պահել, բնաշխարհը տալիս է ամեն ինչ, սակայն խաղաղությունն է պակաս, աջ ու ձախ թշնամիներ են, հարևանը հոռի է,- նկատելի դժգոհությամբ ասաց գլխավոր բժիշկը՝ Սարգիս Հակոբջոխվյանը:

- Անկասկած այդպես է,- նրա խոսքը շարունակեց Եղիշ դային,- բնությունը պակաս տեղ չի թողել, դրա համար էլ էդ անօրենի աչքը մեր գյուղից չի կտրվում:

- Ինչքան կարող ենք, դրանց քթին պիտի խփենք,- ասաց Թաթուլը և ոտքի կանգնեց,- մութն արդեն ընկավ, գնանք տղերքին ընդառաջ:

Ճանապարհին Մերուժը հիշեցրեց, որ վաղվա ծրագրերի մեջ չմոռանա՝ գետաշենցի Սմբատ Քոչարյանի հարսանիքն է, խնդրանքով հրավիրել են:

- Չեմ մոռացել, Մերո՛ւժ,- գործնական տոնով ասաց Թաթուլը,- ամեն ինչ կախված է Արթուրի խմբի բարեհաջող վերադարձից:

- Կասկածո՞ւմ ես, հրամանատա՛ր:

- Ոչ մի դեպքում,- հանգիստ պատասխահնեց Թաթուլը,- եթե Արթուրը ստանձնում է մի գործ, անհնարին է, որ այն բարեհաջող ավարտ չունենա:

Այդպես էլ կար, ընկերոջ նկատմամբ, ինչպես միշտ, այստեղ էլ նա ճիշտ էր կողմնորոշված: Ժամը 22-ի սահմաններում գյուղամերձ կիրճի աննկատելի ճամփաբաժանում նրանք հանդիպեցին: Թաթուլն ու Արթուրը ամուր գրկախառնվեցին, հասկանալի էր ուրախությունը, վերադարձել էին ողջ ու առողջ, բերվել էին և՛ զենք, և՛ սննդամթերք: Թաթուլն իր գոհունակությունը հայտնեց գետաշենցի երեքին՝ Մելսիկին, Ալեքսանին և Արմանին: Արթուրը, շատ կարևորելով, հենց այստեղ գրպանից մի ծրար հանեց և մեկնեց Թաթուլին:

- Մեղրյանի նամակն է:

Թաթուլը լուռ վերցրեց, հետո, երբ վերադառնում էին «Վիլիսով», նա անհամբեր հարցեր էր տալիս, իր համար ինչ-որ բաներ էր պարզում: Մինչև կհասնեին Չիլինգարյանների բնակարանը, Թաթուլն արդեն նկատելի տխրել էր: Արթուրի պատմածից հասկանալի էր, որ դժվարին վիճակում է նաև Շահումյանը: Այդ նույնն էր հաղորդել իր նամակով Շահեն Մեղրյանը՝ շեշտելով, թե պահեք Գետաշենը, նրա կայունությունը վճռորոշ է նաև Շահումյանի համար:

Թաթուլը դա լավ գիտեր, բայց այդ նպատակի իրագործումը պահանջում էր կոնկրետ օգնություն, ոչ թե բեռնաձիերով մեկ-երկու հրացան և մի քանի պարկ ալյուր գյուղ հասցնել, այն էլ կամավոր տղաների կյանքի գնով:

* * *

Գետաշենի շրջափակվածությունը ազդել էր ամեն ինչի վրա: Բնությունն անգամ խեղճացել էր, շատ ավելի վաղ ընկղմվել ձմեռվա գիրկը: Մարդիկ վաղուց տեղից տեղ չէին կարող գնալ, հարկադրանքը, ցավալին և ափսոսանքը խառն էին, այդպես էր արված, որ գյուղից ուժը չպակասեր, մնային, դիմակայելով տեր կանգնեին

ծննդավայրին: Հենց այդ ոգին պահելու համար Քոչարյանների տոհմը իր հաշվարկով փլցրեց տխրության գրոհը, որոշեց հարսանիք անել: Ամուսնացրին Քոչարյան Սմբատին, հարսնացուն, բնական է, տեղացի էր, հույսը տեղահանված չէր, եկեղեցին ու օրհնանքը կային, գետաշենցիների մառաններից դեռ բուրում էին հարսանեկան սեղանների համն ու հոտը:

Ինչքա՜ն էր ուրախացել Թաթուլը, ընկերների հետ պիտի մասնակցեին Գետաշենի տոհմիկ հարսանիքի. ուզում էր մոտիկից զգալ, տեսնել, թե Հայաստան երկրի այս եզերքներում հարսանեկան ի՞նչ ծեսեր էին պահված, ուզում էր լսել թագվորի երգերը, գրանցել տեղական շուրջպարերը, համայնքի հավաքական ուրախության տեսակը, զգալ հորովել-անուրջների փունջը, գետաշենյան բանահյուսության արտացոլանքը՝ ուսերին Գարդման աշխարհի տվայտանքն ու խնդումը, հոգու ցավն ու հրճվանքներից ճաք տված բարբառը:

Նրանք, այս բերկրանքներով ֆիդայացած, հայտնվեցին մեծ հարսանքատանը: Ամենավերևում շքեղ ու բազմավաստակ նստած էին գյուղի մեծերը, հետո սեղանների երկայնաշարքերն էին՝ զուգահեռ ու զարդարուն, աջ ու ձախ ձգվում էին երկարավուն նստարաններ-ը: Գրեթե ազատ տեղ չկար, հինգհարյուրից ավելի մարդ կար: Թաթուլի և իր ընկերների հատնվելը հարսանքատանը միանգամից ընդգծվեց, բոլորը ոտքի կանգնեցին, ծափահարություններն ու երաժշտությունը միախառնվեցին, մոտեցավ տանտերը, տղաներին ջերմորեն ընդունեց և սիրով առաջնորդեց վերին սեղանի մոտ: Հարսանքատունը հպարտություն էր հուշում, մարդիկ այս պահին այնքան էին հիացած, խոսում էին՝ միացած թամադայի առաջարկած կենացներին: Թաթուլի, Արթուրի, Տիգրանի, Մակիչի, Հրաչի, Վահանի, գետաշենցի հայրենասեր տղաների մասին թամադայի թույլտվությամբ ջերմ խոսք ասաց վիրաբույժ Գևորգը: Դա յուրատեսակ բնութագրում էր, որովհետև ճշմարիտ ու անկեղծ էր բժշկի գնահատությունը, բոլորի համար հարազատ ու հուզող էր: Հետո պարեցին, ճոճվեց հարսանքատունը, դարձյալ պարաշղթան տանում էր Թաթուլը, նույն կրակոտն էր, անկաշկանդ, ազատ ու վեհասլաց:

Գետաշենը հիացմունքով ընդունեց գյուղի պաշտպան պարողներին, նրանց թվում դարձյալ տեսավ ու ճանաչեց շրջապատում արդեն հայտնի ու լեգենդար Թաթուլին: Նա էլի խրոխտ էր, ձգված ու խստասիրտ, պարում էր մի ուժգնությամբ, ասես կռիվ էր տալիս, դիրքերում էր՝ պատրաստ վերջին ձեռնամարտի: Նրա կողքին մյուս տղաներն էին, շուրջբոլորը Գետաշենն էր, նաև նրա ծաղկուն

բողբոջը՝ հարս ու փեսայի երազկոտ աչքերում:

Պարից հետո տղաները իրենց հարսանեկան նվերը հանձնեցին նորապսակներին և դուրս եկան: Դեկտեմբերյան առաջին օրերը դեռևս ցուրտ չէին: Որոշեցին Գևորգի հետ անցնել հիվանդանոց: Մինչև դիրքեր բարձրանալը ուզեցին հանդիպել վիրավորներին՝ Մանվել Եղիազարյանին և Եղիշ դայուն:

Թիկունքից լսվում էր զուռնայի ձայնը՝ գիշերվա մեջ հարսանիքի միակ վկայությունը, որով Գետաշենի միտքը հավատամքի հացն էր կալսում:

* * *

Գետաշենի դպրոցը լուրջ նախապատրաստությամբ գնում էր տարեմուտ: Թաքուլը թեև ժամանակ չուներ, բայց մեկ-մեկ ներկա էր լինում երեխաների փորձերին: Դա առանձնակի ոգևորություն էր առաջացնում, զգաստանում էին դասղեկները, ասմունքի խմբակի և երգչախմբի անդամները: Նրա առաջարկությունները սիրով էին ընդունում, առարկությունները՝ ըմբռնումով, որովհետև Թաքուլը սովորություն չուներ հենց այնպես դիտողություններ անել, գիտեր ինչպես ասել, որ չդիպչեր որևէ մեկի սրտին, չվշտացներ:

Դեկտեմբերի 7-ի օրը տխուր էր, դպրոցում միջոցառում էին կազմակերպել: Հուզախառն ելևէջներ էին դահլիճում, խոսքն ու երաժշտությունը նույնպես փխրուն էին, որոնք փափուկ արցունքի պես իջնում էին ներկաների հոգու ամպերից՝ այրելով հիշողության անվերծանելի ակոսները:

Թաքուլը գամվել էր առաջին աթոռներից մեկին, լուռ էր, ատամները սեղմված էին: Արթուրը, որն անմիջապես նրա կողքին էր նստած, հասկանում էր, թե հուշի որ արծիվն է ընկերոջը հասցրել այն դաժան օրը, գիտեր, որ այս րոպեին մտքի շողերով զարդարել է սպիտակցի ընկերոջ՝ Գարիկի հիշատակը, զրուցում է նրա հետ:

Երբ դուրս եկան դպրոցից, նա ծանր հևում էր, ազդվել էր երեխաների խոսքից, դուդուկի անդարմանելի սյուքը ողողել էր «Որսկան ախպեր» կանչերի կապույտ կարկաչներով:

- Գնա՛նք, այցելենք Հրաչին ու Վահանին,- ասաց Թաքուլը,- չնայած որ երեկ ենք հանդիպել, բայց արդեն կարոտել եմ նրանց, պայծառ հոգիներ են, շատ են հարազատ, և հետո առաջիկա ծրագրերի հետ կապված խնդիրներ կան, միասին պիտի որոշենք:

Արթուրը զգաց, որ Թաքուլի ներսում հուզմունքի սովորական ալիք չէր, այլապես նա այսքան կտրուկ չէր որոշի անհապաղ գնալ

ջոկատների հրամանատարների մոտ: Քայլեցին: Աշակերտական խմբերն ավելի արագ-արագ էին գալիս անցնում, ակնածանքով էին նայում Թաթուլին ու Արթուրին, ժպտում ու վազում էին տարբեր ուղղություններով: Նրանք կանգ առան գետափին: Գետակը հորդառատ չէր, բայց վճիտ էր ու քչքչան: Փոքրիկ ալյակները սարերից դեղին տերևներ էին բերում:

- Նամակի են նման,- մի քիչ տխուր, բայց պատկերավոր ասաց Արթուրը:

- Կարոտե՞լ ես ձերոնց, Արթո՛ւր, հիմա Ստելլա մայրդ քո վերադարձին է սպասում, հայրդ ուժեղ մարդ է, կդիմանա:

- Գիտեմ, պիտի սովորեն համբերել, մի օր կհանդիպենք:

- Արթո՛ւր, մարդկայնորեն դժվար է սպասողների համար, վերջերս մի երկտող էի գրել, ներողություն էի խնդրել իմ հարազատներից, իմ Ասպրամիկից, որ ճանապարհս ինձ հեռու տարավ, ես կամովին դարձա նրանց մեծ մտահոգության աղբյուրը: Ես չկարողացա ինձ կեղծել, ես ինձ կոչեցի գետաշենցի, որտեղ հայոց հին ու նոր ճակատագրերի կանչը կար, որտեղ հայոց բախտորոշ ճակատամարտերի բոցե խանձարուրն էր դրված, այդ հրդեհից ես ու դու, այստեղից եկած կամավորները հեռանալու իրավունք չունենք: Դա արժանապատվության ոգեկանչ է, որ մեզ են ժառանգել մեր նախորդները:

- Այդպես է,- համաձայնեց Արթուրը,- բայց իմ ու քո տարիքի բոլո՞ր տղաներն են պարտավորված նախորդների կանչի առջև:

- Դա բարդ խնդիր է, Արթո՛ւր, ես թողել եմ համալսարանը, դու՝ ժողտնտեսության ինստիտուտը,- ասաց Թաթուլը և ջղային քայլեց,- գիտեմ, որ ուսման հարցում շատ բան ենք կորցնում, իսկ ժամանակը մեզ չի ներելու: Համոզված ես, չէ՞, որ ուսանողական քո շատ ընկերներ լսարանից դուրս չեկան, այդ հարցով մի անգամ կշտամբեցի իմ ընկերներից մեկին, բայց հետո զղջացի, դու էլ չես կարող մեղադրել, միևնույնն է, զղջալու ես խիստ վարմունքիդ համար, որովհետև սա կապ չունի կրթության և կրթվածության հետ, այն երևի մի ուրիշ տիեզերքից է ղեկավարվում, ուր, ինձ թվում է, մեր պապերից մեկն ու մեկն է: Նրա անունը չգիտենք, բայց նրա ձայնը, խղճի ցոլքը, արյան ընտրյալ կանչը ամուր կպած են մեր հոգուն, քնած ենք, թե արթմնի, մեր ականջին նա սուլում է սլացքի սրինգը, տանում Ծիր կաթինին ընդառաջ:

Արթուրն աչքերից մարմանդ մշուշ քամեց: Թաթուլի երևակայության շողքերից նա այնպես էր փափկացել հետապնդող հուշերից, կարծես

առանձնացել ու տեսնում էր հենց այն պապին, որ գիշեր ու զօր կանգնած էր իր թիկունքին, վտանգի ժամին վահան էր, զարկելու մերկացած սուրն էր, կրծքի տակ անշեջ կրակ էր քուրա-քուրա: Արթուրը մեղմացավ, քիչ-քիչ հանդարտվեց, Թաթուլը վերագտավ ժպիտը, պահը կարծես կայծակ էր, խփեց ու անցավ: Նրանց հոգում զարթնած ծիածանի ծոցը մի տեղից պատռվեց, շրջապատում նույնպես գույները խաժ էին, դարավանդներին ճերմակ ամպեր էին իջել:

- Գնա՛նք, կարոտել եմ Հրաչին ու Վահանին,- Թաթուլն այնպիսի խանդաղատանքով կրկնեց, որ անծանոթին կթվար՝ տարիներով չէր հանդիպել ընկերներին:

Արթուրը հասկանում էր նրան, հիացումը պահած աչքերում՝ քայլում էր նրա նման արագ-արագ, բարևում աջ ու ձախ հանդիպող գետաշենցիներին: Նրանց կողքին ուղղակի մեխվեց «Ժիգուլի» ավտոմեքենան: Արգելակների ճռռոցից Արթուրը ճանաչեց, որ ղեկին Ալեքսն է՝ Լենայի որդին: Նա իջավ մեքենայից, չզարմացավ, որ առանց մեքենայի էին: Այստեղ Թաթուլի բնավորության այդ գիծը վաղուց գիտեին: Գյուղում նա նախընտրում էր հիմնականում քայլել, եթե շտապելու առիթը չկար: Պարզապես ուզում էր իր ճանաչած մարդկանց թիվն ավելացնել, կանգնել, բարևել, խոսել օրվա տրամադրվածությունից ու հոգսերից, նույնիսկ հարցնել՝ որքան բերք են հավաքել, մառաններում մի հույս կա՞, հասցրե՞լ են վառելափայտը պահեստավորել, դրսում սովորող երեխաներ ունե՞ն: Այսպես էր Թաթուլն ամրացել Գետաշենի հողին, դարձել հոգսաշատ նրանցից մեկը, ընդլայնել էր Գետաշենի մասին իր իմացած քարտեզը՝ մոտիկից ընկալելով մարդկանց հավաքական ձայնը, նրանց տագնապն ու հույսը, հառաչանքն ու խիզախությունը:

Ալեքսին չմերժեց, նստեցին:

- Լենա մայրիկն ի՞նչ լուր ունի,- չհամբերեց Թաթուլը,- գալո՞ւ է ուղղաթիռը:

- Օդում է, շուտով կիջնի,- պատասխանեց Ալեքսը:

Թաթուլը կտրուկ նայեց Արթուրին, հասկացան իրար:

- Ես կիջնեմ շտաբի մոտ:

- Արթո՛ւր, Սմբատի ու Մերուժի հետ «Վիլիսով» բարձրացեք, քանի վայրէջք չի եղել, ստուգողների հետ կտրուկ բաների չգնաք, հետո կհանդիպենք, երբ վերադառնամ Հրաչի ու Վահանի մոտից:

Քիչ հետո, երբ մոտ էին շտաբին, Արթուրն իջավ: Ալեքսը մեքենան թեքեց դեպի Ղուշչի-Արմավիր տանող այն թաղամասը, ուր տեղակայված էր «Ալաշկերտ» ջոկատը: Թաթուլը Ալեքսին այլևս

հարցեր չտվեց, բայց մի պահ այնքան մենակ զգաց իրեն: Արթուրի բացակայությունը միանգամից նկատվեց: «Ուրիշ հմայք ես, եղբա՛յր,- Թաթուլի հոգու կանչը սուրաց գտնելու ընկերոջը,- ուրիշ հավատ ու զգացողություն է քեզ առաջնորդում, քսանչորս տարեկան և այսքան հասուն, նրբանկատ, ընկերասեր, անձնազոհ...»: Թաթուլը լռելյայն մռնչաց, Արթուրի վսեմ կերպարը դարձյալ խորացրեց իր մեջ, որ հոգու ծալքերում նրա տեսակը խարույկվեր ու մնար: Ու մինչև Հրաչի մոտ կհասներ, նա նրբահյուս փնտրտուքով, մտասևեռ շուքով հավաքագրեց «հեռու-մոտիկ» ընկերներին, նրանց զորությամբ զարդարվեց ներսից, փայլատակեցին աչքերը, թվաց ոչ թե «Ժիգուլու» մեջ է, և Ալեքսն է իր կողքին, այլ իրեն տանում է անանուն մի տիեզերանավ, և ինքը հաղորդության տեսիլքներով գնում է հանդիպելու էպոսական հսկաների, որոնցից ամեն մեկը Քուռկիկ Ջալալի ունի թամբած, ձեռքերի մեջ՝ Թուր կեծակին...

- Կանգնե՞մ,- շարժիչի աղմուկից ջոկվեց Ալեքսի ձայնը,- Հրաչին տեսնում եմ:

Թաթուլը սթափվեց մտքերից, կիսախուփ աչքերը բացեց, տեսավ Հրաչին՝ ջոկատի տղաներով շրջապատված:

- Կանգնի՛ր, Ալե՛քս,- ոգեղեն էր Թաթուլի ձայնը. նա իրեն ճշմարտորեն հավատացրեց, որ քիչ առաջվա երևակայության իր շքերթի հերոսներից մեկն է նա՝ Հրաչը, ահա իր առջև կանգնած է Ալաշկերտի Կազի գյուղացի Միքայելի թոռը, Հրազդանի Աղավնաձոր գյուղից Ցոլակի և Բուրաստանի որդին, երեք անչափահաս զավակների հայրը՝ Հրաչիկ Դանիելյանը: Թաթուլի աչքերը բռնկված էին խոնավ մի հրդեհով: Դեռ երեկվանից էր հյուսում այս պահը, ուզում էր ինքը գար, եղբայրաբար գրկեր, նրա հետ հուզվեր և ուրախանար, միասին ճամփորդեին Աղավնաձոր ու Արեգ:

- Հրա՜չ...

- Թաթո՜ւլ...

Երկու հնչեղ անուն արձագանքվեցին աջ ու ձախ: Հասկանալի հրայրքով էին նրանք ջերմանում, փոխանցվում: Հրաչը զգաց, որ Թաթուլը ներսում պատնեշներ էր քանդում: Գետաշենի ճակատագրին դամոկլյան սուրն էր կախված, և դա պարզորոշ տեսնում էին Թաթուլն ու Հրաչը, Վահանն ու Արթուրը, Մարտունաշենում՝ Մանվելն ու Սիմոնը, նրանց կողքին բազում քաջեր Հայաստանից և բազումք Գետաշենից ու Մարտունաշենից: Աշնան քամիներից հետո սկսվել էր քաղաքական մի երաշտ, որը կոշտ ու լռելյայն, աղմկոտ ու ջղագրգիռ հոսանքով գալիս էր օմոնականների ուսերին նստած՝

խորհրդային զրահամեքենաներով, կարմիր բերետավորների քողարկված ժպիտներով, որոնց տակ անթաքույց մի դավադրություն էր՝ այս եզերքներից հեռացնել նրա դարավոր տերերին՝ հայերին:

Թաթուլն ու Հրաչը այդ մասին գիտեին, այդ դաժան իմացության կրողներն էին:

Գետաշենում ու Մարտունաշենում օր օրի հուսահատվող բնակիչները սպասում էին պետական միջնորդության, Խորհրդային Սահմանադրությամբ հորջորջված արդարության վճռին:

Հայաստանը տեղյակ էր, թե ինչ է հրահրվում, փորձ էր անում մեղմել գետաշենյան լեռնահովտին պատուհասած փորձանքը: Ցավալիորեն նրա բոլոր ահազանգերը Միության վերին ատյաններում անպատասխան էին մնում:

Մոսկվայի արտաքուստ հորդորը օր օրի դառնում էր հրաման՝ ի վնաս հայերի:

Եվ այս սև ցելերի մեջ իր հրճվանքի «շախշե-բաշխեին» էր սպասում թուրքը, Գետաշեն-մարգարիտը կուլ տալու անհաս երազանքը թվացյալ սարերի հետևում էր՝ խորհրդային հրասայլերի մռութներին զոդված:

Թաթուլն ու Հրաչը, Վահանն ու Մանվելը, Արթուրն ու Սիմոնը, ազգանվեր քաջերին առաջնորդելով, եկել էին փակելու արյան ծարավի կարոտ բորենիների ճանապարհը, նրանք թվով քիչ էին, բայց հազար արժեին: Գետաշենն արքայանիստ մայրաքաղաքի պատվախնդրությամբ վեհատեսիլ սխրանքների դաշտ էր բացել նրանց առջև: Օրվա մեջ դար էր ապրում, և այդ օրն ու դարը մաքուր խղճի վայրկյանների համար ժամանակ չունեին: Այդ վայրկյանները վավերացնելու հույսով էր Թաթուլը փութացել Հրաչի մոտ: Նրանք՝ իմացյալ ու հաշտ, սևեռուն նայեցին իրար աչքերի մեջ, այնտեղ ուրիշ ճակատամարտ էր, ճակատագրի մի այլ ճանապարհ, որ նրանց սիրասուն մայրերը՝ Սեդան ու Բուրաստանը, հյուսել էին դեռ օրորոցից:

- Հրա՜չ,- պայծառաշուքով ցոլացին Թաթուլի շուրթերը:

- Թաթո՜ւլ,- բարեբանող ողողանջը Հրաչի սրտից էր:

Նրանց հանդիպումը միշտ էլ այսպես էր, բայց այսօր անսանձելի պաթոսը հառնումի հրեղեն խորքերից էր գալիս: Նրանց, անշուշտ, լսելի էին ընթացիկ օրերի զարմանադրոշմ ճիչերը, բայց առավել զարմացած էին, որ պաշարված այս երկու գյուղերի համար մեծ քաղաքներում այլևս հույսի հարթակներ չէին բարձրանում, ժողովրդի ձայնը չէին ուղղորդում, բռունցքներ չէին բարձրանում հրապարակ-

ներում: Նրանք՝ Գետաշեն եկած, բռունցք դարձած և Մարտունաշեն պահող տղաները իրենց լսողության և ընկալումի բնազդներով զգում էին հայրենյաց ուժի ուշացումը Գետաշեն ձգվող ճամփաներին: Հույսի կամուրջ-ուղղաթիռները հայոց կռունկների պես պանդխտացած էին գալիս և վտարանդի հեռանում: Գետաշենում ու Մարտունաշենում խաղաղ բնակիչները փրկություն հայցող աչքերով էին նայում երկնքին, թխպոտ ամպերին, անտարբեր դառած Աստծուն և չգիտեին՝ ո՞ւմ համար աղոթք անեն: Գետաշենում ու Մարտունաշենում հավատն իջել էր հողին, մարդիկ արդեն ապրում էին սեփական աղոթքի հաշվին, երկրպագում ծանոթ կուռքերի, երդվում էին իրենց կյանքը Գետաշենին բերած այս զորական տղերքի անունով:

Թաթուլն ու Հրաչը դա գիտեին և դարձյալ այսպես թարգմանեցին իրենց մեկ օրը, որ Գետաշենի դարերն էր տանում իր ուսերին: Պահը լեցուն գավաթի էր նման, նրանք փորձում էին պապանձված դառնության հունդերը շուռ տալ, շաղկապել հինն ու նորը, կապկպել պատճառն ու հետևանքը, բացահայտել դարավերջի հերոսների պատվախնդրությունն ու պարտքը: Այս տրամաբանությամբ եկան ու նրանց կողքին պատրաստակամ կանգնեցին «Ալաշկերտ» ջոկատի անվեհեր մարտիկներ Մխիթար Հարությունյանը, Վարուժան Սարգսյանը, Թաթուլ Խաչատրյանը, Վիտյա Ստեփանյանը...

- Արծիվնե՞ր,- հրճվանքը չթաքցրեց Հրաչը,- ինձ թվում է՝ նրանց հետ անցավ ապրած կյանքս, եղբայրներիս՝ Մուշեղի ու Մեխակի նման նվիրված են ինձ, բայց շատ եմ ափսոսում, որ դեռ ամուսնացած չեն, դրա համար մի խնդրանք ունեմ ճակատագրից ու Աստծուց, գնան, հասնեն իրենց սիրեցյալներին, չծնված երեխաների աչքը նրանց ճանապարհին է:

- Հրաշալի ասացիր, Հրա՜չ,- բացականչեց Թաթուլը,- հանուն չծնվածների պիտի հաղթելով ապրենք:

- Ինչ էլ պատահի ինձ հետ, կմեծանան, կհիշեն իմ երեխաները, բայց ես կուզեմ, որ էս ջահել առյուծները նույնպես այդ բերկրանքն ապրեն:

- Քանի՞սն են երեխաները,- հարցրեց Թաթուլը, նա գիտեր, բայց մտածված նորից հարցրեց.

- Երեքը՝ Կարենս, Վարդուհիս և Արմանը,- ջերմացան Հրաչիկի աչքերը,- մեծս վեց տարեկան է, փոքրը՝ մեկ:

- Իմ մեկն էլ Ասպրամիկս է,- հայրական խանդաղատանքով ասաց Թաթուլը,- նա էլ իր եղբայրներին է սպասում:

Մխիթարը՝ հաղթանդամ ու հզոր երիտասարդը, կարծես հասկա-

ցավ հրամանատարների հուզմունքը, չհամբերեց, մոտեցավ, ամուր սեղմեց Թաթուլի և Հրաչի ձեռքերը, մշեցի իր պապերին հիշեց, հետո մոտ կանչեց տղաներին, ակնթարթով նրանք շղթայվեցին, և բոլորեց ավանդական քոչարին: Թաթուլի սրտով էին Մխիթարի ճախրը, տղաների թնդյունը, կարծես նրանք հավաստում էին, որ շրջապատում ոչ մի օրհասական բան չկար, նրանք իրենց վարքով գոտեպնդում էին գյուղաշխարհի խաղաղ մարդկանց, ի նշան խփում թշնամու ճակատին: Թաթուլը, կարծես, շատ լավ գիտեր «Ալաշկերտի» տղաներին, բայց այս պարերով ավելի ճանաչեց Մուշ-Ալաշկերտի քաջազուն զարմիկներին, ովքեր Աղավնաձորից այստեղ էին հասել, ովքեր Հրաչ Դանիելյանի գլխավորությամբ «Ալաշկերտ» ջոկատով մասնակցել էին Այգեպարի, Մովսեսի, Ներքին Կարմիր աղբյուր և Ոսկեպար գյուղերի, Շահումյանի շրջանի պաշտպանական մարտերին:

Երբ բաժանվում էին, Թաթուլն այնքան գոհ մնաց, որ ենթարկվեց իր բոցկլտուն կարոտին ու եկավ: Խենթացած էր, որ «Ալաշկերտ» ջոկատի պարերից իր պապ Մարկոսի էրգրու բույրն առավ, կիսվեց մարտական ուղի անցած ու կռիվներում փորձված Հրաչի հետ, նրա ջոկատի տղաներին դարձյալ ու խորությամբ սիրեց, խոստացավ Մխիթարին, որ նրա հարսանիքին նվեր կտանի իր պատասխան պարը՝ Ղարս-Կաղզվանի քոչարին:

* * *

Սեղանին չբացված երկու ծրար կային և մի փոքրիկ ծանրոց: Ուղղաթիռի բեռնաթափումից հետո այսքանն էր Թաթուլին հասցեագրվածը: Ծանրոցում թերթեր էին, ամսագրեր, Զորի Բալայանի հոդվածը՝ ընդհանրապես հայ ժողովրդի անցած ճանապարհը 20-րդ դարում, այդ թվում նաև՝ Արցախի և Գետաշենի ենթաշրջանի ներկա ճակատագիրը: Միութենական թերթերում սառը, հարևանցի հաղորդումներ էին, իրականությունից հեռու բարբաջանք: Թաթուլը սկզբում ուշադրությամբ կարդաց, բայց հետո գրգռված ու ցասկոտ մի կողմ նետեց: Արթուրը, որ ուշադրությամբ հետևում էր նրան, բազկաթոռից կտրվեց, մոտեցավ խառնիխուռն կապոցին:

- Կարդալու բան չկա դրանց մեջ,- մռնչաց Թաթուլը,- ես էլ ուժ չունեմ, խնդրում եմ բարձրաձայն ընթերցիր Զորիի հոդվածը:

Այնուհետև նա ամբողջ ընթացքում չխոսեց, կարծես չէր շնչում, կլանում էր ավագ ընկերոջ, տաղանդավոր գրող-հրապարակախոսի մտքերը, նրա տագնապը, համարձակ եզրահանգումները: Մե՛կ

հրճվում էր, մե՛կ ըմբոստանում, պարզորոշ նկատվում էր, որ Զորի Բալայանն առաջնորդում էր իրեն, տանում իրականության համարձակ բացահայտմանը, պսակազերծում էր քաղաքականության անբարոյական դեմքը, ջրի երես հանում այն հանցագործություններն ու կեղծիքները, որոնց կիրառմամբ դարասկզբի երկու տասնամյակներում հայ ժողովուրդը ոչ միայն տեսավ Մեծ եղեռնը, այլև կորցրեց պատմական Հայաստանը, այնուհետև՝ Նախիջևանն ու Արցախը:

Իհարկե, ուրիշ տպավորություն կլիներ, եթե այդ հոդվածը ընթերցվեր Փարիզում ու Լոս Անջելեսում, նույնիսկ Երևանում, մեկ այլ բան էին նրա դղրդացող արձագանքները Գետաշենում, այստեղ հիմա Թաթուլի և Արթուրի վկայությամբ սարսուռը ծնվում էր դաժան սիրուց, պատկերը հառնում էր ցավի իրական կենտրոնում, ուր լսվում էին վիրավոր հողի մղեղոտ կանչը, հրդեհված արտերում հասկի մորմոքը, գմբեթն ի վար փուլ եկած վանքերի ռեքվիեմը, իր տունն ու այգին, իր եզերքը կորցնողի վշտով փեթակված գետաշենցու ու մարտունաշենցու ցավ-ափսոսանքը:

Հոդվածն ավարտվեց, բայց նրանց պարուրած հրդեհը չմեղմացավ: Նորից թարմացան ճշմարտի դառնահամ հիմքն ու փաստը, երևակվեցին ժամանակների դաժան ուժագծերը, Թաթուլն ու Արթուրը բեռնվեցին հոդվածի բազմախորհուրդ հևքով: Բարեբախտաբար ներս մտան Վարդանյան Բորիկը, Մայիսը, Բաշխիկը, Եղիշ դայու հրաշալի զավակները՝ Ալեքսը, Հանեսն ու Չալոն: Վերջիններս որսի միս էին բերել, կաքավներ, երկու նապաստակ, կարմրախայտ ձկներ:

- Ա՜յ թե քեֆի ժամանակ եք գտել,- կատակով կշտամբեց Թաթուլը:

- Ի՞նչ կա,- հարցրեց լրագրող Վարդանը,- մտահոգ ես,- բայց անմիջապես նկատեց Զորի Բալայանի հոդվածը, իրար գլխի թափված թերթերը, ծրարներ:

- Մեր դարավոր ցավից է պոռթկում Զորին,- գրգռված ասաց Թաթուլը,- պետությունն ու ժողովուրդը պիտի միանան մարդկային մեծ հոգու այդ հորձանքին, ամեն տեղ, ամեն ոք, բոլորը, անկախ կուսակցական շահերից, ներսում են, թե դրսում, պիտի իրենց ձայնը բարձրացնեն:

Տղաները լրջացան, պաշտպանության ընդհանուր հրամանատարը նկատելի բորբոքված էր: Թաթուլը նկատեց, որ ներկաները ազդվեցին, փոխեց զրույցի թեման:

- Մի տեսնեիք՝ «Ալաշկերտի» տղաներն ինչպե՜ս էին պարում,- Թաթուլը ներկայացրեց իր այցն ու տպավորությունները,- այդ պարերի պաթոսը հուշում էր, որ նրանք այդպես էլ կռվել գիտեն:

Մտքի կանչերով դարձյալ հասավ նրանց, տեղնուտեղը փոխվեց, վեհացավ: Աթոռից կտրվեց, խոնարհ ծունկի իջավ, համբուրեց պատից կախած եռագույն դրոշը: Հենց այդպես՝ ծնկած տեղից հանկարծակի ծփաց նրա երգը, տղաները քարացան: Ցավին ու վշտին անենթակա այս երիտասարդը մի պահ ընդհատեց երգը, աչքերը բոցեբարկ էին.

- Այս երգը թող արծվի թևերով հասնի Զորիին,- հետո շարունակեց, թնդաց, ափեափ լցվեց: Երգի հրճվանքն ու հույզերի պարսը իջան փողոց, զգաստացրեց շրջապատին: Լենան անմիջապես եկավ, Հրանտի հետ երկու զամբյուղներով միրգ էին բերել, դրեցին սեղաններին: Չալոն խորովածի կրակը վառեց:

- Կեսգիշերին դիրքերում պիտի լինենք,- հիշեցրեց Թաթուլը,- խավարում նստած տղաների բաժինը չմոռանա՛ք:

Մինչև հավաքվածներն ամբողջական կդարձնեին սեղանը, Թաթուլը ներողություն խնդրեց, առանձնացավ: Գրպանի ծրարը այրում էր հոգին, քրոջ՝ Ռուզանի նամակն էր: Դեռ չբացած՝ նա համոզված էր և գիտեր, որ նրա գրությամբ կգտներ իրեն հետաքրքրող բոլոր մանրամասները:

Սրտի դողով պատռեց ծրարը և առանց հապաղելու կարդաց: Ռուզանը, իրոք, ոչինչ բաց չէր թողել, Ժորա հայրիկից սկսել, ավարտել էր փոքրիկ Ասպրամիկով: Նրա նամակից անսահման ուժ ու բարություն հնձեց Թաթուլը, քրոջ բոցոտ կրակներով վառեց իր հոգու ջահերը, խենթացավ, խաղաղվեց, բայց անանց տխրությունը աշնան անձրևի պես ողողեց նրա մարմինն ու հոգին:

* * *

Մոտենում էր Ամանորը, օրացույցներին և աշխարհի տանիքներին շուտով բացվելու էր 1991 թվականի առաջին օրը: Գետաշենը լուռ փեթակի պես անցնող տարվա չարն ու բարին էր քննում: Մեկը մյուսով ապրող գետաշենցիները, աշխարհի ճանապարհներից մեկուսացած, մտել էին իրենց տները, հավատը վերին հավատամքից կտրած՝ իրենք իրենցով էին, ճակատագրին հայհոյանք չէին տալիս, բայց գլխավերևներում այլևս չէին տեսնում պաշտամունքի շուքը: Ամբարված սպասումները և առկախ հարցականների գումարը գետնով էին տվել հույսը ուղիղ պահող հոգու պատնեշը: Նրանց աչքերի առջև փուլ էր եկել փառահեղության բերդը Եղնասարի բարձունքներին, «Սպիտակ ջրի» ավանդաբույր աշխարհը եղյամել էր ցավի օտարական շղարշներով: Անանց թախիծ էր՝ շրջափակված

անտառներում, տոնածառ դառնալու հույս փայփայող եղևնիներն այդպես էլ մնացել էին անտառափեշերից այն կողմ, սակայն դրանցից մեկը իջել էր գյուղի ճամփով ու բազմել դպրոցի դահլիճում: Թաքուլի ջոկատի տղաներն էին բերել: Վիթխարահասակ ու ճյուղատարած էր եղևնին և որքան խեժաբույր, նույնքան էլ շքեղ էր:

Նոր տարվա հիշարժան պահերով Թաքուլն ուզում էր ինչ-որ ձևով միավորել, ընդգրկել ողջ գյուղը: Որոշվել էր այդ ծիսական օրվա միջոցառումը սկսել դպրոցում և ավարտել եկեղեցում: Տեղյակ էր պահվել գյուղխորհրդին, իսկ աշակերտության միջոցով՝ ամբողջ գյուղին:

...Շտաբում ասեղ գցելու տեղ չկար: Դեկտեմբերի 30-ին Թաքուլի հրավերով հավաքվել էին բոլոր ջոկատների հրամանատարները, գետաշենցի մի խումբ երիտասարդներ, հիվանդանոցի բժիշկներ, պատվիրակներ Մարտունաշենից: Զգացվում էր անսովոր աշխուժությունը, հայացքներում ջերմություն կար, խոսքը տաք էր, մոտեցող Ամանորի շուքի տակ դարձել էին ավելի զգայուն, հորդացող բուռն կարկաչ կար նրանց սրտերում:

- Նոր տարին ընդամենը դռների հետևում է, դեռ տեղ չի հասել, թող բարով տուն գա, եթե բարի է,- բառերը հատ-հատ արտասանելով՝ ընդգծված ասաց Թաքուլը,- մենք լուրջ խնդիր ունենք:

Մի վայրկյանում լրջացան նաև տղաները, որովհետև խոսքը միայն Ամանորին չէր վերաբերում: Թաքուլը, Հրաչն ու Վահանը պաշտպանական լրացուցիչ ծրագիր էին կազմել տոնական օրերի համար, նույնը կատարվել էր «Արաբոյի» Մանվելի մասնակցությամբ՝ հաստատ իմանալով, որ օմոնականներն այդպիսի տոնական օրերին դառնում էին ավելի խարդախ և կփորձեին օգտվել դիմացինի ամենասովորական անզգուշությունից: Եղած պաշտպանական դիրքերը, ինչպես միշտ, մնացին անփոփոխ, նոր ամրակետեր ավելացվեցին Կուշչի-Արմավիրի, գերեզմանոցի և ֆերմաների ուղղությամբ, հսկողությունն ուժեղացվեց նաև գյուղերում, սահմանվեց քսանչորսժամյա հերթապահություն, որում ընդգրկվեցին նաև 9-10-րդ դասարանների տղաները:

- Նրանց արդեն կարելի է վստահել,- իր աշակերտների մասին հպարտությամբ խոսեց Թաքուլը,- առանց զորակոչի՝ մարտական զինվորներ են, հրազենի հետ վարվել գիտեն, երդվյալ հայրենասերներ են:

Դպրոցի տնօրեն Ղուլղազարյանը նույնպես այդ կարծիքին էր: Նրանց հետ համամիտ էին և գյուղի դպրոցական տղաներին շատ

ջերմ բնութագրեցին Բաշխիկը, Մայիսը, Արսենը, Պապոն:

- Այդ բարձրացող ուժը պիտի պահել միշտ մարտական վիճակում,- ասաց Հրաչը,- մեր տեղամասում այդ համագործակցությունն ամենօրյա է, հրաշք տղաներ են:

Թաթուլը ներքուստ հրճվում էր, երբ այսքան ջերմ էին արտահայտվում բարձրդասարանցիների մասին: Նրանք, իրոք, կարճ ժամանակում աճեցին, ամրապնդվեցին հոգով, դարձան նշանառու հրաձիգներ, սովորեցին կյանքի այն դասը, որն այսօր մայրենին փրկող, հայրենի աշխարհը պահող միակ առարկան է:

Լենան ներս մտավ՝ ձեռքին ռադիոգիրը: Թաթուլն անհանգստացած նայեց:

- Մեղրյանից եմ լուր բերել,- Լենայի ձայնի մեջ տագնապ չկար:

Թաթուլը կռահեց, որ ընթացիկ խնդիրների հետ պետք է առնչվեր Շահենի հաղորդագրությունը, շտապ կարդաց և դարձավ ընկերներին.

- Այն, ինչի մասին մենք մտահոգ ենք և ինչ-որ քայլեր ենք արդեն ձեռնարկում, նույնը հիշեցնում է Մեղրյանը,- ժպտաց Թաթուլը և ավելացրեց,- Նոր տարուց հետո նա սպասում է Արթուրին և իր ընկերներին:

- Ամանորի մեր նվերնե՞րն է տալու, խոստացել էր,- ոգևորվեց զենքի և զինամթերքի պատասխանատու Արթուր Կարապետյանը:

Եվ եթե Արթուրն էր այդ նվերների մասին խոսում, ներկաներից ոչ ոք չկասկածեց, որ խոսքը զենքի մասին էր:

- Մինչև դրան հասնելը Նոր տարին պիտի տուն բերենք, Գետաշենի ժողովրդին իսկական հավատից թելադրված խոսք պիտի կարողանանք ասել, վիատված սրտերը պիտի վերադառնան իրենց ափը, և, վերջապես, սիրո, կարոտի և ապրելու գաղափարը չպետք է արմատից կտրված լինի,- եզրափակեց Թաթուլը,- իսկ մեզ վիճակված ճակատագիրը հրամայում է փրկել բազում ճակատագրեր, գործել տնից-տեղից հեռու և օծված այս հնաբույր Գարդման աշխարհով հանուն նպատակի մարտնչել մինչև վերջ:

Միշտ էլ Թաթուլի հայրենաշունչ խոսքը, նրա յուրաքանչյուր բառ ծաղկում էին հոգու ակունքներից, բոլորի կողմից ընդունվում ուղիղ, երդումի պես: Ամեն վայրկյան նա լցված էր աներևույթ կրակներով, իսկ կարոտի անբացատրելի կանչը անվերապահորեն խարսխված էր հայրենաձայն հին ու նոր պատումներին: Որտեղի՞ց էր գալիս խորհրդավոր պատգամների այդ շուշանադաշտը, որը տարվա բոլոր օրերին նրա առջև փռում էր ազնվագույն ճերմակի շոյաշանթող աս-

քը: Հաճախ ինքն իրեն հարց էր տալիս, քննում դեպի իրեն ձգվող վտակների վարքը և ամեն անգամ դառնում վտարանդի, երազող ու փնտրող: Նրան մեկ-մեկ թվում էր՝ առջևում չկա, այլևս չի գալու մի այնպիսի օր, որտեղ ինքը կարողանա խաղաղվել, սեփական ձեռքերով շուլալել իր հոգու պատռված ու պարտադրված քարտեզը: Օրվա ու ժամանակի հարընթաց ուժագծում Թաթուլը լույսի պակաս էր զգում, և դա հատկապես այս լեռնաշխարհում՝ Գետաշենի կիրճում, Քուրակի ափին: Հավաքական հույսի հատակում նա փլատակներ էր տեսնում, ինքնակեզ բոցը այրում էր ներսից, նեղվում էր, երբ հարազատ հեռվի արձագանքը ուշանում էր, կենսաբաղձ կանչերը մնում էին Գետաշենի ժեռուտ ափերի մեջ: Գյուղը թևերը հատած արծվի էր նման, մռնչում էր, հրեղեն բոց արձակում, իսկ հնաբույր հորովելի ու հարյավի միջև ծխի վերնաձիր խնկարկումն էր զարմացած, սառած ու պապանձված էր միամիտ ակնթարթը:

Գետաշենյան հորովելի մղեղոտ շուքը ցավ ու պատանք չէր ուզում ճանաչել: Եվ այդ «ցուրտ» օրերին, երբ ուրիշ ճար չուներ, կալի ու կարոտի երգը պահելու միակ հայտնությունը Կարեն Արզումանյանի հարսանիքն էր: Հարսնացուն ծաղկահյուսք ցոլանքի մեջ բոժոժված Հասմիկն էր: Նույն գյուղից երկու սիրահար սրտեր, կանաչ պսակ, արևատենչ, օրոր, օրոցք, Գետաշենի հազարաթերթ մատյանի էջ: Գետաշենում հարսանեկան օր, Գետաշենում հույսի վտիտ կեսօր, ճերմակ առագաստին զույգեր երազաթև: Նրանց դիմաց՝ հարսանիքում նստած հզոր մարդիկ, նրանց առջև՝ խոնարհ, անհաշտ և հզորներ, նրանց կենաց բախտի վկա հզոր հայրեր:

Կյանքի դասերն այսպես մե՛կ արևոտ, մե՛կ էլ թխպոտ, ժամանակի վտառն իրենց առաջ գցած՝ գետաշենցիները, օրաբարուր ամպը ներսում պահած, հույսի օրոցքն էին պարզել դեպի երկինք: Նրանք հարկադրված ամեն օր պատռում էին քողը գիշերների և դիմակները նրանց, ովքեր գալիս էին կողքից՝ արևելքից, դեռ արևին չտես, դեռ մոլուցքին գերի, դեռ ավարին կարոտ, դեռ ավազակ նախորդների քեն ու ոխով սնված: Չարության ցնդած մի նոր փշեպատում, որը փորձում էր սեզակալել Գետաշենի շուրջը: Աջ ու ձախից օր ցերեկով տեսնում էին, վեր ու վարից հոռետեսում, հրճվանքը ճոճքի վրա չորացնելով՝ ապխտում էին փուշն ու սեզը, և դա լուռ համրանքով, խրախուսված վերևներից, օձի նման պոչը երկարած դեպի Մարտունաշեն ու Գետաշեն, գլուխն այնտեղ՝ խանլարներում, խանդակներում բորբոսաբույր:

Ժամանակի տեսքն էր այսպես՝ երևացող և անթաքույց: Ձորական

ու զենք, ձիրք ու ձայն էին պետք, նաև ուժ, կորով, ինքնայրումից չսասանվող խիզախ տղամարդիկ:

Ո՞ր գետաշենցին դա չգիտեր: Չէ՞ որ նա պատրաստ էր ոգու վերջին հյուլեն պարգև տալու գետաշենյան սուրբ պատկերին: Ո՞ր կամավորը չգիտեր, որ Գետաշենը իր երդում-հավատքի, իր անզարդ փառքերի մշտահաղորդ տաճարն է, որ նրա փլված փանջարեն կարող է դառնալ իր գերեզմանը, բայց սրբազան ուխտ ու զենքով, հայրենաբույր բարձունք-հովիտներին պսակված նվիրումով նրանք եկել ու ամրացել էին: Այդ երդվյալները այլևս ետ չէին նայում, իրենց օրը, միտքն ու հոգին, կամքն ու կամեցողությունն էին բերել այստեղ: Աշխարհը տեսնում էր դա և չափ ու ձև էր անում: Իրենց անեզրական միտքն ու հոգին, կամքն ու գաղափարը անխոցելի զրահ դարձրած՝ վերջին սիրով եկել ու վերջին հույսով նրանք ամրացել էին Գետաշենում: Իսկ աշխարհի բաց ու խուփ աչքերի առջև՝ այստեղ՝ «Սպիտակ ջրի» ու Եղնասարի շուրջը, որոգայթներ էին լարվում, հաշվենկատ չափ ու ձևեր էին անում նրանք, ովքեր դեռ անհասցե, ազերական քոչվոր քամիների քենով ձգվում էին մորեխատենչ:

Ամանորի նախօրեին այսպիսին էր պատկերը Գետաշենի դարպասների առջև: Անձյուն ձմռան դողդողացող սահքը անդիմադիր քչփորում էր կյանք կոչվածի սիրտը: Մարդիկ՝ պապն ու թոռը, գետաշենյան ասքով ոգիացած սերունդները, և բոլորը՝ մեկ-մեկ և ամենքը՝ անբացակա, ուզում էին տեսնել այդ Նոր տարվա մռութն ու աչքը, խիղճն ու խռովքը: Այդ անկատար տեսիլքների ու կարոտյալ բարու ձմեռ պապը չկար, բայց թե գետաշենցու շռայլ հոգու նման բաց ու բաց էին դպրոցի դռները: Գյուղն էր այստեղ, միասին էին ուզում կալսել բերքն ու բարին, ամանորյա մետաքս-շուքը մորմոքներից ջոկջոկել, հավատամքի երակներում պահպանել զրնգուն կանչեր:

Թաթուլը դարձյալ իրադարձության կենտրոնում էր: Նրա սցենարով էին բեռնվել օրը, երգն ու պարը: Երջանիկ էին դպրոցականները, նրանք չէին հիշում Նոր տարվա այսպիսի տոն ու ցնծություն: Բոլորը միասին էին՝ ամբողջ գյուղով, գետաշենցուն հատուկ հմայքով ու ջերմությամբ, վերագտած ծիծաղ-ժպիտներով, երեխաների բաժին-բաժին նշխար-նվերներով: Դեռ նախորդ երեկոյան Սվետլանան ու Ժաննան Թաթուլին տեղեկացրել էին, որ ամեն ինչ նրա ծրագրվածի համաձայն է ընթանում, սակայն նվերները չեն բավարարելու շուրջ հիսուն երեխայի: Թաթուլը երկու օր առաջ դպրոցից ստացած իր

աշխատավարձն անմիջապես հանձնեց տնօրենին և հետամուտ եղավ, որ նվերների ոչ մի պակաս չլինի:

...Ամանորի առավոտը բացվեց Սուրբ Աստվածածին եկեղեցու զանգերով, շրջապատը, ուզող-չուզող և աշխարհը համայն հասկացան, որ Գետաշենում տաք էր կյանքի զարկերակը: Իսկ օջախներում պրկվել էր երազաթելը, սակայն ձիգ ու լարված էր միտքը: Այսօր ինչ էլ բերեր մորմոքը, արտաքսվել, օտարվել էր գյուղից դուրս, որ աստվածապաշտ հոգիները հաշտ ու ներողամիտ տուն տանեին իրենց բաժին Ամանորը:

Օրվա ամենահաշտ երանգները դպրոցում էին: Մեծ սրահի կենտրոնում եղևնին էր՝ գույների բազմազանության, փայլուն ու փափկահյուսք թալիսման-թելերով զարդարված: Այստեղ հրավիրված էին հարյուրավոր գետաշենցիներ, խտացված աթոռաշարքերում բաց տեղ չկար: Տնօրենի շնորհավորանքի խոսքից հետո սկսվեց երեխաների պատրաստած տոնական հանդեսը: Երգ, պար, ասմունք, ոգեկոչման խոսքեր, խոհերի հորդոր, հավատամքի մեղմանուշ պահեր, որոնց լայն թևերի մեջ Գետաշենը գգվանք էր զգում, անրջում սեր...

Երկու ժամ առանց հոգնության, միամիտ ու սրտաբաց ծփում էր բարության հեղեղը, որի ծովածուփ ելևէջները՝ սկզբից մինչև վերջ անցնում էին Թաթուլի սրտի միջով, իր կազմած ծրագիրը տաքանում էր սեփական աչքերի հրայրքով, ճամփա ու սիրտ էր փնտրում, հավատ ու ուժ էր խարսխում դպրոցի կամարների տակ: Ամենօրյա ծեսն ու ոգեդարձը ծլարձակել էին Գետաշեն ոստանի հին ու նոր թաղամասերում, մարտնչելով ձգվում էր հեռուն՝ կիրճերի խորքերը, հասնում դարավանդներին, գնում էր խառնվելու «Սպիտակ ջրի» բանտված մրմունջներին:

Թաթուլը եզրափակիչ խոսք ասաց: Տխուր էր անբացատրելի մի թախծությամբ, միաժամանակ ուրախ էր նկատելի եռանդի մեջ, անպարագիծ ու անսահման թնդյուն կար ներսում, որն ուզում էր դուրս բերել, խառնել դպրոց եկած այս միամիտ ու հպարտ մարդկանց սպասումին: Չէ՞ որ նրանք թաքուն հավատով էին փութացել այստեղ և այս Նոր տարվա խաղաղ և զրնգուն կանչ ու տենչից մի պատառ շող, մի պտղունց բարություն էին ակնկալում: Թաթուլն իր խոսքից ինքնաբերաբար թախծեց, հետո դանդաղ հեռարձակվեց ցավից, գտավ բեկված ճամփան, նայեց իրեն բևեռված հայացքներին, դղիրդ-դարձերով վարգեց վտարանդի հոգին, նա կտրուկ շուռ եկավ, երկու քայլ առաջ գնաց, ծուլվեց թիկունքում կանգնած

դպրոցականների շարքերին: Հասկացան իրար, հայդուկային երգի հրդեհը խորքերից բռնկվեց ու եկավ: Տոնածառի շուրջը հավաքված կրտսեր դասարանցիները ձեռքերը վեր պարզեցին: Հետո, երբ ներս եկավ Ձմեռ պապը՝ նվերների երկու պարկ աջ ու ձախ ուսից կախված, դահլիճով ճերմակ մի շուք անցավ, խաղաղվեցին մեծերը, փոքրերն աշխուժացան: Տոնական կատարյալ հանդեսին պիտի հաջորդեր նվերների բաժանումը, երեխաները ոչ այնքան կարոտ էին ստանալիք քաղցրավենիքներին, որքան վառվում էին հետաքրքրությունից: Ուսուցիչները նախապես հոգացել էին, հաշվել, ստացել էին նաև Թաթուլի աջակցությունը: Հրճվանքի այս պահը հավասարության օրենքով էր հաստատվել, և մանկական գայթակղությունը ոչ ոքի հունից չէր հանել:

Թաթուլը, որ հետևում էր այս ամենին, մոտեցավ ընկերներին, որոնք զբաղեցրել էին դահլիճի մի անկյունը, սեղմեց նրանց ձեռքերը, ամեն մեկին սրտանց շնորհավորեց:

Դպրոցի պատերի մեջ Ամանորի նվիրական ցերեկույթը հույզերի բազում առիթ տվեց: Մանավանդ հայրենի տան կարոտներով օծված տղաները, որոնք Գետաշենից փխրուն թախիծների թևերով հասել էին իրենց երազանքների նախադուռը, ինչ-որ մեկին էին փնտրում, լուսավոր ու սիրելի պատկերների գումարով փակ դուռ ու սիրտ էին բացում:

Ամանորի բովանդակ շուքը, որով Արթուրը մտքերով ճախրեց հայրական տուն, իր բորբոքուն սրտով, կարծես, խորհրդածեց ծնողների, հարազատների հետ, ապա խոնարհ հայտնությամբ, ակնապիշ ու սիրառատ, նայեց նազանքով պարող աղջիկներին: Նրանցից մեկը, որին թաքցրել էր իր սրտում, տասներորդ դասարանցի էր, անունը չգիտեր, չհարցրեց անգամ Թաթուլից, բայց մտքում այնքան անուշ շշնջաց՝ Լիլի՜թ: Զգաց, որ միայն այդ անունը կարող էր զարդարել իր անհայտ զգացումի ծրարը, որը փակ էր իր ու ամենքի առջև: Եվ իր երազած Լիլիթը պարողներից առաջինն էր՝ բարձրահասակ, պարանոցը երկար, դեմքը շիկնանքների աստղուն հմայքով, ժպիտը տենչավառ ու գերող: Արթուրն անհանգիստ շարժվեց աթոռին, թաքուն նայեց դահլիճին, ապա Թաթուլին, որ նստած տեղից ցուցմունքներ էր տալիս պարուհիներին: «Երանի Թաթուլը պարային շարժման սրբագրման փոխարեն աղջկան հասկացներ, որ ուղիղ նայեր ինձ՝ իր ընկերոջը՝ Արթուրին, որն օրերի փնտրտուքի նավին գտել է զմայլանքի իր կեսօրը, իր արևը ձմռան պաղ օրվա մեջ, իր շշուկների անդրադարձն ու ապրեցնող թախի-

ծը...»: Արթուրն զգաց, որ այլևս անկարող է հայացքը ետ բերել ու սիրտը պահել բանտարկված, բայց զսպվածությունն ընտանեկան դաստիարակության մաքուր շղարշով դարձյալ զարթնեց ու եկավ: Հետո անզարմանք լռեց. ուրիշները ծափահարում էին, հրճվալից բացականչում, բայց ինքը, կարծես, կախարդական շրջանագծի մեջ էր հայտնվել, միայն հայացքն էր իր թռչող արծիվը, իր ձայնը, խոհը, խաչն ու աղոթարանը:

- Պարե՛նք, տղանե՛ր, միանանք աշակերտներին,- ասաց Թաթուլը, սրտանց հորդորեց: Բեմ բարձրացան բոլորը, միայն Արթուրն ու Թաթուլը մնացին ներքևում:

- Արթո՛ւր, մեզնից մեկն ու մեկը պիտի պարի, այսօր քո հերթն է, բարձրացի՛ր,- հրամանի պես հնչեց ընկերոջ խոսքը:

Արթուրին թվաց՝ Թաթուլն իմաստունի պես թափանցել էր իր հոգու աշխարհը: Այլևս երկմտելու ժամանակ չկար, նա մի ակընթարթում ոստնեց բեմահարթակ, միացավ ընկերներին, որոնք արդեն մի քանի շրջապատույտ էին արել: Պարային զիգզագներն արդեն ազատ էին, յուրաքանչյուրն իր ճախրանքի տերն էր: Արթուրն ինքն էլ չիմացավ, թե ինչպես հայտնվեց իր Լիլիթի դեմ-դիմաց: Աղջիկը միամիտ ու շողշողուն աչքերով նայեց Արթուրին, կարծես հենց նոր տեսավ Չիլինգարյանների տանը ապրող, Երևանից եկած այս պայծառ երիտասարդին: Արթուրը հասկացավ, որ արեգական ջերմություն և բարության Աստված կային աղջկա աչքերում, մի պահ կարկամեց, բայց պարային շարժումներով ծածկեց կայծակնային շփոթությունը: Լիլիթը ցոլանքով հեռացավ, խառնվեց աղջիկների խմբին: Արթուրին թվաց՝ նա անհայտացավ մի ուրիշ աշխարհ, սիրտը խրտնած եղնիկի պես ծփաց կրծքի տակ: Հետո, երբ ավարտվեց երաժշտությունը, բոլորը հայտնվեցին իրենց տեղերում, Արթուրը թաքուն ու թրթռուն երկյուղով փնտրեց իր Լիլիթին: Բեմահարթակի խորքում՝ աղջիկների խմբի առջևում, կանգնած էր նա: Արթուրին թվաց՝ նրա հայացքը սևեռված է իր վրա, փորձեց աննկատ ժպտալ, ժպտաց նաև նա, ապա գլուխը կախեց՝ երկայն գիսակներն օրորելով հևացող կրծքի վրա:

Հայտարարվեց, որ միջոցառումը շարունակվելու է եկեղեցու բակում: Արթուրը տխրեց, նրա եկեղեցին, սաղմոսն ու սիրերգը այս դպրոցի պատերի մեջ էին: Թաթուլը նկատել էր ընկերոջ տրամադրության անկումը, բայց ոչինչ չասաց, միասին դուրս եկան: Արթուրն զգաց, որ սիրտը մնաց հետևում՝ բարձր հարթակին կանգնած՝ իր հայտնաբերած Լիլիթի աչքերում:

...Կեսօրից հետո դպրոցի կամարների տակ ջերմացած խմբերը փոքր ու մեծ շարքերով անցան եկեղեցու բակ: Նախ բոլորը մոմեր վառեցին, մաքրված ու բյուրեղյա հոգիներով դուրս եկան՝ ծուլվելով պաղ ու ձնաբույր օրվա խորհուրդներին:

Գետաշենն այստեղ էր: Եկել էին դպրոցի հրավերքով, դպրոցականների ճիչ ու կանչերով: Այս պահերին ո՛չ ուզում էին ցավ ու վիրավորանք հիշել, ո՛չ էլ կասկածել Աստծուն և ամենակարողին: Ծեր ու ջահել՝ իրենց գոգերում բարության և հավատի պաշարներ, հավաքվել էին Աստծո դռան առջև, միասին էին բռնել Նոր տարվա փեշը, ներքուստ գուրգուրում էին, փաղաքշում, որ նա իր բաժին տարածքի մեջ չլինի ժամանակի խորթ զավակը, որ դավադիր ու դառը չանցնի «երկու օր թվացող իր ճամփան»: Ծեր ու ջահել Նոր տարվա հավաքական հույսին իրենց թանկ աղոթքների բերկրության ու բաղձանքի աղավնիներն էին բերել. մառաններում եղած-չեղածից՝ միրգ ու խմիչքից, չիր ու փշատից, իրարագումար փոքր ու մեծ կապոցներ էին բացել հավաքական սեղանների շուրջը, նախ գերադասում էին գյուղի դպրոցականների՝ իրենց երեխաների երգն ու ասմունքը, հետո բաժակները զարկում իրար, լռելյայն մռնչում էին, բայց շուրթերին բարի բառեր էին, ազատ, մտերիմ խոսքեր, խորանաձայն խոհեր ու թախծություն:

Թաթուլը գերադասեց մոտենալ ամեն մեկին, այդպես վարվեցին նաև մյուս ընկերները: Տեղացիների նման նրանք նույնպես, մռնչյունները ներսում բանտած, ակամայից ժպտում էին, ջերմացնող բաներ ասում, կիսում այստեղ բերած օջախների հացը:

Եկեղեցու բաց դռների առջև աղոթքի ծես էր, Ամանորի վերադարձող վկայություն: Կուտակ զայրույթի, շրջակա փխրուն տրամադրության, օրերի անհասկանալի թերմացքի դիմաց Գետաշենը դարձյալ ձգտում էր տաք պահել իր զարկերակը: Եվ այդ ջերմության հավասարակշիռ շողքի մեջ իրենց բաժինն ունեին կամավորները: Շնորհավորանքի անմեղ ու թրթռուն շերտերից ներքև պաշտպան տղաների տրամադրության փայլն էր, ոգևորության այն տեսակը, որով նրանք ձգտում էին պահել ու ամրացնել գետաշենյան օրերի փոփոխական հավատը: Այդ հավատը փորձության մեջ էր՝ կքված ժամանակների ծանրամարմին ու ծուռ կեցվածքի տակ: Քաղաքական հոխորտանքների, ենթաշրջանում ուժերի վերաձևավորման ուրվականը նկատելի ոտնահետքերով շրջափակել էր Գետաշենն ու Մարտունաշենը: Ինչ-որ տեղից գալիս էր անզուսպ չարության փոթորիկը, որն Ամանորի անմեղ պատկերի առջև վերապահում

չուներ, խուլ էր արդարության ձայնը լսելու: Այդ ամենի դիմաց այս փխրուն եզերքի բնակիչների հին ու նոր բնազդն էր, տուն, հայրենիք, օջախ պաշտող, սրբազանությանը դավանող մարդկանց հարընթաց հոգեբանության շողքը: Թաթուլը գիտեր, որ Նոր տարվա խնդության, երգ ու տաղի, խոսք ու խոստովանանքի զորակոչով չես զարմացնի, որովհետև չի ավելանալու բազկի ուժը. նա հասկանում էր, որ այդ իրական զորությունը, հատկապես զենքը, այնքան-այնքան պետք էր հատկապես հիմա: Սակայն նա ապավինում էր մի ուրիշ զարթոնքի, կատարելության մի այլ դարձի, որոնք հոգիների հրավառության հունդերն էին շատացնում, որոնք Ամանորի նվիրական պահերին առավել տեսանելի էին դարձնում մեծ նպատակների հորդահոսը հուշերի երանելի մատյաններից մինչև իրականության դաժան պատկերները:

...Եկեղեցու դիմաց՝ Նոր տարվա անհայտ զիգզագների մեջ, գետաշենյան հնավանդ ասքերով Մեծ ծննդի Ծիր-Կաթին ձգվող ծրագիրն էր հյուսվում: Թաթուլը չէր ուզում, որ տխրության տտիպ դեմքը մշուշեր եկեղեցու տիրաձայն հաղորդությունը, թույլ չէր տալիս նաև, որ ժպիտների ժանյակ կոհակների փոխարեն մարդկանց ճակատներին իջներ վշտի վեղարը, արցունքը ծիլ տար, և հառաչանքը բողբոջեր: Նա այդ ամենի դիմաց մի ուրիշ զենք ուներ՝ երգը, պարը, հայրենաբաղձ խոսքը: Նա մենակ չէր, նրա կողքին այդպիսին էին ընկերները՝ Հայաստան աշխարհի տարբեր կողմերի ազգային երգ ու պարի իրենց տեսակով, նաև Գետաշենը, նրա դպրոցականների երգչախումբը, ուսուցիչները, գյուղի մտավորականությունը, պատկառազդու մարդիկ, երիտասարդությունը: Գետաշենի հավաքական ուժն էր այստեղ, ծիսական օրը փափուկ վայրէջք էր կատարել հազիվ նշմարվող ձյան շերտերին: Հայրենական մեծ պատերազմի վետերանները քիչ առաջ էին իջել հուշարձան-կոթողի աստիճաններով, տպավորությունը դեռ թարմ էր, խոսում էին զոհված ընկերների, չվերադարձած սերմնացանների մասին: Երաժշտությունը համահունչ էր օրվան, երգերը պարզապես տխրեցնող էին, թեև սկզբանե ելևէջների այդպիսի շաղախ չէին ունեցել: Ամանորի հետմիջօրեն, կարծես, կարոտի և իրականության կշեռք էր, այստեղ Գետաշենի ոգին էր, անկշռելի փառքերի լուսամատյանը:

...Երեկոյան Թաթուլի առաջարկով ընկերները հավաքվեցին դպրոցում: Նա ուզում էր ընդամենը մի ափ ջերմություն հաղորդել նրանց, ովքեր, տուն ու տեղից բաժանված, հարազատի ու մերձա-

վորի պատկեր-կարոտը փայփայելով, Գետաշենում էին: Ուզում էր վեհանալ նրանց ուղիղ նպատակի անվարագույր նկարագրի առջև: Այստեղ էին նաև մանկավարժները, վիրաբույժներ Սարգիսն ու Գևորգը, գյուղխորհրդի նախագահ Հրանտը, տիկին Լենան, Եղիշ դային ու իր տղաները, Աշոտ քեռին և այլք: Նստեցին համեստ սեղանների շուրջը, լցրեցին գավաթները, շնորհավորեցին իրար: Թաթուլը ոտքի կանգնեց:

- Շնորհավո՛ր Նոր տարի, հարազատնե՛րս,- ասաց նա,- այնտեղ՝ եկեղեցու բակում, Գետաշենն էր, նրա բովանդակ հովանու տակ մեր պարտքն էր բարձր պահել այս սրբազան բերդ-ամրոցի անառիկ ոգին: Հիմա դպրոցի ազնիվ կամարների տակ մենք ենք՝ այսօրվա տագնապների և վաղվա անհայտության միջև, լողացող նավը մեզ տանում է մի ափ, որի պատկերը տեսանելի է բոլորիս: Մի քանի ամիս է, որ մենք գրանցվել ենք Գետաշենում, սակայն մի ամբողջ դարի արմատներ ենք գցել այստեղ: Զորության այդ տաք ընդերքը դարձյալ Գետաշենի մենաշնորհն է, նրա նախնյաց զարմանալի ներկայությունը և այսօրվա ժառանգորդների անբեկ հայացքը դեպ ետ՝ պապոնց պատկառանքի պատգամը: Մենք այդ հավաքական սիրո և փոխանցումի վկաներն ենք, զավակները մի նպատակի, որն օրվա զարկերակի տաք արյունն է, օրվա գոտեպինդ բազկի բարեբանող ավյունը: Եվ այն, որ տարվա գունեղ ու անմոռաց օրերի երջանկաբնտիր այս պահը Նոր տարվա բացառիկ բերկրանքով մենք կիսում ենք Գետաշենում, նշանակում է՝ սա է ճակատագրի գերագույն հաշվարկը: Ուրեմն թող ներեն մեր ծնողները, տղանե՛ր, որ հիմա իրենց կողքին չենք, թող ներողամիտ լինեն հայրիկներին սպասող երեխաները, հավատամքի կերտվածքի մեջ այրվող քույրերն ու եղբայրները, ամուսիններին սպասող ջահել կանայք: Շնորհավո՛ր նրանց բոլորի Ամանորը, տա՛ Աստված՝ գալիք այս օրը հաղթանակի և արդարության անթառամ պսակով լինենք մերձավորների շրջապատում: Նաև հիշենք և հավաստենք, որ միշտ էլ թանկ զոհողությունների գնով է կանգուն մնացել սուրբ հայրենյաց գործին և ազգային զարթոնքին նվիրված սերունդների անմոռաց պատկերը: Արժանի լինենք այդ գաղափարին:

Թաթուլի խոսքը եզրափակվեց ծափերով: Ամանորի միջոցառման կազմակերպման համար մեծ ջանք էին թափել փոխտնօրեններ Սվետլանան և էդիկը, մայրենիի ուսուցչուհի Ժաննա Արզումանյանը: Թաթուլը բոլորի ներկայությամբ Ժաննային հանձնեց եռագույն կրծքանշանը, հայտնեց իր երախտագիտությունը: Դպրոցի կամար-

ների տակ վերադարձող աշխուժությունը նորից վերագտավ իր սահմանները. խոսում էին հանդարտ, հասկանալի մի լեզվով, ուր նկատելի էր ոգիների փայլը: Հաճախ ընդմիջվող երաժշտությունը, որը հայրենասիրական մեծ զգացումի ակունքներից էր հորդում, պահպանում էր կարոտադաշտի ահեղ պաթոսը, ուղեկցում տղաներին դեպի տուն, մաքրում նրանց վճիտ հոգիներին իջած մեկ պտղունց ամպամշուշը: Պարի ծրարը բացեցին գետաշենցի ուսուցիչները, ոտքի հանեցին բոլորին: Արթուրը միացյալ պարերի մեջ էր, սակայն թախծոտ ամպ էր նստել հոգում: Այս բեմահարթակում մի քանի ժամ առաջ ուրիշ փորձություն էր գրանցում նրա սիրտը՝ սիրառատ շողք էր գտել, հողից ու աշխարհից կտրել իրեն, տանում էր վերերկրային մի պայծառ ուղեծրով, որտեղ նա էր: Նազանքների հորդահոս կոհակների ծոցում նրբագեղ Լիլիթն էր շողադարձ մի հաղորդությամբ, որը հիմա տակնուվրա էր անում Արթուրի օրը, Նոր տարին, նրա քսանչորս գարունների զարթնած վտակը: Անձնական, միայն իրեն հայտնի այսպիսի երջանկության բոց նա առաջին անգամ էր զգում կրծքի տակ: Այդ անծանոթ հրդեհը ոգելիր փառքեր էր խոնարհում նրա ոտքերի առջև, որից ինքը դառնում էր թևարձակ, ինքն իր աչքերով մի նոր բարձունքից էր քննում իր վարքը, իր ձայնն ու ձիրքը, ուզում էր ելնել ու գնալ Գետաշենի փողոցներով, գտներ այն տունը, ուր իր սրտի զարդարուն ծիածանակամարն էր, իր հոգու շանթերի տիեզերադաշտը: Պարը դադարեց: Արթուրին թվաց՝ ցնդեց իր ասքը, և ինքը՝ որպես շարքային պարող, իջավ հարթակից, դանդաղորեն հեռացավ, սսկվեց իր սիրուն հեքիաթի անուրջաբույր օրորոցում:

Իսկ ներկաների համար պարզ ու միամիտ պահ էր, գյուղական օրոցքներում մեծացող Նոր տարվա վտիտ պատկերը տղաների թնդուն պարերով ամբողջանում, ձև ու բովանդակություն էր ստանում: Այս մասին խոստովանանքի իրենց խոսքն ասացին գյուղխորհրդի նախագահը, դպրոցի տնօրենը, Եղիշ դային: Լենա մայրիկը հուզված էր, նա ցավով էր մտաբերում, բայց սիրառատ խոսքեր էր շշնջում տղաներին՝ խոստովանելով, թե ինչքան դժվար է այս թանկ օրը չլինել հայրական տանը, գալ ու պատանդի նման ամփոփվել Գետաշենի կիրճերում: Պատասխան խոսք ասացին Հրաչը, Վահանն ու Մանվելը:

Պարում էին բոլորը: Թաթուլը նստած ծափահարում էր, հրճվում ընկերների ինքնամոռաց այս պահերի համար: Աներևակայելի մի խորհուրդ միավորել էր բոլորին, այն, ինչ խոսքով չէին կարող

փոխանցել, փորձում էին արտահայտել պարային շարժումներով: Դպրոցի հարկի տակ միասին էին՝ մեկ լռության և բյուր հորձանքներով շղթայված: Հետո զգացին, որ Թաթուլը նստած ծափահարում էր, աչքերի բոցը վարագուրել էր դեմքը, ոտքերը խաղ էին տալիս, բայց չէր ուզում ոտքի կանգնել: Նա կարծես պարերի միջոցով ուզում էր ճանաչել ընկերներին, տարբեր շրջաններից եկած պատվիրակների ազգային պատումը, պարային սահքը, շարժումների բնականությունն էր ոգեպատում իր մեջ: Բայց այդպես երկար չշարունակվեց. բոլորը մոտեցան Թաթուլին, զարմացական նայեցին, ժպտացին, հորդորեցին.

- Եթե դու չպարես, էլ ի՞նչ Նոր տարի:

- Էս Նոր տարին ոնց որ իմ պարը չի ուզում,- ժպտաց Թաթուլը,- կախարդված եմ ձեր թռիչքով:

- Թաթուլին պարի մեջ,- գոռաց «Ալաշկերտի» Հրաչը:

Գրկեցին ու տարան, շրջան բաց արին, հնչեց Թաթուլի սիրած «Քոչարին»: Նայեց նա ընկերների սպասողական հայացքներին, Լենա մայրիկը մոտեցավ, հետո Ժաննան:

- Ի՞նչ է պատահել, Թաթո՛ւլ,- գրեթե միաբերան հարցրին նրանք:

- Ո՛չ մի բան, մեծ ուրախությունների պահին ինձ զարմանալիորեն չի լքում տխրությունը:

Ասաց, բայց չդիմացավ հայացքներին, տեղի տվեց, հատակը ցոլաց ոտքերի տակ:

* * *

Ամանորից հետո Գետաշենի շուրջը խաբուսիկ օրեր էին հյուսվել: Առանձնապես տագնապի առիթ չէին տալիս տեսանելի տեղաշարժերը, բայց ներքին լուրերը չգրված օրենքներով պաշարել էին մարդկանց, գալիս էին տարբեր կողմերից՝ ակոսելով առանց այն էլ սուտ ու կիսաիրական մթնոլորտը:

Թաթուլը հունվարի 13-ի գիշերը անցկացրեց պաշտպանական դիրքերում, ուզում էր շատ մոտիկից զգալ ազերիների «շունչը», սեփական աչքերով ուսումնասիրել նրանց դասավորությունները: Տղաները տարբեր կողմերում էին, իր կողքին Մերուժն ու Սմբատն էին: Երկար ժամանակ չէին խոսում, թվում էր՝ մի անհայտ լռությամբ խավարի դասագիրքն էին կարդում: Թաթուլն անհանգիստ էր, մտածկոտ և դա իր մերձավոր զինակից Արթուրի, գետաշենցիներ Մելսիկի, Ալեքսանդրի և Արմանի համար: Նրանք դարձյալ լեռնահովիտներով գնացել էին Շահումյան՝ զենք և սննդամթերք բերելու:

Թեև Թաթուլը վստահ էր, որ տղաները Արթուրի գլխավորությամբ հաջողությամբ կվերադառնան, բայց դարձյալ տագնապը չէր լքում: Թաթուլը մտքով նրանց հետ էր, հաշվարկում էր օրերը, դժվարանց ժամանակը, ներքին տեսապատկերների վրա նկարում էր կիրճերը, անտառափեշերի արահետները, գետանցը առանց կամրջի, եղեգնուտը, քարկապան սարագոտին Գետաշենի սահմանագծում: Ինքնամոռացության այդ սպանիչ թմբիրը հունից հանել էր նրան, տանում էր հետ ու առաջ, խաչում գիշերվա անհայտ ուրվանկարին, ալեկոծում անհանգիստ հոգին: Բոլորը գիտեին, որ Արթուրը նրա կեսն էր, նրա սրտի կեսը, նրա անհանգիստ հոգու հրդեհը: Այնուամենայնիվ Թաթուլը սպասումի առաջ խեղճացել էր, բայց ոչ ոքի ցույց չէր տալիս: Մերուժն ու Սմբոն զարմացած էին, որ նա չէր խոսում, փակվել էր թանձր մշուշների լեռան տակ, միայն հառաչում էր, մեկ-մեկ կտրուկ ելնում տեղից, մի քանի քայլ գնում, ապա վերադառնում իր դիրքը՝ քարափի թեք կողին, ակնհայտ էր, որ շատ թանկ բան էր փայփայում ներսում, ջանում էր այն գուրգուրել, զորացնել:

- Կասկածա՞նք ունես, հրամանատա՛ր,- համարձակվեց խոսել Մերուժը:

- Ափսոսանք ունեմ, Մերո՛ւժ, որ հազար կասկածի հետ չեմ փոխի,- մռնչաց Թաթուլը: Սմբոն անսովոր հայացքով նայեց Թաթուլին՝ չկռահելով նրա միտքը:

- Տղաները դժվարին տեղամասում են, հեշտ չէ Շահումյանից ոտքով կտրել հասնել Գետաշեն, թեկուզ ձիերով ամբողջ տարածքում ազերական ոհմակներ են վխտում, մեր բարեկամ խորհրդային զինյալներն էլ վերահսկում են բոլոր ճանապարհները,- տնքաց Թաթուլը, ինքնաձիգը սեղմեց կրծքին, խորը լռեց:

- Արթուրը փորձված է, գետաշենցի տղաներն էլ հինգ մատի պես գիտեն բոլոր անցուղիները, պետք չէ կասկածել,- հուսադրեց Մերուժը:

- Մի՞թե ես այդքանը չգիտեմ,- խեթ նայեց Թաթուլը, ձայնը սաստիկ կարծր էր և անհանդուրժողական:

Ընկերներն այլևս չխոսեցին՝ հասկանալով, որ Թաթուլը չէր ուզում այդ մասին երկար քննարկել, գերադասում էր ինքն իր ներսում շտկված տեսնել Աստծո կամքը, իր հավատի կայծը ամփոփել հոգու պահոցներում:

Կածանի հեռվից ոտնաձայններ լսվեցին:

- Հերթափոխն է գալիս,- ասաց Մերուժը:

- Ստուգի՛ր նրանց զգաստությունը, հարցրո՛ւ անցաբառը,- ասաց Թաթուլը:

Երբ նրանք հեռու էին քսան-երեսուն ոտնաչափ, Մերուժը անցաբառը հարցրեց, պատասխանը ճիշտ էր:

- Խավարում զինվորական կարգ ու կանոնը լուսավորում է ճակատագրի ջահը,- գնահատեց Թաթուլը և սիրով ընդունեց որսորդներին:

...Շտաբում գիշերվա ժամը 3-ն էր, երբ «Վիլիսով» վերադարձան բարձունքներից: Թաթուլը Մերուժին բարի գիշեր ասաց, և Սմբոյի հետ բարձրացան երկրորդ հարկ: Սեղանին ուտելիք կար, ճաշը դեռ տաք էր: «Ուրեմն Լենան ուշ է գնացել այստեղից, տեսնես վաղվա ուղղաթիռի գալու մասին տեղեկություն ստացե՞լ է...»: Սեղանից քիչ օգտվեցին, Սմբատը շուտ քնեց, Թաթուլը մնաց հյուրասենյակում՝ գահավորակին նստած: Խուռներամ մտքերը Շահումյանի ճանապարհին էին, ուշացող լուրերը բզկտում էին հոգին, ինքն իր մեջ հաշտվելու հենք և պինդ հենարան էր փնտրում, որ կարողանար կառչած մնալ հույսին: «Ընդամենը երկուսուկես օր է անցել, ախր չի ուշացել Արթուրը, քեզ ինչո՞ւ ես խարույկին հանձնել, Թաթո՛ւլ, ինչո՞ւ են անհանգիստ խոհերդ պաշարել քեզ, և դու միշտ վատ բան ես մտածում...»:

- Ինչո՞ւ, Արթո՛ւր,- այս անգամ բարձրաձայն կանչեց նա, հետո սկսեց իրեն մեղադրել, կտոր-կտոր անել կասկածների մարմինը, դեն նետել խուզարկու և խուժդուժ մտքերը, մոլորյալ ու մեղսոտ ափերից հետ վերադառնալ դեպի իր սրտի ծփանքների առավոտը, իր տաղը, բառը, պատկերը: Անզուսպ ցանկությունն ակոսալուր շանթեց ներսում, մոտեցավ գրասեղանին, գրիչը ամուր սեղմեց պինդ մատների մեջ, սակայն երկար ժամանակ լուռ էր, իրեն հունի բերող եզերք էր փնտրում, ապա գրիչը ցոլաց, ինչպես նժույգը բաց դաշտում, շուշանների ճերմակ ճոճքերը մնացին հետևում:

Ոսկեբարուր իմ բալի՛կ, երկնի գահից ժոյտա ինձ,
Հոգուս ձնե սարերին լուսե անձրև թող տեղա՜,
Մյուռոնաբույր Ասպրամիկ՝ բախտիս բարուրն իմ անբիծ,
Ձողում չունեմ այս կյանքում, ես քո առջև՝ քեզ մեղա՜...

Գրիչը մի կողմ դրեց, փակեց աչքերը, շողակաթ տեսիլքը հասավ Արեգ, հին Նոր տարվա գիշերվա աստղերով շնորհավորեց ծնողներին, եղբայրներին, հարազատներին... Հոգու աչքերով տեսավ իր միակ բալիկին: Թվաց՝ Ասպրամիկը շատ էր մեծացել, սպիտակ ծաղկաշորերի ծփանքները՝ հասակն ի վար՝ վազում էր նա դեպի

իրեն, երկայն գիսակներն ուսնկախ ցոլցլում էին, ծամերին դաշտային բազմագույն ծաղիկների պսակն էր, առջևում՝ Արեգից իջվարող ոսկեծվար արտեր:

Թաթուլը չէր համարձակվում բացել աչքերը, տեսիլքները ջոկ-ջոկվում էին հոգու տվայտանքներից, հայտնության պայծառ խոր-աններում ծափահարում էին միջօրեի զանգերը, իսկ նրա աչքերի առջև երազային հաղորդությունն էր, ծիրանավառ, ծանոթ մշուշների վերնառաք անմեղություն: Եվ այդ ամենը Թաթուլի պատկերներով Ասպրամիկի բոբիկ ոտքերի տակ էր՝ Գետաշենից Արեգ լուսեբարուր հանդ ու դաշտերում, ամպերի ու աստղերի թափանցիկ քուղերով զարդարված:

Թաթուլը, այդպես էլ գլուխը դրած գրասեղանին, փակեց աչքերը: Նրան չէր հաղթել հոգնության թմբիրը, քնել էր մի բարի խորհրդով, որ չկորցներ իր փխրուն պատկերների տիրանվեր պարսը:

* * *

Գետաշենի բարձունքներին վթարվել էր օգնություն բերող ուղ-ղաթիռը, զոհեր կային: Անսահման ցավ էր պարուրել բոլորին, ափսոսանքն ու զայրույթը, ճակատագրի նենգությունը հունից հա-նել էին գյուղը: Զոհերի թվում էին նաև դպրոցականներ Մակիչն ու Արմենը, նրանք պահակազորի պատանի անդամներ էին՝ երազուն ու ժիր տղաներ: Մեծ ցավ ապրեց Թաթուլը, ողբաց հարազատների հետ, ընկերներով այցի գնացին, վշտակցեցին: Դպրոցի պատե-րի մեջ սուգի շրջանակներով դրված էին պատանի նվիրյալների դիմանկարները: Կազմակերպված հուշ-ցերեկույթը նման էր հավա-քական երդումի, մեծ ցավից հառնել էր դպրոցը:

Թաթուլն այնքան էր բորբոքվել, ասես ներսում գժվել էր շիկա-ցած քուրան: Պատմության երկու ժամը նվիրեց զոհված տղանե-րին, խոսում էր մի ուրիշ ձայնով, վերադարձել էր պատմության ակունքները, որտեղից քայլ առ քայլ մոտենում էր գետաշենյան դաժան օրագրին: Աշակերտներն՝ ակնապիշ ու խոնարհ, ձգտում էին ոչ մի բան բաց չթողնել: Իրենց ուսուցչի հյուսած «դասակտավը» անծանոթ գույների բացառիկ շեշտերով էր հորդում, շոշափելի ու վերձիգ թելերով նա մոտեցնում էր անցյալն ու ներկան, դրանք կամրջում էր հայրենասիրության շնչով, դասարան էր բերել հայ մեծերի անթառամ պսակը:

Աշակերտների աչքից չէր վրիպել, որ անկասելի ներշնչված էր իրենց սիրելին՝ Թաթուլ Կրպեյանը: Նա այսօր խոսում էր շատ

արագ, կտրուկ, ըմբոստաձայն, ասես ինչ-որ բանից ուշանում էր, մեկ մոտենում Հայաստանի պատմական քարտեզին, ապա ցույց էր տալիս Գետաշենը, Մռավ սարը, հետո Սևանա լիճը, Արագածն ու Մասիսը: Սոսկ անունները չէր թվարկում, պատմական ակնարկը, թվերի ու փաստերի վկայակոչմամբ տանում էր առաջ, արտասանում հայ մեծերի բանաստեղծություններից, մեջբերում օտարների հիացական խոսքերը հայերի և Հայաստանի մասին:

Թաթուլը սովորություն ուներ, երբ դպրոցում ավարտում էր դասը, մի քանի րոպե մնում էր դասարանում, թե ինչ էր խորհում, միայն ինքը գիտեր, ապա դասամատյանը տանում էր ուսուցչանոց, ցտեսություն ասելով գործընկեր ուսուցիչներին՝ արագ դուրս էր գալիս:

Այսօր ավելի էր շտապում: Արթուրը պիտի գար: Մերուժը դրսում էր, ասաց, որ Արթուրն արդեն շտաբում է: Թաթուլի դեմքին ծաղկեց պայծառ ժպիտը, որն արդեն քանի օր է՝ խռովքի փակի տակ էր:

- Հրաշալի լուր ես բերել, Մերո՛ւժ,- ասաց ու ցատկեց «Վիլիսի» չոր աթոռակին:

Արթուրն ընկերների հետ վերադարձել էր հինգերորդ օրվա լուսաբացին: Թաթուլն այս անգամ շատ էր հուզված, գրկել ու չէր թողնում նրան, սակայն չէր էլ բացահայտում պատճառը: Արթուրը հասկանում էր, որ ուղղաթիռի անսպասելի վթարը, անմեղ զոհերը, իրենց խմբի ուշացումը, գյուղում հուսախաբության նկատելի աշխուժացումը Թաթուլին հանգիստ չէին տալիս:

- Դժվար ճանապարհ անցանք,- մեկ խոսքով ավարտեց Արթուրը,- բայց նորից պիտի գնանք, առաջիկայում մեզ սպասում են:

- Կարծում եմ, որ դա արդեն անխուսափելի է,- շարունակեց Թաթուլը,- ուղղաթիռի վթարը, օր օրի մեծացող քաղաքական լարվածությունը լուրջ անջրպետ են բացում Գետաշենի և մայր հայրենիքի միջև, հույսի միակ ճանապարհը մնում է Շահումյանը:

Հետո Արթուրը երկար պատմեց, նոր ծրագրեր կազմեցին, որոշեցին հաջորդ արշավի օրը: Այդ գիշեր շտաբ եկան Զարգարյան Պապոն, եղբայրներ Արշոն ու Մասիսը, Մերուժն ու լրագրող Վարդանը: Սովորական այց չէր, եկել էին փաստարկներով, անհանգիստ էին:

- Գյուղի շուրջբոլորը շատ են ակտիվացել ազերիները,- ասաց Արշոն:

- Դրանց աչքը վախեցնել է պետք,- ատրճանակը լիցքավորելով՝ զայրացավ Թաթուլը և նայեց սեղանին փռված քարտեզին,- կարծում եմ՝ պիտի պայթեցվի Թոդան-Սարիստ գյուղերը կապող կամուրջը:

- Դա լուրջ ահազանգ կլինի,- միջամտեց լրագրող Վարդանը:

- Ինչ էլ լինի, մենք հարկադրված ենք մեր տեղը ցույց տալ,- աննահանջ էր Թաքուլը:

- Ես մի առաջարկություն ունեմ,- միջամտեց Արքուր Կարապետյանը,- վնասելով կամուրջը՝ նրանց ուշադրությունը կտրուկ վերցնելու ենք մեզ վրա:

- Անշուշտ, դա այդպես է լինելու,- ընկերոջն ընդհատեց Թաքուլը,- հասկանում եմ, դու ուզում ես մի անգամ էլ հասնել Շահումյան ու վերադառնալ, հետո միայն պայթեցնել այդ կամուրջը:

- Կռահեցիր իմ միտքը, Թաքո՛ւլ,- ժպտաց Արքուրը,- այդ կամջրի ոչնչացումը կմեծացնի լարվածությունը, կաշխուժանան խորհրդային զինյալները, կսկսվեն անձնագրային ռեժիմի անվան տակ ստուգումները:

- Իհարկե, համաձայն եմ, ուրեմն թարմ ուժեր հավաքագրի՛ր, Արքո՛ւր,- Թաքուլը սեղմեց Արքուրի աջը, ներկա տղաներին շնորհակալություն հայտնեց, որ այդքան ուշադիր են գետաշենյան ենթաշրջանի տեղաշարժերին, և վերջում ավելացրեց,- ճակատագրի ճեպընթացը մոտենում է մեզ, աշխատենք ոչ մի գետաշենցու վթարի չենթարկել, նրանք, գիտեք, շատ են հավատում մեզ, վստահում են և չեն հեռանում այս դրախտից, որը հիմա կրակի օղակ է:

* * *

Գարդման, Գետաշեն, շեկ անապատներից հեռու՝ հնաբույր օրերին շղթայված հողեբարկ անուններ, հին ու նոր դարերի հողմածեծ օվկիանոսներով անցած անխորտակ առագաստներ, սեփական բախտի անբեկ առաջնորդներ, կանգնած՝ ընդդեմ պատմության ցանցկեն մաղերին դեգերող վավաշոտ ցեղերի, որոնք, եկվոր ու վայրագ, իրենց աչքերի ժառանգաբույր ճպռոտությունը տակավին չմաքրած, ընդամենը քոչվորներ էին: Պատմության համար աններելի ու պակասավոր այս փշե պսակը նորից էր ուզում ցանցառ սեզակալել, ապականել շուրջը, ինչով կարող էր, գալ ու տիրել, ցաքել ամեն ինչ, ցցահան անել, նետել ցիրուցան, մնալ իր տեսակի ախտին հավատարիմ՝ ցինիկ ու ցնորամիտ:

Այդ ամենի դեմ կանգնել էր պետք, վրեժի հարկադրված տուրքից չհեռանալ, բայց երբեք չլինել կույր վրիժառու: «Դևին դժոխքի ճանապարհը» պետք էր ցույց տալ, պատժել չարը, ուղեփակոց դնել վայրագության դիմաց:

Գետաշենը այս ամենը գիտեր, տեսել էր, իսկ հիմա արդեն զգում էր, որ պատմության պեպենոտ քրտինքը քսաներորդ դարի մարմ-

նակեղեքումից էր քամվում, խառնաշփոթի հեղձուկը սանձակոտոր խրխնջում էր Մռավի քարայրներում, բայց նրա պոչը հեռվում էր՝ վիշապանենգ, ոլործուն ու թունոտ զիգզագների մեջ: Գետաշենը նրանց տեղն ու հասցեն գիտեր, համոզվել էր, որ կատարյալի ու անկատարի այդ պատվաստին բնական բողբոջ չէր ծաղկելու, այդ տեսակի համար հողը արմատ չէր ընդունելու, և ավիշը վիրավոր աչքերով կուրանալու էր՝ դառնալով վտարանդի ու խռովյալ:

Այսպիսի ժամանակներ էլի էին եղել, այդ ժամանակները հիմա կրկնվում էին՝ կցմցելով անկարելին ու անհնարինը, փորձ էր արվում ոտնահարել այստեղ երկունք առած հայկազուն նախաբարբառը՝ անտեսելով բնածայնության նրա պապենական ակունքը, նախերգանքը սիրո, հայտնությունը հայրենահամ երգ-հայրենների:

Ժամանակների դժվարին տեսակը ժահաբույր ու ժանտ իշաբեռներով միշտ ձգվել էր դեպի «Սպիտակ ջուրը», բայց այդ եկվոր ժպիրհը կանխելու նպատակով գարդմանցիք կառուցել էին Եղնասարի աղոթատունը, որ նրա բարձրաբերձ շնչին մոտենալիս օտարները հասկանային, որ կիրճերում Գետաշենի պատարագի և անպարտության ոգին է, ուժի այն մեծախորհուրդը, որ դարերով բերել և պաշտամունքի պես հեղել էին այս բերդ-ամրոցի, այս հեքիաթ-ոստանի տիրակալ այրերը:

Ասքի այս այբուբենը չէր խամրել գյուղի մատյաններում, այն անլռելի հոլովույթով իջնում էր աստղահավաք մի բարությամբ, երբեմն ցավով ու ցավագին էին նրա բույրն ու բերքը, հուսահատության հողմերը գյուղի ճամփեքին հաճախ ծանր էին նստում, ինչպես երկրաշարժի բոթը, բայց արևը դարձյալ տուն էր գալիս, միակը, որ չէր ամաչում իր տարած-բերածից:

Գետաշենը հիմա իր մտորումների այս տեսակ ձմեռն էր քննում, հոգնած ուսերին աշխարհի աղմուկն ու հանիրավի ծեսն էր, գյուղի տանիքներին իջած անձյուն ձմռան ցրտալեզու մորմոքը՝ լալագին լույսի թրթռոցներով, այն էլ հավատի պաղ արքայության պարտադրված պայմաններում:

...Այսպիսին էին շունչն ու շնչառությունը 1991-ի առաջին ամիսներին՝ հունվար-փետրվարին: Գետաշենը դիմանում էր վերջին ճիգերով, էլեկտրական լույսը գրեթե ընդհատված էր, փակում էին խմելու ջուր բերող խողովակները, դպրոցը վառելիքի պակաս էր զգում, իրենց տներում մարդիկ սննդի և վառելիքի վերջին պաշարներն էին սպառում: Լարվածության այս ձգված հարթության վրա գյուղի բոլոր կողմերում կանգնած էին պաշտպանական ջոկատները:

Նոր համալրում չկար, օգնության շոշափելի հետքերն անհետացել էին, միայն հեռավոր ու հուսադրող կանչերն էին, որոնք Լենայի ռադիոկապի միջոցով հասնում էին Գետաշեն: Այսուհանդերձ, հուսալքության ալիքը չէր երևում, գրեթե չկար: Դրա պատճառներից մեկն այն էր, որ գետաշենցիների ինքնատիպ հայրենասիրության կրակը հեշտությամբ չէր խամրում, հայրենի բնօրրանի հանդեպ նրանք ուրիշ հավատ ունեին, և հետո այստեղ էին բացառիկ ու սուրբ նպատակի համար իրենց կյանքը չխնայող տղաները: Նրանց համար, կարծես, ուրիշ այլ արժեք ու չափանիշ չկային. կամ փրկել Գետաշենը կամ մինչև վերջին կաթիլ արյունը թափել նրա արժանապատվության համար:

Գետաշենի հաջողության բանալին այդ օրերին Թաթուլը համարում էր նաև զենքը: Նա համոզված էր, որ թշնամուն հակահարված հասցնելու կամքը կար, ջոկատները շրջափակել էին գյուղ մտնող բոլոր անցուղիները, համագործակցությունը մեծ էր տեղի ուժերի հետ, կռվող գետաշենցիները հերոսական ու անբեկ էին: Իսկ Թաթուլի և իր ընկերների գործունեության ծավալներն արդեն Գետաշենի և Մարտունաշենի սահմաններում չէին ավարտվում: Նոր տարուց հետո՝ երկամսյա ժամանակահատվածում, նրանց մտահոգությունը բազմապատկվել էր ոչ միայն զենքի հայթայթման հարցում, այլև անպատիժ չթողնելու ազերական զինված այն խմբերին, որոնք գայլային ոհմակի պես ամեն առիթով ահաբեկման փորձեր էին անում, խփում ու տանում էին գետաշենցիների ունեցվածքը: Դա շոշափելի էր հիմնականում գյուղամերձ արոտներում և անտառամասերում գտնվող անասունների գողության ժամանակ:

Պարզապես վիրավորական էր, որ ջոկատների և գետաշենցի կռվող տղաների առկայությամբ ազերիների սովոր ձեռքը շարունակում էր իր սև գործը:

Շտաբի նիստերը մարտ ամսվա առաջին օրերին հաճախ էին գումարվում, այստեղ բուռն քննարկում էին բոլոր միջադեպերը, ամփոփում շաբաթվա անցուդարձը, որոշ հարցերի շուրջը վիճում՝ որոնելով ավելի լուրջ ուղիներ: Իսկ ամբողջական գնահատականը կատարվածին դրական էր, որովհետև շրջափակողները՝ ազերիները և այլք, զգում էին, որ Գետաշենում ու Մարտունաշենում առկա է որոշակի ուժ, իրեն չցուցադրող, բայց բոլոր միջադեպերին պատասխան տվող անկանխատեսելի հզորություն:

...Գարնանային առաջին օրերը, թեև տխուր, բայց վերադարձել էին գյուղ: Գետաշենը զգում էր մարտ ամսվա խոնավ բույրը.

արեգական թարմությունը ցրում էր պաղ ձմեռվա ճերմակ տեսիլքը, փողոցներում աշխույժ անցուդարձ էր, հողը տաքանում էր, հոգնած սրտերը վաստակում էին տրոփյունի իրենց նոր բաժինը: Ձմռան ջերմացած ծոցերում իրենց գարունն էին հաստատում նաև ջոկատների տղաները՝ կիրճերում և մեծ ու փոքր ճամփա-արահետների վրա ամուր էր նրանց ոտքը: Չիլինգարյանների տունը դարձյալ կենսական էր: Տանտիրոջ հիմնած այգին ծաղկել, թափանցիկ մետաքս էր կապել ներքևում: Թաթուլի հայացքը սահել էր դրանց վրայով, իջել գյուղի նեղ ու անծայր թվացող փողոցներով: Նա զգում էր հեքիաթայինի շունչը, լույսի բերկրանքը, լսում վերադարձների բաբախը:

Երկար չկարողացավ ըմբոշխնել իր գտած հեքիաթի կանչն ու տենչը. պատշգամբից նա արագ ներս մտավ և Սմբատից պահանջեց օրագիրը:

- Բե՛ր տեսնեմ՝ ինչպե՞ս ես սղագրել ջոկատների կատարածը,- Թաթուլը շատ գործնական ասաց և ստուգող հայացքով նայեց ընկերոջը: Վերջինս առանց խոսքի ժպտաց հրամանատարին և նրա առջև դրեց գրառումների՝ բավական ստվար էջերով կազմված տետրը:

- Հաստլիկ վեպ ես սարքել,- ծիծաղեց Թաթուլը, խնդրեց, որ իրեն մենակ թողնի և բաց արեց վերջին ամիսների գրառումները:

...1991 թ. փետրվար. եղանակի պատճառով երկար ժամանակ ուղղաթիռներ Գետաշեն չեն թռչում, զինամթերքի և սննդամթերքի խիստ կարիք է զգացվում: Ա. Կարապետյանի հրամանատարությամբ մի ջոկատ ուղարկվում է Շահումյան: Հինգ օրում առաջադրանքը կատարվում է, և Գետաշեն են բերվում մեծ քանակությամբ զենք ու սննդամթերք:

1991 թ. Ա. Կարապետյանի հրամանատարությամբ 9 հոգանոց ջոկատը (Վահան Հովհաննիսյան, Տիգրան Մարկոսյան, Գուրգեն Ծովյան, Ալեքսան Մարկոսյան, Հովհաննես Մարկոսյան, Արման Ծովյան) առաջադրանք է ստանում պայթեցնել Գետաշենից 10-12 կմ հեռու գտնվող Թոդան-Սարիստ գյուղերը կապող կամուրջը: Ջոկատը գիշերով հասնում է տեղ, սակայն հանդիպում է ուժեղ դիմադրության: Մի քանի ժամ տևած մարտից հետո հաջողվում է պայթեցնել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող կամուրջը:

1991 թ. Արթուր Կարապետյանն առաջադրանք է ստանում գետաշենցի Մերուժան Չիլինգարյանի հետ հետախուզել ՕՄՕՆ-ի կարևոր հենակետերից «101» կոչվող ավանը՝ հետագայում այն վե-

ռացնելու նպատակով, քանի որ հենց այստեղ էին նախածրագրվում բազմաթիվ ահաբեկչություններ, հարձակումներ Գետաշենի ուղղությամբ: Ստացվում է այնպես, որ օմոնականների մի մեծ խմբի են հանդիպում՝ սեղանի շուրջ հավաքված կերուխում անելիս: Չնայած օմոնականների տասնյակ անգամ գերազանցող թվաքանակին՝ Արթուրը որոշում է չհետաձգել հարձակումը: Երկուսով 60 փամփուշտ են արձակում օմոնականների վրա, նետում երկու նռնակ, ավանը մատնում խուճապի և մթության քողի տակ վերադառնում Գետաշեն:

1991 թ. Ա. Կարապետյանի ջոկատը (գետաշենցիներ Մելսիկ Մարկոսյան, Հովհաննես Մարկոսյան) առաջադրանք է ստանում հասնել Շահումյան շրջկենտրոն՝ Շահեն Մեղրյանի մոտ՝ Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի համար զենք, զինամթերք և սննդամթերք բերելու համար: Այդ ճանապարհը ՕՄՕՆ-ի կողմից արդեն նկատվել էր: Վերադարձին ջոկատն ընկնում է դարանակալված օմոնականների կրակի տակ: Կես տոննայից ավելի բեռնված հինգ ձիերը դժվար էին շարժվում, ու միաժամանակ թվով մի քանի անգամ գերազանցող թշնամուն դիմադրելը գնալով դառնում էր անհնար: Մելսիկն ու Հովհաննեսն առաջարկում են բեռների կեսից հրաժարվել, սակայն Արթուրը մերժում է: Նա հրամայում է երկու ընկերներին բեռներով արագ հեռանալ, իսկ ինքը միայնակ կռվում է հակառակորդի դեմ՝ այնպիսի մարտ վարելով, որ տպավորություն է ստեղծվում, թե մի ամբողջ ջոկատ է իրենց դեմ կռվում: Մոտ մեկ ժամ տևած կռվից հետո, որի ընթացքում տղաները կարողանում են թանկարժեք բեռով բավական հեռանալ, Արթուրը կռվելով նահանջում է և գյուղի մատույցներում հասնում ընկերներին...

Կարդալուց հետո Թաթուլն այդպես էլ խորասուզված մնաց, երկար մտորեց այն խիզախ օրերի ու ծանր պահերի, իրենց կյանքը մեծ գործին ու նպատակներին չխնայած տղաների մասին: Կինոժապավենի պես եկան ու անցան իրենց պարտադրված այդ դեպքերի պատճառները, այն, որ անհնարին էր լուռ ու սսկված մնալ, համբերատար հայի ու մեծահոգի հայդուկի զսպվածությունը պահպանել: «Ախր էլ ինչպե՞ս ուրիշի ունեցվածքը գողացողի ձեռքը պիտի կտրես, ուրիշի հողին ու հարստությանը ծակ աչքով նայողի բիբը պիտի փորես, այլ հնար չկա, ժամանակները փոխվել են, ազերին պիտի հասկանա, որ իր սարքովի պատմության և իր սանձակոտոր չարության դիմաց պատասխան տվողներն այստեղ են՝ Գետաշենում, Մարտունաշենում, Շահումյանում... Հայաստան աշխարհում...»: Սիրտն ալեկոծվեց, Թաթուլն ինքնաբերաբար

մեկնվեց բազկաթոռի թիկնակին, աչքերը ջերմացան եռագույն դրոշի փայլից: Գրառումները մի կողմ դրեց, խոնարհվեց, համբուրեց դրոշը, ապա կտրուկ ցած իջավ:

Մերուժը սպասում էր:

- Շատ մոտիկից հենց նոր երկու ուղղաթիռ անցան,- դարավանդի կողմը նայելով՝ ասաց վարորդը:

- Դրանց ոռնոցը լսեցի, գնանք գերեզմանոցի մերձակա դիրքերը,- ասաց նա և արագ տեղավորվեց մեքենայի խցիկում: Մերուժը շուտ էր կռահում Թաթուլի մտքերը, զգում նրա տրամադրվածության կտրուկ ելևէջները և դրա համար չշտապեց կողմնակի հարցեր տալ: «Ինչ-որ անհանգստություն ունի հրամանատարը,- մտածեց նա,- այսօր ընդամենը մեկ ժամ մնաց դպրոցում, հետաքրքիր է՝ ի՞նչ լուր է ստացել...»:

- Մերո՛ւժ, ո՞ր ճանապարհով է գիշերներին հայտնվում ազերիների «Վիլիսը», այն, որ գալիս, խփում և անպատիժ հեռանում է,- միանգամից հարցրեց Թաթուլը:

Մերուժը զարմացած նայեց նրան, որովհետև Թաթուլի հարցադրումը քիչ առաջվա իր մտածումների մշուշը ցրեց:

- Անտառափեշի նոր ճանապարհով, որտեղով միայն «Վիլիսը» կարող է անցնել:

- Գնա՛, այդ տեղանքը մոտիկից պիտի զննենք:

Տեղում Թաթուլը մանրակրկիտ նայեց բոլոր ուղղությունները, տեղանքի մանրամասները նշեց ծոցատետրի ազատ էջերի վրա, ապա Մերուժի հետ թեքվեցին դեպի պաշտպանական դիրքերը:

- Ի՞նչ պիտի անենք այդ «Վիլիսի» հետ,- ստուգիչ հարց տվեց Մերուժը:

- Մեր նշանաբանը չգիտե՞ս, դևին դժոխքի ճանապարհին պիտի արժանացնենք, Մերո՛ւժ,- նկատելի գրգռվեց Թաթուլը,- դու այս տեղանքը մի անգամ ևս նայիր, պետք կգա:

- Ես անգիր գիտեմ ամեն քար ու թուփ:

- Դե ուրեմն երեկոյան շտաբում կկազմենք պատասխան ծրագիրը...

Հաջորդ օրը Մերուժի «Վիլիսը», խավարը ճեղքելով, կանգնեց Դամաչանի ձորում: Հինգ հոգով՝ Արթուրը, Մերուժը, Մարտինը, Մայիսը և նորերզնկացի Վարդանը, ոտքով բարձրացան գերեզմանոցի պաշտպանական դիրքերի ուղղությամբ և խտացան դեպի դաշտամիջյան այն ճանապարհը, որով աննկատ հայտնվում է ազերիների ավտոմեքենան: Բարձունքներին բախվել էին գիշերամպերը, բարակ

անձրև էր մաղում, քամի չկար: Անտառի բաղձալի շունչը ծորում էր դեպի խավարը, ուր անհայտություն էր: Մեկ ժամ այսպես՝ անխոս ու սպասողական, տղաները ձուլված էին ծառերին: Վերջապես թրթռաց լույսը, ոլորվեց զառիթափի անցնելի հատվածով, հետո ուղղվեց ու եկավ:

- Չշտապեք խփել,- ասաց Արթուրը,- ամեն ինչ իմ կրակոցից հետո:

Քսան-երեսուն ոտնաչափ հեռավորության վրա Արթուրը սեղմեց ինքնաձիգի ձգանը, հետո մյուս տղաները շարունակեցին նույնը: «Վիլիսից» պատասխան կրակոց չլսվեց, որովհետև Արթուրի խփելուց հետո մեքենան թեքվեց, վայրէջքի գնաց և շատ մոտերքում շուռ եկավ: Տղաները վազեցին, Արթուրը, կանխազգալով ինչ-որ բան, գոռաց.

- Կանգնե՛ք...

Նա չէր սխալվել, «Վիլիսից» մի քանի մետր հեռու լսվեց ինքնաձիգի ճարճատյունը: Տղաները պառկեցին, բայց թշնամու կրակահերթը իր գործն արել էր: Ծանր վիրավորվեցին Մայիսն ու Մարտինը: Արթուրը դիպուկ կրակոցով ոչնչացրեց ազերուն, որը, ինչպես պարզվեց, մեքենայի մեջ եղած հինգից մեկն էր: Չորսը սպանվել էին առաջին հարվածից: Մարտինը գլխից էր վիրավորված, չէր խոսում, տղաները ցնցվեցին, խորին ափսոսանք ու ցավ ապրեցին: Մայիսի վիճակը նույնպես անհուսալի էր: Արթուրը կարգադրեց վերցնել թշնամու զենքը, Մարտինին ու Մայիսին շալակած իջնել Դամաչանի ձորը, ուր իրենց «Վիլիսն» էր:

Հիվանդանոցում վիրաբույժները մի քանի ժամ պայքարեցին Մարտինի կյանքը փրկելու համար, բայց ապարդյուն, նա չդիմացավ, վիճակն անհուսալի էր, գնաց: Մայիսին հետո մեծ դժվարությամբ հասցրին Երևան, թեև ծանր հետևանքներով, նա փրկվեց:

Այս դեպքերից հետո երկար ժամանակ ազերիները չէին հետախուզում Գետաշենը, հասկացել էին, որ քնած չէ այդ գյուղը, բայց ռուսների օգնությամբ գերատեսչական որոշ ներկայացուցիչներ զինյալ օմոնականների առաջնորդությամբ, հանդես գալով այսպես կոչված օրինականության անունից, մտնում էին Գետաշեն՝ անձնագրային կարգ ու կանոնը ստուգելու: Նրանք այսպիսի դիտավորությամբ ցույց էին տալիս, որ իրենք կան, այնտեղ՝ սարերի հետևում են: Գետաշենը, սակայն, խուճապի նշույլ անգամ ցույց չէր տալիս, լուռ համբերությամբ տանում էր ճակատագրի հարվածները:

* * *

Թաթուլն այդ առավոտ շուտ արթնացավ, օրը չորեքշաբթի էր՝ 1991-ի փետրվարի 20-ը: Մոտեցավ պատին կախված օրացույցին, երկար նայեց, կարդաց արևածագի և արևամուտի ժամերը, գոհունակ ժպտաց, պոկեց թերթիկը, տեղավորեց անձնագրի մեջ և դրեց բաճկոնի ձախ ծոցագրպանը:

- Դու հեռվում ես, Ասպրամի՛կ, քո ծննդյան օրվա օրացուցային թերթիկը պահում եմ սրտիս մոտիկ, աղոթում եմ քե՛զ, իմ պստի՛կ բալիկ, իմ անո՛ւշ ատամիկ,- անծանոթ հևոցը ներսում քնքուշ ողողվեց, հետո լուսեբարուր ու տարածական ջերմությամբ մնաց տիրաբար: Թաթուլը կարոտի անձրևից փափկացավ, փառավորվեց հիշողության անբիծ խանդաղատանքով, մոտեցավ գրասեղանին, փոքրիկ շրջանակից նայում էր դստրիկը: Անխոս վերցրեց լուսանկարը, մեղմաշուրթ համբուրեց, վերադարձրեց իր տեղը և դուրս գնաց: Փողոցում կանգնած էր Արթուրը:

- Այսքան շո՞ւտ ես արթնացել, եղբա՛յր,- հուզմունքով ասաց Թաթուլը և ամուր սեղմեց ընկերոջ ձեռքը: Արթուրից չվրիպեց նրա խոսքի հուզական երանգը, ոչինչ չհարցրեց, բայց ուղիղ նայեց Թաթուլի աչքերի մեջ:

- Ասպրամիկիս ծննդյան օրն է, այսօր նա դարձավ մեկ տարեկան,- հրեղեն շերտեր էին այդ բառերին նստած: Երիտասարդ հայրը անկարող էր թաքցնել թրթիռների ամենաթանկ պարսը, որը ցոլում էր նրա դեմքին ու վառման աչքերում:

- Շնորհավորում եմ, Թաթո՛ւլ, Ասպրամիկիդ մորը, պապիկ-տատիկներին, հորեղբայրներին, հորաքրոջը,- բծախնդրությամբ թվարկեց Արթուրը:

- Իմ և նրանց բոլորի անունից շնորհակալ եմ,- ջերմությամբ պատասխանեց Թաթուլը,- տա՛ Աստված, նույն շնորհավորանքների դիմաց քեզ պարտք չմնամ:

- Գետաշենի բարդ քննությունից հետո,- բազմանշանակ ասաց Արթուրը և ավելացրեց,- ուզում եմ այսօր ներկա լինել քո պատմության դասաժամին:

- Համեցե՛ք, եղբա՛յր, լավ էլ թեմա են նախապատրաստել տասներորդցիները՝ «Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում»,- ժպտաց Թաթուլը և խորհրդավոր նայեց ընկերոջը,- չլինի՞ մեթոդամանկավարժական դիտարկումների ես գալիս:

- Չէ՜, ես տնտեսագետ եմ,- անմիջապես արդարացավ Արթուրը:

- Ուրեմն մի բան կա,- ձայնի տոնը փոխեց Թաթուլը,- գիտե՞ս,

քիչ-քիչ կռահում եմ, Նոր տարուց հետո ավելի ուշադիր ես դպրոցի նկատմամբ, հիմա, եթե դիրքերում չես, առավոտները շուտ ես իջնում փողոց, ժպտում դպրոց գնացողներին, ներս չես գալիս:

- Մաքուր օդի խնդիր ունեմ...

- Թե՞ մաքուր սիրո,- տիրաբար ժպտաց Թաթուլը և գրկեց ընկերոջը:

- Հիմա ինձ ասա՝ իրավունք ունե՞մ քեզ հետ դպրոց գալու, քո դասն եմ ուզում լսել:

- Ես վանք կառուցող եմ, Արթո՛ւր, Աստված քեզ օգնական, գնա՛նք:

Զանգ տալուց հետո տասներորդ դասարանը ջերմ բարևով ընդունեց իրենց ուսուցչին և նրա ընկերոջը, որին արդեն շատ մոտիկից ճանաչում էին, գիտեին, որ Շահումյանից զենք բերելու դժվարին գործը նրա գլխավորությամբ է իրականացվում:

Արթուրին այնքան անսովոր թվաց առաջին պահը, ազնիվ երկյուղը թրթռաց կրծքի տակ, կարծես ինքն էր ուսուցիչը, և բոլորն ակնապիշ նայում էին իրեն: «Հիմա կմտածեն՝ սա՞ ով էր, ինչո՞ւ է հայտնվել դասարանում...»,- մտածեց Արթուրը և, կարծես, փոշմանեց իր հանդգնության համար: Թաթուլը կայծակնորեն զգաց ընկերոջ վիճակը, և ինքն իր նման չէր լինի, եթե հոգեբանական կամուրջները չմիավորեր նույն պահի մեջ:

- Սիրելի՛ աշակերտներ, գիտեմ, ճանաչում եք Արթուր Կարապետյանին՝ որպես Գետաշենի խիզախ պաշտպանի, բայց որպես պատմություն, գրականություն և տնտեսագիտություն հրաշալի իմացողի չգիտեք: Նա այսօր մեր հյուրն է, ցանկանում է ձեզնից իմանալ, թե ինչպե՞ս եք պատկերացնում հայ լինելու մեր առաքելությունը, հայի հանճարեղությունը, հավատամքը, սերը, նվիրումը սուրբ հայրենիքին, որովհետև այդ մեծ նպատակների մարտնչող զինվոր է նաև ինքը:

Դասարանը ծափահարեց: Արթուրը ոտքի կանգնեց, լայն ժպտաց բոլորին, և հայացքը մեխվեց երրորդ նստարանին: Նա էր՝ Նոր տարվա իր հրաշքը, իր լուսեղեն ամրոցի տիրուհին: Եվ որպեսզի իրեն չմատնի, աթոռը մի կողմ տարավ և նստեց լուսամուտի դիմաց: Թաթուլից չէր վրիպել ընկերոջ լիաշող ու սևեռուն հայացքը, հարևանցի նայեց նրան, չէր սխալվել, բայց դրությունը շիտակ պահելու հրամանով սկսեց դասը:

Եվ այդ դասաժամն էլ շարքայիններից չէր, դարձյալ փոթորկվեց հայրենյաց գաղափարներին լույս ու փայլ վավերացնող ոգին: Խոսում էին աշակերտները, սահմանված հերթականություն կար,

Թաթուլը չէր միջամտում, ինքնուրույն ու ինքնատիպ էին բոլորը: Եվ ահա նա՝ այն չքնաղ աղջիկը, բարձրացավ նստարանից, երկայն գիսակները նազանքով օրորվեցին թիկունքին. նա, մի քիչ շառագունած, բայց վսեմ ու կախարդիչ հայացքով նայեց ուսուցչին, և շողշողուն ու իմաստալից բառերը հնչեցին սարսուռների ցողով: Թաթուլն իր աշակերտուհուն լավ էր ճանաչում, բայց տասնյոթ տարին բոլորած Գետաշենի դուստրը դեռ այսպես ներշնչանքով չէր արտահայտվել, այսքան ինքնաբուխ չէր բացահայտել իր էության և պատումի ներդաշնակությունը: Ժպիտ ու կյանք էի հորդում նրանից, իսկ ասելիքը շաղախված էր կրակի մի թանձրությամբ, որից տաքանում էին բոլորը: Թաթուլն աշխատեց չընդհատել նրան, բայց աչքի պոչով նայում էր Արթուրին: Նույն հիացումի պսակն էր նրա աչքերում: Արթուրը համառորեն մեխվել էր աթոռին՝ ձեռքերը կրծքին այնպես ամուր խաչած, որ թաքցներ կրծքի տակ ուժգնացող և քաղցր ավերումի ձգվող սիրաակոս հևքը: Աղջիկը նստեց, գոհ էր իրենից, ընդամենը մի անգամ գլուխը բարձրացրեց, նայեց, շողքի սարսուռ և հիացումի ձոն էին ծաղկել տղայի աչքերում...

Վերջապես զանգը հնչեց, դասարանը ոտքի կանգնեց:

- Ապրե՛ք, Գետաշենի զավակնե՛ր, փա՛ռք ձեր ծնողներին, արմատներին տոհմիկ, որ այսպիսի սերունդ կա,- հպարտությամբ ասաց Թաթուլը, և ընկերոջ հետ դուրս եկան: Երբ գետափով բարձրանում էին, Թաթուլը մի ուրիշ խանդաղատանքով նայեց Արթուրին:

- Եղբա՛յր, խոսի՛ր...

- Խնդրում եմ, ոչ մի բան մի՛ հարցրու,- լեցուն էր Արթուրի ձայնը՝ մեղեդային ու տաք:

- Հիացումդ վախենում ես ցնդի՞:

- Չէ՜, Թաթո՛ւլ, փոթորիկը խորքերում է, ո՛չ մի ձեռք ու ո՛չ մի ձայն չեն կարող նրա ընթացքը փոխել:

Կանգնեցին գետափին: Թաթուլը ամուր գրկեց ընկերոջը և ձեռքը մեկնեց հոսող ջրերի ուղղությամբ:

- Կյանքում ամեն բան իր ճակատագրի բանաձևն ունի, ինչպես այս անձյուն ձմեռը, հորդացող գետը, իմ Ասպրամիկի ծննդյան օրը, Գետաշենի ոսկուն լռությունը, մեր բոլորիս համբերության համառությունը, իմ աշակերտների ոգեպատումը, դո՛ւ, եղբա՜յր, և քո անթաքույց սիրո ծնունդը:

- Թաթո՜ւլ,- կարմրեց Արթուրը:

- Փառավոր է, եղբա՜յր, այն լույս է վերադարձող, մենք նաև դրա համար ենք այստեղ, կռիվ է ամեն բանի համար, բարության

ու սիրո դրոշն է մեր ձեռքերում, նահանջ չկա:

- Թաթո՜ւլ,- Արթուրը գրկել նրան, բաց չէր թողնում:

- Այսօր երկու ծնունդ ենք նշելու, հասկացա՞ր...

* * *

...Թաթուլն Ամանորից հետո ամենաերջանիկ օրն էր նշում: Հավաքվել էին ընկերներով, եկել էին նաև բժիշկ Սարգիսն իր կնոջ՝ Սիլվայի հետ, վիրաբույժ Գևորգը, Կամո քաղաքից Գետաշեն ժամանած բժիշկները, ուսուցիչներ, Լենա մայրիկն իր ընտանիքով:

- Ասպրամիկիս ծննդյան օրն է, ես այստեղ եմ, նա՝ Արեգում,- գինու գավաթը բռունցքի մեջ սեղմած՝ ասաց Թաթուլը,- թող ինձ ների աղջնակս, որ այսպես հեռվից եմ զգում իր բարուրի բույրը, իր դեռ անիմաստ գեղգեղանքի վճիտ կարկաչը: Այստեղ բազում հայրիկներ կան՝ երիտասարդ ու կորովի, բոլորիդ երեխաների կենացը, մեր դժվարին պայքարով նրանց ճակատագրի վաղվա այգը թող լուսավոր լինի:

Թաթուլին միացան մյուսները, ոտքի կանգնեցին, գավաթները դիպան իրար, պահը շիկացավ, հետևեցին կենաց-խոսքեր, մաղթանքներ, հնչեցին բանաստեղծություններ, երգեցին: Էլեկտրական լույս չկար, բայց երեկոն այնքա՜ն լուսավոր էր, մոմերի ու նավթալամպերի դողդողացող թրթիռների տակ խոսքն ու երգը, կարծես, առավել հուզական ու հասկանալի էին դարձել:

Վիրաբույժ Գևորգին շտապ կանչեցին հիվանդանոց: Եկել էր բուժքույրը, վիրահատության ենթակա հիվանդ էին բերել:

- Ես գնամ, Թաթո՛ւլ, բայց իմացի՛ր՝ իմ սիրտն ու հոգին այստեղ են,- ասաց Գևորգը:- Քնքուշ երեկո ստացվեց, երեխաների սրբազան շուքն է այս հարկի տակ, այսքան անուշություն, երգ ու թախիծ, հույս ու ջերմություն վերջին ժամանակներում ինձ չէին պարուրել, շնորհակալ եմ,- գավաթը ցած դրեց, չխմեց, բժշկի անխաթար կարգապահությամբ շտապ գնաց:

Ասպրամիկի ծննդյան օրը Թաթուլը պարգև արեց բոլոր երեխաներին. գնահատվեցին, հիշվեցին բոլորի զավակները, նրանց պատվին ով կարողացավ, երգեց, հետո պարեցին միասին: Կամոյից եկած բժիշկները զարմացած էին. Թաթուլն ամեն ինչ անում էր, որ այս փոքրիկ երեկոն նշանավորվեր սիրո ու կարոտի դաշնությամբ: Նրա ինքնատիպ մենապարը դարձյալ ոտքի հանեց բոլորին, ցնծացին, վերադարձան իրենց էության անմշուշ ուղեծիրը, որն այսօր այնքան թափանցիկ էր ու վճիտ՝ նման մանկան հրեշտակային կանչի:

Հետո, երբ դադարեց պարը, Թաթուլը խնդրեց լցնել գավաթները:

- Տղե՛րք, ձեր կենացը, ովքեր սիրո և ամուսնության ճանապարհին են,- ասաց Թաթուլը և ուղիղ նայեց Արթուրին,- ամենակարողի գթասրտությամբ կարողանաք գտնել ձեր կյանքի ընկերուհուն, սիրեք այս աշխարհի բարին, պարտք չմնաք տոհմականչին:

Չամուսնացած տղաները ոտքի կանգնեցին՝ բռունցքված աջը վեր պարզած:

- Տեսե՛ք՝ ի՞նչ տղերք են,- ցնծաց Թաթուլը,- և ի՞նչ աղջիկներ են նրանց սպասում, պարենք այդ բերկրանքի համար, մեր հաղթանակի, մեր երդումի ու Գետաշենի զորության համար:

Արթուրը հասկացավ, որ Թաթուլը չէր մոռացել իր խոսքը՝ փառավորել սիրո կենացը, որն այսօր այնքան մոտ էր իր սրտին: Նա շնորհակալ հայացքով նայեց ընկերոջը, ապա հոգու պատկերներով հեռացավ իրենից, գտավ չքնաղ իր տիրուհուն՝ բարձրահասակ, երկայն գիսակներով, ամաչկոտ, շիկնած, խաժ աչքերով: Արթուրին թվաց՝ դուռը բացվեց, նա անշշուկ ներս մտավ: «Տեր Աստվա՜ծ, այս ի՞նչ բոց է կրծքիս տակ, այս ի՞նչ փառավորություն է տանում ինձ իր թևերին, Թաթո՛ւլ, հարազա՜տս, բորբոքի՛ր այդ կրակը, կարդա քո բանաստեղծություններից՝ թող այս սիրո հրաշքը չխռովի, չհեռանա...»: Արթուրն այսքան ուժգին առաջին անգամ էր ոտք դնում սիրո ցողաթաթախ արահետին և զգում այդ հրեղեն ճամփի պաշարող բերկրանքը: Նրա համար այս պահից առաջ բոլոր մտահոգությունները զենք հայթայթելու, պաշտպանական դիրքերն առավել ուժեղացնելու, շտաբի հանձնարարություններն անմնացորդ կատարելու հետ էին առնչված, բայց հիմա, առանց հրաման-հանձնարարականի, սիրո արծիվը բույն էր գտել իր ներսում և հավաստում էր մեկընդմիշտ դիրքավորվել այնտեղ, մնալ: Արթուրն արդեն անկարող էր հակառակվել, մի ակնթարթում փոխվեց, պարի հրավիրեց չամուսնացած տղաներին և գրեթե գոռաց.

- Պարենք մեր սիրո համար, մեծ պայքարի զորավոր զենք է նա...

Թաթուլը լիալիր ժպտաց, հպարտությամբ նայեց Արթուրին, նրանց հայացքները խաչվեցին: Փոխադարձ հասկացություն ու սիրո խաղաղ օրհնություն մաղվեցին երկնքից:

* * *

Մարտ ամսվա կեսերին Թաթուլը ուղղաթիռի էր սպասում, բայց այն չկար: Գյուղխորհրդի նախագահի հետ վերջերս հաճախակի էին հանդիպում, առանձին հարցեր քննելու, վերլուծելու, անհանգստանալու խնդիրներ ունեին: Ձմեռը մի կերպ անցկացրած գյուղացիներ-

ը սննդի պակասություն էին զգում, դարձյալ գիշերային խավարի մեջ էր Գետաշենը, ազերիները կտրել էին էլեկտրալարերը, խմելու ջուրը համարյա փակել էին, և եկած ջրի որակն էլ կասկածելի էր: Ավելացել էին կրակոցները դարավանդների վրա, իսկ Գետաշենում կայանած խորհրդային բանակի վաշտերը գրեթե անտարբեր էին այս ամենին, իրենց խմելու ջուրը մեքենաներով էին բերում, հոսանքի շարժակայան ունեին, իսկ բժշկական օգնությունը ստանում էին Գետաշենի հիվանդանոցում: Գլխավոր բժիշկ Սարգիս Հակոբջոխվյանը և Գևորգ Գրիգորյանին ժամանակավորապես փոխարինած երևանցի Վալերի Խաչատրյանը պատրաստակամ էին օգնություն ցույց տալու իրենց դիմող բոլոր զինվորներին: Ընդհանրապես, գետաշենցիները խորհրդային բանակի ռուս ծառայողներին ընդունում էին ջերմությամբ և հավատով: Այդպես էին վերաբերվում նաև տեղի հայկական ջոկատները՝ հասկացնելով, որ իրենք այստեղ են միմիայն պաշտպանական խնդիրներով: Զինվորականները թեև ցույց չէին տալիս, բայց նրանց հայտնի էր օմոնականների գրգռված ախորժակը, գիշերային հարձակումները Գետաշենի և Մարտունաշենի ուղղություններով: Նրանց ծանոթ էր ազերիների վայրագությունները Ազատ և Կամո գյուղերը տեղահանելու ժամանակ: Հիմա հերթը հասել էր Գետաշենին, սակայն մի կողմից չեզոք դիրք գրված խորհրդային զինյալները, մյուս կողմից ծրագրված հոշոտումի պատրաստ օմոնականները հարկադրում էին հայ բնակչությանը և նրանց թիկունք դարձած հայկական ջոկատներին պատրաստ լինել, ամեն գնով զինվել: Նրանց աչքերի առաջ էր տարածաշրջանի հայկական գյուղերի կործանումը, տեսնում էին ամենօրյա ահաբեկչությունները, անձնագրային կարգ ու կանոնի անվան տակ՝ խորհրդային զինյալների հովանու տակ գյուղ ներխուժելը: Աչք վախեցնելու ծանոթ ու զզվելի այս գռեհիկ արվեստը կիրառվում էր անօրինական բոլոր ձևերով: Լարվածության այս անտանելի ընթացքը կարող էր հուսալքության մղել հոգնած և արդարությունից հիասթափված գետաշենցիներին: Հենց այդ հոգեբանական անկումն էին երազում օմոնականները: Դիմադարձ ուժը դարձյալ Գետաշենի հավաքական ոգին էր, ազնիվ ու հայրենասեր հայ քաջազունների ներկայությունը: Ուրիշ այլ պատասխան չունեին նրանք, քան այն, որ պիտի ծուլված մնային բնակիչների հավատին, ավելացնեին զենքն ու զինամթերքը, դասալիքներ չունենային:

Թաթուլն այս ամենի կիզակետրոնում էր, ամեն տեղ էր ինքը, փորձում էր հավասարակշռության բազմանժարը պահպանել, բայց

միաժամանակ սպասում էր, որ դեռ կգան յուրային ուժերը կամ կմիջնորդեն ու կպահանջեն, որ Գետաշենն ու Մարտունաշենը չդառնան լքված Կամո և Ազատ:

...Ուղղաթիռն այսօր էլ ուշանում էր: Թաքուլը բարձրացավ Լենայի մոտ:

- Կապի՛ր ինձ Երևանի հետ:

Դժվարությամբ միացան, պարզվեց, որ այնտեղ էլ մեծ էր լարվածությունը, օգնության նպատակով շատ բաներ չխոստացան՝ ամեն ինչ թողնելով սեփական նախաձեռնությանը: Թաքուլն ընկալուչը մի կողմ դրեց, գլուխն առավ զույգ ափերի մեջ և այդպես քարացած մնաց: Լենան նույնպես տխրեց, որ Գետաշենի չնչին պահանջներն անգամ դժվարացան բավարարել:

- Թաքո՛ւլ, շատ մտահոգվեցիր,- Լենան մայրաբար դիմեց նրան:

- Մտահոգությունը թեթև բառ է, Լենա մայրի՛կ,- հուզված էր Թաքուլը,- ինչ-որ բան ուզում են անել, բայց դրա իրական կողմնորոշիչները չեն երևում, այնպես են ներկայացնում, կարծես ուրիշ այլ հնար չկա:

- Իսկ հետո՞,- հարցական նայեց Լենան:

Թաքուլը կամաց բարձրացրեց գլուխը, նրան թվաց՝ իր առջև ոչ թե Լենան էր, այլ ողջ Գետաշենը: Նրա հնչեցրած հարցը կեղեքելով անցավ իր սրտի միջով. նեղսրտեց, զայրացավ և այդ ամենը խեղդեց ներսում: Այդ «հետոյի» պատասխանը նա ուներ և չուներ, գյուղի իրական պատկերի առջև հազար անգամ մեն-մենակ, նաև ընկերների հետ փորձել էր այդ հազար փթանոց «հետոն» մի կողմ տանել, որ ոտքի տակ հողը ամուր մնար:

- Հույսներս մեզ վրա պիտի դնենք,- հառաչեց Թաքուլը,- բայց ես պիտի հասնեմ Երևան, պարզեմ, պարզաբանեմ, իսկապե՞ս օգնելու հնար չկա: Հասկանում եմ նաև այնտեղի վիճակը:

- Ե՞րբ,- Թաքուլի անակնկալ որոշումից զարմացավ Լենան:

- Այսօր կթռչեմ, եթե ուղղաթիռը գա: Գիտե՞ս, ամբողջ գիշեր դիրքերի ուղղությամբ կրակեցին, անընդհատ ոռնում էին, աղմկում, կարծես բորենիների ոհմակ էր հավաքվել:

- Դրանց զսպել է պետք,- վճռական ասաց Լենան:

- Իսկ մենք ուրիշ ի՞նչ ենք անում,- ձեռքերը լայն բացեց Թաքուլը և անմեղորեն ժպտաց:

Ռադիոսարքը թեթև ծղրտաց: Լենան անմիջապես «գիծ մտավ», ասացին, որ ուղղաթիռ է գալու: Թաքուլն ուրախացավ, ոտքի կանգնեց, արդեն քսան օր այդպիսի լուր չէին ստացել:

- Դա լավ է, մի բան բերած կլինեն,- նկատելի աշխուժացավ նա և դարձավ Լենային,- ես պիտի գնամ:

- Թաթո՜ւլ,- մայրաբար շշնջաց Լենան:

- Պարզելու խնդիրներ ունեմ, չեմ կարող հապաղել:

Երբ ուղղաթիռը վայրէջք կատարեց, անմիջապես այստեղ փութաց խորհրդային բանակի զինյալների մի խումբ: Թաթուլն ընկերների հետ քառորդ ժամ առաջ էր բարձրացել այստեղ: Իջան մի քանի գետաշենցի, նրանց միջոցով սննդամթերք էին ուղարկել: Զինյալներն առանձնապես կասկածելի ոչ մի բան չհայտնաբերեցին, մի կողմ քաշվեցին: Հարթակին երևաց վիրաբույժ Սարգիսը:

- Եղբա՜յր, ողջո՜ւյն,- գոռաց Թաթուլը և արագ մոտեցավ նրան: Սարգիսը գրեթե ցած թռավ, գրկեց իր պայծառ բարեկամին և մի քանի վայրկյան լուռ մնաց: Երկուսն էլ հուզված էին, մոտեցան տղաները:

- Ի՞նչ լուր ունես,- հարցը գրեթե միաբերան հնչեց:

Սարգիսը սթափվեց, ժպտաց, աչքերում քարացած արցունք կար:

- Խառն է ամեն բան, փակ է դրված բոլոր թռիչքուղիների վրա, տասնհինգ օր շարունակ սպասել եմ այս թռիչքին, դուք ինչպե՞ս եք դիմանում, հիվանդանոցում կարգի՞ն է ամեն ինչ, մի բան լավ է, որոշ դեղորայք եմ բերել:

- Հարազա՛տս, հայրենյաց կարոտ կա քո աչքերում, բարով ես եկել:

- Ինչո՞ւ եք հավաքվել,- մի պահ ուշադիր նայեց Սարգիսը:

- Թաթուլին ենք ճանապարհում:

- Ինչպե՞ս, Թաթուլը գնում է,- դողացին Սարգսի շուրթերը:

- Ինձ հրաժեշտ տալու հարցում մի՛ շտապեք, մեկ-երկու օրից ոտքով էլ լինի, կգամ,- ծիծաղեց Թաթուլը:

Գլխավոր բժիշկը նկատելի տխրեց, բայց հետո խաղաղվեց՝ համոզված լինելով, որ հենց այնպես հրամանատարը չէր թողնի Գետաշենը: Նրա հետ էր նաև «Արաբոյի» Դեդը: Թռիչքից առաջ առանձնացան Թաթուլն ու Արթուրը, ինչ-որ հարցերում պայմանավորվեցին: Մոտեցավ Լենան, մայրաբար համբուրեց Թաթուլին, հետո այդ նույն քնքշությամբ՝ Դեդին և մի կողմ քաշվելով՝ հեկեկաց: Թաթուլի աչքից չվրիպեց, անտարբեր լինել չէր կարող, մոտեցավ, բռնեց նրա ձեռքը, նայեց նրա աչքերի մեջ ու իր նման ժպտաց:

- Դու հույսի կրող ես, Լենա մայրի՛կ, այդպիսիները շատ ուժեղ են, լացը ամենավերջում, եթե Աստված այդպես կամենա...

Թաթուլի խոսքից ազդվեց Լենան, արցունքների միջից շողշո-

ղաց նրա ժպիտը:

Ուղղաթիռը օդ բարձրացավ, մի պտույտ արեց և գնաց հետմիջօրեի արևի հետագծով:

* * *

Երևանում բոլոր օղակների ներկայացուցիչների հանդիպումների ժամանակ Թաթուլը հասկացավ, որ Միութենական վերին իշխանական ձեռքը թույլ չի տալիս, որ Գետաշենն ու այդ ենթաշրջանը լուրջ օգնություն ստանան: Դեպի Գետաշեն տանող հայտնի ուղիների դիմաց փակուղի էր դրված: Այնուամենայնիվ, Թաթուլին խոստացան Շահումյանի շրջանի անցուղիներով որոշ օգնություն հասցնել: Նա դրանից գոհ չէր, ընկերներին, որոնք առաջին աջակցության համար ձգտում էին ամեն ինչ անել, Թաթուլը մանրամասն ներկայացրեց իրավիճակը, օր օրի սառը վարքագիծ ընդունող խորհրդային զինյալների բնութագիրը, օմոնականների գրեթե ամենօրյա հարձակումները, Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի բնակչության տագնապը, սննդի և զենքի պաշարների սակավությունը: Թաթուլն իրադրությունը հստակ գնահատող անհատ էր: Հանդիպումներից նրան հայտնի դարձան, և նա մոտիկից զգաց, որ Արցախի, Հայաստանի հյուսիսի և հարավի պաշտպանական գծերում լուրջ ուժերի և զինվածության կարիք է առաջացել: Պաշտպանական կոմիտեում Գետաշենի ենթաշրջանի համար առաջ քաշեց մի շարք լուծումներ, հիմքում գյուղերի պահպանման, տեղաբնակներին և այնտեղ ամրակայված ջոկատներին օգնելու խնդիրն էր: Խոստացան, Թաթուլի համառությունն ու հայացքը ուրիշ ներգործություն ունեին, սակայն անվերահսկելի քաղաքական դաշտը ամեն բան նետել էր անհավանականության գիրկը: Հետո, երբ ցանկացավ գոնե մեկ օրով հասնել Արեգ, ամբողջ ճանապարհին գոհունակությամբ էր քննում՝ հիշելով Հրանտ Մարգարյանի, Վահան Հովհաննիսյանի, Զորի Բալայանի, Իգոր Մուրադյանի և Գետաշենի ճակատագրով մտահոգ այլ նվիրյալների հուսադրող կարծիքները: Նրանց կոնկրետ գնահատականները Թաթուլի սրտով էին, սակայն իրադարձությունների ամենօրյա փոփոխական ընթացքը լավ բան չէր հուշում: Չէր կարգավորվում «Էրեբունի» օդանավակայանից դեպի Գետաշեն ուղղաթիռների թռիչքը, չկար մի ներկայացուցիչ, որ կոնկրետ խնդիրը լուծեր պատկան մարմինների հետ: Թաթուլը չէր ուզում հավատալ, որ Գետաշենն ու Մարտունաշենը մոռացվել էին, որ այդ գյուղերի ճակատագիրը չէր հետաքրքրում ո՛չ Մոսկ-

վային, ո՛չ էլ տեղական մարմիններին: Թաթուլը զգում էր, որ այդ կշեռքին ինչ-որ կարևոր նժար էր պակասում, իսկ այն գտնելու, տեղը դնելու ուժը հավանաբար բավարար չէր: Հետո նա սթափվեց, մտքերից հասկացավ, որ Արեգ տանող ճանապարհին՝ ավտոբուսի մեջ, միշտ նրան պաշարել են իրարամերժ խոհերը: Լռության ծածկույթի տակ եռացող կռիվը ձգտեց պահել ներսում, նայեց շուրջը, կարծես հենց նոր նկատեց հեռացած ձյան շերտերը, ձնծաղիկների ճերմակ-աստղունք աչքերը, ձմռան թախիծներից ազատագրվող ձոր ու լանջերը: Որքան մոտենում էր Արեգին, ամեն անգամվա պես ուժգնանում, տեղից փախչում էր սիրտը: Անթաքույց կարոտի փեշերը գյուղի նախամուտքից հետ տարան ամիսների վարագույրը: Արտին սարը նույն թռիչքի մեջ էր՝ կապույտ ու թափանցիկ: Վերին լանջերին պուտ-պուտ ձյուն էր՝ սպիտակ գառների պես ճերմակին շղթայված: Լանջն ի վար արտերից մեղմ գոլորշի էր ծլլում: Գյուղի տանիքներին գոլ ծուխն էր, թոնիրների հացաբույր շունչը: Թաթուլի հոգին նեղված էր, մեքենան սլանում էր, բայց նրան թվում էր նույն տեղում է, անշարժ ու անտարբեր: Վերջապես հայրական բակում իրեն ցած նետեց, վազեց քարե աստիճաններով:

- Մա՜,- ձայնը հեռվից եկավ, զարկվեց պատերին, տունը ճոճվեց ծանոթ ալեբախումից, պապանձվեց հոգու կարկաչը:

- Թաթո՜ւլ,- բացականչեց Սեդա մայրիկը և ընկավ որդու գիրկը: Հաղթանդամ հայրը դուրս եկավ հարևան սենյակից, կաղնու պես թևաբաց գրկեց որդուն, պահեց աչքերում տաքացող արցունքները: Դռների մեջ երևաց Իրինան՝ Ասպրամիկին գրկած: Աղջնակը ձեռքը երկարեց, անիմաստ ու անեզր ժպտաց: Թաթուլն իր ժպիտների փունջը գտավ այնտեղ, կանգնեց կախարդվածի նման: Ժորա հայրը ակնթարթորեն մոտեցավ, մոր գրկից առավ թոռնուհուն, բարձրացրեց մինչև օճորքը և դանդաղորեն Ասպրամիկին իջեցրեց հոր ուսերին:

- Անուշի՜կս, Ասպրամի՜կ, ինչքա՜ն ես մեծացել,- շշնջաց Թաթուլը, մոտեցավ, սեղմեց Իրինայի ձեռքը և հարցրեց.

- Ինչպե՞ս ես...

- Դիմանում եմ,- պատասխանը չոր էր և տխուր:

Թաթուլը գիտեր, որ դժվար է երիտասարդ կնոջ համար, բայց ուզում էր, որ նա կարողանար հաշվի նստել ժամանակի, ճակատագրի և այն իրավիճակի հետ, որն այս օրերին ծանրորեն պաշարել էր հայրենիքի նվիրյալներին: Ներս խուժեցին եղբայրները՝ Սերգոն, Մինասը, Գրիգորն ու Մանվելը. ջերմ ու սրտառուչ էր նրանց հանդիպումը: Սկզբում չխոսեցին, նրանց մեծ սպասումը,

եղբայրական սիրո բուռն ալեկոծը փոխանցվում էին իրարադարս բազուկներով, նրանք ձուլվել ու չէին բաժանվում: Սեդա մայրիկն ինքնամոռաց լաց եղավ, գոգնոցով ծածկեց դեմքը՝ արժանանալով Ժորայի կշտամբանքին: Տղաները, շրջան կազմած, սկսեցին ձեռքերի վրա գուրգուրանքով փոխանցել Ասպրամիկին: Փոքրիկը բարձրաձայն ծիծաղում էր, իր միամիտ, բայց անզուսպ հրճվանքով միացրել էր հայրիկի և հորեղբայրների կարոտի աշխարհը: Շուտով այդ ցնծությունը տեղի տվեց, նստեցին, վաղուց չէին հանդիպել, փոխադարձ հարցեր և հետաքրքրություններ ունեին: Սեդա մայրիկն ու Իրինան նույնպես ներկա էին:

- Գետաշենի վերջը ի՞նչ է լինելու,- խոժոռված էր հայրը:

- Հայրի՛կ, հարցդ դատախազի նման տվեցիր,- թեթև ծիծաղեց Թաքուլը, համոզված էր, որ այդ հարցը ուղիղ իր ճակատագրին էր վերաբերում,- դեռևս կանգուն է Գետաշենը և կռիվ ունի աշխարհի հետ:

- Էս ապերախտ աշխարհի հետ մեզնից ո՞վ կռիվ չունի, տղա՛,- անհանգստացավ հայրը:

- Թաքո՛ւլ, գետաշենցիները ինչպե՞ս են նայում ձեզ՝ Հայաստանից գնացած տղաներին,- իր հարցը տվեց նաև ավագ եղբայրը՝ Սերգոն:

- Նախ ասեմ, որ եթե խորհրդային զինյալները չաջակցեն ազերիներին, նրանք չեն համարձակվի Գետաշենին ու Մարտունաշենին մոտենալ, դա պետք է կանխել, իսկ ինչ վերաբերում է տեղաբնակներին, մեզ ընդունում են որպես իրենց զավակների, հզոր կամքի տեր են, ունեն հերոսական սերունդ, ամուր կպած են իրենց հողին և արմատներին:

- Լավ ես ասում, տղա ջան,- փափկացավ Ժորա հայրը,- բայց Գորբաչովի և մյուսների սրտով է՞ էդ գյուղի զորությունը, որ համառ է ու իր խոսքի տերը:

Թաքուլը լեզուն կծեց, իրեն թվաց՝ արեգցի հայրը՝ Ժորա Կրպեյանը, շատ մոտիկից տեղեկացված է ներկա քաղաքական խաղերին: Գրիգորն ու Մանվելը թեթև ժպտացին, Սերգոն չհամբերեց.

- Հայրիկի հարցին դժվարացա՞ր պատասխանել:

- Ինչքան գալիս եմ, այս ծանր թեման դուք օրակարգից չեք հանում,- աթոռին անհանգիստ շարժվեց Թաքուլը,- հիմա ոչ մի տեղ կայուն ճակատագիր չկա, ոչ մի բան երաշխավորված չէ, պիտի դիմակայել, կռվել, այս աշխարհի քարտեզին հենց այնպես գրանցում չեն տալիս, փոխվել են մարդիկ, հարաբերությունները քաղաքականացված են, մեկի վերքն ու ցավը մյուսի սրտին չեն հասնում:

- Հետո՞,- խեթ նայեց Ժորա հայրը:

Թաթուլը կայծակնորեն հիշեց Լենայի այդ հարցադրումը՝ հետո՞:

- Հայրի՛կ, Գետաշենի ենթաշրջանում անցել են կարեկցանքի և քաղաքակրթության ժամանակները, մարդիկ տեսել են, թե ինչ վայրագությամբ դատարկվեցին Ազատ ու Կամո գյուղերը, տեսել ու չեն հուսալքվում, փորձում են հարազատ ոստանի փառքը պահել, գիտակցաբար մնում են, հավատում են մեզ՝ այնտեղ ամրապնդված ջոկատների տղաներին. ի՞նչ անենք, թողնենք, հեռանա՞նք:

Ժորան խորը լռեց, անթաքույց զարմանքով նայեց որդուն, խորհրդավոր հառաչեց. «Էս ինչքա՜ն է փոխվել, իսկական հայդուկ է, պսակվել է զենքին ու իր նպատակին, Ժորա՛, քու ուժից վեր է նրան խրատ տալը...»:

Սեդա մայրն ու Իրինան փորձեցին միջամտել, Ժորան լռեցրեց.

- Ուխտավորին աղոթք պետք չէ սովորեցնել, փոխեք էս խոսքը,- նա կտրուկ էր, հասկանալի: Թաթուլն այնքան գորովանքով լցվեց դեպի հայրը, բայց թաքցրեց հպարտության շողքը, գրկեց Ասպրամիկին և դուրս եկավ: Եղբայրները հետևեցին նրան. դրսում՝ քարե աստիճաններին նստած, երկար խոսեցին: Թաթուլը չթաքցրեց իրավիճակի լարվածությունը և վերջում ասաց.

- Գետաշենը չի հանդուրժի դասալիքների, ով նվիրվել է նրա գոյամարտին, մինչև վերջ պետք է կրի իր խաչը:

Սերգոն գունատվեց, ուզում էր մի երկու խոսք ասել, բայց եղբոր հայացքից զգաց, որ լռել է պետք, մյուս եղբայրներին, ծնողներին վաղաժամկետ տագնապի փող հնչեցնելը ճիշտ շարունակություն չէ:

Թաթուլը եղբայրներին առաջարկեց գյուղ մտնել, քայլել հարազատ փողոցներով, ասաց՝ շատ եմ կարոտել: Գնացին, ամեն տեղ ջերմությամբ էին ընդունում նրան, համառորեն հարցեր տալիս, քննարկում, քննադատում: Գյուղի մարդկանց հետաքրքրասիրությունը ծանոթ էր Թաթուլին, գիտեր ում հետ ինչպես խոսել, հարգալից էր մեծի ու փոքրի նկատմամբ: Հետո գնացին գերեզմանոց, Թաթուլը կանգնեց պապ ու տատի շիրմաքարերի առջև, լուռ, իրեն հայտնի բառեր ասաց, ապա վազեց քարքարոտ լանջի ուղղությամբ և քիչ անց վերադարձավ՝ մատների մեջ սեղմած մի փունջ ձնծաղիկ:

- Գարունն ուրիշ հմայք ունի, հատկապես, երբ կապույտ շապիկ է հագնում Արտին սարը,- ինքնամփոփ ասաց Թաթուլը և գրկեց եղբայրներին,- ուր էլ լինեմ, ինձ հետ ինչ էլ պատահի, այս սարն ու ձորը, արտերի կանաչ շշուկները, Արեգի լուսախորհուրդ մարդիկ իմ սրտում են, իմ հոգու քարտեզի վրա:

- Այս անգամ ավելի մռայլ ես,- նկատեց Սերգոն:

- Նույնը մենք ենք զգում,- նրան միացան մյուս եղբայրները:

- Ես այդքան միամիտ ու փոփոխական չեմ, եղբայրնե՛ր,- քայլելով ասաց Թաթուլը,- մեր դեմ կեղտոտ պատերազմ է, Գետաշենն այդ հեռավոր սահմանագծի վրա մենակ է, հույս էլ չկա, որ նրա բախտի անհուսալի նավին մեկնումեկը ձեռք կերկարի:

Վերադարձել, արդեն քայլում էին գյուղի կենտրոնական փողոցով, հետո թեքվեցին տան ուղղությամբ: Թաթուլն ակնապիշ նայում էր աջ ու ձախ շարված տներին, ժպտում բոլորին, պատասխանում կարճ: Սերգոյի հայացքից չէր վրիպել եղբոր զննականությունը գյուղի քար ու թփի, երիզող սարերի, հուշարձանի, դպրոցի, աղբյուրի, տան կողքով բլրալանջ ձգվող կածանների, դարավանդին փռված գառների, գյուղի վրա մետաքսի նման իջած շուշանափայլ ամպերի նկատմամբ: Ճնշվում էր Սերգոյի սիրտը, բայց ինքն իր մտքերից խուսափուկ՝ չէր ուզում վատ գուշակումներ անել:

Ժորա հայրը Սեդայի խնդրանքով գառ էր մատաղել: Դարձյալ հավաքվեցին, գիշերը անցավ գարնանաբույր ու տաք. թախիծ ու տագնապ կային բոլորի սրտերում, սակայն ամեն մեկը պահել էր իր ծվարը, ոչ ոք չէր ուզում սրտի հեռավոր անկյունում անգամ նշմարել տխրության անպատեհ տեսիլքը: Թաթուլը դստերը շատ երկար պահեց իր մոտ, սիրեց, հարցեր էր տալիս մեկ տարին նորնոր բոլորած Ասպրամիկին, նրա փոխարեն Իրինան էր պատասխանում՝ հայրի՛կ, մի՛ գնա, ես քեզ կարոտելու եմ:

Թաթուլն ուշադրություն չէր դարձնում շրջապատին, մտազբաղ էր, կարծես փշերի վրա էր նստած: Մտքերը հեռվում էին, ընկերների հետ էր, Գետաշենում, Մարտունաշենի բարձունքներին: Ժորայի հարկի տակ վարագուրված խնդություն էր, Թաթուլի հայտարարությունը, որ առավոտյան գնալու է, բոլորի տրամադրությունները գցել էր: Լռակյաց էր մայրը, գլխաշորի տակ թնկթնկում էր, բայց այնքան գորովալից էր նայում որդուն, այնքան խորքերից էր աղոթում նրան: Ժորան ծանր նստել էր սեղանի գլխին, ծխում էր, հոգու կշեռքին տանում-բերում էր աշխարհի բանը, սիրտը ծանր կծկումների մեջ մորմոքում էր ահագնացող տագնապից: Հոր սիրտը երկյուղ էր սողոսկել, բայց չէր ուզում Թաթուլին կանխել, խրատներ տալ, զգում էր, որ անկարող է նրանից առաջ ընկնել, որովհետև նա արդեն շատ առջևում էր, հեռացած ու բարձր, մոտ ու անմատչելի: Այս անգամ նա հասկացավ, որ Թաթուլը դժվարին կեռմանների մեջ էր, նրա ձեռքում չէր «հրաշք բանալին», դժվարին ափերում էր որդու սրտի

կրակը: Հայրական բնազդը չէր խաբում իրեն, բայց իրավունք էլ չուներ երդվյալին դասեր տալ, ծխախոտի ծխի քուլաների տակ նա առավել լռեց՝ կարոտի անուշ բարուրի մեջ ամփոփելով Թաթուլին: Այդ նույն մղկտուկի դառը հեղձուկն էին կուլ տալիս եղբայրները: Նրանք այդ երեկո ուրախացան, բայց չպարեցին ու թե երգեցին, ապա շատ մելամաղձոտ, հոգեկրակը այրում էր ներս ու դրսից, տանում, մեկուսացնում: Թաթուլի անկեղծ խոստովանանքները հունից հանել էին հարազատներին, բայց նա գույները չէր խտացրել, սպառնացող վտանգների մասին բարձրաձայն ոչինչ չէր ասել, ընդամենը հասկացրել էր, որ Գետաշենը մնացել է մենակ, այնտեղ սպասվում է լուրջ պայքար:

...Առավոտյան հրաժեշտի պահը հեշտ չէր: Թաթուլն իրեն մեղադրում էր անկեղծության համար, տխրել էր հայրը, մայրն ու Իրինան քարե աստիճաններին սառել, ձուլվել էին պատին, եղբայրները նրան շրջապատել, էլի ինչ-որ բաներով էին հետաքրքրվում, հուշում էին, խորհուրդ տալիս:

- Մոռանում եք, որ արդեն վեց ամիս է՝ Գետաշենում եմ,- ժպտաց Թաթուլը,- գիտեմ՝ ինչ եք ասում, մանավանդ ինչ եք պահանջում, կյանքի բոլոր բարդությունները պատասխաններ ունեն, ես մենակ չեմ, հիմա նրանք սպասում են ինձ, պիտի գնամ,- հանգիստ ասաց նա, ապա մեկ-մեկ հրաժեշտ տվեց, վերջում գրկեց դստերը:

- Ասպրամի՛կ, իմ բալի՛կ, ների՛ր ինձ, որ լրիվ չծանոթացանք, դու անընդհատ ժպտացիր, ու ես գողացա քո հրաշալի բույրը, դու այնքա՜ն-այնքա՜ն մոտեցար ինձ, ես նույնքան խորքերում՝ սրտիս մեջ, պահեցի քեզ, որ երբ մենակ լինեմ, ձայն տամ քեզ, կանչեմ կարոտով, գաս ու գտնես ինձ, քո փափլիկ ձեռքերով շոյես հոգնած գլուխս... Ասպրամի՛կ, հասկացա՞ր...

Քարե աստիճաններից իջան բակ, Թաթուլը ձեռքը թափահարեց, ծնողները, հորեղբայրը, եղբայրների զավակները նույնպես ձեռքերը վեր պարզեցին, Իրինան ներս գնաց: Թաթուլը գրկած տանում էր դստերը, փողոցի եզրին կանգ առավ, համբուրեց Ասպրամիկին, սեղմեց կրծքին և հանձնեց եղբայրներին:

- Այս պստիկ բալիկի մեջ իմ ճիչն ու կանչն են, պահպանե՛ք, մինչև կգամ,- ասաց ու նստեց մեքենան: Գրիգորը չդիմացավ, հուզմունքի ալիքն անդիմադրելի ծփաց, գլուխը մի կողմ թեքեց, որ Թաթուլը չնկատեր, բայց նա տեսել էր:

- Գրիգո՛ր,- Թաթուլը ցած իջավ մեքենայից, մի անգամ ևս ողջագուրվեց չորս եղբայրների հետ, ամրապնդիչ խոսքեր ասաց,

հմայիչ ժպիտը ողողեց դեմքը, վերադարձավ, նստեց մեքենան և վարորդին խնդրեց արագ շարժվել:

Երբ արդեն գյուղը մնացել էր հետևում, սովորության համաձայն հետ նայեց, բայց այս անգամ վարորդին խնդրեց մեկ-երկու րոպե մեքենան կանգնեցնել. իջավ, ճանապարհի եզրին ձնծաղիկների ճերմակ գորգն էր, կռացավ, ձեռքի ափով շոյեց քնքուշ խոպոպնե-րը, բայց ոչ մի ծաղիկ չպոկեց: Հետո բարձրացավ ճամփեզրի մեծ քարին, որն իր մանկութ հուշերի վկաներից էր, նայեց գյուղի կտուր-ներին, որոնցից վեր ու վեր ծխանների ծուխն էր, ապա աղոթողի հայացքով դարձավ դեպի Արտին սարը: Նրանց հայացքները հոսե-ցին իրարահաշտ, մոտեցան մերձ ու հարազատ, վկան մեկ արտի չափ ճամփա կտրած այգապսակ արևն էր: Թաթուլը շատ մոտիկից զգաց գարնան դաշտերի անապակ սերը, որն այնքան նման էր իր Ասպրամիկի ժպտուն աչքերին:

Մեքենան պոկվեց տեղից, սլացավ ոլորաններով: Թաթուլի աշխարհը մնաց հետևում՝ բարձրաբերձ լանջերի հեքիաթների մեջ, բայց սիրտը նավարկում էր առաջ, մտքով արդեն հասել էր Գետաշեն, Քուրակի ափին սպասում էին ընկերները:

* * *

«Էրեբունի» օդանավակայանում Թաթուլն իմացավ, որ միայն Վազգեն Սարգսյանի ջանքերով և կտրուկ միջամտությամբ ուղղաթի-ռը լինելու էր միայն վաղն առավոտյան, այն էլ ոչ թե Գետաշեն, այլ Շահումյան պիտի թռչեր: Թաթուլը ուրիշ ելք չուներ, որոշեց գնալ ընկերների մոտ, գուցե նոր բան մտածած լինեին, հետո կհանդիպեր Ռուզանին ու Սամվելին, կմտներ համալսարան: Նախ կապի միակ հնարավորությամբ գտավ Լենային, հարցրեց իրադրությունից, ապա հանձնարարեց, որ Արթուրն ընկերների հետ հենց այսօր ճամփա ընկնեն, նա գիտի՝ խոսքն ինչի մասին է: Կհանդիպենք Շահումյա-նում: Լենան կռահեց Թաթուլի միտքը, ընդունեց ռադիոգիրը:

Ընկերներին հանդիպելիս միշտ էլ նոր լիցք և ուժ էր ստանում Թաթուլը: Կուսակցության անդամների հավաքատեղին դարձյալ աշխուժացավ Գետաշենի թեմայով, երբ անակնկալ վերադարձավ Թաթուլը: Նա երեկ հրաժեշտ էր տվել՝ հուսալով, որ այսօր գուցե թռիչք լինի: Մի քանի ժամ քննարկեցին, բոլոր տարբերակները ծանր ու թեթև արեցին, եղան առաջարկություններ՝ ծայրահե-ղություններից խուսափելու: Վերջում խոսեց Թաթուլը, իր խոսքն ասաց, բացեց սիրտը.

- Այսքան ժամանակ շատ թանկ գնով պահեցինք Գետաշենը, նրա կորուստը ինձ համար անդառնալի ցավ է լինելու,- ասաց նա,- ես չեմ տեսնում պետական լուրջ ուշադրությունը, կոնկրետ քայլը, խորհրդային իշխանությունների ստույգ հայացքը՝ ուղղված Գետաշենին: Գուցե ես սխալ եմ, սխալ են նաև այնտեղ հավաքված ջոկատները, բայց ի՞նչ պատասխան ունենք գետաշենցիներին. նրանց չես խաբի, կշտացել են հորդորներից և հույսի աննշան պղպջակներից, իրենց պապենական տնից չեն ուզում հեռանալ, սպանիչ է նրանց համար այն, որ դարերից բերած իրենց սրբությունները հանկարծ կարող են թողնել ազերիների ոտքերի տակ: Այս լուսավոր ձգտումների տերն են նրանք, պատրաստ են կռվելու, ջարդելու խուժանի մռութը: Ի՞նչ է, մե՞նք էլ թողնենք ու հեռանանք, բայց ո՞ւր պիտի գնանք մեր տնից, հայրենական մեր հող ու ջրից. Գետաշենը չի ուզում դառնալ Ազատ և Կամո, այդպիսի մարտունակ ժողովրդին նախ հասկանալ է պետք, հետո օգնել... Ո՞ւր են Երևանի հրապարակների «Միացում» գոռացողները, մարդկանց ալեկոծ խմբերը ո՞ւր մնացին, ինչո՞ւ փողոց դուրս չեն գալիս, չեն պահանջում օղակի մեջ հայտնված Գետաշենի և Մարտունաշենի անձեռնմխելիությունը: Խորհրդային բանակի զինյալները, ճիշտ է, հայերին արտաքուստ վնաս չեն տալիս, բայց, կարծում եմ, հանձնարարություն ունեն ամեն հարցում աջակցել ազերիներին: Ի՞նչ ենք անելու, տղե՛րք, ես վաղը գնալու եմ, իմ և ձեր ընկերները այնտեղ են, մեր ճակատագիրը Գետաշենում է, բայց դրսի կողմից այս քաղաքական սարքովի պաստառը պատռել է պետք, աշխարհը պետք է իմանա, թե ի՞նչ է կատարվում Գետաշենի ենթաշրջանում:

Թաթուլը սրբեց քրտինքը, հայացքը ընկավ Սողոմոն Թեհլերյանի դիմանկարին, հպարտության ջրվեժը խոյացավ ներսում: Ընկերները, ինչպես միշտ, ճիշտ հասկացան Թաթուլին, այդպես էլ նրանք էին մտածում, բայց հաճախ ճշմարտությունները խորտակվում են ինչ-որ խմբերի գերշահերին բախվելիս, իսկ արդարության ձայնը մնում է որպես անապատի անտերունչ կանչ: Ինչևիցե, փոխադարձ որոշումներով բաժանվեցին: Թաթուլը եղավ համալսարանում, նույն մտքերը կիսեց ուսանող ընկերների ու դասախոսների հետ, գրեթե անտրամադիր ու խռով հեռացավ ծանոթ-անծանոթներից և գնաց իր սիրտը թեթևացնելու քրոջ մոտ:

Ոչ մի հանդիպում այսքան սրտառուչ չէր եղել: Ռուզանը բռնել էր եղբոր ձեռքերը, համբուրում էր, արցունքները գլորվում էին այտերն ի վար: Երեխաները փաթաթվել էին մորեղբորը, ամեն մեկը մի բան

էր հարցնում, հետո թռչկոտեցին նրա շուրջը, անուշ ժպտացին:

- Ռուզա՛ն, դու նման չես քեզ, ի՞նչ է պատահել,- նկատեց Թաթուլը:

- Ոչինչ չի պատահել, կարոտել էի, չէի դիմանում, Գետաշենի մասին լավ բան չեն հաղորդում, ամբողջ օրը նստած եմ հեռուստացույցի առջև, ժամերով սպասում եմ լուրերին, բայց այնքան կցկտուր են տեղեկությունները, կարծես չեն ուզում ճշմարտությունն ասել:

- Ռուզա՛ն, ի՞նչ ճշմարտություն ես որոնում,- Թաթուլը հանգստացրեց քրոջը,- մեծ առևտուր է քաղաքականությունը, մեծածախ շուկա, որտեղ ամեն ինչ չէ, որ բաց վաճառվում է, հաճախ ոտնատակ են տալիս ոչ ձեռնտու ապրանքը:

Ռուզանը շվարած նայեց եղբորը:

- Հետո՞...

- Դարձյալ այդ «հետոն» բուսնեց իմ դիմաց,- ծիծաղեց Թաթուլը,- արդեն երրորդ անգամ այդ բառը դնում եմ իմ առջև՝ մտածելով, որ ես համարժեք պատասխաններ ունեմ: Մի բան գիտեմ, որ այդ «հետոն» գալու է, հետևանքների մասին ոչ մի բան ասել չեմ կարող, կռիվ է, Ռուզա՛ն ջան, հիշո՞ւմ ես՝ Գուլո տատն ասում էր՝ կռվում գաթա չեն բաժանում:

Ռուզանը զգաց եղբոր տրամադրությունը, այլևս չշարունակեց Գետաշենի թեման, ընթրիքը նախապատրաստեց: Աշխատանքից վերադարձավ Սամվելը, երեխաները նույնպես միավորվեցին սեղանի շուրջը, երեկոն կամաց-կամաց տաքացավ: Իսկ ավելի ուշ, երբ մյուսներն արդեն քնել էին, շատ երկար խոսեցին քույր ու եղբայր:

- Մեր գիշերային զրույցներն իմ Գետաշեն գնալուց առաջ միշտ այսպիսի ավանդույթով են եզրափակվել,- ինչ-որ բաներ վերհիշեց Թաթուլը,- այսօր քեզ չեմ չարչարի, դու էլ շատ հարցեր մի՛ տուր:

- Եթե չես ուզում, կարող եմ լռել,- նեղսրտեց Ռուզանը,- բայց մի բան պիտի հարցնեմ, գրո՞ւմ ես, նոր բաներ կա՞ն:

- Հա՛, լավ հիշեցրիր, այդ տետրերից մեկն ինձ մոտ է, ուզում եմ ի պահ թողնել քրոջս:

- Քո գանձերը ինձ ե՞ս վստահում,- թաքուն հրճվանքով ասաց Ռուզանը:

- Քույրը եղբոր գանձն է, այն էլ քո նման միակը, իսկ այդ ձեռագիր տետրն ի՞նչ է, որ քեզ մոտ չթողնեմ,- ասաց ու միանգամից ծոցագրպանից հանեց մաշված կազմով հաստլիկ տետրը և դրեց սեղանին,- պահպանի՛ր սրտիս այս կանչը, մինչև կվերադառնամ:

* * *

«Էրեբունի» օդանավակայանից ժամը 11-ին օդ բարձրացավ ուղղաթիռը: Թաթուլը ակնդետ հետևում էր աջ ու ձախ պատկերներին: Մասիսներն այնքան պարզորոշ էին գծագրված, բարձրագահ ու վսեմ գագաթները մխրճված էին թեթև ամպերի մեջ: Կարոտի արձակ թևերը նրան դուրս բերեցին խցիկից, սիրտը բաց երկինք ու կապույտ շողք էր ուզում: Ինքն իրենից գոհ չէր, գնում էր ծանր մի տպավորությամբ, գրեթե դատարկաձեռն, սննդամթերքը, հագուստը, որ տանում էր, չնչին բան էր համարում: Թաթուլը զենք էր ուզում, բայց այս անգամ ավելի էին խստացրել, անցասրահում ստուգում էին զինվորականները, ինչ-որ բանի հոտ էին առել: Ընկերները չկարողացան հաջողացնել, չարչարվեցին, ափսոսացին: Հիմա Թաթուլը գնում էր, հույսը Շահումյանի վրա էր, հավատում էր, որ Մեղրյանը մի բան կանի: Այդ հավաստի կարծիքը մի քիչ սթափեցրեց նրան, գլուխը բարձրացրեց, նայեց խցիկում աջ ու ձախ նստածներին, խղճալի ցավ կար բոլորի դեմքերին, միայն նրանց աչքերն էին պսպղում, տենդագին շողքը անփույթ դողում էր թափառ հայացքներում: Թաթուլը հիշեց ձորի մատուռը, փլատակ քարերին իջած իրիկնադարձը և ցամաքող աղբյուրի հանգչող մեղեդին: Հիշեց ու համեմատեց հոգով խռիվ այս ուղևորներին, որոնք տանում էին ոչ միայն վտանգավոր թռիչքների սարսափը, այլև իրար գլխի հավաքած հույսերը, անձնական խնդիրները, իրենց գիրկն առած հիվանդ երեխաներին՝ փորձում էին մոռանալ անցասրահում ստուգող բերետավոր տղաների կտրուկ հարցում-գոռոցները:

Թաթուլը հայացքը փախցրեց նրանցից, փորձեց ինքն իրենից հեռանալ, բայց ո՞ւր կարող էր գնալ: Նա ակամայից հետ նայեց, գիտեր, որ արդեն չէր երևալու հայոց խորհրդանիշ բիբլիական Մասիսը, որը քիչ առաջ հայրաբար շոյեց իր հայացքը, վեհասլաց բարձունքներից բարին մաղթեց, հետո փակվեց հուշիկ, ապա ծրարվեց աստղերի տակ: Թաթուլը վեհացավ Մասիսների հեռամպած խորհրդից, հոգով տանում էր նրա շանթածոց կեսօրը և տվայտանքների փունջը, որոնք ոգեթանկ թալիսմաններով դարձյալ ծաղկել էին իր ներսում:

Ուղղաթիռը հեռանում էր տխուր հռնդյունով՝ թիավարելով բաց վարդագույն ամպերի ծովը, աղմկում էր անսովոր, կարծես անհույս հոգեվարքի խորքերում՝ թպրտում էր խփված արծվի պես: Ամենքի նման Թաթուլը նույնպես սպասում էր ցանկալի վայրէջքի, չէր ընդունում հողից, հանդ ու սարերից կտրված իրավիճակները, անընդհատ առաջ էր նայում՝ ե՞րբ է երևալու Շահումյանը:

* * *

... Իսկ Շահումյանում, ինչպես միշտ, այս անգամ էլ ջերմ էր Շահեն Մեղրյանի և Թաթուլ Կրպեյանի հանդիպումը: Երկուստեք իրար հաղորդելու շատ բան ունեին, Թաթուլը՝ Գետաշենից և Երևանից, Շահենը՝ տարածաշրջանի իրադրությունից: Երկուսն էլ բավականաչափ անհանգիստ էին, սթափ գնահատականներ տալիս, քննարկում էին բոլոր հնարավորությունները՝ նախ Գետաշենը պահելու առումով, որովհետև Շահումյանի ամրությունը սկսվում էր հենց այդ լեռնագոտիներից: Այդ ընթացքում Թաթուլը հասցրեց մի անգամ ևս ռադիոկապով միանալ Գետաշենի հետ: Լենան տեղեկացրեց, որ Արթուրի խումբը երեկ երեկոյան ճանապարհ է ընկել: Թաթուլն արդեն չհապաղեց, գիտեր, որ ժամ առ ժամ նրանք կհայտնվեն, այլ խոչընդոտների մասին մտքովն անգամ չանցավ, գիտեր Արթուրի և գետաշենցի որսորդ-պաշտպանների հնարամտությունը:

Մեղրյանը խոստացավ այս անգամ ավելին անել, թեև նույն պակասությունները զգում էին նաև իրենք: Թաթուլը նրա միջոցով նախապատրաստեց սննդի պաշարը, իսկ ուշ երեկոյան, երբ հայտնվեցին տղաները, բերվել էին փոքր տրամաչափի մի քանի հրազեն, զգալի փամփուշտ, հագուստեղեն: Այդ գիշեր հանգստացան, ձիերը սաստիկ հոգնել էին, մեկ գիշերվա դադար տվեցին: Թաթուլն ու Արթուրն առանձնացան: Գետաշենում անասնապահական ֆերմայի ուղղությամբ հարձակում էր եղել: Արթուրը մանրամասը ներկայացրեց և ասաց, որ արդեն բացահայտ առճակատման են գալիս, չեն էլ թաքցնում իրենց ծրագիրը, գոռգոռում են՝ հեռացեք, միևնույնն է, վառելու ենք գյուղը, չենք խնայելու:

- Օմո՞նն է,- զայրույթից կապտեցին Թաթուլի շուրթերը:

- Օմոնը և թալանի սպասող զինված խուժանը,- հաստատեց Արթուրը:

- Չպետք է հապաղենք, լուսադեմին պիտի շարժվենք, արդեն պատրաստ են մեր ճամպրուկները,- ասաց Թաթուլը և ծանրորեն լռեց:

Ընկերոջ տեղեկություններից ազդվել էր նա, հոնքերը նկատելի դողում էին, աչքերը շաղախված էին բարկության հրդեհով: «Պիտի շտապ գնալ, ո՞վ գիտի, թե այս գիշերն ինչ է բերելու...»: Կասկածը մթին մորմոքով շտկեց իր ողնաշարը և օձի կլորավուն աչքերով նայեց Թաթուլին: Նա ակնթարթորեն բարձրացավ տեղից:

- Երեք-չորս ժամը բավարար չէ՞ հանգստի համար, մի երկու ձի էլ այստեղից կխնդրենք, մութն ընկնելիս արագ դուրս կգանք:

- Ինչո՞ւ փոխվեցիր այդքան շուտ,- Արթուրը չթաքցրեց տագնապը:

- Գիտե՞ս, Արթո՛ւր, պատկերացրու, որ հանկարծ սոսկալի մի դեպք պատահի, ու մենք այնտեղ չլինենք, ինչպե՞ս կընդունվի:

Արթուրը ոտքի կանգնեց:

- Համոզեցիր, հենց հիմա դուրս ենք գալիս:

- Երկու-երեք ժամից, Արթո՛ւր, թող մութը մի քիչ թանձրանա, իսկ այդ ընթացքում կփորձենք ձիերի հարցը լուծել:

- Դժվար չի լինի, ես խոստանում եմ հաջորդ անգամ վերադարձնել,- հաստատուն հնչեց Արթուրի խոսքը:

Համաձայնվեցին, Մեղրյանը նույնպես համամիտ էր, ձիերի հարցը լուծվեց, ավելացվեցին սննդամթերքի կապոցները: Երևանից Թաթուլը սննդամթերք, դպրոցականներին գրքեր, գրենական պիտույք, հագուստ և կոշկեղեն էր բերել, դրանք էլ գումարեցին մի քանի ծանրոցի մեջ և մեկ ժամից պատրաստվեցին դուրս գալ:

Շահեն Մեղրյանը պարզապես հիացած էր, թե այս հրաշալի տղաները ինչպիսի զոհողության էին գնում, գիտեր անանցանելի ճանապարհները, որոնց ծուղակ-կեռմաններում ամեն անակնկալ կարող էր լինել: Մոտեցավ, մեկ-մեկ համբուրեց հայ քաջորդիներին, վերջում ողջագուրվեց Թաթուլի հետ, աչքերը խոնավացան, համառությամբ ծածկեց հուզմունքը:

- Հասկանում եմ քեզ, բարեկա՛մ, բայց դա է մեր ճանապարհը,- շշնջաց Թաթուլը:

- Տերն ընդ ձեզ, հարազատնե՛րս, տա Աստված հասնենք մեր նպատակին:

Բաժանվեցին, առջևում գիշերային խավարն էր...

* * *

Նրանց ոդիսականն ավարտվեց երկրորդ օրվա վաղ լուսաբացին: Ճանապարհին հինգ տեղով մտան մարտի մեջ, շրջանցեցին ծանոթ կածանները, մեկ իջան գետափի մացառուտները, մեկ բարձրացան դժվարանց անտառափեշերը, արդյունքում առանց կորստի, նախատեսված բեռներով հասան Գետաշեն:

Շտաբում հավասարակշիռ ու հանդարտ էր ամեն բան: Հին ու նոր ընկերները գտել էին իրար, սպասում էին, որ Թաթուլն ուրախացնող նոր բաներ կհաղորդի, բայց դա տեղի չունեցավ: Ներկաներից չվրիպեց Թաթուլի անտրամադրությունը, նա խոսում էր կարճ, սուր, չներող տոնով: Զգացվում էր՝ մեջը այրող կրակ կար, որն ուզում էր թափել ինչ-որ մեկի գլխին, ուզում էր պատռել չեզո-

քության չքմեղ վարագույրը, որը տեսել էր երկօրյա ճամփորդության ընթացքում, ուզում էր պատճառաբանությունների ամբարտակը շուռ տալ, միախորան գոռալ, հասկացնել, որ Գետաշենի ու Մարտունաշենի ճակատագրին ոչ թե ավանդական ճրագի շուքն էր պետք կամ կարեկցանքի թերմացքը, այլ զենքի հրավառություն, պատիվը փրկելու պետական շարժիչ ուժ: Թաթուլը բացատրեց, որ թեև կան ահազանգեր՝ ուղղված Միության բարձր տերերին, սակայն քաղաքական այդ խնդրին մոտենալու անհրաժեշտ ցանկությունն առայժմ չկա: Գետաշենի լինել-չլինելու հարցը, կարծես, արդեն չէր հետաքրքրում գյուղում տեղակայված խորհրդային բանակի բերետավորներին, նրանք բարի մարդիկ էին, բայց պատրաստ էին կատարելու ցանկացած հրաման, վերընթաց ուժի շարքային կամակատարներ էին: Ահա թե ինչու էր մտահոգված Թաթուլը, և ինչու քուն ու դադար չունեին Հրաչի, Վահանի, Մանվելի ջոկատները: Նրանց համար գաղտնիք չէր մոտեցող լուրջ բախումը, ուզում էին էլ ավելի զինվել, զինել նաև երկու գյուղերի տղամարդկանց, պաշտպանական դիրքերում սողանցք չքողնել:

...Գյուղում ժամանակավոր տեղակայված, այսպես, թե այնպես իրենց պարտքը կատարող կարմիր բերետավորների հետ կտրուկ հակասություններ չէին արձանագրվել: Գետաշենցիները ներքուստ թեև դժգոհ էին, բայց խորհրդային բանակի տղաների հանդեպ առանձնակի չարություն չունեին, փոխադարձ ջերմ բարևը կար, ավանդական դարձած հավատը թեև տեղահան էր եղել, բայց արմատները պահպանվում էին, մարդկանց բորբոքված բնազդը մեկընդմիշտ հունից չէր ելել: Ազերիների վարքագիծը ճանաչելով՝ բերետավորները վճռական միջամտությունների չէին գնում, նրանք գիտեին, որ ամեն գիշեր անգղների պես օմոնականները գալիս, ինչոր չափով վնասներ էին տալիս գյուղերի մերձակայքում, անհարկի կրակում էին, սպառնում, լարվածության մեջ պահում Գետաշենն ու Մարտունաշենը: Թաթուլն առիթ ունեցավ այս մասին խոսել ռուս սպայի հետ: Նա հիվանդանոց էր այցելել՝ հանդիպելու թոքաբորբ տանող իր զինվորին, որին սկզբում բուժման օգնություն էր ցույց տվել վիրաբույժ Գևորգ Գրիգորյանը:

Թաթուլը թաքցնելու բան չուներ, սպան քաջատեղյակ էր, որ նա պաշտպանական խնդիրներով էր զբաղված, տղաների հետ հսկում էին ամենուրեք, և վաղուց համոզվել էր, որ ուսուցիչ անվան տակ յուրատեսակ զինվոր էր Թաթուլը, միաժամանակ մեծ համարձակություն և լուրջ կապեր ուներ, նկատել էր նաև, որ հարգալից էին

նրա հանդեպ և՛ գետաշենցիները, և՛ թե մարտունաշենցիները: Թաթուլի հարցերին, որոնք վերաբերում էին օմոնականների գիշերային հարձակումներին, նրանց բազմաբնույթ սադրանքներին, սպան շատ անտարբեր պատասխան տվեց, կարծես այդպես էլ պիտի լիներ, որ նրանք էլ իրենց ասելիքն ունեն: Իսկ վերջում դարձյալ չմոռացավ ակնարկել, որ տեղաբնակները պարտավոր են դաս քաղել հարևան գյուղերի ճակատագրից, հավասարակշռության նժարը օրը տասն անգամ փոխվում է:

Վերին իշխանությունների կամակատար այս սպան, որքան էլ բարի ու բարեգութ լիներ, նույնքան կուրորեն կատարող էր, հրաման արձակողները վերևում էին, որոնց համար գրեթե ոչինչ էին աքցանի մեջ կեղեքվող երկու գյուղերի բնակչության տագնապալի վիճակը, կանչը, սպասումը, արդար պահանջը: Թաթուլն անսխալական համոզված էր դրանում, բայց «գետաշենցի» դարձած սպայի եզրահանգումները բորբոքել էին նրան: Հազար անգամ համոզված էր, որ միակ փրկությունը սեփական զենքն ու հզոր ուժն էին, որի համար ոչինչ չէր խնայում ինքը, բայց չէր ուզում հաշտվել այն գաղափարների հետ, որ այդպես էլ մոռացության էին տրվում այս պատմական գյուղերը, նրանց հեռաձայն խորհուրդը, այս հրաշք բնաշխարհի հայկազուն բույրն ու փառքը:

«Պետք է մինչև վերջ հավատարիմ մնալ, ճակատագրից չես փախչի, բայց նրա գերազնիվ փառքը պարտավոր ենք փոխանցել, իսկ նա թանկ ապացույցներ է ուզում, զոհողություններ, որոնց չափը որոշելու մի կարգին ժամանակն էլ չունենք: Բացառիկ մեծ ցավ է, երբ գետաշենցիները դաշտ չեն կարողանում գնալ, ցանք չի արվում, արտը խոզան է, այգին՝ չէտված: Այս բերետավորներին ի՞նչ փույթ, որ լուռ են արահետները, լուռ է հանդի հորովելը...»: Այս տողերը Լենան կարդաց առավոտյան, երբ նախաճաշ էր պատրաստում: Թաթուլի ձեռագիրն էր՝ նրա նոր ծոցատետրի առաջին էջում զետեղված: Տղաները Թաթուլի գլխավորությամբ դեռ չէին վերադարձել դիրքերից: Կեսօրվա մոտ եկան, հոգնած էին, գիշերը կռվել էին երկու ուղղություններով: Անվնաս վերադարձել էին:

- Ծոցատետրդ մոռացել էիր սեղանին,- ժպտաց Լենան և այն հանձնեց Թաթուլին:

- Գիտեմ, դեռ սպիտակ են էջերը:

- Նախաբանը կարդացի, երկու տող էր, բայց...- տխուր նայեց Լենան:

- Գեշերաձայներից քաղվածք էր ընդամենը, ուրիշ ոչինչ,- խոսքի

տոնը փոխեց Թաթուլը և մոտեցավ ճաշի սեղանին, որի շուրջբոլորը արդեն նստել էին ընկերները: Ծանր գիշերից հետո կամաց-կամաց սթափվեցին, քնեցին մի երկու ժամ, ապա բաց արին Թաթուլի բերած ճամպրուկները: Երեխաների հագուստ էր, մանկական կոշիկներ, իսկ սննդամթերքը արդեն հասցրել էին գյուղխորհրդի միջոցով բաժանել ծայրահեղ կարիքավորներին:

- Հիմա դպրոցում վերջին դասաժամն է, գնանք միասին և այս ամենը բաժանենք դպրոցականներին,- Թաթուլի առաջարկությունից ամենից շատ պայծառացան Արթուրի աչքերը: Նա անմիջապես ոտքի կանգնեց և հարցական նայեց ընկերոջը.

- Ես ո՞ր ծանրոցն եմ տանում,- ասաց ու անմեղորեն ժպտաց: Թաթուլն անմիջապես կռահեց նրա ակնարկը, և պատասխանը չուշացավ:

- Արթո՛ւր, դու այս փաթեթը վերցրու, տարբեր չափսերի են, ստուգի՛ր, ինքդ էլ կհանձնես տասներորդցիներին:

Արթուրը կողքի սեղանին իրեն հայտնի հրճվանքով բացեց մեծ ծանրոցը. սքանչելի շրջազգեստներ էին, ծաղկավոր հագուստներ, տղաների համար՝ վերնաշապիկներ, մոխրագույն բաճկոններ և կոշիկներ: Նրա աչքին ընկավ բաց կապույտ զգեստը, նուրբ գոտիով՝ վրան ոսկեգույն ճարմանդ: Ներքին մի մղումով այն առանձնացրեց, որ շատ չփնտրի, և ապա Թաթուլի հետ երեք-չորս հոգով շտապեցին դպրոց: Այնտեղ արդեն գիտեին, սպասում էին: Գերադասեցին դասարաններում հանձնել երեխաների համար ուղարկված նվերները: Տասներորդում Արթուրը զարմանալիորեն հուզվեց, հայացքով պարուրեց նրան, բայց իրեն չմատնելու համար ժպտաց բոլորին: Մեկ-մեկ մոտեցավ, հանձնեց, իսկ երբ վերցրեց բաց կապույտ զգեստը, ձեռքերը դողացին, սիրտը հունից դուրս եկավ, ասես վանդակից դուրս պրծած թռչուն:

- Սա քե՛զ համար, իմ ընտրությունն է,- միայն նրան լսելի ասաց Արթուրը՝ օգտվելով այն բանից, որ մյուսները աշխույժ խոսում էին, իրար ցույց տալիս ստացածը: Աղջիկը նկատելի շիկնեց, ապա պայծառացավ ու ձեռքը մեկնեց.

- Շնորհակալ եմ, հավանում եմ Ձեր ճաշակը, Արթո՛ւր...

Իր անունը լսելով այդ քնքուշ բառերի շարքում՝ Արթուրը հազիվ թաքցրեց ներսում բռնկված հրդեհը, որ ծավալվել, բարձրանում էր, ողողում լուսե զգացումի պատկեր-տեսիլքը:

- Դու աստղային զարդի ես արժանի,- համարձակվեց ասել Արթուրը և արագ դուրս եկավ դասարանից:

- Հը, եղբա՛յր, բաժանեցի՞ր,- միջանցքում ուղիղ նրա դեմ դուրս եկավ Թաթուլը:

- Իմ սիրտը բաժանեցի, Թաթո՛ւլ, բայց ամաչում եմ ավելին ասել,- փորձեց արդարանալ Արթուրը,- օրերի ծանր իրադրությունների մեջ այսպես խրված, լարվածության գագաթնակետին հասած անորոշ վիճակ և դրանց կողքին սրտիս փոթորիկը, հակասական է, չէ՞ ...

- Սերը պատերազմ ու խաղաղություն չի խաղում, նրա վերադարձը իշխանական է, անկախ այն հանգամանքից, թե օրն ամպոտ է կամ արևոտ, դա քո թալիսմանն է, մի՛ կորցրու,- անկեղծ գորովանքով ասաց Թաթուլը:

Արթուրն ազդվեց ընկերոջ խոսքից, միասին դուրս եկան: Դասարաններում շարունակվում էին չափավոր աղմուկն ու ծիծաղը: Արթուրն այդ բազմաձայնության շերտերում ցայգերգի իր շողն էր փնտրում և որքան հեռանում էր, նույնքան ընդգծված զարկում էր սիրտը: Դպրոցի պատերի մեջ Արթուրի սիրո մատուռն էր և աղոթքի ծանոթ մի փունջ, որն օրերից մի օր իր ականջին շշնջացել էր Ստելլա մայրիկը.

- Աստված քեզ օգնական, զավակս...

* * *

Մարտ ամսվա վերջերին տղաները գրեթե ամեն գիշեր տարաբնույթ ընդհարումների մեջ էին, զինված ազերիները և օմոնը չէին թաքցնում իրենց հարձակողական ձեռնարկումները: Դրանց պատասխանները նույն տեղում ստանում էին, հայ քաջերը բոլոր դիրքերում զգոն էին, խփում էին դիպուկ՝ փակ պահելով Գետաշեն մտնող բոլոր ուղիները: Այնուամենայնիվ, ազերի խուժանը ավելիին կարող էր ձգտել, սակայն գիտեր, որ Գետաշենում առկա է խորհրդային բանակի հենակետը և առայժմ չէր ուզում արհամարհել նրա լուռ և իրենց գրեթե չխանգարող ներկայությունը: Այս հարմարվողականությունը գետաշենցիների զայրույթն էր առաջացրել, բայց դա քիչ էր զսպելու օր օրի ավելացող վտանգը: Գյուղի պաշտպանները թշնամու հանդեպ կիրառեցին պատասխան մարտավարությունը՝ մինչև Գետաշեն հասնելը պատժել հակառակորդին, հետ բերել նրանց թալանածը, գողացածը, վերականգնել ոչ միայն նյութական վնասները, այլև բարձր պահել հայրենյաց սրբությունների պաշտպանի իրենց արժանապատվությունը:

Դեպքերը հաջորդում էին իրար, լարված օրեր էին:

...Հետախուզության միջոցով պարզեցին բոլոր այն զինված

խմբերի տեղավայրերը, որտեղից ամեն գիշեր անարգել գալիս, սանձարձակ ու ցինիկ հարայ-հրոցով խփում, ինչ-որ բան փախցնելով՝ հեռանում էին: Որոշվեց անպատասխան չթողնել, այլապես «ախորժակը ուտելիս է բացվում», նրանց նախընտրած ուղին կարող էր լուրջ հետևանքներ ունենալ: Տղաները չուշացրին պատասխանը՝ հասկացնելով, որ խելոք մնացեք:

Գետաշենից 12 կմ հեռավորության վրա գտնվող Դազլար գյուղի մերձակայքում՝ Կիրովաբադ տանող ճանապարհահատվածում, Թաթուլը, Արթուրը, Ալեքսանն ու Եղիշը գնդակոծեցին գիշերային ժամերին Գետաշենի սահմաններում հայտնվող օմոնի մեքենան և զգալի զինամթերքով վերադարձան: Լուր էր ստացվել, թե գյուղական դիրքերի վրա հաճախակի հարձակվող օմոնականներին տեղափոխում է ՊԱԶ մակնիշի ավտոբուսը: Այս անգամ էլ, երբ կեսգիշերին այդ մեքենան սրընթաց դուրս եկավ հայաթափված Կամո գյուղից, հենց այդտեղ երկուսով՝ Թաթուլն ու Արթուրը, ինքնաձիգներից կրակ բացեցին՝ խոչընդոտելով նրա մուտքը դեպի Գետաշեն: Հերթական ավազակության և սադրանքի գնացող 9 օմոնական սպանվեցին և նրանց զենքերը, որոնք լիցքավորված էին գետաշենցիների համար, տղաների կողմից առգրավվեցին և հասցվեցին պաշտպանական ջոկատներին:

Գետաշենում անհանգստացած էին սննդամթերքի պակասի համար, հատկապես կարտոֆիլի, որովհետև այդ ցանքատարածությունները գյուղից որոշակի հեռու էին և եղած բերքը գողացել, քանդել, տարել էին օմոնականները: Նրանց պատժելու գործը Թաթուլը հանձնարարեց Արթուրին և վեց այլ ընկերների, որոնք Ղուշչի-Արմավիրից պետք է հետ բերեին Գետաշենին պատկանելիքը: Գործողության պահին օմոնը մարտական զրահամեքենայով հարձակվեց տղաների փոքրաթիվ խմբի վրա:

Արթուրի հնարամտությամբ ծուղակի մեջ հայտնված օմոնականները ոչնչացվեցին, և առգրավվեց մեքենան: Տղաներից երկուսը վիրավորվեցին:

Գետաշենի և Մարտունաշենի աչքի առջև դատարկված Ղուշչի-Արմավիրը վերաբնակեցվում էր, այդ հարցում նախաձեռնող էին օմոնականները: Զգացվում էր, որ այս նախադեպը զգուշացնում էր Գետաշենին և Մարտունաշենին: Թաթուլն ու Արթուրը երկար քննարկեցին այդ խնդիրը, գյուղում տագնապը զգացնել էր տալիս, ազերիները չէին թաքցնում իրենց արյունոտ ծրագիրը: Պետք էր նրանց ճակատին խփել, բայց ինչպե՞ս: Արթուր Կարապետյանը

խնդրեց Թաքուլին, որ այս անգամ ինքը ստանձնի վերաբնակեցումը խափանելու գործը՝ հիշեցնելով, որ հրամանատարը պիտի մնա, մանավանդ որ 37,5 ջերմություն ունի: Եվ ինչ, նա մեն-մենակ գիշերով հասավ Ղուշչի-Արմավիր, իրեն գյուղապետ հռչակած ադրբեջանցուն մեկ օր ժամանակ տվեց՝ գյուղից հեռացնելու բոլոր դրածոներին: Հաջորդ երեկոյան Արքուրին կանխեց Թաքուլը, սակայն չուզենալով վշտացնել նրան՝ կարգադրեց գնալ չորս հոգով: Համաձայնվեց: Գյուղի մոտերքում, այնուամենայնիվ, նա երեք ընկերներին խնդրեց մնալ, ինքը մենակ գնաց: Գյուղապետը, հավանաբար, հերթական հանդգնություն համարելով հայ ազատամարտիկների երեկվա պայմանը, սեղան էր բացել, և չորս-հինգ օմոնականներով ցնծում էին՝ ամեն խոսքի վրա հայհոյելով հայերին, քրիստոնյաներին: Արքուրն անհամբեր ու զայրացած թակեց պատուհանը, ներսում զգաստացան, գյուղապետը կարծեց՝ համագյուղացիներից որևէ մեկը կլինի: Արքուրը բացեց պատուհանը՝ կրկնելով երեկվա պահանջը: Ներսից մեկը կրակեց, Արքուրը ավելի ճարպկորեն պատասխանելով, լռեցրեց ազերական որջը և արագ հեռացավ: Տղաները գտան նրան՝ թևից վիրավոր, փաթաթեցին վերքը և շտապ վերադարձան Գետաշեն:

Վիրաբույժ Գևորգը զննեց, մաքրեց վերքը, խնդրեց, որ Արքուրն այսօր մնա հսկողության տակ: Թաքուլը մի կողմ տարավ բժշկին:

- Վտանգավոր բա՞ն կա:

- Թեթև վերք է, մեկ շաբաթից կսպիանա,- պատասխանեց Գևորգը:

- Այդպես մի՛ ասա իրեն, առիթ է, թող տուն գնա, գոնե մի երկու շաբաթ հանգիստ կառնի, հարազատներին կտեսնի,- առաջարկեց Թաքուլը:

Արքուրը մի կերպ համոզվեց, Թաքուլի համառությանը միացան նաև հիվանդանոցի վիրաբույժները՝ Սարգիսն ու Գևորգը:

Համաձայնեց, հաջորդ օրը, բարեբախտաբար, ուղղաթիռ էր ժամանել: Թռչելուց առաջ չմոռացավ ասել, որ եթե հարցնող լինի, ասեք՝ ձիու թամբից է ընկել, այդպես էլ տանը կիմանան: Այդ ուղղաթիռով արձակուրդ գնաց նաև վիրաբույժ Գևորգը, նրան փոխարինելու էր եկել Վալերի Խաչատրյանը: Թաքուլը որքան ուրախացավ Արքուրի գնալու համար, նույնքան գոհ էր, որ Գևորգը նույնպես գնաց: Թաքուլը չէր մոռանում, որ նա թողել էր իր լավ աշխատանքը «Էրեբունի» հիվանդանոցում, հարազատներին, իր անչափահաս երեխաներին և շտապել էր Գետաշեն:

- Ես դեռ կգամ, Թաքո՛ւլ,- գնալուց առաջ բացականչեց Գևոր-

գը,- ընտանիքով ամառային արձակուրդներս անցկացնելու եմ այստեղ՝ Գետաշենում:

- Դեռ կհանդիպենք, բարևի՛ր ձերոնց,- հասցրեց ասել Թաքուլը:

Ուղղաթիռը օդ բարձրացավ:

* * *

Արքուրի բացակայությամբ Թաքուլը վիթխարի ուժի պակաս զգաց, թեև դժգոհելու ոչինչ չուներ մյուս տղաներից, գետաշենցի որսորդ-հայդուկներից: Հասկացավ, որ ինքը պետք է փոխարինի նաև նրան: Դպրոցում Թաքուլը չէր մոռացել իր դասը, պատմության առարկային սիրահարված սաները կարոտով էին սպասում նրա բռնկուն պահերին, թեմաների բազմաշերտ զուգորդումներին, սակայն վերջերս իրենց ուսուցիչը քիչ ժամանակ ուներ: Այսուհանդերձ, նրա ներկայությունը դպրոցում, թեկուզ շաբաթը մեկ անգամ, մեծացնում էր հետաքրքրությունների սահմանը, դասարանը ունկնդիր էր ոչ միայն պատմության դրվագների նկարագրությանը, այլև արվեստի, գեղագիտության, ոճաբանության, հայրենաբույր երգ ու պոեզիայի սքանչելի վերթևումներին:

Տասներորդ դասարանում այսօր էլ, երբ հնչեց դասամիջոցի զանգը, աշակերտները տեղից չբարձրացան այնքան ժամանակ, մինչև ընկեր Կրպեյանը չարտասանեց բանաստեղծություններ Չարենցից ու Շիրազից: Թաքուլը կարդում էր և հայացքով քննում սաների պայծառացոլք աչքերը: Նրանք այսօր հագել էին բարերարների ուղարկած հագուստները, թեթևացած և առույգ էին: Ուսուցչի աչքից չվրիպեց բաց կապույտ զգեստով նոճիահասակ աղջիկը: Թաքուլն Արքուրի ջերմությամբ ժպտաց և դուրս եկավ: Միջանցքում մեկը ցածրաձայն կանչեց.

- Ընկե՛ր Կրպեյան...

Թաքուլը հետ նայեց, իր առջև բաց կապույտի բոլորակ բոցի մեջ թրթռում էր աղջիկը: Նրա աչքերում վախվորած հարցական կար, չհամբերեց.

- Արքուրը վիրավորվե՞լ է, նրան զորացրել եք...

Թաքուլը ցավն ու ափսոսանքը սեղմեց ատամների տակ, մեղմորեն և հանդարտահոս ժպտաց:

- Չէ՜, քույրի՛կս, թեթև քերծվածք է, իմ խնդրանքով բացակայելու է ընդամենը մեկ-երկու շաբաթ: Կգա, նա չի կարող չգալ, Արքուրը ոչ միայն նպատակի զինվոր է, այլև...- գերադասեց չշարունակել:

Աղջիկը լուսավորվեց, աչքերը խոնավացան, միայն մեկ բառ

ասաց՝ շնորհակալ եմ, ապա երկայն գիսակներն օրորելով թիկունքին՝ նազանքով ետ գնաց և միանգամից անհայտացավ դասարանի դռների հետևում:

...Ամեն երեկո, ջոկատներն արդեն գիտեին, որ լրիվ սպառազինված պետք է լինեին դիրքերում: Միացյալ պաշտպանական գիծը՝ Գետաշեն-Մարտունաշեն ուղղությամբ, կարողանում էր գլուխ հանել օմոնականների շարունակվող խարդավանքներից: Մարտի վերջերին օմոնականներն օգտագործում էին հեռահար զենքեր, դարձել էին ավելի ագրեսիվ՝ հաշվի չառնելով տարածաշրջանում խորհրդային զորամիավորումների ներկայությունը: Դա նշան էր այն բանի, որ թաքուն փոխհամաձայնություն էր գործում՝ թելադրված Պալյանիչկոյի քաղաքականությամբ և Սաֆոնովի գիտությամբ:

Թաթուլը, գնահատելով իրավիճակը, Լենայի միջոցով կապվեց Հայաստանի պաշտպանական ուժերի հետ՝ երբեք չխստացնելով օրվա կոնկրետ պատկերը: Մեկ-երկու օրից բավական դժվարությամբ Գետաշենում հայտնվեցին Մուրադ Կիրակոսյանի ջոկատի տղաները՝ շուրջ քսան հոգի: Թաթուլը ներկայացրեց շաբաթվա մանրամասները, սննդի և զենքի պակասը: Այդ օրերին, զարմանալիորեն, դիրքերում համեմատաբար խաղաղ էր, ուստի Կիրակոսյանի ջոկատը հրաման ստացավ վերադառնալ: Տեղի ջոկատներին հանձնվեց զգալի զինամթերք, հատկապես փամփուշտ: Երբ բաժանվեցին, գնացող տղաներից, ամեն մեկն իր մեջ, այնուամենայնիվ, գրանցեց Գետաշենում տիրող վիճակի իսկական գնահատականը:

Թաթուլն իր զարմանքը խեղդում էր ներսում, նրա համար անհասկանալի մնաց, թե ինչու այդքան հապճեպ հայտնվեցին Մուրադի ջոկատի տղաները և նույն արագությամբ վերադարձան: «Գուցե խառն են դեպքերը Հայաստանի սահմաններում, այլապես այդքան չարչարանքով տեղ հասան և հապշտապ գնացին, ի՞նչ է կատարվում...»: Այս և համանման մտքերը նրան հանգիստ չէին տալիս, ցավի պես մի անանուն տագնապ խոցել էր սիրտը, իսկ նա ինչ-որ բան էր ուզում ճշգրտել, ինքնահամոզման եզերքներ էր փնտրում, մեկ կասկածում էր, ապա ժխտում իրեն, չէր ուզում իր հավատի բարձունքից իջնել:

Երրորդ օրը Թաթուլը դիրքերից տուն չվերադարձավ, տղաներին քաջալերել էր պետք, նրանց կողքին պառկել, հույս տալ: Ցերեկները գյուղխորհրդում էր, հանդիպում էր մարդկանց, փորձում պատասխանել նրանց իրավացի հարցերին: Օրն ու ժամանակը կտրուկ փոխվել էին, ներքին տագնապների գետը խշշում էր Գետաշենի վերից վար, իսկ անհուսալի վերևներից՝ շոշափելի ոչ մի խոսք ու

նախաձեռնություն: Դժվար էր այս պայմաններում ուղիղ նայել գյուղացիների աչքերի մեջ: Թաթուլն արդեն զգում էր, որ չերևացող այդ վերևների ու իրենցից հրաշք սպասող շարքային մարդկանց միջև դատարկ տարածք է բացված, որտեղ իրենք էին՝ իր ընկերները: Այս ամենը նա բացում էր միայն իր առջև, բացահայտում, քննում ու հերքում էր, դարձել էր չափից ավելի մտախոհ, քչախոս էր, բայց երբեք այսքան ինքնամփոփ չէր եղել: Թաթուլը հասկանում էր քաղաքական խառը բախումները, միութենական մամուլի արձագանքները, չէր մոռացել Սումգայիթի և Բաքվի դեպքերը, երբ երկրի թիվ 1 մարդը խոստովանեց, որ իբրև թե մի քանի ժամ են ուշացել: Մտքերի խոժոռ տարուբերումներից կծկվել էր սիրտը, կոշտացել, զայրացած էր շատ-շատերի վրա, չէր ընդունում չեզոքությունը, որից անտերունչ բույր էր առնում, պառկում էր՝ քունը չէր տանում, գնում էր դիրքերը՝ անորոշությունից պատառոտվում էր հոգին, նայում էր հայրենաշուք լեռ ու անտառներին, ամաչում էր մոտ գնալ, շոյել, բայց նրանց բողոք-բարբառին պատասխան գտնել չէր կարող: Վերջերս սովորություն էր դարձրել, դարավանդին նստած՝ երկար ու ակնդետ հետևում էր Գետաշենի մայր հորձանքին, որը փռված էր կանաչ կիրճերի կողերին՝ Քուրակի կապույտ տողադարձով կիսված: Նայում, մորմոքում ու հասկանում էր գետաշենցուն, նրա խաղաղ կռիվը տեղահանման մշուշոտ ծրագրերի դեմ: Պարզապես գետաշենցիներից ոչ պակաս նա սիրահարված էր այս եզերքներին, գյուղի պատմությանը, խիզախած անցյալին, նրա նոր սերնդին, որ իր զինվորներն էին դպրոցում, իր ընկեր-հայդուկներին՝ հանուն Գետաշենի իրենց կյանքը մատաղի բերած անձնուրացներին:

Իրեն պաշարած այս մտահոգություններով Թաթուլը պարզաբանելու խնդիրներ ուներ, ինքն իր հետ կռիվ ուներ, դա նկատվում էր ամենուրեք՝ պաշտպանական դիրքերում, քնած, թե արթուն, դասարանում, նաև վերհուշի ակոսներում կամ բանաստեղծություններ գրելու ինքնամոռաց պահերին: Գետաշենցիները, առաջին հերթին ընկեր-ուսուցիչները, տեսնում էին նրա տվայտանքները, դեմքին նստած զայրույթը, ինչ-որ բաներից դժգոհ՝ նրա մթագնած հայացքը: Այս ամենի հետևում ձևը չէր, ոչ էլ ցավի ցուցամոլ բովանդակությունը: Պարզապես Թաթուլը ժամանակի խորքերով տեսնում էր մեծ ու փոքր տեղաշարժերը, քաղաքական ճակատների տեղատվությունը, անհարիր մի ընթացք, որն արդեն անկառավարելի էր դարձել: Թաթուլը, նրա ընկերները Գետաշենում գիտեին, որ իրենց իմացած երբեմնի հավասարակշիռ պետությունը կորցրել

էր իր հեղինակությունն ու ներգործության ուժը: Դրանց դեմդիմաց ծառացել էր մի գերխնդիր՝ սեփական ուժերով փրկել քո իմացած հայրենին, քո պաշտած ազգային սրբությունը: Սա միայն հարցադրում չէր 1991-ի ապրիլին, երբ Գետաշենն ու Մարտունաշենը գրեթե չորս կողմից պաշարված էին, ընդամենը մի բուռ մարդիկ, մի խումբ հավատավոր տղերք փորձում էին այդ տեղամասում արդարության կշեռքը պահել, ձգտում էին աշխարհին ապացուցել իրենց նվիրումը և այդ նույն աշխարհին ցույց տալ ազերիների սանձակոտոր արշավը, նրանց վաղեմի ու վայրագ ընչաքաղցությունը, ուրիշի հող ու ջրին տեր դառնալու օմոնական ծարավը:

Այս հակադարձ հաշվարկների, ուժերի անհավասարության, խորհրդային զինծառայողներին պարտադրված անտարբերության մթնոլորտից էր իր հոգու ամպրոպը քաղում Թաթուլը: Ինքն իրեն պայծառատես չէր համարում, բայց զգում էր տարածաշրջանին սպառնացող վտանգը, դա էր պատճառը, որ նա ձգտում էր ուժեղացնել պաշտպանությունը, զինել բոլոր նրանց, ովքեր ընդունակ են հրացան վերցնելու:

Արժանապատվության կռիվ էր: Դրան բծախնդրորեն պատրաստվում էին ոչ միայն այստեղ եկած ու գրանցված նվիրյալները, այլև գյուղերի մարդիկ: Նրանք վստահ էին իրենց ուժերի վրա, միայն թե գործին ուրիշ ընթացք չտային Միության զինծառայողները: Այս կասկածանքը տեղաբնակները զգում էին բերետավորների՝ օր օրի նվազող վերաբերմունքից, նրանց կողմից պակասող ջերմությունից և առօրյա շփումներից: Իսկ ի՞նչ կարող էին անել. գիտեին, որ խնդրանքով ու նվերներով բարեկամություն չի լինում, դրա համար ուժերն էին միավորում, համախմբվում էին Թաթուլի, Հրաչի, Վահանի, Մանվելի ջոկատները՝ հասկանալով, որ ստեղծված իրավիճակում միակ արդարացվող քայլը դա է:

* * *

Չորրորդ օրը դեռ չէր լրացել, Արթուր Կարապետյանը հասավ Գետաշեն: Շահումյանից ձիով էր եկել:

- Այսքան շո՞ւտ, ինչո՞ւ շտապեցիր գալ,- ընկերաբար կշտամբեց Թաթուլը:

- Չէի կարող մնալ, ուշքս ու միտքս այստեղ էին, թեև մայրս շատ էր ուզում, որ մի քանի օր էլ մնայի:

- Իզուր ես տիկին Ստելլային մերժել, այստեղ առանձնապես արտակարգ ոչինչ չի եղել,- շարունակեց Թաթուլը:

- Շահումյանում եղե՞լ եք,- խոսակցության հունը փոխեց Արթուրը:
- Իհարկե, մեկ անգամ ինքս եմ գնացել քո փորձված խմբի հետ:
- Ամեն ինչ կարգի՞ն էր:
- Երախտապարտ եմ Շահեն Մեղրյանին, նա պատրաստ է հացի վերջին պատառը և վերջին փամփուշտը կիսել մեզ հետ, պարզապես ամեն հանդիպումից հետո նա բացառիկ լույսով է զորանում իմ մեջ,- խանդավառվեց Թաթուլը:
- Իսկական առաջամարտիկ է, տեսնում ու գնահատում է ամեն ինչ, նրա համար այս գործում մանրուք չկա,- ավելացրեց Արթուրը:
- Իսկ ի՞նչ կա քո Երևանում,- այս անգամ էլ Թաթուլը փոխեց զրույցի ուղղությունը:
- Ես այնտեղ էի, սիրտս՝ այստեղ,- այնքան հավատով ու անմեղորեն ասաց Արթուրը:
- Ի՞նչը նկատի ունես,- խորամանկեց Թաթուլը:
- Առաջին հերթին Գետաշենը, դուք, իմ նպատակների եզերքը:
- Իսկ մնացա՞ծը,- ժպտաց Թաթուլը:
- Չեմ թաքցնում, դա էլ կա...
- Արթո՛ւր, իմացիր, որ քեզնով հետաքրքրվում էր երկնագույնի մեջ զուգված քո հրեշտակը:
- Ինչպե՞ս, ե՞րբ,- անհամբերությունից խզվեց Արթուրի ձայնը:
- Քո գնալու հաջորդ օրը՝ դասամիջոցին, նա մոտեցավ ինձ և համարձակորեն պահանջեց, որ զեկուցեմ քո առողջության մասին,- հանգիստ ներկայացրեց Թաթուլը,- շատ էր անհանգիստ, որ գուցե չվերադառնաս:
- Ե՞ս, չվերադառնամ Գետաշե՞ն, դա անկարելի է:
- Իրեն պիտի ասես, բարեկա՛մս, ես զգացի նրա ապրումները, հուզական խոսքը, եղնիկի պես փախուստը...
Հետո լռեցին, եկել էր Լենան, ապա ներս մտան վիրաբույժներ Սարգիսն ու Վալերին: Գյուղում երկու ծանր հիվանդ կար, անհրաժեշտ էր տեղափոխել գոնե Շահումյանի հիվանդանոց: Քննարկեցին, պատասխան չգտան, արդեն քսան օրից ավել էր, որ ուղղաթիռները չէին գալիս, արգելել էին:
- Փորձեք ձեր ուժերով փրկել,- առաջարկեց Թաթուլը:
- Բարդ վիրահատություն է, սարքավորումներ և անհրաժեշտ դեղորայք չունենք,- ներողամտորեն առարկեց գլխավոր բժիշկը:
- Ուրեմն պիտի փորձենք փրկել, ուրիշ ճար չկա,- միջամտեց Վալերին,- հույսն Աստված:
Լենան ռադիոգիր էր բերել: «Առայժմ կոնկրետ օգնությունն ուշա-

նալու է, ամրապնդվեք ձեր ուժերով»: Պաշտպանության կոմիտեի առաջարկությունը առանց այն էլ պարզ էր իրենց համար: Թաթուլը դարձյալ մռայլվեց, բայց այսպես երկար մնալ չէր կարելի, որոշեց հանդիպել կենցաղի տանը տեղակայված կայազորի հրամանատարի հետ: Շրջապատում ամեն ինչ դարձել էր վտանգավոր, դա ավելի էր ընդգծվում, երբ ռադիոգրերը հուսադրող քիչ բան էին բերում: Գյուղխորհրդի նախագահի միջնորդությամբ հանդիպումը կայացավ գրասենյակում: Սկզբում ջերմ կարծիքներ փոխանակեցին, սպան ոչ մի վտանգ չէր տեսնում՝ հավաստելով, որ իրենք նույնպես գյուղում են, հաշվետու են իրավիճակը կայուն դարձնելու խնդրում: Թաթուլը չհավատաց նրան, նախկին անկեղծության պակասն զգաց, քանի որ մայորը խոսում էր կցկտուր, մտքերը ցրիվ էին և անհամոզիչ:

- Զինվորը հրաման կատարող է, մեր կարգապահությունը կոնկրետ չափի մեջ է,- հանգիստ ասաց մայորը,- գյուղխորհրդի նախագահը չի ժխտի, որ զինվորականները խիստ զգույշ են, ուրիշ ի՞նչ կարող ենք անել:

- Իսկ այն, որ ամեն գիշեր բոլոր կողմերից օմոնականները խփում են Գետաշենի և Մարտունաշենի պաշտպանական դիրքերին, դրա զսպումը չի՞ մտնում ձեր իրավասության մեջ:

Սպան խեթ նայեց Թաթուլին, որին արդեն ճանաչում էր մի շարք հանդիպումներից, վառեց գլանակը և ծուխը բաց թողնելով ասաց.

- Փոխադարձ կրակոցներ են, նաև ձեր կողմից, մի՞թե ժխտում եք:

- Զարմանում եմ, որ խորհրդային բանակի բարձրաստիճան սպան վայրագ օմոնից խաղաղ բնակչության պաշտպանությունը համարում է փոխադարձ կրակոց,- Թաթուլը նկատելիորեն բարձրացրեց ձայնը,- ձեր աչքերի առջև է կատարվում այդ ամենը, դուք կապի մեջ եք տարածաշրջանում տեղակայված զինվորական ուժերի հետ, չե՞ք կարող իրողությունը ներկայացնել ավելի ստույգ, ինչպես որ կա:

- Ես պարտավոր չեմ ձեզ ներկայացնել մեզ տրված առաջադրանքների ողջ փաթեթը, պիտի գոհ լինեք, որ Գետաշենում ենք:

- Բայց ձեր պարտքն է զսպել օմոնին,- միջամտեց գյուղխորհրդի նախագահը:

- Անում ենք այն, ինչ կարող ենք,- չոր պատասխանեց սպան:

- Պատմությունը չի ներելու այդ վարքագիծը,- առաջ անցավ Թաթուլը,- դուք լավ գիտեք, թե Գետաշենի ենթաշրջանում ինչպես հայաթափվեցին մի շարք գյուղեր, հիմա դա սպառնում է այս երկու

գյուղերին և չի երևում ձեր գործնական միջամտությունը:

- Կգա ժամը, կիմանա՛ք,- ասաց մայորը և երկու համհարզների ուղեկցությամբ հեռացավ:

* * *

Գետաշենյան հին ու նոր պատմության մեջ ամենածանր օրերը սկսվեցին 1991-ի ապրիլի կեսերին: Զարմանալիորեն սառն էին դարձել խորհրդային պահակազորի ծառայողները, նրանք նախկին մարդամոտությունը ցույց չէին տալիս, արդեն քիչ էին շփվում գյուղացիների հետ: Այս զգուշավորությունը Թաթուլն ու ընկերները նկատել էին: Նրանց համար գաղտնիք չէր, որ ամեն ինչ տարվում էր ընդդեմ Գետաշենի: Լուրերի այդպիսի հաջորդականություն էր ստացվում նաև Մարտունաշենից:

Թաթուլը դեպքերի հետագա հնարավոր ընթացքի մասին իր կարծիքը հասցրել էր հայտնել պաշտպանության կոմիտեին: Հեռավորության վրա հակասական գնահատականները ավելի ստույգ ճշգրտելու համար ապրիլի 20-ից հետո Գետաշեն ժամանեցին Անդրանիկ Մարգարյանն ու Ֆիլարետ Բերիկյանը: Նրանք բավական դժվարությամբ տեղ հասան, հանդիպեցին Թաթուլին և մյուս ջոկատների հրամանատարներին: Իրավիճակը այն էր, ինչպես տեղեկացված էին: Երևանից ժամանած՝ հանրապետության հատուկ տնտեսական ծրագրերի իրագործման կոմիտեի փոխնախագահ Ֆիլարետ Բերիկյանը և Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Անդրանիկ Մարգարյանը գերադասեցին շուտ չհեռանալ, փորձեցին լինել Թաթուլի կողքին հենց այն ժամանակ, երբ Գետաշենը բավականաչափ ալեկոծված էր:

- Ոչ ոքի չես մեղադրի,- բացատրում էր Թաթուլը,- այսքան բացահայտ ճնշումների, պակասությունների և անտերության պայմաններում Գետաշենը չի կորցրել իր բնազդը, բայց ինչքա՜ն կարելի է դիմանալ, խոստացված օգնությունն ու միջամտությունը ուշանում են:

- Արվում է այն, ինչը հնարավոր է, Թաթո՛ւլ,- ասաց Ֆիլարետը,- վիճակի գերլարվածություն է նաև Հայաստանի սահմաններում, էլ չեմ ասում Արցախում:

- Պնդված միջամտություն է պետք Միության վերին էշելոններին, որ Գետաշենն ու Մարտունաշենը ոտքի տակ չգնան,- դարձյալ պնդեց Թաթուլը,- ո՞վ է ասում՝ ինչ-որ ունենք-չունենք բերեն այստեղ:

- Այդ վերևիններին ասվում է, Թաթո՛ւլ, բայց լսող է պետք,- ասաց Անդրանիկը,- գլխի վայր շուռ է եկել Միությունը, ամեն մեկն իր

կարկատանն է փորձում պահել:

- Այդ բոլորը ճիշտ է, բայց ի՞նչ պատասխան ունենք Գետաշենին,- մեղմացավ Թաթուլը,- մարդիկ ինչքա՞ն կարող են դիմանալ, արդեն մեզ էլ են կասկածում, իրենք իրենց էլ չեն հավատում, որովհետև ոչ պոչն է երևում, ոչ էլ գլուխը: Մի բան պիտի ձեռնարկվի, թե չէ թուրքը վաղ, թե ուշ գալու է, բերետավորներն էլ ուղեկցելու են նրանց:

Անդրանիկն ու Ֆիլարետը լռեցին, ոչ թե պատասխան ու պարզաբանումներ չունեին, այլ գիտեին, որ Թաթուլի կանխազգացումները ճիշտ են: Եվ որպեսզի նրա մոտ ավելի չխորանար իրավիճակի թանձրությը, որոշեցին մնալ, հանդիպեցին մյուս ջոկատների տղաներին, խոսեցին գյուղխորհրդի նախագահի հետ, շփվեցին բնակչության տարբեր շերտերի հետ, դարձան գետաշենյան այդ օրերի ցավի անմիջական կրողները:

Եվ ներսում և դրսում շիկացած էր մթնոլորտը: Ջոկատները գերլարված էին, գիշեր ու ցերեկ դադար չունեին, օմոնականների հայտնի ու անհայտ ձեռնարկումներին պատասխանում էին իրենց հնարամտությամբ և խիզախությամբ: Ապրիլի 24-ի գիշերը տարբեր կողմերից սկսեցին կրակել, թուրքի դիտավորություն էր՝ Եղեռնի օրն էին հիշեցնում: Դիմադրեցին, բոլոր դիրքերում ամուր էին: Կամավոր պաշտպանները, գետաշենցի զինյալ տղամարդիկ այդ գիշեր ծանր շարունակություն էին սպասում, բայց կարողացան բոլոր կետերում ցույց տալ սեփական ուժը, հետ մղել օմոնին:

Հաջորդ առավոտյան Գետաշենից անսպասելի հեռացավ կենցաղի տանն ամրակայված ներքին գործերի պահակազորը: Այդ զինյալների անսպասելի «փախուստը» հոգեբանական համաճարակի հետք թողեց: Կասկածանքն ու երկյուղը սողոսկեցին Գետաշեն: Տներում, բակերում, գյուղամիջյան հավաքատեղիներում մարդիկ քննում էին այս անակնկալ արարքը, Գետաշենը լքելու դավադրական այս քայլը ոչ միայն տանջող էր, այլև խիստ կասկածելի և կանխամտածված:

- Լքեցին, փախան, դավաճանեցին,- շտաբում հավաքվածների մոտ իր գնահատականներն էր տալիս Թաթուլը,- սպասում էին, թե Եղեռնի օրը ի՞նչ կարող են անել օմոնականները, տեսան, որ մեր դիրքերը ուժեղ են, բերետավորները գնացին, որ հեռահար կրակոցներով գնդակոծեն գյուղը:

Թաթուլն անառարկելի տոնով էր խոսում, փաստերը համոզիչ էին, և դա էր պատճառը, որ երկար չխոսեցին: Անդրանիկն ու Ֆիլարետը նույնպես այդ կարծիքին էին: Նույն երեկոյան շտաբում էին ջոկատների բոլոր հրամանատարները, գյուղխորհրդի նախագահը,

լրագրող Վարդանը, Աշոտը և Եղիշ դային, դպրոցների տնօրեններ Շմավոնն ու Միքայելը, վիրաբույժներ Սարգիսն ու Վալերիկը: Իրադարձությունների կտրուկ փոփոխության պայմաններում նրանք մշակեցին պաշտպանական մի ծրագիր, որը տվյալ պահի միակ պատասխանն էր:

Հաջորդ օրը Գետաշենի վերին դիրքերը շրջանցելով՝ մի քանի հրասայլ բարձրադիր ճանապարհով գալիս էին գյուղ: Կասկածանք չկար, որ հերթական անգամ անձնագրային ռեժիմը ստուգելու պատրվակով խորհրդային զրահամեքենաներով Գետաշեն էին մտնում օմոնականները: Սակայն տեղի ունեցավ անսպասելին. ծանր հրասայլերից մեկը սայթաքելով կախվեց ժայռից: Գրեթե երկու օր պահանջվեց, մինչև պողպատե ճոպաններով, կուտակված տեխնիկայի մեծ ուժի շնորհիվ հրասայլը դուրս բերվեց: Այդ միջադեպը մի քանի օրով խառնեց օմոնականների հաշիվները, հեռացան, կարծես լռեցին:

...Ապրիլի 29-ին Թաթուլը «Վիլիսով» որոշեց հասնել գերեզմանոցների հարևանությամբ գտնվող պաշտպանական դիրքերը: Անհանգիստ էր, երկօրյա լռությունը խաբուսիկ էր: Ղեկին նստած Մերուժը զգում էր հրամանատարի տագնապը, նա խորը շնչում էր, մեկ-մեկ ձեռքը զարկում էր երկաթյա դռանը, ապա զգաստանում, նայում էր մեկ աջ, մեկ ձախ, չէր խոսում, խռովածի պես էր, անհաշտ էր ու ինքնամփոփ:

- Կանգնի՛ր,- ֆերմաներին կից դիրքերը չհասած՝ բղավեց Թաթուլը: Նրա աչքից չէր վրիպել թշնամական ուժերի կուտակումը: Եկել, հանգիստ ու անաղմուկ պաշարել էին այդ տեղամասը:

- Վերադարձի՛ր...

Մինչև Մերուժը փորձ կաներ մեքենան դուրս բերել դարձի ճանապարհ, կրակեցին: Գնդակները շվվալով անցնում էին նրանց կողքով, հանկարծ պատռվեց «Վիլիսի» «բրեզենտե» ծածկը, գնդակներն անցան՝ փշրելով դիմապակու վերին պռունկը: Մերուժը հասցրեց դուրս գալ թշնամու տեսադաշտից, մտնել գյուղ: Թաթուլն իջավ գրասենյակի մոտ, նոր խնդիրներ էին ծագել: Մերուժին առաջադրանք տվեց հասնել հուշարձանի մերձակա դիրք, խոսել տղաների հետ: Այնտեղ նա հանդիպեց Արշոյին, Արթուրին, Տիգրանին, Հարութին (Ճուտո): Հրասայլերը դանդաղ մոտենում էին: Մերուժը Թաթուլի անունից առաջարկեց նրանց՝ հետ նահանջել, իսկ ինքն առաջացավ խրամատների ուղղությամբ, ուզում էր մոտիկից տեսնել ամեն ինչ, որպեսզի ճշգրտված ներկայացներ Թաթուլին: Մացառների միջով

նա շրջանցեց բանուկ ճանապարհը, խորացավ անտառամերձ բացատով: Ավելի առաջ գնալ չէր կարող, շրջափակել էին հարթակը, զրահամեքենաներ էին և բեռնատարներ, դրանց շուրջը վխտում էին ոչ միայն զինվորական, այլև քաղաքացիական հագուստներով տղամարդիկ. «Այս ի՞նչ են հավաքվել»,- հարցը շանթի պես հնչեց: Մերուժը հասկացավ, որ եկել են կուլ տալու Գետաշենը, իհարկե, նաև Մարտունաշենը: Կտրուկ հետ գնաց, ժամ առաջ ուզում էր գտնել Թաթուլին, ներկայացնել այս դավադիր նախապատրաստվածությունը: «Ահա թե ինչու բերետավորները լքեցին և հիմա բարեկամացել են օմոնականների հետ»: Մտքերի բազմաբնույթ քաոսը դեռ չէր հասցրել վանել իրենից, երբ գլխավերևում անգդի պես երևաց ուղղաթիռը: Նկատել էին Մերուժին, այլևս բաց չթողեցին: Նա փորձում էր խորամանկորեն թաքնվել, փախչում էր, բայց պնդաճակատ ուղղաթիռը վերևից մոտենում, կրակ էր բացում:

Մերուժը մի կերպ ձոր իջավ, ժայռերի արանքներով հասավ մինչև ֆերմաների տարածք և այստեղ հայտնվեց կարմիր բերետավորների ճանկերում: Ո՛չ մի պատճառաբանություն չանցավ, նրանցից մեկ-երկուսը Գետաշենի պահակազորից էին, ճանաչեցին Մերուժին, ասացին, որ այն վտանգավոր ֆիդայու՝ Թաթուլի վարորդն է, և կես ժամ անց նրան հանձնեցին օմոնականներին:

...Այդ գիշերը գյուղի աննկուն պաշտպանները ստիպված էին ահռելի ուժի կուտակումների ճնշման տակ ետ նահանջել, մերձենալ գյուղի անմիջական սահմաններին: Թաթուլը «Կամա-2»-ի միջոցով մի փորձ էլ կատարեց ստեղծված վիճակի մասին տեղյակ պահել Երևանին, սակայն նույն պատասխանը ստացավ՝ փորձում ենք միջամտել, Միության ղեկավարության միջոցով կանխել սադրանքները: Թաթուլին չբավարարող պատասխան էր դա, որի իսկությունը այդպես էլ ի հայտ չեկավ: Բարդ ժամանակները Թաթուլին ավելի հեռատես էին դարձրել, թեև երիտասարդ, բայց նա այնքան նրբորեն էր գնահատում իրավիճակը, բախումների օրն ու ժամը: Շնորհակալ էր, որ Անդրանիկ Մարգարյանն ու Ֆիլարետ Բերիկյանն այստեղ էին, գոնե նրանք հոժարակամ մնացին և ակամայից դարձան գետաշենյան ճգնաժամի վկաներ:

Թաթուլն ամբողջ գիշեր գյուղի թաղամասերում էր: Մերուժը չկար, տղաները ասացին, որ նրան գերել էր օմոնը: Ընկերոջ ճակատագրով մտահոգված՝ Թաթուլը հանգստացրեց Օֆելյային՝ Մերուժի տիկնոջը՝ համոզված, որ նա կվերադառնա:

Գյուղը խավարի մեջ էր, էլեկտրականությունը վաղուց կտրել էին,

խմելու ջուրը՝ նույնպես: Թաթուլը Սմբատի հետ երկար ճանապարհ անցավ, ամեն տան առաջ նրան ջերմ էին ընդունում, փորձում մի բանով հյուրասիրել, հարցնում էին, անհանգիստ ու վախեցած էին: Թաթուլի խոսքերը նույն հանդարտությամբ էին հնչում, նա իրեն չէր մատնում, հասկանում էր այս մարդկանց, նրանց իրական երկյուղը՝ երեխաների կյանքը փրկելու, արդարությունը վերջապես տեսնելու նկատառումով:

Սմբատին առաջարկեց, որ գնա հանգստանալու, ինքը շուտով կգա: Երբ բաժանվեցին, հիշեցրեց, որ Լենայից վերցնի ռադիոհեռագրերը, եթե այդպիսիք կան:

Գարնան երեկոն որքան նուրբ ու աստղազարդ էր, նույնքան արցունքահամ էին ամպերը: Ճերմակի մեջ շշուկված ծառերը նորի սկիզբն էին հոլովում, աննշան քամին մսխում էր անդրդվելի լռության գավաթը, որն այսօր Գետաշենի բաժինն էր: Թաթուլը չգիտեր՝ ո՞ր կողմը գնար, ամեն տեղ ծանոթ ձայներ էին, հույսի թափանցիկ կանչեր: Կանգնեց Քուրակի ափին, այն կողմ՝ ստվերների մեջ, դպրոցի շենքն էր՝ նման հնավանդ բերդի, քիչ հեռու՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին, գմբեթին Աստծո թևերին ձգվող խաչն էր, ներսում՝ հազարահունչ աղոթքների աղավնապարսը, հառաչքը սիգացոլք մոմերի: Թաթուլը զարմանալի կարեկցանքով նայում էր շուրջը, որքա՜ն օր ու ժամ էր զոհաբերել, որ այս մոլագար լռությունը չմոտենար, և անհասկանալի ու անհասցե այս գիշերը տիրակալ չնստեր Գետաշենի ուսերին, որքա՜ն հույզ ու համոզմունք էր խաչել իրար, ձայն ու օրոր էր դաշնել, որ մեղեդայինը այսպիսի մորմոքի չվերածվեր. որքա՜ն հարազատի սիրտ էր մաշել, իր բացակայությամբ մազեր էին ճերմակել, կարոտի ինչպիսի քարավաններ էին զոհաբերվել այդ ինը ամիսներին... Քուրակի ափին Թաթուլն իրեն հայտնի դրվագները, թախիծն ու կարոտը շարում էր խանդաղատանքով, գուրգուրում, բայց արածի համար չէր ափսոսում: Գետաշենյան իր օրերը նա օծում էր երկրպագության խասով, որ ժամանակի հեռվում սարքովի անձրևների տակ հանկարծ չժանգոտվեն: Այս մտորումներով նա ունկնդիր էր հառաչուն գետակին, որը գալիս էր սարերի գարնանային սարսուռներով, լցվում Գետաշենի վշտի հնձանները՝ ազդարարելով հորձանք, անորոշություն և հեղեղ: Թաթուլը հասկանում էր գիշերվա բազմաշերտ խորհուրդը, ինքն այդ ցնորական ընթացքի տերն էր, աստղ-երկնքի գիշերային թարգմանը: Իսկ տեղ-տեղ՝ մութ ապակիներից այն կողմ, վառվող մոմերի նվաղուն թրթռոցները նրան հուշում էին, որ իր հետ էլի անքուն

մարդիկ կան: Քայլեց այդ լույսերից մեկի ուղղությամբ, որն ավելի առկայծուն էր: Իր առջև հիվանդանոցն էր, բակում թնկթնկում էր փոքրիկ շարժակայանը, ընդամենը մեկ լամպի լույսի տակ Սարգիսն ու Վալերիկը վիրահատություն էին կատարում: Մյուս լամպը ծննդատանն էր, բժշկուհի Սիլվան մաքառում էր նորածին մանկան կյանքի համար: Թաթուլը քիչ առաջվա փխրուն խոհերից արագորեն վերագտավ իրեն: Այստեղ կյանքի ու մահվան ճակատամարտ էր, այստեղ ժամանակ չունեին զգայական մտորումների կամ քննելու օրերի մաղձոտ վարքը:

Այդ գիշեր Գետաշենի ծննդատունը ընդունեց իր նոր բնակչին: Հայրը ասաց՝ անունը Վրեժ եմ դնելու: Թաթուլը շնորհավորեց նրան և ժպտալով խոսեց.

- Նորածինն ի՞նչ մեղք ունի այս ժամանակների դժգույն եղանակի համար: Անուններով պետք չէ դասեր տալ, որն ամբողջ կյանքում նա իր վրա պիտի կրի, փոխանցի՛ր նրան հորդ կամ պապիդ անունը:

Ասաց ու գուրս գնաց: Վիրաբույժ Սարգիսը փակեց նրա ճանապարհը:

- Մնա՛ այստեղ, շատ ուշ է, Չիլինգարյանների թաղամասն այդքան մոտ չէ:

- Այդ հեռավորությունը ոտքով անցնելիս մոտ ու հարազատ հազար բան եմ գտնում,- մեղմ ժպտաց նա,- այսօր թույլ տվեք գիշերվա իմ պարտքերը փակեմ, մանավանդ շուրջբոլոր լցվել են, խառն է ամեն ինչ, երևի ինձ էլ սպասում են շտաբում:

- Ես կուղեկցեմ,- անկեղծորեն ու պատրաստակամ իր ցանկությունը հայտնեց նորածնի հայրը:

Թաթուլը մերժեց, այս տրամադրությամբ իր ճանապարհը միայն ինքը պետք է անցներ, ուշ ժամն ու տիրաբար իջած գիշերը նրա որոշումն անկարող էին շղթայել:

Ձեռքն ակամայից տարավ ծոցագրպանը: Մի պահ զգաստացավ, ծոցատետրը չկար: Վերջին օրերին գրած բանաստեղծությունները պահում էր իր մոտ: Սակայն նույն պահին էլ հիշեց, որ մի քանի օր առաջ այն հանձնել էր Բենիկ Սիսյանին և նրան համոզելով մի կերպ հետ էր ուղարկել Երևան: Իրականում այդ դժվարին պահին նա չէր ուզում թողնել ծննդավայրը, բայց Թաթուլը խնդրեց, որ նա գնա և հայրենակցական միության միջոցով օգնության հնարքներ գտնի: Համաձայնեց, գնաց:

...Շտաբի վերին պատուհանից պլպլում էր նավթավառը: Խավարի մեջ անծանոթին կթվար այս դղյակը ծառայում է որպես փարոս և

կարծես իր վրա էր բևեռել նավաբեկյալների ուշադրությունը: Թաթուլը չշտապեց ներս մտնել, անսովոր հուզված էր, դրանից երևի փափկացել էր սիրտը, բայց տոկում էր գիշերվա լռությանը բախվելիս: Նկատեց, որ դարավանդի վրա աստղեր չէին, ավելանում էին լուսարձակները, թրատում խավարը, կողոպտում աստղերի անդորրը:

Թաթուլը զգում էր օտարական փոթորկի այցը, բայց իրեն չէր լքում գյուղի մռնչյունը: Հիշեց՝ երեկոներին այսպես բարձրանում էին իրենց տան տափակ տանիքին: Եղբայրների հետ նստում էին վերջին պատաքարերին, ոտքերը ցած կախած՝ հայտնություն որոնողի աչքերով նայում էին Արտին սարին: Երբեմն լուսնի մահիկը նստում էր նրա կատարին, լուսավորում քերծեր, լանջ ու բարձունք, և իրենք գծագրում էին լեռան գիշերաքարտեզը: Պատանեկան օրերի այդ պատկերը Թաթուլը երբեք չէր մոռանում: Հիմա դարձյալ գետաշենյան տխրուն գիշերվա առաջնորդությամբ մտքերը հասան Արեգ, աչքերը փակեց, որ երևակայականը ներծծվեր հոգու խորքերը, վերագտներ հարազատ դեմքեր, սիրասուն մարդկանց: Այսօր ուրիշ կարոտով նա կարկատեց հոգու վարագույրը, որ խորքերում թաքցներ ցավի իր ալիքը, որ խիղճը զայրույթից չճաքեր, և ինքը ազնիվ իրավունքով ներկայանար բոլոր նրանց, ովքեր քար չգցեցին Գետաշեն տանող ճանապարհներին, ովքեր հույսի կրակ վառեցին, բորբոքեցին հայրենին պաշտելու ջահը:

Չիլինգարյանների հնաբույր պատին հենված՝ Թաթուլը հիշեց նաև առաջին օրը, երբ կուսակից ընկերոջ՝ Հրայրի հետ հայտնվեցին այստեղ: Նա մայրական պապի այս դղյակը հանձնեց պաշտպան տղաներին, հավատաց իրեն, Արթուրին, Հրաչին, Վահանին, բոլոր-բոլորին: Թաթուլը հիմա կանգնած էր հավատամքի այդ տեսակի առջև, ծանրութեթև էր անում գյուղի ճակատագրի գիշերը, գիտեր, որ ոհմակը մոտեցել է, հասկանում էր լարվածության գինը: Փորձեց հեռանալ տպավորված հուշերից, բայց հավատարիմ մնաց օրվա բաբախումներին, որոնք իր ներսում տեղ ու դիրք էին փնտրում, չէին լքել, եկել էին բոլոր կողմերից, պաշարել... Երբեք նա այսքան խորքերով չէր «վարել» հոգու արտերը, շուռ չէր տվել պատկեր-պատմություններ, հայացքը այսքան սևեռուն չէր ուղղել ներսը: Բայց հուզական խառնվածքի և լիրիկական հոգու տեր պատմաբանը ինքնատիրապետում ուներ, կարողանում էր վերադառնալ սիրառատ ու սրտամոտ պատկերներից, վերափոխվել, առնականանալ՝ սրտի ծոցերում պահելով Ասպրամիկի շողընծա աչքերը, Սեդա մայրիկի լուռ մրմունջների ասքը, քրոջ՝ Ռուզաննայի

անթաքույց ցավը, ափսոսանքը, հիացումը:

...Ներս գնաց, հոգնել էր, կորուսյալ տրամադրությունը, այնուամենայնիվ, բզկտել էր նրան: Լամպի լույսի տակ նստած էին Սմբատը, եղբայրներ Արշոն ու Մասիսը, նրանց կողքին Լենան և նրա ամուսինը՝ Հրանտը:

- Քնած չե՞ք, ի՞նչ լուր կա Լենա մայրի՛կ:

- Ո՛չ դրսից լուր կա, ո՛չ էլ քեզնից, սրտաճաք եղանք,- անհանգստացավ Լենան:

- Զրուցում էինք, հարցեր կային,- ասաց Թաթուլը և հոգնած մեկնվեց բազկաթոռին:

- Այս ժամին ո՞ւմ հետ,- հետաքրքրվեց Արշոն:

- Գետաշենի հետ, եղբա՛յր, խավարում անգամ զգում ես նրա անեզրական խորհուրդը, պապենական ձայներ կան, որ պիտի հնձես գիշերվա տխուր արտերից,- նկատելի հուզված էր Թաթուլը, բայց միանգամից փոխվեց,- Մերուժից լուր չկա՞:

- Առայժմ ոչ մի նորություն,- պատասխանեց Մասիսը:

- Զարմանում եմ, որ նա չկարողացավ շրջանցել բերետավորներին,- ձեռքը սեղանին խփեց Թաթուլը, ապա դարձավ Արշոյին,- դիրքերում ինչպե՞ս է վիճակը, տղաների հետ կապ կա՞:

- Մեկ ժամ առաջ ենք եկել շրջայցից,- ասաց նա,- հետ են քաշվել, օղակը վերևներում նեղացնում են:

- Պատրաստվե՛ք, պիտի գնանք, տղաները երևի մեզ են սպասում:

Սմբատն առարկեց, նույնը պնդեց Լենան, բայց Թաթուլն անդրդվելի էր, մտավ ննջասենյակ, ինքնաձիգը ուսից կախած՝ դուրս եկավ: Մնացածը պարզ էր, տղաները հետևեցին նրան:

* * *

Ապրիլի 30-ի լուսաբացը, կարծես, արևելքից չէր, ուրիշ, անհայտ մոլորակից իջած արնաշաղախ աղոթարան էր: Ամպ ու երկինք տրորվել էին գիշերվա հնձանում, մարած էր ճառագայթի շեփորը, շողի սափորը փշրվել էր Գետաշենի մայրագիրգ բարձունքներին. եկել ու անգղերի պես մռութները ցցած՝ շարվել էին հրասայլերը: Գյուղ մտնող ոչ մի ճամփա ու արահետ, կածան ու փոշոտ ոտնուղի ազատ չէին թողել: Խորհրդային բանակի զինյալներն էին, նրանց կրնկակոխ շարված էին հրացանակիր օմոնականները, իսկ թիկունքում թալանչի խուժանն էր: Եկել էին Խանլարից, ադրբեջանական տարբեր գյուղերից, հավաքվել էին ձիերով, ձիասայլերով, սեփական մեքենաներով, բեռնատար կամազներով կամ հենց այնպես՝

ուսերին պարկեր, ծալծլված պարաններ: Անծանոթ մարդը, թեկուզ այլմոլորակային, կզգար, կհասկանար, որ սրտի չափ մեղմ ու բաբախուն այս գյուղը շրջապատված էր օձաբարո ու բիրտ ոհմակով: Հրասայլերի շարժիչները ոռնում էին մահագույժ սարսուռներով, ուղղաթիռների երամը աջ ու ձախից պտտվում էր գյուղի տանիքներից վերև, գվվում էին ինքնաձիգներից արձակված գնդակները, մեծ տրամաչափի գնդացիրներն ու հրանոթները թրատում էին կիրճերի կանաչ զառիթափները: Այս ի՜նչ էր կատարվել աշխարհում, որ այսպես շտապել էին, մոտիկից այնպես դիրքավորվել, որ մի անզգույշ շարժումով կարող էին փլվել գյուղի գլխին:

Գետաշենը սահմռկել էր, մարդիկ նայում էին այնքան հարազատ բարձունք-անտառափեշերին, ուր հիմա մի ուրիշ շանթ էր զարկել: Ճակատագրի և դառնահամ իրականության ահեղ դատաստան էր, անհույս ճիչերի բզկտուն մարմինները երկնքի ու երկրի միջև ծվարած, դեռ սպասում էին փրկության: Օր-առավոտվա Աստվածը հեռացել էր նրանցից, արյունաման ապրիլի խռովքը դարավերջին դարձյալ փակել էր ամենակարողի աչքերը, երկինքն անգամ ամաչում էր, թե այս ի՞նչ են անում յուրային կոչվածները: Հենց նրանց շպարված դրդմամբ՝ զենք ու տապարով, ընչաքաղց ու գազանատենդ կրքերով եկել շարվել էին արյան ծարավի, թալանչության ձիրքերով վարժված ազերի ավազակային խմբերը:

Գետաշենը հուսալքված էր: Պարզ երևում էր, որ սա մեկ օրվա նախապատրաստություն չէր: Տակավին մեկ շաբաթ առաջ միջնորդ-պաշտպանները՝ խորհրդային տեղապահները հեռացել էին Գետաշենից՝ չասելով ոչինչ: Հեռացել էին, որ հիմա դարավանդներից հանգիստ ու ազատ կրակեին, փորձեին սարսափի ներգործությամբ վախեցնել, սպառնալ: Եվ դա արվում էր ծրագրված, անսխալական՝ գործողության մեջ դնելով տասնյակ հրասայլ, ուղղաթիռներ, այլ զենք ու զրահ: Գյուղի միամիտ հատակից պարզորոշ երևում էր զրահամեքենաների տեղաշարժը, հասկանալի էին դառնում դժոխքի մի սկիզբ, ինչ-որ բանի վերջ, պռճոկել էին գարնան թևերը, կանաչը սևին էր խառնված, արևի սլացքը փշրված էր Գետաշենի ուսերին: Տագնապը հույսի դուռ էր զարկում, ծվատում ներս ու դրսից, բայց փակ էին դռները:

Գետաշենը պաշարված էր...

Թաթուլը նախադիրքերում, գյուղամերձ հարթակից դիտում էր իր համար շատ սպասելի այս տեսարանը՝ մատները բռունցքված, աչքերում անշիջելի կրակ, սիրտը զարկում էր խռովյալ: Նա ինչ-

որ բանի վերջն էր տեսնում, բայց հավատը չէր կորցրել, մտածում էր մի ելք փնտրել, որ այս խուժանը սանձարձակ չխուժեր գյուղ: Թաքուլը պատկերացնում էր, թե ինչ է լինելու, կրճտացնում էր ատամները, նայում վեր ու վար, ուղղաթիռների ցաք ու ցրիվ պտույտները, ստեպ-ստեպ արձակվող հրանոթային կրակոցները բզկտում էին նրա սիրտը, ծանր մամլակի պես ճզմում շրջապատող սար ու ձոր, ամպ ու երկինք: Տղաների մի խումբ այստեղ էր, մյուս ջոկատները հետ էին քաշվել, իջել դեպի գյուղ՝ բարձունքները թողած խորհրդային կանոնավոր բանակի միավորումներին, օմոնին... «Կամա-2»-ը շշնջում էր «SOS», Լենան հասցրել էր հաղորդել իրավիճակի մասին, բայց պատասխանները կցկտուր էին ու քիչ բան ասող: Թաքուլն այսօրվա պատկերը ամենայն լրջությամբ ներկայացրել էր իրավասուներին, նրանց, ովքեր բավարարվեցին միմիայն հայտարարությամբ՝ ուղղված Միության ղեկավարությանը՝ Գետաշենը թողնելով բախտի քմահաճույքին: «Գուցե ավելին չե՞ն կարող անել, ո՞ւմ մեղադրես, երբ ողջ Հայաստանն է պաշարված, երբ տնքում է Արցախը, բայց թե ամեն ինչին պատասխան ու փրկության դուռ կա...»: Թաքուլը չէր հանգստանում, ավելին՝ չէր համակերպվում, գրոհող հարցերի դիմաց ելք էր փնտրում:

Այնուամենայնիվ, նրան թվում էր, որ բախտը երես էր թեքել, որովհետև փշոտ էր նրա այն տեսակը, որը բաժին էր դարձել Գետաշենին: Այդ բախտ կոչվածի փրկությունը պետք է գար արժանապատվության հրամանից, ափսոսանքի զգայուն խորքերից, հնի ու ազգայինի, քրիստոնյա սրբությունների նշան-նշխարների, վանք ու մատուռների, գիր ու խաչքարերի հանդեպ դրսևորած պետական վերաբերմունքով: Չէ՞ որ պաշարվածները միշտ էլ կրկնապատիկ սխրանքների են պատրաստ. նրանց միավորումը հառնում է ոգու գերխնդիր պահանջներից: Իսկ այդ խոստովանանք-երդումը միայն Գետաշենի ու Մարտունաշենի խնդիրը չէր, այլ բոլոր նրանց, ովքեր ստանձնել էին համաժողովրդական ճակատագրի տերը լինելու առաքելությունը: Համենայնդեպս, Գետաշենը զգում էր դրա մեծ պակասը, ամիսներ շարունակ այս եզերքների կանչը՝ գրավոր ու բանավոր, «Կամա-2»-ից հնչած Թաքուլի հորդոր կոչերը հասնում էին ում որ հարկն է, բայց նրանք այդպես էլ չկարողացան կամուրջ գտնել դժգույն վերևների հետ, որոնց գիտությամբ Գետաշենի ու Մարտունաշենի վրա ուղղվել էին հրանոթների փողերը: Եվ հիմա գարնան այս առավոտից ի՞նչ ակնկալիք պետք է ունենար Գետաշենը, երբ բազմաշերտ շարվել էին զինատեսակները: Անխնա էին դարձել

իրենց դեմքերը կանաչ ու սև գույներով ներկած շեկ զինվորները: Նրանց ոտքերի տակ օրը մաղձոտ էր, միգամած փոշի էր թափվում գոգահովտում, երկնքից կանաչ ու սև կասկածանք էր ծործորում, ծերացած էր սպասումը, տագնապների տանջող ջիղը հեկեկանքի անխորհուրդ տենդով ձգված էր գյուղի փողոցներում ու բակերում, տները նման էին այն լուռ փեթակներին, որոնք, պատսպարված խաբուսիկ զրահով, փոթորկի են սպասում:

Այն թանկ ու շեն Գետաշենը, որն աղոթադուռ էր անցյալին, սրբությունների բազմաշերտ ծոցերում հնաբույր ասքերի վավերացում էր խորհրդանշում, գարնան այս լուսաբացին հեռացել, սուզվել էր իր խորքերը: Նա այլևս հավատ չուներ այս վերջին դարի ու դարավերջի ազնվությանը, այն գաղափարին, որը միշտ հնչել էր բոլոր տներում, դպրոցում, կյանքում և հոգիներում այնքա՜ն միամիտ: Գետաշենցին, իբրև հավատարմության սուրբ նշան, գյուղի բարձունքին կերտել էր Հայրենականում զոհված համագյուղացի 800 քաջերի հուշարձանը և ի՞նչ իմանար, որ հրացանավոր, թնդանոթաձիգ բերետավոր զինյալները կդիրքավորվեն սրբազան կոթողի բարձրադիր քարերի թիկունքում և անվրեպ կրակոցներով այնտեղից կփշրեն գետաշենցու հավատի վերջին բեկորը:

...«Երևի հետո պիտի շատ զարմանան նրանք, ովքեր սրբությունը կջանան ջոկջոկել դավաճանությունից, երևի Գետաշենի ծանր ճակատագրի այս առավոտը կնժարեն պատմաբան-ուսումնասիրողները, կբացեն երկաթյա վարագույրը, որի թիկունքում խիղճը կախաղան հանվեց, և բարությունը անազնիվ ճակատամարտերում զոհ դարձավ...»: Թաթուլը խորը շունչ քաշեց, մտքերի և իրադրության բախումից այսպես դառնահամ խոսեց ինքն իր հետ, բռնեց Արթուրի ձեռքը: Նրանք խորը և թափանցող ջերմությամբ ձուլվեցին, կարծես, հենց նոր ճանաչեցին իրար:

- Այսպիսի բաներ, եղբա՛յր,- ասաց Թաթուլը և խրոխտ հայացքով նայեց պաշարված բարձունքներին:

- Անսպասելի չէր, բայց նման բացահայտ դավադրություն, ազերիների ջրաղացին ջուր լցնելու այսպիսի մոլեռանդ բծախնդրություն, այնուամենայնիվ, շատ զարմացնող են,- մտահոգված խոսեց Արթուրը:

- Զարմանալու ոչինչ չկա,- ավելացրեց Թաթուլը,- ռուս սպայի հետ իմ վերջին զրույցի ժամանակ նա այս անպատկառությունը գրեթե չթաքցրեց: Զարմանալին մերոնց անտաբերությունն է, գուցե իրոք անուժ գտնվեցին, գուցե նրանց ձայնը խլացավ Կրեմլի

պատերի մեջ: Հիմա, կարծում եմ, մենք այլևս ժամանակ չունենք մեղադրելու այս կամ այն կողմին, գյուղի բնակչությունը ափեափ տագնապի սելավի մեջ է, ելք է փնտրում, մենք նրանց կողքին ենք եղել, մեզ հավատացել են, այդ հավատին դասալիք չպիտի լինենք:

- Այո՛, այո՛, դու ճիշտ ես,- անթաքույց հառաչեց Արթուրը:

- Հավաքի՛ր տղաներին, բաժանի՛ր բոլոր զենքերը, հենց այնպես չի վերջանա այս ամենը,- հրամանի պես հնչեց Թաթուլի խոսքերը:

Առաջին վիրավորների մասին լուր բերեցին Թաթուլին: Հիվանդանոցում Սարգիսն ու Վալերին շնչելու ժամանակ չունեին, վիրահատության սեղանին Մարտիրոսն էր, այստեղ էին հավաքվել նաև սրտից հիվանդները, ծերեր, հղի կանայք: Ամեն մեկը, վերջին հույսին կառչած, հոգով Աստծո հետ էր: Գյուղի տարբեր կողմերում դարիվերից լսվող մեծ տրամաչափի գնդացիրների կրակոցից հետո ճիչ ու վայնասուն էին բարձրանում, լաց ու հառաչանքների արձագանքները բզկտում էին շրջապատը:

Թաթուլին ու Արթուրին մոտեցան Անդրանիկ Մարգարյանն ու Ֆիլարետ Բերիկյանը, որոնք ապրիլի 11-ից Գետաշենում էին: Նրանք այդ օրերին ծանր հանդիպումներ էին ունեցել գետաշենցիների հետ, ցանկացած հարցի շուրջ կիսվում էին Թաթուլի հետ, իրենց օգտակար կարծիքն ու առաջարկությունն ունեին: Առաջին օրվանից նրանք ապրում էին Լենայի բնակարանում: Այսօր էլ նրանք Թաթուլի հետ կարճ զրուցեցին, պահի գնահատականը նույնն էր, պետք էր ամեն ինչ անել, խաղաղ բնակչությանը, երեխաներին պաշտպանել: Հայտնվեցին Հրաչն ու Վահանը, ասացին, որ առավել ծանր վիճակում է Մարտունաշենը, կարմիր բերետավորները գրոհով արդեն մտել էին այնտեղ:

- Ահա և նույնի կրկնությունը,- ասաց Թաթուլը, հայացքով ցույց տվեց հրասայլերի տեղաշարժը գյուղ մտնող ճամփաներին: Դրանց հետևեցին ուղղաթիռների աղմկոտ պտույտները՝ արդեն շատ մոտիկ՝ գրեթե քսվելով տանիքներին: Տարբեր տրամաչափի զենքերից ուղիղ նշանառությամբ և անընդմեջ գնդակոծվում էր Գետաշենը: Ծուխն ու բոցը, աղմուկն ու աղաղակները դարսեդարս տարածվեցին, միտքն ու զգացումը սառցակալեցին, ցավի ունայն շոգ էր, օրհասի անտանելի դիմագիծը մի քանի րոպեում կնճռոտեց այն ամենը, ինչը տեսանելի էր՝ դիրք ու սահման, հույս ու նպատակ ուներ:

- Դիրքավորվե՛ք,- հռնդաց Թաթուլը,- սրանց անպատասխան թողնել չի կարելի, և առաջինն ինքը կրակեց ուղղաթիռի ուղղությամբ: Գյուղի տարբեր կողմերից տղաները մտան կռվի մեջ:

Հրասայլերը բոլոր կողմերից ներխուժեցին: Սարսափած երեխաները վախի բնազդով տարբեր կողմերից եկել, հավաքվել էին դպրոցի պատերի տակ, դասարաններում, նաև տարբեր տների բակերում, ներքնահարկերում: Բոլորը զգացին ինչ-որ բանի վերջը: Գյուղի մարդիկ խուճապի մեջ էին, բայց հավասարակշռությունը չէին կորցրել: Նրանք սրտապնդվեցին, երբ զինյալ տղաները պատասխան կրակ բաց արին, դիրքավորվեցին բոլոր կողմերում: Դպրոցի բակում ահավոր ճիչ բարձրացավ, Թաթուլը նայեց Արթուրին, նա ճարպկորեն գնաց, դուրս եկավ մեկ-երկու ոլորանից և հայտնվեց այնտեղ: Երեխաներից մեկը ուշագնաց էր, սարսափած էին մյուսները: Այստեղ էին ուսուցչուհիներ Ժաննան և Քնարիկը, նրանք սարսափած և անելանելի վիճակում էին: Արթուրը ուշքի բերեց փոքրիկին, դարձավ, ուղիղ նայեց մյուսներին: Նրանց աչքերում վախի փշրված փայլն էր: Արթուրը փորձեց հուսադրող խոսքեր ասել, նրան միացան մի քանի ուսուցիչ, որ չէին լքել իրենց աշակերտներին: Արթուրը շարքերի մեջ տեսավ նրան, նույն երկնագույնի մեջ էր, բայց խեղճ աղջիկը հեկեկում էր՝ թևի տակ պահած երկու փոքրիկների: Մոտեցավ, ափսոսանքի կորուսյալ հայացքով նայեց նրան:

- Ամեն ինչ լավ կլինի, դիմացի՛ր,- ասաց Արթուրը, թվաց՝ աննշան ժպիտ կարդաց նրա հայացքի փխրուն հատակում, ապա նայեց բոլորին,- սրտապնդվե՛ք, դուք քաջերի սերունդ եք, սրա վերջն էլ կգա,- ասաց ու զարմանալի արագությամբ սուրաց դեպի գյուղի կենտրոն: Աղջիկն արցունքները խեղդեց, սրտի շշուկները միացան անվարժ աղոթքներին, և նա մի երկու բառով փշրեց հոգու ալեկոծը՝ Աստված քեզ հետ, Արթո՛ւր...

Թաթուլը տարբեր կողմերից լուրեր էր ստանում, գիտեր առաջին զոհերի մասին: Մեռածներին թաղում էին իրենց բակերում, շիրմատան ճամփան փակ էր: Նա ճանաչում էր Արամայիս Ավագյանին՝ Լենայի ամուսնու եղբորը, որին մեկ ժամ առաջ հենց իր տան դիմաց էին հողին հանձնել: Այս ծանր լուրերից հետո Թաթուլն այնքան մոտիկից էր զգում խորտակվող նավի շառաչը: Սա արդեն անձնագրային ռեժիմի ստուգման կեղծ պատրվակը չէր: Օրվա ապականված դեմքը սպանիչ քրքիջով ծամածռել էր գարնան ապրիլը, գալիս էր վերք ու ողբով, իր ճանապարհին ոտնատակ էր տալիս այս գյուղի բազմաշնորհ դարերը: Կորուստը կերպավորվում էր իջնող հռնդյունների նախաբանով: Հրասայլերի թրթուրների տակ տրորվում էին լանջը, ծաղկանոցները, ապարանք թվացող եզրային տները, ապա խրվելով թույլ ցանկապատերի կոկորդը՝ այն շուռ էին տալիս բակերում

շվարած ծառ ու թփերին, այնուհետև քսվելով պատերին, խառնելով թումբ ու առու, փողոց ու էլեկտրասյուն՝ վայրագ ու խելահեղ խոյանում էին տեղ-տեղ խմբված մարդկանց վրա: Օմոնականները իջել էին նրանց թիկունքից, հետևում խուժանն էր սպասում, ո՞վ գիտի, թե նրանց մտքում թալանի որ տեսակն էր, ի՞նչն էր ավելի լուսավորել նրանց բորոտ հոգիները: Թաթուլը միշտ էլ կանխազգում էր, որ գալու է դավադրության օրը, բայց այսպես կտրուկ, ամենավերին պետություն կոչվածի այս տեսակ սցենարով չէր սպասում: Եվ հիմա նա զգում էր, որ մտքերի բորբոքուն համադրությամբ գործին չէր օգնի: «Ձենքով պիտի հակադրվել՝ շատից շատ, քչից քիչ...»: Խուռն ու խառը ձայներից ակնթարթորեն հեռացավ, աջ ու ձախ դիրքավորված տղաներին հասկացրեց, որ զարկին զարկով պատասխանեն:

- Մեր դիմադրությունը կարմիր բերետավորներին և օմոնին, անշուշտ, կգազազեցնեն, բայց հենց այնպես հո դիտո՞րդ չենք այստեղ:

Թաթուլի կանչը անցավ բերնեբերան, խփեցին տարբեր կողմերից, օմոնականները, խուճապի մատնված, նահանջեցին դեպի պարիսպները, առաջապահ խորհրդային զինյալները պատսպարվեցին հրասայլերի թիկունքում, զրահամեքենաների մեջ: Կրակոցները մի պահ դադարեցին, փոխարենը գյուղի տարբեր կողմերից լսվող աղերսագին ձայներն էին գալիս: Հրաչը Թաթուլի մոտ էր, Վահանը գնացել էր իր ջոկատի զբաղեցրած թևը կարգավորելու: Արթուրն աննկատելի իջավ Քուրակի ափով, ուզում էր իմանալ ի՞նչ է կատարվում կողքի թաղամասերում: Այնտեղ Տիգրանը, Սմբատն ու Մակիչն էին՝ գետաշենցի հրացանակիր տղաների հետ:

Այս ամենը Լենայի աչքերի առաջ էր, նրա տան դիմաց, մոտ ու հեռու: Նա մոտեցավ «Կամա 2»-ին: Այստեղ էին Անդրանիկ Մարգարյանն ու Ֆիլարետ Բերիկյանը: Առաջին փորձով չմիացավ, չարչարվեց մի քանի րոպե, ապա ստացվեց կապը: Այնտեղ մանրամասներ էին հարցնում՝ ի՞նչ կա չկա... Լենան ընդամենը քառորդ ժամ առաջ էր ներկայացրել այդ «ի՞նչ կա չկայի» սոսկալի տեսարանների մանրամասները, սակայն հերթապահ խոսքով այս անգամ էլ նույն հարցը հնչեց: Լենան կապտեց, նայեց Անդրանիկին ու Ֆիլարետին, նրանք նույնպես կապի մեջ մտան, հավատ ունեին, որ Հայաստանում մի բան կձեռնարկեն, կդիմեն Միության ղեկավարությանը, պաշտպանության նախարարին, որ սաստվի Գետաշենի խաղաղ բնակչության կոտորածը:

- Տանկերը, հրանոթները, կարմիր բերետավորներն ու օմոնը ներխուժել են գյուղի փողոցները, ամեն տեղ կրակոց է, զոհեր կան, եթե կարող եք միջամտել, մի՛ հապաղեք, հիմա մեկ վայրկյանը տասնյակ մարդկանց կյանք է խլում:

Այնտեղ լռեցին, կապը խզվեց: Անդրանիկ Մարգարյանը հուսադրեց Լենային, դուրս եկան, շրջապատում արդեն ուրիշ տեսարան էր: Գյուղը պատված էր ճերմակ ծխով, ուղղաթիռները կտրուկ վեր ու վար էին անում, մոտ հարյուր հրասայլ շարվել էր գյուղի կենտրոնական փողոցում, գրասենյակի մոտ, դպրոցի բակում: Ամենուրեք օրորվում էին կարմիր բերետները, օմոնը՝ նրանց կպած: Զարմանալիորեն ոչ մի կողմից չէին կրակում, սատանայական դադար էր, կարծես սպասում էին ինչ-որ մեկի: Այդ ընթացքում գյուղի մյուս մասում՝ ոչ այնքան հեռու, օմոնականները, մոտ 30 գետաշենցիների զենքի առաջ գցած, տանում էին գյուղից դուրս: Տիգրանն ու Արթուրը թաքստոցից կրակեցին, օմոնականները ցաք ու ցրիվ փախան, չհասցրին կրակել, բայց գերիները մեկ վայրկյանում չքացան տների հետևում: Արթուրը տղաներին թողեց, ու ինքը շտապեց գյուղի կենտրոն:

Լրագրող Վարդանը՝ այդ անվեհեր ու խիզախ մտավորականը, իր նախաձեռնությամբ փորձեց բանակցության գնալ, պարզել սրա վերջը, իրենց ուզածը: Սպառնացին կալանքի վերցնել և զարմացան, որ այս պահին ինչ-որ մեկը փորձում է եռացող կաթսան խաղաղեցնել, ասացին՝ ժամանակին զգուշացնում էինք հեռանալ, չլսեցիք, դե հիմա ստացեք: Ռուս սպայի խոսքը, օմոնականների հռհռոցը ծակեցին Վարդանի սիրտը: Նա այնքան զղջաց իր ապրած տարիների համար, որ ծառայել է բարբարոսությունը թաքցրած մի գաղափարախոսության, որ կարող էր այսպես նենգափոխվել, փուլ գալ, հարմարվել:

...Խանլարի կողմից Գետաշեն իջնող ճանապարհով շտապող զրահամեքենան, ոլորաններից դուրս նետվելով, մտավ գյուղ, հրասայլերի շարասյուներն անցավ և կտրուկ կանգնեց: Այդ տեսարանը Թաթուլի աչքերի առջև էր, նրա կողքին Հրաչն էր: Մյուս տղաները հետ քաշված դիրքերում էին՝ գյուղի այն տեղամասերում, որտեղ ահաբեկված էին բնակիչները: Թաթուլը սարսափում էր մի բանից, բայց հույս ուներ, որ միջնորդ զինյալները թույլ չեն տա, որ խաղաղ բնակիչների հետ տեղի ունենա անկարելին, արյան ծարավ օմոնը և հետապնդող խուժանը, օգտվելով իրավիճակից, հանկարծ չդիմեն ծայրահեղության, հաշվեհարդարի: Լարվածությունը վայրկյան առ

վայրկյան մեծանում էր պայթելու աստիճան, հակառակորդի հոգեբանական գրոհը, կարծես, հաջողվում էր, համատարած աղմուկի, շարժիչների բարձրագոչ ալիքի տակ ցամաքել էր գյուղը: Միայն տղաների համարձակությունն էր առայժմ սաստում գրոհողներին, որ կանգնել ու սպասում էին, թե զրահամեքենայից իջած գնդապետը ի՞նչ է առաջարկելու: Նրա շուրջը հավաքված սպայակույտը հանձնարարություններ էր ստանում, հետո մոտեցան բարձրաստիճան օմոնականները, նրանք էլ որոշակի դաս առնելուց հետո առանձնացան իրենց ոհմակների հետ:

Հաշված րոպեներ անց ներքևի թաղամասից մի կերպ Թաթուլին մոտեցավ Վալերիկը:

- Տասնյոթ հոգի գերի տարան,- հևասպառ ասաց նա,- վիրավորներ կան, բնակչությունը սարսափի մեջ է, հուսահատված, նրանք ինչ-որ հրաշքի են սպասում, Մարտունաշենում խփվել է Դեղը:

Թաթուլի սիրտը, ասես, տեղահան եղավ, աչքերում կայծակ խփեց, երկար ու անսովոր հառաչեց:

Հայացքը թեև փողոցի քաոսային անցուդարձին էր, բայց Թաթուլը հատ-հատ լսել էր գետաշենցի ընկերոջ բառերը, դրանց այրոցքը դառնորեն պահեց ներսում և անկասելի մռնչյունով մի քայլ առաջ գնաց: «Այսպես անպատիժ չի կարելի թողնել սրանց, հիմա հրաման կստանան գրոհի, թալանի, իսկ արյան կարոտ խուժանն էլ սպասում է, որ ասպատակի Գետաշենի սրբությունը...»: Թաթուլը քարացած նայում էր մեկը մյուսին հաջորդող պատկերներին, աչքերի առջև դժոխային տեսարաններ էին, մի կողմում զենքի ու զինավառության կրքերով արբածներն էին՝ ամբարտավան, հաղթողի և ուժեղի կեցվածքով, մյուսում՝ գետաշենյան ազնիվ պատկերների առջև, իրենց պապենական տների դեմդիմաց կուչ եկած անզեն ու անմեղ մարդիկ: «Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ մենք, սրանց ճանապարհին պիտի քար գցենք, խիզախենք մեր ունեցածով, այլապես ամեն ինչ վերջացած է»: Թաթուլը, ծակող մտքերից սթափված, պարզորոշ նկատեց գնդապետին, որն անհանգիստ նայում էր աջ ու ձախ, կտրուկ հրամաններ էր տալիս, կարծես, միմիայն իրենով էր պայմանավորված այս գեհենը: «Այսքան մեծաթիվ հրասայլերն ինչի՞ համար են: Կուրսկի ճակատամա՞րտն է, չէ՜, մեջները վախ կա, մեր տղաներից են սարսափած, նաև օմոնի ձեռքերն ազատ արձակելու և ընչաքաղց խուժանին ավազակության մեծ հնարավորություն տալու պատրվակով են հավաքվել: Չպետք է ուշացնել...»:

Թաթուլը ետ դարձավ, մի քանի քայլի վրա ընկեր-տղաներն

էին՝ սպասողական ու բեկված հայացքներով: Լենան շնչասպառ մոտեցավ, կանգնեց ուղիղ Թաթուլի դիմաց:

- Ի՞նչ կա, լո՞ւր ես բերել:

- Թաթո՛ւլ, ուրախացնող լուր չկա՛, օգնության և միջամտության մի՛ սպասեք, սա էր վերջին ռադիոգիրը,- մի կերպ ասաց Լենան և հեծկլտաց: Թաթուլը բռնեց նրա ձեռքը, գորովանքով նայեց նրա աչքերի մեջ, թվաց՝ Սեդա մայրն է, վերջին անգամ նա էլ այսպես արցունքախառն էր, փլված հայացքով, սակայն անշշուկ, ափսոսախառն...

- Ի՞նչ է լինելու,- Լենայի հարցը դարձյալ այնպես հնչեց, կարծես ողջ Գետաշենի տագնապների բոցն էր:

- Կայծակնային մի բան, որ այս բորենիներին ստիպի զսպել, գոնե մի քիչ մարդանալ,- խորքերից մռնչաց Թաթուլը, ձեռքը ինքնաբերաբար տարավ բաճկոնի տակ, պայթուցիկ «լիմոնչիկը» գրպանիկում էր, կողքին՝ ատրճանակը, դրանք սովորական աչքին անտեսանելի էին: Նա մտերմիկ ժպտաց Լենային, սեղմեց նրա ձեռքը, մոտեցավ Հրաչին, ցածրաձայն ինչ-որ բան ասաց: Հրաչը զարմացական նայեց, լռեց ու նկատելի լրջացավ: Թաթուլը պնդում էր, որ տղաներով մի քիչ հետ նահանջեն, պետք էր ծածկել արտաքուստ կասկածանքը, ինքը որոշում ուներ, պիտի գնար կտրուկ քայլի: Կռիվների բովով անցած տղաներն այս իրադրության մեջ, պարզապես, ոչ մի ելք չէին տեսնում, այդ ի՞նչ էր մտածել Թաթուլը: Լարվեցին բոլորը, տեսարանը սահմռկեցուցիչ էր: Հրասայլերին և զինյալ խմբերին ակնդետ հետևում էին տարբեր բակերում հավաքված բնակիչները: Նրանք գիտեին, որ մահվան այս դադարը երկար սպասեցնել չէր տա, զգում էին, որ սրանք կոնկրետ պահի և ստույգ հրամանի էին սպասում:

Թաթուլին թվաց՝ այդ պահին ողջ Գետաշենն էր հետևում իրենց ջոկատների տղաներին, ովքեր ամիսներ շարունակ կարողացել էին զսպել թշնամացած այս տարրերին, փրկել շատերի, պահել էին գյուղի անդորրն ու պատիվը: Իրադրության գաղջ պատկերը նեռի նենգությամբ հիմա անխնա խոշտանգում էր այն ամենը, ինչը ջոկատները կարողացել էին վերականգնել, զարկում էր նրանց արժանապատվությանը, հայ ոգու հիմքերն էր փլցնում յուրայինների աչքերի առջև: Իսկ Գետաշենի հայացքը՝ միամիտ ու անօգ, Գետաշենի հավատքը՝ Աստծո պատկերի առջև հունից դուրս եկած, գնում էին խելակորույս, բախվում քար ու շամբին: Թաթուլի պարզ ընկալումների մեջ վերակերտվում էին այս բոլորը՝ աշխարհի կիսա-

բերան խոսքը, վիրավոր ու վտարանդի արդարությունը, հայրենյաց թիկունքի աններելի լռությունը: Սակայն իրար հրմշտող վայրագ վայրկյանները այլևս ժամանակ չունեին հանդուրժելու, կարմիր բերետավորների ճակատներն ի վար քարաքոսի քծնանք էր, նրանց աչքերի մեջ զազրելի ծրագիր էր նյութված:

Գյուղի ձախ ափին կրակոցները սաստկացան, անմիջապես հաջորդեց երեխաների աղեկտուր ճիչը, հրասայլերի մոտ հավաքվածները ինքնաձիգները վեր պարզեցին, գնդակները վնգստալով օդ բարձրացան: Թաթուլն այլևս չհամբերեց, պատից ցած թռավ, անտեսանելի գնաց զրահամեքենայի ուղղությամբ: Ընդամենը մի քանի քայլ էր բաժանում նրան գնդապետից, որը վերջին կարգադրություններն էր անում: Թաթուլը պարզորոշ լսում էր նրա խոսակցությունը, ենթակաների զեկույցներից իմացավ, որ գնդապետի ազգանունը Մաշկով է: Սպիտակ, փայլփլող դեմքով սպան երևի միակն էր, որի երեսին սև ու կանաչի քսուկ չկար: «Սրա էլ հոգին է սև, որ այդպես բորբոքուն հրամաններ է տալիս, ռադիոկապով ղեկավարում գյուղի տարբեր կողմերում իջած դեսանտայիններին... Այս նույն կարգադրիչին պետք է ստիպել, որ իր հրամանները հետ վերցնի, ուրիշ ելք չկա...»: Թաթուլը հապաղեց ևս մեկ րոպե, վաթսուն վայրկյանների մեջ նա ամփոփեց ոչ միայն անելիքը, այլև հասցրեց նայել դարագլխից ցած ընկած արևին, այնքան նմանեցրեց Արտին սարի լուսաբացին, աչքերը փակեց, որ այդ տեսիլքը չկորցներ, ապա հաղորդվեց ծնողներին, եղբայրներին ժպտաց, զգաց քրոջ տաք ձեռքը, Ասպրամիկի բույրն առավ մոր գրկից, հետո իր հոգու ծեսն ավարտած համարելով՝ անակնկալի բերեց զինյալներին, գրեթե ոստնեց գնդապետ Մաշկովի կողքին, ձախ ձեռքում նռնակն էր, աջով սեղմել էր նրա օձիքը և այրող հայացքով ծակում էր նրա սարսափած աչքերը:

- Հրամա՛ն տուր սրանց հեռանան գյուղից, հետո կորոշենք մեր անելիքը, այս անմեղ մարդիկ, երեխաները ո՛չ քո, ո՛չ իմ, ո՛չ էլ Աստծո առջև մեղք չեն գործել, որ ապրում են իրենց տանը... Հրամայի՛ր, այլապես օդ կբաձրանանք միասին...

Կարմիր բերետավորների շարքերը մի պահ քարացան, զարմանքից ապշել էին բոլորը, այդ թվում՝ այն գետաշենցիները, ովքեր հնարավորություն ունեին դիտելու այդ տեսարանը: Թաթուլը օղակը հանած, նռնակն այնպիսի դիրքում էր պահել, որ եթե կրակեին իր վրա, միևնույնն է՝ պայթելու էր: Այդ բանը հրաշալի գիտեր Թաթուլի ճանկերում հայտնված գնդապետ Մաշկովը, գիտեին նրա

ենթակաները:

- Չկրակե՛լ,- հազիվ ասաց սպան, ձայնը փորն էր ընկել, բայց նրա այդ բառը փոխանցեցին մոտ ու հեռու կանգնածները:

- Քայլենք գյուղից դուրս,- հրամայողն արդեն Թաթուլն էր: Քայլեցին նույն ձգվածությամբ. Թաթուլի մի ձեռքում պայթուցիկն էր, մյուսում՝ սպայի դողդողացող օձիքը:

Հրաչը հասկացավ, որ ընկերոջ համարձակ որոշման նպատակն այլևս երկընտրանք չուներ, կայծակնորեն հասավ նրանց: Թաթուլը ափսոսանքով նայեց Հրաչին, ասաց, որ իզուր դիմեց այդ քայլին: Բայց Հրաչը «Ալաշկերտի» ջոկատի ոգին չէր լինի, եթե օրհասական պահին ընկերոջը թողներ մենակ: Կողքի դիրքերում լուրը հասավ Արթուրին: Նա գլխապատառ շրջանցեց ծանոթ փողոցների ոլորանները և անարգել հայտնվեց տղաների թիկունքում: Թաթուլը նրա արարքից թեև հպարտացավ, բայց իր սրտով չէր, որ նա էլ հայտնվեց մահվան այս օղակում: Մի տեղ՝ առանձնատան պատին գրեթե կպած կանգնած էր զրահամաքենան: Թաթուլը Մաշկովին հարկադրեց, որ անձնակազմը, 14 բերետավորները զենքերը ցած դնեն: Հոժարակամ կատարվեց, քանի որ սպան իր կյանքն ամեն ինչից թանկ էր գնահատում: Փողոցի հարող պատը հարմար էր Թաթուլի մտահղացումը իրականացնելու: Դիմացը ընդարձակ բակն էր, որտեղից նեղ ճանապարհը իջնում էր գյուղի մյուս թաղամասը: Նա առաջարկեց բերետավորներին զենքերը թողնել, գնալ այդ ուղղությամբ: Արթուրը կռահեց հրամանատարի միտքը, ցանկապատերի մոտերքում դիրքավորված ընկերներին, հավաքված գյուղացիներին հասկացրեց, որ սրանց մի հարմար նկուղում բանտարկված պահեն: Իսկ ինքը մի քանի մետր հեռավորությամբ շարունակեց հետևել ընկերներին: Նա, ինքնաձիգը մարտական դիրքով պահած, նայում էր աջ ու ձախ ներկված դեմքերին, նրանց տեսանելի լարվածության մեջ թույն կար, մաղձի մի տեսակ, որին կնախանձեր անգամ ամենագարշ ճահիճը:

- Լավ, այսպես ո՞ւր,- սպայի ցամաքած շուրթերին բառերը աղերսանքի դժգույն խոստովանություն էին:

- Այսպես պիտի դուրս ելնենք գյուղից, հրաման պիտի արձակես, ինչպես որ խուժեցին այս ոհմակները, այնպես էլ պիտի հեռանան: Հրաման տուր, որ գյուղի ոչ մի տեղամասում օմոնը բարբարոսություն չանի, ոչ մեկը կրակ չբացի անմեղ մարդկանց վրա:

- Դու գիտե՞ս, որ ես հրաման եմ կատարում և դա բանավոր կարգադրություն չէ,- փորձեց արդարանալ գնդապետը:

- Իսկապե՞ս,- մռնչաց Թաթուլը և ակնթարթորեն նրա գրպանից դուրս բերեց հարձակման և տեղահանումների զազրելի պլանը,- սա ի՞նչ է:

Գնդապետը կարկամեց, բայց այլ ճար չուներ, աչքը կրկին ընկավ Թաթուլի մատների մեջ զսպված նռնակին, հասկանում էր, որ աննշան մի անզգուշություն, և ամեն ինչ վերջացած կլիներ:

- «Կոլցո» ծրագիրն է, դրանով ենք առաջնորդվում, ես իմ գլխից ձեռք չեմ քաշել,- դարձյալ արդարացավ գնդապետ Մաշկովը:

- Սրանո՞վ ընկան մյուս հայկական գյուղերը:

- Չգիտեմ, գուցե այդ ծրագրի մեջ էր,- ծղրտաց գնդապետը:

Թաթուլն այն փոխանցեց Հրաչին: Հետո Արթուրը վերցրեց և հանձնեց մոտերքում կանգնած գետաշենցիներին՝ պատվիրելով, որ հանձնեն մեր տղաներին:

Կարմիր բերետավորները չգիտեին ի՞նչ ձեռնարկել, նրանց աչքերի առջև մահվան շեմին կանգնած էր իրենց գնդապետը, ո՛չ կարող էին կրակել, ո՛չ էլ փակուղի ստեղծել: Բոլորը գիտին, որ բավական է Թաթուլի մատների թուլացումը, և նռնակը կարող էր իր շուրջը ավերածություն գործել:

Օմոնականները այդպես չէին մտածում, ափսոսանք չունեին, նրանցից մի երկուսը, բերետավորների թիկունքում կանգնած, մտմտում էին կրակել: Ճանաչում էին Թաթուլին, որի համար վաղուց մեծ գլխագին էին խոստացել: Օմոնական նշանառուները աչքերով հասկացրին բերետավորների խմբին, որ արանք բացեն:

Թաթուլը Մաշկովին արդեն քարշ էր տվել մոտ երեք հարյուր մետր: Այդ ընթացքում ոչ մի կրակոց չէր լսվում գյուղի տարբեր կողմերից: Գետաշենցիներն արդեն իմացել էին լուրը, բերնեբերան հասել էր նրանց, որ Թաթուլը գերի էր վերցրել «Օղակ» ռազմական գործողության հրամանատարին, որ այնտեղ են նաև Հրաչն ու Արթուրը: Հույսի շողը դարձյալ առկայծում էր նրանց աչքերում, իսկ թե որքա՞ն զոհեր տվեցին, որքա՞ն վիրավորներ, քանի՜-քանի՜ սրտաճաք մանուկներ իրենց ցավն ու մորմոքը խառնեցին գարնանային այս մեղկ օրվան, դա արդեն Աստծուն էր հայտնի:

Թաթուլը հստակ գիտեր, որ այս քայլը ամենավերջինն էր, գուցե ոչ ամենակատարյալը, բայց ամենաանհրաժեշտը, որից անկարող էր չօգտվել: Նա գիտեր, որ այս նույն Մաշկովին, թեկուզ գնդապետի ուսադիրներով, վերադասներից մեկը, առանց աչքը թարթելու, կարող էր հրաման արձակել՝ խփել բոլորին, չխնայել անգամ «Կոլցո» գործողությունը ձախողած գնդապետին: Այս լարված ինքնազրույցի

վայրկյանին Թաթուլը մտածում էր Հրաչի ու Արթուրի մասին, հետո նաև անպաշտպան Գետաշենի: Իր համար ափսոսանք չուներ, վերջին սխրանքին ձուլվելու իր կամքն աներեր էր, ոտքը ամուր էր դնում հողին, աջը մամլակի պես սեղմել էր գնդապետի օձիքը, հոգին հաղորդության զրահ էր նետել իր սրտի ուսերին և փայփայված ինչ-որ հայտնության սպասում, կրակված աչքերից ձգվում էր արևն ի վեր:

- Հրամայի՛ր հեռանան սրանց,- մռնչած Թաթուլը և պայթուցիկը մոտեցրեց նրա կրծքին:

- Տեսնում ես, ինձ չեն լսում,- մռմռաց Մաշկովը:

- Ուրեմն երկնքում քեզ կլսեն,- ասաց Թաթուլը և ցույց տվեց, որ բացում է պայթուցիկը սեղմած մատները:

- Ի՞նչ ես անում, միասին կկործանվենք,- սփրթնեց սպան:

- Ուրեմն խելոք հրամաննե՛ր տուր, մի՞թե բանակի բարձրաստիճան սպան այսքան փալաս է,- ձայնը բարձրացրեց Թաթուլը և արհամարհանքով նայեց նրա խեղճությանը:

Մաշկովը չպատասխանեց, կարծես թե համաձայնվում էր Թաթուլի հետ, բայց աչքը ընկել էր խմբերի հետևում կանգնած օմոնականներին: Նրանց մեջ նա ճանաչում էր նշանառուների, որոնք կարող էին դիպուկ կրակել:

Հրաչը ուղիղ գնդապետի թիկունքում էր՝ ինքնաձիգը գրեթե նրա ծոծրակին դեմ արած: Անսովոր այս վիճակում նա զգում էր, թե ինչ պատասխանատվություն էր ինքը ստանձնել, ուր էր գնում, հանուն ինչի էր հայտնվել այս փոթորկուն օվկիանում: Այդ պահին ո՛չ երեխաներին էր հիշում, ո՛չ ծնողներին, ո՛չ էլ կանաչ սարերին թիկն տված ծննդավայր Աղավնաձորը: Գետաշենի օրորը ուրիշ կախարդանք էր բացել, Գետաշենի ողբը հունից հանել էր նրան:

Արթուրը չորս-հինգ քայլի վրա ուշադիր հետևում էր իրեն նկատելի բոլոր շարժումները, գլուխը բարձր էր, անվախ, այնուամենայնիվ լավ վերջաբանի չէր սպասում: Նրա սրտում նաև հպարտության անսքող ալեկոծ էր, Թաթուլն էր նավավարը, գիտեր, որ հազար ու մի հաշվարկներից հետո է հրամանատարը դիմում անհավանական թվացող քայլի, սա ամենաբացառիկներից մեկն էր, երբ հազարավոր զինյալների շրջափակման մեջ Թաթուլը լույսի շող էր փնտրում և այդ շողը փրկելու համար պատրաստ էր կյանքը տալու: Արթուրը քայլում էր այնպես, կարծես օդում է, վերերկրային մի պարզ ցանկություն նրան մղում էր Թաթուլի ուղեծրով: Արթուրը չէր էլ պատկերացնում, որ մոտակա տներից մեկի ձեղնահարկից

նրան էին հետևում լացող երկու աչքեր: Նա էր՝ նույն երկնագույն զգեստով դպրոցական աղջիկը՝ ծունկ իջած մաքրամաքուր աղոթքի, մեն-մենակ հույսի պատարագ էր անում, հայացքը եկեղեցու խաչին էր, սիրտը՝ Արթուրի ոտքերի տակ:

Թաթուլը հասկանում էր, որ ժամանակ էր շահում, դադարել էին կրակոցները, մարդկանց աղիողորմ ճիչերը չէին լսվում: Գետաշենցիները իրադրության մեջ այսպիսի հրաշքի չէին սպասում: Այն, ինչի դիմեց Թաթուլը, բանականությունից դուրս էր, միայն վերջին նպատակի մահապարտը կգնար այդ քայլին:

Իսկ Թաթուլը ներսից բոցկլտում էր խարույկի պես, ցավը Հրաչի և Արթուրի համար էր: «Եթե ամեն ինչ ծանր վերջանա, անգամ երկնքում ես ինձ չեմ ների: Ախր ես խնդրեցի, որ ինձ մենակ թողեք, չլսեցին, եկան... Պապս ասում էր՝ ամեն մարդ իր հոր տղան է... Նրանց արյան կանչը ես կարո՞ղ եմ փակել, անձնազոհ են, շիտակ, պատրաստ են Գետաշենին տալ կյանքը, միայն թե արժանապատվության կորուստ չլինի...»: Այս մտքերից նա քիչ խաղաղվեց, զգաց, որ ձեռքերը թուլացել էին, Մաշկովը, կարծես, շունչ էր քաշում և նույնիսկ կեղծավոր ժպտաց:

- Սպասիր մի բա՛ն մտածենք,- խորամանկեց գնդապետը:

- Մտածածդ ասա՛, եթե գործին օգուտ պիտի տա,- ընդհատեց Թաթուլը:

Գնդապետը գլուխը մի քիչ հետ գցեց, իբրև թե պարանոցի ցավից է նեղվում: Այդ ակնթարթը ամենադավադիրն էր: Լսվեցին կրակոցներ: Թաթուլը չհասցրեց անգամ թեքվել, Մաշկովը ետ նետվեց, որովհետև Թաթուլի փառահեղ ճակատը խոցված էր: Նա ընկավ, ձախ ձեռքից մի կողմ գլորվող պայթուցիկը թնդաց, բայց դրանից չվնասվեց գնդապետը: Հրաչն ու Արթուրը, ծունկի իջած, կրակեցին աջ ու ձախ խռնված զինվորների և օմոնականների վրա: Բայց թե անհավասար էր ամեն ինչ: Այդ մարտը կարճ տևեց, թեև հնձված տապալվեցին մի քանի օմոնական, բայց ոհմակը մահասարսուռ քրքջաց: Թաթուլի կողքին ընկած էին իրենց անմահությունը գրանցած Հրաչն ու Արթուրը:

Մաշկովը դժոխքից դուրս պրծած գազանի նման ոտքի կանգնեց: Մոտեցան օմոնականները, մի անգամ ևս ստուգիչ կրակահերթեր բաց արին տղաների վրա: Թիկունքի թաղամասերում սկսվեցին փոխադարձ կրակոցները: Գետաշենն իմացավ, որ ընկել էին վերջին հույսի առաջնորդները: Թաթուլն այլևս չկար, մորթված էր գյուղի հավատը, մարել էր լույսի վետվետացող շողը, դալկահար էին օջախ

ու եկեղեցի, գյուղի ողբացող մայրերը ճակատագրի խրտվիլակն էին փողոց նետել, սակայն ի պատիվ իրենց՝ ձգված էին զարմանալի մի դաշնությամբ, որ Թաթուլից հետո պիտի պահել ոգին:

Այնուամենայնիվ, կատարվածից ուշքի չէր գալիս գնդապետը, ռադիոկապով միացավ Խանլարում տեղակայված կենտրոնական շտաբի ղեկավարության հետ: Կես ժամից դադարեցվեցին կրակահերթերը, հրաման էին ստացել նահանջել: Տղաների տաք մարմինները տեղափոխեցին հիվանդանոց: Այնտեղ էր նաև Վալերիկի դիակը: Օրվա վերջում, երբ ընկել էր Մարտունաշենը, Գետաշենի հիվանդանոց բերվեց Սիմոն Աչիքգյոզյանը՝ Դեդը: Նա նույնպես ընկել էր քաջի մահով՝ երգը շուրթերին, գնդացիրը կրծքին սեղմած:

Թաթուլի, Հրաչի և Արթուրի զոհվելուց հետո՝ որոշ ժամեր թույլ չտրվեց խուժանի մուտքը Գետաշեն: Սպասվում էր տասնյոթ գետաշենցիների փոխանակումը Թաթուլի հեռատես առաջարկությամբ պատանդ վերցված տասնչորս կարմիր բերետավորների հետ: Մնացածը պարզ էր: Գետաշենցիները հարկադրված պիտի հեռանային, թողնեին հայրենի բնօրրանը: Նրանց սպասվող բացահայտ կոտորածի ճանապարհը փաստորեն իրենց սխրալի մահով փակեցին Թաթուլը, Հրաչն ու Արթուրը: Նրանք հիմա հիվանդանոցում էին, որտեղ գետաշենցիների սգահավաք ողբն էր, նրանց անհուն սիրո խոսքերը, նվիրումի այն բացառիկ արտահայտությունը, որը տրվում է ազգային հերոսներին: Տնքում էր Գետաշենը: Մի դեպքում անձնուրաց քաջերի անդառնալի կորստի, մյուսում՝ ժամ առ ժամ սպառնացող վտանգի ահագնությունից: Ոչ ոք չէր երաշխավորում դեպքերի հետագա ընթացքը: Արդեն որոշված էր, հուշարձանի մոտակա հարթակից խորհրդային բանակի ուղղաթիռները երեխաներին, կանանց ու ծերերին հասցնելու են Շահումյան և Ստեփանակերտ: Դեպքերի ընթացքը այնպես կտրուկ փոփոխվեց, որ ոչ ոք ուշքի չէր գալիս: Այս ամենը կռահել էր Թաթուլը, նա գիտեր, որ եթե անգամ չկարողանար որևէ կերպ սրանց հեռացնել, ապա իր մահով կմեղմեր Գետաշենի ցավը, կստիպեր, որ հրեշավոր ծրագիրը վերջին վայրագությամբ չիրականանա:

Գարնան օրով Գետաշենի վրա ձյուն էր մաղվել, կորուսյալ էր այն ամենը, ինչը տարիներով հյուսել, ստեղծել էին: Խուժանը չհամբերեց, հաջորդ օրվա շարունակվող գնդակոծության ուղեկցությամբ պատռեց ձևական կանգնած զինվորների և օմոնականների շղթան և խուժեց գյուղի թաղամասերը: Գետաշենցիների աչքերի առջև տանում էին տնային իրեր, սեղան-աթոռներ, ռադիոընդու-

նիչներ, անկողին, գորգ-կարպետներ, գոմերից դուրս էին բերում անասուններ... Այսինքն այն ամենը, ինչ կտրում էր իրենց աչքը, ինչ կարող էին տանել իրենց սեփական մեքենաներով, ձիասայլերով, գրաստներով:

Թալան էր, իրար ձեռքից թռցնում էին ամեն բան, վիճում էին, թուրքավարի կշտամբում մեկը մյուսի, բայց մեկ-մեկ էլ զգաստացած դիմում էին իրար.

- Բոլորիդ էլ կհասնի, ի՞նչ եք գլուխ ջարդում,- ասել ու կացնով իր մահճում երկու կես էին արել հիվանդ Մելսիկ Սողոմոնյանին՝ քառասունհինգամյա տղամարդուն:

Եվ սա գետաշենցիների ներկայությամբ՝ օրը ցերեկով: Նրանց աչքին այլևս չնչինություն էին ապրանքը, նյութը, կահկարասին, փրկված էր իրենց երեխաների կյանքը: Դա էր գետաշենցիների հոգու վերջին, ամենաթանկ արքայությունը, խոնարհումը Թաթուլի և իր զոհված ընկերների հիշատակին: Նրանք այնքա՜ն-այնքա՜ն շոշափելի էին զգում հերոս տղաների կանխամտածված մահը, Քրիստոսի պես կամովին խաչվելը, որով գրեթե բացառվեց գեհենը, ուղղաթիռներով հեռանալու անցագիր ստացան, իսկ նյութականի կորուստն այդ պահին ոչինչ արժեր:

Հիվանդանոցի բակում խռնված ամբոխը չէր ուզում հեռանալ, սրբազան նպատակի զոհասեղանին հավերժ ննջած քաջերն էին: Ողբացյալների մեջ էր Լենան: Նա հեկեկում էր զավակներին կորցրած մոր նման, ամեն օր հաց ու ջուր էր հասցրել, ժպտացել ու աղոթել էր նրանց համար, հիվանդ ժամանակ ապաքինել էր հարազատի պես, աչալուրջ ժամապահի նման չէր լքել «Կամա-2»-ը, որի միջոցով Գետաշեն հասած ամեն բառ նույն շիտակությամբ հանձնել էր Թաթուլին: Նրա հոգու անփարատելի վիշտը կոշտացել էր քարի պես, նեղսրտած էր մարդկանցից, աշխարհի օրենքներից: Քիչ առաջ վերջին կապն էր պահել, հաղորդել էր անդառնալին, գյուղի զարկված ճիչերի, Գետաշենի վերջին հուշագրությամբ փորձել էր գոռալ, կշտամբել, վիրավորել: Բայց ո՞ւմ, ինչպե՞ս, երբ արմատահան էր Գետաշենի կաղնին, ընկած էր նրա պաշտպան ոգին՝ Թաթուլը, հավերժ իրենց աչքերը փակել էին հրաշալի Հրաչը, Արթուրը, Դեդը, Վալերիկը, գյուղը, խռոված հոգով, բզկտված ու մերկ, հեռանում էր:

Հիվանդանոցում բժիշկները, գլուխը կորցրած, գրեթե ոչնչով փորձում էին օգնել այստեղ հասցրած վիրավորներին: Ներքևի թաղամասերում, տների դիմաց, բանջարանոցներում փոսեր էին փորվել, որ մահացած հարազատներին հողին հանձնեին: Իսկ խուժանը,

անտարբեր այս ամենին, տանում էր ձեռքն ընկածը, գողության ու թալանի սոսկալի մրցույթ էր, գետաշենցիները չէին հակառակվում, որովհետև դա հրասայլերով ու զրահամեքենաներով գյուղ մտած բերետավորների և գազազած օմոնականների թողտվությամբ էր: Գողգոթա դարձած Գետաշենը ձգտում էր դուրս պրծնել մահվան այս ճամբարից, գետաշենցին հետո էլ կկարողանար իր ոգու ցոլանքից արարել նյութականը, հիմա դարձյալ լուռ աղոթքներով երազում էր փրկված տեսնել երեխաներին:

Ամբողջ գիշեր գյուղամերձ բարձունքներին հետ քաշված՝ հռնդացին հրասայլերի շարժիչները, դրանով քուն չունեցող մարդկանց հոգու դադարն էին առևանգում: Պաշարողները ճնշող մթնոլորտը փորձում էին գիշերային խավարով ավելի թանձրացնել, խթանում էին հոգեբանական գրոհը՝ ահագնացող բարդույթների շրջանակում պահելով «Օղակ» գործողության նախանպատակները: Հաջորդ առավոտյան երեխաներն ու կանայք գրեթե քշվում էին հուշարձանին հարող հարթակները: Նրանց հույսը ուղղաթիռներն էին, որովհետև շուրջ երեք տարի փոխադրական այլ միջոց արգելված էր մտնելու Գետաշեն:

Թաթուլի և իր չորս ընկերների դիակները ուղղաթիռներով տեղափոխելու խնդիրը ուշադրության չարժանացավ: Անդրանիկ Մարգարյանն ու Ֆիլարետ Բերիկյանը, որ այս ամբողջ անցուդարձի ժամանակ այստեղ էին, կապվեցին Իգոր Մուրադյանի հետ: Նա այդ գիշեր զրահամեքենայով Շահումյանից հասավ Գետաշեն:

...Հիվանդանոցի բակը դեռ այսքան մարդաշատ չէր եղել: Գետաշենը սրբազան աճյուններ էր ճանապարհում: Պաշարողներն անկարող էին զսպել վշտից ահագնացած մեծ ու փոքրի հավաքական ուժը, նրանց միատեղ լացը, համատեղ հառնումը, հպարտության անկշռելի տուրքը: Օ՜, ինչ սուգ էր պատռում երկինքը, երբ ձեռքերի վրա առաջինը երևաց Թաթուլը: Վերջին, հպարտ հայացքը հեգնանքի վսեմ շեշտերով սառել էր նրա դեմքին, ճակատին արյան բոցույն թրթիռն էր՝ սրտի շողքերից ծաղկած: Փակ էին մրահոն աչքերը, փառահեղ դեմքը հիշեցնում էր սրբազանի՝ վեհաշուք ու ազդեցիկ: Հավաքվածները ձեռքերը վեր պարզեցին, հերոսին վայել տուրքով լացն ու կականը ծածկեցին լռության մեծադղորդ շղարշով: Սևը ներսում պահած՝ թախիծների թնդյուն սահքով բարուրեցին իրենց հերոս զավակին, փառքի օրոր հաղորդելով նրա Ժորա հորը և Սեդա մայրիկին: Պահ էր, երբ կարոտն ու փառքը միավորվում են, բարձրանում է ապրելու ճշգրտված լույսը: Այդ ան-

զարդ մասունքների մշտամրմուռ մեղեդիներով Թաթուլին ձեռքերի վրա տեղավորեցին զրահամեքենայի մեջ: Հետո նույն քնքշանքների խոնարհ հառաչանքներով, հարգանքի ամենագթոտ գուրգուրանքներով զրահամեքենա հասցվեցին Հրաչի, Արթուրի, Դեդի, Վալերիկի մարմինները:

Գետաշենը ճանապարհում էր նրանց, ովքեր այս հարազատ եզերքներում կերտեցին արժանապատվության դասը, ովքեր Գետաշենի աննկուն ոգու ընկերը դարձան, նրա բարության զորավոր օրոցքի համար կրկնեցին իրենց ազնվազարմ նախնյաց սխրանքը:

Հիվանդանոցի վիրաբույժները՝ Սարգիսն ու Վալերին, խնդրեցին վերջին փոխանակումից հետո գերությունից վերադարձված Մերուժին նույնպես տեղափոխել Շահումյան:

- Նա գրեթե անգիտակից է, թուրքերը մաշկել են նրա գլուխը, կարող է փրկվել:

Իգոր Մուրադյանը համաձայնեց, նրան էլ տեղավորեցին դիակների կողքին, վստահելի մարդկանց ուղեկցությամբ զրահամեքենան ուղղություն վերցրեց դեպի Շահումյան: Իգորը մնաց, չէր կարող լքել գետաշենցիներին, որոնք հայտնվել էին աքցանի մեջ, նրա համար պարզ դարձավ ամբողջ եղելությունը, հանդիպեց Անդրանիկի և Ֆիլարետի հետ: Նրանք նույնպես համոզված էին, ինչպես նաև ողջ Գետաշենը, որ Թաթուլի և իր ընկերների գիտակցված մահը կանխել էր գյուղի կոտորածը:

Գետաշենի նկուղներից մեկում պատանդ վերցված զինվորականներին առայժմ ոչինչ չէր սպառնում: Գետաշենցին ցավ ու վրեժ ուներ, բայց դա չէր վերաբերում հրամանի տակ կքված այս երիտասարդներին, ովքեր ընդամենը մեծ երեխաներ էին՝ դողացող մարմինները կծկած իրենց մգլած հագուստների մեջ: Բնակիչներն անհունորեն բորբոքված էին դարավերջի այս բարբարոսության հեղինակներից, որոնք, տաքուկ պալատներում նստած, իրեց զենքերի ուժն էին փորձարկո՛ւմ այստեղ:

Հրասայլերը, խառնշտելով գյուղի տներն ու բակերը, ամեն ինչ գնդակոծելով, հեռանում էին: Նրանց օրինակով էին գործում օմոնականները և թալանի «հրավիրված» հարևան գյուղերի թուրքերը: Պատմությունը դարասկզբի նախճիրն էր կրկնում, բայց սա բռնագաղթի մի ուրիշ՝ կատարելագործված տեսակ էր՝ ուրիշի տունը քանդելու ժամանակակից ծրագրով էին գազանացել, զրահամեքենաներով և ուղղաթիռներով էին եկել, միջնորդ կոչված զորքը ներկել էր իր դեմքը, կամա թե ակամա դարձել էր ազերիների

դաշնակիցը, իսկ օմոնը վերին պալատներից իր սանձարձակության համար երաշխիք էր ստացել:

Գետաշենը բազմալիք ծովի էր նման, շուրջ 6-7 կմ երկարությամբ փռված գյուղում մարդիկ չէին կարող համախմբված լինել, եթե նույնիսկ դա էլ լիներ, ի՞նչ պիտի ձեռնարկեին խորհրդային զենք ու զինվորի և նրանց կամակատար օմոնի դեմ:

Թաթուլի և նրա խիզախ ընկերների զոհվելուց հետո «Օղակը» իրականացնողները քաշված մնացին բարձունքների թիկունքում, բայց անդադրում էին կրակոցները, իրենց տեղը ցույց էին տալիս, խփում էին, երբ ուզում էին, զարկում էին, ինչով կամենում էին: Թաթուլի անօրինակ քայլը ստիպել էր նրանց հապաղել, ավելի շատ թալանով էին զբաղված: Դռները բացվել էին: Խուժանը ամենօրյա ավարի էր գալիս: Պաշտպանական ջոկատների տղաները հարկադրված հեռացել էին ավելի խորքերը, բացահայտ մարտի մեջ չէին ուզում մտնել, մեջտեղում խաղաղ բնակչությունն էր: Երեխաներին, ծերերին ու կանանց տեղափոխող ուղղաթիռները քիչ էին, իսկ թռիչքային հարթակ հասնելու համար նրանք կրում էին սոսկալի ծաղր ու ծանակ: Օմոնականներն իրենց գործողությունների գզրոցից շռայլում էին կամայականության բոլոր ձևերը: Մինչև ուղղաթիռին հասնելը մի քանի հարյուր մարդ կողք կողքի պարտադիր նստած պիտի լինեին, առաջամասից ջոկելով տանում էին, բայց իրենց հաշվարկներով կասկածավորներին անմիջապես գերի էին վերցնում: Պատճառաբանություն կոչվածը կարող էր մեկն ու մեկի գլխին լուրջ փորձանք դառնալ: Հպարտ գետաշենցիները, հանուն իրենց երեխաների, կրում էին դառնություն ու պատիժ: Ամենազազրելին այն էր, որ նրանց ստիպում էին ստորագրել մի գրության տակ, որի կեղծ բովանդակությամբ գետաշենցիները կամովի էին հեռանում իրենց ծննդավայրից: Դրանք ստորացուցիչ ու հարկադրված պահեր էին, մանավանդ, երբ օմոնը նկարահանում էր, գրանցում այն տեսարանները, որ իբրև թե իրենք օգնում էին երեխաներին, հաց ու ջուր առաջարկում: Կեղծիքի այս ապաշնորհ բեմադրության վայրկյաններին օմոնականները նկարահանվելիս ժպիտ էին ծեփում իրենց ցինիկ աչքերի մեջ՝ աշխարհին ցույց տալու՝ տեսեք, թե իրենք որքան գթառատ են հոժար կամքով Գետաշենը լքող բնակիչների նկատմամբ:

Մայիսի 3-ի գիշերը Եղիշ Մարկոսյանի (Եղիշ դայի) առաջնորդությամբ մի մեծ խումբ անտառափեշերով, ձոր ու կիրճերով մեկնեց Գետաշենից: Այլևս մնալու, դիմակայելու խնդիրը

օրակարգից դուրս էր եկել: Նրանք, ովքեր կարող էին ոտքով անցնել հույսի այդ ճանապարհը, չցանկացան այլևս տեսնել օմոնականների մռութը: Այդ խմբի մեջ էին Անդրանիկն ու Ֆիլարետը. այն, ինչի նրանք ականատես եղան, անկասկած, ստույգ ճշգրտությամբ պիտի ներկայացնեին հանրապետության իրավասու օղակներին: Նրանք գետաշենցիների հետ հեռանում էին դաժան տպավորություններով, քանի որ քսանչորս օր շարունակ շփվել էին բնակիչների հետ, կիսել նրանց զայրույթը, մեղմել կասկածանքը, կանգնած էին Թաթուլի կողքին: Նրանց ներկայությամբ կատարվեց Թաթուլի և մյուս ընկերների սխրանքը, գրանցվեց նպատակի համար կյանքը զոհաբերելու այդ բացառիկ և բախտորոշ պահը: Գետաշենում բոլորը հասկացան, որ Թաթուլն իր կյանքով փակեց կոտորածի ճանապարհը, որ Հրաչն ու Արթուրը կրկնեցին նրա գիտակցված խորհուրդը՝ կյանքի գնով սաստել թշնամու գազանությունը, իրենց մահով հրամայել նրանց նահանջել:

Մայիսի 1-6-ը գրանցվեցին Գետաշենի պատմության ամենամռայլ և ամենասարսափելի էջերը: Դրանք կարող էին ավելի ողբերգական չափերի հասնել, եթե Թաթուլը կանխամտածված պատանդ չվերցներ խորհրդային զինյալների: Եվ դա նույնպես կանխեց հետագա գործողությունների անկանխատեսելի ընթացքը: Գերի վերցված 45 գետաշենցիներից 16-ի ճակատագիրը անհայտ մնաց, փոխանակության պահին 27 տղամարդու՝ ոտից գլուխ ջարդուփշուր արվածներին, գյուղ տարավ լրագրող Վարդան Հովհաննիսյանը: Նա ամբողջ օրը տանջվեց, բանակցեց, համոզեց, պատանդ զինվորներին Գետաշենից հասցրեց Կամո գյուղի մերձակայքը, այնուհետև մի քանի անգամ բախվեց օմոնականների կարծրությանը, մինչև ստացվեց փոխանակությունը:

...Դատարկվում էր Գետաշենը: Ուղղաթիռները անգդի պես ճանկում էին երեխաներին, նրանց ողբացյալ մայրերին, աղմուկաղաղակով օդ բարձրանում, ապա գնում ժահրոտ ամպերի միջով: Գյուղում վերջին մնացածները երկրորդ խումբը կազմեցին և որոշեցին պաշտպանական տղաների հետ մայիսի 6-ի գիշերը հեռանալ: Այստեղ էր Իգոր Մուրադյանը: Նա ինքն էր որոշել մինչև վերջ մնալ մահվան օղակի մեջ հայտնված գետաշենցիների հետ: Գյուղ մտած օմոնականները մի վերջին անգամ սանրում էին բոլոր փողոցները, տներն ու բակերը: Նրանցից մի ջոկատ փնտրում էր Աշոտ քեռուն, որի ձեռքերով պատրաստված ուժանակները մեծ գլխացավանք պատճառեցին թշնամուն՝ ոչնչացնելով տասնյակ ելուզակների:

Նրանց հետաքրքրությունը չէր մարել Գետաշենի կապավոր Լենայի նկատմամբ: Նրա վերջին հաղորդագրությունները ձայնորսիչով լսել էին օմոնականները: Դա վերջին կրակե կանչն էր, հույսերի ծարավ կարկաչը: Լենայի զայրույթն ու ճիչը երկինք էին սփռել իրողության սոսկալի պատառները՝ հրասայլերի ավերածությունը, օմոնականների վայրագ գործողությունները, թալանչիների մուրացիկ մարմանջը Գետաշենի սրբություններն առևանգելիս:

Մայիսի 6-ի իրիկնապահին վերջին խումբը պատրաստ էր՝ քառասունմեկ հոգի, որից երկուսը կին: Խմբում էին Իգոր Մուրադյանը, Շահումյանից նախորդ գիշեր վերադարձած Եղիշ դային կնոջ՝ Սիլվայի հետ, Աշոտ քեռին, գյուղխորհրդի նախագահ Հրանտը հոր՝ Մաղաքելի հետ, դպրոցի տնօրեն Շմավոն Ղուլղազարյանը, Լենան ամուսնու՝ Հրանտի և Կարեն որդու հետ: Ընդհանրապես հեռանում էր գյուղի ավագանին: Այդ խումբը, որի մեջ էին նաև պաշտպանական ջոկատների վերջին անդամները, տանում էր նաև եղած զենքն ու զինամթերքը: Շահումյանից արյան գնով բերվածը իրավունք չունեին թողնելու այստեղ:

Մեկնելուց առաջ Լենան արագ տուն մտավ: «Կամա-2»-ը ինքնաձայն թնկթնկում էր: Խորհրդավոր և օտար մի զգացում պաշարեց Լենային: Նրան էր վիճակված Գետաշենի դարավոր շնչով, վերջին անգամ մորմոքի արցունաքախառն խոսքերով մրմնջալ. «Հայաստա՛ն, իմացի՛ր, ընկավ Գետաշենը, նրա վերջին բնակիչները այս պահին թողեցին պապենական եզերքը, Գետաշենը մնաց՝ որպես «սուրբ նշխար շան բերանում...»: Լենան ավարտեց խոսքը, դառը հեկեկաց, բայց լացելու ժամանակ էլ չուներ, արագ իջավ ներքնահարկ, դուրս բերեց բենզինով լցված շշերը, որոնք պահել էր օմոնի մռութը հրկիզելու, ծանր զգացումով և աներևակայելի ցավով այն շաղ տվեց սեփական բնակարանի ներս ու դրսից, իջավ բակ, մի անգամ ևս երկար նայեց հարազատ պատերին, պատուհաններին, բակի ծաղկած ծառերին և վառված լուցկին հոգու դղրդյունով ցած նետեց: Կրակը նախ ճմրթված ճոճքով տրորվեց ներբանների մոտ, ապա հռնդյունով ծփաց՝ ծոցն առնելով տարիների բույր ու զրույցներով տաճարված բարձրադիր պատերը: Կարենը վազելով բոցերից հեռացրեց մորը, գրկեց նրան և ակամայից արտասվեց:

- Հուզվելու ժամանակ չէ, տղա՛ս, մեր տունը չէր կարող թուրքերին բաժին լինել, այնտեղ այնքան աղոթք ու երազանք կան, թող բոլորը երկինք բարձրանան, մինչև կվերադառնանք...

Հեռացան բակից, մի անգամ ևս հետ նայեցին, տունն արդեն

աստղերին միտված վիթխարի խարույկ էր, նկուղում բենզինի չբացված շշեր էին մնացել, մեկը մյուսի շարունակությամբ պայթում էին՝ առաջացնելով սարսռուն տեսարան: Սեփական տան կորստով Լենայի հոգում ավելի ցայտուն ընդգծվեց Գետաշենի անկումը, մարեցին ոգեթանկ հեքիաթի վերջին շողերը, մութը պապանձնվեց, քարացավ:

Մինչև կհասնեին խմբին, Լենան ամուր բռնեց որդու՝ Կարենի ձեռքը: Մոր աչքերում անճանաչելի հորձանք կար, չէր հանգստանում, ցավի խշրտոցը խառնել էր նրա ներաշխարհը, բայց ըմբոստությունը մտրակում էր կնոջ թիկունքին, զարկում անխնա, մղում անողոք ճշմարտության: Լենան այդ պահին հիշեց Թաթուլին, զգաց ապրումների այն բացառիկ տեսակը, որը, անշուշտ, նրան տարել էր վերջին թռիչքի, մղել իրենով ապացուցելու հավիտենականության գաղտնիքը:

- Տղա՛ս,- նա կտրուկ դիմեց որդուն,- չտա Աստված, որ մեզնից մեկն ու մեկը որպես գերի հայտնվի օմոնականների ձեռքում: Հասկացի՛ր, այդ գերին չպետք է կենդանի հանձնվի, նրան խփելու է կա՛մ մայրը, կա՛մ էլ որդին:

Կարենը շանթահարվածի նման նայեց մորը:

- Ես քեզ չեմ կարող խփել:

- Կարծում ես՝ ես կարո՞ղ եմ, բայց մահ կա, որ անարգված ապրելուց ավելի գերադասելի է:

Գլխիկոր քայլեցին, վտարանդի խումբը սպասում էր:

- Կարե՛ն, չմոռանաս,- մթության մեջ մի անգամ ևս հնչեց Լենայի ձայնը: Որդին չպատասխանեց, փոխարենը ամուր բռնեց մոր ձեռքը, կրճտացրեց ատամները, որ ակամայից չգոռա:

Գետաշենից հեռացան վերջին բնակիչները: Գյուղը բզկտված էր խավարի ծոցում, տեղ-տեղ երևում էին հրասյուներ, ապա տարածական կրակադաշտ, ինչպես հնձած արտից հետո բոցավառվող խոզանը: Տարբեր կողմերից ձայներ էին լսվում, բայց դրանք տեղաբնակները չէին, թալանի վերջին ծեղը հափշտակող թուրքերն էին, կրում, բարձում, տանում էին Գետաշենի խղճից ծնված հույսն ու հարստությունը:

Գնացին գետաշենցիները, բայց նրանց ոգու կնիքը մնաց գյուղի բազմադարյա խորհրդի մեջ ապրող հազարաթև բլբուլի թևերին, մնաց մասունքների դաշտը, որի արմատներին անկարող են հասնել օտարները, դարավանդների շուրջպարի մեջ մնաց հին ու նոր սերունդների վիրավոր ասքը, նաև գյուղական փառքերի օրոցքը, որտեղ հավերժական օրորի իր սխրանքը գրանցեց Թաթուլը:

Գնացին գետաշենցիները, մնաց ննջեցյալների հավերժական շիրմատունը՝ չգաղթված, չհեռացող, դեպի արմատները իջնող լռության և վրեժի կոչող նրանց մշտարթուն ռեքվիեմը:

Ընկավ Գետաշենը, բայց դիմակայեց մեծ դարձի երազային ժամանակներին սպասող սերունդը, վերապրեցին ճակատագրի բերումով տարբեր կողմերում ցրված, բայց արդարություն որոնող գետաշենցիները:

* * *

Գետաշենյան ծանր օրերի մասին Երևանում արդեն գիտեին: Ընկել էին Գետաշենն ու Մարտունաշենը, հայտնի էր, որ զոհվել էին Թաքուլը, Հրաչը, Դեդը, Արթուրը, գետաշենցի Վալերիկը: Ազատության հրապարակում բորբոքված միտինգ էր, խոսքեր, խոհեր, ցանկություններ և ցավ: Այսքանը: Իսկ «Էրեբունի» օդանավակայանից հաջորդ օրը Շահումյան թռչող ուղղաթիռի մեջ դագաղներ էին շարված: Մարդաշատ էին թռիչքադաշտին հարող բոլոր անցուղիները, տագնապն անծավալ ճկռվել էր բոլորի աչքերում, հարցնողին պատասխանող չկար, երևի չգիտեին ի՞նչ ասել: Լուրերի այս շարուկը մայիսի 1-ի կեսօրից հետո հասավ Ռուզանին, իմացավ, որ ընկել է Գետաշենը, սակայն Թաքուլի մասին ոչինչ չէին ասում: Ռուզանը չգիտեր ինչ անել, շտապեց Ազատության հրապարակ: Անցավ Սուրբ Սարգիս եկեղեցու կողքով, լուռ խաչակնքեց, մտքում հազար խնդիրքով դիմեց Աստծուն: Հանկարծ հիշեց, որ տաս օր առաջ՝ Թաքուլի ծննդյան օրը, մտավ եկեղեցի, գյուղ պիտի գնար՝ Սուսաննայի հարսանիքն էր: Հոգու պարտքով ցանկացավ ամենակարողի օրհնանքի շուքի տակ մոմ վառել: Հիմա դարձյալ սիրտը կծկվեց՝ հիշելով, թե մոմերն ինչպես էին թեքվում, ապա անմիջապես հանգչում: Այն ժամանակ ինքը գերի չդարձավ թյուր ըմբռնումների, իսկ հիմա արդեն մոմ վառելու ժամանակ և ցանկություն չուներ:

Ազատության հրապարակում դարձյալ մեծ հավաք էր, ներկայացրին Գետաշեն-Մարտունաշենի վիճակը, հայտարարեցին, որ զոհեր կան, անունների հարցում մնացին գաղտնապահ և հույս հայտնեցին, որ վաղը՝ մայիսի 2-ին, ուղղաթիռներով զոհված ընկերները կհասցվեն Հայաստան:

Ռուզանը գժվածի նման փախավ հրապարակից, մտավ փոստ, զանգահարեց, գտավ Սերգոյին, ներկայացրեց այն, ինչը իրեն հայտնի էր: Մայիսի 2-ի առավոտյան օդանավակայանում Ռուզա-

նի կողքին կանգնած էին եղբայրները՝ Սերգոն, Մինասը, Գրիգորն ու Մանվելը: Եկել էին բազում արեգցիներ, բայց ստույգ չգիտեին՝ Թաթուլը զոհված է, թե ոչ:

Ուղղաթիռի մոտ, ինչպես խռնված փեթակի առջև, հոծ բազմություն էր: Շուրջը զինվորներ էին, փորձում էին կարգ ու կանոն հաստատել, որովհետև ուղղաթիռը նույնպես զինվորական էր: Ռուզանը մոտեցավ թռչելու պատրաստվող Զորի Բալայանին, Թաթուլի մասին հարցրեց: Զորին ցավի հորձանքը թաքցրեց աչքերում, ուսերը թոթվեց, չասաց անդառնալիի մասին, բայց ինքը գիտեր և գնում էր զոհվածներին բերելու: Զորի Բալայանը՝ այդ նրբամիտ ու խիզախ հայրենասերը, չէր կարող ժամանակից շուտ պատառ-պատառ անել քրոջ սիրտը: Լռեց, ձեռքը թափահարելով բարձրացավ ուղղաթիռ:

Դագաղների հետևում հասցրել էր թաքնվել Գետաշենին մեծ ծառայություն մատուցած վիրաբույժ Գևորգ Գրիգորյանը: Նրա խնդրանքները Գետաշեն գնալու համար մերժել էին, զինվորականները փակել էին նրա ճանապարհը, բայց Գևորգը հաջողացրել էր թափանցել ներս և պառկել այնպես, որ չնկատվեր: Հետո նրան հայտնաբերեցին, բայց ուղղաթիռը օդում էր:

Վիրաբույժ Գևորգ Գրիգորյանը թե ի՜նչ ոդիսականով հասավ Գետաշեն, միայն իրեն և Շահումյանից Գետաշեն ուղեկցող հրաշալի հնգյակին էր հայտնի: Գևորգը Շահումյանում արդեն հասցրել էր տեսնել ու խոնարհվել Գետաշենի հերոսների աճյունների առջև: Այնումենայնիվ, որոշումից հետ չէր կանգնել, դառնությամբ հեկեկացել էր, բայց նաև երդվել, որ պիտի հասնի Գետաշեն: Եվ ահա նա եկել, միացել էր Սարգսին ու Վալերիկին, բայց ցնցված էր, չէր պատկերացնում այսպիսի Գետաշեն՝ գլխիվայր շուռ եկած, ավեր, ավարառուների ոհմակներ, դարիվերից անընդմեջ կրակոցներ, ամենուրեք զոհեր ու մահացածներ: Գևորգը սահմռկել, բայց, ի պատիվ իրեն, չէր փոշմանել գալու համար, ինքը նրանցից չէր, որ ապահովության մեջ ապխտեր իր մարմինը, բժիշկ էր և հետո շատ հպարտ քաղաքացի, որը երբևիցէ կիսել էր այս գյուղացու սրբազան հացը, հիացել բնության շռայլ պատկեր-տուրքով, որոնք գրանցված էին իր հոգում, կանչում էին, զարկում, հրամայում գալ, հասնել: Եվ եկել էր անմռունչ ու հաստատակամ: Թեև ծանոթները, բժիշկ ընկերները, գյուղխորհրդի նախագահը, տիկին Լենան կշտամբեցին նրան, որ ծանր որոշում էր ընդունել, բայց այդ ամենը Գևորգը համարում էր հարազատ մարդկանց կարեկցանք, ինքը չէր կարող այլ կերպ վարվել:

Գետաշենից վերջին թռիչքներն էին: Բարձունքի հարթակում հավաքվել էին ծայրահեղ հիվանդները, վիրավոր գյուղացիները, նրանց թվում էին նաև դժվարամատույց ճանապարհով այստեղ հասած բժիշկ Գևորգ Գրիգորյանը և Վալերի Խաչատրյանը, որոնք ցանկացել էին ամենավերջին թռչողների հետ հեռանալ: Հենց այդ գիշեր այրել էին հիվանդանոցի շենքը իր ունեցած-չունեցածով, որպեսզի այն հետո չծառայեր բարբարոս թալանչիներին: Եվ հիմա եկել, կանգնել էին ուղղաթիռի մոտ, հերթի էին սպասում:

Փաստաթղթերը ստուգելիս խորհրդային բանակի սպան, իբրև հայտնություն, օմոնին ներկայացրեց, որ սրանք են անձնագրային ռեժիմը խախտողները: Հենց այդպիսի պատճառ էր պետք, որ բժիշկներին առանձնացնեին փակ մեքենաների մեջ: Շուտով մեքենայի դժոխային խուց բերեցին նաև Սարգիս Հակոբջոխվյանին և էլի ուրիշ գետաշենցիների: Սարգիսն ու Գևորգը, ամեն ինչից անկախ, անհանգստանում էին Վալերիկի առողջության համար, որը սրտամկանի ինֆարկտ տանելուց հետո էր եկել Գետաշեն: Նա ցույց չէր տալիս, բայց իրավիճակը հասկանալի էր:

Ուղղաթիռները մի կերպ օդ բարձրացան, դա վերջին թռիչքն էր Գետաշենից, իսկ բանտախուցեր շալակած մեքենաները դեպի անհայտություն էին տանում գետաշենցի անմեղ մարդկանց, այդ թվում՝ մարդու հանդեպ իրենց պարտքին ու պարտավորությանը, իրենց երդումին միշտ պատրաստ երեք բժիշկների:

(...Ծանր և ճակատագրական տասնյոթ օրեր նրանք անցկացրին գերության մեջ և, վերջապես, ազատվեցին դժոխքից: Այդ բարբարոսների զնդանում 72 օր դիմացավ խիզախ լրագրող Վարդան Հովհաննիսյանը և խոշտանգված վերադարձավ տուն:

Սակայն մղձավանջային օրերն առջևում էին... Դժոխքի միջով անցած բժիշկներ Սարգիսն ու Վալերիկը հրաժեշտ տվեցին կյանքին, վիրաբույժ Գևորգը ճակատագրական ոդիսականից վերադարձավ «Էրեբունի» հիվանդանոց՝ նվիրվելով մարդկանց կյանքը փրկելու մարդասիրական գործին: Ազատ ժամանակ նշտարի փոխարեն նա գրիչն է վերցնում՝ հյուսելու ականատեսի իր պատմությունը, որը երկու գրքույկներով հանձնել է ընթերցողներին:

Իսկ փրկված գետաշենցիները հանգրվան գտան Երևանում, Ծաղկաձորում, Դիլիջանում, Կապանում, Մասիսի և Էջմիածնի շրջաններում: Փորձեք հանդիպել նրանցից որևէ մեկին, Գետաշենի լեգենդը նրանց շուրթերին է, նրանց սիրտը հուշարձանն է Թաթուլի, Արթուրի, Հրաչի, Վահանի և աննկուն մյուս քաջերի համար...

1991-ի գարնանից հետո օրերը տարիներ են դարձել, բայց Գետաշեն-ոստանի հանդեպ մնացել են այրող հուշը, կարոտը, վերադարձի հույսը: Հանդիպեք ցանկացած գետաշենցու, կհամոզվեք, որ Թաքուլի հանդեպ նրանց մեծ սիրո փայփայանքը վերածվել է ասքի.

- Թաքուլը և իր ընկերները ստեղծված դժոխքից կյանքի թանկ գնով հետ բերեցին մեզ և մեր երեխաներին: Գետաշենի չխմարող դափնին մեր անհուն սիրո և խոստովանանքի անթառամ պսակն է նրանց մեծ փառքին...)

* * *

...Օ՜, անտանելի, անթարգմանելի ժամեր «էրեբունի» օդանավակայանում: Ռուզանը գրեթե թուլացել էր, հազիվ էր կանգնում ոտքերի վրա: Հոգով փշրված էին եղբայրները, սրտապինդը միայն Սերգոն էր: Նա հույս էր տալիս, քանի որ ստույգ անուններ չէին տրվում: Մինասն առաջարկեց մինչև ուղղաթիռի վերադարձը մտնել եկեղեցի, թող Աստված օգնական լինի Թաքուլին ու իր ընկերներին: Ռուզանը հուսակտուր հառաչեց՝ մերժելով այս վայրկյանին եկեղեցի գնալու գաղափարը: Արեգից բազմաթիվ մարդիկ էին եկել, ընդհանրապես լեփ-լեցուն էին օդանավակայանի հրապարակները և հարակից փողոցները:

- Գուցե բոլորը մի բան գիտեն ու մեզ հայտնի չէ,- հեկեկաց Ռուզանը:

Եղբայրները լուռ էին, ներսից զարկող մոլեռանդ ցավը տարածվելով կրծում էր նրանց սիրտը, բայց պահում էին իրենց, չէին ուզում հավատալ, որ Թաքուլին որևէ բան պատահած լինի, վստահ էին, որ նա չի կարող դրժել իր խոստումը, կգա, կհասնի իր Ասպրամիկին, Սեդա մորը, ընտանիքին իր կիսատ թողած գործերին:

Սպասման այն տեսակը, որի առջև ծունկ էին իջել Կրպեյան զավակները, ոչ մի պատումով հնարավոր չէ բացահայտել: Մեկ իրար կողքի էին, մեկ՝ անջատ-անջատ, յուրովի ախ ու վախ էին անում, որ մյուսը չիմանար, քայլում էին աննպատակ, զարմանալի և անորոշ էին հայացքները, բայց աչքերը հառված էին երկնի կապույտին: Այնտեղ՝ Աստծո պատկերի կողքին, տեղ էին բացել, նրա բարեգթությամբ սպասում էին ուղղաթիռին, մտքով հերքում էին ցավալուր ամեն բան, փորձում էին տարածության մեջ գտնել Թաքուլի ժպիտը, տաք խոսքը՝ հավատալով, որ նա ողջ է, և հիմա աստղերից կիջնի Գետաշենի արծիվը:

Օրվա երկրորդ կեսին օդում հայտնվեց Շահումյանից վերադար-

ձող ուղղաթիռը: Օդանավակայանը շրջափակեցին զինվորականները: Թռիչքադաշտի շուրջը մեծ շրջան կազմած ահռելի բազմությունը միայն հայացքով ուղեկցեց իջեցվող հինգ դագաղները, նաև վիրավորներին, որոնցից մեկը խոշտանգված Մերուժն էր:

Բարձրախոսներից հայտարարեցին, որ դագաղները տեղափոխվելու են «Էրեբունի» հիվանդանոց: Ալիքվեց բազմությունը: Սերգոն մեքենայով էր, եղբայրների և քրոջ հետ շտապեցին այնտեղ: Նրա թիկունքից գնում էին արեգցիների մեքենաները: Բոլորը սահմռկել, հոգով կուչ էին եկել ու չէին հավատում, ոչ ոք չէր համարձակվում կասկածանքի բույն հյուսել, մի տեսակ ինքնապատիժ ու դավաճանություն էին համարում կուրորեն ընդունել անտեղյակության դրոշմը:

«Էրեբունի» հիվանդանոցի առանձնացված մեկուսարանում բացվեցին դագաղները: Նրանց մեջ նաև Թաթուլն էր: Ռուզանը ուշակորույս ընկավ դագաղին, Սերգոն ճչալով գրկել էր քրոջը, եղբայրները բարձրաձայն հեկեկում էին՝ զարկելով ծնկներին... Թաթուլը չկար... Նրա կողքին հերոս ընկերներն էին, ինչպես պաշտպանական դիրքերում, այնպես էլ այստեղ միասին էին: Եկել էին նաև նրանց հարազատները: Շենգավիթցի Միշան ծունկի էր իջել որդու՝ Արթուրի աճյունի առջև, սառած հայացքով նայում էր նրան, քարացել էր, ասես լուռ արձան լիներ: Հոր սրտից արյուն էր կաթում: Սերգոն ու Միշան լացով փաթաթվեցին, թվաց՝ նրանց գլխին փուլ էր եկել այս անհիրավ աշխարհը:

Արեգցի տղաները մի կերպ նրանց դուրս բերեցին: Արտասվում էր ամպամած օրը, անձրև, թախիծ ու տխրություն էր մաղում երկինքը, շարունակվում էր կյանքի շնչակտուր հևքը: Իսկ թիկունքում իրենց մեծ լռությամբ կաղնու պես պառկած էին հերոսները, նրանց գարունն ու ծաղկածոց անձրևը, նրանց սխրանքի վրնջացող ձին մնացել էին Գետաշենում:

* * *

Շվարել էր Արեգ գյուղը: Գարնան օրը Արտին լեռան ողբն էր ցած բերել, ժայռերն ու բարձունքները սահմռկել, պապանձվել էին ցավից: Առաջին ծաղիկները միամիտ ու հեգ նախշվել էին գյուղի ճամփաներին, ասես տրտունջքի լացող աչքեր էին՝ հողեպսակ քնքշությամբ փռված Թաթուլի ոտքերի տակ: Գյուղի պռնկից ձեռքերի վրա նրան բերում էին արեգցիները: Վերջնականապես տուն էր գալիս Արեգի խիզախ զավակը, գյուղի զինվորն ու հրամանատարը,

Գետաշենի արծիվը: Փողոցները լեփ-լեցուն էին, տներում ոչ ոք չէր մնացել, եկել, Թաթուլին էին ուղեկցում հայրական օջախ: Գույժը երեկվանից փաթաթվել էր Ժորայի սևաբերդ դարձած քարեղեն տան քիվերին, վիշտը հասցրել էր անխնա խոշտանգել հոր սիրտը, մայրը ուժասպառ թեքվել էր քարերի շարուկին, նրան շրջապատել էին սգավոր կանայք և չէին համարձակվում ոչ մի բառ ասել: Խփվել էր մեծ նպատակի զինվորը, լուսեպսակ էր խավարել, ի՞նչ կարող էին ասել հավաքվածները, որ մեղմանար հարազատների կսկիծը:

Այդ գիշեր չքնեց Արեգը: Երիտասարդները ժամապահի պես հսկեցին գյուղի որբացած ոգին՝ այդ փխրուն պարույրի մեջ հյուսելով Թաթուլի քսանվեց գարունները: Վշտի անսպասելի նիզակով զարկվել էին բոլորը, չէին հավատում, որ կախարդիչ իր ժպիտով հեռուներից գյուղի ճամփան բռնած՝ իր հպարտ քայլերով այլևս չի գա նա: Ընկել էր մեծ պայքարին կյանքով պսակված և գերագույն նպատակի համար ինքնայրումով հրդեհված հրաշալի Հայդուկը, Մարդը, Քաղաքացին, Ուսուցիչը, Բանաստեղծը: Այդքան ընդգծված անհատականությունների դրոշմն էր մեկ սրտի մեջ, միակ ու վերջին երդումներով գրանցված: Եվ նա երկու սիրտ ունեցող Թաթուլն էր՝ Կրպեյան տոհմի հավաքական թռիչքը, Արեգի մեծ սիրո պտուղը, արեգցիների էրգրային կարոտի չմարող ջահը: Նա այս ամենը իր հետ տարել էր Գետաշեն՝ որպես ամենազորեղ զենք, վկայություն և վարք: Եվ ամբողջ ժամանակ առաջնորդվեց իր ծննդավայրի պատգամներով, որը տվել էին գաղթ, կոտորած ու կորուստ տեսած մարդիկ՝ նախիջևանցիներն ու ծփնեցիները: Նրանց իմաստուն խորհրդի մեջ բորբոքված չէր վրեժի բոցը, այլ ազնիվ հաշվետվությունը հիշողության առջև, պատասխան պահանջելու յուրատեսակ մկրտություն, որի ավազանով անցել էր Թաթուլը: Նա տերն էր իր նպատակին և անբեկ որոշմամբ ուղիղ էր մագլցել դեպի վեր, ուր իրենից առաջ անցել էին հայոց բախտի համար նահատակված այրերը, և գիտեր, որ իրենից հետո գալու են նորերը:

Այդ գիշեր երկինքը մանուշակ էր շաղել Արտի սարին, թել-թել ստվերները մետաքսի պես ու թափանցիկ քուղերով ձգվել էին ամեն կողմից, իջել առու-առու, ձգվել ցավի ծոցով, դարձել ողբի սնար: Այդ ամենի խորքից լուռ պատերի մեջ մի օրոցք էր ճոճվում, միակ շողքը, որի տաքուկ թրթիռն իր աչքի մեջ՝ ժայռի նման հառաչում էր Ժորա հայրը: Նա եկել, նստել էր Ասպրամիկի օրոցքի առջև, անհայր ու որբ դարձած իր թոռնուհուն ի՜նչ օրհնանք էր մաղթում, ցավի անագորույն ճիչերն իր մեջ պահած՝ ի՜նչ աստղունք էր շաղում նրա ճերմակ դեմքին, որ օրերի մեջ՝ հեռվում, պապենական

հին տան շնչին վայել մնա, ներկա լինի իր հայրիկի հիշողության չթառամող հույս ու դարձին:

Այդ գիշերվա տերը Թաթուլն էր՝ անխոս, հազար տեղից խոցված, բայց իրենով այնքա՜ն-այնքա՜ն ներկա: Վերջին անգամ քառասուն օր առաջ եկավ, հասկացրեց եղբայրներին, որ դժվարացել է Գետաշենի օրը, չթաքցրեց, որ դա նաև իր ճակատագիրն է, որ այն լքելու իրավունք չունի, իսկ ուսուցչին, երդվյալ մարտնչողին, իր նպատակներին խաչված մարդուն բացառված է երկընտրանքը: Սա վերջին խոստովանանքն էր եղբայրներին, իր գյուղին, Արտին սարին: Նա կանխազգացել էր այս ամենը, որովհետև իր աչքերի առջև էր նեռը զորացել, եկել, չոքել էր Գետաշենի դիմաց և պահանջում էր բնիկներին գաղթվել, հեռանալ, զարկում էր, երբ ուզենար: Թաթուլն ու իր ընկերները, գետաշենցի պայծառ սերունդը խառնեցին նրանց սպասելիքի դյուրին հաշիվները:

Սերգոն այս մասին գիտեր: Եվ հիմա, եղբոր աճյունի առջև խոնարհ, նա մեկ-մեկ քննում էր Թաթուլի մտքերը, մտաբերում բառը, ասելիքի տոնը... Եղբայրները հիմա ավելի խորությամբ էին ըմբռնում, որ նա իր վերջին այցով պարզապես եկել էր հրաժեշտ տալու հայրենյաց եզերքներին, հարազատներին, գյուղի մարդկանց... Մահի հանդեպ երկյուղ չուներ, նվիրումը նրան ուրիշ ուղեծիր էր հասցրել, որտեղ ոչնչություն էին մորթապաշտությունը, ապահով անկյուններում պատսպարվելը, եսասիրությունը: Նա պատրաստ էր ողջակիզվելու, կյանքը տալու, եթե իրենով կարող էր մի ազնիվ ծվեն փրկել, մի փունջ ժպիտ ավելացնել դժվարամատույց առավոտներին:

Նրա անսխալական բնազդն այդպես էր կամեցել:

Եվ Գետաշենը եղավ Թաթուլի և նրա ընկերների մեծագույն սխրանքի վկան:

* * *

Մայիսի 4-ին՝ շաբաթ օրը, Արեգը աչքերը բաց դիմավորեց այգադարձը: Գյուղը պաշարված էր սգերգի մեղեդիներով, Թաթուլի փառավոր շուքն էր տուն բերել արևը, որն իջել էր Արտին սարից ցավի անեզրական հունդեր շաղ տված գարունվող դաշտերին: Արեգը էլի ցավ էր տեսել, հնից մինչև հիմա կորուստ ու մահ էր տեսել, բայց չէր հաշտվում Թաթուլի կորստյան հետ: Նա այդքա՜ն երիտասարդ, բայց ինչպիսի՜ նվիրում ուներ դեպի հայրենյաց բախտը, ի՜նչ երազանքներ էր փայփայում, որ Գետաշենից հետո

«դեռ ճամփա ուներ անցնելու», պիտի տուն բերեր պապ Մարկոսի կարոտի աշխարհը:

Նրա փայփայված երազանքների փունջը հյուսած՝ Արեգը ձեռքերի վրա Թաթուլին հասցրեց գյուղի կենտրոն: Հազարավոր մարդիկ էին հավաքվել, արցունքը քարացել էր, հերոսին փառքի խոսքեր էին ասվում, շշուկը սրտերում դարձել էր շանթ: Մեքենաների շարասյուները դեպի մայրաքաղաք էին գնում՝ Ազատության հրապարակ: Արտին լեռը մեծախորհուրդ իր հայացքն էր նետել Թաթուլի հպարտ ճակատին. այս գիշեր, կարծես, զորացել էր նրա սիրո և տենչավառ նպատակների լույսով՝ նահատակ քաջի սլացող նժույգը պահելով լեռան խորքերում:

Ճանապարհը, որը ձգվում էր Արեգից, ծունկ տալով իջնում էր դեպի մայրուղին, Թաթուլի ամենասիրած վայրն էր: Ամեն անգամ հարազատներին, գյուղին հրաժեշտ տալիս, նա կանգնում էր փոքրիկ զառիթափի տակ, երկար նայում էր իր մանկության աներեր ընկերոջը՝ Արտին սարին, զրուցում նրա հետ, նրան վստահում իր սրտի գաղտնիքը, կարոտների խարույկը, ցավի իր տեսակը: Իսկ հետո նրա հույսի պատգամներով զորընդեղվում էր հոգով, սիրտը, հայացքը, սերը թողած՝ կամքի և նպատակի հրավառությամբ հեռանում էր:

Այսօր փակ էին նրա աչքերը, իր ընկեր Արտին լեռը կապույտ թրթիռներով շուք էր շաղ տալիս, հարալեզի նման շոյում էր նրա հայացքը, ներսից զարկված՝ շողանջում էր փակված զանգի պես, սակայն Թաթուլը չէր լսում: Նրան տանում էին մեքենաների շարասյուները: Առջևից գնացող մեքենան զարդարված էր ազգային դրոշներով, դիմապակուց բարձր Թաթուլի դիմանկարն էր, հայացքը՝ խրոխտ, ֆիդայականչ, աչքերում՝ ժպիտ: Առաջինը Թալին-շրջկենտրոնն իր գիրկը բաց արեց: Կենտրոնական փողոցի երկու կողմերում, հրապարակում հազարավոր մարդիկ էին՝ ձեռքերը վեր պարզած ցավի և վրեժի բռունցքներով: Թաթուլի ոտքերի տակ ծաղկագորգ էր, պատվի ամենակատարյալ հպարտությամբ Թալինը ճանապարհում էր իր զավակին: Այդպես մայրուղին ձգվեց մինչև Ազատության հրապարակ: Թվում էր՝ ողջ Հայաստան աշխարհն էր այստեղ. եկել էին՝ մի վերջին անգամ տեսնելու Գետաշենում զոհված քաջարի հնգյակին: Բարձր հարթակից խոստովանանքի, ցավի ու ափսոսանքի խոսքեր ասվեցին, ալեկոծվեց վիթխարի բազմությունը, խոնարհվեց այն տղաների առջև, ովքեր հայոց ազգային-ազատագրական տարեգրքում հավերժական գրեցին իրենց անունները:

Դարձի ճանապարհին շարունակվեց ժողովրդական սուգի ընդգծված խոնարհումը: Երևանը, Աշտարակը, Կոշն ու Ուջանը, Բազմաբերդը, Դավթաշենն ու Կաթնաղբյուրը լուռ և հպարտ փառահեղությամբ էին օծել հերոսի ճանապարհը: Թալինի Սուրբ Աստվածածին եկեղեցին Գրիգորիս եպիսկոպոսի մատուցած պատարագով ընդունեց Թաթուլին: Աղոթք-օրհնանքների ծես էր շրջկենտրոնում, հարատևության խորհուրդը նշխարաբույր իջել էր գարնան փխրուն միջօրեին, զարմանալի ցավի և երազային տուրքի միջօրե էր, հավատամքը փշրված բեկորներ էր հավաքում, հյուսում հերոսականի ազգային կերպարը:

Արեգ գյուղն այնպիսի քնքշանքով իր գիրկն առավ Թաթուլին, ինչպես դա ավանդաբար եղել է ճակատամարտերից տուն վերադարձած հաղթողների նկատմամբ: Գյուղի մատույցներից սկսվեց հոծ բազմության ալիքը, հասավ մինչև Կրպեյանների բնակարանը: Կանգնելու տեղ չկար, հրաժեշտի տուրքին եկել էին Հայաստան աշխարհի բոլոր կողմերից: Ժորայի տան դիմաց՝ նույնիսկ սարափեշերին, կանգնած էին մարդիկ, իսկ սարի գագաթին փողփողում էր Եռագույնը: Վիթխարահասակ Ժորայի լուռ հառաչանքները, Սեդա մոր տիեզերական ողբը, եղբայրների՝ Սերգոյի, Մինասի, Գրիգորի և Մանվելի դաժան կսկիծը, Ռուզան քրոջ անթարգմանելի ու վշտակոծ ինքնայրումը հունից դուրս էին բերել ներկաներին: Շվարած էր սգավոր Իրինան, նրա գրկում անմեղ թռչնակի պես ծվծվում էր Ասպրամիկը:

Թաթուլը չկար...

Շիրմատան եզրին պատռված ձնծաղիկների դաշտն իր գիրկն առավ հերոսին: Թարմ հողաթումբը ծածկվեց ծաղիկներով, ծաղկեպսակներով: Հետո խոսքեր ասացին մարտական և կուսակից ընկերները, շրջանի և գյուղի ներկայացուցիչները: Վերջում Ժորա հայրը ուժ գտավ իր մեջ, նայեց հազար-հազարներով իրեն շրջապատած մարդկանց, զսպեց հոգու ալեկոծը և դիմեց նրանց.

- Սրբազան նպատակի համար մատաղվեցին իմ Թաթուլը և նրա ընկերները, պիտի հիշենք ու հասկանանք, որ թանկ գնով ձեռք բերածը՝ հողն ու հայրենիքը, աչքի լույսի պես միշտ պետք է պահպանել, գուրգուրել, մինչև վերջ նրան հավատարիմ մնալ: Թաթուլիս բաղձանքները թող կիսատ չմնան, նա այդ սուրբ գործի համար չխնայեց իր կյանքը:

Շիրմատնից մարդիկ չէին հեռանում: Թաթուլի անջնջելի հմայքն ու խորհուրդը հավաքվածներին գամել էին, շղթայել մեծ ցավի

զգայուն թելերով: Դարձյալ արժանվույն խոսքեր ասվեցին, հնչեցին ազգային ոգուն հարիր երգեր, սրտերը տեղահան անող մեղեդիներ: Արտին սարի դիմաց հայրենասիրության փառահեղ դաս էր. ուսուցիչը դարձյալ Թաթուլն էր, նա իր մեծ լռությամբ ներդաշնակում էր խոսքն ու երգը, հույզն ու հպարտությունը:

Այդ գիշեր Արտին լեռը նման էր կապույտ հրաշքի: Աստծո թևերի տակ նա զորացնում էր իր ասքը, քանդակում Թաթուլի դիմապատկերը, խոնարհվում Ժորայի ու Սեդայի մեծ վշտի առջև:

Ասում են՝ ամեն ապրիլի 21-ին՝ Թաթուլի ծննդյան օրը, Արտին սարը, թողնելով ամպ ու աստղունք, խոնարհ իջնում է հերոսի շիրմաքարին, իսկ սրբաձայն հրեշտակները ծաղկուն պսակ-պատարագով փափագում են զարթնեցնել նրան, տանել հրաշքների իրենց աշխարհը:

Ասում են նաև՝ Թաթուլի ոգին ընդառաջ է գնում լեռան հավերժական խորհրդին, և նրանք օր օրի մոտենում են իրար, ձուլվում նույն օրոցքի չքառամող ասքերի ծոցում:

Երևի հնից մինչև այսօր այսպիսին է ազգային հերոսների ճակատագիրը:

Նրանց արծվային օրը բողբոջում է աստղերի տակ...

Հետադարձ ակնարկ

(Հեղինակի կողմից)

Թաթուլ Կրպեյան հայրենասեր-երևույթը միանգամից երևաց անցյալ դարավերջին: Նա և իր սերունդը ասպարեզում հայտնվեցին հայ ազատագրական պայքարի Մեծ սկզբից ուղիղ հարյուր տարի անց՝ քաջ իմանալով իրենց տեղն ու դերը, կարևորելով իրենց ներկայությունը մեծ պայքարում և այն զոհասեղանին, որտեղ վճռվում էր սրբազան հայրենիքի բախտը:

Եվ նա եկավ այդպես, ինքնամոռաց ու հպարտ մխրճվեց ազգային նպատակների անհանգիստ հորձանուտը և իր ճակատագրով դարձավ արժանապատվության ազնիվ կրողներից մեկը: Նա ճանաչեց իր բաժին աշխարհը, որը միայն իրենը չէր, էությամբ տրվեց այն գործին, որի ջահակիրները փլցնում էին անցյալի անարդար բեռը, դեպի նոր հազարամյակ էին գնում դարավերքերից մաքրված:

Թաթուլն այդ հին վերքերի մորմոքներն ուղիղ չէր կրել իր վրա, այդ մասին լսել էր ծննդավայր Արեգի մեծերից, իր պապ Մարկոսից, իր տատ Գուլոյից: Նա իր սերնդակիցների հետ անցել էր Արեգ գյուղի գաղթական այրերի դպրոցը, հավաքել նրանց մասունքահամ բառ ու բանը, երգն ու տաղը, որոնք Մեծ եղեռնից հետո բերել էին Ղարսի նահանգից, Կաղզվանի Նախիջևան և Օփնի գյուղերից: Թաթուլը մեծացել էր էրգիր հիշողների անթառամ սոսափների տակ, տխրության ու մորմոքների ամենօրյա պատկերը նրան չէր կարողացել անվերադարձ տիրել, բնությունը, իր ազդեցիկ ու բարի ծնողները, հայրը, հրաշալի եղբայրները, նաև գյուղի ոգին տոկալու, զորընդեղ մնալու բնույթն էին շռայլորեն պարգևել նրան:

Գիրքը իր խորագրով դա է հուշում, և բովանդակ տարածության մեջ փորձ է արվում հերոսին տեսնել պապենական ակունքներում:

Որտեղի՞ց է գալիս Թաքուլը, ի՞նչ արմատներից է կենսավիշ քամում նրա հոգին: Մարդ-անհատականության համար, հավանաբար, շատ կարևոր է Երկիր մոլորակի այն կետը, որը կոչվում է ծննդավայր. իսկ կենսականչերով լեցուն տոհմը, հայրական օջախի անկրկնելի մանրամասները, մանկության առաջին պատկեր-տեսադաշտի ցոլքերը անվերջ թվացող կյանքի ճանապարհին նոր գույն և իմաստ են ստանում, շարունակում են հաստատվել ու մնալ:

Գրքի առաջին բաժինը Արեգ գյուղի հեռացող թախիծն է, որի կրողները մեկ-մեկ հրաժեշտ են տալիս կյանքին՝ թողնելով իրենց հողմածեծ բախտի առագաստները, Ախուրյան գետից այն կողմ իրենց միամիտ, ազնիվ ու բորբոքուն կարոտների էրգրային չմոռացվող հասցեն:

Պապերի ու թոռների միջև ձգված մշտաջերմ տարածքում, որքան էլ խանգարող ու խակ գլուխներ են եղել, փորձել են հիշողությունը հեռացնել իսկությունից, խլացնել ծննդավայր կորցրած գաղթականների արցունքոտ և լուռ ցավերով շաղախված կանչը, ոչինչ չի ստացվել, քանզի դարասկզբին տնավեր դարձած, բազմատանջ ու բազմափորձ մարդիկ հասցրել էին փոխանցել հին ու հանապազօրյա իրենց դասագիրքը՝ ուղիղ հավատը, խիղճը, բարին՝ ընդ արեգական:

Թաքուլն այդ ավազանում է մկրտվել, նրանց կարոտների խրձերն է հրկիզել իր ներսում, որ այդ թրծվածքով դիմանար եկվոր փոթորիկներին: Այդպես էլ իր բաժին ժամանակը տաք հորձանքի մեջ է պահել Արեգի սերունդը. նրանք, ովքեր Մեծ հայրենականից հետո եկան փոխարինելու գյուղի առաջին տերերին, կառուցեցին իրենց շենը, նրանք, ովքեր անցյալ դարավերջին կարոտի վարագույրը մի կողմ տարան՝ մտնելով ազատության մեծ կռվի բաց դաշտ: Արցախ մեկնեցին տասնյակ արեգցիներ: Նրանցից մեկը՝ երդվյալ Սարգիս Կարապետյանը՝ մարտերում երկու անգամ ծանր վիրավորված ազատամարտիկը, ինչպիսի՜ հպարտությամբ է խոսում Թաքուլի մասին, ապա մի առանձնակի ջերմությամբ ներկայացնում Սամվել Կարապետյանին, Տիգրան Քոչարյանին, Աղասի Մաթևոսյանին, Գոռ Գրիգորյանին, Գրիգոր Կարապետյանին, Շահեն Պետրոսյանին, Արթուր Բաղդասարյանին...

Նրանցից երկուսը՝ ջահել, կենսասեր և ազատաբաղձ Սամվել Կարապետյանն ու Արթուր Բաղդասարյանը, զոհվեցին 1993-ի մարտի 6-ին Մամիկլու գյուղի բարձունքներում՝ Կիչան-Սրխավենդի դիմաց: Դաժան ու դժվարին օր էր: Արթուրը զոհվեց, ջոկատը

ծանր դրության մեջ էր, վիրավոր էր Վրեժը: Բարձունքին հասնելը գրեթե անհավանական էր: Սամվելը մեն-մենակ մղվեց առաջ: Տղաներին օգնության հասնելու ահագնացած որոշումն անբեկանելի էր: Նա այնքան համոզված էր, որ թշնամու գնդակը չի հասնի իրեն, գնում էր վերջին մի սխրանքով, համառ ու նպատակասլաց: Սակայն ազերին դեմ-դիմաց կռվողներից չէր և հասցրել էր տեղադրել դավադիր ականը: Սամվելը, որքան էլ զգույշ ու հաշվենկատ էր, բայց կատարվեց անդառնալին, ուղիղ ոտքերի տակ պայթեց թշնամական «վիշապը»: Նա անհուսալի ընկավ՝ հայացքը բարձունքին, ուր տղաներն էին... Ծանր վիրավորվել էր:

Սարգիս Կարապետյանը իր ջոկատով մղվեց դեպի բարձունքը: Սամվելին գտան պատռված հողափոսի կողքին՝ բզկտված ծառաբնին հենված: Նա դիմանում էր վերջին ճիգերով: Հասկանալով իր վիճակը՝ Սամվելն արձակեց ձեռքի ժամացույցը և այն հանձնեց կաթնաղբյուրցի Արագած Մկրտչյանին.

- Պահպանի՛ր այս հիշատակը, իմ ժամանակը կանգ առավ...- սա նրա վերջին խոսքերն էին:

Եվ մինչև կհասցնեին շտապ օգնության մեքենային, Սամվելն աչքերը փակեց իր ընկերոջ՝ արտենցի Արմենի ձեռքերի վրա:

Սամվելի և Արթուրի աճյունի առջև դարձյալ սգաց Արեգը: Նրանց անունն ու փառքը միավորվեցին գյուղի մեծ ոգու հավիտյան երթին, նրանց ճախրանքի դաշտը պսակվեց Արտին սարի շանթաբույր ճակատին, որտեղ իր արծվաթռիչքն էր արևին տանում Թաթուլի ոգին:

Տիգրան Քոչարյանը, Գետաշենի դեպքերից հետո մի խումբ ընկերների հետ անցնելով դժվարանց լեռներ ու անտառներ, շուրջ մեկ ամիս հետո միայն հայտնվեց Արեգում: Պատմում են, թե Ժորան՝ Թաթուլի հայրը, ինչպիսի ուրախությամբ էր գրկել անհայտ կորածին. նա պատկերացրել էր, որ իր Թաթուլն է վերադարձել, սփոփված շնորհակալ էր եղել Աստծուն, որ տուն էր եկել իր որդու անմիջական ընկերը՝ Գետաշենի մեծ տառապանքին տեղյակ ու մասնակից ազատամարտիկը:

...Թաթուլի անմահ սխրանքը չէր կարող համաժողովրդական արձագանք չունենալ: Արեգի միջնակարգ դպրոցը 1991 թվականի սեպտեմբերը դիմավորեց՝ կրելով քաջ հայորդու անունը: Այդ անմոռաց և հուզիչ արարողությանը մասնակցում էին Թաթուլի, Արթուրի և Վալերիկի հարազատները, ընկերները, բարձրաստիճան հյուրեր: Սրտամոտ խոսքեր ասացին հրապարակախոսներ, արձա-

կագիրներ Գևորգ Դևրիկյանը, Սամվել Շահմուրադյանը, ապա Աշոտ Քերոբյանը, «Զորավար Անդրանիկ» միության նախագահ Նորայր Մուշեղյանը: Հնչեցին հայրենասիրական բանաստեղծություններ, իսկ «Մարաթուկ» ազգագրական խմբի հոգեհմա երգերը ծուլվեցին օրվա անմոռաց խորհրդին:

ՀՀ Գերագույն խորհրդի 1996-ի սեպտեմբերի 9-ի որոշմամբ՝ Թաթուլ Կրպեյանին հետմահու շնորհվեց Հայաստանի Ազգային հերոսի ամենաբարձր կոչումը: Մեծ պարգևը հերոսի ծնողներին հանձնեց պետության ղեկավարը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Արեգը Մեծ հայրենականի հուշարձանի բարձրությամբ ունեցավ արցախյան հերոսների տուֆակերտ հուշասյունը, որը քանդակագործ Տարիել Հակոբյանի մեծ տաղանդի հրավառության նմուշ էր՝ վեր խոյացած Թաթուլի շիրմաքարի առջև: Հուշարձանի բացման օրը համաժողովրդական հավաք էր Արեգում: Այստեղ էին Թաթուլի ընկերները, երկրապահ ջոկատների հարյուրավոր տղաներ, պետական այրեր ու ողջ Արեգը: Քաջ հայորդուն եկել էին իրենց երկրպագության և երախտագիտության խոսքն ասելու բազմաթիվ գետաշենցիներ: Հուշարձանի կառուցման գործում իր հովանավորությունն էին ունեցել «Զորավար Անդրանիկ» միությունը և անձամբ Նորայր Մուշեղյանը:

Ժամանակի տաք զարկերակի մեջ իր տեղը միշտ պահպանած անվանի արձակագիր, արժանահիշատակ Գևորգ Դևրիկյանը 1993-ին ընդարձակ առաջաբանով տպագրեց Թաթուլ Կրպեյանի բանաստեղծությունների գրքույկը՝ փառքի պսակ հյուսելով նրա անթառամ հիշատակին:

Գետաշենյան դեպքերի ականատեսի իր ցավ ու վիրավորանքի, ինչպես նաև Թաթուլի և նրա ընկերների մասին իր մեծ հիացումի պայծառ պատումն ունեցավ Գետաշենում հայտնի լրագրող Վարդան Հովհաննիսյանը:

Արեգցի շնորհալի բանաստեղծ Ռազմիկ Գալստյանն իր «Ակնթարթների անմահությունը» բանաստեղծությունների ժողովածուում հոգեբուխ, հրաշալի ձոներգերի շարք է նվիրել պայծառանուն Թաթուլին: Ահա շատ խոսուն մի քառատող՝ ընտրված բանաստեղծությունից.

Քո մատաղ հոգում սուրբ Անդրանիկ կար,
Եվ լույս Նժդեհ կար, քաջի՜ խենթություն,
Դու Ծիր-Կաթինից շառաչով ընկար...
Ընկար, դառնալով լուսե պատմություն...

Հերոսին և Գետաշենին վայել փառավոր երգեր են հյուսվել աշուղ Գևորգի և գուսան Հայկազունու կողմից: Աշուղ Գևորգը շշնջում է.

Մի ասուղ սահեց, գնաց երկնակամարով,
Հավքերն եկան անցան լուռ արտասվելով,
Ավա՜ղ, Թաթուլն էր ընկել կռվում քաջարի,
Մի լուր տարեք հավքեր, մորը հայդուկի:

Իսկ Հայկազունին ցավի իր ճիչն է գրանցել Գետաշենի ճակատագրին.

Թառել ես լեռներին, ունես հազար շեն,
Արծիվների բույն ես, ըմբոստ Գեսաշեն,
Բարբարոս ցեղերին անդադար սանձող
Քաջերի ամրոց ես, իմ քաջ Գեսաշեն:

Հայկազունու «Հպարտ գնացեք» երգի մեջ խորհուրդ-հավատամքի կոչեր կան, որոնք, կարծես, բխում են Թաթուլի և նրա նահատակ ընկերների խիզախ հոգիներից.

Ինչքան էլ որ դժվար լինի, դիմացե՛ք,
Վախկոտն ամեն օր է մեռնում, իմացե՛ք,
Քաջերը՝ մեկ անգամ փառքով, իմացե՛ք,
Հողը արյունով են պահում, իմացե՛ք:

Ժողովրդական վիպասքը վսեմ նահատակների համար դեռ այնքա՜ն սեր ու ասելիք ունի: Ժամանակների հետ կծաղկեն դրանք, լույս աշխարհ կգան պատմության անդադրում ղողանջները, որոնց տաք զարկերակով իրենց Մեծ լռությունից կվերադառնան Նրանք, ովքեր բաց աչոք նայեցին մահին, գիտակցաբար գնացին՝ հավատալով, որ իրենց վերադարձը ծնվող ամեն մանկան սրտում է, բացվող ամեն լուսաբացի կենսափայլ շողերի մեջ:

Երևանի մայր բուհի հին մասնաշենքում, ուր պատմության ֆակուլտետն է տեղավորված, երկրորդ հարկի ընդարձակ լսարաններից մեկը կոչվում է Թաթուլ Կրպեյանի անունով: Լսարանը նման է սրբազան երկյուղածությամբ օծված տաճարի: Այստեղ Արցախի ազատամարտի հերոսների մեծադիր լուսանկարներն են նայում պատերից, թանկ ու իրեղեն մասունքներ են հավաքված, խնամքով ու բացառիկ սիրով է դասավորված այն ամենը, որից հառնում են ակնածանքը, սերը, խիզախությունը, ոգիների շարունակվող թռիչքը:

Նույն՝ մայր բուհի հրապարակում՝ վեհասլաց մեծադիր խաչքարին, 22 նահատակ համալսարանականների անմեռ հոգու թռիչքն է սրբագործված, որտեղ նաև Թաթուլի բաբախուն սրտի ընծայագիրն է, ապրողների սիրո և նվիրումի առհավատչյան:

Գրքի առաջին մասը, առաջին էջերը հիմնականում Ազգային հերոսի առնչություններն են իր գյուղի մարդկանց հետ: Անհրաժեշտ է լայն ընդգրկումների մեջ տեսնել բոլոր արեգցիներին: Խնդրին մոտ կանգնած ընթերցողները չպետք է բծախնդրորեն անուններ ու բացականեր փնտրեն, որովհետև նույն ոգու ամփոփի մեջ են բոլորը: Այս տեսակետից, որքան էլ պատումը միտված է որոնելով հաստատել Թաթուլ-երևույթի սկզբնաղբյուրը, նույնքանով էլ բացահայտվում են Արեգ գյուղի, նրա մարդկանց հավաքական ուժը, հայրենասիրության դասերը, նրա հին ու նոր կարոտի ապրեցնող հմայքն ու հուշապատումը: Թաթուլը և իր ծննդավայրի կերպարը նույնանում են դեպի հերոսականը ձգվող իրադարձությունների լայն շրջանակում: Մեկը մյուսին փոխանցելով բարության և նվիրումի անհերքելի հունդերը՝ դառնում են տվյալ ժամանակին յուրահատուկ հայրենասիրական լուրջ ու գերազնիվ նպատակների կրողները: Այստեղ հասարակությունը լայն իմաստով մեկի հավաքական կերպարի մեջ է, անհատը իր միջավայրին, նրա լուսավոր բաղձանքներին հավատարիմ ծառայող մարդ-քաղաքացի է ու երդվյալ զինվորը: Թաթուլին, արեգցի Սամվելին ու Արթուրին պետք է տեսնել գյուղաշխարհի փառավոր հուշերում, նրանց մեծ սխրանքի տաք թրթիռը զգալ Արեգի բաբախուն զարկերակի մեջ:

Այս գրքի բանալին Թաթուլն է, նրա վարքն ու վեհությունը Արեգի մեծ մատյանի էջերից են, ներկա-բացակա բոլոր անունների տաք վկայությունը: Նա առաջին հերթին ոգեղենի դասերը ստացել է իր տոհմից, իր սովորած դպրոցից, ուսուցիչներից, Արեգի հացաբույր ամառներից, Արտին սարի կապույտ ու կարծր բնույթից: Եվ այս ամենով է նա մտել կյանք, դարձել պատմաբան ու բանաստեղծ, անշրջելի գաղափարների նվիրյալ: Այսպիսի զինվածություն է ունեցել, մինչև որ ինքնաձիգը ուսին՝ մեկնել է Գետաշեն: Իսկ 1990-ական թվականներին Գետաշեն գնացողները քիչ էին: Ընտրյալներն էին միայն այցելում ու հետ գալիս, իսկ ով ուզում էր երկարատև մնալ այնտեղ, նշանակում է պատրաստ պիտի լիներ նաև մարտիրոսանալու:

Թաթուլը Գետաշեն տարավ Արեգ գյուղի մեծերի կարոտ-աղբյուրը, դրանով պիտի դիմանար, հյուսվեր գետաշենյան օրորոցին: Եվ այնտեղ գտավ եդեմական եզերքներ, բնության և հայ մարդու դարավոր դաշնություն, հնի հիշատակություններ, նորի պաշտպան-քաջեր: Այստեղ նա վերագտավ իր պապերի ոգին, նրանց տագնապ-ցավերի նույն տեսակը, իրենց հողն ու ծննդավայրը

պաշտպանող, իրենց երեխաներին և պապենական սրբությունները փրկելու պատրաստ նույն մարդկանց:

Թաթուլը նպատակի զինվոր էր, թեև երիտասարդ, բայց շրջահայաց և հեռուն տեսնող, ակնթարթորեն կողմնորոշվել գիտեր, ճակատագրական պահերին հանուն գործի, գաղափարի, հանուն մարդու պատրաստ էր զոհաբերել կյանքը:

Նա, առհասարակ, ընկերասեր էր, իսկ Գետաշենում գործեց մեծ ընկերության չգրված օրենքը, որն ընդգծվեց թե՛ տեղացիների և թե՛ այն հրաշք տղաների առնչությամբ, ովքեր Հայաստանի բոլոր կողմերից՝ իբրև մեծ կամքի ընտրյալներ, եկել էին Գետաշեն ու Մարտունաշեն՝ չերկնչելով ցանկացած անակնկալից: Նրանց մասին գրվել ու դեռ պիտի գրվեն նոր գործեր, պատմական ուսումնասիրություններ: Գետաշենի ու Մարտունաշենի առեղծվածը բացահայտելու խնդիրը դրված չէր մեր առջև, պարզապես Թաթուլի գետաշենյան օրերը հետո դարձան բուն գետաշենցիների երախտագիտության աղբյուրը: Նրանց հետ բոլոր հանդիպումների ժամանակ տղամարդ, թե կին՝ իրենց սիրտն էին բացում, փառքի լուսավոր բառեր շշնջում Թաթուլին, նրա անձնուրաց ընկերներին՝ վկայելով, որ նրանք գիտակցաբար զոհվեցին, որպեսզի Գետաշենը սրի չքաշվեր: Այո՛, պատմությունը, Գետաշենի ու Մարտունաշենի կենդանի վկաների անառարկելի փաստերը, մեծատաղանդ լրագրող և հրապարակախոս Սամվել Շահմուրադյանի փաստագրական աղբյուները, Թաթուլի գետաշենցի ընկեր-ուսուցիչները, նրա աշակերտները, ինչպես նաև բժշկական խիզախ անձնակազմից մնացած Սիլվան ու Գևորգը և, վերջապես, բոլորը, առանց բացառության, հավաստում են գետաշենյան մեծ տառապանքի ճշմարտացիությունը և անկարող են մոռանալ այդ օրերի մարտական սխրանքի և ինքնազոհողության հավերժաձայն դասը:

Գրքի երկրորդ մասում Գետաշեն բառը նշանակում է ողջ գյուղի հավաքականությունը, հին ու հնավանդ, նոր ու հավատակուռ ոստանի յուրաքանչյուր անհատ, շարքային ու մտավորական, ծեր ու ջահել, ուսուցիչ, ուսանող, աշակերտ, հողագործ այրեր, գետաշենցի վսեմաշուք կանայք, մայրեր, քույրեր: Գետաշենը մնում է Գետաշեն՝ ամբողջական ու հզոր, ուստի գրքում պետք չէ մոռացված անուններ փնտրել, բոլորը ներկա են, շոշափելի են նրանց ուժն ու հմայքը, բողոքն ու զայրույթը, վրեժն ու ցասումը: Նրանք այսօր տուն ու տեղ են գտել Հայաստանի տարբեր քաղաքներում ու գյուղերում, սակայն Մեծ դարձի կարոտը էպոսական ուժգնությամբ պահպանում

է ծննդավայր Գետաշենի հեքիաթային պատկերը, մասունքների դաշտը Եղնասարի վանքի շուրջբոլոր, ուր դեռ ծաղկում են վտարանդի գետաշենցիների տերունական աղոթքները, հույսը ճեղքում է անիրավության ժայռադուռը, կարոտի ծիածանը ձգվում է Գարդմանա աշխարհ: Իսկ այդ պերճաշուք աշխարհի համար որքան ջանքեր թափեցին Երևանում ստեղծված Գետաշենի հայրենակցական միությունը, նրա անխոնջ նախագահ Բենիկ Սիսյանը, Վասիլ Նալբանդյանը, Ռիտա Չիլինգարյանը, փառքի երեք շքանշանների ասպետ Իսահակ Կարախանյանը, Նորիկ Մայիլյանը և ուրիշներ:

Եվ վերջապես նշանավոր կապավոր Լենա Ավագյանի, Գետաշենի միջնակարգ դպրոցի մայրենի լեզվի ուսուցչուհի Ժաննա Արզումանյանի, որն ի դեպ աշխատել է Թաթուլի հետ նույն կրթօջախում, հիմա էջմիածնի Շահումյան գյուղի դպրոցի ուսուցիչներից է, մանկավարժ Սիլվա Խամփերյանի, Թաթուլի մարտական ընկեր, նրան սպասարկող մեքենայի վարորդ Մերուժան (Մեժո) Չիլինգարյանի, նրա տիկնոջ՝ Օֆելյայի, գետաշենցիներ Բորիկ Ղուլյանի, Մարիամ Մինասյանի, Անահիտ Գուլյանի, Սոնիկ Խամփերյանի, Եղիշ դայու, Աշոտ քեռու, Վասիլ Նալբանդյանի, Արսեն Աթանեսյանի և տասնյակ այլ գետաշենցիների տեղեկությունները Թաթուլի գործունեության մասին ընդամենը հերոսական ասք էին, լուսապայծառ վիպերգ մի երիտասարդի սխրանքի, որով նա կանխեց Գետաշենի անմեղ մարդկանց կոտորածը: Նրանց պատմությունները սովորական ձև ու փաստի արձանագրում չեն, այլ խոստովանանք, դավանանք ճշմարտությանը, ինչպես աստվածապաշտը եկեղեցու խորանում: Չգտնվեց մեկը, որ Թաթուլին նեկայացնելիս երերար իր կարծիքի մեջ. միայն խոնարհում ու երախտագիտության խոսքեր էին, արցունքոտ աչքեր, հուզմունք և հոգու ալեկոծ:

Թաթուլն ապրում է վտարանդի գետաշենցիների բաբախուն սրտերում, նրա անունով աշխարհ են գալիս մանկիկներ, որոնք հետո կհարցնեն, կքննեն.

- Ո՞վ է Թաթուլը:

Որպես պատասխան՝ կապավոր Լենան՝ հայրենասեր և անձնուրաց գետաշենցի տիկինը, Թաթուլի քառասունքի օրը ծնված իր թոռանը բաշխել է Թաթուլ անունը և արդեն հասցրել է նրան պատմել Թաթուլ Կրպեյանի անօրինակ սխրանքները:

Այնպես որ ականատեսները սրբագործում են իրենց տեսածը, բայց մեծ առումով պատմությունը տակավին ասելիք ունի: Դեռ պիտի գա այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրողությունների

բացահայտման և ստույգ գնահատման անհրաժեշտ պահը: Սակայն ինչ էլ ասվի, ընկել են Գետաշենն ու Մարտունաշենը, հայտնի է, որ հանուն իրենց գյուղերի դասալիք չեն եղել տեղաբնակները, նրանց չլքեցին ինքնամոռաց այն տղաները, ովքեր մինչև վերջ մնացին իրենց ուխտին հավատարիմ:

Դեռ պիտի գրվեն Թաթուլ Կրպեյանի, Սիմոն Աչիքգյոզյանի, Հրաչ Դանիելյանի, Վահան Ջատիկյանի, Արթուր Կարապետյանի մասին:

Լեռների ծոցում ծվարած Աղավնաձոր գյուղում Հրաչի հայրը՝ Ցոլակը սպասում է, որ իր որդու հերոսական անցած ճանապարհը, նրա գիտակցված մահը ըստ արժանվույն կգնահատվեն պետության կողմից:

- Հրաչիս մահը գերեզման տարավ իր մորը՝ Բուրաստանին, և եղբորը՝ Մուշեղին,- իր տանը հանդիպման ժամանակ ասաց Ցոլակ Դանիելյանը,- նրա երեխաները գիտեն, որ իրենց հայրը՝ աղավնաձորցի իր ընկերների հետ բազմաթիվ կռիվներ է տվել Հայաստանի սահմանները պաշտպանելիս: Վերջում նա իր բախտը կապեց Գետաշենի հետ, այնտեղ էլ զոհվեց՝ անմիջապես Թաթուլի կողքին: Վերջապես Հրաչս էլ պիտի գնահատվի, որ նրա զավակները՝ Կարենը, Վարդուհին և Արմանը, տեր դառնան իրենց վիրավոր և հպարտ հիշողությանը:

Հայրական այս կանչի մեջ և՛ ներողամտություն կա, և՛ վիրավորանք և՛ սպասում: Աղավնաձորի սարերին թիկնած Ցոլակը հավատում է, որ պետությունը կթերթի իր հիշողության մատյանը և ըստ արժանվույն կգնահատի Հրաչի սխրանքը:

Այդպիսի ակնկալիքով ճիշտ գնահատության և լուրջ մոտեցումի են սպասում հերոսաբար զոհված Արթուր Կարապետյանի հարազատները, Երևանի Շենգավիթում ապրող նրա ծնողները՝ Միշան և Ստելլան: Հայրը ինքն է խնամում այն փոքրիկ պուրակը, որը կոչվում է Արթուրի անունով, ամեն օր մոտենում է որդու կիսանդրուն, զրուցում, մղկտում, հպարտանում:

Արթուրի եղբայրը՝ Գագիկը, ծնողներին զարմանքով պատմել է, որ Արթուրի ծննդյան օրը, երբ դեռ քնած է թաղամասը, մի աղջիկ է գալիս՝ կրծքին սեղմած սպիտակ վարդերի փունջը, մտամոլոր ու կսկծալի վերհուշով արձանանում Արթուրի կիսանդրու առջև, ապա խոնարհվում, ծաղիկները թողնելով կիսանդրու առջև՝ գլխիկոր հեռանում է: Ծնողների հարցին՝ ո՞վ է նա, Գագիկը մեկ տարի հետո՝ նույն օրը, վերջապես բացահայտեց գաղտնիքը. նա Գետաշենի դպրոցի տասներորդցի աղջիկն է, այդ օրը նա հագնում է միայն

երկնագույն զգեստ, դա Արթուրի սիրած գույնն էր, գալիս է մշտաբողբոջ սիրո հետքերով, աշխարհից թաքուն իր համար սրբագործում է Արթուրի ծննդյան օրվա հավերժական շրջապտույտը՝ տանելով մեկ տարվա իր սիրո պաշարը, որ ամենքից թաքուն՝ նրա գուրգուրող տեսիլքների ծոցում չկորցնի իր հեքիաթի հերոսին:

Կյանքը շարունակվում է...

Իսկ Արեգում ամեն տարվա ապրիլի 21-ին՝ Թաթուլի ծննդյան օրը, հերոսի շիրմին այցի են գալիս Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ֆակուլտետի ուսանողները, նրանց հետ իրենց շատ սիրելի դասախոսն է՝ արեգցի Արտավազդ Դարբինյանը: Հայրենասերների խումբը բարձրանում է Արտին սարի գագաթը, մոմեր վառում խաչքարի առջև, իրենց հոգիների հրավառությունը խառնում մեծ խարույկին: Շրջակա աշխարհը զգում է հերոսի և հերոսականության անմահությունը, բոցասիրտ լեռը վկայում է ապրողների պարտքը, նրանց ուխտագնա խորհուրդը, որի անշեջ հուրը շարունակվում է ապրիլի 24-ի գիշերը՝ ավետելով հազարաբույր խոնարհումի մշտականչ ծեսը, խնկարկելով ոգեպաշտության անթառամ պսակը...

ՀԱՎԵՐԺ ԿԵՆԴԱՆԻ ԹԱԹՈՒԼԸ

ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Ուխտագնացություն Ծաղկավանք. փոքրիկ Թաքուլը ծնողների և հարազատների հետ (կենտրոնում կանգնած)

Թաքուլը Սերգոյի որդու՝ Արտակի հետ

Թաքուլը հանրակացարանի իր սենյակում՝ ընկերների հետ

Թաքուլը՝ համակուրսեցիների հետ Գառնիում



PUMA

ԱՐԴ ԵՎ ՀԱՎԻՏՅԱՆ ՓԱ՛ՌՔ ՔԵԶ ՈՒ ՔՈ ՓԱՌԱՊԱՆՇ ԳՈՐՇԻՆ

Հերոսների ծնունդը նախասահմանված է. նրանք աշխարհ են գալիս իբրև վկայություն երկրայինի ու երկնայինի հզոր ներդաշնակության:

Թաթուլ Կրպեյան. անուն՝ հնչեղ ու վսեմ, սուրբ երդման նման հաստատուն և աղոթի պես մաքուր, որ անջնջելի դրոշմով հավերժացել է հայկյան քաջերի պատմության ոսկետառ մատյանում:

Նա աշխարհ եկավ Հայոց մեծ եղեռնից գրեթե կես դար անց՝ 1965 թվականի ապրիլի 21-ին: Եկավ՝ իր տեսակով հաստատելու, որ Հայոց երկիրը փյունիկ թռչնի նման հավերժ կենսունակ ու վերածնվող է, հայ հողը միշտ պտղաբեր ու արգասավոր է, հայ ժողովուրդը քաջազարմ ու քաջածին է, իսկ հայ քաջերը հայրենապաշտ հերոսներ են: Նա ծնվեց այն ժամանակ, երբ բնությունն անհագ զարթոնք էր ապրում: Դա նաև մեր ժողովրդի ինքնագիտակցության նոր զարթոնքի ժամանակաշրջանն էր: Թերևս այդ երկու հանգամանքներն իրենց զորությամբ սահմանեցին նորելուկ քաջի կյանքի իմաստը, ի սկզբանե հաստատագրեցին հայրենիքի ու ժողովրդի նվիրյալի ուղին:

Իր հազարավոր տարեկիցների նման Թաթուլը ևս ունեցավ անհոգ մանկություն ու երազկոտ պատանեկություն, բայց և նրանցից տարբերվեց իր ընդգծված անհատականությամբ, ինքնատիպ մտածողությամբ, ոչ սովորական վճռականությամբ ու հաստատակամությամբ: Ամենքին ու ամենին հարգալից վերաբերվող պատանու նվիրական հավատամքներից ամենակարևորները, թերևս, սերն ու պատվախնդրությունն էին, ծնողի, հարազատի, ընկերոջ, հայրենիքի հանդեպ սերը, հայոց տունը միշտ կանգուն պահելու պատվախնդրությունը: Այդ սկզբունքները նրա անդավաճան ուղեկիցներն էին ամենուր՝ թե՛ դպրոցում, թե՛ խորհրդային բանակում ծառայության ժամանակ, թե՛ Երևանի պետական համալսարանում ուսանելիս: Սակայն դրանք առավելագույնս դրսևորվեցին Արցախյան ազատամարտի օրերին:

Արցախի համար օրհասական ժամանակաշրջան էր: Հայոց հինավուրց հողը վտանգված էր և սպասում էր աննկուն զինվորյալներին, իսկ արցախահայ մանուկներին էլ հոգով զինել էր հարկա-

վոր: Ամեն հարցում հաստատակամ ու արդարամիտ, վճռական ու հախուռն բնավորությամբ Թաթուլի որոշումը հաջորդ պահին արդեն գործ էր: Հայոց մայր բուհի պատմության ֆակուլտետի ուսանողը, որ հրաշալի գիտեր իր ժողովրդի պատմությունը, նրա անցյալի տառապանքի, մաքառումների ու հերոսական էջերը, դարձավ հայ ժողովրդի նորօյա պայքարի վավերագիր-պատմագիրներից մեկը, զինվորագրվեց մեր ժողովրդի արդար պայքարին:

Համալսարանականի իր կենսագրությունը Թաթուլը շարունակեց Արցախի պաշտպանության դիրքերում՝ զենքը ձեռքին, և միաժամանակ Գետաշենի դպրոցում՝ ուսուցչի ու դաստիարակի պարտականությունը հոգում: Սիրվեց ու սիրով գնահատվեց գետաշենցիների և իր աշակերտների կողմից, հարգվեց ու փառաբանվեց զինակիցների կողմից: Հավատաց իր մղած կռվի արդարությանը և իր գործով մեծ ու փոքրին հավատացրեց հաղթանակի անխուսափելիության մեջ: Պարթև ու առնական իր կեցվածքով, իր պայծառ լավատեսությամբ հայրենակիցներին ոգևորող ու թշնամուն սահմռկեցնող հայորդին, ավա՜ղ, չհասցրեց իր խրոխտ պարը պարել վերջնականապես ազատագրված Արցախ աշխարհում: Նա հերոսաբար զոհվեց՝ իր կյանքի 26-րդ գարունը նոր-նոր բոլորած՝ 1991 թ. ապրիլի 30-ին:

Այսօր նրա՝ Հայաստանի Ազգային հերոս, Հայրենիքի քաջարի պաշտպան Թաթուլ Կրպեյանի արդեն 50-ամյակն է: Եվ իր անտես ներկայությամբ նա դարձյալ մեզ հետ է, մեր կողքին, քանզի նա միշտ այնտեղ է, ուր նրան սիրում ու սպասում են, և ոչ իբրև հուշ ու լեգենդ, այլ հավերժ կենդանի ու իրական:

ԱՆԱՀԻՏ ԲՐՈՒՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

ԵՐԲ ԲԱՑՎՈՒՄ Է ՄՀԵՐԻ ԴՈՒՌԸ

Դառնամ զօղորմին տի տամ

Ժորժիկ հայրիկին, Սեդա մայրիկին…

էս տեսակը ազգիս պարգևելու համար:

Անսկիզբ ու անընդհատ զրույց է հյուսվում ներսումս՝ Թաթուլի մշտական ներկայությամբ ու հարամնա բացակայությամբ:

Հետաքրքիր ու խոսուն եղավ մեր հանդիպումն ու ծանոթությունը:

Համալսարանի նախապատրաստական կուրս էինք ընդունվել: Թաթուլը մեկ թե երկու շաբաթ հետո դասի եկավ: Դասախոսը ծանոթացավ նրա հետ և հարցրեց՝ որտեղից է ծնունդով: Թաթուլը ներկայացավ, ասաց, որ Թալինի շրջանի Արեգ գյուղից է:

Ուրախացա նրա՝ թալինցի լինելու հանգամանքից, քանի որ հայրական կողմս Թալինի Ոսկեթաս գյուղից է:

Դասամիջոցին մի ներքին մղումով մոտեցա, հարցրի՝ Թալինի՞ց ես:

Չոր ու կտրուկ եղավ պատասխանը՝ հա՛:

Մի պահ շփոթվեցի, բայց երբ ասացի, որ հայրս էլ է Թալինից, կտրուկ փոխվեց, ժպտաց, ձեռքով խփեց ուսիս, ասաց.

- Ինձ էլ թվաց՝ քաղաքի ջահելներից ես. ու …

Այդպիսին էր հանդիպումը իմ «խենթ» ու «խելառ» ընկերոջ հետ:

Հիշում եմ, առաջին կուրսում էինք: Այդ օրը Թաթուլը համալսարան չէր եկել: Իմացանք, որ տատն է մահացել: Կուրսի մի խումբ տղաներով դեկանատից թույլտվություն խնդրեցինք ու շտապ մեկնեցինք Թաթուլենց գյուղ, որ հասցնենք հուղարկավորությանը: Այդ օրը Թաթուլենց տանը ծանոթացա նրա մանկության ընկերներից Միրանի հետ: Մինչ օրս չեմ մոռանում իրենց մանկության-պատանեկության տարիների մասին պատմած նրա հուշերից մեկը.

«Ամեն տարվա ապրիլի 24-ին բարձրանում էինք Արտին լեռան գագաթն ու մեծ կրակ վառում՝ ի հեճուկս թուրքերի, ու արագ վազքով իջնում էինք, որպեսզի չբռնվեինք: Քամին դեմքներիս էր խփում, ու մինչև հիմա աչքերիս առաջ են Թաթուլի ծածանվող գանգուրները»:

Տարիներ ի վեր շարունակվում է զրույցս Թաթուլի հետ, ու երբ հիշում եմ Միրանի պատմածը, մտքիս առջև հառնում է մեր առաս-

պելի հրեղեն Վահագնը՝ բոցեղեն մազերը քամուն տված:

Երևի պատահական չէ, որ մեր նախնիների հետքերը պահպանած Արտին լեռան վրա մանկությունից պիտի կրակ վառեր: Ու պատկերացնում եմ այդ վառվող բոցերից Թաթուլի ծնունդը, մարդու, ով Պայթող աղբյուրի հրեղեն ձիու նման ամենուր էր՝ Աբովյանի բնապահպանական պայքարում, իր կազմած ազգագրական երգ ու պարի խմբերում, ուսանողական նստացույցերում և, իհարկե, Արցախյան պատերազմում:

Վերջին թռիչքը Գետաշենում էր…

Այնտեղից սկիզբ առավ լույսի ճանապարհը դեպի մեր սրտերն ու դեպի հայոց պատմության հավերժություն:

Դեպի հավերժ կրկնվող լինելիություն…

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Այնթապի Բյուզանդ Մարգարյանի անվան № 2 միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ, Թաթուլ Կրպեյանի համակուրսեցի

ՆՐԱ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՎԱՌ ՕՐԻՆԱԿ ԷՐ

Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի մասին խոսք գրելը ինձ համար մեծ պատիվ է, թեև նրան ճանաչել եմ կարճ ժամանակ: Թաթուլի հետ կապված կան թանկ հիշողություններ, որոնք առ այսօր թարմ են, և ես ամեն հարմար առիթով հպարտությամբ խոսում եմ դրանց մասին: Կցանկանայի կանգ առնել հատկապես երեք դրվագների վրա, որոնք ինձ համար նվիրական են, քանի որ կապված են ազգի մերօրյա հերոս, իմ համակուրսեցի և լավագույն ընկերներից մեկի՝ Թաթուլի հետ:

Ծանոթացել ենք 1988 թվականի սկզբներին՝ հայ ժողովրդի համար իրադարձություններով լի՝ ազատագրական շարժմանը նախորդած շրջանում, երբ խորհրդային բանակից զորացրվելով՝ առաջին կուրսի երկրորդ կիսամյակից սկսեցի հաճախել համալսարանի դասերին:

Ուսումնառության տարիներին Թաթուլը մի խումբ համալսարանականների մասնակցությամբ ստեղծեց երգի ու պարի ազգագրական համույթ, որի պարապմունքներն անցկացնում էր ազատ լսարաններում, իսկ պարի փորձերը՝ Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքում: Ինքն այն ժամանակ «Մարաթուկ» անսամբլի անդամներից էր և իր ունակությունները սիրով ու նվիրվածությամբ փոխանցում էր մեզ: Հիշում եմ, որ փետրվարյան պատմական օրերին, երբ Ազատության հրապարակը ալեկոծվում էր հարյուր հազարավոր ցուցարարներից, մեր նորաստեղծ երգի խումբը՝ Թաթուլի ղեկավարությամբ, ազգագրական-հայրենասիրական երգերով ժողովրդին համախմբվելու ու բռունցքվելու կոչ էր անում: Ժողովուրդը նաև երգի կախարդանքով գոտեպնդվում էր, բռունցքվում հայ ժողովրդի արդար դատի ու ղարաբաղյան հարցի արդարացի լուծման շուրջ: Թաթուլը թեև մեզանից այնքան էլ մեծ չէր, սակայն իր տեսակով, առնականությամբ, ոգեղեն կեցվածքով, լրջությամբ, գաղափարական առումով ու համոզմունքներով առանձնանում էր, ազգային խնդիրների շուրջ քննարկումների ընթացքում ուներ անառարկելի հեղինակություն: Թվում էր, թե այն օրերին մեզանից և ոչ մեկը հայրենասիրության խնդիր չուներ, սակայն Թաթուլն իր գործելակերպով հայրենապաշտության օրինակ էր տալիս: Նա, հի-

ռավի, մեր ժողովրդի հավաքական կերպարն էր. սկզբունքային էր, ընկերական, պատրաստ՝ իր ասածը հիմնավորելու, պաշտպանելու, տեղի չէր տալիս ճնշումներին: Նրան չէին վախեցնում համալսարանից հեռացվելու վտանգը, զգուշացումները. ավելին՝ դասախոսները նրան հարգում էին, հաշվի առնում նրա կարծիքը, լսում նրա հիմնավորումներն ու պնդումները:

1988-ի փետրվարի վերջերին Սումգայիթում իրականացված ցեղասպանության հետևանքով հազարավոր հայրենակիցներ, վախն ու կոտորածի սարսափն աչքերում, հասել էին Հայաստան: Նրանց մի մասը տեղավորվել էր Աղվերանում: Մեր հայրենակիցների մեծ վիշտն ու ապրած սարսափները գոնե մի պահ մոռանալ տալը այդ օրերին դարձել էր ամեն մի հայի հոգու պարտքը: Հանրապետությունում պետական մակարդակով աշխատանքներ էին տարվում, որից անմասն չմնաց նաև պետական համալսարանը: Աղվերան կատարած այցելություններից մեկին մասնակցելու առիթ եմ ունեցել նաև ես: ԵՊՀ ուսանողներից կազմվեց մի խումբ՝ երգիչներ, ասմունքողներ, երաժիշտ-կատարողներ՝ պատմության, բանասիրության, ֆիզիկայի և այլ բաժիններից: Խմբի մեջ իր ոգեշնչվածությամբ Թաթուլն առանձնանում էր, քանի որ նա ազգագրական երգերի ինքնատիպ ու անզուգական կատարող էր, որի հիմնած խմբի անդամ լինելու պատիվն ու առիթն ունեինք: Տեսնել միայն կարելի էր, թե ինչպես էր նա փորձում հայրենակիցների դեմքերից հեռացնել տագնապը, համոզել, որ դժոխային օրերն արդեն ետևում են, և որ նրանք տանն են՝ հայրենի հողում, ապահով ու անվտանգ:

...Տպավորվել է հատկապես 1989 թ. ապրիլի 24-ի երթը, որի սկիզբը տրվեց պետհամալսարանից: Երթին միացան հազարավոր ուսանողներ ու դասախոսներ, ժողովուրդը: Այդ օրերին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները բանտարկված էին, և երթի մասնակիցները վանկարկելով պահանջում էին ազատ արձակել նրանց: Մարդկային մեծ բազմությունը շարժվում էր դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Եվ այդ պահին նկատեցինք, որ Իգոր Մուրադյանը մի խումբ երիտասարդների հետ, որոնց մեջ էր նաև Թաթուլը, Սումգայիթի զոհերի հիշատակին պատրաստված խաչքարը ուսած՝ վազքով տանում էին Ծիծեռնակաբերդի բարձունք: Կարճ ժամանակ անց Թաթուլը վերադարձավ երթի մասնակիցների մոտ, և մինչև անմար կրակի մոտ մենք քայլեցինք հայրենասիրական երգեր երգելով,

ասմունքով՝ մեր շուրջը հավաքելով երթի հարյուրավոր մասնակիցների: Անտեսելով խորհրդային զորքերի ներկայությունը, որոնք այդ օրերին գրավել էին մայրաքաղաքը, մենք վանկարկում էինք հայոց պահանջատիրությանը վերաբերող գաղափարներ:

Թաքուլի հերոսական մահից 24 տարի է անցել: Ես հպարտանում եմ, որ եղել եմ նրա ժամանակակիցը, համակուրսեցին, նրա ստեղծած ազգագրական երգի-պարի համույթի անդամը…

Թաքուլը մեր ժողովրդի այն նվիրյալներից էր, ով, իր կյանքը դնելով հայրենիքի ու նրա զավակների ազատության զոհասեղանին, կրեց նահատակության պսակը՝ լրացնելով մեր մեծերի շարքերը:

Յուրա Ղուլյան
Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի
պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու,
«Արծվաբեն և որդիներ» ՀԿ նախագահ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Թաքուլն այն գործիչներից էր, ում հատկանիշներն անվերապահորեն բնութագրական են հերոսին: Իրապես հպարտություն և պատիվ է նրա հետ ընկերական շփումներ ունեցած լինելը, առավել ևս նրա համակուրսեցին լինելը: Թաքուլը այնպիսի բարոյական արժեքներ էր կրում, որոնք վաղ թե ուշ տանելու էին հերոսացման:

Թաքուլին ճանաչել եմ 1988 թվականից: Միասին սովորել ենք Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Առաջին տպավորությունը, որ ստացել եմ Թաքուլից, նրա՝ խորապես ազգային մտածողություն ունենալն էր, անկեղծ նվիրումը հայրենիքի գաղափարին: Այդ հարցում նա աննմացորդ նվիրյալ էր՝ զերծ ձևականության ամենափոքր նշույլից: Թաքուլը մեր մեջ առանձնանում էր իր հասունությամբ և լրջախոհությամբ: Ակներև էին նրա կազմակերպչական ունակությունները և պատասխանատվության բարձր զգացումը: Ընկերական հարաբերություններում նվիրվող էր, ազնիվ և շիտակ:

Համարձակ ու հաստատակամ անձնավորություն էր Թաքուլը: Ֆակուլտետում մեծ հարգանք էր վայելում, շատերն էին ցանկանում շփվել նրա հետ: Գետաշենից վերադարձի կարճատև շրջաններում երկար էինք զրուցում նրա հետ, երբեմն հետաքրքիր պատմություններ էր պատմում իր ուսուցչությունից: Հրաշալի գիտեր հայոց պատմությունը, մանավանդ ազգային-ազատագրական շարժումների պատմության շրջանները:

Հիշում եմ, ամուսնացավ ուսանողական տարիներին, ջերմ վերաբերմունք ուներ իր սեփական ընտանիքի նկատմամբ: Առանձնահատուկ սիրով էր խոսում իր նորածին դստեր մասին, հպարտանում էր, որ նրան անվանակոչել է Ասպրամ:

Յուրաքանչյուր մարդու ի վերուստ նախասահմանված է ինչ-որ դեր, ճակատագիրը Թաքուլին վերապահել էր հերոսի դեր:

Վարդան Ալեքսանյան
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի
հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԹԱԹՈՒԼԻ ՄԱՍԻՆ ՀՈՒՇԵՐԻՑ

… 1990 թ. աշունն էր, Երեբունի օդանավակայանում կամավորական դաշնակցականներից կազմված հերթական մի ջոկատ պատրաստվում էր գնալ Շահումյան՝ Շահեն Մեղրյանի կազմակերպած ինքնապաշտպանության ուժերին միանալու: Այլ ճանապարհ այնտեղ հասնելու չկար, միակ փոխադրամիջոցը ուղղաթիռն էր: Ուղղաթիռում ինձ անծանոթ դեմքեր էին, բայց մեկին ճանաչեցի. Օպերայի հրապարակում վրանային հերթապահություն կազմակերպողներից էր: Ուղղաթիռն օդ բարձրանալուն պես սրահում աշխուժություն սկսվեց, բոլորը սկսեցին զգեստափոխվել՝ հագնելով հատուկ համազգեստ, զենքերը կարգի գցել, փամփշտակալները ստուգել.... Մի խոսքով, ես հասկացա, որ տղաները պատրաստվում էին տեղ հասնելուն պես անմիջապես իջնել և թշնամու դեմ առճակատման անցնել: Օդաչուները զարմացած էին տիրող աղմուկից: Ինձ խնդրեցին, որ տղաներին կարգի հրավիրեմ. ուղղաթիռը չի դիմանա նման աշխուժությանը: Ես ներկայացրի իրավիճակը, և երբ տեղ հասանք, օդաչուները չճանաչեցին տղաներին. նրանք լրիվ կերպարանափոխված էին և բանակային ջոկատ էին հիշեցնում: Օդաչուներից մեկը կատակեց. «Մե՞նք ենք նրանց բերել»: Շահենը դիմավորեց տղաներին, ես էլ գնացի իմ գործերով: Մյուս օրը Շահենը հրավիրեց այցելելու անտառում տեղակայված ջոկատներին (իհարկե, աչքովս տեսնելու, նրանց կարիքներն իմանալու համար): Տղաները վրաններն էին տեղավորում, աշխուժություն էր: Բոլորը բարձր տրամադրություն ունեին՝ բացի այն հայտնի դեմքով տղայից: Նա շատ լուրջ, մտահոգված դեմքով մոտեցավ ինձ՝ հարցնելով. «Ճի՞շտ է, որ դու Գետաշեն էլ ես գնում»: Ասացի. «Այո, ի՞նչ կա»: Ասաց. «Ես եկել եմ էստեղ, որ անցնեմ Գետաշեն»: Ես զարմացած հարցրի. «Ինչպե՞ս»: Նա թե՝ անտառներով: Ես ցույց տվեցի մեզանից ներքև անտառապատ ձորը՝ ասելով. «Ուզում ես էդ ձորերով գնալ ու գազանների կե՞ր դառնալ: Սխալ որոշում ես կայացրել»: Ասաց. «Ես մենակ չեմ, ով կուզի, կարող է հետս գալ, որոշել եմ ու վերջ, ինչ գնով էլ լինի, անցնելու եմ»: Վերջին խոսքս էր. «Խորհուրդ չեմ տալիս ռիսկի դիմել և հետդ էլ ուրիշներին վտանգի ենթարկել»: Նա էլ թե. «Հո չե՞մ եկել էստեղ, որ կռվելու իմ հերթին սպասելով՝ պարապ մնամ, էնտեղ շատ գործ կա»: Իհարկե, հոգուս խորքում ուրախացա, որ Թաթու-

լի նման մարդը պիտի մտնի Գետաշեն, չնայած նրան ծաղիկներով չէին դիմավորելու: Ես, իհարկե, Թաքուլին ասացի, որ գյուղում իր նմանի, գաղափարի մարտիկի կարիքը շատ կա, բայց այնտեղ հասնելու ընտրած ճանապարհը սխալ է՝ հետի տղաների հետ գազանների բաժին կդառնա: Հեռացա ու դեպի Շահենին գնալով՝ նկատեցի, որ Շահենը վիճում է մեկի հետ, որը Թաքուլի համագյուղացի Սաքոն էր: Նա բողոքում էր Շահենին իմ ներկայությունից՝ ասելով. «Մեզ մոտ չպիտի աղջիկներ գան, ինքը ի՞նչ իրավունքով է այստեղ»: Իհարկե, Շահենը նրան բացատրել էր, և նա, ժողովրդական լեզվով ասած, «փուշը թողած», մոտեցավ ինձ և ծանոթացավ: Ես էլ Շահենին խնդրեցի, որ ուշադրություն դարձնի մի տղայի, ով որոշել է մի քանի հոգու հետ կամ մենակ անցնել Գետաշեն: Շահենը խնդրեց, որ ցույց տամ աչքերով: Ճանաչեց և ինձ ասաց, որ հանգիստ մնամ, ինքը տղաներին կասի՝ աչքները վրան պահեն:

Անցավ մի քանի օր, բեռ էի կուտակել և որոշել Գետաշեն տանել, քանի որ Գետաշենը լրիվ մեկուսացված էր, իսկ ուղղաթիռները այդքան էլ հաճախակի չէին գնում այնտեղ: Գնացի և գյուղացիներին շատ աշխույժ, երջանիկ, հաստատակամ գտա: Զարմացա: Պարզվեց՝ Թաքուլն արդեն Գետաշեն էր հասել մի խումբ տղաներով, անմիջապես անցել ինքնապաշտպանության ջոկատները միավորելու և դիրքերում հերթապահություն կազմակերպելու, խրամատներ փորելու գործին ու արդեն վաստակել էր ժողովրդի վստահությունը, սերը և հարգանքը: Ինձ հանդիպող ծանոթներս ականջիս ասում էին, որ գյուղը մնալու է, Թաքուլը ամեն ինչ անելու է: Այդպես ընդամենը մի քանի օրվա ընթացքում Թաքուլը հասցրել էր գրավել գյուղացիների ուշադրությունը: Նրա խոսքը գին ուներ, նրան առանձնացրել էին գյուղի բոլոր ղեկավարներից և պատրաստ էին կատարելու նրա յուրաքանչյուր հրահանգ: Ես էլ որոշեցի՝ ինչքան կարող եմ օգնություն բերել: Հետագայում պարզվեց, որ Թաքուլը գյուղի թիվ մեկ ղեկավարն էր ժողովրդի համար, նրանք պահանջում էին, որ նա դառնա գյուղապետ: Բայց Թաքուլը մերժում էր՝ ասելով, որ ինքը տղերքի հետ գյուղի սահմաններն է պահում և ժողովրդի անվտանգությունն ապահովում...

... 1991 թ. գարնանը՝ ապրիլին, դեռ մեզ անհայտ օպերացիա «Կոլցոն» սկսվել էր, Գետաշեն էին մտնում ռուսական տանկերը, և դրանցից մեկը 10 տարեկան տղաների ստեղծած հնարքով տապալ-

վեց Գետաշեն-Մարտունաշեն տանող կամրջի վրա: Այդ պատճառով գործողությունը հետաձգվեց, մինչև Գանձակից բերվեր հատուկ կռունկը, և ճանապարհը դեպի Մարտունաշեն բացեին զրահատեխնիկայի, տանկերի և այլնի համար: Արդեն մի քանի օր էր, որ Գետաշենը կտրված էր թե՛ Հայաստանից, թե՛ Շահումյանից: Թաթուլը շատ անակնկալի էր եկել, օրը մի քանի անգամ անհանգստացած հարցնում էր կապի մասին, և կապը չէր հայտնվում, ու տագնապ կար բոլորիս մեջ: Թաթուլը Գետաշենի և Մարտունաշենի ինքնապաշտպանության ուժերի հետ պլան էր մշակել, տղաների մի մասն արդեն քաշվում էր անտառները, պատրաստվում էին հերթական անձնագրային ռեժիմին, այսինքն՝ թուրքերի և ռուսների ներխուժմանը գյուղ: Թաթուլն ինձ «Վիլիսով» իջեցնում էր գյուղ, որ ես էլ հարմար թաքստոց գտնեմ, որովհետև ռացիան արդեն շատ վտանգավոր էր, և թուրքերը գիտեին այնտեղ հավաքվող ֆիդայական ջոկատների մասին, և հատկապես «Ուչիտելի» որս էր գնում, նրա գլխի համար գումար էին խոստացել: Ամեն իրավիճակի պետք էր պատրաստ լինել: «Վիլիսի» մեջ լռություն էր: Գյուղամեջ չհասած՝ Թաթուլը կտրուկ կանգնեցրեց մեքենան, գլուխը դրեց ղեկին. շատ մտահոգ ու միայնակ էր իրեն զգում: Ես ասեցի. «Թաթուլ, ես եղել եմ Մարտակերտի շրջանի տարբեր գյուղերում, այնտեղ կան թաքստոցներ, որոնք նախատեսված են նման վտանգի դեպքերում մեծերին, երեխաներին, կանանց ապահով թաքցնելու համար»: Նա ինձ ասաց, որ եթե ես կարողանամ օգնել, որ ուղղաթիռի հրապարակը մեր հսկողության տակ անցնի, գյուղը չի դատարկվի, ժողովուրդը չի ուզի փախչել: Ես հետաքրքրվեցի՝ արդյո՞ք արդեն ուշ չէ: Ասաց. «Երբեք ուշ չէ, իմ ուզածը այն է, որ մենք հսկենք գյուղ մտնող և դուրս եկող բոլոր շարժումները, ժողովուրդն էլ բավարարված կլինի, իր ուզածն էլ է դա»: Լռեց ու նորից ավելի համոզված ու վճռական հայտարարեց. «Կռիվ եմ տալու, կռիվ եմ տալու: Ես էս գյուղը առանց կռվի չեմ հանձնելու: Միայն իմ դիակի վրայով կհանձնեն…»:

Վարդուհի Խոջայան

Ղարաբաղի պատերազմի մասնակից,

Ղարաբաղի վետերանների միության անդամ

ԹԱԹՈՒԼԸ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ

ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ

ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

Համակարգչային ձևավորող՝ Կ. Չալաբյան
Կազմի ձևավորող՝ Ա. Ստեփանյան
Հրատ. խմբագիր՝ Հ. Ասլանյան

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 36:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1